Պետական Մատենադարան
Ո-52
ՄՄԱՄԿԱՄ է 1961 թ.
N14

ԳԻՐԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ Ե.

ՅԱՆՆԻԷԼ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

(1800—1808)

ՕԳՈՒՏՈՒՄՆՈՎ, ԾԱՆՈՒԱՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ, ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՎՔԻՒ ՄԻ ՎԻՄԱՑԻՑ ԻՆՔՆՈՒՐԻՆ ԿՈՆԴԱԿՈՎ

Ա III 2422

Հրատարակեց
ԳԻՒՏ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅԵՑ ԱՂԱՆԵԱՆՑ

Ի Հայրապետութեան Տ. Տ. ՄԿՐՏՉԻՒ Վեհափառ եւ Սրբազնագոյն Կաթուղիկոսի ամենայն Հայոց:

Տպագրեալ ծախիւք եկեղեցեաց Հայոց ի Պետերբուրգ:

ԹԻՓԼԻՍ
Տպարան Տ. Ռոսթիվեանցի
1902

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Дозволено цензурою, Тифлисъ, 20-го Іюля 1902 г.

ՆՈՒՅՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀՇՅՈՑ ԵԿԵՂԵՑԵՑՑ

ԵՒ

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴԻՐ

Մ Ե Ծ Ա Ն Ո Ւ Ն

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԼԱԶԱՐԵԱՆԻ

Յիշատակիւ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

«Դիւանիս» Դ. դիրքը, որ լոյս տեսաւ 1899 թուին, Նոյեմբերի ընդունելութեան արժանացաւ բանասէրներուն չրջանում, ինչ որ նախորդ հատորները. ամեն կողմից ստացանք խրախուսանաց և քաջալերական նամակներ. իսկ ս. Սիոնի բարձունքից ազգի սիրելի Ամենապատիւ տ. Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրլեանից, որ հրաստարակութեանս առաջին հատորի՝ մրցանակի արժանի համարող քննադատն էր, բազդ ունեցանք ստանալ հետեեալ գրութիւնը այդ գրքի տուիթով.

Ս. Երուսաղէմ 2/14 օգոստոսի 1899

Պատուական պաշտօնեայդ Ատուծոյ և վաստակաւոր մշակդ Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ՝ Տէր Գիւտ աւագ քահանայ Ազանեանի

ի Թիֆլիզ

Արժանապատիւ սիրելի մեր ի Քրիստոս

Ձեր Արժանապատուութիւնն իւր «Դիւան Հայոց պատմութեան» անուն չարք մը հրատարակութեանց Դ. րդ հատորէն մ'ալ օրինակ մը զրկած էր ինձ, զոր հաճութեամբ սրտի ընդունեցի։

Պատուարժան Հայր. կարևոր ծառայութիւն մը կը մատուցանէք Հայոց ազգային-եկեղեցական պատմութեան՝ հրատարակելով պաշտօնական թղթակցութեանց, լիշատակարաններու և այլ պաշտօնագրերու բնագրեր, որոնց ստուգութիւնն և ժամանակագրական ճշդութիւնը ամէն կասկածներէ և ենթադրութիւններէ աղատ են, և որոնք ազդալին—եկեղեցական պատմութեան ժամանակամիջոցի մը վրայ բոլորովին նոր լոյս կը սփռեն, և իբր այն կարդ մը պատմիչներու կամաւոր կամ ակամայ սխալանքները կուղղեն, և երևան կը բերեն ղէմքեր պաշտօնական անձնաւորութեանց և մարմիններու, որոնց գործերն և գործելու եղանակն արդարև նոյն ժամանակամիջոցի հանգամանաց համեմատութեամբ խոհական, իմաստուն և ոչ նուազ գնահատելի ծառայութիւններ են ազգին-եկեղեցւոյն համար։ Կը պարզեն ժամանակին տիրող հանգամանքներն, ի լոյս կը հանեն և եկեղեցական ու աշխարհական դասակարգեր ու գովեստից կամ պարսաւանաց արժանի նիստ ու կացը. նկարագիրը, անոնց կրթութեան աստիճանը, կրթութեան և դաստիարակութեան համար եղած ջանքերն և գործադրուած միջոցները։ Կը բառնան վերջապէս մխութեան քողն, և լուսակ ու պայծառ կը ներկայացնեն ինչ որ է իրականութիւնն, և կը մատակարարեն, թէե հումն, բայց պատմութեան ուսմամբ պարապող մրգաքեր ու պարարտ նիւթեր։

Պատուարժան Հայր, ապագէն արժանիդ նիւթական և բարոյական քաջալերութեան, զուք ոչ միայն Ձեր քահանայական սրբանուէր պաշտօնի պարտականութիւնները գիտակցաբար և հոգեռանդն զգացմամբ կատարելով՝ հեռևելի օրինակ կը հանդիսանաք, այլ և Հայոց դարաւոր մարտիրոս եկեղեցւոյն—ազգին պատմութեան համար ևս կը ծառայէք օգտակարապէս։ Արդիւնք Ձեր անխոնջ աշխատասիրութեան, արդիւնք Ձեր ջերմ սիրոյն առ ազգն Հայոց, արդիւնք և Ձեր կենդանի և անբեկանելի հաւատոյն, զոր ունիք Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյն-ազդին ապագային վերայ։

Սիոնի բարձունքէն կը նուիրեմ Ձեզ,

Հայր պատուական, ողջոյն Տիրանուէր և սէր Տիրաքարոզ, կաղօթեմ կենսատփիւռ Դողգոթալի առաջ Դողգոթալի խաչասեղանին արժանաւոր պաշտօնէիդ համար ամենայն լաջողութիւն և լիակիր բարօրութիւն։ Ողջ լեր վաստակաւոր Հալ զաւակ։

Ողջոյն, սէր և լիաշուրթն օրհնութիւն ի Տէր Ցիսուս Քրիստոս և՝ պարոն Սահակին նոս խաչատրեան Թումանեանցին՝ առատաձեռն Հայրդուղին, որ գնահատելով Ձեր աշխատութիւնն ազգասիրաբար օգնած է Ձեզ նիւթապէս և դիւրացուցած Ձեր Դիւան Հայոց պատմութեան Դ-րդ հատորի հրատարակութիւնը. Օրհնեալ՝ նորա կեանքն ամենայն բարօրութեամբ, օրհնեալ և լի՝ նորա տուն ամենայն առատութեամբ։

Մնամ աղօթարար վասն համօրէն ազգիս Հայոց

ՄԱՏԹԷՈՍ ԱՐՔԵՊԻՍԿ. ԻԶՄԻՐԼԵԱՆ։

—

Թէ «Դիւանին» Ա.—Բ. հատորից և թէ առ. հասարակ գրականութիւնից լալտնի է, որ անցեալ դարու սկզբին հալ եկեղեցին միաժամանակ երկու հակաթոռ կաթուղիկոս ունեցաւ. Դանիէլը՝ Բագրեւանդի Իրքքորան վանքում օծուած և Դաւիթը՝ ս. Էջմիածնի վանքում։ Ներկայ հինգերորդ հատորը նուիրուած է զոցանից առաջինին՝ Դանիէլ կաթուղիկոսին։ Բայց առաջ քան կհրատարակենք Դաւիթ կաթուղիկոսի երկու մեծահասուոր կոնդակների ժողովածուն, որոնք պատրաստ են մեզ մօտ տպագրութեան համար, չենք կարող ներկայացնել ընթերցողներին այդ չրջանի համառօտ պատմութիւնը՝ երկու կաթուղիկոսների գործունէութեան հետ՝ միասին. ուստի այդ թողնելով ապագային՝ այս անգամ բաւականանում ենք մի այն ծանօթութիւն տալով ներկայ հատորի նիւթ կազմող աղբիւրների մասին։

Այս գրքում մենք տպագրում ենք 253 թուղթ. Դանիէլի կոնդակներն ու նամակները և զանազան անձանց իրան Դանիէլին գրած և միմեանց ուղղած թղթակցութիւնները կաթուղիկոսական կնճռոտ խնդրի կամ առհասարակ Մայր Աթոռի և Ազգի ժամանակակից վիճակի մասին։ Այդ նիւթերին մեզ որպէս աղբիւր ծառայել են.

1. Արժ. Հ. Յովհաննէս ա. քահ. Մըկրեանից մեզ նուէր ուղարկած զանազան պատմական վաւերագրերի ժողովածուից 31 գրութիւն, որոնք գրքիս մէջ մտել են Ա. Գ. Է. Ը. Թ. Ժ. ԺԱ. ԺԳ. ԺԵ. ԻԵ. ԼՐ. ԼԹ. ԽՐ. ԽԳ. ԻՋ. ԽԸ. ԽԹ. ԾԱ. Կ. ԿԹ. Հ. ՀԱ. ՀԳ. ՀԴ. ՀԵ. Զ. ԶԱ. ԶԳ. ԶԴ. ՂԵ և ՃԳ. լուսանկարներով.

2. Ս. Էջմիածնի մատենադարանի Թ. Թ. 761, 775 և 778 կոնդակների պատճէններից 128 հատ. բացի դոցանից նոյն մատեանների 29 օրինակը ծառայել են համեմատութեան համար մեր ունեցած նոյն օրինակների հետ։

Եւ 3. Մեր սեպհական հաւաքածոյքը, որոնց մի մասի օրինակները կալին թէ հ. Մկրեանի և թէ ս. Էջմիածնի հաւաքածոյքի մէջ։

Դանիէլ կաթուղիկոսի կոնդակների և նամակների մի մասը, ինչպէս լիշել ենք իւր տեղերում, ինքնագիր էր—իւր իսկ ձեռքով գրած, լաճախ աղճատ լեզուով ու սխալներով. թէ դոքա և թէ առհասարակ հատորիս մէջ ամփոփուած բոլոր թղթերը տպել ենք այնպէս, ինչպէս որ մեզ հասել են, առանց որևէ փոփոխութիւնների՝ ցանկալով նախ հարազատութեամբ ներկայացնել մեր ստացածը և ապա՝ իրաքանչիւրի հայագիտութեան մասին մի զգալիարժ տալ հետաքրքրողին։

—

Ինչպէս ընթերցողը կըտեսնէ գրքիս կազմի վերջին լալտարարութիւնից, այժմ մենք պատրաստ ունինք տպելու «Դիւանի» հետեւեալ հատորները, որոնք բարերարների օժանդակութեան են կարօտ.

Դիրք	Ջ.	Դաւիթ կաթուղիկոս	Ա. մասն.
»	Է.	»	Բ. »
»	Ը.	Պօղոս	Բ. »
»	Թ.	Սիմէօն	Բ. »
»	Ժ.	Մանուէլ վ. Կիւմիւշխան՝ցւոյ	երկասիրութիւնք։

Սոցանից «Սիմէօն կաթուղիկոսի լիշատակարանի Բ. մասը» որ կազմում է «ս. հրատարակածի ճիշտ չարունակութիւնը, բայց զարձեալ թերի, և մօտ 1000 էջից մի հա-

տոր պիտի կազմէ, այս տարի օրինակել ենք ս. Էջմիածնի մատենադարանի Թ. 749 մատենից և պիտի հրատարակուի առաջիկայում։ Գեր. տ Արիստակէս արքեպս. Սեդրակեանը իւր «Ցուց. ձեռ. հայ. Շահխաթունեան» աշխատութեան 214 երեսում ասում է, որ Շահխաթունեանի պատմութիւնն ու Սիմէօն կաթուղիկոսի լիշատակարանը, որ մենք տըպել ենք, մինչև 1890 Թ. պահւում էր ս. Էջմիածնի մատենադարանում, իսկ 1893 Թ. լոյս տեսաւ Թիֆլիզում «Իւրեան Հայոց պատմութեան» հրատարակութեան մէջ։ Հարկաւոր ենք համարում ասել, որ դա ճիշտ չէ. տըպուածների ձեռագիրը իմ սեպհականութիւնն է, որ ապա նուիրեցի Մայր Աթոռի մատենադարանին. ճիշտ է որ մինչև 1890 Թ. կար Սիմէօն կաթուղիկոսի լիշատակարանի չարունակութեան ձեռագիրը և այժմ էլ կայ, բայց գա վերոլիշեալ Թ. 749 է, որ այս տարի օրինակելով պէտք է հրատարակենք, որպէս երկրորդ մաս Սիմէօն կաթուղիկոսին նուիրուած հատորիւ։

—

Իսկապէս ժամանակագրական կարգով այժմ մենք դեռ պիտի տպէինք «Սիմէօն կաթուղիկոսի» այդ հատորը, բայց որովհետև այս հատորը հրատարակւում է Ս. Գետերբ. Հայ եկեղեցեաց հաշուով, որոնց մեծանուն հիւնադիր իշխան Յովհաննէս Եզիազարեանի և նորա քարեպիշատակ յաջորդների մասին ընդարձակ տեղեկութիւններ կարին Դանիէլ կաթուղիկոսի և ժամանակակից գործող անձանց գրագրութեանց մէջ, վասնորոյ բարւոք համարեցինք կանխել այս նիւթերի տպագրութիւնը։

—

«Դիւանի» անցեալ Դ. գրքում իբրև Ա. ցաւելուած տուել էինք մի պատմական կարևոր հատուած «Ցաղագս կաթուղիկոսութեան Տ. Ղուկասու» և չնայելով նորա ծանօթութեան, որ ենթադրել էր տալիս թէ դա պէտք լինի Կարապետ Վ. Շահնազարեանինը, մենք այնուամենայնիւ կասկած էինք յայտնել այդ մասին, ի նկատի ունենալով գրութեան չափազանց անգրագէտ ոճը։ Արդ՝ այժմ կարող ենք դրականապէս ասել, որ այդ հատուածը ժի մասն է Ոանահնի վանքի նախկին վանահայր հանգ. Վարգան արքեպս. Օձնեցու ընդարձակ ճանապարհորդութեան, որի ամբողջ բնագիրը գտնւում է հանդ. Ա. Երիցեանի մատենադարանում։

ԳԻՒՏ Ա. ՔԱՀ.ԱՂԱՆԵԱՆՑ

Ց Ա Ն Կ

I. ԻՆՔՆԱԳԻՐ ՎԵՄԱՏԻՊ ԿՈՆԴԱԿ ԴԱՆԻԷԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
II. ՑԱՌԱՋԱԲԱՆ
III. ԲՆԱԳԻՐՔ (ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵԻ ԴՐՈՒԹԻՆՔ)

1799

Ա. Թուղթ Դաւիթ եպիսկոպոսի առ Յովսէփ եպիսկոպոս Արղութեանց։

Բ. Մահսէրական Թուղթ ի միաբանից սրբոյ Աթոռոյս և ներկրականացս առ Կոստանդնուպօլսեցիս և առ այլս վասն նոր կաթողիկոս խնդրելոյ։

Գ. Թուղթ ի միաբանից սրբոյ աթոռոյս առ Պատրիարգն Պօլսոյ, Դանիէլ արհի եպիսկոպոսն. ծանուցումն վախճանման Տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին. և հրաւիրումն ինքեան գալ ի կաթողիկոսութիւն։

Դ. Թուղթ միաբանից էջմիածնի առ Դաւիթ եպիսկոպոս։

Ե. Թուղթ ի միաբանից սրբոյ աթոռոյս առ Յովսէփ արքեպիսկոպոսն կողմանն Հիւսիսոյ, որ յետ վախճանման Տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսին ի Սիւնհոդոսին ընտրութեան, արժանի համարեցաւ և սա կաթուղիկոսութեան, սակայն վասն կասկածանաց ոմանց, ոչ եղե համարձակութիւն գրել զանունն ի մահատրին որ առաքեցաւ ի Կոստանդնուպօլիս։ Ալ յետ աւուրց ի Թիֆլիզու մահսէր և Թուղթք եկին, որք յորդորեալ էին և գնա գրել, և միաբանութիւն մեր, ի վերայ առաջնոյ մահսէրին, ղերկրորդ մահսէր գրեաց անուամբ Դանիէլ Պատրիարգին, և Յովսէփայ Արք եպիսկոպոսին։ Վասն որոյ և ղէպ եղե այս Թուղթ հրաւիրանաց առ նա ինքն Յովսէփ արքեպիսկոպոսն գրել։

Զ. Գերլարգելի ի Քրիստոս սիրեցեալ եղբօրդ մերոյ Տեառնդ Դանիէլի Աստուածաբան վարդապետի, սրբազան Արք եպիսկոպոսի և հոդեկոչ Պատրիարքի մեծի Պօլսոյ բազմարաղմ լզճիւ մատուցանեմ զողջոյն և զսէր տիրականն։

Է. Թուղթ Յովսէփ Արքեպիսկոպոսի առ իշխանապետս Հալոց Կ. Պօլսոյ։

Ը. Տեառնդ Մինասայ սրբազան Արքեպիսկոպոսի և Աստուածաբան վարդապետի։

Թ. Թուղթ Յովսէփայ Արքեպիսկոպոսի առ սրբազան եփրեմ Արքեպիսկոպոս։

Ժ. Ի Քրիստոս սիրեցեալ եղբայր՝ Յովհաննէս Արքեպիսկոպոս և աստուածաբան վարդապետ։

ԺԱ. Երջանկազարդ եղբօրդ իմոյ տեառնըդ Դանիէլի սրբազան Արքեպիսկոպոսի, աստուածաբան վարդապետի պատրիարքի մեծի Պօլսոյ, նաև բարեպաշտ և պայծառածին իշխանաց և Ամիրալից ազգի մերում, ողջոյն և օրհնութիւն ցանկամ։

ԺԲ. Նամակ Յովսէփ արքեպիսկոպոսի առ Յովհաննէս եղիազարեան։

ԺԳ. Թուղթ Յովսէփ Արքեպիսկոպոսի առ կարապետ վարդապետ։

ԺԴ. Թուղթ Մահսէրական առ Դանիէլ Պատրի սրգն Կոստանդնուպօլսոյ և համայն իշխանսն և արուեստապետսն, ի պատասխանի բազմակնիք թղթոյն նոցա վասն տեղապահութեան Մինաս արքեպիսկոպոսին։ Ցանձնառութիւն հնազանդ գոլ նմա յամենայնի, և չնորհակալութիւն յաղագս խոստման նոցա, ի բաց ցրել զանաստուած խորհուրդս չնաւսակար անձնրծալից ի գահաւորութիւն և խնդիր դարձեալ վերստին, զի վերոգրեալ պատրիարգն եկեսցէ ի կաթուղիկոս։

ԺԵ. Թուղթ միաբանից էջմիածնի առ Պատրիարգ Կ. Պօլսոյ։

ԺԶ. Թուղթ Մինաս Արքեպիսկոպոսի առ Դանիէլ։

ԺԷ. Թուղթ միաբանից առ Դանիէլ։

ԺԸ. Թուղթ ընդունելութեան և հրաւիրանաց առ Յովսէփ Տիրակոչ սրբազան կաթուղիկոսն ի Հաչտարխան ի պատասխանի Թղթոյն։

ԺԹ. Թուղթ երկրորդ առ Յովսէփ կաթուղիկոսն ի գործակալաց սրբոյ աթոռոյս լիշումն լուսաջ գրեալ Թղթոյն հրաւիրանաց և ծանուցումն զմահուանէ Մինասայ արքեպիսկոպոսին, և խնդիր ստիպաւ անյապաղ գալ

ի սուրբ աթոռս։

Ի. Թուղթ Յովսէփ կաթուղիկոսի առ կայսր։

ԻԱ. Թուղթ Ջորրորդ ի միաբանից սրբոյ աթոռոյս առ Յովսէփ Նորակոչ սրբազան կաթողիկոսն յաղագս դալոյ հասանելոյ աստ ի մեծէն Պօլսոյ արքունական ֆէրմանին և բերաթին և համահաճութեան մահսէրին, ձեռամբ Դաւիթ արհի եպիսկոպոսին. ե խնդիր առ ի չուտով դալ։

ԻԲ. Թուղթ Յովսէփալ առ Դաւիթ եպիսկոպոս։

1801

ԻԴ. Թուղթ Պատրիարգին Պօլսոյ առ Ֆ. Կնօրին։

ԻԴ. Թուղթ դարձեալ առ Յովսէփ Նորակոչ կաթուղիկոսն, ի պատասխանի թղթոց նորա ընդ կարապետ վարդապետին յղեցելոց. հանդերձ լիշատակութեամբ յառաջ յղեալ թղթոցն մերոց։

ԻԵ. Թուղթ Գրիդոր վարդապետի առ Դաւիթ Արքեպիսկոպոս։

ՈՋ. Օրինակ թղթոյ ի կերից եպիսկոպոսաց միաբանից սրբոյ Էջմիածնի ղրեցեալ առ սրբազան Եփրեմ Արքեպիսկոպոսն և առաջնորդն Ռուսաստանու հալոցս ազգի, որում և հրաւիրեն խնդրանօք հաճել ընդ առաջնորդութիւն Ռուսաստանի։

ԻԷ. Ի Հաշտարխանու հոգևոր կանցիսորէն հալոց հրաման առ Ղրիմու հալոց հոգեոր կառավարութիւնն։

ԻԸ. Օրինակ երկրորդ թղթոյ չորեսին եպիսկոպոսացն, դրևցեալ առ սրբազան Եփրեմ Արքեպիսկոպոսն և առաջնորդն Ռուսաստանու՝ հալոցս ազգի, յաղագս անպատեհ արարմանցն Գրիդոր վարդապետի և գոլոն հանգուցեալ կաթուղիկոսին ի նանիր վատնելն և պատճառ լինիլն արգելման նոցա։

ԻԹ. Օրինակ թղթոյ Փիլոթենց Աղալի, գրեցեալ առ սրբազան Եփրեմ արքեպիսկոպոսն և առաջնորդն Ռուսաստանու՝ հալոցս ազգի. որով ծանուցանէ զըմբռնումն թղթոյ՝ որ առ նա՝ յԱրղութեանց ի ձեռանէ կուրիէլին զոր խաբէութեամբ առեալ խաւտառակեցեալ են։

Լ. Թուղթ միաբանից ս. Էջմիածնի առ Դաւիթ խանն։

ԼԱ. Ամենազօր ամենաողորմած ինքնակալ մեծի կայսերն Ալէքսանդր Պաւլովի յիսուս լուսափալ կառ Ֆեոդրիչ Նօրին մեծաշուք Ընտրալ և վօյեննի դուբեռնաթ։

ԼԲ. Թուղթ Գրիդոր վարդապետի առ Յօհաննէս պատրիարգ, որում պատմէ զառաջին սկզբմունս չարութեան իւրոյ։

ԼԴ. Բերանով կտակարարութիւն Յովսէփ կաթուղիկոսին ինձ Սիմէօն եպիսկոպոսիս որ խոստովանահալր եղէ նմա ի Թիֆլիզ քաղաքիս ի ժամ մահուն։

ԼԴ. Դերընտիր առաջնորդիդ մերոյ ընդ հանուր հալոցս Ռուսաստանու և ծայրագոյն նուիրակի սրբոյ գահոյն միածնիջի Տեառն Եփրեմի սրբազան արհիապանծ եպիսկոպոսիդ ի Հաշտարխանու հալոց հասարակութենէ։

ԼԶ. Հաջի Բարալի Թուղթն է որով գրգռէ զղաւիչն առնել վաղվաղակի զոր ինչ առնելոցն իցէ, յորժամ Ղազար և Ստեփաննոս վարդապետքն տակաւին անդ ի Կրիմ սպասէին գալստեան Դանիէլ սրբազանին լեռագկիոյ։

ԼՋ. Դանիէլ կաթուղիկոս առ ոմանս աղդալինս։

Լ.Է. Հալր սուրբ և այլ զանազան մտաց սարսափելի բանք և պատմութիւն, զորս կամիմք յայտնել սրբութեանդ։

ԼԸ. Դանիէլ կաթուղիկոսն առ ազգալինս ոմանս։

ԼԹ. Թուղթ Գէորգ Աղալէկովի առ Կարապետ վարդապետն։

Խ. Թուղթ Շուլավերցի Թադէոս վարդապետի, զոր գրէ առ Դաւիթն յաղագս կաթողիկոսութեան. և համառօտ պատմութիւն անցից Պօլսոյ։

ԽԱ. Ղղլալու և Մօղղոկու հասարակութիւն առ Յօհաննէս, Մինաս և Յովակիմ ազգայն եղիազարեան։

ԽԲ. Թուղթ Դանիէլ կաթուղիկոսի առ կայսն Ռուսաց Ալէքսանդր Ա.

ԽԳ. Թուղթ միաբանից ս. Էջմիածնի առ Հաշտարխանցիս, և այլն.

ԽԴ. Թուղթ Յովակիմալ Աղաղարեան առ հասարակութիւնս Ատրախանու և այլն։

ԽԵ. Դանիէլ կաթուղիկոսն առ Եփրեմ Արքեպիսկոպոս։

ԽՋ. Թուղթ Գէորգ Աղալէկովի առ Դաւիթ.

ԽԷ. Թուղթ Գէորգ Աղալէկովի առ Մարտիրոս արքեպիսկոպոս Զմիւռնոյ։

1802

ԽԸ. Թուղթ Յովհաննէս եպիսկոպոսի Պօլսեցւոյ առ Եփրեմ Արքեպիսկոպոս։

ԽԹ. Թուղթ Ա. չնորհաւորութեան Պօլսեցւոյ առ ս. Դանիէլ կաթուղիկոս։

Ծ. Թուղթ Յովհաննէս եպիսկոպոսին Թիֆլիսու առ Եփրեմ արքեպիսկոպոս և Մինաս եղիազարեան։

ԾԱ. Ի Դրիդոր Պատրիարքէ Կ. Պօլսոյ՝ դրևալ առ վիճական Օսմանեան Տէրութեան։

ԾԲ. Թուղթ Դաւիթ կաթողիկոսի առ Մելիք Աբգառամ և Իւզբաչի Դարրիէլ։

ԾԳ. Դանիէլ կաթուղիկոս առ միաբանութիւն ս. Էջմիածնի։

ԾԴ. Առ միաբանն Սրոյ Աթոռոյն

դրեալ՝ ի վեհաղնեալ իշխան Աղալ Մինաս Աղալ եզիազարեանէն.

ՄԵ. Առ իւղբաչի պարոն Դարրիէլն ե Մելիք Աբրահամ ե միւս իշխանան դրեալ։

ՄԶ. Առ սրբազնակատար վեհապետն Դանիէլ դրեալ ի սրբազան եփրեմ արքեպ՝ս. կոպոսէ։

ՄԷ. Ի սրբազան եփրեմ արքեպիսկոպոսէ դրեալ առ մելաքանութիւնս սրբոյ Աթոռոյն։

ՄԸ. Առ Մելիք Աբրահամն։

ՄԹ. Առ երեանու խանն դրեալ։

Կ. Թուղթ կարապետ ե Աբրահամ եպիսկոպոսաց առ Դաւիթ։

ԿԱ. Թուղթ եփրեմ արքեպիսկոպոսին առ. Դրիգոր պատր. Կ. Պօլսոյ.

ԿԲ. Ի Մոսկով դրեալ։

ԿԴ. Յակօբ եփրիկեան առ. Դաւիթ կաթողիկոս։

ԿԴ. Կոնդակ Դանիէլ կաթուղիկոսի առ. Կարնեցիս։

ԿԵ. եփրեմ Արքեպիսկոպոս առ. Գէորգ Աղալեկով։

ԿԶ. Թուղթ Մինասայ եղիազարեան առ. հասարակութիւնն Գրիգորուպօլսոյ։

ԿԷ. Կոնդակ Դանիէլ կաթուղիկոսի առ. Շնորհ Մկրտիչ ե Մարտիրոս աղալս։

ԿԸ. Թուղթ Աթոռակալ Սիմէօն վարդապետի առ Ստեփաննոս րաբունի։

ԿԹ. Թուղթ երուսաղէմայ նո իրակ Դրիգոր վարդապետի առ Դաւիթ կաթուղիկոս։

Հ Թուղթ Գրիգոր պատրիարքի առ դեսպան Միւշիւ Աղաթօն.

ՀԱ. Թուղթ Դանիէլ կաթուղիկոսի առ եփրեմ Արքիպիսկոպոս։

ՀԲ. Թուղթ Թիֆլիղեցի Տէր Ստեփան քահանայի առ Դրիգոր սեւաւորն Յովսէփ կաթուղիկոսի. լի ամենայն զրաքանութեամբ ստախօսութեան։

ՀԳ. Խոսանալոր մի։

ՀԴ. Թուղթ Դանիէլ կաթուղիկոսի առ Անտօն վարդապետ։

ՀԵ. Թուղթ Մանուէլ վարդապետի առ Ներսէս վարդապետ։

ՀԶ. Թուղթ Սղ. կուրակինի առ Դանիէլ կաթուղիկոս։

ՀԷ. Թուղթ Կարապետ ե Աբրահամ վարդապետաց առ Դաւիթ։

ՀԸ. Թուղթ Իվանէ Սարդարի Օրբէլեան առ Դաւիթ կաթողիկոս (?)։

ՀԹ. Հրովարտակ Կայսեր Ռուսաց առ Դանիէլ կաթողիկոս։

Զ. Թուղթ միաբանից ս. էջմիածնի առ Պատրիարքն Կ. Պօլսոյ։

ՁԱ. Ցաւտարարութիւն Միարանից սրբոյ էջմիածնի և Հոգևորականաց Արեւելեայց առ ընդհանուր Ազգն Հայոց։

ՁԲ. Թուղթ Դրիգոր Արքեպիսկոպոսի առ Տ. Յոհաննէս։

ՁԳ. Թուղթ միաբանից ս. Աթոռոյն առ ս. Ժողովն Ռուսաց։

ՁԴ. Թուղթ միաբանից ս. Աթոռոյն առ կայսր Ռուսաց։

ՁԵ. Թուղթ Թիֆլիսի հասարակութեան առ կայսր Ռուսաց.

ՁԶ. Թուղթ Դանիէլ կաթուղիկոսի առ կայսր Ռուսաց

ՁԷ. Թուղթ Գլատօն Արքեպիսկոպոսին Հաշտարարիանու առ եփրեմ Արքեպիսկոպոս։

ՁԸ. Օրինակ գրոյ Ռուչրեան Ստեփան վարդապետին ի Պօլսոյ, առ ապօրինաւորն Դաւիթ. խնդրելն 100 քսակ. ե այլ բանք։

ՁԹ. Պետր Կաւալէնցկի առ Դանիէլ կաթուղիկոս։

Ղ. Դաւիթ արքալորդին առ Դանիէլ կաթողիկոս։

ՂԱ. Դանիէլ կաթողիկոս առ Ալէքսանդր Կուրակին։

ՂԲ. Կոնդակ Դանիէլ կաթ. առ ս. քահանայս Թիֆլիսոյ։

ՂԳ. Թուղթ Կուրակինի առ Դանիէլ։

ՂԴ. Ռէթէոս (?) վ. առ Յովհաննէս Արքեպիսկոպոս։

ՂԵ. Թուղթ ի Դալուստ եպիսկոպոսէ նուիրակէ Պօլսոյ առ Դաւիթ կաթուղիկոս։

ՂԶ. Թուղթ Դանիէլ կաթ. առ կայսրն Ռուսաց։

ՂԷ. Առ կայսրն կրկին Թուղթ յաղագս վէքիլութեան Աղալ Մինասին։

ՂԸ. Դանիէլ կաթ. առ. Կուրակին։

ՂԹ. Վասն սաստելոյ դՊրիդոր վարգապետն։

Ճ. Վասն սաստելոյ Հաշտարարիանու կէօմրուկճի Սիմօն Սէրկէչէն։

ՃԱ. Առ երևանու Մահմէտ խանն և առ Նախիջևանու Փէլպալէ խանն մինչև օրինակաւ երկու գիր գրեցեալ իւուսերէնէ ի պարսից լեզու. և անտի ի հայս թարգմանեալ։

ՃԲ. Ի Ղրաֆ վօրոնցովէ առ քնիազ Յիւղիանովն։

ՃԳ. Թուղթ Դանիէլ կաթողիկոսի առ. կայսր Ալէքսանդր Պաւլովիչ։

ՃԴ. Թուղթ Դանիէլ կաթ. առ գրաֆ Ալէքսանդր Վօրոնցով.

ՃԵ. Թուղթ Յովհաննէս արքեպիսկոպոսին Թիֆլիզոյ առ Ներսէս վարդ.

ՃԶ. Ի Պօլսոյ և յայլ քաղաքաց գրութիւնք Գէորգ Աղալեկովին առ Դաւիթ ապօրինաւորն, որ զայս գիր իւր ձեռագրով լիս. կականէ օրինակեալ՝ երկրորդաբար և ի ներքոյ ստորագրի։

ՃԷ. Դանիէլ կաթուղիկոս առ Ալ. Պաւլովիչ կայսր։

ՃԸ. Թուղթ առ եփրեմ Արք եպիսկո-

պոն և Մինաս և Յովակիմ Լազարեանց։

ձԹ. Հրաժարագիր Դանիէլ կաթուղի կոսի։

ձԺ. Թուղթ անստորագիր առ Յովհաննէս արք եպիսկոպոս։

ձԺԱ. Թուղթ միաբանից Մայր Աթոռոյ առ Յովհաննէս եպիսկոպոս։

ձԺԲ. Դանիէլ կաթուղիկոս առ Գրիգոր պատրիարգ։

ձԺԳ Դանիէլ կաթուղիկոս առ Ներսէս և Մանուէլ վարդապետսն։

ձԺԴ. Թուղթ Մելիք Աբրահամու առ Դիւան Մաղաքեան։

1803

ձԺԵ. Թուղթ Դանիէլ կաթուղիկոսի ս. կն. Պ. Ցիցիանով։

ձԺԶ Թուղթ միաբանից ս. Էջմիածնի առ կայսր Ռուսաց։

ձԺԷ. Վասն արտաքսման Գրիգոր վարդապետի Պետրբուրգու Սանկտ Պետրբուրգ օրր Պօլիցմեստր պարոն գեներալ մայօր և Նշանակիր երթելին։

ձԺԸ. Թուղթ Դանիէլ կաթողիկոսի առ կն. Պ. Ցիցիանով։

ձԺԹ. Նորին Դանիէլի առ Յովհաննէս արքեպիսկոպոս Թիֆլիզոյ։

ձԻ. Նորին Դանիէլի առ կայսր Ալէքսանդր Պաւլովիչ։

ձԻԱ. Թուղթ Դանիէլ կաթուղիկոսի առ Յովհաննէս արքեպիսկոպոս Թիֆլիզոյ։

ձԻԲ. Հաճի Միեսերի գրութիւնն առ վրացի Ստեփան վարդապետն։

ձԻԳ. Թուղթ Ներսէս աբեղայի առ Յակոբ, Ներսէս և Սուքիաս աղայս։

ձԻԴ. Թուղթ կն. Պաւլ Ցիցիանովի առ Մելիք Աբրահամ։

ձԻՆ. Յնփրեմայ Արք եպիսկոպուէ ամենայն հայոց Ռուսաստանու ս առ Ղղլարու հայոց մարմնաւոր աղիական դատարանդ։

ձԻԶ. Մանո՛ էլ վարդապետն գրէ զ՛զանակ փախստեան իւրոյ ի Պօլսոյ և զգուշար տալեաց պատրիարգութեան և կաթուղիկոսական երկրորդ ֆրմանի։

ձԻԷ. Թուղթ միաբանից ս. Էջմիածնի առ կայսր Ռուսաց։

ձԻԸ. Թուղթ արքայազն Դաւթի առ եփրեմ (?)

ձԻԹ. Թուղթ Յովհաննէս Պատրիարգին կ. Պօլսոյ առ կաթուղիկոսն Դաւիթ։

ձԼ. Թուղթ Դանիէլ կաթուղիկոսի առ Թաթուլ։

ձԼԱ. Նորին Դանիէլի առ պանգիստացեալս ի ս. Աթոռոյն։

ձԼԲ. Նորին Դանիէլի առ Յովակիմ Եղիազարեան.

ձԼԴ. Թուղթ միաբանից ս. Էջմիածնի առ Յինոզն Ռուսաց։

ձԼԴ. Թուղթ Աբրահամ աբեղայի առ Դաւիթ։

ձԼԵ. Եւս ի նոյնոյ Գէորգ Ազալեկովէ առ ապօրինաւորն Դաւիթ։

ձԼԶ. Թուղթ Դանիէլ կաթուղիկոսի առ Գրիգոր, Բարսեղ, Յովհաննէս արքեպ՛սկոպոսունս և այլն։

ձԼԷ. Թուղթ ումանց եպիսկոպոսաց և միաբանից առ Դանիէլ կաթուղիկոսն։

ձԼԸ. Թուղթ Եփրեմ արք եպիսկոպոսի առ իշխանս։

ձԼԹ. Թուղթ Գէորգ Աղալեկովի առ Դաւիթ։

ձԽ. Թուղթ սաթևացի Աբրահամ վարդապետին ի Պօլսոյ առ ապօրինաւորն Դաւիթ։

ձԽԱ. Թուղթ Դանիէլ կաթուղիկոսի առ Ներսէս վարդապետ։

ձԽԲ. Ֆէրման Դանիէլի կաթուղիկոսութեան։

ձԽԳ. Թարգմանութիւն ֆէրմանին լ՛սպատուաղրութեան.

ձԽԴ. Առ Դանիէլ սրբազանն լորժամ ի քանուէ իւրոյ գրեալ էր հրամանն Դաւթի առ Յովհաննէս եպիսկոպոսն և Ներսէս վարդապետն զի եկեսցեն Էջմիածին։

ձԽԵ. Առ Բարսեղ եպիսկոպոսն։

1804

ձԽԶ. Թուղթ հասարակութեան Գանձակի առ. կն. Պ. Ցիցիանով։

ձԽԷ. Անստորագիր գրութիւն Դանիէլ կաթուղիկոսի։

ձԽԸ. Թուղթ Յովհաննէս արքեպիսկոպոսին Թիֆլիզոյ։

ձԽԹ Թուղթ Աղալի փիթոլեանց.

ձՄ. Թուղթ կն. Էլիզբարի Էրիսթաւով առ Ստեփան Շարօեան։

ձՄԱ. Թուղթ Հալրապետի Ստեփանոսեանց առ Դանիէլ։

ձՄԲ. Պատմական տեղեկութիւնք տուեալք ի Դանիէլ կաթուղի՛ոսէ։ *)

ձՄԳ. Թուղթ Յովսէփ Ղորլանեանի առ աղալ Մինաս Լղիազարեան։

ձՄԴ. Թուղթ առ աղալ Մինաս Եղիազարեան։

ձՄԵ. Թուղթ Դանձակի հասարակութեան կալար ռուսաց։

ձՄԶ. Թուղթ Ղազարու Յովհաննիսեան առ Դաւիթ։

1805

ձՄԷ. Թուղթ Յովհաննէս արքեպիսկոպոսին Թիֆլիզոյ առ իշխ. Մինաս Եղիազարեան։

ձՄԸ. Թուղթ Ներսէս աբեղայի առ իշխ.

Յովակիմ Եղիազարեանց։

ՃՄԹ. Թուղթ Յովհաննէս արքեպիսկոպոսին Թիֆլիզոյ առ իշխ. Մինաս Եղիազարեան։

ՃԿ. Թուղթ Սահմանոս Եպիսկոպոսի ս. Էջմիածնի և Յովհաննէս վարդապետի կարգեցոյ առ Վահազնեակ Պոյծառ իշխան Աղալ Մինասեան։

ՃԿԱ. Թուղթ Սահմանոս Եպիսկոպոսի և Յովհաննէս վ. կարգեցոյ առ Եփրեմ որք եպիսկոպոս։

ՃԿԲ. Թուղթ Յովհաննէս եպիսկոպոսի առ իշխ. Մինաս Եղիազարեան։

ՃԿԳ. Նորին Յովհաննէս արքեպիսկոպոսի առ նոյն իշխ. Մինաս Աղաղարեան։

ՃԿԴ. Թուղթ իշխան Ցիցիանովի առ Յովհաննէս արքեպիսկոպոս։

ՃԿԵ. Թուղթ Դրիգոր Պատրիարքին Կ. Պոլսոյ և այլոց առ իշխ. Մինաս Եղիազարեան։

ՃԿԶ. Թուղթ Յովհաննէս արք եպիսկոպոսի առ իշխ. Մինաս Եղիազարեանց։

ՃԿԷ. Թուղթ Յովհաննէս արքեպիսկոպոսի վրաստանու առ իշխ. Մինաս Եղիազարեան։

ՃԿԸ. Թուղթ Յովհաննէս արքեպիսկոպոսին վրաստանու առ իշխան Մինաս Եղիազարեան։

ՃԿԹ. Թուղթ Յովհաննէս, Գրիգոր և Բարսեղ արքեպիսկոպոսաց և Ներսէս աբեղայի առ իշխան Մինաս Եղիազարեան։

ՃՀ. Թուղթ իշխանաց Երեանու առ իշխ. Մինաս Եղիազարեան։

1 8 0 6

ՃՀԱ. Կոնդակ Դանիէլ կաթողիկոսի առ Յովակիմ ազգն։

ՃՀԲ. Թուղթ Յովակիմայ Սաղախելեան առ պ. Հալրապետ։

ՃՀԳ. Կոնդակ Դանիէլ կաթողիկոսի առ պ. Կարապետ։

ՃՀԴ. Թուղթ միաբանից ս. Էջմիածնի առ Կալար ուսուց։

ՃՀԵ. Թուղթ միաբանից ս. Էջմիածնի առ կն. Պաւլ Դ. Ցիցիանով։

ՃՀԶ. Թուղթ Ներսէս աբեղայի առ աղալ Մինաս Լազրեան։

ՃՀԷ. Թուղթ Յովհաննէս արքեպիսկոպոսի Թիֆլիզոյ ... ո աղալ Մինաս։

ՃՀԸ. Կանդակ Դանիէլ կաթողիկոսի առ Եփրեմ արք եպիսկոպոս։

ՃՀԹ. Թուղթ Մելիք Ջիմշիդի Մելիք Շահնազարեան առ իշխան (Մինաս Եղիազարեան *)։

ՃՁ. Թուղթ Յովհաննէս արք եպիսկոպոսի Վրաստանի առ իշխան Մինաս Եղիազարեան։

ՃՁԱ. Թուղթ Դանիէլ կաթողիկոսի առ Եփրեմ Արք եպիսկոպոս։

1 8 0 7

ՃՁԲ. Նորին Դանիէլի առ Յովհաննէս արք եպիսկոպոս Վրաստանի։

ՃՁԳ. Թուղթ Մինասայ Աղազարեան առ Եփրեմ արք եպիսկոպոս։

ՃՁԴ. Նորին Մինասայ Աղազարեան առ Մանուէլ վարդապետ։

ՃՁԵ. Դանիէլ կաթողիկոսի առ Յովհաննէս արք եպիսկոպոս Վրաստանու։

ՃՁԶ. Մելքիսեդեկ քահանայի Ղամազեան առ վհ. իշխ. Մինաս Եղիազարեան (*)։

ՃՁԷ. Ներսէս աբեղայի առ Դրիգոր վարդապետ։

ՃՁԸ. Նորին Ներսէս աբեղայի առ Բուքրէշու Հայս։

ՃՁԹ. Դանիէլ կաթուղիկոսի առ Մինաս Եղիազարեան իշխան։

ՃՂ. Մահտեսարար Յովհաննէս աբեղայի առ Դանիէլ կաթուղիկոս։

ՃՂԱ. Թուղթ ս. Մեսրոպայի առ Դանիէլ կաթուղիկոս։

ՃՂԲ. Աղալ Մինասն լալանէ Եփրեմ արքազանին վասն զԴաւիթն արժան համարելոյ դնել ընդ ապաշխարութեամբ. լղելոյ զկալս. վասն ոչ դրելոյ արքազանի առ Կ. Պ և այլ ինչ հարկաւորութիւնք։

ՃՂԳ. Դանիէլ կաթուղիկոս առ գրաֆ (*)։

1 8 0 8

ՃՂԴ. Ի արքազան Դանիէլ պատրիարգէ առ ի Սաչ, ի Փոչիթան, ի Սչով, ի Բուգրէչ, ի Ֆօքշան, և յՕրսման քննակեալ հալսն գրեալ օրհնութեան և հարցման կոնդակի համառօտ պիտանիքն յիշատակին աստ։

ՃՂԵ. Դանիէլ կաթողիկոսի առ Ներսէս վարդապետ։

ՃՂԶ. Դանիէլ կաթուղիկոսի առ Դաւիթ քահանայ։

ՃՂԷ. Դանիէլ կաթուղիկոսի առ Ֆիլիպ վասիլիչ։

ՃՂԸ. Դանիէլ կաթողիկոսի ի Թիֆլիզ առ բարեծնունդ Միխայէլ Մարկիչ Բաշէվ սկիզն առեղնադպիրն կառավարութեան վրացոտանու հասարակութեան ժողովոյն։

ՃՂԹ. Դանիէլ կաթուղիկոսի առ գրաֆ Կուտուզովիչն վասն գնրի թաւագացն Թիֆլիզոյ։

Մ. Դանիէլ կաթողիկոսն առ գրաֆ Կուտուզովիչն վասն լղելոյ զգերի թաւագան։

ՄԱ. Դանիէլ կաթուղիկոսի առ Հազբատու պարոն և Թիֆլիզու ուեզգիսուղի մարչալ Թաւադ Զալ Դաւթի որդի Բարաթովին։

ՄԲ. Հրովարտակ կայսեր Ռուսաց առ Դանիէլ կաթուղիկոս։

ՄԳ. Կոնդակ օրհնութեան և կանոնակերպ հրամանի լազաղս բարւոք կառավարութեան արդիւնաբեր կարգաւորաց ընդ արթունիցեան։

ՄԴ. Ա. Քաւող Ռուսպետեան ենարար՝ Դիմիար ի պատասխանի դրոյն իւրոյ որով խնդրեալ էր զտունն Գուղալ Դաւթի քողալ եղբօր կնոջն իւրոյ։

ՄԵ. Ա. Նապոլէօն խաչապատակ ինքնակալ Օգոստոս կայսր Ֆրանցացւոց սիրոյ բարեպաշտութեան։

ՄԶ. Մեծ Նապոլէօն տիեզերահռչակն կայսերն Ֆրանցացւոց ամենախոհեմ դեսպան՝ մնծագոյն փառաց և պատուոյ արժանաւոր ժամանակիս Բուսաստ նշանակիր արեզակն։

ՄԷ. Քաջ խորհրդական մեծ կայսերութեան Ֆրանցացւոց և մինիստր հաստատուն և օրինաց մեծ իշխան Փօրտալիս։

ՄԸ. Ա. կայսրն ղերմանացւոց խնդիր վասն հրովարտակի, զի բաց լայնցանէ, որք ունիցին զգիր ի պատրիարգէն Արարատեան այլ ոք ի կարգաւորաց հայոց մի կարող լիցի ժառանգել ի մէջ հայոց եղելոց ի սահմանս տէրութեան իւրոյ։

ՄԹ. Դանիէլ կաթուղիկոսի ատ. կայսր Ալէքսանդր Պաւլովիչ։

ՄԺ. Դարձեալ ատ. նորին կայսերական մեծութիւն վասն առաջնորդ կարգելոյ զնփրեմ արքեպիսկոպոսն առաջնորդն Ռուսաստանու Հայոց։

ՄԺԱ. Ատ. Ագրաֆինեայ Մխայլլովնային ի Պետերբուրգ։

ՄԺԲ. Կոնդակ օրհնութեան և ժողովրդապետութեան վասն Արդուման անուն ուրումն Սպահանցւոյ ի վերայ Ղարսայ, Կարնոյ, Թոխաթու և Իաղլաստու. որ անկնալ ընդ ծանր հարկս պահանջութեամբ, և զերկու որդիսն իւր գրաւ եղեալ Սձ Թումանի առ տեսչիկ պարսկիկ մի տարի վաստակ, ինքն զրկս կոնդակ առեալ գնաց ի ժողովրդապետութիւն։

ՄԺԴ. Ատ. Կարբեցի Ցովհաննէս վարդապետն վասն նոյն Սպահանցի Արզումանին։

ՄԺԴ. Ա. Երանեալ Գալանեանկինն որ եկն փոխանակ Նեալետովիչն սահմանեալ կողմանցն Բամբակու։

ՄԺԵ. Թուղթ չնորհակալութեան առ կայսրն ամենայն Ռուսաց, վասն կաւելերին և ասաեգն չնորհելոյ՝ 1808.

ՄԺԶ. Ա. կայսր Ռուսաց իննդիր լուզաց Սինոդին։

ՄԺԷ. Դանիէլ կաթողիկոսի ատ. Ցոհաննէսի, Հայրապետ և Նահապետ աղային Անտոնեանն ի Բալաղիտ։

ՄԺԸ. Դանիէլ կաթողիկոսի ատ. Մինաս եղիազարեան։

ՄԺԹ. Թուղթ օրհնութեան ի Հինգ բնեակեալ ժողովրդոցն ի պատասխանի բազմակնիք մահտեսի Նոցին, որով ինդրեալ էին Քողալ զինքեանս ըստ վաղեմի սովորութեան իւրեանց լինիլ թեմ և վիճակ Ջուղայ վանիցն, և մի առնել տէրունի։

ՄԻ. Դանիէլ կաթուղիկոսի ատ. իշխ. Մինաս եղիազարեան։

ՄԻԱ. Դանիէլ կաթուղիկոսի ատ. Գրաֆ Ի. Վ. Դուդովիչ։

ՄԻԲ. Ա. կայսրն ամենայն ռուսաց զնփրեմ արքեպիսկոպոսն կարգելոյ առաջնորդ ի վերայ Ռումնլու։

ՄԻԳ. ատ. Դրաֆ Դուդովիչն դարձեալ վասն Սիւնհոդոսին։

ՄԻԴ. Ի Թիֆլիզ ատ. Ցոհաննէս առաջնորդին։

ՄԻԵ. Դանիէլ կաթուղիկոս ատ. գրաֆ Դուդովիչ։

ՄԻԶ. Ա. դրաֆ Նիկոլայ Րումեանցովին ի պատասխանի գրեցելոյ իւրոյ յաղագս կաւելերին և աստեղն և վասն ժամանելոյ առ ինքն զգիր սրբազնակատար տեսուն մերումն

ՄԻԷ. Ա. Դրաֆ Դուդովիչն վասն կաւելերին զորս ինքն էր յղեալ։

ՄԻԸ. Ա. կայսրն խնդիր վասն յղելոյ ղնփրեմ արք եպիսկոպոսն յաղագս նստուցանելոյ յաթոռ կաթուղիկոսութեան։

ՄԻԹ. Թուղթ օրհնութեան և չնորհակալութեան Ջուղայու հասարակութեան վասն չնորհաւորութեան նոցին. և միամտութիւն, թէ ոչ ոք կարէ առնել զնեզ տէրունի։

ՄԼ. Ա. Սամուրզուզ Ոսկանն ի նոր Ջուղայ բարեկամ սրբազանին։

ՄԼԱ. Ատ. Ղարաղաշ Դանիէլն։

ՄԼԲ. Ատ. ձգալ Ղորաղաշն ի Ղռիմ։

ՄԼԴ. Ատ. Ղարաղաշի վնասալ Սարգիսազան և իւր կողակից Հռիփսիմէն։

ՄԼԴ. Ա. հասարակութիւն Շօրականալայ վասն աչք Սարգիս քահանային. զոր կամէին ինքեանց ե Ղպչախու վանիցն Առաջնորդ կարգել բայց բացասացաք։

ՄԼԵ. Ս. ժողովն Արարատեան ատ. կուստովիչն վասն ընփրեմ սրբազանին։

ՄԼԶ. Ա. կայսրն դարձեալ վասն Դրիգոր եւեակրին։

ՄԼԷ. Ատ. Կուտուվիչն վասն առաքելոյ զԹուղթան մեր Դուխոնինի։

ՄԼԸ. Ի Սարդարբէն ատ. ընփրեմ սրբազանն։

ՄԼԹ. Ի Սարդարբէն ատ. սրբազան Տէրս մեր վասն պատժոյ Դաւթին։

ՄԽ. Թուղթ օրհնութեան և չնորհակալութեան ի Պետերբուրգ ատ. Ալէքսանդր Մակարիչ Խուտապաչոնին։

ՄԽԱ. Ա. Աւետիք Դրիգորիչ Սերեբրյակովին օրհնութիւն և չնորհակալութիւն։

ՄԽԲ. Ա. Մղդօկու տէր Սահականնոսէ եղբայր պարոն Սարգիս Իսալիչն։

ՄԽԳ. Ա. աղնուտւի տիկին Աննա Իվանովնային զոր կատալինէ Իվանովնին։

ՄԽԴ. Ա. Զախար Իվանիչն ի Մոսկով-

ՄԽՅ. Թուղթ անդամոց բարձրագոյն խորհրդարանի աո. Գաւիթ կաթողիկոս։

ՄԽԶ. Թուղթ միաբանից Մ. Աթոռոյ աո. Գանիէլ կաթուղիկոս։

ՄԽԷ. Թուղթ Ներսէս եպիսկոպոսի աո. Գաբրիէլ և ցօհաննէս իշխանաց։

ՄԽԸ. Գրութիւն կառավարութեան վրաստանու աո. ցովհաննէս արքեպիսկոպոս վրաստանի։

ՄԽԹ. Մելքիսեդեկ քահանայի Ղամազեան աո. Սիրեմի արքեպիսկոպոս։

ՄՆ. Թուղթ միաբանից աո. Գրաֆ Դուզովիչ։

1809

ՍՆԱ. Գրութիւն Սարգարին Երեանու աո. գրաֆ Գուզովիչ։

ՍՆԲ. Գրութիւն Սիրեմի արքեպիսկոպոսին աւ. Հիւսէին խան Երեանու։

ՍՆԳ. Նորին Սիրեմի աո. Շահղազեն Պարսկաստանի։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳՐՈՒԹԻՒՆՔ ԴԱՆԻԷԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԱԿՑԱՑ

1799

Ս. Թուղթ Դաւիթ Սպիսկոպոսի առ Յովսէփ եպիսկոպոս Արղուէթեանց։



Ի քրիստոսիկ և երանաշնորհ ... Տէր... Յովսէփ Արհի եպիսկոպոսի։

Ցառաջ քան զայս ղմին թուղթ ... մատուցեալ եմ վեհանձնութեանդ ի ձեռն եղբօրն իմոյ Տեառն Եփրեմայ Արհի եպիսկոպոսի, զոր կարծեմ ի հարկէ գոլ հասեալ. այլ այժմ հայեցեալ ի յապաղել վտանգս՝ զորս կրեսցէ Մայր Աթոռս մեր, հարկեցայ ի մըտացս սոյն կարճ բանիւս զիմոս իմ ծանուցանել Հայրութեանդդ, և նովիմբք իմանալ զքոյդ միտս. քանզ նախ՝ լիմս կողմանէ միամիտ լինիմս, զի Աստուծով՝ զոր ինչ հարազատութիւն ունելոց է որդի սիրելի առ իւր ծնողն, զնոյնն՝ իմ առ քեզ ունել լուսամբ ի Տէր, թերևս այսմ և քոյդ ճշմարտադատ միտքդդ վկայեսցէ. և զոր ասելոց եմ, է այս։ Ահա գլուխ մեր Տէր և Հայր ծերացեալ է և մանաւանդ թէ ի լետին տկարութիւնս է. և ժամանակն նեղ և երկիրս խառնակ. թէպէտ որքան սոյն Հավիւս մեր ի կեանս է (որում Տէր Աստուած զկեանս խաղաղ պարգևեսցէ) Աստուծով որպէս բազում անտանելիքն տարլի են եղեալ և անցեալ, նմանապէս և հանդերձեալքն անցանեն, քանզ զի մարդս մահկանացու է և այն ի հասակի ծերութեան և Աթոռս դատարկ է ի Պեզապիսեաց, զի որդի ի տեղի հօր, փոխանակեսցէ. և մեք թարց Ձեր գիտութեան չկարեմք ինչ վճռել, և մանաւանդ թէ ի քոյդ մտաց չունիմ ինչ տեղեկութիւն թէ արդեօք հաճիս դալ յայս կողմունս թէ ոչ, զի ի նոյն ջատագով եղէց, որ զմիտս իմ ի քեզ ունիմ հանդուցեալ. որ եթէ կամք Ձեր հաճին յայսր ի սուրբ Աթոռս դալ, տեղեակ եղէց, որ ս դիտէ, թերևս մեք յառաջ ելանեմք, քան որոյ ելանելոյն կասկածս կրեմք, սակայն թէ ողջ մնացաք և այսպիսի ինչ պատահեցաւ, մեք քոյդ խորհրդոյդ տեղեակ գոլով՝ ի վերայ նոյնոյ մըտացն ջատագով լինուք, որ անբասիր ի ձէնջ զանձն մեր կացուցացուք։

Զայսքան առ այս բաւական համարիմ ի գրել և զայլս թողում խորհել քոյդ մեծութեան և այլն և այլն։

Նուաստ Դաւիթ եպիսկոպոս *)

1799. նոյեմբեր 27
ի ս. Էջմիածին։

---

*) Ի վերայ թղթոյս գրեալ էր ձեռամբ Յովսէփայ Արհւոյ՝ կարծեմ ի պատասխանի Դաւիթ եպիսկոպոսին այսպէս. «Եփրեմ Արք եպիսկոպոս եղբայրն մեր ի սեպտեմբերի 19. գրեալ էր մեզ թէ արբազան կաթողիկոսն վասն քո օգտի է դիս առաքեալ, որ ինքն այսօր վաղն է, նորին կամքն և բոլոր միաբանիցն առ քեզ է և դու ես ակնկալութիւն մեր. Աթոռն և միաբանքն քոյ են, զի դու ես Տէր և Հայր մեր և այլն։ Ձեռ այսորիկ զիա՞րդ համարձակին զալաք ի տեղի մեր ընտրել. զի Հոգելոյս Հայրապետի հբաւիրակն առ իս է. և այժմ ըսկսել գրեալ է զպործն նոցա ապօրինաւոր...»։

(Ծան. Կ. Վ., Շահնազարեանց)

1800

Ա. Մահսէբական թուղթ ի վիրաւանից սրբոյ Աթոռոյս եւ յերկրականաց առ Դոստանդնուպաւլսեցիս եւ առ այլս վասն նոր կաթողիկոս խնդրելոյ։



Ի լուսաւորակար և լուսատուածառիրաշ մեծի դահիճ Հայաստանեայց ս. Էջմիածնի պաշտօնէից քահանայապետէն միաբան եղբարց, այսինքն եպիսկոպոսաց, ի վարդապետաց և յաբեղայից և յայլոց վանականաց ամենեցունց, նաև ի մերձակայ վանօրէից, առաջնորդաց, այլ և ի քաղաքական և դիւղական քահանայից, ի մելիքաց, ի հարիւրապետաց, ի տանուտէրաց, ի վաճառականաց և յարուեստաւորաց և ի համայն ժողովրդականաց առհասարակ ի մեծաց և ի փոքունց, քրիստոսասանդ սուրբ սղջունիւ և ճշմարիտ սիրով և հոգետենչ բաղձանօք ծանուցումն լիցի աւազապատիւ և մեծարգոյ եղբարցդ մերոց ի Քրիստոս լուսածնունդ զաւակացդ Մօր հաւատոյ ս. Էջմիածնի և օկտակար բարեկամացդ սորին որք բնակեալ կայք ի տանդ արևմտեան լաստուածախնամ և ի կալաերանիստ Մայրաքաղաքդ Կոստանդնուպօլիս, և յայլ քաղաքդ և ի գիւղաքաղաքդ և ի գիւղօրայդ, և յամենայն չրջակայ երկիրդ, Նախ զերապատիւ Տեառնդ Գաբրիէլի աստուածխնամ Արհիեպիսկոպոսի, և քաջընտիր Պատրիարգի մեծիդ Կոստանդնուպօլսոյ, և ապա այլոց ամենից ուղղաշաւիղ առաջնորդաց, չնորհաղարդ եպիսկոպոսաց, իմաստնավայել վարդապետաց, ճգնաւոր աբեղայից, եբնաւից վանականաց, որք ի վանորայդ և ի քաղաքդ, ընդ որս և համալնից, սրբանուէր քահանայից, աւադաց և երկրորդաց, համեստակենցաղ սարկաւագաց և դպրաց. և համօրէն եկեղեցականաց։ Նաև ազնուամիտ և չքեղափառ իշխանաց և ստուաֆից, հաւատարիմ միաբէվէլլեաց և դանձապետաց, հանճարապարծ վաճառականաց, և ամենայն էնաֆից, արուեստակետաց և արուեստաւորաց, և բոլորից իսկ հալկազանց և լուսաւորչակրօնից միահաղոյն՝ բնակաց և ևկաց մեծաց և փոքունց։ Չի որովհետև անչուչտ վըճիռ աստուածայնոյ բանին կնքեցեալ է ի վերայ հողեղէն բնութեանս զառնալ ի հող, յորմէ սահմանէ ոչ ոք կարէ ևլանիլ, ըստ որում և ասէ աստուածարևալն Դաւիթ. ով է մարդ որ կեցցէ և ոչ տեսցէ զմահ. վասնորոյ և մեծավաստակ հալրապետն մեր Տէր Ղուկաս սրբազան կաթողիկոսն ի սահմանեալ կէտ կոչման իւրոյ կատարեաց զհրամանն անմահ արարչին։ Քանզի յետ բազմապատիկ ճգնաժաղ և անձնամաշ վարանմամբ տանելոյ զանազան փոթորկացն ի վերայ հասելոց, հիւանդացեալ զհիւանդութիւն մեծ ի Ռմխէ թուին մերում և կրեալ զայն յամիսս քանիս, թէպէտ և յարեաւ յայնժամ յանկողնոց՝ և արիական ջանասիրութեամբն փոյթ տանէր եկեղեցական և արտաքին գործոց, բայց ոչ ես նգիտ զլիալիր առողջութիւն մարմնոյ յաղագս ծերութեան հասակին։ Եւ այնպէս ժամանեալ ի նախընթաց տարւոյ նոյեմբեր ամին իբրև ետես զինքն որ քան զօր իւնուազանալ, այնուհետև զեղս ի մոի հաստատելով կատարեալ զգաստութեամբ խնդրեաց զհաստորդութիւն, և ստոյգ ղղմամբ և խոստովանութեամբ հաղորդեցաւ ի կենարար մարմնոյ և յարենէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և կացեալ ևս մինչև ցդեկտեմբերի քան “

Նոքին Երորդ օրն, ի դիշերի քան և ութ երորդ աւուրն առ. ութն և կէս ժամու ա-ւանգեաց զսրբասնեալ հողին իւր առ Ա-տուածն։ Եւ ի վաղիւն որ էր ն չաբաթի և տօն որդւոցն որոմանն մնծահանդէս լուսաբ-կաւորութեամբ և հոգևոր պաշտամամբք ամ-փոփեցաւ պատուական մարմին ի գերեզմա-նի ի դաւիթ սուրբ տաճարի որբուհւոյն Կա-լիանեալ մերձ ի չիրիմ առաջնոց սրբազան կաթողիկոսաց։ Արգարև թէպէտ ինքն հան-դեաւ ի վշտաց անցաւոր կենցաղոյս դիմեալ առ երանաւէտ կեանն անվախճան, և ի կատարուն հասակին որպէս գհասուցն ցո-րեան ժողովեցաւ ի չտեմարանս արքայու-թեան Քրիստոսի, այլ զմեզ եթող որբս և անտերունջս ի դառնագէտ ժամանակիս տա-րակուսեալ լամենայնի։ Եւ սակայն, զի Ա-տուածոյ ամենակալին է գործ, որ Տէր է կեն-դանեաց և մեռելոց, ասեմք, բարերար կամք նորա եղիցի օրհնեալ. որ և անճառ մարդա-սիրութեամբ իւրով լուսաւորեսցէ զհոգի նո-րին Տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկո-սին և գասաւորեսցէ ընդ երջանիկ սուրբ Հայրապետացն և զմեզ զամենեսեան հոգւովն սրբով միսիթարեսցէ և խաղաղ կենօք պա-հեսցէ ընդ երկայն աւուրս։ Իսկ արդ մեծա-պատիւ եղբարք մեր սիրեցեալք ի Քրիս-տոս, յայտնի է ամենեցուն, զի որպէս ոչ կարեն անդամք առանց գլխոյ կեալ այսպէս և ոչ տուն առանց գլխաւորի, և կառավարչի։ Եւ թէ մանաւանդ տուն մի ոչ կարէ առանց վերակացուի բարեկարգապէս վարել, որչափ ևս առաւել այս ընդհանրական և մեծ տուն, և յատկիսում յուզնովրդով ժամանակի։ Սմին իրի լետ վախճանման հոգելոյս Հայրապետին, բոլոր միաբանք սրբոյ աթոռոյս, և երկրիս քահանայք, մելիքք, իշխանք և ժողովուրդք գումարեալք առաջի սրբոյ էջման տեղւոյս Քրիստոսի և խորհուրդ ի մէջ առեալ ազդ-մամբ սուրբ Հոգւոյն ամենայօժար կամօք ընտրեցաք գգերաբաշձալի հայրդ մեր և զբա-րեհամբաւ Պատրիարգդ Մեծի Մայրաքաղա-քիդ Կոստանդնուպօլսոյ գՏէր Դանիէլ ար-հիամնծար եպիսկոպոսդ և խնդրւմք անկեղծ մտօք և աղաչանօք իսկ զի դա եկեսցէ լինիլ կաթողիկոս և Հայրապետ ազդիս մերոյ և սրբոյ աթոռոյս։ Այս է նախապատուական խնդիր մեր, որք և խնդրեմք ի ձէնջ, զի յարդարող լինիք դմա չուտով գալ և միսի-թարել զմեզ ի նեղութեանց և ի տարակու-սանաց։ Բայց ո գիտէ, եթէ դուք սիրելիքդ մեր ոչ թոլլատրիցէք դմա գալ և կամ թէ ինքն զկնի բազմից հրաւիրելոյ ոչ խոնար-հեսցի լազչանս մեր մինչև իսպառ հա-տանել զյոյս մեր լինքնէ, ապա երկրորդա-պէս զնողնկից եղբայրն իւր և զյարդելին մեր զՏէր Սիրեմ հեզահամբոյր արհի եպիսկո-պոսն, կամիմք որ առաքեցեալն է ի կողմանս հիւսիսոյ Նուիրակ։ Փանգի նարդենիս եր-կոքին դոքա են հաւանականք և հաճելիք մեզ ամենեցուն, որք նկատին խոհական խոր-հրդով բաւական գոլ բառնալոյ զհոգս կա-ռավարութեան մեծի տանս և օրհնեալ ազ-գիս մերոյ։ Ուստի ըստ վաղնջական սահմա-նին ահա զայս համահաւանութեան թուղթ գրեալ և կնքեալ առաքեցաք առ աւագագոյն եղբարսդ մեր, զի դիտացեալ զխորհուրդս և զկամս մեր համակամ և միարան լինիցիք ընդ մեզ, և կնքելով զթուղթս զայս ընդա-նիցիք զինդիրս մեր, և ստիպիցէք զմին լեր-կուց արժանաժառանգ անձանցն ի գալ։ Իսկ մանաւանդ որպէս զի բանն չհետանալցէ, և սրբոյ աթոռոյս մեծագոյն վնասք չհանգի-պեսցին լանտիրութենէ, դարձեալ խնդրեմք զպատրիարդ աստուածիմաստ վարդապետդ ա-ւուրբ միով յառաջ ուղևորել ի պաշտպանու-թիւն սրբոյ տանս, և ի փարատումն բազմ-զանազան տարակուսանաց մերոց։ Եւ զայլն ի մահսերաքեր սիրելի եղբօքէդ մերմէ ի Դա-ւիթ արհի եպիսկոպոսէդ ունիք իմանալ։ Որք և համաձայնելով ընդ մեզ ի կատարումն խնդրոյս առ ի պահպանութիւն չինութեան սրբոյ աթոռոյս, և ի բարեկարգութիւն լուս-թեան ազգիս եղիջիք օրհնեալք յաստուծոյ և լամենայն սրբոց նորա, և ի սուրբ լուսաւոր-չէն մերմէ։ Եւ չնորհք սրբոյ տեղւոյս էջ-մանն Քրիստոսի ընդ ձեզ ամենեսին։ Ամեն։ Գրեցաւ լամի Տեառն 1800, և ի լունվարի ամսոյ 16, ի սուրբ աթոռս Էջմիածին։

Գ. Թուղթ ի միաբանից սրբոյ աթոռոյս առ Պատրիարգն Պօլսոյ, Դանիէլ արհի եպիսկոպոսն. ծանուցումն վախճանման Տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսին. եւ հրաւիրումն ինքեան զալ ի կաթողիկոսութիւն:

Բարձրապատիւ բարեհամբաւ և մեծարգոյ հօրդ մերում Տեառնդ Դանիէլի արհիապատիւ եպիսկոպոսի և աստուածարեալ Պատրիարգի Տիեզերահռչակ մեծի Մայրաքաղաքիդ Կոստանդնուպօլսոյ, մատուցանեմք ջերմեռանդ սիրով և կարօտիւ և որդիական խոնարհութեամբ զողջոյն, և սրբոյ աթոռդ զհամբուրյս:

Եւ ընդ սիրալիրական ողջունիս և համբուրիւս լայտ առնենք վեհմախոհ հայրութեանդդ: Զի ըստ որում փչուտ և տաժանական է ասացեալ աշխարհս լի աշխարհանօք, վասն որոյ ուրախականքն սորա ոչ են ի հաստատութեան, գանդի բնական է բերմանց սորա ընծայեալ բնակչացն ի նմա ընդ ուրախութեան և տրտմութիւն, ընդ ծիծաղելոյ և սուգ, ընդ քաղցրութեան և գառնութիւն և այլն ամենայն ըստ սոյն եղանակի: Որպէս և այժմ հանգիպեցաւ մերում խղճալի միաբանութեան: Վասն զի այն ինչ ուրախութեամբ մեծաւ ուրախ էաք հանգերձ սրբազան Հայրապետաւն մերով ընդ քարեյաջողութիւն ցանկալւոյդ և ընդ ախորժալուր համբաւս օրհնեալ մերազնէիցդ խաղաղութեան և կըրկին կապակցութեան սիրով ընդ սրբոյ աթոռոյս, զորս նա ինքն ազգ առնէր մեզ. և դոհութեամբ տալը զխրախոյս ուրախութեան, ընդհակառակն ժամանեցին մեզ աւուրք սգոյ և հեծութեան: Գանդի էառ Տէր աստուածդ զՏէրն մեր ի գլխոց մերոց, և զինամատուստ Հայրապետն ի լորդւոցս ողորմելեաց, զՏէր Ղուկաս սրբազան կաթողիկոսն, որոյ լետին մեծի հիւանդութեան սկիզբն ի նոյեմբերի նախկին աւուրսն, և քարի մահուամբ չուեցն լաստեաց ի դեկտեմբերի ԻԸ: Զոր լիրաւի սիրեաց բարերարն աստուած, զի լետ այնքան հոգոց և նեզսակրութեանցն ոչ եթող այլ ես տուայտել տաժանելի կրիւք լանցաւոր կենցաղոյս, այլ ի բարւոք ծերութեան փոխեաց առ. բնակութիւն հանգստեանն: Սակայն զմեզ եթող որբս և վարանեալս ի լանտերունջ երկրիս, և լաղմկալից ժամանակիս: Բայց ի վերայ ամենայնի այս է մեր ասելի եթէ կամք Տեառն եղիցի օրհնեալ, և նայնքըն ամենաբաւ ողորմութեամբ իւրով լուսաւորեսցէ զհոգի լոգնաչխատ և բարեվիշատակ սրբազան կաթուղիկոսին մերոյ և դասակցեալ պսակեսցէ ընդ երանելի սուրբ Հայրապետացն: Եւ զգլուխ պատուական հօրդ մերոյ, ողջ պահեսցէ և սուրբ հոգւոյն մխիթարութեամբն մխիթարեսցէ: Իսկ արդ զի որպէս անհնար է կեալ անդամոց առանց գլխոյ, նմանապէս և հասարակութեան թարց գլխաւորի, և տան առանց տանուտեառն ոչ լինի կարգաւորութիւն, յաղագս այսորիկ հոգալով մեր դարձեալ ստանալ անտերունջ մնացեալոցս գՏէր և զհայր բարեհնամ պահպանիչ կարգադրութեան սրբոյ աթոռոյս և այցելու միաբանութեանս և օրհնեալ աղգիս, ժողովեցաք կարգաւորօք և աշխարհականօք ի մէջ աստուածաբնակ սուրբ տաճարիս, և ըստ աստուածալինն աղգեցութեան համակամ համահաճութեամբ ընտրեցաք զամենապատուական Հայրդ մեր լինիլ արժանաժառանգ գահակալ սրբոյ գահիս և կաթուղիկոս և Տէր հոգևոր Հայաստանեայցս սուրբ եկեղեցւոյ, և քնաւիւղ պաշտօնէիցս: Եւ թէպէտ լետոյ ի կարծիս մտանելով թէ թերևս ժողովուրդք մայրաքաղաքիդ սիրավառ գոլով ընդ քեզ չկամիցին թողուլ կամ թէ և հայրդ մեր չյօժարիցես ի դալ, բերաք ի մէջ երկրորդապէս զսիրելին քո և մեր ղնփրեմ արհիեպիսկոպոսն, և ըստ այնմ գրեցաւ մահսէրն հասարակութեան. սակայն գիտելով մեր թէ լայնմ կողմանէ հիւսիսոյ կարի յիմն դժուարին է հրաւիրել զոք ի կաթողիկոսութիւն, ապա հարկաւորապէս դքեզ խնդրեմք որպէս և Քրիստոսասէր օրհնեալ իշխանապետաց և իշխանացն Մայրաքաղաքիդ լատուկ թղթով դրեալ խնդիր արարաք չնորհել զքեզ սըրբոց աթոռոյս և ոչ իննալել: Ուրեմն ի վերայ այլ ամենայն հարազատական գործոց որ առ սուրբ աթոռս, պարտիս այժմ զգերագոյն իմն հաւատարմութիւն և օկտակարութիւն առնել կամելով յօժարիլ ի յօժարական հրաւիրումն մեր ամենեցուն, և փութացուցանել զգալդ ի պաշտպանութիւն սրբոյ տանս և ի մխիթարութիւն և ի կազդուրումն որբացեալ միաբանութեանս: Գանդի լայտնի է վե-

մաստ խոհականութեանդ, զի որք չուրջ կան ղմեօք են ըստ բանի իմաստնոյն, սուիծ քաղցեալ է դալլ ծարաւի գոլով աղքատ և րուէն ի վերալ աղդի տնանկի. վառնորոյ ոչ է հանդուրժելի մեզ երկար ժամանակս ալսպէս անտերունջ մնալ. Սրկրիս իչխողն ես առ ալս փոյթ կալեալ արդ ղրեաց յարքունիսն թէ պիտոյ իցէ, թէ անպիտան, մեղ ոչ ղէալ եղև արդելուլ, և աստանօր առ ժամս ոչ կարեմք երկարել զպարագ ալս անցիցն ալլ ղերկարապէտն համաւատելոցս ի մահերաքեր եղբօրէս մերմէ իմանալով, ինչ և իցէ դուն գործեսցես աւուրք միով կանխել ղչնորհաբեր գալուստդ, առ ի ազատել գուրբ գահս և գողորմելի միաբանութիւնս ի կասկածանաց դանաղան վտանգից՝ որք կարեն հանդիպել անտիրութեան մերում. Ալսչափ առ ալս բաւ լիցի իմաստնոյնս հայրութեան. Իսկ վասն Ներսէս վարդապետ եղբօրն մերոյ ալսպէս յայտնի լիցի ղի ի դեկտեմբերի ԺԸ մինչ փակեկն նորա և Գաղատիոյ նուիրակ ցովհաննէս վարդապետին ի Բալաղտոյ նկն աւտ, հոգիալոյս հայրապետն ի կենդանութեան հրամայեաց ղվէքիլ վարդապետն թՓանկեի ոք յուղարկել առ ի բերել գնոսա հարկաւոր իրօքն. Այլ վասն հիւանդութեան սրբալան Չալրապետին, և երկրիս տիրողի հիւանդութեան ես չէին վստահացեալ ղբեռինս բերել, այլ ինքեանք աճապարեալ ի դեկտեմբերի ԻԳ մտին ի սուրբ աթոռս. Եւ ղի սրբազան Չալրապետն օր քան զօր ծանրանալր ի հիւանդութեան, երկիցս անդամ Ներսէս վարդապետն համբուրեաց սուրբ ղլջն ի դիմաց քո և իւր և խնդրեաց ղործնութիւն, և նա ի տնտանելն գՆերսէս վարդապետն և ի լիշելն զանուն քո փղձկեալ սրտիւ ելաց, և կարդաց զօրհնութիւն բաւականապէս. և զկնի չորից աւուրց առ Տէր փոխեցաւ. Եւ լետ թաղմանն և եօթնեորդին կատարման առաջադրեցաք Ներսէս վարդապետին բերել տալ ղբեռինսն, և զոր ինչ լանուն միաբանից է բաժանել իսկ զալլսըն ամենայն ի պահեստի ունել, քումդ հրամանի սպասելով. Ողջ լեր ի Տէր պարագալց ամօք և խաղաղական կենօք ի մխիթարութիւն. և ի պարծանս անտերունջ միաբանութեանս. ստաւտղաց աւետաւոր ողջունագրութեանդ աւիչն. (Ննիքն և ապա թուականն).

Գրեցաւ լամի Տեառն 1800 և ի մերս թուոջ ԻՄԻԹ. ի լունվարի 16, ի լերկնահանդիստ Աթոռս սուրբ Էջմիածին.

Գ. Թուղթ Միաբանից Էջմիածնի առ Դաւիթ եպիսկոպոս.

Ի լուսանկար սրբոյ գահի Էջմիածնի միաբանից լեպիսկոպոսաց և ի վարդապետաց, Քրիստոսական սուրբ ողջունիւ և սիրով ծանուցումն լիցի սիրելի եղբօրդ մերոյ Տեառնդ Գաւթի լոգնահանճար Արևի եպիսկոպոսիդ. Զի ի Վաշավանից դրեալ Թուղթդ եհաս առ մեզ և իմացաք զնասանելդ անդ. բայց սպասեմք և զալլ Թուղթս ընդունելոյ ի քէն և իմանալոյ թէ ուր իցես հասեալ ցայդ՝ զոր դեռ ոչ գիտացաք. Այլ լետ մեռատան աւուրս ելանելոյ քո ի սրբոյ Աթոռոյս. Թիֆլիզու Մինիչքար պաշի պարոն Յովսէփն և Տէր Աւաքել աւադ քահանալն՝ Թղթովք մեծաչուք Գէօրկի Արքալին վրաց և որդւոյ նորա և Մահսէրիւ քաղաքի մերալին ժողովրդոցն եկին ի սուրբ Աթոռն, հանդերձ Մելիքաւ և Իշքաչիւս. Ընթերցաք զԹուղթսն՝ որք ընդ մխիթարական բանից առաջադրեալ էին թէ՝ Յովսէփ արքեպիսկոպոսն ըստ հասակին և ըստ համբաւուն և ըստ հանդամանացն արժանի է աստիճանի կաթողիկոսութեան, ըզնա ընտրել և հրաւիրել արժան է. Եւ զի՝ լերկուս սինոդոսըն մեր ես լիշատակեցաւ անունն Յովսէփալ արքեպիսկոպոսին և ալժանի դատեցաւ նա ես. և ի զանազան տեղեաց մարդիկ գալով ի Սինհոդոսն, ի հարկէ զնամբաւ ընտրութեան հաստ ցանկն առ նա. Թէպէտ և վասն կասկածելի պատճառաց ոմանց որք լայտնի են, ի Մահարիդ լալգմիկ ոչ համարձակեցաք ղրել զանուն նորա, սակայն ալժմոյս լերկար ես խորհեալ և խորհրդակցեալ հաճեցաք միաբանութեամբ և պատշաճ տեսաք զերկրորդ Մահսէր դրել. զոր դրեցաք ահա ըստ նոյն օրինակի, միայն՝ ընդ լարդելի պատրիարք Գանիէլ արքեպիսկոպոսին ղճոխատեա *) Յովսէփ արքեպիսկոպոսն դա-

*) Ճոխապատիւ. ալդճաք Թէ ճոխատն, այսինքն շատ մատաղ. Ց. Վ. Մ.

ալով, և զերկոսին ևս միապէս հաւանական ցուցանելով. Զար և ընդ սոյն Թղթոյս առաքեցաք ի Ղարս առ. Գէորգ Աղալս, զի թաթարաւ հաստուցէ առ քեզ ուր և իցես։ Եւ քեզ սիրելի եղբօրդ գրեմք, զի թէ առաջին մահէրն, և թէ զերկրորդ Մահէրն ի միասին մասուացես օրհնեալ Աղգին մերոյ, քանզի ունիս տեսանել յերկրորդումն զառաջինն ևս պարզապէս լիշեալ։ Եւ բանասէր բաբեխոհ աղգն մեր ի յերկուց արժանապատիւ անձանցըն զոր և կացուցանիցեն մեզ ընդունելի են, Բայց և ի ժամանել երկրորդ Մահսէրին և Թղթոյս առ քեզ, դու մեկ զաւղ *) դրեալ տացես Թաթարին որ բերցէ ի միւսմուԹիւն մեզ և ամենեցուն։

Իսկ վասն մահէրին կնքոյն պակասուԹեան տարակուսուԹիւն մի լինիցի, զի յաղագս սղուԹեան ժամանակին, իւրաքանչիւր կնքողացն ոչ եղև ժամանել. այլ նչանաւորքն անձինք կնքեալ են։ Այսպէս գիտացեալ զան դիցես չուտով դալոյ, և Տէր ուղղեսցէ զճանապարհդ ի բարին։ Ողջ լեր.

Դրեցաւ ի ՌմԽԹ (1800) Թուոջս, և ի Ցունվարի ԻՐ. ի սուրբ Աթոռն Էջմիածնի **)։

Մինաս եպս.	Դրիգոր եպս.	Սիմէօն եպս.
1215	Լուսարար	աթոռակալ
	1235	1233
Աստուածատուր	Բարսեղ	Թադէոս
եպիսկոպոս	եպիսկոպոս	եպիսկոպ.
ՌՄԼԹ	ՌՄԼԹ	1234

Ե. *Թուղթ ի Միաբանից սրբոյ աթոռոյս Առ Յովսէփ արքեպիսկոպոսն կողմանն Հիւսիսոյ, որ յետ վախճանմանն Տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին ի Սիւնհոդոսին ընտրութեան, արժանի համարեցաւ եւ սա կաթուղիկոսութեան, սակայն վասն կասկածոնաց ոմանց, ոչ եղեւ համաձակութիւն գրել զանունն ի մահսարին որ առաքեցաւ ի Կոստանդնուպօլիս: Այլ յետ աւուրց ի Թիֆլիզու մահսէր եւ Թուղթք եկին, որք յորդորեալ էին եւ զնա գրել, եւ միաբանութիւն մեր, ի վերայ առաջնոյ մահսէրին, զերկրորդ մահսէրն գրեա, անուամբ Դանիէլ Պատրիարգին, եւ Յովսէփայ Արք եպիսկոպոսին։ Վասն որոյ եւ ղէպ եղեւ այս Թուղթ հրաւիրանաց առ նա ինքն Յովսէփ արքեպիսկոպոսն գրել:*

Մեծահամբաւ բարձրապատիւ և գերարգոյ հօրդ մերում հոգևորի, Տեառնդ Յովսէփայ սրբազնասուրբ արք եպիսկոպոսի վայելչաշուք և քաջահաչակալ վերատեսչի կալսերապերճ մեծ երկրիդ Հիւսիսականի, Հայկազանց, մասուցանեմք մաքուր սիրով և կաթողին կարօտիւ և որդիական խոնարհութեամբ ողջոյն և սրբոյ աջոյդ ղնամբոյր։

Եւ ընդ սիրալրական ողջունիս և համբուրիս լայտ առնեմք վսեմախոհ Հայրութեանդ։ Զի ըստ որում ի տան աշխարհիս հանապազ երկու են ձայնք խնդութեան և կոծոյ, և կրկին ժամանակք ծիծաղելոյ և լալոյ, գալոյ և գնալոյ, մուտ և ելս առնելոյ և իբր պանդուխ է կենցաղոյս, սահման որոյ ընդ մի գուռն մտելոց հարկ է ելանել ընդ միւս դուռն, որ է անխոտոր ճանապարհ ամենեցուն մարդոյ անդր անցանելոյ և տունն լաւիտենականութեան, վասն որոյ ղէպ եղև մեզ նարդենիս ծանուցանել զայս ինչ ձերումդ մեծարգութեան։ Գանդի հասարակաչահ և խնամառատ Հայրապետն մեր Տէր Ղուկաս սրբազան կաթուղիկոսն լետ բազմապատիկ ընդունօք տանելոյ զանազան փորձութեանց և նեղութեանց ի վերայ հասելոց, ի լրման ժամանակի կենաց իւրոց հիւանդացեալ զհիւանդութիւն մեծ ի նախընթաց ամի լամսեանն Նոյեմբերի և խոստովանութեամբ հաղորդեալ պատուական մարմնոյ և արեան Քեառն, ապա ի դեկտեմբերի 28 աւանդեաց զսրբասնեալ զիւր հոգին առ Աստուած, և ի հետեւեալ աւուրն որ էր տօն որդւոցն որոտման մեծահանդէս լուղարկաւորութեամբ ամփոփեցաւ ի գաւթի Տաճարի սրբոյ Էջմիածնայ, մերձ ի շիրիմս առաջնոց սրբազանից Հայրապետացն։ Արդ ալսպէս էառ Տէր ամե-

*) Ձեռ. գապզ՝այինքն ընկալաքիր։ Ղապզ. Ե. ք. Մ.

**) Օրինակեալ լիակատար ձագկեալ կարմրագեղով կոնդակիէն։ Ն. վ. Ե.

նակալ զՅէրն մեր ի գլխոց մերոց, և զ՝ալրն բարեհնոլց ի լորդուցս ողորմելեաց, որ թէպէտ հանդիստ էր նմա ի տաժանուտ կենցաղոյս զերծանելն և ղիմելն առ մշանջենաւոր կեանսն, այլ զմեզ եթող համակեալ ի սուգ և ի տրտմութիւն ի դառնաշունչ ժամանակիս և լանտերունջ երկրիս, չրժապատեցեալ ի խոցոտչաց զանազանից, ամենևին պակասեալ ի սիրելեաց։ Բայց զի գործ Աստուծոյ է կեցուցանել և հանդուցանել, և նա ինքն իշխէ կենաց և մահու, և ոչ ումէք է հակառակիլ կամաց Նորա. վասն որոյ ասեմք եղիցին կամք Նորին օրհնեալ։ Ուր և անհուն ողորմութեամբ իւրով լուսաւորեսցէ հոգի նորոգ հանդուցեալ սրբազան Հայրապետին։ Եւ զգլուխ պատուական հօրդ ողջ պահեսցէ և մխիթարեսցէ։ Իսկ արդ մինչև այսպէս փութոխական և լաջորդական է կենցաղոյս վիճակ և հարկ էր որբացելոցս ընտրել մեզ այցելու և կառավարիչ, ի պաշտպանութիւն սրբոյ տանս հանրականի և ի պահպանութիւն միաբանութեանս և օրհնեալ ազգիս մերոյ, սմին իբր լետ թաղման երջանիկ Հայրապետին մերոյ, բոլոր միաբանք սրբոյ աթոռոյս, և երևելի անձինք մերազնէից երկրիս և երկիցս անդամ. գումարեցաք առաջի սրբոյ իշման տեղւոյս Քրիստոսի լազագս ընտրութեան կաթուղիկոսի և լերկուս գումարմունեան նս քանիցս լիշատակեցաւ մեծահռչակ անուն քաղցրալիշատակ լարգելւոյդ և ամենեքեան արժանի դատեցաք զսրբութիւն ձեր գահաւորութեան ասմ. աթոռոյ որք և ի կատարման բանից, երկրորդի ժողովոյն նշանակեցաք ի վերայ թղթոյ և զքոյդ անուն ընդ Պատրիարգին Կոստանդնուպօլսի, և այլոց ուրուանի արժանապատիւ եպիսկոպոսի, զի զերեսին նս գրեցեմք ի համահաճութեան մահսերին, առաջադրել ազգին, զի զո և կամիցին լերեցունց գնոյն առաքեսցեն, Բայց մինչև ցաւարտ գրութեան տարակուսեալ ի տակնապեցուցիչ պատճառաց ոչ համարձակեցաք արձ.անագրել զանուն քաղձալուդ։ Վասն զի գործ խոհեմութեան է նախատես լինել զառնելեացդ, գիտել զկեալն ի վերայ օկտին և զգուշանալ ի վնասաբեր իրացդ։ Եւ մինչ հարկ է իրաւախոհ անձանց զբանն ի դէպ ժամանակին ոչ թաղուցանել ասասցուք զպատճառն ուղիղ մտօք և ստութեամբ։ Քաջալալտ իսկ է պատուականութեան քումդ. թէ ազգն մեր ըստ մեծի մասին է ալժմ. ընդ գաւազանաւ տէրութեան Օսմանցւոց, և տարաբաղդ մասն Հայաստան աշխարհիս ընդ խիստ իշխանութեամբ Պարսից։ Իսկ ի մերս ժամանակի լերկրորդ պատերազմին ալժմ. հզօրագունեզ կալսերութեան ընդ ազատրացւոցն մինչ սրբութիւն ձեր ընդ ծալրագոյն քահազ Գրիգոր Պօտեմկինին գնացիք ի Բանտէր, և ի լհամալիլ և լնոչ և ի Սեչով և լալ տեղիսն իբր բարերարել անդանօր հանգիպեալ մերազանց, լայնժամ ամենայն ազգասցիք՝ ծանեան զքեզ, և ի դուռն արքալի ես ծանուցեալ եղեր. և լետոյ ի լառնել գրաֆ Վալէրիան Ալէքսանդրիչ Զուբով սպարապետին լալկոլս ի վերալ Պարսից եկիր ընդ նոսա ի Տարբանդ և ի Շամախի. և ի Գետնջա, և ամենայն Պարսիկք թէ տեսութեամբ և թէ ի լրոյ իմացան, որոց և բազումք ղղացեալսն զգալէին առ ալսր։ Եւ սրբութիւն ձեր որ փափագէիր դալ լերկրպագութիւն Քրիստոսաէջ սրբոյ տեղւոյս, և ի համբոյր սրբազան Հայրապետին, ի դառնալ զօրացն ոչ կարացեր գալ, այլ այնպէս կարօտակէզ սրտիւ զարձ արարեր, և զմեզ ևս թողեր կաթողինս քաղցր տեսութեան ձերոյ։ Թողումք զայն որ լերկիցս հրաւիրել լուսահոգւոյն առ գործս երկուց մեծամեծ տեղեացն ոչ ախորժեցար ճաշակել զդառնութիւն խըստութեան այլազգական իշխանութեանցն։ Արդ՝ այնոցիկ պատճառաց երկիւղին թէ գուցէ ընդ ազատ պատահիցին անձինդ ազնուականի և սրբոյ աթոռոյս և մանաւանդ խղճալի ազգի մերում թէ անդ և թէ աստ զտանելոց. և կարծելով ևս թէ ձեզ լօժարելի չիցէ ի կալսերական ապահով երկրէ գալ ի կալուած տէրութեան այլազգեաց, ոչ համարձակեցաք գրել զանուն մեծագործութեան քո ի մահասրին. այլ զկնի պատրիարք Գանիէլ արւի եպիսկոպոսին գնիրեմ. արհի եպիսկոպոսն նըշանակեցաք գիտելով համաչունչ եղբալր և որդի քո ե հաճելի գոլ ձեզ լետ ձերոյ լարգութեան գնա արժանի տեսանելն. եւ զայն առ ի զիտրձ առնուլ թէ վստահանալցէ ազգն լալդմ կողմանէ զոք խնդրել։ Եւ հետևաբար աղդ ևս արարաք անդ զաստանօր լիշատակութենէ քո։ Ահա ճշմարտաբանութիւն անմասն խստութենէ,՝՝որ մնք վասն երկիւղի պատճա-

ասցն չգրեցաք ի մահէրին ապա թէ ոչ ի զքեզ ընտրեալ եմք կատարեալ հաւանութեամբ արժանի դահակալութեան սրբոյ աթոռոյս. եւ վիճակն իսկ քեզ է ժամանեալ այսօր՝ իսկ յետ մեռանելոյ մեր յուղարկաւորութեան մահէրին, ի թիֆլիզու ժողովրդենէն մահէր ընկալաք հանդերձ թղթովք մեծաղօր Դէօրգի արքային վրաց, և որզւոյն նորա քաջազէն Դաւիթ Միրզային ձեռամբ մեծիշքեարբաչի Ծովսէփ աղային. և Տէր Առաքել աւագ քահանային. որք գրեալ էին զարժանաւորութենէ մեծաչուք անձինդ և դժամանելոյ վիճակին առ քեզ և ցուցեալ էին յամենայնի օկասակար գոլ զգահակալելդ աստ և ոչ վնասարեր, իբրև տեսաք թէ ոչինչ է տարաձայն խնդիրն ի մերս ընարութենէ և հաճութենէ, ապա զերկրորդ մահէր գրեցաք ըստ օրինակի առաջնոյն, և ընդ Դանիէլ պատրիարգին զձեր ըղձալի անուն կարդեցաք զերկոսին ես միապէս հաւանական և հաճելի մեզ ցուցանելով, զի լերկոցունդդ զո և կամիցին առաքեսցեն։ Ապա և զայս թուղթ հրաւիրանաց ջերմեռանդ սիրով խոնարհաբար առ. վեհանձնութիւն ձեր գրեմք առ. ի գիտել թէ մեք միաբանք սրբոյ աթոռոյս յօժար սրտիւք և բարի դիտաւորութեամբ կամիմք և խնդրեմք զսրբազնութիւն ձեր լինել կաթուղիկոս սրբոյ աթոռոյս, և ազգին մերոյ և մեզ, որ եթէ լիշեալ պատճառաւքն չունիս կասկած վտանգի առ. ամենայնիւ անձն քո և առ սուրբ տունս, և առ ազգ մեր մշտապարերար ի հրաւիրել ազգին հրամայեսցես եկեսցես ի սուրբ աթոռս ի կաթուղիկոսութիւն ուղղափառ սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց, և ի պաշտպանութիւն մեծի տանս. և ի հայրապետութիւն որքացեալ միաբանութեանս. ճշմարտիւ հաւատացեալ թէ ի մէնջ ըստ ամենայնի մտադիւր ընդունելութիւն և որդիական հնազանդութիւն առընծայիլն սրբազնութեան ձերոյ և ի վերալ ղլխոց մերոց ունիս զտեղի, զի արդարև այսր ձեր է վիճակն կաթուղիկոսութեան։ Բայց եթէ ոք կիցես ի պատճառացն լիշատակելոց թէ վտանգ լինիցի չքեզափառ անձինդ, և սրբոյ աթոռոյս և ազգի մերում, և չկամիցիս գալ առ այն ոչ կարելիք լինել Գեզ մեղադիրս, ապաքէն թողլով ընտրութիւն օկտի ձերոյ իսկասութեան, և լաւէտ եւ վերնախնամ տնտեսութեան ապաստան, մնամք ձերումդ մեծապատիւ հայրութեան արժանահայց աղօթաւորք և հնազանդ որդիք որքացեալ միաբանք սբրոյ Էջմիածնի տօրակնքողք ի թղթիս եպիսկոպոսք և վարդապետք և ալք որք ընդ մեզ։

Գրեցաւ յամի Տեառն 1800 և ի թուականութեանս Հայոց ՌՄԽԹ ի յունվարի ամսոյ 29. ի լուսանկար աթոռս սուրբ Լ.Ջմիածնի։

Ջ. Գնդյարգևլի ի Քրիստոս սիրնցեալ եղբօրդ մերոյ Տեառնդ Դանիէլի Աստուածաբան վարդապետի, սրբազան Արք եպիսկոպոսի եւ հոգևկոչ Պատրիարքի մեծիդ Պօլսոյ րազմաքազմ ըղծիւ մաւոցանեմ զողջոյն եւ զսէր տիրական։

Հոգեկից քաղցր եղբայր իմ ի Քրիստոս. Մխիթարութիւն մեծ է պակելոց սըրտից՝ մինչ գտանեն՝ դիպուկ և յարմար առիթ իմն գրութեամբն՝ առ ի վերակրկնելոյ զսէրն՝ զոր սեեուեալ ունին՝ լինքեանս, որք եթէ ոչ կարեն կենդանական աչաց տեսութեամբ՝ գոնէ անկենդան խօսուն գրչաւ լցուցանել զօրէն զփափագ իւրեանց. որպէս ահա ի տնօրէնութենէ աստուծոյ՝ առ մեզ դիպեցաւ սոյնս. որ յաւուրս յայսոսիկ կրկին վերաժամանեցին մեզ քանի մի գրեանք ի զանազան տեղեաց, այսինքն, ի սուրբ գահէն և յարարատեան, նաեւ ի վրաստան եղեալ լեւոնեան անձանց. ընդ որոց և ի ներկայիս յաժդարխան եղեալ սիրելի եղբօրէ մերմէ. սրբազան եփրեմ արևի եպիսկոպոսէ վերակրկնեալ գրութիւն. որ իբր թէ առ այս նիւթ յատուկ հրաւիրակ լինիլ մեզ ուղևորեցեալ. (ղրէ) և պատճառեցին մեզ զսոյն վերածարծութիւն սիրոյ, որով և գիմմամբ ի զեկուցանել սրբազնութեան ձերոյ, որ լիշեալ գրեանքն այնոքիկ միահաղոյն ծանուցանեն զկարի ծանր հիւանդութիւն սրբազնասուրբ վեհին Տեառն Ղուկասու ընդհանրական հայրապետին մերոյ. (որոյ կենսատուն աստուած՝ ժիր առողջութեամբն կեանս երկարամաց պարգևելով՝ չնորհեսցէ սփոփանս և մխիթարութիւն մեզ և բոլոր մերազնէից՝ Ամէն.) ուստի և հրաւիրեն զմեզ, (որպէս աստի յառաջ ևս հրաւիրեալ էին). առնուլ

Ձ 958 Ա III Ձ 4422

յանձն զլուծ պաշտօնատարութեան սրբոյ դահին. և լինիլ ի պատրաստի, որ ի լուր չումանն վեհին յերկրաւորացս առ յերկնալինսորն անզրաւ վայելչութիւն, անկորուստ ժամանակաւ փութացուք լինիլ ներկայ ի սուրբ գահն, առ ի լինել հոգաբարձու ի պաշտպանել զնա ընդդէմ ալէծփեալ վրդովմանց կողմանցն աւետիք ի բարբարոս բռնակալացն պարսից, որոց կրկին ըստ առաջնում նուագդի որպէս Քրիստոսասպակ վրաց Արքալին՝ և համայն երևելի իշխանային անդր եղելոց. նմանապէս և միաբանից սրբոյ գահին՝ ունէաք գրեալ. թէ առ ի ծառայել աստուծոյ, և սրբոյ տաճարի իւրոյ. նաև բոլոր հասարակութեան ազգին, կամալ և ակամայ, եթէ առցուք յանձն զծանրութիւն դժուարակիր լծոյն այնմիկ ի սոյնպիսեալ խառնվեալ ժամանակի փոխանակելով զպահովութիւն հանգստութեան մեր ընդ հոլովակի ճգանց և անձկութեանցն այնոցիկ՝ վասն սիրոյ՝ և օգտի տանն աստուծոյ, սակայն ոչ կամիմք ե. րեիլ անձնական. և լինիլ առիթ վրդովմանց սիրոյ և միաբանութեան և համաձայնութեան բոլոր մերազնէից. վասն որոյ և գրեացուք ի Կոստանդնուպոլիս առ համայն գերապնիւ իշխանս և ժողովրդականս. նաև սրբազան Պատրիարգի նոցա. (որպէս և աստի յառաջ դրեալ էաք առ ի Քրիստոս հանգուցեալ սրբազան Զաքարիայ Պատրիարգի եղբօր մերոյ և ամենայն իշխանաց, որք ներկայէս գտանին գրութիւնքն այնոքիկ ի ձեռս հանճարունակ տիրացու Մանասէ դպրապետի սիրելի որդեկին ձերոյ և մերոյ). որ եթէ համաձայնութիւն և հաւանութիւն այնց իշխանաց և բոլոր ժողովրդականաց՝ որք են այժմուս՝ սիւնք եկեղեցեաց՝ հիմունք ժողովրդոց՝ և պարծանք ազգին. և միաբանեալ ընդ նրբիմաստ սրբազան Պատրիարգի իւրեանց՝ համաձայն և միաչուն, եղիցի, յայնժամ ձայն բազմաց՝ ձայն աստուծոյ լինելով ի Ցեւռանէ եղև կոչումս այս հաւատալով՝ մատչիմք ի պաշտօնատարութիւն սրբոյ տաճարին աստուծոյ՝ և բոլոր ազգին։

Եւ այլ սոյնպիսիս վերակրկնեալ պատասխանեցաք թէ Արքալին վրաց իցէ՝ և թէ միաբանից սրբոյ գահին. և կամ համայն առ նոյն կողմունս եղեալ երևելի իշխանաց. և պայազատ մելիքներաց. վասն որոյ և ահա ըստ ասու գրութեան մերոյ՝ վերստին գրեցի յատկապէս առ վերոյ լիշեալ իշխանս և իշխանապետս տեղւոյդ. որ լընթերնուլն ձեր թէ զնախկինն, և զներկայիսն կարէք տեսանել զհաստատ յառաջգրութիւնս մեր զոլ սոյնաեարաս. որ եթէ կամեցողութիւն Աստուածալին ազդեալ ի սիրտս ձերոյ Սրբազնութեան, և նոցին բոլոր հասարակութեան. և եղիցի առ ամենեսին համաձայն հաւանութիւն, զեկուսջիք մեզ հաւաստի գրութեամբ համայնից. զի և մեք փութացուք կարդագրել զիրակութիւն մեր աստիս. և լինիլ ի պատրաստի ժամանել ըստ նոցին խնդրանաց անդր ի դիպուկ և պատեհ ժամու. որպէս և ստիպանօք հրաւիրեն զմեզ Բալց հոգեկից եղբայր իմ ի քրիստոս. բարուք գիտէք՝ դուք ինքնին զորպիտութիւն նոյնոյ կողմանցն. և զչարութիւն գըժնէից բռնակալացն Պարսից, ոյր սակս և զգառն վտանգալի դժուարակրութիւն լծոյն՝ որոյ պարտաւանղիլ հրաւիրեն զմեզ՝ կարէք երևակերպիլ. ուրեմն եթէ լցեն կամք աստուծոյ, և ելցուք մեք ի նոյն աստիճան պաշտօնատարութեան սրբոյ գահին. արդեօք որքան պարտիք և դուք բաղկակից՝ նիզակակից և օգնական լինիլ մեզ հանդերձ օրհնեալ և լուսաւորչածին հարազատ զաւակացդ ալդոցիկ՝ սրբոյ մօրն մերոյ լուսակառոյց սուրբ Էջմիածնի, զի եղբայր եղբօր օգնութեամբ, պարիսպ ամուր կառուցանել կարացուք ընդդէմ բռնութեանցն թշնամեաց խաչին քրիստոսի. Իրաւի է զի Քրիստոսասպակ Արքայն վրաց. որ է տէր և թագաւոր այնց գաւառաց և նահանգից, և մեզ սիրահար. որ իբր որդի մնեալ ի ձեռի մերում, փոխանակ երկրորդ հօր ճանաչելով զմեզ բաղձալ ունիլ առ ընթեր իւր ի սուրբ գահն այն. և ամենայն կերպիւ իբր պարտաւոր խոստանալ զհոգածութիւն և զպաշտպանչութիւն իւր. Նմանապէս և ամենամեծ տիեզերակալ հզօր կալչն և բարեպաշտ Տէրն մեր, որ անհուն սէր և չնորհս ունի արարեալ և առնելոց ես է մերոյ սուրբ գահոյիս. զոլով իշխան և թագաւոր բոլոր տանն վրաց. և Արալատեան գաւառացն՝ որք են ենթ իշխանութեամբ Արքային վրաց. ոչ ամենեսին իւնալելոց է ընդ համայն կալսերակալն նախապատ իշխանօք իւրովք՝ ի մէնջ և մեօք ի սրբոյ գահոյիդն. ըղ-

գութ՝ չնորհ՝ խնամք՝ և զգաչտպանչութիւն իւր. որոյ իսկապէս հաւատացեալն եմք. սակայն արտաքուստ համարելով զոսա՝ ոչ այնքան վստահ եմ որքան և վստահացեալն եմ ի սէր և ի միաբանութիւն բոլոր սղջին մերոյ. և մանաւանդ թէ զերազնիւ և հանճարաշաս իշխանացդ այդոցիկ՝ որք են ի տանէ ի ներքուստ իսկական և հարազատ որդիք. քանզի միաբանութիւն և համաձայնութիւն գոցա՝ միաւորեալ ընդ Աստուածային համահաճութեան. կառուցեալ և կազդուրեալ մեզ տունն և սիրողութիւնն՝ ըստ Աստուածային փրկչին բանի. ապա թէ ոչ անհամաձայնութեամբ և բաժանմամբ յանձին սէրն տունն. և կործանի տէրութիւնն. Ուրեմն առ այս յորդորեցէք զամենեսին. առ. սէր վուքասցուք ամենեքին. զի սիրով լինի մեզ չարկապիլ ընդ միմեանս. և մեր ամենեցուն ընդ Աստուծոյ. որոյ հաճութիւն՝ օրհնութիւն՝ չնորհք՝ սէր և խաղաղութիւն եղիցի ընդ ձեզ՝ ընդ մեզ՝ և ընդ ամենեսին. Ամէն։

Գրեցաւ ի մինն փետրվարի 1800 յամին ի Ս՚՚ Պետրբուրգ։

Է. Թուղթ Յովսէփ Արքեպիսկոպոսի առ իշխանապետս Հայոց ՚ի. Պօլսոյ

Առ ընդհանուր բարեւտոհմ պայազատս Ամիրայից, իշխանաց և իշխանապետաց և բոլոր Հայկազուն ժողովրդականաց Քրիստոսասէր անձանց բնակելոց ի Կոստանդնուպօլիս, ողջոյն, սէր և օրհնութիւն Աստուածային ձօնելով, Ջեկուցումն առնանք։

Սիրելիք մեր ի Տէր.

Ջմեծագոյն լարգանս և զոգնազեղումն սէր հոգեկան որ ի վաղի հետէ ունիմք առ ղերազնիւ և բարեպաշտօն ընդհանուր իշխանացդ և սիրազուն որդեկացդ մերոց, կարեմք ապացուց բանիւ հաւաստել նովիմբ գրութեամբ մերով, որ մերք ընդ մերք ի լարմար դիպուածոյ ունիմք լղեալ լատկապէս առ պայազատս ոմանս որ ի ձեզ. ընդ որոց կարացաք ունիլ իրաւացի առիթ ինչ գրութեան, իսկ առ հասարակութիւն ձերոյ Ազնուութեան մինչ ըղձալով միւսանգամ ունիլ բանաւոր պատճառ ինձ, այն ես դէպ եղև լանցելում սմի առաքել ալդր ի ձեռն հանճարիմաստ Տիրացու Մանասէ դպրապետի սիրելի որդւոյ մերոյ՝ զպատճէն դրոյն նորապատակ Արքային վրաց, որ կատարեալ գոլով ի նախնեաց և ի ծնողաց իւրոց, ունիլ հոգ և խնամածութիւն ի վերայ Աստուածածէջ և Լուսակառոյց Տանն և Տաճարին Աստուծոյ, որ ի վերնալին Տուչութենէ գտանի ներկայեալ հանդերձ նորին նահանգաւ. ենթ իւրոյ Արքայական գաւազանի իշխանութեանն վճռակեալ. որոյ Արքայի տեսանելով զծերութիւն և զանհանդիստ տկարութիւն անձին Սրբազնասուրբ Հօրն մերոյ հասարակութեան Տեառն Ղուկասու երից երանելոյ ընդհանրական Հայրապետի ամենայն Հայոց, և զմտաւ ածելով որ ըստ ընթացից մարդկային պարտաւորեալ բնութեան (Տէր մի արասցէ) փութով փոխիլ յանցաւորէս առ անանցն լաւիտենական երջանիկ հանգստութիւն պատահիցի, վտանգ մեծ լինելոց է սրբոյ Տանն վասն ներկայ խռովութեանց և անմիջոց բազմածուփ վրդովմանց կողմանցն ալնոցիկ, Թարց լատկագոյն կառավարիչ Տնտեսի և Չերմեռանդ հոգաբարձուի մնալն նորին, ժամանակս ինչ՝ մինչև լրասցի ընտրութիւնն. հրաւիրեալ էր զմեզ ընդ բազմաց երևելի անձանց եղելոց ընդ իւր իշխանութեամբ, գտանիլ ի մերձակայ սահմանս, առ ի վերաժամանել արագ անդ՝ ի դիպուկ ժամու, և բառնալ զլուծ նորին Հոգաբարձութեան, ըստ որում ակնառոտես լեալ էր ինքնին՝ մինչ էաք մեք ի նոյն կողմանս ի ժամանակի անցեալ աղէտալի խռովութեանց, թէ որպէս հեզաբարոյ քաղաքականութեամբ վարելով ընդ բարբարոսաբնոյթ բռնակալ խաներացն Պարսից, չահէաք զնոսա ի քաղցր ակնածութիւն։

Բայց մեք ըստ պատշաճին պատասխանեալ նմա, գրեցաք ալդր առ ի Քրիստոս հանդուցեալ Ջաքարիա Սրբազան Պատրիարքին, և առ Ձեզ հարազատ որդեկացդ սրբոյ դահին, զեկուցանելով թէ մեք զոյն կոչումն ոչ կամիմք լինիլ միայն ի թաղաւորաց և ի դասեերաց. կամ լերեելի իշխանաց և ի մարդկանց. այլ նախ՝ Աստուծոյ, եւ՚ապա ի բոլոր հասարակութենէ Հայկազուն Քրիստոսասէր ժողովրդոց, որոց բազմութեան ձայն, Ձայն Աստուծոյ հաւաստելով կարացաք յանձն առնուլ յօժար ընդունելութեամբ։

Եւ այս վասն երկուց գլխաւորագոյն

պատճառաց, նախ՝ զի մի բռնաբարիչ սրբացեալ աստիճանին երևեսցուք, որպէս և ընթեռնումք ի մեր պատմութեանց երբեմն եղեալ ոմանց՝ և ստորեւ մեծի վշտալիր վրդովմանց ենթարկեալ զսուրբ գահն, առիթ ընդհանուր գալթակղութեան եղեն Ազգին. Երկրորդ՝ զի մի չունչ խռովութեան և քակտումն սիրոյ եւ միաբանութեան ծնանիցի ի ժէ՛ձ ձեր և՛ ի մէ՛ջ անգ եղեալ լանաւոր հօտին Քրիստոսի. Ոյր սակս պատուէր տուաք վերոգրեալ տիրացու Մանասէ հարազատ որդւեկի մերոյ՝ մի հրատարակել զնոյն զրեանս մեր մինչև ցպատեհ ժամն, զանդի թէ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ պարտական իսկ եմք ազօթել առ կենսատու Աստուած՝ չնորհել առաջ և երկար կեանս սրբազնասուրբ գլխոյն և հօտապետին մերոյ, զի որպէս ալաքան ժամանակ զլոլովակերպ ճգունս և զվիշտս (զոր ի փառս իւր համարեալ՝ վարձս մշտնջենական երջանկութեան պարզևեսցէ) կրելով կառավարեաց զսուրբ տեղին՝ ընդդէմ լարուցմանց բաղմադիմի թշնամեաց, կրկին կառավարեսցէ ժիր առողջութեամբ ի բազում ամս, որպէս և լընթեռնուլն ձեր զնոյն գրեանըս մեր կարէք վերահասու լինիլ սոյնոյ հարազատ և անտարակուսելի մտերմութեան մերոյ։

Եւ այժմ պատճառ երկրորդելոյ մեր զսոյնս՝ գիտասցէ Աստուածասիրութիւն ձեր՝ որ կրկին գիպեցեալ եղաք ի սոյն աւուր բազմութեանց գրեանց, ոչ միայն ի նախկին հրաւիրոզաց, այլ և արդիւնական լերեւելի միաբանից սրբոյ Աթոռոյն, որոց մինն է ներկայաբար լԱշտարխան եղեալ գերիմաստ եպիրեմ սրբազան Արքի Եպիսկոպոս եղբարըն մեր, և լարգի մելիքներաց եւ լընտիր ժողովրդականաց այնոյ կողմանց, որք յորդորեն զմեզ զիջանիլ ի հաճութիւն, թողլոյ զաստիս ապահով վարելչութիւնն եւ զմասնաւոր աշխատութիւնն ի վերալ սակաւաթիւ ազգայնոց և յանձն առնուլ կրել զծանրակիր լուծն Տնտեսութեան և պաշտօնատարութեան սրբոյ Տանն, եւ ժամանեալ է սրբազնութեան գերերջանիկ Հայրապետն մեր *). և յարուցմունք բնակչաց պարսից անդադար ալէկոծեն զչքնաղատես Արարատեան գաւառաց, որպէս և ի ներկայիս եղեալ խանդարումն խոլալ քաղաքին եւ ամրոցին լուեալ իսկ էք, յորմէ եւ առ յալլ տեղիս կասկածք յայտնապէս նշմարին, զուստի ոչ է ժամանակ լետաձգութեան (գրեն) թողուլ մէկոց ինչ անտերունչ զսուրբ գահն. և ո՛չ ալժմոյս երեւելապէս ժրաջան աշխատասէր՛ և առ քաղաւորս եւ իշխանս լառաջադէմ եւ ենթակալ չնորհաբաշխութեան նոցին, և մանաւանդապէս ձերոյն և աւագ ի մէջ սրբազան արէն Եպիսկոպոսաց մերոց իրրև ղՀայրապետութիւն, վանորոյ և ոչ ոք կարէ ներհակիլ և կամ խոչընդակ լինել ալսու արժանաւոր ընտրելականութեան և կոչման Ձերոյ սրբազնութեան, ուրեմն խնդրեմք մի զանձինդ հանգստութիւն նախադասել առ ճգունան, որ վասն Աստուծոյ՝ և Տանն սրբոյ՝ և ընդհանուր ազգին՝ բանաւոր հօտին Քրիստոսի. և այլ սոյնպիսի բազում յորդորանօք խնդրեն ի մէնջ փութալ աճապարել և մերձենալ ի նոյն կոչումն. բայց մեք վերստին զնոյն առաջինն պատասխանեցաք նոցա. թէ ոչ կամիմք ինքնին կարևոր իշխանութեամբ նպաստաւորաց մերոց ելանել ի սուրբ գահդ, այլ կոչմամբն Աստուծոյ, եւ համահաճութեամբ (առ) հասարակ ղաւակաց սրբոյ Մօրդ մերոյ, զի բազմասցի և վերակրկնեսցի սէր և խաղաղութիւն առ ամենեսին, որ է պտուղ եւ պարգեւ Ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ, որով եւ մեք կարասցուք զղենուլ զղօրութիւն ի բարձանց առ ի հովուել զհօտն Աստուծոյ և կրել զծանրութիւն լծոյն այնորիկ եւ այլն։

Արդ՝ այս վերստին հարկադրեցեալ ի նոցունց ժոխց, զրեցաք զսոյն օրինութեան նամակ, ազնուազարմ իշխանաց և իշխանապետ Ամիրայից, եւ օրինեալ հարազատ զաւակացդ առ հասարակ բնակչաց մեծի մայրաքազաքիդ Կոստանդնուպօլսոյ. որպէս եւ յատկապէս առ սրբազան Դանիէլ Պատրիարգ տեղւոյդ՝ հոգեկից և սիրելի եղբայր մեր. որ եթէ կոչումիս այս իցէ ի Տեառնէ և լիցի ի ձեզ հաւանութիւն եւ համակամ հաճութիւն աստ եւ անգ եղեալ միաբանից եւ երեւելի անձանց և Քրիստոսասպակ թագաւորաց, որս յայնժամ խնդրեմք զեկուցանել մեզ հաւաստի գրութեամբ, զի եւ մեք հետեւեալ

*) Ինձ թուի թէ պակասին աստ մի քանի տողք։ Ց. ք. Մ.

ընդ ձայնից բազմութեան, ստորադիցուք ոմեք ձայնի և հրամանի իսկական պաշտպան չի և անքուն պահապանողի սրբոյ Տանն իւրոյ Որդւոյն Միածնի, որ Իջմամբն իւրով փառաղարդեալ կառոյց ի վերայ անյաղթահարելի հիմանն իւրոյ անշուշտ բանին. որոյ չնորհ և օրհնութիւնն հանգիցէ ի վերայ Ձեր ամենից, եւ ի վերայ ընդհանուր Հայաստեա հաւատացելոց իւրոց. Ամէն։

Գրեցաւ ի Սանկտ Պետրբուրգ ի 1. փետրվարի 1800 ամի փրկչին.

Խոնարհ ցուլսէֆ Արքեպիսկոպոս Հայոց Ռուսաստանի և Կասպէրս։

(Օրինակեալ ի ձեռագրոյ դրոշին) Կ. վ Շ.

Ցայս միտս է գրեթէ միւս նամակ Նորին առ Դանիէլ պատրիարգ Կոստանդնուպօլսոյ, ի նոյն թիւ տարւոյ եւ ամսոյ. այլ ժամակն որ առ Արհին Մինաս՝ կարեւոր գաղիմ արտադրութեան։

Տան. Կ. վ. Շ.

Ը. Տեառնդ Մինասայ սրբազան Արքեպիսկոպոսի եւ Աստուածաբան վարդապետի

Ողջոյն կարօտալի։

Զփոխումն լաստի կենաց առ երջանիկ կեանս վշտալիր և երանելի Հայրապետին մերոյ և Հօր՝ ի թիֆլիզու լուեալ ողբացաք ըստ օրինի որդւոյ. և արտասուեալ, համայն վիճակաւ կատարեցաք զպաշտօն հանդիսաւոր, մինչեւ տալ գիտել մեծի կայսերն մերոյ, և զհանգէան եղեալ ի կաղէթի հաչակեալ եղեւ ամենայն ուրեք։ Փրկիչն մեր Քրիստոս հանգուցեալ զհոգի նորա ընդ սուրբ Հայրապետսն, լարուցեալ զարժանաւոր ժառանգս Աթոռոյ իւրոյ և մխիթարեսցէ զսիրտ մեր ամենեցուն։

Ըստ լրոյ մահու Նորին ընկալաք և ըզ. նամակսն, որ առ Ամենողորմած Թագաւորն մեր և առ այլս, ահա աշխատեմք ի թարգմանել և իրրեւ ի կենդանւոյ մատուցանել. ծանեալ և զշնորհան գրութիւնս երանեալ Հօրն մերոյ որ առ մեզ սակս Եփրեմ վարդապետին. Նա բնակելով ի տան իմում որպէս որդի և եղբայր կալ ի մխիթարութեան, որպէս յառաջագէմս

Դրեալ էր մեզ Նորին Արքեպիսկոպոսական բարձրութիւնն, նոյնպէս և այլք բազումք լետ վախճանի սրբոյ Հօրն՝ զընտրութենէ միաբանից մերոց, ի նոր Հայրապետութիւն. և որպէս թէ ձայն եղբօրդ և ներկայնոցն բարձրացեալ եղեւ ի վերայ նուաստութեան մերոյ. առ այդ չնորհակալ եմ զՍրբազնութենէդ Քումմէ և ղներկայսն ամենայն հարազատացն մերոց. բայց անպատրուակ բանիւ լուր Հոգի եղբայրդ. զի ահա երկու ամի լրացեալ, վասն այսմ խօսին ընդ իս ի վրաստանս, ի սուրբ Աթոռոյդ և ի Պօլսոյ. հուսկ լեալով եւս Եփրեմ վարդապետն երկիցս դրեալ էր առ իս թէ՝ առ այն վախճան եմ եկեալ առ քեզ, զի յորժամ ղլուխն մեր փոխեսցի, զքեզ մուծցուք ի սուրբ Աթոռն, զի այլ ա-մենից ի քեզ հայիմն և այլն։ Սոյնպէս գրեն մեզ և այլ երեւելի եպիսկոպոսունք սրբոյ Դաւիդ. ուրեմն լետ այսր ամենայնի ոչ մարթ էր միաբանիցն մերոց, ընդ մերս անուան դասել և զայնպիսի անուն, որով նախատինք վերաբերի սրբոյ Դաւիդ և Ազգին։ Այլ գուն իմաստասիրեա. մի՛թէ ոչ դոյ Աստուած իսրայէլի որ երթան պաշտել զճանճիկն։

Այս ամենայն ի բաց թողեալ գրեմ Հոգի եղբօրդ. ուզեմ ամենայն ընդ երեսս երկրի՝ դիտելով առ իս ջերմեռանդ սիրով կապակցեալ, հաւաստի գիտեմ զմեզ հրաւիրել առ այն, (թէպէտ ի մեծ կայսերէ նչանակեցեալ իցեմ առ այն նպատակ, և ի վրաց Արքայէն հրաւիրեալ ամենայն նախարարօք Ազգին մերոյ.) բայց վեհագունից հրամանն լետին համարեցի և համարիմ, զի մի ընտութիւն նոսիւս մտցէ ի սուրբ աստիճանն. այլ տեղի ետու ազգային սովորութեանն, զի Ազգն ես՝ և զիս՝ Ազգն ընդգրկելոց եմք. ուստի և վասն այսմ նիւթոյ ի ժամանակս կենդանութեան Չաքարիայ պատրիարքին դրեցի նմա և իշխանացն, և զնա կոչեցի ի բարձրադոյն աստիճանն՝ ըստ ամենայն իրաւանց. այլ մինչ նա մեռեալ գտաւ, իշխանք ամենեքեանք՝ որպիսիք են, Ընորհք, մահտեսի Ստեփան Զէլէպին, Պետրոս Մարտիրոսեան և այլք, ընդ տիրացու մահտեսի Մանասէին, դրեալ էին մեզ պահել զթուղթն հաստարակ իշխանաց, զի յորժամ Տէրն մեր փոխեսցի ի կենաց, յայնժամ յայտնեցեն։ Ըստ այսմ գրութեան նոցա, և ըստ բարձրա-

կոյն հրամանին հանրական իշխողին կիսա-
զնդին աշխարհի, որ ոչ իշխանքն մեր իշ-
խեսցին առնել ինչ, և ոչ մեր Դանիէլ վար-
դապետ պատրիարքն համարձակեսցի մերձիլ
ալսմ, իսկ միւսն անլիշելի է ալժմ և լապալն։
Եւ օգուտ սուրբ Աթոռոյդ է այն՝ զի եթէ
Հողին սուրբ ըստ իւրոյ զուտ ընտրութեանն
զմեզ արժանաւոր համարեսցէ այնմ կոչման՝
Դանիէլ պատրիարքի լինելոյ ի Պօլիս, որպէս
թէ լաւուկ Աստուծոյ տնօրինութիւնն է։

Ամենեքին որք գրէին ինձ՝ գալս և՝ եթ
ցուցանէին, իբր այնք ամենից առ. իս է, այլ
ոչ գիտեն ես յօժարիմ թողուլ զհանգստու-
թիւն և զփառս՝ զորս վայելեմ աստ, որպի-
սիք են Դաւիթ վարդապետն, Յովհաննէս
վարդապետն Գեղարդակիր, Սիրեմ վարդա.
պետն և այլք. զի ընդ Ձեզ երեւելիքն սուրբ
Աթոռոյն ալժմ սոքա են. ապա մինչ նոքա
ազիողորմ ձայնիւ կոչեն, և յոյս իւրեանց առ.
իս գնեն, յաղագս ծառայելոյ Մօրն մերոյ,
որքան քարացեալ սիրտ պարտ էի ունիլ հա-
կառակիլ, և որքան անձնասէր պարտէի զոլ՝
զանձն իմ չտալ ի զոհ ծառայութեան լուսա-
բուղխ Մօրն, յորում ծնեալ և մնալ եմ, ո-
րոյ չնորհօքն և զտեալ զալքան չնորհ և
պատիւ. մինչ չէր օրէն անողորմ ոչ լինել
վասն զմին աղքատ աղաղակողացն. ալսմ
նուիրել զանձն իմ, և կապեցեալ գրութեանց
միաբանիցն Աթոռոյն և համալն Ազգին՝ կա
մալ ակամալ իմի ի խնդիր նոցա, լինել
սպասաւոր սրբոյ Աթոռոյդ, աշխատիլ վասն
նորա և Ազգի նորին, քանիւ և գործով, որքան
կարն իմ տացէ տեւողութիւն. վասն որոյ և
լանձնելոյդ *) զգուշացեալ ի յաղագալն
վտանգէ սուրբ Աթոռոյդ՝ սակս անտիրու-
թեան, և մանաւանդ համառօտելով զ·չնչին
ոմանց և կարճեցուցանելով զգրիչս անչրջա-
նակատից, ըստ խնդրոյ Եփրեմալ վարդապե-
տին գրեցի առ Դաւիթ և Յովհաննէս եպիս-
կոպոսսն՝ զոմանս պատուէրս իմ ցուցանել
միաբանիցն, և լինել կառավարիչք կամ վէ-
քիլք մեր, մինչեւ հաճեսցի Տէր արժանացու-
ցանել զմեզ ալգմ վիճակի։

Իսկ ալժմ առ Հալրդ իմ և եղբալր զալս
և եթ գրեմ, որ եթէ կոչումն մեր լԱստուծոյ
իցէ հաստատեալ, ըստ առ քեզ գրութեանն
Արքալին և ես գրեմ. խոնարհաբար խնդրեմ
ի սրբալնութենէդ զի հաճեսցիս ի խնդիր իմ.
գնացեալ ի Ներսն ի բնակութիւն Տեղապահ
Մկրտիչ վարդապետին, և անդ կացցես ընդ
ներսնալնոցն մերոց՝ որպէս Հալր խոհական
զոգ սիրեցելոյն Յովսէփալ, և անդ լինել
լամենալն աւուրս կենաց քոց որպէս Յակոբ
ընդ Յովսէփալ. զի ոչինչ է ընդ մէջ Հօր և
որգւոյ Նոքա երկոքին եղիցին անդէն վէ-
քիլ, որպէս և գրեալ եմ նոցա, իսկ դու
Հալրդ իմ որպէս Տեղապահ որդւոյ քոյ՝ և
կառավարիչ ներսնալին որդւոց մերոց և
տան, . . . միաբանիցն ամենեցուն սրբազան
Եպիսկոպոսաց, Աստուածաբան վարդապետաց,
աբեղալից, սարկաւագաց, դպրաց, մահտէսաց,
նաեւ վարձեալ մշակաց ամենից՝ լինէն ող-
ջոյն և օրհնութիւն և պատուէր տալ, լինել
զգաստ իւրաքանչիւրոցն ի պաշտօնս իւրեանց,
լինել միաբան հոգւով, հնազանդիլ օրի-
նաց և կառավարչաց իւրեանց և արի ի պաշ-
տօնս զոր ունին ինքեանց յանձնեցեալ։

Արդ զոր լինչ հարկն է՝ գրեցեալ եղեւ
ի Պօլիս լինէն, Տէրութիւնն եւս գրելոց է.
մինչ մեք ի գրուսնս գտանեցաք՝ ոչ կարելի (է)
չտապիլ, մինչեւ ոչ եկեսցէ բազմակնիք մա-
սար ձեր և խնդիր Արքալին, առ հզօր կալսրն,
որոյ լաղագս լսեմ, զի առաքեալ է առ Ձեզ
զպարսն Միրիշքեարն, և զՏէր Առաքելն,
որպէս գրեն և նոքա չուտով ծանուցանելոց
են Նորին կալսերական Մեծութեան և մեզ.
ուր եմք և մեք պարտիմք սպասել աստ. ա-
պա լետ ընկալման համահաճութեան՝ աստ
հոգալ զԱզգալին հարկաւոր գործս. և որպէս
երեւի մեծ թագաւորն ունի կամս մեծ չքօք
առաքել զմեզ, ըստ որում նոր է այս։ Ես
սպասեմ մինչեւ ամսոյս վերջն ի Պօլսոյ լուր
առնուլ, որպէս զի պատրիարքն և իշխանքն
ըստ կարգի հոգւոյսդն զհոգալիսն և զՓէր-
մանս. . . . Եւ եթէ հնար իցէր մին Ռաղամ
Պարսից և Փէրման Օսմանցւոց յաղագս կա-
թուղիկոսական իշխանութեանն առաքիցէիք,
լոյժ բարւոք լինէր. . . . . ,

Մնամ Ձերդ եղբալրութեան ի Քրիստոս
եղբալր և սրբոյ գահիդ սպասաւոր նուաստ

ՅՈՎՍԷՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Յամի 1800 փետրվար 23.
ի Ս. Պետերբուրգ։

*) Թուի լինել՝ լանցելոյն։

ԹՈՒՂԹ ՅՈՎՍԷՓԱՅ ԱՐՔ ՆԱԼԻՍԿՈՍԻ ԱՌ ՍՐԲԱԶԱՆ ՇԻՐՄԱՅ ԱՐՔ ՆԱԼԻՍԿՈՍԻ.

Ցանցեալ փոչին գրեցի առ քեզ զամենայն որպիսութիւնս մեր, և զկնի աւուրց ընկալաք ի քէն ի փետրվար 16-էն գրեալ գիրդ. տայիջ Տէր ալժմ կատարեալ առողջութիւն ունիցիս։ Դրեալ էիր որպէս թէ Յովհաննէս վարդապետն գրեալ է առ. Քեզ ի Յունվար 25. զընալ Դաւիթ վարդապետին ի Պօլիս Մահէրաս. այգմիք չեմք տեղեակք և եթէ գալ մեզ Թուղթ՝ վրաց դեսպանքն ի Մօզդոկ են, ի հարկէ պահեն ինքեանո ըստ սովորութեան իւրեանց. դի ինքեանք տացեն մեզ։ Յամսոյս 5. հրամայեցին նոցա գալ աստ, այլ ոչ գիտեմ Դաւիթ վարդապետն զկնի տեսանելոյ Մինիչքիար բաշուն և Տէր Առաքելին է գնալն նորա թէ լաւագ. այս միայն էր ինձ հարկաւոր։ Այլ դու լուր ինձ ալժմ զանցս Պօլսոյ։ Ի Յունվարի 23, ի կարնոյ գրեալ են անդ զմահն Հալրապետին. լեալով Պատրիարքին հրամայեալ է ումեք չյայտնել, մինչև դրոյ գնալն լԱթոռոյս. այլ քրիմընչիւն բարձրացեալ ի տունս տունս իշխանաց զանազան զրոյցք են (եղեալ) որպէս գրեն մեզ Զօպան Ամիրայն, Գրիգոր Սախաղատան, մահտեսի Սաեվան Ամիրայն Ղլիաղարեան, ծերունի Սահակ Ամիրայն, Պետրոս Ամիրայն, մահտեսի Գասպար աւիրայն, մեր տիրացու Մանասէն և այլք, որպէս թէ ոմանք առաջնորդք կողմանց լարեալք լիշխան բարեկամս իւրեանց խոստանան զծախսն հատուցանել և ծանր ծանր ընծայս տալոյ Պատրիարքին, իսկ Պատրիարքն՝ տակաւին ոչ իւր կամքն է լայտնեալ, և ոչ նոցա հաճեալ. այլ միոմն լՆալիսկոտոսաց (որ կարծեմ թէ վեքիլ Յովհաննէս վարդապետն իցէ) 200. Քիսալ խոստանալ վէզիրին, և վէզիրն գոլով ի բանակ՝ լիւրոց բարեկամացն առաքեալ է առ նա աղերս հանել՝ զընծայսն ընկալնուլ և հրամայել իշխանացն զնա ընտրել ի կաթուղիկոսութիւն. իսկ մեզ աղաչեն փութալ ի լԱթոռն ըստ լուսոյ Ազգին, լայնժամ խորհուրդ ամենեցուն ջրեալ լինի. նաև միաբանքն լԱթոռոյ ըստ իւրեանց բուն սովորութեան զանազան քուքիւնս են գրեալ ոմանց, զորս չէ փոյթ մեզ երկարել։

Նախ՝ ամօթ միաբանիցն, երկրորդ՝ ամօթ իշխանացն, Երրորդ՝ համօրէն ազգին, որ արծաթով ընտրեալքն ունիցին Հալրապետ ինքեանց։ Որպէս եւիցէ գրեմք գեղ պարզապէս թէ՝ խոստացեալքն արծաթով լառաջ մատիցեն, և թէ նոյն Պատրիարքն իւր մակագրութեանն ոչ չատացեալ, լառաջացեր ընդդէմ մեզ ապօրինաւորութեամբ որ ըստ ամենայն իրաւանց իմ է ժառանգութիւն ի Սիմէօն կաթուղիկոսէն մինչև ցարդ. որպէս գոլ գրութիւն ի մէջ իմ եւ հանգուցելոյն՝ ըստ ծերակուտութեան իմ, ըստ այնխատանացն իմ, ըստ հաճոյութեան երեւելի Միաբանից՝ լորոց մր եւ գու ես. Իմ վրաց այխարհին՝ ուր միշտ մեծ ձայն ունիմ. զիարդ հնար է նոցա գալ իբրև սեղեակ մոանել լառագաստ հարսին իմոյ. ծառայքս՝ լինել ինձ տեարք, և որդիքս՝ հարք. որով գիտութեամբ և կամ խեղկատակութեամբ ոչ կամիք *). իսկ մերն լայտնի է աշխարհի որպէս զլոլս, ուրեմն ես գնոսա ճանաչելոց չեմ որպէս կաթուղիկոս. այլ իբրեւ զմի ի լիրք բանաւորաց և ի լարծաթոյ ընտրելոց։ Թէ զինչ աստի ծնանի՝ խմաստասիրեան և գրեան լաթոռն. իբր **) կայ, որ քան զուղղեցի Ստեփաննոս վարդապետի և Քիւրիւրի անցքըն մեծ լինի ի նախատինս Ազգին և ի վնաս Աթոռոյն, եւ մանաւանդ թէ մինչ ամենամեծ կայսրն և վրաց Արքայն ալժմ ճանաչն զիս Պատրիարք ամենայն հայոց։ վասն այսմ թէպէտ լանցեալ փոչին գրեցին դ'սպանքն, սակայն այսօր լառուկ սուրհանդակ առաքեցին զպարեցուցանել ընտրութիւնս այլոց՝ թէ և հրովարտակ իցեն առաքեալ, այլ վասն մեր տալ պատրաստել. գրեցին և ի Վիրս՝ գիտել, եւ մի զոք մոծանել ի լայն Աթոռն։

Փութաք գրել Դանիէլ պատրիարքին, մի լինել պատճառ խռովութեան թագաւորաց, մի թերեւանալ եւ մի օտարանալ ի վիճակէն իւրմէ՝ եթէ որդի է սրբոյ Աթոռոյն. իսկ եթէ ձգտեացի, ունի տեսանել զոր ոչ կարծէ, բարւոք է մնալ անդ՝ որպէս է. թէ ի ճանապարհին իցէ՝ արգելցի որպէս Սահակ Ահազինն, եթէ ոչ հաճեացի՝ հրով

*) Գիտե՞մ։
**) Ի մաթ

ծախեն զսուրբ Աթոռն, եւ լինի ամբարիշտ խռովարկու եւ ապօրինաւոր բռնաւոր. ես չեմ մեղաւոր, որ ի Հուստոց երկիրն եմ, չեմ անքանաչեալ, այլ շահաւոր լեալ Ազգին, Աթոռոյն եւ հաւատոյն, ծառայէի Մօրս որպէս որդի ժառանգ եւ փեսայ նորին՝ եւ ոչ եթէ ծառայ Դանիէլի եւ կամ այլոյ ուրուք, որ եւ իցէ՝ ես զնոսա չեմ ճանաչելոց կաթողիկոս ոչ այս երկիրն եւ ոչ տունն վրայ։ Ահա գրեցի նախահոգալ նոցա եւ գիրդ չուտով հասուցես միաբանացն գիտել. կորուսանէ Աթոռն զհամային բաղաւորութիւն իւր. որպէս թէ զԱթոռն Լուսաւորչի։ Մինէ գու, Դաւիթ վարդապետն եւ Յովհաննէս վարդապետն եւ այլք, որք երեւելիքն էիք Աթոռոյն գրով ձերով ինձ խաբէիք։ Դրեցի Յովհաննէս վարդապետին զսուրբ Դեղարդն Թողուլ ի Թիֆլիզ կնքով 12 իշխանաց ի Մօղնի եկեղեցին. եւ ինքն գնալ ի սուրբ Աթոռն հոգա տանիլ կատարման գրութեան իւրեանց եւ բարձրագոյն հաճոյութեան Կայսերն մեծի, եւ Արքային վրաց եւ երկրի նորա։

Դանիէլ վարդապետին գրեմ ի վերայ Պօլսոյն եւ ի վերայ Աթոռոյն. եթէ ի տեղւոջն է տակաւին՝ կացցէ ի լռութեան. եթէ ի ճանապարհի է մնասցէ անդ՝ մինչեւ իմ գնալ ի Աթոռն. յանկարեծ եկեսցէ անդէն, իմ է. տղայքս արասցեն եւ նոքա՝ որք իցեն կոչեցեալ. այս տղայութիւն չէ՝ որ ինձ երկու սա կոչեն, լեռոյ ընտրեն զայլ եւ այլ անձինս, եթէ չգիտեն ինձ՝ ես լիմ տեղ նստեալ էի հանգիստ, թողուլ հաճեցայ զհանգստութիւնն, գի սուրբ Աթոռն փառաւորեցի, եւ գու իմաստասիրեա եւ փութա անցուցանել գհուրն սկսեալ, ապա թէ ոչ բազումք այրին, ափսոս է սուրբ Աթոռն որ մնասի։

Եւ եթէ 200. քսակաւորն յառաջացի, ուրեմն այն մնալոց է ի վերայ Աթոռոյն ի Դուռն թաւրքաց որպէս Մուխադդալ *) Մելքիսէթ կաթողիկոսի, այլ ամենայն հրաժարակեալ են, սպասեն սոքա յանժամ ունել, յորժամ ի յարքայէն եւ ի Կաթուղիկոսն գիր ընկալնուցուն։

Ես զմինասան Տեզապահ եմ կարգեալ ըստ բանի Արքային, և ամեն ինչ նմա զբաղել, եթէ գնա կացուցանէին, չունէի ինչ ասելոյ, դի ես գնա միշտ հայր եմ ճանաչեալ։

Յոհաննէս ՅՈՎՍԷՓ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ *).

1800. մարտի 8
ի Ս. Պ.-բուրգ։

---

6. Ի Քրիստոս սիրեցեալ եղբայր՝ Յովհաննէս Արք եպիսկոպոս եւ աստուածարան վարդապետ։

Զպատասխանիս թղթոցն քոց՝ յառաջնոցն եւ ի լունվարի գրեցելոյն յաղագս փոխմանն Հայրապետին գրեալ եմ առ քեզ, առ բազումս և առ եղբօրորդին իմ. Այժմ հարկադրեալ եղէ՝ կրկին դրել ձեզ, զամենայն անցս պօլսոյ գիտել և ըստ այնմ տնօրինել։ Բարւոք էր որ երբէք՝ յանուն իմ ոչ լիշէիք. այլ դուք ի կենդանութեան Հայրապետին գրէիք մեզ՝ որ մի միայն եմ ակնկալութիւն իսրայէլի. ըստ որում և Դաւիթ վարդապետն և Եվրեմ վարդապետն՝ երբ զիս յարուցիք ի կաստարումն բազմականաց ձերոց յանձն առնուլ զյուծ անարատ հարսին Քրիստոսի (զորմէ և նորին բարձրութիւնն և երկիր իւր խօսիւր ընդ իս ամ մի ողջոյն.) իսկ զկնի մահուն՝ ի լընտրութեան՝ ընդ իս և զայլս յառաջ ածիք և ի պօլիս զգանալան գրութիւնս արարիք, որպէս էր սովորութիւն միաբանիցն։

Այժմ տես գու՝ զհուրն զոր բորբոքելոց է ասեն՝ նախ՝ տեսանես նորին Արքայական բարձրութիւնն, որ բոլոր երկրաւ իւրով, կանգնեալ կայ վասն մեր մինչեւ ցմահ. երկրորդ ամենատղորմած կայսրն ամենայն ուսուցաց՝ լուեալ զկոչումն ընտրութեան մերոյ, ահա պատրաստի՝ մեծաւ չքով առաքել զիս, այլ սպասէ Արքայի գրոյն և յաւուրկ մարդոյն. երբ բոլոր երօպիոյ թագաւորքն չկարացին սմա դէմ կալնուլ, միթէ ողորմելի և տարաբախտ Ազգն մեր և միաբանքն քուռք, կարեն ընդիմանալ հզօր հրամանի սորա։

Երրորդ եթէ՝ ի բռնութեան տաճկաց և կամ ի փառասիրութեան լրբաց, համարձա-

*) Մուխաթթաթ՝ բառ Արաբերէն, և Նշանակէ՝ Նկարագրեալ։ Ց. Ռ. Մ.

*) Օրինակեալ յօրինակէ վաւերացուցելոյ հնգով եօթն եպիսկոպոսաց։ Կ. վ. Շ.

կէցի ոք լառաջել ինձ. և զիմ օրինաւոր ժառանգութիւնն տիրել և կոչել ինձ հայր և տէր՝ լետ այնքան աշխատանաց լմոց և արդեանց՝ որ առ ազգս և ակեղեցիս. մինչ՝ իբր զղերուքն(?) չպարտիմ ընդունել զնաւ, չորրորդ տես թէ՝ ինչ նախատինք սուրբ գահին և ազգին ոչ եւանէ աստի. քանզի ի լունվարի 23 լուեալ ի Պօլիս պատրիարքին և իշխանաց ի գրութեան կարնեցւոց, թէպէտ հրամայեալ են ումեք չյատնել մինչ գիր ոչ եկեսցէ, սակայն քանն ի հոչակի է և վեզիրն ի քանակի. Պատրիարքն դեռ զկամս իւր չէ յայտնեալ յանձն առնելոց է թէ ոչ. ի մի ի մէջ իշխանացն՝ մին քրթմնջիւն, ոմանք զմեզ կամին. Զօպան ամիրայն. Գրիգոր ազայն. մանտեան Ստեփան նղիւազարեան, մանտեան Գասպար Աղնաւուրեան, ծերունի Սահակ ամիրայ. Պետրոս ամիրայ Մորտիրոսեան և այլք բազումք. Իսկ ոմանք կամին զպատրիարք կացուցանել. բայց ընդ սմին և ի զանազան կողմանց եպիսկոպոսաց գրեալ են առ բարեկամ իշխանս իւրեանց և դխոստմունս արարեալ նոցա և ծանր ընծայ պատրիարքին. Իսկ մի ոմն՝ լիրբ, չար և որդի սատանայի. որ կարծեմ գոլ վէքիլ Յովհաննէս վարդապետն՝ առաքեալ է ի բանակն առ վէզիրն. երեք հարիւր քեսակ խոստացեալ որ հրամայեսցէ իշխանացն. զնա ընտրել այլ թէ բանն որպէս վճարի, չէ յայտ. այլ երեի որ ամենայն ունկն արծաթոյ լսէ. և թէ դէպ լինիցի նմա, լինի ոչ թէ՝ հայրապետին ազգին, այլ մատնիչ լուդայ, խոտեացին այնոքիկ որք ընտրեալք են արծաթով, նա ոչ լինի փեսայ՝ այլ սեխեխ և կամ պոռնիկ. Ամօթ միաբանից մերոց, այլ և այլ գրութեամբ լցեալ են ի Պօլիս.

Գրեմ քեզ պարզապէս. ես օրինաւոր ժառանգ եմ սրբոյ Աթոռոյն ի Սիմէօն կաթուղիկոսի գրութեանցն և ի այժմուս հանգուցեալոյն և ի հաճութեան միաբանից երեւելեացս և ի հաստատութեան չորից հրովարտակացն կայսերական մնծութեան. զոտար ոք ոչ ճանաչեմ և զհարան իմ ոչ օտարացուցանեմ լինել և ոչ տամ տեղի սեխեղի և պոռնկի. պատրիարք Գանիէլ վարդապետին՝ չատ է պօլիս և պատրիարքական անունն. արծաթով ընտրեալն խոտեալ է ի հոգւոյն սրբոյ և ոչ կարէ մտանել յԱթոռն սուրբ և այն չար օրինակն թողուլ լետնոցն. որպէս Մելքիսեթ կաթուղիկոսն. իսկ այլք ամենեքեանքն, ոչ ունին զիրաւունս մտանելոյ ի լայս աստիճան.

Վասնորոյ փափակելով իմ, չուտով չիջուցանել զհուրս այս, ծանուցանեմ քեզ. նախ՝ նորին կայսերական մնծութիւնն ամենողորմած թագաւորն սուրհանգակ առաքեաց ի Պօլիս առ դեսպանն, ծանուցանել պատրիարքին և իշխանացն չհամարձակիլ զոք հանել լայն աստիճան և եթէ արարեալ իցեն լետս կոչել. իսկ ի դրանէն խնդրել, որպէս նախնի կաթուղիկոսացն. նոյնպէս և մերն փերմէնան առաւել լաւագոյն պատրաստել. վասն այսմ, ես աներկբայ եմ որ. . . . ինքն պատրիարքն եկեսցէ՝ ամօթով մնալոց է. վասն այսմ հրամայեմ քեզ, սուրբ գեղարդն թողուլ լայդր ի միում սանդուղոջ երկոտասան իշխանաց կնքով և դուխտել ի սուրբ Աթոռն և տալ միաբանիցն դիտել, մի լինել նախատինք ազգի, և ընդ սրբազան Մինաս արք եպիսկոպոս հօրն իմոյ և ներսէհին և ի լարաւաքսային հարկաւորութեանցն մինչեւ մեր գալն, որպէս լունվարի 26-ին գրեալ եմ առ քեզ և առ Գաւիթ վարդապետն. և այս գիրս տացես կարդալ որոց հարկ իցէ. գրեցին և տեղդ առ Կավալենցկին. այլն ի եղբօրորդւոյս գիտացջիր. գի ահա պատրաստի տեսանես զմեզ ուզեւորելոց. եթէ ընտրեալ ոք իցէ իբրև զահագին Սահակն՝ գազարեցուցանել ուրեւիցէ.

ՅՈՎՍԷՓ ԱՐԳԵՊԻՍԿՈՊՈՍ

1800 մարտի 8
ի Պետրպօլի.

ՃԱ. *Երջանկազարդ եղբօրդ իմոյ տեառնըղդ Դանիէլի սրբազան Արքեպիսկոպոսի, աստուածաբան վարդապետի պատրիարքի մեծիդ Պօլսոյ, նաեւ քարոզչապաշտ եւ պայծառածին իշխանաց եւ Ամիրայից ազգի մերում, ողջոյն եւ օրհնութիւն յանկամ:*

Ցառաջին գրեցելոյդ, նաև ի փետր. մուտն Թղթովդ ամենայն ինչ, լայնի՛ լեալ է ձեզ, և լուսամ զի և դուք ըստ այնմ իցէք

համաձայնեալ ընդհանուր գլխոյն, այսինքն՝ բաղձանացն հոդելոյս հայրապետին, զի սըրբազան Լուսաւորիչ արքեպիսկոպոս եղբայրն իմ, ի սեպտ. 19 դեալ է մեզ ՔՀ՝ սրբազան Հայրապետն մեր կալ ի լուսին հիւանդութեան. կամքն նորա և բոլոր միաբանիցն առ քեզ է և դու ես ակնկալութիւն մել ամենեցուն, յետ մահու նորա լինել տէր Աթոռոյն և հայր հասարակաց աղդի մերում. ևս ի լունվ. 5 դրեալ է մեզ զալսպիսի նոյնպէս և Գաւիթ արքեպիսկոպոս ի նոյեմ. 2, դրէ մեզ, որ ակնկալութիւն իսրայելի դու միայն ես և ոչ այլոք, ըստ այս և զեղարդակիր Յովհաննէս արք եպիսկոպոսն դրէ մեզ ի հոկտ 10 և 20, ուստի և մեք անկասկած լեալ լալամանէ, զի և վրաց Արքայն և երկիր իւր համաձայն գտաք յամս երկուս, որք զմեզ յորդորէին յանձն առնուլ զլուծ անտեսութեան սրբոյ Աթոռոյն և Աղգին, ուստի և իմ հաւատ ընծայեալ բազմութեան դրողացն և առ իս աղաղակողացն, տեսանելով իմ որ ըստ ճշմարտութեան, ըստ հնութեան, ըստ աշխատանաց ևս իմ է այն ժառանգութիւն, լրի թոզի զամենայն աստ եղեալ պատիս և զիտաս իմ և զհանդստութիւնս, տեղի ետու բանից նոցա. այլ առնել լուսով մօրն իմոյ և հտմօրէն աղդի ծանուցաք ամենասողորմած թագաւորին մերոյ և կայսեր զբարձրագոյն հրամանաս, գիտեցաք առ մեզ, պահելով զսովորութիւն հանուրց աղդին և զպատիւ ձերդ սրբազնութեան և իշխանացդ լալդութեան, ուստի և ձեզ գրեցի զկամս իմ լառաջևալետ, որպէս զի և ձեր իմացեալ զօրինաւոր ժառանգութիւնն մեր և զընտրութիւնն, միացուսջիք և զձերդ ձայն. զի մի մոցեն լանարատ կոչումն մեր զարատ ինչ և զաղտեղութիւն ի . . . . . աղդին, ի վնաս սրբոյ Աթոռոյն և ի լարհամարհանս հրամանաց վեհագունից։ Իսկ այժմ լսեմ, որ զկնի վախճանի հոդելոյս հայրապետին, թէպէտ միաբանքն լառաքեալ սիւնհոդոսին զմեզ միայն են կամեցեալ, իսկ լերկրորդումն զալլ և այլ անուտի պատճառս լառաջ բերեալ, ի տեղի մեր զալլս են ընտրեալ և ձեզ գրեալ. առի լարուցանել զչփոթ մեծ և զհուր անչիջանելիս։ Զոր լսելով և նորին կայսերական մեծութեան լաուսուկ սուրհանդակս առաքեաց լայդր առ զեսպանն իւրոյ մեծութեան առ զերազանցագոյն Վասիլ Ստեփանիչ Թամարովին, որպէս զի՝ զբարձրագոյն բարեհաճութիւնս իւրոյ մեծութեանն լայտնեացին ձեզ և ամենախառնուր դրանէն օսմանցոց, որ ամենեքի՛ զդ հաճեսջիք առ ընտրութիւն իմ, որ ունիմ ի ձեռին՝ զհաւանութիւն լուսահոգի հայրապետին և երևելի միաբանից և հրամայականացն առ իս ունիմ, այս է եփրեմ արք եպիսկոպոսն, և զբարձրագոյն կամեցողութիւնս նորին մեծութեան, զհաւանութիւն ու զմահասար վրաց աչս արձին ուստաց, և ընդդէմ այսմ, ոչ ես կարելի զոք առնել ձեզ ինձ հայր և տէր Սրբազան Դանիէլ Պատրիարքն տեղդ լինելն և մեր անդ՝ չինութիւն և հաստատութիւն է սրբոյ գահին, եթէ չերմեռանդ էք առ այն սուրբ տունն և ազգն. իսկ այլք՝ ոչ ունին երբէք զիրաւունս լառաջ մատչիլ ընդդէմ մեզ և դուք ոչ ունիք զլիրաւունս զնոսա լառաջ կացուցանել և առնել գլուխ ազգին, մինչ ես ի կալսերէ, ի քաղաւորէ, ի հոդելոյս Հայրապետէ և լերևելի միաբանից ընտրեցեալ եմ և լատկացեալ առ անտեսութիւն տանն Աստուծոյ։

Գրեցին և ի Թիֆլիզ առ Արքայն վրաց և առ դեսպան կավալենցկին, եթէ ընտրեալ եւս ոք լինիցի ի ձէնջ ի տեղի մեր՝ մի ժուծանել ի սուրբ Աթոռն և մի համարձակել օծանել. որ կաթողիկոս լինել ոչ կարէ ընդդէմ բարձրագոյն բարեհաճութեանն։ Վասնորոյ և հարկադրեալ եղէ դրել առ եղբայրդ իմ և առ իշխանսդ, գիտել և ոչ առնել ընդդէմ օրինի և ընդդէմ նորին մեծութեանն. զի եթէ արհամարհիցէք զմերս գրութիւն և զբարձրագոյն հրամանն՝ թէ ինչ անտի ծնանիցի, ես անպատրաստ անձն իմ անտի կացուցանեմ. և խղճամ ազգի իմոյ ապերախտութեանն, որք ոչ ճանաչեցին զիս և զվաստակս իմ ի վերոյ հանուրդ ազգին, հաւատոյն և եկեղեցւոյն, զորս ոչ երկարեմ. փափակեալ իմ չուտով անցուցանել զհուրն՝ զոր ունի ծնանել աստի առաքեմս ձեզ զ՝արքաղաքն իմ զկարապետ վարդապետն՝ զամենայն ինչ խաղաղական հոգւով լառաջ դրել ձեզ. զի և դուք համաձայնեալ ընդ ճշմարիտ և օրինաւոր ընտրութիւն իմ, որպէս սեպհական ժառանգ սուրբ Աթոռոյն, և առ վեհագոյն հրամանն, որպէս զի ազգալին խաղաղութիւնն և

թաղաւորական պատիւն ի կարգի մնացեալ և ուրբ Աթոռն մեր՝ նորոգեաց դնմանութիւն իւր որպէս զարծուի և տեսեալ զայն, որում երկայն ժամանակաւ փափկի ազգն իմ ընդ մէ աքանչիցն տեսանէ զայն ամենայն. որում ըղձան՝ ղի զանձն իմ պատրաստեալ եմ զոհ առնել ի վերայ ազգին և Աթոռոյն, և զԱթոռն լուսաւորեալ իմաստութեամբ, գիտութեամբ և ամենայն կերպ բարեկարգութեամբ, որ եթէ համաձայն ջանայիցէք լինել ե դէպի համբուրելի խաղաղութիւնն, սէրն, համաձայնութիւն և միաւորութիւնն ընդ կարապետ վարդապետ հարազատին իմոյ և կամ Գաւիթ արքեպիսկոպոսին որ եկեալ է յայդր՝ առ իս առաքեսջիք. իմացէք թէ զԱթոռն զայն նոր չինէք, մուծանելով ի նմա ի ցեղէ լուսաւորչին ձերոյ սրբոյ Գրիգորի, յորմէ եմք մեք. զոր ողորմութեան Թագաւորն եւս հաստատեալ ի զանազան պատմագրաց և ի դրութենէ Արքային վրաց, նորոգեաց ցեղն իմ և զտոհմակից կնքով Աստուածատիպ մատամբն հաստատեալ։

Իսկ եթէ ոչ լուիցէք ինձ՝ լուարուք. ում և ընտրէք, կաթուղիկոս լինել ոչ կարէ և ոչ իշխել ի վերայ կողմանցս. այլ խղճալի է յոյժ տեսանել զայն աղետալի տեսարան, զոր տէր մի ցուցցէ մեզ։

Եւ եթէ ընտրեալ եւս լիցէք և առաքեալ, ես սուրբ եւ մաքուր հոգւով լաւաջադրեմ ձեզ, զաղաչեցուցանել ուր և լիցէ ընտրեալն այն՝ որպէս զահաղին Աահակն. լաւագս հաստարակացն խաղաղութեան և Աթոռոյն հաստատութեան և կատարման բարթրագոյն հրամանին։ Արդ գիտելով ձեր զամենայն հանդամանս բանիցս ասացիկ՝ ես լուսով եմ, որ դուք հարազատ բարեկամութեամբ և որդիական չերմեռանդութեամբ պատրաստորիցէք վիս, առաւել գրկել զձեզ սիրով, այնու որ դուք, անդր քան զյառաջնոն տացէք պատրաստել վանն իմ զիմերմէն ամենաիւառաւոր դրանէն ի չահ եւ ի լօգուտ սուրբ Աթոռոյն եւ ի բարձրութիւն անուան ձերոյ, առ այս օգնելոց է ձեզ եւ մեծ գնդապետն ռուսաց, որքան ինչ թուղք վանն այամ նիւթոյ դրեալ եմ առ լուսահոգի Զաքարիա պատրիարքն եւ առ իշխանսն, եւս առ Դանիէլ պատրիարքն եւ առ իշխանագ զամենեսեան առաչեալ եմ առ ի մէնջ ընտրեալ վէքիլն իմ եւ հարազատ տիրացու Մանասէն, ըստ պատահման հարկին մատուցանել ձեզ. ի հարկէ նա մատուցեալ լինի. ի լորա ջտանել կարէք զազգասիրութեան պարզ հոգին իմ, պահպանումն պատուոյն ձերոյ եւ դխազազութիւն հանուրց ազգին. դի եթէ եւ անձնասէր ոք լինիցէի, ոչ թողուի աստ դհանգստութիւնս իմ եւ զիտաս, զորս ունիմ ի մնծ եւ ի բարեպաշտ կայսերէ, որպէս եւ լուեալ էք եւ գիտէք, այլ զայն ամենայն կամաւ թողի, լինել ծառայ ազգին եւ Աթոռոյն, վայելել դանհանգստութիւն եւ զվրդովմի կասկածալի կեանս ի պատիւ եւ ի շահ Ազգին եւ սուրբ ծնողին իմոյ, կենցաղավարելով ընդ բարբարոս տղայց, այլ յորժամ ձերդ սէր որդիական լինիցի առ իս, այն ամենայն գրկեմ որպէս բաժակ պատրաստեալ վանն իմ ի Տեառնէ Աստուծոյ։ Իս այժմ տառաքեմ առ ձեզ զօրինակ համահաճական թղթոյն զոր երկիրս այս առաքեաց ի սուրբ Աթոռն, որպէս եւ վրաց աշխարհն էր առաքել, թերեւս ձեզ յայտնի լցէ։ Սոյն ճշմարիտ յուսով քրիստոնէականաս, սպասեմ համաձայ։ նութեան սրբազան պատրիարք եղբօրդ իմոյ եւ պայծառ իշխանացդ եւ համարէն ազգին. որով եւ մնամ վանն ձեր միշտ աղօթարար

Խոնարհ ՅՈՎՍԷՓ Ա.ՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
աւելածու սրբոյ Աթոռոյն Էջմիածնի

1800 մարտի 23
ի կալաերական քաղաքն
ի Սանկտ Պետրբուրգ.

ԺԲ. Նամակ Յովսէփի արքեպիսկոպոսի առ Յովհաննէս Եղիազարեան

Գերազանցութիւն ձեր,
Ողորմած Տէր իմ
Աղայ Յովհաննէս Եղիազարեան.

Ընկալեալ ի Ձերմէ գերազանցութենէդ յանցեալ 1799-դ ամի հոկտ. ընդ խնդրոյ ձերոյ՝ զարարեալ կարգադրութիւնն ձեր, որ վանն երկուց եկեղեցեացս հայոց ի Սանկտ Պետրբուրգ սրբուհուոյն կատարինէի և սուրբ լարութեան՝ կառուցելոց ի ձէնջ սեպհական

արդեամբ ձերով, և չինուածոցն զորս չինեալ էք չուրջ զեկեղեցւով սրբուհւոյն Կատարինէի, և ծանուցեալ ղնոյն խնդիր ձեր՝ ի ըստ պարտաւորութեան կոչման իմոյ՝ ղնոյն կարգաւորութիւնն ձեր հաստատեցից ունել անխափան առ ապայ՝ ձեռադրութեամբ իմով, ոչ լամեցալ լարդել ղիրաւացի խնդիրդ՝ բարի համարելով ղնոյն կարգաւորութիւն, և հաստատելով ղնոյն ձեռադրութեամբ իմով, դրեցի և հրամայն ի յաժդարխանու հայոց հոդեոր կանցիստօրն, ուղևորելով զօրինակ որպէս կարգաւորութեան թղթոյդ, նոյնպէս և այս իմս առ ձեզ դրեցիլով ի պատասխանի խնդրոյդ որ նոյն կանցիստօրն մուծեալ ղերկու օրինակն ևս ի զիր մատենից իւրոց՝ դրեսցէ առ ամենայն անձինս հոգևորականս լիշեալ եկեղեցեացն որ ի Սանկթպետրբուրգ, որպէս զի նոքա և որք զկնի նոցա՝ քահանայք և պաշտօնեայք եկեղեցականք՝ վարեսցին լամենայն հանդիպմունս ըստ ամենայնի համաձայն լիշեալ կարգաւորութեան ձերոյ։

Բայց զոր լինչ պատկանի առ իմս և առ աղգին հայոց ճշմարիտ երախտագէտ լինիլ առ գերազանցութիւնն ձեր, սակս երախտեաց առ սուրբ եկեղեցին և անբաւ բարերարութեանց ձերոց առ աղգն, զորս ցուցեալ էք նախ քան զգալուստ իմ ի վերկիրս ուստաց, և թէ ի ներկայութեանդ իմում, օգեկան լինելով լամենայն հանդիպմունս բանիւ և արդեամբ՝ ձեռնտու եղեալ նոցա վասն օգտի և բարեաց. զոչ այլ ինչ ունիմ առ այս ասել, եթէ ոչ՝ գովաբանելով զայսպիսի սրբազանեալ ջերմեռանդութիւն ձեր առ սուրբ եկեղեցին, և զանհամեմատ սէր ձեր և բարերարութիւն առ աղգն, զորս առատօրէն վայելեցաք մեք՝ եկեղեցիք մեր և աղգն բոլոր, չնորհակալել ի միտս իմոց և բոլոր հօտին իմոյ, որպէս վկայելով զբարեգործութեանց ձերոց, նոյնպէս և յայտնելով զմեղ երախտագէտս առ գերազանցութիւն ձեր։

Մաղթելով լամենաբարձրելոյն Աստուծոյ վարձատրել զձեզ ամենատատ չնորհիւ իւրով և անսպառելի ողորմութեամբ, ունիմ պատիւ լարաւնել միշտ կատարեալ վերապատուութեամբ և հպատակութեամբ,

Գերազանցութեանդ ձերոյ՝ ողորմած ծառայն իմոյ ջերմեռանդագոյն աղօթարար և խոնարհագոյն ծառայ՝ ՅՈՎՍԷՓ ԱՐԻԵՊԻՍԿՈՊՈՍ ուստաց երկրի Հայոց Այդին՝ իշխան երկրի Նաքազուկ Արղութեան և կալվերի։

ի մարտի 30 1800 ամին
ի Սանկթ Պետրբուրգ։

ՃԳ. Թուղթ Յովսէփ Արք Նալիսկոպոսի առ Կարապետ վարդապետ

Սիրելի որդի Կարապետ վարդապետ.

Ահա կայսերական բարէյաջող բաշխօրհն առ քեզ ուղեւորեմք, փութով գնալ ի Պօլիս օր մի լառաջ ծովով եւ կամ ցամաքով։ Թամարով դեսպանին բաւական ես գըտեալ եմ վասն քո, և ունի կայսերական հրովարտակ վասն մեր՝ որ ոչ ոք չարմիցի ի լախտակրութենէ ընդդէմ օրինաւոր ծառայութեան մերոյ...։ Պատրիարքն ոչ ունի իրաւունս լառաջանալ ինձ եւ լինել հրամանատու, եթէ ամ մի (է) պատրիարք եղեւ՝ որ տակաւին Աղդին, Հաւատոյն. և եկեղեցւոյն ոչինչ է արուրեալ, այլ նոր պատիւ առնել...։ Աղգն ևս ոչ ունի իրաւունս զնա չարժել ի տեզւոջէն, թեթեւացուցանել և անպատիւ առնել լաշխարհի և ի տեզի նորա զայլ ոք կացուցանել, որպէս առնեն ոմանք ախտակիրք .. այլ կատարումն ախտից իւրոց է չնորհել զդանիել Պատրիարքն՝ և գնել ի տեզի նորա իւր ընտրեալն արծաթով. ոչ ապաքէն խոտեացին այնոքիկ՝ որք ընտրեալ են արծաթով։ Պատրիարք եղբայրն իմ ըստ գրութեան Քեռորդւոյն իմոյ Սիմոնին, որպէս թէ խաբի ի սուտ բարեկամ ձևացեալ ախտակրէն. այլ մեղանչէ յանձն իւր և ի սուրբ Աթոռն։ Ցամսոյս մուտն դրեալ եմ սրբազան Պատրիարքին և երևելի իշխանաց մերոց՝ վասն զքեզ առաքելոյն, որոց (արարի) զյանձնարարութիւն, զորս ամենայն անդ պատրաստ գտանես. Շնորհքին, Հովիւին, Գրիգոր Խոտակէսեանին, Գրիգոր Սահակազատէին, մահտեսի Գասպար Աղնաւուրեանին, Ծերունի Սահակին, մահտեսի Ստեփան Եղիազարեանին, Պետրոս Պարսիրոսեանին, Գնջակնեցոց Կարապետին, Մանասէն, Գէորգ Աղաչկովին և մեր Անգրէասին...։ Սրբազան Պատրիարքն պատիւ և փառք հանարեսցէ ի ժամանակս իմ Պատրիարք դոյն իւր։ Ամէն։

Քազաքիդ, և ցուցցէ առ իս զորդիական հպատակութիւն և դեղբայրական սէր... Քէպէտ իմ իղձ էր ի վերայ Պօլսոյ անցանել, սակայն գիտեմ հաստատապէս ծանր լինի յոյժ և լամէ գնալն իմ ի սուրբ Աթոռն. (Քէպէտ օգտութիւնք բազում լառաջանան անտի սրբոյ Աթոռոյն և Ազգին), այս կախի զհաճութենէ իշխանացն և ալլին...։

1800 Ապրիլ 12 ի Ս. Պետրբուրգ։

Սրբոյ Աթոռոյն անուանեալ ։ աթողիկոս ՅՈՎՍԷՓ ԱՐՔՍՊԻ ՀՈՊՈՍ

ՀԳ. *Թուղթ Մահսէրական առ Դանի էլ Պատրիարգն Կոստանդնուպօլսոյ եւ համայն իշխանսն եւ արուեստաւորսն, ի պատասխանի բազմակնիք թղթոյն նոցա վասն տեղապահութեան Մինասա արքեպիսկոպոսին։ Ցանձնառութիւն հնազանդ զոլ նմա յամենայնի, եւ շնորհակալութիւն յաղագս խոստման նոցա, ի քաց ցրնչ զանաստուած խորհուրդս վնասակար անձնընծայից ի գահաւորութիւն եւ խնդիր դարձեալ վերստին, զի վերադարձեալ Պատրիարգն եկեսցէ ի կաթողիկոս։*

Երից երջանիկ հոգեզգօն և իմաստապերճ հօր մերում դեւացանկալուց Տեառնդ Դանիէլի չնորհաշարդ Արքեպիսկոպոսի և սրբազան Պատրիարգի Տիեզերական մեծի Մ...բազաքիդ Կոստանդնուպօլսի պատկառելիս նարհութեամբ ղողջոյն սիրոյ և յարգանաց մատուցանեմք համբուրիւ սրբոյ աջոյդ։

Եւ աստուածասէր սիրելեացդ մերոց և հաւատարիմ որգւոցդ լուսաւորչական սրբոյ գահիս Քրիստոսիս օրհնելոյ և քաջալերելոց բարեպաշտից և վեհմախոհից աղնուականաց և փառազարդից օրհնեալ իշխանապետացդ և իշխանացդ, և արհեստապետացդ, և համայն երևելի անձանցդ, և բարեպաշտօն ժողովրդոցդ առհասարակ, յոյժ սիրով և անձկութեամբ հոգւոյ ողջոյն և օրհնութիւն ընծայեմք ծանուցանել հետևաբար զայս ինչ։

Քանզի մինչ ըստ եղջերուոյ փափաքանաց աղբերս ջուրց փափագէաք զովարար քանից սիուհանաց և կազդուրման, եկն էհաս ողջունաբեր բազմակնիք թուղթ ձերոյ պատուականութեան, յԱպրիլ ամսոյ Ը. ի հրճուալից աւուր Զատկի հրաշափառ տօնի սրբոյ Յարութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Որ դրեցեալն էր ի Մարաի ԺԹ։ Չոր ընկալեալ վայելուչ յարգանօք և ընթերցեալ բարեյօժար ախորժանօք նախապէս ընդ լուր ողջունի քաղցրալիշատակ աղնուագունիցդ զուարթացաք սրտիւք։ Երկրորդ վասն սգակցութեան հարազատիցդ ընդ մեզ առ վճար կենաց գերընտիր սրբազան Հայրապետին մերոյ և մխիթարական հոգևչունչ բանիւք մխիթարութիւն չնորհելոյ մխիթարեցաք բանականապէս, երրորդ գչահաւէտ պատուէր աքանչելի խորհրդականութեան հաւատարիմ և խմաստնահոգ բարեկամացդ բարւոքապէս յայն վերծանեալ որ վասն հնազանդ և հպատակ զոլոյ մեր առ ի ձէնջ կարգեալ տեղապա՛ի և կառավարչի սրբոյ գահիս. Ցեառնդ Մինասայ Աստուածաբան վարդապետի և ծերունաւրեալ արք եպիսկոպոսի, ի բոլոր սըրտից բարեհաճ կամօք յօժարեցաք։ Եւ զի գրեալ էիք բառնալ տարաձայնութիւն երկձղութեան, և համակամ զտանել, վստահիմք ասել ըստ ստուգութեան թէ մեք ամենեքեան ի վաղուց իսկ ի հողելոյս սրբազան Հայրապետին կենդանութենէն հետէ զսա ճանաչեմք հաւատարիմ և գլխաւոր պաշտօնեայ սրբոյ գահիս, և խրատուս մեզ, և ամենարդոյ ծերունի. և կամեցող ։ տալաջգիմութեան բնաւրիցս ի բարին, և թէպէտ ի հայրապետուրկ լինելն մեր իբրև անտերունջ և ընքնակամս գատեալ զմեզ առ տաղնապի լեղակարծ չփոթից և հրապուրեալ ի մօտակուտ լինելեաց ոմանց խաւարին խորհրդով գիշերայնի մթութեան ընդ ստուերաւ անճառագալթ կերպիւ իւիք նշմարեցաւ պատակտումն ի մեզ, այլ ոչ տևեաց աելի քան զքան աւուրս, յորմէ հետէ զարձեալ ուղեցաք ի նախկին միաբանութիւն, և այժմ ի ժամանել լուսինն մեր օգտակար քանից, պատուիրանաց ձերոց յարգութեան, որ ի պահպանութիւն չինութեան սրբոյ տանս, և բարեկարգութեան միաբանից են առաւել ևս պատասխանեցաք լամենայն անձնէ որդիական հպատակութեամբ հնազանդ զտանել արժանապատիւ

տեղապահի սրբոյ գահիս. վերոիշեալ մենիմաստ ծերունազարդ հօր մերում, և պատրաստ լինել ի հրամայելն մեզ զհոգատարութիւն առ իւրաքանչիւր կարևոր գործոցն սրբոյ Աթոռոյս, սպասաւորութիւնս: Եւ ի վերայ ալար ամենայնի Տիրապէս հոգևոր նակութեան և խնամատարութեան Ձերոյ սրբոյ գահիս և պարտաւոր պաշտօնէիցս ստորին չնորհակալիմք կարի լոյժ, զգորովագութ հօրդ մերմէ զաստուածարեալ սրբազան պատրիարգէդ և զմենծարգոյ օրհնեալ իշխանապետաց և իշխանացդ և արուեստապետացդ Ալթը ճէմահասս [1]) կոչեցեալ գլխաւորութեանցդ. և աղօթող եմք բազմապատիկ հալցուածովք վասն ձեր առաջի Քրիստոսասէջ սրբոյ տեղւոյս: Որոցդ չնորհեցէ Աստուած զերկարութիւն խաղաղական կենաց. և զյաջողութիւն գործոց, և զարդասաւորութիւն բարեաց ի փառս մեծի անուան իւրոյ, և ի միխթարութիւն մեզ ապաստանելոցս ի ձեզ: Եւ զոր գերազանց այլոց բարեչնորհութեանց ձերոց լուսացուցեալ էիք զմերս նուաստութիւն կուռն ջանիւ պաշտպան լինել լուսածնի մօրս ձերոյ, հաւատոյ. առ զդուշալին պատճառ. ի բաց վանելով զԱստուածընդդէմ խորհուրդս անմիտս տարփաւորաց այդ յոյս միաբանական օժանդակութեան ի բաց փարատեաց զերկկիւղն կարծեաց ի մերոց մտաց և ետ մեզ քաջալերութիւն հաւնմատ ձայնին յերկնից յԱստուածածուստ առ հանդիսաւորութիւն մարտիրոսացն թէ քաջալերեցարուք և սի երկնչիք զի ես ընդ ձեզ եմ: Ապաքէն ճշմարտութեամբ ծանիջիք, զի որ ի ձէնջ ոչ է ընդունեցեալ, մեզ ես չէ ընդունելի, և որքան ապիկարութիւնս մեր զօրիցի Աստուծով ջանասցուք նահանջել և լուսամբ, զի հալեցեալ Տեառն ամենակալի յանկեզծաւոր խորհուրդս միաբանութեան օրհնեալ ազգիդ ընդ մեզ ցրևսցէ դընդունայն խորհուրդս ի անուտիս պանծացելոց, այլ արդ չլացան աչք մեր դիտելով ի ճանապարհս կողմանդ լսել զկնոջումն վեհիդ սրբազան կաթուղիկոսի մերոյ, և եր կըրպադութեամբ փառս տալ Աստուծոյ, բայց տակաւին ոչ եղաք արժանի լսելոյ, և ընդ հակառակն լուսոյ մերոյ գետ ես լսեցեմն նշանակութիւնք նշմարին: Արդ եթէ ի կըրկին մահսերացն կարծիք ինչ եզև ձեզ բարւոք իմանալ կարէք թէ առաջին մահէրն է ի լազատ կամաց գրեցեալ, իսկ երկրորդն ակամայ ի բռնարարութենան բռնաւորացս. Եւ յառաջնումն մահէրի ես նախ զսրբազան Պատրիարգդ եմք խնդրեալ, հետևաբար գրեալով ես թէ այս է նախապատկան խնդիր մեր և այլն, և թէպէտ մարդկօրէն կարծիս առեալ թէ ո գիտէ լաննարին լիցի գալն սրբազան պատրիարգին, զկնի երկրորդապէս գրեցաք զանուն Եփրեմ. արհի եպիսկոպոսին, սակայն գիտելով ես թէ կասկածելի է յայնմ կողմանէ զոք խնդրելն, ի վերջոյ թախանձանօք գրեալ եմք թէ մանաւանդ որպէս զի բանն չլեսանալցէ, և սրբոյ տանս միասք չը պատահիցին լանտիրութենէ, դարձեալ խընդրեմք զՊատրիարգ աստուածիմաստ վարդապետդ չուտով ուղևորել ի պաշտպանութիւն սրբոյ տանս, և այլն: Ըստ որոյ են և բանք Քղթոյն մերոյ լատկապէս առ պատուամեծար օրհնեալ ամիրապետ ես և հալցուածն մեր ի ի թուղթն հրաւիրանաց առ ինքն սրբազան Պատրիարգն զնոյն ցուցանէ: Զորս եթէ կամիք խնդրեմք զի կրկին ընթեռնուցուք: Եւ լամենայնի ամենայն իրօք նախապատուաբար խնդրելն մեր պատրիարգ աստուածաբան վարդապետդ է և զի զգուշալին պատճառ ես գոլ ի միջի, այժմ. դարձեալ վերստին աղաչեմք և խնդրեմք, զի ոչ զալ ոք այլ զդերըզձալի հալրդ մեր զԴանիէլ բարեչնորհ պատրիարգդ (թէև եօթնապատիկ առաւել կարևոր իցէ ձեզ,) զթալով ի սուրբ աթոռս չնորհ արարնալ բաշխեցէք մեզ ի կաթուղիկոսութիւն լուսաւորչակոծ օրհնեալ ազգիս և ի բարւոք կառավարութիւն սրբոյ գահիս և պաշտօնէիցս ստորին: Եւ որպէս գուք Քրիստոսասէր մենծաղնիւ ամիրապետդ և ամիրալգդ, և ճարտարագործ արուեստապետդ և արուեստաւորդդ, և այլ ամենայն տեսակ օրհնեալ ժողովուրդդ սրբոյ լուսաւորչին կատարեցէք զհալցուած մեր լցուցանելով այժմ. զկարեորագոյն պէտս անարատ հարսինս լուսոյ, ընծալեալ սմա զարժանաւոր մաքուր փեսալ Քրիստոս երկնաւոր փեսալն զձեր ամենայն բարի խնդիրսն կատարեսցէ, ամէն: Ողջ լերուք խաղաղական բարեկենդանութեամբ ի պարագալց սմա ի փառս պարծանաց մենծի գահիս սուրբ Էջմիածնի և ի միխթարութիւն որբացեալ միաբանից սուրբ եպիսկոպոսաց, վարդապետաց, աբեղալից ստո-

րակնքողաց ի Քրիս. և համայն աստիճանաւորաց և պլրաց ընդ մեզ եղելոց։

Գրեցաւ. յամի փրկչին 1800, և յապրիլի 23. ի լուսանկար աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ԺԲ. *Թուղթ Միսայէլեան Էջմիածնի առ Պատրիարք Կ. Պոլսոյ։*

Աստուածընտիր ամենապատուելի բարեխառն Պատքիարքի մեծի Մալրաքազաքիդ Կոստանդնուպոլսոյ հոգևոր Հօր մերոյ Ղեւառատի և գերըղձալւոյ, Տեառնդ Դանիէլի սրբազան Արք Եպիսկոպոսի, խոնարհագին աղջունաղթութեամբ ի հեռուստ չրթամբք հոգւոյ զչնորհազեղ սուրբ Աչն համբուրեմք եւանդագին սիրով և կարօտիւ։

Ընդ հասարակական բաղմակնիք Քրիստոյ և առանձին ի Սրբութենէդ Քելմէ ղրեալ երկու Քղխին՝ որոց մին լատկապէս առ Մինաս վարդապետն և միւսն առ Հասարակութիւնն գործակալացն և քնաւ միաբանից, հասին՝ առ մեզ ամսոյս Ը. յաւուր միաշաբաթու սրբոյ Զատկին։ Ցեղ ուրախութեամբ ընդունելոյ մեր, ի նոյն աւուր կոչեցաք զամենայն զմիաբանսն առ մեզ՝ ի լուր ամենեցուն ընթերցաք. և ամենեքեան ընկալան հնազանդութեամբ զրանսն։ Իսկ ի վերայ այլոց Քղթոցն խորհեալ, ի վաղիւ զկալղատուրսն մերոյ ժողովեցաք ի սուրբ Սկեղեցին և ընթերցաք թէ զառ մեզ ղրեալ Թուղթս ձերոյ սրբութեան և նուիրակ Գալուստ առաքինազարդ Արհի եպիսկոպոսին, և թէ զքախրիրն Արդի մեծազօր Թագաւորին, և զՕվսէփ պետի առ հանդուցեալ պատրիարքն և առ քեզ ղրեցեալ մաղթողական Քղթոց օրինական. և ծանուցաք զոմանս պարագայս անցիցն, և աստցաք թէ՝ Եղբարք, զինչ հնչտալի գործ է Կաթողիկոսութիւնն, առ որ ոչքան աշխարհական ցանկութեամբ անձնընծայութիւն լիցի, և վշտակիր ազգի մերում ցաւք ի վերայ ցաւոց յաւելցին, մինչ իրաւունք իցէ այս և այլն. և թէ ահա ըստ յայտնապէս յուցանելոյ բանիցն, եթէ այն Ակր յանդգնիցի դալ, խնամածութիւն Ազգին բառնոյց է ի մէնջ, ձեր գլխով. ճարն տեսէք. Ընդ որս ապշեալ ամենեցուն՝ ասացին ոմանք թէ մինչ Ադդն մեր ոչ ընդունի զնա՝ մեք ևս չեմք ընդունելոց. և զիարդ համաձայնեցի զալ նա։ Զայսքան ինչ խօսեցեալ արձակեցաք զժողովն։ Ալսքան առ այս։

Ալժմ ծանուցանեմք ե զալս՝ որ գնա ի Ցովսէփ վարդապետէն առ մեզ գիր ոչ եկն, այլ Թուղթ մի ի Գնտրպօլիս ի 1800 Ցունվարի, գրեալ առ սրբազան Հալրապետն եհաս ի ձեռս մեր յապազելի ամսոյս 3, որ դեռ չլուեալ զվախճան Հոգելոյս Հալրապետին՝ գրէ առ նա զկեղծապատիր բանս վասն Սիրեմ վարդապետին, և ի կողմանէ արգելման նորա ի գործոյն ի չքմեղն եղեալ անձնազով լինին, և վասն թարգմանութեան Հաւատամքին և Մկրտութեան կարգին պանծալ, և վերջացուցանէ թէ՝ ահա պատրաստ եմ դառնալ ի Հաշտարխան՝ նպաստել Սիրեմ վարդապետին և այլն։ Սև կրկին Թուքս Տըվխսու դրեալ զպատասխանիս Քղթոցն մերոց համառօտ, չնորհակալութիւն էր ցուցեալ վասն իբրու կատարելոյն մեր զինդիրութիւն, և ապա զգուշացուցեալ էր թէ այլ ևս տարաձայնութիւն ինչ մի լիցի ի մէջ Միաբանից, մինչև ի Ցովսէփ Արհէոյն պատասխանի ընկալցուք։ Սև վասն սուրբ Գնդարդին խոստացեալ էր լետ նոր կնդրակէին լղլլ. և մեք ի պատասխանւոջն գրեցաք թէ լետ միանգամ առարկելն մեր զքանն առ օրհնեալ Ազգն մեր բարեխառն ժողովուրդն Կոստանդնուպոլսոլսոյ, մեք ոչ ևս ունիմք ինչ առնել, այլ զնոցա հոգացողութենէն կախել կատարումն բանին, որք զիարդ և կարևոր գտանցին, և զովոք կացուցցեն, մեզ ընդունելի է լինելոց, ըստ որում հաստատութիւնն սրբոյ Աթոռոյս նոքօք է. և թարց նոցա հաւանութեանն ոչ ոք հաստատի կաթողիկոս սրբոյ Աթոռոյս։

Սև վասն սուրբ Գնդարդի խոստմանն դարձուցանելոյ զրեցաք թէ՝ Աստուած տացէ զկեանս և զանվրէպ կատարումն խոստմանդ։

Իսկ արդ՝ զկնի ծանուցանելոյ զմերոցն, խօսացուք և զձերին յարդութեան ։գրուածոցն թէ՝ գլխաւորապէս երեք ինչ աղղեցան մեզ. նախ՝ Ցովսէփեայ անչահ արշաւանքն, և Ձեր ոչ ընդունելն զնա. և զմեզ ևս զղուշացուցանելն. Երկրորդ՝ առաջարկութիւնն թէ ի ժամանել Մահսէրարհրին ժողով սարքեալ,

անուանակոչելոց էք զոք կաթուղիկոս. երրորդ՝ տարակուսեցուցիչն մեզ բան, թէ սոյա սեմք այլ ևս լրոյ.

Առաջինն ճշմարտութեամբ ծանիջիք, որ մեք զայն հրաւիրանաց թուղթն տյնպէս զրևլ ևս ոչ յօժարևցաք, գիտելով թէ՝ նա ի վաղուց ունի լաճախ թղթակցութիւն ցայդր, և կարծելով թէ քազումք ի տևզուդ ջատագովեացն նմա, վանորոյ գլխևալ մեր այնպէս լարգանօք գրեցաք, գի մի գուցէ ի լընդունելն ձեր՝ մեք և եթ արհամարհոզք երևւիցիմք. Այլ այժմ որ ծանուցեալ էք մեզ զձեր չընդունելն զնա, գիտասջիք, որ ձեր չընկալեալն՝ մեզ քնաւ չէ պիտանացու. վանորոյ հաստատեմք զմյաս ձեր, գի որպէս և որքան կարելի է մեզ՝ ջանալոց եմք դրով և քանիւ արգելուլ զամենավնաս գալստեն նորա. և լուսամբ թէ զգաստացեալ չգալցէ ևս. և թէ յանդգնիցի, Ատուածծ խափանեսցէ, գի մի եկեսցեն ի վերալ մեր ոտք ամբարտաւանից. և թէ գալցէ՝ ձեր առնելիքըն ես ի ձեռս ձեր է, որպէս և նշանակեալ էիք. Իսկ առ երկրորդն քան՝ լոյս մեծ ունիմք թէ Ատուծով վաղու ևս ընտրեալ և անուանեալ իցէք զկաթուղիկոսն մեր, և ա ետաւոր թուղթ ձեր ի ճանապարհի իցէ. Բայց առ երրորդն քան՝ զարձեալ տագնապիմք տարակուսանօք, թէ լետ տեսանելոյն ձեր զմահուէրն մեր, մանաւանդ զառաջին Մահսէրն, զինչ ես կարօտելոց էք նոր լրոյ ի մէնջ. Զի առաջին մահսէրն է ի կամաց գրեցեալ՝ և այն մանաւանդ վասն քոյ, լորում թէ և եփրեմ վարդապետն զկնի քոյ ի մէջ բերեցեալ է, քայց տեզին վտանգաւոր, և ահա ի թղթոջ ձերում լայտնի է՝ թէ ոչ լինի հրաւիրել անտի. զոր և մեք գիտէաք.

Իսկ երկրորդ Մահսէրն՝ յանպատկառ խնդրոյ անզգալելոց և ի բռնութենէ բռնաւորաց գրեցաւ. և նորա անզօր լինելն՝ անտի ևս լայտնի գոյ կորէ, գի չմք գրեալ ի նմա թէ կնքեցեք զթուղթս, եթէ ճիշդ քննութեամբ վերահասու եղեալ իցէք գրուածոցն. Եւ եթէ մյլ թղթով սակս Ստեփաննոս Արք եպիսկոպոսին կեսարիոյ խնդիր գրեցաւ, այն ոչ թէ առ ձեզ վերաբերութեամբ, այլ առ այլ ոմանս, եթէ անձնընծայութեամբ յառաջ մղիցեն զանձինս. և կամ եթէ ժողովրդոցն հաղուագիւտ լինի յաղագս յաջորդ գտանելոյ Աթոռոյս ի չնորհելն զքեզ մերոյս սրբութեան, դնա ևս ծանիցեն վայելուչ է. Վայց ոչ ապաքէն մեք զանազան թղթովք առ յարդութիւնք ազէ անանց քանս եմք գրեալ վասն ինքնին գալոյ. մանաւանդ Մինաս վարդապետ՝ որիշ լինն թղթով գրեցի քեզ թէ՝ ես ծերացեալ եմ և տկարացեալ, դու իմ եղբայրն ես, եկ և այլն. որոյ գրուածն իգնատոսին է և միայն իմ կնիքն դոյ դրոշմեալ ի նմա. և այն թուղթ ընդ Դաւիթ վարդապետին լղեցաք.

Այլ արդ՝ ի վերալ նախանցեալ բանից և գրուածոց հարկաւորապէս գայս ասեմք, թէ մինչև ցայժմ անուանակոչեցաւ կաթողիկոս մեր լայդր՝ բարի է. և եթէ ոչ, այժմ զգուշալի պատճառ ևս գոյ. միայն զքեզ տեսչալի Հայրդ մեր զբարեհաչակ սրբազան Պատրիարքդ խնդրեմք ի կաթողիկոսութիւն սրբոյ Աթոռոյս, գի հզօր ցաւոյն՝ հզօր բժիշկ է պիտոյ. Վանորոյ ա՞ա ի պատասխանի բանիդ կնիքդ թղթոյն ձերոյ միաբանութեամբ կրկին հաւասէր գրեցաք, և զգերեալ գոյ Հայրդ մեր միայն խնդրեցաք որ այլ ասողին ևս գրոյդ չունիք առնելոյ, այլ պարտիս գալ՝ և զանձնդ դնել ի վերալ սրոյ Աթոռոյս և մեր.

Ըստ այնմ ունիք իմանալ և ի թղթոյն զոր գրեցաք առ արդոյաստիւ եղբայրն մեր և ծայրագոյն նուիրակն սրբոյ գահիս Գալոստան հոգեզգօն Արհիեպիսկոպոսն. Զորս բաւական վարկեալ իմաստութեան Ձերում, ասեմք՝ ողջ լեր ի Տէր ի լոյս մխիթարութեան մերում Ամէն.

Գրեցաւ ի ՌՄԽԹ (1800) թուոջն և լԱպրիլի 23, ի ս. Աթոռս էջմիածին.

Մինաս Արքեպիսկոպոս, Դրիդոր Լուսարար. Սիմոն եպիսկոպոս Աթոռակալ. Ատուածատուր Եպիսկոպոս. Բարսեղ Եպիսկոպոս. Թադէոս Եպիսկոպոս.

ԺԲ. *Թուղթ Մինաս Արքեպիսկոպոսի առ Դանիէլ*

Ցամի Տեառն 1800 և լԱպրիլի 23 ի սուրբ էջմիածին.

Ի Սէր մեր՝ սիրարծարծ սիրոյդ սիրելութեան՝ Սիրով գրեալ՝ և ողջունաքերն ողջ

ջացուցիչ ողջունիդ նամակ և գորպիսութենէ և զողջութենէ յարգութեանդ ծանուցիչն քարաւէզ դրեալն յամի Տեառն 1800 և ի մարտի 14՝ եկն էհաս ընդ. բազմականիք որ վասն աեզապահութեան մահասրլուն՝ դարձեալ ի սոյն ամի և ի յապրիլ ամսոյս 8՝ յաւուր հրաշալի զատկի և յարութեան Տեառն մերոյ աղատարարի Յիսուսի Քրիստոսի. և դյորում դրեալն բան՝ ընթերցեալ՝ զամենայնէ իմացեալ և ի զգուշութեանցն՝ որպէս յառաջին միշտ զգուշանալի՝ դարձեալ զգուշացայ՝ ըստ գրութեանդ՝ զի ես քանիցս ի մէջ սինհոդոսին տակաւ անձամբս բարձրաձայն աղաղակաւ ծանուցի և ցույն անմարդի գոլն՝ աւելով եթէ ի յայն կողմանց մեզ կաթողիկոս կոչել զոք չէ լինելիր՝ զի ազգն մեր է ի մէջ տերութեան ալլազգեաց՝ վասն որոյ թէ մնզ և թէ առ ազգն մեր մեծ վնասո և տրտմութեան առիթ ծնանի՝ և այժմ վառք Աստուծոյ՝ զի՝ որպէս ես խորհեալ և խօսեցեալ էի, նմանապէսն գտաւ համաձայն, ընդ սիրելոյդ իմոյ խոկմանն և ընդ օրհնեալ ազգին՝ և այս ի խնամոց Աստուծոյ է, վասն որոյ օրհնեալ է տէր և փառաւորեալ, և որպէս յառաջն գըրեալ եմ մեծութեանդ յաւուկ դրով, այժմ ևս նոյն գրչովն գրեմ մեծանձնութեանդ, զի չուտով օր մի առաջ, անպատճառ և անկասկած զանձդ ի վերայ հօտին գնելով եկեսցես և գալցես, և մէ՝ երկիցես՝ զի Աստուած մեր կուռ է, ոչ ոք կարէ հակառակիլ, զի արդար է տէր և ճշմարիտ, և ճշմարտութիւնն յաղթող, ճկ սիրելադունել նազելիդ իմ հոգւոյ, զի ես ծերացեալ եմ և ոչ կարեմ զամենայն հոգս բառնալ, եթէ տեղդ հանգստութիւնն ունիս, ճկ տեղս՝ կրել զնեղութիւն, և եթէ զնեղութիւն, ճկ առ տարիալին քո, զի տացէ քեզ զհանգստութիւն. լիրաւի և լիրաւի զի, անձնահաճ ըղձիւ զքեզ կամիմք լինել մեզ գլուխ և տէր. վասն որոյ եղբ բանիս աստպարէզ կառուցանելով ժտեմ ի հաստչէն ըստ իմ ըղձանացս լսող և կատարող եղիցի խնամելով ի բազմաժամանակեալ ալեաց ծերութեանս իմոյ, չտալցէ ինձ ողորմածն, լսել ձայն դուժի, և աւետիս փութոյ. ոհ և ոհ չգիտէք թէ, որպէս դառնաղէտ ամանակոչ դիպեցաւ. վառք Աստուծոյ. վասնորոյ վերակրկնելով գրեմ սիրելութեանդդ, գոնեաւ զպատուականն անունդ որ վասն կաթողիկոսութեան, երկտող գրով ի քե աղաւնոյ կապեալ, յղեսցես, առ ի միամտութիւն խղճալեացս և այս փոքր գրութիւն, մեծ երեսցի առաջի մեծութեանդ, և ընդ յարգանս եղիցի՝ նաև յանձն առնեմ քեզ զԳէորգ վարդապետ որդեակն իմ ողջ լեր ի լոգջ գլուխն Քրիստոս և ի սէր ծերացեալ Մինաս վարդապետիս։

Սուրբ և մաքուր ողջունիդ ողջունեցեալ Իղնատիոսն, ցույս ծերութեան իմում, մաքուր սրբազնասուրբ Աչոյդ որդիական հպատակութեամբ, համբոյր մատուցանէ հուպ առ հուպ, կենացդ բարեաւութեան յար ըղձալով։

ԺԲ. *Թուղթ միաբանից առ Դանիէլ*

Չանազիր հետևողիդ զկնի հետոցն Քրիստոսի՝ բարեսէր անձին պատուականի Տեառն Դանիէլի հողևզօն վարդապետի և Առաքելապատիւ եպիսկոպոսի և արքայական Մայրաքաղաքիդ Պօլսոյ Արժանընտիր Պատրիարգի մատուցանեմք զոգջոյն և զսէր՝ և զոգջ լինելդ մաղթեմք յԱստուծոյ։

Առածն հաստարակաց, թէ ծառ ի պըտղոյ իւրմէ ճանաչի, կնքեալ է և սուրբ Աւետարանչն, ըստ որում ասէ, ի պտղոյ անտի ծանիջիք զնոսա, ոչ կարէ ասէ ծառ բարի զպտուղ չար առնել, և ոչ դարձեալ ծառ չար զպտուղ բարի առնել։ Ապաքէն հանգուցեալ նշան, ըստ սիրոյ աչսիճան, մի և այս է որպէս մատն՝ ցուցակ Քրիստոսեանց, որով և դու յասկանաս, Աչոյն Աստուծոյ անկեալ տունկ հաստատուր և սերմն ըղձիանաւոր. զի թէ սէր, զհոգեկիր աշակերտելոցն բացափայլէ զանձինս, ըստ վճռելոյ Տեառն՝ ապա և զլռանդիր բարեխնգրութիւն, զԱստուածամանեալոցն, որպիսի և դու արդիս ճանաչիս, ընտրեալդ ի բազմաց բաղձալի Սէրգ մեր, ամենալուրջր փութով հետևող զկնի հետոցն Յիսուսի. զի զոր նոյն հիմնեալ հաստատուեաց, զնորին տնտեսութիւն սիրով ստանձնեալ, անձնամատոյց լինիլ յօժարիս ի նորին պայծառ պահպանութիւն, զառաքելոցն բերեալ յանձին զկերպարան. զոր օրինակ լսեմք և ճանաչեմք։ Ուստի և որպէս հարազատ ալեկութիւն և սրտացաւ հոդա-

ծութիւն, առաջի առնեմք Սրբութեան ձերոյ գմանաւանդապէս տիրագոյն հոգունակելիս զի ըստ բարեաց բարուցդ որպէս և կամեցիս և որքան լինչ կարևոր լիցի ե հանճարիզ խորհրդոցդ ձեռնհաս դառնացի, այնպիսի կերպիւ փոյթ ունիցիս հոգունակել պաշտպանութեանն։ Քանզի Աստուածեան սրբոյ Տաճարիս մերոյ չորս կողմանց անկիւնքըն բնականապէս զխախտութիւն ունին, որպէս և յարգութիւն քո լուեալ իցէ որ ի ժամանակս յառաջինս, ոչ կարի հնագունս. ի պաշտօն կայն մխիթարեանից պաշտօնէից, ի զաւան լաջակողմեան արևելեան հիւսիսային անկեան գմբեթէն, ուր Սուրբ Աւազանն է, անկեալ են քանի քարինք. զոր լետոյ կատարուղիկոսն ժամանակին ի կարկատելն, ոչ լուսաւորեալ որպէս զառաջինն հաստատնագոյն ամրութեանն, նորա ասեն յօրինել տուեալ զերկրորդ Թաղն աղիւսեաց, ի զգուշութիւն յաղագս խախտութեան վերնագոյն քարեաց գմբեթին ուստի անկեալ են քարինք ըստ լսելոյ մերոյ. և զի մի կարկատանն յայտնի երևեալ անշքեղս առնիցէ զշքեղազարդ կազմած լուսաձև Տաճարին. չորս անկեանցն ևս նոյնպէս հաւասարաչափ աղիւսեաց Թաղօք երկրորդական գմբեթիս են յօրինեալ, որպէս զի և մի օրինակ զոր անկեանցն ձևակերպութիւնն երևեսցի և վերնագունիցն կասկածանաց առ ժամանակ մի զգուշացին. յորմէ հետէ և ալօր, կան և մընան այնպիսի զգուշաւորութեամբն։ Եւ ի ժամանակս լուսահոգի Սիմէօն սրբազանին մինչ նոր ևս խախտումն երևէր արևելեան երկուց անկեանց ծածկութիւնն. ագուցեալ քարամբք սալեաց գՏանիս նոցա որպէս գիտեաղ, որով ես իցէ Թէ, և ժամանակ լինչ տևեսցէ դեռ։ Իսկ երկու անկիւնքն արևմտեան որք կան ե մնան գես. ևս, յատացեալ կարկատանս քն, արդիս առաւելապէս վտանգաւորեալ երևին. զորս և միշտ տեսանելով Թէպէտ նորոգ հանգուցեալ սրբազան Տեառն մերոյ, ցաւէր և կսկծայր և ամենայն Ջանիւ փոյթ լանձին անէր հոգունակել վասն նորոգութեանցն և զգուշաւորութեան հաստատութեանցն, այլ ոչ լաջողեաց ամենաւրդով չարաչատ ժամանակն. մինչև արդիս առաւել ևս լաւելաս խախտութիւնն, որում հարևանցի գործառնութիւնք օգնել ոչ ևս կարեն։ Քանզի որ լառաջն միայն արտաքուստ և ներքուստ գիճութիւն որմոցն և գմբէթիցն կարծեցուցանէր զխախտութիւնանցն. ըստ որում նրբին ծակոտկէնիւք միայն ծծելով զջուր անձրևաց, Թափանցէր զփոտութիւն ի քարինան ըստ մասին. բայց արդ ի սոյն աւուրքս ի լինել յորդ անձրևի, սուղեալ ջրոյն ժողովեալ ի վերալ երկրորդական ներքին աղիւսեաց Թաղին, անտի լանկարծ իմն ղճանապարհ արարեալ հոսեցաւ ի գլուխս ժողովրդականաց ներքոյ կացելոց. որոյ Թէ զինչպիսի լիութիւն խախտութիւնն, լեղանակէն և քեղ լայտնի լինի. մինչև ի մէնջ անհաս գոլով ղծածուկն ի յորմունսն և ի միջոց երկուց Թաղիցն ճանաչել անտարակոյս, միայն լերևութիցն նշմարեմք զմեծագոյն խախտութիւնն, որ որմունքն ի ներքուստ և յարտաքուստ, յերկուց կողմանց մինչեւ ցքերան նորոգ չարեալ քարանցն, այնքան են ծծեալ զջուր, մինչև համարեաց Թէ անցուցեալ են ի ներքին միջակէտ քարանցն. յորս և գիճութիւնն եղեալ է իբրեւ ղերր, որոց և սլրբելն անհնար է խմմելոցն գիճութեամբ քարանցն հնացելոց, միայն զի հնարաւորեսցի նոցա գոնէ ոչ յաւելուլն զգիճութիւնն առաւել քան ղունեցեալսն իւրեանց. ղի մի անցուցեալ և յալլս, Թափանձեսցեն և ի նոսա զփոտութիւնն. որպէս եւ Թափանցեալ են ի քանի կալգ քարինս նորաչէն գեղեցկաչէն մատրան Սրբոց հրեշտակապետացն։ Արդ Թէ զինչպիսի հոգացութիւն առ այնս պարտ իցէ, քանմ վնասմանոհ ընտրութեան մնայ. ղի որպէս մեք տեսանեմք աչօք, ըստ կերպի պատմութեան է, որպէս և լսելդ ականջօք։ Այլ եթէ մեծագոյն ստուգագոյն հոգածութեանց անձեռնհասութիւն համարեսցի, վասն երկրորդին, զի մի ըստ գրեցելոյն զառաւելութիւն գիճութեանցն և յալլս Թափանցեսցեն, ծանուցանեմք Սրբութեան ձերոյ, որ Թէ եկեալքդ Աստուծով և անօրէնութեամբն նորա. Թէ կամիցէք, բերիք ընդ ձեզ զմի վարպետ արճիճ չինելոյ. զի ըստ կերպի տեղւոյդ այնպիսի չինուածոցն, մազազալից և այլոց, չինեալ է դտանիս խախտած անկեանցըն ասացելոց. զի զջուրն զոր ոչ հոսեցուցանեն քարինքն, գոնէ հոսեցուցեալ կապարեալ սալապատութեամբն, առ ժամանակ մի ևս ապրեսցին նուաւ որմունքն և գմբէթքն

խախտեցեալք. Ողջ լեր ամենայն ղուարթութեամբ հոլով և մարմնով ի ղուարճութիւն մեր ամենեցուն. 1249. մայիս 1. (1800)

Ի լուսանկար Աթոռս սուրբ Էջմիածնին.

Հասցէ ի ոսկս Սրբազան Պատրիարգին, ի մատղութիւն հոգացողութեան լաղագս սուրբ եկեղեցւոյն.

ԺԲ. *Թուղթ ընդունելութեան և հրաւիրանաց առ Յովսէփ Տիրակոչ սրբազան կաթողիկոսն ի Հաշտարխան ի ապատախանի թղթոյն:*

Գներջանիկ վեհափառ Հայրապետի ժամանելոյ ի բարձր աստիճան փոխանորդութեան սուրբ լուսաւորչին, Ամենապատիւ հոդևոր հօր մերում Տեառն Յովսէփոսի սրբազան կաթողիկոսի հանուրց Հայոց խոնարհեալ որդիական սիրով և կարօտիւ մատուցանեմք ղհամբոյրս չնորհաբուղխս սրբոյ աջոյդ փափխադելով ղուարթարար օրհնութեանդ.

Յայտնի լիցի վեհանձնութեան ձերում, զի քանիցս առաքեալ թուղթք սրբութեանդ ի Սանկտ Պետրպօլգու և ի Մոսկովու հասին առ մեզ լիւրաքանչիւր ժամանակի և իմաց զոր ինչ ի նոսա էին բանք. և նախ զի լաղագս բարձմանն ի գլխոց մերոց բազմավաստակ և հասարականամ Հայրապետին մերոյ Տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսին զբանս միխիթարութեան և լուսաղրութեան դրեալ էիք առ լոդնաթախիծ որբացեալ միաբանութիւնս, չնորհակալ եղաք և նմք զմնծարդոյ սիրատատ Հայրութենդ. որում տացէ Տէրն տէլւանց զկեանս երկարս և խաղաղականս. Եւ ապա զի վասն ընտրութեան լայորդի ղղանազան բանս էիր հրամայեալ, մեք որ սակս ոչ պատահարուժն ի մէջ անկանելոյ միանգամայն նախնեացն սահմանի ղրանն արկեալ էաք առ օրհնեալ աղդն մեր. և գլխաւորսն մերազանց լաղմաժողով մայրաքաղաքին Կոստանդնուպօլսոյ ըստ որում և ազգ սրսրաք մնծութեանդ նախնի գրովն մերով. սպասեաք նոցին պատասխանագրութեան, եթէ զինչ գրեսցեն ի փոխադարձ մահատացն մերոց. իսկ տակաւին մինչև ցայսօր, գրացեալսդ պատասխանի իմն ոչ ընկալաք. Դիտեաք ևս առ գրութիւն մահատատար Դաւիթ արհի եպիսկոպոսին սրբելի եղբօրն մերոյ, որ առ մի նուագ զալ իմն աւետիս գրեաց և հետևաբար լսելի եղեն ընդհակառակն աղմուկք չիմրիլց. Յայնմիկ տարակուսութեան գոլով մեր, բորբոքեցաւ դարձեալ հուրն պարսկական հինից լայկոլս, որ տոչարեաց զմնացուածս չինութեանց երկրիս. մանաւանդ գրեթէ ի մեզ առաւելապէս ներգործեալ կացուց զմեզ բազմաստաղնիւս. Իսկ զգան այնոցիկ փորձութեանց իսկ ժամանեաց ի ձեռս մեր օրինակ բազմակնքոյն համահաճութեան կողմանցդ մերայնոց. որում ընթերցման անգամ չեզև պատեհ ժամ, ուր մնայր վերծանել, և զպատասխանի խորհիլ. Եւ ժամանեալքն մեզ աւուրք չարչարանաց և գառնագէտ մեսուց ձգեցան մինչև յօգոստոսի 6, յորում եկ բանակն ի բանակատեղին որ ընդ մէջ դղեկին և տեղոյս և լաւէր ևս զնոյն ամսոյ քսան և մի երորդ օրն, յորում, ի Շարուր գաւառէ գներևս գարձուցին առ Նախիջևան. Յայնմ հետէ ևս ոչ գտանել գհանգիստ ընաւ այլ նորանոր կրիւք ի մերձակայից վշտանալով և ի ոպառեցմանէ ամենայն պիտուից հոգալով, ակն ունէաք և ի ճանապարհն թղթոյ իւրիք՝ որ գիւր ընծայեսցէ սրտից մերոց, անագան ուրեմն ի սեպտեմբերի ԻԶ, էհաս առ մեզ թուղթ մի ի մեծէն Զօլսոյ ի Դաւիթ արհի եպիսկոպոսէն դրեցեալ ի լենինսի Դ. որով դրեալ էր զաւետիս ընտրութեան բարեբաստիկ սրբազան վեհապետիդ մերոյ եթէ նախ լօգոստափառ հզօր կայսերէն և ապա նորին ակնարկութեամբ ի տէրութենէն Տաճկաց և ի մերս աղդի լրութենէ ընտրեալ և ընկալեալ եղեւ. Յինքն ալնորիկ՝ զառ ի սրբութենէ ձերմէ ի Հաշտարխան ի սեպտեմբերի 17՝ դրեալ զողջունս ձերն նամակ ընկալեալ լարդանօք ի վեցն Հոկտեմբերի ամսոյս, և տեսեալ զվարդագոյն դրոշմ Հայրապետական նորակերտ կնքոյդ և ժողովեալ ի սուրբ եկեղեցին միաբանութեամբ ընթերցաք, և տեղեկացեալ զլաջողմանէ կոչմանդ ի բարձրագոյն աստիճան սրբազան կաթողիկոսութեան աղդիս Հայոց և մնծի գահիս Հայաստանեայց, ըստ վերնախնամ տեսչութեան միխիթարեցաք մեծապէս, փարատեալ ի սրտից ղդիւրութիւն. Եւ

գոհութեամբ վարուեցաք զանուն Աստուծոյ ամենակալի՝ որ լայց եղեալ անալցելու որբութեանս մերում չնորհեաց զղեըընտիր հայրդ ի հայրութիւն հասարակացս. Որք և ե միջնորդութեամբ ալա՛ քարտիսի մատչիմք ի հանդէս վեհապարդ Տեառնդ չնորհաւորել զրարձրաղունութիւնդ՝ ասելով կեցցէ վեհափառ. Հայրապետդ մեր պանծալի պատուով ի դլուխ կաթուղիկէ սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց՝ ի պարծանս ուխտի մանկանցս և համօրէն ազդիս. Զոր և պա՛պանեսցէ Տէր հզօր ձեռամբ իւրով, և առաջնորդեսցէ խաղաղութեամբ ժամանել ի սուրբ գահոյ, և արժանաւորել կաթողիկոսական օծման ի սուրբ հոգւոյն. և կարողացուսցէ ըստ վայելչանն առնտեսել զսուրբ գահս տիրական և գմանկունս սորա զբանաւոր հօտն երկնաւոր հովուապետին, առ. ի դոհանել ժառանգաւոր անթառամ պսակին։ Հրամայեալ էիք ի նամակի ձերում, և զոմանս պատուէրս, զոր ծանեաք մի ըստ միոջէ, և մինն ալա էր, զի զանցս մեր ծանուցանիցեմք Մեծանձնութեան Ձերում. Բարւոք էր հրաման ձեր, այլ անցքն մեր որք ի մայիսէ մինչև ցսեպտեմբերի մէջն, և ներկայական հողք և տարակուսանք մեր առ պակասաւորութեանց, և առ ապաղալական ցաւս, ոչ լինի գրել. և տէրութեան ձերում ի բացուստ չէ հնար զարման տանել վչասուորութեանց մերոց։ Այլ զի Աստուծոյ և ի մարդկանէ մտադիր տուեալ ես գանձն ընդ ա՛ստ տիրական լծով, պարտիս աւուրբ և ժամու միով լաւագ կանխել և փութացուցանել ղչնորհաւոր գալուստդ ի սուրբ աթոռս։ Քանզի մինչ ազդն մեր բոլոր հաձեցեալ են ընդ վեհափառութիւն քո, ի մինչ ի միաբանից ես որդիական հնազանդութիւն սուրբ հօրդ հասարակաց, և ոչ բնաւ ընդդիմութիւն, և ի դալդ բարեաւ՝ ի վերալ դլխոց մերոց ունիս զտեղի ըստ նախադրեալն մերում խոստման։ Ապաքէն աղաչեմք և խնդրեմք, մի ամենևին կամիցիս յամել և լապաղել, այլ զամենայն պատճառանս լետուլ թողեալ հրամայեսցես երագ ընդ երագ դալ, և ի դեկտեմբերի վերջին աւուրան գոնէ աստուծոր դանիլ, զի մինչև ցգարունն կատարեսնակեսցես զամենայն դհարկաւոր դհոգալիսն քո և տանս սրբոյ։ Բայց եթէ ապասեցես գարնան, և յայնժամ դարձեալ վերստին բոլոքեսցի հուրն յարեւելից, (զոր Աստուած խափանեսցէ), մեք որք միանդամ յանտիրութեան դոլով արբաք զճաշակ դառնութեան նոցա, մի լսանդամ ոչ կարեմք տենլ, դի թէ կամիցիմք ևս անօդուտ է. ապա եթէ այնուհետև եկեսցես, և ոչ գմեօք ի մէնջ գոցես աստ, և յայնժամ զալն և չգալն ոչի՛չ զանազանին։ Հաւատարիմ լիցին Տեառնդ բանք ծառայից։ Վասն որոյ կրկին առնեմք խնդրուածս տուբայձր սրբազնութիւն ձեր՝ խոնարհել ի մաղթանս մեր, որք յաստմհետէ ակնադէպ սպասեմք յառաջելոյ մեծութեանդ, և հայցեմք յԱստուծոյ ամենակալէ՝ յաջողել զգալուստ քո ի բարին։ Ողջ լեր պայծառաղուք գլուխդ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, ի մշտնջենաւոր դլուխն համօրէն հաւատացելոց Քրիստոս, ի միխթարութիւն և ի պարծանս խոնարհ որդւոց և ծառայից քոց՝ վշտակիր միաբանից սրբոյ աթոռոս եպիսկոպոսաց, վարդապետաց և աբեղայից ստորակնքողաց ի Թղթիս, և այլ համայն աստիճանաւորաց ընդ մեզ եղելոց։

Գրեցաւ յամի Տեառն 1800 և ի հոկտեմբերի ԻԱ, ի լուսանկար աթոռս սուրբ Էջմիածնին։

ԺԹ. Թուղթ երկրորդ առ Յովսէփ կաթուղիկոսն ի գործակալաց սրբոյ աթոռոյս Յիշումն յառաջ գրեալ թղթոյն հրաւիրանաց եւ ծանուցումն գահուսանէ Ս ինասր արը եպիսկոպոսին, եւ խընդիր ստիպաւ անյապաղ գալ ի սուրբ աթոռս։

* * * Տեառն Յովսէփայ սրբազնասուրբ կաթողիկոսի ի քաղցրահաւաց ակնարկութենէն Աստուծոյ ընտրեալ յառաջադոյն ճանաչմամբ և չնորհազարդեալ ամենալնիւ քաջընտիր հովուապետի և լարարթուն գիտապետի նշանագրելոյ . . . . փեսալութիւն անարատ հարսին Քրիստոսի լուսանկար գահիս սրբոյ էջմիածնի, Մեծախնամ Տեառն մերում. և հօր հասարակաց Տեառն Յովսէփայ սրբազնասուրբ կաթուղիկոսի ամենայն Հայոց խոնարհագէմ հպատակութեամբ և կաթոդին

կարօտիւ օրհնաձիր սրբոյ Աչոյ ղնամբոյրս մատուցանելով՝ ծանուցանեմք զայս ինչ։

Ի բանի լետ ժամանելոյ առ միաբանութիւնս չնորհալի նամակի ՚ձերոյ սրբութեան ի Հաչտարիսան գրեցելոյ ի մետասաներորդ աւուր ամսոյս դրեցաք զիթուղթ հրաւիրանաց և աղերսանաց առ ձերին մեծահանգէս վեհափառութիւն, զոր մինչ յոտղարկեցաք չերեւան հարկ եղե մեզ ի հրաման իչխողին դնալ անդ, որք ի զրաւ պատասխանեացն մերոց՝ ընկալեալ և առ ի նմանէ զիթուղթ և զրեալ մեր առլով նոր թղթով զպատմութիւն անցիցն համառօտակի ի վեչաստանեորդում աւուր ամսոյս զարձուցաք զիթղթաբերսն ի բերանոս առ ի Թիֆլիզ և մնք զարձաք առ սուրբ գահս, և այն ինչ ժամանեցաք անդր, զհոզեոր Հայրն մեր զԱմենայն ծերունափայլ արք եպիսկոպոսն՝ զոր թողեալ էաք ի թեթև հիւանդութեան, զտաք լայնժամ ի տագնապի ծանրագոյն ցաւոց. որում մինչ պատմեցաք զիչխումն կամաց իչխողին, ի կամս մեր, կարի լաւն դիւրասիրտ եղե։ Բայց զի կամք եղեն Անմահ Արքային կուչել զնա յանցաւոր կենացս, օր քան զօր առաւելաս հիւանդութիւնն և ինքն երանելին ևս իբրև ի մացաս զհրաւէր մահուն, պատրաստեցաւ խոստովանութեամբ և հաղորդութեամբ։ Եւ յամսոյս ԻԲ. ի չորրորդ ժամու ցերեկին աւանդեաց զսրբասնեալ զիւր հոգին առ Աստուած։ Արդ՝ Տէր մեր սրբազան զկնի վախճանման հոգելոյս Հայրապետին երկու պատուական ծերք էին աստանօր, ի սուրբ գահիս՝ աչխատաւորք և օկտահոգ և բարեջանք. առաջին սոյն այս լիչատակեալս, խոհական բանաւոր և իմաստուն վարդապետս, Երկրորդն հաւատարիմ և ընտիր լուսարար Դրիդոր առաքինազարդ վարդապետն։ Զորոց երկոցունց պիտանեզոյն արանց՝ լուսարար արհին լառաջ քան ղգալ պարսկական հինին մեռաւ խաղաղութեամբ և թաղեցաւ՝ վառաւորապէս որոյ դրէթէ դիւրագոյն մահն, ցանկալի էր կենդանեացս քան զիշուառալից կեանս մեր։ Իսկ Մինաս հօգեղդոն արք եպիսկոպոսն կրեալ և ղդառնութիւն նեղութեանցն դիւաժողով զօրուն և վչտացեալ լայնչափ հոգս, լետ վախճանեցաւ, քան ո. րում ծանուցաւ։ Եւ թէպէտ հանգիստ էր նմա ի վչտաց ծերութեան և աչաց վտանգին ղերծանելն, սակայն մեք բոլոր միաբան, որ զնա փոխանորդ Հայրապետի ճանաչէաք և ի մեծութենէ ձերմէ և ի Կոստանդնուպօլսեցւոցն բաղմակնով կարղեցեալ ս եղապահ ունէաք, որ ամենեցուն պատկառելի հրամանատու էր, և խորհրդականութեամբ նորին վարէաք, և իրատուք միխիթարէաք. ալսօր զրկեցեալ ի նմանէ ի մեծի թախծութեան կամք, տեսանելով զմարդարէական սպառնալիսն առ մեզ վճարեալ, զբարձումն առն հզօրի, և զիմաստունսն և զծերոյ, և զպաչտելի խորհրդականին։ Այլ հանդրախնամն Աստուած՝ հանգուցիչն ննջեցելոց և սլաչպանիչն կենդանեաց լուսաւորեսցէ զհոգիս բարեվչատակ յոգնավաստակ արք եպիսկոպոսացն, և զԱմենապատուական գլուխդ սրբոյ եկեղեցւոյ մերոյ լետ գլխոյն Քրիստոսի, ողջ պահեսցէ և ընդ երկայն աւուրս արասցէ ի պարծանս և ի միխիթարութիւն քաղմավարաս որդւոցս քոց և ծառալից։

Եւ արդ պարտական համարելով զայս աղդ առնելս սրբազան վեհապետիդ մերում, ի վերալ ալսր մանաւանդ կարևոր իմանամբ կրկնել և երրորդել զինդիրն հասարակութեան մերոյ, ալս է զանլալալղ գալուստն որբութեանդ առ սուրբ աթոռս։ Քանզի ալս ժամ եղեն անտերունչ դոլոյ սրբոյ տանս և տարակուսեալ լինելոյ միաբանութեանս, և լորութենաս մերում այն գլխաւոր աղէտք ևս ժամանեցին ի վերալ ի կենդանութեան ձերոց՝ լերեսս նոցա նալէաք, լետ նոցա ևս պակասելոյն զինչ ունեմք առնել։ Թէպէտ և աչխատասիրեմք, թէպէտ և հոգամք, թէպէտ և ջանամք վանս բարւոյն, սակայն ընդ առն և զօրութիւն իւր, զինչ է կար զօրութեան մերոյ, և զի ի մէջ օձից և կարճաց քնակեալ եմք, ըստ բանի մարգարէին, և ժամանակս ժխորեալ սղութիւն ամենայն պիտոլից լարտաքուստ լումէքէ գանկ մի չէ մտեալ ի սուրբ տունս, բաց ի լուխտաւորացն եկելոց և (նոքա ես լայնպիսի աւուրս եկին որ ժամ մի լառաջ ի բաց առնելն հոգալաք)։ Բայց զառտնին եղեալ,ան իբր թէ սպառեցին։ Ընդ այսորիկ ծանիցէ Ձերութիւնդ և զայնսակիկ պակասութիւնսն որք ըստ հոգևորին. ի քանի վչխակ եպիսկոպոս ոչ գոլ. և աստանօր լարտաքուստ և ի ներքուստ սպասողքն չլացան գիտելով ի ճանապարհս կաթուղիկո.

սիր։ Ալ և Պօլսոյ նուիրակն ի մետաղս (՞) և չորք վիճակք ես ի տէրութեան օսմանցւոց, ահա լերիս ամս առանց նուիրակի են, որոց կոնդակքն ղրեցեալ հողիլոյս սրբազանն ձեռնհաս չեղե առաքել։ Սրբալոյս մեռոնն ես նուաղեալ է մերձ ի սպառումն, ուստի նախահոգութեամբ լուսահոգի Հայրապետին նիւթն պատրաստեցաւ ձեռամբ մերով, և այնպէս կնքեալ պահպանի։ Արդ ալօքիկ պակասութիւնք հարկաւորք կարօտին հղօր բազկի, բարձր սրբազնութեան ձերոյ, առ. լցումն։ վասն որոյ աղաչեմք զվեհափառութիւն Ձեր միես ամենևին լետաձգել այլ փութացուցանել ղբարիոք ղալուստն չքեղաչուք փեսալիդ առ. մաքուր հարսն քո սպացեալ որ ղբաղձանսն իւր առ երագութիւն ընթացիդդ ցուցանելով կոչէ տարփմամբ սիրոյ դարձի եղբօր որդի իմ, և նմանանաց այծեմանց կամ որթուց եղանց ի վերալ լերանց խնկաբերաց, եկ և բարձ ղտխրութիւն ալրիութեան իմոյ և որբութեան մանկանց իմոց։ Եւ մի դուցէ լետոյ բարձրաձայն աղաղակեսցէ, թէ խնդրեցի զնա և ոչ գտի, կոչեցի և ոչ ետ ինձ ղձայն։ Ապաքէն ըստ խոստմանն Ցեառնդ, և ըստ խնդրոյ ծառայից կամաց և ջանս երագել ի գալ որպէս ղի գոնէ ի դեկտեմբերի վերջին աւուրն աստանօր գտանիցես, և ղրաղում հողոյիս սրբոյ տան (որ չէ արձանացուցանելի աստ) ի գլուխ հանցես, ապա տեսցուք թէ լապրիլէ և այնր ղինչ նշանք երևեցին, որք թէ խաղաղութեան իցեն անխոով վայելեցուք, իսկ թէ խռովութեան իցեն մի անպատրաստ գտանիցեմք. ամէն ասեմք ղի լաւ ևս անդէխութիւն մեր և անպատրաստ լինելն ածելոց է ղվախճան չինութեան սրբոյ աթոռոյս, ղոր մի արասցէ Էր։ Ընդհակառակ կացութենէ նուաստիցս այսպէս դիտել լիցի գործովագութ Հայրութեանդ, ղի ի դարձէ երկրականացս ի վտանգութենէ իւրեանց, մինչև ցարդ ես խառնակութիւնն և չիմացումն ստեցա ոչ ղաղարեաց, ղի ոչ գոյ խաղաղութիւն ամբարշտաց, այլ ամենայն ջանիւ ջան ղործել զմնացորդ որ ալան ցորենոյ ժողովեցաք ցՏէՀ. սոսկալի որ սերմանելոյ ևս չէ բաւական։ Գնեցաք և գնեմք մինչև գի սոսկալի զարի և ցորեան, և ի յօրննալ երկիրն Ղարսայ ժողովարար առաքեցաք կոնդակաւ հասարակութեան. ակնունիմք թէ օգնութիւն լինիցի։ և զայլ պիտոյս ձմրան ևս պատրաստեմք, և զամենայն հոգալիսն տեսանեմք։ Զաւանդս ինչ զորս ի մեծի վրդովմանն տարեալ էին սրբոյ աթոռոյս. ի բերդն ամբողջ զարձուցին առ մեզ։ Տէրութիւն ձեր ապահով մտօք եկեսջիք և մի լամեսջիք. ակնածէտ սպասեմք աւետաւոր դրոյդ և ուրախարար գալստեանդ։ Ողջ լեր ամենայն խաղաղութեամբ և փառաւորութեամբ ի մխիթարութիւն որդւոցս քոց և ծառայից իբր գործակալաց սրբոյ գահիս ստորակնքողաց։ Գրեցաւ լամի կենարարին 1800, և ի Հոկտեմբերի ԼԱ. ի սուրբ Էջմիածին։

Ի. Թուղթ Ցովսէփ կաթողիկոսի առ հայսն։

Աստուածապսակ օգոստափառ կալար և ինքնակալ

Ամենաողորմած Տէր!

Որոյ Աղօթարար և Ցիսուսի Քրիստոսի ծառայ Ցովսէփ կաթողիկոս և ծայրագոյն Պատրիարգ ամենայն Հայոց Առաքելականի եկեղեցւոյն Քրիստոսի սրբոյ Էջմիածնի, և փոխանորդ սրբոց Առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի, և սրբոյ Լուսաւորչ ն մերոյ Գրիգորի։

Ո՛չ ղաղարիմ ի փառաւորելոյ զԱստուածահաստատ և Սրբասնեալ ղԱ՛ ձերոյ կալսերական մեծութեան որ բարձրացուցեալ ղիս ի ղանաղան աստիճանս չնորհաց, վերջապէս հղիք ի վերալ իմ ղղևրպոյն պատիւ ըստ հոդևորական կոչմանս, այսինքն կացուցիք զիս լինել կաթողիկոս և ծայրագոյն Պատրիարգ ամենայն Հայոց սկսեալ ցընդ երեսս երկրի։

Ուրեմն ուրախ լիցի ալսօր Եկեղեցին Հայոց, ղի ըստ որում նա լետ խոնարհման գաւազանի իւրոյ՝ փոխարինեցեալ կախիւր, նախակարգել և վերահաստատել զհոդևորական իշխանութիւնս իւր ի ձեռն սուրբ առաքեալ և այլահաւատ տէրութենանց, ոյր վասն մեծապէս ցաւագնեալ հնձէր, իսկ ալսօր տեսանէ որ Կայսերական մեծութիւն որպէս Ամենտքարեպաշտ թագաւոր և պաշտպան Անուան Քրիստոսի հովանաւորիչ իւրոյ

տանն եղեալ, հաստատէ իւրոյին ներգործութեամբ զսուրբ Աթոռս նորա՝ ընտրելով զհովուապետս նորին։

Չի որպէս ոչ զոյ տեսակ ինչ ոզորմութեանց՝ զորս ոչ ընկալալ ի ձերդ կայսերական մեծութենէ, և ախորժեալ վայելեցի, նոյնպէս և ոչ զոյ կերպ ինչ չնորհակալութեան՝ զոր արժանապէս նուիրեալ բացայայտեցից ձերդ կայսերական մեծութեան, զիմ ամենահպատակական ջերմեռանդութիւնս առ սուրբ անձն ձեր, ճանաչեմ ստուգութեամբ ի լսենալն սրտէ իմմէ որ թէ ամենայն լեզուք միաբանէին ընդ իմոյս բարբառոյ փառաբանել զանսահման բարեգործութիւնս՝ և բոլոր գԱստուածանմման առաքինութիւնս ձերոյ կայսերական մեծութեան, սակայն և յոյժ ոչ բաւականանային զօրութիւնք արժանաւորութեան վերջնոց առ առաջնոյդ։

Ցաղագս այսքանեաց անբաւ ոզորմութեանց ձերոց ցուցելոց առ իս և առ համայն ազգն իմ առաքեցի առ սուրբ ոտս ձերոյ կայսերական մեծութեան, զամենահպատակ ծառայն ձեր և զսիրելի որդին իմ և գլաջորդ արքիմանդրիան Գրիգոր, զի զձերքին սրտի իմոյ զլիալի չնորհակալութիւնս մատուսցէ Աստուածահաստատ Աթոռոյ ձերոյ, և ընկալեալ զամենաբարձր Հրովարտակ չնորհաց և այլ ոզորմութեանց ձերոյ վերագարձի առ մեզ, որով զօրացեալ յառաջ խաղալ մարթասցուք առ ընկալնուլ զօծումն լիութեան սուրբ Հոգւոյն ի գլուխ մեր, և ապա ձեռնադրեալ զնա Արքեպիսկոպոս, ի վերայ Տիրահաստատ Տէրութեան ձերոյ եղեալ հայոց, դարձուսցուք օրհնութեամբ սուրբ տեղեացն՝ և մեր ամենահպատակական չնորհակալութեամբ առ Ամենամաքուր գարշապարս ձերոյ կայսերական մեծութեան։

Ամենաօգոստափառ Թագաւոր Ամենաոզորմած Տէր !

Որպէս դուք էք պատկեր Աստուածային բարեբարութեանց և իսկական կերպարան վերնոյն լակի, նոյնպէս և սիրտ ձեր կալ ի ձեռին նորա, ոյր վասն և ես խոնարհեցուցեալ զծունկս իմ առաջի սրբացուցեալ Աթոռոյ ձերոյ կայս. մեծութեան, հեզութեամբ աղաչեմ զիջանել ի գերամարթ Աթոռոյ ձերմէ և ունկն մատուցանել աղաչանաց Աղինս Հայկայ և նոցին խոնարհ հովապետի զոր դուք գնա ի սուն պատիւ վերակոչեցիք, հանեցարուք ոզորմածազոյն Ակամբն ի նա և ի հօտս նորա, որ ի ձերութեան ձերումդ և որ յարտաքոյ աշխմ, քանզի նա՝ զկնի Աստուծոյ ի ձեզ եղեալ ունի զյոյս իւր. և զվիճակ բարեբախտութեան իւրոյ, ի սուրբ անձն ձերոյ կայսերական մեծութեան։

Եւ իմ չրթունք և սիրտ յամենայն ժամ առ Տէր ունին վերառաքել զաղօթական նուէրս մինչև ցել չնչոյս. որպէս զի, երկրեսցէ նա զամենաբարեպաշտ և զԱստուածասէր կեանս ձերոյ կայսերական մեծութեան, վասն բարօրութեան Քրիստոնէական եկեղեցւոյն, փառազարդութեան խաչին Քրիստոսի, և սակս իսկական միխթարութեան իմոյ։

Ձերոյ կայսերական մեծութեանն
Ամենահպատակ Աղօթարար,
Յիսուսի Քրիստոսի Ծառայ խոնահադոյն
ՅՈՎՍԷՓ ՊԱՏՐԻԱՐՔ ամենայն Հայոց,
իշխան երկնաբազուկ Արդութեանց։

կնիք.

Ցամսեանն նոյեմբերի 14 եղի
յամի Տեառն 1800
ի Վաղարշապատ

ԻԱ. *Թուղթ Գործոյ ի Միհրանից սրբոյ ալթոռոյս առ Յովսէփ նորաւոչ սրբազան կաթողիկոսն յաղագս գալոյ հասանելոյ աստ ի մեծէն Պօլսոյ արքունական ֆէրմանին եւ ընդաթին եւ համահաճութեան մահսէրին, ճեռամբ Դաւիթ արհի եպիսկոպոսին. եւ խնդիր առ ի շուտով գալ։*

Աստուածարեալ երջանկափառ մնձի Հայրապետիդ Հայաստանեայց, ծայրագոյն Գատրիարգի Քրիստոսահիմն սրբոյ գահիս Էջմիածնի՝ և հոգևոր Տեառնդ մերոյ Տեառն Յովսէփայ սրբազան կաթողիկոսի որդիական լոգնաբազձ կարօտու և ջերմեռանդ սիրով տամք զհամբոյրս օրհնաձիր սրբոյ աջոյդ, լայանելով զփափագ սրտից մերոց առ չնորհըս Հայրական ձեր առատ խնամոց։

Եւ խոնարհաբար ծանուցանեմք վճռափառութեանդ, զի լսելի եղբայրն մեր

մանաւարտաւար Դաւիթ չնորհավալլ ա-
պիսկոպոսն զարձ արարեալ ի Կոստանդի-
նուպօլսոյ անցուցանելով ընդ երկարու-
թիւնս երկիւղալից ճանապարհաց ոգորմու-
թեամբն աստուածոյ անվասանդ եմուտ ի երկիրս
մեր բերեալ ընդ ինքեան ղչքեղազարդ ֆէր-
մանն, ի մեծազօր թագաւորէն օսմանցւոց, և
զրևրաթն յանուն մեծութեան ձերոյ չնորհեալ
հանդերձ օրինակօք իւրեանց, և զմահաբե-
կան թուղթն մեր հաճութեամբ ընտրու-
թեան ընտրելոյդ կնքեալ յամենից երեսելեաց
անձանց։ Որոյ զուարճալի գալուստն մինչ
ազգ եղև մեզ եւլաք բազմութեամբ եպիսկո-
պոսաց և վարդապետաց ընդ առաջ, և ի
պատիւ մեծի թագաւորութեան խնամողի
բազմութեան ազգի մերում, և ի նչան որ-
դիական սիրոյ և հնազանդութեան մերոյ առ
ամենապատուական Հայրութիւնդ, հնչեցու-
մամբ զանգակաց հանդիսիւ մուծաք ի սուրբ
աթոռս, ի նոյեմբերի ԻՓ. և ի յատենի խըն-
ջոյից բազմականի կարգաւորաց և աշխար-
հականաց բացեալ եղեն մահաէրն համահա-
ճութեան, և ծաղկափայլ ֆէրմանն արքունա-
կան ի տեսութիւն ամենեցուն. որք և ար-
քեալ բաժակ ուրախութեան լցուցան կենաց
և առողջութեան զերազանց զլսոյդ մերոյ,
խորհրդականի կարդացաք զարժանին օրհնա
բանութիւն չնորհել ՅԱռաւն ամենակալի
զչնորհազարդ վեհապետդ մեր սրբոյ աթո-
ռոյս և ազգիս և մեզ ընդ երկայն աւուրս, և
յաջողել զգալուստ ձեր առ. ալար խաղաղու-
թեամբ և բարութեամբ։ Իսկ ի լերրորդումն
աւուր գալոյ Դաւիթ արհի եպիսկոպոսին,
մինչ այլ իմն հարկ ստիպէր զոմանս ի զոր-
ծակալաց գնալ առ իշխողն երկրիս, ըստ
պատշաճաւորութեան ամենեցունս, ինքն
Դաւիթ աստուածիմաստ վարդապետն ևս ընդ
նոսա գնաց առ իշխանն սակաւ ինչ ըն-
ծայիւք, և ցոյց զֆէրմանին, զոր և նա ի հան-
դիսի մեծամեծացն իւրոց առեալ էր ընթեռ-
նուլ, և ընկալեալ էր պատուով, և Դաւիթ
վարդապետ արգոյ աղբօրն մերում խնդալ
պարգեւալ։ Յայց մինչ զարքունեանդ ստի-
պաւ հարցեալ էր թէ ուր ընաց, զործակալ-
քըն պատասխանեալ էին թէ համարիմք թէ
ի Հաչտարխանու եւլեալ լիցէ, և յաղագս լեղ-
կեացն չփոթիլն ի վրաստան, չիցէ կարաս.
ցեալ յառաջել, լուսամբ յառաջիկայ աւուրքս
ի Թիֆլիզու լսել զհամբաւն։ Արդ սրբազան
հայր մեր, որպէս մեզ, նմանապէս և ձերում
իմաստութեան յայտնի է որ մինչև ցայժմ
արքունի նոմոսք կաթողիկոսականք կամ
ընդ կաթողիկոսին են նկնալք, կամ կաթո-
ղիկոսն աստ նախապատրաստ գոլով, առ նա
են հասեալք կամ այսքիկ նոմոսք հանեալք
յարքունուստ լեալ բոլորման տարւոյ վախ-
ճանման նախնի կաթողիկոսին տակաւին ոչ
գտանի աստ յայտնի՝ առ որ զտեղի առ-
նուցուն։ Զհանդի զինչ երեսին պատահման,
եթէ ոչ առ գոհացութեան, և զինչ զօրու-
թիւն անուան առանց ենթակայութեան։ Ըստ
այնմ և բացակայութիւն այսոցիկ ի Ցեառնէդ
իւրեանց ընդունելութեան, թարց որոյ չգո-
րէն առնել ինչ։ Վասն որոյ զարձեալ լիշե-
ցուցանեմք, վեհանձնութեանդ զնտխազրեալ-
սըն մեր զաղաչանս, զի անգատազ փութով
եկեսցես զօրացուցանել զբանս հրամանաց
արքունի հրովարտակացս, և մատուսցես զար-
ման ցաւոց անտիրութեան սրբոյ աթոռոյ, և
որբութեան վշտակիր միաբանից, և հոգևոր
պակասութեանցն ազգիս։ Դիտասցէ և զայս
սրբազնութիւն Ձեր. զի ի նոր պատուելի
Պատրիարգէն կոլոոյ դրեալ դուր թուղթ մի
առ միաբանութիւնս մեր զոր բացեալ ըն-
թերցաք և գտաք զչնորհաւորութիւնն առ
բարձրափառ Հայրապետութիւն Ձեառնդ, և
զուրախակցութիւն ընդ մեզ։ Ի՛ին և թուղթ
ի նոյն Պատրիարգէ և լիչխանաց ոմանց, ի
Թօխաթու նուիրակ Դրիգոր վարդապետ աղ-
բօրէն մերմէ առ մեծութիւնդ որք կարծե-
լով թէ աստ իցէք, լերևան թղթոցն ի սուրբ
աթոռս հասանել էին դրեալ։ Այլ զի տակա-
ւին ոչ լսելի լինի գալդ և ուր հասանելդ, ա-
հա և զայնոսիկ թուղթսն ընդ սմին գրով մե-
րում լուդարկեցաք ի սպաս բարձրութեանդ,
հանդերձ Զմիւռնեայու Ապրճան Մարդար
աղային թղթովն բացելով՝ որ աւուրբք բազ-
մօք յառաջ էր հասեալ ասաւ։ Ընդիմք և գալ
գրելիս առ Ցէրութիւնդ, բայց սպասեմք ի
Հոկտեմբեր ԺԶ. և ի ԼԱ գրեալ թղթոցն մե-
րոց պատասխանեսցաւ։ Իսկ առ ծանուցումն
գալոյ ֆէրմանին և ըէրաթին ձերոյ՝ այաքանս
չատ լիցի։ Մնամք զերամբարձ վեհապետու-
թեան ձերին խոնարհ ծառայք և որդիք սըր-
բոյ գահիս միաբանք եպիսկոպոսք, և վար-
դապետք սաորակնքեալք ի թղթիս, և այլք

ամենեքեան որք ընդ մեզ։

Գրեցաւ յամի Տեառն 1800. և ի զեկտեմբերի. . . ի լուսանկար աթոռ սուրբ Էջմիածնին։

ԻԲ. Թուղթ Յովսէփայ առ Դաւիթ Ա. սիսիկոսս։

Յիւսուի Քրիստոսի ծառայ Տէր Յովսէփ կաթուղիկոս և ծայրագոյն պատրիարք ամենայն Հայոց՝ Առաքելականի նկեղեցւոյն Քրիստոսի, նաեւ Լուսաւորչի սրբոյ Աթոռոյն Էջմիածնի։

Ցորմէ բազմաւ սիրով Տեառնասանդ ողջունիւ և անդրանիկ օրհնութեամբ ծաւիր, սիրեցեալդ իմ հարազատ Դաւիթ բազմաշխատ վարդապետ, և լոգնահանճար Արքեպիսկոպոս։ Չի զրեւնքն քոյ՝ զորս ի Պօլսոյ զրեալ էիր, զերկուսեան ի Յունիսի քսան և ութն, և զմինն ի Յուլիսին, սակս վիշատակեցման անուան մերոյ՝ և քոյդ իջանելոյ ի ճանապարհ գամենայն ի միասին ընկալայ ի Սեպտեմբերի 12, ի Աժդարխան, ի գառնալն իմ ի նորոյն Նախիջևանու, առ ուր դիմեալ էի ի Մոսկովու, ըստ մեծահատատ Ջևրմեռանդական խնդրոյ և թախանձանաց հասարակութեան նոցա, առ ի չնորհել զմերս Քահանայապետական օրհնութիւնս։ Ընկալայ և ըստ քոյդ գրեանց զբարձրագոյն Ֆէրմանի Ղատի չէրիֆի *) օրինակն հզօր թագաւորութեանն Օսմանցւոց, ընդ հայերէն թարգմանութեան իւրոյ. և զի որովհետև ամենայն թուղթք ձեր և պատրիարքին Պօլսոյ, և իշխանացն և այլոց բազմաց, ընդ սիւրէքի *) ֆարմանին, ի Սանկտ Պէտերբուրգ առաքեալ էր զեսպանն, ուստի ի Ռուսաց բարբառ անգ թարգմանեալ զգիրս պատրիարքին, քոյ, և ամենայն իշխանացն ևս ղղատտի չէրիֆն. և այնպէս ցուցեալ էին ողորմած կայսերն մեծի, և ապա զամենայն ի միասին կնքեալ և շղալով՝ որ թարգմանութիւն ֆէրմանի ընդ նոսին առաքեալ էին առ մեզ, (զորոյ օրինակ առաքեցի ի Թիֆլիզ), զորս ընկալեալ մեր ուրախացաք, և զիրար բերածն կատարեալապէս գիտացեալ միամտեցաք, և մի ըստ միոջէ զղրութիւնսն քոյ ընթերցեալ Տնօրինողին ամենայնի փառս և գոհութիւն վերառաքեցաք, որ զընդհանուր զԱզգս մեր զտարացբուեալս աստ և անդ՝ այսպէս միաչունչ և մխահոգիս կազմեաց. մինչ զի յաւուր Պայծառակերպութեան Տեառն որպէս ի մեծն Պօլիս, նոյնպէս և ի Մոսկով ի ներկայութեան մերում մեծաւ հանդիսիւ, և ի Նոր Նախիջևան, ի Դրիդորապոլ և յայլ քաղաքս, անուանն մեր ընդհանուր Ազգիս Հայոց գոհանալ պետական կոչման սկիզբն եղեւ, որպէս թէ կանուխ ժամանակաւ խորհրդեամբ ձայնից էին տուեալ միմեանց։

Նոր պատրիարքն մեծին Պօլսոյ երկիցս է գրեալ առ մեզ գիր, և զիւր խոր խոնարհութիւն և զորդիական հնազանդութիւնն այնու ցուցեալ առ մեզ կատարեալ խոստմամբ, ունիլ առ մեզ յարաժամ հաւատարմութիւն և գհրամանակատարութիւն մինչեւ ցմահ իւր. և խնդրեալ էր ի մէնջ չնորհել զկոնդակ վերահաստատութեան պատրիարքութեան իւրոյ. ուստի զրեցաք առ նա և առ ամենայն իշխանսն զպատասխանին թղթոց իւրեանց և առ հասարակութիւնն զկոնդակ անդրանիկ օրհնութեան, ըստ փափագանաց սրտից իւրեանց, որք որպէս հարազատ որդիք կարօտք հայրական գրոյ և օրհնութեան մերոյ՝ ըղձանօք խնդրէին. և դրեցաք ի սմին գհամեզ խրատս և գփրկաւէտ պատուէրս առ ամենայն մարդկեղէն կացութիւնս, ընդ որում եւս չնորհեցաք գվերահաստատութիւն պատրիարքութեանն և խրատս օգտակարս առ լցուցումն պաշտաւորութեան իւրոյ, որ և յուսամ թէ ամենայն ժողովրդականացն դասք զբաւական մխիթարութիւն այնու ունիցին, զի ի բովանդակ յանցեալ կաթուղիկոսացն մերոց հաւատոյ դիտեմք որ նոյն գունակ կոնդակ քաղցր և ախորժ հայրական խրատուց և մխիթարութեան սրտի ընկալեալ չեն. և խոստացեալ իմ զլին և զպատարուն ի սուրբ Աթոռոյդ գրել, յետ ընկալման օծմամբ գչնորհս սուրբ Հոգւոյն ի գլուխ մեր։

Չոր ինչ սակս Դանիէլ վարդապետին տարկաւորն էր՝ հայրական գթով լայելեալ դրելոյ, զլիովինն գրեցի պատրիարքին և իշխանացն. զի և նա իմ է. կամիմ ես զամե-

*) Պատճէն Հրովարտակի.

ներեան ի գոգ խնամոց հայրական սիրոյս ժողովել. և ամենեցուն դհանգստութիւն և զանդորրութիւն պարգեւել, զի զչափ առցեն հեզութեան և քաղցրութեան սրտի իմոյ, և այնու ի բարելաւութիւն անգր լառաջնոց լինիցին ամփոփիչք սրտի՝ ըստ Հոգւոյն կոչման Հօրն իւրեանց, մխիթարութիւն համայն Ազգիս Հայոց և պարծանք Մօրն լուսոյ սուրբ Աթոռոյն Միածնաիջի։

Գոյդ ամենայն թղթոց զպատասխանին զորս գրեալ եմ առ Քեզ՝ լուսաւ թէ ընկալեալ իցես զի պատրիարքն և պարոն Գէորգն (Ազալէկեան) դրեալ էին մեզ ի Օգոստոսի 15, թէ զամենայն յղեալ են առ քեզ յԻղնիմիդ, որովք ի հարկէ գիտացեալ ես զամենայն միտս իմ։ Ես թէպէտ զբարձրագոյն պէրաթի զօրինակն ի դրանէ հզօր թագաւորութեանն Օսմանցւոց ընկալալ չնորհակալութեամբ, բայց տակաւին սպասեմ Օգոստափառ կայսերական մեծութեան բարեհաճական հրովարտակին վասն ծալրագոյն պատրիարքութեան, և ընդհանուր ազգիս Հայոց կաթուղիկոսութեան մերոյ՝ զոր պատրաստեալ են, լուսաւ լաւս քանի օրս՝ կատարելապէս ընկալնուլ ընդ այլ կայսերավայել տրոց և յատկական պարդեաց, և այնպէս փութով եղեալ ի ճանապարհ, ժամանել առ անձկալի Մայրն իմ սուրբ Աթոռդ տիրակառոյց, և ընկալնուլ միահանգոյն ի սէր և ի գթութիւն իմ զամենայն զմիաբանս՝ որք սպասեալ ակնկալեն գալստեան մերոյ։ Գանդի զամենայն զծանրութիւնս իմ առաքեալ եմ ի Մօղոթք և զեղբօր որդին իմ խնդրեալ՝ որ ընդ կարապետ և Աբրահամ վարդապետացն մերոց զամենայն ինչ անցուսցեն ի Կովկաս, և մինչեւ ցմեր ժամանել ի Թիֆլիզ, սոքա լառաջասցին ի սուրբ Գահդ՝ որ մեզ ճանապարհական ինչ խոչ չլինիցին։ Իսկ (վասն) մեր՝ կան պատրաստեալ զօրք կայսերական առ ի անցուցանել ընդ Կովկաս և անշնաս հասուցանել ի սահմանս Վրաց։

Տառապեցուցանեն զհոգի իմ լիշաստակութիւնք լսիչտակութեան և աւերութեան անօրինաց՝ որք ի նորոյ հասուցին աչխարհիդ, վանօրէիցն և սուրբ Աթոռոյդ, որոյ մտածութեան ցաւոյ հիւծիմ և մաչիմ լամենայն կիտոջ, և տքնիմ գննարս բուժեցման գտանել, որոյ վասն՝ որպէս առ Շահն և առ Հաճի Իպրահիմ խանն, զոր ինչ հարկն էր գրեցի, նոյնպէս և առ Տիրապահ դուռնն Օգոստափառ կայսերական Մեծութեան զամենայն ինչ հասուցի. և զօդնութիւն տառապակրութեանս մերոյ խնդրեցի, որ լուսաւ ոչ մնալ սպարդիւն։ Զայս գիր՝ և Տեզապահին իմոյ Մինաս Արքեպիսկոպոսին ծերունազարդի տացես ընթեռնուլ, զի սրտաղիւր լինիցի ի նեզսակրութեան իւրում մինչեւ։ ցգալն մեր։ Գանզի զամենայն զպատչաճաւոր կառավարութիւնս սուրբ Աթոռոյդ և համայն միաբանիցն, նորին խոհեմ խորհրդոցն եմ լանձնեալ. որոյ լինիցիք ամենեքեան՝ օրինաւոր հրամանացն լոզ, և սուրբ Աթոռոյ բարեկարգութեանն պահպանող, և այնու Հօրն ձերոյ սրտի մխիթարութիւն պարգեւող. որպէս և զալամանէ ունիմ կրկին դրել առ ձեզ ի մօտոյ իւղեալս զկարապետ և զԱբրահամ վարդապետս մեր։

Պալծառ իշխան Մելիք Աբրահամն ըստ հաւատարիմ որդիութեան իւրոյ գրեալ է առ մեզ զպատասխան գրութեանց մերոց, որոյ զհահանալապետական զօրհնութիւնն մեր նուիրեմ։ Շնորհք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ քեզ և ընդ համայն միաբանսն սուրբ Աթոռոյդ, Ամէն։

ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Սթէ եկեալ իցես ի սուրբ գահն ցարէ՝ ունիս իշխանութիւն ի գործ մտանել ըստ զօրութեան գրոցն իմոյ որ առ քեզ ի Յունվարի 26։ Սատեմ անզգաստիցն զգաստանալ, ի բաց թողլով զտղալական խազս իւրեանց, որով բաւական խազացին, և մինչեւ մեր գալն զներանալինսն և զարտաքսալինսն ամենայն պահել ի զգաստութեան և ի պարկեշտ կացութեան, որ գտեալ գնոսա զգօնացեալս ի թմրութեանց, առիթ լինիցի ինձ ընդդրկել գնոսա հայրական գթով։ Գիտես որ գալդ յայդր և տեսանելդ մեր զերեսս միմեանց՝ օգուտ սրբոյ Աթոռոյն առաջանալ, ուստի և զու լինիցիս միամիտ՝ որ զլատուկ սէր իմ վայելելոց ես որպէս լատկացեալ բարեկամ և որդի, ուրեմն զու ալտ հեաե կարող ես զամենեսեան ի կարգի պահել ընդ Տեզապահին, որպէս քնիկ սերտ իմ և հարազատ սուրբ գահիդ։

ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Պարոն Բարսեղ եզբօրդ օրհնութիւն տամ, որոյ ձեռագիրն ընկալեալ եմ ի Թիֆլիզու առ որ գրեալ էր, և ծանեալ զամենայն գրութիւն նորին, իսկ մինչ զու հարազատ իմ եղեր՝ այն ամենայն ի անոտիս գրեալ լինի, որպէս գործ խելագարաց, գիտես զպատճառն այնց ամենից, ըստ լառաջագոյն գրութեան իմում։

1801

ԻԳ. *Թուղթ Պատրիարգին Պօլսոյ առ Գ. Նիւօրին:*



Մենատղրմած օղսատ-
վառ կայսերութեա-
նըն ռուստաց հա-
ւատարիմ կուսակալ
և մեր հաւատարիմ
բալեկամ մեծա-
նուն կարլ Ֆէդրիչ
Կ՚օբրին ի մատու-
ցանեմ ողջոյն լի-
ուսաւանդ մեծ յարգութեամբ և միամիտ վասն
ձեր միշտ աղօթարար:

Որչափ են աղգի մերոյ՝ ի բուէ անտի, ղկաթուղիկոսն Էջմիածնի այն է Պատրիարդ Աբրահամեան՝ մեծահանդէս սիւնհոդոսիւք և ընտրութեամբ բոլոր աղգին նատուցանել զարժանաւորն. իսկ այժմ ի վաղճանիլ Յովսէփ Սրբազանին, ինքնագլուխ բռնութեամբ նատաւ յաթոռ սուրբ Էջմիածնի Դաւիթ եպիսկոպոս, որ բաղում չիտթութեանց աղգին նղն պատճառ, մինչև եհաս ձայն ազատակի անալցելու աղգիս, յականջս ողորմած բարեսէր Կ . . . . . , որ և գթացեալ մարդասիրաբար ձեռնկալու եղե աղգի մերում հրամայելով պարոն Թամարով պատուելի դևսպանին, որ ի դրանէ տէրութեան օսմանեցւոց ունայնացուցեալ զպէրաթ և զՖէրմանն Դաւթի, չինել ետ նորոգ զալլ պէրաթ և ֆէրմանն յանուն աղգընտիր և արժանապատիւ Սրբազան տեառն Դանիէլի զոր ահա յամսոյս 15 լղեցաք առ նորին Սրբութիւնն հանդերձ համազգալին բազմակնիք մահէրովք առ միաբանութիւնն սրբոյ Էջմիածնի և առ իսանն երեանու, զի որովք երթիցէ ի սուրբ աթոռն, և նստցի արժանապէս գլուխ Հայաստանեայցս եկեղեցւոյ և օրինաւոր կաթողիկոս աղգի:

Խնդրեմք ուրեմն և ի ձերինդ յարգութենէ զի և դուք համաձայն մեծազօր . . . . Բարձու հրամանին, զհրամանն առաքեսջիք առ երեանու իսանն զի ամենայն իրօք ձեռն քարշեսցէ ի Դաւթէն զոր յառաջն նատուցեալ էր ինքն բռնութեամբ կաշառակուր լինելով ի նմանէ, և ամենայն սիրով և արժանաւոր պատուով յառաջ մատուսցէ յԱթոռ իւր զնաճելին. և զվերականգնեալն ձեռնտուութեամբ նորին բարերութեանն՝ ընտրեալն յամենայն աղանց Հայոց Տէր Դանիէլ Սրբազանն, յաղագս որոյ բոլոր աղգովիմբ ունելոց եմք և ի ձերինդ գերապանցութենէն զմեծ չնորհս. մանաւանդապէս մեք, որ եմք բնիկ միաբան սրբոյ Էջմիածնի և ի ժամանակիս Պատրիարգ Մալրաքաղաքիս . . .

Դր . . . .

10 յունվարի 1801:
ի պատրիարգարանս Հայոց:

ԻԳ. *Թուղթ դարձեալ առ Յովսէփն նորահռչակ Կաթուղիկոսն, ի պատասխանի Թղթոց նորա ընդ կարապետ վարդապետին յղեցելոց. հանդերձ յիշատակութեամբ յառաջ յղեալ Թղթոցն մերոց:*

. . . . . .

Երանեալ Մեծի Հայրապետի Հայոց և բարձրագահ Պատրիարգի լուսանկար սրբոյ գահուս Էջմիածնի՝ գերապանծ գլխոյ և առա-

ասխնամ Հօրդ մերոյ Տեառն... Արբազան Կաթուղիկոսի, չնորհազեղուն սրբոյ աջոյն մատուցանեմք զհամբոյս կարօտալիրս, և որդիական սիրով խնդրեմք զօրհնութիւնդ, ի նպաստ մխիթարութեան տարակաց որդուցս՝ զօրհնապաղ փափաղելոց և սպասելոց պայծառաշուք երեսաց փառազարդեալ Հայրութ՝ անդ։

Որպէս ի Դեկտեմբերի 21 անցելոյ ամին առ. աղուէսեան ժամուն համառօտ դրութեամբ իւիք ազդարարեն վեհափառութեանդ դործակալք եպիսկոպոսք ղալուստ Կարապետ չնորհափայլ վարդապետին հարազատամիտ որդւոյ քոյ և սիրելի եղբօր մերոյ, հանդերձ կենդակօքդ, և խոստանան զապառնի անցան լետ աւուրց դրել, ահա դրեմք և ծանուցանեմք մեծութեանդ։ Ըստ որում հրամայեալ էիր կարապետ վարդապետին դործակալօք դնալ առ. խանն և տանել զթուղթդ, Դաւիթ և Յովհաննէս արքեպիսկոպոսքն դնացեալ ընդ նմա ածին ի հանդէս խանին և խանն հաճութեամբ ընկալեալ դնա և զթուղթըն մեծութեանդ, ըստ սովորութեան հարցաքանեալ էր զՏեառնէդ և ըղուր ուրեք ժամանելոյդ, և ըստ դիպաւորութեան պատաս խանի ընկալեալ. ի վախճանի խոստանալով թէ յորժամ դնալցէք ի Թիֆլիզ ընդ առաջ, յանժամ և ես զպատասխանի թղթոյս դրեցից, արձակեալ էր խաղաղութեամբ։ Նմանապէս և Ռեալպալի խանն էր խօսեցեալ ընդ նոսա։ Որք իբրեւ դարձան ի սուրբ աթոռս զկարապետ հանճարապերճ վարդապետն որպէս փոխանորդ քո մուծեալ ի վեհարանն նոտուցաք ի սենեակ հանդուցեալ Մկրտիչ եպիսկոպոսին, և հաճեցաք ըստ մտացն ի նոյեմբեր 1, և ի 12, դրեալ թղթոդդ, ըստ խորհրդական քանի դործակալացն հոգուեալ լինել ամենայն իրաց։ Եւ յաղագս լիշատակութեան անուանդ որ լուսահոգի Մինաս Արքեպիսկոպոսն դրեալ էր ձեզ զկարդ նախնեացն, և մեծութիւն ձեր պատասխանեալ էիք լեզանակ ինչ, և դի երկարեցաւ և երկարի ժամանակն, և ուրէք նշանակեալ էիր ի տօնի որդւոյն որոտման ատ դատնիլ և զօծումն ընդունիլ։ Թէպէտ և ոչ եղեւ այն. այլ ընտրեալ մեր դնոյն՝ օր հրաշափառ տօնի որդւոյն որոտման որ էր Դեկտեմբերի ԻԹ. լրումն տարւոյ առ Տէր փոխեցման եւ ըիւթո երջանիկ հոգիալոյս Հայրապետին, վայելուչ վարկաք լինել օր սկզբնաւորութեան լիշատակի քաղցրալուր անուան նորակոչ սրբոյ վեհապետիդ մերոյ։ Ուստի առաւել եւս փառաւորեալ զտօնն ի նմին աւուր ի ժամ սուրբ պատարագին լիշատակեցաք զվեհրահաչակ անուն սրբութեան ձերոյ լաստուածակիրտ սուրբ տաճարիս, և յայլ ամենայն նկեղեցիսն երկրիս եւս ազդ արարաք լիշատակել. և ի գիշերին զկրկնապատիկ պաշտամանցս բաժանեալ լանուն հանդուցեալ սրբազանին, և լանուն նորոդ սրբազանիդ, ի ճաշուն եւս զմեծահանդէս սնդան պատրաստեցաք հրաւիրեցեալ ունելով և զերեւելիսն մերազնեից, և ի նոյն հանդիսի եւս բարձրաբարբառ ծանուցմամբ հռչակեցաք զվերնապանծ անուն ձեր ի վերնախնամն տեսչութենէ կացուցեալ ընտրելագոյն Հայրապետ Հայաստանեայց։ Վանորոյ և կրկին դրեմք թէ չնորհաւոր եղիցի ի հոգւոյն սրբոյ, և նա ինքն առաջնորդեալ խաղաղութեամբ հասուսցէ առ սուրբ զահս, և երկար կենօք և բարօրութեամբ ժառանգորդ պահեսցէ։ Այսքան առ այս։ Նկեսցուք ի պատասխանիս այլոց ոմանց բանիցն նամակացդ։ Առաջնումն դրեալ էիր զրանս խաղաղութեան, և զխրատս առ բարին, յորդորման, և այլն։ Որոյ ի փոխադարձ ընկալեալ լետ ամենորիկ զթուղթն հպատակութեան զմերոյ և հրաւիրանաց այնու բաւականութիւն ընծայիւր իմաստուն մտաց վեհիդ, անխարդախ ունիլ զսուրբ սիրտ բարեդութ հօրդ առ որդիս այլ կերպիւ իւիք զկարծիս առեալ. երկրորդաւ թղթով զայլ ինչ էիր աղեալ բացակալ ի պարզ հաւատարմութենէ մերմէ։ Որոյ ստուդութեան չեն պէտք վկայից. զի աչք Տեառն ամենակալի բաց են լամենայն ճանապարհս որդւոց մարդկան ըստ Երեմիայի և մեծանձնութիւն ձեր ի հարկէ տեղեկանալոց է ճըշմարտութեան։ Ուրեմն սրբազան Հայրդ ամենայնիւ անհոդ եղեալ դուն գործեա ի փութով դալդ։ Երրորդաւն թղթով աւետեալ էիք վասն Կայսերական նոմոսին արձակմանն, և ողորմութեանցն պարդեւելոց, և յաղագս ելից սրբութեանդ ի Հաշտարխանու լայկոյս։ որոյ զուարճացեալ գոհացաք զԱստուծոյ որ ի ձեռին ունի զսիրտս թագաւորաց. հաւեցուցանել ըստ իւրոցն բարիոք կամաց, և

հալցնացաք միաբանութեամբ, և հալցեմք, չնորհել նմին օգոստափառ և ողորմածագութնեղ կայսերն և կայսերազարմ որդւոցն, և ամենայն իւրայնոցն զերկարութիւն կենաց, և զառաւել եւս քաղցրութիւն կամաց առ օրհնեալ աղդ մեր և առ սուրբ աթոռս և առ քաջընտիր հոգաբարձուդ սորին, Երկրորդ ի վերալ ալեր թէ ելեալ էք ի ճանապարհ, հրամայեալ էիր հրաւիրել զչրջակալից առաջնորդս. Առ որ գիտացեք Տէրութիւնդ, դի կարուալ և Բալաղիդու եպիսկոպոսքն թերեւս և Աղբակայն որք մերձ են մեղ, յորժամ և Թիֆլիզու ելանիցէք լալս կողմն, լայնժամ և մեք աղդ արասցուք նոցա, որք կանխեսցին քան զժամանել ձեր ալսր, Եւ վասն հեռաւորացն քանզի ձիւնակալ են ճանապարհքն, խորհելոյ պէաք են. զորմէ լիագոյն ունիք իմանալ ի գրութենէ Կարապետ զգոնամիտ վարդապետին, Երրորդ հրամայեալ էիր վասն ընդ առաջ ելողացն, և Դաւիթ արհի եպիսկոպոսին՝ հանդերձ ֆէրմանիւն գալ, իբր դի ի վազդ զկարուսս պիտոլասցի. իմացաք Ահա պատրաստ են սոքա ելանել, բայց նթէ կանխեալք ի Թիֆլիզ յերկարեսցին առ նուազութեամբս մերով, կարծմք թէ եւ մնծութիւնդ ոչ հաճիցի. Սմին իրի վաղապէս դրեալ և այժմ գրեցաք ի Թիֆլիզ երազապէս աղդ առնել աստ զժամանել վհհիդ ի Մօղօք. որով անսարակոյս լիցի և ելն սոցա աստուստ. Իսկ հրամանագիրն պր տուեալ էիք ի ձեռս արդոյ եղբօր մերոյ, Կարապետ բարեմիտ վարդապետին, տեսաք և գայն և ընթերցեալ լուաք. դոր ինչ միանգամ գրեալքն էին, լինել սորա դործակից տեղապահ Մինասայ Արք եպիսկոպոսին, և այնու ընդհանրական դործակալ և կառավարիչ, և ոչ հնազանդելոցն սաստել և այլն. Առ որ ասեմք նթէ լիչողութիւն վհհիմատ Տեառնդ բաւական է մտաբերել դհնազանդ միաբանութիւն սրբոյ գահիս՝ որք չունին ընդվզիլ ընդդէմ օրինաւոր և օխտաբեր հրամանաց կաթուղիկոսին և դործակալաց, և չեն սովոր անկանելոյ ի դատաստանս այլազգեաց, յորմէ և սրբազան առաքեալն հրաժարեցուցանէ. Ապա լոյս ի Տէր, դի սիրով և հեղութեամբ վարեալք չունիցիմք զտեղի անարգ առնելոյ, մանաւանդ և սղութեան միջոցիս ցիսլթ ժամանել Տեառնդ, ոչ ներէ նշմարել այնպիսեաց Ալլ արդ՝ քանզի տեղապահ Մինաս արքեպիսկոպոսն ոչ գոյ ի միջի, և Կարապետ վարդապետ եղբօրն կարի ծանրագոյն էր միայնակ կառավարիչ լինել, մեր ամենեցուն ժողով բարւոք եւս խորհեալ և ընտրեալ լերեսաց մերոց վոխանակ հանգուցեալ Տեղապահ արհւոյն դչորեսին խորհրդական անձինս դԱստուածատուր, դԱւետ, դԲարսեղ, և զՅովհաննէս արք եպիսկոպոսան տուաք ի գործակցութիւն Կարապետ յոգնահանճար վարդապետին, դի զամենայն հրամայեալն որքադան Հայրապետիդ մերոյ՝ հնազանդեսցեն համամիտ խորհրդով և հաւասար հաճութեամբ, ի միասին վճարեսցեն ի պահպանութիւն չինութեան սրբոյ Աթոռոյս և բարեկարգութեան մերոյ և ի դիւրութիւն սրտի մնծախնամ Տեառնդ մերոյ. Զալլ ամենայն ծանուցանելիս սրբոյ Աթոռոյս և զմէնջ, և դերկրէս բազձալի եղբայրս մեր Կարապետ աստուածխմաստ վարդապետն գրեսցէ վհհափառութեանդ. Որոյ խաղաղական կենաց երկարութեանն աղօթաւորք, և զուարթարար գալստեանդ սպասդք խնդարհ ծառայք և հնազանդ որդիք պաշտօնեայք սրբոյ գահիս եպիսկոպոսք, վարդապետք, և արեղայք. հանդերձ ամենայն աստիճանաւորօք, և այլովք ընդ մեզ եղեալովք.

Դրեցաւ յամի Տեառն 1801. և ի լուսավարի... ի լուսանկար դահս ամենայն Հայոց ի սուրբ էջմիածին.

Իե. *Թուղթ Գրիգոր վարդապետի առ Դաւիթ Արքեպիսկոպոս.*

Սրբաղնագունեղ Հայր՝ Դաւիթ Արքեպիսկոպոս և Տէր.

Մինչ ցարդ ղորպիսածան և սիրանիչ թղթով ոչ ունիմ ներկայացեալ առաջի Սրբազնութեան ձերոյ, լայն սակս ըստ որում ղընթացս մեր՝ օր աւուր լառաջ խաղացուցեալ՝ լուսալաք փութով զգալի աչօք տեսութեան և մաքուր Աչոյն համբուրման ձերդ Սրբազնութեան. թէպէտ այժմ եւս պարտ էի ի լուռթիւն, և ոչ աղէտալի լրովք լառաջինն լալս նուազ գտանիցէի գուժգրեր համբաւովք առաջի սրբազան Հօրդ, դի ի միջո-

րէի պատեցին խաւար զմեզ. քանզի արփիասարաս լուսատուն ընդհանուր ազգիս, գլուխն եկեղեցւոյս Հայաստանեայց, սքանչելին տիեզերաց և մի միսկ պարծանքն տոհմիս Յարեթեան, Քրիստոսափոխան Հայրապետն և իմ իսկ լողներախտ ծնօղն ասեմ, զի մինչ հանգերձեալ էաք ելանել աստի, աւուրր միով յառաջ հիւանդացեալ սրբազան վեհապետն զկնի չաքաթու միոյ յամսեան 9. ի գիշերային ինն ժամուն կիւրոյ, աւանդեաց զմաքուր հոգին առ Աստուած, թողլով վասն մեր սուգ անտանելի ցաւ անբուժելի. ի ժամ մահուան իր, եւ կտակաւ աւանդեաց ինձ որդեկիս իւրոյ՝ զՀայրապետական Աթոռն լաջորդել կամ Սրբազնութեան ձեր և կամ Պօլսոյ Պատրիարք Յօհաննէս Արքեպիսկոպոսն. իսկ որովհետեւ նա հետի ի սուրբ Աթոռոյդ, ուրեմն մնալ Սրբութեան ձերում կտակակերպ աստիճան Հոգելոյս վեհապետիս, որ յաղագս յաջորդեցման ձերոյ Սրբութեան ունիմ գրով յայտնեալ նորին կայսերական մեծութեանն, Գրեցի և մեր Կարապետ խոհեմատատ վարդապետին Յանալ և հետեւիլ զհրաման լուսահոգւի սեառս ի լանգ հասուցանել, իսկ եթէ նա յայլ կողմն ունիցի թեքիլ, յայնժամ և սուրբ Հայրդ իմ մի խնայեաց ջիք գնել ի գործ զՅան ի ժամ հարկաւորութեան, Ւսկ յաղագս ֆէրմանին մի ինչ հոգասջիք, զի որպէս ժողովրդոց յարգանօք հաւանութիւնս, նոյնպէս Յանացայց տալ բերել ղֆէրմանն ի լերկուց կայսերացն եւս։

Ահա խանին եւս գրեցի ղկտակակերպ աստիճան լուսահոգւի վեհապետիս, և թէ բոլոր ընծայքն որ վասն նորա՝ ունիմ տանել ընդ իս. լուսով եմ որ ոչ անտես առնիցէ զինդիր մեր. նոյնպէս և մեր Կարապետ վարդապետն զպատուէր տեառն իւրոյ հարազատօրէն Յանալն և ի լանկ հասուցանելն ոչ երկմտիմ. ես լոյն սակս փութացայ տալ գիտել Սրբութեան ձեր՝ լստ որում եղեալ աստ եպիսկոպոսացն միտք՝ առ յայլ հակի, այլ նոցա անտի չեն թողլոց սակաւ ժամանակ ինչ, ուրեմն Յանալեմ սուրբ Հայրդ իմ օր մի յառաջ ընկալնուլ զքահանայապետական Աթոռն. Սուտիւ գիտեմ զոր ինչ խորհուրդ եւ կարգաւորութիւն հոգելոյս հայրապետիս. ձեօք լինիցի կորուստն, և զարտասուս աչացս՝ դուք միայն ունիք սրբել և սփոփել հայրական ձեր գթութեամբ, զի լուսահոգւոյ եղբօրորդիքն զովութեամբ պատմեն զձէնջ, և լուսաղբեն ձեօք մխիթարիլ. բոլոր կառավարութիւն և զգուիցն իւր զիշխանութիւն եղ ինձ որդւոյս իւրոյ. ի զալն Աստուծով թէ զընծայս խանի և թէ սուրբ Աթոռոյ պատկանեալս ունիմ տալ բոլորովին. Նոյնպէս երկրի Ռուսաց և քաղաքիս բոլոր հոգացողութիւնն իբրեւ կտակաւ յանձնեաց ինձ. Զկնի հոգելոյս ծնողիս՝ սրբազնութիւն ձեր միայն դիտեմ Հայր գորովագութ և մխիթար ի տրտմութեանս յայսմիկ. Խանի թուղթն ձեր պահարանին եղի ընդ հաւատարմաւ առաքել։

1801. մարտի 16 ի Թիֆլիզ։

Խոնարհ Գրիգոր սեւազգեաց և սպասատ Աբեզայ։

Իջ. *Օրինակ թղթոյ ի յերից եպիսկոպոսաց միաբանից սրբոյ Էջմիածնի զրեցեալ առ սրբազան Ներսէս Արքեպիսկոպոսն եւ Առաջնորդն Ռուսաստանու հայոց ազգի, որում եւ հրաւիրեն խնդրանօք հաճել ընդ առաջնորդութիւն Ռուսաստանի։*

Յարգոյամեծար և շնորհազարդ հայրապատիւ սիրելի և հաւատարիմ եղբօրդ մերոյ քաղաքալուծ՝ Տեառն Ներսէս Աստուածիմաստ և սրբակրօն վարդապետի՝ և Արհիամեծար Արք եպիսկոպոսի, հոգեիղձ սիրով և բազում կարօտիւ, զկուսածնի միաբար սուրբ ողջոյնն մատուցանեմք յարգանօք, խնդալ ի Քրիստոս յարաժամ ցնծութեամբ։

Ի հարկէ մինչև ցայժմ լուեալ իցես Յովսէփ կաթուղիկոսի ի տեղւոյդ գալն մինչև ի Թիֆլիզ, և անդ վաղճանիլն, և աստանօր կրկին երկրորդելն աւելորդ էր, բայց նորին սպասաւոր Գրիգոր վարդապետն դինքնէնէ ժառանգ մեռելոյն քարոզէ որպէս թէ՝ գիշխանութիւն և զամենայն կայս նորին պարտի ինքեան յանձնիլ. վասնորոյ Թիֆլիզոյ նստօղ եպարալի ձեռօքն Յածուկ Յան գնէ զի եթէ հնար իցէ, տեղւոյդ առաջնորդութեան և նուիրակութեան աղագաւ աշխատի

և կամի լափշտակել և սեփական գրաւել վասըն իւր. Ուստի՝ հաւանութեամբ սեղուոյս եղեալ քանի անձանց եպիսկոպոսաց գիտութեամբն, զրեմք հայրապատիւ բաղձալի եղբօրդ մերոյ, զի ահա այս է վաստակաւորութեան և քաջութեանդ ժամանակն, զի եթէ բան գործ ունիս տեսցես և մի լապաղիցես, զի մի կարասցէ թշնամին ամբարտաւանութեամբ լառնել ի վերայ սրբոյ Աթոռոյս և զչար ախտն իւր լուսաջ տանել. և ուր ուրեք լինիս չուտով զալցես Մօզդօկու կուսակալի մօտն, և կամ այլոց ձեռօքն բանդ չինել տացես՝ և հաստատուն ամրացուսցես զիշխանութիւնդ չլինի թէ՝ թոյլ բռնես բանս՝ որ այլք չուտով լաւ աջացուսցեն զկամս ի բեանց. քանզի ոչ քեզ է օպուտ ոչ սրբոյ Աթուոյս և ոչ միաբանութեանս մերոյ և այնպէս բան արտացես որ նորա ձեռքն և ոտքն բոլորովին ի տեղւոյդ կտրիցի, և այլ ես չկարողացայ բանի ինչ խառնիլ և կամ մեքձիլ լալդր. ա մէնայն ջանիւ ջանասցես որ նորին կամք և դիտաւորութիւնն ունայնացուսցես, որ այլ ես մի կարասցէ մուտ գտնել դէպ ի լալդ երկիր. Այլ Գրիգոր վարդապետի բնութեանն լաւապէս տեղեակ ես թէ որպէս նենգաւոր խորամանկ և անհաւատարիմ անձն է առ սուրբ Աթոռս, լայտնի է սիրելի եղբօրդ մերոյ. զի եթէ դա լառաջ տարձէ զչար ախտն իւր, թէ՝ որքան խեռութեամբ և նենգութեամբ վարելոց է առ սուրբ Աթոռս և առ Աթոռալինսն, քաջ դիտակ եւս

Ուրեմն կրկին զրեմք և լորդորեմք զի յամենայն զօրութեան ջան դիցես և թերես հանիցես զամենայն ջան և դնեղութիւր հնարըս նորին. և եթէ կարելի իցէ սեղւոյդ կուսակալէն մէկ թուղթ առեալ առաքեսցես ի վերայ Թիֆլիզու նստող ենարալին որ մեր հրաւիրակք վարդապետացն դիւրին լիցի ելանել գալ ի սուրբ Աթոռս. քանզի Գրիգոր վարդապետն այն՝ բանիւ ենարալի արդելեալ է անդ, որ մինչև իւր ախտն լառաջ տանիցէ, վասնորոյ մէկ այնպիսի սաստիկ կերպիւ թուղթ լինի ի վերայ նորա թէ՝ ինչ բան ունիս ընդ այդ վարդապետացդ՝ որ մէկ չնչին մարդոյ լսելով, դուցա ի զուր տեղն արդելեալ ես այդր, այսուհետեւ մի ևս տրտմեցուսցես բանիւ. այլ պատուով ընդունիցիս և ուղեորեսցես ի բնակութիւնս իւրեանց. և որպէս դոցա կամք և դիտաւորութիւն է, այնպէս արասցես. Վասնորոյ միաբանութեամբ և համակամութեամբ քանի անձանց եպիսկոպոսաց գիտութեամբն, զայս թուղթ զրեալ և կնքեալ առաքեցաք առ սիրելի եղբայրդ մեր զի սրտացաւօրէն հող տարցես վասն այս բանիս, որոյ ազազաւ չնորհակալ լինեցուցեալ եմք զքէն մեծապէս. Ապա՛ն բաւական համարելով խոհականութեան քոմ, ողջ լեր ի աէր բերկրութեամբ ի ցնծութիւն տրամազգեաց եղբարց քոց. Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս, և ի մարտի 28 ի լուսանկար Աթոռ սուրբ էջմիածնին.

ԿՆԻՔՔ

ԻԷ. *Ի Հաշտարխանու հոգեւոր կանցիստօրէն հայոց հրաման առ Ղրիմու հայոց հոգեւոր կառավարութիւնն*

Սրբազան եփրեմ Արքեպիսկոպոսն և Առաջնորդն Ռուսաստանու՝ հալոցս ազգի հրաման է դրեալ առ կանցլստօրն, ընդ նովաւ և լղեալ է վեցական գիր՝ զրեցեալք ի չորեսին միաբանից և երեսփի իշխանաւոր եպիսկոպոսացն սրբոյ էջմիածնի որք կանն անդէն ի Թիֆլիզ քաղաքջ.

Ուստի և հրամայեալ է օրինակել գնոսա ի կանցլստօրէն և լղել առ ձեզ, որ դուք զղօրութիւնն նոցին մի ըստ միոջէ ծանուցանիցէք լալդր եղեալ առհասարակացն բոլորից.

Որպէս և կանցլստօրն ահա առաքեաց գնոսա առ ձեզ կատարել զնշանան նորին բարձր սրբազնութեան.

Կարէք և վերնագրովքն լանուանէ ճանաչել գնոսա և լատկապէս գիտել՝ թէ որն ի նոցանէ զինչ պատմէ, և կամ լորոց նիւթոլ վերալ խօսի, և մանաւանդ՝ նուէրալիւքն ես կարելի է փութով հասու լինիլ, որք ընդ սմա կցեալ և կապեալք կան. 1801, և ի մայիսի 15.

(Ի լընկալնուլն հոգևոր կառավարութեանդ զայս հրամանագիր, հարկ է օրինակեալ տարածանել առ ամենայն քաղաքն Ղրիմու, զայս ամենայն գրութիւնք եպիսկոպոսացն զորս ի ներ թղթոջն պարունակեալ կայ՝ թարց զանցաւութեան հրամանի Սբբոբազան Առաջնորդին մերոյ.

Պատուոր տէր Մարտիրոս հայոց քահանայն Ամենաղալիր Մինաս սարկաւագ Յարութիւնեան)

Օրինակ առաջին Թղթոյ. գրեցեալ ի չորեքին եպիսկոպոսաց ա. արքազան Սիրեմ Արքեպիսկոպոսն և Առաջնորդն ուսաստանու հայոց ազգի, յաղագս վաղճանի Յովհէփայ Կաթուղիկոսի, անպատեհ չար արարմանցն Գրիգոր վարդապետի և անցիցն։

Ամենապատուելի և Գերամեծար Արդոյ եղբօր մերում հայրապատուի՝ Տեառն Տեառն Սիրեմի արքազնազունեզ Արքեպիսկոպոսի և ծայրագոյն նուիրակի և հոգևոր այցելուի կողմանցդ հիւսիսոյ հայկազանց՝ նուիրեմք մեծաւ սիրով և խոնարհութեամբ գողջոյն յարգանաց՝ համբուրիւ արքոյ Աջոյդ։

Ի գալն մեր ի Թիֆլիզ առ կենդանութեամբ Տեառն Յովհէփայ կոչեցեալ կաթուղիկոսին գրեցաք արքութեանդ զԹուղթ ինչ, որում գեւ պատասխանի ոչ առաք. Յետոյ Թ Թուղթք քո գրեցեալք առ Թագդէոս և Յովհաննէս վարդապետաք՝ հանդերձ այլ Թզթովք հասին առ իս և ես տեսեալ և լռեցի ի սուրբ Աթոռն առ Յովհաննէս արքակրօն Արքեպիսկոպոսն. այսքան առ այս. և Բարսեղ վարդապետինս սիրածարբեալն ի քէն Թուղթ չնորհաց եղբայրութեան ընկալալ և գոհունակ եմ. այլ Յովհէփ անուանեալն կաթուղիկոս՝ զոր բաղումս ասացաք գնալ յԱթոռն, և նա ի քանի աւուրս պատազեալ աստ ի անտուի զբաղմունս. լեալ կապեալ գրեւինն և չարիսեալ և քիքաճի կալեալ և պատրաստեալ զպաշարս ճանապարհի. մեք ևս զմերն պատրաստեալ, տակաւին ինքն չրջագալէր ի տունս բարեկամ կոչեցելոց, հետևաբար գնացեալ ի բաղանիսն և ցրուացեալ հիւանդացաւ հիւանդութիւն մեծ. և ի մարտի ինն լառաւօտուն խոտովանեալ և հաղորդեալ և յետոյ բանիւ կտակ առնդեալ ինձ Սիմէոն եպիսկոպոսիս (զոր յետոյ ասացցուք) յերեկոյին երկրորդ ժամուն վճարեաց զկեանսն, որում տէր ողորմեացի և քեզ ողջ պահեսցէ։ Ի նմին ժամու կոչեցին զմեզ ի ընակութենէ մերմէ՝ որ էր կաթուղիկէ եկեղեցին գնացեալ տեսաք զդին, և զի ենարայն ի Դուշէթ էր, Գրիգոր ընտիր պաշտօնեայն կալաւ Նորա՝ և ոչ իւրն, զինւորս բերեալ կացուց ի դրանն և ի ներքս և ի ծակս. և յառաւօտուն մինչ մեք կարգաւորաբար զլուացմանն կարդ կատարեցաք, նա Թագնաբար ապապարեաց և եկն ենարայն. և երկու օր յամեցեալ զդին. խօսեցաք վասն կալիցն կնքելոյ, սկսաւ՝ չողոքորդութեամբ ինքն և Սօլոմոնն մարմնագդեաց ասել թէ, մի՛թէ զտուն մեր կնքելոց էք, և զալ ապաիսիս, և աղաչէին փառաւորս Թեամբ կատարել զկարդըն, և զդին տանել յԱթոռն ըստ կտակին։ մեք յայնժամ Թուղթ գրեցաք յԱթոռն՝ ծանուցանել զմահ կաթուղիկոսացուին. եղիբղիր տուցա վասն դիւղն, և մեր դժուարաւ յանձն առնելոյն որ վտանգ մեծ է։ Ապա ըսկսան ասել թէ՝ մեք ոչ զամք և ոչ զկալան տամք, այլ մեկայն զդին տարէք. ասացաք թէ՝ եթէ զկալան ևս տալք տանիլ, այսօր մեք ոչ կարեմք տանիլ. զի անուն գորա ուր էր հասեալ. այլ կնքելոց և Թողլոց եմք, մինչև տանն տէր յատկացի. ապա ուր միացց զկոկ մարմինն չալակել տանիլ ի վտանգ սրբոյ Աթոռոյն։ Յետոյ խորհեցան ի Մուղնուոյ եկեղեցւոջն պահարանել. և այնու պատմանաւ հանդիսիս օծաք և եղաք զուխիով ի խորափիսին, զոր խորեալ էին ի տեղւոջ նոր չինեալ և կրկին քակեալ կաթուղիկոսարանին։ Եւ իբրև փառաւորութեամբ պահարանեալ եսուն սկսան զփուշս իւրեանց ցուցանել. Կրիդորն՝ ըէ ես ժառանգ եմ, և Սօլոմոնն թէ ես ընտանին եմ, և թէ՝ կաթուղիկոսն կտակեալ է վասն Պօլոյ Յովհաննիսին կաթուղիկոս լինիլ, և թէ իմ քէֆին կաթուղիկոս լինի, որ Յովէփայ կտակն կատարեցէ, և զիս Առաջնորդ և նուիրակ արասցէ, գնալոց եմ յԱթոռն, ապա թէ ոչ, ոչ երթալց և այլն։ Եւ զայսոսիկ զօղանջէ վասն յարակից առնելոյ գմնծամեծսն մնծամեծ որբօք ի քսակէն Աթոռոյն և Ազգին։

Վերջապէս՝ մեք յամենայնէ ձեռն քարշեալ կամեցաք գնդնալ յԱթոռն դատարկ. զայն ևս արդել, զի մի ընդդէմ իւրն ոք կաթուղիկոս կարգիցին. վտանորոյ կապեաց զենարայն, և նա զմեզ արդելեաց իւրով բերանով ասացեալ թէ՝ ես դրեալ եմ՝ գնօրինին վասն ձեր, մինչև պատասխանի տառնուցում, ոչ կարեմ Թողուլ զձեզ. և յայլում աւուր ևս թէ, մինչ ի զատիկն համբերեցէք, ձեր գրոյ պատասխանին կառնում ի գնօրի-

նէն, և զձեզ ուրախութեամբ ճանապարհեմ։

Եւ թէպէտ պարտ էր մեզ յայնժամ փութանակի թուղթ դրել առ սրբութիւնդ և առ լուսապայծառ. կողմնակալ Քնօրինն. սակայն յաւուրս սուգ չարաչար ղբազեալ ի չարութիւնս լիշեալ որգւոցն կորուսեան և մարդոցն անօրէնութեան. ապա տարակուսեցաք յաղաղս գիր չունելոյն մեր ի սրբոյ Աթոռոյն՝ ոչ ի հասարակութենէն, և ոչ ի գործակալացն. ապա յամոլս Գ. թուղթս ընկալաք ի հասարակացն՝ քան կնքով առ. ժողովուրդն, և ի գործակալացն է կնքով առ. մեզ և առ իշխանն, և առ Գրիգոր լուիս և առ Սալոմն և ազգարան. երկարն թողցուք գրեալ էին զմխիթարութիւնն վանս մանու կաթուղիկոս կոչեցելոյն, և թէ ժողով արարեալ ընարեցաք զնախընտրեալն մեր Դանիէլ. Արք և դիւկոպոսն, և մանաւանդ գրեալ միաբանիւք և իշխանօք, և խանն ևս գրեալ, սուրհանդակաւ Բ. վարդապետօք լղեցաք ի Փօխատու բերել. և թէ զեպիսկոպոսն մեր, հանդերձ սպասաւորօքն վաղճանելոյն ուղեւրեսջիք ի դալ։

Ահա արտաքին գրեցեալք են, բայց թէ ինչ անցք են անցեալ անդ և ինչ կաշառք են խոստացեալ, մեք լուեալ եմք դու մի լսեր։ Վերջապէս, Յովհաննէս երանաշնորհ եպիսկոպոսն և ընկերք իւր, հանդերձ Ասաուածասէր հարիւրապետովն, այսպէս են կացուցեալ զբանն, որպէս ցուցաք։ Իսկ այս օդալին՝ լսելով զանուն Դանիէլին, բորոտի, լառաջ զմարդ էր լուզարկեալ թղթովք, այն չարիք լայնմանէ են լառաջացեալ, և այժմ ես երանացի տաճիկք աստ եկեալ ի խանէն, մնծամեծ տուրս տուեալ նոցա, և խանին ևս մեծամեծ խոստմունք արարեալ ի Դուիթ Պարնի որդւոյն դիր առեալ, զաջմամբուք թագն լղեալ է որ ինչ կեպլիս և իցէ, Դանիէլն արգելցեն և գալ ոմն կացուցցեն, և նա ևս սմա գրէ հալցէ օդնել, և սորա միտք լայնմ է, զի հնարիւք իւիք մտեալ ի տուն՝ զկուտն լափչտակեացէ, և դարձեալ լետս նոր Նիկոլ գոլացի գլխով մերումս Որքան ցաւք գոն զերն խօսեացուք, Աստուած ինքն հոգացէ վասն սրբոյ Աթոռոյն որ հեթանոսաց և նենգաւորաց ժառանգեաւ Արդ՝ մեք այժմ զայս ինչ գրեմք մեծարգութեանդ. զի որպէս և ի սրբոյ Աթոռոյն առ մեզ թուղթն է, ջանացեալ և դուն գործեացես լամենայնի գրաւել զհովուապետութիւնն տեղւոյդ, և արգելս տացես ննջեցեալ և դաւաճան որդւոյս ալսորիկ կորստականի. Քանզի ի փոխիլ կալսերն և ի լսելն սորա զարգելումն տէր Յովակիմին և պարգեւացն, և զՔնօրինի առ քեզ խնամոն, ի կենդանութեան ի մեռելութիւն վրխեցեալ է. բայց միայն չարժի հոգւով ենարալին և ճարահատ եղեալ գրէ լնրեան և լԱթոռն առ հրամանին թէ ալքան և այնքան տուէք լերուք կաթուղիկոս, զիմ իղձ լրացի ապաքէն և գուն իբրեւ կիւրեղ, ընդդէմ Նեստորի ջանացեալ խափանել զամենայն եղծական հնարս սորա։

Քանզի՝ զոր գրեալ է թէ՝ Յովհէփ կաթուղիկոսն ի ձեռն խոստովանահօրն զիս իւր պատկեր է կացուցեալ և ժառանգ կարգեալ, և ի կոզմունաղ թղթովք լցեալ է, սուտ են ամենայն. ոչ խոստովանահայրն է զայնպիսի բարբառ լուեալ ի բերանոյ նորա և ոչ միւս երեք եպիսկոպոսունս։ Եւ գարձեալ կամիմք մեք գրել Թուղթս առ լուսափայլ Քնօրինն՝ լալտ առնելով զպատահմանց մերոց և զլրութեանց ամենասպարիս ալսորիկ, և ոչ նմա միայն, այլ եւ Հաշտարիսանու իշխանացն Աղալ Մրկրտումին, Աղալ Յովհաննիսին, Աղալ Մինասին և Աղալ Յովագիմին և այլոց, նաեւ զղլարցւոցն եթէ զինչ չարիս գործեաց ևս ընդդէմ սրբոյ Աթոռոյն եւ հայրապետութեանն. Թող ի հանիր վանսնէն և փչացուցանելն զգոյն նորա, եւ ասելն այլազգեաց թէ՝ իմ Աղալն զանձս է բերեալ, և զերեւանցի այլազգիսն լղելն ի Մուշնուղ եւ կեզեցին, և ցուցանելն զգեստս եւ զանակէան, եւ զխաչերն եւ զտլլս եւ զԱթոռն եւ զխաչիչսն. կամելով ասել թէ՝ ես ըստ ալսոցիկ զօրաւոր եմ, եւ ի կալսերէն եւս վասն խանին պարգեւս բերել տամ, զուք զիմ կամեցեալն նստուցէք չուտով, որ իմ մաքլասն [3]) կատարի, ես զառնամ ի կալսերական զրանն գործս ունիմ, վազալով եմ եկեալ սիւրի զառնամ։ Ահա Թազան՝ վասն ալսր աշխատի անդ, եւ թէ խղճալի միաբանքն ինչ են քաշելոց, Աստուած նոցա օգնական լիցի, մանաւանդ Յովհաննէս եւ Աստուածատուր վարդապետացն։

Վերջապէս համառօտիւ խնդրեմք, զի վասն մեր տարապարտ արգելմանն լենարալէն լալտնեացես Քնօրինին դրել սմա թէ՝

դու որով օրինօք իցես արդելեալ զգուսա, եւ առ լինչ զկնա պահես, դու կալսերական զօրապետ ես, թէ մէկ ախտաւոր արքիմանդրիտի պաշտօնատար, որ զինչ եւ ի գիշերի առիցէ քեզ, ի ցերեկին կատարեցես եւ զլինս Աբդ եթէ կամիս, դարս հոգս արա վասն մեր, եւ թէ ոչ, կամք քոյ է. եւ մեք եւս որպէս խոստացաք, զրեցոց եմք, եթէ այլ արգելք չպատահիցին եւ տէր յաջողեսցէ. Հանգուցեալ Ցովսէփ կաթուղիկոսն մինչ եկն ատ, Ռնձդ թուման է խարճեալ, որ կորեաւ ամենեւին անօգուտ. փոքրաւորն Նորին Գրիգոր վարդապետն մինչեւ ցայսօր թուի թէ զխարճն նմա հատցէ, եւ թէ մէկ ամիս այս սակաւուվս նստցի ատ, պարտք եւս կառնու. հալոց աղգի աչքն լոյս. որ տուրք են տուեալ մոլեգնեալ եւ խենեչացեալ սեւագլխացն ալապխանաց՝ ի պահպանութիւն չինութեան սրբոյ Աթոռոյն իւրեանց. Ապա ալապխանաց չարութեանց արմատն՝ զիարգ չիցէ արժանի ծալրագոյն նուիրակ եւ առաջնորդ լինելոյ Ռուսաստանի. եւ զայս ինչ ներքոյ գրելին Սիմէօն Արք եպիսկոպոս խոստովանահօրն, ահա ցիմ. Սիմէօն եպիսկոպոս ձեռագիր կտակն Ցովսէփ անուանեալ կաթուղիկոսն բանիւ ասացեալն, և կնքեալ իմ կնքովս, ի Թղթիս եղեալ լղեցաք. ճշմարիտ է առաջի Աստուծոյ և մարդկան. զի նորա բնութեան աստութիւնն այնքան է զոր լուեալ եմ ուրիշ բան ոչինչ են. ոչինչ չէ ասացեալ ինձ. Ալ ով ոք գլեալ և ասացեալ է քան զայդ աւելի, սուտ է և խաբէլութիւն սատանայի. և ասացօղն լի նենգութեամբ և խորամանկութեամբ, թշնամի արգարութեան լորոց փրկեսցէ Քրիստոս զամենայն հաւատացեալս իւր. Այսօր ի նեղ մլջոցիս այսքան, լեռոյ ի միւս և ի լեռագոյն չեմք պակասեցուցանելոց զգրուածս մեր, միայն թէ քաղցրութիւն սրտի քո պարզեսցի առ. մեզ և բանք մեր հաւատարիմ լիցին առ քեզ. Ողջ լեր Քրիստոսիս Ցէլամբ՝ յաջողեալ ի բարի առաջադրութիւնդ, ի հրճուանս մեզ ապաքախտից, Միաբանից սրբոյ Էջմիածնի, Սիմէօն՝ Անգրէաս Բարեղ և Թադէոս ասնարժան Արքեպիսկոպոսաց՝ ատորակնքողաց ի Թղթիս.

1801. յապրելի 6. ի Թիֆլիզ.

ԿՆԻՔՔ

ԻԸ. *Օրինակ երկրորդ Թղթոյ չորսին սպիսկոպոսացն, զրնցեալ առ սրբազան Նփքսէ Արք սպիսկոպոսն եւ Առաջնորդն որուաստանու՝ հայոց ազգի, յաղագս անպատեհ արարմանցն Գրիգոր վարդապետի եւ զոյսն հանգուցեալ կաթուղիկոսին ի նանիր վատնելն եւ պատճառ լինելն արգելման նոցա:*

Երանաշնորհ և երջանկակրօն հոգեբեցեալ հայրապետիս և Ամենալարգոյ եղբօր մերում Տեառն Տեառն Եփրեմի Աստուածազգեաց Սրբազնագունեղ Արքեպիսկոպոսի՝ ողջոյն մեծարանաց և համբոյր չնորհաբաչխ սրբոյ Աջոյն.

Ծանիցէ վեհանձնութիւն սրբազնաստուրբ հայրութիւնդ և եղբայրութիւնդ, պարտաւորք զոլով մեր մինչև ցերեկ զթուղթս չգրելոյն մեր առ քեզ, և հանգերձ հանգուցեալ Ցովհէփ կաթուղիկոսի կտակի բանիւքն զոր խոստովանահայրն ձեռագրեալ է իւրով ձեռամբ և կնքով լղեցաք. և թէ մեղադրես զմեղ վասն ունագան թուղթ դրելոյն մեր առ. քոյդ որթութիւն, ծանիր վներքոյ գրեալ բանն, և հասու լիր ցաւոցս մերոց՝ թէ ի մարտի ինչէն որ Ցովսէփ Արքեպիսկոպոսն վախճանեալ է, մեք յայտ. ամբարիշտ չիք Գրիգորի ձեռանէ ինչ մեք կրեալ եմք. Վասընդի բաւական կայք լիր ձեռին, ռուսերէն լեզու ինքն գիտէ, և զամենայն չարիս՝ զոր նախահայրն սերմանեալ է յաշխարհի, ինքն վարժեցեալ է. մեք պանդուխտք և սրբոյ Աթոռոյ սաստիւն զարդացեալք, ի Թիֆլիզ քաղաքիս ղինչ կարէաք առնել. ոչ տէր կայ և ոչ ձեռնտու և ոչ օգնիչ, այլ ամենայն ունկն լսէ արծաթոյ, վասն որոյ սանձ չեցաք զմեզ յամենայնէ. ըստ որում և ի սրբոյ գահոյն ևս գիր չունէաք. զի թէ մեք մեղէն բան ինչ գրէաք առ լարգութիւնդ, և գիւն ըմբռնիւր ի նենգաւորաց. երկնչէաք թէ աստ և թէ յայդմ. երկրի վտանգս կրէաք. Տես ահա սրբութիւնդ զոյ ի մարտի 19 գրեալ թուղթն առ Թադէոս վարդապետս և Ցովհաննէս եպիսկոպոսն ի պահարանի Փիլոթեանց պարոն Աղալին, Արղութեանց (արաբեղն ռուսական չօրերով և բարբարով ռուս ձևացեալ առնու ի կուրիէլէն [1]) թէ ես կրճա-

ուցանեմ փիլոսեանց Աղային, և նա տանի տայ Սօլոմոնին, և լսիրշ Դրիգոր վարդապետ չիքն բանալ զնորայն և զիմն և Դ աւուրս բանն ինոր լռեալ։ Ապա կուրիէլն հարց և ասէ. ո՞րճ առնէ գտանէ զպարոն Աղային և ասէ. քեղ թուղթ եմ բերեալ՝ նա ասէ ինձ թուղթ չէ հասեալ. լետոյ զգաստ կուրիէլն . գտանէ զԲարսեղն և տանի առ Սօլոմոնն թէ իմ բերած թուղթս որ ի վերայ փիլոսեանց Աղային էր ընդէր դուք առիք, տուք ես Թարց նորա պատասխանուն ոչ կարեմ դնալ. սպա լողոք զնդիրեալ աղաչեն, և միջոց խնդրեն զի կարկատեցեն զպահարանն. լետոյ զմեր թուղթն քոյդ կնքով, բայց ի կողմանէ պատառեալ և հատեչեալ որպէս յայնի է, _և պարոն Աղալի պահարանն օտար կնքով կընքեալ, այնպէս էին տուեալ պարոն Աղալին և նա երեր առ մեզ. ի մէջ քանի քահանայից քնդխուդալից տեսաք որ մեր պահարանի միւս երեսին վերայ մի կարդ գիր կայր այնպէս դրեալ էին որ նշմարանքն միայն երեէին, և մի տեղ ես ծակեալ չիմացաք թէ հալերն էր թէ վրացերէն. սորա պատմութիւնն մի հրաշալի խոն է որ Աստուած այս նոր Նիկոդիմոս ամբարտաւանութիւնն յատկապէս բարկանալով դայս խայտառակութիւնն երեր ի դլուխս սոցա իւրեանց ձեռօքն.

Ապա երէ յայդ կողմէն եկեալ Թղթոյն գլուխն դայս փորձութիւն բերեն մեր դրելոյ գլուխն լինչ բերեն. դայս լսելով Ամառասոցն նոքա ևս դիւրեանց գլխոն ի Ղըրխպուլաղէ դարձուցեալ էին և լետ աւուրցն էին լդես. ուրեմն առ այս մեզ անմեղադիր լեր հալր մեր պատուական.

Շնորհակալ եմք վասն ծանուցեալ որ. պիտութեանցդ և Աստուածահաճոյ հանդիպմանցդ Քրիստոսազօր և լուսապայծառ կողմնակալ Քնօրինին, զինչ լինչ՝ հոդացողութիւնս առնելոյդ ընդ նմա լաղագս զերծ գալոյն աւանդանց մերոց եկեղեցականացս յալոց բռնութեանց. տրտմեցաք ընդ վճար կենաց մեծի. Կալաերն Պաւլ Պետրովիչին, և ուրախացաք լոյժ ընդ լսոյդ որ արժանացաժառանդ դահակալի նորա Ամենաողորմած օգոստափառ մեծի կայսերն Աղէքսանդր Պաւլովիչին զոր տէր Աստուած չնորհաւոր արասցէ և զինքն ընդ երկայն աւուրս պահեսցէ։

Համառօտ բան լինչ լինչ ի հատուածոյ Թղթոյն լմացեալ դայս ասեմք. Էջմիածնի բոլոր միաբանից և մեր հաճելին դու լինքդ զերամեծար հալրդ և եղբալրդ ես լինիլ Առաջնորդ և նուիրակ ծալրագոյն և ուղղահաւատ և արքակրօն վերատեսուչ ոստանի հալոցդ աղգի ե ոչ Դրիգորն, լիրաւի եթէ այսօր առ մեզ լինէիր Աստուած դիտէ զի ամենալօժար սիրով ի կաթուղիկոսութիւն իսկ օծանէաք. զոր ե ընդունի*) համարոյն կոստանդնուպօլսոյ ընտրեալ եմք ընդ տեառն Դանիէլի պատրիարգին. բայց հետի զտունեալ մանաւանդ և կողմանցս իրք լոյժ վանդատոր դոլով, բարուք համարիմք և խնդրեմք զի հաճեացիս դու պատուականդ լինիլ այլ լուսաւորչակրօն օրհնեալ ժողովրդոցն տեսուչ ե նուիրակ, և մինչ Դանիէլ Արհին բարեաւ դալ, կամ թէ սլլոյ խոհականին սաջողեսցի լինել կաթուղիկոս հալոց. այս բան մեր բան է և մեք Աստուծով բարեպաշտօրէն ջանասցուք. Ահա զօրինակ Թղթոյդ առեալ առ մեզ՝ և զիսկն լղեցաք առ Յովնաննէս և այլ արքեպիսկոպոսունսն. և բանս առաջարեցաք նոցա նալևմք կատարածին և մեք լետ աւուրց լինչ աստի առ լուսափալլ Քնօրինն ըստ արժանւոյն Թուղթ ղրեսցուք և վասն քոյ ևս խնդիրս արասցուք թէ դա է արժանի և ոչ այլ սքա Դանիէլ Արհոյ եղբօրն քոյ դալն ևս լուսամբ մինչև ցհնդետասան օրն լսել։ Իսկ թէ ի չար նենդաւոր ծառալէ այս որդւոյս անօրէնութեան ձախորդութիւն հանդիպելոյն նմա, դալն ոչ գիտեմք. և թէ այս աստուեան բնակարանս առ քեղ զմինչ անհաստատութենէ բան ղբլեցէ բոլորն աստէ և ինքն պլուդ և դաժան քան զատանայ, վատնդի մեք բան եմք լսած որ դայս քեղ ղրեմք։ Ապաքէն սրբութիւնդ քոյ զմինչ բոլորով սրտիս մխամտեալ կաց ի լուղիդ բանս քոյ հաստատ և Աստուած լսոդեսցէ քեղ. ղպահարան Թղթոյն լմոյ նենդեցեալ ի լանդգամ Դրիգորէն և լԱրղութեանց կամիմ ղքեղ դի ցուցցես Քնօրինին. բայց միւս Թղթոյն ողջ լեր ի տէր ի միսիթարութիւն.

1801 լապրիլի 7 ի Թիֆլիզ։

Սիմէոն և Անդրէաս, Բարսեղ և Թաղէոս եպիսկոպոսաց պաշտօնէից սրբոյ գահին Էջմիածնի։

ԿՆԻՒՔ

*) Անընթեռնելի։

Առանձին ծանիր վասն սրոյ Աթոռոյ և անցից։

Յովսէփ կաթուղիկոսացեալն ի մարտի ինն մեռաւ. մինչ ի 10-ին գրեցաք ի սուրբ Աթոռն առ բոլոր միաբանութիւնն թէ սա մեռաւ, մինչ ժողով աւնիցիք վ. ան ընտրութեան, ղԴանիէլ Արհին մի խռովեցուցանէք, որ յետոյ մեր ղուխն կըցաւի. և թէ զնա, կամ զայլ ոք համաձայն միաբանութեամբ ընտրէք, զմեզ ևս ընդ ձեղ իմասջիք. ի ծաղկաղարդի ուրբաթ երեկոյին մտանեն թուղթք մեր ի սուրբ Աթոռն, և ի գիչերին լուրկուց կողմանց ղբանս հասուցանեն նրևան, մի կողմն առ մելիքն, և միւս կողմն առ հարիւրապետն լառաւօտուն չաբաթուն Ղազարու զմեր աղղաբարութեան և մխիթարութենան գիր կարդան ի սուրբ եկեղեցւոջն ի մէջ ժողովոյն. Աստուածատուր վարդապետն խօսի թէ՝ կաթուղիկոսացուն վազճանեալ է, կաթուղիկոս է պիտոյ ընտրեսջիք. մի ոմն ասէ թէ տունն երկար անտէր է մնացեալ լալուստ խնդրել չի լինիլ. ահա պատրաստի կայ Դաւիթ Արհին, իսկ բաղումք ի ներքուստ աղաղակեն թէ մեր նախընտրեալն որ մահասարան ի պատրիարգութենէ անկաւ, և պատուհասդին է, և նորա մահարան կնքեալ է քան զմեռածն լաւագ է կաթուղիկոս կոչեցեալ, ընդէր ոչ ընտրեմք զնա. Ընդ այս վիրաւորեալ Դաւթի եպիսկոպոսի բարկացեալ քանս խօսի և որնհոդոն ելանեն. ութ եպիսկոպոսունք առ իւղբաչին, և թէ ինչ անյարմար անցք անցանեն ոչ կամիմ գրել և որչափ ճնասուց գուռն բացեալ լինի, ապա սոս մաքուր աստիճանին հալրապետութեան սուրբ դահին մերոյ. վերջապէս Յովհաննէս վարդապետն չանիւք հալրապետին և մերովք իշխօղն լ.չանի ի պալատն ի սմիս ժամանդրութեան. Թուղթ գրէ առ Դանիէլ Արհին չքով կաթուղիկոսի որպէս և լառաջն. և միւ քանք և երկրացիք մահարար գրին, և լառագ հինգշաբաթի ուղեորին ղՅովհաննէս պառաւաղազէն և ղԵրեսէս վարդապետն. ի Լաղադիղու թաթարաւ գնալ բերել ի Թոխաթու գԴանիէլ անկեալ ի գուբն առւծոց. և որպէս ասեն ի նմին աւուր բառնան զնունն Յովսէփայ կաթուղիկոսի ի պատարագէն, և միայն ղԱ.ուկասն լինչեն որ լառաջմէ ընդ Յովսէփայ լինչառակիւր. այլ գայս գրով չունիմք այս է պատմութիւնն։

ԼԹ. *Օրինակ Թղթոյ Փիլոյենց Աղսի, գրեցեալ առ սրբազան Նիփրեմ Արք եպիսկոպոսն եւ Առաջնորդն Ռուսաստանու՝ հայոցս ազգի. որով ծանուցանէ զրժդունումն Թղթոյ՝ որ առ նա՝ յԱրղութենանց ի ձեռանէ կուրիէլին զոր խաբէութեամբ առեալ խայտառակեցեալ են։*

Սրբազան հալր Նիփրեմ Արքեպիսկոպոս իմ ողորմածաղունեղ տէր։ Մաքուր աջգ համբուրելով արդ առնեմ. ղի ամսոյս 4-ին տեղւոյս ամենայն որպիսութիւնն գրեալ էի ղի առաքեցից տեառնդ իմոյ. կուրիէլս այո նոյն կիտոջ գալու էր յղեցի առ նա ղի բերցէ հրամանոցդ. սոյն կուրիէլն հարցանում է իմ ուղարկած տղալին թէ՝ Աղայ Փիլիոնովին կոճանաչես. ազես ասել էր թէ՝ սրբազանիցն գիր բերի քեղ հասաւ թէ ոչ, ես պատասխանեցի թէ չէ հասեալ. չատ նեղացաւ և բարկութեամբ ելեալ ասաց թէ՝ ես պարտիմ ղայն մարգն գտանել, ով ոք քոյ անուամբն ղայն գիրն էառ լինէն. գնում է չուռջէ գալիս մի ասեր Արղութեան քնեաղ Սօլօմոնն վկալութեամբ իւր եղբալր Բարսղին ասած է լինում թէ՝ Աղայ Փիլիոնովն ես եմ գիրն առնում է, յետոյ իմ տղէն հետն կուրիէլի գնում է Սօլօմոնի եախէն բռնում թէ՝ դու որ Աղայն չէիր, իմ գիրն ինչու առար. Սօլօմոնն իմ տղին ասել է թէ՝ համբերէ փոքր մի ես կուղարկեմ վերջն որ գիրն ուղարկում է տեսալ որ իմ գիրն էլ բացած էր, և միջին եպիսկոպոսաց գիրն էլ բացած էր, կուրիէլին կանչեցի ցոյց տվի, կրակ դարձաւ իսկոյն գնում է ենարալին մօտն եաւիթէ առնում, և մինչ ցարդ չիոթին կալ, որ ալսպիսի խաբերալութիւնն բոլոր քաղաքս հրատարակեցաւ յետոյ եպիսկոպոսաց գիրն տվի նոցա, կարծեմ թէ՝ նոքա ես հրամանոցդ ամենայն որպիսութիւնն իրեն ծանուցանելոց են. մինչ զի եթէ կարելի լինէր, չորեքին եպիսկոպոսունքս հետեւոտին դալոց էին առ տեղւոյդ մնծաւորն ի զանկատ. բայց անկարելի էր. որպէս այս քանի մէջն նոքա ճշմարտապէս խայտառակեցան, այսուծով ամենայն բանն

նոցին նմանակս ճշմարիտ լինելոյ է. ուրբ Աթոռի համային որպիսութիւնն ի թղթոյ նոցա իմանալոց էք. մեք եւս աւելի ծանրութիւն ոչ առաք հրամանօքդ, զայս եւս իմայնալ լիր. զի այս կուրիէլս խնդրեաց լինէին թէ՝ Սրբազանին դրեաս, որ այս գրերու բանի կողմանէ չնեղանայ. ճշմարիտն էլ այս է որ ոչս խղճալիս մեզ ինչ ոչ ունի, խասիեալ էին իմ փիթօլենց Աղեն եւս եմ. այնպէս առնալ էին էլ թէ սա չլինէր բոլորովին կորնչէր. սա հետեւեցաւ որ գոտաւ, խնդրեմ չնեղանաս.

1801. յապրիլի 8 ծառայ սրբութեանդ
ի Թիֆլիզ, ՓԻԹՈՒՆՑ ԱՂԱՑ

Լ. *Թուղթ միաբանից ս. Էջմիածնի առ Դաւիթ խանն:*

Ի լուսանկար և երկնահանդէտ Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի պաշտօնէից համային Քահանայակարգ միարան եղբարց՝ այսինքն ՚Արք Եպիսկոպոսաց, Եպիսկոպոսաց, ի վարդապետաց և լաբեղայից ժամանեսցէ Թուղթ ճըշմարիտ սիրոյ՝ Քրիստոսական ողջունի և հոգևոր օրհնութեան հանդերձ պահպանողական չնորհօքն և զօրութեամբ սքանչելագործ Սրբութեանցն աստանօր եղելոց, ամենապատուականի սիրելոյդ մերոյ, և ցանկալոյդ հոգւոցս. և հաւատարիմ բարեկամիդ սրբոյ դահիս. Աստուածասէր և նովիմբ զօրացեալ Քաջալաղթ մեծահամբաւ և չքեղաշուք Դաւիթ խանիդ և ամենեցուն, որք քոյ են, ընտանեաց և աղգականաց, ի տէր խնդալ յարաժամս (չնորհք և այլն).

Եւ ընդ սիրոյ և օրհնութեանս Աստուածայնոյ ծանուցումն լինի յարգութեան ձերում, զի ըստ որում դրէ իմաստնասէրճ արքայն Սողոմոն թէ, որպէս սահանք ջրոց, նոյնպէս և սիրտ թագաւորի ի ձեռին Աստուծոյ է, ընդ որ կոյս հաւեցուցանել՝ դարձուցանէ զնա, արդար այժմոյս ահա հանդարտնամ և ամենակալ ձեռն ողորմածին Աստուծոյ չարժեալ էր և քաղցրացուցեալ զսիրտ մեծութեան ձերոյ՝ առ ի մխիթարել և սփոփել զղաւորութիւնս մեր. քանզի զսիրոյ և զբարեկամութեան թուղթն ձեր, զոր զբեալ էիք ձեռամբ հաւատարմին ձերոյ՝ և սիրելոյն մերոյ օրհնեալ Թալալ բէկին՝ ա.ընկալաք ի վերայ գլխոց մերոց և սիրով ընթերցեալ վերծանեցաք զոր ինչ ի նմա բանք էին. Եւ զի նախապէս զմխիթարութիւնս էիք դրեալ յաղագս մահուան դերասչուք հայրապետին մերոյ Տեառն Յովհէփայ Սրբազնասուրբ Կաթուղիկոսին, նուաղեցաւ տրտմութիւնն սրտից մերոց յայնմ մասին. Ուստի չնորհ մեծ ունիմք ձերոյ բարեսէր վնծութեանն, որք և ասեմք Լուսաւորիչն ամենեցուն Տէրն մեր Յիսուս Քրիստոս լուսաւորեսցէ զՅոգի նորին, և կարդեսցէ զնա ընդ գերապանծ սուրբ Հայրապետսն.—Եւ զձեզ ևս մխիթարեալ՝ ողջ պահեսցէ ի բազում պարապս ամաց, և վարձատրեսցէ երկնայինն ձրիւքն իւրովք, և միշտ տարածեալ ունելով ի վերայ ձեր զթիս Աստուածային խնամոց իւրոց, վառազարդեսցէ խաղաղաւէտ կենդանութեամբ, և բնաւիւք բարեճոխութեամբք. Եւ ապա ի կողմանէ սիրելի եղբօր մերոյ Դաւիթ Արհի Եպիսկոպոսին, որ հրամայեալ էիք ընտրել և կացուցանել զնա կաթուղիկոս Աստուածեան սրբոյ Աթոռոյս, բարի էր հրամանն ձեր, թէպէտ և մեք ևս խորժեմք յոյժ, որ օր յառաջ մեկ հաւատարիմ պաշտպան լարիցէ այս անտէրունջ սուրբ տանս մերոյ, և բարեկարգապէս կառավարեսցէ զսա և զվեղ, բայց սակայն ընդդէմ բարեփառ իշխանաց և օրհնեալ աղգին մերոյ, որք կան ի Կոստանդնուպօլիս, և ընդդէմ համահաճական կացողութեան մերոյս սիրադումար միաբանութեան ոչ կարեմք առնել ինչ. Քանզի յայտնի եղև ի հարկէ ձերումդ պատուականութեան, թէ զկնի փոխելոյն առ տէր զերերջանիկ հայրապետին մերոյ՝ Տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին, այն ինչ մեք գրատմակնիք մահէր դրեցաք առ օչհնեալ աղգն մեր, նախապատաբար խնդրելով ի նոցունց զԴանիէլ սըրբազան արհին չնորհել մեզ կաթուղիկոս, նոքա ևս սիրով և քաղցրութեամբ հաճեցեալ ընդ խնդիրս մեր լատկացուցին զնա կաթուղիկոս. զոր և իբրև հանդերձեալ էին առաքել այր, բարիատեացն սատանայ ՚այնպէս մրրիկ յարոյց, որ զնաց լօտարութիւնս. Եւ ի տեղի նորին՝ Յովսէփ սրբազանն ընտրեցաւ ի կաթուղիկոս, որ և ևկեալ այլոր վախճանեցաւ առ տարաբաղդութեան մերոյ. Իսկ արդ՝

ողորմութեամբն Աստուծոյ նա՝ ինքն Դանիէլ սրբազան արհին ղերձեալ ի տարագրութենէ լիւրմէ՝ եկեալ է յԱղոկեալ քաղաք. Ես մեք բոլոր միաբանք սրբոյ Աթոռոյս՝ մեծք և փոքունք որպէս զառաջինն ամենալօժար սիրով կամեցեալ եմք զնա լինիլ կաթուղիկոս և հայրապետ մեզ, այլ ևս նոյնպիսի սիրով զնա կամիմք. Քանզի ահա մեք եղաք պատճառ նորին ի պատրիարգական իշխանութենէն, նմին իրի է հարկ է մեզ ամենայնիւ ջանալ վերստին կանդնեցուցանել զնա. զոր թէ չառնիցեմք տիրութիւն մեծ մեղք լինի հոգւոց մերոց. մանաւանդ և ղիտեմք իսկ թէ օրհնեալ աղդն մեր մի անգամ հաճեցեալ զոլով ընդ նա, այլ ևս ընդ նա հաճեցելոց և հաւանելոց են, և ոչ լուելոք, վասն այն մինչ լուաք մեք զբօթ մահուան Տեառն Յովսէփ սրբազան կաթուղիկոսին համակամ հաճութեամբ մեր բոլոր միաբանից, և հաւանութեամբ աստ եղեալ մերազանց զմահսէր գրեցաք, և ձեռամբ երկուց վարդապետաց առաքեցաք վասն նորին Դանիէլ սրբազան զալոց ի կաթուղիկոսութիւն, ս. որ և Դէվլէթի խանն մեր ես թուղթ դրեաց և լղեաց ընդ մահսէրին մերոյ հրաւիրելով կանխաւ ի զալ. ապա և մեք միաբանութեամբ գաչնաղիր եղաք ի մէջ Աստուածեան Տաճարիս երդուելով ի կենսատու սուրբ խաչն Քրիստոսի. ի նորուն կողմունս սուրբ Գեղարդն. և ի նշանագործ սուրբ Ա՛Ջ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, զի բաց ի Դանիէլ սրբազան արհւոյն զալ ոք ոչ ընդունիցիմք ի զաւակալութիւն սրբոյ Աթոռոյս. եւ նզով եւս եղաք, զի եթէ ոք ի մէնջ ինքնարնծոյ լինելով՝ բռնութեամբ ձեռնադրեսցի կաթուղիկոս, անիծեալ լիցին լԱստուծոյ ինքն եւ ձեռնադրողքն իւր. Արդ՝ այսպէս հաստատեալս երդուեալ եմք, և սաստիկ նզովիւք փակեալ, և չեմք կարող երդմնազանց լինել, թէև մահ ես հանգիպեսցի. և կաթուղիկոսացուն մեր ևս Աստուծով այս մէկ երկու չաբաթս զալոց է աստ, առ ի կատարել զնորն օծութեան հանդէս. Դիտեմք զի ձերինդ պատուելութեան ես լատկապէս սիրելի է նա, որ և ի զալն բարեաւ առաւել ես զսէր և զբարեկամութիւն է ցուցանելոց առ ձեզ, և պատուելոց է զձեզ լստ վայելչման, վասն որոյ խնդրեմք՝ սիրով հաճիլ ընդ նա, և զսիրոյն ձերոյ և զինամոց առաւելութիւն առ սուրբ Աթոռս և առ մեզ աննուազ պահել. Այլ և դիտես իսկ՝ թէ բարեաց լիշատակաց արժանաւոր պապն քո, հոգելոյս օրհնեալ Հերակլ արքայն որպէս բարեկարգութեամբ կառավարիւր, և ամենևին չխառնիւր լպատիսի բանս մեր. վասն որոյ լարգութիւնդ ես պարտիս ըստ նմանութեան նորին լուսահոգւոյն բարեխնամապէս վարիլ առ սուրբ Աթոռս, և չբռնադատել զմեզ լայլօրինաւոր գործ ինչ. և ճչմարիտ բարեկամութեամբ իրացուցանելով զպաս դրուածոց մեր՝ ամենևին անմեղադիր լինել և ջատագովել իսկ. զպատմիկ առնելով ձեր, պարտաւոս կացուցանելոց էք զմիաբանութիւնս մեր գոհունակութեամբ աղօթելոյ մլչտ ի մէջ Քրիստոսասէջ սրբոյ Տաճարիս լաղագս անդին կենաց և վառապերճութեան ձերոյ։

Խոնարհ միաբանք սրբոյ գահիս. ստորակնքող Եպիսկոպոսք և այլ ամենեքեան որք ընդ մեզ։—

32 Եպիսկոպոսք և վարդապետք

Գրեցաւ՝ լամի Տեառն 1801.
և լապրիլի 8.
ի սուրբ Էջմիածնին.

ԼԱ Ամենազօր ամենատոդորմած լինքնակալ մեծի կայսերն Ալէքսանդր Պաւլովիչի ՚՚՚ լուսափայլ կաւղ փէտրիչ կնօրինն մեծաշուք Ենկրալ եւ վօյննի գլուխոնաթ։

Քրիստոսասէր և բարեպաշտ բարձրապատիւ նախարար, և հաւատարիմ զօրապետ և կուսակալ, ՚՚՚ ողորմած և բարեչնորհ խնամարկու մեր։

Նախապէս չնորհաւորեմք բարձր նախարարութեան ձերում և նորապսակ կալեքրութիւն ✠, ՚;

Զոր թագաւորն թագաւորաց Աստուած չնորհաւոր արասցէ, և քաղցր գթութեամբ նորին առաւել քան զառաւել ծաւալեսցի ի վերայ ձեր և մեր։—Ես ապա ծանուցանեմք զպաս ինչ։ Մեք բաղմակնիք Թղթով մլւաքանից սրբոյ Էջմիածնի որ է ի դաշան Արարատեան, եկեալ ի Թիֆլիզ ընդ լառաջ Յով-

սէփեալ կաթուղիկոսացուին՝ տանիլ զնա և օծանել կաթուղիկոս։ Իսկ նա զբաղումս ասուրս անցուցեալ ասաց, մինչ պատրաստեցաւ ելանել. ըստ Աստուածային տեսլութեան հիւանդացեալ վախճանեցաւ ի մարտի 9, և փառաւորապէս ամփոփեցաւ Գլուխ մեծութեանդ լիցի ողջ։

Այնուհետեւ պարտէաք զնալ ի Աթոռն մեր և մխարանութեամբ ընտրել դարձեալ կաթուղիկոս. սպասաւոր հանգուցելոյն Գրիգոր վարդապետ պատճառ եղեւ արգելման մերոյ հրամանաւ Իւան Պետրովիչ Լևաբալին. զի սա բերանացի իւրով ասաց մեզ՝ որպէս թէ զրեալ իցէ մեծութեան քումմ վասն մերոյ, և սպասէ ձերումդ հրամանի։ Բայց ահա աւելի քան զի աւուրք եղեն, որքան խնդրեցաք, չեղեւ մեզ արձակումն։ Ի սրոյ էջմիածնէ եղբարքն մեր կառավարիչ արք եպիսկոպոսքն զրեալ խնդրեցին զմեզ, այնու եւս ոչ կարացաք զերծ լինել։ Ցատնի լիցի իրաւացէր մեծութեան ձերում զի մեք ամենեւին պարտաւորութիւն չունիմք աստ մնալոյ. այլ այս Գրիգոր վարդապետ պաշտօնեալ մնացեալ զալիչ իւրոյ Յովսէփ արք եպիսկոպոսին՝ ստութեամբ կտակ հռչակեալ, և ունայնաբան գրովք զինքն ժառանգ մեռելոյն քարոզեալ ի կոզմունսդ՝ նաեւ զմեզ արգելեալ աստ՝ փեսեկտաց դմիաբանութիւնն մեր, զի տունեցուն հաւանելին ոչ կարղեացի կաթուղիկոս։ Բայց քնաւ սրբոյ գահին և երկրի քահանայք և իշխանքն բազմակնքութիւն ընտրեալ և հրաւիրեալ են զնախընտիր կաթուղիկոսացուն։ Սակայն գեւ ոչ հանգարտեալ այս ան. զաղար չարահնար Գրիգորիս՝ մարզ է լուղարկեալ լնրեւան և մեծամեծ կաշառս խոստացեալ այլազգեաց՝ խոստանալով ոմանց՝ որ զինքն եպիսկոպոս ձեռնադրեսցէ, և կողմանցդ մերազանց առաջնորդ կարգեսցէ. Վասն որոյ մեծամեծ վնասք են հանդիպեալ սրբոյ Աթոռոյն ի խռովարարութենէ այս ամբարշտիս ընդ սա։ Բայց զի Աստուածախնամ երկրիդ ժողովուրդք մեր եւս ոչ հաճին ընդ սա, զի զազան գիշատիչ է լինելոյց սա, և ոչ հովիւ հաւտին Քրիստոսի, վասն որոյ և մեք ի սուրբ Աթոռն եղեալ բովանդակ եպիսկոպոսք և վարդապետք ոչ կամիմք, եւս և ընտրեալ կաթուղիկոս եւս չէ կամելոց։ Այլ մեր առաքելութիւն խնդիր է՝ զի զերապատուելի եղբարդ մեր Եփրեմ սրբազան Արք եպիսկոպոսդ՝ որպէս ցարդ քաղցր խնամօքդ միխիթարեալ և յարդեալ ես, որոյ աղագաւ և ինքն չնորհակալութիւն զրէ ի սուրբ Աթոռն և ամենայն բարեկամաց, նոյնպէս և յայսմհետէ ի չնորհդ մեծի մարդասիրութեանդ ունիցիս։ Աստուծով մինչ ընտրեալ կաթուղիկոսն օծցի, նա եւս զիւր չնորհակալութիւնն մատուցանելոց է ✠ և քումդ բարձրութեան։

Դալձեալ խնդրեմք վասն մեր արգելելոցս արձակման՝ զԹուղթ ողորմութեան չնորհեսցես. յաղագս որոյ հանապազ լիցուք գոհունակ գբարերարութենէ ձերմէ, և հայցեմք յԱստուծոյ զկեանս երկայս ✠, և քաջընտիր հաւատարիմ մեծի զօրագլխիդ նորին։

Ի Թիֆլիզ յամի Մնամբ ձերին բարձրապատեառն 1801, և ի յապրիլի 9։

տիւ նախարարութեան բարեխնդիր աղօթաւորք խոնարհ պաշտօնեայք սրբոյ գահին Էջմիածնի՝ որ ի դաչտն Արարատեան
Սիմէօն արհի եպիսկոպոս
Անդրէաս՝ արքեպիսկոպոս
Բարսեղ արքեպիսկոպոս
Թադէոս՝ արքեպիսկոպոս
զործակատարք

ԼԲ. Թուղթ Դրիզոր վարդապետի առ Յովհաննէս պատրիարգ, յորում ալատմէ զառաջին սկզբմունս հարութեան իւրոյ։

Ցանկամք ձերդ բարեբաստիկ երջանկութեան հանապազ, և լուսամբ ղի կայք ի բալ հզուարձ բալօրութեան չնորհիւ Ցեսուն ի բերկրանս թախնալ և վշտապատում սրտի որդեկի ձերդ մաքուր Հայրութեան։ Ցանցիւմն թէպէտ ծանուցաք համառօտիւ զմահ հոգելոյս Հայրապետին ամենայն Հայոց, և իմ քաղցր և բարեհոգի ծնողիս, և զնորին կատակօրէն աւանդեալսն մեզ զքանի հարկաւոր առաջնորդութիւնս սակայն զարդիս զայս կամիմ ձերդ ներամիտ բարձրութեան ծանուցանել։ Ի ձեռն փութեկին զթուղթս հաք առաքեալ, առ սուրբ Աթոռն ես ղդացուցեալ միւաքանիցն զանգիտի դիտաւորութիւնս լուսահոգուին, քալց ի լսել նոցա զանուն ձերդ սրբազնութեան և Դաւիթ սրբազան Արքեպիսկոպոսին ի բարկութիւն բրդեալ, զազմուկս են յարուցեալ, և հանդերձեալ ընդդէմ կամաց լուսահոգուին և մեր ամենեցուն՝ զԴանիէլն քերել տալ և դահակալ կացուցանել, որպէս և ահա հինգերորդ օր է՝ յորմէ հետէ զՅովհաննէս վարդապետ ոմն առաքեալ են Դանիէլ վարդապետն իբր հրաւիրակ, ընդ սպասաւորի նորին ներսէս վարդապետին։

Արդ՝ մինչ զայսոսիկ դիտաւք մեք, ընդ տեղեալս վրաց Արքայիին և Ռուսաց զօրապետին հանդերձ համակամ հաստարակութեամբք, ղրեցաք Սրևանոս լանին, միաբանիցն և որոց հարկն էր, Թողուլ զԴանիէլն և քննուին չհամարձակել միւս անգամ լիշել զանունն, զի անարդեալ է նա յերկուց կաթուղիկոսաց և տակաւին առանց *) լանկեան ուրեք անկնալ. և ունի անտի յառաջանալ տզեղութիւն ազգին և վնաս մեծ սուրբ Ցանին և այլն. այլ ըստ կամաց մեծի կայսերն և ըստ կտակի լուսահոգուին՝ զԴաւիթ սրբազան Արքեպիսկոպոսն կացուցանել ի տեղի հոգելոյս Հայրապետին մերոյ, և փութով օծանիլ. և ակն ունիմք թէ սամ հնազանդեալ կատարեացեն զկամս մեր։ Նոյնպէս զանգիտի եղելութիւնն ծանուցաք և մեծի կայսերն և բոլոր մեծամեծաց և տեղւոյդ դեսպանին. և զայս վասն այն ալսպէս կամեցաք առնել, որ մի գուցէ հետաւորութիւն ձեր պատճառ լինի Դանիէլ ներմտանելոյն։ Սրբութեան ձերում ես ալսու տամք գիտել, զի լմացեալ զգնալիսն արարս նոցա, և զմերս ալս կերպ ձեռնարկութիւնսն, ընդ մեզ մի հոգի եղեալ խաւսանիլ խորհրդոց նոցին լինիցի, և զԴանիէլ վարդապետն լալն կողմունս զեղերեցուցեալ տացես մեզ ժամանակ և ուղի, զԴաւիթ սրբազան Արքեպիսկոպոսն կոչուցանել Հայրապետ. և այնու լցուցանող կտակի և ըզձի լուսահոգուին երեւել։ Ցուսամ զայս ամենայն բարութիւն և քաղցրութիւն, զորս ակն ունէաք ի լուսահոգուին վալելել, առաւելապէս ի սմանէ տեսանել և ընկալնուլ զալնս ամենայն, և նոր ի նորոյ ողիւսորեալ կենդանագործիլ, որոյ վասն և զանձն իմ երաշխաւոր առալչ ձերդ սրբութեան կացուցանեմ, և լանձնեմ զիս ի չնորհս և ի հալրութիւնս ձերդ մաքուր սրբութեան, և ամէն միչտ պատրաստական ծառալ՝ սպասաւոր ԳՐԻԳՈՐ և եղ անուամբ վարդապետ։

1801 Ապրիլ 13.
ի Թիֆլիզ։

(ի սոյն թղթի լատուկ փուսուլալիս *)

Իսկ առ կայսրն գրեալ էի անուն երկոցունցդ, ալժմ կրկին առ նոյն գրեցի եա՝ և տեղւոյս Վրաց ժառանգ արքայորդի Դաւիթն և Սներալն զօրուն Ռուսաստց՝ պատասխանս այնմ մինչ ի Մալիսի 5-ն. առանալոյ եմք, ես վասն այն չանալ գործոյ առաջացուցմանն որ մի գուցէ Դանիէլն զլարդ և խզէ հնարիս նատուացեն. և լինի տարաձայնութիւնն լուսոյն գնրպտոյն՝ քան գառաջինն։ Եւ թէ չը լինիցի հնար գԴաւիթն մուծանելոյ թերեւս, արդիլելոց եմ զԴանիէլի մուտն՝ կայսեր և տեղւոյս Արքայորդւոյ օգնականութեամբ Դրեցի առ վազնմի բարեկամն վեհալուստոր տեսանն՝ Պաթալ Հիւսէյնն փաչայն, արդիլել զԴանիէլն լաղագս չունելոյ երկոց թագաւորաց զՖէրմանս և զհամահաւանութիւնս, և մանաւանդ ի բարեկամէն իւրմէ յատկացեալք են լաթոռ Հալրապետական Ցերդ Սրբազնութիւն և կամ Դաւիթ Արքեպիսկոպոսն էջմիածնալ. որ հակառակ գոլով ոմանց միաբա-

*) Օրինակին պարապ թողեալ։

նից անուան հանդուցեալոյն՝ անհաճութիւնս ցուցանեն, և զաքսորեալ Գանիէլն քնքել և նստուցանել կամին յաթոռ, և այլ այսպիսի բանք. խնդրեմ և ձերդ սրբազնութիւն ի լաւագոյն օգտին րուռն հարկանել, որ լինիցի ադգին և սրբոյ Տանն այնմիկ օգտաւորագոյն, զի մօղուղ (*) Գանիէլի առաջմամբն գիշէ օգտիցի ազգն և սուրբ տունն այն, որ մեծամեծս եւս խոստանայն նորա լինել Երեւանու խանին. որք են երկու երեւելի գող սեւազղուխքն, Ատուածատուր և Յօհաննէս եպիսկոպոսունքն. իսկ Թադէոսն, Տարանէն, Սիմէօն Աթոռականն և Անդրէասն աստ արգելեալք են և սպասեն կայսերական վճռոյն. զի ըստ ծիսի Ռուստաց որպէս մտանողքն նոյնպէս ելանել ղէն պարտին կայսեր ծանուցեալ լինիլ. սոքա թէպէտ չատ հայհոյեն զմեզ՝ կարծելով թէ մեք ամբ այնմ պատճառ, քայց մեք լուռթեամբ տանիմք այնմ նեղութեան նոցին՝ իբրեւ չգիտողք կանոնի Ռուստաց հասարեալ, մանաւանդ թէ մնալն դոցա աստ՝ օգուտ է քան թէ վնաս սրբոյ Աթոռոյն. Ներեսէ ով պատուական Հայր, որ ըզ տխրական քանս երկարեմ քումգ մաքուր անձին լսելեաց՝ փոխանակ ուրախականին, զի տէր այսպէս կամեցաւ. եղիցի անունն և կամք Տեառն օրհնեալ։

Թողլով ձերդ գերակատար խոհեմութեանն. մնամ վասն ձերոյ մաքուր Սիրազնութեան պատրաստական ծ. Գրիգոր ե ԼԹ. անուամբ վարդապետս։

«Գերագնիւ եղբօրն իմոյ պարոն Գէորգ Աղաէկովհանի սիրով գրգռուն նուիրել խընգրեմ, երկարն ի նախկին դրեցաս տեղեկանալոց են։ Նոյնպէս մահտեսի Միքաէր սիրելոյս. ահա առ ինչ աշխատեցաք, ուր հղերեցաք Տեղեուս Եպիսկոպոսունքն ի վախճանի աւուրն սկսեալ մինչի օրս գերազանց ուրախութեամբ չրջին աստ և անդ ի հացկերոյին տալու և չարականալ, և յայտնի ցուցանեն զինքեանս ցանկացօղք նորին մահուն։ Տէր եղիցի վրէժխնդիր։ Եւս ոչ արատաւորեմ զանուն նոցա. վանորոյ ձեզ բնաւ չկամիմ մտանել ի լանմաքուր ժողովս նոցա. վայ, վայ և վայ, ըստ մարգարէին, և այսքանս բաւականի։

ԼԳ. Ընդանուն կտակարարութիւնն Յովսէփի դաթուղիկոսին ինձ Սիմէօն Եպիսկոպոսիս որ խոստովանահայր նմա ի Թիֆլիզ քաղաքիս ի ժամ մահուն։

Յովսէփ կոչմամբ կաթուղիկոս ի Թիֆլիզ քաղաքոյս մինչ պատրաստեցաւ և ղրեուինս կապել ետ զնալ ի սուրբ Աթոռն, հիւանդացաւ աստիկապէս և ի մարտի ինն օրն յառաւօտուն յետ խոստովանութեանն և հաղորդութեանն՝ յորժամ հարցի թէ ինչ ունիս հրամայել վասն քո և իրաց քոց. նա յառաջ պատուիրեալ գոլով վասն բանսցն ուղարկելոյ. ես պատասխանացի թէ ահա ուղարկեմ. և նա կրկին ստիպեաց թէ չուտով ուղարկեա և մի չետաձգեր որ հոգիս իմ պարտական չմնայ Աթոռոյն. ապա ասաց թէ մկ փոքր ժամ ունիմ հարկաւոր իրաց ի մէջն կալ յատկացեալ ինչ զոն առանձնաքար քո ձեռամբն տաս Սօլոմոնին որ օտարք չիմանան, և իմ հայրենի տունն չքակեն. իսկ յայլ ամենայն կալքն իմ սուրբ Աթոռոյն են. երկրորդ ասաց թէ ի Գրիգոր վարդապետէն զրամ եմ փոխ առեալ. թանխէն ասելօրգօք մտան ունիմ. երրորդ ասաց թէ ի մեր Աւետիք վարդապետէն քանի հարիւր ոսկի փոխ եմ առել, պիտի հատուցանէք ի կալից որպէս յայտնի է. զարձեալ ի յուրն ժամուն կոչեաց որ լեզուն ծանրացեալ էր ասաց կմեռանիմ իմ մարմինն տարէք սուրբ Էջմիածին Սիմօն կաթուղիկոսի գերեզմանի մօտն թաղէք և իմ կալից գաւթարն Գրիգոր վարդապետն գիտակէ ի նմանէ տեղեկացէք ամենայն հէսապ և որպիսութիւնն. այսքան ինչ է կտակն որ խօսեցաւ ընդ իս և ես ճշմարտութեամբ գրեցի ի Թիֆլիզ քաղաքի։ Սիմէօն Արքեպիսկոպոս գործակալ։

Լ Գ. *Դերընտիր առաջնորդիդ մերոյ ընդհանուր հայոցս Ռուսաստանու եւ ծայրագոյն նուիրակի սրբոյ գահոյն Վլաձնիջի Տեառն Նիկոմի սրբազան արհիապանծ եպիսկոպոսիդ, ի Հաշտարխանու հայոց հասարակութենէ։*

Խ ն դ ի ր ք։

Միջոց երկարէ մինչ ի ձերոյ սրբազնութենէն բաժանեալ չունիմք բնաւ գրութիւն, և ընդ այս գարմանամք լոյժ, քօթաւի լուր վախճանի կենաց սրբազնակատար կաթուղիկոսին Տեառն Յովսէփայ էհաս ի լսելիս մեր արդարև ոչ սակաւ տրտմեցաք։ Բայց զինչ ունիմք առնել, որովհետև զանդառնալի վճռոյն ամենակարողին ոչ ոք կարէ անցանել, ուրեմն նմա միայնոյ տալի է փառս և գոհութիւնս. և ձերում սրբազնութեան արժան ասելոյ թէ պատուական գլուխ ձեր ողջ կացցէ։ Ցայտ իսկ է ամենից, որ են ահա ամս քսան և եօթն լ՚րապէս, յորմէ հետէ հանգուցեալ սրբալան Յովսէփ կաթուղիկոսն գոլով աստ ի Ռուսաստան ունէր և ի ժողովրդենէ հայոց նուիրակեալ զանազան արդիւնս զլիշատակիս, և զանօթս եկեղեցականս ժողովեալ վասն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի պահէր աստ։ Եւ մեք ևս ոտ այն պահեստ ոչ ինչ երկմտեաք որովհետև ի կալսերական խաղաղ վիճակիս կայր ամրափակեալ։ Իսկ նարդենիս ի լայսմ ամի նոյն զնոտըն մեր մինչ ընտրեցաւ ի կաթուղիկոսութիւն և դիմէր առ ցանկալի տուրք Աթոռն լընկալնուլ զօծումն քահանայապետութեան։ Վասնորոյ և զամենայն արդիւնս առեալ տանէր ընդ ինքեան, և բաց լայնց՝ այլ ևս իմ տատիայս խնդրէր ցաւակցաբար յորդորմամբ թէ գթացէք առ խղճալի տուրք Աթոռն ձեր՝ որ կայ ի մեծի տագնապի, և մեք ևս իւրաքանչիւրքն ոչինչ խնայելով զմասնաւորաբար ցաւակցութիւն մեր առատաձեռնեցաք, որ և գոլով ի մեծի խնդութեան լուսացաք թէ այսքան ամեայ նուէրք մեր ունին հասանել ի տուրք Աթոռն և անտի ևս փոխարերաբար չնորհք և օրհնութիւն ժամանեալ ի նախնիս մեր և ի մեզ։ Սակայն ներկայիս ընդ այնմ երանելի լուսոյն մեր դներհակն ի զատկական տօնիս և դիր մի ի Դրիգոր աբեղայէն ընկալաւ հասարակութիւն մեր դրեալ ի մարտի 13-ըն և ապա գիր մի ևս յետ քանի աւուրց հոգեւոր կանցիստորն յորս յայտնէ նախ զվախճան կաթուղիկոսին, և ապա զտիրապետելն կալից թէ իբրու կտակաւ քանիս ինձ աւանդեաց, իշխել անկախ յումեքէ, իսկ ի գրի հոգեւոր կանցիստորէն ևս զանազան հրամանս գործածէ թէ պատուիրեմ հոգևոր կանցիստորիդ որպէս և ի հարկէ ունի կատարել սրբազան առաջնորդն զհանդէս պաշտաման և սգոյ, իսկ աստանօր արժան նկատել թէ որպէս բանադատի ի ճշմարտութենէ, եթէ արդարև գիտէ սրբազնութիւն ձեր միանգամայն առաջնորդ և ծայրագոյն նուիրակ որպէս գրէ ի թղթի իւրում, ապա զիարդ համարձակի ինքըն գոլով աբեղայ պատուէր դրել ի վերայ կանցիստորին, և կամ որպէս կարէ մերձենալ առ կալս սրբոյ Աթոռոյն. միթէ մեք Գրիգոր աբեղայիս եմք լեալ ծառայ և պարտական, ոչ այլ նոյն սրբոյ Աթոռոյն, և զայն արդիւնս ոչ թէ ի վատնումն եմք տուեալ, այլ ի չինութիւն և ի պայծառութիւն սրբոյ տեզոյն, և նա որոյ օրինօք և որոյ իրաւամբ կարէ ձեռնամուխ լինել ինքն իշխող լինելով, և զնոյն չորեսին եպիսկոպոսունքն ևս որք եկեալքն են ի սրբոյ Աթոռէն քնաւ ոչ մերձեցուցանելով, այժմ ոչ՝ թէ մեզ միայն այլ համարէ թէ բոլոր աշխարհի լայտնի է, որ ձերդ սրբազնութիւն ի քնէ անտի հարազատ ծոցածին զաւակ սրբոյ Աթոռոյն, նաև մուտ ձեր ի Ռուսաստան ծայրագոյն նուիրակութեամբ ոչ այլ ինչ պատճառէր եթէ ոչ վասն սկսի սրբոյ Աթոռոյն, որովհետև ըստ տարաբախտութեան մերոյ քաղցում նեղութիւնս և աւերութիւնս կրեաց, որոյ աղագաւ ունիս զկոնդակ ի ձեռիդ հողելոյս Հայրապետին Ղուկասու նոյնպէս և կոնդակ ընդարձակ համանգամայն, առաջնորդութեան և նուիրակութեան Ռուսաստանու Հայոց աղգիս ի Տեառն Յովսէփայ կաթուղիկոսէ, որ մերս խնդրանօքն է, չնորհեալ որպէս կաս այժմ, պատրաստի ի տէրութենանս։ Վասնորոյ խնդրեմք ի բարի հովուապետէդ, զի մեծաւ հետևողութեամբ զչորեսին եպիսկոպոսունսն սրբոյ Աթոռոյն որք կան ի Թիֆլիզ ունելով ընդ քեզ աշխատեացես զայն ամենայն կայն լիովին ժողովել թէ գաւթա-

բով և թէ առանց դաւթարի անթերի և անպակաս ստանալով հասուցես ի սուրբ Աթոռն, ղի մի ջերմեռանդութեամբ տուեալ նուէրս մեր ի կորուստ դնասցէ, և ինքզ սրբազնութիւնդ առ մեզ վերադառնալով լիցես համանդամային ծայրագոյն նուիրակ մեզ և առաջնորդ որպէս և մինչ ցարդ կաս. և բաց ի քէն ղալ ոք առաջնորդ ոչ գիտեմք և ոչ ճանաչեմք։ Եւ զայս առնելով ունիս զմեզ դոհունակ առնել զձէնջ որք եմք մըշտապատրաստ հօտք քարի հովուապետիդ ներքոյ ձեռնադրողքս, որ և գրեցաւ 1801 ապրիլի 14-ին ի յաժտերխանն։

Ի վերայ սորա ևս երեք հարիւր անձինք ձուք եղեալ են, սոխպէս ղլլարցիք և մօղղօկցիք են եղեալ և առաքեալ։

ԼԵ. *Հաչի Բաբայի թուղթն է որով զրգռէ զղաւիչն [1]) առնել վաղվաղակի զոր ինչ առնելոցն էր, յորժամ Ղազար եւ Ստեփանոս վարդապետքն տակաւին անդ ի Նարին սպասէին զալստեան Դանիէլ սրբազանին յԱղուկիոյ։*

Երջանկաղարդ և երանաշնորհ, գերընտիր և յարգամիծար. արհիապանծ մեծի սրբազնափայլ Հօրդ իմոյ Սրբոյ՝ մաքուր դաստակաց ընտիր բաղձանօք համբոյր մատուցանեմ, և դանդրանիկ օրհնութիւնդ մինչտ խնդրեմ

ՌՄՔ թուղթ և մալիսի Ա ի Կարին։

Ցետ որոյ՝ յայտ լիցի մեծի յարգութեանդդ՝ ղի յապրիլի ԺԲ-ին գրեցեալ օրհնադրոշմնամակ Ցեառնդ իմոյ ժամանեալ էհաս առ հէքս, զոր ընթերցուցեալ ծանեալ զամենայն դրեալ բանսդ խորհրդականապէս և ի միտ առի զնոյնսն, առ որ լցայ անպատում բերկրանօք. և զուարճացաւ սիրտ իմ. ըստ որում ակնատալի էր այն ամենայն բանք զոր ծանուցեալ էիր հիքոյս և առ այն՝ կարի յոյժ չնորհակալ եղէ. ի հալրութենէդդ։ Նաև այն էմանէք թուղթսն զոր ուղարկեալ էիր առ ի հասուցանել ի տեղիսն, յայս վոքր միջոցիս ձեր քաղաքիս ալլաղղեաց միջի իսոռվութիւնն իմն անկեալ եղեւ, ուր պատճառի սուրհանդակ չպատահեցաւ ելանել. բայց ալսօր կամ վաղիւն սրբոյն սուրհանդակաւ հասուցանեմ ձեռամբ մերս հաւատարմաց՝ ի տեղիս և ի տեարս նոցա, որոյ կողմանէ միամիտ լեր հալրդ իմ. Ապա ի սրբոյ գահոյդ եկօղ Ստեփան և Ղազար արհիապանծ հարցն լուա զամենայն որպիսութիւնն իրողութեանցն որք լայդր իրակիւն եղեալ էր։ Ահա յայտ առնեմ մեծի վեհմութեանդ՝ զի նախքան զդալն վերոլիշեալ վարդապետացն՝ ոմանք աստի ի Մատենն փալեկ ուղարկեալ էն, որ ահա ժէ օր եղեւ՝ ասենեւին ձայն ինչ կամ գնացօղ փալեկն չէ եկեալ։ յետ նորա ոմանք ես ի Մշու կողմունսն փալեկ ուղարկեալ են. նա եւս չէ եկեալ։ ղկնի այնց խորհրդակցութեամբ վերոդրեալ Արհիացն՝ լատուկ դիր գրեցի՝ ի վերալ սրբոյ Կարապետի միաբանացն և փալեկ կալեալ ուղարկեցաք. իբր ղհաւաստի լուր իմն վասն Դանիէլ հալր սրբոյն՝ արդեօք եկեալ անց կացեալ գնացեալ լցէ, կամ տակաւին նոյն կողմունսն լցէ. և կամ ի ճանապարհն է՝ որ գալոց և անցանելոց է. զստոլղն իմացեալ փալեկիւն պատասխան հասուցեն. նոյն փալեկն եւս ահա Թ օր եղեւ՝ ոչ եկն և ոչ խապար ինչ արար. նոյնպէս և լեկօղ ճանապարհորդացն լուր ինչ չլուաք. ղի բնաւ խապար չկալ։ Ահա վերոլիշեալ Արհիքն կան աստ և սպասեն լրոյ իմիք Բայց ինձ թուի թէ դեռ եւս է սպասելն սոցա։ Ապա աղերս մատուցանեմ Սրբութեանդդ՝ ղի խղճահարելիցիս ի վերալ սրբոյ գահոյդ՝ զի ահա ամալացաւ բաւական եղեւ ժամէ ի ժամ ձգելն։ այլ ղկամեցօղութիւնն Ամենախնամ Արարչին լանձն առնուլ. նոյն գուռնակ և իշխանասւորաց հաճիլն։ Բարուք զի այդպիսի բանք՝ վեհմախոհ հալրութիւնդ առաւել գիտակ է։ Բարեպատեհ ժամն՝ լետս ընկրկելն չէ լաւ։ վերջապէս խնդրեմ ղի հեգս ի մաքուր մաղթանսդ լինել և զարդիւնարար օրհնութիւնդ անպակաս առնել և զորպիսութեանդ նօթ նամակդ անպակասօրէն ցոլացուցանել առ հեգս որով միամիտ լինիմ և լեր ողջ ի տէր. ի պարծանս համալնից և մանաւանդ Եփրիկեան մահտեսի Յակոբ ծառալիս. Ամէն։ Ծառալ եմ մեծի տերութեանդդ մեր ուղարկաց սալին եկաւ սուրբ Կարապետու որ սրբոյ Կարապետու միաբանքն գրածեն դիր մի որ բնաւ տեղաց խապար չի կալ կամ նոցա գրած գիրն վարդապետաց. հետն ուղարկելոց եմ կամ վարդապետներն մալիսի Դ-ին տե-

ղէս ևլանևլոց են կամք մեծի տերութեանն է զանց չառնեա։

Լ.Զ. *Դանիէլ կաթողիկոս առ ոմանս ազգային։*

Դ

Դանիէլ Արքեպիսկոպոս սրբոյ Էջմիածնի ՌՄԹ

Քրիստոսի Աստուծոյ ծառայ և Սրբոյ Էջմիածնի ընիկ միաբան որ և ի նարդենիս համակ հաճութեամբ Սուրբ Լուսաւորչածին ազգիդ և յատուկ մահեղով բոլոր միաբանից ընտրեալ և յատկացեալ ի կաթուղիկոսութիւն Տէր Դանիէլ վարդապետ և Արքեպիսկոպոս լրմէ ժամանեցէ դիր սիրոյ՝ ողջունի և օրհնութեան՝ չնորհք և աղօթք առաքելական ի վերայ հարազատ սիրելեացդ իմոց և ճշմարիտ ցաւակից որդւոցդ Սրբոյ Էջմիածնի Քրիստոսասէր և բարեպաշտօն Շէյխէր վէքիլի մահտեսի Յովհաննէս աղալիդ, Աղանեան մահտեսի Մարտիրոս տղալիդ, Աթոռակալ Մարտիրոս տղալիդ, Դորոեան մահտեսի Սերոբէ աղալիդ, Դոդորեան մահտեսի Աւետիս և մահտեսի Յակոբ աղալիդց, Մըսրեան պարոն Մկրտչիդ, Տալեան մահտեսի Կարապետիդ և գանձապահ պարոն Մկրտչիդ, որոց ամենից և համայն սիրելեաց և ընտանեաց՝ զարմից և զաւակաց ձերոց Ամենաղօր գթութեամբն Աստուծոյ ցնծալ և պարել յարազուարճ բերկրութեամբ և անտրտում ուրախութեամբ ամէն. եւ ընդ Աստուածապարգեւի սիրոյ ողջունի և օրհնութեանս ծաներ ուք յատուկ սիրելիք իմ ի Տէր զի թէպէտ վասն բարեպաշտութեան ձերոյ, որք ամենեքեան դուք յատուկ-յատուկ գիր հրաւիրանաց դրեալ և առաքեալ էիք առիս ի Թօխաթ, պարտ էր և ինձ զդարձ այնպիսեացն առ ամենեսեան ձեզ չնորհակալութեամբ հանդերձ գիր սիրոյ և օրհնութեան գրել, սակայն ըստ իմ տկար մտաց զառաւել վաղեչկականն խորհելով և ի կարեւորէն լեռս կացի՝ քանզի խորհէի յայնժամ ի Թօխաթ գնալ ի սուրբ Աթոռն և ըստ տնօրինելոյ Տեառն ի լրութիւն առաջադրեալ գործոյս, ապա Հայրական սիրով և անդրանիկ օրհնութեամբ ի հարազատութենէ ձերմէ չնորհակալ լինէի ի բարեպաշտութենէ ձերմէ, բայց մինչ ասու խորհրդով մալիսի ժր հասի ի հրաշալի Իւքիլիսէ վանս լուալ անդանօր զանակնունելի չարիս նիւթեալ և գործեալ լեզբալրասպան և տիրանենդ դաւաճանող դիւաչունչ Դաւիթ վարդապետէ, վասնորոյ այժմ զամենայն կարեւոր առնելիս մոռացեալ, դէպ ձախող դիպուածոյս հոգալ հարկաւորեցայ։ յաղագս որոյ այժմ ոչ կարելով առ լուրաքանչիւրսդ յատուկս գրեանս գրել աղաչեմ. ասու սիրոյ միութեան դրով միակամ բաւականացեալ, հաճութեամբ սրտի լուարուք զեղելութիւն այսր կողմանցն ի գրաբեր հարազատ որդւոյ իմոյ Մանուէլ վարդապետէ, և առ նմա եղեալ հարկաւոր գրեանս եթէ կամիք ընթերցջիք և վերահասու լերուք թէ որպէս քակեաց Դաւիթ Թիֆլիզեցի վարդապետն զսուրբ Աթոռն և խալտառակեաց զազգդ մեր և բազմից դրեալ և կնքեալ մահերսն ձեր առ իս և թէ որքան թիւմէն իքէսէ կաչառով որպէս զչարն Հերովդէս դապալաւ և իբրեւ զՍիմոն մոգն ընչիւք ստանալ կարծելով ծառայ կացուցեալ է զազատ չնորհածին մերն ձեր, վասնորոյ ահա ի գերութիւն անկեալ մերդ ձեր արտասուելով աղաղակէ առ ձեզ և հայցէ զի որք սիրէք զՏէր և որք լուսածընունդ զաւակ էք նորա օգնել նմա որև ամենայնիւ ամենախնամ բարերարն Աստուած յամենայն ժամ յոմանայն նեղութեան ձերում օգնական և ձեռնտու լիցի և դուք լերուք ողջ և օրհնեալ յԱստուծոյ և ի մէնջ։

ՌՄԹ մալիսի ԻԱ. ի Պալաղիտ։

Լ.Է. *Հայր սուրբ ևւ այլ զանազան վրտաց սարսափելի քանք ևւ պատմութիւն. զորս կամիմք յայտնել սրբութեանդ։*

Կաթուղիկոսն կայսերն դրէ յղեալ, այն գիրն անցեալ է ի ձեռն Դրիգոր վարդապետին. քանալ, և ընթեռնու իբրև տեսանէ թէ իւր անունն չկայ ի գրին, և վասն ինքեան չէ լիշեալ բան ինչ. դայն գիրն ոչ յղէ, այլ պահէ առ ինքն։ ցետ այնորիկ կոպիալ արարել յղէ կաթուղիկոսին՝ ասու կերպիւ ասելով, թէ՝ գրեա կայսերն, թէ վասն իմ

Յովսէփ կաթուղիկոսն, կտակ էր արարեալ որպէս զի՝ զկնի մահուան իւրոյ ևս օծեալ նստիցիմ կաթուղիկոս, որ և օծաւ և նստաւ. բայց Գրիգոր վարդապետն եպիսկոպոս արարեալ լղեցոյ եմ ի Վաչէնորդութիւն եւ Գրիգոր վարդապետն խանին և սորին խնամի մելիք Աբրահամին դրեալ՝ կաչաս է խոստացեալ, զի զինքն եպիսկոպոս առնել տացեն, նոքա ևս դրեալ են վասն այր և խնդիր են արարեալ կաթուղիկոսէն. սա ևս ասէ թէ երկիրն իմ է որոյ կամիմ տամ. նմին իրի, դրեաց կալսերն թէ եպիսկոպոս լղեցոյ եմ, իսկ՝ օծութիւն սորա այսպէս եղև. Գրիգոր վարդապետն ի Թիֆլիզու, վեց հազար թուման է խոստացել խանին. Լազրով ենարալին և Դաւիթ Յարեվիչի զրովն, միանգամ թազան է լղեալ առ խանն. և երկրորդ անգամ մինիշկարբաչին և մէկ թար Ալօամօնն, որք եկեալ առ խանն խնգիր արարին, լետ մեծամեծ աղմկալի խռովութեանցն, ապա թէ՝ խալէթ խալիֆալական հանդուցեալ խանին լղէ ի սուրբ Աթոռս. և ի լսել միաբանիցն հագանիլն խալեթին և ի դալն, իսկոյն մտեալ լեկնեցին, հանին զրբութիւնն և սկսան փախչել ղէպ ի տէրութիւնս օսմանցւոց. զայս գիտացեալ մելիք Աբրահամին՝ գնացեալ աղէ խանին, և նա հեծուցեալ զմուղանլու Մահմատ Հասան բէկն. բազում արամբք լղէ ի զարձուցանել զմիաբանսն. որոց հասեալ միաբանիցն պատիժ սպառնալով և հարկանելով զարձուցանէ զամենայնսն.

Եւ երեկոյեան ժամուն դնացեալ հայր գթած ասաց, զի վաղուեանն պատարագ մատուցէ և օծցի.

Իսկ ի գիշերին, ի դրունս իւրաքանչիւր եպիսկոպոսաց պահապանս կացուցեալ, զի մի փախիցեն և օծումն խափանեսցի. Եւ օծման ժամուն լեկոյս իշման տեղւոյն՝ զերիս մուհասիլս կացուցեալ՝ այնպէս օծաւ. իսկ Դանիէլ հայր սուրբն, ընդ Փիլիպպոս Ամիրալի որգւոյն Աղայ Մկրտչին, եկեալ է ի Բալաղիտ. Սա որ Կարապետ վարդապետին եպիսկոպոս արարեալ լղնաց ի մեծն Պօլիս զՔէրման բերելոյ. Դանիէլ հայր սուրբն իմացեալ, մարդ է առաքեալ զկնի նորա, լցէ թէ լմբռնեալ բերցեն առ լինքն, թէ ի Նախճուան թէ ի Ղարս և թէ յալ ուրեք, ոչ ի-չեն զանուն սորա. և զայլ ամենայն անվալել անցմունքն, մի ըստ միոջէ գրելն երկնաք. Այլ և՝ կաթուղիկոսն, Պնօրինին դիր լղնաց թէ՝ հրաման տուր Գրիգոր վարդապետին եկեսցէ ի սուրբ Աթոռս, հանգերձ ընչիւք հանդուցելոյն՝ զի եպիսկոպոս արարեալ լղեցից Ռուսաստան. Եւս Բալաղետու հին նուիրակ Յօհաննէս վարդապետն գնացեալ էր ի Բալաղէտ վասն սորա մահուէր չլինել տալ և զանուն լլուել, քանաւ չէին ընդունեալ. Նա ևս ի բաց թողեալ գնացեալ էր ի Ռուչքիլիսէ վանքն առ Դանիէլ հայր սուրբն. Եւ ի վաղճանել Յովսէփ կաթուղիկոսի, Գրիգոր վարդապետն Լազրովի ձեռամբն Բաթթալ փաչային մարդ է լղեալ զի ըմբռնեսցէ զԴանիէլ հայր սուրբն առ ի չղալ ի սուրբ Աթոռս. Եւ նորա գիտացեալ զայս՝ գնալ ի Մատէն սուրբ Փիլիպպոս Ամիրալն և անտի ի վերալ Մշու գալ ի Բալաղետ և ոչ ի վերալ էրզրումու. զի մի անկցի ի ձեռըս մարդկանց Բաթթալայ. մարդն ևս գնացեալ՝ Բաթթալ փաչային սաստակեալ գտանէ. Փաչային գնացող ևս նկն և ի սուրբ Աթոռս և աստի գնաց առ Գրիգոր վարդապետն. Այլ և ի դրամից սրբոյ Աթոռոյն լաւելի քան զտասան հազար թուման ծախեաց ի դրունս մեր խանին, Նախիջեանու կոյր Ռեալպալի խանին և այլոց. Եւ իւր խնամի մելիք Աբրահամի զիւր տունսն, զալդիսն, և զայլ ամենայն մլքերսն գրաւ եդ խանին, մինչ լետ օծմանն զտասան հազար թուման վճարեաց, և ապա էհան ի գրաւից. Եւ առաւել ևս հիւանալի. մելիքի հարսն և աղջիկն վեց օր ի խանի հարամխանէն ձնացեալ, ապա թէ այս բանս ի գլուխ հանեալ ելեալ են.

Գրիգոր վարդապետին վասն այնր եպիսկոպոս առնել կամի, զի որպէս Յովսէփ կաթուղիկոսն, Պօղոս գեսպանին ռուսաց թամարոյին հանել ետ, նոյնպէս և Գրիգոր վարդապետ ի ձեռն նոյն դեսպանին զՔէրման սորա հանել տացէ. Այլ զայս ևս զիտասցես, զի ստամպօլցի Յովհաննէս Արքեպիսկոպոսն Կարբեցի Յովհաննէս վարդապետն, ի սուրբ Աթոռէն փախեան ի գիշերի ի տօնի սրբոց Դալիանեանց կուսանացն, և գնալոց էին առ Դանիէլ հայր սուրբն՝ զի անդրէն գնացեն ի մեծն Պօլիս ի բողոքելացք իմացեալ խանին, բազամ մարդիկք

լղեցին ղկինի նոցա, ըմբռնեալ լետս բերին. արձակելով ղչղթայս ի ղոտանց. արկին ի բանս, և ցարդ այնպէս կան, և զբենեակս նոցա կինքեցին չարաչար։ Նաև՝ Ղազար Արհի եպիսկոպոսին, Պառաւեան Յովհաննէս և Ներսէս վարդապետացն, (որք առ Դանիէլ հայր սուրբն կան). նոցա սենեակն ես կընքեցին։ Այլ և, լիշեալ Ղազար, և Վրացի Ստեփաննոս արհի եպիսկոպոսունքն որ գնացեալ էին ի ներդրումի ընդ առաջ Դանիէլ հայր սուրբին ի բերել, անտի դարձել եկեալ են ի Ուչքիլիսէ վանքն. և Դանիէլ հայր սուրբն, լիշեալ վրացի Ստեփաննոս եպիսկոպոսին և զվան մահսէր չինելոյ ի Բայազետ գնացօղ Յովհաննէս վարդապետին եղեալ է ի բանտի կապանօք. և ապա խնդրանօք ոմանց հանեալ ի բանտէ։ Նոքա ևս փախեալ եկին ի սուրբ Աթոռս։ Ֆէրմանն Դանիէլ հայր սուրբին ի մեծէն Պօլսոյ հանեալ են, որ լետ քանի աւուրց հանելոց է ի ձեռս նորա։

Վերջապէս՝ Դանիէլ հայր սուրբն կաթողիկոս նստելոց է, կամ աստ, կամ յայլ ուրեք։

Ցամի Տեառն 1801. մայիսի 23 ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ԼԸ. *Դանիէլ կաթուղիկոսն առ ազգայինս ոմանս։*

Քրիստոսի Աստուծոյ ծառայ և լուսանկար Սրբոյ Էջմիածնի քնիկ միաբան որ ի

Դանիէլ Արքեպիսկոպոս սրբոյ Էջմիածնի Ռմէթ

ի նարպիս բազմամկնիք մահսէրով միաբանութեան Սրբոյ Էջմիածնի հրաւիրեալ և համահաճութեամբ՝ ազգի հայոց առաքեցեալ ի կաթողիկոսութիւն Տէր Դանիէլ վարդապետ և Արք եպիսկոպոս։ Սիրեցեալ հարազատից և քնիկ բարեկամացդ մերոց և հաւատարմացդ սրբոյ Աթոռոյն բարեպաշտ և մեծահաւատ պատուելի Ասլան աղալիդ, չհար վաքիլի մահտեսի Յովհաննէս աղալիդ, եկեղեցական և աթոռակալ Մարտիրոս աղալիդ և այլոց ձեզ եղբայրակից քաղաքիդ ձերոյ իչխան աղալից՝ լոյժ սիրով մատուցանեմ զողջոյն և օրհնութիւն և լանձն զձեզ, պահպանութիւն Աստուծոյ պահել ընդ հովանեաւ ամրածածուկ աջոյն իւրոյ անփորձ և անսասան։ Արդ սիրելիք վասն բաղում զբաղանաց մերոց, ոչ կարողացաք լաւաջագոյն ղրկել ղձիր լատուկ լատուկ ի պատասխանիս գրութեանց ձերոց, նա մանաւանդ զի և սպասէաք որպէս՝ թէ ի պատշաճ ժամանակի ի սրբոյ Աթոռոյն դրեսցուք առաւել լարմարաբար։ Այլ զի ոգին չարութեան դէն հակառակութեան ալսպէս նիւթեաց զչարիս որ եկեալ մեր աստ ի Պալաղիտս միացաք, աստուստ ես ոչ կարողանամք զարձուցանել առ ձեղ զպատասխանիս լատուկ լատուկ ըստ լատկական դրութեանց ձերոց, վասն անժամանակ լինելոյս՝ ուստի ի զալն լայդր Մանուէլ վարդապետ հարազատին մերոյ գնալ ի մեծ մայրաքաղաքն Կոստանդնապօլիս, հաղիւ ուրեմն ձեռն ձեռնհասցուք՝ ամենեցունցդ որք ունէիք առ մեզ լատուկ լատուկ գիր լատուկ սիրոյ ձերոյ նշան, գրել միայն զմի գիր և որով ծանուցաք համառօտաբար զաւետն անցան որ անցեալ է ընդ սուրբ Աթոռն և ընդ միաբանութիւն զալն թողեալ ի Մանուէլ վարդապետէն իմանալ և ի գրութեանց եղելոց ընդ նմա, իսկ այժմ զմի թուղթ առ հասարակութեան գրեալ լրապէս պատմեալ եմք համառօտաբար զամենայն անցան զոր գործեալ է Դաւիթ չիքն լցեալ հոգւովն սատանալի ուստի տեղեկանալ ունիք լընթեռնուլն զամենայն, բայց միայն այս մնալ ի պակասել որ հետ հանելոյն առ մեզ ղմահառն ի սրբոյ Աթոռոյն, և լետ առաքելոյն վասն մեր և առ մեզ Դ կինքն ինր ի վերալ մահսէրին հասարակութեան և ի վերալ Թօխաթու իչխանաց թղթոյն և ի վերալ Փիլիպպոս և մահտեսի Դասպար ամիրալից թղթոցն կինքեալ վասն մեր թէ զդա առաքեսջիք զալ ի սուրբ Աթոռս ի կաթողիկոսութիւն ի վերալ այսր Դ կինքոյն որպէս լատուկ բարեկամութեամբ լատուկ ձեռագրով իւրով եւս դրեալս մեզ և խնդրեալ թէ եկեսցես։ Այլ սակայն՝ լետ հանելոյ զգրեանսն մտեալ ի նա ոգին չարութեան, որում ոչ կարացեալ զդէմ ունիլ գրգռէ զմիաբանութիւն անկեալ ի դրունս տագնաց զի թերեւս լինքն դարձուսցէ զսրբազան կաթողիկոսութիւն ուստի անճար մնացեալ միաբանութեան՝ որպէս թէ Աստուածալին հնարք ընդ-

դէմ դիւական գործազրութեանցն Դաւթի զայս հնարեն, որ հանեալ զԲրիստոսամուխ սուրբ Վեզարէն և զկենաց փայտն սուրբ և զաջ սուրբ Լուսաւորչին, և բազմեցուցանեն գնոսա ի վերայ իջման սուրբ տեղւոյն և երջանիկն ամենեքին առ հասարակութիւն—որպէս դի մի ոք ամենեւին արասցէ զխարդախութիւն այնուհետեւ մինչեւ ցդալ մեր։ Այլ սակայն Դաւիթն այն որ նման ծուղալի մատնեալ է զսիրան իւր սատանայի, ըստ օրինակի նորին ոչ ճաշակեալ զայս սրբոցն հաղորդութեան և առաւել եւս լցեալ չարութեամբ դիմէ առ պարսիկս և վիրս և ուժգին յուսահատութեամբ և խզեալ բոլորովիմբ զձեզ խղճմտանացն չարաչար յօժարի ի մատուցմունս կաշառացն և յայնմ նուագ ըստ հնչակ հաբկանելոյ հայոց և տաճկաց բոլոր բազմութեան, աստ և անդ խոստանալ ասեն մինչեւ ցքսան և մէկ հազար թումանն գրամին, որպէս և տեղւոյս փաշայն եւս յառաջագոյն ի դալն մեր պատմեաց մեզ։ Եւ այնու գնալ գնէ ղչ.որհն երկրաւորին զսրբազան քահանայապետութիւն ի պարսից ի վրաց և լինի գալթակղութիւն ազգի, այլ վչտացեալ միաբանութեան որ յիտ ալամ ամի, ալժմ ի ժամանակիս միայն զանձինս իւրեանց ջանան ազատել ի խստութենէ նորա և ի ժանտութենէ և յայնմանէ եւս անճարանան, քանզի յամսոյս 21—ակնցի Յովհաննէս կենդանի նահատակ ասացեալ արքեպիսկոպոսն և կարբեցի Յովհաննէս վարդապետն իջևալ ընդ պարիսպն Աթոռոյն ի գիշերի և փախուցեալ մինչեւ ափն Երասխայ, ընդ լուսանալ լուսաւոտուն զինուորս յարձակեալ զկնի և խոստացեալ նոցա տալ 50 թումանն, ըմբռնել տալ առ ափին Երասխայ և դարձեալ ի սուրբ Աթոռն, յանդիմանս լուսածին քաղցրագութ ծնողին ծեծէ զգլուխս հարազատ որդւոցն—դառնութեան սրտի ալժմեան իշխանն և հրամանատուն սուրբ էջմիածնի Ստեփանոս անուն եղբայրն Դաւթի փեսայն մեծի չիք Աբրահամի և եղեալ զմինն ի չըզթալս և զմիւսն եւս զահէ կեօղ դուխաղի և կնքեալ զխուցս նոցա և սրբազանի խոստովանահայր Ղազար եպիսկոպոսի որ յայգր եկն եւս և մեր հրաւիրակ Յովհաննէս վարդապետի, հնարէ հնարս զի թերեւս գտցէ ի նոսա զդրամս, և հատուցէ զվճար անվճարելի բազմաթիւ պարտուցն։

Արդ բարւոք զմտաւ ածէք սիրելիք մեր ոչ գոլ այլ միաբան սրբոյ էջմիածնի որ կարասցէ հոգալ զհոգալիս իւր, որ անճարացեալ ի հաշատարխանու եկեալ, կարապետ վարդապետն իսկոյն եպիսկոպոս ձեռնադրեալ առաքեալ է գնալ ի Պօլիան և զսրբոյ Երուսաղէմի Դրիգոր վարդապետն նոյնպէս եպիսկոպոս ձեռնադրեալ առաքեալ է ի Մատունն առ փիլիպպոս Ամիրայն առնուլ զկամս նորա, դիտէք դուք որ բազում են միաբանք սրբոյ Աթոռոյն այլ զի ինքն չեղեւ միաբան նոցա՝ ուստի և ոչ նոքա լինին միաբան ինքեան. վասնորոյ անճարացեալ պաշտէ զճանճիկ զաստուածն Ակկարօնի և կարապետն եկեալ մնացեալ է ի Ղարս ըստ որումի չետուն աստ կամ՝ անդ զմահսար ըստ խնդրոյ նորա վկայ ստութեանն իւրոյ. վասնորոյ և ալժմ զանօրէնն գիրամանն իւր սաստկացուցեալ է ի վերայ միաբանութեան գրել յատուկ յատուկ զգիր ի Պօլիան և առ ազգն Հայոց—Թէ մեք բռնադատեալ զինքն նստուցաք յաթոռ հայրական և ոչ երբէք ինքն նստաւ ինքնակամ—այլ դուք սիրելիք խոկացէք խորհուրդ արարէք և զինչպիսի կամիցիք այնպէս արարէք։

Լուաք եւս որ Սիրեմ վարդապետն ըմբռընեալ տուեալ է ի Թիֆլիզն զչիք Դրիզորն Յովսէփի և զինչան նորա և բանագրանաց գիր մի գրեալ է առ չիք Մելիքն և միւս գիր եւս առ միաբանութիւն Թէ չիք է գա և չէ ընդունելի մեզ ամենեցս և Թէ վազճանն ուր եղերից Աստուծոյ է յայտնի։

Ի Պօլսոյ մահտեսի Նիկողայոս Ամիրայն ես զգիր առի գրեալ 27 ապրիլի Թէ պերաթ և ֆէրմանն ելանէ յայս աւուրս։

Ողջ լերուք ի Տէր և զօրացեալ նովաս ի սէր մեր։

1250 (1801) մայիսի 27.
ի Պալաղիտ։

ԼԹ. *Թուղթ Գէորգ Աղայէկովի առ դարապետ վարդապետն։*

Բարձր Արժանապատիւ Նորապսակ Արհի Եպիսկոպոսի բանունեաւ սուրբ աջոյն համբոյր և զօրհնութիւն խնդրեմ։

Ապրիլի 15 գրած սուրբ աթոռն գիրդ Էրզրումի վրայէ մայիսի 21 ստացայ լուսահոգի Սրբազանին վախճանիլն ինձ սրտի ցաւ տուաւ տրտմեցայ. Աստուած հոգին լուսաւորեսցէ, որ կտակն գրեր ես չատ լաւ արեր է. միայց որ Պետրբուրգէն Ալէքսանդր թագաւոր գիր խրկել էր դեսպանին մայիսի 13. ստացաւ ձառայիդ կանչեց, գնացի եկած գիրն ցոյց տուաւ առաջս կարդաց, գրած էր որ Արբազանը հիւանդութեան կտակ արեր է տեղս Յօհաննէս պատրիարքը կամ Դաւիթ արքեպիսկոպոսը ըլլալ տէլին. ծառայիդ ասաց որ գնա Պատրիարքին ասա, ինչ կանչ ինձի իմացում տուր տէլին. գնացի պատրիարքին ասի ճէվապ արաւ որ անկարելի բան է ես կարող չեմ գնալուս, կը խնդրեմ Դաւիթ հայրսուրբն արժանի է՝ թող նա ըլլայ ասաց, ես ալ կընդունիմ. եւոյ դուռէն ֆէրմէն ելաւ պատրիարքին վրայ սենաթոս անիս կաթուղիկոս ընտրէք տէլին. այս գիրս գրած օրն սուրբ Աստուածածնայ եկեղեցին սենաթոս մեծ կայ. քանի մի ամիրայ կայ Դանիէլին կուզեն, միացեալ էանաֆով ժողովուրդ ամենն ալ Դաւիթ սրբազան կաթուղիկոսը կուզեն. դուռնէն ալ պիտի ասեն որ Դաւիթը եղեր է նա թող ըլլայ տէլին. նա տէր իմ խրկած գիրդ զսուրսատն *) Եփրիկեան մահտեսի Յակոբ աղային ձեռքովը եկաւ լատուկ գիր գրեր էր ծառայիդ Խարսէն, քանի մը հաւատարիմ վաճառականն եկաւ՝ նոցայնէն իմացայ, ապրիլի 28 կիրակի օր Դաւիթ հայր սուրբն վեհապետ օծեր են տէլին. պատրիարքին ալ գիր գրեր էր, ժողովուրդ ամեն ալ իմացան ուրախացան. ծառայդ մահտեսի Միքէր խոնարհաբար աջոյդ համբոյր։

Խոնարհ ծառայ, ԳԷՈՐԳ ԱՂԱՅԷԿՈՎ.

1801. մայիսի 27. Խալաթիա
ղէնճիրլի խան

*) Ինձ թուի լինել Ղարէն։ 8 ք. Մ.

Խ. *Թուղթ Շուլավերցի Թադէոս վարդապետի, զոր գրէ առ Դաւիթն յաղագս կաթողիկոսութեան, եւ համառօտ պատմութիւն անցիցն Պօլսոյ։*

Քրիստոսահիմն և լուսակառոյց գերագահ սուրբ Աթոռոյն Էջմիածնի արժանաժառանգ վեհապետի, և հանուրց Հայկազեան գրոհի չնորհաշարդ Հայրապետի և նորապսակ սրբազնասուրբ կաթուղիկոսի մաքուր գարշապարացն համբոյրս մատուցանեմ մեծաւ խոնարհութեամբ և բազմաւ կարօտիւ։

Չի թէպէտ վասն մոռուան սրբազան աճեցեալ (*) Հօր մերոյ անմխիթար սգով լցեալ լոգի տրտմեցաք և աւաղելով ափսոսեցաք պակասիլն նորին առ ի լազգէս մերմէ, սակայն հաղորդելոյ քո ի տեղի նորին և վերաբազմիլն յԱթոռ Հայրապետութեան, դարձոյց զսուգ իմ լուրախութիւն, և մեծաւ խընդութեամբ ասեմ, չնորհաւոր և բազտաւոր եղիցի ընդհանուր կաթողիկոսութիւնդ նորաօծ, և բարեաւ վայելեսցես մինչև ի խորին ծերութիւն, ամէն։

Անցեալ զորպիսութենէ ի Գէորգ աղալի գրոյն ունիս իմանալ, զոր ի մայիսի դրեալ առաքեցաք, յուսամ հասեալ իցէ. զկնի այսորիկ լունիս 10, որոմնացան և բանարկուչար Մանուէլն եկն աստ, ունելով ընդ ինքեան զբազում գրեանս չարաչունչ և թունալի, յորոց զազրալի և դժոխային հոտս բուրեալ զգուեցոյց զամենեսեան, բայց ոչինչ օգտեաց չարահամրաւն այն, այլ ամօթալից եղեալ գլխակոր եղև։ Քանզի տէրամբ զօրացեալ կայսեր օրհնեալ դեսպանն՝ աղդեաց ի դուռն գերազօր Տէրութեան տեղւոյս, թէ նա է սահմանեալ փոխանորդ հանգուցելոյն. ահա հրաման եղև առ վեհն Ազգին մերոյ այսպէս, թէ Դաւիթ բահիկն որ անցեալ ամին պատրիարք ընտրեցաւ, մարդավարութիւնն և կառավարութիւնն լայտնի լինելով, այժմ Իչքիլիսայ Էջմրածնայ կաթողիկոս եղե. ուրեմն հարկիւ նորա հանին արդուհալ [1]) զընդեալ փութով լցեսցես ի Դուռն։ Եւ նա փութով կատարեալ գհրամանս նոցին. լունիս 12 տուեալ զարդն, իսկոյն դիւանադպրացն հրամայեալ են գրել զպէրաթն [10]) որպէս օրէնն է։ Ւսեմք կարապետ վարդապետն զայ՝ գեո.

չէ հասեալ աստ։ Զալս ես գիտասցէ սրբազնակատար տէրդ իմ, ղի տրհին պանծալի գերապանծ վեհն տեղուոյ՝ լոյժ ուրախութեամբ և սիրով զսուրբ աջդ համբուրէ աստելով՝ Թատէմլի [11]) և չնորհաւոր եղիցի նորապսակ կաթողիկոսութիւնդ և բարեաւ վայելեսցես մինչեւ ի խորին ծերութիւն։ Եւ խնդրեմ ասէ որպէս հանգուցեալ սրբազանն ունէր առ մեզ հայրական գթութիւն սիրով, նոյնպէս և Տէրդ իմ նոյն առնել առ մեզ։ Այժմ ոչ կարաց լաստուկ թուղթ գրել առ քեզ, վասնզի հակակոզմանքն հրաբորբոք լեալ իբրև կատաղի կրճտեն զատամունս իւրեանց ի վերայ նորա. այլ ի գալ Կարապետ վարդապետի՝ լեալ դրեցոց է, և այսքանս գիտացեալ քոյ, լեր ողջ և առողջ ի լոյզ զլուխն Քրիստոս, ի պարծանս ամենայն Հայոց՝ և ամենայն բարեկամաց քոց՝

յամի 1801. ՌՄԾ. ի մեծն Պօլիս ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն Օրթագիւղ։

և իմ նուաստագունեղ ծառայիս քո ԹԱԴԷՈՍ ծերունի արեղայիս

Զգիր Գրիգոր վարդապետին ուր և իցէ իւրեան հասուցանել աղաչեմ։

ԺԸ. *Ղազար ու եւ Մօզոճու հասարակութիւնն առ Ծօհաննէս, Մինաս եւ Ծովակիմ առաքեալս Նոիազարեան։*

Զերումդ գերազանցութեանն վեհազնեալ իշխանք Աղայ Ծօհաննէս Աղայ Մինաս և Աղայ Ծովակիմ։

Ամենողորմ Տէրանց և բարերալ աց

Դիտումունք մերս հասարակութեան առաջադոյն ծանուցեալ ձերդ բարձր աստիճանութեան, վասնորոյ հարկաւոր համարիմք, որպէս հանգուցեալ Ծովսէփ կաթուղիկոսն ընդ իւր ունելով մերս բազմամեայ նուէրքն անուն սրբոյ Աթոռոյն հանդերձ հնգից եղեալ մերս ազգի նուէրքն. ոչ՝ սակաւ մաքլաղի Գրիգոր վարդապետն ինքնակամ հաճութեամբ վատնեալ է, տեղի բարբարոս բռնաւորաց. և ազգն մեր խալտառակեալ է իւրակամ ոմն Դաւիթ վարդապետ առնելով իբր կաթուղիկոս Չանալ ինքն ալս կողմն լինիլ առաջնորդ որովհետև այժմ սուրբ էջմիածնայ դրով կալը որ ծանուցեալ են մեզ իբր Գրիգոր վարդապետն նոյն Դաւիթն իբր կաթուղիկոս եպիսկոպոս արարեալ կամի առաքել աստ տէրութիւնս ոտսաց։ Բայց մեր տեղուոյս հասարակութիւն Ղզլարուն Մօզոճուն և այլն. նոյնպիսի էլ չէրնի քաղաքացիք որպէս լալտ է ձերդ գերազանցութեան, որ ոչ սակաւ Գրիգոր վարդապետէն անվայել արարմունք. և անկարգութիւն, և մեծ ես այժմ դերանորոգեաց, լալնժամ տանէաք, ի պատիւ ազգին մերոյ և ի պատիւ հանգուցեալ Ծովսէփ կաթուղիկոսին, բայց բոլոր հասարակութիւն մեր ոչ իւիք ընդունելոց եմք այնպիսի անկարմար և ազգ ապականօղ անձն, մեզ հողնոր վերատեսուչ որպէս ունիմք հաստատեալ՝ և ընդունելով մեզ ծայրագոյն նուիրակ և առաջնորդ սրբազան Եփրեմ Արքեպիսկոպոսն, որ ունի երկուց հանգուցեալ երանելի Հայրապետաց մերոց Ղուկասու և Ծովսէփայ ծայրագոյն նուիրակական և առաջնորդական կոնդակ, մեք ևս ընդունելութիւն մեր նա ի Մօզոճ եղեալ ժամանակին, անցեալ ամսի ապրիլի 14-ումն բոլոր հասարակութեամբ ձեռք գրած եմք և ուղարկածեմք նմա. մինչդի նոյն մհհարքն. հասանելով ի ձեռն իբր Դաւիթ կաթուղիկոսին նախքան Գրիգոր վարդապետի ձեռնադրիլն և բոլոր միաբանքն ես աղաղակ բարձեալ են. թէ մի ձեռնադրիր դորայ որ ժողովրդեան հաճոյ չէ. բայց բնաւ լսողութիւն չէ արարեալ թէ ան է իմ կաթուղիկոսութեան պատճառն։ Նաև լունիսի 2-ին ևս սուրբ Աթոռոյ միաբանիցն եմք ծանուցեալ որպէս նոյն ղբանց կօպիալքն տեղդ առաքեալ, լուսամբ բոլորին ես տեղեկացեալ լինիք, որ մի առաքեցեն աստ Գրիգոր վարդապետն որ ոչ ընդունեմք. նորումս ևս լուիս 2 իւրեան Եփրեմ արքեպիսկոպոսին բոլոր ժողովուրդքս ստորագրեցմամբ տուեալ եմք գրով հաւանութիւն մեր. և բոլոր ազգս մեր Ռուսաստան բնակելոց լինել հովիւ և առաջնորդ, որպէս օրինակն ևս լանցեալ փոչտին մատուցեալ է ձերդ գերազանցութեանն իմանալոյ հաստատութիւն մեր։ Սրբոյ Աթոռոյ գրածոք ծանեաք Գրիգոր վարդապետն բարձի ևս ապաւէնութեամբ ձեր գե-

բաղանցութեանն իբր կամի առնել ամենայնին ըստ իւր կամաց և փափագանաց. սակայն գիտութիւն լիցի որ այս կողմանէ երեսից նա աստ. ոչ թողումք նմա եկեղեցի մեր և ոչ իւիք ընդունեմք. և եթէ այլ կողմն երևեսցի խնդրել հասարակութիւն մեր ձեր ղերաղանցութեան ոչ ընդունել գնա և տեղի տալ, զի պատրաստեալ եմք խնդիր Ամենաողորմած կայսերութեան ծանուցանելն ամենայնէ ղիտումունք և զօդուտն մեր. յայնժամ անպարտ համարիմք մեզ առ ի կողմանէ ձերդ գերազանցութեան. որ ծանուցաք զօդուտն և չահն ձեր բարձրաստիճանութեանն գուք գիտասջիք. Գրեցաւ 1801 ին յուլիսի 11-ին, որ է ամամք անթերի վերապատուութեամբ ձեր գերազանցութեանն խոնարհ ծառայք

Մաթէոս Խալաֆով
Մարգար գի Գալասանի
Աբրահամ Բահաարեանց
Գաւիթ Շամքարով
Գասպար Մուրադեան
Յակոբ Ազաթաբեան
Սարգիս Յարութիւնեան
Պօղոս տէր Աւագքէհեան
Ովհաննէս Վարդանեան
Յարութիւն Եղիազարեան
Պօղոս Խալխով
Աւետիս Սարգիսեան
Մարտիրոս տէր Գաբրիէնց
Գեորգ գի Մկրտիչեան
Սարգիս Գրիգորեան

ԼԳ. *Թուղթ Դանիէլ կաթուղիկոսի առ հայսն Ռուսաց Ալեքսանդր Ա.*

Թագաւորի Աստուածասիրի և բազեպայծառ Քրիստոսապսակեալ ինքնակալ Ամենաողորմած Կայսեր մեծագոյն մասին աշխարհի, բարերար Տէրութեանդ քալջատուի Սգգին Ռուսաց, և ապահինի ամենայն ազգաց քրիստոնէից՝ Օգոստոս Ալեքսանդր Պաւլովիչ, չնորհօքն Աստուծոյ նորոգ բարձրացելոյ ի գահոյս ողորմութեան.

Դանիէլ արքեպիսկոպոս Հալոց, ողջունիւ Քրիստոսական ողջունեամ զօծեալդ Աստուծոյ, և չնորհաւորեմ բոլոր յարգութեամբ գչնորհազարդ գահակալութիւնդ լԱթոռ երանելի հարցն Գոց, խնդրելով յամենակալչէն Աստուծոյ՝ բարձրութեան Ձերում զերկար կեանս.

Լուաք զլուր լաստեացս փոխման երջանիկ Կայսերն մեծի՝ մերում առաստաինամ բարերարի, և բազում արտասուեցաք, զի պակասեցաւ հովանի նորա ի գլխոյ տառապեալ աղգի մերոյ. Այլ սակայն կանխաւ ընդ նմին ծանուցեալ և զիոխանորդել հարազատիդ նորա ընդ նորա, մերկացաք ի բաց սուգ մեր և զտրտմութիւն, լուչ ածեալ ըղգրեալն թէ՝ մեռաւ նա, և ոչ մեռաւ, զի եթող նման զկնի իւր.

Յազագս մեծագոյն ողորմութեան Ձերում առ ողորմելի Ազգ մեր՝ պարտական եմք, վանորոյ և բազկատարած հալցմամբ զաղօթս առ Աստուած մատուցանեմք, զի որ ըստ կամաց և հաճոյից իւրոց փոխեաց լաչխարհէ զերանելի բարերարն ամենայնի, հանգուսցէ գնա ի խորանս լուսոյ ի կարգս լուսապսակ թագաւորելոցն, և զբարեվիշատակ ժառանգ նորին՝ ընդ հովանեաւ աջոյ ձեռին իւրոյ ամրացուցեալ, պահպանեսցէ երկար կենօք և բարձրիչխան ի վերայ ամենայն թշնամեաց. Ամէն.

Արդ՝ ըստ դրեցելումն թէ՝ «պատիւ թագաւորի զիրաւունս սիրէ». և մեք իմանամք և ճանաչեմք հաստատապէս, ողորմած կայսերութիւն Ձեր պատուեալ միշտ լիրաւանց Ձերոց և արդարութեանց, որով և ամենայն ունկն որ լսէ զայնս, իսկոյն առ հովանաւորութիւն Ձեր խանգակաթ առնէ զհոգին, և գրաւէ զսիրտն՝ դտանել զհանգիստ ենթ Ամենաբարեպաշտ իշխանութեան Ձերում.

Վանորոյ ուրեմն, աղաչեմ ունկն դիր հեզութեամբ, և լուր աղերսանաց աղօթատրիս վասն կենացդ և վասն ամենայնի՝ տան Քումդ, Տէր թագաւոր. Զի ես ապարդիւն ապաստատրս բանին Աստուծոյ, և պաշտօնեալ ս. Աւետարանին նորա վչտացեալ Արքեպիսկոպոս Հալոց, յանցեալումն ամին մինչ էի լԹոռ պատրիարքութեան Կոստանդնուպօլսի, յամին կենարարին մերոյ 1799 ի վախճանել Աբրահամեան Ծալրագոյն Պատրիարքի Տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսի ամենայն Հալոց, ի նոյն Քումին դեկտեմբեր ամսոյ 28, ըստ կանոնի սրբոյ եկեղեցւոյս Հայաստա-

նեալց ժողով դումարեալ ի մէջ ազգանչելահրաշ տաճարին որդոյ Էջմիածնի, վասն ընտրութեան յաջորդ կաթուղիկոսի և յայնմ Ալենհոդոսի. ամենեքին առ. հասարակ Արքեպիսկոպոսունք, Եպիսկոպոսունք, Վարդապետք, քահանայք, և այլ աստիճանաւորք որոք ակնկնցուց, նաև մելիքք և հարիւրապետք և իշխանք և ժողովուրդք Արարատեան դաշտին միաբան ընտրութեամբ յատկացուցեալ էին ի կաթողիկոսութիւնն սրբոյ Էջմիածնի գլխ՝ և զպատուական նզբայրն իմ զնուիրակն և զաբժանավարել Առաջնորդն կողմանցդ Վրաստոյ զնփրեմ Արքեպիսկոպոսոյն, որ և քազմակնիք մահեղ արարեալ յանուն մեր երկուցս, մատուցեալ են զայն ի ձեռն Թիֆլիզեցի Դաւիթ եպիսկոպոսին, առ քազմախումբ հասարակութիւն Աղդի մերոյ՝ որ. ի Կոստանդնուպոլիս՝ որպէս գի զի և կամեցին երկուցս՝ զմին առաքեցեն ի սուրբ Աթոռն Էջմիածին, լինել դահակալ Աթոռոյն և կաթողիկոս ամենայն Հայոց, քան գի այս է մերոյս Աղդիս քնական կանոն և ձեւ։

Ուստի և քոլոր Աղդ մեր որ անդ ի Մայրաքաղաքն ի ընդունելն զքազմակնիքն գայն՝ միաբան խորհրդակցութեամբ ընտրեցին, և զմեզ յատկացուցին լայն կոչումն։

Այլ թէ Ծովէփի Արքեպիսկոպոսն կողմանցդ մեր աղդի, գինչ գինչ անցուց ընդ մեզ և ընդ խղճալի աղդն մեր որ ի Պօլիսն՝ ի ձեռն Թամարով դեսպանին, և ընդ անտերունչ միաբանութիւնն սրբոյ Էջմիածնի՝ ի ձեռն Վ. սայ կեօրդի Արքայիկն, և որչափ մեծաւց հանդիսացուց զմեզ զամենեսին՝ մինչև բռնաբարեաց լինքն զայն կոչումն, ծանուցեջ զամենայն ևիրեմ Արքեպիսկոպոսն, եթէ քարձր Տէրութիւն Ձեր յօժարեցալ ի լսել և հաստ լինելոյ Որ ի վերայ սմին և մեք զրրկեցաք լԱթոռոյ մերոյ, և լաքսորս գնացաք, տառապեցաք և չարչարեցաք իրրե ի վեց ամսեայ ժամանակի. և այն ինչ դեռ նոր ազատեալ ի կալանաց անտի մերոց՝ ժամանեցաք լԵդովկիա քաղաք, ուր և հանդիպիլ ունէաք առ ժամանակ մի ի պաշտամունս մեր. նա լինքն Ծովէփ Արքեպիսկոպոսն՝ անուանեալն Պատրիարգ Արարատեան Աթոռոյն, և կաթուղիկոս Հայոց, եկեալ ի Թիֆլիզ քաղաք՝ վախճանի անդ ի մարտի 9։

Եւ նորին լառաջաւոր երեւելիքն միաբանութենէն Էջմիածնի, Ա/մէն գործապետ՝ որ և խոստովանահայր և կտակադիր նորին Ծովսէփայ՝ ի վախճանիլն, Անդրէաս դրագիր, և հաւատարիմքն խորհրդարանի Խարոեղ և Թաղէոս, տաքա չորեքին Արքեպիսկոպոսունքըս՝ ծանուցեալ նզբայրութեանն ի ս. Աթոռն զառ ի Քրիստոս փոխումն անուանեալ կաթողիկոսին, և տան նոցա դխորհուրդս ձեռադրով և կնքով իւրեանց՝ վասն ընտրութեան նորոդ կաթողիկոսի, թէ ընտրեցեալն ի մէնջ և հաճելի մեզ է նախընտրեալն մեր և ազդի մերոյ Գանիէլ Արքեպիսկոպոսն։

Եւ պատրիարգն Պօլսի՝ որ և ի պատճառս կաթողիկոսութեան զրկեցաւ լաթոռոյն իւրոյ և լաքսորս գնաց և տառապեցաւ՝ (որոյ գիր և կնիք այժմ է ի ձեռս մեր) սոցին համաձայնեալ, և համագումար միաբանութիւնն ս. Սիւնհոդոսին կրկին ժողովով ի մէջ ամենասպայծառ մատրանն մեծի՝ հաստատեալ էին վերատին ի վերայ մերս նուաստութեան ըղկոչումն սուրբ. վասն որոյ և հրաւիրակս առաքեալ էին վերատին լՆեգովկիա քաղաք, զերկուս վարդապետս Ծովհաննէս և Ներսէս, քազմակնիք մահեարով ևկեղեցականաց և աչխարհականաց Արարատեան դաշտին, և այլովք բազմօք գրովք Որք ևկեալ ժամանեալ առ մեզ ի 5 ապրիլ ամսոյն, մատուցին առ մեզ զքազմակնիքն, և առ իշխանն Հայոց զդրութիւնսն ի նոյն միասս Սակս որոյ և ի լայն քաղաք եղեալ քազմութիւնն Հայոց՝ հանդերձ քահանայիւք, և Գրիգոր Արքեպիսկոպոսն իւրեանց, ժողովեալ ի ս. Սահփանոս մեծ եկեղեցին, և խորհրդածեալ նոցին եւս ի վերայ ընտրութեան մերոյ, հաստատեցին համահաճութեամբ. վասնորոյ և յատկացուցեալ զմեզ որպէս օրինաւոր կաթողիկոս ազդի Հայոց, և ծայրագոյն Պատրիարգ Արարատոս. ճանապարհորդեցին զմեզ պատչաճ հանդիսաւորութեամբ ի 11 Ապրիլ ամսոյն. որ և ի 12 Մայիսի եկեալ հասաք ի սահմանս Տէրութեան Օսմանցւոց, ի Բայազիտ քաղաք, որ է մերձ Արարատեան Աթոռոյն իրրեւ 15 ժամու ճանապարհաւ։

Եւ լուաք ահա, որ Գաւիթ եպիսկոպոս առաջին մահաբարերն մեր օծեալ և նստեալ է լԱթոռ ս. Էջմիածնի, թելադրութեամբ Ծովէփ արքեպիսկոպոսի աշակերտ Գրիգոր

խալիր (խուռվալիր) վարդապետին, և Թիֆլիզու ալժմեանս Եպարալին, և կեօրգինեան Դաւիթ խանին. որք ընդդէմ կամաց ս. Էջմիածնի միաբանութեան և առ հասարակ Աղդի Հայոց, զդիր և զմարդ լղեալ առ Իրեւանու Պարսիկ իշխանն, չարժեալ էին զնա ի կամս իւրեանց" լանուն բարձր Տէրութեան Ղերում. Իսկ եթէ առ իմ արդեօք, մեզ չէ յայտնի. բայց միայն զի եղեւ այն կրկին ի վերայ առաջնոյն՝ առիթ կոչմանման Աստուածահիմն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, և պատճառ աւերման բազմաժամանակեայ հաստատութեան նորա. որով և եղաք ազգովին ծաղր և այպն կատականաց չուրջ մեօք թշնամեաց, և սուրբ հաւատն Քրիստոնէութեան նախատինք և արհամարհանք ժողովրդոց բարբարոսաց. Մինչեւ հեթանոս իշխանն Իրեւանու՝ ըստ խնդրոյ նոցա սաստիկ բռնութեամբ լարուցեալ ի վերայ անալցելու քահանայապարգ ս. Սիւնհոդոսին, ի 21 Ապրիլ ամսոյն չծանել տուեալ էր զիշեալ Դաւիթ Թիֆլիզեցի եպիսկոպոսն, զանիւ և խոչտանգանօք, ընդդէմ քրիստոնէական կանոնի և եկեղեցւոյ Վասնորոյ և մեք՝ որ ըստ խնդրոյ Արարատեան եկեղեցականացն և աշխարհականացն՝ սուաքեցեալս եմ ի բոլոր Տէրութեան Ըսմանցւոց եղեալ Արքեպիսկոպոսաց քահանայից և իշխանաց և ժողովրդոց համահաճութեամբն, մնամք աստ պանդխտացեալ։

ԵՒստի և զլէրս մեր և ընդհանուր եկեղեցւոյ մերոյ ընկալեալ լարանցն նշանակելոց՝ բացեալ առաջի ամենողորմած Կայսերութեան Ձերում, կարօտիմք Ձերումդ Աստուածազութ մեծ ողորմութեան՝ եթէ ողորմելով ողորմեսցիս վասն անուանն Աստուծոյ. Ընդ զի Տէր թագաւոր, թէպէտեւ զրկիլն չահ է մեզ ըստ Աստուծոյ, բայց զի եմուտ բռնութիւն հեթանոսաց ի ժառանգութիւնն Աստուծոյ, և պղծեաց ստուգապէս դընդհանրական Աթոռն Հայոց, լողբս արկ զմեզ և զազգն մեր ողջոյն. զի եթէ հեթանոսական իշխանութիւնն բռնասցի ի վերայ հոգեւոր կարգաց և խորհրդականաց սրբոյ եկեղեցւոյս մերում և քահանայապետութեան, և իշխանացն անհաւատն չնորհացն Աստուածայնոց, զի ում և կամեսցի ըստ հաճոյիցն տացէ զնա, արգիւնասցի չնորհն այն աղդի և եկեղեցւոյ մերում և ոչինչ, բայց միայն՝ խանգարումն կարդաց և կրօնից, եղծումն սուրբ հաւատոց, եթէ ոչ վաղվաղակի այցելութիւն Ամենարարեալ հզօր կայսերութեան Ձերում ժամանեալ լիցի մեզ ձեռնտու։ (Զայտսիկ) զամենայն՝ հանգամանօքն և բոլոր պարագայիւքն բացայայտեսյէ առաջի բարձրագոյն Ձերումդ Աստուածասիրութեան հանդիսի, առաքեցնելն ի հանգուցեալ Ղուկաս Սրբազան կաթողիկոսէ նուիրակ և առաջնորդ ընդ Տէրութեամբ Ձեր եղեալ Աղդի Հայոց, Սիրեմ Արք եպիսկոպոսն, եթէ կամք Ձեր հաճեսցի և հրաման տալցէք վասնորոյ մեք ընդ համաձօն փութացեալ կնքեմք ղրանս, և վերանամք մշտապարտաւոր աղօթարար՝ վասն կենաց և վասն ամենայնի բարեբախտութեան Ձերոյ. սպասելով չնորհաց և մարդասիրութեան ողորմած և բարերարի Տեառնդ։

Ողջ լեր և զօրութիւն Տեառն ընդ քեղ միշտ. Ամէն։

1801. Յուլիսի 22
ի Բալազիգ։

յոյն. *Թուղթ միաբանից ս. Էջմիածնի առ Հաշտարխանցիս. եւ այլն.*

Ի լուսանկար սրբոյ գահիս Էջմիածնի պաշտօնէից լնպիսկոպոսաց՝ սիրով և օրհնութեամբ բազում և Քրիստոսահոտ սրբոյ տեղւոյս հոգեպարար չնորհիւ ողջոյն ժամանեսցէ սիրելեացդ մերոց ի Տէր, և հարազատ որդւոցդ սրբոյ Աթոռոյս, ի Աստուածախնամ քազաքսդ ի Հաշտարխան, ի Ղըլլար և ի Մօզդօք բնակելոց, սրբասուէր քահանայիցդ, բարեպաշտ և ազնուամեծար իշխանացդ, ի բաւասէր դատաւորացդ, իմաստնախոհ վաճառականացդ և համայն օրհնեալ ժողովրդոցդ ի Տէր խնդալ։

Գիտութիւն լիցի պատուական սիրելեացս մերոց, դի երեքին բազմաձեռնակ Թուղթք ի լերից քազաքացդ լամենեան լուսնիսի գրեցեալ առ մեզ, հասին ի ձեռս մեր. և ընթերցեալ ծանեաք զառ ի նոսին լայտնեալ ղդիտմունս ձեր. Նախ՝ եթէ ըստ գաշնագրութեանն մերոյ առ Կոստանդնուպօլսեցիսն՝ զձայնակցութեամբ նոցա ընտրեցեալ կաթուղիկոսն ընդունիք, և երկրորդ՝ թէ մեք

ասասցուք օրինաւոր կաթուղիկոսին, որ զԳրիգոր վարդապետն ոչ կացուսցէ ձեզ Առաջնորդ՝ զի չէք ընդունելոց զնա և այլն։ Արդարև դուցէ անտեղեակ գոլով պարագայիցն անցեալ իրակութեանց՝ միամտութեամբ ասացէք էք գրեալ ապա ծաներուք փոքր ի չատէ ղորպիտութիւն եղելութեանցն, որով մարթասջիք իմասանար սր ընտրութիւն առնել ընդ մէջ օգտին և վնասուն։

Արդ՝ յետ առ Աստուած փոխեցման Տէր Ղուկասու սրբազան կաթուղիկոսին մանէբս գրեցաք ի Կոստանդնուպոլիս, և առաջնորդեցաք նոցա դոմանս երևելի Արքեպիսկոպոսնս ազգի մերոյ, զի զմինն ի նոցունց ընտրեալ առաքեսցեն, բայց անդանօր վէճ և աղմուկ անկեալ ի մէջ կարգաւորաց ընդ կարգաւորաց և աչխարհականաց ընդ աչխարհականաց, այնքան յաճախեցաւ չփոթութիւնն, որք երկու արքեպիսկոպոսք և բազում աչխարհականք առաքեցան յաքսորս։ Եւ զկնի այնց եղելութեանց կոչեցաւ անուն կաթուղիկոսութեան ի վերայ Տեառն Յովսէփայ Արքեպիսկոպոսի կողմանցդ. յանուն նորա հանեալք եղեն (ֆէրմանք) և հասին ի սուրբ Աթոռս, և այն ինչ նա ելեալ ի բերկրէդ դիմեաց լալկոյս՝ և մեք յօրէ յօր սպասէաք գալոյն նորա առ սուրբ Աթոռս. հասեալ նորա ի Թիֆլիզ քաղաք՝ վախճանեցաւ անդէն։ Առ որ կրկին ես վարանեցաք ընդ անդլուխ մնալն սրբոյ Տանս և մեր. և գրեցաք զմահէր հրաւիրանաց առ Դանիէլ Արքեպիսկոպոսն ի Թօխաթ, ժամադրութեամբ փութանակի գալոյ և հասանելոյ. բայց իբրև յամեցաւ նա, և ի տեղս ղանազան մնասիւք մնասիւր սուրբ Տունս, և բազումք խորհէին և խօսէին և բարւոք դասէին չուտով գոք գլուխ կացուցանել սրբոյ Տանս զի մի խաղառ մնասեսցի. յայնժամ և ի Թիֆլիզու մնասար և թուղթք եկին առ միաբանսն և երկրականսն՝ եթէ հանդուցեալ Յովսէփ Սրբազան Հայրապետն կտակեալ է զկնի իւր կամ զՅոհաննէս Պատրիարքն Պօլսոյ, կամ զԴաւիթ Արքեպիսկոպոսն կոչել յԱթոռ Հայրապետութեան, զոր և ի գուռն Օղոստափառ կայսեր դրեալ էին։ Եւ զի Յոհաննէս Պատրիարքն հեռի է, որոյ դալն յամենայն, վասն տկն զներկալ եղեալն կացուցանել պարտ է անյապաղ։

Ընդ այս դրութիւն նոցա եթէ մեծամեծքն երկրիս, և եթէ միաբանքն սուրբ Աթոռոյս հանդերձ ժողովրդեան մերազնովքն հաճեալ և համակամեալ լուսկացուցաք զգեբարդոյ Հայրս մեր ի Հայրապետութիւն, զոր և օծաք յԱպրիլի ԻՐ, և հետևաբար մահէր գրեցաք ի Կոստանդնուպոլիս, որոյ դեռ չհասեալ անդ՝ հրամանաւ ինքնակալ մեծի կայսեր և հոգատարութեամբ դեսպանին զՖէրման և զպէրաթն առեալ է Պատրիարքն յարքունուստ՝ և սպասէ մահառատարին յանձնել զի բերցէ։ Եւ չրջակալ ժողովուրդքն ես հաճեալ հաւանեալ են ընդ Հայրապետութիւն սրբազան վեհին մերոյ. և թէպէտ Դանիէլ Արքեպիսկոպոսն եկեալ ի Պալաքիտ՝ և ոչ անսացեալ թղթոց սրբազան վեհիս և մեր առ ի գալ ի սուրբ Աթոռն և նստել պաշտօնով. անդուստ գալլ է այլ բանս գրէ ի բազում տեղիս, որ թերևս և առ ձեզ գրեալ իցէ՝ թէ սրբազան վեհապետն մեր ծանրադունեղ գրամս իցէ ծախեալ առ իշխօղսն, և լեկեղեցական անօթս ձեռնամխեալ. այնօքիկ աւելորդ զրպարտութիւնք են. զի եկեղեցական կամ արտաքսական անօթս մինչև ի մի դրամ ձեռնամուխ չէ եղեալ ամենևին. և դրամք որք խարճեցան՝ այն ըստ սովորութեան առաջնոցն է՝ որ ի կարդիլ կաթուղիսին հարկէ ընծայել տալ իշխողին, բայց յայս նուազ որ փոքր մի աւելի եղև, այն ի պատճառ Դանիէլ Արքեպիսկոպոսի յետացմանն էր, զոր երկրորդապէս գրեալ եմք ի Կոստանդնուպոլիս՝ աստ երկարութիւնն ձանձրութիւն բերէ։

Եւ արդ՝ այսքան ինչ անցք անցեալ ի լերկուս ամս, և բազմապատիկ նեղութեամբք նեղեալ մեր և մնասեալ սրբոյ Տանս, այժմ ներկալապէս սրբազան Հայրապետս չնորհեցեալ եղեւ մեզ գլուխ և կառավարիչ, և որ միանդամ ընտրեցեալ և օծեալն է ոչ փոփոխի. ապա որով դիտմամբ է սիրելեացդ այնպէս գրէլն՝ մեզ ոչ է գիւրահասկանալի. մինք կրկին վրդովմամբ և չփոթութեամբք օգուտ ինչ է լառաջանալոց, ոչ. այլ մնասք ի վերալ մնասուց, և դառնութիւնք ի վերալ դառնութեանց։ Ապաքէն խնդրեմք ի բարեպաշտ սիրելեացդ, զի վասն Աստուծոյ և վասըն չինութեան սրբոյ Աթոռոյս՝ և խաղաղութեան խղճալի Ազգիս, զտարաճալնու-

թիւն բարձրիք ի միջոյ. և Քրիստոսապատուէր սիրով և հեզութեամբ հպատակեսջիք հովուապետութեան նորապսակ սրբազան կաթուղիկոսիս, զի լեցուք միակամք և համաձայնք, և միաբան աղաչեսցուք զմարդասէրն Աստուած վասն այցելութեան աղգիս մերոյ և հաստատութեան սրբոյ Աթոռոյս, որ է պարծանք մեր և ձեր ի Քրիստոս: Իսկ վասըն Գրիգոր վարդապետին առաջնորդ չինեալ ձեր՝ զոր գրեալ էիք սիրելիք մեր, լաւագս նորա՝ հանգուցեալ Յովսէփ կաթուղիկոսն ի կենդանութեանն հուչակէր յաջորդ կարգելն իւր, որպէս և ի լեալնելն իւր ասի՝ կարծեմք թէ ձեզ եւս բերանով ասացեալ էր. ապա լետ վախճանման նորա՝ և լետ օծման սրբազան վեհապետիս մերոյ՝ մինչ եկն նա ի սուրբ Աթոռս հանդերձ դիօք հանգուցելոյն և կալիւքն, թուղթս էր բերեալ ի կառ Ֆէօտրիչ մնծաղօր կուսակալէն առ սրբազան կաթուղիկոսն մեր և առ իշխօղն Երևանու, որ ձեռնադրեալ զարձցի լետս: Եւ զի ըստ այնմ՝ որ ի միոյ կողմանէ խնդրոցաց ստիպումն կալր, և ի միւս կողմանէ Երևանու իշխօղին փոյթն՝ որ հարկէր չուտով զարձուցանել. վասնորոյ և սրբազան վեհն ի հարկէ ձեռնադրեալ եպիսկոպոս, և զերեսուն և զերկու աւուրս հաղիւ պահեալ զարձոյց Առաջնորդական կոնդակաւ ի վերայ Ժողովրդոցդ, և թղթով առ Օգոստափառ մեծ կալսրըն. պատուիրեալ նմա լամենայնի խաղաղութեամբ և սիրով վարիլ ընդ նուիրակին սրբոյ Աթոռոյս: Եւ ի կոնդակին դրեալ՝ ի չորս ամս միանգամ դալ ի սուրբ Աթոռս, և ցուցանել զհայիւս արդեանց Աստուածածսէր Ժողովրդոցդ: Արդ՝ ի կողմանէ նորա որ մեզ էք դրեալ, մեք չունիմք բաւականութիւն առ այն վճարել ինչ. այլ եթէ հաճելի լինիցի ձեզ Գրիգոր վարդապետն կամ ոչ հաճելի, զայն գրեսջիք սրբազան կաթուղիկոսին մեր, և ղցաւ ձեր և ամենայն ծանուսջիք, որ բաւականացի դարման տանել օրհնեալ Ժողովրդոցդ: Եւ մեք կամիմք և բաղում պաղատանօք հայցեմք յԱստուծոյ ամենակալէն՝ ընդ հովանեաւ թեւոց արարչական խնամոց իւրոց պահպանել զձեզ խաղաղութեամբ ապահովս և անգալթակղելիս և զարդարել բարեկարգութեամբ, և զայն համարիմք մեզ բաւական միխիթարութիւն. ողջ լերուք: Եւս առ յարգելի եղբայրն մեր և նուիրակն ձեր Եփրեմ չնորհազարդ Արքեպիսկոպոսն թուղթ գրեցաք, և ընդ մահսարիս առաքեցաք առ ձեզ, հասուցանել առ նա ուր և լինիցի: Գրեցաւ յամի Փրկչին 1801, և ի յուլիսի 31. ի սուրբ Աթոռս Էջմիածին:

Աթոռակալ Սիմէօն Եպիսկոպոս: Ժամ օրհնօղ Ալեքսան Եպիսկոպոս: Վարժապետ Յովակիմ Եպիսկոպոս: Ստեփաննոս Եպիսկոպոս: Շիրաչի Գրիգոր Եպիսկոպոս: Աստուածատուր Եպիսկոպոս: Սողոմոն Եպիսկոպոս: Բարսեղ Եպիսկոպոս: Թագէոս եպիսկոպոս: Յոհաննէս եպիսկոպոս: Ամբարդար Յոհաննէս եպիսկոպոս: Գրիգոր եպիսկոպոս: Կարապետ եպիսկոպոս: Յակոբ եպիսկոպոս (որ արաղ խմողի եղբայրն) Աւետիք վարդապետ: Աբրահամ վարդապետ: Յօհաննէս վարդապետ: Գէորգ վարդապետ: Աբրահամ վարդապետ: Յովհաննէս վարդապետ: Զաքարիա վարդապետ: Յարութիւն վարդապետ: Ալէքսանդր վարդապետ: Լուսարար Ղուկաս վարդապետ: Եսայի վարդապետ: Վէքիլ Սահակ վարդապետ: Փիլիպոս վարդապետ: Աբրահամ վարդապետ: Մարկոս վարդապետ: Տնտես Կարապետ վարդապետ: Վարժապետ Յակոբոս վարդապետ: Յակոբ վարդապետ: Պօղոս վարդապետ: Ժամասաց Մատթէոս վարդապետ:— Մելիք Աբրահամ աղայ: Լուղրաչի Կաբրիէլ աղայ: Տէր Յովհաննէս: Տէր Գրիգոր: Պարոն Տարսեղ: Պարոն Նիկողոս: Պարոն Զօհրապ: Պարոն Յովհաննէս: Պարոն Սուխիան:

Խոր. *Թուղթ Յովակիմայ Աղազարեան առ հասարակութիւնս Աստրախանու եւ այլն:*

Իմ ամենապատիւ Սիրելի Համազգի Հասարակութեան Ասաարխանու ի Ղղլարու ի Դէրբէնդու նորահիմ, Մօզդօկու Նոր Նախիջևանու և Ջերնօվու ալեհինքն ըստ հնոյն Գրիգորապօլսոյ:

Որոց Ազնուատոհմ չտափ և օրէր օֆիցերաց պատուելի վաճառականաց հաւատարիմ արհեստաւորաց, և առ հասարակ ամենայնիւ վաստակասէր ժողովրդոց մեծաց և փոքունց:

Մատուցանելով զխոնարհութեան իմոյ և զմեծարմութեան ողջոյն լայնի առնեմ ճշմարտապէս որ ի գալն աստի Դրիդոր եպիսկոպոս կոչեցելոյն և ի տեսանելն իմ զնմա ի տան իմում ի ներկայութեան երէց եղբօրն իմոյ, պարոն Արապետով փեսալիս. քննեաղ Դաւիթ Արղութեան Թօղորուկովին. և Դրիդոր Մօռզոլին. ըստ ամենայն մարդկային սիրոյ հեզութեան խոնարհութեան և միաբանութեան խօսեալ ընդ նմա. խնդրեցի աղաչեցի և աղերսեցի զարձուցանել զչարիսն իւր ինքեամբ միայն զԴաւիթն կաթուղիկոս կացուցանելն վրդովելով զժողովուրդն ի Մօղոզոկ մտանելն. ի Նորն Նախիջեւան մտանելով զհաստատակութիւնն անտի թէ ահացուցանելով և թէ չողոքորթելով առ ինքն քար չէլն, և աստ ի ղրունս իշխանաց առաջացուցանէր զիւր կամս և զառաջադրութիւնս, զորն ստութեամբ զորն աղաչանօք. մինչ ցայն վայր, որ հասոյ եղեւ պարոն ղէնարալ Կառլ Ֆէգրիչ Կնորինղին ըզՍրբազան Եփրեմ Առաջնորդն մեր ընդ ոտանց մերազնէցն կոչել առ ինքն և պատուիրեալ Դրիդոր վարդապետին եւս առ ինքն գնալ. իցէ թէ կամ հաչտեցուցանել և կամ մերոց և նորա իրաւանցն վերահասու լինիլ. և մինչ ժողովեալ էաք առ նմա ընդ ժողովոյն մերոյ լրումն էր Սրբազան Եփրեմն. Դրիդոր եպիսկոպոս կոչեցեալն. պարոն Դրիդոր Յօռզոմն պարոն Մարտիրոս Կոստանդինոմն պարոն Դրիդոր Նիկիտինն պարոն Դրիդոր Շուկուճն պարոն Բարսղամ Վասիլիչն տէր Մինաս և տէր Մելքիսեդ քահանայքն Ազալ Մինաս եղբայրն իմ և ես ըստ առաջնոյ հարցմանն վերուիչնալ պարոն ղէնարալին թէ ուր է եկեալ, վասն ի՞նր, ժողովուրդք թէ Ձեր բոլորից հաստատութեանց և թէ մերոց գնաց և ղկացուցեալ կաթուղիկոսն իւր գիտել և ճանաչել ոչ կամին. և թէ վասն էր ի մտանելն իւր ի Մօղոզոկ զայնպիսի գործ է արարեալ. և թէ զիարդ ընդդէմ կամաց հաստատութեանն առաջնորդ ցանկալ լինիլ. վայր ի վերոյ ինչ պատասխանեաց զորն կարկատուն ստութեամբ և երեսին լեզուով և անպատասխանի մնալով. Ուստի ես միաբան ընդ մերոյ լիչեալ անձանց ղբերանն իմ բացեալ պատմեցի զամենայն անցեան ճշմարտութեամբ լանդիմանելով նմա ի ներկայութեան պարոն ղէնարալին թէ ընդէր և որով իրաւամբ լանդգնեաց և մի լարեղալ դոլով ինքեամբ ի վերայ Աղղի կաթուղիկոս կացուցանել և այնու զանանդուրթիւն և զպայմանս ազգին քաքտել որոյ իշխանութեամբ համարձակեցաւ զբարիս ծովէփալ որք էին տուրք ժողովրդեան ծախել և այնու վրաց իշխանաց և երեւանու խանին կաշառակուր առնել. չորս եպիսկոպոս գերագոյն քան զինքն ի Թիֆլիզ կալանաւորս պահել. սուտ և չղեղալ լանուն ծովէփալ կտակ չինեալ և պարոն զննարալին և այնու խարեալ. զտուրհանղակս Արքալականն արգելեալ ի նոցանէ ափշաւակութեամբ գալոց գրեանս ստանալ և անարգ գործով իւրով նոցին զկնիքս բանալ. և վերջապէս ի Մօղոզոկ մտեալ ղղօրս ի կոմէնղաթէն և ի պօլիցմեստրէն առեալ և նոքօք ժողովրդեան գտուն վանն իւր դատարկել Առաջնորդարանի զդուռն և զփականս խորտակեալ. զաշխարհականս և զքահանայս ի զուր դատապարտեալ և զնոսա ի բանս արկեալ, ահացուցանելով նոցա ասել թէ դուք բունղովչիկ [12]) էք և զձեզ կնուսի [13]) եմ հաստուցանելոց. որ ըստ այլոց արարմանց քոյոց՝ աստղի Դրիդորին թէ ոչ քոյ կացուցեալ Դաւիթն եմք աղդաս ողջոյն կաթուղիկոս ճանաչելոց, և ոչ զքեզ եպիսկոպոս և առաջնորդ ի վերայ մեր ընգունելոց, այլ թէ անմեղ և զրկեալ Դանիէլն է մեր կաթուղիկոս որ Ամենարդար հրամանաւ կալեր մերոյ լինելոց. և Եփրեմ հեզ և խաղաղարար Արք եպիսկոպոսն վիճակիս մերումի Առաջնորդ մեզ ունելոց, որով կեանք այժմ և բաւականանամք. զայս լուեալ Դրիդորին լուռ և նկուն մնաց առաջի արդարակշիռ լիչեալ պարոն ղէնարալին և յամօթով. եղ և գնաց որ զկնի այս անցիցն տեսցուք թէ յայտնեսէ այլ օգնութիւնս ուր է դասանելոց։

Իսկ մեք ամենեքեանքս լուսով Ցեառն եմք. որ թէ Ողորմած կայսրն մեր, և թէ իշխանքն բոլոր մեզ գԴանիէլն ի կաթուղիկոսութեան են չնորհելոց և զբարեբարոյ Եփրեմն ի մշտնջենաւոր Առաջնորդութիւն որ զայս ամենայն ի կատարեալ հանգստութիւն և միամտութիւն սիրելեացդ իմոց գրեցի. որով կացջիք և մնասջիք բոլորքդ ի նոյն հաստատութեան և անվրդով ի միաբանութեան ձերում և թէ Դրիդորն ինչ գրեսցէ

յայժմհետէ, ստուերիւն և հոգմարածուիլնս համարեալիք. և լինել պարոն զենարալն մեզ ամենայնում իրաւունս ետ և Գրիգորին արհամարհեաց. զի ի վերայ այսր և Աղալ Յոհաննէս եղբայրն իմ իսկ է ընդ բոլոր մերոյն էիցին Պետրբորգու.

1801 Սեպտ. 25 ի Մօսկով

Մնամ ձերոյ պատուելուքեան միշտ հաստատիմ ձառայ ՅՈՎՍԱԿԻՄ ՂՂԱԶԱՐԵԱՆ.

Իրինաս Ազազարեան
Մատին Կոստանդինիչ
Գրիգոր Մօռօզով
Գրիգոր Շուլկով
Ւարաղամ Սերեմբրեակով
Գրիգոր Նիկիտիչ.

Խե. *Դանիէլ կաթուղիկոսն առ Շիրեմ Արքեպիսկոպոս:*

Մեծի և հոգեհատոր Հայբապետիս եղբօր Ցեառնդ Սրբազան Եպրեմ Արք եպիսկոպոսի խոնարհութեամբ և ջերմ սիրով մատուցանեմ զողջոյն ազէկիղեալ արտիւ.

Ա.ետալուր և ազատարար ձայն համբաւոյ գրութեան վերաղնէիդ նախ գրեալ ի սեպ'' 24. և ապա ըստ հաստատութեանն Ամենողորմած Կայսերն, գրեալ ի նոյն ամսոյ 30. և ի հոկտեմբեր 8. հասին առ իս իրերաձայն Փրկչին առ Ղազարոս ընդ ծանր վիմով զօղեալս. և ես քանզի ի սուրբ յօժելոյն պատկերացելոյ Երկնաւոր օծելոյն Աստուծոյ ճշմարտի Ցեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. նոր Սօզոմոնի օրհնեալ Կայսերէն և Աղալ Յոհաննէս Աստուածասէր օրհնեալ իշխանէ և ի քումդ սրբազնութենէ յարեալ և եւի ի տառապակրութենէ ծանրութեան վիմին. այլ՝ մեամ տակաւին հրամայել ձեզ ասելով լուծէք զգա և թողէք երթալ. քանզի գեառնկարծիք չնորհ մարդասիրութեան ձերոյ ոչ յայտնեցաւ առ Երեւնոյս խանին. և կամի ի Գալիս. և զոր ունէի զկարծիս լեալի[14]) թամամրովէն. արդ թէպէտ բարձաւ և միամտեցայ, և Քերմանն Դաւթի զոր հաննալ էր նա ինքն էլչին անարկեալ. որպէս զի յայտնեացէ զՇնորհ մարտութիւն գրութեան մաճոնեի Նիկողայոսին զոր առաքեալ եմ առ սրբազնութեան քոյ. ահա բերեալ ի Կարին Կարապետն և տարաւ, այլ ոչինչ է այն. միայն յայտնել հրամանն օրհնեալ և սուրբ Կայսերն և Սրբազնութեանդ ի Գալիս ծնանի լոյսն գերազանցիկ և ամենայն ինչ կատարեալ լինի. և զուք գիտէք թէ զինչ արարիք. և ես մեամեալ և յարուցեալս գիտացից թէ զինչ արար աստուած ձեօք լուսերամօք. և արդ՝ որպէս զան զայս յառաջ գրեցի թէ ֆերմանաւ գնամ ի Կարին յայսմ աւուր ելանելոց էի յորժամ հասին առ ինքեանս պատուղ գրախտին Աստուծոյ գրութեան օրհնեալ համբաւոյ բերկրութեան. և վասն պօլսեցոց միամտեցուացեն զքեզ գրութիւնք ներաէս վարդապետին և Սրբոյ Աթոռոյն 6 եպիսկոպոսաց գրութիւնքն. և եթէ ոչ էր երկիւղ ի խանէն և՝ ի բանաւորաց երկրաւ իսկ փութացին (և զոր գրեալ էիր վասն գերագնիւ Աղալ Յոհաննէս հայրապատիւ ւնծութեանն և վասն Աղալ Մինասին և աղալ Յովակիմին Աստուածասէր մեծի իշխանացն որում երախտապարտ եմ ոչ ես միայն այլ և որք տեսցէ տէր զկնի մեր յաւիտեանս ժամանակաց և քանզի ձայնք չնորհակալութեան տեառդ ըստ անուան լուսաւորչին լերկինս ձայնեաց օրհնեալ եղիցին աստ և ի հանդերձեալն ամենայն փառաւորութեամբ պատուեալ վասն ճանապարհորդութեանս ընդ մերձ և վասն միայնութեանս ըստ պատշաճին գրելս տկարանամ քանզի միայն իմ և փաւկքն եկեալ օրն ելանելոյ ստիպեն, վասն որոյ տկարանամ առ ձեզ և լուսս կալսեր քան թէ գրով. Թէպէտ ունիմ ղդրեանս ի պիտանի մեաքանից դրեալ՝ զերեան անձեռնհաս եմ առնուլ և լղել. և գլեանքն իցէ թէ ի Կարին պիտոյացին. Եւ վասն իմ Կարին գնալոյս, գուցէ թէ Գալեցիք զժուարացին լինէն, ականալ գնամ. որպէս և յայտ արացեն քեզ գրութիւնք Ներսէս վարդապետին զոյս առաքեալ եմ առ սրբութիւնդ. իսկ և վասն՝ չահեցօզութեան իմոյ զպօլսեցիս, դուք բաւական չահեցիք և վասն կատարութեան իմոյ և բարկ ընթացից և դատելոյ. և այժմ բաւական լիցի և դատաստան ձեր ըստ լուսաւորութեան ձերոյ ղղատապարտելոյս ի խաւարամտաց, ոչ ապաքէն և զուք ես գլուխ միաբանութեան մերոյ զոր տէր Յիսուս Քրիստոս ընդ երկայն աւուրս ծաւալեացէ զկեանս

քոլ է օրհնեալ Աղնիւ. Աղալիցն. որպէս զի կանգնեալ հաստատեցի լարկն Սրբուքեան ղանկեալն է կործանեալն, է ամենքան աւերեալ է ապականեալ է միաբանութիւնն մինչ զի երանեալ Սրբազան Սիմէօնն կենդանասցի հազիւ զալ լառաջին կանօնն. է ես քանզի ոչ ինչ որպէս գիտես ոչ ապաքէն միաբանութեամբ ընտրելոց կարգաւորի է ամենայն՝ առանց սրբութեանդ, այլ իմ Երկիւղ Աստուծոյն է կամակոր է ոչ ոք, ամենքան երկնչիմ ի նմանէ է ի նորին Գէորգէ մինչեւ կարծել թէ խորամանկեն գնորակութն(*) է ըզքրիստոսապըսակեալ հրաման կալուցն. որ անհնարինն է եւ ալամ Ֆէրմանէ. ի կարծիս լինիմ վասն նորա բայց մեր նեղամիտքն լահէ երկարելոյ բանին ոչ ինչ գիտացեալ ի սրբութենէ է ի կողմանցդ մինչեւ ի հոկտեմբեր. 12. Թուղթ խնդրեալ են առ տեղուոյս փաշային նոքա Ֆէրմանին տուեալ իցէ թէ երեանուտ ցուցեալ ե՞ն արարեալ գնենղել ինձ մելիքին է խանին է տանել բռնութեամբ է այժմ ինամք օգնութեան ձեր լատուծոյ է ի կալսերէն ղտանել զիրկութիւն միայն զի օրհնեալ է սուրբ կալսեր իմոյ ուքաղն է ի Պօլսոյ Ֆէրման եկեալ ի ձեռս է ամենայն ինչ թարց աչխատանաց ստանամք համային աղդով ուրախացեալ. տեսցես դու է Աղալ Յովհաննէս Աղնիւն, զիարտս անուան ձերոյ է բարեհիչատակութեան. նմանապէս է Աղալ Մինաս է Աղալ Յովակիմն. է մինամ ոգիութեան ձերոյ մշտապատրաստ աղօթաւոր ծառալ անպիտան վասն Տեառն. Դանիէլ արեղալ միաբանիս սրբոյ էջմիածնի նուաստ եղբօր քոյ.

1801 Նոեմբերի 18.
Ի Բալագէտ.

ԽՋ. *Թուղթ Դէորգ Աղայէկովի առ Դաւիթ*

Աստուածակոչ Հայրապետ ամենայն Հայոց... Տէր Սրբազան Տէր մեր վեհ Վաւիթ.

Արդ լինի մեծութեան քումմ ի վախճանիլ լուսահոգւոյն Յովսէփայ կաթողիկոսի, բարեպաշտ կալարն մեր ամենայն Ռուսաց՝ գրեալ էր տեղւոյս էջմի թամարով դեսպանին թէ՝ հանգուցեալ Յովսէփ կաթողիկոսն կտակ է արարեալ որ իմ տեղս Դաւիթ սրբազան նստցի Հայրապետ ամենայն Հայոց. ահա տամ քեզ հրամանն որ դու այդր ծանուցես Օսմանցւոց թագաւորին, և ֆէրման պէրաթ հանես չուտով օր մի լառաջ լղես Դաւիթ սրբազանին. վասնորոյ է մեք ըստ հրամանի թագաւորին մերոյ զֆէրման պէրաթ հանեցաք, է եկն կարապետ վարդապետն է առեալ եքեր. մեք ակն ունէաք թէ խաղաղութիւն եղեւ է ուրախացաք. և լսեցինք թէ Սիրեմ վարդապետն անգ ի Մօսկով չորս գրագիր է նստուցեալ. է աչխարհ ամենայն լցեալ է աղաչանագրովն՝ թէ ի Հնդիկս մանաւանդ ի քաղաքս Պօլիս, և թէ ինչ ինչ բարեւրանս է դրեալ ի Տէրութենէդ՝ ոչ համարձակիմ գրել, և անդէն մահասր է ժողովեալ ամենայն թեմիցն իւրոց, է թագաւորի օծմանն գնացեալ է ի տուուի (*). և ի օծութեան թագաւորին մատուցեալ է Դանիէլ վարդապետի գանգատանաց գիրն առ թագաւորն՝ վասն Տէրութեանդ հանդերձ ժողովրդեամբն.

Յոհաննէս, Մինաս է Յովակիմ տղայքն լառաջընթացք գոլով, ծանուցեալ են թագաւորին, ղուսահոգւոյ կտակն սուտ են հաղեալ, եւս առաւել ծանուցեալ են թագաւորին՝ թէ լեկեղեցին անօթ չէ թողեալ, զամենայն ջարդեալ է տաճկաց տուեալ, է ձեռամբ տաճկաց ղօրքապետութեամբ[15]) է օծեալ կաթուղիկոս. է վարդապետաց և եպիսկոպոսաց ամենայն օր տաճկաց տալ ծեծել, և Գրիգոր վարդապետին դատաստան է խնդրեալ և կայ ի գատաստանատունն, միայն և Ֆնօրինին փարալով հաճեցուցեալ են է նա եւս վկայութիւն տուեալ է թէ՝ սուտ է Յովսէփի կտակն.... հաւատացեալ.... գրեալ է ասա թամարով դեսպանին իւրոյ, հրամայեալ է թէ չուտով թագաւորին ծանուցէք և ֆէրման հանեցէք ի վերայ Դանիէլին... որոյ ֆէրմանն կալ պատրաստ....

Յատուկ մին մահասր եւս գրել տացես միաբանիցդ՝ է տեղւոյ իշխանաց և քահանայից... է քոյդ որպէս ատիլն (առնելն ?) ծանուցես... Յատկապէս կարապետ վարդապետին է երկու վարդապետաց եւս ընդ նմա՝ հանդերձ ձեր խանի թղթով է ընձալիւք

լղեսցես առ թագաւորն մեր և դատաստան խնդրես ի նմանէ... զի նա լուժ ղթած է... Աստուծով թշնամիքն պարտաւորելոց են.... ահա տես ղու որ չես խաբար. չիք ներսէս վարդապետն մէկ մեծ խուրջին ոսկի և ե. րօխչայ իրիսմալ չալ ի մէջ բամբակի եղեալ բերեալ աստ ղհետ իւր և կիսմրիւքչիքն [18]) րացին տուսին և հիացան. տօխսան (90) քիսալ եռուն ի ղուռն թագաւորին. զպատրիարք Յօհաննէս վարդապետն աքսորեցին ի Թօխատ, և զԴրիգորն բերել տուին արարին պատրիարք, և ահա արդ պիտի տալ ի ղուռն որ Դանիէլի պէրաթն հանէ, և ղու քեղ համար խնալես. որքան փող ունիս չըխնալես. ձեռքաց լըր, և Կարապետ վարդապետին քանի մի վարդապետաց լետ չուտ ընձալիւք լղեա ի Պ. բուրգ առ թագաւորն՝ օրէնք խնդրէ.... փող չխնալես, որքան ունիս խարճեա, թէ չունիս ինքնդ վաճառես տաս, այս բանն փողով կըլլալ. Կարապետ վարդապետին ղրկես. այս բանիս տակն չը ճնաս գլուխ ելնես. Հայոց ազգն Դանիէլին ուղելն սուտ է ասեն, Պօլիս քննութիւն թող անեն, չորս ամիրալէ մադալ (ղաս) ուղղ չկալ և այլն։

Խ. Ծ. ԳԷՈՐԳ ԱՂԱՃԿՈՎ

1801. Նոյեմբեր 29.
Պօլիս։

Խէ. *Թուղթ Գէորգ Աղաէկովի առ Մարտիրոս արքեպիսկոպոս Զմիւռնոյ։*

Բարձր գերերջանիկ սրբազան հօրդ իմոյ ս. աջոյն համբոյր խոնարհութեամբ ղօրհնութիւնդ խնդրեմ.

Արդ անեմ սրբութեանդ սալիով ուղարկած սիրոյ օրհնութեան գիրդ անբաց ստացայ, ամենայն ինչ տեղեկացայ, բակնթի միջի գրեանքդ տեղն տուի, և պարոն դեսպանին արզագիրդ ձեռօքս իւրեան տուի, են նա թալեաններէն թարգմանել տուաւ, կարդաց հաւանեցաւ. հիմայ սլս փօշտիս դեկտեմբերի 15-ին արզալ գիրդ և թարգմանութիւնն պիտի խուկէ Բէտռէպուրք ողորմած թագաւորին և նա ալ իմանալ կասէ. ինքն ալ ինչպէս հարկն է պիտի գրէ։ Հիմա պարոն դեսպանին հետ շատ խօսակցութիւն արի սլս բաներուն համար. կասէ որ լառաջ թագաւորը հրամայեց Զովսէփ կաթուղիկոսը կտակ արեր է Դանիէլը կաթուղիկոս լինի, պէրաթը նորա անունը հանես ասեր էր՝ ալդպէս արի. հիմա Սիքեմը կտակը սուտ է ասելով նմանապէս շատ տեսակ խօսքեր Դանիէլը արժանի չէր վանքը քանդեց ազգը նորա չուզէր Դանիէլն կուզեն ասելով արզ տուեր է ողորմած թագաւորին. եւ նա խղճացեր է հայոց ազգին ողորմութիւն արեր է գրով հրամայեր է Զովսէփին կտակը սուտ ասելով ինձ հաւատացուցին. եւ հայոց ազգը Դանիէլին կուզեն ասելով. հիմայ հրամայեր է կաթուղիկոսութեան բանի չի խառնվիս. հայոց ազգը Դանիէլն կուզեն եզեր, նորա թող անեն ասեր է. պարոն դեսպանը դուն խմացում տուաւ որ կաթուղիկոսութեան բանին չեմ խառնվիր. հայոց ազգն որն կուզեն նորա թող անեն ասաց. ինչպէս հարկն է թագաւորին գրեցի կասէ. սլս խօսքըս դեսպանէն լսեցիւ

Եփրեմ վարդապետն ալ ներսէս եւ Մանուէլին գրով իմացում տուեր էր. Ներսէսը Պալազիտէն Աթուին փողէն 45 հազար ղուռուշով 25 հազար ղուռուշի չալ բերեր են. սլս փողը եւ չալը օսմանցուն ղուռն կաչառ տուին, Յօհաննէս պատրիարգն արտաքսեցին. և Թօխաթ մարդ գնաց Դրիգոր վարդապետը բերել Պատրիարգ նստեցուցանել և Դանիէլին կաթուղիկոսութեան պէրաթն հանեցին *). եկեղեցիները անունը լի. չատակել տուին. փողով ամենայն բանը ուզածներուն պէս արին. ոչ քննութիւն ոչ սինաթոս։ Երեւում է սլս բանըս չուտով վերջ չիլլար. հայոց ազգին մէջը մեծ խռովութիւն խալտառակութիւն կլլա. Աստուած վերջն բարին անէ։ Ես տէր իմ մինչ ի հիմա Դանիէլ կաթուղիկոսէն գիր ոչ ունիք տեղիս ծառայդ ամենայն ինչ գրով իմացում տուի և թագաւորէն օրէնք խնդրէ ասեր եմ, սլս բանըս չուտով վերջ չիլլար, նայինք Աս-

*) Տես «Դիւան հայոց պատմութեան» Ա.-Բ. եր. 117.

տուած ինչ կուտայ։ Ստակդ չատ կըհետեւիմ. կենէ դրով իմացում կուտամ։

Ուղարկած ընծաներըդ ատ. իս հասաւ մնծապէս չնորհակալ եմ։ Նուաստս ծառայ

ԳԼՈՐՒ ԱՂԱՒԷԿՈՒԼ։

1801 դեկտեմբերի 14։
Խալաթալ ի պինճիրլի խանն։

Օրինակ եաղճի Գէորգի ատ աքեցեալ դրոլ ատ. Զմիւռնոյ դէտ Մարտիրոս վարդապետն ի վերայ դրեալ Թուղն, որ անտի ի ձեռն բարեկամաց ատ. մեզ առաքեցաւ ի ՌՄԵԱ եւ լունիսի ԺԸ, որոյ իսկն ատ. մեզ եւ-Քէ հարկաւորիցէ ցուցանել կարեմք, արդ՝ բարւոք քննեալ պատեցէք՝ Քէ ով եղեալ է մինչեւ ցայժմ պատճառ այնքան չարեաց խղճալի մնաքանից ձագեցման, այլազգեաց բռնանալոյն Աթոռի քալքալմանն եւ գոլից վանեցմանն։

1802

ԽԵ. *Թուղթ Յովհաննէս եպիսկոպոսի Պօլսեցւոյ առ Սիրեմ Արքեպիսկոպոս.*



ստուածարեալ վեհափառութեան Տեառն Սիրեմ Սրբազան և Առաքելապատիւ արքեպիսկոպոսի և իմ հօր գերյարգելոյ և պատուականի ողջոյն սիրոյ խոնարհական համբուրիւ մատուցանեմ.

Երբեմն ի ձեռն զրոց մեզ պրես զմեզ, որպէս թէ ոչ լաճախեմք զգրութիւնս մեր առ բարձր Սրբազնութիւն ձեր. իրաւացի համարիմք թէպէտ մեք զայգ մեզադրանագ, բայց ի սրբութենէդ ես ոչ եմ ընկալեալ զգիր և զբարի համբաւ ինչ մեք երկար միջոցաւ.

*Անենայն եղելութեանց և որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս ի հարկէ տեղեկացեալ իսկ ես ի գրութեանց ոմանց, ուստի և ես Թողեալ զգիտացեալսն քոյ՝ զնոր և զզարմանալիս պատմեցից այսուիկ գրութեամբս Մինչ լուաս սա (Դատիթ) թէ հրամայեալ է նորին կայսերական մեծութիւն հաստատել ի հայրապետութիւն ընտրեալն յազգէս և ի միաբանութենէս մերմէ Գանիէլ սրբազնասուրբ վեհապետն մեր, գուն գործեաց ամենայն հնարիւք հաստատուն պահել զիւրն զիշխանութիւն, իբրև ետես թէ հնարք իւր ի գերև ելին, և արդիւնացաւ հրաման Քրիստոսապսակ կայսերն մեծի և ի տէրութենէն Օսմանցւոց ել Ֆէրման կաթուղիկոսութեան լանուն վսեմադելոյն մերոյ, սկսաւ այնուհետե հետզհետէ գաղտ ի գիշերի զինչս Սրբոյ Աթոռոյն յուղարկել ի տուն եղբօր իւրոյ, զոր բազում անգամ տեսին միաբանք, դիւզացիք և երևոնցիք իսկ. նմին իրի ոմանք ի Նախչուանցւոց զգուշացան խլել զդողոնն ի ձեռաց տանողաց ի Գ. շաբթի աւուր պահոց Մինգեանն ի 31 յունվարի ի ժամ երրորդութեան զանգակին՝ տեսանեն ոմանք ի միաբանից, թէ ոմն ի սպասաւորաց սորա իր իմն ունելով ի ներքոյ եափունճալին տարաւ ի գիւղն, Նախչուանցիք ևս սպասեալ մնան թէ երբ ունին հանել ի գեղջէն, զկնի սակաւուց տեսանեն թէ սպասաւոր եղբօր սորա բերեն մի ընգերէն բարձեալ ի վերալ գրաստու տարաւ, և նոցա հեծեալ ի ձի գնետ պընդեալ հասանեն, ձգեալ զբևեռն ի գրաստուն, տեսանեն թէ է սիսեռն. թափեալ զայն ի գետնի՝ գտանեն զարկղ մի կնքեալ լի իրօք ի մէջ սիսոնն, առեալ զարկղն զայն բերեն լնրևան առ լիս, զի ես չգնժամ անդ էի. ի հետ բեռին եզողն դարձեալ լունայն ի վանսըն՝ ազգ ստնէ սմա. է սա պատուէր տուեալ աթոռակալին՝ թուէնկճուվք հանգերձ արձակեաց. զի հասեալ Նախճուանցւոց լափշտակեսցեն զարկղն ի ձեռաց նոցա. աթոռակալն տակաւին ոչ ժամանեալ ի կէս ճանապարհին, ժամանեցին Նախճուանցիք լնրևան, կամեցան իսկ և իսկ բանալ զարկղն, ի վերալ հասեալ աթոռակալին և Մելիքն ընդ նմին, խնդիր ալարին, և ոչ Թողին բանալ, վասն որոյ կնքեալ զայն իմս կնքով, աթոռակալի, Մելիքի, և իւրաչուչ կնքովքն եգաք ի տան իւգրաչուին ի պահեստ. սա յամենայնգամ խուր զմարդ առաքեալ Մելի-

քին՝ յորդորէր զնա զի մի թողեալ ըմնալ, այլ ամբողջ առ ինքն հաստացանել, զի հաստատի գիտացեալ էր թէ իշխանք և ժողովուրդք ջանան բանալ և խայտառակել։ Զմինէնն ի բաղում գրուածոց նորին ընդ դրոյս լղեցի, զոր իւր իսկ ձեռամբն է գրեալ. որոյ զիւրն յարգելիդ մեր լաւ ճանաչեա. տես թէ, զիարդ զիւրն դողութիւն իւր իսկ ձեռագրովքն յայտ առնէ ասելով՝ թէ՝ իսկ այժմ ոչ ոք երկուց կողմանց ձայներս եղև, ասացի դարձեալ բերեալ յայդր պահեացնն, ուր յերկուց կողմանց ասելով իմանալ առաւել կողմունեան և օտանցուց, զի քաջ գիտէ թէ Աստուածապահ կայսրն և բարեբաստղ արքայն օսմանցուց, հրովարտակ հայրապետութեան չնորհեալ են վայելողացն մերոյ, զի դայն չնորհնէրս նոցա ինքեան թշնամութիւն համարին, որ ի թղթի իւրում գրէ. թէ Մասկովն և Ռուսքն ինձ թշնամի են։

Ի դեկտեմբերի վերջին օրէն մինչև ի Յունվարի մնաց արկղն կնքեալ ի տան իւղաչուին։ Ցամենայնում աւուր ջանային երկրացիք բանալ, բայց Մելիքն պարսկական խորամանկութեամբ իւրով պատրեալ զմիաս իւղաչուին՝ երկուքն ի միասին հաւանեցուցին զերևելի անձինս Երևանու, թէ տարեալ ի տուրք Աթոռն մեզ ամենեքեան առաջի միաբանից կացցուք. հաւանեալ նոցա երկրացոցն հինն ամենևքեան ի միասին և ես ընդ նոսա լերաք գարկղն ի տուրք Աթոռս. դնացին իշխանք և օթադալցան ի Ղազարապատն, եդին գարկղն ի սենեկի միում և ձգեցին զկուսալ ի վերայ դրանն. վեց արք ի նոցանէ պահապանէին զդուռն լերեկոյեան ժամուն մինչ միաբանք ի սեղանատան կային, պատուիրեաց Աթոռակալին, որ թուէնկճիս առնեալ խուռն բաղմութեամբ դիմեցին ի վերայ վեց արանցն այնցիք, հարեալ և դանեալ զամենեսեան՝ վարեցին ի բաց և խորտակեալ զդուռն սենեկին հանին զարկղն յայլշտակութեամբ, զայն տեսեալ Երեանցոց՝ խռովեցան և գնացին։

Եւ զինն սեղանուն Ղազար եպիսկոպոսն խոստովանահայր բացեալ զբերան իւր ի մէջ բաղմութեան միաբանից՝ ասաց. կրօնք մեր խայտառակեցան. քրիստոնէութիւն բարձաւ, պատիւ կարգի մերոյ յերկիր անկաւ, անուն սուրբ Էջմիածնի արհամարհելի եղեւ, աւազ վատաբաղդութեան սուրբ Աթոռոյ, որ պահապան ընչից սորին՝ գող և յափշտակող փոխարկեցաւ. զկնի ձայնիս այսորիկ չորք թուէնկճիք փութ ի ձեռին արշաւակի դիմեցին դէպ ի սենեակս մեր. կարծեցին ոմանք թէ վասն իմ գան ի քարշել և այլք թէ վասն Ղազար վարդապետին. որք եկեալ հարցին զսպասաւոր թուէնկճին իմ. զի ինքեանք նորոդ եկեալ պանդուխտ գոլով ոչ ճանաչէին, զի զամենայն թուէնկճիքս յայս միջոցիս փոխոխեաց. զոր իբրեւ ի ցուցանելոյ ոմանց ծանեան, սկսան հարկանել և քարշել. զի պատուէր տուեալ էր թէ, քարշեցէք զսպասաւորն, մինչ ի մէջ մտեալ խօսեսցի՝ զինքն եւս հարէք առաւելութեամբ. մինչ կամեցաւ բերան բանալ և խօսել, թափեցան միաբանք ի վերայ և առին զսպասաւորն իմ ի թուէնկճոց։ Ձայն տեսեալ եղբօրն սորա և սպասաւորաց, ձայն ետուն այլ թուէնկճոց, և տուէք գոչեցին. յայնժամ խառնեալ թուէնկճիք ընդ միարանս սկսան բռաւճիճ առնել զամենեսեան՝ ոչ ինչ խտրութիւն առնելով, ոչ եպիսկոպոս հալէին և ոչ վայլ կարդալոյ. յայսպիսի արարմանց բաղմութիւնք միարանից աղաղակ բարձեալ զդիւղացիս յօգնութիւն ձայնէին. զոր լուեալ Նախչուանցիք զինաղարղեցան և դիմեցին ի Սուրբ Աթոռս, բայց դրունքն փակեալ գոլով՝ ոչ կարացին մտանել ի ներքս։ Կային և ուխտաւորք բաղումք ի Կարսայ, որք կապեալ զղինս իւրեանց դիմեցին ի վերայ թուէնկճոց ասելով թէ դուք ո՞ էք, որք հարկանէք զկարգաւորսն։ Ցաղմկալիր չփոթմունս լայսմիկ խրախոյս տուեալ միմեանց միարանք առ հասարակ՝ կամեցան ելանել լարտաքս, և ոչ մնալ ի Սուրբ Աթոռս, որք ևս լեալ արտաքին գաւիթն գումարեցան առաջի երկուց ղրանց, ոչ մնաց ի ներքս և ոչ մոնք մի. բացի քանի մի անձանց զոր գիտես. դրունքն փակ գոլոյն վասն, բևրին զուրագ և սղոց կտրատել զկոչնական և ըզնիւղն, բայց չեղեւ հնար. մելիք իւղաչուին և եղբայրն եկին ի համոզել զմիաբանս, որոց բաղում ինչ ասացին մելիքն թէ՝ գողակից ևս դողոց և աւերիչ աթոռոյն. նմանապէս և եղբօրն սորա եւս բաղում բանս նախատանաց ասացին. և ապա ինքն եկեալ ողջունօք և սպառնալեօք հադիւ կարաց բերել ի

ներքա, որք դնացին լիւրաքանչիւր սեռեակս իւրեանց։

Աւուրր միով առաջ գիւղացի ոմն Գրիգորն անուան Մարկոսեան այնչափ գանեցին մինչ զի ուշաթափ եղեալ անկաւ յերկիր, որ այնպիսի գանիլ չէ երբէք լեալ ի Սուրբ Աթոռս յաւուրս մեր. զի մինչ բարձեալ տանեն զբեռն սիսոան, ոտք գրաստուն գալթեալ ի վերալ սառին՝ անկանի բեռն ի դետնի. զայս այր օգնութիւն կոչեն ինքեանց բառնալ զբեռն. ի բառնալն ասացեալ է թէ զինչ է ի միջի սորա եղեալն, որ այսպէս ծանր է. ուստի կարծիս առեալ են թէ սա զեկուցեալ իցէ Նախչուանցւոց. նմին իրի այսպէս չարաչար գանեցին, այսպիսի չնչին իմն կարծեօք պատճառաւ այս արկեղ Գէորգ անուն մէլիքէր ոմն գանեցին ի վեր քանզչափ ի նոյն աւուր. այն որ գրէ մելիքին և իւղբաշուն թէ ի տունս ձեր լղեցի սուտ է, զի ոչ ունէր տանողն արկեղ դիր ի վերալ երկուց սոցա, այլ ի աուն եղբօրն և կամ մելիքին ունէին տանիլ, ի Սուրբ Աթոռս եղեալ եպիսկոպոսաց և վարդապետաց ոչ ոք գիտէ լղելն. բաց ի վրացի Ստեփան վարդապետէն, որոյ կնիքն եղեալ կայր ի վերալ արկեղ, ասացաք նմա եթէ Աստուածաստուր եպիսկոպոսն և տիրացու Նահապետն գիտեն ընդունակ է մեզ լղելդ ապա թէ ոչ՝ գող ես, ասէ մեզ, մինթէ հարկէ զամենայն ինչ սոքա գիտացեն. ոչ բացաք զարկղն, բայց ի նշանաց ինչ գիտացաք հաւաստեաւ, թէ ի մէջ եղեալն էր Սուրբ Գեղարդն, և այլ ծանրագին եկեղեցական անօթք։

Ի Դեկտեմբերի ԼԹ ֆէբրուարի սուրբ ժամանեալ է ի ձեռս փոխագելի սրբազան վեհին մերոյ. լեալ քանի աւուրդ ակն ունիմք թէ Աստուծով եկեալ ժամանեցէ լիրեան Թանին. բայց ի կողմանցդ գիրն տակաւին չէ ժամանեալ իմանին և ոչ աղդու ինչ եղեալ. զարմանամ թէ զիարդ այսպէս լսեցէ։

Ընդ զրոյս այսորիկ լղեցի և զգիր Դաւթի արքայորգւոյն վ.յաց, զոր գրեալ էր առ ժողով մխարանութեանն մերոյ վասն օծելոյ զսա. զոր թէպէտ լառաջ պարտ էր մեզ լղել բայց մոռացեալ էաք. նախքան զնստիլ սորա հայրապետ բազում գրեանս գրել զրնտրութիւն մեր լայտնեալ եմք վասն վախագելոյն մերոյ զերդումն առնելն եւս. զայսոսիկ գրեանս խնդրեա ի Թիֆլիզոյ զմինն առ ենարաչն, առ Դաւիթ արքայորդին եւս զմի գիր, առ հասարակութիւն և առ Մելիք Գալչինն և միրիչկերբաչին մէն մի գիր դրեալ դրեալ եմք բազմակնիք ստորագրութեամբ. զայսոսիկ վամենեսեանս գրեալ խնդրեա. ի Պօլսոյ մինչ ի Պալաղէտ՝ բարձեալ զանուն նորա՝ զվափագելոյն մերոյ անուն լիչատակեն ի պատարագի. գիտելով զայսոսիկ այսպէս լեր ողջ երկար կենօք ի պարծանս ՅՕՀԱՆՆԷՍ եպիսկոպոսի Պօլսեցւոյ։

լամի Տեառն 1802
ի լունվարի 8
ի սուրբ Էջմիածին

Յոյժ աճապարելով գրեցաւ յարմարօք գրոյս զսուրբ դարշապարդ հայբուրի փափագանօք, որոյ զանունն ի Տիրացու Յարութենէն գիտասջիր։

ԼԹ. *Թուղթ Ա. Հնորհաւորութեան Պօլսեցւոց առ ս. Դանիէլ կաթողիկոս։*

Շնորհիւ և ողորմութեամբն Աստուծոյ մեք ի բազմաժողով Մայրաքաղաքին Կոստանդնուպօլսի բնակեալ համայն լրութիւն Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ այսինքն Պատրիարք, Արքեպիսկոպոս, վարդապետք, քահանայք, իշխանապետք, միաբէվէյլի իշխանք, արուեստապետք, արուեստաւորք և առ հասարակ լուսաւորչերամ ժողովուրդք, Քրիստոսի Աստուծոյ մերոյ սուրբ իմման տեղւոյն՝ և Քրիստոսամուխ Աստուածահրաշ արքոյ Գեղարդեանն, ծնրադրական երկրպագութիւն նուիրեմք, և սուրբ Լուսաւորչին մերոյ շնորհաձիր սուրբ Աջոյն և Աթոռոյն ջերմեռանդութեամբ համբոյր մատուցանեմք մեծաւ սիրով և պատուով։

Յորում Աստուածախուժմ գումարեալ՝ Աչխարհի և ոգիս աղօթող սուրբ Միաբանութեան, Արքեպիսկոպոսաց, Եպիսկոպոսաց, վարդապետաց, կղերիկոսաց և ամենայն եկեղեցական դասուց, մերս սիրելեաց և հարազատաց, ըստ իւրաքանչիւր կարգի և աստիճանի վայելուչ պատուով և մեծաբանօք ողջոյն, սէր, յարգանօք ընծայելեմք ուրախ լինել ի Քրիստոս Յիսուս։

«Աստուածպաշտութիւն ժողովեալ միաբանութիւն ձեր՝ կարգեալ է ի խրատել՝ առ«նչոյն մարգոյ բնակիլ ի Հայրենեացն տա«ման. և զսոյն ղաս ուսեալք ի ճշմարիտ վար«դապետէն՝ ջանալք յամենայն ժամ առնել և «ուսուցանել. մանաւանդ ես զգուչանալք Ա«ռաքելական սպառնալեացս՝ որ ուսուցանես «զընկերն՝ դունկն քո ոչ ուսուցանես ». «զի «որ օրինօքն պարծիս՝ յանցանելով զօրէնսն զԱստուած անարգեսո. վասն որոյ որպէս «ընդ իմաստունս և ընդ կատարեալս խօսելով «ոչինչ դժուարութիւն ունիմք ի միջի. Արդ՝ «դուք ամենեքին գիտէք թէ՝ լըսարութիւն կաթուղիկոսին պարտ է լինիլ համաձայնու«թիւն Աղգին. զայս մշտնջենաւոր օրէնս յա«մենայն գարս անխափան պահել են նախ«կին երջանիկ հարքն մեր. և զսորին հակա«ռակ գործիչն անիծիւք և նզովիւք պատ«ժեալ են. յորոց զգաստացիմ ի բաց թողեալ՝ «զմինն միայն յառաջ բերցուք իբր 689. տա«րի յառաջ քան եղեալն ի Ոձիգ ամի փրկ«չին, այս մեր ժամանակիս եղելոյն գործակից և անուանակից Դաւիթ Եպիսկոպոսն, որ զքանի մի եպիսկոպոսունս հաւանեցուցեալ, և այլազգի իշխանաց տեղւոյն դրամս տուեալ, զինքն իբր կաթուղիկոս ձեռնադրել տուեալ է. որոյ զայրագին սրտիւ ցաւելով սուրբն Ներսէս Շնորհալին լ(Ն)ղ՝անրական թուղթս իւր զորպէսն ժողովոյ նզովից յայտառնէ ասելով. «Զինչ է ասել և զի՞օրէն այ«սոցիկ չարեաց դյայտնապէս հակառակացն «Ձշմարտութեան և սրբոյ Աթոռոյ Լուսաւոր«չին՝ որք ինքնաչարժ ոխտիք և բռնակա«ւեաց աշխարհի հրամանօք զանձինս իւրեանց «պատ աստիճան հոգևոր բարձութեան ձգին, «և ոչ ընտրութեամբ Աստուածոյ և Աստուա«ծայնոց արանց համօրէն Աղգիս որպէս օ«րէնն պահանջէ. որով բիւր նեխութեան և «պապականութեան անդամոց Քրիստոսի լի«նելն պատճառ. Ցաղագս սոյն և այսր իրի «վանգնութեան, ի ժամանակս Տեառն մերոյ «և եղբօր Գրիգորիոսի կաթուղիկոսի սրբոյ, «ի սուրբ լեառն մեծաւ սիւնհոդոսիւ սուրբ և «առաքինեաց արանց ազգիս Հայոց՝ ժողո«վեալ աւելի քան զերկու հազար հինգ հա«րիւր անձանց եպիսկոպոսաց, վարդապետաց, «և հարց վանականաց, և մլուանձանց սրբոյ «Էջմիածնի, նզովեալ հերքեցին լեկեղեցւոյ «Քրիստոսի և սրով բանին Աստուծոյ հատեալ «ի րաց ընկեցին որպէս զնեխեալ և զխտեալ «անդամ, յառողջ մարմնոյ եկեղեցւոյ, անէծս «ցաւագինս կուտեալ ի գլուխ նոցա».

Եւ ի մերձակայ ժամանակի մի զկնի միոյ յաջորդեալ հոդելոյս հարքն մեր, այսինքն կարապետ՝ Աբրահամ՝ և միւս Աբրահամ կրետացին. Ղազար, Մինաս, Սահակ, Յակոբ, Սիմէօն և Ղուկաս սրբազան կաթողիկոսունք, և երջանիկ Յովհաննէս, Յակոբ Աստուածաբան և Ջաքարիա պատարիարքունք, բոլոր կանոնօք բադմակնիք մահառօք հաստատեալ են, թէ առանց համաձգային ընտրութեան՝ մանաւանդ մեծի մայրաքաղաքիս մեր Պօլսի բազմաժողով ազգիս հաճութեանն՝ ոչ ոք և նստցի ընդունելի չէ. որոց և մահազարք առ մեզ տեղեալ կան. Վ.ատնորոշ է ի վախճանել հոդելոյս Հայրապետին Ղուկասու, բազմակնիք մահառիւ ձերով խնդրեալ էիք ի մէնջ, զի մեր և ձեր հաճութեան համաձայնութեամբ ընտրեացուք զՍրբազան Դանիէլ Պատրիարքն ժամանակիս՝ լինել կաթողիկոս ամենայն Հայոց՝ և Եւ գոն այդ Դաւիթ եպիսկոպոս մանչերաբերն էր որ ի մէջ ժողովոյն յանդիման սրբոյ սեղանոյն կանգնեալ, ի բերանոյ ժողովոյն ասաց զաղօթս. «Որ ընտրեցեր և ընկալար զերանելի և զերջանիկ սրբազան կաթողիկոս մեր զՏէր Դանիէլ» և տլլն. և թէպէտ ըստ բերմանց ժամանակին, այս ընտրութիւնս տեղի ետ և Հիւսիսաբնակ ազգիս Առաջնորդ Յովսէփ Արքեպիսկոպոսին յառաջացումն ի կաթողիկոսութիւն, բայց նա ևս ոչ ժամանեալ ի սուրբ գահն օծութեան, ՌՆ-ն մարտի 1801. թուականին ի Տիխիս քաղաքն հանդեալ առ Քրիստոս։ Ապա զարձեալ վերստին յարժանաւոր յանուն նամակին համակամ ընտրելոյն Տեառն Դանիէլի սրբազան վեհին, որ վերին տեսչութեանն տնօրինմամբ յատկացեալն էր, բազմակնիք նոր մահառս գրեալ կրկին ի նոր՝ մարտի 20. առաքեցիք հրաւիրակօք ձերովք առ սրբազնութիւն նորին ի Թօխատ, որպէս զի եկեալ արժանապէս ընկալցի զհոգւոյն Օծութիւնն։ Եւ ի սոյն մահերիս յաւելեալ էիք և զայս բանս «Ազդեցութեամբն Աստուծոյ՝ զու«նս մեր ընտրեալն յառաջ և յետոյ». տեսաք բաց ի երկրորդ մահառէ ձերմէ միւս եւս բազմակնիք դաշնագրութիւնս Ձեր, յորում

դրեալ էիք թէ՝ երդուեալ եմք և անիծիւք հանդերձ փակեալ եմք, որ մինչեւ Դանիէլ վարդապետի դալն, ով ոք ինքնակամ կաթուղիկոս լինիցի, անընդունակ լինելոց է, և որ առաւելն է՝ արտաքսինն ահաւոր տէրութիւնս լաւս երկրորդ մահերի ձեր մէջն տեսեալ նշանակաց զկնիք Դաւթին. ուր թողուք և զայն՝ դուն ալ զանձն ընծայեցուցանողին իւր ձեռնադիր լաւուկ թուղթն, զոր ընդ ալս երկրորդ մահարին առաքէ ի Թօխատ առ Սրբազանն ի հրաւիրել, յորում դրեալ կայր ալս բան. «Աստուած է որ կոչէ զքեզ և ով է որ Աստուծոյ կամացն հակառակ կալցէ». ով լի պատկառանօք պատուոյ Ահա այսքանեօք և այսպիսեօք երդմամբք և զաշամբք հաստատեալ և սոցա (որպէս՞) թէ ընդ խանին վաթսուն աւուր սպասելոյ պայման եղեալ ի 21 մարտի առաքեցիք հրաւիրակս ի սուրբ դահն բերելոյ, և յառաջ 16 ամիս առանց կաթուղիկոսութեան սպասէիք, այժմ ձեր պայմանեալ աւուրցն եւս չհամբերեցիք, և մինչեւ ի Թօխազէ ի Պալազիտ դալն՝ դուք փութով լուծիք զերդումն և զհաւատարմութիւն ձեր, և ձեզէն այլ իմն իբր ձեզ դլուխ ի 28 Ապրիլի կացուցիք, հակառակ սրբոց Հարցն օրինաց, և որպէս թէ իրաւունս ցուցանելոյ աղաղաւ համարձակեցայք դրել լամենայն քաղաքս թէ՝ «Դանիէլ Սրբազանն « ուշացաւ, և այլ միւս ևս երկու եպիսկոպոս « առաքեցաք որոնել, զտանել և չուտով բե« րել, և ոչ դտեալ, վարդապետքն դարձան « ունայն. և հաւատարիմք սրբոյ Աթոռոյն « աստի և անտի գրէին թէ՝ Դանիէլ Սրբա« զանի ուր լինելն լայտնի չէ և այլն. վասն « որոյ անճարացեալ զի մի անտէր մնասցէ « Աթոռս և ի ստիպմանէ ոմանց այսպէս ա« բարաք են ենու եւ այս բանիցդ ձերոց ճըշմարտին ի հաստատութիւն, սոյն Թուղթ ձեր ուր և հասանէր, ընդ նմին և Դանիէլ Սրբազան վեհին օրհնութեան գլուխ ժամանէր, եւ առ այսքան անպատշաճ գործ և լայտնի անվաւեր ընտրութիւն ակամայ կամօք լուեալ, առ ժամանակ ինչ լռտար բռնութեան խաւարի նստաք, և զկանոնս երջանիկ Հարցն մերոց զանպատուհանս ուռնաց կախեցաք, մինչև ողորմեալ հայեցաւ մեզ Տէր ի բարձանց. ևն ի պարանոցէ մերմէ զամօթն խորտակել խաբէութեանց, կացոյց մեզ զհաւոր Տէրութիւնն ի վրէժխնդրութիւն իրաւանց. վասն որոյ լցան բերանք մեր խընդութեամբ և լեզուք ցնծութեամբ բերկրալից սրտիւ. և ասեմք՝ Օրհնեալ է բարեգթութիւն Աստուծոյ, որ ծաղկաց զլոյս գիտութեան և ողորմութեան լընդհանուր ազգս մեր, և ագաստեաց զմեզ լանիծից Սրբազան Հարցն մերոց. Շնորհաւորեմք զբարեբախտ Օսմանեան տիեզերակալ Տէրութիւնս, որ խնամ տարեալ տրզալ իրաւամբք ունայնացոյց զպէրաթ և զՖէրման Դաւթին, և ողորմութեամբն իւրով ըստ ըզձի Ազգին նորոգ պէրաթ և Ֆէրման չնորհեաց լանուն մխիթարն արժանաժառանգ Տեառն Դանիէլի վեհապետին. և բարձու իշխանութեամբ իւրով հաստատեալ հռչակեաց զսա ընդհանրական կաթուղիկոս ամենայն Հայոց և ծայրագոյն պատրիարք սուրբ Էջմիածնի։

Ապաքէն և մեք հպատակեալ մեծազօր բարեպաշտ թագաւորին մեր բարձու հրամանին, մանաւանդ ևս հնազանդեալ կանոնաց սրբազան Հայրապետացն, որպէս և սուրբն Ներսէս Շնորհալին՝ վասն վերոյիշեալ հայածականացն գրէ լընդհանրական ի նոյն Թղթի սոյնպէս. «որ ոչ միայն քահանայութեան չեն արժան . . այլ և ոչ քրիստոնէութեան հաւատով և կարգի և ոչ օրինաւոր քահանայական Թաղման և սրբոյ պատարագին լիշատակի». վասն որոյ եկեղեցական և գազաքական իրաւամբք լամենայն եկեղեցաց մերոց բարձաք զանուն և լիշատակ զանձն ընծայեցուցանողին, և վայելչապէս լիշատակեցաք և անհրաժեշտ լիշատակեմք զկրիցս երանեալ Տէր Դանիէլ սրբազան կաթուղիկոսն ամենայն Հայոց. քանզի սա միայն է լետ Գրիգորեան, գլուխ ամենայն եկեղեցեացս Հայաստանեայց. սա միայն է իսկական Աթոռակալ երից երանեալ Սուրբ Լուսաւորչին մերոյ. սա միայն է վայելչաժառանգ փեսայ Մօր մեր լուսոյ ամբիծ Հարսին սուրբ Էջմիածնի։

Սերեմն ով սիրելիք մեր Հարք սուրբք և վարդապետք ճշմարտութեան, սու ոտն հարէք զերկպառակութեան հողին, լուծէք ի պարանոցէ ձերմէ զկապ անիծից սրբոց Հայրապետաց, բարձէք լանձանց ձերոց զպարտաւորութիւն պայմանի երդմանց ձերոց. ի բաց հրաժարեցէք լանձնընծայ եղելոյդ լայդ-

մանէ. մի ընդունէք զանվաւեր իշխանութիւն Գաբթիդ. ակն առեալ դիտեցէք, ահաւասիկ աչխարհ ամենայն գնաց ղկնի օրինաւոր սըրբազնակատար կաթուղիկոսին Տեառն Դանիէլի Քրիստոսատիպ Գահանալապետին ամենայն Հայոց. համախոհ և համաձայն լերուք և դուք ընդ մեր Աստուածալին համազգայնին ժողովոյ, և յարժանաւոր գաղաթ նորին զիւղ օծութեան, չնորհաց Հոգւոյն ղեղուլն մի լապաղէք. և որպէս Աստուածընտիր Գահանալապետի և օրինաւոր կաթուղիկոսի ամենայն Հայոց՝ իւրաքանչիւրքդ ըստ պատուոյն և ըստ աստիճանաց զանազանութեան՝ գնանազանութիւն սիրով և գհարազատութիւն սըրտիւ ցուցէք. որպէս զի ընդ նմին Աստուածալին մարդասիրութիւնն ընդունիցիք, և ղընդհանուր Աղիս ղշնորհ և զաչերն վայելեսջիք. և միաբան սիրով ի Տաճարի Տեառն ի խաղաղութեան գոհացուք ղպարգեաց Հոգւոյն սրբոյ. և նոյն ինքն Աստուած խաղաղութիւնն և սիրոյ եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսին. Ամէն։

Ահա ի հաստատութիւն ըստ Աստուծոյ կամաց ընտրութեանս և անհրաժեչտ սիրով կապակցութեանս, իւրաքանչիւրքս միաբան սիրով, միով կամաք, միով խորհրդով կնքեցաք թէ՝ բաց ի Հոգւոյն Աստուծոյ ընտրելոյն մերմէ՝ այլ ոք մեզ ընդունելի չէ. և ղպատաստան նորին սուրբ կամաց և արդար իրաւանց՝ Սրբազան վեհապետին յանձնեալ ենք ազգովին։

Գրիգոր պատրիարք Կ. Պոլսոյ, Յակոբ Արք եպիսկոպոս վէքիլ սբ. Երուսաղեմայ ի Պոլիս։ Պետրոս Արքեպիսկոպոս առաջին վէքիլ սբ. Երուսաղէմի։ Պետրոս Արքեպիսկոպոս վէքիլ Զաքարիա պատրիարքի։ Նուլաւէրցի Թագէոս եպիսկոպոս։ Սահիան վարդապետ Առաջնորդ թամզարայու։ Յարութիւն վարդապետ վէքիլ սբ. Կարապետի։ Ղազար վարդապետ գործակատար Գաւիթ եպիսկոպոսի։ Եսայի վարդապետ միաբան ս. Էջմիածնի։ Գէորգ վարդապետ միաբան Էրզրում Մինքալէլ եպիսկոպոսի. Յովսէփ վ. Առաջնորդ Շէպին Ղարասարու։ Աստուածատուր վարդապետ միաբան Զաքարիայ պատրիարքի։ Զաքարիա վարդապետ միաբան Նարեկայ վանից։ Սիմէոն վարդապետ միաբան Դալուստ Նուիրակի։ Պօղոս վարդապետ։

Նոյն 15 եպիսկոպոսք և վարդապետք։

30 Գլխաւոր Աւագերէց և Գահանայք և Աթոռակալք Կ. Պոլսոյ։ 10 միաբէվէլիք եկեղեցեաց։ 102 Ամիրալք և գլխաւոր էանաֆից վարպետք։ 20 եկեղեցապանք Կ. Պոլ" եկեղեց։ Ընդ ամէն գումար կնքող 177։

Բարգուղիմէոս Արք եպիսկոպոս Առաջնորդ Իզնիմիտու և 20 իշխանք նոյն քաղաքի։ Յովհաննէս եպիսկոպոս նախկին պատրիարք Կ. Պոլսոյ. ի ժամանակս ալամիկ աքսորեալ ի Թօխադ։ Գէորգ վարդապետ լիշեալ եպիսկոպոսի։ Սուրբ Երուսաղեմայ նուիրակ Պօղոս վարդապետ որ էր Թօխադ։ Թօխադու վէքիլ Տէր Գրիգոր։ 26 քահանայք և գլխաւոր իշխանք նոյն քաղաքին։ Գէորգ վարդապետ Առաջնորդ Ամասիոյ Մարսըվանու։ 28 քահանայք և իշխանք նոյն քաղաքաց։ Գրիգոր եպիսկոպոս Առաջնորդ Սըվազու. 70 քահանայք և երևելի անձինք։ Գրիգոր վարդապետ նուիրակ որ, Երուսաղէմայ էրզերում քաղաքի. 125 քահանայք իշխանք և գլխաւոր անձինք Կարնեցիք։

Նաև 188 կնիք լալլ և այլ քաղաքաց և գաւառաց. ի վերայ այսր մահառի եղեալք բոլոր գումար կնքող 642։

Գրեցաւ համազգայնին մահառս ի Թուականի մերում ՌՄԾԱ, ըստ Փրկչին 1802. և Յունվարի 8. Լարքալանիանն Պօլիս։

ՃԻ. Թուղթ Յովհաննէս եպիսկոպոսին Թիֆլիսու առ Տիրեմ արքեպիսկոպոս եւ Մինաս Եղիազարեան։

Սրբազան Հայր Տիրեմ արքեպիսկոպոս և վեհազնեալ իշխան Հայոց պայծառ աղալ Մինաս։

Մեր ողորմած և բարերար արդոլք։

Զգրեալն մեր յամսեանն հոկտեմբերի առ գերարդութիւնն ձեր, ընդ Պետրէ Ուռպէլեանին վերատին մեք աստէն ստացեալ առ ի նմանէ լսեալ ուրեմն լաւելաք ի նմա զպատմութիւն ժամանելոյ զօրացն աստ ի Գանձակ և զյաղթութիւնն առաջին լորում անկան ի հայոց Գանձակու աւելի քան ղ50, և ի տաճկաց աւելի քան զերկու հարիւր եբնսուն. իսկ ի զօրացն յաղթողաց մեռեալ և

վիրաւորեալ ոչ աւելի քան զ7։ Այս դիր դարձեալ յամեցաւ առ մեղ ղաւուրս երկու կամ երեք. մինչև յաջողմամբն ամենակարողին ընկալաւ լինքն և զպատմութիւն ահեղ ուժդնութեամբ առման բերդին Գանձակու ի 3 ամսոյ. բայց քանղի այն եռուք փոշտի հասանել առ տէր Գալուստն, ի Մօղղօի, կարելի է ղի ոչ կանխաւ ժամանեսցէ առ մեծութիւն ձեր, վասն որոյ ուրեմն մինչ եղև ղի կամեցաւ պայծառ կուսակալն զյատուկ մարդ յղել որ ի հարկէ դայր երագ վաղվաղակի. ընդ նմա և զայս առ երկակի լարդիսդ դրել լաւ համարեցաք, որ ի 3 ամսոյս ընդ լուսածագ առաւօտուն դէմ եղեալ յանդիման ամրոցին ձաւատալ և զօրութեան նորա քաջացան հզօրեղապէս և ղրոհ տուեալ քան զալիս ծովու առաւել սաստկապէս չև ևս ի չափ միջոցի կէս ժամու կանդնեցին զսանդուխս մեծամեծս ընդ պարիսպ անմատչելի կարծեալ դղեկին և լցեալ ի ներքս ի դըղետկն սուր եղեալ կոտորեցին զքշնամիս հաւատոյ և դհակառակորդս պաշտպանին հաւատոյ լազքազ ինքնակալին ամենայն ուստաց աւելի քան զ1300 ընդ այր և ընդ կին. այլ մեծութիւն անուանն Բրիստոսի, և պատիւ ամենատղորմած քաղցր ակնարկութեան նորա, որ ապրեցուց զբրիստոնեայս ղազդս մեր սքանչելի իմն եղանակաւ, որ ի բազմութիւնն անդ կոտորածի անկեալ են ի մերոցանց միայն երկու արք և երկու կամ երեք կանայք. իսկ այլքն ամենեքեան ապրեալք ողջութեամբ և առողջութեամբ և հանդերձ այնուամենայնիւ դտեալ և զողոպտութիւն լաչս կուսակալին պայծառ և ամենայն զօրացն Ռուստաց ըստ մեծ մասին մերոցն անկապուտ ի զղեստուց իւրեանց զոր ունէին զղեցեալք. չատք ես խառն ընդ զօրս մտեալ ի բերդն առին և զանկողինս և ինչ ինչ ի ծածկութից և սփռոցաց, որոց ամենից զրկեալ են ի ցրտութենէ եղանակիս ամենայն ապրեալքն ի տաճկաց։ Գրեալ եմք լառաջին դիրս մեր թէ անկաւ ընդ ձաւադ անօրինին և մեծ որդին նորա ի խառն անդ. այլ լետու լուր եղև թէ այն սաստակ համարեալ մեծ որդի նորա կապտեալ ընդ մերկեալ հասարակութեանն եղեալ է արտաքս խառն ընդ այլոցն ապրելոց և փախուցեալ ընդ միւս այլ եղբօր իւրում դէպի Սամուզ, որ է մի ի նահանգաց Գանձակու ընդ իշխանութեամբ իշխողին Գանձակու կղզի ի մէջ Կուր գետոյ ի չափ 7 ժամու ճանապարհի տարակացութեամբ, բայց մի եղբայր նոցա եթէ մեռանալ էցէ և եթէ փախուցեալ, ոչ ես. ղե յայտնի մինչև ցայժմ, իսկ պիղծ հօր նոցա ծածկել իւր զսատակն՝ պայծառ կուսակալն ձեռամբ ապրեալ մօլլալից ըստ օրինի անօրէնութեան իւրեանց, և այլոցն ամենից այս 5 օր է զի բազում սայլիւք բերին արտաքս ի ամրոցէ անտի և դիղեալ կուտէն ի հրապարակի դաշտին՝ ուստի առցեն որք կամիցին ապրեալ տեարք իւրաքանչիւրոցն. մեծ կին նորա որ է քոյր նուխու Մահմատ Հասան խանին. անդէն ի տան իւրում կապտեալ ի ղօրացն մտելոց ի ներքս, լետու ուրեմն մտախոհ եղեալ առ ապրեցուցանելոյ դանձն երթալ անկանի առ դուստր վարպետ Եսիւլի արուեստապետի դրամահատութեան Հերակլի, որ էր հարմնացեալ որդւոյ Մելիք Մեճլումի. կարծեալ թէ լցեն ոմանք ի նորայնոց ընդ ղօրացն լաղթողաց որք ապրեցուցեն և դինքն ընդ նմա, իրաւի ապրեցոյց դինքն այս խոհականութիւն նորա. զի որդի Նասիլին եկեալ ընդ Հասվերդոլին ընդ որում ունին զվաղեմի լաւ ծանօթութիւն, իսկոյն ընդ բանիլ դրանն մտեալ ի ներքս ռուստաց նչանով դտանէ զքոյր իւր և առ նմա զլիչեալ կինն խանի, զորս հանեալ հրամանաւ պայծառ կուսակալին, պահէ ի տուն քեռն իւրոյ մինչև ցայսօր. և երեկ եկն ի տեսութիւն նորա պայծառ կուսակալին և մխիթարեալ զնա բարւոք լուսադրութեամբ, հրամայեաց ժողովել առ ինքն և զամենայն ապրեալսն ի կանանց և ի մանկանց խանին և որդւոց նորա, և եցոյց նոցա զբնակութիւնն ի դեղջ լալմիկ, դի բնակեացին աստ մինչև եկեսցէ վասն նոցա կայսերական հրամանն։

Բայց աստ՝ պատմեսցուք զմեր սիրեցեալսն, զի ի 4 ամսոյս որ էր օր երկրորդ առման բերդին՝ կատարեցին մեծաւ հանդիսիւ զտօն յաղթութեան Քրիստոսապսակ ինքնակալին, ուր էաք ներկայացեալ և մեք, լեա կատարման տօնին ժողովեցան ամենայն մեծ և փոքր զօրապետք ի ճաշել առ կուսակալն, կոչեցաք և մեք լայն սեղան թէպէտ և ոչ ի ճաշ, ըստ որում պաք էր մեր օրն այն, բայց իրաւի զուարթացոյց զսիրտ

մեր օրհնեալ կոնակալն առաւել քան հա-
մաղամ իշխալիր ախորժաճաշակ կերլեաւ զի
մինչ էհաս ժամանակ և արբին զբաժակ յա-
նուն կենաց ամենատոգորմած ինքնակալին,
լսա նորա ընկալեալ ի ձեռն իւր զբաժակն,
ձայնեաց առ բազմութիւն ամենայն երդել
երգս հոգևորական, և լսարար երգոցն՝ ասէ
բարձրաձայն արբցուք և լաղադս կենաց
Դանիէլ Պատրիարգին հայոց զբաժակ ուրա-
խութեան առ որ անճանօթք բազումք ի
տարակուսի եղեալ թէ ով արդեօք էցէ այն,
լսեալ իրրև ծանեան ի միմեանց՝ ամենեքին
միաձայնութեամբ կոչեցին բարձրաբարբառ,
ուռաւ, ուռաւ, եօթնից և ութից կրկին
կրկին, և ի վախճանի՝ ասէ ի լուր ամենե-
ցուն բարձր բարբառով եթէ արեա՛ր և եթէ
առանց արեանց նստուցանել պատրիարգ լա-
թոռ իւրում զԴանիէլ պատրիարգն ի լինել
մեր ողջ ողորմութեամբն Աստուծոյ։

Այսօր ահա ակնկալն արարին զօրքն
դառնալ լեռս ի Թիֆլիզ. ինքն նս գնալոց է
լինի երկուց աւուրց, բայց ի մէնջ խնդրեաց
մնալ ատ աւ ժամանակ մի լաղագս կար-
գաւորելոյ զմնարալգիս, մեք նս լտնձն առաք
մնալ լամսօրեակ ժամանակս. մինչև բերեալ
զմի ոք եպիսկոպոսաց մերոց կացուցուք
մեզ ատ լաջորդ և ապա դարձցուք և մեք ի
Թիֆլիզ, դրեալ եմք Սինասին որ գալ, և
տեսցուք թէ դիարդ առնել ունիցեմք ի հար-
կէ լանժամ նս ծանուցանեմք զկատարեալն։

Սրբէկ եկեալ մի պօթալկովնիկ հան-
ղերձ արքնագրովն, ժողովեցաք զամենայն
հասարակութիւն ազգի մերոյ լետ օրհնու-
թեան ջրոյն և ի մէջ եկեղեցւոյն ընթերցեալ
զայն ի լուր ամենեցուն, երկմնեցուցաք զա-
մենեսին և ետուք ստորագրեալ զդիր ղի կալ-
ցեն մնասցեն լամհետէ հաւատարիմ ժողո-
վուրդք կայսեր։

Շնորհատատ Մանուէլ վարդապետ եղբօր
մերում և սիրեցեալ տէր Սեդրաքէդէկ քահա-
նային լոյժ սիրով ողջոյն և օրհնութիւն ընծայեմ։

Հոգևօր մեր մերում դեղապանցուհի տի-
կին կատարինի իվանովնային լոյժ սիրով
մատուցանեմք ողջոյն և օրհնութիւն աս-
տուածային ողջ լինել ի Տէր։

Խոնարհ ՅՈՎՀԱՆՆԷՍ Արքե-
պիսկոպոս Առաջնորդ Թիֆ-
լիզու և Դանձակու Հայոց։

(Ի յունվարի 10-էն համաբաա)։

ՃԱ. *Ի Գրիգոր Պատրիարքէ Կ. Պոլսոյ՝ գրնալ առ վիճակն Օսմանեան Տէրութեան։*

Անուսուի Քրիստոսի ծառայ և սրբոյ Էջ-
միածնի բնիկ միաբան, նաև Տեառն Դանիէլ
Հոգևընտիր սրբազան վեհապետի վիճանորդ
միանգամայն և թագաւորեալ մայրաքաղա-
քիս Պոլսոյ Պատրիարք և վերատեսուչ Դրի-
գոր Արհի Եպիսկոպոս։

Ցորմէ ժամանեալ հասցէ նամակ սիրոյ
ողջունի, և անդրանիկ առաքելական օրհնու-
թեան ի վերայ (...) քաղաքիդ և դիւղօրէ-
իդդ, և ի միջի գոցին կառուցեալ և հաստա-
տեալ որորց եկեղեցեաց տէր և վերատեսուչ
կարգեալ սիրելի եղբօր մեր (...) Աստուա-
ծիմաստ Արքեպիսկոպոսին, սրբանուէր քահա-
նայիդ և բոլոր կղերիկոսաց, Աստուածազօր
իշխանաց և աւհասարակ լուսաւորչադաւան
ժողովրդականացն դասու, ընդ որոյ օրհնու-
թիւն Հօր՝ պահպանութիւն Որդւոյ և նախա-
խնամութիւն սրբոյ Հոգւոյն Աստուծոյ եկեալ
հանդիպեցէ, իջեալ ծաւալեացն, զեղեալ առա-
տաստացի ի վերայ հոգւոց և մարմնոց, և որդւոց
և թոռանց, զարմից և զաւակաց, հանապազ
խնդալ ի Տէր Ամէն։

Եւ ընդ Քրիստոսական սրբոյ ողջունի
և անդրանիկ օրհնութեանս մերում ծանու-
ցանեմք բարեպաշտ սիրելեացդ մերոց հարա-
զատ զաւակացդ սրբոյ Լուսաւորչին, զի
Քրիստոս Տէրն մեր որ ի ձեռն մարմնաւոր
տնօրինութեան իւրոյ չինեաց զեկեղեցի իւր
ի վերայ վիմի հաւատոյ, նոյն ինքն փրկիչն
մեր վասն հաստատուն պահելոյ զչինուածն
իւր կացոյց փոխանակ իւր ի մէջ եկեղեցւոյ
զԱռաքեալս և զՄարգարէս, զՀովիւս և զՎար-
դապետս, և նոցա յանձնեաց զվերակացու-
թիւն և զպաշտպանութիւն սոցա։ Եւ ընթեռ-
նումք լերգան եկեղեցւոյ. «Որ չինեցեր բարձ-
րագոյն զեկեղեցի քո խորհրդեամբ, և ի սմա
կարգեալ տնտես քարոզ բանին ճշմարտու-
թեան» և թէ՝ «Տէր որ հնմնեցուցեր զեկեղե-

ցի զո ի վերայ վիմի հաստատ, և կարգեցեր ի սմա առաքեալս և մարգարէս հովիւս և վարդապետս։ Եւ սրբազան վերատեսուչք եկեղեցւոյ հոգետես Հարքն մեր զեղեցիկ ակնարկութեամբ՝ որպէս զի անխախտ և անշարժ պահեսցեն զհաստատութիւնն որ առանգեցաւ ինքեանց, օրէնս եղին և զկանոնս հաստատեցին, որպէս պարսպօք չրջապատեցին զեկեղեցին Աստուծոյ, և զսրբազան խորհուրդս և զկարգս նորին, և ցուցին ըզգուշանալ՝ զի որք մտանիցեն ընդ այն, յայտնի լիցին թէ ոչխարք են Քրիստոսի, և ժողովուրդք եկեղեցւոյ. իսկ որք ոչ մտանիցեն ընդ դուռն ի գաւիթ ոչխարաց, այլ ընդ այլ ելանիցեն, ճանաչիցեն թէ գողք են նոքա և աւազակք, ըստ բանի սրբոյ Աւետարանին։

Եւ սովին ակնարկութեամբ վասն սրբազան ծայրագոյն քահանայապետութեանն և կանոնեալ են Հարքն սուրբք, զի ծայրագոյն քահանայապետն որովհետև է փոխանորդ Քրիստոսի և գլուխ սրբոյ Եկեղեցւոյ, ընտրեսցի միակամ հաճութեամբ Կոստանդնուպօլսոյ բազմութեանն և ընդհանուր ազգին. որպէս զի իցէ սուրբ և Աստուածալին։ Քանզի գրեալ է թէ՝ «ոչ որ զանձն ընծայեցուցանէ՝ նա է ընտրեալ, այլ զոր Տէրն ընծայեցուցանէ». և Տեառն ընծայեցուցանելն յայտնի լինի միաձայն ընտրութեամբ բազմութեանն, ըստ այնպէս վկայելոյ Մարգարէին թէ՝ «ձայն բազմաց նմանի ձայնին Աստուծոյ»։

Եւ յաղագս այսր իրի լեալ վախճանի Տեառն Ղուկասու երանելի սրբազան կաթողիկոսին, բոլոր միաբանք սրբոյ Աթոռոյն Էջմիածնի և ժողովուրդք Արևելեան տան, մեծահանգէս սինհոդոսիս զբազմակնիք մահասար արարեալ, ձեռամբ Թիֆլիզեցի Դաւիթ եպիսկոպոսին առաքեալ էին ի Պօլիս առ Աղդն մեր. զի կամ զԴանիէլ սրբազանն՝ որ էր Պատրիարք Մայրաքաղաքիս ի ժամանակին, և կամ զՆիփրեմ Արևի Եպիսկոպոսն՝ որ էր Առաջնորդ Հիւսիսակողմանց մերազանց. զոր և կամեցին, երկուց զմիոյն ընտրեսցեն ի կաթողիկոսութիւն սրբոյ Էջմիածնի, որ և գերապատիւ Ամիրայք և իշխանք Մայրաքաղաքիս, և համօրէն Աստուածասէր բարեպաշտ ժողովուրդք, ըստ խնդրոյ նոցա՝ և մանաւանդ թէ աղերսութեամբն Աստուծոյ՝ միաբան հաճութեամբ ընտրեալ և յատկացուցեալ էին զՅէր Դանիէլ սրբազան պատրիարքն. և մանաւանդ Դաւիթ Եպիսկոպոսն նոյն ինքըն ի մէջ սքանչելահրաշ Տաճարին սրբոյ Աստուածածնին առաջի ամենայն ժողովրդեանն, յանդիման կացեալ սրբութեան սեղանոյն՝ բերանով իւրով ասացեալ է զաղօթքն՝ «Որ ընտրեցեր և ընկալար զերանելի և զքրիստնէիկ Հայրապետն մեր զՅէր Դանիէլ սրբազան կաթողիկոսն, Քրիստոս Աստուած մեր և այլն»։

Այլ որովհետև ըստ բերմանց աչխարհի ծովսէփ Արքեպիսկոպոսն յառաջեաց առ այն Աստուածալին սրբազան պաշտօն, յայտնի է և ձեզ ամենեցուն թէ զինչ ինչ անցք անցին ընդ սուրբ Աթոռն Էջմիածնի և ընդ բոլոր ազգն մեր, և թէ սրբոյն նեղութիւնս և վիշտս կրեաց նա ինքն Աստուածընտիր սրբազանն Դանիէլ։ Բայց քանզի գրեալ է թէ՝ զհորհուրդն Աստուծոյ ոչ ոք ի մարգկանէ կարող է քակտել, արդարև այնպէս յայտնագոյն ստուգեցաւ, մինչ ծովսէփ անուանեալ կաթողիկոսն եկեալ ի Թիֆլիզ՝ վախճանեցաւ անդ, և ոչ ժամանեաց ի տեղին. և միաբանք սրբոյ Աթոռոյն որպէս Աստուածընտիր կաթողիկոս, և որպէս արժանաւոր փեսայ հարսին լուսոյ Մօր մերոյ սրբոյ Էջմիածնի, վերստին զնա ինքն զՅէր Դանիէլ սրբազանն կոչեցին ի Թօխատու՝ երկու հրաւիրակ վարդապետօք և բազմակնիք մահսէրօք դրեցելովք առ իւրոյ սրբազնութիւնն և առ Թօխատու հասարակութիւն քաղաքի, և առ Փիլիպպոս և մահտեսի Դաստպար մեծապատիւ Ամիրայն, յորս առենեսին եղեալ և Դաւիթ զկնիքն իւր, և բաց ի կնքոյն յատուկ ձեռագրով իւրով ևս դրեալ էր առ Դանիէլ սրբազանն թէ՝ «Աստուած է որ կոչէ զքեզ, և ով է որ Աստուծոյ կամացն հակառակ կացցէ, վասնորոյ եկեալ եկեսցես»։ Որ և բոլոր Ազգն մեր և մեք, և որ էաք անդ յայնմ ժամանակին, նոյնպէս հոգևոր ակնարկութեամբ ճանաչելով զնա՝ զՅէր Դանիէլ սրբազանն արժանընտիր փանանայապետ և Տէր Հոգևոր, ըստ յառաջ և յետոյ միաձայն ընտրութեան միաբանից սրբոյ Աթոռոյն և համայն Պօլսեցւոց, առաքեցաք և մեք բարձր պատուով և վայելուչ չքովք։ Այլ մինչ ժամանեաց նա ի Պալաշիտ, լուաւ անա որ Դաւիթ եպիսկոպոսն Թիֆլի-

ղեցի ստեալ ղնորս կնիքն իւր ի ղբանն ձեռագրին, և ընդղէմ կանոնաց հարցն սրբոց՝ կաշառօք և բռնութեամբ Սրեանու Պարսիկ Խանին օծեալ և նստեալ է յԱթոռ Հայրապետական, վանորոյ լինքն աղգաբնակիւ հանդամանացն և Աստուածընտիր Դանիէլ սրբազան արդեաւք Պալաղիդ և մնալ անդ։ Այլ որպէս ասէ Սրբազան առաքեալն թէ՝ ղորս յաւաջագոյն հրաւիրեաց Տէր, զնոսին և կոչեաց, և ղորս կոչեացն՝ զնոսին և արդարացոյց, և ղորս արդարացոյցն՝ զնոսին և վաստաւոր արար։ Նա դրով իւրով վկայեալ էր, Աչխարհ և հնարք իւր ոչ ղօրեցին խափանել զկոչումն սուրբ. և մարդկային հնարագրութիւնք թէպէտ և որոգայթ ստից նորին արկին առ ժամանակ մի, այլ կործանել զնա ոչ կարացին. զի Տէր ձեռընկալու եղև նմա. և չարժլեաց զսիրտ հզօր թագաւորութեանն հանել ի լոյս Յաղթող թագաւորս մեր արգարացուցեալ զդատաստան զրկեալ և գաւաճանեալ Տեառն Դանիէլ հոդեընտիր Սրբազանին, ունայնացուցեալ զպէրաթ և զֆէրմանն որ յանուն Դաւթի. և ըստ ըղձի սղգի չնորհեաց զնորոգ զալ պէրաթ և ֆէրման յանուն Սրբազան Տեառն Դանիէլի, և հաստատեաց զնա բարձու իշխանութեամբ իւրով կաթուղիկոս ամենայն Հայոց և ծայրագոյն պատրիարք սրբոյ էջմիածնի. որ և ի սկիզբն դեկտեմբերի, անուն Դաւթի բարձեալ յամենայն եկեղեցեաց Պօլսոյ՝ յիշատակեն զպատուական անուն Աստուածընտիր Սրբազանին մերոյ Տէր Դանիէլ կաթուղիկոսի ամենայն Հայոց։

Արդ ուրեմն, սիրելիք, լուարուք և ի միտ առէք զի դրեալ է. թէ՝ «զօրինութիւն ստացի որ զօրէնս գնէ». վասն որոյ և սբ. Հարքն մեր փափագելով օրհնութեան, եղեալ են մեզ կանոնս և օրէնս, որովք և մեք լուսամբ արժանի լինիլ Աստուածային օրհնութեանց, այնմ որ ասէ՝ «Նկալք օրհնեալք Հօր իմոյ»։ Այլ սակայն զրէ և Սրբազան Առաքեալն թէ՝ «ոչ եթէ լսողք օրինացն են արդարացեալք, այլ առնողք օրինացն արդարացին»։ Ըստ այսմ ապա մնք որ զիմամբ Հարցն սրբոց՝ լընդհանրական գիրս սրբոյ Ներսիսի Շնորհալւոյ ի 4 գլուխն և 44 համարն զկանոնս 2500 հարանցն սրբոց, այսպէս ընթեռնումք, թէ՝ «Հայրապետն որ չիցէ օրինաւոր՝ թաղման անգամ չէ արժանի»։ Եւ ի ներկայս սրբոյ էջմիածնի միաբանից եպիսկոպոսաց և վարդապետաց 49 կնքովք կընքեալ պայմանագրութիւնն այսպէս ընթերցաք, թէ՝ «Մեք ամենեքեանքս երդուեալ եմք սրբոյ Գեղարդեամբն և ամենայն մասամբքն Սրբոց, և անխիթիւք հանդերձ վակեալ եմք որ մինչև Դանիէլ վարդապետի զալն, ով ոք ինքնակամ կաթուղիկոս լինիցի՝ ամենևին անընդունակ է լինելոց։ Ապաքէն բարւոք ի միտ առնուլ պարտիք, զի դրեալ է թէ՝ «լուզ չնորհային Աստուծոյ իջցէ ի զլուխ և ի մօրուսն Ահարոնի և ի մօրուացն ի դրապանս զդեստուն նորա». այլ եթէ զլուխն՝ որ է Հայրապետն, չիցէ արժան իւզոյն չնորհաց, մանաւանդ թէ այնքան հաղարաւոր եպիսկոպոսաց և վարդապետաց բանիցն ի ներքոյ գտանիցի, զինչ չնորհ յայնպիսի գլխոյն ունիցի իջանել ի մօրուսն և կամ ի գրապանս, այսինքն է ի կարգաւորս կամ ի ժողովուրդս»։ լալտ է թէ չնորհ և ոչ բնաւ, իսկ մնաս բաղում լոյժ.

Վասնորոյ չնորհակալ եմք զԱստուծոյ ողորմութենէն որ խափառ ոչ եթող զմեզ ի ձեռաց, և ոչ զրկել կամեցաւ լիւզոյն չնորհաց, այլ մարդասիրաբար ողորմեալ անսուցեալ ազգի մերում, այլ զարթ մեզ և սրբոյ եկեղեցւոյս մերում, չնորհելով մեզ արժանընտիր Գահանայապետ ըստ կարգին Մելքիսեդեկի զՏէր Դանիէլ Աստուածընտիր սրբազան կաթողիկոսն. որոյ միջնորդութեամբն աներկբայ եմք թէ՝ չնորհն Աստուծոյ անթեր մատակարարեսցի առ Աղդս և սկեզնցիս մեր։ Սմին իրի ահա զրեմք Աստուածասէր սիրելեացդ մերոց և հարազատ զաւակացդ բարեփիլատակ հարցն սրբոց, զի և դուք այսպէս բարւոք ծանուցեալ զամենայն անցսն ի կողմանէ սրբազան Հայրապետութեան, և բարւոքապէս վմտաւ ածեալ զկանոնս սրբազան Հարցն, և այնպէս ապա սուրբ զօրէնս պահելով աղատս կացուսջիք զանձինս ձեր ի պարտաւորելոյ օրէնսդիր Հայրապետացն և ի նզովից նոցին. և տեսչացեալ վաւիրաքելի օրհնութեանց նոցին, զկանոնս աւանդեալ առ ի նոցանէ՝ պինդ կալջիք, և յանձընծաւ եղեալոց՝ յորմէ ոոքա խորչիլ հրամայեն և բացէ ի բաց հրաժարեցուցանեն, յայնմանէ և դուք հրաժարելով հրաժարեսջիք. զի մի ի զուր կցորդք լինիցիք չարեաց օտարաց, ըստ ա-

ռաքելոյն որ ասէ, թէ՝ «Արժանի են մահու ոչ միայն որք զչարս գործեն, այլ և որք կամակիցք լինին գործելեացն՝ հաւանելով և կամ տեղի տալով չարութեանցն»։ Իսկ զոր Հոգին Աստուծոյ ի ընէ անտի նշանակեաց և Տէր կրկին և վերստին զնա ընծայեաց, և մեր հասարակութիւնն համաձայն Հարցն կանոնաց միաձայնութեամբ ընտրեաց, զնա՝ որպէս արժանընդունակ Հոգւոյն օծութեան Աստուածընտիր Տէր մեր հոգևոր և ծայրագոյն պատրիարք սրբոյ Էջմիածնի և կաթուղիկոս ամենայն Հայոց ընդունելով ընդունեսջիք, և լիշատակեսջիք զպաշտօնական անուն նորա յամենայն եկեղեցիս. զՏէր Գանիէլ սրբազան կաթուղիկոս ամենայն Հայոց։ Որ և բարեբարն Աստուած, որ զայս ամենայն ներգործեաց և զեկեղեցի իւր ազատեաց՝ անպարտելի կացուցեալ ի ղրանց ղժոխոց ըստ ան. սուտ բանին իւրոյ, նոյն ամենակարող Փըրկիչն ամենայնի աղատեսցէ և զձեզ զամենեսեան, յամենայն բռնութեանց աչխարհի, և ի փորձանաց չարին, և ի վտանգից հոգւոյ և մարմնոյ. հեղգէ զիւղ չնորհաց իւրոց առատապէս ի գլուխս գերընտիր Սրբազան Տեառն մերոյ, և ի ձեռն նորա ի ձեզ և յորդիս ձեր. և զտեալ (յօր. ղընտրեալ) զձեզ ամենայն հոգևոր և մարմնաւոր առաքինութեամբ, իբրև զչահ լուսաւոր փայլեցուսցէ զձեզ ի մէջ ամենայն Ազգաց, ի փառս ամենամեծ անուան իւրոյ, և ի պսրծանս չօր մերոյ Լուսաւորչին։ Որև հեռևողդ սրբոց Հարցն կանոնաց, և լսողդ և կատարօղդ հրամանաց մերոց ողջ լերուք, զօրացեալք ի տէր, և չնորհք Տեառն Աստուծոյ եղիցի ընդ ձեզ միշտ. Ամէն.

Գրեցաւ ՌՄՊԱ (1802) Յունուարի 21. Առ ղրան սրբոյ Աստուածածնի հրաչագործ եկեղեցւոյ ի պատրիարքարանս որ ի Գօլիա։

(Սոյն թղթոյս պատճէնն 24 Առաջնորդութեան գրեցաւ և ղեցաւ)։

ՃԽ. Թուղթ Դաւիթ կաթուղիկոսի առ Մելիք Աբրահամ եւ Իւզբաշի Գաբրիէլ։

Աղնիւ սիրելեացդ իմոց մելիք և իւզբաշի Աղալիցդ նուիրեմ գողջոյն և օրհնութիւն։

Ծաներուք սիրելիք իմ ի տէր՝ ղի լալա միջոցս՝ որ տարաձայնութիւն եղև՝ դրեթէ երեք ամսից լառաջ մին վոքր զուրթու մէջ քանի հարկաւոր բան եղի. և առաքեցի ի տունն ձեր Ստեփան վարդապետի անուամբն՝ լետոյ հարկաւորեցաւ՝ բերել ետու՝ պիտոյացեալ բանն հանեցի և ճեացեալն ևս թողի ի խուց Ստեփան վարդապետին։ Իակ այժմ՝ որ լերկուց կողմանց այս ձայներս եղև ասացի գարձեալ բերեալ այղր պահեսցեն. մէզար ոմանք խրատ ևն տուեալ նախչուանցւոց, որ ճանապարհն պահեն, որ և արարեալ են այն. պէս և գղուքին այսօր խլեալ բերեալ են յայղր և թէ զիմայդ էք արարեալ ոչ դիտեմ. բայց՝ ինչ կասէք, Ռեալբալի խանին գրեմ՝ եթէ մեր խանին. և ծանուցանեմ թէ Մուկուին և ուռուան ինձ թշնամի է, որ Ղուկաս կաթուղիկոսի նման իմ նեղ օրիս ումուղս այն կողմն դնեմ, իմ ումուդս ներևանու բերդն է. մեռանիմ՝ այդտեղ պիտի մեռնիմ, ապրիմ՝ այդտեղ պիտեր ապրեմ. խօշ այս ինչ անղգամութիւն է՝ որ այդ չքերն արարեալ են և կամ թէ այլ ինչ կերպիւ առնեմ, և կամ թէ ևս ինքնս գամ զոր ինչ վայելուչ կու տեսնէք հանդերձ զինչ առնելոյն ձեր, փութով մեզ ծանուսջիք և ողջ լերուք. գրեցաւ ի Գ չաբթի երեկոեան պահուն։

24 լունվարի 1802.

Ի Թիֆլիզ.

Աստուծով ի լերևան ի ձեռս Մելիք Աբրահամ և Իւղբաչի Գաբրիէլ լարգելի Աղալիցն առ ի բարին։

ԾԳ. Դանիէլ կաթողիկոս առ միաբանուլիան ս. Էջմիածնի:

Նախ զետնամած երկրպագութիւն սըրբոյ իջմանն տեղուոյն և Քրիստոսամուխ Աստուածահրաշ սրբոյ Գեղարդեանն, և սրբոյ կենարար խաչին և սրբոյ Գրիգորի Լուսաւորչին մերոյ չնորհաձիր սուրբ ոդջոյն՝ խոնարհութեամբ համբոյր նուիրեմ:

Ցիսուսի Քրիստոսի ծառայ աէր Դանիէլ կաթուղիկոս և ծայրագոյն պատրիարք ամենայն հայոց, առաքելական եկեղեցուոյն Քրիստոսի, Նա և լուսակերտ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Ջերմէ սիրով և Աստուածալին օրհնութեամբ ոդջոյն Քրիստոսական մատուցի սիրեցեալ որդուց մերոյ և հարազատ զաւակացդ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի՝ վշտաչարչար սրբազնութեան, Արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց և վարդապետաց, նա և համօրէն ուխտի մանկանց սուրբ եկեղեցւոյ: Ընդ որում չնորհ՝ սէր՝ խնդութիւն և խաղաղութիւն յամենասուրբ եռանձնեալ տէրութենէ՝ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ իջցէ ի գլուխս ձեր, հանդիցէ ի վերայ հոգւոց և մարմնոց ձերոց, լցուսցէ զձեզ ամենայն չնորհօք և ընդ ձեզ բնակեսցի միշտ և յաւիտեան: Եւ ընդ սիրաձիր ոդջունադրութեանս ծանուցանեմ սրբազնութեան ձերում՝ սիրելի եղբարց և որդւոց մերոց, զի ահաւասիկ յամսոյս Յունվարի և Փետրվարին՝ եկին հասին առ մեզ, ընդ այլ Արքունական Դրոց, առ Արզրումայ, Ղարսայ, Բայազէթ Դէվլէթլու փաշայն, զի ըստ բարձու հրամանին կայսերական ծանիցեն զմեզ կաթուղիկոս ամենայն հայոց, և ամենայն իրօք ձեռնտու լիցին մեզ: Մանաւանդ բոլորապէս ջանացողութեամբ՝ հանգուսցեն զմեզ ի սուրբ Աթոռ մեր, և բարձցեն ի սրբոյ Աթոռոյդ, զորոյ զանուն բարձեալ են յամենայն եկեղեցեաց որք յամենայն տէրութիւնս Օսմանցւոց և ի կողմն հիւսիսոյ: Ուստի ահա տեղւոյս Դէվլէթլու փաշային, ըստ հրամանի մեծազօր կայսերն ամենայն իրօք ձեռնտու լինել կամելով մեզ, պատուհաց զմեզ արժանաւոր պատուով և ընկալաւ զմեզ որպէս օրինաւոր կաթուղիկոս ամենայն հայոց, և վասն ճանապարհորդելոյ զմեզ ի սուրբ Աթոռդ մեր, ահաւասիկ առաքեաց առ Դէվլէթլու խանն, հանդերձ գրով իւրով և յատուկ թաթարով զօրինակ ըէքէթին և ֆարմանին և մահէբրացն որ առ ձեզ է Դէվլէթլի խանն, որոց կարօղ էք բոլորապէս իմանալ զկամս աղգին մերոյ և հրամանն կայսեր: Վասն որոյ և ես թողեալ զերկարապէտն և զայլսն ամենայն զաս միայն ծանուցանեմ որ ահաւասիկ առ իս են ձերդ բաղմակնքեալ և մեծամեծ մահէրք և այլ բազում գրութիւնք, որով իջուցիք զիս ի պատրիարգական Աթոռոյն իմոյ և մտանեցիք յաստիսի տանջանս Ահաւասիկ առ իս են Ը կնիքն այդ եղբօր որ ամենևին խստասրտութեամբ մոռացաւ զայնս ամենայն: Ահաւասիկ առ իս է ձերդ բաղմակնքեալ դաշնադրութիւն՝ որով գրէք, թէ երդուեալ եմք և անխիթիւք հանդերձ փակեալ եմք որ ինքնագլուխ նաւօդն ամենևին անընդունակ է լինելոց: Վասն որոյ բազում իրաւամբ գրեմ սիրելեացդ մերոց՝ զի ըստ հրամանի մեծազօր կայսեր և ըստ կամաց բոլոր Աղգին հաստատեսջիք զմիտս տկարացեալ եղբօրն, զի մի արհամարհեսջ զապաչխարութիւն, որ յաղագս փրկութեան հոգւոյ և մարմնոյ որով չհինիցէք զկամս նորին զի Աստուածասիրարար մատուսցէ զանձն իւր խոնարհութեան, ի բաց զիջէ յանձնէ զհակառակութիւնն որ ի չարէն, և ղդաստացեալ երկիւղիւ Աստուծոյ իջցէ ի վճհարանէն և նստցի ի խուց իւր, մանաւանդ թէ եկեսցէ առ մեզ ի Պալաղիտն, ուստի ի միասին վերադարձուք սիրով ի լուսածին Ծնողն մեր, բաւական է այս ամենայն գալթակղութիւն աղգին որով էանց ըստ չափ, ոչ է պիտոյ այլ ևս աւելուլն մինչ բան տեսանն է՝ թէ որ գալթակղեցուսցէ զմի ի փոքրկանց՝ լաւ է նմա երկան իչոյ կախել ընդ պարանոցն և անկանիլ ի ծով, բաւական է այս ամենայն գալթակղութիւն որով գալթակղեցան աղգք և ազինք: Սմին իրի յորդորեմ զամենեսեանդ վերատին սիրոյն Քրիստոսի, զի ամենեքին միաբան ջանասջիք չահել զհոգիս և զմարմնս մեր ամենեցուն և աղգին մերոյ, մանաւանդ թէ մի մատնել իսպառ աւերութեան սուրբ տունդ այդ, որում պարտական եմք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, մի լինիլ պատճառ հալհոյութեան անուան Աստուծոյ, որ եմք գին սուրբ արեան նորա: Ապաքէն գրեմ

և պատուիրեմ բարւօք ընթեռնուլ զմահէրն համաղգալին և ի լուչ բերել զայս մահէրական գրութիւնս ձեր, որով գրեալ էիք եթէ զվիառս պատրիարգութեան քոյ սիրեացես և զհանդստութիւնն անձինդ և ոչ լծաքրեացես լայեելութիւնն սրբոյ Էջմիածնի՝ ձեռն մեր ի քոյ գրպանս ունալ, և դու կաս և մնաս մեզ և սրբոյ Աթոռոյ մերոյ պատրական ս. առաջի առեղ առենին Քրիստոսի Աստուծոյ։ Ահաւասիկ ըստ բանի ձերում, մեք թողեալ զպատրիարգութիւն մեր և զայլսն, լծաքրեցաք առ ձեզ։ Արդ զի և դուք որ զայս ամենայն սրբարիք, եթէ այլ ևս լամառեալ ի հակառակութեան ձերում, պատճառ լինիք՝ բոլորովին խանգարման լուսակառոյց Աթոռոյդ մերում գիտասջիք, հաւաստեաւ, թէ դուք էք ըստ ամենայնի պարտական և ոչ թողանին մեզք ձեր առաջի առեղ առենին Քրիստոսի, մինչ ի բերանոյ ձերմէ առեալ դատեսցէ զձեզ արդարացն ահաւոր տէրութիւն։ Ուստի գրեմ ի բաց կալ ի տկարամիտ խենէշութեանց և զգաստանալ երկիւղիւն Աստուծոյ, ոչ ես զձեզ, այլ դուք զիս խնդրեցիք լառաջագոյն, որ և ես ահաւասիկ գամ առ ձեզ և գրեմ, զի և դուք ամենայն սիրով հնազանդեալ հրամանացն մեծազօր տէրութեան Օսմանցւոց և հետեեալ կամաց սիրելի ազդին մերոյ, կամ համոզեսջիք զիստացեալն և կամ դուք միայն հրաժարեալ լանկարգութեանց նորին եկեսջիք առ մեզ, և մեք չնորհիւ Աստուծոյ և ողորմութեամբ նորին բերեմք զնա առ ձեզ. ողջ լերուք ի տէր և չնորհք տեառն Աստուծոյ ընդ ամենեսին ձեզ Ամէն։

Ցամի Տեառն 1802 ի փետր. 27
ի քաղաքն Կարին

ՃԳ. Առ միաբանան Սրբոյ Աթոռոյն գրեալ՝ ի վերազնեալ իշխան Աղայ Մ՚ինաս Աղայ Նղիազարեանէն.

Աստուածագումար Սիւնհոդոսի Մեծի Աթուոյդ Քրիստոսակերտի արժանաւորեալ անդամոց՝ գերլարդելի Հարց իմոց և տեարց Սրբազան Աթոռ եպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, վարդապետաց և առ. հասարակ հոգևորականաց դասուց միաբանից. մաքուր և սուրբ ազոյն ներժեռանդ ողջիս համբոյր։

Թէպէտ խոհեմ և չրջանկ ատ գիտութեան ձերոյ ով պատուական հարք չիք ինչ թերութիւն, և ոչ կարօտիք իսկ վարդապետութեան այլոց, քանզի մեք ըստ որում աչխարհականօք զամենայն հոգևկան բարեկարգութիւնս և վարս ուղղութեան և ճչմարտութեան ի ձէնջ ուսանիմք. և ձեօք առաջնորդութեամբ ընդ չաւիղս արդարութեան ընթանամք, Բայց ելոյ իմ անդամակից լուսաւորչածին գրոհի, ծնունդ լուսատու մեր մերոյ ամենացանկալւոյ սրբոյ գահոյդ միածնաէջի, որոյ ի ծնօղական երախտեաց հարկաղրեալ, ահա ալտ. զբլութեամբ զիմ խոնարհ ջերմեռանդութիւն լայտնելով մատչիլ զօրեմ առ. սպաս սրբազնութեան ձերոյ աստուածահրաւէր ժողովոյդ որպէս պարտական առ. պարտատէր գիմս որդիական պարտն վճարելով. և ընդ ձեզ խորհրդակից գտեալ՝ զայնց խորհել որք իցեն առիթք օգտութեան սրբոյ աթոռոյդ Աստուածագումար ժողովոյն ձեր, և ընդհանուր հայկազեանս ազդի. ներկալիս և լապագալին։

Քանզի բաւական ծանրացան լսելիք ժողովրդոց, առիթք գալթակղութեան՝ դործեցան այնք որ ինչ միանգամայն անցան և անցին արդիս, զառաւպեալ սուրբ աթոռովդ, զի որ երբեմն արիւնափայլս ճառագայթէր ի մէջ հանուրց աչխարհի, այժմ նսեմացեալ և աղօտացեալ երևի, զի որ երբեմն մխիթարութիւն և պարծանք հոգևոր լաղգիս մերոյ քարոզեցեալ՝ լինէր, այժմ վոխանակ մխիթարութեան սուգ, կսկիծ, և գառնութիւն տալ մեղ ջամրել, որովք ի մէջ ամենից ազգաց գնեմք առակ նշաւակի և ալգն կատականաց, զի որ երբեմն օրէնք և բարեկարգագրութիւնք համայն Հայաստանեաց եկեղեցեաց ի Սիօնէդ ելանէր, այժմ զնոյնն բարեգրութիւն ոչ երբէք տեսանեմք վանն անպատում մեզաց մերոց, որոց սակս, համարեա թէ ազգաս ողջոյն ընդ երեսիալի, ի սուգ պաչարեալ նստիմք ի վարանման։

Արդ ամենաօգուտաւետ և Քրիստոսապսակ կալսս մեր և ինքնակալ, որ ունի զղթութիւն մեծ առ սուրբ Աթոռդ Արարատեան և առ ազգս մեր՝ զօրէն սնպուհ և բնիկ թագաւորի։ Ի լսելն զաղետալի լուր սրբոյ աթոռոյդ, և երկիւղս զանպարտ դլո-

րութեան Աստուածընտիր Սրբազնակատար կաթուղիկոսին Դանիէլի, ոչ թէ նմին ղևտացւոյն նետս և զանց արարն, այլ թէ ընդ ամարացւոյն դթացեալ զօրիք անբուժելի վիրացն մերոց ողջացուց զկամս ազգին և միաբանութեան ձերոյ՝ ազատս արար ե Քրիստոսափոխան քահանայապետութեան աստիճան, մաքրեաց ի բծաւորութենէ և լարատաց, որև ամենաողորմածաքար հրամայելով Պօլսոյ ղերլարգելի թամար դեսպանին, լարոյց զնոյն վշտագրեալ ընդհանրական գըլուխն մերոյ զսրբազան հայրապետն Դանիէլ. պատկեաց զիղձ և փափագ միաբանութեան ձերոյ խնամալով զհարազատութիւն ձեր. Նոր ի նորոյ հիմնեաց զհին նորոգ Սիօնի հանդոյն Ջօրաբարելի. ի վերայ վիմին անչարժնոյ, զոր բռնութիւնք վնասակարք ոչ ևս չարժեացին արդ՝ այս ամենայն, ոչ լալմէ ումեքէ առթեցան եթէ ոչ ի վերին տեսչութենէն, որ ունի զսիրտ թագաւորաց ի ձեռին, զի ալտուհետև բազմարանգ ալդ միածնի որդւոյն իւրոյ՝ ազատս կացուսցէ զի մի և լապագալին ի ներս պրտեալ փառամոլից աւերումն և քանդումն պատճառեսցեն սրբոյ տանդ.

Խոնարհաբար խնդրեմ, սրբազան հարք, արդ՝ ժամ է ձեզ, զի որպէս մեք անձնագիր չանիւ զմերս որդիական պարտս հատուցաք և որ ինչ կարելին էր անդր քան վչափին, ցուցաք ընդ մեծավաստակ չանիւ Սրբազան Առաջնորդին մերոյ Եփրեմի արհիասանծ եպիսկոպոսին զմերն զպաշտօն մեր՝ որ առ սուրբ աթոռդ. և ոչ այլ ինչ մնաց թերի, աստէն առնելի նոյնպէս և սրբազնութիւն ձեր, առաւելապէս մեծաւ զգուշութեամբ և մեծաւ խոհմութեամբ թարց իմիք տարաձայնութեան և երկպառակութեան ի մի ձայն ի սէր սիրտ և ի մի հոգի համաձայնելով տիրութիւնս արասչիք սրբոյ աթոռդ, և ընդ կնքօք ձերդ միաբանութեան ամիոփելով զամենայն կալս սրբոյ աթոռդ, ակնածուս լինել խնդրեմք, զի վատնումն կողոպտումն և քանդումն լինիցի, և ով է որ ընդդէմ ունիցի կալ ձերումդ միաբանութեան.

Ծուսամք, մինչ ցարդ զցանկալին բոլոր ազգի սրբազնակատար կաթուղիկոսն Դանիէլ, ըստ մտերմութեան և հարազատութեան ձերոյ փառաւորութեամբ ի ներս մուծեալ ի սուրբ գահդ՝ օծեալ իցէք օծմամբ սրբոյ հոգւոյն, ապա եթէ տակաւին ոչ, ահա զամենայն հոգսն ղխոհեմութենէ ձերմէ մինայն կախին. թէ որքան դգուշութիւն առ ալդ ի կիր առեալ պատկեալիք դիմափաղ և իղձ ազգին, և սրբազան օծման աւետեացն լուր որ մի լսուաջ հնչեցուցանելով ի լսելիս մեր, վառաւոր արասչիք զհոգի մեր ե զմարմին.

Քանզի անդառնալի ողորմութեան ամենատիճ Լալներս այլ ես ընաւ չիք ինչ ներհակ, և ընդհմակքն ոչ զալլ ինչ ունին լապագալին կթել զպտուղն եթէ ոչ ստրջանս և զղջումն, այլ որպէս զսրբազան Դանիէլն հաստատուեաց ընդհանրական կաթուղիկոս ամենայն հայոց, նոյնպէս և զսրբազան Եփրեմ հնազհողի և Աստուածընտիր Արքեպիսկոպոսն հաստատուեաց ի տէրութեան իւրոյ բարձրագոյն հրովարտակաւ միանգամայն առաջնորդ և նուիրակ բոլոր հայոց Ռուսաստանու և Դրիդոր վարդապետն ըստ իւր չար լիչատակ արարմանցն, դհատուցումն դտեալ՝ ղրկեցաւ լոյն ամենից, որ և ոչ թէ մասլն միոյ գտաւ արժանի.

Ո՛ ապաքաղդութեան մերոյ ով սրբազան հարք զի և էրէց եղբայրն մեր, որ տենչալր ի կենդանութեան իւրոյ տեսանել զոյն բարի լառաջադրութեան զլուխն, ոչ առդնացաւ, զի անդառնալի վճիռ ամենակարողին փոխեաց զնա ի կենաց աստի, բայց իմ հանդերձ կրտսեր եղբարքն իմով պարտաւորութիւն մնծ վարկեալ անձին, որ ինչ ի մէնջ կարելին էր ոչ խնայեցաք վասն սրբոյ աթոռոյդ և վասն ազգին. և որպէս նարդեանս նոյնպէս և զամենայն աւուրս կենաց մերոց ի սոյնն ազգաօգուտ հոգս ունիմք պարապիլ.

Ի մեծն Պօլսոյ բարեհամբաւ և ճշմարտասէր ամիրալիցն լարգելի եղբարց մերոց վաղուբեմն ընկալաք զանազան գրութիւնս մեծի ուրախութեան՝ և զիքերմանց օրինական, մինն թագաւորական կալէզն ընկալաւ ի պարոն դեսպանէն և միւսն սրբազան Առաջնորդն մեր և մեք, և այժմ նորոգ ես արժանավալել սրբազան պատրիարգն Պօլսոյ Դրիդոր արիաջան Արքեպիսկոպոսն առաքեալ էր զչնորհաւորութեան գրոյն օրինակն՝ որ առ Աստուածընտիր Դանիէլ վեհապետն *** (կաթուղիկոս) և զմահսէրինն որ առ միաբա-

նութիւնս ձեր, ահա լրումն և կատարած ալարդ յառաջադրութեան և միայն կիր առնումըն մեծի խոհեմութեան ձերոյ որ թարց իմիք կասկածանաց և երկիւղի արիասրտեալք, զայն հողս առնիցէք, որ ինչ արժանն է սըրբոյ զահոյդ, և օրինաւոր փեսային իւրոյ, զի տունն Աստուծոյ այսուհետև սրբեալ և մաքրեալ լիցի լամենայն արատու պայծառազարդեցեալ բարեկարդութեամբ բարձրի բարբրոսական բնութիւնք կապանք և արգելանք և ներածեալ լիցի խաղաղութիւն սէր՝ և միաբանութիւն, որով ողջոյն աղգաս դոհութիւնս մատուցեալ՝ առ տէր, և առ Ամենատղորմ կալարն մեծ, ցնծութեամբ երգեսցուք, այսօր է զոր արար տէր եկայք ցնծասցուք և ուրախ լիցուք ի սմա։

Զի որովհետև ընդհանուր աղգս մեր որ ի ռուսաստան բնակեալ ի ձեռն բազմակնիք գրութեան զմեզ էին կարգեալ փոխանորդ ինքեանց և հոգատար առ այս գործ, վասն որոյ և մեք պարտաւորեալ զայս գիր ոչ թէ միմիայն ի զիմաց մերոց մատուցանեմք, այլ թէ ի դիմաց հասարակութեան՝ որովք գիտասջիք թարց իմիք կարծեաց՝ թէ մինչ ցյետին կէտ կենաց մերոց ի սոյն օգտաւէտ հոգս աղգին և սրբոյ աթոռոյդ ունելոց եմք զմեզ պարտաւորել և զայս քացարձակ մատուցանեմ Աստուածագումար ժողովոյդ։ Իսկ կրտսեր եղբայրն մեր՝ ոչ գոլով աստ ներկալիս այլ ի հեռաստան քաղաք գնացեալ սակս զանազան գործոց իւրոց, ես միայն աստ ի Պետերբուրգ տքնիմ առ այս գործ։ Եւ օր մի լառաջ որպէս եղջերու ծարաւեցեալ, որ աղբիւրս ջուրց, փափագիմք ցանկալի ջրոյն սրբազան օծմանն, երկնահանդէս քահանայապետին Դանիէլի և բարեկարգութեան աստուածագումար ժողովոյն ձեր։

Որե սիրամ լամենայն անձնէ և լամենայն զօրութենէ ջերմեռանդ օգտակամ սրբոյ աթոռոյդ և խոնարհ ծառայ ՄԻՆԱՍ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

1802. մարտի 6-ին
ի Ս. Պետերբուրգ։

ՃԽ. Առ իւզրաշի պարոն Գաբրիէլն եւ Մելիք Աղրահամ եւ միւս իշխանան գրեալ։

Բարեհամբաւ և գերյարդելի իշխանք Արարատեան տանդ մելիք Աբրահամ և իւզբաշի պարոն Գաբրիէլ։

Թէպէտ առ յարգութիւն ձեր չունիմ զգալի ծանօթութիւն, բայց ըստ քրիստոնէական կապոյն, գտանիմ ընդ ձեզ անդամակից։ վասն որոյ և յերախտեաց սրբոյ հօրն մերոյ լուսաւորի Տեառն Գրիգորի և Աթոռոյ նորին պարտաւորութիւն մեծ վարկեալ անձին ի ղէպ համարիմ ջերմեռանդ մտերմութեամբ իմով զայս ինչ ձերումդ խոհականութեան ծանուցանել։

Գանդի խիղճ արդարադատ մտաց ձերոց կարէ վկալել, թէ ի փոքր միջոցիս որպիսի աիեզերահռչակ խաչատառակութիւնս գործեն ցարդ ևս, ի ձեռն մլոյ անձին, որ Թարց ընտրութեան ազգին և միաբանութեան ինքնալօժար բռնաբարութեամբ ամբարձաւ լաստիճան հայրապետութեան։ Եւ երկիցս ընտրեալն ազգապիսիակ բազմավիշտ սրբազանն Գանիէլ լետս ընկրկեցաւ և բաւական անուանարկութիւն ազգին մերոյ և քանդումն Աստուածաէջ սուրբ տանդ պատճառեցաւ։ զորս լաւագէս գիտէք դուք։

Զինչ և իցէ անցեալն էանց ամենաբարձրեալն Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ զթագաւորութիւնս Ամենատղորմ Կալսերն մերոյ որ զկամս և զբաղձանս ազգին պսակելով զայս անպատում ողորմութիւնս արար։ որ ազգասիրէր լիցի հայրապետ, և ոչ ինքնամբարձեալն։

Գիտէք իմ յարգելի եղբարք որ այսօր պատիւ և փառաւորութիւն անուան ձերոյ, զոյն Արարատեան Աթոռոյն է, աստ լիշատակ. զի եթէ մեք ի հեռաստանական գոլով և զգալապէս ոչ զգալով զվիշտս և զտառապանս սրբոյ աթոռոյդ այսքան ցաւիմք կսկծամք և մորմոքիմք, և թողեալ զամենայն անձնական հոգս մեր, ի դոյն հոգս պարապիմք. ապա զինչ է պատճառն, որ դուք ի մերձակայութեան գոլով այնքան թոյլ տաք առն այնմիկ, որ նախ ընդդէմ ազգին և միաբանութեան յայն աստիճան բարձրանալ երկրորդ այդքան միաբանութիւն ընդ բռա/ր

ածել, սաստիւ և զանիւ ահացուցանէ. և ապա ձեռնամխնացի ի քանզումն ի կողոպտումն և ի լափշտակութիւն սրբոյ աթոռոյդ. և ձերդ հարազատութիւն զանցառու լինիցիւ

Չունիմ երկարել իմ յարգելիք. զամենայն որպիսութիւն լիապէս ի գրութենէ միաբանիցն դիտելոց էք. մեք ամենեքին եղբարք մի եմք և լուսածին որդիք սրբոյ աթոռոյդ. մի թողցուք մի թողցուք ի Քրիստոսէ կերտեալ դադ ի ձեռն վատամոլութեան միոյ առն ապօր հիմնատապալ լինիցին. խնայեցուք, խնայեցաք զազամերախիտ ծնողն մեր՝ զգալով զքաղցրութիւն կաթինն, լուսամբ մինչ ցանգ զցանկալի վեհապետն մեր սրբազան Դանիէլ յառաջացուցեալ վառաւորութեամբ ի ներս մուծեալ լոյսք ի սուրբ աթոռոյդ և միանգամայն բարձեալ զնախատինս յերեսաց ազգին, որ ի մէջ ալլասեռից եղաք ծաղր և ալգն կատականաց, քանզի ողորմութիւն ամենամեծ Կայսերն անդադնալի է, և ոչ երբէք եղծանի. և միանդամայն ասա ալս բարի յառաջադրութիւն ներհակողքն և մաքառօղքն վերջապէս զոչինչ ունին չահիլ ալլ է խղճից նեղիլ միշտ։

Ալլ ձերդ անուն ևս առասել սյսթաւութեան թէ առ ամենատորմ կայսր և թէ առ ազգն այժմ ունի երևիլ թէ որպիսի սրտացաւութեամբ և հարազատութեամբ ունիք պաշտպանել զսուրբ աթոռդ, և զարժանաւոր փնասյն դորին զսրբազնակատար Դանիէլ կաթողիկոսն, որ և մեք լսելով ընդ գերարթուն և արիացան առաջնորդին մերոյ բոլոր հայոց Ռուսաստանու Տնառն Սիրեմի Արքեպիսկոպոսին, ի միասին ուրախասցուք ի սիրտ և յոգի։

Որև ցանկանալով իմ միշտ բարեբաղտութեանն ձերոյ մնամ խ. ծ. ՄԻՆԱՍ ԱՂԱՋԱՐԵԱՆ

ի 1802. Մարտի 6.
ի Ս. Պ.-բուրգ։

ՃԻԶ. Առ սրբազնակատար վեհապետն Դանիէլ գրևալ ի սրբազան Չիրևմ արքեպիսկոպոսէ։

Աստուածակոչ և հոգևընտիր գերերջանիկ սրբազնակատար ՚՚՚ ամենայն հայոց

Խնամաչատ հայր և ողորմած տէր,

Կաթողին կարօտիւ մաքրափայլ դաստակաց ձերոց խոնարհ երկրպագութեամբ համբոյր.

Միջոց երկար եղև ի սրբազնութենէ ձերմէ չունիմ զտեղեկալի հոգևոս գրութիւն բալց ի մտերիմ բարեկամէն մերմէ Փիլոնեանց պարոն աղալէն ի յունվարի ի 24-ին ընկալեալ եմ զցանկալին լուր աւետեաց ձերդ սրբազնութեան որ գալով ի Կարին ընկալեալ զՖերմանի օրինակն և գրեալ իսկ էք թուղթ առ Երևանու խանն, զոր լուեալ թէ մեզ և թէ բոլոր ժողովրդեանս որքան խընդութիւն և ուրախութիւն եղև այն ամենայն տամ լսարի մասց ձերոց զատել։

Ի Պօլսոյ ոչ երբէք պակասին մեզ գրութիւնք այլ չարունակաբար մի զկնի միոյ ժամանեն նախ ընչաչատ ի քաջայան և ճըշմարտասէր օրհնեալ ամիրալիցն զՖէրմանին օրինակն և զանազան գրութիւնք առ մեզ և առ վեհազնեալ իշխանսն աղալ Մինասն և աղալ Յովակիմն, և ապա խաղաղութեամբ ժամանելն նորոգ Պատրիարգ լարգելի եղբօրն մերոյ Գրիգոր արք եպիսկոպոսին ի մեծն Պօլիս և նա ընդ հարազատ որդւոյն ձերոյ Մանուէլ վարդապետին առաքեալ էր ղերկուս օրինակս մինն զմահտարինն որ առ միաբանութիւնս սրբոյ աթոռն և զմիւսն չնորհաւորութեան որ առ սրբութիւն ձեր նաև յատկապէս միանգամայն մխիթարական և չնորհակալութեան կոնդակս էր գրեալ իւրաքանչիւրըն յատկապէս առ աղալ Մինասն առ աղալ Յովակիմ և առ հոգելոյս իշխանաց իշխան աղալ Յօհաննէսի զուգակից գերազանցուհի տիկին Կատարինէ Իվանովնային։

Տէր օրհնեսցէ և ընդ երկայն աւուրս արասցէ զթագաւորութիւնս Ամենաբարեպաշտ և ինքնակալ մեծի Կայսերն մերոյ, զայն ողորմութիւնս և զայն գթութիւնս եցոյց, որ առ սուրբ աթոռն և առ ընդհանուր ազգս մեր որ իրաւի արժան է մեզ ասել

արդարև նոր դարագլուխ է ոսկեզօծ ժամանակ, յետ որոց և յատկապէս երախտաւորք և բարերարք գտան մեզ, որպէս վեհաղնեալ իշխանք տեղւոյս նոյնպէս և բարեհամբաւ օրհնեալ ամիրայք մեծին Պօլսոյ, որ ընդ դրուանաւ թաքուցեալ զձշմարտութիւն ի լուսաւորութիւն ընդհանուր աշխարհի հանդիսացուցին և անուն քաջ չհատակութեան Թողին լիշատակ լուիտենական որոց լիշատակն օրհնութեամբ եղիցի իսկ։

Թէ վեհաղնեալ աղալ Մինասն է աստ. ուզզեցաց հարան իւր և աղալ Յովակիմն գնացեալ է հեռաւոր քաղաք, վասն զննադան հարկաւորութեանց իւրեանց. և թէ որքան չանացողութիւնս արարին և առնեն աղալ Մինասն և բարեպաշտուհի հարան իւր միոքս քարոզել լամենայն աշխարհի, միայն այժմ ոչ ինչ գոլ թերի ատէն հոգալիք, ամենայն ինչ անօրինութեամբ տեսան և ողորմութեամբ Կայսերն ամենաբարեպաշտի ի լանկ ժամանեաց այլ թէ մնացեալ է տեղւոյդ ըղդուշաւոր հոգացողութիւն առ խոհեմութիւնս ձերդ սրբութեան և առ միաբանսն սրբոյ աթոռոյն, զամենայն արգելանիթ պատճառողն եղծանել և յառաջանալ ի սուրբ աթոռն և փութացուցանել ղշնորհաւորութեան գիրս որ առ ամենաողորմ և ինքնակալ Կայսրս մեծ. զի լրումն ամենացանկալի սրբազան օծման ձերոյ, լցուցանելով զկարօտութիւն և զփափագ սրտի դիմեացուք այնուհետև առ հասն վիճակն իմ վասն հոգևոր կառավարութեան։

Որե մնամ մեծի սրբութեան ձերոյ.
ի 1802. մարտի 6-ին
ի Ս. Պետերբուրգ

ՃԽ. *Ի սրբազան Եփրեմ արքեպիսկոպոսէ գրեալ առ միաբանութիւնս սրբոյ Աթոռոյն.*

Աստուածերամ միաբանութեան Սրբոյ գահոյդ միածնակիչ ցարդուսպատիւ եղբարց իմոց սրբազան արք-եպիսկոպոսաց՝ եպիսկոպոսաց՝ վարդապետաց՝ աբեղայից՝ ուրկաւագաց՝ կղերիկոսաց՝ և առ հասարակ հոգևորական դասուցդ՝ մատուցանեմ ղչերմեռանդն դրկասիառ համբուրիւ սիրալիրականն ողջոյն։

Ցառաջ քան զայս որ ինչ միանգամայն օգուտնէր ազգին սրբոյ աթոռոյդ և ձերդ միաբան ժողովոյն զամենն լսովին ծանուցեալ եմ, թէ անցեալն էանց, և այսուհետև ունիք նախ առ ամենաբարձրեալն Աստուած վերախնկել զաղօթս և ապա վասն երկրութեան ամենաողորմ և ամենաօգուտսփառ կայսերն մեծի, մատուցանել աղօթս որ զկամըս ընդհանուր ազգին աղատս առնելով և ղչերմեռանդ իղձ միաբանութեան ձերոյ պատկաւորելով զԱստուածընտիրն դԴանիէլ սրբազնակատար կաթուղիկոսն հաստատեաց օրինաւոր փեսայ սրբոյ Աթոռոյդ, որոյ զձերմանի կոպիայն զմահաբերինն և ղչնորհաւորութեան ընդ զանազան գրութեանց ի մեծն Պօլսոյ վալեչաժառանգ Պատրիարգ լարգելի եղբօրէ մերմէ Տեառն Դրիդորէ արք եպիսկոպոսէն և քաջալան օրհնեալ ամիրայիցն մեծ երախտաւորաց ընկալաք և թէ առ այս գործ որքան խնդութիւնս և բերկրութիւնս ցուցանեն, ոչ կարեմք ընդ գրչաւ եղրափակել, փառք ամենաբարձրելոյն Աստուծոյ որ ոչ իսպառ ի բացեալ արար զիւրակերտ սուրբ դահ, այլ յատուկ և նշանաւոր զառաւել զարմանալիսն ներգործեաց։

Բայց չգիտեմ ղի է պատճառն որ ընդ բռամբ միոյ ապօրինաւորի ընկճիք այդքան բազմութիւնք միաբանից և ղիարդ կարէ իշխել նա և ձեռնամուխ լինիլ լերս և ի կայս սրբոյ Աթոռոյդ նա մի և դուք բազմութիւնք գիարդ տաք նմա թոյլ լինիլ պատճառ լափըշտակութեան, կողոպտման և աւերութեան սրբոյ Աթոռոյդ քանդի ծիծաղելի իմն համարեալ լինի աստ բոլոր ժողովրդեանն այնպիսի նուաճումն ձեր, և որքան հանդնական պատասխանիս տամք ոչ հաւատան թէ նա ապօրինաւոր ոք գոլով ընդդէմ սրբազան Սինոթոսին և ազգին ինքնայօժար ամբարձեալ լայն աստիճան, և մանաւանդ բոլոր ազգաւ և թագաւորութեամբ հաստատեալ գհայրապետութիւն սրբազան Դանիէլի, ուրեմն զինչ զօրութիւն իցէ նմա որ կարողանայցէ զբոլոր միաբանութիւն զարհուրեցուցանել և տիրելով կալից սրբոյ Աթոռոյն ի լափշտակութիւնս ձեռնարկեացէ, և մինչ նա կամ

միայր զոլով զայնքան բազմութիւն սաստել և լռեցուցանել զիարդ և նոքա միաձայն և մի հոգի ոչ լինին համարձակօրէն պատասխանատու նմա թարց իմիք երկիւղի, քանզի և Դուլաթլու խանն ընդ վաղեմի նախնական հաւատարմութեան իւրոյ վասն ձերդ միաբանութեան առաւել ունի ջատագովել և օգնական ունի գտանիլ ի աչր աղգին և ի պայծառութիւն սրբոյ Աթոռոյդ քան թէ վասն միոյ արատաւորի և բծաւորի, ուրեմն վառեցարուք զօրութեամբ եղբարք իմ անձկալիք, և մի անփոյթ լինիջիք զաւերմանէ սրբոյ Աթոռոյն այլ զօրբազնակատար *** տէրն մեր ղՏէր Դանիէլ եթէ տակաւին չիցէ ժամանեալ յառաջ ընթացեալ վաստաւորութեամբ ի ներս մուծել միացուաջիք ընդ հարսին իւրոյ անարատի. և միանգամայն բարձջիք զտիեզերահռչակ նախատինս երեսաց սրբոյ Աթոռոյդ, զի ալաուհետե տեառն չնորհիւ, ամենայն ոք ըստ չափու աստիճանի իւրոյ պարտ է ընկալնուլ զպատիւս և զարդանս, զսէր և զյաջողութիւն, յոչ ինչ ժամանակս և ի նախորդ երանելի կաթո զիկոսացն իցէ լեալ, քանզի օրինաւորն մեր զլուխ պարտի լինիլ, հայր գթած և ողորմած առ ամենեսին, ոչ հալելով յանցանս, և ’ի սղալանս ինչ ումէք, այլ ըստ քրիստոսափոխանորդութեան իւրում ներել ամենայն յանցաւորաց որպէս և յառաջ քան զայս դրեալ. վասն որոյ պարզ մտօք և աներկբայելի գիմօք մեծաւ ուրախութեամբ ընկալեալ զտեղս չալին հոգւոց եւ մարմնոց ձերոց նման ծերունւոյն Սիմէօնի ասասջիք արդ արձակեա զմեղ տէր խաղաղութեամբ։

Որեւ վերջապէս զայս ունիմ ծանուցանել թէ որ ինչ վաղել զարժան հոգալիքն էին մեր գիր քան զկարն մեր հոգացաք, եւ ոչինչ թերի թողաք, միայն մնաց այժմ ձերդ խոհեմ կառավարութեան թէ որքան զգուշութեամբ ընդ սրբազան գլխոյն ձեր եւ գուք աստուածներամ անդամքդ միանալոց էք, որ եւ ընդհանրական գլուխ մեր Քրիստոս ի մի անդամ յօգեալ զձեզ եւ ընդ իւր միացուցեալ, ողջ եւ առողջ պահեսցէ զմիաբանութիւն ձեր համաձայնական սիրով ի պայծառութիւն սրբոյ Աթոռոյն. եւ ի պարծանս նուաստ եղբօր ձերոյ։

ԺԸ. Առ Մէլիք Աբրահամ։

Մեծահամբաւ պայծառ իշխան աղալ Մելիք Աբրահամ,

Իմ բնիկ Ազնիւ բարեկամ.

Քրիստոսական ողջոյն և օրհնութիւնս մատուցանելով ցանկամ առողջութիւն պատուական անձինդ և համայն օրհնեալ ընտանեացդ։

Աչխարհ ըստ որում աչխարհ գիւր յատկութիւն միչտ ցուցանէ. քանզի որպէս ինքն փոփոխական, չունի ի միևնոյն չարժման կայունութիւն, նոյնպէս և զբնակիչն ոչ թողու ի միևնոյն գրութեան, որպէս ահա փորձիւ տեսանելմք զի գերլարգութիւն ձեր, որ ի հոգելոյս նախնեաց ձերոց միչտ բարեացակամ էք լեալ սրբոյ աթոռոյդ, ոչ քնաւ երբէք կամիք, որ ի հազար և հինգ հարիւր ամաց ի Քրիստոսէ կերտեցեալ աթոռդ, ի ժամանակս ձեր աւերման և քանդման առգիպեսցէ։

Առ այդ ապօրինաւոր գործ ես ոչ կարեմ ղդել յարդելիդ մեզազրել, քանզի գիտեմ թէ պատճառն այսքանեաց անվայել արարմանց ոյլ եղև որպէս և ընկալաւ իսկ զնաւտուցումն (որ ըստ ամենայնի յուսահատեալ կիսամեռ անկեալ կայ աստ) և դուք ակամայքար անկալք ի հաւանութիւն. զինչ և իցէ անցեալն է անց, բաւական խայտառակեցաք ի մէջ ամենայն ազգաց. այժմ ողորմութիւն ամենամեծ Կայսերն ազատս կացուց զազգն մեր և զսուրբ աթոռն. և այսու փոփոխութեամբ, մի զայլ և այլ ի կարծիս անկանիցիս, ոլպէս թէ առաջինն. յարգութեան ձերոյ լինիցի այժմ արատ ինչ, այլ որպէս ի ժամանակս հոգելոյս հայրապետաց, Տեառն Սիմէօնի և Տեառն Ղուկասու, յարգելի պատուելի և փառաւորեալ լեալ էք. այժմ ես առաւելապէս լինելոցէք, որպէս և գրեալ իսկ եմ Սրբազնակատար կաթուղիկոսին Դանիէլի ճանաչել զպայծառութիւն ձեր լինքեան սրտակից, մտերիմ և օգտակամ բարեկամ, ապա որչափ և զմտերմութիւն ձեր զգալով Ամէնատղորմ Կայսերս, վիշտակ անուան ձերոյ փառաւորի աստ։

Այժմ թողեալ եմ զայս ամենայն ի քրիստոնէական խղճմտանս ձեր և ի նախնական հաւատարմութիւնս ձեր. որ և յա-

սամ խնայել զսուրբ տունդ և զսրբազան Դանիէլն լայդր, և զիս աստ, ի Տէրութիւնս ճանապհել քեզ մտերիմ և հարազատ բարեկամ, որ ի լինելն իմավայել ինչ չունիմ խնդրել։

Այլ մնալոց եմ միշտ վասն ձերդ պատճառութեան բարեացակամ և խոնարհ ազօթարար *).

1802. մարտի 6-ին,
ի Ս. Պ.-բուրգ։

ՃԻ. Առ Երևանու խանն զրնակ

Բարեհամբաւ և բարձրապատիւ Դովլաթլու խան։

Օգտակամ բաբերար իւչքլիսի Օջախին մերոյ և մեր։

Զձերդ նախնական սրտացաւօրէն պաշտպանութիւն և օգտակամութիւն այդ վիպաղալ օջախին ոչ թէ միաբանութեան դորին միայն է լայտնի այլ թէ ընդհանուր աշխարհի, որ որպէս ծնօղ դորովադութ այնպիսի չնորհս ունիք միշտ ցուցեալ, և մեք ես լայնիմ ժամանակի մեծաւ երախտադիտութեամբ բարեբար և խնամածու որպէս նախնեացն ձերոց, նոյնպէս և զձեզ՝ ճանաչեմք։ Թէ ոչ քնաւ կամիք զինեան և զքանդումն դոյնոյ հնաոդոյն օջախի։

..... Իմ առ սրբազնութիւն քո լեուին դիրն լապրիլի 15. մատուցեալ եմք. ի ձէնջ դրեալ մարտ 15-էն թուղթն որ (առ) մահտեսի Միէսէրն տեսի և դիտացի զանցան տեղւոյն, և ընդ նմին և ես մինչ ի վառօդհանէն առ մահտեսի Առաքելն 19) հնալի գոն Զատկին կատարել անդ՝ ըստ որում չունէին Քահանայ. լաւագ չարաթ օրն եկեալ ընչաբածնալ Ստեփաննոս Եպիսկոպոսն որ է Թիֆլիզցի, և էր դասապետ և ժամասաց յԱթոռոյն. բերեալ էր ընդ իւր քանի մահասրս և կոնդակս զօրաւոր բանիւք հղեսնալ, և մահասր մի ևս ի միաբանիցն և լիշխանացն առ Դանիէլ խառնակիչն՝ որք կըրեն թէ՝ ոչ երբէք ընդունելոց են զնա ի կաթուղիկոսութիւն, և եթէ ոչ հրաժարեացի ի նոյն մտացն, նղովիւք հանելոց են ի միաբանութենէ իւրեանց և յորդիութենէ Աթոռոյն։ Բերեալ էր և թուղթս առ իշխանս. թէ առ թշնամիսն և թէ առ բարեկամսն, ես եկեալ ի գիւղէն՝ և ընդ իս եկեալ եպիսկոպոսըն, և առաջնորդելով նմա գնացաք առ նոսա, և տուաք զթուղթն. բարեկամքն ուրախացան, և թշնամիքն ի սուգ մտին։ Եւ մինչ ժողովուրդքն երկիւղ ունին ի վտանգի թշնամեացն, ոչ ախորժեն զեպիսկոպոսն ի տուն իւրեանց տանելու։ Վասնորոյ ես երթամ յամենայն ուրեք և խօսիմ զհարկաւոր խօսելիսըն, Տէս տէր իմ զսաստիկ երկիւղն նոցա, որք ունին ի խառվչացն և յառաջնորդէ իւրեանց Ճուղայասարաս Պատրիարքէն, դի ոչ կարողացան ժողովել ի (մի) վայր և ընթեռնուլ զմահսար միաբանիցն և զղրեալսն ի տունս կաթուղիկոսէն, զի մի գուցէ Տէրութեանն այլ լիմն կերպ ծանուցցեն խառվիչքն, որպէս թէ մեք զԴաւիթն Ռուստաց Տէրութեանն է ջատագով և Դանիէլն Օսմանցւոց. վասն որոյ որ ոք զԴաւիթն ոչ արտաքսէ և զԴանիէլն ոչ ընդունի՝ նա Ռուստաց կողմն է։ Լրեաւնու խանէն եւս դեսպանն թուղթ ունելով առ տէրութիւնս Օսմանցւոց զօրաւոր բանիւք, մատուցեալ է թէպէտ՝ բայց գնա պատասխանն չէ տուեալ՝ վասն իւրեանց բաղում մեծամնծ զբաղմունս ունին՝ որ յապատմբ փաշալիցն. այլ լուսագրեն թէ կատարելոց են զինգիւրն երեանու խանին։ Պատրիարքն և խառվիչքն ի մեծ տարակուսանս կան և երկնչին լուժ ի ժողովրդենէն. վասն որոյ անցեալ կիւրակէին առ երկիւղին ծ. ֆէցիալ և սօլդաթներ բերեալ կացուցին առ դրան եկեղեցւոյն, և մետասան ժամուն արձակեալ եղեն ի ժամուն, որ ի հասարակ յայլ կիւրակէին Բ ժամուն արձակեալ լինէր. այնքան չուտափութեամբ կատարեցին զաղօթսն և զպատարագն, մինչ զի Նորաստեղծեալն ևս ոչ ասացին, և ոչ քարող ետուն, որպէս սովորութիւն է միշտ քարող յայլ ամենայն կիւրակէս՝ քանզի երկնչելոյն կամեցան չուտ աւարտել զպատարագն որքան գեռ ժողովուրդքն չեն լաճախեալ։ Խառվիչքն գնացեալ առ նախարարութիւնն Արքալին, ալսինքն խորհրդարանի անձինս՝ խնդրեալ են թէ՝ հրաման լինիլ Դանիէլիփ Ալիսեանցն Բալաղիտու և կամ ի սուրբ կարապետի վանքըն նստիլ. նոքա հարցեալ թէ՝ յառաջ քան զայս և երբեմն պատասխանեալ է ժամանակաւ այզպէս լինիլ. խառվիչքն պատասխանեալ են թէ՝ ոչ. նախարարքն ասացեալ են՝ ուրեմն այժմ ևս այզպէս լինելն ոչ լինի։ Ապա տարակուսեալ առեն, լեզմիածին Ռուստացն եզե՝ և մեք ոչ կամիմք անգ լինիլ կաթուղիկոս. պատասխանեալ են թէ՝ այզմ այզպէս լինելն խառվութիւն բերէ և այլն։ Դանիէլն երդերում վիաշալին տեսութիւն գնալով. ի վառամոլութենէ յաղթեալ որպէս թէ Աստուածացեալ է՝ (ընդէկ 20) քաշելով և ի զարգարեալ ձիս նստելով, յառաջոյ 40. քա-

*) Ոյր զկնի ծոռանէդ կարբեցւոյն ընտրեցաւ ի կաթողիկոսութիւն, Կ. վ. Շ.

հանապա և հարիւրաւոր իշխանս ընթացուցա նելով է գնացեալ, յառաջէն զաւազան կրել տալով. փաչային առ. այս սրտմտեալ՝ զոմանս իշխանս և քահանայս ի կապանս է մատնեալ, և կամ՝ լով զոմանս կախել ընդ ունկն, և հրամայեալ է զԴանիէլէն ըմբռնել. Դանիէլէն փախուցեալ է ի Բալաղիտ. և անդ եւս ոչ կարացեալ մնալ, փախուցեալ է ի Րաղէշ, որ է Բիթլիզ, որ է Քրդստան. Ցէրդրումով փաչային առ այս պատճառի Բշ. քէսալ տուդանք է առեալ, և այս արձակեալ զըմբռնեալսն. Ժողովուրդքն ի մեծի վրդովման են. ալլ սպասեն թէ կայ ի կայսերէն քննեալ գործքն Դանիէլին և Եփրեմին, հաստատեսցի վերստին կաթուղիկոսութիւնն, և կամ լերեւանու դեսպանին դրովն և խնդրանօքն հրամայեսցի ընդհանրական ժողովք լինիլ, մասարն և կոնդակն ընթեռնանիլ. և ժողովրդեան կամք հարցանել և վերստին Դաւիթն հաստատեսցի. իսկ եթէ լերկոցունց եւս զուրկ մնասցեն. ապա յայնժամ անճարացեալ վըտանգն (յանձն) առնուցուն, և բողոք բարձցեն առ թագաւորն՝ ընկենուլ զպատրիարքն. որ թէ կարողասցեն՝ խօսել վասն կաթուղիկոսութեան։

Ցանուն իմ գանգատեցին առ դեսպանն, որպէս թէ յամենայն ուրեք առ իշխողն գնամ և ջատագովեմ զԴաւիթն, և հակառակիմ Դանիէլին, և աստ պատրիարքին։ վասնորոյ եւ առ այս Դանիէլեանք խեթիւ հային լիս. «այլընտան լեմատուս թուրնտա քօրիօրում» *)։ Զախակողմանքս ուր և տեսանեն դիս, ակնարկեն առ միմեանս և ասեն՝ ան է որ վրդովէ զխաղաղութիւնն մեր։ Ատուած օրհնեսցէ զծնունդ Դէորգ աղային, լուժ հա ատարմաքար աշխատի և օգնէ. մանաւանդ մահտեսի Միէսէրն՝ ոս լիրաւի անգին բարեկամ է. տէս որ բաց ի սմանէ այլ ոք չունիք աստ. որ գիր գրեալոյ հոգ ունիցի ձեզ, Ատուած օրհնեսցէ զսա. յայս մրրկածութեան ժամանակիս չատ պիտանացու եղեւ մեզ։ Ստուգ է ասութիւնն թէ՝ ես քուն և իմ բազդն արթուն. Սրբազան կաթուղիկոսի բազդն տէս որ այսպիսի ձրի աշխատող ունի. բայց ամենայն վասն քո է որ այսպէս կըջանայ. Ատուած օգնական եղիցի եւ աշխատանքն մի ունայնասցի...։ ի Նախիջևան եւս գրեցաւ այսօր, որեւ նոքա տեղեկացեալ անցիցեն աստ, գուցէ զարթիցեն։ վասն եպիսկոպոսի ի տուն իշխանաց չտանելն՝ մի գուցէ տրտմիցիս. չերթալն բարւոք է քան երթալն. քանզի չգիտէ կերպն խօսելոյ, ես բաւականին խօսիմ եւ ծանուցանեմ եթէ որ յաջողեսցէ Տէր։

Մնամ Սրբազան Տեառնդ՝ ծառայ եւ որդի

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԳԱՀ. ՅԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ 21)

1802. ի Մայիս 1.

ի Կոս Պօլիս։

«Պայծառ իշխան Բարեզ երանելւոյն մերոյ ողջուն ունիմ...։

ՀԳ. Յոստմնազիր մի *)։

Պատճառ գրոյս այն է որ ի ՌՄԵԱ թուին և ի մայիսի մուտն, մեք սրբոյ Դահին էջմիածնի բնիկ միաբանք Ատուածատուր և Բարսեղ վարդապետքս, վասն անցեալ խռովութեան որ եղև ի մէջ մերս միաբանութեան ընդ գերերջանիկ վեհապետի Տեառն մերոյ ի թելադրութենէ չարին ստատանալի և ի նորին արբանեկացն, յաղագս որոյ գրեցաք զայս թուղթ քանի գլխով. նախ՝ Դանիէլ վարդապետին կամ իւրայնոցն, երկրորդ՝ Սիփրեմ վարդապետին կամ իւրայնոցն, ոչ թո ղթ գրեմք առ նոսա, և ի նոցանէ թուղթ ոչ առնումք. և եթէ պատահիցի ի նոցանէ առ մեզ թուղթ գալ, թուղթն այն անլուծ կնքով մատուսցի ի սպաս նորին մեծութեանն։ Երրորդ՝ եթէ դարձեալ յանգգնիմք որպէս յանգըղնեցաք՝ թէ զսա կաթուղիկոս չեմք ուզիր, և կամ ի լիշխանութեանս նորին խառնո..ելոց լինիմք, և կամ ի միւս անգամ այսպիսի բանս՝ միաբանից լեզու լինելով գտանիմք ընդ նոսա, մեք իւրաքանչիւրքս հինդ հարիւր թումանի տալոյ լինիմք խանին։ ի կողմանէ Ատուածատուր վարդապետիս՝ Անտոնի որդիքն Մկրտիչն և Զաքարն, ի կողմանէ Բարսեղ վարդապետի՝ Թադէոս վարդա-

*) Ցահկերէն «էլինաչն եէմէսիմ. թիւթիւնոչ կէօրիւլօրում. «այսինքն ձեռնէն չկերայ, ծուխին մէջ կը տեսնեմ» ե. ք. Ր.

*) Օրինակեմ գրոյս ի գաղափարէն գրեալ ձեռամբ Ներսէսի Արք եպիսկոպոսի. Ն. վ. Շ.

պետի եղբայր Թաբաթիւնա և Ռէթէոս վարդապետի եղբայր Ներսէս և Յովհաննէսն եղեն զամին 22). դիտութեամբ Մէլիք և Իւզբաչի Աղալիցն գրուեցաւ ալս գիր՝ և կնքով մերով կնքեցաք և տուաք նոցա ի միամտութիւն։

Նազիր Նովրուզ Մէլիք Աբրահամ Իւզբաչի Գաբրիէլ Աստուածատուր վարդապետ. Բարսեղ վարդապետ. Ալի բէկ։

ՀԻԳ. Թուղթ Դանիէլ կաթողիկոսի առ Անտոն վարդապետ

Ցիսուսի Քրիստոսի ծառայ Դանիէլ և չնորհիւն նորին կաթողիկոս...

Սիրեցեալ որդւոյ իմոյ Անտոն խոհեմառատ և չնորհափայլ վարդապետի. որում և դիտութիւն լիցի. զի ի 16 ապրիլի գիր եհաս առ մեզ ի նորին ամսոյ 28 որով ծանեաք զհարկաւորսն։ Դրեալ էիր առաքել զՆերսէս վարդապետն. այլ քանզի Յովհաննէս կենդանի նահատակ արհիեպիսկոպոսն եկն յայդր, ոչ ևս յօժարեցաք առաքել զնա, մանաւանդ զի ի վերայ Երեանու ժահ սորին է զալն յահէ թշնամեացն, որք միշտ արեան ծարաւի են նորա. և ի վերայ Ղարսայ՝ հազիւ գնայ 15. և ի 20 աւուրս. նմին իրի ի տեղի նորա յանեցաք օժանդակ լինել ձեզ լիշեալ Արհին։ վասն տէր Մովսէս հաւատարմին մերոյ ղխալ և զվկայական խնդրելոյդ, գրեցաք ես Առաջնորդ Յովհաննէս վարդապետին հանդուցանել ըստ պատչաճին որպէս յաջորդ մեր, քեզ ես գրեմք զի ընդ նմա ի միասին խորհրդով արասջիք, որպէս և պարտ ու պատչաճն իցէ։

Ի Պալազիտու քաղաքէս եպիսկոպոսաց և վարդապետաց, քահանայից և իշխանաց կնքով՝ զմահէր հասարակական մատուցին առ Ջօրապետոն, և լղեցին ի ձեռս քո, զի դու մատուցես որպէս արժանն է. և ես գրեմ, եթէ ոչ կամեացին դոքա հալիլ յայն ուղիղ ակնարկութեամբ, բանիւ նոյն հասարակութեանն մատուցես զայն առաջի Աթոռոյ Կաթերական մեծ ողորմութեանն՝ առաքելով ի ձեռս Եփրեմ Արքեպիսկոպոսին և աղալ Մինասին. քանզի այսպէս է իննդիր գրողացն առ քեզ, որպէս և ծանուցեալ եմք, և հարկաւորեմք առնել ըստ խնդրոյ նոցա։

Եթէ ոչ կամեացեն դոքա յօժարութեամբ լսել եունկնդիր լինել որպէս հրամանակատարք կալաք. յաղագս Ղրամատին թէ զիարդ եղև ուր մնաց և յաղագս այդ իշխանաւորաց պարզ դիտաւորս, թևանն՝ թէ օժանդակ լինելոց են մեզ թէ ոչ։ կամիմ օր յառաջ ծանուցանել ըստ ամենայնի պարզապէս զբութեամբ։ և ես դինչինչ խօսեցին դոքա ընդ Դաւթին կամ Դաւթին ընդ դոսա. և դինչ մտածմունք իցեն առնթք խարբալելոյ զմիտս դոցա. կամիմ և զայս բարւոք հետամտութեամբ տեղեկանալ և ծանուցանել։ Մեք ևս եթէ Տէր ներեսցէ և յաջողեսցէ, ունիմք ի միտ կատարել զհանդէս օծութեան մերոյ՝ երևման սուրբ Խաչին տօնի։ Աթոռակալ Սիմէօն վարդապետն որ Դաւթի հրամանաւն ընդ երեանու խանի փիլիխան տաճկին գնացեալ էր ի Ղարս և տեղւոյս փաշային մատուցանելով զ20 քսակ, առեալ էր հրամանաւ նորա մահաբար յաղագս Յատագովութեան Դաւթի, անդուստ եւս անցեալ և գնացեալ էր ի Կարին։ խոստացեալ էր և Կարնոյ փաշային 60 քսակ. բայց չէր կարողացեալ հոգալ ինչ, և զարձեալ էր լետս ունայն, յամսոն ապրիլի 26։ Ղարսեցիք եւս գրեալ էին առ մեզ զմահսէր. ահա զօրինակն լղեցաք առ ձեզ՝ և նախագահարն ի Պօլիս, հանդերձ իշխանաց և փաշալի յատկական գրովքն, որովք գրեալ էին պարզապէս թէ 20. քսակ էր լղեալ եւ ոչ կամեցեալ կորուսանել զայն՝ եառաք ի ձեռս նոցա ղ ս ի ս տ ո ւ կ 23)եւ առաք զդրամն եւ այլն։

Սրբոյ Աթոռոյ միաբանիցն ի Զատկիս անցքն՝ դիտեմ զի լուեալ իցէք. բայց եւ մեք ահա առ մեզ լղելոյ զօրինական լղեցաք առ ձեզ, զի ընթերցջիք եւ առաքեսջիք առ Յովհաննէս պանծալի Արհի առաջնորդն, եւ նա տեսցէ եւ լղեսցէ առ Եփրեմ արհին։ Այլ եւ յամենայն լիւրաքանչիւր ժամանակս հետղհետէ գրութեամբ ծանուցեալ եմք սիրելւոյդ այլ և դուք ամենայն արիութեամբ ջանադիր և անձնադիր լինջիք ի վերալ եղբարց և հարցն օրինաց և Աստուած ոչ կորուսանէ զվարձս աշխատութեանց ձերոց։

Ողջ լեր ի Տէր, եւ չնորհք սրբոյ հոգւոյն եղիցի ընդ քեզ միշտ. ամէն.

ՌՄԾԱ. Մալիսի 5. ի Պալազիտու

Ներսէս արեղ. ի բաղում կարօտիւ պարանոցափար համբուրիւ ողջունէ զողջութիւնդ, և կալ վասն հզօր զօրութեամբ առաւել ճոխանալոյ ձեր միշտ զօրաւոր։

ՀԵ. Թուղթ Մանուէլ վարդապետի առ Ներսէս վարդապետ

Փարեալ ի պարանոց ցանկալի եղբօրդ իմոյ Ներսիսի վարդապետի սղջունեմք։

Առաջին և յետին գրութիւնք ձեր... հասին առ մեզ.. իսկ որ ինչ յայս ելոյն եղելութիւնք թերևս այլք ևս գրեն. իմն առ եղբայրդ եղիցի կշռելոյ ենթակայ։ Նախ կորստեանն՝ Ստեփան վրացին, մտեալ ի 12 ապրիլի դէպուղիղ գնացեալ առ. կողմնակից-սըն Եազչի Գէորգին, (Աղայէկեան) որով ներկայացեալ գեսպանին, որոյ բանիւ զօրացեալ՝ զոր ինչ կամեցաւ խօսիլ՝ անարգեալ արքանեկօքն հանդերձ խօսեցաւ, և լցոյց զքաղաքս վերստին այլաձայն հնչմամբ։ Յաւուրսն յայնոսիկ չատ չանացի գնալ միանդամ առ դեսպանն երկու մարդով, ոչ կարացի հաճեցուցանել զհրամայողսն մեզ. վասնորոյ աճէր և զօրանալոյր խարդախութեան նոցա բանք, առ խառնիճաղանճս, մինչ ի լապրիլի 27. յԱչխարհամատեանի կիւրակէի լառաւօտն՝ սնոտի կասկածանօք կանուխ սկսեալ ժժամերգութիւնն, քանի մի պահապանս կացուցեալք, ի կողմն եկեղեցւոյ և քարող ոչ ունիք ասացեալ, լառաջ քան զտուվորական ժամանակն արձակեալք լեկեղեցւոյն, որ ասուլիսք լաճախեաց ի հասարակութիւնն քանի մը օր։ Ուր ողորմութեամբն Աստուծոյ չորեքշաբաթի օրն որ էր 30 ապրիլի. եկեալ հասին բաղում գրութիւնք սըրբազան վեհին և ձեր. զորս տարեալ եմ մատուցեալ իւրաքանչիւրոցն՝ և այլն որպէս վկալէ ուշիմութիւն քո՝ այնպէս վարեալ։ Կարկեցան չարաւուղիչն բերանք, բայց սպասէին գալստեան փոչտին, զի մեծ լոյս ստացեալ էին ի Գէորգէն. և այս ի դերև եղ ի 6. ամսոյն ի գալ փոչտին. և լուան թէ ի Տնտեսի կիւրակէի օրն սկսեալ է լիշատակել յամենայն սահմանս Ռուսաց՝ ամենապատուական անուն Տեառն մերոյ, և մտին ամենեքեան ընդ լծով խնարհութեան թէև ի կեղծ. բայց Աստուծով նաև մեր առանց ձնաստու ժամանեաց ի նաւահանդիստն առ. այմմ, երկրորդ՝ ամսոյս 5 հասս գիր ի սրբազան եփրեմ արհւոյն ի մարտի 11. անդ գրեցեալ. որով ծանեաք թէ և ի 16-ին գրեալսն եղեալ է ի վակէթ դեսպանին, և հրամայն էր մեզ գնալ և խնդրել, զոր իմ ընդ Տէր Աւետիս և Տէր Մելքոն Քահանալից գնացեալ ի Պէօլիւկտէրէ, ներկալացեալ նմա, զորոյն պատճառաւ բաղում ինչ խօսեցալ. և թարգմանն մեր եղեւ մեծ ֆօնթօն թարգմանի եղբայր Պետրոյ Ֆօնթօնն։ Բանից սկիզբն կալալ լառաջագոյն զիւր ասացելոյն թէ՝ ևս այսուհետև Դանիէլ վարդապետին բարեկամ եմ և թշնամւոյն թշնամի. ես խնդրեցի հաստատուն մնալ ի նոյնմիտս, և բանք չատ. բայց ինքն ոչ կարաց ծածկել զծածկեալ նենգութեան ի սրտին։ Իբրև ասացի թէ այս ամենայն տարաձայնութեանց պատճառ Գէորգն է. ասաց երկար առարկութեամբ թէ՝ որպէս գուք աստ ընդ վայր զԳէորգն առեալ ի բերան բամբասէք, նոյնպէս և Եփրեմ Արհին լանկուս ի մէջ քարոզի դիս ի բերան առեալ է թէ՝ դեսպանն է պատճառ ամենալնի. ևս ղինչ արարի նմա։ Պատասխանեցի քաւ լիցի այնպիսի խոհական առն առնել ըստ ալգմ սարասի ինչ. բայց ծանուցանողք տէրութեանդ նենգութեամբ սրտի պաշարեալ, այգու բանիւ զմիծութիւնն զո լատելութիւն ի մեր կողմն չալ ժել չանացեալ են ղքեզ. և այլն։

Բայց եղբայրդ, տես թէ քանի զգուշութեան պէտք են մեզ առ ժամանակ ինչ, և ունիմք մեք լալսկուս ոչ զոք. զի որպէս լուսոյս սրբազան տեառն մերոյ ի վէքիլէն սկսեալ մինչ զիսոհարարն անզգոյշ և անհոգ էին. նոյնպէս և այժմ. այլ արասցէ մեզ Աստուած. ես ղինչ կարեմ առնել. ես ի պալատ *) նոքա ի Պատրիարքարան. և մանաւանդ կողմնակից թանձրութիւնք առ ամենեսեան հաստատուն՝ ընդ որ կամիցիմք խօսիլ. մեք գիտեմք ասելով՝ բայց չունին զալ բան. և այս այսպէս և այլն։ Երրորդ՝ որքան համարձակիլ կարեմք՝ գրեմք առ Եփրեմ Արհին վասն այնոցիկ, բայց և դուք ծանուսջիք

*) Պալատ է քաղ մի ի Կ. Պոլիս, յորում է եկեղեցի ազգիս ս. Հրեշտակապետ անուամբ։
Ե. Ք. Մ.

հաստատուն հողս հոգալ վասն պատրիարքութեան տեղւոյս, զի ՚ի՛Թէ համարձակելով ժամանակ գոյէ սա՝ առանց կարծեայ լորոգալթ արկանէ զՊատրիարք Հայրն մեր, զի յայն որ լիշեաց կրկին զանուն Յովհաննէս վարդապետին ըստ առաջնոյն. Թէ ես կամիմ ի մէջ ազգի ձերում սէր և միաբանութիւն լինիլ, և հրաման կալաբէր է միաբանութիւն լինել ի ձեզ, և Յովհաննէս վարդապետն ի զուր դատապարտեցաւ. ես ասէ այժմ ոչ ուստք ասեմ ինչ՝ սպասելով մեծազօր կալսեր հրամանին ցայնժամ ասացի՝ ողորմութեամբն Քրիստոսազօր կալսերն Ղրամատն եկիալ է և անուն Տեառն Դանիէլի լիշատակեալ է յամենայն եկեղեցիսն. և հրաման է կնօրինին հոգ տանել գործոյն մերոյ։ Իրրև լուաւ զայս՝ թուլացան բանք նորա և ասաց. եթէ եղեալ է մեք զինչ կարեմք առնել, այդ է գլուխ ամենայնի, և ես առ որ լինի հրամանն նորա, նմա լինիմ օգնական։

Ջորրորդ՝ որպէս յայդրէն դաւաճանն՝ ի սէտս աղքատաց և սրբոյ տաճարին Աստուծոյ ժողովեալն, հարիւրաւոր քսակիւ վատնէ և խոստանալ հետղհետէ վատնել, և զՅ՛ուանննէսն դարձուցանել ի պատրիարքութիւն. նոյնպէս և մարդերես *) վարդապետն Զմիւռնիոյ և համախոհն անդ եղեալ իշխող Չելէպի Աղալ ասացելոյն՝ ղերկու գիրս առեալ մինն առ ծովի իշխողն և միւսն Ֆէհմի բէկն, որպէս թէ հանեալ ղԹլաթ **) Մարտիրոսին և արասցեն զնա Պատրիարք, խոստանալով տալ մինչ ցերեք հարիւր քսակ ղրամոյ։ Խոստմունքն լուեալն մեծամեծաց և Տէրութեանն չրջէր. հարիւրն՝ վասն Յոհաննու, հարիւրն՝ վասն Մարտիրոսի, և հարիւր սակս դաւաճան օձին, որովք գրեթէ սարսեցան ոսկերք մեր, և մերձեցան բնականիլ մէջք մեր, հասեալ լայն լուրն աստիճան մինչև լուսահատ լինիլ բազմաց, դատելով զկողմնականութիւն դեսպանին և զբազում ղրամոց խոստմունս։ Այլ Աստուած որ կրէ ի հզօր ձեռին իւրում զսիրտ աէրութեանց և պետութեանց, ի ձեռս որոց՝ զորս մեք քաջ գիտեմք թէ ի մերազնէից և թէ տիրանամատ աէրութեան սոցա կառավարչի, ցլեաց զչար խորհուրդ Աքլտոբէլանց և վերստին նոր հաստատեաց զԱստուածընտիր փեսալութիւն սրբազան Տեառն մերոյ, և ի սոյն օրէ ունիմք ի ձեռս մեր զերկու հրովարտակ արքունի, մինն լաղագս աքսորի կորստական Ստեփաննոսի, որ բերցն ի Պալաշիտ, արկցն ի ներքոյ իշխանութեան սրբազանին, որ առցէ զհաշիւն սրբոյ Աթոռոյն. սակայն տակաւին ոչ արկաք ի գործ զնոյն հրամանն, սպասելով ելանելոյ խանի մարդոյն աստի, առ որ եւս պատասխանի արարին ելանել, և ետու գիրս պատասխանի՝ ընդ իւր բերեալ ղրոյն. ալսպէս Թէ՝ լառաջ և լետ ազգաւ ընտրեցաւ Դանիէլ կաթուղիկոսն. էր վասն և Տէրութիւն մեր անդառնալի հրամանաւ դնա հաստատեալ է լինել բոլոր Հայոց ազգին կաթուղիկոս. և զԴաւիթ վասն դաւաճանութեանն հերքեալ ի բաց մերժեաց լսեմ իշխանութենէն, և այլն։ Աստուծով ի մէջն քանի աւուրցս զկնի գալոյ այլազգացն հանեմք և զվրացին ցանկացեալ վտաւքն։ Այլ ևս միւս հրովարտակ չնորհեցաւ մեզ Թէ՝ սնագլուխ ոք ի միաբանիցն էջմիածնի եթէ առանց կնքունակ Թղթոյ Դանիէլ կաթուղիկոսի Հայոց ուր և գացի, պատիժ կրեսցէ և դարձցի լետս գնալ լԱթոռն. և Դաւթեանք մի բնաւ համարձակութիւն դոցեն ի Տէրութիւնս մեր. որպէս ապա ալ հրովարտակ քանի մի օրինակ դրեալք՝ և լամենայն ուրեք առաքելիք են առ ի լալտ առնել ի գատաստանան. և օրինակ մի եւս առաքեմք առ Եփրեմ Արհին։ Որեւ ձեր ալսպէս գիտացեալ՝ գոհանալով գԱստուծոյ հրաշագործողէն ամենայնի և ողջոյն առնելով վասն հոգւով չափ աշխատողաց, լերուք ողջք ի պարծանս ծառալի սրբազան Տեառնս և եղբօր քո.

ԳԱՆՈՒԻԷԼ ՍԵՒԱՑԻՒ

1802 մալիս 9
ի Պալատ (Կ. Պոլիս)

ՀՋ. Թուղթ Աղ. Կուրակինի առ Դանիէլ կաթողիկոս

Բարձրաստիճան և Ամենապատուելի Դանիէլ Պատրիարգ

Նորին կալսերականի մեծութ՚ենն՝ Ամենաողորմածագութեղ թագաւորն իմ, բարեհա-

*) Փոխանակ ասելոյ Մարտիրոս։
**) Ի՛Թլաթ՝ աճկ. գիր ազատութեան, ց. ք. Ա.

ճելով զիջանել ընդ խնդիր ձեր, որ առ նո-
րին մեծութիւնն մատուցեալ առ իս ժամա-
նելովն ի ձեռն աստ գտանելոյ Հայոց Արք
Եպիսկոպոսին Եփրեմայ, Ամենաբարձր չնոր-
հիւն յօժարեաց արժանացուցանել զձեզ ե հա-
մային Պատուելի Ագգն Հայոց՝ Ամենասողոմ.
զրամատիս այսինքն իւրոյ մեծապարգե հրո-
վարտակի, ընդ սմին ե չնորհել Ձեզ 30 գազ
զար ճոթ, 50 գազ բոզումէնթ. զորս առ ի
հաստ ցանել ձեզ՝ յանձնեցեալ է լիշնալ Արք
եպիսկոպոսին։

Ուստի գտանելով ե իմ. ի նորին կա-
սերական մեծութեան՝ զբարձրադոյն երևելի
հովանաւորութիւն որ առ Ձեզ ե առ. ամե-
նայն ազգն Հայոց յատկադոյն բաւականու-
թեամբ չնորհաւորեմ Ձեզ զսոյն ողորմութիւ-
նըս ստոյգ։

Խոնարհութեամբ Ձերոյ բարձր
աստիճանութեան ամենախոնարհ
ծառայ Ազէքսանդր Կուրակին։

Սանկտ Պետերբուրգ
մայիսի 12 աւուր.
1802.

ՀԲ. Թուղթ կարապետ եւ Աբրահամ վարդապետաց առ Դաւիթ.

Երիցս երանեան Աստուածընտիր ե պը-
սակազգեաց՝ Արքազնագունեղ ***պատ. ամենայն
Հայոց և մեր հոգեոր ծնող և բարերար Տէր։

Զկնի որոյ՝ դիտատցէ վեհափառ Տէրդ
մեր. զի զամենայն դրեցեալ Թուղթսն ձեր՝
մի զկնի միոյ հասին առ մեզ՝ ե զորոց հար-
կաւոր Թուղթ դուր հատուցաք զիւրաքանչ-
իւրսն առ ինքեանս. ևս ե ընդ մեզ բերեալ
մեծ մահտերն և զամենայն Թղթոց սիահին
Թարգմանել տուեալ ընդ նորոգ լղեալ Թըղ-
թոյն որ ի ձեռն մեր հաւատարմաց Թարգ-
մանեցեալ եղև՝ զամենայնն գնատա՝ մատու-
ցաք Փնօրինին և կաւալեցկուն. չև ևս ու-
նիմք՝ ի նոցանէ զպատասխանի՝ որովհետև
ինքն կնօրինն ի մէջ այս քանի աւուրցս
գառնալոց է աստի ուստի եկեալ էր՝ և մեք
բացորոշակի խնդրեցաք մեզ ճանապարհ՝ կամ
գիմել ի գուռն կայսեր կամ վերադառ-
նալ ի սուրբ Աթոռ՝ տեսցուք թէ որ-
պէս տալցեն մեզ պատասխանին. զառաջին
պահարանաւ Թուղթքն Հաշտարհանու զոր
ձեռամբ մեր Ծովսէփին էիր լղեալ՝ ի մալիսի
չին եմք լղեալ՝ բայց գնորդ գրեցեալդ ընդ
քանի հարկաւոր Թղթոց՝ զորս աստ՝ ոչ ե-
տուն տեղի ունկն մատուցանելոյ վասն խըս-
տասրտութեան իւրեանց՝ (ըստ բանին զի մի՝
լուիցեն ականջօք իւրեանց և այլն) ընդ
կարաւանին Մակարիու լղելոց եմք զորս
ունին երթալ այսօր կամ վաղն, Իսկ
իւանէ Սարգարն և Սօլօմոն մէնթարն ի կող-
մանէ բոլոր քաղաքացւոցս՝ հանդերձեալ
են երթալ ի դուռն կայսեր՝ վասն չնորհա-
կալութեան և վասն ողորմութեան նորին որ
ի վերայ քաղաքիս։ Վասն այսր և ինքն ևս
գրեաց առ Տէրդ մեր՝ զի եթէ ունիցիս Թուղթ
ինչ ընդ նոսա առաքելի՝ փութան զի օր մի
չուտով հասուցանիցես ընդ որում հաւատա-
րիմք են։ Մերս կնէազ Սօլօմոն ևս՝ ունի
վասն սոցա գրեալ առ Տէրդ մեր՝ ե դժնչ լի-
նելն ոչ գիտեմք բայց միայն խնդրեաց ի
մէնջ զի և մեք գրեսցուք առ ի կատարել
խնդիր սորա և մեք ևս սպասեմք վերջին պա-
տասխանւոյ սոցա. զի եթէ հրաման լիցի ի
սոցանէ դէպ ի կայսրն՝ գնալոց եմք ընդ
կնօրինին. ապա՝ թէ ոչ՝ գտուեալ Թուղթն
մեր որ ընդ Սահակ աղալին՝ և գնոյն Թղթոյ
հաչիւն ձեռագրով հաստատելոց եմք Դրիգոր
Արքեպիսկոպոսին. այսու պայմանաւ զի եթէ
բանն աւարտ հատուցանիցէ ըստ մերս կա-
մաց տալոց եմք նմա անթերի ղգրուածս մեր՝
ապա թէ ոչ՝ և մեք ոչ ունիմք պարտակա-
նութիւն այլոց ուրուք։ Որպէս Եփրեմն վա-
սըն Դանիէլին Զի Թուման ընդ վայր խարճ
է արարեալ։ տեղւոյս որպիսութիւնն այսպէս
գիտեմ՝ զի ինքնահալած փախստականս այս՝
ի հալածական լինելն ի սրոյ Աթոռոյդ բեր-
եալ է ընդ իւր դողութեամբ՝ զմի մեծ կու-
կում սրբալոյս մեռոնն անգիտելի ի ձէնջ՝ և
աստի գրեալ առ Դանիէլ վարդապետն թէ
մեռոնն ընդ իս բերեալ ունիմ. գու այդի
գրեա առ քաղաքացիսս՝ զկոնդակ առաջնոր-
դական և նուիրակական յանուամբ մերով՝ և
լղեա աստ զի տեսցեն և իմասցեն թէ՝ ի քէն
եմք հաստատեալ՝ վասն որոյ և նորա
գրեալ առաքեալ էր այսր՝ զոր յանցեալ կի-
րակէին ընթեռնուլ ետ վանքի եկեղեցւոջս
յուրախութիւն տէր գաղտնին չիք Դարձինին

և փիթռուչնց չաննւ ալ մեք զայս ունիմք ղրել Տէրութեանդ մեծի՝ թէ ղիարդ անգիտելի ի ձէնջ զմիւռոնն սուրբ ալսպիսիքս գոզանան և յօտար տեղիս չրջեցուցանեն. ոչ ապաքէն սա՝ ձեռամբ անհաւատարիմ լուսաբարացդ լինի՝ և ևթէ այս ալսպէս՝ ապա ղինչ թողուն զոր ոչ առնեն. զինչ և իցէ խնդրեմք զղուշ մեալ ի կեղծուպատիր արանց, զայս ևս գիտասցէ տէրդ մեր ղի վասն առաջին գրելնացն մերոց զոր յայտնի է ձեզ՝ փութ կալցիք զի կատարումն տալցէք խնդրանաց սոցա՝ և այն՝ որպէս և գրեալ ես սոցա զերկուս խնդիրս դորին՝ հաստատեա ի սոցանէ ձեռագրով. և ապա որքան հնար է փութացուլ ի հաշտութիւն՝ զի կատարումն բանին մերոյ ի դմանէ կախեալ երևի. և սոքա եւս մեծաւ լուսով են՝ զոր ոչ ինչ կարեն լետս կասիլ վասն բանին մերոյ եւ լուսամբ որ յանձն առեալ կատարելոց ևն զինդիր մեր՝ եւ որպէս լինի դրեալ ծանուցանելոց եմք. առ այժմ այսքան. Վանքի տէր Յոհաննէսին, տէր Սիմոնին, Մեհրաբ աղալին եւ Պաստոմէնց պարոն Ստեփանին լատուկ լատուկ՝ օրհնութեան եւ յանձնարարական թուղթ գրեսցես՝ եւ այն դրեալ ձեռագրին մեք Սօլոմոնին այնպէս խորհեցաք եւ զու որպէս հաճիք՝ այնպէս դրեսջիք զի ըստ գրեցելոցդ առասցուք. Յովհաննէս դիւանըն հողւով չափ չանայ ի գլուխ տանել զասացեալս մեր՝ տեսցուք թէ՝ որպէս լինի. վասն Հնդու նուիրակ Յակոբ վարդապետին այսպէս սուտ համբաւեն աստ թէ՝ հանդերձ բեռամբքն ի վերալ Սալմաստու է գնացեալ առ Կանիէլն՝ եւ այլ այսպիսի սուտ համբաւք չատ. Յովակիմ տղայն լրես առ մեզ որ չատ հարկաւոր է՝ ըստ որումի թարց տղալի նմք մնացեալ՝ եթէ գնամք ընդ մեզ տանելոց եմք՝ եւ եթէ գամք ընդ մեզ բերցուք.

որ մնամք մեծի Սրբազնութեան ձերոյ՝ մշտապատրաստ ծառայք ԿԱՐԱՊԵՏ և ԱՐԱՀԱՄ անարժան սեւաւորք.

ի 1251ին. եւ Մալիսի 18ին
ի Թիֆլիզ.

ՀԸ. *Թուղթ Իվանէ Սարդարի Օրբէլեան առ Դաւիթ կաթողիկոս (?)*

Շնորհաղարդ և Սրբազնասուրբ ***ապետ ամենայն Հայոց,

Ողորմած Տէր եւ թաղասր.

Ջօրհնալիր և ղչնորհածորան նամակ սրբազնասրբութեանդ, ընկալաք ուրախութեամբ և զամենայն հրամայեալդ ծանեաք լիովին. որոյ ուրախութեամբ լցեալ գոհս մատուցաք բարերարին Աստուծոյ և խնդրեցաք կեանս երկար եւ լաջողակս ողորմած Տեառնդ. եւ երդմամբ հաւատացուցանեմք տեառնդ մերոյ, որպէս զի ի նախնեաց մերոց սկսեալ մինչ ցարդ հաւատարիմ լեալ եմք սրբոյ Աթոռոյդ եւ գահակալաց դորին. այժմուս ևս առաւել գլխովին ջան եղեալ, ջանամք սակս հարազատութեան ծառայելոյ Տեառնդ մերոյ. որքան կարն մեր է. մինչ ցելն չնչոյ մերոյ. թէ աստ եւ թէ ուր ուրեք պատահեսցուք.

Զայս եւս լայտնեմք տեառնդ մերոյ. եւ բարեկամաբար իբր մասլահաթ տեսանեմք, զի այսպէս պատահեցաւ որ մեք երկուքս էլ, ընդ կնօքինին երթամք ի դուռն ողորմածադունեղ կալսերն, և մեք որքան կարն մեր է անդադնօր ջանալոց եմք ի գլուխս մեծամեծս ց սակս հաստատութեան Տեառնդ, մեք խէլրաթ տեսաք և ծանուցանեմք Տեառնդ՝ եթէ տէրութեանդ ևս հաճոյ լիցի մին փոքր թուղթ նորին գերազանցութեան մեծ վէզիրին դրևսցես զամենայն լանցանս քոյ դրեալով. մեք դհետ մեր տարեալ չանասցուք ի կատար հասուցանել զխնդիրս ձեր. և եթէ կարելի լիցի երկու հատ զար հաչիա բութադար չալ ըստ իւրեան արժանւոյն դտեալ լը. դեսցես ի ձեռս կնեազ Սօլօմոնին, որ ի քէն չնորհեալ իբր սիրոյ նչան ընծալ տարցուք նմա, չատ բարի լինի. խնդրեմք այս խորհրդեացս հաճեսցի սիրտ Տեառնդ դի բաւուք լինելոց է. այսպիսի ժամանակին մի հալիր խնալելոյ, զի մեք զօգուտն Տեառնդ կամելով՝ այսպիսի խորհուրդ խորհեցաք, կամք Տէրութեանդ է.

Զայս ևս որդիական համարձակութեամբ դրեմք և խնդրեմք ողորմած Տեառնէդ, զի մեք տեղս բազումս չանացեալ որոնեցաք դրամով և ոչ գտաք, վասնորոյ որդիական համարձակութեամբ խնդրեմք, զի ամենե-

ցուսցս երկու հատ ղար հաչլալ բուքաղար արրալ չալ չնորհեսցես, մեղ, ղի ընդ մեր տարցուք, որ լոյժ հարկաւոր է մեղ, և աստ ոչ դասք. եւ առ. տէրութիւնդ ղմեղ ի կեանըս մեր պարտաւոր առնես. և ղհաւատարմական ծառայութիւնն մեր աստուածով լսելոց ևս ի ղրութենէ բարեկամացն քոց. աստուածով եթէ կատարես վնդիրս լոյժ բարի է. եթէ ոչ կամք տեառնդ է, մեք ևս ի կեանըս մեր հաւատարմապէս ծառայելոյ պատրաստ եմք անվհրջանալի մինչ ցմահ։

Համարձակութեան մերոյ ներուին խնդրելով զօրհնալիր նամակ սրբազնասրբութեանըդ անպակաս արասցես ի լուրախութիւն սրտի մերոյ.

որ եմք սրբազնութեանդ ամենախոնարհ ծառայ ԻՎԱՆԷ ՍԱՐԳԱՐ ՕՐԲԵԼԵԱՆ և ՍՕԼՕՄԱՆ ՄԷՀԹԱՐ ԹԱՐԹԱՆԵԱՆ

1802 թուին
մալիսի 18ին
Թիֆլիզ

ՀԸ. Հրովարտակ կայսեր Ռուսաց առ Դանիէլ կաթողիկոս *)

Թարգմանութիւն Վարգապետին և մեծի հրովարտակին նորին կայսերականի մեծութեան, որ առ Դանիէլ Պատրիարգն ամենայն Հայոց

Աստուծով արագահաս Ողորմութեամբն մեք Աղէքսանդր Առաջին կայսր, և ինքնակալ ամենայն ռուսաց. Մոսկովու՝ Դիովու՝ Վլադիմիրու՝ Նովոգորոդու. Արքայ Ղազանու. արքայ Աստրախանու. Արքայ Սիպիրու. Արքայ Խերսոնու. Դաւրիու. Թագաւոր Պագովու, և մեծ իշխան Սմոլենսկու՝ Լիգովսկու՝ Վօլինսկու՝ և Պոտօլսկու. իշխան Էսալանտու՝ Լիֆլանտիու՝ Կալանտիու և Սեմիգալիու՝ Սամոդիցու՝ Կօրէլու Թվէրու՝ Իւղորու՝ Բերմու՝ Վեաթսկու՝ Պօլղարու և այլոց. Թագաւոր և մեծ իշխան Նովոգորոդ Նիղովու երկրին. Չերնիղովու՝ Րիազանու. Պօլոցկու, Րօստովու, Եարոսլաւու, Պելուօչէրու, Ուտօրու. Օպտօրու, Կօնդիսու, Վիտեպսկու. Մոոեսլաւոլ, և համայն հիւսիսային կողմանց, հրամայող ե թագաւոր Իվերու՝ Կարթալինու՝ վրաց և կապարդինու, երկրին չերքեզաց և լեռնական իշխանաց և այլոց ժառանգաւոր՝ թագաւոր՝ և իշխող. ժառանգ Նորվեղու. Ղերցող. Շլեղվիգ. Ղօլստինու. Օտօրմարնու. տիթմարսենու ե Օլտէնբուրղու թագաւոր եվերիու, և այլոց, ե այլոց, և այլոց.

Դերապատիւ Դանիէլ Պատրիարգին և այլոց ամենից պատուաւոր մելիքաց իւղբաշիւ և կառավարչաց և ամենայն հայոց պատուելի Աղգին մեր կայսերական ողորմութիւն և չնորհաւորումն։

Քալտ առնեմք սլսու մերս ողորմութեան մեծ հրովարտակաւն. ղի Դանիէլ պատրիարգն ամենայն հայոց ի ձեռն ի կայսերութեան մերում եղեալ առաջնորդ եփրեմ Արք եպիսկոպոսին իւրոյ ամենախոնարհաբար գըրով խնդրեալ էր ի մէնջ ղի չնորհեսցուք նոյն պատրիարգին ղմերս կայսերական մեծ հրովարտակ. ղոր ընկալեալ լիցի պահպանեալ ի տաճարի Աթոռոյն նորա էջմիածնի՝ վասն լաւիտենական լիշատակի ողորմութեան և բարեհաճութեան մերոյ—Զի որպէս լառաջ քան զալս բարձրագոյն նախնիքըն մեր երանելի ե լաւիտենական փառացըն արժանաւորք նոցին մեծութիւնք ինքնակալ կայսր և թագաւոր մեծն Պետրոս, և թագուհի և կայսրուհի եկատերինէ առաջնորդն. նոյնպէս թագուհի և կայսրուհի եկատերինէ երկրորդն, և սիրելագոյն ծնօղն մեր թագաւոր ե կայսր Պաւել Պետրովիչն ղպատուելի աղգն հայոց լաղագս քրիստոնէութեան ենթ լատուկ կայսերական ողորմութեան իւրեանց պահպանեալ բարեհաճեցան, վասն որոյ հրովարտակքն որ ի մեծութենէ նոցա՝ առաքեցեալք են, այսինքն լամի Տեառն 1724—ի 1726 ի 1768, ի 1798 և ի 1800 թուոջ առ այն ժամանակի եղեալ եսալի, Ներսէս, Սիմէոն, Ղուկաս և Յովսէփ պատրիարգացն հայոց, նաև մելիքաց՝ իւղբաշիւ՝ կառավարչաց և ամենայն հայոց պատուելի աղգին լայտնի է եղեալ։ Նոյնպէս և մեք հետևելով լիշեալ բարձրագոյն Նախնեացըն մերոց հաւատարապէս բարեհաճեցաք ղներկալ Դերապատիւ Դանիէլ Պատրիարգ. Նոյնպէս և լապաղալ լաջորդն նորին Պատրիարգութեան Աթոռոց և մելիքքն՝ իւղբա-

*) Ցպում ենք նոյնութեամբ, ինչպիսին էր հայերէն օրինակը.

չինն կառավարիչն և համայն պատուելի ազգին հայոց պահպանել ի ներքոյ մերս կայսերական ողորմութեան՝ չնորհի և խնամոց։ Նաև համառաճ եմք մեք լիշեալ Դանիէլ Պատրիարգին, և զկնի նորին Պատրիարգութեան Աթոռոյն ժառանգորդ փոխանորդացն զի բնակեալքն ի մեր Բուսաց կայսերութեան երկրի եղեալ ազգն հայոց, որք են իւրեանց դաւանութեանն հոգևորական կանոնիւ և եկեղեցական կարգաւ, ունիցի ի ներքոյ կարգադրութեան իւրոյ. նոյնպէս որպէս յառաջ եղեալ է վասն որոյ երբ խնդիր լիցի ի ստացանէ առաքել առ ինքեանս հայոց արքեպիսկոպոս և կամ այլ հոգևոր կարգաւոր վրկայական գրով Պատրիարգին. զի առանց նորին վկայական գրոյն ի ներս մերս կայսերական տէրութեանս ոչ են ընկալելոց. ուստի ի մէնջ հրովարտակաւ պատուիրեալ է կարգեցեալ կուսակալաց որք են ի սահմանս մեր։ Այլ և մեք ամենայնիւ լուսաղրեմք լիշեալ գերապատուելի Դանիէլ Պատրիարգին՝ պատուելի մելիքաց՝ իշղպաշաց՝ կառավարչաց և ամենայն հայոց և մանաւանդ առաւել ևս, որք են ընդ հովանեաւ կայսերութեանս Բուսաց պահել ի ներքոյ մերոյ բարձրագոյն ողորմութեան և հովանաւորութեանն։

Տրեցեալ եղև ի Ս. Պետերբուրգ Մերով մեծ կնքով
Լամի Տեառն 1802 մայիսի 19.

---

2. *Թուղթ միաբանից ս. Էջմիածնի առ Պատրիարքն Կ. Պոլսոյ.*

Զարդարեալ երկնաւիր պարգևօք սուրբ հոգւոյն չնորհաւորգ Արք նպիսկոպոսի և վեհլուչ Պատրիարգի մեծի քաղաքիդ Կոստանդնուպօլսոյ և այլ չնորհալալ Արք նպիսկոպոսաց՝ հանճարեղ վարդապետաց սրբանուէր քահանայից և այլ եկեղեցական աստիճանաւորաց. նաև գերամեծար Ամիրալից լարգելի իշխանապետաց և իշխանաց և բոլոր մերալին ժողովրդոց՝ ողջոյն սիրոյ և լարգանաց մատուցանեմք. խոնարհ պաշտօնեայք Քրիստոսի՝ միաբանք Էջմիածնի։

Ի տան և եօթն ապրիլի գրեալ Բզեթով մերով լուսամբ թէ տեղեկացեալ լիցիք վչտագին անցից որք անցին զմեօք և գիտացեալ զամենայն տառապակրութիւնս մեր. վասն որոյ ալսու Թղթով կամիմք զալ իւս ծանուցանել. Արդ լալտ է լարգելեացգ մերոց, թէ լաւուրս բռնաւորութեան իւրոյ բարբարոսս ալս դեղծեալ և ազաւաղեաց զամենայն բարեկարգութիւն միաբանութեանս մեր և ազգին իսկ։ Քանղի չունի զչմարտութիւն ի ձեռին իւրում լինել ի նա ապաստան. այլ միալն ապաւինեալ ի խաղն և ի հնարս չարութեան, առնէ լրբաբար զոր ինչ և առնէ։ Նմին իրի ի ձեռն խանին բռնացեալ ի վերալ մեր՝ գործակից իւրն չարութեան ջանալ առնել զմեզ. ոչ թէ միալն ինքն հակառակ կացեալ ճշմարտութեան՝ զգառն քաղցր ասէ և զքաղցրն զառն և ժառանգէ զոն ըստ մարգարէին, այլ և զմեզ բռնութեամբ ի նոյն հրաւիրէ։Գիտէք զուք ի գրուածոց բազմաց՝ թէ ի զիմաց միաբանից տաճկական ինթիղամ.24) դրեալ բռնութեամբ կնքել եմ, եթէ ոք ի մէնջ խալիֆալի հրամանն չառնու լանձն կատարել զմօրուս նորա գերծցն և խանին հարիւր թուման տուժեսցի. եթէ ոք վախիցէ՝ զալս պատիժ հատուսցեն լըմբռնիլն նորա և ի սեննեակս եղեալ ինքն իւր խանին եղիցի բոլորովին։ Բաց ի զրոյս լալտնէ՝ զոր էառ ի հասարակաց, էառ և լատուկ գիր մի լԱստուածատուր և ի Յարսեղ Արք եպիսկոպոսաց, եթէ հակառակ գոցին ոտք ինքեան՝ իւրաքանչիւրքն հինգ հարիւր թումէն տուժեսցեն։ Եւ զկնի լաւելուլ զբռնութիւն իւր՝ ի զիմաց միաբանիցն զբանագրանս դրել ետ առ փափագելին հոգւոց մերոց ... և հրաւիրելոց է զմեզ ի կնքել. ոչ գիտեմք զինչ արասցուք մատուանջնալ խորհիմք, ոչ կարեմք զելս իրացն գտանել. եթէ կնքեմք՝ հակառակ գտանիմք Աստուծոյ և կանոնաց սրբոց հարց և անձամբ զանձինս մեր նզովեալ բանիւ առնեմք զմեզ. զի գիտեմք ի կանոնաց, թէ ընդունայն բանագրանք և նզովք ոչինչ ներգործեալ լանձն անմեղ՝ դառնալ ի բանագրօգն. որպէս նետ ձգեալ ի վէմ կարծր՝ գառնալ անգծելի ի ձգողն։

Ապա եթէ ոչ կնքեմք՝ անշուշտ գիտեմք, թէ զի վերոյգրեալ պատիժն կրելոց եմք. բայց գիտասջիք զալս՝ եթէ հնար եղիցի՝ ընդղիմացեալ ոչ կնքեմք. ապա թէ ոչ, ակամալ և բռնութեամբ կնքել հաւարեսջիք։ Վասն զի ոչ կարեմք հրամանի սորա կալ ընդդէմ

երբէք. եթէ իրաւ իցէ հրամանն և կամ անիրաւ. զի մահ և կեանք մեր ի ձեռին սորա են. կամ կեցուցանէ, և կամ կորուսանէ. եթէ ծանր ծանր լանցանս բարուրանօք բարկեսցէ ի բերալ մեր և ի թղթի արձանացուցեալ հրաւիրեսցէ ի կնքել ոչ կարեմք բացասել. Նմին իրի և ձեզ պարտ է լետ ալսորիկ ըստ կամս սորա կնքեալ թուղթսն մեր սուտ և ունայնութիւն համարիլ որչափ և պատահեսցին. զի ստութեամբ ղրեալ և բռնութեամբ կնքել տալ. Իսկ վասն բանադրանացն սորա ալսպէս գիտասջիք զի չունի սա իրաւունս բռնագատելոյ զոք եթէ ոչ միայն օրինաւոր հալրապետն ազդի մերոյ ՚՚՚, այլ և լետին աղքատն ևս վասն բազում պատճառաց. նախ զի ինքն մերժեալ է լաղդէն և ընկեցեալ լիւխանութենէ. ապա ոչ կարէ բանիւ առնել զոք գոնէ և ոչ զօրինազանցն. զի եթէ արասցէ չէ ընդունելի. և բանադրեալն այն չէ զրկեալ լեկեղեցական հաղորդակցութենէ. Երկրորդ զի ինքն սբրբապիղծ և սիմոնական գոլով՝ ինքնին բանագրեալ և նզովեալ է ի նախնի սրբոց հարց և սրբազան ժողովոց. ապա զայլս ոչ կարէ բանադրել. Երրորդ՝ բանիւ եղեալ և նզովեալ է սա ի միաբանութենէս մերմէ երկիցս առաջի Քրիստոսակէզ տեղւոյս միջնորդութեամբ սրբոց մասանց մի նախքան զօծումն իւր և երկրորդ զկնի օծման իւրոյ. Առաջին յայտ է ի թղթոյ բոլոր միաբանութեանս մերոյ՝ զոր կնքեալ եմք 49 կնքով. և երկրորդն ի թղթոյ ծ եպիսկոպոսաց, որք գրեցին լերեան քաղաքի՝ յապարանս խանին ՚՚՚ հալրապետն մեր գիտէք ամենեքեան թէ է առնախանձու և վասն ախտին իւրոյ. զալսպիսի բանադրանս եթէ օրինաւոր հալրապետ և կամ եպիսկոպոս ոք գրեսցէ, տակաւին անընդունակ է ըստ նիկիական հինգերորդ կանոնին. ապա ուր միանալ բանադրանք ապօրինաւոր առնս ալսորիկ. զի գրի ի հինգերորդ կանոնի անդ. եթէ ի խստութենէ և ի չար նախանձուէ բանիւ եղեալ և մերժեալ իցէ ոք, առ ալնպիսին մարդասիրութիւն արասցեն և ալլն.

Հինգերորդ՝ ըստ վարդապետաց անընդունակ է բանադրանքն՝ եթէ չիցէ վասն հրապարակական մահացու մեղաց. զի ուր չեն մեղք և ոչ տեղի նզովից. զի ալնպիսի նզովք առ նզովօղն գառնալ ըստ քսաննինն-ներորդ կանոնի լուսաւորչին, թէ որ վալրապարն նզովէ, նզովեալ եղիցի՝ դէռևսկն ասացուք. զօրհնութիւն և գանձ բարբարոսիս ալսորիկ՝ պարտ է ձեզ համարիլ ախտաւոր մտաց աղճատեալ ծնունդ և իբրև զբաջազմուս մոլեդնելոց զի չիք ի սմա հոգի Աստուածալին. ալլ զինչ և գործէ, դիւական հոգւով գործէ. Ապա աղաչեմք աւետնեքեան ազատեցէք զմեզ ի բռնութենէ սորա. զի զօր հանապազ տառապիմք և տանջիմք. Զ.ւս ևս գիտասջիք զի կամք է մեզ ամենեցունցս ի տէրութեան օսմանցւոց Կաթուղիկոսական Աթոռ հաստատել՝ օծցի և նստցի անդ օրինաւոր սրբազան հալրապետն մեր և զգործ հալրապետութեան իւրոյ կատարեսցէ սրբագործելով զմեռոնն և ալլն. եթէ լաջողեսցէ տէր՝ բերեմք գնա պստուով ի սուրբ Աթոռս և կամ մեք խոյս տուեալ՝ գնամք առ նա. ապա թէ ոչ՝ մեք մնասցուք ի գերութեան և ի ծառալութեան աստ. դուք մխալն թէ զչնորհս սրբոյ հոգւոյն ի ձեռն օրինաւոր հալրապետի վալելեցէք. հետևելով ճչմարտութեան լերուք ողջ երկար կենօք զօրացեալ ի տէր ի պարծանս և ի ցնծութիւն ստորակնքողացս թղթոյս. Միաբանք ամենեքեան ջատագով են ճչմարտութեան և համաձալն ընդ մեզ (բաց ի չորից անձանց) ալլ առ երկիւղիւ չկարացին դնել կնիք ի թղթի ալսմիկ. զի թէ ի ձեռն անկցի ալս թուղթ՝ մնծի վտանգի լինի պատճառ ստորակնքողացըս գրեթէ և մահու իսկ. Նաև միաբանք արտաքին վանորէից ճչմարտութեան են ջատագով. բալց ոչ ոք ի նոցանէ կարէ գալ առ մեզ և ոչ ի մէնջ ոք գնալ կարէ առ նոսա. վասնորոլ չեզև կարելի նոցա գնել կնիք ի թղթի ալսմիկ. Իսկ չորք անձինքն վտրեհնաբարուք գոլով՝ առաւել ղպարարտութենէ պորտոց իւրեանց հոգան քան թէ զբարեկարգութենէ ազգին. որոց զանուանսն ոչ լիչատակելոլ արժան համարիմ աստ. և ալսպէս գիտացեալ՝ կրկին ողջ լերուք.

Գրեցաւ 1802. ե ի մալիսի 20.

ի չնորհատու սուրբ Աթոռս Էջմիածին.

Հովակիմ եպիսկոպոս Առաջնորդ Տաթեւու. Գրիգոր եպիսկոպոս գործակալ. Ղազար եպիսկոպոս խոստովանահալր հանգուցեալ վեհապետին. Յօհաննէս եպիսկոպոս գործակալ. Յակոբ եպիսկոպոս. Փիլիպպոս վարդապետ

գրագիր հանգ. վեհ.։ Ստեփան վարդապետ ջուղայեցի։ Յովհաննէս վարդապետ։ Փիլիպպոս նախկին հիւրընկալ։ Կարապետ վարդապետ։ Զակար վարդապետ վարժապետ։ Յակոբ վարդապետ մուլքասար։ Յովհաննէս վարդապետ սպասաւոր հանգուցեալ վեհափառին։ Զաքարիա վարդապետ։ Մովսէս վարդապետ գրագիր։ Անտօն վարդապետ նորոգ հիւրընկալ։

---

20. *Յայտարարութիւն Մխիթարեանց սրբոյ Էջմիածնի եւ Հոգեւորականաց Արեւելեայց առ ընդհանուր Ազգն Հայոց* *)։

ԿՆՆՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԶԱՆ ՍԻՆՀՈԴՈՍԻՍ. ԲԱՆ Ա

«Ուր իցեն երկու և երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա». ասաց Քրիստոս Տէրն մեր վասն որոյ և ի ժամանակիս յամենայն մինչ ձեռնարկեաց ամենաչարն խարբաւել զեկեղեցի սուրբ, յանուն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ ժողովեալ բազմութիւն Եպիսկոպոսաց, Վարդապետաց, Քահանայից և այլ ժառանգաւորաց ի յիւրեք վանք կոչեցեալ սուրբ ուխտս, որ յ'ստորոտ Նպատ լերին ի Բագրեւանդ գաւառի առ ափն Եփրատայ, անդ ուր մկրտեաց սուրբ Լուսաւորիչ մեր զմեծն Տրդատէս և զԱչխէն տիկինն և զԽոսրովիդուխտ և զդուստն Հայոց բիւրս

*) Յօրինակի այլում, որ ձեռագիր է, այսպէս ունի նախադրեալ Յայտարարութիւնս այս. «Գրակ որ «կոչի Հայելի Յանդիմանութեան, որ պարունակէ զըզ«մանուր գիրս Տեառն Դանիէլի Հոգեընտիր Վար«սերակոչ և Աղաչարուեր Կաթուղիկոսի, և հարա«զատից նորին Երիցոր պատրիարքի ն. Գոլոզ, և «այլ ճշմարտասէր և քաջեկարգ Արքեպիսկոպո«սաց, ի գաւառանութենէ Դաւթի Լօռեցւոյ որդւոյ «Գօրչայու Թիֆլիզեցի անուանելոյ, Հրամանաւ «իսկ վերոյիշեալ Հոգեսէր և Սրբազան պատրիար«քի Տպեցեալ յամի Տեառն 1803. ի Հայոց ՌՄԵՒ. «Հոկտեմբերի 6.—ի Տպարանի Յովհաննիսեան Գո«զոխ։ Որով երեի թէ տպեալ իսկ են յայնմ ժա«մանակի, և ցրուեալ առ Ազգն համօրէն։ Ի մերում Ն. վ. Ե. օրինակի վերնագիր չկայր, ես յաւելի ի մեւս յայս օրինակէ, բազգասեալ ընդ միմեանց յալրէ ի ծալր. Ե. ք. Մ.

չորս հարիւր հանդերձ ամենայն նախարարօքն և աւագանովքն, և երեսեցաւ սիւն լուսոյ և խաչ լուսեղէն ի գլուխ նորա, ուր և մատուցեալ զվիրականն սուրբ պատարագ հաղորդեաց զնորածնեալսն սուրբ միւռոնաթեամբրըն ի կենարար մարմնոյ և յարենէ Որդւոյն Աստուծոյ։ Եւ աստ ի մէջ սքանչելահրաշ սուրբ Տաճարիս կառուցելոյ յանուն Յովհաննու՝ ոյն է Տրդատայ արքայի մերոյ, առաջի սրբութեան սեղանոյն, վկայութեամբն Աստուծոյ և սուրբ Աւետարանի նորա, ուղիղ ակնարկութեամբ ի հանդէս մատուցեալ, քընննեցաք զդաստատան Դաւթի Թիֆլիզեցւոյ որ անձնընծայ եղեալ անուանեցաւ կաթողիկոս Հայոց յամի 1801 ի 28 Ապրիլի, յորմէ և այսր ոչ երբէք տեսանէ եկեղեցիս Հայոց զերկաս խաղաղութեան, զորս վայելէր առատապէս յերկին և յերանդին։

Եւ ի զննին եղեալ համեմատութեամբ Աւետարանական քանից և գրոց մարգարէական և առաքելական, ծանեաք գնա ամենեւին խոտորեալ ի շաւղոց կենարար վարդապետութեան նոցին, և հետախոյզ քննութեամբ կանոնաց Հարցն սրբոց Առաջնոց, և բարւոք վերահասութեամբ քանի քանի բազմօրինակ բազմակնիք գրութեանց Վահանայկարդ միաբանութեանն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, գտաք զնա իսկապէս ընդ դատապարտութեամբ եկեղեցւոյ, և անվաւեր օծութիւն նորա։

Եւ զի՝ մի ընդ համառօտն ընթացեալ ի տարակուսի թողուցումք զմիտս ալնոցիկ որք թարց տեղեկութեան պարագային, միայն պարզ մտօք ընկալեալ գնա զառաջինն որպէս Կաթողիկոս վաւերական օծութեամբ, գալթակղեսցեն վասն դատաստանի սուրբ Սինհոդոսիս մերոյ, առաջի առնել գրով և ստորագրութեամբ մեր՝ արժան համարեցաք, որպէս զի լաւ վերծանութեամբ իրացն հանդամանաց՝ սրբեսցի խիղճ մտաց հաստարակուսեան հեռաւորաց և մերձաւորաց ազգիս մերոյ, և միանցէ այնպէս վասն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ՝ լիշատակ անջնջելի յապագայ ժամանակի։

ԿԱՆՈՆՔ ՎԱՍՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ—ԲԱՆ Բ

Արդ՝ ի սկզբան անդ խնդրեցաք զկա-

նոյնս վասն ընտրութեան կաթուղիկոսի. և զտաք ի գլուխս դրքոյն օծութեան կաթուղիկոսի դրեալ ալսպէս. «Ցորժամ հանդերձեալ « լինին բարձրացուցանել զոք ի պատիւ կա- « թողիկոսութեան տանս Հայոց, բոլոր ժո- « ղովուրդք Հայաստեա ազգին հանդերձ ամե- « նայն ժառանգաւորօք, արկոտասան եպիս- « կոպոսաք ժողովեալ ի մի՝ ընտրեսցեն նախ « ղերիս, և ապա քննութեամբ ամենայն ժո- « ղովուն՝ որոշեալ վերստին, և զմինն ելերիցն՝ « վկալեալ լաւենալն գործս բարիս, և ի վարս « առաքինիս. սուրբ և անարատ, լի գիտու- « թեամբ և իմաստութեամբ եւ մի լիցի ի « հաւատս թիւր, ի բարս ժանտ, ի վարս ան- « ուղիղ և ի բանս անհաստատ. մանաւանդ « ես մի լիցի անձնընծալ և ընտրեալ արծա- « թով ի ձեռն կաշառաց այլազգի իշխա- « նաց, զի պիղծ է այնպիսին առաջի Աս- « տուծոյ, և բանաղրեալ իսկ է»։

Այլ և զտաք ԸՆդհանրական գիրս սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ ի 4 գլուխ և 44 երեսն՝ ուր ընդարկար գրէ, որ միւս ևս Դաւիթ անուն եպիսկոպոս՝ տոլնալէս լազչանօք բռնութեամբ ի ձեռն կաշառաց ընկալեալ է զօծումն Հայրապետական ի գլուխ իւր, այլ բազմութիւն եպիսկոպոսաց, վարդապետաց, հարց վանականաց և միանձանց աւելի քան ԲՌԵՃ. (2500) անձանց, ընդ որս և սուրբ Ներսէս Շնորհալի և եղբայր իւր սուրբ Դրիգորիս, ժողովեալ ի Սեաւ Լեառն և մեծաւ Սիւնհոդոսիւ դատապարտեալ զնա՝ նզովեալ և հերքեալ են լնկեղեցւոյ Քրիստոսի, և սրով բանին Աստուծոյ հատեալ զնա որպէս զնեխեալ և զփտեալ անդամ լառողջ մարմնոյ նկեղեցւոյ, գրեալ են և զկանոնս թէ՝ «Որք ոչ « ընտրութեամբ Աստուծոյ և Աստուածային- « արանց այլ ինքնաչարժ ախտիւք և բռնա- « կալաց աշխարհի հրամանօք զանձինս իւ- « րեանց բարձրացուցանեն յաստիճան Սրբա- « զան Քահանայապետութեան, ոչ միայն քա- « հանայապետութեան չեն արժանիք, այլ և « ոչ Քրիստոնէական հաւատոյ, ոչ սրբոյ պա- « տարագի լիշատակութեան, և ոչ ևս օրի- « նաւոր թաղման անդամ չեն, ասէ, արժա- « նիք»։

ԹՈՂԹ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾ-ՆԻ ԲԱՆ Գ

Եւ ըստ ասց տեսաք և ընթերցաք զբազմակնիք թուղթ միաբանութեան սրբոյ էջմիածնի առ Երևանու խանն 8ն Ապրիլի 1801 ամի Փրկչին յառաջ քան զօծանիլն Դաւթի, յորում գրեալ են թէ՝ «Մի բռնա- « զատեսցես զմեզ զայլ մարգ առնել « մեզ կաթողիկոս, զի ահա մեք երդուեալ « եմք ի սուրբ Տաճարս և ի սուրբ Գեզար- « դընն, և անիծիւք հանդերձ փակեալ եմք, « որ մինչև Դանիէլ վարդապետի գնալն՝ ով « ոք ինքնակամ կաթողիկոս լինիցի ամենե- « ւին անընդունակ է լինելոց»։

Ընթերցաք ևս և զվկալեալ օրինակս մլուս բազմակնիք թղթոյ նոցա ի նոյն թիւ, գրեալ առ Կիւորկի խանի որդի Դաւիթ խանն ի Թիֆլիզ, յորում ևս գրեալ են թէ՝ «Ի կող- « մանէ սիրելւոյն մերոյ Դաւիթ արհի եպիս- « կոպոսին որ հրամայեալ էիք հնարել և « կացուցանել զնա կաթողիկոս, բայի էր « (թէպէտ) հրամանն Ձեր. բայց մեք որ « միանգամ խնդրեցաք զԴանիէլ Սրբազան « Արհին գալ ի կաթողիկոսութիւն մեզ, դաչ- « նադիր ևս եղաք ի մէջ Աստուածային սբր- « բոյ Տաճարիս, երդուելով ի կենսատու « սուրբ խաչն Քրիստոսի, ի նորուն կողա- « մուխ սուրբ Գեղարդն, և ի նշանագործ Աչ « սրբոյ Լուսաւորչին մերոյ, զի բաց ի Դա- « նիէլ սրբազան Արհւոյն զայլ ոք ոչ ընդու- « նիցիմք ի Դահակալութիւն սրբոյ Աթոռոյս « և նզովս ևս եղաք, զի եթէ ոք ի մէնջ ինքն- « ընծայ լինելով բռնութեամբ ձեռնագրեսցի « կաթողիկոս՝ անիծեալ լիցին լԱստուծոյ « ինքն և ձեռնադրողքն իւր։ Արդ՝ ալսպէս « հաստատապէս երդուեալ եմք և սաստիկ « նզովիւք փակեալ եմք և չեմք կարող երդմն « նազանց լինիլ թէ և մահ ևս հանդիպեսցի»։

Այլ և ընթերցաք և զհամամիտ չորս բազմակնիք (թուղթս), որոց մինն էր առ Սրբազան Պատրիարքունս և առ եպիսկոպոսունս և վարդապետս ևս և առ իշխանս հայմոքէն Ազգիս, յորս գրեալն էր թէ՝ «Ցօրէ « լալնմանէ յորում բռնաւորեաց բարբարոսս « ալս, չմնաց չարիս յորս ոչ եզև ձեռնմուխ։ « Ի սկիզբն բռնաւորելոյն իւրոյ առ ոտն « եհար և արհամարհեաց զԱստուածային և « զեկեղեցական օրէնս, էարկ զինքն ընդ « նզովիւք և չանալ զազգն ևս ընդ ինքեան « արկանել. ապ ոչ միարդ կարելի է սմա ըստ « օրինի վարիլ. լալտ է ամենեցունցդ, թէ

« գործով և ամենայն արարողութեամբ իւ-
« րով վերազանցեաց քան զալլազգիս, որք
« կաշառակուր եղեալ ընտրեցին զսա. . . .
« Գանգի բարբարոսս ալս չար քան զԴեկոս
« անաստուած և եղբս լրասպան ուրացողս,
« ամենևին ուրացեալ զաւանդութիւնն և զկարգ
« հալրենի և զկանոնս սրբոց Հալրապետացն
« Կալրապետի, Աբրահամու, և միւս Աբրահա-
« մու Արեւտացւոլն, Ղազարու, Մինասալ, Սա
« հակալ, Յակորալ, Սիմէոնի և Ղուկասու,
« ցանկալով լափշտակութեան, լուսացաւ լա-
« նիրաւութիւնս, և զբռնաւորս բազում քա-
« զաքաց լագեցուցանելով կաշառօք, կատա-
« րեաց զչար կամս անձին իւրոլ, և ընծալե-
« ցուցեալ զանձն իւր՝ բռնութեամբ լափըշ-
« տակեաց զալս աստիճան՝ որում չէր արժա-
« նի Աստուածագումար սուրբ Միարանու-
« թեան և բոլոր Աստուածալնոց արանց ցրե-
« լով զխորհուրդս եղև արծաթընտիր գալ-
« թակղոս. . . և առ ի պատրուակել զիւրն
« չարութիւն, բազում անդամ ղրազում մահ-
« գէրս զրեալ ըստ կամս իւր ի զիմաց միա-
« բանից և երկրացւոց ի ջատագովութիւնն
« ինքեան՝ ելից գնոսա ամենապատիկ ստու-
« թեամբ, բռնութեամբ կնքել ետ և լղեաց,
« ուր ունէր լղել. . . . որք ամենեքեան են
« ստութ և սնոտիք. . . Այլ դուք զի խոհե-
« մութեամբ Ձերով դիւացեալ ի գրութեանց
« և ի համբաւուց զալիրաւութիւն սորա՝
« իրաւամբ և արդարութեամբ մերժեցիք զսա
« ի ձեռն երկուց հզօր կալսերաց և փառա-
« որեցիք զարդար զիրաւարարն Աստուած,
« սա գուն գործէ վերստին ընդդիմանալ հրա-
« մանաց լաղթող կալսերաց և կամաց աղ-
« գին՝ զի կացցէ ի բռնաւորութեան իւրում
« հաստատուն. վատնէ զինչս հասարակաց և
« զապրուստ միաբանից լումալս՝ զի ինքն
« միայն բարւոք ապրեսցի. խանգարէ զազգն
« ի բարեկարգութենէ և զՊատուն ի պալ-
« ծառութենէ, զի ինքն միայն պալծառաս-
« ցի. զաղատ կեանս միաբանից գրաւեալ է
« ի գերութիւն, զի անդատապէս իւխեսցէ ի
« վերալ ամենից. Զկաշառատուութեան լան-
« ձնս իւր ջանալ գնել ի վերալ լօժարու-
« թեամբ ընտրելոլն մերոլ Տեառն Դանիէլի
« Սրբազանին, զի ինքն անլանգանք կրևես-
« ցի, վասնորոլ և լանուն նորա զկնիք վո-
« րագրել տուեալ՝ գրէ զՊէչէսուկս լանուն
« Երևանու Լանին և ալլոց, և առաքէ աստ
« և անդ՝ զի զալթակղեցուսցէ զպարզամիտսն.
« րոլց նթէ կամք իցէր ընտրիալ Հալրապե
« տին մերոլ կաշառօք գալ և նստիլ լիւրն
« Աթոռ, մեք լոյժ հեչտեաւ բէրլաք զնա, զի
« միարանք ամենեքեան հողւով ի նա եմք
« կապա կցեալ. . . . Մինչ դողացեալ զսուրբ
« Գեղարդն և դալլ սրբութիւնս և զգանձս
« պատուականս, և բարձեալ սիսռամբ ի վե-
« րալ գրաստու առաքէր ի վլչելի տուն եղ-
« բօր իւրոլ, զոր ըմբռնեաց և դարձոլց կեն-
« դանի նահատակ Յոհաննէս Արքեպիսկո-
« պոսն, ի վրէժխնդրութիւն բրդեալ բոլոր
« միաբանութեամբ կամէաք կործանել զսա
« լալնժամ, բալց բազում երդմամբ և աղղի
« աղղի պատրանօք խաբեալ զմեզ առ ժամն,
« լետոլ բերել ետ ծածկաբար զՊարսիկ զի-
« նուորս և նոքօք բռնացաւ ի վերալ մեր
« մահու չափ սպառնացմամբ, որով և մեք
« լակամալ կամս տանէաք զոր ինչ առնէր
« սա մինչև ցալժմ, և ոչ խօսէաք ինչ առ
« լերկիւղի. բալց իբրև տեսաք թէ անցանէ
« ըստ չափ բարբարոսական գործք սորա,
« զմահ լանձն առեալ ընդդիմացաք լալտնա-
« պէս ընդդիմացելոլն Աստուծոլ. Գանգի ի
« մէջ Աւագ շաբաթու սա զՅոհաննէս սրբա-
« զան Արքեպիսկոպոսն Գեղարդակիր՝ առա-
« քեաց լերևան առ գործոլ իրիք, և նա տե-
« սեալ զգործս իւր և գտեալ ժամ դիպուկ՝
« խոլս տուեալ էր անտի ի թիֆլիս՝ հոգ տա-
« նիլ ազատութեան սրբոլ Տանս և միաբա-
« նութեանս մերոլ. . . և լաւուր մեռելոցի
« Ջատկին գիտացեալ սորա, ըստ իւրն ան-
« բարի սովորութեան կատաղեցաւ գազա-
« նաբար և կալնալ էարկ ի բանգ խաւարա-
« լին ղՂազար Եպիսկոպոսն ծերունի . . .
« խոստովանահալր Ղուկասու հոգելոլ վա-
« հին, (որոլ սրբութեան համբաւն իցէ թէ
« հասեալ իցէ լունկն ձեր, և ծանուցեալ իցէ
« ամենիցդ)։ Եւ զնորընծալ Տէր Կարապետ
« աբեղալ մի՝ որ զբառասունս պահէր լեկե-
« ղեցւոջ, եգ լալլում բանտի՝ առեալ զլին-
« լոնն և զվեղարն։ Եւ զալլ ոմն վարդապետ
« Ցակոբ անուն՝ եղ լալլում բանտի, գոտս
« կրլին ևս չղթալեաց, և պատրաստել ետ
« զլալատս, զի լալլ միաբանսն ևս ձեռնար-
« կեսցէ, և ի գիշերի գանակոծ արասցէ զա-
« մենեսեան։ Նմին իրի միաբանքս ամենե-

« քևան ապուհնեալ Աստուած, դիմեցաք ի « ընթանալին, ուժգին գանէին՝ զի արադ
« Վհարանն քարիւ և փայտիւ, և հանաք « ընթացին. վասն որոյ ոմանք զոտս իւ-
« զնդաբարն մեր ի բանտից և ի կապանաց, « րեանց հարկանէին զքարի, ոմանք անկա-
« Եւ ապա խուռն բազմութեամբ գնացաք « նէին ի խորխորատ, և ոմանք ոչ գտեալ
« յեկեղեցին Եպիսկոպոսաք, վարդապետաք, Ա- « զադանելիս՝ բոկոտն ընթանային զերկա-
« բեղալք և Սարկաւագունք և բոլոր ուխտք « րաձիգ ճանապարհն, որոց ոտք ծակոտեցան
« եկեղեցւոյ, և քննութիւն արարեալ գտաք « և վիրաւորեցան։ Եւ այսպէս տուայտանօք
« զսա ընդդէմ Աստուածային և եկեղեցական « և տառապանօք ողորմելի կերպիւ հասուցին
« օրինաց, խանգարիչ բարեկարգութեան Ազ- « զմեզ ի սուրբ Աթոռս, և փակեալ զիւրա-
« գին, և աւերիչ սրբոյ Աթոռոյս. . . . Վասն « քանչիւրն ի սենեակս իւրեանց, արարին
« որոյ ուխտեցաք առաջի Քրիստոսասէջ սուրբ « զընակարանս մեր բանտք և արգելանոցք.
« տեղւոյս, զի բարձցուք զչարն ի միջոյ. և « որ և ի լուսանալ առաւօտուն ձայնէաք ի
« ի հաստատութիւն բանիս՝ գրեցաք գիր մի « ներքուստ, թէ բացէք զդրունս մեր՝ զի
« առ ինքն Խաւիէն թէ՝ վասն զանազան « գնացեալ արտաքս վասն կարեաց որովայ-
« անկարգութեանց և բարբարոսական դոր- « նից մերոց՝ եկեսցուք, և ապա փակեցէք
« ծոց քոց՝ ոչ ընդունիմք զքեզ. և միանգա- « միւսանգամ. բայց ոչ ոք էր որ ունկնդիր
« մայն նզովեցաք զինքն և զհամախոհս նո- « լինէր. վասնորոյ նեղացեալք բազումք, ո-
« րա։ Եւ ի միւսում աւուր յերեքշաբաթի « մանք կոտորեցին զսափորս ջրոց՝ և յայնս
« Ջատկին, եպիսկոպոսունք, վարդապետք, « հոգացին զպէտս որովայնից, ոմանք ի
« աբեղալք, սարկաւագունք և մանկունք « կոնքս, և այլք յայլ անօթս. զորպիսիս տե-
« վարժատանն, և բոլոր միաբանք, քանզի « սեալ մեր երազ համարէաք. զի մինչև ցարդ
« փակեալ էր զդրունսն՝ քակեցաք զորմն « ազատութեամբ եմք անցուցեալ զկեանս
« հխսիսոյ կողմանց որ հալի ի չուկան, և « մեր, և չիք երբէք տեսեալ զայնպիսի ան-
« իջեալ անդուստ խուռն բազմութեամբ դի- « խիղճ բռնութիւն։ Եւ ապա ի դիմաց միա-
« մեցաք Երևան՝ լապարանս Խանին, և բո- « բանից՝ տաճկերէն գիր դրել ետ առ Խանն՝
« զոքեցաք ամենեքեան թէ՝ կամ բարձ ի « զայս օրինակ. «Եթէ ոք ի մէնջ փախիցէ և
« միջոյ մերմէ զԳողիաթն զայն և բիր զօրի- « կամ ուրեք զգիր ինչ գրեսցէ, զի լըմբռ-
« նաւոր Հայրապետն մեր, և կամ սպան ըզ- « նելն գերծցեն զմօրուս նորա, և քեզ հա-
« մեզ զամենեսեան։ « րիւր թուման տուժեսցի այսինքն՝ 1250
« Առ որ և Խանն զառաջինն ունկնդիր « զուրուշ. և եթէ ոք ընգդիմասցի կաթողի-
« եղեալ խոստացաւ թէպէտ կատարել զխն- « կոսին, նմա ևս զայս պատիժ հատուսցեն»։
« գիր մեր, բայց յետոյ չնչաւատ Լեւոնիքն՝ ի « Եւ հանեալ մի մի ի սենեկաց բռնութեամբ
« ձեռն մեծագումար կաշառաց չրջեաց զմիտս « կնքել ետ իւրաքանչիւրոցն զթուղթն զայն,
« նորա, որ ժխտեաց զխոստումն իւր, և տա- « և արձակեաց զոմանս. բայց զքանի . . .
« ժանացեալ ի վերայ միաբանութեանս՝ հրա- « վարդապետսն հանեալ ի սենեկաց իւրեանց՝
« մայեաց գնել չզթալիւք ի բանտի զԱս- « արգել յայլ և այլ բանտս. զԱբրահամ վար-
« տուածատուր, զԲարսեղ և զԱետիս եպիս- « դապետն Աժտարխանցի՝ արկ ի բանտ խա-
« կոպոսունս, և սահանջել ի նոցանէ զտու- « ւարալին. զՓիլիպպոս վ. Եւդոկիացի՝ յամ-
« գանս 9000 զուրուշ։ Իսկ զայլսն ամենայն՝ « բարս գարուց. զԺակոբ վ. Պօլսեցի՝ ի սե-
« զծերս և զտղայս մատնեաց ի ձեռն ծառա- « նեակ մի Ղազարապատին. զՄատեւոսնոս վ.
« լից իւրոց, որք ձիաւորեալք և զինազար- « յայլում սենեկի նոյն Ղազարապատին. զկա-
« դեալք ձգեցին զբազմութիւն Քահանայա- « րապետ աբեղայն Նորընծայ՝ եդ յայլում
« կարգ միաբանից առաջի երիվարաց իւ- « բանտի. զՓոքրաւորսն Յարսեղ Արքեպիս-
« րեանց, և գանելով և հարկանելով, գլխի- « կոպոսին զՌէթէոս վարդապետն և զՆփրեմ
« բաց և բոկոտն հանին ի ճանապարհ, և « սարկաւագն ի միւսին յայլում բանտի. և
« ստիպէին ընթանալ փութով։ Էր ժամա- « զՂազար Արքեպիսկոպոսն խոստովանահայր
« նակն գիշերային, մութն, անձրևուտ և « իւրում սենեկի։
« տղմուտ, ուստի ոմանք ի ծերոց՝ եթէ յամր « Զայսոսիկ զամենեսեան եհան ի բան-

« տէ՛ր, և նոցա ևս կնքել ետ բռնութեամբ ըզ-
« տաճկական գիրն. բայց Ղազար եպիսկո-
« պոսն և Աբրահամ վարդապետն տակաւին
« կան ի բանտի. և երեք եպիսկոպոսունքն
« են լերեան, եւ կնքել ետ զսենեակս Ա-
« տուածատուր, Բարսեղ, Յովհաննէս և Աե-
« տիս եպիսկոպոսացն, և զսենեակս Արքա-
« համ վարդապետին և տիրացու Իգնատիո-
« սին, որ կան տակաւին ամենեքեան կնքեալք,
« եւ բերել ետ ի Խանէն զերեսին տաճիկս,
« ղի նոքօք լաւելցէ զբռնութիւն իւր ի վե-
« րայ միաբանիցս. և մանաւանդ ղի լիցին
« ակնածու ընդ սպասաւորաց իւրոց, որ մի
« կարասցեն միաբանք խոյս տալ. և պահա-
« պանս եղ ի վերայ ամենայն ճանապարհաց,
« ղի մի ոք կարասցէ հանել ուրեք զգիր,
« կամ ազատիլ փախստեամբ. եթէ կամիցիմք
« մի ըստ միոջէ զամենայն բարբարոսական
« արարմունսն նորա գրել, անբաւականանալ
« թուղթ և մելան. ուստի այսու միայն հա-
« մառօտեմք. Չի եկաց սա յամենայն ճանա-
« պարհ՝ որ ոչ է բարի, և ի չարէ երբէք սա
« ոչ ձանձրացաւ, և չունի ձանձրանալ ի բո-
« լոր կենանս իւր։ Ապաքէն գիտացեալ Ձեր
« զլաստիկ կարեկից և ցաւակից լերուք
« խղճալի միաբանութեանս, և զամենայն
« տառապանս մեր անձանց ձերոց համարեալ,
« ջանասջիք աղաւել զԱրեան և զմեզ ի ձե-
« ռանէ բարբարոսիս այսորիկ, ոյով և ըն-
« կալջիք զվարձս բարեաց լաստուծոյ, և ժա-
« ռանգեսջիք զաղօթս և զօրհնութիւնս սրբոյ
« Լուսաւորչին մերոյ։

ՎՃՌԱՀԱՏՈՒԹԻՒՆ ՄԵԾԻ ՍԻՒՆՀՈԴՈՍԻՍ ԲԱՆ Դ

Նաև տեսաք և ընթերցաք և զալլ բա-
զումս գրութիւնս՝ որոց ամենեցուն համեմա-
տութեամբ գտաք զԴաւիթն ամենեսին հակա-
ռակ հարցն կանոնաց, և անընդունակ ըն-
դրութիւն և օծութիւն նորա. որովք եթէ օ-
ծեալ և եթէ չօծեալ միևնոյն է. և ըստ հար-
ցըն կանոնաց դատապարտէ օծութիւն նորա
զինքն և զընդունողսն իւր, ըստ որումն գը-
րեալ է. թէ՝ «Արժանի են մահու, ոչ միայն
որ զչարն գործեն, այլ և որք կամակիցն լի-
նին գործելոցն »

Ուստի խոտեցաք զնա ըստ բանի Մար-
գարէին՝ թէ «Խտեսցին ա՛նօգուտ որք ինտ-
րեալ են արծաթով». և հրաժարեցաք ինմա-
նէ որպէս ի թշնամւոյ եկեղեցւոյ, զանազի
թշնամարար և անողորմ պատառեաց զքո՛ղ
հարսինն անարատի սրբոյ Էջմիածնի, և վա-
կեաց զցանկն հալրենի լաղաղս չար մոլորու-
թեան ազահութեան իւրոյ և վտառափրու-
թեան։ եւ զի նա ինքն Դաւիթ թիֆլիղեցի
փոխանակ զանձն իւր գնելոյ ի վերայ Հօ-
տին Քրիստոսի, զհօտն ոզջոյն և զամենայն
կանոնս Քրիստոնէութեան, ևս և զեկեղեցին
Աստուծոյ և մանաւանդ զսուրբ Աթոռն Էջ-
միածնի լանզգնեցաւ գնել ի վերայ անձին
իւրոյ անաստուածաբար. և լաւ համարեցաւ
եղծանել զամենայն, միայն զի ինքն կոչես-
ցի ռաբբի ռաբբի. սմին իրի և մեք համա-
ձայնեալ հարցն սրբոց առաջնոց և վերջնոց,
հարաք գնա ի վէմն Քրիստոս. և զատապար-
տեցաք գնա ինքն զԴաւիթ և զամենայն հա-
մախոհսն իւր զատապարտութեամբն եկեղեց-
ւոյ, մինչև զղջացեալ ապաշխարեսցին, և
գիժեալ լոտս օրինաւոր սրբազանին դացեն
ազատութիւն իւրեանց։

ԿՈՉՈՒՄՆ ՏԵԱՌՆ ԴԱՆԻԷԼԻ Ի ՀԱՑՐԱՊԵ-ՏՈՒԹԻՒՆ, Ի ՋԱՆԱՉԱՆ ԹԱՄԱՆԱԿՍ ԵՒ ԱՐԹԱՆԱՊԷՍ ՕԾՈՒՄՆ. ԲԱՆ Ե

Եւ ի վերայ ասր ամենայնի ընթերցաք
գրածեալ և զհինգ բազմակնիք գրութիւնս
միաբանութեանն սրբոյ Էջմիածնի որ ըստ
կանոնի՝ եկեղեցականք և ժողովրդականք
ժողովեալ ի մի ընտրեալ և լատկացեալ
զՏէր Դանիէլ Սբբազանն, գրեալ են առ
նա լսկզբան անգ լետ վախճանի երա-
նեալ Հայրապետին Տեառն Ղուկասու ի
1800 ամի լունվարի 16, 21, 31. և ապ-
րիլի 23, եւ 23, որովք ամենեքումբք ա-
ռաւել թախանձանօք լորդորեն զնա իջանել
ի Պատրիարքական Աթոռն և լանձն առ-
նուլ զՀայրապետութիւն ընդհանրական Ա-
թոռոյն սրբոյ Էջմիածնի, առ որ և զորա-
սափելիս առաջի արարեալ նմա գրեն ի մուս-
մըն ասպէս. «Կոչէ զքեզ Տէր Աստուած ի
« կոչումն սուրբ, մի արհամարհեր գնովս.
« կոչէ զքեզ Տէր Քրիստոս, մի խուսափիր,
« այլ հալեցեալ ի գրեցեալսն երջանկացեալ՝
« այսինքն, ի Մովսէս, լեսայի և լերեմիա և

« լալլն, փութա կամաւորութեամբ կոչողին « ղհետ՝ Քրիստոսի Տեառն մերոյ. ղի արդարև « նոյն ինքն է որ ղքեզ որոշեալ հրաւիրէ « փոխանորդել իւր. որում եթէ ոչ անսայ « ցնա, ոչ բարւոք առնես. և առաջի նորա « ձեռն մեր ի քո գրասլանս մնալ, և դու կաս « ե մնաս մեզ և սրբոյն էջմիածնի, և ամե- « նայն լաւութեան և վստութեան մերոյ « պարտական»։

Եւ ղի Դանիէլ Սրբազանն ահիւն Աստուծոյ ունկնդիր եղև հնազաբար յանուն Աստուծոյ դրելոցն, որով և յաքսորս գնաց և տառապեցաւ, արդարացոյց զանձն իւր. և ընդդիմակաց նորա որպէս ընդդիմակաց Աստուծոյ, և առ ի նմանէ տուրբ հրաւիրանացն կան և մնան պարտական առաջի Աստուծոյ՝ մինչև ի դատաստանն նորին, վասն ամենայնի ե- ղելութեանցն և անօրինակ անցից։ Նաև ընթերցաք զմիւս բազմակնիք բոլոր միաբանութեանն՝ առ նոյն Դանիէլ Սրբազանն, դրեալ յետ վախճանի Ցովսէփայ առնուանեալ կաթողիկոսի, յամի 1801 մարտի 26. յորում ևս առարկեն զայս, «Թէ՝ քանզի « Ցովսէփ Արքեպիսկոպոսն եկեալ ի Տփխիս « քաղաք վախճանեցաւ անգ, հաւատամք Թէ « ի բարերար կամացն Աստուծոյ եղե որ ինչ « եղեն. վասնորոյ ի նորոյ ևս ժողով արա- « րեալ հանդերձ քահանայիւք իշխանօք և « ժողովրդով երկրիս, ըստ Աստուածային « աղեցութեանն և ըստ առաջնոյ ընտրու- « թեանն մերոյ՝ վերստին զամենապատուա « կան Հայրդ մեր ընտրեցաք լինիլ դահակալ « սրբոյ Աթոռոյս և կաթողիկոս և Տէր Հո- « ղևոր Հայաստանեայցս սուրբ եկեղեցւոյ և « բնաւից պաշտօնէիցս...» Ապաքէն անցեալ « անցեալ դնելով, միամտութեամբ փութա « ցուսցես ղչնորհաբեր գալուստդ, ղի ահա « Տէր է որ յաջողէ և կոչէ զԱրքեպիսկոպոսդ գալ « պակիւլ ընդ նախկնաբար քո՛ղ նշանեցեալ « անարատ Հարսինն լուսոյ. առ ի կատարել « զխնդիրս ծառայից իւրոց, զոր հաստատուն « հաւատով խնդրէաք ի վաղուց հետէ, և ա- « ներկբայ լուսով սպասէաք ընդունիլ, վասն « որոյ և Սրբութեանդ հարկ է հնազանդիլ « Տեառն՝ կոչողին զքեզ ի յայս գերագոյն « պատիւ Քահանայապետութեան, և լսել « ձայնի աղաչանաց մերոց» և այլն։

Ընթերցաք և զայլ բազմակնիք ի սոյն միտս գրեալ ըստ ամենայնի առ հասարակութիւն Թօխաթու քաղաքին ի նոյն Թիւ խընդիր, ղի առաքեսցեն գԴանիէլ Սրբազանն, զոր էր և կնիքն Դաւթի ղրոշմեալ չորից, մանաւանդ ղի ինքն ևս իսկ էր առաջին մահ- սէրատարն ի Պոլիս. ուր և ի հրաշափառ Տաճարի Սրբոհուոյ Աստուածածնին որ ի Ղումղարու, առաջի ամենայն ժողովրդեան յանդիման կացեալ Սրբութեան Սեղանոյն՝ բերանով իւրով ասացեալ էր զԱղօթքն. Որ ընտրեցեր և ընկալար զերանելի և զերջանիկ արքայազն Հայրապետն մեր գՏէր Դանիէլ Կաթողիկոսն և այլն։

Ալ և ընթերցաք զյստուկ ձեռագիրն նորին Դաւթի առ Դանիէլ Սրբազանն ի Թօխաթ. ուր յետ այլ դրելոցն ասէ. «Ես զքան « Սրբազան Առաքելոյն ի միտ բերեմ Թէ՝ « ոչ ըստ այնմ ինչ է որ կամիցի կամ ըն- « թանալցէ» և այլն։ Արդ՝ Թէպէտ բազումք « կամեցան և ընթացան, այլ Աստուած է որ « յաջողէ զամենայն և այլն. և ով է որ Աս- « տուծոյ կամացն կալցէ հակառակ, որովհե- « տև այսպէս է. Աստուծոյ հրաշագործողին « զփառս և զգոհութիւնս վերառաքեմք և « և զՔեզ ի նմանէ ընտրեցելոյգ և կոչեցե- « լոյդ չորղորիչ լինիմ ղի հրամայեացես գալ- « ցես ի յայցելութիւն սրբոյ տանս։ և այլն։ Իսկ արդ՝ քանզի բազումք են որք վկայեն վասն Դանիէլ Սրբազանին Թէ Աստուած է որ կոչէ զՔեզ, յայտ է Թէ ճշմարիտ է. քանզի ձայն բազմաց նմանի ձայնին Աստուծոյ ասէ Մարգարէն. իսկ ղի Դաւթին ևս բերանով և ձեռագրով իւրով վկայեաց ճշմարտութեանն, և գործովք իւրովք հակառակ եկաց. յայտնի է Թէ՝ յանգգնեցաւ նա ընդդէմ Ծնուցեալ ճշմարտութեան, որ այն իսկ է հայհոյութիւն Հոգւոյն սրբոյ ըստ գրոց. և ղի հայհոյիչ եղև Հոգւոյն սրբոյ, յայտ է Թէ անընդունակ է նորին չնորհաց, Թէև բազմիցս բոլոր անձամբն իսկ ընկղմեսցի ի Մկուռնն Սրբալոյս։ Ապա ամենայն իրօք արժանապէս ընկալաւ նա զդատապարտութիւն իւր. փոխանակ՝ ղի կամեցաւ զչնորհն երկնաւորին ստանալ արծաթով յարանց բարբարոսաց, զոր Սիմոն մոգ՝ յԱռաքելոց անտի ստանալ նովին եղանակաւ ոչ կարաց։

Ցետ ամենայնի ընթերցաք և զմահղէր համահաճութեան Պօլսեցւոց և այլոց քաղա-

քաց մերաղտնց՝ գրեալ առ Դանիէլ Սբբազանն և առ բոլոր միաբանութիւնն սրբոյ Էջմիածնի յամի 1802 յունվարի 8. և կնքեալ աւելի քան հինգ հարիւր կնքովք հոգևորականաց և մարմնաւորականաց. ուստի և մեր համաձայնեալ նոցին ընարութեան՝ ընարեցաք և մանաւանդ թէ ընկալաք այժմնապէս զընտրեալ ի բազմաց զՏէր Դանիէլ Սբբազան Արքեպիսկոպոսն, որ և ի 25 ամսոյս (Մայիսի) հեղմամբ սրբալոյս Մեռոնին լարժանաւոր գագաթ նորա, օծաք զնա օծութեամբ սուրբ Հոգւոյն Աստուծոյ՝ կաթողիկոս և գահանալապետ ամենայն Հայոց և ծայրագոյն Պատրիարք սրբոյ Էջմիածնի, զոր Տէր Աստուած հաստատուն պահեսցէ ամօք պարագալց՝ եղեալ ի գլուխ սրբոյ Սիոնի իբրև զճրագ լուսալիր փայլեալ առաւել պայծառութեամբ, լինել լուսատու ոզւոց խաւարելոց, պարծանք սրբոյ եկեղեց ոյ ըստ նմանութեան Հեղինակին իւրոյ և Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին։ Եւ որպէս պատուեաց զսա ճշմարիտ Աստուածային օրինօք, ընտրութեամբն և օծութեամբն նոյնպէս և ի ձեռն արժանաւոր գահանալապետութեան սորա քաւեսցէ Տէր Աստուած զամենայն զանցանս կենդանեաց և ննջեցելոց ալգիս Հայոց, և չնորհիւ հեղման սրբալոյս միւռոնին ի պատուական գլուխ Քրիստոսատիպ Սրբազան գահանալապետիս, իջցէ Հոգին սուրբ Աստուած ի ժողով սուրբ Լուսաւորչերամբ հաւատացելոցս, ազբերացուցանել զմեծ ղողորմութիւն իւր. որով և չնորհեսցէ սրբոյ եկեղեցւոյ իւրում զմեծ խաղաղութիւն, և ամենայն թխտի մանկանց նորին զկատարեալ մխիթարութիւն և լրացեալ ուրախութիւն. Ամէն։

Բայց զանգի գրեալ է թէ՝ լինէին սուտ մարգարէք ի ժողովրդեանն Իսրայէլի որպէս ճանէսն և ճամբրէս, և ի Ձեզ լինիցին սուտ վարդապետք՝ որք սպրգեալ մուծանեն հերձուածս կորստեան, և զորս Տէրն գնեաց՝ ըզնոսա ուրացեալ ածեն ի վերալ անձանց զերադահասն կորուստ. լաղագս որոյ զղուշացուցանելով պատուիրեմք, և մանաւանդ թէ սիրոյն Քրիստոսի աղաչեմք, մի և մի իւիք տալ տեղի այնպիսեացն սուտ վարդապետութենանց։ Զանգի ահաւասիկ առաջի արարած համառօտ ամենայն հնուաւորացդ և մերձաւորացդ՝ զարդարն և զճշմարիտն ամենայն անցիցն անցելոց, ընդ որս և զվճիռ դատապարտութեանն Դաւթի թիֆլիզեցւոյ և օրինաւորապէս ընկալման Աստուածընտիր Հայրապետիս մերոյ Տեառն Դանիէլի սրբազան Կաթողիկոսի և ընդհանրական Գահանալապետի ամենայն Հայոց և բարձրագոյն Պատրիարքի սրբոյ Էջմիածնի Մայր Աթոռոյն՝ վկայութեամբն Աստուծոյ և սուրբ Աւետարանի նորա. արդար դատաստանաւ սուրբ Սիւնհոդոսիս մերոյ։ Ապա յայտնեսէ՝ որ ոք բերանով կամ գրով խօսեսցի ընդ Ձեզ զայլս՝ ներհակ դատաստանի յանուն Աստուծոյ ժողովելոցս, ծանիջիք զայնպիսին ըստ Առաքելոյն, վայ. դապետ ստութեան, մուծանող հերձուածոց և խռովութեանց յԱզգս և յեկեղեցիս մեր. յորոց և խորչելով խորչեսջիք, զի թոյնք իժից են ի ներքոյ շրթանց նոցա. և նոքա են մշակք անիրաւութեան։ Քանզի այնպիսիքն եթէ կամիցին զընտրութիւնն Դաւթի աքդարացուցանել, ստեն յայտնապէս. մինչ ահաւասիկ ի ձեռն կաչառաց և բռնութեամբ ալլազղեաց լինելն յայտնի է ի դրելոց մերոց սնիցն, առ Սրետնու խանն, և Թիֆլիզու խանըն։ Իսկ եթէ առարկեսցեն թէ օծեալ էր Դաւիթն և ի վերալ այնր չէր պարտ դալլս օծանել, զոցա պատասխանն յառաջագոյն իսկ գրեալ է Սրբազան Առաքեալն թէ՝ «ոչ եթէ որ զանձն ընծայեցուցանէ նա է ընտրեալ, այլ զոր Տէրն ընծայեցուցանէ». ըստ որոյ՝ և ժողով 2500. հարցն զմիւս Դաւիթ ապօրինաւորութեամբ օծեալն՝ ի մասնակցութենէ Քրիստոնէութեան ևս հատանէ։ Մանաւանդ ես՝ զի ոչ եթէ մեք հակառակ նմա օծաք զՍրբազան Տէր մեր, այլ նա ինքն հակառակ սմա օծաւ յառաջագոյն, ուրանալով զծանուցեալ ճշմարտութիւնն զայն՝ զոր յառաջագոյն ձեռագրով իւրով խոստովան լինէր՝ թէ «Աստուած է որ կոչէ զքեզ, և ով է որ Աստուծոյ կամացն կացցէ հակառակ»։ Այլ եթէ զտեղին պատճառեսցէ այնպիսին՝ թէ օրինաւոր Սրբազանն մեր օծաւ արտաքոյ սրբոյ Էջմիածնի, կարէք հասու լինել թէ՝ յառաջագոյն բազումք արտաքոյ սուրբ Էջմիածնի օծեալ են օրինաւորութեամբ ընդհանրական կաթողիկոս ամենայն Հայոց. որպէս և ի մելձակալ ժամանակի Տէր Կարապետ Ուլնեցի՝ որ ի Կոստանդնուպոլիս

օծաւ ի Միջագիւղն, և ձեռնադրեաց զեպիսկոպոսունս, և ապա եկն ի տուրբ Աթոռն գկնի ժամանակաց։ Մանաւանդ ևս՝ զի ոչ իսկ համարեցեալ լինի այս տեղի արտաքոյ քան զտուրբ Աթոռն. ըստ որում և նախնիքն երանելիք՝ ի միասին են գրեցուցեալ ի Հրովարտակն Արքունի՝ տեղի կաթողիկոսաց, որ ոչ է թարց հարկաւոր և մեծամեծ խորհրդական պատճառաց։ Տիւնա՝ զի լաւագոյն է լինել օրինաւորութեամբ արտաքոյ, քան Աստուածընդդէմ ապօրինաւորութեամբ ի Տաճարին. առ որ և Տէրն վշտացեալ ասէր. «Տուն իմ տուն աղօթից կոչի, և դուք արարիք զդա ալրս աւազակաց»։

Եւ զի պիտոյ է երկարել վասն այլոցն՝ մինչ Քրիստոսական է վճիռն՝ թէ «ասաւ ծանիջիք եթէ իմ աչակերտ էք, եթէ սիրիցէք զմիմեանս. և թէ՝ «ասան ի հօրէ սատանայէ է». և թէ՝ «Ամենայն որ ատեալ զեղբայր իւր ի տարապարտուց, պարտաւոր լիցի գնհեղին». առ որ և Աւետարանիչն երկրորդեալ ասէ. «Ամենայն որ ատեալ զեղբայր իւր, մարդասպան է. և դիտէք զի ամենայն մարդասպան ոչ ունի կեանս յաւիտենականս յանձին հաստատեալ»։

Ապաքէն և բանք մերոյս Աստուածայլին տուրբ Սիւնհոդոսիս ասաւ կնքեսցին. թէ Գաւիթն որ ատեաց զեղբայր իւր ի տարապարտուց, և կորոյս յանձնէ զկեանս յաւիտենականս, եղիցի և ձեզ ատելի ինքն և համախոհքն իւր, և վարդապետք ստութեան նորին՝ հանդերձ չարանիւթ պատիր վարդապետութեամբք նոցին *)։ Եւ զայս ես ի վերջոյ արժան զատեցաք ծանուցանել օրհնեալ ազդիդ մերում, թէ ի վերոյգրեալ Գաւիթ դաւաճանէ ձեռնադրեցեալ եպիսկոպոսքն, և ի նոցանէ ձեռնադրեցեալ քահանայք և այլ ամենայն աստիճանաւորք՝ անընդունակք են եկեղեցւոյ Սրբոյ և բոլոր Աղդի մերում. ըստ հրամանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ որ ասէ. «Մի՛թէ ի փշոց քաղիցեն խաղող, կամ ի տատասկէ թուզ». և թէ՝ «Ծառ չար՝ պտուղ չար առնէ». այլովքն հանդերձ։ Ուստի ենթադրեցաք առանց ամենայն հակառակութեան, ի վշոյ և ի տատասկէ Դաւիթ լալնմանէ լառաջացեալքն, փուշ և տատասկք գոլ. և ոչ խաղող կամ թուզ, որք արժանապէս հերքեալք են և եղիցին, մինչև զղջասցին, և դիմեսցեն առ ոտս Հոգեընտիր, Կաթողիկոս և Աղգահրաւէր Տեառն Գանիէլի Սրբազան Կաթողիկոսի ամենայն Հայոց, և սպեղանիս ի նմանէ գտանել հնարեսցեն, և ընկալցին զներումն և զթողութիւն։ Եւ Տէր որ կոչեաց և արդարացոյց և փառաւոր արար զընտրեալն իւր ի սկզբանէ դՏէր Գանիէլ կաթողիկոսն ամենայն Հայոց՝ պայծառացուսցէ զաւետեան իշխանութեան տոքա, և արասցէ զսա պարծանք ազգի և սիւն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ, և զձեզ զամենեսեան ընդ հովանեաւ Քրիստոսատիպ տոքայս բարի հովուութեան տածելով ի վայրի դալարոյ և ի ջուրս հանգստեան, պահեսցէ հանդերձ զարմից և զաւակօք անփորձ կենօք և աննսասան ժամանակօք ամենայն բարօրութեամբ և անտրտում ուրախութեամբ։

Ողջ լերուք, և չնորհք Տեառն Աստուծոյ ընդ հոգւոյդ ձերում. Ամէն։

Գրեցաւ լամի Տեառն
1802 մալիսի 27.
ի Երևք վանք
որ ի Բագրևան դաւառ։

Կարապետ կաթուղիկոս Աղթամարայ վերատեսուչ Վասպուրականի 1232։

Գէորգ եպիսկոպոս առաջ. Թագէոս Առաք. վանից 1240։

Բարդուղիմէոս Առաքելոյ վանից Խաչատուր եպիսկոպոս 1247։

Սեբաստիոյ Առաջնորդ Գրիգոր Արք եպիսկոպոս 1224։

Բալուայ առաջնորդ Գրիգոր եպիսկոպոս 1224։

Ժ.Ի Առաքելոց վանից առաջ. Յովհաննէս Արք եպիսկոպոս 1239։

Սր. Կարապետի Յովհ. Արք եպիսկոպոս 1214։

Խարբերդու առաջնորդ Փիլիպոս եպիսկոպոս 1147։

Անտոն եպիսկ. Մանազկերտու 1243։

Գրիգոր եպիսկ. Բաղիշոյ 1242։

Աբրահամ եպիսկ. Դերջանու 1226։

Կարապետ եպիսկոպոս Կեսարիոյ 1227։

Մանուէլ եպ. Վարգի Հօր վանից 1219։

*) Գիտելի առաւանօր յօրինակի մերում յառաջին, որ լրացուցանեմք յայլմէ օրինակէ. Ց ք.Մ.

Աբրահամ եպիսկոպոս Կարապետ կաթուղիկոսի, առաջնորդ ս. Սահակայ։
Աւետիք վարդապետ ժամօրհնող երէց վանից։
Ոսկեփիլիսու առաջ. Սահակ վարդապետ։
Յարութիւն վարդապետ վէքիլ 1235։
Մկրտիչ վարդապետ վարժապետ։
Դասապար վարդապետ Թովմա Առաք. վանից 1240։
Գալուստ վարդապետ լուսարար երէց վանից 1237։
Յովսէփ վարդապետ գուջանցի։
Յովսէփ վարդապետ Տաթեացի։
Եղիա վարդապետ Բագրեւանդեցի։
Եղիա վարդ. Վաղարշակերտցի 1244։
Ներսէս վարդ. միաբ. ս. Էջմիածն. 1249։
Վասն ղօրութեան Թղթին կցորդի վերատին կնքեցի Խաչատուր եպիսկոպոս։
Յարութիւն վարդապետ Տաթեւու 1246։
Խաչատուր վարդապետ 1238։
Վաքղան վարդ. Բաղիշու եպիսկոպոսի։
Վարդան վարդ. ս. Գանիէլի որ ի Կօբ։
Գէորգ վարդապետ Իչքիլիսայի։
Առաքել վարդապետ որ է Բալու Խաչկալ վանից ՌՄԼԴ։
Գրիգոր վարդ. միաբան ս. Նշանի։
Կարապետ վարդապետ Սերաստիոյ։
Սուրբ Աթոռոյն լետին պաշտօնեալ Անտոն վարդապետ։
Մարտիրոս եպիսկ. ս. Էջմիածնի 1230։
Վաղարշակերտու ս. Աստուածածնի եկեղ. վէքիլ Տէր Սիմէոն 1237։
Հ. Պ. ✠ Խչ. վր. 1237։
Տէր Գրիգոր Տիատինու։
Կարապետ վարդ. Թադէոս Առաք" 1234։
Մարտիրոս վարդապետ։
Տէր Գրիգոր։
Տէր Խաչատուր։
Ս. Աստուածած. ա. քահ. Տէր Մարտիրոս։
Տէր Աբրահամ ս. Կարապետ եկեղ"։
Ս. Աստուածածնայ քահ. Տէր Գրիգոր։
Տէր Ստեփան 1244։
Ս. Աստուածածնայ եկեղ. Տէր Վարդան։
Տէր Մարդար Տիատինու։
Տէր Թաթոս ս. Կարապետ եկեղ.
Տէր Օվանէս ս. Կարապ. եկեղ.
Արծափու Տէր Անտոն։
Արծափու Տէր Սիմէոն։

Վասն հաստատութեան Թղթի կցորդի կնքեցի վերատին Խաչ. եպս։
Արծափ գիւղի աւագ քահանայ Տէր Յով հաննէս 1231։
Տէր Դաղար Արծափու։
Արծափու Տէր Յակոբ։
Բէթղիտու սուրբ Կարապետ եկեղ. քահանայ Տէր Յարութիւն։
Սուրբ Կարապետ եկեղ. քահ. Տէր Յարութիւն 1229։
Գործակալ Տէր Յով. Վաղարշակերտի։
Բէթղիտու քահ. Տէր Գաբրիէլ։
Վաղարշակերտու Տէր Խաչատուր։
Ալաշկերտու Տէր Գէորգ։
Թօքրախաղալու Տէր Ստեփան։
Ալաշկերտու Տէր Գաբրիէլ։
Ալաշկերտու Տէր Ստեփան։
Ալաշկերտու Տէր Յարութիւն
Ալաշկերտու Տէր Կարապետ։
Ալաշկերտու Տէր Սարգիս։
Ալաշկերտու Տէր Մխիթար։
Տէր Վարդան Ալաշկերտու։
Տէր Պօղոս Ալաշկերտու։
Տէր Փիլիպոս Ալաշկերտցի։
Տէր Ղուկաս Ալաշկերտու։

Ի քաղաքաց քաղաքաց եկեալք Արքեպիսկոպոսք տանեվեց. և վարդապետք երեսուն և իննն, Անապատաւորք, Աբեղայք և երեսելի քահանայք հարիւր և երկու, իշխանք և ժողովուրդք աւելի քան երեք հազար. միայն մեք ալաչափ հոգևորականաց կնքելով բաւականացաք։

28. *Թուղթ Գրիգոր Արքեպիսկոպոսի առ Տ. Ստեփան*

Գերդգեն հայր տէր Ստեփան աւագ քահանայ, իմ հոգեհատոր բարեկամ։

Մայիսի 1-էն գրեալ Թուղթ յարգուդ, նոյն ամսոյ 30-ին ընկալայ ընդ մահտեսի Միհսեր եղբօրս գրոյն, ընթերցմամբ որոյ երբեմն ուրախ եղէ, երբեմն տխուր, Թուի թէ քանն առ. Աստուած գիմեալ է ի բողոք, որ Ուսաք ապելացի կոչեն, որ անբաւականքն միոյ դատաստանատան վճուռ առ բարձրագոյնն բողոքեն, սապէս երեի՝ մեր Դաւթի սրբազան կաթողիկոսի բանն։

Դանիէլեանքն ամենայն տեղիս արծաթ և ոսկի թաւէն, իսկ սրբազանս մեր օրհնութեան կօնդակս, ամենայն տեղիս հանչակեն թէ ահա կաթողիկոսն բազում գանձիւք զեպիսկոպոս մի՝ այս կողս առաքեաց, և զմիւսն այն կողս, բայց մեք այդ գանձքն չտեսաք, ըստ այսմ հաւատալի է նոցին բանից. ես բիւրիցս բողոքեցի օգնական լերուք ինձ, որ չթողեց բանն լատաջ ընթանալ՝ զի գագարեցուցեալ ունիմ խոստմամբ, ոչ երբէք լուաւ և ոչ արար բանիցս երբէք պատասխան. այնուհետեւ զինչ ինձ առնել՝ եթէ ոչ լըռել. վասն որոյ կաշառս ի վերայ կաշառաց յաւելեալ Եփրեմն, ընկալաւ զրամատի օրինակի սաւատն, և ոսկով օծանել ետ, աւի ցուցանել ռամկաց թէ իսկն է, և այսպէս հոչակեաց բանն. արդ զատեա՛ ուրեմն այս օրինակիս տուողքն՝ ոչ են ընդ վալը անձինք, երբ ձեռաց հանին այսչափ, զիա՞րդ թողուն այսուհետեւ ճշմարտութեանն մերձիլ առ կալսրըն. թողում խոհեմութեանդ գիտել, ամենայն տեղիս բողոք բարձի, բայց՝ ոչ ոք ե. զե լսոզ, այլ՝ ամենայն ոք իւր դիւղիւկն փչէր, ըստ ճակորալ պատրիարգի ասելով. նէիւտիւմ է լազմ. այս խորհրդով ազդ մեր՝ կորոյս զթագաւորութիւնն իւր, մէկ՝ կաթողիկոսութիւն ունէր ի պատուի, և զայն խաղալիք զիւաց արար։

Ես լիրաւի ոչ երկբայիմ քնաւ, որ ճըշմարտութիւնն կալցէ ընդ գրուանաւ, լատնեսցի սքանչելապէս, սակայն՝ ինչ օգուտ որ մեր ազգին, զայս ամենց մշտնջենաւորնախատինք, ի մէջ այլազաւանից, մինչև օրս որպիսի փառաց արժանաւորեալ պարծիլր ազգ մեր, իսկ այժմ որպիսի անարգանօք նախատակոծ լինի, ի ազգէն Ռուսաց, սապէս լինելոց է և առ ամենայն բարեհամբոյր և խաղաղասէր լազոս, Նա ևս առաւել առ բազմասղալ ախթաբամաս։

Զոլոց իշխանաց և լարգոլպատիս ամիրալից բազում սիրով զոզջոյնս նուիրեմ, չնորհակալ եմ որ զձեզ ի սուրբ զատկիս մխիթարեալ են իսկ ես՝ լալական աչօք կալի ի տան, Աստուած տեսցէ և դատեսցէ։

Երևանալ խանն կարի չատագով կալ ճշմարտութեան, նոյնպէս և չահն. երբ այդ տէրութիւնդ ևս դառնալ ի կողմն Դաւթի, աստ Եփրեմն ինչ պարտ է առնել երեք ուկէս հալիւք, որ երկուս ու կէսն Դաւթեան են։

Ստեվան արհոլ դատարկաձեռն գալն այդր լոյժ ցաւեցալ, թուի թէ և Կարապետ վարդապետն այնպէս գալը, իբրև բամբակ ի փչոց արգելաւ. ես թելի ծայրն կորուսած եմ ոչ հասկանամ զարարս Դաւթի սրբազանի, թէ ոյր վասն այսպէս ճնշելով սերմանէ հասկանամ ես աստ գործ չունիմ զի կայսրն չէ աստ, այլ՝ մնամ տակաւին, զի մի այսրէն եւանելովս առաւել յաղթող ցուցից Եփրեմն, վասն որոյ կամ և մնամ մինչև նոր ինչ յայտնեսցէ Աստուած, թէպէտ և լոյժ նեղիմ ապրուստի դիմաց, դոհ եմ ռուսաց իշխանաց որ ի վերայ ձեռաց չրջեցուցանեն, մանաւանդ մեգրօպոլիդն որ յորդորմամբ խնգրէ ամենևին առ ինքն վերաբնակել. յուսադիր լինելով թէ դուք ոչ կորուսանէք զձեր վիճակ, եթէ հալք կուրացեալ զքեզ Թողուն, բազում սիրով մեք զքեզ զճոխ վիճակս տալոց եմք, զի մեք ցանկանամք քոյսպիսի դեպիսկոպոսունս ունիլ, զուցէ հալք զբազում լաւագոյնս ունին, վասն որոյ զքեզ չկամին, այլ՝ մեք չունիմք. իսկ իբրև Եփրեմն և եօթնից լաւ քան զնա չատ ունիմք, եթէ կամին եօթն տացուք ի տեղի քոյ Եփրեմի նման զի նոքա այնպիսի արբեցող կաղ լիմարն խնդրեն ունիլ. և այլ՝ այսպիսիս, բայց՝ քննեսա թէ բանն ուր հարկանէ, և զինչ մեկնիլ, ահա հալոց ազգն զիւր եպիսկոպոսունս ուր հասոլց, մեք որ զբազումս քրոջէաք առ մեզ դառնալ՝ իսկ այժմ նոքա միայն գտեալ զմեզ, և իբրու վչտացեալ ազդէ լուսալ խընդրեն, բայց՝ հաւատարմացուցի նոցա քաղցր պատասխանիւք թէ, լուսահոգի Յովսէփ կաթողիկոսն զիս վասն իւր ազգին սնուցեալ է ծառայել, վասն որոյ ըստ փրկչական հրամանի, յորժամ հալածիցեն զձեզ ի քաղաքէ երթիջիք առ միւսն և այլն։ Համարեա թէ ի ամենայն տեսութիւն մեր ալսպիսի քաղաքավարական խօսիք մեկնիմք իրերաց։

Մեր իրաց համբաւն տակաւին չտատնամ տրտմիմ Աստուած եղիցի այցելու. ամենայն կուսէ նեղութիւնք և ցաւք եկեալ հասին պատեցան առ մեօք, այս ինչ վաղջան եղև Յովսէփալ կաթողիկոսի որ զբազդաւորութիւնս մեր ընդ ինքեան եբարձ, ի մենջ փառք Աստուծոյ, չկալ մեզ աւելի ասել, քան

զոր ասացն Ցոր. Տպարանն Ջանալ Եփրեմին ձեռ. ձգել, ապա կար զժուարին զործ է հիմա. աչր մի արասցէ՝ լինի պատճառ զանազան չարեաց, ալաքան սորա անզգամութեանն եզիազարեանքն են օգնական, եթէ ոչ ողորմելին գինուց աչքն չբանալ, ես միով կողմանէ չնորհակալ եմ որ գիւրն տալ գիտել ալնու ամենեցուն թէ ով է, և ինչ պարտի լինել այնպիսոյ առնն արարք.

Գոյ ջանք և լետ և ողորմութիւնք ինձ հոգով պարտաւորեն. Աստուած պատուական կեանքդ օրհնեսցէ, գրեալ եմ լիովին վասն ամենայնի սրբազան կաթողիկոսին, գիտեմ բանալոց է զաչս և տեսանելոց զձեզ և գիտելոց ով զոն ձեր, ի հարկէ ըստ ասից ձեր ճշմարտութենէ և եթ մնացեալ լամենամբ ի չատագովութեանն Դաւթի եթէ՝ ոչ արդարութիւնն ոչ տայր տեղի. խնդրեմ առաւել ձեռնտու լինիլ Ստեփանոս սրբազան արհոյն, իբրև Ահարոն նմա բերան, իսկ նա քեզ աստուածակոյս կողմանէ, իբրու զՄովսէս պատկամաւոր, ուրախ եմ որ դուք վրացերէն գիտէք զոր ինչ պակասիցէ ի հալկականի, վրացերինօք աւելցի և կամ լատնեացի ձեզ.

Սրբազան Մարտիրոս արհոյ ի զուր հալածանացն ցաւիմ. օրհնեալ լիցի պարոն Գեորգն և մահտեսի Միէսէրն զոր ղլատնեալ ղդուշացեալ են, և անոնս ապրեցուցեալ՝ արգարն ի ձեռաց անիրաւի. Ինքն ծանուցեալ էր մեղ, ի զուր ոչ էիք բացեալ՝ և ընթերցեալ, ալսուհետև, խնդրեմ չօտարանալ այլ՝ իմ անուամբ ուստի և իցէ գիր բանալ և ընթեռնուլ, և ապա առ. իս ուղևորել. զի գուցէ իցէ այդր գիաեւի ձեզ հարկաւոր բան.

Վերջապէս ես անձամբս առողջ եմ, բայց հոգով սակաւ մի տկար, քնեազ Բարսեղն, և պարոն Սիմոնն առ. մեզ են սիրոյդ սիրով ողջունեն, և առողջութիւնն ցանկան.

Լինէր արդեօք օրն այն, որ աւետէիք ինձ թէ ծովհաննէսն եղև պատրիարք, և ըստ ասից Ղազար վարդապետի դրիկորն առ. Դանիէլ կործանեալ, լայնժամ հարցանելի էր լինեն և զողջութենէս. այս Աստուծով անհասիան լինելոց է բայց՝ երկնչիմ թէ ես չտեսանիցեմ, ես ոչ գրեմ նմա զգիր զի չարաց անկանելով զականջ չար՝ ի վերայ չարեացն նմա լաւելցեն խնդրեմ ամենայն ժամու լուսադիր լինէք նմա, Աստուծով ոչ զարհեսցուք մինչև հանցուք ի լոյս՝ զարդարութիւն.

Զի այս խմօրն մեծ ջուր վեր առնու քան աւել եպիսկոպոս եմք հակառակ նեռանաստարաս հովւի, մինչև բոլորքս մեռանիմք չէ հնար գաղարիլ անիրաւ հալածողացըն, որ առնեն ծառալիցն Աստուծոյ բելեարըս իշխանք ոմանք, ի մերոց, բայց ոչ մերոց, հոգոց, զգեցեալ զհոգի սատանալի, որ խնդրեն լաղթող երևել ի վերայ Աստուծով գործեցեալ իրին, զի գրեալ է ոչ ոք կարէ ասել՝ Տէր Յիսուս եթէ ոչ հոգուն սրբով. զայն ամենայն, զիարդ մարթէր գործել և թէ չիցէր ի տեառնէ ներեալ. ըստ գրոյն թէ բարձի թողի զնոսա երթալ զկետ կամաց անձանց իւրեանց. ահա եղբայր զեզբօր զատէ, և զայն ի մէջ անհաւատից.

Նա այլն թողլով ի խնամս արարչին մնամ վասն ձեր պարտական ծառալ խոնարհ

ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Հալոց և սրբոյ Էջմիածնի.

ի տան կայսերական գերձակ Զելէնքովի, որ ի Վլատիմէրսկի
1802. յունիսի 1.
ի Սանկտ Պետրբուրկ.

29 *Թուղթ միաբանից ս. Աթոռոյն առ ս. Ժողովն Ռուսաց*

Տիեզերահռչակ և Աստուածագումար սուրբ ժողով ուղղափառ եկեղեցւոյն Ռուսաց.

Ամէներանելի հարք սրբազան արքեպիսկոպոսունք. և Առաքելազործ գահակալք.

Դուցէ թէ գիտէք ի համբաւուց և լոմանց լալդր եղեալ լազգէ մերմէ թէ մեք ժողով եպիսկոպոսաց և վարդապետաց պատրիարգական աթոռոյն Էջմիածնի, ընդ բոլոր ազգին մերոյ, երկիցս և երիցս ընտրեցաք ի պատրիարգութիւն զսրբազան պատրիարգն մեր Դանիէլ. Զառաջին ընտրութիւնս խափանեաց արք եպիսկոպոսն Յովսէփ՝ առաջնորդն ի հիւսիսային կողմանդ եզեալ ազգի մերոյ, ծանուցանելով ի Կոստանդինուպոլիս եղեալ ժողովրգեան հալոց, թէ կամք Քրիստոսասպասակ կայսերն է ինձ լինիլ

Պատրիարգ Հայոց, մինչեւրդ լեալ պատրիարգութեան նորա ի Կոստանդինուպոլիս եղեալ դեսպանն Նորին Կայսերականի մեծութեան՝ էառ հրովարտակ հալրապետութեան լԱբգալէն հազարացւոց լանուն ցովսէփալ և մինչև կամեցաւ լառաջ խաղալ և գալ լԱրարատեան Աթոռն մեր էջմիածին, վախճանեցաւ ի Տփխիղ քաղաքն Վրաց, ի ճանապարհորդութեան իւրում ի 1801. և ի մարտի 10-ին, ն. ի լսել մեր զվախճան նորա վերստին ժողով գումարեալ ընտրեցաք միաւանդամ ըղնախկին ընտրեալն մեր Դանիէլ գրեալ թուղթ հրաւիրանաց՝ կնքեցաք ամենեքեան համակամ հաճութեամբ և առաքեցաք զայն ի ձեռն երկուց վարդապետաց լԵզովկիոյ քաղաք ցունաստան, որ յայնժամ առաջնորդ էր անդ ընտրեալն մեր. գրեցաք ղրաղում թուղթս ի ճանապարհս եղեալ քաղաքաց ժողովրդոց, զի ի գնալն և ի գալն հրաւիրակ վարդապետաց, և հրաւիրեալ հալրապետին մերոյ՝ օգնական և ձեռնտու լիցին։ Եւ իշխօզ խանն երևանու ևա՝ ըստ խնդրանաց ժողովուն մերոյ դիր հրաւիրանաց դրեաց առ նա. և լետ առաքելոյն մեր դհրաւիրականն, ոմն եպիսկոպոս ի մէնջ Դաւիթ անուն սկսաւ դինիլ ընդդէմ կամաց ժողովոյն մերոյ, որ ինքն նախապէս համակամ գոլով մեզ, կնքեալ և ստորագրեալ էր զամենայն թուղթսն մեր և յատուկ ևս դիր դրեալ ընտրեալ հալրապետին մերոյ հաճութիւն ցուցեալ էր, ներհակ լուր դրութեան ևանաց դարձուցանել զկամս ժողովոյն մերոյ, որպէս զի ինքն լիցի Պատրիարգ։ Եւ իբրև ետես թէ չէ հնար, անկաւ ի դրունս պարսից և խանին երևանու, որոց խոստացաւ զծանր և մեծամեծ կաշառս, գրեաց թուղթ Դաւիթ արքեպիսկոպոսն վրաց. և կացոյց զնա մինչնորդ առ խանն. գրեաց և Գրիգոր վարդապետին՝ աշակերտին ցովսէփալ պատրիարգին և խոստացաւ նմա զառաջնորդութիւն ի հիւսիսալին կողմունսդ եղեալ ազգի մերոյ, զի փոքր կալցի պատրիարգութեան իւրոյ։ Եւ իբրև տեսաք թէ լաճախին լամենայն ուստեք բռնութիւնք ի վերայ մեր՝ արք եպիսկոպոսունք՝ եպիսկոպոսունք, վարդապետք, աբեղալք, և սարկաւագունք, և գրեթէ բոլոր ուխտք եկեղեցւոյ որք միաբանեալ կամք ի սուրբ Աթոռս՝ ժողովեցաք առաջի Քրիստոսասէջ տեղւոյս եղեալ. ի մէջ զկենսատուիս սուրբ Գեղարգն Քրիստոսի, զԱջ սուրբ Լուսաւորչին մերոյ Գրիգորի և զայլ սրբութիւնսն, գերդումն արարեալ նոքօք հաստատնապէս ուխտեցաք բաց ի լընտրելոյն լաղգէս և ի ժողովոյս մերմէ Դանիէլ պատրիարգէն լընդունել զայլ ոք ի պատրիարգութիւն և մինդամայն վճռաբար ասացաք եթէ ոք բաց ի նմանէ ձգտեսցէ լայս սուրբ աստիճան օծողն և օծեալն նզովեալ եղիցին։ Եւ այս վասն այն արարաք՝ զի դաղարեսցի սա լարարմանց իւրոց. և ապա դրեալ զմի թուղթ առ խանն երևանու ծանուցաք նմա երդմունս և հաստատուն կամս մեր. կնքեալ զայն թուղթ 49 անձինք լղեցաք, որպէս զի և նա դաղարեսցի ի բռնաբարելոյ զմեզ. նման սմին գրեցաք Դաւիթ արքեպիսկոպոսն Վրաց զայս եզելութիւնսն, և միանդամայն խնդիր արարաք, զի ինքն մի այլ ևս միջնորդեսցէ առ խանն. զի մեք մինչ ակն ունէաք թէ քրիստոնեալ գոլոյն վասն համոգեսցի գրութեամբ մերով ներհակն երևեցաւ վասն զի զերկուս երևելի անձինս առաքեալ առ խանն՝ հանդերձ գրով միւս անդամ բռնացոյց գնա ի վերայ մեր. և գրեալ զմի դիր առ մեզ՝ որով զպատիժս սպառնացուցեալ է. զայն դիր ոմանք ի մէնջ լղեալ են սրբազան Արք եպիսկոպոսին Եփրեմայ, զոր կորէք առնուլ ի նմանէ և տեսանել. և զդիրն խանին զոր մեք գրեցաք, ոմանք բարեպաշտօն անձինք առեալ ի նմանէ լղեալ են ի մեծն Պօլիս, զոր նոքա ընդ այլ թղթովք լղեալ են ի դուռն Քրիստոսազօր կայսերն մեծի, և զօրինակն թղթոյն, զոր լղեցաք Դաւիթ արքեպիսկոպոսէն Վրաց՝ լղեալ են Արքեպիսկոպոսին Եփրեմայ։

Այլ մեք թողեալ զայսոսիկ դարձուք ի կարգ պատմութեան մերոյ։ Պատրեալ խանին ի բազում կաշառաց և աղաչանաց՝ բռնութեամբ խիլլեաց գնա, և կացոյց ի վերայ մեր իբր պատրիարգ. զայն տեսեալ ժողով միաբանութեան մերոյ՝ սկսաք խոյս տալ աստի և աննկանիլ ներկիր տէրութեան Օսմանցւոց, զի մի հանդիսի օծման կացոյդ եղեալ՝ երդմնազանց դտանիցիմք։

Դիտացեալ զայս խանին առաքեաց զօրս և դարձոյց զմեզ զամենեսին, և ապա կարգեալ գհանդէս օծութեան՝ բռնաբարեաց զմեզ ղեպիսկոպոսունս, որք ակամայ կամօք օծաք

զան։ Եւ զկնի օծման ակսաւ կեղծաւորեալ բանիւք ստութեամբ և նանրաբանութեամբ զղրեանս յարմարեալ ըստ կամս իւր՝ իբր ջատագովութիւն անձին իւրոյ ի զիմաց սիւրանից և երկրականաց, և բռնութեամբ կընդքել տուեալ ամենեցուն առաքեալ յամենայն կողմունս, մեք ոչ կարացաք ընդիմանալ բռնութեան. օծաք զոս և երջնեաղանց եղաք, ապա դիարդ կարելի է մեզ ընդդիմանալ և ոչ կնքել զթուղթան։

Բայց ազգք մեր նախապէս իրաղնկ եղեալ ոչ եղեն ունկնդիր ի դիմաց մեր դրուածոց դիտելով թէ բռնութեամբ է. այլ ծանուցեալ զճշմարտութիւն Աստուածապատկ ինքնակալիդ մեծի՝ վերստին հաստատեցին իշխանութիւն պատրիարգութեան զրկեալն ի պատուոյն զարքազան պատրիարգն մեր Դանիէլ։ Նմին իրի և նա ընկալեալ զհրովարտակ պատրիարգութեան չարքալչէն Օսմանցւոց, կամեցողութեամբ աղգին մերոյ, և գրեցեալ զհաճութիւնն օգոստափառ կալսերն մեծի, ապա ժողովեաց զարք եպիսկոպոսունս Հայաստան աշխարհի ի հեռաւոր և ի մերձաւոր թեմից յաշխարհն Արարատեան, ի Բադրիւանդ մերձ ի Բալազիտ առ Եփրատ գետովն, ի հոլակապ եկեղեցին՝ զոր կերտեալ է Լուսաւորիչն մեր յանուն Յովհաննու Մկրտչին, ուր մկրտեաց ի գետն Եփրատ զսուրբ Թագաւորն մեր Տրդատ ընդ բազմութեան հաւատացելոց. և հաղորդեաց ի կենարար մարմնոյ և արեան Տեառն։

Եւ զի պատրիարգական Աթոռն մեր Ընջմիածին գոլով երկիր տէրութեան Պարսից՝ ընդ իշխանութեամբ խանին Երեւանու ոչ կարաց լառաջ խաղալ՝ վասն որոյ օծաւ հանդիսաւ ի ժողովեալ Արքեպիսկոպոսաց ի սուրբ ուխտն այն։ Բայց Դաւիթն այս գուն գործէ ի ձեռն կերպակերպ հնարից, և ի ձեռն կաշառաց խափանել զպատրիարգութիւն նորա, զի ինքն ընդդէմ հաճութեան ազգին, և ընդդէմ հրամանաց երկուց հզօր կայսերաց կալցէ ի բռնաւորութեան խրում հաստատուն։

Նմին իրի ըստ իւրն քնաւոր բարուց օր քան զօր լաւելաւ զբռնութիւն իւր ի վերայ միաբանութեան մերոյ, գանելով՝ հարկանելով և մատնելով ի բանտ անացուցանէ զամենեսեան, որք ամենեքեան ահիւ պաշարեալ կամք։

Գրէ ի դիմաց միաբանից և երկրականաց զստացօտ բանս ըստ կամս իւր իբր ջատագովութիւն ինքեան և բռնութեամբ կնքել տայ մեղ եպիսկոպոսաց և վարդապետացս, և ապա լնու զանձն կնքով ոսմիկ ժողովրդոց, և խառնիճաղանճ բազմութեանց ընդդէմ կամաց իւրեանց, և առաքէ ուր ունի առաքել։

Ուստի և մեք աղաչեմք բարձր սրբազնութեանց ձերոց, եթէ ալսու կերպիւ գըրուածք պատահեսցին զալ առաջ և նանրաբանութիւն համարեսջիք և զկնիքան ի նոսա բռնութեամբ լինելն յայտնի է ի բազում գրուածոց բազմաց և երեսելեաց ժողովրդ՛ոյն Երեանու՝ որք բազում անգամ դրեալ են առ սրբազան Արքեպիսկոպոս Եփրեմ։

Թողեալ զբազում ստութիւնս բանից, զմին միայն յայտնեացուք՝ դրէ առ յամենայն գրուածս իւր թէ՝ հալք զօրէնս ունին պահել անփոփոխ զօծեալ հալրապետ իւրեանց։

Եթէ որպէս զարեակն յայտնի ճշմարտութիւն ջանալ ծածկել ստութեամբ և ապա որչափ առաւել ղանլալու ճշմարտութիւնան, վասն զի գիտեն ամենեքեան՝ որք տեղեակք են պատմութեան Հալոց, թէ ի Լուսաւորչէ անտի մերմէ մինչև ցարդ վասն պէսպէս պատճառաց, բազում անգամ լեալ է փոփոխութիւն պատրիարգաց, ոչ թէ միմիայն ապօրինաւորաց, այլ և օրինաւոր ընտրելոց. եթէ յանուղղալ ինչ արարս դատանեցաւ։

Վկալեն ալսորիկ բազում նախնի պատմագիրք մեր։ Որպէս ահա և ի նորումս յանցեալ զարուն յամի Տեառն 1778, ընկեցին զՂազար և եղին ի տեղի նորա զՊետրոս Արքեպիսկոպոս, և միւս անդամ զօրացեալ Ղազար՝ մերժեաց զՊետրոս ի ձեռն Պարսից և լափշտակեաց զաթոռն, որոց ականատեսք տակաւին կան կենդանիք։

Եւ վերջապէս յաւուրս մեր յամի Տեառն 1761. ընկեցին զԱհակ և եղին ի տեղի նորա զՅակոբ։

Զալտսիկ փոփոխութիւնան վասն այնր ի մէջ բերաք, զի գիտացեալ ծանիցիք զղրտութիւն նորա, որ առանց ամաչելոյ յամենայն ուրեք գրեալ է թէ՝ Հալք զօծեալ հալրապետն անփոփոխ պահեն։ Զալտճառ փոփոխութեան և ժամանակն թէ երբ և կամ ուր փոփոխեցաւ կորէք գիտել ի պատմու-

թեանց մերոց, ի ձեռն թարգմանացս։

Եւ օրէնք ընտրութեան հայրապետի էր այսպէս։ Նախ մինչ ազգ մեր ունէր թագաւորութիւն, ի մնառանել հայրապետի ուրուք, թագաւորն, նախարարք և եկեղեցական դասք ժողովեալք՝ ընտրէին զարժանաւոր ոք և օծեալ կացուցանէին հայրապետ, այլ ի բառնալ թագաւորութեան մերոյ ցրուեցան ազգք մեր յայլ և յայլ աշխարհ, և մինաց Հայաստան ընդ իշխանութեամբ հազարացւոց և պարսից. և միայն ի Կիլիկիա ունէին մասնաւոր ինչ իշխանութիւն, նմին իրի ի վախճանիլ Յարսղի հայրապետի յամի Տեառն 1113, Դաւիթ անուն ոմն եպիսկոպոս՝ ի ձեռն կաշառաց և բռնութեամբ այլազգեաց առանց ընտրութեան ազգին օծաւ հայրապետ. այսմ անհաւան գտաւ ազգն, և ոչ իսկ ընկալաւ զնա։ Նմին իրի ժողով մեծ արարեալ ի Սիսաւ լերին, ժողովեցան անդ երկու հազար հինգ հարիւր սուրբ հարք, բանիւ արարեալ մերժեցին զԴաւիթ, և կարգեցին հայրապետ հայոց Դրիգոր Պահլաւունի. և եղին ի վերայ այնոցիկ զնղովս, սրք բռնութեամբ և կաշառօք կամին լինել Պատրիարգ։

Եւ սահմանեցին զայս կանոն զի յընտրութեան հայրապետի լիցի մեծագոյն հաւանութիւն չորից գլխաւոր աթոռոց Արքեպիսկոպոսաց այնոցիկ սրբոյն Թադէոսի առաքելոյն, ղՏաթեւոյն, Իջնու և Հաղբատոյ, և վճռեցին հաստատանալէս զի ընտրութիւն առանց սոցա անվաւեր լիցի։

Այս յայտնի երևի յԸնդհանրական թուղթըս սրբոյն Ներսէսի Շնորհալւոյն, ի 44. և ի 45, երեսն որ տպագրեալ է ի Սանկտ Պե. տերբուրգ յամի տեառն 1788, և ի հին պատմութիւնս ազգի մերոյ։

Եւ յետ ժամանակաց յաւելին ազգ մեր ի վերայ ասացս, զի ի մեռանիլ միոյ հայրապետի, միաբանք Էջմիածնի համակամութեամբ ընտրևացեն զերկուս և զերիս անձինս և արձանագրեսցեն զանունս նոցա ի վերայ թղթի. և կնքեսցեն ամենեքեան իւրք ի վկայութիւն արժանաւորութեան նոցա և առաքեսցեն ի Կոստանդնուպոլիս առ ազգ մեր, զի յով ոք ի նոցանէ հաւանեսցեն, զնա կացուսցեն հայրապետ։

Այսմ ասացս լինելոյ վասն ժողովուրդք Կոստանդնուպոլսոյ՝ պայմանագիր առեալ են ի նախնի պատրիարգաց և ի միաբանից Էջմիածնի, զի եթէ առանց գիտութեան ինքեանց՝ ոք պատրիարգ նստցի անընդունակ լիցի։

Այս պայմանագիր յաւուրս Ղուկասու պատրիարգին մերոյ վերստին նորոգեցաւ, զոր կնքեալ եմք բոլոր միաբանքս հայրապետաւ մերով, ընդ որս՝ կնքեաց և Դաւիթս այս. զայս պայմանագիր կարէ բերել տալ ի մեծէն Պօլսոյ արք-եպիսկոպոսն Եփրեմ։

Ըստ պայմանագրիս այսորիկ և մեք ի վախճանիլ Ղուկասու հայրապետին ժողով արարեալ համակամութեամբ ընտրեցաք զերկու արք եպիսկոպոսունս, զԻսայիէն և զԵփրեմն՝ որոց զանունսն ի գիր արձանացուցեալ կնքեցաք և առաքեցաք ի ձեռն Դաւիթս աւետրիկ և ազդ մեր ի Դանիէլն հաճեցան և ընտրեցին համակամութեամբ։

Այս ընտրութիւն խափանեցաւ պատճառաւ արք եպիսկոպոսին Ծովսէփալ և յետ վախճանման նորա Դաւիթս այս ի ձեռն աշակերտի սորին Դրիգոր վարդապետին՝ եղծեաց զօրէնս ընտրութեան ազգին մերոյ, ժառանգեաց զնղովս սրբոց հարց և այժմեան ժառանգաւորաց եկեղեցւոյն, և ապա անարժանութեամբ յափշտակեաց զայս աթոռ։

Արդ ով սրբազան հարք բժիշկ մարմնոյ Քրիստոսի սրբոյ եկեղեցւոյ, ահաւասիկ յայտնեցաք զվէրս եկեղեցւոյս մեր, որ ոտից մինչև ցգլուխ վիրաւորեալս ի ձեռն ապօրինաւոր հովուի չունի առողջութիւն։ Ուրեմն աղաչեմք ամենեքին գթացեալ առ հասարակ յազդ մեր՝ խնդրեցէք յՕգոստափառ յողորմած կայսերէն՝ զի եղիցի քաղցր ակնարկութիւն նորա ի վերայ ազգին և ի վերայ օրինաւոր հայրապետին մերոյ, և աղաւթեսցէ զմեզ և զաթոռս ի ձեռանէ սորա, որ ի գործս բռնաւորութեան կայ, առաւել քան ի քահանայապետութեան։

Ապա սպասեալ մնամք գտանել զողորմութիւն ի ձեր բարձր սրբազնութեանց։

Խոնարհ պաշտօնեայք Գրիւ. 1802. յունիս 2. տոսի վշտակիր և տառա. ի Էջմիածին. սեալ միաբանք Արարատեան Աթոռոյս հայոց ս. Էջմիածնի

Դրիգոր արք-եպիսկոպոս ծերունի. Ղազար արք-եպիսկոպոս ծերունի. Ծովհաննէս արք-եպիսկոպոս. Վարդան արք-եպիսկոպոս.

Յակոբ եպիսկոպոս. Գրիգոր եպիսկոպոս. Յովհաննէս եպիսկոպոս. Ստեփաննոս վարդապետ. Յովհաննէս վարդապետ. Աբրահամ վարդապետ. Զաքարիայ վարդապետ. Աղէքսանդր վարդապետ. Յարութիւն վարդապետ. Աբրահամ վարդապետ յԱժդարխանցի. Փիլիպպոս վարդապետ. Սալի վարդապետ. Փիլիպպոս վարդապետ. Ռէթէոս վարդապետ. Փիլիպպոս վարդապետ. Յակոբ վարդապետ. Յովհաննէս վարդապետ. Յակոբ վարդապետ. Կարապետ վարդապետ. Մկրտիչ վարդապետ. Անաւն վարդապետ. Խաչատուր վարդապետ. Գրիգոր վարդապետ. Աբրահամ վարդապետ. Մարտիրոս վարդապետ. Սահակ վարդապետ. Մկրտիչ վարդապետ. Գալուստ վարդապետ, Յարութիւն վարդապետ։

Մեք ես համաձայնեալ վշտագին և ճըշմարտապատում միաբանութեան սրբոյ Աթոռոյս Էջմիածնի, խնդրեմք ալց առնել հայրապետական Աթոռոյն մերոյ։

ՁԲ. *Թուղթ միաբանից ս. Աթոռոյն առ հայսր Ռուսաց։*

Քրիստոսապսակ և ինքնակալ կայսր ամենայն Ռուսաց.

Ամենողորմ թագաւոր տիեզերաց և խնամատար Ազգի մերոյ։

Աստուածամերձ լսելիք ձեր առաւել քան ի մարդկային աղերսական ծանուցմանց ղղացեալ զտառապանս միաբանութեան մերոյ աստուածաբար ողորմութիւն արարեալ վերստին հաստատեցեր ի պատիւ հայրապետութեան ղղրկեալն ի պատուոյն զօրինաւոր հայրապետն մեր և զարքազան պատրիարգն Դանիէլ, որ համակամ հաճութեամբ միաբանական ժողովոյս և ազգիս մերոյ երկիցս և երիցս է ընտրեալ ի պատիւ պատրիարգութեան. զի թէպէտ՝ նա ողորմութեամբ ձերդ Կայսերական մեծութեան կանխաւ ընկալեալ է դէպովարտակ զպատրիարգութեան իւրոյ յարքայէն Օսմանցւոց և բոլոր ազգի մեր, ի վաղուց հետէ հաճեալ ևն ի նա, բայց սպասէր լատուկ հաճութեան ինքնակալիդ մեծի, որ իբրև դիտաց ի կողմնակալաց քոց՝ թէ կամք կայսերական մեծութեանդ է լինել նմա պատրիարգ հալոց, ապա ժողովեաց զմիտրապոլիտս և զարք եպիսկոպոսունս Հայաստան աշխարհի ի հեռաւոր և ի մերձաւոր թեմից ի հոլակապ եկեղեցին զոր կառուցանել է սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր յանուն սրբոյն Յովհաննու Մկրտչին յԱրարատեան աշխարհին մերձ ի Վաղարշապատ առ Սիրատ դեռտով՝ ուր մկրտեաց զՏրդատ հարիւր բիւրս ազգի մերոյ հանդերձ սուրբ թագաւորաւ Տրդատաւ՝ որ է այժմ հռչակաւոր կրօնաստանն ևս զի պատրիարգական Աթոռն մեր Էջմիածին, զոլով ընդ իշխանութեամբ խանին Երևանու ոչ կարաց լառաջ խաղալ, նմին իրի օծաւ հանդիսիւ ի ժողովեալ Արք եպիսկոպոսաց ի սուրբ ուխտն այն ի լեռնեղորդ կիւրակէի զկնի զատկին ի մալիսի 25-ըն։ Ուստի և մեր ուրախացեալ առ այսպիսի հանդրահռչակ բարերարութիւն մեծի ինքնակալիդ՝ զոր արարեր առ ազգս լաբևթեան դոհութիւն և չնորհակալս ունիմք զկայսերական մեծութենէդ հանապազ ի սիրտ և ի բերան խնդրելով ի տեառնէ զկենացդ երկարութիւն, և զսուրբ թագաւորութեանդ ընդարձակութիւն և զհաստատութիւն լաւ-տեանս լաւիտենից։

Իսկ Դաւիթ ալս որ Պատրիարգ անուամբ բռնաւորեալ է լծմանդակութեամբ խանին Երևանու՝ հնարս նիւթէ հանապազ կալ ի բռնաւորութեան իւրում. հաստատուն ընդդէմ բարեհաճ կամաց Նորին Կայսերականի Մեծութեան և ազգի մերոյ, և որպէս ի սկիզբն բռնաւորութեան իւրում առ ոտն եհար և արհամարհեաց զաստուածալին՝ և եկեղեցական օրէնս էարկ զինքն և ջանաց արկանել զազգ մեր ընդ նզովիւք և արար զմեզ երդմնեաղանց նոյնպէս և այժմ հրաժարական ողջոյն տուեալ, օգտակար օրինաց իրաւանց և արդարութեանց՝ ոչ վարի ընդ աչակերտաց Քրիստոսի փրկչական պատուիրանաւս, այլ ըստ աշխարհի բռնաւորաց չարաչար վարէ զիւրն իշխանութիւն. ի Լուսաւորչէն մերմէ անտի մինչև ցարդ չիք երբէք լեալ լազգի մերում հայրապետ ոք, որ այսպիսի անուղղալ ընթացս կալեալ իցէ, եթէ որով անիրաւութեամբ և որպիսի բազմապատիկ վիշտս հասուցանէ ողորմելի միաբանութեան մերում օր աւուր դանելով՝ հարկանե-

լով և ի բանդ մատնելով՝ բաղում եկեղեցականք և աշխարհականք բաղում անգամ դրեալ ճշմարտութեամբ ծանուցեալ են Եփրեմ սրբազան Աբգ եպիսկոպոսին, Առաջնորդի ընդ հովանեաւ տէրութեանդ եղեալ աղդի մերոյ։

Ուրեմն աղաչեմք ամենեքեանքս աղեւտալի աղերսանօք՝ տեղեկացեալ տառապակրութեանս մերում յարք եպիսկոպոսէն Եփրեմայ աստուածաբար՝ գթասցես և ողորմեսցես ի մեզ ազատելով զմիաբանութիւնն և զպատրիարգական աթոռ մեր ի գերութեանց՝ դի մեք լուսով մեծաւ ակն ունիմք գտանել զփրկութիւն յաստուածատիպ սուրբ թագաւորէդ։ Զայս ևս յայտ առնեմք ինքնակալիդ մեծի, Գաւիթն այս առ. ի ծածկել զիւր ներեւնագործութիւն ի զիմաց միաբանից և երկրականաց զՅատագովութիւնս գրէ զինքեանէ և բռնութեամբ կինքել տալ նախապէս եպիսկոպոսաց և վարդապետաց մերոց, և ապա լնու զայնս կնքովք ոսկեաց, և խաւնիճաղանճ ժողովրդոց և առաքէ ուր և կամիս Ալա խնդրեմք յամենասպրդոյ Տէրութենէդ եթէ ալսպիսի գրութիւնք պատահեսցեն զալ լայդք սուտ և լունայնարանութիւն համարեալիք, և զնդեալ կինքեան ի նոսա բռնութեամբ եղեալ գիտասլիք՝ որպէս մեք, նոյնպէս և բոլոր ժողովուրդք երկրիս երեանու սիրով կապակցեալ կան ընդ սրբազան պատրիարգին մերոյ Գանիէլի այս կապակցութիւն ստոյգ յայտնի է ի գրոց երևելեաց. ժողովրդեան որք գրեալ են բաղում անգամ Աբգ եպիսկոպոսին Եփրեմայ, և զկամս իւրեանց ծանուցեալ՝ մանաւանդ ընտրութիւն հայրապետի ի ձեռն ի Կոստանդնուպոլիս եղեալ աղդի մերոյ է. զայսքանս ի յայտ ածելով սպասեմք և մեծամբ ազատութեան.

Կայսերական մեծութեանդ

ի 1802, յունիսի 2. աղօթարար ծառալք, պաշտօնեալք Քրիստոսի միաբանք Աբրահամեան Ամենաուրն սրբոյ Էջմիածնի։

Ծովակիմ արք եպիսկոպոս. Գրիգոր արք եպիսկոպոս. Ղազար արք եպիսկոպոս. Ծովհաննէս արք եպիսկոպոս. Վարդան արք եպիսկոպոս. Յակոբ եպիսկոպոս. Գրիգոր եպիսկոպոս. Ծովհաննէս եպիսկոպոս. Ստեփաննոս վարդապետ. Ծովհաննէս վարդապետ. Աբրահամ վարդապետ. Զաքարիայ վարդապետ. Աբրահամ վարդապետ. Աղէքսանդր վարդապետ. Փիլիպպոս վարդապետ. Ցարութիւն վարդապետ. Փիլիպպոս վարդապետ. Եսայի վարդապետ. Ռէթէոս վարդապետ. Փիլիպպոս վարդապետ. Յակոբ վարդապետ. Ծովհաննէս վարդապետ. Յակոբ վարդապետ. Կարապետ վարդապետ. Մկրտիչ վարդապետ. Անտօն վարդապետ.

Խաչատուր եպիսկոպոս սուրբ Բարդուղիմէոսի առաքելոց վանից. Գրիգոր եպիսկոպոս Սեբաստացի. Աբրահամ եպիսկոպոս Տերճանու. Մարտիրոս եպիսկոպոս սուրբ Էջմիածնու. Կարապետ եպիսկոպոս Կեսարացի. Սահակ եպիսկոպոս Բագրեւանդցի. Մկրտիչ վարդապետ Աքուլեցի. Գալուստ վարդապետ լուսարար երեք վանից. Աւետիք վարդապետ ժամօրհնօզ. Ներսէս վարդապետ Աշտարակցի միաբան սբ. Էջմիածնի. Ցարութիւն վարդապետ վեքիլ. Յակոբ վարդապետ. Ցարութիւն վարդապետ Տաթեւացի։

Մեք ևս համաձայնեալ վշտագին և ճըշմարտապատում միաբանութեան սրբոյ Էջմիածնի, խնդրեմք գնոյն խնդիր ողորմութեան առ աղդս և առ եկեղեցիս մեր և ազաչեմք լսել աստուածսիրաբար և ալց առնել սրբոյ Էջմիածնի հայրապետական Աթոռոյն մերոյ։

2Ե. *Թուղթ Թիֆլիսի հասարակութեան առ կայսր Ռուսաց։*

Աստուածապսակեալ և Օգոստափառ Մեծի Կայսերն։

Մեք ի Թիֆլիզ քաղաքիս գտանեցեալ իշխանք՝ քէղխուդալք՝ էնաֆք և բոլոր ժողովուրդք. եկեղեցականք և աշխարհականք միահամուռ բաղմութեանց ի մի բերան ժողովեալ ի վերալ ալսմ բանի՝ յայտնեմք զկիրս սրտից մերոց, դի անցեալ ամեն գիտութեամբ քաղաքիս մեծամեծացն և համալն հասարակութեան բաղմակնիք մահեբրու դՋէր Դաւիթ չնորհափալլ և Սրբազան Աբգ եպիսկոպոսն՝ օծեցաւ Հալրապետ ամենայն հալոց, և

զահակալ սրբոյ Միածնաիջի Աթոռոյն հոգևոր ծնողին մերոյ, որ կալ ալժմ և վարէ ղէչխանուԹիւն կաթուղիկոսուԹեան իւրոյ, ղոր և Տէր տացէ զկնանս երկարս և խաղաղականս, և ի ներքոյ հպատակուԹեան ✠ հաստատուն պահեսցէ, և որովհետև ի վերայ Սրբոյ Աթոռոյն իւրոյ բազմեալ կալ և զամենայն սրբոյ Թիւնն որք աստանօր գտանին՝ ունի ի ձեռս իւր, վանորոյ՝ ամենեքեանքս ի մի բերան աղաղակեմք և ասեմք, որքան կենդանին է՝ նա է ընդհանրական կաթուղիկոս մեր, և ոչ ոք կարէ վոփոխել զնա, որովհետև օծեալ Տեառն է, նա պարտի լիշատակիլ ի Սուրբ եկեղեցիս մեր. և բաց ի նմանէ ոչ ոք ճանաչեմք և պիտեմք։ Իսկ եԹէ նորին կայսերական մեծուԹեան հրամանն գալցէ, և նորին Բարձր հրամանու ալլոք եկեսցէ և օծցի ի մէջ Սրբոյ Աթոռոյն լայնժամ ամենեքեանս պարտական եմք հնազանդիլ նորին կայսերական մեծուԹեան հրամանին։

1802 ԹուիՆ, լամեեանն
լունիսի 6-ին, ի Թիֆլիզ։

Գրեցելոյս ստոյգ օրինակն և հեղինակն գրեալ, երեք հարիւր և չորս անձանց, այսինքն եպիսկոպոսաց՝ քահանայից՝ իշխանաց՝ և հասարակ ժողովուրդ կնքով ձեւագրեալ մատուցաք նորին Բարձր գերազանցուԹեան կառլ Ֆէդրիչ կնօրինղին, որ և հաճեալ ընկալաւ, և թարգմանեալ ընԹերցաւ, և խոստացաւ առաքել ի գուռն Ամենողորմած և ինքնակալ Մեծի կայսերն, որ և զայս օրինակս գրեցուցեալ առ ձերդ բարեպաշտուԹիւնն ի միամտուԹիւն։

Ես ամենանուաստ մահտեսի ՅԷՐ ՍԻՄԷՕՆՍ սորին հեղինակն գրեալ էի. որ մատուցաք կնօրինղին, զայս նորին համեմատ օրինակն ևս ձեռագրեցի։

22. Թուղթ Դանիէլ կաթուղիկոսի առ կայսր Ռուսաց։

Ցաղթող և բարձր ինքնակալ կայսր Ալէքսանդր Պաւլովիչ Աղոստափառ սուրբ կայսր։

Ամենառղորմած Տէր մեր և
Աստուածազուրկ խնամածու։

Աղօթարար ձեր և Ցիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Դանիէլ չնորհիւ Տեառն և առաստղորմուԹեամբ կաթուղիկոս ամենայն հայոց. և ընտրուԹեամբ սրբազան Սիւնհոդոսի և բոլոր աղղի մերոյ և ծայրագոյն Պատրիարգ Ա-րարատեան աթոռոյն սուրբ Էջմիածնի։

Ողջունիս Քրիստոսական խոնարհ երկրպագուԹեամբ ողջունեմ զօծեալգ Աստուծոյ և ամենասուրբ անուամբ ճչմարիտ օծելոյն երկնաւորի՝ և օրհնուԹեամբ սորին օրհնելով ղպատուական կեանս ողորմած բարերարի ղ մերոյ և ամենաբարեպաշտ թագաղարդ ղուզակցի քումմ և ծերունածին որդւոցդ լայտ առնեմք։

Ինդալ Քրիստոսական է հրաման. Թէ բաղխեցէք և բացցի ձեզ, սմին իրի մինչ ողորմուԹեամբ ձեր եհաս ինձ հրովարտակդ իմ ի Թագաւորէն հալարացւոց և լայդր ամենայն Հայոց առաջնորդ Նիկրեմ արքեպիսկոպոսին ի գերադոյն մեծուԹենէ մաղԹեցաք ղղրամատի ողորմուԹիւն ղոր լուսամբ Թէ մերձ ընդ մերձ ընկալցուք ի գլուխս մեր որպէս զԹագ ողորմուԹեան։

Այլ և ի մալիսի 28ին հանդերձ չնորհաւորուԹեամբ սուրբ օծուԹեան ձերոյ և մատուցմամբ պարտաւորական չնորհակալուԹեան մերոյ լայտնեալ եմք զխնդիր մեր առաջի աթոռոյ ողորմուԹեան ձերոյ, որև լուսամբ Թէ չնորհիւ Պարոն Թամարով դեսպանին վաղապէս մատչեցեր այն ի ձեռն Նիկրեմ արքեպիսկոպոսին։ Իսկ և ալժմ առ սաստկուԹեամբ ցաւոյն՝ ոչինչ ամօԹ համարեալ աղաղակելն առաւելապէս ըստ տէրունեան ձայնին կրկին ի վերայ առաջնոյն մատուցանեմ զայն խնդիր երկրորդ անդամ։

Արդ այն ինչ հրովարտակօք տէրուԹեան Օսմանցւոց և համազգալին բազմակնիք մահսէրօք, գիմեցաք գնալ ի յաթոռն մեր, որպէս յառաջն նոյնպէս և ալժմ, անքակ ունելով զմիաբանուԹիւն իւրեանց զա-

ւթին և Երևանու խանն արգելին զճանա ապարհ մեր, և ամենահնար խարդախութեամբ ջանադիր եղեալ զուն գործէին՝ լեաս նահան. ջել զանդառնալի հրաման բարեհաճութեան Օզոստափառ կայսերդ։

Ուստի ի քաղաքաց քաղաք ժողովեալ բազմութիւնք եպիսկոպոսաց, վարդապետաց՝ քահանայից, և ժողովրդոց ըստ եկեղեցական կանոնաց ուղիղ ակնբկութեամբ քննեալ զդատաստան Դաւթի, արդար իրաւամբ կընքեցին զդատակնիք նորա, որպէս հակառակ եկեղեցւոյ՝ և օծին զմեզ ազատակամ ըստ օրինաց կաթուղիկոս ամենայն հայոց, որն մատուցեալ զսուրբ պատարագ լիշատակեցաք զամենարժանդ բարեաց լիշատակութեանդ զօզոստափառ կայսրդ հանդերձ ամենայն թագազարմ պալատականօքդ և բարելիշատակ նախնեօքդ։

Եւ յաղագս բազմադիմի խարդախութեանն Դաւթի ահա ի տէրութենէդ Օսմանցւոց նոյնպէս առատ ողորմութեամբ ձեր ստացաք և երկրորդ հրովարտակ վասն վերահաստատութեան մերոյ, այլ սակայն աթոռն մեր՝ որ լԱրարատ և քահանայակարգ միաբանութիւն սորին, տակաւին մնան որպէս ի հնոցի, և բողոք աղաղակի նոցա լնու զերկիր, քանց ոչ օք է, որ ձեռնտու լինիլ կարիցէ նոցա ընդդէմ բռնութեան պարսից, ուստի լետ Աստուծոյ զոյս մեր առ Քրիստոսասպասակեալ կայսերդ մատուցեալ զայցելութիւն մեր ամենեցուն ի ձէնջ ակն կալնումք՝ որ թէ կամիցիք, կարող էք. և աղաչեմք զի զբարձր կարողութիւն ձեր մի խնայեցէք ի մէնջ ի փառս ամենասուրբ անուանն Աստուծոյ, և վասն տաճարի նորա սուրբ Էջմիածնի. զոր յայս երկու ամ արարին որպէս հիւղս մրգապահաց ըստ սաղմոսին։

Պարծեալ խնդրեմք զի որպէս չնորհ ձեր առատ է ի վերայ եփրեմ արքեպիսկոպոսին՝ նոյնպէս և առատ լիցի ի վերայ Կոստանդնուպօլսոյ Պատրիարգ Գրիգոր արքեպիսկոպոսին և հրամայեսջիք պարոն Թամարով դնսպանին, զի և նա քաղցր լիցի առ. լիշեալ Պատրիարգն։

Այլ և ամենայն եթէ բարեհաճեսջիք լսել, ծանուցանէ կատարեալ լրութեամբ առաջնորդն և նուիրակն ընդ հզօր տէրութեամբ ձեր եղեալ վերագանց եփրեմ արքեպիսկոպոսն. որում յայտնեալ ամենայն ինչ վճռական գրով ժողովոյն և այլովք հարազատ տպրութեամբք։

Ողջ լեր կարող և բարձր միշտ օգոստէ սուրբ թագաւոր և ոտք քո եղիցին ի վերայ թիկանց ամենայն հակառակամարտից զօրութեամբ սուրբ խաչին Քրիստոսի ամէն։ Ցամի կենարարին 1802 ի 19 յամսեանն յունիսի ի յիրեք վանք կոչեցեալ սուրբ ուխտս, որ ի Բագրեան գաւառի մերձ լԱրարատ ըստ 15 ժամու չափ ճանապարհի։

ԴԱՆԻԷԼ կաթուղիկոս ամենայն հայոց ծայրագոյն Պատրիարգ Արարատեան Աթոռոյն սրբոյ Էջմիածնի։

---

21. *Թուղթ Պլատոն Արքեպիսկոպոսին Հաշտարհանու առ Եփրեմ Արքեպիսկոպոս։*

Преосвященнѣйшій владыко,
Милостивый Государь мой!

Получая пріятныя отъ васъ извѣстія, что Богъ и Его Помазанникъ строятъ во благое Церькви Армянской, сердечно и радуюсь и поздравляю васъ, желая, да утвердится въ Ней на вѣки миръ и блогоуспѣшество! тако жъ и ревностные въ пользу оной иодвиги ваши да увѣнчаются и въ жизни сей и въ блаженной вѣчности! по первому псиѣстію о прибытіи Св. П. Даніила нъ Эчміадзинъ, непремину писатъ къ Его Святѣйшеству и принесть Мое поздравленіе. Уповательно и Вы, окончивъ дѣла свои въ П. Бургѣ, вскорѣ къ намъ возвратитесь, чего сердечно желаю, пребываю навсегда съ искреннѣйшимъ моимъ почитаніемъ.

Вашего Преосвященства Милостиваго Государя Моего Покорный сл. и усерд. доброж.
Плато А. Астраханскій.

Іюи. 22-го 1802.
Астрахань.

---

20. *Օրինակ գրոյ Քուէրեան Ստեփան վարդապետին ի Պօլսոյ, առ ապօրինատրն Դաւիթ. խնդրելն 100 քսակ. եւ այլ բանք։*

*** վեհապետ.

*Բարեբար տեսանդ իմոյ սրբազան ***ի իմ ողորմած հօրդ և ճչմարիտ բարեկամիդ սրբոյ աջոյդ համբուրս ճօնեմ անմահ մեռեալ և ոչ կենդանի անձս.*

Արդ տէր իմ Թուղթդ սրբազնութեանդ և աթոռակալի, նաև Պարսցւոց մահսարն, և մեր Դօլմաթլու խանի արդալն մեզ հասին, ամենևին բանի տեղ չանցին, և թէ ալսպիսի ձ ես լիցի ոչինչ են. բայց միայն դրամ Ալն սակս Գէորդ աղալի խորհրդով յաստուկ թաթար լղեցաք. զի որքան կարն ձոյ է դրամ հասու մեզ. մինչև ձ քէսալ, զի թէ ասես թէ ալս ծածուկ չլինի, զիարդ լղեցից, ահա լուր տէր իմ. ամենևին ծածուկ բան ոչ գոյ ալդր, որ աստ բոլոր քաղաքն ոչ գիտենան, միայն դու այնքան ջանք արալ որ ինձ հասուցանես կամիս դաւուլ դուռնով լղես քեզ եպեր. ոչ դոյ, այլ միայն ասեն անհուն մարդիկք թէ ալդ ինչ ամուս մարդ է և այլ, Դանիէլն մինչև ոչ լղեց խուրջինով ոսկին, և թօխչալով չալն, բանս ալս ոչ կարողացաւ դարձուցանել, իսկ գա՝ մէջն գոն Թող ամենայն անօթքն վաճառեսցէ. և բոլոր մուրքըն սթոռոյն գրաւ դնէ մեծամեծ տաճկաց, թէ իւրեան մնալ Թող այնուհետև աղքատութեամբ ապրի, իսկ թէ իւրեան չմնալ նստողի հարկն անիծված. Թող նա ինչ կաւնէ ինքըն գիտէ և այլն. տէր իմ եթէ ասես իցէ թէ գրամն լղեցից ոչինչ յառաջանալ դրամն ես ընդունայն կորնչի. առ ալս լուր տէր իմ ղի առ. և որու նմանեմք արարեալ որպէս որ ալս չիք Երիգորն կապանօք աթոռդ բերուն, և Դանիէլն ևս ֆարմանով աթոռդ լը զեն, Ցօհաննիսին բերեն պատրիարգ, և սակս տանդ նոր ֆէրման և բարաթ տան, ապա թէ ալսպէս չանեն, մէկ վարալ տալ չունիմք, տէր իմ, ես ամենայն բանն գրում եմ ուղիղն, և քո կամքն որն որ հաճեց այնպէս արալ, գրամին ճանապարհի չուքամին ես տէր չեմ, բայց աստ մէկ փարէգ չեմ կորուսանելոց, վաղճանն աւեր երևի տէր իմ. լղեալ ալդ գրամդ ղի թէ ոչինչ ես լինի Թող տեղս դրամ ունիցիս, ահա մի մի դրեցից վասնդն, զի Եփրեմն Թուղթ էր գրեալ աստ թէ աչք ձեր լոյս եղիցի, զի Թագաւորն ղրամատն անուն Դանիէլին չնորհեաց ապրիլ ամսոյս. և Ի դաղ դիպալ. ե ձ կազ ես այլ ճոթ. չնորհեաց, և ամենահզօր զորութեամբ լանձն էառ Դանիէլս նստուցանել. և այլ չատ և հոլով բարբաջմունս էր գրեալ այնք Թողում քոյդ դիտել. մալիսի ժե գրեալ էր ալս Թուղթն. Երիգոր վարդապետն ևս մեղ և այլոց Թուղթ էր դրեալ այնպիսի բանք ոչ գոլին. ոչ գիտեմ տէր իմ նա է սուտ գրեալ Թէ նա Թագուցեալ և այլն, բայց Թուղթքն Թէ մեզ ե Թէ նոցա ամսոյս ժԳ-ն հասին մեզ. իսկ ամսոյս ժե-ն կիւրակի աւուրն եթէ ալցն ղրութեանց վստահացեալ և Թէ այլու՝ ոչ դիտեմ, բայց միայն ալս անաստուած պարսիկս ատեան էր ելեր այլ աշխարհի մէջ բան չէ մնացեալ որ չհալի. մինն միայն ասացից տէր իմ Թէպէտ չէ արժան գրել, բերանս պապանձեսցի. և ձեռք իմ չորասցի որ ալսպիսի բանքս համարձակիմ դրել, այլ միայն ներել մաղթեմ տէր իմ ի փառս Աստուծոյ, և ալլ աղաչանք բազում խնդրեմ. ահա ալս է զի այն Աստուածակերտի տաճարին ոչ պարտէ այն պիղծ Թաւիթն նստել, այն ըրթոտ չունն, և այլ բաղումալսպիսի բանք մինչև չարէք սահաթ հաջել է այն ահաւոր տեղին։ Աստուծոյ ոչ երկնչելով և ի մարդկանէ ոչ ամաչելով. արդ տէր իմ տէր՝ Եփրեմի այնպէս գրելն, սորա ալսպէս հաջելն, և Դանիէլի ալդր գալն և գրելն որն գիտեալով քո, և որն մեք և այլ ցաւակիցք բարեկամք մեր կամեցան աղդել հրամանոցդ, իսկ քոյդ կողմանէ դու դիտես տէր իմ, լաւ իմացի սոքա քեզ հանդիստ չեն Թողուր մի պահիր ձեռքդ եկածն, ալժմ ևս նորանոր բանս հանէն, ֆարմանն հանեցին բոլոր փաշալից, վալվօտալից, մուսալիմից վերալ Թէ՝ էջմիածնալ անուն Դաւիթ կաթուղիկոսին զոր ինչ քահանալ, վարդապետ գալու լիցի բռնեցէք Թալանեցէք սուրկուն արարէք. ինչքն խլեցէք և այլն. տէր իմ այլ մարդ չի ուզէր գալն, նուաստ ծառաս միմիայն բաւական եմ սորա. սակայն անիծեալ լիցի գրամն որ չունիմ. զի Թէ ասես Թուղթ լղեալ

եմ և լզեղից. անհնար է մէկ փարայ տվող չլինի. գիտէ աստուած եթէ ես փարայ էի ունեցեալ այժմ վարարասանն տաքա ճգնէին. և դու աւելնալին հանգիստ նստած էիր. Պարզապէս մերայինքն ասեն թէ վարդապետ մեք լաւ գիտեմք որ մեծաւորդ կուտայ դրամն. ապա եթէ մեռանիցի, մի արասցէ տէր, այնուհետեւ ումէ առնուցումք. և այլ այսպիսի բանք չատ ասեն. արդ տէր իմ պարզապէս գրեմ հրամանոցդ զի այս անլիծեալն հաստատի. աստ քեզ միայն բաւական է ցեց. ապա ուր ինացին այն միւսքն. եթէ վստահ այդ կողմանցն հրամայեալ և ինձ գալ առ սրբութիւն ձեր. ապա թէ այդի միամիտ չես գրամի հոգս քաշէ, առ մեզ հասանելոյ, ես աստ այն նաչարութիւնն եմ քաշում որ մինչև ցարդ չեմ քաշած. Հրաման է արել ամենայն եկեղեցիկն թէ վայ այն կարգաւորին որ երթայ նորա տեսութեան և այլ իշխանաց, բայց օրհնեալ լիցին ձածկապէս գալիս են. և ես արձակեմ ամենայնի ուր կամիմ անվէր կերթամ բայբօքն ծոցս գոլով. իմ կողմանէ անհոդ լեր. Այժմ ես նորապէս քան հանեցին, խնդրեմ թէ իրաւ լցէ չուտով մեզ հասու ղրամն մինչ ուխտաւորքն տեղ չեն եկեալ, ես քնաւ սուտ հանեմ այն, և ներսէսի լարմարած. ապա թէ ուխտաւորքն գան, ի հարկէ նոքա լաւ գիտելոց են. և աստ պարզապէս հռչակելոց. այնուհետև միւլ քա գար է այն. որպէս լսովաննէս վարդապետն վախած լինի Թիֆլիզ և նորա աթեղայն ի մէջ քառասանից գոլով հանեալ լցէք Կարապետ անուամբ սաստիկ գանակոծ առնել տալ ձեռքն և ոտքն նախջուանցւոց գաղել տալ. Ղազար վարդապետն և այլք ընդ նմին Ղազարապատն արգելել տալ, և փայտ պատրաստել. որ գիշերն ծեծել տալ. զայս տեսանելով միաբանից գրոհ տուեալ քարիւ և փայտիւ գալ ծաղկած այվանի չուչալքն փշրել և գուռն խորտակել, ասելով թէ հան զեղբարսն մեր ալտի և տուր մեզ. իսկ տեսանելով քո անճարացեալ տուեալ ես նոցա, և նոքա միահամուռ գնացեալ առ խանն մեր աղաղակելով թէ բարձ ի մէնջ զանազան հայհոյանս տալով՝ իսկ խանն մեր տեսանելով զայն միաբանութիւն հրամայեալ է թէ վաղն գոր ինչ կամիք այնպէս արարից. և քոյգ լսելով զայն ծոցի սանատ ինքեան և քութարի քամարն լղեալ լցես կնոջն, իսկ առաւօտուն մինչ միարանքն ակն ունելով թէ հանելոց է զքեզ. ներհակն նկատման, խանն Աստուածա բէկին հրամայեալ է բռնութեամբ տանել սուրբ աթոռն և տալ ի ձեռս տեառնդ իմոյ, և ի գիշերի անձրևալին մութն և չամուռ գոլով զանիւ և հարուածով քերեալ լցեն առքեզ ոմանք քոկոտն ոմանք գլխէ բաց. և գու իբր ըստ իւրաքանչիւր խուցքն լցեն ըղեալ և գուռքն փակեալ, մինչ առաւօտն լուսացեալ է. ի մէջ խցէն ձայնեալք են թէ հանեցէք զմեզ աստի. ի հարկաւորութեան որովայնից մերոց ելցուք և ապա կրկին փակեցէք, իսկ ձեր ոչ լսելով, քեկեալք են զսափոր և ոմանք ի կոնքս իւրեանց ելանելով այնպէս մնացեալ են անտուաղ զաւուրս Գ. և ապա թուղթ լցես առեալ ի նոցանէ թէ մեք այսուհետեւ, մտերմաբար ծառայեացուք, ապա թէ յանցանաց գործ ինչ գործեացուք ձՁ խանին տացուք, և մուրուքներս թրաշ լինի. այս ղորս գրեցի ծ էն Ա ըն չէ տէր իմ. Արդ կրկին դառնամ ցաւս մեր ծանուցանել, եթէ քո հրամանոց հանգստութիւնն կամիս, այն գրած դրամս լղեա Կարին առ Ցօհաննէսն կամ ով որ գիտես, աստուծով դրամն որ մեզ հասանի. ու օր չի անցնի որ ֆարման և բարաթդ կուղարկեմք. զի թէ գրամ լինէր ես ևս էի ի հանգստի սուրբ աթոռոջդ Դանիէլն, Գրիգորն և այլքն առ քեզ անարգանօք, և Ցօհաննէսն պատրիարգ: Աստուած խէր տալ Հաջի Բարին թէ նա Ախալցխայ ասած լինէր թէ թարց գրամս ոչ լիցի ես մէկ հողս կանէի. դուդուկն ձեռքս եղ ուղարկեաց. տեղս Ա մէկ փարայ տուօղ չեղև. այլ ինչ և իցէ տէր բանն քանի որ մնում է ծանրանում է օր մի լառաջ հոգս քաշէ այդ գրամս ղրկելն. ապա թէ զանց առնես հրամայեալ նուաստիս դալ առ տէրութիւն ձեր. այլ ինչ լուսով մնացից. այժմ ես որ այսքան նախանձու լցան սակս կիւրակի հաջելուն ոտաց ելան, ապա թէ կիւրակէ այն հաջմունքն չէր արել. այսքան ոտի չէլին կանգնեալք. տէր իմ այս մինչի մտրդիկն այնպէս մարդ են որ ասեն թէ Ոսուվ վէգիրն և Փիլիպպոս ամիրային ևս թէ այն կողմն լինին մեք չուտով գարձուցանելոց եմք, և այլն. Փիլիպպոս ամիրային ևս մէկ թուղթ գրես. այս եկող խախարն շատ էհտիպարով մարդ է,

սորա հետ քանի մարգ որ կուղարկես. մինչև երդրում զու գիտես, երդրում որ գրամն առ. Յօհաննէս աղալ Հաջի Բարալի հասցէ թաթարն չուտով Յօհաննիսէն մէկ թուղթ բերէ թէ գրամն առ. մեզ է. կամիք լուծցայ կանեմ կամիք կուղարկեմ. մեզ աստ ձեռք կուտայք բանին. աստուծով ամենայն բանն ղիւրաւ լինի. ահա տէր իմ ալա վերջի թուղթն է զոր դրեցի. լետոյ վաղն միւս օրն ինձ մեղադիր չլինիս ամենայն ինչ պարզապէս գրեցի. թէ ընաւն և թէ օգուտն, լսակ ի կողմանէ Գալուստ և Մարտիրոս վարդապետացն զինչ ես դրեցից. մէկն ֆարմանլուէ ի դրունս աստուածասիրի ուրումն երեսն ծածկեալ, և միւսն երկիւղ մեծ ունի սուրկունի. երկուսն ես հառաջելով դրեն. և օգնութիւն հայցին, մեք ինչ կարող եմք առնել նոցա. նախապէս աստուած հոգացէ և ապա դրամն. աստուած երկայնամիտ գոլով համբերէ, և դրամ մ՚ղ բնաւ մեզ ոչ գոյ. տէր իմ մինչ ցարդ այն բերեալ դրամն ևս փչացաւ. ԷՁՄ ղուռուշ մեր տաճկին տուաք, ՒՁ ղուռուշ թաթարին տուաք, ՔՁ ղուռուշ մեր չանորդի Մարտիրոսն էառ. բաց ի մեր խարջն սոյն մինչ ցարդ, ջրիպէս խարջելս. այժմ ես մեր տաճիկն ամենայն աւուր կազ և կոխ է առնում, երբեմն ձի առ ասելով. երբեմն ձիանց դինն տուր ասէ. ես ձիառնք կառնեմ, այլ երբեմն թաթար բռնէ ինձ տանէ ասելով ոչ դիտեմ դինչ առնեմ տէր իմ. ոչ ապաքէն հրամանոցդ արզ արարի. թէ ես մէկ փարալ չեմ տալ տաճկին. դու հլ ասան արարեր թէ գուքո խարջոյն և նա ի՛ր խարջոյն գնացէք. խնդրեմ մէկ թուղթ լղեսցես սմա թէ քո գրամաքն պարտիս գալ. և կամ թէ վարդապետի հետ բան չունիս. արի ես քեղ տեղս չհանելոց եմ ե այլն. և այլն Գէորդ աղալի թղթէն իմանալոց ես.—Ալ Բարք պէկ թաթարս չատ էհտիպարով մարդ է, ԷՁ ղուռուշ ետուք ի գնալն և ի դառնալն, ՂՁ ես ետու տեղս. ԳՁ հրամանքդ տալ պարտիս այդր. Տէր իմ ալա ամենայն զոր ինչ դրեցի և զոր ինչ լինիցի, տերամբ զօրայեալ Գէորգ աղալի գիտութեամբն է և ոչ թէ իմս կամ այլոց. աստուածն բարձանց վաղճանն բարին եղիր է ամէն, ծառալ եմ տեառնդ խցիս ցեցեղի. նացն հրամայես մուղալաթ լինին. և բուխարին ես չինել սան. լաւել իմանէ լիցի տեառնդ իմոյ խաղաղ կեանք ամէն.

Գրի ի Ո ՍՄԱ թուոջս. Ի Գալաթիոյ զանջիր- և ի լուսիսի ԻԴ լի խանն, կենամաչ ՍՑԲՓԱՆ ԱՐԲԳՈՑ

Մահտեսի մանուսարն. և մեր յոչականցի օրհնեալ Պետրոսն սուրբ աջդ համբուրեն և զօրհնութիւդ և ողջ լինելդ խնդրեն և կամին։

ՁԹ. Պետր Կաւաչենցւոյ առ Դանիէլ կաթուղիկոս

Կայր՛՛՛

Պատրիարգ՛՛՛

՛՛՛աղարդեան Դանիէլ՛՛՛ ամենայն Հայոց

Մեր գերագոյն Հայր Հոգևոր։

Ջերմեռանդական համբուրմամբ Աստուածաղրոյմ Աջոյգ՝ լայտ առնեմ, զի ընկալալ ձեռամբ խոհեմագոյն Անտոնիոս Արչիմանդրի գՇնորհեալ օրհնութեան կոնդակդ որպէս զՁ՛ր երկնառաք, զոր ընթերցեալ ծանեալ նախ զկենդանութիւն գերահոչակ Հայրութեանդ և ուրախացայ, երկրորդ զկենսատու օրհնութիւնդ որովք օրհնեալ էք զԱստուածապատակ ՛՛՛մեր. և զմեզ, որոց վասըն ուխիմ գծայրագոյն Շնորհակալութիւնս

ՁնծացայՀ՝ մինչ ընթերցայ զչքեղ հանդէս սրբոյ օծութեան վայելչափառ ՛՛՛իդ. զոր սիրով մնծաւ և ջերմեռանդութեամբ շնորհաւորեմ։

Շնորհաւորեմ բերկրալից լինելով պատկառազդելոյդ և ի տիեզերական ՛՛՛երէն մերմէ. զնորուն օգոստափառագոյն ինքնակալութեանն բացարձակ դրամատն ՛՛՛ական. որ շնորհեցաւ ի նմանէ արժանաւոր վեհապետիդ Արարատեան աթոռոյն՝ սրբոյ Էջմիածնի՝ հանդերձ կլկնազան և բարձրանիչ խելայիւքն։

Աւետեմ և զպճնապատճառ հանդիսութեամբ տօնախմբութիւն տեղւոյն՝ զոր կատարեցաք ի փառս նորին ինքնակալ ՛՛՛երն մերոյ՝ շնորհակրին Աստուածընկալ հօդս մերում նոյն քառանիշ պարզևաց. զոյս առ ի բանիւ առ շնորհաւորել ընդ փոխարէն բանի մերոյ՝ յաւէտ զտիեզերալոյս օծութիւնդ՝ մատուցուք ի սպաս ՛՛՛ընտիր ՛՛՛իդ զարս եր-

կուս, այսինքն զՊիղեր Ստեփան Վարդանոյն, և զաղնուորդի Թոզին Փաարիէլեան վրացի. յորոց (բաց ի դրուագոյն նօտարիս) մի ըստ միոջէ ծանիցիք զկերպ հանդիսիս, զոր ի պատիւ վեհչութեան փառաց Աստուածածնական հայրութեանդ կատարեցաք։

Եւ սակայն՝ զի նոյն ամենաբարեպաշտ ՚՚՚ն մեր՝ իւրով մեծ ողորմութեամբն՝ զոր առատապէս տարածեալ ունի ի վեր այ հիասքանչ ՚՚՚իդ՝ հանդերձ սովորական աթոռով Արարատեան և բոլոր պատուելի սղպազ յոժարեցաւ (որպէս և յօժարն է) միաւորիլ ընդ սքանչելափառ հայրդ մեր, և վերստին եկեղեցւոյ՝ ընդ հարսին քում տարփալոյ՝ ընդ սրբոյ Էջմիածնի, զորմէ չունիմք բնաւ երկբայութիւն։

Զսրբազան Յովհաննէս արքիէր նուիրակ և հայոց առաջնորդ քաղաքիս հոդևոր հայրն մեր հանդերձ իւրովք հոդևոր և մարմնաւոր հպատակօք ունիմք ի մեծ յարգութեան՝ ըստ իւրաքանչիւրոցն աստիճանի՝ ըստ հաճոյիցն Աստուծոյ, ՚՚՚ մերում. և սրբոյ բաղնաստրը ՚՚՚իդ ամենայն հայոց, զորոց՝ հայցեմ ոչ հոգալ երբէք. այլ անթերի ունիլ ի գերայ մեր զչնորհս հայրական Աստուածանուէր մաղթանօքդ և առաջարկել զիմաճահ պաշտօն. զոր յօժարակամ փութով պատրաստ եմ ի կատարել։ Վերստեալ ՚՚՚իդ խոնարհ բարեկամ՝ և ողորմութեամբ նորին ՚՚՚ակ ան մեծութեանն ղէլիսվիտէլինէ սատատսկի սովէտնիկ ՊՏՏՐ ԿԱՒԱԼԷՆՑԿԻ

1802. և ի 16 յուլիսի
ի Թիֆլիզ։

Ղ. *Դաւիթ արքայորդին առ Դանիէլ կաթուղիկոս*

Սրբազնասուրբ կաթողիկոս ամենայն հայոց և օրինաւոր Հայրապետ Դանիէլ

Իմ ողորմած և չնորհունակ Հայր և Տէր

Նախկին հայրութիւնն ձեր զոր ունէիք ի վերայ իմ, ունիմ ես զայն ի միտ լիամտի. Արդ՝ ծայրագոյն զիս հաւատարմութիւնն ունի զչնորհսն յայտնել առ ձեզ սրբազնասրբութեանդն, որով ջերմեռանդութեամբ և մեծաւ սիրով չնորհաւորեմ ձեզ սրբազնասրբութիւնն օրինաւոր հայրապետութիւնն ամենայն հայոց որ մինչ ցայժմ բաղձմամբ մնաց սպասեաք արժանաժառանգ հովուապետութեան ձերոյ. ով սրբազնասուրբ և ողորմած տէր իմ. կարելի է յաղագս ոմանց ներգործութեանց պատահեցելոց զսիրտ սեառնդդ փոխարկեցեալ իցէ ի վերայ իմ, սակայն ի վկայութիւն առ ածեմ խղճմտանքն որ ես ըստ ամենայնի եմ անմեղ առ այն զի աստ եղեալ մեծաւորն ուստաց, զոր ինչ և ասէր ես անցանել ի բանէն նորա ոչ կարէի. արդ ես լուսալով արդարադատութեան ձեր որ թարց հալեցման ճշմարտութեանն ոչ ումեք դատէք. վասնորոյ խնդրեմ ի յողորմած հայրութենէ ձերմէ անաբասքաց անկեալ և անմոռաց լինել առ որ մեծաւ հաւատարմութեամբ ունամ

ձերոյ սրբազնասրբութեան
ողորմած տեառնդ իմոյ
խոնարհ ծառայ ԴԱՒԻԹ

1802 յուլիսի

Ղ. *Դանիէլ կաթուղիկոս առ Ալէքսանդր կուրակին։*

Բարձրաստիճան և ամենապատիւ Իւանիէլ Պատրիարդ

Նորին կայսերական մեծութիւն՝ իմ Ամենողորմ թագաւորն, Ամենաբարձր բարեհաճութեամբ հրամայեաց տալ ի վերայ ամենայն սահմանաց վերակացուաց նորին այնպիսի բարձրագոյն հրաման, առ ի ոչ թողուլ մտանել՝ ի տէրութեան նորա հայոց կարդաւորաց ուրուք, թարց ձերդ վկայական դրոյ։ Ըստպէս և ի բարձրափայլ Տէրութենէն Օսմանցւոց իւրոց փաշայից տրեցեալ է։ Իսկ այն հոգևոր անձինքն, որք տանելոց են վրկայական դիր ի ձէնջ, ամենողորմածաբար բարեհաճեաց հրամայել. թողուլ ըստ նշանագրութեան ձերոյ. թարց իմիք արգելման դիմել՝ թէ առ Բարձրագոյն դուռն նորին, և թէ ըստ հոգևոր հարկաւորութեանց առ աստ գտանելոց ի կառավարել զհայս. քնակեցեալս ի Ռուսաստան, Արք եպիսկոպոսն ձեր Եփրեմ և սոյն հրամանս տրեցեալ իսկ է նոցա, վասն որոյ ծանուցանելով ձեզ վասն տեղեկութեան,

յատուկ վերապատուութեամբ մնամ պատրաստ ի ծառայութիւն

Քնիազ Ալեքսանդր կուրակին։

Նորին Կայսերականի մնծութեան իմ Ամենողորմած թագաւորին վիզ կանգնելեր դէպի վիտիլնօ տալնու սովետնիկ, Սինաթօռ կայսերական խորհրդեան անդամ, դէկխտովիտէլնու կամերդեր բարձր նշանի Սրբոյ Ցօհաննու երուսաղէմացւոյ մնծ կանգլեր և նշանաց ռուսաց Սրոյ Առաքելոյն Անդրէի նախակոչեցելոյ Սրբոյ Աղեքսանդր Նէվսկի և Սրբոյ Աննայի առաջներորդ կլաս թաղաւորական պրուսաց սեաւ և կարմիր Արծուից Դանիու՝ Փանէն Բրօղիս կատարեալ խաղաղութեան և բարձր նշանին Սրբոյ Ցօհաննու Երուսաղէմացւոյ մեծ խաչի նշանակիր։

Ի Սանկտ Պետրուրգ
լուիս 22 աւուր
1802 յամի։

Ղ. Կոնդակ Դանիէլ կաթ. առ ա. քահանայս Թիֆլիսոյ։

Ցիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Դանիէլ որ և չնորհիւ նորին կաթուղիկոս և ծայրագոյն Պատրիարգ ամենայն Հայոց. Աստուածայնոյ և Առաքելականի Սկզբեցւոյս Քրիստոսի, նաև լուսակառոյց և ղերազահ մեծի Աթոռոյս Էջմիածնի։ Ցորմէ ժամանեալ հասցէ թուղթ հոգևորական սիրոյ, Աստուածային բազմապատիկ օրհնութեան, և Քրիստոսապարգև կենսաձիր սուրբ ողջունի ի վերայ հոգևոր որդւոցդ մերոց և հարազատ գաւակացդ սրբոյ լուսաւորչին այսինքն Տէր Ցակոբ, Տէր Առաքել, Տէր Ստեփան, և Տէր Միքայէլ պատուելի Աւագ քահանայիցդ *), Աստուածապահ Տանց և բնակութեանց ձերոց, սիրադուն որդւոց և ընտանեաց ձերոց, և մանաւանդ՝ ընդ ձեղ հուպ եղեալ բարեկամաց՝ որք ի մէնջ հն սիրելեալք, անարտում կենօք, և մշտազուարճ բերկրանօք խնդալ ի Տէր Քրիստոս։

Շնորհք...

Եւ ընդ Աստուածաձիր և Քրիստոսանուէր Սրբոյ ողջունիս, ծանուցանեմ լիցի սիրելի և հարազատ որդւոցդ մերոց, և յուսածնունդ գաւակացդ սուրբ Աթոռոյն Էջմիածնի. քանզի՝ սիրալիր թուղթ ձեր՝ որ լի էր ամենևին հաւատարմութեամբ, հասին ի մեզ ի լրսկսբաւ՝ ննթածիր ամսոյս, ընդ նորին յատկացեալ Տէրութեան՝ յօդստապիտառ կալանք պարդևեալ հրովարտակի պատճէնի (որոյ գալստեանն դմնծահռչակ հանդէս արարեալ բստ վայելմանն, դոհացաք նախ դԱստուածոյ Տրնօրինողէն, և ապա՝ բոլորով սրտիւ օրհնեցաք զառաքօղն նորին՝ ըստ իւրոյ արժանաւորութեանն) հուսկ լետոյ ընթերցեալ բղթուղթն ձեր, ծանեաք զանչափ սէր և ղհարազատութիւն, վասնորոյ՝ չնորհակալութեամբ օրհնեցաք զսիրելիսդ մեր, դի Աստուածահաճ և ուղիղ դնայիւք ձերովք՝ ուրախ առնէք դիս, որով Աստուած փառաւորի, և հոգիք կեցուցանին։ Արդ՝ սիրելիք իմ ի Տէր՝ զոր դղազնացութիւն ձեր՝ ոչ թէ միայն նարդենիս, այլ բազմիցս ծանուցեալ է՝ Մերս ճշմարիտ սիրելի, կենդանի նահատակ՝ Ցօհաննէս Արք եպիսկոպոս Առաջնորդն քաղաքիդ ձերոյ, և ծանօթացեալ եմք՝ ի հաւատարմութիւն ձէր, առ այն ցնծացեք և ուրախ լերուք, դի վարձք ձեր բազում են լերկինս, ուրեմն՝ միամտութեամբ յապաւզք և ակնադէտ հնասջիք, առ ի ընդունելոյ ի մէնջ զչնորհս և զօրհնութիւնս Աստուածային ի տեղի վարձուց հարազատութեանն ձերոյ, զոր ճշմարտապէս ցուցիք մեղ՝ սիրով և արդարութեամբ, որոց զվարձն Տէր հատուսցէ։ Այլ և՝ սիրոյն Աստուծոյ լորդորեմ զսիրելիսդ իմ, դի որպէս մինչև ցարդ, նոյնպէս և առապայն կացջիք և հնասջիք սիրով սրբով, և ըստ ամենայնի ձեռնտու և յօժանդակ լինիջիք Ցօհաննէս Արք եպիսկոպոսին քաղաքիդ, դի լալսմհետև ևս՝ լսելով մեր զհաւատարմութիւն ձեր, առաւել չնորհակալ եղէց ի ձէնջ. կացջիք ողջ, ի չնորհս և ի խնամս Աստուծոյ, օրհնեալ ի նմանէ և ի մէնջ. ամէն։

Գրեցաւ ի 1802, ի յունվ՛ 9,
ի յերեքխորան վանս՝ որ ի
Բաղրեանդ գաւառի։

*) Հասցէի վերայ գլուած. է ի Թիֆլիզ։

Ղ.Գ. *Թուղթ Կուրակինի առ Դանիէլ։*

Բարձրաստիճան և ամենապատիւ Դանիէլ պատրիարգ

Ամենաողորմած կայսրն բարձրադունեզարար բարեհաճեցաւ հրամայել ինձ, դրել առ բարձրաստիճանութիւն ձեր որ նորին մեծութեանն յոյժ ընդունելի լինելոյ է, եթէ դուք որպէս որ աստիճանի ձերում վայել է. լինիլ ողորմած և հեղ մոռանալով զամենայն որ ինչ ի լընտրելն զձեզ լինել դլուխ հարց եկեղեցեաց՝ ընդդէմ կամաց ձերոց էանց, փոխարկիցէք զհովուական օրհնութիւնս ձեր՝ թէ ի վերայ Իզմիրու Մարտիրոս արքեպիսկոպոսի, և թէ Ստեփաննոս եպիսկոպոսի, նոյնպէս և ի վերայ ամենեցունց որք համարձակէին հետևիլ ունայնացուցանել զանընդդիմակելի իրաւունս ձեր ի վերայ պատրիարգական աստիճանի, զոր այժմ ստացեալ ունիք։ Ակսպիսի բարեհաճութիւն ձերդ բարձրաստիճանութեան, իսկապէս փութով զանզամենայնն պարտաւորելոց է զնոսա գալ յապաշխարութիւն և գարձուցանելոց է լուղին ճշմարիտ կատարելութեան։

Ունելով պատիւ ձանուցանել ձեզ վասն բարձրագոյն նորին կայսերականի մեծութեան բարեհաճութեանն,

Մնամ յատուկ խոնարհութեամբ
պատրաստ ի ծառայութիւն
(հեղինակն ստորագրեցեալ է այսպէս) քնեալդ ՂԱԶԱՐՈՍԱՆԴՐ ԿՈՒՐԱԿԻՆ

Պատիւն որպէս ի միւս երեսն դրելոցն էր գրեցեալ՝ և ընդ մին բայց ոչ երկրորդեցի աստանօր։

Ղ.Գ. *Ռէթէոս (?) վ. առ Յովհաննէս Արքեպիսկոպոս։*

* * * *Կայսերն*

*Ի ձեռն չար Շահնազարին և այլ համախոհից և քանիցս վասն մերոցն խանին մատնեալ է և խանն զանց արարեալ զբանիւքն երբեմն լսէ և երբեմն ոչ. և այսպէս ինամք ի մեծ հոգս ե ի տարակուսանս, և թէ ոչ լինիցի յոր յառաջ փութայիչս յօդնութիւն Աստուածապատակ *** իրանի ամենեքեան-*

նըս ի ձեռն չար բարբարոսիս մահանամբ. զի չգիտեմք թէ զորն հոգասցուք՝ զանձանց մերոց կորուստն եթէ ընտանեաց մերոց կորոպտելն և ամենայն տանել ի բանդ և թէ զընչից մերոց կեղեքելն. Աստուած հոգասցէ զմեզ կամ տացէ մահ և կամ օդնասցէ անճառ ողորմութեամբն իւրով։ Արդ՝ եթէ ունիք յօդնութիւն ինչ մատուցանել ժամ մի յառաջ փութացուսջիք ե թէ ոչ յամելն մեղ չլինի օգուտ և համբերութիւն այլ ես չունիմք ժամանակ ե այլն։ Իսկ ողորմելիս եկեալ ի գիւղս Աչտարակ սակս մխիթարելոյ զպարոն Գէորգն վասն հանգուցեալ կնոջն իւրոյ զոյս միայն առ սակաւ ժամս կարացի ծրել և ինամք սփոփութեան ձերոյ լերուք ողջ ի սէր իմ Ռեթէ սե”

ի ՌՄՄԱ թուականն
սեպտեմբերի ի Թ
ի Աչտարակ.

Ղ.Ե. *Թուղթ ի Գալուստ եպիսկոպոսէ Նուիրակէ Պօլսոյ առ Դաւիթ կաթուղիկոս։*

*Ինքնամատոյց և բարձրամիտ խորհրդաբարու *) և քօղապատառ անարատի հարսին Քրիստոսի և մօրն հաւատոյ մերոյ սրբոյ Աթոռոյն Լուսաւորչի, Դաւիթ Բօրչալեցւոյդ զեկուցումն լիցի։*

Արդեօք մինչեւ չընթերցար զբանն Սրբազան Առաքելոյն, որ գրէ՝ եթէ՝ «Ոչ ոք կարէ ինքնընծայ լինիլ, եթէ ոչ Տէրն ընծայեցուսցէ». արդարև՝ թէպէտ Սիմոն մուղն ի Սամարիայ ինքնընծայ եղև, այլ սակայն իբրև ետես զտուչութիւնն Հոգւոյն սրբոյ ի ձեռնադրութեան սրբազանից Առաքելոցն՝ Պետրոսի և Յովհաննու Աւետարանչին տուեալ լինել, մատոյց նոցա ինչս և ասէր՝ «տուք և ինձ զիշխանութիւնդ զայդ», ի բաց մերկանալով յառաջին ինքնընծայութենէն, և խնդրէր ի նոցանէ ընչիւք զհոգևորն չնորհ. ալի ոյր վերայ դնիցեմ զձեռս առցէ զՀոգի սուրբ»։ Ասէ ցնա Պետրոս». Արծաթ քո ընդ

---

*) Թէև լինել՝ խոյիաբարոյ։

քեզ լեցի ի կորուստ զի զպարգևն Աստուծոյ համարեցար ընչիւք ստանալոյ»

Անուանօք և անձնական ժպիրն, և զգաստաբարոյ անխիղճ զբօրէն, (ահա սկսեալ քանէ համամնգամայն և զքո լրօրէն և զգաստակերպ ընթացքն նոյնամոլոյ ինքնամարդկութիւնդ *) գրեցաք մեծապարգև և աղնուամիտ ցանկալեացն մերոց, Մելիք Աբրահամին, հաւրիւրապետ Գաւրիէլին, և ամենայն իշխանաց երկրիդ, ես առաւել բարձրասիտակ իղձէքլու **) Դավիթ Մահմագ խանին, և մաքրագործմամբ միաբան եղբարցն՝ որ տեսանիցես գնոսա, և ամենքիւք չատասցես, գիտելով զորքանութիւն անառակ չափոցն քոց)։ Մինչ չընթերցար զբանն առաքեալոյ. և կենեղուս վարդապետութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ որ ասէ. «Հորժամ կոչեսցեն զքեզ ի կո« չունս, մի երթիցես և բազմեցիս յառաջին « բարձին. գուցէ քան զքեզ պատուականն« գոյն ոք կոչեցեալ իցէ ի նմանէ, յանժամ « ասիցէ ցքեզ՝ բարեկամ, տուր սմա տեղի. « յանժամ ամօթով սկսանիցես զետին տե« գին ունելոյ։ Ա՛լ Բորչալուեցի Դաւիթ, որքան ամ իցէ՝ որ միաբան կաս սրբոյ Ցանգ Աստուածածինիդի, և գինչ վայելուչ և արժանաւոր գործս գովելոյ կարգաւորութիւն ունիս դու. և քանիցս երկիր գնացեր, և սիրոյ նուիրակեցեր. և գինչ ինչ իցէ բերած արգիւնագ. որ այդպիսի ինքնագլուխ եղևալ, առանց գիտութեան մեր և թարց հաւանութեան Սրբազանմամբ միաբան եղբարցն մերոց, նաև բոլոր օրհնեալ լուսաւորչակրօն Ազգին մերոյ բանի լեալ, և ինքնամատոյց մատնելով գինչան սրբոյ Աթոռոյդ մերոյ, մեր իբրև զիտոյ անտառի, ի զրախայ աստուածապալին սեպագրուեցար (*) և ժպրհօլէն նստար լառաջին բարձին անխիղճ մտօք, և անանօթ լրբութեամբ գահակալեցեր ի Հայրապետական Աթոռդ։

Զկնի տաճիկ Շիօյի որգոյ ծովսէփալ Սրբազնիկոպոսին, որ կափողն էր եկեղեցեաց և վանօրէից մերոց և ցրուօղ Ազգին մերոյ, նա՝ որ չատ հնագոյն էր քան զքեզ, որքան աշխատութիւնս ունէր մեր սրբոյ Ցանգ՝ քաց ի վատնելոյն, որ դու լիրբ Դաւիթ Բորչալուեցիգ դնա օրինակ առեր քեզ և նմանեցար նմա. որ լեառնդեանն իցես տակաւին միաբան սրբոյ Ցանգ։ փաքուստ ամբարիշտ, ի Պօլիս ալնքան ի մեր և Դանիէլ Արքեպիսկոպոսին մէջն որոմնացան եղեր, մինչ զի տարագրեցաք իւրաքանչիւրքս, որով սուրբ Աթոռն մնացեալ ի ձեռին լրբոյդ, և որպէս կամիցիս առնել արասցես. որ ահա ինքնագլուխ սևագրեցեր եպիսկոպոսունս։

Զոր ահա ըստ հրամանի երկու մեծազօր և Օգոստափառ բարձրաշուք կայսերացդ, և ըստ ընտրութեան բոլոր օրհնեալ Լուսաւորչակրօն ազգին մերոյ և մեր ևս իսկ. և հաճութեամբ համայն լարգոյ եպիսկոպոսաց և հաւանութեան ամենայն միաբան եղբարցն Սրբոյ Աթոռոյդ՝ արժանի համարեցաք զԴանիէլ առաքելապատիւ Արքեպիսկոպոսն, լինել մեզ օրինաւոր Հայրապետ և կաթուղիկոս ամենայն Հայոց։ Որ և արժանաւոր օծմամբ, թէպէտ նա օծեցաւ ի Բագրեւանդ Սրեք Խորանն կոչեցեալոյ ի Բագրեւանդ գաւառի, սակայն թէ միտք մեր, և թէ եպիսկոպոսացն լասմիկ կղզմանցս և թէ բոլոր օրհնեալ Լուսաւորչակրօն ազգին մերոյ, և համայն միաբան եղբարցն Սրբոյ Աթոռոյդ՝ նա է արժանաւոր փեսայն, այս ինքն Դանիէլ Նորապատակ Սրբազան Վեհապետն և կաթուղիկոս ամենայն Հայոց. նորա է հարկաւոր նստիլ լայդր ի լընդհանրական սուրբ Աթոռդ, և ոչ թէ քեզ խորդաբաթուլ Դաւթին Բօրչալուեցւոյդ։ Ուստի ի հասանիլ թղթոյս առ քեզ ինքնամատուցիդ, պարտիս ի բաց թողուլ զգաղանամտութիւնն քո, և դադարեալ ի կատաղ առնելոյ զիղջալի միաբան եղբարսն մեր. երկրորդ՝ զոր ինչ վատնեալ իցես հանգերձ 6 հատ ոսկի ժամացուցովն և 3800. գրամովն, լանձնեալ լայդր առաքելչնորհ եպիսկոպոսացն. երրորդ՝ քո երևսի ջրովն կորչիլ ի վեհութենէդ. չորրորդ՝ զոր քինչ կացութիւն և չորեմ տեղոյ կանգնէիր լեկեղեցւոյն ի ժամանակս Հողելոյս Ղուկասու Սրբազանին, այլ այնպէս մնասցես՝ բարի է. ապա թէ ոչ՝ ուր և կամիս կարեր. (կանգնիր), մեք զքեզ առաւակասցաս, ասբարառան Բօրչալուեցի Դաւիթդ ոչ գիտեմք, նոյնպէս և օրհնեալ բոլոր Լուսաւորչակրօն

*) Թերևս՝ «նոյնամոլոյ ինքնամարդկութենէդ»։
**) Յանկերէն ածականք պատուոյ Ց. Ֆ. Մ.

ազգն մեր ոչ ճանաչեն զքեզ առ ալս։

Ի գալստեան Արքեպիսկոպոսէ և Ծայրագոյն Նուիրակէ մեծի Պօլսոյ, գրեցի իմով ձեռամբ ԳԱԼՈՒՍՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ։

Ճամի Տեառն 1802. և ի Թուականիս մերում ՌՍՄԱ. և 30 սեպտեմբերի ի մայրաքաղաքն Ադրիանուպոլիս։

Միքայէլ Արք եպիսկոպոս, Գէորգ վարդապետ, և 8 քահանայք, փևկանցի մահտեսի Ստեփան Ամիրան, և այլ 52 անձինք տեղւոյս։

Գ. Ջ. *Թուղթ Դանիէլ կաթ. առ կայսրն Ռուսաց*

✠ Ալէքսանդր

Սիրանածին ինքնակալ օգուտու✠պաւղովիչ սուրբ կայսր երկնաւորին գԱթոռակալ ի երկրի ամենողորմ տէր մեր և խնամատար աշխարհի

Աղօթարար սուրբ թագաւորութեան ձերոյ և Ծխուսի Քրիստոսի ծառայ տէր Դանիէլ Չնորհիւ Տեառն և հաճութեամբ ձեր կաթողիկոս ամենայն հայոց և ընտրութեամբ սրբազան Սիւնհոդոսին և բոլոր ազգին մերոյ ծայրագոյն Պատրիարգ Ս րարատեան աթոռոյն սրբոյ Էջմիածնի։

Գնահատած երկրպագութեամբ ողջունեմ ողջունիւ Քրիստոսական և զՔրիստոսատիպ մարդասէր բարերարդ մեր, որ ոչ անտես արարեալ՝ զաղաղակ զրկելոյս խոնարհեցար ի ծայրագոյն բարձրութենէն հանգոյն նա խոստոպիդ. և տարածմամբ հզօր ձեռացդ վերածեր ի գթոյ տառապանաց զբս զմավիշտ սանանեալս ողջոյն ազգովին. այլ և ալտս ոչ բաւական՝ացեալ՝ այսակնեցեր զմեզ մեծաչաք բարձրահրամանն ղրամատիս. ամենատոդորմած սուրբ կայսերութեան գ. զոր երկրորդ յետ Աստուածեղէն վատանցն գրաւորութեան այսակ պարծանաց ընկալեալ ընդ այլ երկնաձիր պարգևացն ի ձեռն մերս պատկեր կ՝ղվանցդ առաջնորդ Սիրեմ արևի եպիսկոպոսիս. թագ կապեսցաք ոչ միայն ի գլուխս մեր, որ տրուալն իսկ եմք աշակերտելոց բանին ճշմարտութեան, այլ ի գլուխս աննալեալ ընդ ընդհանուր ազգի մերոյ. և մանաւանդ իսկ տաճարին Աստուծոյ սրբոյ Էջմիածնի առ որ ուրեմն լրութեամբ ևկեղեցուս Հայաստանեայց. զանդի բաղումս չնորհեցաւ մեզ ըստ առակի Աւետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի առաւելեալ սիրով զանպատում չնորհակալութիւնս առաքի աթոռոյ ողորմածեան ձերոյ տարածանեմք և զարիւտր ջերմեռանդական զաղօթս մեր Տեառն տամք. զի որ կացուց զմեծութիւն ձեր բազուր իրաւարար ի վերայ լերին սիօնի և պաշտպան օրինաց ըստ սաղմոսողին. նոյն բարձրացուսցէ զքեզ զան զամենայն թագաւորս երկրի. պահեսցէ զերազոր իշխանութեամբ հանդերձ կայսերուհի ամենարքեպաշտ թագազարդ զուգակցաւդ ամօք պարապգոյց. հաստատեսցէ յաւիտեանս յաւիտենից զզաւակ ձեր. և զաթոռ սուրբ թագաւորութեան ձերոյ որպէս զաւուրս երկնից. տացէ քեզ գհեթանոս ի ժառանգութիւն և իշխանութիւն քեզ ընդ ամենայն ծագս երկրի. որով և բարձր ևղիցի եղջիւր քրիստոնէութեան ի մէջ ամենայն ազգաց ամէն.

Այլ և հանդերձ այսու ամենայնիւ խընդիր է մեր աթոռոյ ողորմութեան ձերոյ. զի որպէս լարացեալ զաղքատս յերկրէ և բարձրացուցեալ զտառապեալս յաղբանց. թագազարդ փառաւորեցիք Աստուածազութ մեծ ողորմութեամբ ձեր, աղաչեմք զի և ողորմութիւն ձեր պսակեսջիք ազատելով զաթոռն Արարատոս յանօրէն բռնութենէ պարսից. և արժանացուոջիք զմեզ ժառանգել զմեզ զսեպհական աթոռն մեր. և եղիցի ձեզ այն արձան յաւիտենական. արժանի յաւերժական լիշատակութեան. և մեք բոլոր միաբանութեամբ և համօրէն ազգաս կացցուք և մատուցուք մշտապարտաւոր անկշռելի երախտեաց սուրբ կայսերութեանդ և աղօթարարք՝ վասն կենաց, և վասն ամենայնի տան քոմ

Ողջ լեր ով ամենաբարեպաշտ հզօր և բարձր օգուտուտ ուրբ թագաւոր. և ղորութեամբ ամենազօրին լիշեսցի անուն ձեր ընդ ամենայն ազգս ազգաց ի պարծանս ամենայն աղանց հաստատացելոց և ես առաւել յուսացելոյս յաթոռ ողորմածեան ձերոյ յետ Աստուածոյ։

Մշտապարտաւոր աղօ-

1802։ և ի հոկտեմբեր- Քարար յաղթօղ տէրու-

րի 21 լերեք վանս, որ ի Բաղրեաղդ գաւառի,

թեան ձեր Դանիէլ կաթողիկոս ամենայն հայոց և ծայրագոյն պատրիարգ սրբոյ Էջմիածնի

(Առ կայսրն գրէ Դանիէլ սրբազան չնորհակալութիւն լաղս ղրամատին և խնդիր վանս ի սուրբ աթոռն ջինքն հաստացանելոյ)։

ՂԼ. Առ կայսրն Ալրևին Թուղթ յաղագս վէքիլութեան Աղայ Մինասին

✠ Ալէքսանդր Պալովիչ

Աստուծով կարղեալ տիեզերահրաման աչխարհի ✠ արքայից արքայ աստուածապսակեալ ինքնակալ սուրբ կայսր.

Աստուածադութ Ցէր մեր և խնամակալ լետ աստուծոյ աղօթարար սուրբ թագաւորութեանդ և Յիսուսի քրիստոսի ծառայ (ըստ վերնոյն) ամենախոնարհ երկրպագութեամբ դողջոյն լիսուսաւանդ հանդերձ անկշռելի դերբաղանց չնորհակալութեամբ մատուցանելով առաջի բարձրադոյն աթոռոյ մեծ ողորմութեան ձերոյ, ձայնիւ դոհաբանական օրհնեմք դաստուած հղոր իչխան հայր հանդերձելոյ տչխարհին, և ջերմեռանդական աղօթիւք մաղթեմք ի նորին բարեգթութենէ, դի որ կացուցց դմեծութիւն ձեր փոխանակ իւր անպարտելի հղոր իչխան ալսմիկ աչխարհի, պահեսցէ դձեղ հանդերձ կայսրուհի Ամենաբարեպաչտ թագադարդ Ջուդակցաւդ և թագադարմ աստուածապարգև դաւակօքդ և ամենայն պալատականօքդ լարաձգութեամբ ամաց բազմաց, պսակ պարծանաց ամենայն աղանց հաւատացելոց, և ես առաւել անաչխել աղդիս հալոց և բազմավիչտ տառապակիր Արարատեան աթոռոյն մերոյ սրբոյ Էջմիածնի և քահանալակարգ ողորմելի միաբանութեանս նորին. Ամէն.

Արդ քանղի ճաչակ աստուածադութ ողորմութեան ձերոյ քաղցրացաւ ի կոկորդի մերում առաւել քան դխարխափ մեղու, լուսամբ միչտ զամենայն բարելաւութիւն աղդի և բարեկարդութիւն եկեղեցւոյ մեր նոյնպէս առատ ողորմութեան ձեր ստանալ դոր օրինակ և փորձեցաք.

Սև դի մերս պատկեր նկարեմ արք եպիսկոպոս Առաջնորդն ըդ ողորմութեամբ ձեր եղեալ մերազանց, պարտաւորի չքջազալիլ լամենայն վիճակս իւր, նմին իրի ի դիմաց մեր և ի դիմաց Արարատեան Աթոռոյն սրբոյ Էջմիածնի, և բոլոր աղդի Հայոց՝ երկրորդ լետ լիչեալ Առաջնորդին որպէս պատկեր մեր փոխանորդ և տեղակալ կարղեցաք ի ղրան սուրբ կայսերութեան ձերոյ՝ մտերիմ և ջերմեռանդ հպատակն մեծի տէրութեան ձերլիչխանս Հայոց Մինէ Լազրիչ Լազրեան. դի ի հանդիպելն հարկաւոր իրողութեանց ի կողմանէ Արարատեան Աթոռոյն կամ ի կողմանէ աղդին մերոյ, որովհետև է նա մչտապէս լաղը ընդ խնամովք ձերդ կայսերականի մեծութեան, նա լատնեսցէ առաջի բարձրադոյն Աթոռոյ Մեծ ողորմութեան ձեր։

Վասնորոյ ամենախոնարհ երկրպագութեամբ խնդրեմ, դքս·ղդր ակնարկութիւն ունել ի վերալ դորա, և ի վերալ Առաջնորդ եփրեմ արք եպիսկոպոս բազմաչխատ գաւակի սրբոյն Աթոռոյ Էջմիածնի և այն ամենայն անմիջապէս համարեցեալ լինի երկնաձիր աստուածալիչն ողորմութիւն ի վերալ նուաստ աղօթարարիս ձերոյ և ի վերալ ամենայն աղդի Հայոց. որով և մեք ողջոյն աղդովին կացցուք, մնասցուք մչտապարտաւոր աղօթարարք վասն կենաց և առողջութեան օծելոյդ աստուծոյ սուրբ թագաւորիդ մերում.

Ուղջ լեր թագաւոր օգոստէ սիրող բարեպաչտութեան լաղթող եղեալ հակառակամարտիցն ակնարկութեամբ թագաւորին երկնաւորի Քրիստոսի տեառն մերոյ, Ամէն։ Դարձեալ հոկտեմբերի 21, 1802։ Կնիքն ի ներքոյ եղաւ հանդերձ լաստուկ ձեռադրով Սրբազանին.

ՂԸ. Դանիէլ կաթ. առ Ա. Կուրակինն.

✠ Ամենողորմած ինքնակալ կայսերն մեծի.

Առ պարծառափայլ Քնիազ վից քանցելար Ալէքսանդր Բօրիսիչ Կուրակինն որ էր առաջի նորին կայսերական մեծութեան առաւել ջատագով և լաստուկ պաչտպան և նպաստ եփրեմ հալր սուրբին և ղործառնու-

թեանց նորին յաղագս Արրաղան տեառն մերում.

Ձշմարտասէր և արդարակորով պալծառափայլ քնիաղ Ալէքսանդր Բօրիսիչ Կուրակին

մեծերախոտ բարերարիդ մերոյ և պատուական հաւատարմի ✠

Աղօթարար ձեր և Քրիստոսի ծառայ (ըստ առաջնոցն). անպատում չնորհակալութեամբ ղողջոյն լինուսանդ և օրհնութիւն աստուածային մատուցանեմ ի տէր խնդալ. որում և յայտ առնեմք, զի այն ինչ բայեալ առաջի բարձրագոյն աթոռոյ ողորմութեան աստուածագութ ամէնողորմած ինքնակալ կայսերն մեծի ընդվէրս մեր և համօրէն ազգի և եկեղեցւոյ մերում, ըստ եղջերուաց վափագանաց կարօտեալք քաղցր ակնարկութեան նորին մեծութեան աստուածագութ մարդասիրութեամբ. ահա առաւել քան զոր խնդրէաքն՝ ստացաք կարևոր խոցուածոցն մերոց գեղ առողջարար չնորհ ողորմութեան օծելոյն աստուծոյ բարձրահրամանի զրամագն ամէնողորմած ինքնակալ կայսերն մեծի հանդերձ գերագոյն պարգևօքն 30, զազ ոսկեթել դիպակաւ և 50, զազ բուղումէնգիւ զոյս իւրև զձիր երկնալինն, ընդ չնորհալիր ցանկալի գրոյ բարերար պալծառափայլութեան ձերոյ ընկալեալ ձեռամբ պատուարժան եղբօր մերոյ կողմանցդ մնքազանց առաջնորդ Եփրեմ արհի եպիսկոպոսի, լի եմք ամենայն միխթարութեամբք առաւելեալ եւք ուրախութեամբ լսմենայն նեղութիւնս մեր ողջոյն ազգովին, զի բազում եղեն պարծանք մեր վասն ձեր։

Այլ միշնորդ երանելի ալսմիկ գերագոյն չնորհացս ով այլոք, եթէ ոչ զաստուածասէր պալծառափայլ բարերարդ մեր ճանաչեմք, որ ի վառս Աստուծոյ և ամենասուրբ անուան նորին վառեալ ի սէր ճշմարտութեան՝ կարեկից և ցաւակից մեզ եղէք և մարդասիրեալ աստուածասիրաբար՝ զվէրս խոցուածոց սուրբ հաւատոյ և աւանդութեան երանելի հայրապետացն մերոց, յայտնեցիք նորոգ սուրբ սամաթացի Քրիստոսատիպ ամէնողորմած ինքնակալ կայսերն մեծի։

Վասնորոյ՝ ուրնմն անպատում չնորհակալութեամբ ըստ երգոցն երգոյն մատուցանեմք զպոհաբանութիւնս. բարձրացի թագաւոր մեր իշտեմարանս և ի գահոյս իւր, և ծնրադրական երկրպագութեամբ ղկերմեռանդական աղօթս ի բարձունս առ տէր վերսինկելով, զաստուածահալոյ մարգարէինն կարդամք զբան՝ լուր մեղ տէր Աստուած մեր և կեցո լարաձգութեամբ բազում ամաց զամենաերախոտ թագաւորն մեր, որպէս արծուոյ նորոգելով յա ուրց յաւուրս զփափագելի կենդանութիւն նորին բարձրութեան Ալէքսանդր Պաւլովիչ ✠

Այլ և հանդերձ այնու ամենայնիւ նոյնպէս անկշռելի չնորհակալութեամբ զգերազանց գոհաբանութիւնս ձեզ մատուցանեմք, և միաբանական ձայնիւ զաղերս մաղթանաց առաջի տեառն տարածանելով, հայցեմք զի որպէս չնորհ բարերարիդ մերում առատացաւ ի վերայ մեր, նոյնպէս առատացուսցէ և ինքնաչնորհ զչնորհ աստուածութեան իւրոյ ի վերայ ձեր և բարեպաշտուհի կենակցի ձերոյ և ազնուարիւն որդւոց և դստերաց ձերոց և ամենայն ազգայնոց և ընտանեաց։ և զորօրինակ քաղցրութիւն և մարդասիրութիւն ձեր մեծացաւ ի վերայ մեր, որով և ձեռնտու եղէք վերականգնել զմեզ ի գլորմանէ անտի մերոյ, նոյն օրինակ մեծ արասրեալ տէր զքաղցրութիւն և զմարդասիրութիւն իւր ի վերայ ձեր օրհնեսցէ զկեանս ձեր և ձերայնոցն ամենեցուն հաւատացէ ձեզ զվարձս արդարոյ և մարգարէի ըստ վարդապետութեան սուրբ աւետարանին, և առաւելապէս քաղցրացուցեալ ի վերայ ձեր զաչս օծելոյն իւրոյ ✠ պահեսցէ պալծառափայլ ողորմած բարերարդ մեր բարձր պատուով և չքով։

Բայց քանզի միշնորդութեամբ ձերինդ պալծառափայլութեան արդարև, ողորմութիւն ✠ պատեաց աստուածազարդ զվէրս մեր և Քրիստոսական սուրբ օրինաց մերոց, յաղագս որոյ խնդրեմք զի վերստին միշնորդութեամբ ձեր նոյն ողորմութիւն ածցէ զմեզ և՝ ի պանդոկ Արարատեան աթոռոյն սրբոյ Էջմիածնի աղաւեղով գնա յանդորն բնութենէ պարսից բարբարոսաց, և հանդերձ լրութենէ՝ եկեղեցւոյս Հայաստանեայց՝ եմք և եղիցուք մշտապարտաւոր՝ վասն երկարութեան անգին կենաց ✠ և ձերդ պալծառափայլութեան։

Ողջ՝ լեր վառապսրճ իշխանութեամբ և ակնարկութիւն մեծահրամանի իշխանի կիսա-

գնդին աչխարհի, քաղցր լիցի ի վերայ ձեր միշտ. ամէն».
1802. հոկտեմբերի

Ղթ. Վասն սաստկլոյ զԳրիգոր վարդապետն

Ողորմած տէր իմ ղրաֆ Վիքտոր Պաւլովիչ

Իւրն կայսերական մեծութիւն՝ անքաւականութեամբ այսինքն գժրանօք վերահասու եղեալ խառնակիչ քսութեանց, ղորս աստ դտանեցեալ հայոց արք եպիսկոպոսն կամ արքիմանդրիտն Գրիգոր համարձակի և յանդգնի սերմանել ի մէջ ժողովրդոց՝ վասն ամենապատուելի Դանիէլ պատրիարգին նոյնոյ ազգի. որ՝խրոյ կ. մեծութեան ղրամատուս և նորին մեծութեան Օսմանցւոց սուլթանին պէրաթիս հաստատեալ է նոյնոյ աստիճանի արժանաւորութեան. իբր թէ տակաւին նոյն պատրիարգն չէ ճանաչեցեալ ի նոյնում աստիճանի։ Վասնորոյ ամենաբարձրաբար հաճեցաւ տալ նմա ղրայ՝ որ այսուհետև մի յանդգնեցի ղայպլիսի անպատիւ ձայնս բանսարկութեան սերմանելոյ, որ մխիթարի վերաբերի ի բեկումն և ի վրդովումն խաղաղութեան, որ ի մէջ տեղոյս հպատակեցեալ հայոց։ Եւ հաստատ բարբառով յայտնել նմա, որ եթէ չդադարիցի ընդդէմ նոյնոյ պատրիարգին ներհակ գատողութիւն առնելոյ՝ յայնժամ չակնարկելով աստիճանի իւրում՝ վարելոց է ընդ նմա համայն խստութեամբ օրինաց։ Եւ վասն այսմ իրի պարտաւորել զնա ձեռագրով՝ զի մի կարողանայցէ զանգիտութիւն ինչ պատճառել։ Եւ ըստ այսմ եղանակի յանձնել նմա, զգացուցանել և այլ ընկերաց իւրոց չառնել զայն՝ որ նմա ինքեան ի նորին կայսերական մեծութեան բարեհաճութենէ իսկապէս արղելեցեալ, զոր ի նորին ամենողորմած կայսերական հրամանէ մեծութեան ծանուցանելով յաղագս յայտնելոյ վերոյիշեալ Գրիգոր արքեպիսկոպոսին կամ արքիմանգրիտին. ունիմ պատիւս ձերոյ պայծառափայլութեան յատուկ խոնարհութեամբ մնալ

Ողորմած տէր իմ ձերոյ պայծառափայլութեան ամենախոնարհ ծառայ

21. հոկտեմ. 1802.

ԴՐԱՖ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎՕՐՕՆՑՈՎ

Ճ. Վասն սաստկլոյ Հաշտարհանու դէօմրիւլճի Սիմեոն Սէրկէիչին

Ողորմած Տէր իմ Ղրաֆ Նիկոլա Պետրովիչ

Իւրն կ. մեծութիւն անքաւականութեամբ. այսինքն գժրանօք տեղեկացեալ վասն Աստրախանայ զամօժնալի այսինքն մաքսի տիւէքտոր Իվանօվին որ դրութեամբք իւրով համարձակի թելադրել Դաւթալ արք եպիսկոպոսին հայոց, անիրաւաբար ընկալնողին զաստիճանն պատրիարգտական, ոչ ի քաց թողուլ ղյանիչտակեալն յաթոռ, որ և տարաձելով զվստահութիւն իւր մինչև ցայն վայր, որ յանդգնի հաւաստել նմա, միջնորդութեամբ իւրով հնարիլ աստ դհաստատութիւն նորին յունմ աստիճանի։ Այր սակս Ամենողորմածաքար հաճեցաւ հրամայել, խստապէս գրել նմա, լիչեալ Տիրէքտօրին, որ այսուհետև մի համարձակեսցի ոչ ինչ յուսադրութիւն տալոյ վասն այնու Պատրիարգութեան, նոյնոյ վերոյգրեցեալ արք եպիսկոպոսին. և սահմանափակելով զինքն իւրեան հաւատացեալ զամօժնալի պարտաւորութեամբ, ամենևին չըխառնակիցի ի դործս ինքեան ոչ պատկանելացս. որովք միայն կարէ վերածել ի վերայ իւր դուդիդ սյտմտութիւն նորին կայսերական մեծութեան, և կատարելապէս ձնասիլ ի պաշտօնի իւրում։

Եւ՝ զի նաև վերադիցէ նա ինքն Իվանովին՝ և այլ ընկերաց իւրոց. երբէք չառնել զայն. որ սովաւ իւրոյ ինքեան խստապէս արդելեցեալ է. զոր ի նորին Ամենաբարձր կ. մեծութեան հրամանն է ծանուցանելով ձերոյ Պայծառափայլութեան յաղագս յայտնելոյ լիչեալ տիրէքտօրին. որ ենթ ձերոյ իշխանութեամբ։

Եւ յատուկ խոնարհութեամբ ունիմ պատիւս մնալ ողորմած Տէր իմ ձերոյ Պայծառափայլութեան ամենախոնարհ ծառայ

21. հոկտ. 1802
ի Ս. Պ. Խուրդ.

ԴՐԱՖ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎՕՐՕՆՑՈՎ,

ՃԸ. *Առ Երևանու Մանվէտ խանն և առ Նախիջևանու Քէչալալէ խանն մի Լևոյն օրինակաւ Երկու զիր զրկեալ իսուսերէնէ ի պարսից լզուս, և անտի ի հայս խարգմանեալ.*

Բարձրադահ և մեծալարդ և այն և այլն Ձերոյ բարձրաղահութեան իրրև Արփի երեւելի և յայտ է որ վաղումի կանոնիւք, և կարդաղբութեամբ, և համալաջ։րդ ձևակերտեալ հնագոյն ծիսիւ. խմբից կրօնաւորայն հայոցն և համահաճութեան բոլոր ժողովրդականաց նոյնոյ լ՝չեալ աղդին ղԱմենադիտունն ի Քիստեան գիտնականաց, այսինքն հոդևորականաց, և զպարծանքն լԱռաքինեացն Քրիստոսականաց, դԴանիէլ Հայրապետն ի Հայրապետութիւն ընտրեալ, և ըստ ծանարտակաց այսինքն Արդ ու ժահղերից և խնդրանաց ամենից հոդեորականաց և ընդհանուր աղդին հայոյ։

Ամենողորմածարար և ամենամեծ կայսրն ստուերն Աստուծոյ իմոյ և դերամբարձ թադաւորն և սուլթանն Րումի այսինքն Թուրքաց իւրաքանչիւր ամենամեծ թադաւոր համայն դիմութեամբ փառաց իւրեանց դանկանելի չնորհիւ երկոքումբք գերամբարձ հրովարտակօք դրկեցուցեալ Դանիէլ հայրապետն ի Ջուխտր Էսատին Էրևանայ տեղոջ իշխանութեամբ ձերոյ բարձր գահութեան լիւչ Քիլիսայի այսինքն Էջմիածնայ, հայրապետ կարդեալ հաստատեցին։ Եւ մաքրահոդի հայրապետն մեծալարդոյ գօրութեամբ բանից արքունական հրովարտակաց ի ծալր սահմանի տէրութեան օսմանցւոց. լիւչ Քիլիսայն. Բադրեանայ ի ժամանիլն այդելեալ և դկայ առեալ նդե փափագանօք պաչտամանց պայծառավալ անդոյն լիւչ Քիլիսային Ջուխտր Էսատին Էրևանայ այսինքն Էջմիածնայ դի ընտիրն ի կրօնաւորաց փառաւիդճ Դաւիթ վարդապետն օդնականութեամբ և ձեռնտուութեամբ ոմանց իշխանացն Աարպատականի, դասուիճանն կաթուղիկոսութեան այսինքն հայրապետութեան աղդին հայոց անխրատաբար լ՝սիչտակել և մինչև յայսօր դարժանին հայրապետական գործակալով դԴանիէլ հայրապետն ոչ կողու որ մտեալ Էջմիածին ըստ անուանակոչութեան և ըստ աստիճանին ո. րով հռչակեցեալն է ի նոյն պարապեցի։

Ի սոյն միջոցի ամենամեծ կ. իմ Ամենամաքուր Պատգամաւ իւրով հրամայեաց ինձ բարեկամի և սիրոյ գործակցի ձերոյ զորավորութեան վերոյ լիչելոց գերութեամբ ներկայացուցանել ձերոյ բարձր գահութեան բարեկամութիւն իմ ես վասն բարձրագոյն հրամանի սոյն սիրոյ նամակ գրեալ առաքեցի։

Քայտ լիցի որ ամենամեծ կայսրն ընդհանուր ռուսաց նմանապէս մեծագահ թագաւորն օսմանցւոց մերձակայ դրացիք գոլով ձերոյ բարձր գահութեան հաւատի են մտերմութեան ձերոյ որ ի ժամանել սոյն զեկուցման բոլոր որպիսութեանց վերոգրեցելոց ըստ զօրութեան և բացայայտութեամբ գերամբարձ հրովարտակացն Արքունականաց բարձր գահութիւն ձեր, զանտեղի վէճն ընտրելն ի կրօնաւորաց Դաւթայ վարդապետի ըստ բանից հրովարտակացն խարանեալ լռեցուցանես և զկողմնապահան և զաղերսարկուն նորին ի դրանէ ձերմէ սաստեալ մերժես և գպախարց բարենկատ խոկման ձերոյ ի նուաճումն Դաւթայ և կողմնակալաց նորին դէպ առ կողմն գերագունին միաղաւանից և Ամենապատուականն ի կրօնաւորաց Դանիէլ Հայրապետի գարձուցանելով Նորին մեծութեան օգնութիւն և ձեռնկալութիւն արարեալ ի դկայ առեալ տեղոյն կատարեալ պատուով և թարց իմիք բանի ծալրագոյն լարգանօք էջմիածին մուծեալ ի հայրապետական Աթոռոջ իւրում. բազմեցուցմամբ զգործառութիւն փակելոյ և բանալոյ բոլոր ազգին Հայոց որպէս որ նախնի հայրապետաց լեալ է նմա լատկացուցանէք և ըստ պատկանելոյ համբաւոյ ձերոյ լամենայնի իրի և լամենայնի դիպուածոյ նորին հոգածու և խնամատար եղեալ զնըչան հովանաւորութեանն և զջան պահպանութեան ձերոյ և զամենայն հարկաւոր հետեողութիւնն ձեր ի նմանէ ոչ խնայելոց էք։

Ոչր վասն և հաւատի լիջիք որ փոխարէն սոյն բարեհաճութեան և բարերնթաց գեղեցիկ հոգածութեան ձերոյ անչափ չնորհիւ ամենաժեծ կ. և անհուն ողորմութեամբ մեծի Սուլթանին թուրքաց պարծիկեալ լինիք. իսկ եթէ ի սոյն իր լամառումն եղեալ ընդդէմ հրամանի գերամբարձ հրովարտակաց ընթացցէ թարց կարծեաց և առանց երկբայութեան երկոքին մեծագոյն Տէրութիւնք

դրացիք ձեր աճապին և վիրաւորին ի ձերոյ բարձրագահութենէն։

Բաց ի սմանէ յայսմիկ միջոցի Ամենամեծ Կ. իմ գերամաքուր պատգամաւ իւրով հաստատապէս հրամայեաց ինձ զեկուցանել ձեզ որ նոյնով հայրապետութեան յաւիտեանական ընտրոյն ի կրանաւորաց Դաւթայ վարդապետի խրատեալ իք որ յանիրաւ դաւոյ իւրմէ լեառս չոքիցի և զգործն հայրապետութեան յօժարութեամբ և հաճութեամբ իւրով Դանիէլ հայրապետին (որ արժանի է նոյնով պայծառ. աստիճանի) և ըստ զօրութեան բարձրագոյն հրովարտակաց կացուցեալ և հաստատեցեալ է եթէ լեառս զարձուսցէ արքունի անրաւ չնորհաց ընդունակ լինիլ լուսասցի։

Որ և վասն հաստատութեան իւրոյ տոյնոյ սրբացեալ բարձր հրամանի ի կողմանէ նորին մեծութեան առ ընթեր իւրոյ բարձրութեան Դանիէլ հայրապետի ես ղեկուցաւ որ ողորմութեամբ Աստուծոյ զկնի ժամանելոյ և բազմելոյ իւրոյ ի հայտակեալ տեղին զպատուելին ի վարդապետաց Դաւիթն համանման միւս հոգևորական եղբարց ընդ հովանեաւ չնորհաց իւրոց ընկալեալ ընթ սաւերի պաշտպանութեան և յարգանաց իւրոց ընդունեսցէ և ի մէջ ընկերակցաց տուեալ և ըստ արժանւոյն աստիճանի բարձրագլուխ արասցէ։

Եւ ըստ ամենայն վասն մեծագոյն հրամանի տոյնպիսի զեկուցմունք հարկ եղեւ տոյն նամակ սիրոյ գրեցեալ բացայայտեցաւ, մեամ միշտ բարեհաճ բարեացակամութեամբ պատրաստի ամենայն հարկաւոր խնդրանաց ձերոց բարձր գահութեան կատարող Սևասորք և բարի յաջողութիւն ձեր եղիցի ըստ ըղձի ձերում։

Բարձրագահ աղատ լԱթոռ բազմող և յատուկ խոնհրդական ծածկեալ խորհրդոց յատկացելոց իւրոց Ամենամեծ և վերամբարձ ողորմութեան և Արքունի չնորհաց. Առաջին նախարար նախարարաց լսելնատարած Տէրութեան և գլխաւոր դատաւոր յատուկ դատարանաց և ազատական ընտանի պայծառափայլ սեռակաց իւրոյ ստուերի Աստուծոյ թագաւորին խնամակալին արարածոց և կլոզ զանազան մանեկաց ալինքն սրբոյն Անդրէի առաքելոյն և սրբոյն Ալեքսանդր Նէվոկիի, և քնեազ Վլագիմէրի սրբացելոյ ի նախկին աստիճանի և որբուհոյն Աննայի առաջներդի կարգի և մեծ . . . . . ընդհանուր Տէրութեան ոուսաց։

Դ. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎՈՐՕՆՑՈՎ

Դրեցաւ ի Դահալանիստն Ս. Պետերբուրգ ի 21 հոկտեմբերի որ համապատասխան է ամսոյն բէճէպի։

1802։

Ի սոյն օրինակ և յատկապէս բարեհաճութեամբ առ Էլլրալէ խանն գրեցեալ է վասն ոչ ձանձրացուցանելոյ ղընթերցողն ոչ գրեցի։ Բայց խնդրեմ ուշիմ մտօք վերծանուլ զամենայն բարձրագոյն հրամանաց Ամենողորմ և ղՅաղագողութիւն ճշմարտութեան թէ դիւրդ ըստ ամենայնի վերահաստ է եղեալ թէ իրաւամբ և արդարութեամբ հայրապետութիւն սրբազանին Դանիէլի է և Դաւիթն վատաեղծ անիրաւ լսփչտակօգ է և ոչ է արժանի նոյնով սրբացեալ աստիճան։

ՃԹ. Ի ՂՐԱՔ ՀՕՐՈՆՑՈՎՀ ԱՌ ՔՆԻԱՉ ՑԻՑԻԱՆՈՎՆ։

Նոյեմբերի 11 համահետեալ ընդ ալամ փոկեթի իմով փեչատաւ ինքեալ ի դիպակ ծրարի ըստ աղիական սովորութեան գրեանքն հանդերձ Տաճկերէն թարգմանութեամբքն գրեցեալն ի բարեհաճութենէ Ամենամեծ թագաւորն և կայսերն առ խանն Երևանու և Նախիջևանու յաղագս հայոց պատրիարգին Դանիէլի։

Ուստի սակս ծանուցելոյն զոյն լուր մատուցի ընդ ալս կօպիւլան որ և խոնարհաբար խնդրեմ ի ձերդ պայծառափայլութեան ի դիմաց ձերոց հրամայել, յուսալի հնարիւք հաստուցանել և ծանուցանել ինձ սակս հաստուցմանն այնց և գործածել ձեր հետևողութիւնս։

Վասնզի լիշեալ պատրիարգն համաձայն նորին կայսերականի մեծութեան մեր Ամենողորմ թագաւորին և նորին Մեծութեան Սուլթանին Թուրքաց բարեհաճութեամբ պարտէ մտանել լեջմիածին առ ի լընկալնուլ վերակաւոր կառավարութիւնս Աստիճանի իւրոյ։

Նաև յամենայն դիպուածոց հաստատեալ է ի ձեզ նոյն մեծագոյն հրամանն որպէս և

դրեցեալ է նախորդին ձերով դրութեամբ հալել առ այն լաղագս արձակ ի Ռուսաստան թողլոյն ի նոյն հայոց դատաւորութեան հոգևորականաց անձանց. ով ոք ի նոյն պատրիարգէն ունիցի գիր, և սակս թողլոյն այնպիսեաց որք չունիցին ի նմանէ դնոյն.

26 հոկտեմ. 1802 Ես աւուկ խոնարհութեամբ ուղիղ պայծառափայլութեան քնէաղ լութեան խոնարհ ծառայ Յիսիանովին

ՂՐԱՖ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՎՕՐՕՆՑՈՎ

ՃԳ. *Թուղթ Դանիէլ կաթողիկոսի առ կայսր Ալէքսանդր Պաւլովիչ*

Աղէքսանդր Պաւլովիչ պարծանք սուրբ իսաչին Քրիստոսի խաչապակ ինքնակալ, սիրով բարեպաշտութեամբ Օգոստոս սուրբ կայսր

Քրիստոսաստիպ բարերար մեր և ապաւէն խաղաղութեան եկեղեցւոյ՝ աղօթարար ցանկալի կենացդ և

Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Դանիէլ չնորհիւ տեառն և հաճութեամբ ձեր կաթուղիկոս ամենայն հայոց. նաև ընտրութեամբ սրբազան սիւնհոդոսին և բոլոր ազգին մերոյ՝ ծալրագոյն պատրիարգ Արարատեան աթոռոյն սուրբ Էջմիածնի.

Իմանալոյն զօրութեամբ ներկայացեալ առաջի բարձրագոյն աթոռոյ ամենաողորմ սուրբ թագաւորութեան ձերոյ, խոնարհ երկրպագութեամբ զհոգևորական օրհնութիւնն հանդերձ քրիստոսական ողջունիւ ձեզ մատուցանեմք.

Եւ ըստ որում գտաք զչնորհս առաջի աստուածագութ մարդասիրութեան խնամակալիդ քրիստոսական սուրբ եկեղեցւոյ՝ համարձակեալ նովաւ լայտ առնեմք մեծութեան բարեպաշտ ինքնակալիդ, զի յանուն Արարատեան աթոռոյն սրբոյ Էջմիածնի և տեղւոյդ հայոց ժողովրդեան բարեզարդութեան աղագաւ՝ ի հնոյիկս եղեալ հակազունք զքաղաքս արդիւնս էին մատուցեալ ի ձեռս Յովսէփ պատրիարգին.

Եւ մինչ նա՝ եկեալ ի Թիֆլիզ հիւանդացաւ անդ, ըստ կանոնի Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ կտակեալ էր խոստովանահօր իւրոյ՝ զամենայն զքաւինս իւր առանց քանալոյ, տանել ի սուրբ աթոռն և հաստատեալ ամբողջապէս ի ձեռս օրինաւոր պատրիարգին՝ զի նա տնօրինեսցէ զարժանաւորն. այլ և զհաշիւն բոլոր կտիցն իւրոց պահանջել տոմարոյին ի սպասաւորէն իւրմէ, Գրիգոր Արքիմանդրիտէն.

Այլ քանզի Գրիգոր Արքիմանդրիտն ներհակ կտակին վարդապետին իւրոյ չկամեալ լսիչտակել զայն մեծ բազմութիւն կալից, ամենախարդախութեամբն իւրով, խանդրեաց զամենայն բարեկարգութիւն ազգի և եկեղեցւոյն մերոյ, վեր ի վայր տապալեաց զաթոռն Արարատոյ՝ եղծեաց և ապականեաց զօրէնս Աստուածային և զկանոնս հարց սրբոց և պարսկական բռնի իշխանութեամբ ինքնագլուխ միակ աթեղայ ընդհանուր ազգի մերոյ՝ կացուցանել իւր կաթուղիկոս, զոր ինքն կամեցաւ. և այնպէս երախտապարտ արարեալ զկացուցեալն և ի վերայ այլոցն ես նովաւ բռնացեալ, կորզեաց ինքն զայն ամենայն արդիւնս ժողովրդեան հայոց.

Իսկ զի վճռագոյն իմաստութեամբ ձեր արդարացուցիք զդատաստան դրկելոցս զերազանցելով քան զՍողոմոնին և բարեհաճութեամբ ձեր յանձնեցաք մեզ պատրիարգութիւն Արարատեան աթոռոյն ընդհանուր հայոց.

Ահաւասիկ և մեք զկտակագիրն ծովսէփայ վկայեալ կնքով և ձեռագրով խոստովանահօրն նորին մատուցեալ առաջի ամենատեղեաց սուրբ թագաւորութեան ձերոյ՝ իբրև խոնարհաբար, զի ողորմութիւն առնելով ազգի և աթոռոյ մերում՝ հրամայեսցէ մեզ մերս պատկեր կողմանցդ մերազանց առաջնորդ եփրեմ Արհիեպիսկոպոսին՝ և նորին երկրորդ յաջորդի մերում Մինէ Լազրիչ Լազրեան հայոց իշխանին՝ զի պահանջեսցեն ի Գրիգոր Արքիմանդրիտէն զհաշիւ կալից վարդապետին իւրոյ. ըստ կտակագրի նորին, և զմնան սրբոյ աթոռոյն՝ առ աթոռն հաստատեսցեն, իսկ զմնան տեղւոյդ ժողովրդեան կալցեն առ ինքեանս ի գործ արկանել արժանապէս՝ վասն բարեզարդութեան ազգին՝ ըստ որում և մեք յանձնեցաք նոցա լսակա-

պէս և զայս հաչուառութեան գործ։

Ողջ լեր ով աստուածարեալ մեծահրաման սուրբ Թագաւոր, և մեք միշտ ունելով անմոռաց ղիչատակ ամենառատ չնորհաց և գերազանց բարերարութեան ձերոյ՝ կացցուք և մնասցուք ողջոյն աղդովին աղօթարար վասն անդին կենացդ և ամենայն տան քումն։

1802. հոկտեմբերի 29. ի Սչտապատրաստ
Ներք վանս, որ ի Բագ- աղօթարար ձեր
րևանդ գաւառի։ Դանիէլ կաթուղիկոս հայոց։

ՃԻ. Թուղթ Դանիէլ կաթ. առ գրաֆ Ալէքսանդր վօրոնցով

✠ Նորին կայսերական Մեծութեանն Պալծառափայլ գրաֆ և բարձր խորհրդական ✠ Աղէքսանդր Ռոմանիչ. (Վ.օրոնցով).

Ողորմած բարեկամի մերոյ

Աղօթարար ձեր և Ցիսուսի Քրիստոսի ծառայ տէր Դանիէլ չնորհիւ տեառն և հաճութեամբ ✠ կաթուղիկոս, ամենայն հայոց, նաև ընտրութեամբ Սրբազան Սիւնհոդոսին, և բոլոր աղդի մերոյ ծայրագոյն պատրիարգ Արարատեան Աթոռոյն սրբոյ Էջմիածնի.

Ջերմեռանդ սիրով գողջոյն լիսուսանդ և օրհնութիւն աստուածային մատուցանեմք բաղում յարդութեամբ.

Ու լայտ առնեմք որ թէպէտ ղդալապէս չունիմք ղծանօթութիւն առ պալծառափայլութիւն ձեր. բայց ղիչատակ հոգեկոյս հօր եղբօր ձերոյ պալծառափայլ գրաֆ Միխայէլ Լառիօնովիչ Վօռօնցովի բաղմից ընթերցեալ ի գիրս լիշատակաց Պատրիարգական Աթոռոյն որ ի Արարատ, դիտեմք զբարերարութիւն նորա առ լիշեալ աթոռն մեր, և առ համօրէն աղգս հայոց ի ժամանակս յաւիտենական վառացն արժանի կայսերն երրորդ Պետրոսի և այնու բարեղիչատակութեամբ գեռահղչակեալ բարեղիչատակ նախնեացն ձերոց ճանաչեմք զպալծառափայլութիւն ձեր բարերար մեր և աղդի և աթոռոյ մերում. Ուստի և այժմ մինչ գրութեամբ առաջնորդի կողմանցդ հայկազանց մերս պատկեր Սիրեմ. բարձրապատիւ արք եպիսկոպոսի լուաք զբարձրանալն ձեր յաստիճան բարձր խորհրդականութեան չնորհիւ և ողորմութեամբ Ամենառողորմած ✠ արդարև այնու չարութեան համբաւով պարարեցան ոսկերք մեր. ըստ իմաստնոյն բանի և լցեալ անպատում ուրախութեամբ ցնծամք ի հոգի և ի մարմին բոլոր միաբանութեամբ և առհասարակ ազգաւ մերով. զի մեծաքար տէր ղողորմութիւն իւր ի վերայ մեր մեծացուցանելով զսիրելին մեզ պատիւ և իշխանական աստիճան պալծառափայլ ողորմած նախնի բարերարիդ մերոյ։

Վասն որոյ ուրեմն ըղձութեամբ սրտի իմանալի ինն եղանակաւ ղօրութեամբ հոգւոյ որպէս ներկայացեալ լանգիման ձերդ պալծառափայլութեան ներդործութեամբ բանիս գրաւորական մատուցանեմք գ(երմեռանղական չնորհաւորութիւնս մեծաւ ուրախութեամբ և հանդերձ աղօթիւք հալցեմք ամենակալէն Աստուծոյ զի ենթ ամենաքաղցր ակնարկութեանն ✠ ի բաղում ամս տացէ ձեզ վայելել զայդ աստիճան բարեբաղդութեամբ և երջանկութեամբ և հանդերձ բարեպաշտուհի տատուեալ ղուգակցա ղ. ե սիրանունդ Աստուածապարգև ժառանգօդղ պահեսցէ ընդ հովանեաւ հղօր թևոց իւրոց բոլորեալ բարերաստութեամբ և անսասան հոգւով և մարմնով ամէն.

Արդ համարիմք թէ ի վաղուց իսկ լայտնի եղեալ իցէ ձերդ պալծառափայլութեան. բայց որովհետև ունիմք չնորհս առաջի նախնի բարերարացդ մերոց լիշեցուցանեմք վերստին որ երկիցս և երիցս ընտրութեամբ բոլոր եկեղեցականաց և ընդհանուր աղդի մերոյ, կոչեցաք ի պատրիարգութիւն Արարատեան աթոռոյն՝ և ղրկեցին ղմեզ նախ ծովսէփ հանգուցեալ պատրիարգն ի ձեռն այլոց, և լետոյ նորին աչակերտ Գրիգոր արքեպիսկոպոսդրիթ, որ ի վախճանել վարդապետին իւրոյ ասացեալ պատրիարքին ի Թիֆլիզ քաղաքի եղծանելով զկտակ հանգուցելոյն լափշտակեաց ղմեծագոլմաք կաշառաց պարսկական բռնի իշխանութեամբ միակ աբեղայ ինքնագլուխ ետ կացուցանել զնա կաթողիկոս ընդհանուր աղդի մերոյ, և այնպէս վեր ի վայր տապալնալ զաղգս և զեկեղեցիս մեր և առաւելապէս իսկ զԲրիսաոսահիմն սուրբ աթոռն Արարատու։

Իսկ զի Ամենողորմած սուրբ կալցի, ո-

րոյ տէր Աստուած լաւելցէ զաւուրս լաւուրս փափաքելի կենաց նորին, բարեհաճելով ի կամս ազգին արդարացոյց ղղատաստան զըր կելոյս առաւել քան զՍոզոմոնին, չնորհակալ եմք զմեծ ողորմութենէդ նորին որով ահաւասիկ երկիցս ընկալաք զհրովարտակ ի տէրութենէդ Հաղարացւոց, և ի տեղի ուր մկրտեաց սուրբ Լուսաւորիչն մեր զՏրդատ արքայ հայոց հանգերձ ամենայն պալատանօքն և չորս հարիւր բիւր բազմութեամբն և կառոյց ղայս վանք հրաշալիս Ընկալաք զօծումն հաճութեամբ բոլոր աղդի մերոյ։

Ալ որպէս արդարադատ ողորմած սուրբ կայոր հաւեցեալ անպարտ զրկումն իմ կալաւ ամենաղօր աչովն իւրով զտկար բազկացս և յարուցեալ ի գլորմանէ հաստատեաց վերստին լինել պատրիարգ հայոց, ինգրեմք ի ձեր պայծառ ալաչութենէդ զի վերանորոգելով զլիշատակ բարերարութեան երանելի նախնեացն ձերոց չնորհ ունիցիք որ ի ձեռն ձեր և կրկին ողորմութեամբ ✠ նաև սուրբ աթոռն Արարատու զտցէ զաղատութիւն և մեք ևս ժառանգեսցուք զանփհական տեղի մեր, որ ագարև եղիցի և ալն ձեզ արձան յաւիտենական լիշատակի և մեք ևս ամենայն ողորմելի միաբանութեամբ և տառապեալ աղգիս մերով կացցուք և մնասցուք մշտապարտաւոր և աղօթարար վասն անգին կենաց ✠ և վասն պայծառաւիալ ողորմած բարերարիդ մերում։

Ողջ լեր և ակնարկութիւն ✠ քաղցր լիցի ի վերայ ձեր ևս քան զևս աւէն.

ի լերեք վանք որ ի Բագրեանդ հոկտեմբեր ամսոյ 29 աւուր 1802

աղօթարար ձեր Դանիէլ կաթողիկոս հայոց.

ՃԵ. *Թուղթ Յովհաննէս արքեպիսկոպոսին Թիֆլիզոյ առ Ներսէս վարդ.*

* * * վեհ

Հոգւոյս հատոր և Աչացս լոյս Ներսէս վարդապետ քաջասիրտ եղբայր. զայսոսիկ յատկապէս գրեմ որ լաւագոյս հասու լիցիս իրակութենէդն քան զայս. յառաջ որ մինչ կապուտան եկն և գնաց առ Երևանու խանն և ծանուցց զհրաման նորին կայսերութենէն. և խանն զոր ինչ ասացեալ էր դաւելորդոն թողուք լետոյ ասացեալ էր թէ կայսերական հրամանն բեր տեսանեմ և կատարումն տամ նոյն կայսերական հրամանն չբեխտորի [25]) մօտն էր մարդ է դնացեալ որ բերէ լոյս Աստուած այս մօտակայ աւուրքս զալոց է նոյն հրամանն և առնելոց եմք ի լերեան միաժիտ լինելոք միայն թէ, սրբազան ՚՚՚ին սիրտ դիցես որ մի դուցէ թէ լքանիցի և դու որպէս յառաջին էիր նոյնպէս կացցես և մնասցես և Ովվլաթլու վայելի սիրտն ևս չահեցես. ուր մնաց մեր օրհնեալ իշխանաց քաջասրտութիւնն ահա մեք սրբազանի գրած թուղթըն առաքեցաք կայսերական գուռն աստուծով լաւ ջուղայ կուղայ նորին անդրադարձն. սրբազն վերն իւր հոգան թողեալ զմեր հոգսն քաշէ մեք առանց իւրն ոչ եմք և ոչ է պիտոյ մեզ կեանք. ահա գրեմ նոյն տղայովքս վերստին մեզ դրեսջիք զանցան տեղւոյդ և պօլսոյն թէ՝ զպատրիարգն Գրիգոր ուր են աքսորեալ և կամ ով է ի տեգի նորին և ի պօլսոյ ի հարկէ նոր լուր լսած կու լինիք մինչև ցարդ զոր ինչ լուիցէք վուրթով մեզ ծանուցջիք. զի դիտացուք և նորա կիօրէ հոգս արացուք. այժմ տեղւոյս մնծամնծացն ինչ ոչ յայտնեցի զերէ անօգուտ էր միսն մալևոր Կարապետին և պօլկովնիկին յայտնեցի և զթուղթն սրբազան վերինն առեալ առաքեցին ի դուռն կայսեր աստուծով չոտ ջուղայ կուղայ 40 օրումն կամ 50 օրումն. Միլքոնին բերանով ասացի որ պատմէ ձեզ թէպէտ այն սրբազանի թղթումն ևս գրեցաք թէ կարելի լինի, և բանն խիստ լինի գալն վուրթով արագջիք. իսկ եթէ բանն թուլ լինի գրեալ ծանուցջիք մեզ. զի դիտացեալ ալլ կերպ գրեսցուք. զայսոսիկ լաւ ուշիմութեամբ ի միտ առ և այնպէս պատասխան զրեսցես մեզ. հալաւթ այսպէս դիտացեալ ողջ լեր ի սէր եղբօր քոյ Յովհաննու եպիսկոպոսի առաջնորդի Թիֆլիզոյ

1802 ի նոյեմ. 18.

Օրհնեալ Գրիգոր. աղալին և պարոն Հայրս պետին օրհնութեամբ և սիրով ողջուն մատուցանեմ և ասելիմ որ լուսագրող եղիցին ՏեառնՏ մերոյ. զերէ լալնմ ժամանակի որ ոչ ֆարման ունէր ձեռացն և ոչ պարաթ որպիսի սիրով տիրէին այժմ պարտին աւելի քան զայն առնել վասն սիրոյն Աստուծոյ։

ՃՋ. ի Պօլսոյ եւ յայլ քաղաքաց զրուելիանք Գէորգ Աղայեկովին առ Դաւիթ ապօրինաւորն, որ զայս զիր իւր ծեռագրով յիսկականէ օրինակեալ՝ երկրորդարար եւ ի ներքոյ ստորագրի։

Վե՛ն Դաւիթ

Աստուածակոչ հայրապետ ամենայն հայոց, ՚՚՚ ար... ղրբազան պետ.

Արդ լինի մեծութեան քումմ, ի վաղճանել ծավսէփալ լուսահոգւոյն կաթուղիկոսի, բարեպաշտ կայսրն մեր ամենայն ուրտաց գրեալ էր տեղուլս էչմի Թամարով դեսպանին թէ հանգուցեալ ծովսէփ կաթուղիկոսն կտակ է արարեալ որ իմ տեղն Դաւիթ սրբազան նստցի հայրապետ ամենայն հայոց. ահա տամ քեզ հրամայն որ զու այդր ծանուսցես Օսմանցւոց թագաւորին և ֆերմանն պերաթ հանես, չուտով օր մի լառաջ լցես Դաւիթ սրբազանին, վասն որոյ և մեք ըստ հրամանի թագաւորին մերոյ զֆերմանն պերատդ հանեցաք. և եկն Կարապետ վարդապետն և առեալ եբեր. մեք ակն ունէաք թէ եղև խաղաղութիւն և ուրախացաք. և լսեցինք եթէ Եփրեմ վարդապետն անդ ի Մօսկով չորս գրագիր ն նստուցեալ, և աշխարհ ամենայն լրացեալ է ապականապրոմն եթէ Հնդիկս և մանաւանդ ի քաղաքս Պօլիս և եթէ ինչ ինչ բարուրանս է գրեալ ի տէրութենէդ ոչ համարձակիմ գրել, և անդէն մահասր է ժողովեալ ամենայն թէմից իւրոց, և թագաւորին օծմանն գնացեալ է ի տէրութիւն, և ի օծութեան թագաւորին մատուցեալ է Դանիէլ վարդապետի գանգատանաց գիրն առ թագաւորն վասն տէրութեանդ հանդերձ ժողովրդեամբն՝ ցօհաննէս, Մինաս և ցովակիմ ազգքն լառաջընթացք գոլով ծանուցեալ են թագաւորին զլուսահոգւոյ կտակն սուտ են հանեալ, և առաւել ծանուցեալ են թագաւորին թէ վկեզգին անօթ չէ թողեալ զամենայն ջարդեալ տաճկաց է տուեալ, և ձեռամբ տաճկաց զօբայութեամբ է օծեալ կաթուղիկոս. և վարդապետաց և եպիսկոպոսաց, ամենայն օր տաճկաց տալ ձեծել և Դրիգոր վարդապետին դատաստան է խնդրեալ և կալ՝ ի դատաստանատունն միայն գոլով, և Քնարին վարագով հանեցուցեալ են, և նա ես վկայութիւն տուեալ է թէ սուտ է կտակն ցովսէփ կաթուղիկոսին, և թագաւորն հաւատ է ընծայեալ նոցա, և Դանիէլի աղաչանաց գիրն տեսեալ, և Եփրեմ վարդապետի և ժողովրդեան աղաչանքն տեսեալ, հաւատացեալ է նոցա, և լսելով աղաչանաց նոցա, գրեալ է ատա, Թամարով դեսպանին իւրոյ, հրամայեալ է թէ՝ չուտով թագաւորին ծանուցէք. և ֆերմանն հանեցէք ի վերայ Դանիէլին որ նա լինի կաթուղիկոս. և մեք հրամանաւ թագաւորին մերոյ, ազգ ազգաց տեղուլս թագաւորին. և ֆերմանն կալ պատրաստի վասն Դանիէլին, Գրիգոր պատրիարգէ, նայուսմ են տեզիս մարզիկքն որ գալ ի Թօխատ, և լղելոց են ղֆերմանն և զպերատն Դանիէլին', և զու եթէ տեղդ գինչ աշխատես ոչ գիտեմ, եթէ կամիս որ անունդ պատծառ լինի և այս ստութեան և բարուբանաց համբաւքն քեզանէ վերանալ բանդ լաւ ջողակ լինի, և զու ընտիր երեխս և հայրապետութեանդ աթոռն հաստատ մնաս, և վայելես, զոր ինչ գրեմ ատա վաղվաղակի, զի քեզ բարի է լինելոց, և լուսամ Աստուած որ փութով կատարելոց ես. աներկբայապէս, զի որպէս տքաս ատ քոյդ ձեռամբ բերեալ Դանիէլին մահասրի զերեան գրեցուցին, և իւրաքանչիւրոց կնքոյ զանունն գրով նշանագրեցին լիւրոց տեղոցն և բազմաց կընքովք ևս հաստատեցին ճշմարտական վկայութեամբ եթէ լար և նման է օրինակին, և էջմիածնայ մօհրն ևս նշանագրեցին ի վերայ ճակատին Քղթոյ, մէնասարին միտքն է ասլ՝ մեր ամենին խնգրեալ կաթուղիկոսն է Վանիէլն, արդ եթէ կամիս քոյդ Կարապետ վարդապետի բերեալ մեհասրի և ֆերմանն պերաթի զերեան գրել տացես, և իւրաքանչիւրոց կնքոց զանունն նշանակեալ տացես իւրում տեղոջն, և միաբանիցդ և ժողովրդոյն տեղուդ հաստատական վկայութեամբ կնքելոց ես ամենեցունցն, և տուբք էջմիածնայ մօհրն ի վերայ ճակատին մահասրին դնել տացես, և Քող զաստիկ յատուկ մին մահասր ես նոր գրել և մօհրել տացես միաբանիցդ, և աեղուդ իշխանաց և քահանայից, և այդ եկեղեցական անօթքն ստան և իրասն, և քոյդ յատաբարական և յատկական օրինութեան Քղթոյն, ի վերայ գթածաղունեղ թագաւորին մերոյ. յատկապէս Կարապետ վարդապե-

տիւ. և երկու վարգապետս ես ընդ նմա. հանդերձ ձեր խանի թղթով. և ընծայուք. լիշեցես առ թագաւորն մեր և դատաստան խընդրեսցես ի նմանէ և իրաւունք ճշմարտութեան. զի նա լոյծ գթած է և լսէ ճշմարտութեան. Աստուծով թշնամիքս պարտաւորելոց են. և դու այլ թագաւորելոց ես. ահա տես դու որ չես խարար. չիք ներսէս վարդապետն մէկ մեծ խուրչին ոսկի. և ե բազմալ թիրմալ չալ ի մէջ բամրակի եղեալ բերեալ աստ ընդ հետ իւր. և կիւմիւրուկչիքն բացին տեսին և հիացան, և տօխսան քիսալ ետուն ի դուռն թագաւորի. և զպատրիարգ ցօհաննէս վարդապետն աքսորեցին Թօխատ. և ղԴրիզորն քերել տուին. արաբին պատրիարգ, և ահա արդ պիտի տալ ի դուռն որ Դանիէլի պէրաթն հանէ, և դու քեզ համար խնալես, որքան փող ունիս չխնալես ձեռդ բաց լիր. և կարապետ վարդապետին քանի մի վարդապետաց հետ չուտով չատ ընծալիւք լղեա ի Պետրբուրգ, առ թագաւորն. հոգևոր դատաստանն արդաթնէ. և սինօթին արդ տուր օրէնքն խնդրէ. լուսահոգւոյ կոտակի վերայ վկայք քեղի կնի. մէկն Դրիգոր վարդապետն մինալ ճարէ։ Նե տէր իմ այս գիրն հասածին պէս մին մահսար այլ չինես և այն որ յառաջ Պետրբուրք էին մելիքներն նոցա մհրովն կընքել տաս. մահսարին սէջ գրեա որ հալոց օրհնեալ հալրապետ մէկ կլալ երկու չիլաո. փող չխնալես. որքան ունիս խարճես թէ չունիս ինդդ վաճառես տաս, այս բանն փողով կըլալ. կարապետ վարդապետն գրկեսալս բանիս տակն չմնաս, գլուխ ելնես. հալոց ազգն Դանիէլին ուզելն սուտ է ասես, Պօլիս քննութիւն թող անեն. Դ ամիրալէ մաղալ ուզեցօզ չկալ. տեղս ծառալդ կղատեմ լաքիս այս բանս փողով կլալ. դու մեղ բան չես գրած։

1802 Նոյեմբերի
29 ի մեծն Պօլիս.

ՃԼ. *Դանիէլ կաթուղիկոս առ Ալ. Պաւլովիչ կայսր։*

Աղէքսանդր Պաւլովիչ.

Ինքնակալ Օգոստոս՝ Քրիստոսազօր լաղթող սուրբ Կալար. Աստուածատիպ ալցելու մեր և բարերար սուրբ եկեղեցւոյ.

Աղօթարար ձեր. և

Ցիսուսի Քրիստոսի ծառալ՝ Տէր Դանիէլ, որ և չնորհիւ նորին և բարեհաճութեամբ մեծութեան Օգոստափառ կալսերդ կաթուղիկոս ամենայն հալոց. նաև ընտրութեամբ սրբազան Սիւնհոդոսին և բոլոր ազգին մերոյ. Ծալրագոյն պատրիարգ Արարատեան Աթոռոյն էջմիածնի. խոնարհ երկրպագութեամբ՝ մատուցանեմ ողջոյն Քրիստոսական. ընդ լիաբերան աստուածալին օրհնութեան։

Եւ յայտ առնեմ, զի Արգար Արշամալ թագաւոր հալոց՝ ունելով զցաւս ապստամբեալս ի ճարտարութեանց բժշկաց՝ այն է լուաւ ղՑիսուսէ, թէ առնէ զաքանչելիս լերուսաղեմ քաղաք. առաքեալ զերկուս ի հարազատաց իւրոց աղաչեաց զնա գալ բժշկել զանբժշկելի զվէրս իւր, բայց Ցիսուս Քրիստոս՝ քանզի զաչխարհակեցոյց տնօրէնութեան ունէր անդ կատարել զխորհուրդ մարդասիրաբար ղթարկութեամբ գրեաց առ նա. թէ ես գործեմ աստ զփրկութիւն ընդհանրից. այլ առաքեցից քեզ զմի լաշակերտաց իմոց և նա եկեալ բժշկեսցէ զքեզ. որև լետ լարութեան առաքեաց զթագէոս, որ բժշկեաց զնա հոգով և մարմնով։

Ա՛լ արդ Տէր թագաւոր, զառաջինն թագաւոր հալոց՝ խնդրեաց ի Քրիստոսէ և ընկալաւ՝ զոր հալեցէր՝ իսկ այժմ աթոռ Քրիստոսի սուրբ էջմիածին հանդերձ բոլոր տառապեալ միարանութեամբ իւրով և ինև որ չնորհօք ողորմութեան ձերոյ ստացալ զաթոռ պատրիարգութեան նորա ի սուրբ թագաւորութենէ ձեր խնդրեաց զալցելութիւն իւր. և ձեր է ողորմութիւն թէ առնուցու, զոր խնդրէ։ Սակալն մի լիցի բանս ընգդէմ մեծութեան ձերոյ սուրբ թագաւոր՝ զի մինչ ողորմութեամբ ձերով ստացաք ըղհրովարտակ ի տէրութենէ Օսմանցւոց, ոսոխն մեր Մարտիրոս եպիսկոպոս՝ որ ի լըՋմրւռինոյ գնացեալ լարեցաւ առ ոմանս ի մերազնէից, որք ունէին գնոմոս ի դեսպանէ մե-

ծութեան ձերոյ. և զՍտեփաննոս եպիսկոպոս առաքեալ ի Գաւիթ՝ հանդերձ պարսիկ նախարարօք լերևանու խանին դնացեալ մասին պարսիկքն ընդ թեօք նախարարին ուրումն հաղարացուց, և լիշեալ եպիսկոպոսն ընդ թևօք թամարով դեսպանին կոստանդնուպօլսոյ, որ և բնակեալ ի բնակարան Ղ.իմցի Գէորգ Աղաթկովի ուրումն, որ հարազատն է լիշեալ դեսպանին. և բանակատար կողմանցդ մերազանց ջանադիր եղեն ձեռնտուութեամբ նոցին, վերստին դարան դործել մեզ և Գրիդոր Պատրիարգին և առ այս էր, զի խնդրեցաք լամենաողորմ աթոռոյ ձեր՝ հրամայել թամարով դեսպանին քաղցր լինել առ Գրիդոր Պատրիարգն. բայց թէ զիարդ, ոչ գիտեմք՝ այլ ազդն մեր և լիշեալ Պատրիարգն խնդրեցին ի Տէրութենէն հաղարացուց, լաւուկ հրովարտակաւ առաքել զնոսա առ մեզ, և պաշտպանեաց զնա լինել դեսպանն ի Մալիսի ամսոյն մինչև ցայսօր. իսկ մինչ եհաս առ մեզ բարձրահրաման ղրամատն ողորմած կայսերութեան ձերոյ և ազդեցաւ ազդին և Պատրիարգին, նոքա դարձեալ զնոսա առ մեզ լղել կամելով խնդրեցին ի դեսպանէն թողացուցանել զնոսա ի պատիւ՝ ղրամատի ողորմութեան ձերոյ. այլ նաև յայնժամ ոչ կամեցեալ անսալ նոցա պատասխանի տալոց է թէ զՄարտիրոս և Ստեփան եպիսկոպոսն ես առաքեցից առ Պատրիարգն՝ զի ամենամեծ կայսրն՝ հրամայեալ է Պատրիարգին ներել նոցա և այլն։

Բայց այժմ՝ հեզութեամբ լուր զանլսելիս Տէր մեր ինքնակալ սուրբ կայսր, զի նոքա լիշեալ եպիսկոպոսքն՝ ապաստանեալ ի ծառայս տէրութեան ձերոյ, պաշտպանեցին զանձինս իւրեանց՝ այլ և լաւելին ևս, զի ահասարիկ ամսոյս 5 սուրհանդակ եկն՝ որով Գէորգ Աղաթկովն և Ստեփան եպիսկոպոսն գաւետիս առաքեն առ ոտիսն մեր Գաւիթ պատրիարգացեալն թէ հաճեցաք ըզսիրտ եպարքոսի տէրութեան հաղարացուց և այլ իշխանաւորացն, զի զԳրիդոր պատրիարգն կոստանդնուպօլսոյ և զԱնդրէաս պատրիարգն Արարատեան Աթոռոյն, լղեսցեն ի ձեռս քոյ կապանօք, և տացին քեզ, որպէս զառաջինն զնոր հրովարտակ պատրիարգութեան Արարատայ և այլն։

Եւ ի վերայ այսր՝ լաւելոյն գրել և գլուսադրութիւնս թէ խորհեալ եմք ընդ համախոհս մեր, զի և ի դիմաց ազդին լօրինել զմահսարակերպ գիր մի մատուսցուք կայսեր, որով և գնա հաճեցուսցուք. զի գարձուցեալ ղղրամատ Դանիէլին, ձեզ տացէ ղղրամատ նորոդ և այլն։

Արդ՝ ըստ կերպի դրելոցս ահասասիկ մեք և Գրիդոր պատրիարգն, հանդերձեալ եմք մատնել կապանօք ի ձեռս ոտիսին մերոյ, բայց քանզի լոյս մեր դուք էք ի տէր, անզօր զօրութեամբ և թաղծեալ սրտիւ լաւ համարեցաք ի վերչոյ և զայս լայտնել Ամենաողորմած տէրութեան ձերոյ, թէ զիարդ իբրև զոչխար վարեցին զմեզ ի սպանդ Թամարով դեսպանն և Գէորգ Աղաթկովն և առիմ ջատագով գոտան լերևանու խանին և գործակցեալ՝ նմա պաշտպանեցին զԳաւիթն և մատնեցին զմեզ լորոգայթ մահու՝ համակեալ ի սուգ անհնարին զմիաբանութիւն մեր ողջոյն ազգովին՝ որոց զայսպիսի եղանակ դրանակալութեանցն, այս է ահա զոր ամենայն ստուգութեամբ դրեցաք՝ արտասուք և ոչ՝ մրոյ։

Այլն ամենայն՝ թէ բարեհաճեսջիք լսել ծանուցանեն ամենայն լրութեամբ՝ եփրեմ Արք եպիսկոպոսն, և Մինէ Լազրիչ Լազրեան երևելի իշխան հայոց, զոր յառաջ քան զայս՝ կարգեցաք երկրորդ, յետ եփրեմ Արք եպիսկոպոսին՝. լինել փոխանորդ մեր ի զրան սուրբ կայսերութեանդ, իսկ վերստին խընդիր իմ՝ ամենաողորմ աթոռոյ ձեր այս է, զի թէպէտ և մեզ հասցէ մահ, ըստ կերպի դրելոցս, այլ արժանապատիւ առաջնորդն կողմանցս մերազանց, եղբայր իմ եփրեմ Գերապատիւ Արք-եպիսկոպոսն սուրբ կայսերութեան ձերոյ լիցի յանձին, քան զի ճիւ է զա ի մէջ ոզկուզաց՝ ըստ դրոյն, և զա է ապաւինութիւն հոգւոյ և մարմնոյ կենդանեաց և ննջեցելոց, հոգևորականաց և մարմնաւորականաց ազդի հայոց, միայն հոգեծին զաւակ Սիմէօն երանեալ կաթուղիկոսի, և բազմաշխատ գլխաւոր միաբան Աթոռոյն Արարատեան, զոր և ընդդիս բազմակնիկ մահապարտ ի միասին էին լատկացուցեալ ի պատրիարգութիւն սրբոյ էջմիածնի, այլ զրկեաց զմեզ զերկոսին՝ Գաւիթն ինքնընծայ։

Դարձեալ լայտ առնեմ՝ զի եթէ լայտմ հետէ ներհակ մտաց յառաջադոյն դրելոցս

ընկալցի մեծութիւն ձեր ի մէնջ զգիր՝ ծանիջիք զայնպիսին ի բռնութենէ բռնաւորաց գրեալ լակամայ՝ և ոչ ծնուցագ յօժարակամ ժտաց մերոց։

Եւ այսու ամենայնիւ ողջ լեր Աստուծով, Աստուածասիրդ լաղթող սուրբ Կայսր, և եղիցի ըստ դրոյն. աչք քո ի վերայ մեր, և մեք ի գանս և ի տանջանս, և մեռելութիւն մեր՝ համարեալ լիցի կեանք մեզ։

Աղօթարար ձեր՝ Դանիէլ կաթուղիկոս հայոց որ յամսոյս 23. ըստ խնդրոյ

ի 1802, Նոյեմբերի 23. ի վանս սրբոյ Յովհաննու որ ի Իագրեանգ գաւառի

երեանու խանին և Դաւթի բգեշին տեղւոյ գնոց գնով վաճառեալ զվեզ մատնեաց կապանօք ի ձեռս նոցա՝ հանդերձ ընդգիս եղեալ հոգևորականօք և մարմնաւորականօք։

ՃԸ. *Թուղթ առ Տէրեմ Արք եպիսկոպոսն եւ զՄինաս եւ Յովակիմ Վաղարեանց։*

Գերելջանիկ Եփրեմ սրբազան հայր և պալազատափալ Մինաս աղալ և Յովակիմ աղալ.

Ժամանակի դարձուածքն ամենայն իրաց և գործուածոց յայտնի է պատահումն մինչև ցայսօր Ի օր է որ Մանուէլ վարդապետն Կարապետ Յօհաննէսեանն անուանդ, ի Նէմցէու դեսպանին վաչքօրթ առնելով և ղերլարգի Ինկլիղու մեծափայլ ճեներալն որ է հրամանատար ամենից ղօրաց. որ իբր ի քաղաքս դեսպան ասի. և նոյն տէրութեանն ներքին խորհրդական Բարթելօմօ Բիղանէն որ է ևս մեծ թարգման սոցա հետ բարեկամութիւն առնելով լատկապէս իրենց փոստալովն լղեաց և Բուքրէշու պարոնին և Վիէննայու կօնսօլին գրեաց և կամ այլոց գոր ինչ չաւի արարէք և պատուով ուր ուրէք գնալ օգնութիւն արարէք. և մեք ես ի Վիէննայ նշանաւոր վաճառական հաճի Բզասայ որ աստ ի հաչուարնկերոյն գիր առաք որպէս որ հարկաւոր է որպէս վերն ասացաք, կու լուսամբ մինչ ցարդ հասեալս իցէ Մանուէլ պետն։

Յատնի եղեալն գիտէք չար Դէորգն եաղճի որ մինչև ցայժմ ներեցիք լինքն չանդգնութենէ ոչ վերջացաւ. Զմիւռնի չար չեպիսկոպոս Մարտիրոսն և աստ եղեալ վրացի Ստեփան չարապետն՝ և քանի ևս ծնունդք իժից չատ փողով սրբազանն... պերաթն փոխել ետուն և դարձուցին ի վերայ իւրեանց գլուխ նեռին. և նմանապէս ղԴրիգոր հոգեսէր վարդապետն արհիեպիսկոպոսն, ղյատսիկ լուեալ էք, վեհ..... օծմանն չնորհաւորութեան՝ բազմակնիքն ամենաքաջանքն սիրով և ոչ տէրութեան հրամանաւն ջերմեռանդապէս ուրախ և բերկրուն եղեն եթէ այն և եթէ սրբոյ օծման դրութիւնն և կնիքքըն զանազան եպիսկոպոսաց և վարգապետաց. և զայլ ինչ ունի ի ձեռս Մանուէլ պետին Աստուծով տեսեալ էք։

Այժմ կամ անչնորհաւոր Դաւթին արարին Բ գիր մէկ առ ձեզ լղելոյ և մէկն նոյն չարին պալատի եկեղեցւոյն մեծի իշխանքն չունին կնիք և կամ նշանաւոր արանց թէ անուանք դրեալ և կնքեալ են իմացէք որ չինուած է. Մանուէլ պետին բերածն ուղիղ է. սոքա բռնութեամբ տէրութեանն և օձ ձգելով ի վերայ մխամտաց կամ առեալ են զկնիքն կամ յարմարերեն ինքեանք. քանի կնիք եթէ սխալ տեսանէք իմասջիք որ ամենեքեանքն բռնի և կամ չինուածք են։

Եկեզեցիքն մեր եղեն աղուեսուց բոյն Դաւթին լիշեն լսողաց ականջս կաղտոտի. չատքն իսկոյն կու վախչին և այժմ ցնծան Զաքարիայի լակոտներն և եղեալ են գալ արաբացի. հանդերձ չար և անհաւատ համաձայնութիւնքն. պատրիարգարանն արարեալ են եէնիչէրի Աղաոիի բնակարան երկիւղ և տանջանք աղքատաց չէ Դաւթին ուղէք և կնքէք զսուտակասպաս գիրն։ Այսօր Յօհաննէս պատրիարգն գալոց է աստ սակայն վերոյգրեալ Զաքարիայի ծնունդ լինելով միւսիցն սա լաւն է և զամենայն որպիսութիւնն գիտէ. միայն թեթևութիւն ունի ի մէջ բարուցն. և ունի քաղաքական վարք. Աստուծով սրբազանին լաջողութիւնն այժմ ի ձեռս ձեր է այլ լուստեքէ ճար չմնաց. մեծափայլ կայսրն եթէ կամի իսկոյն մեր մեծազօր կայսերն իմացումն տալ դեսպանոյն թէ. լա-

ուաջագոյն բոլոր միաբանից մահսարն առ ձեզ եկն և ամենայն ազգն ընդունեցան զսբր-բազան.... յետ այնորիկ այն խապշիկ Դաւիթըն ստութեամբ և դողութեամբ եղև, և մեղ ևս խաբեաց. վերջապէս դուք քննեցիք մեք ևս քննեցաք աստ եղեալ հալոց լաղէն և գտաք զձշմարիտն և կնքեցաք. ալժմ որով եղև ալս զարձուածն մեք հաստատեմք մեր մտացն դուք ես փոխէք ղրամատն ձեր և տուէք դեսպանի որ առ մեղ լղեսցէ. և մեք արժանաւոր պատրիարգին մեծի լղեսցուք. թագաւորաց վայելն փորձեալ և քննել իրն ստութեամբ ոչ դառնալ և այլն. սոյն մտաց վերալ եմ Աստուծով որ զարձուածն այդի չուտով տևսանելոց նմք. ջանացէք և աշխատեցէք սոյն գործոյս և մեր ազգի խալտառաակութիւնն բարձցի. և եթէ ոչ լիցի ամենայն ազգաց մէջն՝ ծաղր և ծանակ լինելոց եմք որպէս ալժմ տեսանի Զաքարիալի լակոտ անչնորհ Անդրէաս եպիսկոպոսն Ցոհաննէս պատրիարգին փոխանորդ կացուցին. զանուննի իւր պատրիարգ կոչէ և խաղաղութիւն տալ և բռնաւոր ըստ նմանութեան նեռին իւրեանց. Գալուստ նուիրակին Թէպէտ չիտկեցաւ. ալժմ կրկին եղե ծուռ և նա ևս պատրիարգ երկրորդ՝ նմանապէս կիւռճի Ստեփաննն, ղև Ստեփաննն ձեր. իշխանապետ եազճի Գէորգն. ալս կերպ ընթացքն որպէս կարէ ազգն կերպ կերպ նախատանաց ընդունակ լինիլ քանի անծանօթից անիրաւաց և չարեաց մատնութիւնն կրեմք. կամին բարձրանալ ի վերալ իրաւարարաց և իշխանաց և այլն ըստ խոհեմութեան ձևրոլ թողում, Գամք առ որհնեալ տէրութեանն կայսերական վասն էր ալաքան երկարացաւ հանել զսբրբազանն.... ի Պալաղիտու և տանիլ ի սուրբ գան լորմէ եղե պատճառ չարեացն թէ ալղ տէրութիւնդ չէ կամեցեր տանիլ և չէ ընդուներ չար Գրիգոր չպետն դրեալ է թէ ես առաջնորդ լինելոց եմ և այլ կերպակերպ զրոյցք. Կրկին խօսիմ Աստուծով կուզզէք. եթէ նոր դեսպանն ելեալ է ալտի գրել տաք, որ մէկ հաւատարիմ մարգ գտանէ անծանօթ և զոր ինչ ուղղելոց է առ մեղ հարցանէ ծածուկ և ապա խօսի ի դուռն տէրութեան, փոխանալ դեսպանին երեսն սև լիցի լսեմք որ միշտ ընդ հետ տոկոսի գնալ և ոչ ճշմարտութեան. և եթէ նորն մինչ ցարդ ոչ է եղեալ պատուէր տաք չեշտիւ ալս դրութիւնս. նա ես մեր ազդի մէջն մարդ կալ անհաւատ լանգութ է չար մատնիչք ևս նոցա ի դրանէն Երկիւղ տան որ նոցա երեսն սև լիցի. Թէպէտ քրիստոնեալ կերպիւ սակայն զանհաւատսն չարեն. և զալլսն զօրութեամբ իմացարութ. ալս անօրէնքն չարութիւն չմնաց մինչև ի մահացուցանելն անմեղ անարատ վեռապն... Եւ զԳրիգոր սրբասէր արհի Ալիսկոպոսն ի լցանելոյն գչարութիւնն իւրեանց ընդ օր լառաջ փոխարկելոյն Պերաթին. լատկապէս թաչար լղեալ են ի Պալաղիտ առ. Փաշան Թէ զՍբրբազանն... պահպանեա ի բանտն մինչև ի գալ Գրիգոր պատրիարգին որ զերկոսեանն չալուշով առեալ տանին ի սուրբ Աթոռն և մատնեն առ բռնաւորն Գաւիթ. ալս երբ լուաք իսկոյն կամեցաք թաթարով գրել որքան կարելի լիցի փախչիլ ի Թիֆլիզ սակայն մեր լղեն դատարկ լինելով համբերեցաք. նոցա թաթարն հասեալ է սակայն որպէս լինելն չիմացաք. միայն Իէ օր լառաջ կամ ի օր լառաջ գիր առաք ի Կարնոյ հաւատարիմ լումեմնէ որ նոքա ևս լսած են անդ որպէս ի վերն գրեցաք. Պալաղատու սեպտեմբերի 23-ին գիր առաք որ գրէ Սրբազանն Թէ ալս օրերս կալսերի զօրքն գալոց են և տանելոց են ի սուրբ Աթոռն. յայն դրութեանց լետոյ գիր չկարացաք տեսանել սակայն մինչև ցալժմ ի լրոյ լսեմք որ մինչև ալժմ է ի Պալաղիտու Գամք ի խղճութիւն Գրիգոր վարդապետին որ աւազակքն որքան նեղութիւն ի Քաղկեդոն Բ օր մնաց չալուշ լղեալ բեռ ինքն զոր ինչ կալ քննութիւն անել չարչարանօք, զկնի գնալոյն ի Նիկոմիդիալ կրկին հրամանագիր չալուշով նոյնոյ քաղաքէն բգեչխին ոչ չարչարանօք որքան գրեանք ունի ալտի եկաց կամ Սրբազան... կամ ալլոց առցեն. մանաւանդ երկիւղն և ցաւն նոցա այն չնաւորելոյ մահսարն որ ալդր եկն լայնցանէ մինչև ցալսօր դողան Թէ նոյն ճշմարտութեամբ էր խալտառակիմք. վասնորոյ ալս բռնութեամբ և լրբութեամբ և չինողութեամբ դրեալ են Թէ առաջինն դեռ ևս ելանիցէ ստոր որ ունի զտեսակն ամենայն ստութեան. որով զոր ինք գրեանք գտնալ են առ խեղճն բերեալ էին ասա. այն ինչ չարութիւն ոչ մնաց ալսքան ասիրէն մի Թէ Գրիգոր պատրիարգն Մոսկոֆի չաշտէ. վերջապէս Նիկոմիդեալ

բղեչխէն իւր վաճառական ազատեալ էր հետ գնացեալ չավուշն՝ մինչի կերևեր տարեալ խղճացեալ էր և լետս դարձեալ Բ օր լառաջ զայն չավուշն ի բանս արդել եւուն. և երկեան օրն այլ լինն չավուշ ֆարմանով ուղարկեալ են ուր ուրեք գացէ գնա առեալ և տարեալ ի Պալաքիտ և Սրբազան... առեալ տարցէ ի սուրբ Աթոռն. վասն որոյ չտապեցէք օր լառաջ ազատեալ գուցէ այն չար բռնաւորն դեղով մահացուցանէ որ ինքն որպի սատանալի է գուցէ կորուսցուք զանմեղն։ Այժմ է ժամանակ որ զերամեծար և նաև հրաշագործ Բ լուսաւոու աչք ազգիս և վեհափայլ և պարկեշտուհի բարեպաշտ տիկինն հանդուցեալ մեծափայլ և մեծահամբաւ Ջօհաննէս աղային. լուսամբ որ աչխատութեամբ մեծաւ լրացուցանէք և ղրէք որ հանդիստ մնամք. թէպէտ ժամանակի դարձուածոյ կարելի է աստ ուղղել սակայն արծաթով լինելոյ է Սրբազանն... համար այժմ մնաց Լ Ռ զուռուչէն աւելի ոչ դոյ օգնական ըստ որում տուեալն մնացեալ է թարց գրամի կարէք լրացուցանել Աստուածով։

Հարազատք և ճշմարտութեան չատագովք բոլորքս արդարութեան հետեղք ստորագրելոցս համարնքն են ի մի միտս։

1802. ի գեկտ. 1
ի Կօստ՚՚ Պօլիս.

Որ սոյն օրինակս ընդ հեղինակի համեմատ է վասն որոյ վկայեմ թագաւորական կալեգի այլազգական իրակութեանց հայոց թարգմանիչ Աղեքսանդր Խուդաբաշեան։

ՃԹ. Հրաժարագիր Դանիէլ կաթուղիկոսի։

Ցետ վախճանի Տեառն Ղուկասու երանեալ Սրբազան կաթուղիկոսին՝ մինչ էի լԱթոռ Պատրիարգութեանն Կոստանդնու պօլսի Դանիէլ Արք եպիսկոպոս՝ բոլոր միարանք Սրբոյ Էջմիածնի և մերձակայ հայոց հասարակութիւնն բոլոմակնիք մահէրօք յատկացուցեալ էին ի կաթուղիկոսութիւն ամենայն հայոց, գիս, գՅովսէփ Արք եպիսկոպոսն կողմանցն հիւսիսոյ. և գնուիրակն նոյն կողմանց գԵփրեմ Արք եպիսկոպոսն. սակայն Յովսէփն լառաջեալ ի կողմանցն հիւսիսոյ աքսորել ետ զմեզ և լինքն կորզեաց զայն կոչումն. և իբրև մեք աղատեալ ի լաքսորանաց մերոց եկաք ի Թօխաթ քաղաք, նա ևս եկեալ ի Թիֆլիզ հանդիպի օրհասին մահու. և ի ժամ վախճանելոյն իւրոյ՝ կտակ աւանդէ լետ իւր լինել կաթուղիկոս գՅէր Դաւիթ Սրբազանն. որ և զայն արձանացուցեալ հասարակութիւնն Թիֆլիզու քաղաքի, բազմակնիք մահսէրաւ գրեցին միաբանութեանն սրբոյ Էջմիածնի որք և համաձայնեալ նոցա ըստ ազդեցութեանն Աստուծոյ օծին ի կաթուղիկոսութիւն ամենայն հայոց գՅէր Դաւիթ Սրբազան Վեհապետն. և հաստատեցին զայն օծութիւն նորա Տէրութիւն Օսմանցւոց և Պարսից, հրովարտակօք իւրեանց. և զԱզգն հայոց բազմակնիք մահէրօք հաճութեամբ իւրեանց։ Սակայն և մեք քանզի լառաջագոյն կոչեցեալ էաք լայն կոչումն՝ գժգոհեալ ընդ վերնաձիր օծութիւն նորա՝ ջանացաք լինել հակառակաթոռ նմա. որ և եկեալ ի երեք վանքն որ ի Բագրեւանդ գաւառ ներկայ Սրբազան Վեհապետիս և սրոյ Էջմիածնի, օծաք անդէն կաթուղիկոս և օրհնեցաք ես գՄեռոն։

Այլ սակայն զղջացեալ հետևաբար ընդ հակառակ արարսն մեր կատարեալ զղջմամբ գիմեցաք ի սուրբ Էջմիածին ի համբոյր Քրիստոսաէջ Սրբոյ Տեզուն և մաքուր Աջոյ Տեառն Դաւիթ եռևերանեալ Սրբազան կաթուղիկոսին հանդերձ մեղալիւ։ Քանզի ծանեաք զմեզ յանցաւորս ընդդէմ Աթոռն և լիչխալ Աստուածընտիր Սրբազան Վեհապետին. և ալսու յայտարարական գրութեամբս յայանելով գիմ գՋերմեռանդական զղջումն՝ յայտ առնեմ և զայնս եթէ օծանիլն իմ անդ և օրհնելս գՄեռոն՝ են ընդդէմ Սրբոյ Աթոռոյն և արժանընտիր Օծելոյն Աստուծոյ, և նախնի հարցն կանոնաց՝ վասն որոյ և անընդունակք Քանզի երեք վանքն որ ի Բագրևանդ՝ չէր Աթոռ քնական, և ես՝ յանդգնեալ կամեցայ առնել զայն Աթոռ ընդդէմ սուրբ Էջմիածնի. ուստի և ահա ի զղջանալս իմ եղծանելով զայն ամենայն, աւանդեմ ալսու յայտարարական գրովս իմով թէ յայսմ հետէ որ ոք գիս՝ և զարարս իմ պատճառ առեալ

վերսաին յօժարեսցի օծանիլ անդ կաթուղիկոս՝ նզովեալ եղիցին օծեցեալն և օծանօզքն։ Ակն և ասու ամենայնիւ յայտ առնեմ թէ ես յաւ համարեցայ յայսմ հետէ միայն պաշտպանելով զկեանս խոկալ զիրկութենէ հողւոյ ըստ Մարգարէին. վասն որոյ և խոստացայ զի ոչ միայն ի ժամանակս փափագելի կենաց Սրբազան վեհապետին մերում, այլ թէ նաև կեանք մեր իցեն երկարագոյն քան ըզպատուական կեանս նորին, չլինիցեմ ի յայմենայն կեանս իմ ցանկացօղ կոչման կաթուղիկոսական. որ թէ այլք զիս ըստիպեացեն՝ ոչ առնուցում յանձն. և որպէս Սիմէօն Դուկաս կաթուղիկոսունքն սպասեն փառացն Քրիստոսի ի ցարուքեանն հասարակաց, նոյնպէս և ես ակն կալեալ ալեկոծութեանն Քրիստոսի ի ցարուքեանն արդարոց ցանկամ քաւութեան յանցանացս զորս յանցուցեալ իցեմ Սրբոյ Էջմիածնի Լուսաւորչի Աթոռոյն, և օծելոյն Աստուծոյ Գաւիթ Քրիստոսատիպ Սրբազան կաթուղիկոսին. և այս ի կատարեալ միամտութիւն նորին Սրբոյ նուիրեանն՝ փակեմ նզովիւք զորս գրեցի ի ծանուցումն ընդդէմ Սրբոյ Էջմիածնի և գերընտիր Սրբազան վեհապետին գործոցս վկայութեամբն Աստուծոյ և ճշմարտութեամբ Ամենասուրբ Երրորդութեանն։ Որոց վասն կատարեալ զղջմամբ ասեմ մեղայ Աստուծոյ և Սրբոյ Էջմիածնի և գերազահ Արժանընտիր երջանկափառ Աստուածարեալ Սրբազան կաթուղիկոսի ամենայն հայոց. և խնդրեմ ինձ զներումն՝ առ ի նոցունց քաւչարար զօրութենէ. վկայութեամբ ստորակնքոյ եպիսկոպոսաց։

(Գրեցի իմով ձեռամբ ԴԱՆԻԷԼ Արք եպիսկոպոս քնիկ միաբան Սրբոյ Էջմիածնի)։

Գրեցաւ ի ՌՄԵԱ թուականի
և ի դեկտեմբերի ԼԱ. ի
Բարձրագահ Աթոռս Սուրբ
Էջմիածնի։

Աթոռակալ Սիմէօն Արք եպիսկոպոս։
Ժամօրհնող Ալէքսանոս Արք եպիսկ.։
Յովակիմ Արք եպիսկոպոս։
Ստեփաննոս Արք եպիսկոպոս։
Աստուածատուր Արք եպիսկոպոս։
Գրագիր Անդրէաս Արք եպիսկոպոս։
Բարսեղ Արք եպիսկոպոս։
Ստեփաննոս Արք եպիսկոպոս։
Յովհաննէս Արք եպիսկոպոս։
Աբրահամ Արք եպիսկոպոս։
Աբրահամ Արք եպիսկոպոս։
Գէորգ Արք եպիսկոպոս։

ՃԻ. Թուղթ անտորազիր առ Յովհաննէս արք եպիսկոպոս։

Յոգնաջան և քաջասիրտ սրբազան Հայր իմ Յովհաննէս աւագքինաղարդ եպիսկոպոս սրբոյ ս̇ջոյդ համբոյր աղէխարշ սրտիւ։ Ոչ ցաւոյս և անտանելի կսկծանացս։ Չի կտտաղեալ գիշիպոզ չար գազանին զորս առ ձեռն բերէ առ ոտն հատեալ կամի հեղձնուլ զնա։ Չի մինչ փախեաւ ենօքեան Ստեփան սարկաւագն ի ձեռն երկուց Նախճուանցոց, Սիմէօն առն և Աստալի եղբայր եղիալին, դառնալ նոցա ի Պալաղտոյ զդացեալ ոմանց Նախիջևանցոց այս է չուն Նազարին և համախոհից իւրեանց, ազդեցին Դեկոսին և Գեկոսն կալեալ զՍիմէոնն և զեզիալն եղ ի բանտի, իսկ նոցա չկարացեալ տանել և անհամբեր լեալ ամենայն անիցիս զՅովհաննէս Կարբեցի և զԱնտօն վարդապետն զոր ըմբռնեալ զԱնտօն վարդապետի զօտսն զմէջն և զփորն այնքան հարին մինչև եղե կիսամահ և անշունչ արկաւ ի բանտ, և զկարբեցւոյ ես Անտօնի զմօրսն զերծին և զոգւոյս իսպառ կողոպտեաց և զինքեանս արկեալ ի մթալին բատ աւուրն լերեկոյ և առաւօտ մի մի տափակ հաց տան և այսպէս կան միաբանք ամենեքին սարսեալ դողան վասն զի զխանն և զալլս լցուցանէ մամօնալիւ, զի ոչ չարժին ի չար կամաց։ Արդ՝ մնացեալ եմք իբր ի հնոցի և տաքնալ մրրկախառն պռրեալ տոչորէ զմեզ վասն զի զամանս պարակալնովք անացուցանէ և զոմանս ինքն իւր չար բռնութեամբն և զալլոց վերայ չարս դնելով։

ՃԻՆ. Թուղթ վիճաբանից Մայր Աթոռոյ առ Յովհաննէս եպիսկոպոս։

Տեառն ՅՈՎՀԱՆՆՈՒ չնորհազարդ և առաքինափայլ Արքեպիսկոպոսի և մեր ղեր-

լարվելի եղբօր պատուականի ի Տէր խնդալ։

Յալանի է լարզելոյդ մերոյ, թէ Գեկոս ալս գործով երեք առաքեաց զքեզ լներսեան քաղաք. բայց դու տեսեալ զգործս քո՝ խոյս առեալ ես աստի ի Թիֆլիզ։ Ի լսելն սորա ըստ իւրն անբարի բարուց կատաղեցաւ զանաքար. և սկսաւ ձեռն ձգել ի միաբանս. որք ոչինչ գիտեն վասն փախստեան քո, զի չես յայտնեալ խորհուրդ ումեք, նախ՝ էարկ ի բանտ խաւարային զՂազար եպիսկոպոսն խոստովանահայր. և ապա զտէր Կարապետ աբեղայն քո պահէր առեալ զփիլոն վկայարն լիւրմէ էարկ յալլում բանտի և զՅակոբ վարդապետն արգել ի սննակի միում Ղազարապատին. և պատրաստեաց զվասս, զի ի դիշերի զերեսն ևս հարկանիցէ չարաչար. զայսպիսի գործ բռնաւորութեան սորա տեսեալ միաբանիցս յայտնապէս ապստամբեցաք. և խուռն բազմութեամբ դիմեալ ի վեհարանն, քարիւ և փայտիւ, աղաղակ բարձաք. հան զեղբարսն մեր ի բանտէ. և ապա հանեալ զնոսա ի բանտէ յանձնեաց ի մեզ եթէ ոչ առնէաք այսպէս զգրագիրսն իւր և զայլս ալսու կերպիւ ի բանտ արկանելոց էր։ Եւ ապա խուռն բազմութեամբ դիմեալ լեկեղեցի, առաջի Քրիստոսակէզ տեղոյս ուխտեցաք. զի կամ ի միասին մեռցուք. և կամ զչարն բարձցուք ի միջոյ ի հաստատութիւն բանիս գրեցաք գիր մի առ նա, թէ ոչ ընդունեմք զքեզ, զայս գիր ստորակնքեցաք ամենեքեան. և միանգամայն նզովեցաք զինքն և զհամախոհս նորա, և ի միւսում աւուր լերեքշաբթի զատկին, եպիսկոպոս, վարդապետք, աբեղալք սարկաւագունք և վարժատան մանկունք՝ բոլոր միաբանք դիմեցաք լներսեան լպարահս խանին, և բողոք բարձաք թէ բարձ զչարն ի միջոյ, և կամ սպան զմեզ զամենեսին. այլապէս գիտասջիր, եթէ խանն ոչ կատարեսցէ զխընդիրս մեր, այլ ևս չունիմք գնալ լեջմիածին կամ ի Պալազիտ գնամք. և կամ գիմեմք այդր գիտելով զո զլսոսիկ օգնութիւն արա՝ մեզ այտի վաղվաղակի գգիրս լայտնապէս գրեցաք. որոց կամիս և դու լայտնեա. և լեր ողջ երկար կենօք ի պարծանս սատրակնդոց եպիսկոպոսաց։ Յովակիմ արքեպիսկոպոս։ Աստուածատուր արքեպիսկոպոս։ Բարսեղ արքեպիսկոպոս. Ղազար արքեպիսկոպոս. Յակոբ եպիսկոպոս. Գրիգոր եպիսկոպոս Յովհաննէս արքեպիսկոպոս. Աւետիս եպիսկոպոս. Վարգան եպիսկոպոս. Յոհաննէս եպիսկոպոս. Ալէքսան. Գրիգոր. և Անդրէաս եպիսկոպոսունքն ունին կնիք ի պալմանագրի մերում. բայց առ ի տկարութեան մարմնոյ իւրեանց ոչ կարացին գալ։

1802

ՃԺԲ. *Դանիէլ կաթուղիկոս առ Գրիգոր պատրիարգ։*

Յիսուսի Քրիստոսի ծառալ տէր Դանիէլ և չնորհիւ նորին կաթուղիկոս և ծալրագոյն պատրիարգ ամենայն հայոց Աստուածածնոյ և առաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի, նաև լուսանկար գերագահ Աթոռոյն սրբոյ Էջմիածնի։ Յորմէ հոգևորական լցեալ սիրով և քահանայապետական օրհնութեամբ՝ ողջոյն Քրիստոսական մատուցի սիրելի եղբօր իմոյ և պատուական պատրիարգի մեծին Գօլսոյ Տեառն Գրիգոր Աստուածածնայն արքեպիսկոպոսի. որում և գիտութիւն լիցի զի ի... մալիսի գրութիւնդ էհաս առ մեզ լամսոյս 23, որով ծանուցեալ զողջութենէ և գառողջութենէ պատուական անձինդ, ուրախ եղաք ի տէր՝ և զիտաւս ամենակարող զօրութեանն նորա վերառաքելով, խնդրեցաք լաւատ ոգորմութենէ նորա չնորհել զնոսն ամօք պարագայս ի զարդ վարելչութեան սրբոյ եկեղեցւոյ և ի պակ ուրախութեան սրտի իմոյ։ Խմացաք ևս և զանցան ընդ Մարաիրոս արհին Ջմիւռնիոյ և ընդ վրացի Ստեփան կառավարն տուրք էջմիածնի. վայ և աւաղ կարդամ զի ի վերջին այս գարու նոքա և համախոհք իւրեանց սրտացաւ և հարազատք են սրբոյ լուսածին ծնողքն մերոյ և մեք և դուք և խղճալի Եփրեմ և ակնցի Յոհաննէս արհին՝ հանդերձ համախոհիւք մերովք, թըշնամիք. նոքա չանան ի չինել և մեք աւերել, ոյր վասն ե՞ զոհել ևս լօժարին ի վերայ կամաց իւրեանց և այն համարեն ինքեանց բաւական պաշտօն Աստուծոյ ի հոտ անուշութեան. զինչ ասացից՝ Աստուած տեսցէ և այց արասցէ. Յագելով զլոյս ողորմութեան իւրոյ ի մեզ, որով թերևս ուղեսցին ոտք

մեր ամենեցուն ի ճանապարհս խաղաղութեան և մինծացի վաճք Տեառն Աստուծոյ մերոյ որպէս լերեկն և լեռանդն։ Արդ յօրէ անտի օծութեան մերում մինչև ցայսօր, հազիւ ուրեմն ղմի գիր առ քեզ առաքիլ և ի վերայ այնր ճանապարհորդել կարողացաք առ կայսրն և առ հիւսիսակողմանց մերազնեայն ղդրութիւնս առաւել հարկաւորագոյնս. քանզի այն ինչ լուաւ ոսոխն մեր զձախորդութիւնն իւր յայղրուսա, նոյն մուրհակք և նոյն ջանք իւր ղարձոյց ի կողմն Թիֆլիզու առ կնօրիղն և առ կաւալինցկին. հաստատ. նայելս եմք թէ և անդուստ ոչ ունի չահիլ ինչ, րոյց քանզի ի վերայ այսր ամենայնի տակաւին ոչ դիջանի խաստատրութիւն նորա, յայտ է թէ ձեռն տեառն բարձրացեալ է գեա. ևս. ոյր վասն ամենայն գլուխ ի ցաւս և ամենայն սիրտ ի տրտմութիւն և միաբանք մեք ի ցաւս և ի հեծութիւնս։

Արդ գհասարակութեան կոնդակն և ղյատ. կական դրութիւնս առ. քաղումս յանձնեցաք սիրելւոյն մերոյ Սերաստիոյ առաջնորդ Գրիգոր արհի եպիսկոպոսին ի բերել, իսկ զի նա ոչ զօրէ սուր սուրհանդակաւ հասանիլ, նորին աղագաւ և այս երրորդական գրութիւնք գրրել լաւ համարեցաք, զի յառաջագոյն ժամանեալ եղիցին ձեզ անդորրացուցիչք մտաց. այլն ամենայն ընդ Գրիգոր արքեպիսկոպոսին գրեցելովքն յայտնի լինին, այժմ այսքան ինչ յաղագս միաբանութեան բաւական. Ո՛ղջ լեր ի տէր և զօրութիւն տեառն ընդ քեզ միշտ. Ամէն։

ՃԻԳ. *Դանիէլ կաթուղիկոս առ Ներսէս եւ Մանուէլ վարդապետն։*

Գանիէլ աբեղայէ

հարազատիցդ սրբոյ Աթոռոյն սիրելի որդւոց Տեառնդ Ներսէս և Մանուէլ վարդապետաց ողջոյն.

Ձգիրդ ի Թօխատու յուլիսի 11 գրեալ էհաս առ իս և իմացայ ողջ ուրախ գնալդ և գհասանելդ Աստուած չնորհաւորեացէ. և ի Մանուէլ վարդապետէն դրեալքն ընդ որս և առ ի փաշային գրեցեալք հասին առ իս և ի. մացայ զոչ ինչ՝ լուիւ. և ևս առ այժմ չունիմ լուսալի տեղի ելանել աստի. և գնալ լայն. կամ աստ և կամ չնչքիլիսայն մնալ որպիսի և իցէ նկատեմ անցուցանել զաւուրս. և վասն իմ մի ինչ լիցի հոգալ բայց թէ մասրաֆ և կարեաց պէտ. իցէ թէ վերջին կայանքն իմ գիտեալ տեսանի Սէվան կղզին ըստ կայս՝ հաճութեան. միայն թէ հարկիւ գալստեան ողորմութիւն Տեառն Աստուծոյ ճահաւորիցէ. թէ պատրիարգարանն և թէ ամիրայեան գիր դրելոյ կարողութիւն չունիմ. ներեցէք գիր մի ըստ պատահելոյ ի վերայ Մշու և դիր մի լառաջ դրեալ միւսով ընդ գրոյս առաքեցի ձեզ. և այժմ մնացեալ է բանն առ կողմն Եփրեմ վարդապետին, իցէ թէ զկնի հրոյն և լոյս անտի ծագեալ ըստ եղեկեալ. մահտեսի Նիկողայոս և մահտեսի Ստեփաննոս Ամիրալն իբր միով հոգով ընդ մեզ. չունիմ այժմ գրել ինչ այլ գի գու որ գնացեր կենդանի գիտես. միայն կաչառատրութենէ ամենևին հեռի կեցիք. դի որ ինչ նովաւ՝ չեն ինձ բնաւ պիտանի. նաև Եփրեմ վարդապետէն գիր և մահսէր եկեալ ոչ ինչ նչանակէք, մինչ գրե թէ առ Փավլաչեան մահտեսի Սիմէօն Ամիրայն և առ Բաբալեան մահտեսի Կարապետ իցէ առաքեալ. և առ իս գրեալ գիր և օրինակք մահսէրաց առաքեցի ի Կարին. դի զօրինակս առեալ առաքեսցեն և Փիլիպպոս ամիրային լղեալ են որպէս դի և նա անտի լղեսցէ ձեզ. այլ երբ հասանիլն դուք գիտէք և լուսամ թէ մինչ լայս և լայն ձգտիլ Տէր տացէ զխնդրելին մեր, բայց դուք ալտի գիր և մահսէրաց և գրոց զօրինակն առեալ առաքեսջիք առ Եփրեմ վարդապետն մանաւանդ եթէ հնարել կարէք առաջին երկրորդ և կամ երրորդ մահսէրսն առ ձեռն բերէք. և որով կերպիւ և իցէ զապրուստն մեր. մինչ առի Եփրեմ վարդապետէն զգրեան մոռացայ առ ի դանեցեալ մահսէր և վկայականք լղել լետոյ լղեցի. շատ հարկաւոր գրեանք գոն. և երկրորդ գիր եպիսկոպոսաց առ իս և ամիրայեան լառաջնումն դրեալ և այլք աստ ոչ գոն լայդր Եփրեմ վարդապետին հասուցէք։

Աստուծով

Հասցէ ի մեծն Պոլիս ի ձեռս Սրբոյ էջմիածնի միաբան Ներսէս վարդապետին բարեաւ։

ՃԻԳ. *Թուղթ Մելիք Աբրահամու առ Դիւան Մաղաքեան։*

Բարձրապատիւ սիրելի եղբայր պարոն Դիւան

Չկեանս անդորրս ի տեառնէ չնորել քեզ միշտ ի նմանէ խնդրեմք և հալցեմք լաստուածոյ մնալ քեզ բարեզուարճ ցնծութեամբ ի սէր եղբայրութեան մերոյ։ Թուղթ եղբայրական սիրոյդ հասին առ. մեզ և զամենայն գրեալսդ ծանեաք։ Արդ զայս գրեմք սիրոյդ, զի դու ամրէիր արարեալ թէ Սրբազանն Կաթողիկոս հետ ծածուկ բարեկամութիւն ձգէ և դինի և բրինձ լուղարկէ իւրն և այլն։ Արդ սատկապէս ծանիր առ. այդ աստութիւն. զի ոչ սուրբ Աթոռն է ի ծածուկ տեզւոջ կառուցեալ և ոչ թէ Սրբազանն է ի ծածուկ նստեալ, այլ յայտնի և համարձակ քարոզի յամենեցուցն. Ապա ջր պիտի սա ծածուկ բարեկամութիւն առնէ դորա հետ այլ թէ ճշմարիտ բարեկամ է, պարտի դիւր հաւատարմութիւն յայտնի ցուցանել առ. սա, և ի սմանէ պատշաճաւոր և իւրավայել պարգեք ընկալնուլ, ոչ ի ծածուկ այլ յայտնի, վասնզի ծածուկն ինչաս քեզ ըստ ամենայնի եթէ սորա կողմից ի մէջ այլազգեաց և եթէ դորա կողմից առ իւր համազգին, զի ի մէջ Աթոռոյն և աթոռականացն հէչ ծածուկ բան կլինի՝ լաւ մտածեա զոր ինչ գրեմս կամ թէ վասն էր դոքա քրթմնջելով բան լառաջացուցին. և կամ ոյր լուսոյ աղագաւ մնան. զի զոր ընտրեալն էին լինիլ կաթողիկոս ահա նա կայ ի ոտս սրբազան տեառն մերոյ ամենայնիւ հնազանդութեամբ հպատակի իւրով ապստամբեցելովքն. և ֆէրմանի սուրբն եկն եւ իսկն եւս այսօր վազն կուգայ որ էրզրումէ մտեալ. եւ Գրիգոր վարդապետն եւս ընդ իւրեանս բերեն լաքտորեալ ի սուրբ Աթոռս եւ ամենայն աս եւ լիան եւ չարութիւնքն խափանեալ են. ուրեմն դոքա ոյր աղագաւ սպասել մնան եւ ծածուկ կամ յն զբարեկամութիւնս առնել որ մ.ղ ամենեւին չէ ընդունելի. այլ թէ կամին զճշմարիտ սէրն ցուցանել առ. սրբազան Տէրն մեր, ի յայտնի բարեկամութիւնս առնիցէն, ըստ վերոյ գրութեանս եւ մեք յամենայնի պատրաստ եմք ի ծառայել ապա ոչ զոր ինչ ինքեանք խորհեալ են եւ գիտեն, վասն ինքեանց բարոք պահեացեն մեզ չէ փոյթ վասն այսպիսեաց այլպէս է ճշմարիտ գրութիւնս զորս գրեցի քեզ բարեկամարար եւ դու որպէս պատշաճ վարկանիցես այնպէս խօսեացիս, անպակաս առնելով ի մէնջ զորպիսածանուց Թուղթդ հանդերձ մեղապատշաճ ծառայութեամբ եւ դու սէրդ մեր լեր ողջ ի տէր եւ ի ցնծութիւն եղբօր քոյ, ՄԷԼԻՔ ԱԲՐԱՀԱՄԻՆ։

Թիւն ՌՄԹԱ. եւ ի դեկտեմբերի ԻԸ լերեւանս։

Հասցէն, նորին Արժանապատուութեան պարոն Յովհաննէս Դիւան Մաղաքեանին սիրելի եղբօր մերոյ հասցէ բարւոյն, ի Թիֆլիզ։

1803

ՃԺԵ. *Թուղթ Դանիէլ կաթողիկոսի առ նն. պ. Ցիցիանով։*

✠ Ամենողորմած ինքնակալ կայսերն մեծի պալծառափայլ քնիազ բարձր գերազանց Պաւլ Դիմիտրիչ

Տիեզերահռչակ յաղթող կուսակալ ✠ և մեր ողորմած և բարերար Տէր

Աղօթարար ձեր և Քրիստոսի Քրիստոսի ծառայ տէր Դանիէլ կաթողիկոս-հայրապետ չնորհիւ Տեառն և բարեհաճութեամբ ✠ կաթուղիկոս ամենայն հայոց. և ծայրագոյն պատրիարգ Արարատեան աթոռոյն սրբոյ Էջմիածնի ըստ կրկնակի ընտրութեան սրբազան Սինօգին և բոլոր ազգին մերոյ ղողջոյն Քրիստոսական, և օրհնութիւն Աստուածային բաղում յարգութեամբ մատուցանեմ բարձր գերազանցութեանդ ձեր ուրախարար լինել ի տէր. ի գրութենանց գերապատիւ առաջնորդի կայսերական երկրիդ մերազանն տեառն Եփրեմի սրբազանի արքեպիսկոպոսի ի տէրութենէ նորին կայսերական մեծութենէն լուաք ղբարձրանալն ձերինդ բարձր կուսակալութեան ձերինդ բարձր գերազանցութեան ի բարձր իշխանութիւն պատուոյ մեծ կուսակալութեան. այլ և ի դրութենանց Թիֆլիղոյ քաւչաքի առաջնորդ մերս պատկեր կենդանի նահատակ Յովհաննէս արքեպիսկոպոսէն ծանեաք թէ ի սոյն միջոցիս ունիք մտանել ի տիրախնամ քաղաքդ Թիֆլիղ. լի չնորհօք մեծ ողորմութեան նորին սուրբ կայսերութեանն, վասնորոյ ջերմեռանդութեամբ մեծաւ չնորհաւորեմ նախապէս զգերագոյն ողորմութիւնս և զմեծ պատիւս զոր ունիք ի նոյն սուրբ կայսերութենէդ. չնորհաւորեմ և զմուտն ձեր յաղդր ի բարեճոխ քաղաքդ Թիֆլիզ որոյդ քալլափոխն եղիցի ի վերայ փունջ վարդից և ծաղկանց ամենայն. Ապա լայտ առնեմ բարձր գերազանցութեան բարերարիդ մերոյ զի թէպէտ ի նարդենս ժամանակի մահաւ չափ վտանգ է մեզ մերձեցուցանել ըզգրիչս ի թուղթ, այլ ապաւինելով ի չնորհս ձեր ողորմութիւն առնելով ծածկէք ի հակառակիրաց մերոց՝ համարձակեցուք գրել զի յամի 1799, մինչ էաք մեք յաթոռ պատրիարգութեանն Կոստանդնուպօլսոյ. հասանէ վախճան Արարատեան պատրիարգին տեառն Ղուկասու. և ըստ օրինի եկեղեցւոյս Հայաստանեայց հոգևորականք և մարմնաւորք մեծահանդէս սուրբ սիւնհոդոսիւք զմեզ ընտրեալ լաջորդութիւն նորա՝ առաքեցին առ մեզ զբազմակնիք մահսէր համահաճութեան իւրեանց ձեռամբ Դաւիթ եպիսկոպոսի Թիֆլիզեցւոյ և ազգն մեր ևս հաճեալ ընդ այն՝ մատուցին և ինքեանք չհամահաճութիւն իւրեանց ձեռագրով և կնքով իւրեանց. այլ սակայն՝ Յովսէփ Արքեպիսկոպոսն կողմանցդ ձեռնտուութեամբ Դիւթրդի արքային և պարոն Թամարով դեսպանին՝ զրկեալ զմեզ՝ լինքն կոչեաց զայն կոչումն և մինչ նա ևս վախճանեցաւ ի Թիֆլիզ յամին 1801. զրձեալ նոյնպէս մեծահանդէս սուրբ սիւնհոդոսիւք վերստին ընտրեալ՝ հանդերձ բազմակնիք մահսէրօք՝ առաքեցին հրաւիրակս մեզ զերկուս վարդապետս մինչ ի Թօխաթ. և զերկու եպիսկոպոսունս մինչ ի Կարին ընդ որս և յայնժամ թող զմ կնիքս վերոլիշեալ Դաւիթ եպիսկոպոսի. էր յատկապէս և իսկական ձեռագիր նորա առ մեզ դրեալ զայս օրինակ թէ՝ Աստուած է որ կոչէ զքեզ ի հայրապետութիւն հայոց. և ով է որ Աստուծոյ կամացն կալցէ հակառակ, վասնորոյ յորդորիչ լինիմ և հրաւիրեմ՝ զի ելեալ եկեսցես և այլևս Այլ մինչ ի գալ ժամանեալ

մեր ի Գալաղիտ՝ սուն առ. Դաւիթ եպիսկոպոս աշակերտացն Ց՝վսէփ՝ Դրիգոր վարդապետի, որ այժմ է ի Ս. Պ. Բուրիա և Կարապետ վարդապետ, որ նստի այդր ի Թիֆլիզ, խոստան սլով մերազանց գողանալ զկամս նոցա, և ձեռնտուութեամբ նոցին վատնեալ զմեծ գումար կալից Ցովսէփալ. որ էր այդր. և զբաղմամեալ հարստութիւն աթոռոյս մերում. կաշառեաց զխանն երեանու և ընդդէմ օրինաց մերոց և եկեղեցւոյ և կամաց սուրբ միաբանութեանն և բոլոր ազգի մերոյ՝ նստաւ յաթոռ Պատրիարգութեան պարսկական բռնի իշխանութեամբ և առ. ի պատրուակել զիւրն եղեռնագործութիւն՝ հրաստարակեաց ընդ ծագս տիեզերաց թէ կալսերական բարձաւ հրամանաւ՝ գործեցան այս ամենայն։

Սմին իրի բողոքեցաք մեք առ սուրբ կալար. և նա արդարացոյց զդատաստան մեր, որ և չնորհօք ողորմութեան նորին ընկալաք զբարձրահրամանն ղրամատն նորին կալսերական մեծութեան, և զկրկին հրովարտակ ի տէրութենէ Օսմանցւոց հանդերձ քանիցս բազմակնիք մահսէրօք համահաճութեան աղգի մերոյ առ մեզ և առ խանն երևանու. որք ամենեքին են ի գուռն ողորմութեան առ գերապատիւ Եփրեմ Արք եպիսկոպոսն՝ զոր կացուցեալ եմք նորնով կալսերական վիճակի։

Այլ սակայն քանզի պնդադոյնս կապակցեալ էր Դաւիթ զխանն երևանու թէպէտ և միաբանք ամենեքին երկիցս լարուցեալ ի վերայ Դաւթի՝ քարկոծ արարին զսենեակս նորա. և մտեալ ի սուրբ եկեղեցին նզովեցին գնա առաջի սրբութեան սեղանոյն, և արձանացուցեալ զայնս ի գիր՝ կնքեալ տարածեցին յաշխարհ ամենայն. և ապա բոկոտն զիմեալ յերևան զբողոք բարձին առ խանն և ի յամառութիւն նորա զվեղարս իւրեանց թօթափեալ ի տիղմ՝ լաւ համարեցան ի բաց կալ ի միաբանական կրօնից անտի. քան ինալ ընդ իշխանութեամբ Դաւթի և ընդունել զպատրիարգութիւն սորա. այլ խանն և ոչ այնոքիւկ համոզեալ՝ առաւել ես խստասրտացաւ՝ և զառաջեաւ սրոյ արկեալ զքահանայակարգ սուրբ միաբանութիւնն՝ վերստին բոկոտն և բացագլուխ գարձոյց առ Դաւիթն զորոյ զպատճառն ամենայն հանգամանօքն կարէ պատմել լրիւ լիչեալ Ցովհան. նէս Արքեպիսկոպոսն՝ որ քաջ գիտէ զամենայն անցեալսն զառաջինս և զվերջինս մինչև ցայսօր գործեցեալս։

Եւ ալսպէս դէմ եդեալ կալսերական մեծ ողորմութեանն՝ (որ առ մեզ) առաքեցին ի Կոստանդնուպոլիս խանն երեանու զմի պարսիկ նախարար իւր. և Դաւիթ զՍտեփանոս եպիսկոպոս Թիֆլիզեցի՝ որք գնացեալ ժամին՝ պարսիկն ընդ թևօք զափու քահանասուն իւսուֆ փաշայ վէզիրի և լիչեալ եպիսկոպոսն ընդ թևօք թամարով դեսպանի բնակեալ ի սենեակ Գէորգ Ազալեկովի Ղրիմեցւոյ, որ բանակատար է անդ ի կողմանէ հալոյն Ղրիմալ և այլոց. և հաւատարիմ Դրիգոր վարդապետին վերոյ գրեցելոյ։

Եւ ի ջանադիր լինիլն նոցա ի ձեռն ասացեալ զափու քահասուն և զրիմեցի Գէորգ Ազալեկովին զօրութեամբ ղրամոյ հեթանոսական իշխանութեամբ ընկենուլ զԴրիգոր Պատրիարգն Պօլսոյ և զմեզ, լիչեալ պատրիարգն և իշխանք զգածեալ խափան գործեցին առ ժամանակաւն. և ինքեանք հանին ի դրանէ տէրութեան օսմանցւոց զհրովարտակ՝ զի առաքեցեն առ մեզ կալել զՍտեփանոս եպիսկոպոս. և զայլ միւս ես համախոհ նորին որ էր ի զմիւռնիայ. այլ պարոն թամարով զեսպանն։

Զայն հրովարտակ տիրեաց նոցա վեց ամիս՝ պատճառելով թէ կալսրն վասն նոցա զհրաման է գրեալ առ Դանիէլ Պատրիարգն ներել նոցա. վասն որոյ ես առաքեմ զնոսա առ նա թարց հրովարտակի աքսորանաց և այլն։

Եւ ահա առաքել նորա ըստ խոստանալ այս կղզ. որ ի նոյեմբերի անցեալ ամին սուրհանդակ եկն առ Դաւիթն առաքեալ ի Ստեփան եպիսկոպոսէն և ի զրիմցի Գէորգ Ազալեկովէն՝ որով գրեալ էին զայս աւետիս՝ թէ հնարեցաք. զի զԴրիգոր պատրիարգն Պօլսոյ և զԴանիէլ կաթողիկոսն բերցեն առ ձեզ կապեալ.—Բայց մեք լուսով կալսերական ողորմութեան անդառնալի զրամատին՝ այն ինչ ստութիւն հաւարեալ զալապիսի դրութիւն նոցա կալաք ի տեղի մեր աներկիւղ միամտութեամբ՝ ահա յանկարծակի եկեալ՝ առ գդեչխան Բալազիտու մի պարսիկ նախարար երևանու խանին և մի վարդապետ ի հաւատարմաց Դաւթի գնեցին զմեզ ի նմանէ, իբրև

զգերի անարգ և ըերեալ ի սուրբ աթոռս ե-
գին ի դիպահոլ անտես ի մարդկանէ։

Իսկ յետ քանի ասուրց՝ մինչդեռ մահու
ակնկալութեամբ մնալաք մեք արգելեալ ան-
գէն՝ եկին պահանջեցին ի մէնջ զձեռագիր
ինքնալօժար հրաժարանաց՝ ըի նովաւ վարա-
դուբեայնի զանօրինակ եղեռնագործութիւն
և անօրէն բռնութիւն իւրեանց. և պատրեցին
զազգն ըի արգելանից՝ն ի վրէժխնդիր լինե-
լոյ. այլ և զարձուսցին ի մէնջ զողորմութիւն
ինքնակալ յաղթող կայսերութեան ասնու պա-
տիր խաբէութեամբ ցուցեալ՝ թէ ինքնակամ
հրաժարեցաւ նա. ըի որով և զբարձրահրա-
ման զրամադ նորին ստացին ի հաստատու-
թիւն քնաւորութեան իւրեանց այլ թէ ոչ. որ
տէրութեան Օսմանցւոց պէրաթն արկին զմեզ
ի կաթողիկոսութիւնէ, և ունին ընդ իւրեանս
թևամբ իւրեանց կալանաւորեալ. ըի պիտոյ է
նոցա գրութիւնն իմ թէ ես ինքնակամ հրա-
ժարեցայ. իսկ ըի գործք իւրեանց անօրէնու-
թեամբ են, կամին ասնու օրինաւոր ելևեցու-
ցանել. բայց և մեք քանզի անհնար էր մեզ
արտաքոյ կամաց նոցա չահել զկեանս մեր և
մերայնոց. ըստ կամաց նոցա՝ գրեցաք զիր՝
որպէս և հարկէին և ասնու գնեցաք մեք
զկեանս մեր և ամենից մերայնոց. և ազատս
պահեցաք ի մարդասպան լինելոյ. զնա ինքն
Ղազիր բռնաւոր կաթողիկոս. և մինչ եկին ի
նորին գերազանցութենէ ենարալ Լազրովին
զ·քք առ խանն Երևանու, միջնորդութեամբ
նոցա և օժանդակութեամբ բարեպաշտ հայոցն
Երևանու հանին զմեզ յարղելարանէ անտի
հրամանագրով խանին, զկնի որոյ կամ նստեալ
ի մենարան մի ի մէջ միաբանութեան, ունե-
լով ապաւէն նախ աստուած. յետ նորա
զպատկերն նորին՝ ի լերկրի ողորմած կայսրն
սուրբ. և զկնի զմեծ բազուկդ նորին զկայ-
սերականի մեծութեան ըզհզօրաձեռն մեծ կու-
սակալդ. թէ ողորմել մեզ և եկեղեցւոյ մե-
ըում լայց ելեալս հզօր զօրութեամբ. և ազա-
տեսցեն զմեզ ի փառս յարդացելոյն Քրիստո-
սի և ի պատիւ մեծութեան անուան աստուա-
ծոյն երկրաւորի ողորմած սուրբ կայսերն
մերոյ։

Այլ սակայն ամենայնիւ Դանիէլ կա-
թողիկոս ասնու ամենայնիւ ոչ բաւականա-
ցեալ, այլ և զրեալ է առ սարդարն պարսից
թէ ահաւասիկ թշնամին մեր որ զրամատու-
ուսուց կայսեր զինեալ ընդ դէմ չահին, և
եկեալ չանալր ընկենուլ զմեզ ես և զերկիրս
զայս տալ նոցա։ կալեալ ունիմ ի ձեռին ի-
մում, այլ չկարեմ չահել ի բազում ժամանակս
ուստի ծանուցանեմ ձեզ. զի առաքեալ տար-
ջիք զաս եալլն եալլն։

Ապաքէն պարտաւորեալ ասնու մահու
չափ երկիւղիս հալածութեացք սովին անարիր
գրութեամբ. որպէս առաջի պատկերի նորին
կայսերական մեծութեան լալս առնել բարձր
գերազանցութեան ձեր զանբերելի վիշտս և
զառաապաղանս ի բռնութենէ ինքնընտիր կա-
թուղիկոսին Դանիէլ. որով նախապէս աղա-
չեմք ձեռն տալ և աղատել զմեզ յայսպիսի
դարանակալութեանց տորա, ի փառս Աստու-
ծոյ, և ի պատիւ մեծութեան անուան նորին
սուրբ կայսերութեան։ Ապա լալս առնեմ՝
զի թէ առաքեցէ նա առ ձեզ զայն իմ ձե-
ռագիրն զոր անդէն յարղելարանի մահու
սպառնացմամբ ըստ հաճոյս իւր գրեցեալ
բռնութեամբ էառ ի մէնջ. և կնքել ետ ե-
զելոց նովին խաւտութեամբ. և կամ թէ գրել
տացէ նոյնպէս զայլս ես ըստ այլ և այլ միտս
ի հաճոյս իւր. այնք ամենայն անընդունելի
լիցի առաջի բարձր գերազանցութեան ձե-
րում և յամենայն դատաստանի. քանզի ահա-
ւանիկ տուոյ պատմութիւն անթագչելի ե-
ղեռնագործութեան տորա տպագրեալ իսկ են
ի Կոստանդինուպօլիս 1802 լամի տեառն։

Ուստի մերովս գրութեամբ և վկայու-
թեամբ մի լիցի Դանիէլ ստանալ զիրաւունս.
և արղարացուցանել զբան իւր առաջի նորին
կայսերականի մեծութեան կամ ի դատաստա-
նի՝ որ գնեալ զմեզ արծաթով ի ղրանէ տէ-
րութեան օսմանցւոց և բղեչխէն Զաղազիտալ
եղեր զմեզ առ ինքն իրրև զստրուկ մի ա-
նարդ, և ունի արդ ի սասանութեան ահիւ
պակուցեալ զմեզ հանդերձ ամենայն միւրա
նութեամբ, և բոլոր ազգաս մերով։ Այլ եթէ
կայսերական մեծութիւնն չան արարեալ զի-
րաւամբք զոր ի նախկին բողոքելն մեր առ
եկեղեցւոյ մերում ուղիղ ակնարկութեամբ՝
առաւել քան զՍողոմոնին, և վերատին ներե-
լով նմա. գործացէ զողորմութիւն իւր ի
մէնջ ի լեկեղեցւոյ մերոյ, և յողորմելի միա-
բանութենէն և յԱթոռոյս, որ յԱրարատ կամք
իւր եղիցի օրհնեալ։ Իսկ եթէ ոչ որպէս ըն-
կալեալ՝ զբողոք զրկանաց մերոց իրաւունս

արար մեզ, որով և մեք հաճութեամբ բոլոր ազգի մերոյ ընկալաք ի գլուխս մեր զծածուկն քահանայապետութեան. աղաչեմք՝ զի թէ կամիցիք՝ գիտեմք զի կարող էք՝ այլ արարէք մեզ ի չնորհս կալաւեր. իսկ եթէ ոչ՝ խնդրեմ, լսանեսջիք նորին կալաւերականի մեծութեան, զի ըստ իրաւանցն՝ և ողորմութիւն արարեալ ազատեսցէ զմեզ ի կապանաց աստի մերոյ ողորմութեամբ աթոռս մեր յանօրէն բռնութենէ պարսից. որով և մեք եմք և եղիցուք բոլոր միաբանութեամբ և համային ազգաւ և եկեղեցեաւ մերով մշտապարտաւոր աղօթարար վասն անգին կենացս նորին կալաւերականի մեծութեան. և վասն ողորմած և բարերար բարձր գերազանցութեան ձերոյ. Զայլն ամենայն կատարեալ լրութեամբ ծանուցանէ մերս պատկեր կենդանի նահատակ Յովհաննէս պատրիարքն. զոր կացուցեալ եմք առաջնորդ կողմանցդ հայոց. ուստի ես միշտ զնա ինքն յանձն առեալով բարձր գերազանցութեան ձերում,

Մնամ բարձր գերազանցութեան ձեր բարեաց պէտիգ և աղօթարար նորին կալաւերական մեծութեան ողորմութեամբն և կաթողիկոս ամենայն հայոց և ծայրագոյն պատրիարգ Արարատեան աթոռոյն սրբոյ Էջմիածնի.

Յոհաննէս ԴԱՆԻԷԼ կալանաւորեալ.

ի 1803.
և ի լուսվոթի 2.

ՃԻԳ. *Թուղթ միաբանից ս. Էջմիածնի առ կայսր Ռուսաց.*

Աստուածապսակեալ օգոստափառ. ինք նակաղ կայր մեծ՝ ամենաբարեպաշտ թագաւոր և ողորմագունեղ տէր մեր՝ կեցցէ յաւիտեան.

Որոյ յամենախոնարհ աղօթաւոր ծառայից, ի միաբան պաշտօնէից Քրիստոսակառոյց Աթոռոյս ամենայն հայոց սրբոյ Էջմիածնի հրաշակերտեցելոյ ի գաւառս Արարատեան. ի նուաստ երկոտասան արքեպիսկոպոսաց. պատկառ գիմօք և ակնակոթ երկիր ղածութեամբ յատարարութիւն և աղերս լինի առաջի արփարագատ բարձր աթոռոյ ձերինդ տէրութեան. Զի յորմէ հետէ սուրբ աթոռս հաստատեալ և կառուցեալ է ի սրբոյն Դրիդորէ Լուսաւորչէ մերմէ անտի, ի սմանէ մինչ լիւրաքանչիւր ժամանակի առ հարիւրին պահանջելոյ խնդիր և աղերս մատուցեալ են առ տէրութիւնս թագաւորաց, միշտ և հանապազ լսեալ են, և ի կատարումն հասեալ. և այս՝ ոչ միայն առ թագաւորութիւնս քրիստոնէից, այլ և օսմանցւոց և պարսից. Բայց ահա բազմից եղև՝ որ թէ մեք բոլոր միաբանք սրբոյ աթոռոյս, և թէ չյիշակալ երկրացիքս մեր՝ քահանայք, իշխանք, մելիքք, իւղբաշիք, և այլ բազմութիւն մերազնէից զրաղմակնիք աղերսական արզայս մատուցաք և զպատկանաւոր խնդիրս արարաք առ ձերին Աստուածահաստատ բարձրագահ աթոռ թագաւորութեան վասն անփոփոխելի կալոյ հայրապետութեան գլխոյս և տեառնս մերոյ տեառն Դաւթի սրբազան կաթուղիկոսիս. և առ այս՝ յանցելումն ամին ես յեղբարց մերոց զերկուս երևելի եպիսկոպոսունս առաքեցաք՝ գալ ի սպաս ձերինգ բարձրութեան, և ծանուցանել բերան առ բերան զխնդիրս մեր. սակայն անարդիւն եղեն, և զղիւրութիւն ինչ ոչ ընկալաք ի վարանմունս մեր. Զի եպիսկոպոսքն մեր գնացեալ մինչ ի Թիֆլիզ քաղաք, ուր և չգտեալ զմուտ անցանելոյ գալոյ ի դուռն ողորմութեան ձերոյ արգելեցան անգ մինչև ցայսօր (Իսկ արզայքն մեր ևս թէ չհասին ի յոտս ձեր, և թէ հասին. բայց չկամեցայք ունկնամատոյց լինել ձայնի աղաչանաց մերոց և զչնորհ քաղցր ակնարկութեան ցուցանել առ մեզ նուաստութիւն, ոչ գիտեմք). Եւ զի՝ ահա երկարաձգեցաւ միջոցն՝ յորում հանդերձ սակաւաւոր խղճալի ազգաւ մերով իբրև ի ծովու ծփիմք և տատանիմք ալեօք զանազան փորձութեանց, և հանդերձեալ եմք ի կորուստ մատնիլ, վասն որոյ համարձակեցաք վերստին ևս աղերսել ձերինգ ողորմածագունեղ Տէրութեան զի թերևս ելցեն մեզ իրաւունք յարդարութեան Աթոռոյ ձերմէ. Զանգի՝ այս երկու ամ է՝ յորմէ հետէ համակամ հաճութեամբ մերով ընտրեալ և յատկացուցեալ եմք, և չնորհիւ Ամենասրբոյ հոգւոյն օծեալ եմք զՏ՛ր Դաւիթ Սրբազան կաթուղիկոս մեր ի հայրապետութիւն Սրբոյ Աթոռոյս և բոլոր ազգիս հայոց. և իրանէ հետէ այս սուրբ Աթոռս Էջ-

միածին է կաթուղիկոսարան համարին Լուսաւորչակրօն Ազգի մերոյ՝ և ոչ այլ ուրեք։ Եւ ի Նախնի Սրբոց հայրապետաց մերոց կանոնս ունք փակեցեալ է աստուածպէս՝ որ ի սմա օծեալ կաթուղիկոս ոչ պարտի փոփոխիլ մինչ չև ցեղումն չնչոյն։ Զսոյն զայս նախնաւանդ կանօն ծանուցին հաստատակուբեամբ համարին Ազգ մեր Թագաւորին Օսմանցւոց, և նա՝ ի վերայ առաջնոց ֆերմանացն զորս տուեալ էր ի վերահաստատութիւն հայրապետութեան Սրբազան Տեառնս մերոյ՝ նոր ի նորոյ ևս ետ յանուն սորա պինդ ֆերմանս և զՆշանս։ Եւ ընդ Ազգ մեր որպէս յառաջմանէ հաճեալ և հաւանեալ էին ընդ հայրապետութիւն սորին, նոյնպէս և այժմ հաճելով, գրեցին դարձեալ առ սա զրազում հաճոյական մահաբեր և գրազում չնորհատուրական թուղթս, բոլորովին յանձն առնելով՝ զի բաց ի սմանէ զայլ ոք չընդունիցին ի կաթուղիկոս։ Եւ այսպէս տեսանել մեր զսէր և զմիաբանութիւն Ազգին մերոյ առ մեզ, և զկրկին հաստատութիւն Սրբազան Տեառն մերոյ, մինչ կայաք բերկրևալք և խնդամիտք հանդերձ բնաւիւք մանկամբ նորոյ Սիոնի, յանկարծ իմն հանդիպեցեալք նորագոյն իմն տրտմութեանն։ Զի ի Թիֆլիզ եղեալ գործակալք ձերինդ Թագաւորութեան, յառուկ մարգով թուղթ դրեալ էին ներանձ առ իշխողն մեր՝ իբր թէ հրամայեցեալ իցէ ի բարձրութենէ ձերմէ՝ որ սոյն այս Տէր Դաւիթ օրինաւոր կաթուղիկոս մեր իջցէ յաթոռոյն, և Դանիէլ եպիսկոպոսն սպօրինաւորութեամբ նստցի կաթուղիկոս։ Բայց մի՛ք լիրաւի բնաւ ոչ կամիմք զայս և լաւ համարիմք մեռանել, քան զանց առնել զկանոնօք նախնեաց մերոց՝ և թողուլ չար օրինակ այլոց։ Ուստի և ահա մեք երկոտասան խոնարհ Արք եպիսկոպոսք հանդերձ Սրբազան հայրապետաւ մերով եկեալ ժողովեալ եմք ներանձ քաղաքս, և դիզերիմք ի դրունս տաճկաց, զի թերևս հնար լիցի մեզ անխափան պահել զօրինաւոր կաթուղիկոս մեր։ Եւ ի ներեանս աստի ինքնակամ յօժարութեամբ գրեցաք զայս խոնարհական արզ առ ձերդ Տէրութիւն, որում և ունիմք աղերսել զայս ինչ։ Ո՛վ ամենաբարեպաշտ թագաւոր, եթէ փոփոխելով զհայրապետութիւն մեր կամիք զզօրութիւն հզօր ձեռին և բարձր բազկի կայսերական մեծութեան ձերոյ ցուցանել առ հարուածեալքս և վշտացեալքս, և առ հաւատարեալքս հողոյ և մոխրոյ՝ մեք ունք ենք զի միօք երեսաց ձերինդ ամենաբարձր կարողութիւն, որ ահա լսմենայն աշխարհի է լալտնի. և իբրև զարեգակն ճառագայթիւք բարձրութեան բացափայլի։ Զոր Տէր հաստատուն և անդրդուելի պահեսցէ լաւիտեանս ժամանակաց, և առաւել ևս առաքեսցէ և զերահռչակեսցէ ի ծագաց մինչև ի ծագս երկրի՝ լուրախութիւն համարին ի Քրիստոս հաւատացելոց։ Իսկ եթէ կամիք ողորմութիւն առնել մեզ և սրբոյ Աթոռոյս իջեցելովք ձեր զՏէր Դաւիթ օրինաւոր կաթուղիկոս մեր լԱթոռոյն, և նստուցանելով ապօրինաւորութեամբ զԴանիէլ եպիսկոպոսն այն ոչ թէ ողորմութիւն և բարերարութիւն լինելոց է. այլ աւերումն Աթոռոյս, փեռեկուռումն ազգիս՝ և եղծումն օրինաց և կանոնաց մերոց։ Ապաքէն մեծապատառ աղերսիս խընդրեմք ի կայսերական մեծութենէ ձերմէ, և երեսաննկեալ աղաչեմք ողորմիլ մեզումս նուաստութեան, և գթալ և այց առնել տառապելոցս ի փառս խաչելոյն Քրիստոսի, և մի մատուցանել զլսելիս այլոց աւելորդաբանութեանց։ Ահա ազգ մեր որք կան ի Կոստանդնուպոլիս և ի չՀզմիր քաղաքի, գրազմակնիք մահաբեր առաքեալ են առ մեծութիւն ձեր, ծանուցանելով զհաճութիւնս իւրեանց առ սրբազան Հայրապետս մեր. և մերս բոլոր միաբանութիւն ևս հանդերձ չըրջակալ երկրացովքս առաքեմք զարզս, բայց ի Թիֆլիզ քաղաքի ընդ երկուց եպիսկոպոսաց մերոց արդիլեալ են և ոչ հասանին ի սպաս բարձրութեան ձերոյ, եթէ կամեսջիք, կարօղ էք առ ձեռն բերել զայնս, և այնոքիւք որոշել զձշմարիտն ի ստոյն. և յայնժամ որ ինչ հրամայել լիցի ի բարձրութենէ ձերմէ՝ ընդունելի լինելոց է մեզ նուաստից, իսկ թէ թարց քաջ վերահաստատեսցի հաճեսջիք զայլ ինչ առնել, այն ևս կամք ձերին մեծութեան է։ Բայց պատիւ թագաւորի զիրաւունս սիրէ. վասնորոյ կրկին աղերսեմք Արդարադատ Աթոռոյ ձերոյ, իրաւախիրատ զդուզիղն կացուցանել. և ողորմութեամբ կատարել զայս մերս հայցուած. այս է՝ հալածելոյ, զի Տէր Դաւիթ կաթուղիկոս մեր միասցէ անխափան ըստ կանոնաց մերոց։ Որով և մեք անդադար աղօթող լիցուք առ

Տէր վասն երկարութեան կենաց կայսերիս մեծութեան ձերոյ։

Ո՛չ լեր ով Աստուածասէր թագաւոր ի քաղում պարագայս ամաց ի պարծանս խաչին Քրիստոսի, և ի լուրախութիւն ամենայն հաւատացելոց. և Սրբոյ Էջմիածնի Աթոռոյս երկոտասան Արք եպիսկոպոսաց նուաստիս տոհմակնքոգաց ի Թղթիս։

Գրեցաւ լամի կենարարին մերոյ 1803. և ի փետրվար ամսոյ ի լերեան քաղաքս։

Աթոռակալ Սիմէօն Արք եպիսկոպոս։
Ժամօրհնօզ Ալէքսիանոս Արք եպիսկ.
Աստուածատուր Արք եպիսկոպոս։
Յովակիմ Արք եպիսկոպոս։
Սահակիանոս Արք եպիսկոպոս։
Գրագիր Անդրէաս Արք եպիսկոպոս։
Բարսեղ Արք եպիսկոպոս։
Սահակիանոս Արք եպիսկոպոս։
Յովհաննէս Արք եպիսկոպոս։
Աբրահամ աստապատեցի Արք եպիսկ.
Աբրահամ Տաթևացի Արք եպիսկոպոս։
Գէորգ Արք եպիսկոպոս։

ՃԻԼ. *Վասն արտաքսման Դրիզոր վարդապետի ի Պետրբուրգու Սանկտ Պետրբուրգ օբը պօլիցմեստր ալարոն զեներալ մայօր եւ նշանակիր Նրթէլին։*

Մինիստրն ազինքն խորհրդակիցն Ներսնալին իրակութեանց Ղրաֆ Վիքտօր Պավլօվիչ Կուչուպէյն ծանուց ինձ վասն ամենաբարձր հրամանի. լալտնեցելոյ նմա պարոն Քալինովի սովէթնիկ Մուրավիովիս լաղագս խնդրանաց հալոց Արքիմանդրիտին Դրիզորի մատուցելոյ ի Նորոյ իւրոյ իւր մեծութեանն առ ի վասն վերագիտելոյ դիրակութիւն իւր որ ըստ հալոց Արք եպիսկոպոսին Եփրեմայ՝ ոչ ի Նօվօրօսիյին կուրեռնեւրում, այլ ի Սանկտ Պեդրբուրգ։

Բայց վասն վերակրկնելոյ անփոփոխ կատարումն Ամենաբարձր հրամանի նախապէս լալտնեցելոյ նմա գնալ փութով ի Նովօրօսիյ կուրերնատն։

Առաջարկեմ ձերոյ գերազանցութեան զանփոփոխ ամենաբարձր հաճութեան անլապաղ կատարումն որոյ ի կատարելն տալցես ինձ զեկուցումն։

Ղևներալ լեյտենանտ Ղրաֆ SOLUSOH
1803 փետրուար 12 աւուր
ի Ս. Պետրբուրգ

ՃԻԼ. *Թուղթ Դանիէլ կաթողիկոսի առ Կն. Պ. Ցիցիանով։*

Բարձր գերազանց պալծառափայլ կնեազ Պաւլ Դիմիտրիչ

Ողորմած Տէր մեր։

Մինչգեռ ակն ունէաք մեղս լուսոյն զոր լետ Աստուծոյ ունիմք առ ամենողորմած ինքնակալ կալսրն, ահա եկն եհաս առխանն համքաւ վերագարձուցանելոյ Թամրազէյիկազապաշչուն Սուպելեանց հանդերձ գրովք նորին պալծառափայլութեան մեծ եպարքոս վաօրնցովին։ Էհաս և գիր ի Մազաքիէլեան Յոհաննէս Բէգթաքէկովէ և այլոց առ Դաւիթն և առ խնամի նորա և համախոհն մէլիք Աբրահամն՝ թէ ահա վերագարձուցին գԹամրազ էչիկազապաշչին հանդերձ ռուսով և զանազան գրութեամբք սակայն ամենեքին իբրև ըզբնդանօթ առանց վառօթի և զնդակի՝ սակ միայն բանք են եղծականք, որովք կամին ահացուցանել զձեզ. այլ զուք մի զարհուրիցիք ի դատարկ բանից նոցա և զիանն ևս խնդամուտ արարեալ, որպէս լառաջն. այժմ ևս տուք զարձուցանել զնոսա առանց ահի և երկիւղի գիւացեալ ոչինչ ունին ստքա առնել ձեզ այժմ Այլ և զգուշացեք Պանիէլին զի մի գնա փախուցեալ քերցեն ի կոզմունսա, և այլն։ Եւ առ այսոսիկ ահա տէր իմ ողորմած վերագամանեաց մեզ հակառակն լուսոյ մերում քանզի իսկ և իսկ հակառակորդք մեր խօսեցան ընդ խանին զոր ինչ և խօսեցան, և գնել ետուն զմեզ ի քանտ ի մէջ քերդին ուր կամք մինչև ցայսօր մահու ակնկալութեամբ։

Բայց իբրև եկին հասին Թամրազ էչիկազապաշչին և ռուսն և մատուցին մեզ գնեցուկն լուսոյ մերոյ գիր ողորմութեան ողորմած տեառնէդ մերում. իրաւի, կրկին հաստատեցաւ ըստ լուսոյ մերոյ և թեթևացան մեզ լալմնետէ քանաք և նեղութիւնք մեր, քան-

ղի եղանակ գրուածոցն յուսացուցանէր մեզ զմեծ փրկութիւն մեր և եղբարց և հարց մերոց, առ որ պարապատրեալ եղեալ զերեսս ի վերայ հողոյ զոհացայ զամենամեծէն Աստուծոյ և օրհնեցի զանգին կեանս պատկերի նորին ի երկրի որ ամենողորմած ինքնակալ կալսերն մերում և բարձր գերազանցութեանն պայծառ կուսակալիդ նորին ողորմած բարերարիդ մերոյ, զոր զօրացուցիչ զօրութեամբ բարձրացուսցէ տէր Աստուած առաւել քան զՋօրաքաջել ի վերայ ամենայն թշնամեաց Ամէն։

Արդ թէպէտ զամենայն զբանն Երեւանու Մահէտ խանին և Նախջևանու Գեալպալի խանին ունէին պատմել ի հարկէ Թամրաղն և ուսան քալց քանզի մեզ ես հրամայեցին գրել, մեք ես թէպէտ գիտեմք զի առաւել անպատճառ է, այլ զի բանտի նոցա կամք ի դուռնս մահու և չեմք կարող քացառել հրամանաց նոցա պարզապէս անճարացեալ վերատին ահա զվնդիրս նոցա վասն Շէրիֆ փաշալին լիշեցուցանեմք առաջի բարձր գերազանցութեան ձերոյ ոչ իբրև խնդիր, այլ որպէս յայտարարութիւն։

Սակայն յաւուկ խնդրանօք ի բանտէ ատի զօրութեամբ հողոյ կալեալ քզանցից հանդերձի պայծառ փիալլութեան ձերոյ, զայս աղերս մատուցանեմ ձեզ, զի թէպէտ և մեզ հասցէ մեռանիլ ա՛ստ ի կալանս մեր, վերստին արիւն իմ հեղեալ յերկիր բողոքէ առ արդարադատ ինքնակալ տէրըն Կալսըր, չթողուլ զիրաւունս մեր թշնամեաց խաչին Քրիստոսի, զի մի պարծեսցին անօրէնք յանօրինութեան իւրեանց և մի կարասցեն ասել հեթանոսք թէ ուր են Աստուած քրիստոնէիցն։ Աղաչեմ ուրեմն մաղթեմ, կամ այցելու լինել վասն անուանն Քրիստոսի, և կամ յայտնել նորին սուրբ կայսրութեան զայս կտակ աղերսանաց իմոց զի ըստ առատ ողորմութեան ողորմեալ ննջեցելոց և կենդանեաց քահանայակարգ ողորմելի միաբանութեան մերում և տաճարին Աստուծոյ Արարատեան Աթոռն սրբոյ Էջմիածնի, այլ արասցէ անպատճառելի զօրութեամբ իւրով. քանզի մեծ է արդարև՝ թէ ողորմութիւն նորա հալէր ի սա հնամեան Արարատս մինչև յերկինս բարձրասցի. և չուք նորա զգինս արեանն Քրիստոսի և զսուրբ տաճարն Աստուածածնէ աստ ոչ ապահովացուսցէ և թողեալ մինչ իապառ ճենճերիլ բոցով անօրինաց։

Այլև՝ քանզի ոսոխն մեր Դաւիթ ամենահնար ջանայ միշտ հնարել զեղանակ հաստատուն պահելոյ զբռնաւորութիւնն իւր, առ այս զի զարձուսցէ ի մէնջ ղողորմութիւն նորին կայսերական մեծութեան և արգելցէ զվրէժխնդրութիւն ամենայն բարեպաշտից հողեորականաց և մարմնաւորականաց՝ մինչդեռ ունէր զմեզ ի բանտի իւրում, մահու սպառնացեալ մեզ էառ ի մէնջ զդիր որպէս ինքնակամ յօժարամիտ հրաժարանաց հարկ էր ղրել և առ զբազում զբազում ինչ հաճոյական իւր. այլ ի ժամանել եկողացն այսի հետզհետէ, փոքր մի զհոգի առեալ մեր զանց արարաք զնոքօք մինչև ցայսօր իսկ զի այժմ ահա աւելի քան զառաջինն բռնացաւ նա ի վերայ մեր և միաբանեաց ընդ իւր զխանն Երևանու մինչև դնել եղ այսպէս ի բանտ, ուր հանապազորդ չանդիման աչաց մերոց կերպարանեալ երևի մահ մեր. կարելի թէ վերատին որպէս զառաջինն բռնաբարեսցեն զմեզ դրել որ ինչ հաճոյ է ինքեանց, քանզի որպէս յառաջագոյն նախ քան զբերելն մեզ բռնութեամբ առ ինքեանս անտի ի Գայլիտու գրեալ եմ յաւուկ յատուկ գրովք առ նորին մեծութիւն արդարակորով ողորմած կայսերն, առ ամենայն երևելի հոգևորականն և մարմնաւորականն ազգի մերոյ և առ առաջնորդն տեղւոյդ մերս պատկեր կենդանի նահատակ Յոհաննէս Արք եպիսկոպոսն զի յայտնեացէ ումմ արժանն իցէ յայդր, այժմ ևս ահա այսու յայտնեմ զարձր գերազանցութեան ձերում զառաջինն իմ և խնդրեմ, զի թէ զառաջինն զոր ղրեցուցեալ բռնութեամբ էառ ի մէնջ, և թէ զայլս զորս նորոգ չայսմհետէ դրել տացէ ըստ հաճոյս իւր, այնք ամենայնք անընդունելի լիցին առաջի նորին կայսերականի մեծութեանն և առաջի պայծառափայլութեան ձեր։ Եւ յամենայնի զատարանի. և, որպէս դրեալ եմք յառաջագոյն, մերովս բանիւ կամ գրութեամբ մի կարասցէ նա ծածկել զճշմարտութիւն իւրացն և հանգիստացուցանել զանօրէնութիւն իւր. քանզի երկիւղիւ մահուն ակամայ գրեմք և ոչ կամաւ. և այն մանաւանդ՝ զի մահ նորա ոչ միայն անձին իմոյ, այլ բազմաց հոգևորականաց և մարմնաւորականաց ունի

տիրել լետ իմ, վասն որոյ անճարացեալ գրեմք զոր ոչն կարեմք և զոր անմասն է ի ճշմարտութենէն։

Նաեւ յանձն առնեմ ողորմած բարերարիդ մերում զհարազատսն սրբոյ Էջմիածնի և զսիրեցեալ վշտակիր եղբարսն մերում միաբանութեան զՅովհաննէս արքեպիսկոպոս ասուածնորդն քաղաքիդ, զԴրիզոր արքեպիսկոպոս պատրիարգն Կոստանդնուպոլսի և զ ներսէս վարդապետ ծեռնասունն մեր՝ որք անդստին ի մանկութենէ իւրեանց անձնագիրք են ի վերայ սրբոյ աթոռոյն մերոյ, և յատկապէս աղերսանօք խնդրեմ, զի ունիցիս զգոսա ի ներքոյ խնամոցդ, և զամենայն որպէսն մահու և կենաց իմ, և ամենայն հոգևորականաց և մաքրաւորականաց մերոց գուհարցեալ ծանիցես ի դէպ լինին որք լսապէս հաստ գոլով ամենայն իրացն հանգամանաց կարող են պատմել ամենայն ստուգութեամբ բերան առ բերան։ Զանդի՝ մնք յաւահետէ այլ ևս կամ կարողանամք առ ձեզ գրել ինչ՝ և կամ ոչ, զի չկայ մեզ այլ ես յոյս կենաց, եթէ ոչ ամենաբաւական ողորմութիւն Աստուծոյ և օգնականութիւն ձեր վաղվաղակի հասցեն յօգնութիւն։ Ուրեմն զոր գաք լուիցէք և ծանիցէք ի դրելոյ բարեկամաց և ծանօթից, և զոր յատնեսցեն պատճառիւք ձերում զհաստատելոյն մեր, զայնս խնդրեմ հեզութեամբ ունկն մատուցանել և լսել, և ըստ այնմ առնել զոր ինչ վայել իցէ աթոռոյ ողորմութեան նորին կաթողիկոսական մեծութեանն և բարձր գերազանցութեան ողորմած բարերարիդ մերոյ, ողջ լեր աեր մեր ողորմած և մեք եմք և մնամք վասն կենաց և վասն յաջողութեան բարձր գերազանց պատճառիւք բարերարիդ մերում ջերմեռանդ աղօթարար

Նորին կաթողիկոսի մեծութեանն կաթուղիկոս ամենայն հայոց և ընտրութեամբ սրբազան Սիւնեոդոսին հոգեւորականաց և մաքրաւորականաց աղգի մեր ծայրագոյն պատրիարգ Արարատեան աթոռոյն սուրբ Էջմիածնի, խոնարհ ԴԱՆԻԷԼ բանսարկեալ։

1803. փետրուարի 27. ի մէջ ընդդին Երեսնու ի բանտի իմում.

ՃԻԹ. Նորին Դանիէլի առ Յովհաննէս արքեպիսկոպոս Թիֆլիզոյ։

Սիրելի եղբօրդ իմոյ տեառնդ Յովհաննէս արհիեպիսկոպոսի. և տեառնդ Ներսէս Աստուածիմաստ վարդապետի փրկչաւանգ ողջոյն։

Ի մարտի 6 եկն Թօրոսն և եբեր զգրբեանն լերեկոյին պատահեալ Գեղամացոյն մեծի ոգեգալ է ուղիղ դիտելով վանսորոյ լու եղեալ ի գուռն և ի գալն առ իս որպէս և հարկն պահանջէ փութով Ռ. գրեանքն Աբջի Բաբալին լղեցի առ սուլթանն Ջէզալիրջոց. ապա ի հրամանէ հաստն առեալ եկին սուլթանն և Միրզայ Թաթոսն խնդրել զգրբեանս և իմ այնպէս գիտելով թէ մեծ վաճկէքն Թամրազ էշիկ աղաստունն է ընդերցաւ Միրզայ Թաթոսն որ խանչինն էր. գալն և գիմ գիրն և Քեալբալալի խանի հաւերէնն տարին ընդերցան և զինն բերին չգիտեմ թէ Քալբալալի խանչինն ետուն թէ ոչ. և ի բերելն գրոց սուլթանին պատուէր եբեր ի խանչէն գրեա ասելով ասէ, թէ ի պատուի եմ և ի պատուի լինելոց եմ և չեմ տալոց ի ձեռս Դաւթին զանապատն ի սուրբ Հռիփսիմէն և կամ ուր կամիս անդ նստուցանեմ, եթէ Շերիֆ փաշայի բանն չըլինի խալիֆայ չեմ առնելոց զքեզ. այլ այնպէս լինի և այնպէս մնաս. իսկ եթէ փաշայի բանն կատարեցաւ, էջմիածինն ձեզ տամ գնալ և չինել եթէ գրեան քո մարգիկն հոգան որ ուռուսն զբալ փաշային տերութիւն չանէ զօշուն չտալ երբ որ ինձ էլ չի անուամ չանէ. Թողու ես զօշունս քաշեմ Շերիֆ փաշայն տանիմ Ախալցխայ դնիմ. ապա կատարի կամք ձեր. և տահիկ մի վարձուի և դուքանն դրածն Դաւթի գրովն գնաց ի Պօլիս որ փաշայի բանն հոգա զայար չունի մինչև ցայսօր բազում աղերսամատոյց աղաչանօք քովին և մէլիքն դեգերին ի դրունս խանին առնուլ գիս ոչ տալ խանչն. նմանապէս և Քեալբալալի խանն ըստ լսելոյ նախատանօք գարձուցանեն. վանսորոյ և վշտանան թէ առնուլ գնաս ետուր որպէս ի սկզբանն այնպէս են խընդրեալ. ի տալն թէ տամք և տուր. իսկ Դեօվլէթլի խանն ի սոցանէ աղաստելով եբեր գիս ի բերգն և այնպէս կամ պատուով որպէս և էի ցայսօր. կարծի թէ նավրուզիս ինձ ևս

խալաթ տալ. քայց Ցուլիանոս լաթոռն դըրնալն տանի լանա... և թէ ինչ են կրնայ մերալինք առաւել քան թէ կենցաղավարիլ թէպէտ և լուսամ թէ թալիղալ ասնուցում վասն ոչ դիպչելոյ, իսկ ես զլեռուացն ունիմ լոյս և ակնկալութիւն տեսանել զերեչասկն Աստուծոյ ի պաշտօնեայս. ասա քաղում ինչ խօսին զօրք եկն և գալ վալը ի վերոյ խօսին և տոքա ոչ մեռեալ են և ոչ կենդանի. միայն սիրով կամին զհաշտելն դոցա ընդ ինքեանց և դուք չանադիր լերուք որ հաշտութիւն լինի. խանն և սուչ չունի ինչ որ կտնէ զերէ տղալքն կանալքն և եղբարքն ի կողմն պարսից կան և նոքա խաբնակել ասեն մանաւանդ թէ Աբդլլալ խանն ասա պատհասպան է վասն այն խուսափէ. ասա թէ ոչ ինքն ևս և ամենայն երկիրն զբաբրին ինքեանց միանալն ընդ դոսա ցանկան քանզի անկարելի ես է թարց դոցա. խանն դիր դըրեաց աջի Բաբալին զի խորհեալիք ընդ միմեանս որպէս ես դրեալ եմս. դիր կալ. տուք աջի Բարալին. Թոքոսին ես աստ եղիղին եմ տալոց տուօղ չկալ որ պարտք անեմ՝ ստիպեն դիս խանին և փեալքալալի խանին ընծալ տուէ պարտք տուող չկալ. Աստուածատուր վարդապետին դրեցի 100 ոսկի տալ գիտեմ որ մեռնիլն կուզէ տալն չի ուզեր. որե լալամ հետէ օր աւուր մնամ և սպասեմ բարի ալեցելութեան Աստուծոյ ի ձէնջ մեծ կուսա կալիդ որ ե ոգջ լերուք ի չնորհս տեսանն զօրացեալք ի միխիթարութիւն տրտմակիր ԴԱՆԻԷԼ աբեղալի կաթուղիկոսիս հալոց։

1803 մարտի 3

ի կապանս։

Գերերջանիկ և սիրելի եղբօրն իմոյ տեսանն Գրիգոր պատրիարգին ղեղեալի սիրով ողջոյն մատուցանեմ. նաև լոյժ սիրով Աստուծոյ Մինաս եպիսկոպոս որդեկին իմոյ ողջոյն և մեր Կարապետ օրհնեցելոյն յԱստուծոյ ողջոյն տամ և ասեմ ձեզ թէ Կարապետն ինչ որ ասէ լաէք և ալնպէս արարէք։

ՃԻ. *Նորին Դանիէլի առ կայսր Ալէքսանդր Պաւլովիչ։*

Ամենատորմած տիեզերահրամանի ինքնակալ Ալէքսանդր Պաւլովիչ Օգոստոս տէրը կալար։

Ցետ Աստուծոյ լոյս մեր ի տէր։ Գանդի տուլթանն օսմանցւոց լառաջադոյն ըստ խնդրոյ ազդին մերոյ պատուհաց զմեղ կրկին հրովարտակօք իւրով, և լետոյ սիրել զսակ գնոյն ըստ խնդրոյ դաւաճանին մերոյ վաճառեաց զիս և զեղբալրն եմ զԳրիգոր պատրիարգն Կոստանդնուպօլսոյ հանդերձ ամենայն եկեղեցեաս մերով իբրև զղերի առնարդ, վազ ուրեմն լալտնեալ եմք մեծութեան ձերում անտի ի Պալաղիտոս, մինչդեռ դնեալ զմեզ երկրորդ անգամ ի բդէչխէն տեղւոյն բերէր զմեզ առ ինքն ոսոխն մեր անուանեալ հոգևոր Գաւիթ անգութ։

Իսկ այժմ ալտս գրով քանզի իբրև անտի լետ Աստուծոյ լոյս մեր ամենեցուն դուք էք ի տէր, լալտնեմք առաջի ողորմած աթոռոյ տուբբ կալարութեան ձերոյ՝ զի անարգանօք բերել զմեզ Գաւիթ առ ինքն ի տուբբ էջմիածին, իսկ և իսկ սրկ զմեզ յարգելոյն ուր միացաք անտեսանելի լումնքէ գաւառս 32, մահու ակընկալութեամբ։ Նհաս անդ կապանօք ի նոյն աւուրս և Գրիգոր պատրիարգ զոր ևս առ ժամայն իջուցին ի կրկնալարկ մշտագիլեր լանլոյս սենեակ. ուր և նա միաց որպէս զիս նոյնպէս մահու ակընկալութեամբ։

Բալց իբրև առաւ ողորմութեամբ ձեր թամբազ Ալսպելեան առաքեալ ի հաւատարիմ զօրապետաց լաղթող կալարութենէդ, եկն առ խանն երևանու յալելութիւն մեզ, խանն ևս որպէս թէ համոզեալ զառաջինն, ետ հաննել զմեզ ի քանտէ անտի և տարաւ առ ինքն ի երեւան. այլ և կարճեալ զիչխանութիւն բռնաւորութեան Գաւթի և կնքեցուցեալ եպիսկոպոսաց զդրունս սենեակաց պատրիարգարանին, տարաւ և գնա լերևան և արգել անտէն. և այսպէս պարսկական հնարիւք բացեալ ինքեան զդուռն տանալոյ զալլս ևս միացորդս գանձուց Աբրահամեան Աթոռոյն սրբոյ էջմիածնի ապա փոխեաց զեղանակ բանիցն և հնարեցաւ վերադարձուցանել ընդ մի պարսիկ նախարարի իւրոյ զթամբազն

Ուսպեղեան ասու եղանակաւ բանից՝ թէ որպէս կայսր կամի կանգնել զԴանիէլն որ արկեալ է զձեռն իւր լաթու ողորմութեան նորա եւ ևս կամիմ կանգնել զՇերիֆ փաշային Ախլցխայու որ փախուցեալ անկեալ է առիս. ուրեմն թէ իսկապէս կամի կայսր խնամ առնիլ Դանիէլին, թող նախ զօրապետք նորա օժանդակեսցեն ինձ զի ես տարեալ զօրօք Ախլցխայ հաստատեցից լիչխանութեան իւրում զՇերիֆ փաշային, և ապա մեք և վոխաղարձ բարեկամութեամբ նոցին նստուցուք զԴանիէլն լաթու իւրում. ապա թէ ոչ, չեմք մեք ստուկք կայսեր թէ անմիջապար պարտաւորիցեմք ծառայել հրամանի և կամաց նորա, նա մանաւանդ զի և ոչ իսկ վաղել է մեզ թէ զձեռատուն[ի]ն մեր կլուրեսցուք ձեռամբ մերով։

Եւ առ ալս կարգեցին զի և մեք զսոյն գրեալ թախանձեոցուք. սմին իւրի խնդրեցաք ի խանէն և հրամանաւ նորա հանել եւտուք զԴրիդոր պատրիարգն յանդիս քանտէն և քերաք առ մեզ ընդ ձեռնատունին մերով Ներսէս վարդապետի, այլ նշմարեալ թէ կատարած իրին որպէս լուզիղ նպատակ անդր հալի ի մահ մեր, ըստ որում զկնիքսն մեր հալեալ էր Դաւիթն պատճառ առեալ հաճեցաք զմիտս խանին և ի տեղի կնքոց որպէս վկայք գրութեանց մերոց առաքեցաք և զնոսա ընդ Ուսպեղեանին ի Թիֆլիզ մի զի ինքեանք ապրեսցին, ընդ հովանեաւ մեծութեան ձեր, միւս զի աղատեալք ի բռնութենէ բռնակալաց պատմեսցեն պարզապէս վասն եղանակի կատանաց մերոց և սատանայ թեան ամենայն հոգևորականաց և մարմնաւորականաց ազգիս հայոց և այնպէս ի դիմաց մեր ամենեցուն մազթեսցեն զողորմութիւն աստուածանման մարդասիրութեան սուրբ կալութենդ ալեկոչ լինել կենդանեաց և ննջեցելոց մերոց և ազատել զազգն մեր և զսուրբ աթոռն Արարատու լանօրէն բռնութենէ պարսից և Դաւիթ անուանեալ հոգևորականին։

Այլ իբրև նոքա գնացին, լետ ոչ բազում աւուրց լուր եհաս լականջս խանին թէ պատճառափայլ կուսակալ պարոն Յիլիանովն ոչ հաճեալ ընդ բանս ձեր վերադարձոյց զարձեալ լետս զթամրազ Ուսպեղեան հանդերձ միւս այլ ռուսաս և գրովք նորին բարձր գերազանցութեան մեծ եպարքոս պատճառափայլ Վօրոնցովին, որովք պարտաւորէ զձեզ թարց այլ և այլ պատճառաց նստուցանել լաթու պատրիարգութեան զԴանիէլն համաձայն կայսերական մեծ ողորմութեան առատ կացելոյ ի վերայ նորա, և առ ալս իսկոյն լատնեալ նենգաւոր խանին զխորամանկութիւն իւր, էառ ի Դաւթայ զոր ինչ և կամեցաւ լառաջ քան զժամանել կողացն տարեալ զձեզ ի մէջ քերդին Երևանու ի բանտի և կացուց ի վերայ զտասն պարսիկ զինուորս, ուր արգ այդպէս կամք ահաւասիկ կալանաւորեալ հանդերձ իմովքն և համարիմք թէ ալս իցէ մեր վերջին կէտ՝ և լրացեալ իցէ չափ ժամանակի կենաց մերոց քանզի գրեցեալ եղանակաւն եկին Ուսպեղեանն և ռուսն և արհամարանօք վերադարձուցան ունայն. և ևրևի թէ որպէս Սուլթանն օսմանցւոց և բգեչխն Պայազիտու, նոյնպէս և խանն վաճառելոց էջէ զմեզ ի վերայ ոսոխին մերոյ, որ իրաւի եթէ արասցէ որպէս և երևեցուցանեն, և ոսոխն մեր ի սմանէ գնեսցէ զմեզ դարձեալ երրորդ անգամ չկարծեմք թէ այնուհետև միւս անգամ տացէ մեզ տեսանել զարև. ըստ որում վաղուց ևս արիւնաթաթաւ իջուցեալ էր նա զձերութիւն իմ ի գերեզմանն, եթէ ոչ էր նուաճեալ զանօրէնն խաստութիւն նորա սաստ տուին, իսկ թէ ի սմանէ ևս գնեալ ընդարձակեսցէ ի վերայ մեր զիչխանութիւն բռնաւորութեան իւրոյ ապա այնուհետև վասն ոմ արդեօք կամիցի հակեցուցանել զիս։

Զունիմք ասել և անդր զկարծիս լուսոյ կենդանու[ի]եան մերոյ, քանզ եթէ Աստուած հրաշագործեսցէ. վասնորոյ ահա ըստ այնպիսի համարման մերոյ, որպէս վերջին գիր զալ մատուցանելով առաջի ամենողորմ աթոռոյ մեծութեան ձեր, մատուցանեմ զվերջին օրհնութիւն իմ իբրև զընծայս նշանակիչ անկըշռելի չնորհակալութեանս վասն անպատում ողորմութեանդ առատացելոյ ի վերայ իմ և ի վերայ համօրէն ազգի իմոյ և արարատեան աթոռոյն սրբոյ էջմիածնի ևս և ի վերայ զեռապատիւ եղբօր իմոյ կողմանցդ մերազանց առաջնորդ եփրեմ Արք եպիսկոպոսին. Այլ և հանդերձ ալսու ամենայնիւ վստահացեալ վերստին ի Քրիստոսատիպ մարգասիրութիւնդ յանձն առնեմ աթոռոյ ողորմութեան ձերում զսուրբ աթոռն Արարատու և զողորմելի միա-

բանութիւն նորին և յատկապէս իսկ զմիակ պարծանքն՝ ամենայն հոգեւորականաց աղդիս հայոց զնփրեմ բարձրապատիւ գերահռչակեալ արքեպիսկոպոսն, և խնդրեմ, դի թէ մեռեալ իցեմ ես և թէ կենդանի՝ այն չէ ինչ բաւ միայն զի մեծութիւն ձեր ղչնորհ և զքաղցր ակնարկութիւն ձեր աննուաղելի և անփոփոխ ունիցիք և առաս ողորմութեամբ ձեր լալց ելեալ աստուածապատուէր մարդասիրութեամբ ազատեսջիք զսուրբ Աթոռն էջմիածին հանդերձ ողորմելի հոգեւորականօք և մարմնաւորականօքն հայոցն Արարատու, ի փառս մարդասէր խաչելեալն Քրիստոսի Աստուծոյ որով և ողորմութեամբ նորա եղիցին աստուրք անդին կենացդ բերն զաստուրս երկնից. ամէն։

Այժմէն զկնի զորպէսն մահու և կենաց իմ և ամենայն ընդ իս եղեալ տառապեալ հոգեւորականաց և մարմնաւորականաց Գրիգոր պատրիարգն և Յոհաննէս Արք եպիսկոպոսն Թիֆլիզու քաղաքի և Ներսէս վարդապետ ձեռնասունն մեր որք մերձ են առ ձեզ և ի մէջ ազատութեան, այն է որ նոքա բարւոք տեղեկացեալ ծանուցանեն գերապատիւ Եփրեմ Արքեպիսկոպոս առաջնորդին և սրբոյ էջմիածնի վէրքիլ հարազատ պօղոսեանին տէրութեանդ Մինէ Լազրիլ Լազրեանին և նոքա յայտնեն առաջի ամենողորմած Աթոռոյ մեծահրամանն ինքնակալ լաղթող կայսրութեան ձերոյ։

Ուստի մեք լսելով վասն ամենայնի յայտ բան ճօրալ երջանկի բովանդակեմք զլրումն ըզձից հոգւոյ և մարմնոյ՝ մերոյ՝ թէ եղիցի աչք անդադարեալ սուրբ կայսրութեանդ միշտ քաղցր ի վերայ անալցելու ազգին իմոյ և տառապեալ Աթոռոյն Արարատեան և ողորմելի միաբանութեան նորին, և ես ոչ ևս իցեմ։

Ողջ լեր ով ամենողորմած օգուտէ սուրբ թագաւոր և սակ պարծանաց ազգաց քրիստոնէից և մանաւանդ յոգնատատան ազգի հայոց և իմ իսկ գլխովին՝ որ եմ և ամենահանդերձ ողջոյն հոգեւորականաւք և մարմնաւորականաւք միշտ բարեացապարտ աստուածանման ամենողորմած սուրբ կայսրութեանդ։

Բարեհաճութեամբ սուրբ կայսրութեանդ և երկիցս ընտրութեամբ սրբազան սիւնհոդոսին կաթողիկոս ամենայն հայոց և ծայրագոյն պատրիարգ Արարատեան աթոռոյն սրբոյ էջմիածնի իսկ յաչախանօք դատաճանի իմոյ ամէնարժան պատժապարտ ի մահ դատապարտեալ խոնարհ Դանիէլ կաթողիկոս։

1803 մարտի 3 ի բանտի իմում ի մէջ քերդին Երեւանու։

ՃԻԱ. *Թուղթ Դանիէլ կաթուղիկոսի առ Յովհաննէս արքեպիսկոպոս Թիֆլիզոյ։*

Փոխանորդիդ իմոյ և կալսերական բարեհաճութեամբ հաստատեալ ծայրագոյն կառավարիչ բոլոր հայոցն Վրացստանու և էլիսաբէթապօլու և իմիրէթու տեառնդ Յոհաննէս արքեպիսկոպոսիդ սիրով և կարօտիս ողջոյն։

Շահզադէն չահին արդ էր արարեալ ընդ Միրզա Բզուրգին այժմ հրամայն եւ որ դնամք ի սուրբ Աթոռն և նստիմք եթէ տէր յայողեացէ այսոցիկ պատճառանէ կրկին և կրկին խնդիրք Հիւսէյին սարդարին Երևանու որոյ խնդրանօքն զմեզ արձակեցին. այժմ վասն կարեաց հարկաւորութեան մերոյ տեղըս օրհնեալ պարոն Մևսրոպէն խարճի արդ լիսուն պաճախլի ոսկի որ դու յայդր վաթսուն ոսկի հատուցանես պարոն Մեսրոպալի եղբայր պարոն Յակոբին Մելքոնն հետ տարի որ անտի գրկեն յայդր մօր էր չինել տուր որպէս և գիտես, Միրզայ Ռուստումն լաւ է բայց քան տալ աստ և անդ չեզև. Շահզադէն և Միրզայ Բզուրգն ասացին թէ Մահմատ խանին ինչ որ կուտալիք մեզ տուէք ասացի թէ եթէ գնդի կողմանէն կուտալինք գեղն չինվի բաչխատինալ միայն ես իմ ձեռքես էկածի չափ փէշկեաշ կողորկեմ երբ որ լինի. ամենց որ չահին կամ չահզադային Ահմատ խանին և Հիւսէյին սարդարին միրզայ Բզուրգին ընծայի հոգս տեսնելու է ումիդ գուս ես միացեր. և կամ այսու երդարով թողին զմեզ որ երեանու ոսահաթն գրկէք գալ և գու դիտես և ողջ լեր ամենայն ցնծութեամբ

ի սէր Դանիէլ կաթուղիկոսիս հայոց և սըրբոյ Էջմիածնիս
գրեցաւ 1803
ե ի մայիսի 4
ի Թարվէզ։

ՃԻԲ. *Համի Մխեսերի զրուխինն առ վրացի Ստեփան վարդապետն.*

Այդ լիցի սրբութեանդ, Ըսմալէլ ղադրը անձնաս էկաւ գիրերը բերաւ, իմացաք ձեր որպիսութիւնն փառք Աստուծոյ անվընաս աթոռը մտերես մնաց որ տեղս քանի մի բան խոստացեր էիր մոռացացէիր. մինը Ներսէսը Դանիէլին քովը մընալու չէր. երկրորդ Գրիգոր պատրին մուքուքու վար պիտի տալին մինալ բանը երկարելու չէր, և այլն 3 հատ լօրհնութեան գիր պիտի ուղարկէիր անունները գրածիս, չը մոռանաս ղերէ ամէն տեսացիս կուզեն այս մոտերըս քալուէ տեղին կու խապիմ չը մոռանաս ուղարկիս, տեղըս ամենայն ինչ լաւէ կենէ 2 չար ամիրալք չարութեան կըհետեեն մինը հաճի Ստեփանը մին Աղնաւուր օղլուի որդին կարապետը Աստուծով մին բան կառոզչեն անել կիսաբնեն, ես սիրելի հայր իմ հրամանքդ հոս էիր ամենայն ինչ աչօքդ տեսար. որքան ալ նեղութիւն քաշեցիր. և Գէորգ աղալին որքան զադացը տեսար, ասել պէտք չէ, չատ պարատւ տակ մտաւ. լաւ գիտես հրամանքդ ալ խոստացար. որ գնացացիս պէս առաջին բանս փոխ հասուցանեմ ասիր, գիտեմ որ միտքէդ հանած չունիս հեմ չես մոռանար, ահա լատուկ Պատր պէկ գազարը ուղարկեցիք փողի համար, հետապը ամէն ինչ հրամանքդ լաւ գիտես, նաւես հետևիս, սրբազան վեհապետին ասես ամեն ինչ որ գրեր էք, Պատր պէկին տաք ուղարկեք որ Գէորգ աղան նեղութենէ աղատի. չնորհակալ լինի. տեղիս մարգոցը բնութիւնը լաւ իմացար. ով որ փոխ տուերէն, ամէն օր Գէորգ աղալին մէն կուզեն. այլ ինչ ասեմ հրամանքդ լաւ գիտես, ականատես ես այս բանին պիտի որ հետևիս, գլուխ տանես սրբութեանդ ձեռօքը եղացէ լաւ գիտես այլոց ասիք ով ինչ գիտէ Պատր պէկին հետ որքան փոխ աներիք պիտի որ ուղարկիս. սուրբ վեհըն գրացէ որ Գալուստէն և Գէորգէն և Իզմրրի Մարաիրոսէն փոխ առնես, հրամանքդ լաւ գիտես որ Գալուստին քովը փոխ չկայ. Գէորգը որքան փոխ ունէր Գրիքոր պատրին առաւ Մարաիրոսը լաւ գիտես որ ձեռքի փողը տալուն ետու պատրքի տակ ալ մըտաւ կալուսային փողը չարհաջի Նիկողոսին քովն է Դանէլ համար խարջեցի կասէ ան ետկի բանէ, Բետրեպուրքէն Գրիգորը կը գրէ որ Նրիրեմը կը դատի Դանիէլը Թիֆլիզ փախուցանել նպատիք հետեւիք չրլալ որ ձեռքէ հանիք Թիֆլիզ փախճի. Քէ Թիֆլիզ գնալ չատ չար բաներ կու ծնանի. և այլն Ներսեան քովէն բաժանէ չատ լաւ կու լինի. Քէսպան Թամարովը բողվեցաւ տեղը նոր Քէսպան էկաւ չատ լաւ մարդ է. մեր կողմը կըգատի. ողորմած Թագաւորին մեր կողմը չատ լաւ գրեա մին լաւ օրհ. նութեան գիր պէտք է որ գրեք Ըսմալիլ զագարին հետ ուղարկաց Դանիէլի տուաց ձեռագիրին քոշիան մարտի մէկին Բէտրպուրք Գիրգոր վարդապետին ուղարկեցիք պիտի Թարգմանէ ողորմած Թագաւորին տալ չատ լաւ կու լինի. ան ուղարկաց մեծ մահատրը զարմաներեն[26] Թագաւորին տվերեն կարդացեր նմայեր է մինեքը օսմանցու Թագաւորը ընդուներ է ես ալ ընդունեցի ասեր է չըլալ որ վախիք լացներս Թիֆլիզէն կալաւեցկին խանի կխնդրէ. Դանիէլին տերութիւն կանէ եղեր, չըլալ որ վախիք օրէնքով խօսիք հայոց ազգը որին կը կամենալ նա վեհապետ է, ահա բազմակնիք մահատր ասէք փոխ իննալելու ժամանակ չէ ամենայն ինչ կկատաջանալ տես նոքա ամենայն ինչ փողով արին, հրամանքտ լաւ գիտես 500 քիսէն տվել խարջեցին Նիրեմին խարճացէն պաշխալ նոքալ ինչ որ խարջեցին քամինին տուին մերը ինչ որ խարջիք վաճառականի հետապ սերմալէ գրած կու լինիք Աստուծով աչողէ, Գէորգ աղալին եղաց գրերուն մէջը իմդալ դրաց չունի ֆեսֆեսէ չանիք ժողովուրդը կոնդակ կուզեն Ըսմալէլին հետը ունչու չը խրկեցիք Պատրին տաք որ քերէ չուտով. մեր Պետրոսը աջողդ համբուր եղբօրը որդին Նիվիրակին հետ ուղալկես պատրն Խարսեղը աջողդ համբուր, և այլ տղաքը, ընդհանապէս մեր ազգին Խաչատուրը աջողդ համբուր, Մարտիրոսին բարև կանեմ. սրբա-

դան վեհապետին աջոյն համբոյր, և զօրհնութիւնն իւնդրեմ ասել Դանիէլին չատ իքրամով Թող չպահէ զերէ ասպես պահացին հայմար Դանիէլը նստեր է կասեն և ալլն։

1803. մրտ՚՚ի 5։ Ձեռամ խոնարհ
խալաթիէն Զին- պարկն Ծուլ մահտեսի
ճիրլի խանն։— ՄԻԵՍԷՐ ԳԻԼ. ՕՂԼՈՒ

ՃԻԳ. *Թուղթ Ներսէս աբեղայի առ Ցակոբ, Ներսէս եւ Սուքիաս աղայս։*

Սիրեցեալ եղբարցդ իմոց՝ Ցակոբ աղալիդ և Ներսէս աղալիդ, այլ և հաճի Սուքիաս աղալին (որ ի Կարին), բազում կարօտիւ ողջոյն մատուցանեմ։

Թէպէտ եկուլ զմեզ վիշապն, բայց ողորմութեամբն Աստուծոյ վերստին եթուք ըստ ցօնանու մարգարէին. ի մէջ Աստուծոյ, իակ զի բազում մինոց եզև, որ եկաք աստ ի քաղաքս և ոչ գրեցաք, պատճառն այն էր, որ բանն հաստատի սպա գրեմք զի ուրախ լինիցիք։

Թէպէտ զազան տնօրէնն զբազում չարիս է անցուցեալ ընդ մեր սրբազանն, բայց ահա ողորմութեամբն Աստուծոյ ետնս ժամանակ ալեկոծութեանն. լորում որպէս և գրեալ է պարոն Ցիցիանովն՝ զոր օրինակ տեսանես, ողորմութեամբն Աստուծոյ ի 20 ապրիլի ամսոյս մեք ես ընդ պարոն Ցիցիանովին դընամբ հարցանել յերևանու խանէն և Դաւթէն զպատճառ անզգամութեանց իւրեանց. որով անզգամացան նոքա և ընդդէմ դարձեալ կայսերն կամաց՝ յաւելին անցուցանել և զայնքան չարիս ընդ սրբազանն մեր։

Ձառն առին, և ճառեցիքն փախուցեալ մնացեալ են ի պարս ձեռն մէջ, և զնեռումն խնդրեն, զի ողորմութիւն արասցեն և մի կոտորեսցեն զինքեանս. և խոստանան որ ծառայ լինին այնու եղանակաւ, որպէս որ բուն Ռուսաստանու երկիրն է. ըստ որոյ և ռուսի զօրքն միշտ մնալոց են լիւրեանց մէջն նստած։

Կայսեր զրամատն անդառնալի է վասն սրբազանին մերոյ՝ եթէ մեր սրբազանին մահ ես պատահեսցի կենաց, չարն կաթուղիկոս չէ, այլպէս իմանալք հաստատուն։

Զիք Դրիգորն Պետրոսբուրգիցն աքսորած են մէկ տեղ մի՝ Նօվօթօսիու ասացեալ, ուր մնալոց է մինչև ամենայն հնազանդ տալ, ապա երթալ ի յաւիտենական կորուստն։

Աստուծով՝ այսու զկնի մերձ ընդ մերձ միւս դիր մեր ի սրբոյ աթոռոյն գրեմք, միամիտ լինիցիք, որ ողորմութեամբն Աստուծոյ հէմ ապրեալ եմք, հէմ զմեր թշնամիքն ամէն՝ տեսանելոց եմք ի պատուհասի իւրեանց։

Ներեսջիք մեզ ըստ ամենայնի և լիջիք ողջ ի ուր իմ, որ եմ և ձեռամք վասն ձեր

1803 յապրիլի 5

ի Թիֆլիզ կարի վառ միշտ աղօթարար
ի ժամ երեկոյի։ ՆԵՐՍԷՍ ԱՌԵՂ.ԱՑ

ՃԻԴ. *Թուղթ կն. Պաւլ Ցիցիանովի առ Մելիք Աբրահամ*

Պատուասէր Մելիք Աբրահամ՝ համարն քննակչաց և պարագալից եկեղեցական դասուց, և աշխարհականաց հայոց ազգին երևանու։

Եհաս առ իս համբաւ, զի ընտրելոյ յազգէն ամենայն հայոց և ըստ բարեհաճութեան լերկուց ես կարողագոն և փառաւորագոն յամենայն երկրի՝ Ցիւզերակալաց հաստատեալ բարձր ամենապատուական Դանիէլ կաթուղիկոսին՝ ըստ աստուածեան այլ և այլ ամբարիշտ մարգկան, եզեր ի նոցանէ նեղութիւն և վատաբաղդութիւն։

Եմ ես ամենայն սրտիւ կատարօք Աստուածաշունչ հրամանի նորին կայսերական չքեզափառութեան ամենողորմ բազաւորին իմում. որով բարեհաճութիւնն կալ յայսմ ինամս տուողութեան, զի հաստատեսցի Դանիէլն՝ կաթուղիկոս ի վերայ Արարատեան Աթոռն Պատրիարգական։ Վեհարանի։

Ունիմ զանչարժ մտախոհութիւն, զի վատարեցից զկամեցողութիւնն զայն՝ անատենանելի հրաշագեաց Ջօրութեամբն Ռուսաստանու. որ սպառէ լերեսաց ամենայն երկրի զթշնամիս և զհակառակորդս իւր։

Պարտաւորութիւնն մարդասիրութեան իմով և կապակցութիւնն ընդ քրիստոնէութեան՝ հրաւիրեն զիս, զի յառաջագոյն յայտնեցից ձեզ. զի եթէ արդարև եղեալ իցեն վերոյիշեալ Դանիէլ կաթուղիկոսի՝ զինչ և

իցէ նեղութիւնք վատաբաղդութիւնք և նախատինք անպատկանք իւրումն բարձր աստիճանի. յայնժամ ոչ միայն առ ի զգաստանալ՝ ընտելացեալ՝ ստիպ նորին հասցէ իրաւազատ թագաւորին և կայսերն իմոյ բարկութիւն, յաղագս տարապարհակ և անմեղ կրելոյ նորա զչարչարանս, այլ և առ մորկալոյզս ի մարդիկ. որք կարողք էին խափանել զկամս նախանձաբեկ ինքնահաճոյիցս. որք կլանել ունին հզօր հրացանիւք և ցոլմամբք հրոյն Ռուսաստանու. և տուընք նոցա աւերակք լինիցին մինչև ցառուն հեռաւոր ազգացնոց։

Եւ ոչ կամիմ վասն ձեր զայսպիսի տարաբաղդ պատահմունս. ուստի յորդորեմ զձեզ, զի առասջիք զտնօրէնութիւն բարւոք կենցաղավարութեան ձերում՝ պահպանելով ըզբարձր ամենապատուական Դանիէլ կաթուղիկոսն անշնաս և ի լարզանս ըստ աստիճանի նորա։ Իսկ եթէ ընդդէմ ասեմ գրուածոցս չարժեսցիք, ոչ թէ ես՝ այլ դուք եղիջիք պատճառ ամենապատար կորստեան ձերում։ Բայց յորժամ զգասջիք զըստ գործոց ձերոց զարժանաւոր փոխարինութիւն, յայնժամ ապաշաւութիւն ձեր ոչինչ օգնեսցեն ողորմելի տառապակրութեանց ձերոց. որք ժամանեսցեն առ ձեզ՝ յաղագս յանդգնութեան ոմանց թերամիտ և խելառ արանց։ Ամփոփեսջիք զմիտս՝ հրաւիրեմ զձեզ առ յաւակեղ բարութիւն ձեր։ Խանն՝ ձեր պետն է, այլ ոչ օրինակից և ոչ քրիստոնեայ. վասն որոյ չէն ինչ զարմանք, թէ դա՝ (ըստ պատրեցման իւրոյ յոսկւոյն և ի մեծապին ականց էջմիածնի) համարձակեսցի այսքան առ այնպիսի ամենապատուական ծերունւոյն և Քրիստոսատիպ զլխոյն Նկեղեցւոյն Հայաստանեայց։ Օրէնք մահմէտականի հրամայեն խանին՝ հալածել զքրիստոնեայս այլ զձեզ զընդ հովանեաս բարձր ամենապատուական Դանիէլ կաթուղիկոսի զմի և զնոյն զքրիստոսաղաս անողոք զինչ արգելու. զի Թողեալ զնա՝ առ հակառակն նորա դիմէք։ Մահմետ խանն ըստ հաճոյս սուս պատրիարգ Դաւթի՝ արմատախիլ առնելով զկենցաղավարութիւն նորին ամենաբարձր պատուականութեան Դանիէլ կաթուղիկոսի, կատարէ զհրամանն իւրոց օրինաց։ Այլ դուք մտանելով ձեր զնա ըստ ճառգալի (որոյ լիշատակն այսօր նղովաբանի), պարտական լինիք պատասխանատուութեան յահեղ առենին Քրիստոսի։ Արդ՝ ի հասանիլն բարկութեան Տեառն Աստուծոյ առ ձեզ՝ ազազակեսցէ նոյն ամենաբարձր պատուականութիւն առ Աստուած՝ թէ հա՛յր Թող սոցա. զի ոչ գիտեն զինչ գործեն. յայնժամ զինչ լինիցի ձեզ։

Մահմետ խանն յափշտակիչն նկեղեցւոյ՝ ի մերձենալն իմ զօրօք իմովք առ ձեզ՝ փախիցէ (ըստ օրինակի բնաքանեցոց և ճարեցոց) հանդերձ ամենայն հարստութեամբ իւրով, և դուք յայնժամ մնասջիք որպէս ոզջակէզ սրոյ և հրոյ մերոյ)։ Կրկնեմ ամփոփել զմիտս ձեր. մի յափշտակեցուցանէք զհոգիս ձեր օձին. եթէ տակաւին չիցէք խաբեալ ի նմանէ. բաղդատեցէք զհեղութիւն քրիստոնէական կառավարութեանց՝ ընդ սաստկութեան և ընդ զազանարարութեան մահմետականաց կառավարութեանն. արկէք ընդ չափու զնետնոյն բարբարոսութիւն և զյաւաջնոյն համբերութիւն. որով կարող էք զտանել զներն՝ հետևող կանոնաց Քրիստոսի գրեցելոց ի սուրբ Աւետարանին, և գնոցայն՝ հակառակ կանոնաց։

Հասաքեսջիք զմիտս ձեր, և սարսեջիք. զի զոր ինչ ասեմ ձեզ՝ ոչ են բանք միայն թղթածիրք, այլ բանք՝ որք զկատար առցեն նախքան զներկայ լուանոյ զչրջանակաւ թաւալման կառարումն։ Դուք տեսջիք, զի համախոհքն ձեր՝ դրողքն աստի՝ թէ ոչ եկեսցեն յայդր բարձր փառատրազոյն զօրքն Ռուսաց, ներմուծցեն զձեզ յեղր կորստեան։ Լինիջիք կոխան ոտից զօրաց, և ձերեզմանքն ձեր անարատաստեալի. այժմ մնալ ձեզ այս՝ զի յերկուց աստի ընտրեսջիք զբարեզոյնն։

Իւրոյ Կայսերական Մեծութեանն Ամենազորմածազոյն Թագաւորին իմոյ՝ Գենարալ Էլիսէնանդ՝ Տանն Վրաց նախկին կառավարիչ՝ Կովկասու, իսպէգցու ինսպէկտոր Աստրախանու և Կասկասու զօրաց Լուպէրնատոր, նոյնպէս Արք քաղաքական վիճակաց, կառավարիչ Կովկասու, լինիս Սահմանական գործոց, և նշանակիր զօրաց Սրբոյ Մեծի վկայի և քաջազգեաց Դէորգեայ չորրորդ Աստիճանին, և Սրբոյն Առաքելասպաս Գնէազ Վլատիմիրու երկրորդ Աստիճանի

Կառավէր.

ԳՆԷԱԶ ՑՈՒՒ ՑՈՑԻԱՆՈՎ.

1803 յապրիլի 3։

ՃԻԵ. *Յնփրեմայ Աղք Սալիսկոպոսէ ամենայն Հայոց Ռուսաստանու առ Ղզլարու Հայոց մարմնաւոր ազիական դատարանդ։*

Ի փետրուարի 16-ին գրեալն ձեր լամ. տուս 11-ին ստացայ, ոչ որպէս էրէկն ե ե ուանդն։

Ընթերցայ զգրութիւնս անձանձրոյ լսելեաց և ի հիացումն ըմբռնեալ զ։ըմացայ լոյծ թէ արդեօք իրաւապէս ներքին դատաղութիւն ձեր իցէ սակս, որում ոչ երբէք սպասէր ի բարի գրութենէ ձերմէ։

Գրէք որպէս թէ մեք ի տարապարտուց պատժեալ իցեմք զՏէր Սահակն, ահա սակս լալոնի երևի որ զհոգի իմ ոչ ճանաչէք, զի եթէ ես զմի ոմն ի լեռնագոյն ուամկաց և ի լեռին կղերիկասաց, ոչ կամիմ վիրաւորել, զիարդ զքահանայ մի պատժեցից։

Թիւր է ալդ կարծիք իմ հոգի սիրելիք։ Նախ լալոնի է ոչ միայն դատարանիդ, այլ բոլոր հաւատակուԹեան ժողովրդեանդ դորին ի բնէ անտի անվայել արարք որ բնաւ ոչ լոջ և ոչ լահեակ չունի նալել երբէք, զի զգողով քահանայ և աշակերտ Քրիստոսի, զոյն վարս պարտի ցուցանել որ իցէ պատճառ օ. րինակ բարւոյ ժողովրդեան։

Երկրորդ միթէ չէր լալոնի դմա լաւագոյն որ բոլոր աղքն ոչ ճանաչէ զպատուական նստօգն և ոչ ամենողորմած կալսեր մեծ որով զանգին կեանս տէր արասցէ ընդ երկայն աւուր միթէ չէր լալոնի դմա որ հաւատակութիւնք ձեր հանդերձ հոգևորօք և մարմնաւորօք համաձայն ընդ այլ քաղաքաց գնուաստս լինդլեցիք ձեզ առաջնորդ և զտնուն Քրիստոսին և ոչ թէ լինել կամիք ի միջի ձերում, որպէս և կալսերական բարձրագոյն հրովարտակն ևս լամենայն ուրեք առատածեաւս, եթէ դա անդամ էր հաւատակուԹեան ձերոյ և ոչ չարաչար և աղմկալոյզ, մինչ բաղմանիք մահատար ձեր գնաց ի տուրբ աթոռն ոչ ապաքէն իսկոյն պատեր դմա խորհիլ ի Քրիստոս վարդապետէն դ։ցուք լալոնժամ սպաւեաց և մինչ խաղաղութեամբ եհաս ալդր և ետես ամենայն ինչ լրացեալ, և զկամս բոլոր ժողովրդեանդ որք ունէիք ընդունել զիս, ոչ ապաքէն և դա իսկոյն պատեր ընդ ձեզ միաձայն, զբանսարկու լեզուն իւր լռեցուցանել, զարմանամ զարմանամ, որ ընդդէմ հաւատակութեան ձերոյ մեղանչողին սրտապատուհասել զինդ մեղադիրս առնէք։

Եա Թողում ընդդէմ անձին իմոյ մեղանչումն զա ընդդէմ սպղին է մեղուցեալ ընդդէմ սԹոռոյն ընդդէմ քահանայապետական աստիճանին, և ընդդէմ կալսերական բարձրագոյն հրամանին։ Որ բոլոր սպգ ի մի հոգի եղեալ հանդերձ սԹոռայնովքն պատգակեն Թէ մեր օրինաւոր հալրապետն սրբազան Ղանիէլն է զմիւսն ոչ ճանաչեմ, և ամենողորմ կալսրն եա ամենողորմածարար հաստատէ։ Իսկ զա մին քահանալի կտոր գոլով սանձարձակ լեալ Թէ զինչ բարբառէ ինքն եա ոչ գիտէ ջատագով լինելով դատօրինաւոր նստողին և Թէ զինչ ինչ խօսելով, եա ոչ միով գրութեամբ ունիմ զծանօԹութիւն, այլ ի զանազան ոմանց անձանց, ոմ իրաւի ախտասալի. որ գուք արդարապէս ոչ վերահասու լինելով զայնս, ջրէք որ բնաւ ոչ էին գրելիք ի ձէնջ, և զիս ընդ միով քահանալի փոխանակիք։

Զի՞ է որ յամենայն ժամ լրբութիւն դորին գանգատիք, և այժմ այնքան արդարս առնէիք դմա մինչ զի ջրէք զամենայն գրեցեալսն իմ

Դուք դատաւորք էք և ի ձէնջ արդարադատութիւն պարտի գտանել և ոչ Թէ դատախնդութիւն, ահա ասաւ գրութեամբ երևի Թէ ոչ ըստ օրինի դատաւորաց գրէք առ իս գիր, այլ Թէ ըստ դատախազի, ապա Թէ ոչ, նախ մտածէիք և ապա գրէիք։

ԵԹէ երկու և իրից վկայիք բանն ըստ աէրունեանն հաստատուն է ապա զիարդ ոչ հաստատացից ես զբազմաց վկայելն։

Թարկութիւն խօսիք սիրելիք և ոչ աստուածային ուղղութիւն, որ վասն միոյ անուղղալ քահանալի որ ձեզ լաւապէս լալոնի է, մին առաջնորդ և բոլոր զաւք քահանալից ի ներքոյ ոտից կոխան առնէք։ եԹէ ոչ գրէիք մեզ հրամայաբար Թէ գրեա ի վերայ դարբանդոյն քահանալից և այլն, նախ զիրաւունս մեր ըստ ամենայնի արհամարհէք և ապա զբոլոր քահանալական դասն մեղապարտ դատէք, զարդար և անմեղն միմիայն Տէր Սահակն և ոչ այլ ոք, եԹէ մեք երկրապահիս ոչ լինիցեաք, և ի սաստապարտուց փութով պատժեաք զոք քանիցս հալրական խրատս ոչ

դրէաք նմա որ բաւական է վերջացի ի չարութենէն և սանձեսցէ ղեղու իւր քանզի բերան քահանային ղդուշացին գիտութեան և զօրէնս խնդրեսցեն զի հրեշտակ տեառն ամենակալի է. բայց նա վոխանակ ղդաստանալոյն և ղդուշանալոյն, զանուն սրբազան Գանիէլին և վեր անդր զան ղչափն անարգելով թէ ի մէջ եկեղեցւոյն և թէ արտաքս ի մէջ մարդկանց, որ բազում վկայք դոն, ահա ձերդ խղճմտանացդ և արդարամիտ դատողութեան հարցանեմք, լետ այնքանեաց խրատուց իմոց և դորա անղդուշ լինելով հարկաւորապէս արժան էր ինձ դատելն որ եթէ արդարն ոչ պահի, և մեղաւորն ոչ դատի, այնուհետև այլ ինչ հոգևոր և մարմնաւոր դատաւորութիւն ինչ առաջնորդութիւն և ինչ բարի կարգաղրութիւն զի փոքր ինչ խմոր զամենայն զանգուաճան խմորէ։

Մեզ ահա այժմ լրբութիւն զորին մերկապարանոց է և բազմաց վկայութեամբ ստուգեմք որ յանցաւոր է դա և մեղապարտ, իսկ եթէ ըստ ձերդ դատողութեան արդար է դա և անպարտ, ահա թողում ի կամս ձեր զոր ինչ և կամիք արարէք, ոչ՝ դուք մի խաւսիք, և ոչ զժողովուրդն պարտաւոր առնելոյն չնորհակալ եմ ի ձէնջ։

Որ և ահա ի խաթեր ձեր գրեցի հոգեւոր դատարանին կրկին գնոյն Տէր Սհակն ճանաչել և բացարձակ քահանայութիւնս արասցէ և ամենայն ոք ի խաղաղութեան հնասցէ, և առ այդ ոչ ոք չիոթեսցի, զի ինձ հասարակութեան խաղաղութիւնն է ցանկալի և ոչ տարաձայնութիւնն. եթէ գիտենալի....*) 1803 ապրիլ 9.

ՃԻԶ. Մանուէլ վարդապետն զրէ զնդանակ փախստեան իւրոյ ի Պօլսոյ եւ զգումար տալեաց, պատրիարգութեան եւ կաթուղիկոսական երկրորդ ձրմանին։

Որքանութիւն պարտուց ի Պօլիս հասասար ինձ գիտես՝ բաց ի սակաւուց։

Խոսրով

Աղնիւ Մուրատ ամիրալի կնքով

*) Թերի է մեր օրինակը։

պատրիարգ սրբազանին հնացեալն է . . 12000։ (10000 է)։

Մահտեսի Նիկողայոս Ամիրալի նորին կնքով նախապէս . . 15000.

Երկրորդ կոնդակի պատրաստելոյ աղաչաւ մէկ օր ի Թէրսխանան լերկաթն հնացեալ և տուգանք տուեալ . . . 12500.

Երրորդ վասն իմ յայսկոյս գալս երեք անձինք եւուն գրամ մահտեսի Նիկողայոս ամիրալին բաժին . . . . . 00700.

Չորրորդ առ սոյն սրբազան հայր մեր Եփրեմ արքեպիսկոպոսն առաքեալ վարժապետ և այլ իրաց և գրոց . . . . . 01200.

Մահտեսի Ստեփաննոս ամիրալի աւաջին պարտսն գիտես որ է կնիք քո է անդ . . . 02000.

Եւ իմ խարճի աղաչաւ ետ ըսլոց . . . . . 00700.

Սահակ Ամիրալի ևս տուեալ էս կնիք . . . . . 02000.

Եւ նա ետ վասն իմ խարճի . 00700.

Աղնավուրեան Կարապետ աղալի հնացեալ պարտք մեր միայն . 01000.

Պապայեան մահտեսի Կարապետ հնացեալն քո և իմ կնքովք 03000 (2000 է)

. . . . . 50800.

Մուրատ ամիրալին հնացեալ է պարտք մեր միայն 10000 ղուռուշ բայց թէմեսուկն որ ի ձեռին նորա կնքով Գրիգոր պատրիարգին, է 12000 ղուռուշի. Բաղալ օղլուն թէե աւելեօք գտանիցի, ի ձեռ:ին նորա թէմեսուկն այլ ըստ բանի Գրիգոր պատրիարգին տալիք մեր նմա է միայն 2000 ղուռուշ։

Կերալ ելանելոյն իմոյ ի Պօլսոյ։

Հոգտեմբերի 24 ի հանել զսրբազան պատրիարգն լաթուրն մերձ էի մտանել ի պատրիարգարանն ղհետ տիրացու Սահակ եղբօր մերոյ և լետին մահսէրն էր ի վերայ իմ յայնօր կասեցաւ տիրացու Սահակն տալ լաւաջ ընթանալ, ոչ թողի, լետ դարձեալ մինչ ի գիշերոյ երկրորդ ժամն հասանք ի տուն Սահակ ամիրալի ի Պէշիկթաշ զկնի երկուց աւուրց գիշերոյն անտի գնացաք Պէշիկթաշ ի տուն Մանուկ աղալի գիտութեամբ

երկու եղբարց և Երեմիա Չէլէպւոյ խօսեալ ընդ նոսա ըստ ակար կարեաց իմոց հաճեցուցեալ զմիտսն, առին վասն իմ պայպօքթ գիտութեամբ սինիօր Բիզանիլին ի Նեմսէի դեսպանէն ի գնալ առ. տէրութիւն Ճոցա կարապետ անուամբ, գին պաշխորթիս 150 խուռուշ և սինեօր Բիզանին իւրեանց եաս սախէիով առաքեաց զիս առ. գօնցօլ իւրեանց ի Բոգրէշ, որոյ եաուն լիշեալ բարերարքն մեր մինչ ի Բուգրէշ ընթերլով 500 խուռուշ, և ի ժամանել իմ անդ ի Բուգրէշ օրհնեալ լիցի գօնցօլն նոցա, ըստ հաճութեան իմոյ խօսեալ ընդ նմա հաճեցուցեալ զարձուցի զճանապարհ իմ ի կողմն Նաչ քաղաքի ուղիղ գծիւ եկի ի քաղաքն Դրիզդրիպոլ և մնացաք երկոտասան օր ի քասանթերն, որ է Նազարէթն և ի Դրիզդրիպոլէ թէ քանի հրնարիւ առի ընդ իս զորդի գիտնական և ճչմարիտ հարազատի տէր Յոհաննէս քահանալի զտիրացու Մատթէոսն և եկի ի դեկտեմբերի 23 աստ ի Ս. Գ.-բուրգ զայն սմենայն խոհականութեամբ դիտացեալ. ելեալ ի Գօլաղ Նոյեմբերի 2 հասի աստ գեկտ. 23. առ. մնացեալ դրեցի զորպիտութիւնս, մնալի գրութիւն ձերով, վասն Քրիստոսի որ ապրիլ ամսոյ 24 ստացայ զհրաշալի գրութիւն մի որոյ ամոթիւն է լունվարի 10 գրեալ ի Թիֆլիզ, բայց գիտեմ հաւաստեալ լառաջինորդ գրութեամբ ձերով թէ նոյն լունվարի 31 մտեալ էք անգ ի Թիֆլիզ, դիւրդ կարելի է վասն իմ անգ ի 10 նոյն ամսոյ գրել գիր, թէ որպէս և իցէ ուրախ եմ զի լիշելով գիս արժանացուցեալ էիք սուրբ ողջունի ձերոյ, բայց համարիմ զիս բախտաւոր որ ոչ կարացին արկանել զիս ի ձեւս և առաքել լաքսորս ուրէք, լոր լաւիտեան մնալոց էի առնալեալս զի եթէ աստ զկնի վեց ամսոյ հասզիւ ողջունելոյ եղէ արժանի ապալ այլ տեղիս լեալ քանի ամաց Աստուած գիտէր, ողջ լեր ի սէր տարաբախտ եղբօր քո ՄԱՆՈՒԷԼ վարդապետի

1803 մալիսի
ի Ս. Գ.

Ի Գօլաղ տէր Մեսրուլէն մահտեսի Ստեփանոս ամիրալի որդի աղնիւ Երեմեայ Չէլէպւոյ ի մեր տիրացու Ասահէլ և ի տիրացու Առաքելէ գրեցեալ գրոց զհարկաւորսն ասա առաքեցի զի քաջ խելամուտ լիցիս ամենայն որպիսութեանց ողորմելի բարեպաշտութեամբ առ ճչմարտութիւնն ցասակցութեամբ հետեւողաց և լիշեցուացես սրբազան պատրիարգին քո որ մի անգամ համարձակեալ ասացի նմա Գօլիո, ծառայ եմ դու ոչինչ համարիս զկառավարութիւն այս իշխանութեան և ասես զոր ինչ կամին արասցեն, ես գնամ ի սուրբ աթոռն քարի է որքան առ քեզ բայց զաղզրն, և մանաւանդ զհարազատ ցասակիցան սրբազանին մերոյ խապատ արկանես ի փորձութիւն և լուսահատութիւն։

Որ նա զայս բանս իմ անարգանօք լետ դարձոյց, և զո սիրելի Զաքարիա և Սիմէօն վարդապետաց խոհեմ խորհրգովն ընդ իս լերկար ժամանակ, և մինչև ցայժմ ջնամութեամբ վարեցաւ, և արի, ողջ լիցի։

Խնդրեմ ներել եղբայր անցեալ թուղ լուլիսի 19 Գասրա ի վրթանէս վարդապետէ գրեալն հասեալ ինձ ի Գօլիս սեպտ. 18 մինչև ցայժմ զարձուածք ժամանակաց ոչ ներեցին առաքել այժմ սակաւ մեզադրանօք հաճեացիս ընկալուլ։

1803 մալիսի
ի Ս. Գ.-բուրգ.

ՃԻԼ. *Թուղթ միսեռանից ս. Էջմիածնի առ կայսր Ռուսաց։*

Ամէնողորմած տէր.

Խոնարհ եղեն մինչև ի հող անձինք մեր, կցեցան լերկիր մէջք մեր և պաչարեցին ըզմեզ անդունդք անհնարինք վասն որոյ լանալալուչս մեզ ընթերալ առ վշտին սաստկութեան ներկրպագութեամբ ամենողորմած աթոռոյ սեծութեան ձեր, ձայնիւ հառաչանաց և ոգւոց հեծութեամբ համարձակիմք լալտաւնել Տէր թագաւոր մեր։

Չի լետ կրկին գնալոյ և վերադառնալոյ Ուսպէնեանին խանն երևանու որ տարեալ ի մէջ քերդին իւրոյ ի բանտի զպատուարժան կաթուղիկոսն ամենայն հայոց զտէր Դանիէլ, ոչ լետ բաղում աւուրց վաճառեաց զնա սիրեցելոյն իւրում Դաւիթ բանաւորին որ և նա ըստ անխիղճ բնութեան իւրոյ նստուցեալ զարբազան հալրապետն ի մերկ ձի տանէ անպատուութեամբ լաթոռն Արարատու

է արկանէ անդ փուռ անդնդախոր, ուր ձգել բազմաչարչար երանելին ի ժամանակս բաղումս անդիտելի յումեքէ՝ մինչև համարել ամենեցունց թէ մեռեալ իցէ։ Այլ լուիցես զանօրինական և դեռ առաւելադունս ով ամենողորմած տէր մեր սուրբ կալար. զի ի 25 մալխի զղանգակ հ՛չեցուցեալ անօրէնութեան հանդէս կազմէ և հանեալ զերանելին ի գրոյ անտի կացուցանէ յատեան և ձայնէ անօրէնութեան բարբառով թէ զոր մեռեալ համարէիք, տեսէք յայտնապէս ահաւադիկ կենդանի, բայց լաւ գիտել զովասջիք քանզի ալժմէն զկնի ունի մեռանիլ իսկապէս և ապա անդ ի հրապարակ ողբով լցեալ հանգիսին՝ տալ զերծուլ զձիւնախալ ալեօք ծաղկեալ մօրուան զընչացան և զհեր զազաթան աստուածընտիր քահանայապետին ամենայն հայոց և առանց ահին Աստուծոյ լսելոյ ասել. ահա ալսպէս վալել է քեզ ունիլ զկերպարանդ։ Եւ ի վերալ ամենայնի ալտորիկ զարձեալ իջուցանէ զսրբազան ձերունին ի գուբն, զի անդ մեռցի ասէ։

Արդ ով ամենակալող բարձրհրամանդ տիեզերասաստ ամէնօգուտափառ սուրբ Թադեոս. Քէպէտ և աշխարհ ամենայն զդողանի հարեալ սասանի լերեսաց անէզ տէրութեան ձեր, այլ չեզև զալսմանէ Վաւքին, Երևանուս խանին և այլոցն՝ որք գործակիցք և ձեռնտուք նոցա եղեալ զայս ամենայն գործել ոչ զանգիտեցին հարեալ ի սէր ոսկւոյն որով և սուտ զգեցուցին եկեղեցւոյ մերում և սասանել համօրէն ազդիս հայոց։ Քէպէտ և հեռաւորք և մերձաւորք ի քրիստոնէից և ի բարբարոսաց լուսացեալք ի վերջ վալելեցին ի խաղաղութեան զկնանս իւրեանց, այլ առժամանակաւս երջանկացեալ հարցն հալածական ծնրունին Դանիէլ զձեռն ի քղանցս հանդերձի աստուածընտրեան մեծութեան ձեր մեռանի ի գրէ ներքնումն, զայս մրմունջ ունելով ի բերան, նախանձ տան տեառն աստուծոյ եկեր զիս և նախատինք նախատեցան Քրիստոսի աստուծոյն իմոյ և սուրբ պատկերի նորին՝ անկան ի վերալ իմ։

Այլն ամենայն երթ հաճոյ թուեցի ամենողորմած մեծութեան ձերում ծանուցանեն ընտրեալգունն և գլխաւորն ամենայն հոգևորականաց միաբանութեան արժանապատիւ Առաջնորդն ամենայն Ռուսաստանու հայոց Սիրեմ գերապատիւ Ուրք եպիսկոպոսն և հարազատ պօղոսն տէրութեանդ Մինէ Լազրիչ Լազրևան երևելի իշխան հայոց զի շատ էր մեզ վստահիլ ալաչափ։

Ամենաողորմած տէր

Ձերոյ կայսերական մեծութեան նուաստ ծառալք և ջերմեռանդ աղօթարարք ցաւալի միաբանք Արարատեան աթոռոյն սրբոյ Էջմիածնի։

Ցունիս 7 1803
ի Թիֆլիզ։

ՃԻԸ. *Թուղթ արքայազն Դաւթի առ Շիրեմ (?)*

Սրբազան հայր իմ ողորմած տէր.

Որ ինչ ձերդ սրբազնութիւնն հարցեալ էր ինձ՝ լաղագս Սրբոյ եկեղեցւոյս Էջմիածնի սոնաստրաս եղբակացութեան և սկզբան շփոթից, Սրբազան հայր՝ ոչ թէ միայն ես գիտեմ, այլ լայտ իսկ է հանուրց հայկազնէից որ սկիզբն շփոթից և քաքտման Սրբոյ եկեղեցւոյն այնմիկ էր Գրիգոր վարդապետն և Սալոմեն Արղութի որդին. երբ փոխեցաւ ի կենաց Ցովսէփ կաթողիկոսն լայնժամ եկին առ իս Գրիգոր վարդապետն և Սալոմեն Արղութի որդին, որպէս առ ժառանգ և կառավարիչն Վրացոնանու և լալանեցին ինձ թէ Դաւիթն է առաջին եպիսկոպոս և ի Ցովսէփ կաթուղիկոսէ ևս կոտակաւ աւանդեալ է զոլ արժանաւոր կաթողիկոսութեան նմա վալել է զի ջանասցուք և արասցուք զնա կաթողիկոս. ես ըստ օրինի մերոյ ոչ ինչ պատասխան ետու նոցա. որովհետև այսպէս արժանի է որ կաթողիկոսն ընտրեցեալ լինիցի ի սուրբ ժողովոյն, և զկնի ծանուցման նոցին համաձայն լինիցին ազգ մեր. որ և նոքա ի բաց մեկնեցեալք լինէին. այս եղանակ պատասխանատուութեամբ գնացեալ էին առ դեռնարալ մալօր Լազրովն. և գնա ևս բերին առ իս և քաղումս ջանացին. իսկ ես ոչ եղէ համահաեզ կամաց նոցա. զկնի որոյ՝ լետ քանի ս սուրբ եկն առ իս դեռնարալ մալօր Լազրովն էհան դիր մի նեմեցերէն ի կնօրինդէն գրեալ առ նա. և ընթերցաւ ի կողմանէ Կր-

նօրինղին. ղի լսելի արասցէ ինձ. որպէս զի իցեն կամք նորին կալեբականի մեծութեան յաղագս կաթողիկոսութեան՝ Դաւթի և ոչ այլ. լոց. և ասացին սոքա ալսինքն Դրիղոր վարդապետն և Սօլօմոն Արղութի որդին Լաղրովին. ղի մի տրեցեալ լիցի բիւթ թուլաարութեան չորից այնց ևպիսկոպոսաց յնջմիածնայ եկեղեց. որք ևս կարի հեռացուցանէին զկաթողիկոսութիւնն Դաւթի. քանց զօրութեամբ զրոյն յայնմիկ ի կնօրինղէն առ. Լաղրօվն գրեցեալ զոր նաուն ինձ ընթեռնուլ. նաուն ինձ առաքել զարս առ խանն Սրևանու վասն կաթողիկոսացուցանելոյ զԴաւիթն. Գիտեմ զի ձերդ սրբազնութիւնն ևս լաւապէս վերահասու իցէ առ այս. որք եթէ չիցէին սոյն երկու չիւթարկու անձինքն ալսինքն Գրիգոր վարդապետն և Սօլօմոն Արղո.թի որդին և այլ օգնականք և ընկերք նոցա, ոչ երբէք գրեցեալ լինէր սուրբ եկեղեցին այն քահանան և լետին թշուառութեան. առանց խմիք տարաձայնութեան լինէր Դանիէլն կաթողիկոս և ոչ տիրապետութեամբ զկնի ի կնօրինղէն կառավարութիւն կացուցանելոյն, մինչ եկն դեսպանն ի Մահմատ խանէն պատահեցալ նմա լանկարծ ուր հարցաք զվիմեանս. զկնի մխիթարախօսութեանն ետ ինձ ողջոյն ի խանէն և էհարց ևս ի խանէն թէ զի է պատճառն աբտախմանն Դաւթի ի լարժանաւորութենէ իւրմէ, և բաղձանք Դանիէլի կացուցմանն. ես ղոչինչ պատասխանեցի ալսպիսւոյ անլարմար բանիցն, և նա վերակրկնեաց թէպէտ ղու ղոչինչ պատասխանես. բայց թէ խանն մեր և թէ Դաւիթն լաւապէս վերահասու եմք այնց, որ ինչ ի նախնեաց ձերոց անտի մինչ ցարդ ներգործութիւնք եղեալ ևն, թէպէտ գուք ծածկել ունիք. բայց Գրիգոր վարդապետն և ընկերք նորին զոր ինչ ունին գաղեալ ի մէնջ

և լաւել քան զայս ձեզ սրբազնութեանն ի խորին պատուատուրեան.

Ցամի 1803 լուլիսի 20
Ս. Պ. Բուրզ

Սրբազնութեան ձերոյ և իմ ողորմած Տեառն խոնարհ պաշտօնեայ Արքալազուն Դանիէլ.

ՃԻԹ. Թուղթ Յովհաննէս Պատրիարքին Կ. Պօլսոյ առ կաթուղիկոսն Դաւիթ.

յԱմենարուեստ ճարտարապետէ հիմնարկեա՛՛՛լ, և գերակալ լուսով՝ առ ի նմանէ ձեռակերպեալ, սրբոյ և գերակալ աթոռոյն, և մօր մերոյ հաւատոյ, և անարատ հարսին եկեղեցւոյ՝ գերամաքուրդ վեհապէի, տեառն տեառն Դաւթի սրբազան և երիցս արանեալ ՛՛՛ ի ամենալն հայոց՝ սրբոյ և մաքուր աջոյն, ի լիղձ կաթողին համբոյր ի մչտակալ սիրելութեան.

յԱմի Տեառն, 1803, օգոստոսի 5, և ի պատրիարքարանս ամենայն հայոց.—Ցետ որոյ լալտ լիցի սրբազնութեան.գ. որ լունիսի 25-ին՝ գրեալդ առ մեզ գրութիւն, ի լուլիսի 31-ին՝ եհաս աստանօր առ մեզ՝ լորոյ և լընթեռնուլն՝ որ ինչ գրեալն էր ի սրբութենէդ՝ մի ըստ միոջէ ծանեաք. Այլ՝ լառաջ քան զալս գրութիւն, ի ձեռն պարոն Մարտիրոսին գրեալ եմք զոր ինչ պատեհագոյն էր գրել, որ լուսամ թէ, հասեալ իցէ առ սրբութիւնդ ցայժմ. Եւ ընդ նոյն գրութեան ևս՝ հրովարտակն աքսորանաց, Իւչքիլիսէու Սահակ վարդապետին՝ եղև լղել. Իսկ և երկուց առաջադրութեանց ի սրբութենէդ՝ անկատար մնալան զպատճառն, ընդ պարոն Մարտիրոսին գրեալ առաք Դէորգ աղալին, զոր ի նորին գրութենէ իմացեալ իցեն Աստուծով. Եւ դի՝ ըստ բազմից գրեանցն ի ճանապարհին բացեալ լինելոյ, ահա և այժմ ի սրբութենէդ լղեկեալ գրութիւնն բացեալ էին, վասնորոյ զիսորհրդական բանն՝ Գէորգ աղալին տամք ղբրել. Այլ սակայն մեք լոյս ունիմք, որ Աստուծով ի մօտակալ աւուրս՝ տէրութիւնդ ևս՝ ապահով լինելոց ես ի կողմանէ հիւսիսալնոց՝ Տեառն չնորհիւ, բայց՝ մեք՝ լիրաւի, լօրէ մտին մերոյ ի քաղաքս, գոնէ միմիայն օր մի առանց սրտաթողութեան և նեղութեան չեմք մնացեալ, և այն՝ ի ներհակաց նորահնար լրոյ. Բայց բազմօք լոյս ունիմք առ Աստուած, և ի մաքուր աղօթս սրբութեանդդ, և ի նոցանէ ևս նեղութեանց՝ ազատ մնալ և ապահով. Եւ դի նորաեկ նուիրակ Աբրահամ վարդապետ սիրելի եղբօր մերոյ,

միամիտ լեր ըստ ամենայնի, տերամբ և օրհնութեամբ սրբութեանդ՝ լաւ լինելոց է, և լինի, միայն թէ, երբ իջէր՝ ղի զնախկինն՝ ուզևորիցեաք առանց ինչ սրտնեղութեան՝ ի տուրբ աթոռդ։ Եւ արդ՝ առնու սիրելի եղբօր մերոյ գալստեամբն, Աբրահամ գերզգօն վարդապետի ժտերմութեան՝ ընկալաք ի գերամեծար տէրութենէդ՝ զաւրինն օրհնութեան, և սիրոյ նշան, ղկնքեալն սրբութեանդ կնքով՝ ղմուշտակն ի վալել նուաստութեանս՝ բաղում չնորհակալութեամբ, իբրու մեծ չնորհ իմն։ Այլ՝ սրբութեանդ կենդանութիւն, և լանդորրու կալն մնալն՝ գիտէ Աստուած, ինձ անկողոպտելի գանձ է, և այնպէս համարիմ ըստ ամենայնի՝ և անանց պարգեւ Քրիստոսէ՝ ըստ որում վաստակեալ էիր, ըստ կամաց տէրութեանց առնելոց եմ՝ յոժ չնորհակալութեամբ, զոր ուրեմն ամենախնամ մարդասէրն, զսրբութիւնդ, և զամենապեղ պսակդ գլխոյ մերոյ՝ ի գերաստիճան վևհանձնութեան, և ի պայծառութիւն ազգին մերոյ ողջոյն, և լանդորրութիւն՝ և լուրախութիւն սրտից մերոց՝ հաստատուն և անդրդուելի պահեսցէ. և մխանգամայն ամենազօր չնորհիւ իւրոյ՝ ողջ ի չողջ գլուխն մեր Քրիստոս, ի բերկրութիւն և ի զուարճութիւն ՅՕՀԱՆՆԷՍ պատրիարգիս մեծի Կոստանդնուպօլսոյ։

Առանձին։—

Նաև զայս ես առանձին ծանուցէ սրբազան տէրութիւնդ, զի ի գրութեան մեծութեան ձերոյ եղեալ առանձնական բանից հանգամանան ծանեալ ընթերցմամբ, լորս էր երեք գործք մեղապատշաճ, որոյ զերկուսն խորհրդով խոհական անձանց անպատշաճ վարկանիլ եղև, և զմինն՝ որ է հրովարտակն աքսորման Իչքիլիսէլու Սահակայ դասնաչունչ պետին՝ չինեցուցեալ Պալազըտու՝ փաշային խիթապէն, տէրութեանդ ուղարկեցաք, զի քոյին մարգոյն տէրութիւնդ ուղարկեսցէ զՖէրմանն և խնդրեսցես զստահակ Սահակ վարդապետն ի փաշային, որ ուղարկեսցէ գնա առ մեծութիւն քոյ ի տուրբ աթոռն։ Եւ միւս հրամանացդ անկատար մնալոյն պատճառն է՝ ըստ որում, ի տէրութեան Հադարացւոց ոչ գոյ տեղի ինչ՝ լոր աքսորևալքն լաւիտեան մնալցեն։ Եւ լազարոս տեղապահութեան սրբութեանդ՝ հրամանագիր անպատեհ երեցաւ խնդրելն զոր Տէր Ցիսուս Քրիստոս մի և մի արասցէ. նեղութիւն և կասկած մեծ եղև մեզ ի կողմանէ նորոգ նուիրակէն՝ մինչև ցօրս ձայն լուստեքէ չելանելոյն։ վասնորոյ՝ չարաչունչ ոմանք հնչեն զթունալի այլ և այլս, Աստուծով ի զալն պարզի ամենայն ինչ։ Եւ վասն հին նուիրակ Գալուստ վարդապետին ոչ ինչ գրեմ տէրութեանդ, զի զոր ինչ եառես և լուաւ ի նմանէ՝ զոր ինչ բարի կամ զչար՝ նա ինքն պարոն Մարտիրոս բերան առ բերան պատմեացէ սրբութեանդ, նաև՝ կիրքն մեր ի նմանէ յայտնեսցին առ սրբութիւնդ լռելեայն։ Այլ և՝ որպս զնաստրբ տէրութեանդ Աստուածապսակ պատուական գլխոյդ ձանձրոյթ չլինելոյ աղաչաւ, ոմանց իրաց պարագայն լանձնեցաք պարոն Գէորգ Ազալևկով ազնիւ սիրելւոյն և տէր Ստեփաննոս ծերունի խոհեմ քահանային. զի ի նոցա գրութեանցն տեղեկացեալ իմասցես, թէ մահասրաց զինչ կամ որպիսութիւնն և կամ գրութեանց մերոց առ որս պատշաճելութիւնն ի ձեռն նոցին և այլն "անթերի դրելոց են։ Աստուած հրամանոցդ կեանք տացէ, և չուքդ և հովանաւորութիւնդ անպակաս արասցէ լազգէ մերմէ և ի մէնջ։ Այլ և էանաֆաց վերալ եղեալն գիրն վասն մահասի Նիկոդոսի վերալ եզեալ ըստակին՝ մնաց անգործ, զի չատ լաւ էր նուիրակն իբր զիւր գանձն պահանջել ի նմանէ, քան թէ աթոռի փող անուամբ. վասըն որոյ ի հոգս են ոմանք բարեպաշտ անձինք առ ի բուստցանել գնա ի Նիկոդոսէն։ Սուրբ օրհնութիւնդ՝ նախ ի վերալ պարոն Գէորգ Ազալեկովին եղիցի, և տէր Ստեփաննոսին, (զորս ոչ սիրէ Գալուստ արհին) լեռոյ ի վերալ Յակոբ Ամիրալին, և ազգին, և իմ լետնելոյս։ Նաև՝ պարոն Մարտիրոսին հարց՝ զնուիրակ Գալըստէն, զտէր Գօդոս եզբօր որդւոյն, զչիք Մեսրոպ երիցուն. զորս տէր գարձուսցէ ի չարեաց խորամանկութեանց, հարց զսոցանէ և տեղեկացիր զանխուլ։

Սրբոյ հոգւոյն եօթնարփեան չնորհաց՝ չտեմարան լիսլիր, էական բանին ոգեկեցոյց բանի՝ մատակարար քաջահմուտ, նոյեանն խորհրդական տապանի. լերինն բարձու՝ զեկօզ ժրարթուն, անբիծ հարսին սրբոյ եկեղեցւոյն Քրիստոսի, հաւատարիմ խնամածու,

կարգաւորացն դասուց՝ քահանայապետ Աստուածակատուց, Արամեանս տոհմի՝ հալրապետ գերընտիր, հանդրիցս հալկազնեաց՝ տեառն տեառն Դաւիթ արժանաժառանգ արքազնակատար միահեծան ՛՛՛ վեհափառութիւնդ՝ աջոյն սրբոյ՝ համբուր սիրոյ՝ ծնկեր կարօտով՝ մատուցանի լար ըղձանօք։

Սրբազնութեան ձերում ամենայն թուղթք՝ որ ի ժամանակս հասանել են առ մեզ և գիւտացեալ զմիտան, այլ թուղթն՝ որ Յարութիւն աղային վասնկան էիք առաքեալ ի Պատպիտ, ի լոր կալին թուղթք զանազանք՝ առ պարոն Թամարովն՝ առ Գէորգ աղային, առ Յակոր ամիրային, առ կարնեցի պարոն Գետրոսն, առ նուիրակ հալր սուրբն, և առ մեզ, ամենայն թուղթքն բացեալ և նորոգ կարկատեալ, հասին առ մեզ. և այն՝ կամ ի կարին, կամ ի Պատպիտ եղեալ՝ քանզի ի կարնոյ աստ՝ պահարանն պարոն Գասպարի կնքովն ամբողջ եհաս, և թէ ուր են բացեալ և ով, եթէ մեծութիւն ձեր կամիցի տեղեկանալ և քննել, կարէ. զի մի վերստին պատահեսցի, լոր՝ եթէ գուր առանձին ինչ լատուկ դրուածս՝ և դողացեալ եղեն չգիտեմք. ի լատաջին թուղթսն ձեր՝ դրեալ լերից առաջադրութեանցն, զմին լարմար տեսանելով, կատարեցաք. և ընդ պարոն Մարտիրոսին մատուցաք առ արքազնութիւն ձեր. իսկ վասն զդանիէլն ուրեք լաքսորս տալոյն, և վասն ձեր հրովարտակս առնել ի սահմանակից մովսէսեանս, սակս առ լապա կասկածանացն՝ ալտքիկ ոչ լաջողեցան՝ քանզի՝ եթէ կարելի իցէր զԴանիէլ հանել լաքսորսն մատնելն ոչ ապաքէն ալգր, մանաւանդ՝ նորին հետանալն ի ձէնջ և առանձին տէրութիւնս տցին զտանելն, գլխովին վտանգ են տէրութեան ձերում, ուրեմն արժան է հատատի գիտել, որ զառաջին հրդեհն քորքոքել ունի, ըստ որում գետ ես աքրատնեակքն ի նոյն միտս կան լամառնալ և ժամանակի սպասեն, նոյնպէս՝ և վասն ձերում Մեծութեան, առ լապա կասկածանացն լայտնել աստ Արքունական Դրանն և հրովարտակ խնդրել առ սահմանակից մովսէսեանս, անպատեհ և վտանգաւոր գիտեմք, քանզի այնու ի կարծիս մտանէ Տէրութիւնս ալս, որպէս թէ ստուգիւ Ազգ մեր՝ ոչ հաճի ի կաթողիկոսութիւն Գերապատուութեան ձերոյ, այնպէս՝ և հիւսիսականքն ներհակ են կաթուղիկոս լինելոյ Մեծութեան ձերոյ, և այնու հաստատին սպա քանք թշնամեացն ի վերալ ձերոյ Սրբազնութեան, որպէս թէ՝ քունութեամբ նստիք, որով լայնժամ և Արքունական Դուռն թուլանալ ունի ի կողմն մեր, զի պիտոյ է Տէրութեան ձերում նորոգ հրովարտակ՝ ի կաթուղիկոսական Գէրաթին վեհանձնութեան ձերում. ամենայն հարկաւոր լանձնարարութիւնքն ոչ պակասին. եթէ պատահեսցի մեծութեան ձերոյ՝ մատնել ուրեք ի սահմանս սոցա, քաւականք են ձեզ ի նոյնս եղեալ հզօր հրամանն և զանազան զօրաւոր լանձնարարութիւնքն. Տէր մի արասցէ, եթէ պատահեսցի մեծութեան ձերում նեղութիւն ինչ, լայնալուսի ժամանակի եթէ խնդրեսցուք և լայտնեսցուք ֆինալխի ինչ, թերևս ոչ ինչ վտանգ լինիցի, այլ ոչ այժմ ալպէս՝ և զԴանիէլն այժմ ոչ ուք կարողանալ քունութեամբ հանել ի ձեռաց Տէրութեանցդ, եթէ պատահեսցի ձեզ ելանել և խուս տալ ի նեղութենէ, ընդ միաբանիցն ձերոց և զԴանիէլն կարօտ էք հանել և պահել և չրջեցուցանել ընդ ձեզ՝ ուր և գնալցէք, ըստ զօրութեան ս. քաւորական հրովարտակի. և ամենայն մովսէսեանք և Գաւառականք պաշտպանելոց են զձեզ լայնժամ՝ որպէս ստուգիւ հաւատարիմք Օսմանցւոց Տէրութեանս ապտրի։ Եւ ի վերջին թուղթս ձեր՝ դրելոց քանիցն սակս, ալպէս գիտացէք Սրբազնութիւն ձեր՝ չեպիսկոպոսունքն ալնքիկ և չծծել ալն, թէպէտ արժան են ամենայն նզովից, բայց որպէս դուք Գերազնութիւնդ՝ երկալնամտեալ լուէք, և ոչ ածէք ուրեք պատուհաս ըստ գործոց իւրեանց, (որպէս և իսկ վալելուչն՝ ալդպէս առնելն է ներկալ) ալսպէս և մեք համբերութեան տուեալ զանձինս մեր, և մերալոցն, լուսմբ և ոչ համարձակմբ առնել կամ առաջադրել զալսպիսի ինչ գործ, իշխանացդ. քանզի մինչդեռ ի սիրտս խռովչաց կալ հուր հնոցին Բաղեալ ընդ մոխրով մախանաց, և փուքն սատանալական զարբնոցին դեռ կալ ի հիւսիս անկործան, արժան է՝ քան զալս մեծամեծ ցն հաւաքելոյ և Թողուլ ժամանակին, մանաւանդ՝ որքան և կարելիք հնարկ է մեզ՝ ընդ մոխրով քաղցրութեան և հեզութեան ի խոր Բաղեալ զհուր Թշնամեացն և ոչ Թէ բորբոքել վրէժ-

խնդրութեամբ, մինչև բացցին մեղ երկինք և լորդեացեն անձրևք ի չիջուցանել զհուրն, որպէս կալաբք և ինքնակալք ևս, երբեմն զղժուարին ինչ առնել անձամբ, թողուն և յանձնեն ժամանակին, առաւել մեք պարտիմք սպասել ժամանակին, ըստ որում չունիմք սիրապէս իշխանութիւն, և իւրաքանչիւր չարագործք, զմի մի՝ ամիրալ, բարեխօս և պահպանիչ ունին. վասն որոյ՝ խոյս տամք, զի մի՝ քշնամեացն նպաստ զտանիցիմք վրէժխնդրութեամբ. Այլ սակայն՝ ոչ կամելով իսպառ զանց առնել զղրութեամբ Տէրութեամբդ, գրեցաք և մեք Թուղթ բանադրանաց առ Մչոլ վանից չորեքին չարագործն. նաև գրեցաք առ. Գէտն նոցա և առ միաբանութիւնն, մի ընդունել զնոսա յեղբայրութիւնս, մինչև ոչ եկեսցեն յոտս Սրբազան Տէրութեան ձերոյ. Ապաչէս և Թուղթ մի գրեցաք առ Մովսէսն Մչոյ՝ (որ բարեկամ է մեզ) առաքել զնոսա բռնութեամբ յոտս վեհապետիդ. Մեծի խոհեմութեան և հնարից ունի հարկաւորութիւն, առնուլն հաչիւ ի Նիկողայոսէն՝ ի ներկայութեան Գալուստ վարդապետին. անկարելի է հնար գործածելն, ըստ որում սա՝ ոչ բնաւ ճանաչէ զինքն կարօտ զոլ՝ առնուլ յումեքէ զխորհուրդս, եթէ սա հեռացեալ աստի՝ յանձնիցէր ումեք զկարողութիւն պահանջելոյ՝ թերևս գողանալոր ինչ՝ թէպէտ և այն, բազում նեղութեամբ. այլ ոյսէս երեի, սա ի յոտս կողմանս մնալ չկանայ, և կամի երկրորդ խամաեցեալ լինիլ, վասնորոյ՝ սորա աստ մնալոյն՝ ոչ գոյանայ ինչ. Դժուարին լինի յայսպիսի ազմկեալ ժամանակի պատուհասել զերիս չագլուխան՝ յերիս քաղաքաց, որպէս թէ՝ խառվեցաց հրոյն բորբոքիչ եմք եղոց, աստ՝ Մանուկին և Մատթէոսին յայտնելով՝ ի ձեռն նոցա գդուչացուցեալ զքակորն, յուսամ որ աղդիցէ Աբրահամ Սիւնեաց Արք եպիսկոպոս՝ սիրելին մեր եկն աստ, ի նմանէ տեղեկացաք լիովին զամենայն անցից Տէղուդ. ի հիւսիս՝ բաւական զօրաւոր գրութիւնք առաքեցան, որպէս մահաբերի օրինակն տեսեալ էք, Թուղումի զմիւս ծածուկն՝ որք առանձին գրեցան, զորս Գէորգ Աղայն և Տէր Ստեփաննոսն գիտեն. երեք ամիս էանց յորմէ հետէ առաքեցաւ, և մինչև ցայսօր դեռ ևս չընկալաք միխիթարութիւն ինչ. մինչև ցվերջ սեպտեմբերի եթէ ոչ խաղաղացի հիւսիսային կողմն, պարտ է գնալ ոմն ի ձերոց Սրբութեանց և բողոքել առ Կայսրն. ըստ որում սա չգիտէ զլեզուս և զօրէնս նոցին դատաստանի, և չունիմք անդ՝ ոք իշխան բարեկամ, խորհրդակից և առաւ չնորդ՝ գտանիլ սմա, յանծանօթ գաղաքին յայնմիկ, վասն որոյ եթէ սա միայնակ գտանիցի անգ, և կամ երկուքն, առաւել գրամ հարկաւորի, և այն՝ ոչ սակաւ. մեր աղքատ և պարտատէր գոլն, մեծութեան ձերում լաւ յայտնի է, և այլ ոք դրամ տուօղ աստ ի սոյն գործ չկայ. նոյնպէս և դուք Սրբազնութիւնդ՝ այդր ի մեծամեծ զբաղանս տուապաիք, տարակուսելի է թէ՝ որպէս պատուի լինիլ. հաւաստի ապացէս երեի, որ եթէ ի սակաւ միջոցիս ոչ վերջացցի խառվութիւնն՝ ի հիւսիս, յայտնի է՝ որ ոչինչ աղդեն գրութիւնք և աղաչակք մեր, ուստի՝ հետևի, զի հարկ է փութով առաքել անդ զերկոսինն ի միասին՝ հանդերձ ամենայն հարկաւոր Թղթովք, մանաւանդ կարապետ վարդապետիւն և Վաղար վարդապետիւն՝ առ ձեզ բերեալ ընդհանրական մահաբերքն. քանզի եթէ ոչ աճապարեսցուք զայսպէս առնելն, երկնչիմ թէ, Թիֆլիզու գործակալքն յառաջնացեն այդր, և ուր նայնացցին ամենայն աշխատանք ամենացունցս, որ մինչև ցայսօր. Ահա՝ մաքուր սիրտ Սրբազնութեան ձերում դատել կարէ, զի ըստ ամենայնի սիրտ մեր՝ ընդ ձեզ է, և որքան կարողանամ, ոչ ինձեմ զջանն իմ ի նպաստութիւն Տէրութեան ձերոյ, բայց մինչ հրգեհն մեծ էր, ոչ իսպառ չիջանին միանգամայն, և ոչ դիւրաւ յառաջանան կամք մեր, ուրեմն՝ եթէ ոչ կամաւ, գոնէ ակամայ, արժան է Սրբութեան ձերում սպասել ժամանակի և անմեղադրելի պահել զվեղ.. որպէս և Տէր Ստեփաննոս ղեօնասիրճ քահանայն և Գէորգ Մխծապատիւ Աղայն կարող են վկայել, թէ որքան տառապանս կրեմ ի ներհակացն, և այն վասն ճշմարտութեան և սիրելոյ իմոյ զՍրբազան վեհապետութիւն ձեր. Ար է ողջ լեր ի պարծանութիւն Հայաստանեայցս տուրք եկեղեցւոյ. ի պարծանս օրհնեալ Աղգին մերոյ և ի ցնծութիւն սրտի ՅՈՎՀԱՆՆԷՍ ապարգիչն Պատրիարգիս Կոստանդնուպօլսոյ։

ՌՄՄԲ, ե սեպտեմբերի ԺԶ։

ի Մեծն Պօլիս ի Պատրիարգարանին։

Նաև՝ Թէպէտ գրեցաք՝ ի գրիս վասն

չորից անիծելոցն ի ձէնջ և մեր գրել զիր ընդվիզից, բայց՝ երկու զլխաւորք ի չորից աստղաշուք իշխանաց դիր աղաչանաց դրեալ էին, և ոմանք զլխաւոր իշխանք տիրութիւն առնուն նոցա, վասն այնորիկ՝ մեր լետ թողաք, և չտնամք, զի ի ձեռն նոցա, զնուստառոս Աբրազնութեանդ ուղարկել այս է միտ մեր ընդ Աբրահամ վարդապետ սիրելի եղբօր մերոյ։

Առանձին։

Դաւթ զայս ես առանձին ծանիցէ Սրբութիւնդ, զի այն Դանիէլ հայր սուրբին Աստուած ինսաֆ տացէ, որ ի տեղս ես ինքնին գրովք ապականութեան լցուցանելոյն զկնի զերկուս չարութեան ծնունդսն զդոզովն իւր՝ ապականագործ պիղծ արբանեակն ուզար կնալ է ի քաղաքս՝ որք ոչ միայն ի քաղաքս, այլ աստի լամենայն տեղիս և լամենայն ծանօթս և լանծանօթս դիր ուղարկելով առանց խմալի գրեր չինելով՝ զունկս և զլեզիս ամենայն հասարակին ապականեցին, և զեռ լայդպիոի աչխատանս են, չիք Մանուէլ և չիք Ներսէս աբեզայքն ընդ չարագլուխ Մեսրոպ Իրիցու և Ղամպուր Սահակ անիծելոյն. ընդ որս է Մոզոսեան Սարգիս սարաֆն որ յոյժ բարեկամ Դանիէլ Արհուին, մէկ չիք ենդիսէ Դանապաշ անիծեալ մի ոսկերիչ, և Մանկավարժ Առաքել, Թողում զմեծամեծ խելագեղիցն զանուանս ի զլխաւորացն ազգիս մերոյ, որք մինչև ցարդ խեռիւ և խեթիւ հալին առ երկակոմանս մերկոյս, որոց ամենից Տէր Աստուած վրէժխնդիր եղիցի։ Ցօրն մէկ սուտ հանեն և պարզամտաց դխիդես ապականեն հասարակ չարք, ապաւինելով առ պետսն իւրեանց չարութեանց։ Թէպէտ սոքա ինձ նուաստի ևս են զլխաւոր թշնամիք, բայց սրբութեանցդ, հակին արտրեալ բաբաքամունսն ոչ նուաստս կարեմ ընդ գրով արկանել և ոչ ես լուիցես Տէրութիւնդ։ Սակայն Կարապետ վարդապետ սիրելի եղբայրն մեր, զոլորիցն տեղեկացաւ, ճշմարիտն պատմեցէ Տէրութեանդ. լուր, և արդար դատաւորին լանձնեա զամենայնն. զի նա զատեսցէ։ Այժմ բարեկամք Դանիէլ պետին սրոյ Կարապետի առաջնորդ առնել կամին, զի անդ կաթուղիկոսական պերճութեամբ նստիցէ և այլն. բայց՝ ի լընդդէմ կալն մեր և ոմանց բաբեկամաց, այժմ խափան մնաց բանն. տեսցուք թէ զինչ լինի վերջն։ Իսկ եթէ հնար ինչ լինիցի, կերպիւ մի ի սուրբ Աթոռն տարեալ սիրով չահեցես զնա անդ, իբրու ամենայն աչխարհի խաղաղութեան առիթ լինիս։ Զանազի նա մինչ արտաքոյ Աթոռոյն է, աստուխան ոչ դադարի. ոչ միայն լիւրն կողմանէ, այլ արբանեկացն ամենից աստ և անդ եղելոց. ահա նուաստս զեռ լուռ և եթ կամ. հելէ՝ ինչ և իցէ խնդրեմ, զի զկարապետ վարդապետն լաւ խօսեցուսցես. զի չի հասկացած բանն չի մնաց աստ։ Եւ լուսամ թէ մեր կարի սիրելի Դէորդ լարդելի Աղայն և Թադէոս եպիսկոպոսն մանրամասնաբար դրեալ են կամ գրեն հրամանոցդ։ Արդ՝ Աստուած հրամանոցդ կեանք տացէ, և ի վերալ հալրապետական Աթոռուդ հաստատ պահեսցէ ի հալրութիւն մեզ, և համայն ազգին չնորհեսցէ զսրբութիւնդ, հրամանդ իմ հոգևոր հալրս ես, ամենայն գործդ իմ է, ըստ ամենայնի միամիտ լիր։ Լուսահոգի Յովսէփ սրբազանն՝ (որոյ զհոգին Տէր լուսաւորեսցէ ընդ սուրբ հալրապետսն դասելով) ինձ հալր ստրարեալ էի և նա զիս լոյժ սիրէր առաւել քան գորդի, սակայն Աստուծոյ ճշմարտութիւնն վկալ լիցի, որ առ այն ունեցեալ սէրս, խոնարհութիւնս և հաւատարմութիւնս ըստ ամենայնի առ տէրութեանդ կողմն չրջեալ եմ, ոչ թէ այժմ ներկալացէս, այլ՝ ի լսելն իմ զպատուական անուն սրբութեանդ, իսկոյն չանացի հոգւով չափ ի հաստատել զգործ լաւալանալոյ բանիդ։ Թէև իմ հատորս չէր, Աստուծոյ ողորմութիւնն, սուրբ Աստուածածնի չնորհն և սուրբ լմման տեղի զօրութիւնն ալսպէս արաւ, փառք Աստուծոյ և բիւրիցս բիւր անգամ փառք ամենակարողին և ամենախնամ Արարչին հանուրց արարելոց։ Ալլ և երես անկեալ կաղաչեմ զսրբութիւնդ, զի գնուիրակ Դալուստ վարդապետն սիրով չահեսցես՝ քաղցրաբան գրերով հանգուսցես զսիրտ ծերունւոյն այնմիկ, զի չահեսցի ի բանից տէրութեանդ, որ զկնի աւարտման գործոյ դիմեսցէ ի սուրբ աթոռն, և անդ անցուսցէ զսակաւ աւուրս ծերութեան իւրոյ. զի մի լաւուրս քոյ ալսպիսիք անչահ մնասցեն թափառական չրջելով։ Նաև՝ լսեցի թէ Յօհաննէս եպիսկոպոսն անկցի, քան զիւր զլուխն մեծ չարութիւն է գործեալ առ մեծապատիւ լարգութիւն ձեր, և սրբութիւնդ

վերստին ներեալ ես նմա. լաւ ես արարեալ Աստուած հրամանոցդ կեանք տացէ, ամէն մարդ լիւր արածէն թող ամաչէ։ Դրիգոր վարդապետին համար լսեցի թէ եպիսկոպոս ձեռնադրեալ ես և ուղարկեալ ըստ կտակի լուսահոգւոյն, չատ ուրախացայ. Աստուած չնորհաւորս արասցէ. սակայն եփրեմ արքեպիսկոպոսի լաւութիւնն ևս մոռանալի չէ. ղերէ ոչ պակաս քան զԴանիէլ հոտեցոյց քաղաքս անճոռնի թղթերովն. Աստուած ինսամի տայ։ Խօշ ինչպէս մարդ լինիլն չէաք գիտել, հիմի իմացաք։ Մէկ մի ալ, մեր լուսահոգի Թադէոս վարդապետն կալր, որ յԱժտերխան վախճան ընկալեալ կենացն առ Աստուած փոխեալ էր, ի կենդանութիւն հոգելոյս հալրապետին Յովսէփալ. նորա եղբալրն և քորքն աղքատք, և խեղճ մալրն լալագին գիմօք Թաճիղ [21]) կոնէ զմեզ միշտ. կարապետ վարդապետ սիրելի եղբօր մերոլ հարց թէ, այն Թադէոս վարդապետի ծնօղն և եղբալրն ինչ կուզեն, ղինչ է դոցա խնդիրն տէր, նա պատմեսցէ, և դու գերապանծ սրբութիւնդ որպէս և կամիցիս, այնպէս արասցես։

Ո՛ղջ լեր կրկին ի լօգուտ սրբոլ աթոռոյն, ի պայծառութիւն ազգիս. ի պարծանս ՅՕՀԱՆՆԷՈ ապարդիւն պատրիարգիս Պօլսոլ։

ՃԼ. *Թուղթ Դանիէլ կաթուղիկոսի առ Թաթուլ։*

Աստուծոլ օրհնեալ ամենաբարեպաշտ պարոն Թաթուլ հարազատի սրբոլ Լուսաւորչին ողջոյն տամ և օրհնութիւն կարօտալի.

Ցանկամ զքեզ տեսանել և ոչ կարեմ. վարդապետաց գիրն կարդացի ուրախացայ. երանի էր թէ գրէիր իւրեանք էլ գ... մէկ մի լառաջ. մինչև նոքա չգան ինձ ազատութիւն չկալ. կամ թէ ինչ ունին քեզ ասած մեզ իմաց առնես գէնալ ալն աղալումն որ գիրն բերած էր. ես լետին թշուառութեանն եմ հասել. զիս մահացուցանել խոստանալ թէ որ նաչար մնամ կանեմ կասէ թէպէտ մահն ինչ կեանք է և լոս, և ոչ երկնչիմ լուսալի քրիստոսի, բայց քանի անգամ սրբութիւն և խոստովանահայր ուզեցի չի տուին. եթէ գիտես ուղղուն կու գալ, և քեզ վնաս չի լինի. լոս անկանելդ և կամ ինձ էլ վնաս չի գար, խաներն և կամ խանումին խօսք անցրու ինձ միաբանից մէջն մէկ խուց տալ տուր. այս կապանոցէս ազատիմ. բանի որպիսութիւնն ինչպէս գիտես այնպէս հոգաս, թէ որ մէկ գիտեցած մարդ ունիս, հարցրու և լաւ հոգա. ապա թէ ոչ, մնա աստուած ողորմած է, ոգջ լեր ամենայն ցնծութեամբ և ուրախութեամբ, ամէն։

ԴԱՆԻԷԼ կաթանաւորեալ ծառալ քրիստոսի աստուծոլ

1803 օգոստոսի 25 ի կապանս իմ։

Ցնտ վախճանի նորին չարահնար սպասաւոյն իւր Գրիգոր վարդապետ ոմն, պինքն և զընտանիս հանգուցեալոյն իբրու ժառանգ, և ախրող կալոյն վերաճանելով թէ զինչ ինչ չարահնարութիւնս անցուցանէ ընդ գլխով չորից հրաւիրակ չարգելի եպիսկոպոսացն լեզու իմ տկարանալ ի ճառելն և ծանրանան իսկ լսելիք բարեպաշտ ունկնդրացդ, միայն թէ համառօտ ալոքանս ունիմ ծանուցանել, որ դալն ամենայն հարուստ բարիւն հանդուցեալոյն Ծովսէփալ ենթ տիրապետութեան իւր ամիսոլելով բանալ դբեւինան, և բնաւ ոչ թողաւ նոյն չորից եպիսկոպոսացն ձեռնամխելոյ ի կալս սուրբ աթոռոյն. այլ զսուտ կտակս կեղծելով աստ և անդ հրատարակէ որպէս թէ հանդուցեալ ծնօղն իւր կտակեցնալ լոյէ թէ իմ ժառանգս Գրիգոր վարդապետ ե իմ աղբօրորդիքն են, նոքա լիցին տիրողք կալից իմոց, և ապա թէ լաջորդեցի ինձ գահակալութիւն սրբոյ աթոռոյն էջմիածնի, կամ ծոհաննէս պատրիարգին Պօլսոյ, (որ լայնժամ նա էր պատրիարգ) և կամ Դաւիթ Արքեպիսկոպոսին Թիֆլիղեցւոյ, և զսոսա վասն այն նշանադրէ Գրիգորն, զի ըստ ըղձի և վախադանացն իւրոց ընկալցի ի նոցունց զաստիճանն եպիսկոպոսութեան և ընդդէմ հաճութեան ժողովրդեան կողմանց առաջնորդական կոնդակաւ մոցէ աստ, քանզի լաւ դիտէր որ եթէ օրինաւոր ընտրեալն ի հանուրց ազգին սրբազան Դանիէլն լինիցէր ընդ իւր չարահնար արարմանցն ոչ թէ եպիսկոպոսութեան այլ և ոչ վարդապետութեան անուանակոչութիւն լինէր իսկ արժանի։

Մեք դոլով լայնժամ ի Ղզլար քաղաքի վասն նուիրակութեան մինչ լուաք ըզվախճան հանդուցեալ Ծովսէփ կաթուղիկոսին, և զայն ամենայն չարահնարութեան գործս Գրիգոր վարդապետին լետ զպաշտօն թաղմանն վճարելոյն վուխտացաք անտի ի լեզգեցկի (որ է սահման ի մէջ տէրութեանս և Վրաց աշխարհին) առ սպաս նորին բարձր գևրազանցութեան կուսակալ գենարալ Լէվիտէնանթ Կառլ Ֆէդրիչ Կնօրինգին, զի մի այնքան հարուստ կալն ի վատնումն գնասցէ և մինչ ի լաս հոգացողութեան էի, ընկալալ ի լԱժտարխանցւոց և ի Ղզլարցւոց և ի Մոզդոկցւոց բազմակնիք մանասս, թէ ի հոգեւորականաց և թէ ի մարմնաւորականաց, լորում դրեն նախ զմխիթարականն ի կողմանէ հանդուցեալ Ծովսէփալ հայրապետին և ապա թէ անուն Գրիգորին մի լիշատակեսցի ի միջէ մերում այլ որպէս լառաջ քան զնս խընդրեալ իմ, և կոնդակաւ իսկ կարգեցեալ ես ի վերալ մեր առաջնորդ կրկին ահա մեր ընդունելին և հաճոյն գոս ես և բաց ի քէն

ղալ ոք ոչ գիտեմք, և վերջապէս խնդիր, հարս տանել ի Թիֆլիզ մնացեալ կալիցն. զի մի վատնեսցի, իսկ չունելով մինչ ցայն վայր ի լուր թէ ի չորից եպիսկոպոսաց ի Թիֆլիզու, և թէ ի Սրբազան Սինօդոսէն Սրբոյ Աթոռոյն, ակնադէտ լեալ սպասէի, սր և յետ քանի աւուրց ղալն գրեանս ևս ընկալաւ ի Թիֆլիզու չորից եպիսկոպոսաց աղաղակ և բողոք անպատմելի զԴրիդորն վարդապետէն և զկալս Սրբոյ Աթոռոյն բոլորովին լսելոտակեաց ղոր չռալլաբար վատնելով լցուցանէ ղորովայնս յներհանուս խանին և այլ բռնակալացն, զի կամ զՅովհաննէս պատրիարգըն տացեն օձանել, և կամ զԴաւիթ Արք եպիսկոպոսն, և մանաւանդ՝ թէ զմեղ ևս կալանաւորս արարեալ արգելէ աստ, զի մի գնացեալ՝ փութապէս հոգ տարցուք զօրինաւոր հայրապետի վերջապէս խնդիր արարեալ՝ թէպէտ զու էիր արժանիս հայրապետութեան բայց այնպիսի ոք ոչ գոլով արժանաւոր վիճակիդ այդմիկ առաջնորդութեան խնդրեմք հաստարակ միաբանութեամբ, զի զու լանձնառու լինելով կողմանցդ վերատեսչութեան մնասցես լալգր, և օգնական լիցիս մեզ տառապելեացս, և տլապիսի գիր ևս առ նորին բարձր գերազանցութիւն կուսակալն էին գրեալ և վասն ինքեանց արձակումն խնդրեալ ի Թիֆլիզու, իսկ ի կողմանէ սուտ կտակին իսկական ձեռագիր Սիմէօն Արք եպիսկոպոսի խոստովանահօրն հանդուցեալ Յովսէփ Հայրապետին առաքեալ էին որոյ օրինակն է *) ալս։ Ընդ գրսն ի Թիֆլիզ եղեալ եպիսկոպոսացն ընկալաք և զՍրբազան Սինօդոսին սրբոյ աթոռոյ՝ թէ միանդամայն մեք ներդուեցաք հանդէպ բազմարանին Աստուածիջեան Սրբոյ տաճարիս ի վերալ կողմունս սրբոյ գեղարդեան Քրիստոսի, և աշխն սրբոյ լուսաւորչին, որ բաց ի յաղքնտիր սրբազան Արհւոն Դանիէլին մեք զոչ ոք կամիմք հայրապետ մեզ, որև սոյն երգումն մեր յատնելով Երևանու խանին, և ի նմանէ ևս ի վերալ Սրբազան Դանիէլին գիր առեալ երկուս եպիսկոպոս և երկուս վարդապետս բազմակնիք մահսարաւ միաբանութեանս մերոյ առաքեցաք յնդոկիա առ սրբազան Դանիէլ Արհին (որ յայնժամ անդ նստէր զի փութացեալ գիմեսցէ ի սուրբ Աթոռն և բաց ի յատուկ կընդունի զոր եղեալ ունէր Թիֆլիզոյ Դաւիթ Արք եպիսկոպոսն ի մահսարոյ մերում, այլ և յատուկ սեպհական ձեռամբն իւր դրեալ ևս եթէ աստուած է որ կոչէ զքեզ՝ արդ փութասցես յայցելութիւն Սրբոյ Աթոռոյս։

Եւ զայսոսիկ լուեալ իմ ի գրութեանց միաբանիցն զայն ամենայն լիովին ծանուցի նորին բարձր գերազանցութեան կուսակալին դրել զհրամանս ի Թիֆլիզ եղեալ զօրապետին նախ աբձակումն տալ չորից եպիսկոպոսացն գնալ ի սուրբ աթոռն, և ապա գԴրիդոր չարահնար վարդապետն արգելել անդ մինչ ի վերահասու լինելն այնց ամենից անցից. տակաւին ղալս հրամանն ոչ ժամանեալ ի Թիֆլիզ, Դաւիթ եպիսկոպոսն ղիւր վաղեմի փաւամոլական ախտն յայտնի արծարծանելով ի ձեռն չարահնարութեան Դրիդոր սևակրին և ի ձեռն չռալլաբար վատնութեան կալիցն հանդուցելոյն Յովսէփայ զխանն երևանու օդնական իւր գտեալ ընկճեցուցանէ զանձնիչխանական կամս ողորմելի միաբանիցն և ահարկութեան մտրակս ցուցանելով ինքնալօժար վաոաւմոլութեամբ մատչի առ այն սոսկալի կոչումն։

Եւ թէպէտ միաբանիցն միանգամայն գոլով երդմնահարեալք ոչ յանձն առնուն, այլ առեալ զմատուն, և խոյս տալով ի սրբոյ Աթոռոյն ի վախուստ աճապարեն, սակայն զօրաց Երևանու խանին պնդեալ ղհետ նոցա, բռնութեամբ յետս դարձուցանեն, և ի վերայ իւրաքանչիւրոց եպիսկոպոսաց զինուորս կացուցանելով պահապանս այնպէս տան գԴաւիթ եպիսկոպոսն օծանել կաթուղիկոս ի յապրիլի 28-ըն. և ապա ի Թիֆլիզու նոյն չորից եպիսկոպոսացն եկեալ տեսանեն գնա օծեալ։ Իսկ ցանկալին ընդհանուր ազգին հայոց և սրբազան սինօդոսին Սրբոյ Աթոռոյն երկիցս ընտրեալ Արժանավայել Սրբազան Արհին Դանիէլ հանդերձ հրաւիրակօք իւրովք ընդոկիա մեծաւ փառաւորութեամբ և կաթուղիկոսական չքով քաղաքէ ի քաղաք մինչ ժամանէ ի Բալազէթ ի հարևի ի երկիր իւր որ մերձ է սրբոյ Աթոռոյն հրեթասան ժամու միջոցաւ լսէ անդ զայն ապրինաւոր գործն և մնայ անդ յետս ընկերեցեալ։

*) Կտակի պատճէնը տպուած է «Ծիսան էջ. պատմ.» Գ. Ե.—Ի. եր. 81, ուստի և այստեղ չենք բերում։

Արդ զայս ապօրինաւոր գործ ընդդէմ Աստուածապլին օրինացս ե աւանդութեանց սրբոց հարց լսելով բոլոր հայկազնէիցս Ռուսաստանու, եթէ ի ձեռն միոյ ախտակիր սեւակրի մաքուր աստիճան քահանայապետն ի ներքոյ ոտից անկաւ ծաղր ե այպն կատականաց եղև ազդ մեր ի մէջ ալլասեռից վասն որոյ առ Սրբազան Սինօդն Սրբոյ աթոռոյն գրեցին զբազմակնիք մահէրս, թէ օրինաւոր հայրապետն ազգի ընտրութեամբն պարտի լինել զի ով ոք համահաճական ընտրութեամբ սրբազան Սինհոդոսիզ և ազգին ողջոյն նշանագրեսցի զոյ հայրապետ, զսոյն գիր ծանուցեք նմա զի մի զԳրիգորն եպիսկոպոս արարեալ առաքեսցէ ի Տէրութիւնս, զոր քնաւ չունիմք ընդունել, ոչ զինքն և ոչ զառաքողն իւր, զայն գիր հասեալ ի ձեռս միաբանից ցուցանեն ապօրինաւոր նստողին։

Եւ մինչ բռնութեամբ գրաւէ Դա իթն ապօրինաւոր կաթուղիկոս կոչեցեալ ղչնորհս հոգւոյն սրբոյ, չետ թագաւորեցմանն, ապա տայ եպիսկոպոսաց բռնութեամբ դմա՝սարս չինել, և կարապետ անուն վարդապետ ոմն (որ, ընդ հովանեաւ Ցովսէփ կաթուղիկոսին ի վիճակիս այսմիկ, ի հնգետասան ամս, ընտոեալ էր լայորդ, ի վանս Նոր Նախիջեւանու) յաւաջ բերեալ գնա ձեռնադրէ եպիսկոպոս, և զմահարս միաբանից տուեալ նմա առաքէ ի Պօլիս, ընկալնուլ զՊէբերման ի մեծ սուլթանէն։ Ապա գրէ ի Թիֆլիզ առ Գրիգոր վարդապետն գնալ ի սուրբ աթոռն և ընդ իւր տանել զգի հանգուցեալ Ցովսէփ կաթուղիկոս կոչեցելոյն։

Եւ նորա քնաւ ոչինչ անսացեալ, այլ ընկալեալ զԳրիգոր վարդապետն որպէս հոգի իւր փութով ձեռնադրէ եպիսկոպոս և առաջնորդական կոնդակաւ առաքէ ի Տէրութիւնս, լինել իմ աստ նուիրակ և նորա առաջնորդ, իսկ զմահարատար ողորմելի այրն ձգեալ ի ներքոյ փայտի տալ անողորմ գանել, կապանեցուցանելով զբոլոր անձն, թէ չ՚արդ զայս գիր քերեր աստ։

Զայս ամենայն անցս լսելով կենդանի նահատակին երանելոյն Դանիէլի, ի Բալաչիտ քաղաքի, և կարի մեծահոգութեամբ խելամուտ լինելով դիմէ նախ զոյս իւր առ վերնայնին տեսչութիւն, որ կոչեցաւ զնա և ապա մատուցանէ զինդիր մի առ Ամենառողմ և Օդոստափառ կայսերս ամենայն ուսաց Աղեքսանդր Պաւլովիչիս առաջնոյ. և մին դիր կողմանցս երանելի իշխանապետ Աղալ Ցօհաննէս Աղալ Սղիաղարեանին ջուղայեցւոյ (զի սա գոլով ի կայսերց պատուեցեալ և լաւուկ լանուն սրբոյ Ցօհաննու երուսաղէմացւոյ նչանակիր կայսերան փառազարդեալ՝ նստէր ընտանեաւ աստ ի Պետրբուրգ քաղաքի, իսկ վեհագնեալ եղբարքն իւր երևելի իշխանք Աղալ Մինասն և Աղալ Ցովակիմն հանդերձ ընտանեօք ի Մոսկով քաղաքի)։ Քան ազգասէր բարուցն իւրոց օգնական և աստիճական լինել Սրբոյ Աթոռոյն, որ ի ձեռս բարբարոսաց մատնեցաւ, և մին կոնդակօք նմա դիրս ևս հաստարակօրէն ի վերայ բոլոր հայոց Ռուսաստանու, ոչ զայլ ինչ լայտնելով ի նմին, եթէ ոչ՝ զաւաւապանս մեր մերոյ լուսոյ սրբոյ աթոռոյն, թէ ոչ՝ զիս, այլ մի ոմն ի լետնագոյն աթեղալից ընտրեցէք օրինաւոր հայրապետ և այլ առարէք սրբոյ աթոռոյն, որ ահա պատառեցաւ քօղն հարսին, միաբանք սրբոյ աթոռոյն ենթարկեցան ի ներքոյ կապանաց, բռնութեան և անողորմ գանի, և գեղեցիկ զարդն վայելչութեան սրբոյ աթոռոյն մերկացաւ։

Ով մեծի ջերմեռանդութեան ժողովրդեանս, զի այն որ ի լապօրինաւորէն առաքեցեալ կոնդակքն էին թարց լուծանելոյ կընքոյ կրկին վերագարձուցին առ առաջողն իւր, իսկ գդիր սրբազան արհւոյն Գանիէլի իբր Աստուածաճիր պատգամ ընկալեալ ետուն յուկեզեցիս համայն ընթեռնուլ և մեծաւ ցաւակցաբար ունկնդիր լինէին։

Իսկ զգիր աղերսանացն որ ամենողորմ կայսրն ընդ համահաճական և բազմաստորոգ խնդրագիր մահարացն յԱժդարխանացւոց Ղըզլարցւոց և Մողղօկցւոց, տուեալ փօչտին (որ է սուրհանդակն) ի յԱժդարխանու մատուցաւ տրին կայսերական մեծութեան որ առ այս գործ ազգասէր իշխանին մերոյ աղալ Ցովհաննէս աղալ Սղիաղարեանին Լազրեան մեծ ջերմեռանդութիւնս ցուցանելով ետ ծանուցանել կայսերն զամենայն աղետալի անցսն, զանվայել արարս ապօրինաւորին, և ի տարապարտուց ղրկումն Գանիէլին, որև Ամենագթած և ինքնակալ կայսր մեծ (ըստ որում յայնժամ նորոգ յաջորդեալ ի տեղի յաւիտե-

նական փառացն արժանի ծնօղի իւրոյ երանելի կայսերն մեծին Թէոդոսի) եցոյց զարդարատար իրաւունս իւր, ըստ Սողոմոնի և մեծաւ քննութեամբ վերահասու լեալ և ամենաողորմածաբար զիջանելով ընդ խնդիր աղաղին, հրամայեալ էր մլանդամային զվճիռն անդառնալի, ոչ թէ նա, որ ընդդէմ աղաղին և միաբանութեան սրբոյ աթոռոյն մատուցց զինքն ի լայն կոչումն, այլ նա պարտի լինել, որ Աստուածային օրինօք և համահաճութեամբ աղաղին ընտրեցաւ։

Եւ ևս ասորիկ դիտելով մեր զմբճակաչ միջոցն թագադրութեան ամենողորմ կայսերս մերոյ որ աստէն պարտ էր գնալ ի Մօսկով և անդ օծանիլ, վասնորոյ իւրաքանչիւրս զդիմելն մեր լԱժդարխանու ի Մօսկով, զի ի լայնմ յաշխարհագումար հանդիսի ներկայ գտանիցուք. որ և առեալ ընդ իս երկուս քահանայս մտերիմս ինձ և աշխատակիցս, որոց միոյն լԱժդարխանու ասպ քահանայ Տէր Մինասն Ղօրղանեան և միւսն գրագիրն իմ Թիֆլիզցի տէր Մելքիսէդ տէր Առաքելեանն Ղամազեանց (որ ևս աւերմանն Թիֆլիզու անկեալ էր աստ ի պանդխտութեան) [29]) ի յօգոստոսի 12-ին եւաք ի լԱժդարխանու փոչտով և ի նոյն ամսոյ 27-ին ժամանեցաք ի Մօսկով, և ընկալեալ եղաք ի վեհադնեալ իշխանաց աղալ Մինասս, և Աղալ Յովակիմ Եղիազարեանց մեծաւ պատուով և չորգնօք, և յամենայն կողմանէ եղեն մեզ օգնական և աստղջական։

Ցետ քանի աւուրց, որ էր յօգոստոսի... ամենամեծ կայսրն մեծաշուք հանդիսիւ եւժուտ ի կայսերական քաղաքն Մօսկով և ի սեպտ. 15-ին, յաւուր սուրբ Խաչվերաց կիւրակէին ի լերկոտասան երկրորդ ժամուն ընկալաւ զշնորհս օծման սուրբ հոգւոյն և ըղթաղ արքայութեան ի գլուխ իւր (որոյ զանգին կեանս տէր արասցէ ընդ երկայն աւուրս),

Եւ թէպէտ ի լայնմ հանդիսի ի հոգևորականաց մերոց անկարելին էր ի ներահրոչակ վանս օծման կայսերն մտանել և անդ ի շարս եպիսկոպոսացն ռուսաց դասակցիլ, քանզի վեհադնեալ իշխան աղալ Մինասին ի սէր և ի պատիւ ազգին վառեալ գոլով ցանկացաւ ունիլ զիս անդ ի կարգս հոգևորականացն ռուսաց, և առեալ ընդ իւր գնացաք ի միասին ի նոյն գերահռչակ վանքն (որ առաջ լեզուաւ սօրօա ասի) և յարգմամբ պատուեցեալ ի եպիսկոպոսացն ռուսաց և ի շարս նոցա կացեալ, սրժանացաք վայելման նոյն երկնահանդէս օծմանն սրբազան օծմանն ամենողորմ կայսերս, և թէ որպիսի հանդէս կատարեցաւ լայնմ աւուր լեզուիմ տկարանալ ի ճառել որ իրաւի անլեզելի փառք և գոհութիւն ամենաբարձրելոյն որ ի լայնմ տարաչխարհիկ վայրէ ամբողջ հասուցանելով ի լամենացանկալիս լայս տերութիւնն, արժանացոյց զիս ասմիկ բարեբազդ դիպուածոյս որ թէպէտ ի սրբոյ Աթոռոյն մերոյ բազում եպիսկոպոս վասն առաջնորդութեան մտեալ են ասա, բայց կայսերական օծման զհանդէս ոչ են վայելեալ։

Ւսկ ևս հանդիսակատար աւուրցն, մինչ եղե ժամ ամենողորմ կայսերն վերահասու լինել ամենայն իրաւանց, յայնժամ վերահասուտուեալով ամենաողորմածաբար զհրամանն իւր, որ վասն ողբալի անցիցն Արարատեան աթոռոյն ի հոկտեմբերի 5-ին բարձրադոյն հրովարտակաւ հրամայեաց Պօլսոյ դեսպան պարոն Թամարին, թէ ի հաճոյս ազգին է կաթուղիկոսաընտրութիւն. զով ոք ազգն ընշանագրեսցէ գոլ հայրապետ օրինաւոր, նա լիցի և ոչ՝ ինքնանուէրն և բռնութեամբ վերամբարձեալն ի լայն աստիճան։

Զայս անդառնալի հրամանն ընկալեալ դեսպանին լայնէ ամիրալիցն Պօլսոյ և բոլոր ժողովրդեան որ և զգեցեալ նոցա ուրախութիւնս մեծ և գտեալ միանդամայն զազատ կամ թէև ի լապօրինաւորէն առակեցեալ կարապետ ապօրինաւոր եպիսկոպոսն ի ձեռն կաշառավատնութեան մտեալ ի Պօլիս առեալ էր դՖէրմանն ի սուլթանէն լանուն Դաւթին և լուղի անկեալ դէպ ի սուրբ աթոռն, քանց ի վերալ ալաբ աստուածաբար դթութեանն ամենամեծ կայսերս քաջասրտեալք նախ ի լաքսորս առաքեն զպղմկալուղ պատրիարգն իւրեանց ցօհաննէս Արք եպիսկոպոսն չատագովն ապօրինաւորին և զարբազատ ծոցածին զաւակն սրբոյ աթոռոյն գՂրիգոր արք եպիսկոպոսն խամսեցի ի Թօխաթ հրաւիրեալ քազմեցուցանեն ի վերալ պատրիարգական աթոռոյ և ի ձեռն նորին խնդիրս մատուցանեն հաստարանութեամբ Օսմանեան տէրութեան, ծանուցանելով դնվաւել արարմունս ապօրինաւորին,

յունայնացուցանեն զՔէրմանն նորին, և յանուն աղգս փափագ սրբազան Դանիէլին առնուն զնորոգ Ֆարմանն և Բէրաթ, և բառնալով զանուն միւսոյն ի պատարագին ի վերջն ղեկտեմբերի ամսոյ լիշատակեն յամենայն եկեղեցիս պօլսոյ զտէր Դանիէլ սրբազնակատար կաթուղիկոս ամենայն հայոց։

Արդ գոլով մեր տակաւին ի Մօսկով լուաք զլուր տկարութեան պատուականն անձին գերազանց իշխան աղալ Յոհաննիսի մինչ զի և յայնկոյս ոչ այնքան զգալով զվիշտ անձին իւրոյ, որքան զտառապանս սրբոյ Աթոռոյն գրէր միշտ յամենայն փոչտի առ վեհադնեալ եղբարն իւր, աղալ Մինասն և տգա Յովակիմն պանդխտութեանս և անձանօթ դոլոյս վայրեացս գրութեան գոլ ինձ ասպնջական, և հոգալ վասն սրբոյ աթոռոյն, որ և տէր օրհնեսցէ գհաւատս և զծնունդս սոցա, զի որքան կարելին էր աւելորդութեամբ հոգային և յետ քանի աւուրց հաճոյ դաեալ յաչս ամենաողորմածագունեղ կայսերն մեծի ի ձեռն աղալ Մինասին ի յառանձնական պալատի իւրում ի հոգտեմբերի 12-ին յաւուր կիւրակէի ի տասներորդ ժամուն արժանացաք հանդիպ սրբասնեալ երեսացն երկրպագութեան և հայկական մերս բարբառով զղրուատս ասացեալ, որոյ զթարգմանութիւն Ռուսաց լեզուաւ մատուցի ամենաողորմածագունեղ կայսերն, որոյ օրինակն է այս, և բաց յայնմանէ այլ ինչ մեզավայելն յանձնարարութիւն բերանով աղալ Մինաս բարերարին իմոյ ծանուցանելով ամենաողորմածաբար հրամայեաց թէ որ ինչ միանգամայն խնդիր է քոյ ունիս կատարել *)։

Որ և ըստ խնդրոյ բոլոր Հայկազնեից Ռուսաստանու բարձրագոյն հրովարտակաւ հաստատեաց դիս գոլ առաջնորդ կողմանցս և յատկական ողորմութեամբ ևս պսակեաց զպարանոց իմ ականակուռ և բուլիաճաճանչ ոսկեայ արկանելոյ ընդ պարանոցաւս։

Եւ յետ ալօրիկ ի վերադառնալ կայսերն մեծի ի յաթոռանիստ քաղաքս այս Պետրբուրգ, և մեք ևս փութացաք դալ աստ և տեսանել զցանկալի ազգասէր իշխանն մեր, բայց դինչ օգուտ որ անդադրանալի վճիռ ամենակարողին ժամանելով ի հոկտեմբերի... փոխեալ էր ի կենաց աստի, և մեր ոչ հասեալ նմա ի կենդանութեան եկեալ տեսաք զնա ևօթնօրեայ յամիսս եալ ի դիրս հանգստեան ի լինքնակառոյց եկեղեցւոջն, որ յանուն Սրբոյ Յարութեան, որում և անդ էր ամփոփել միակ որդին իւր աղալ Յարութիւնն, և մեք ըստ պարտաւորութեան մերոյ զամենայն ղհոգւոյ կարգս նորին վճարեալ, նստիմք ալժմ հանդերձ երկու քահանալիք հարազատովքն իմովք և այլ պաշտօնէիս ի տան հոգեվոյս իշխանիս մեծաւ յարգմամբ և պատուով։

Արդ գոլով սորին անզաւակ նմանապէս և եղբօրն իւր վեհադնեալ իշխան աղալ Մինասին, վասնորոյ ժառանգութիւն կալեալ կրասւեր եղբայրն սոցին աղալ Յովակիմին, ղիմեաց ի տար աչխարհ սակս կառավարութիւն տալոյ հպատակացն հոգեվոյս եղբօրն իւրոյ, իսկ վեհադնեալ աղալ Մինասն թողեալ զամենայն անձնական իւր դհոգս, մնալով աստ առ սգազգեաց գերազանցուհի տիկին հարսն իւր, ոչ այլ ինչ իրաց ակնադէտ լեալ սպասէ եթէ ոչ սոյն բարի յառաջադրութեանս կատարելապէս լրման, և արդարև անձնագիր ջան սորին որ ի սէր սրբոյ Աթոռոյն, և ի սէր ազգին, չէ մարթ ընդ գրչաւ եղրափակել. և գրեթէ բոլորովին զնոգս իւր ընդ այսու պարաւանդեալ ոչ տալ քուն աչաց և ոչ նինջ արտևանաց։

Սրբազան Պատրիարգն Պօլսոյ և եղբևելի ամիրալքն տեսանելով զայս ամենայն ջանակրութիւն իմ և վեհադնեալ օրհնեալ իշխանացս վասն ջատագովութեան հաւատոյ և օրինաց, դանազան գրութիւնս էին առաքեալ նախ չնորհակալութեան, և ապա սակս վախճանի կենաց ազգասիրտ իշխան աղալ Յոհաննիսին մխիթարական թուղթս դրեալ առ վեհադնեալ եղբարն և առ տրտմազգեաց տիկինն Կատարինէ Իվանովնայն, և Սրբազան Դանիէլի Ֆարմանի օրինակն ևս առաքեալ էին ի ձեռն... իսկ իսկն ընդ չնորհաւորութեան գրոյն լղեալ առ Սրբազան Դանիէլ օրինաւոր կաթուղիկոսն, որ է ի Կարին ընդ նմին և դրեալս առ միաբանութիւն սրբոյ Աթոռոյն եւ առ Սրեանու խանն, զի ի ղլմնլն սրբազան Դանիէլին վասն ընկալնլոյ զաստուածահրաւէրն օծումն ըստ ըղձի ազգին, ի բաց բարձեալ զորումն ի միջոյ, այսինքն ապօրինաւոր նստօղն յա-

*) Դրատի օրինակը չկար մեր օրինակի մէջ,

ոաջ ընթացեալ օրինաւոր փեսային ի ներս մուծցեն ի սուրբ Աթոռն և օծանիցեն, որոյ զլուրն ժամանեցման չունիմք տակաւին։

Ալ արդ՝ այժմ պատմեցից ձեզ զԳրիգոր վարդապետէն, թէ ըստ իւր արարմանցն զինչ եղիտ զվարձն։

Իբրև լուաւ թէ կողմանցս աղդն հայոց չունին ընկալնուլ զինքն թողեալ զմուտն իւր ի Ղղար և ի յԱժդարհան աճապարեաց ի Մօսկով կւնդակաւ ապօրինաւորին և լրելով աստ և անդ ի մեծամեծսն ուուսաց, ջանայր թերևս հնար իմն զտանել։ Բայց յուսալոյս աչխատեալ ղրկեցաւ յամենից իւորհրդոց արհամարհեալ։

Իսկ այժմ մատուցեալ ունիմք զխնդիր ամենողորմ կայսերն մեծի պահանջելով զհաչիւն ի Գրիգոր վարդապետէն նախ զքսան և եօթն ամեաւ կալից հանդուցեալ հայրապետին Յովսէփալ, և ապա զբազմագումար արդեանցն ի Հնդիկս եղեալ մերազնեալ բարեպաշտ ժողովրդոցն (որ վասն բարեկարգութեան ի ձեռն Ստեփաննոս քահանալին Թիֆլիղցւոյ հասուցեալ էին հանդուցեալ Յովսէփ կաթուղիկոսին, ղորս ամբողջապէս ընկալեալ ունէր աստ ի Պետրբուրգ ի 1800 յամին, մինչ դի ի պատիւ ազգին մաքան ևս ողորմութեամբն ամենամեծ կայսերն քաչխեցեալ եղև), թէ արդեօք գինչ արարին ծրծեցին զարիւնս ժողովրդոց, ուր է նոյն բարի ղրութեանն կառավարութիւն, ուր համալսարանն զանազան լեզուաց, ուր աղքատանոցն և ուր հիւանդանոցն, երանի էր եթէ թողեալ զզանազան լեզուացն զկրթումն, դոնեալ միմիայն սեպհական լեզուի մերոյ զղպրոցս մի հաստատեալ էին և քանի մի մանկունք լառաջացեալ ազգի մերում մխիթարութիւն լինիցէր ձեզ օրհնեալ ժողովրդոցդ, բայց լայոց ամենից և ոչ զնչոյլ լիմն տեսանեմ, եթէ ոչ զլատնումն միմիայն վասն փառաց անձանց իւրեանց, այժմ սոյն խընդրանացս վճիռ տակաւին չէ տրեցեալ. սակաւեմք օրինաւոր Հայրապետի օծմանն, յայն ժամ ամենայն ինչ ունի պարզիլ։ Թէև բոլորն վատնեցեալ է և ի տեղի ոչինչ երևի, բայց հետևիմք գոնէ մասնաւոր ևս ինչ գտցուք։

Եւ ի վերջ այսր ամենայնի դայս ունիմ յուչ առնել ձերումդ աստուածսիրութեանն թէ դուք առ այս մի ինչ երկբայիք, զի ծածգագէտն Աստուած, որ քննէ զսիրտս և զերիկամունս հայելով ի չերմեռանդ հաւատս ձեր, ըստ բարի դիտման ձերոյ և գովութեան արժանի հաւատոյն ունի վարձատրել զձեզ թէ աստ և թէ ի հանդերձելումն, և այնք որք ստելով զբանս իւրեանց ի վերալ հողմոյ հաստատեցին զայն ամենայն բարեգրութիւնն ինքեանք լիցին պատասխանատու զորոց չունիմ երկարել։

Բայց իմ այժմեան և յապագային հետեւողութիւն ջանն և ուխտադրութիւնն ոչ այլ ինչ է, եթէ ոչ այս միայն, որ եթէ ի քանի մի ամս մնացից կենդանի պարտիս բոլորովին զանձն իմ դնել ի վերալ հօտիս, որ ինձ յանձնեցաւ և լիւրաքանչիւրում քաղաքի համալսարանս հաստատել իմս արդեամբ և քրտամբ, որով ազգ մեր ոչ մնասցին ի կուրութեան, այլ օրըստօրէ ի լուսաւորութիւնս լառաջասցին, և զայս ասելով չունիմ ինչ խնդրել ի ձէնջ և կամ յայլոց, միայն թէ զղիտաւորութիւն մտաց իմոց կամիմ ծանուցանել. ձեզ թէպէտ չէ օրէն նախ քան զառնուլն պարծիլ, բայց ես պարծիմ ոչ ինև այլ Տեառն չնորհիւ, որ մինչ լսիցէք լապագալին գնչանն դրութեան յայնժամ հաւատասջիք։

Սակայն եթէ սիրելեայդ իմոց դոն առ այս հարցաքննութիւն ևս ունիք պահանջել զհաչիւն բազմագումար արդեանց ձերոց ի ցովսէփալ ժառանդ վերաձայնեցկլոյն, կարող էք բացարձակապէս փոխանորդական կամ վէքիլական թուղթս գրէք մեզ և վեհաղնեալ իշխան աղալ Մինասին, զմեզ ի դիմաց ձերոց փոխանորդս առնելով թէ արդեօք որքան է գումարն ղորս հասուցեալ էք ի ձեռն Տէր Ստեփաննոս ասագ քահանային համալն պարտագալիք ազդ արասջիք մեզ, որ գոնէ բաց ի վատնեցելոցն թէ և իցէ ինչ ևս մասնաւոր ունացեալ մի լինիցի ի կորուստ, այլ զամենայն որ ինչ գրութիւնս առնիցէք առ մեզ, առաքեսջիք աստ ի ձեռս բարերարին մերոյ քաջ իչխան աղալ Մինաս աղալ Եղիս զարեանին, որում խնդրեալ եմք լինիլ փոխանորդ սրբոյ աթոռոյն և ազգին քանզի ի տեղի հոգելոյս էրէց եղբօրն լմոյ արդիս սա միայն գտանի լազգիս մերում լառաջադէմ ի դրան ամենամեծ կայսերն և ամենայն երեւելի մեծամեծք հոգւով չափ ունին սիրել լար-

գել և պատուել, ըստ որում և ինքն է բնութեամբ հեղահոգի, քաղցրագէմ, և ազգասէր և վասն օգտի ազգին չունի խնայել զամենայն ջանացողութիւն իւր, վասն որոյ ունիմ ասել թէ ալրն այն ոչ է մեռեալ այլ ննջէ, իակ զոր ինչ ես առնեմ զիմս բաժին վասն սրբոյ աթոռոյն մի ինչ կարծեսջիք ով բարեպաշտօն ունկնդիրք, որպէս թէ ջատագովութիւն ինչ իցէ ի կողմանէ Դանիէլին. քաւ լիցի. այլ թէ վասն օրինացս, և վասն անբիծ հաւատոյն, որ ի ձեռն ալտպիսի չարաճճիկ անձանց խափանի և եղծանի և մաքուր քահանայապետութեանն աստիճան խայտառ ի ներքոյ ոտից անկանի, եթէ միանգամայն սոյն անբաւժելի վէրս ոչ լմընչկեսցի, այնուհետև ով կալէ տեսանել գնոյն աստուածիչեան աթոռն ի բարեկարգութեան և ի պայծառութեան. քանզի ամենայն ոք թէ և լետնագոյն իցէ ամենից ապաւինելով լարծաթ իւր, վստահօրէն լառաջ մատչի ոչ հալելով ի կամս միաբանից և ազգին այլ ի ձեռն կաշառատուութեան մատչի առ այն սոսկալի կոչումն. արդեօք այնպիսի եղանակաւ ծածումն իրաւ ծածումն ունիք համարիլ, կամ թէ նոյն հոգին սուրբ որ ունի հանգչիլ ի հեղս և ի խոնարհս, և որք դողան բանից նորա, ունիցի հանգչիլ յայնպիսիս, որք փառամոլութեամբ և բռնաբարութեամբ ամբարձեալ լինին ի յայն աստիճան, բացէք զընդհանրական գիրքն Ներսէսի Շնորհալւոյն ի 4 գլուխն և ի 44 համարսն։

Զայս անկեղծ պարտիք հաւատալ ոչ թէ աբեղայ, այլ եթէ սարկաւագ ոք ըստ աստուածային օրինաց և ըստ աւանդութեան սրբոց հարց, ընտրութեամբ ազգին և հաճութեամբ միաբանից ի մի և ի նոյնում աւուր ի սարկաւագութեան աստիճանէ բարձքանայր մինչ ի քահանայապետականն աստիճան, ունէի ես ոչ թէ միայն խոնարհել նմա, այլ թէ գնոցաթաղիս ոտից նորին ուղղել, բայց այս լատկապէս քանդումն էր սրբոյ աթոռոյն. և ի հիմանէ տապալումն, զոր ոչ ազգն ընդունէր և ոչ բոլոր միաբանութիւն, և մանաւանդ արաք նորին ոչ թէ քրիստոսափոխանորդի, այլ թէ զօրէն բարբարոսի և անիրաւ բռնակալի, որ ե ինքն ամենաբարձրեալն աստուած զիւրակերտն սուրբ զահ աղաստս պահեսցէ լայսպիսի անխիղճ արանց, հալածի ի խոնարհութիւնս մեր, որք զրկեցեալ ի մարմնաւոր թագաւորաց, մի ևս ղբկեսցուք ի սոյն հոգևոր միխիթարութենէ այլ զամենայն հաւատացեալս իւր ի մի անգամ յօդելով սիրաշազկապ չնորհիւ սուրբ հոգւոյն ողջ և առողջս պահեսցէ ի յամենապատուական գլուխ իւր, որ է չնորհք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և օրհնութիւն սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսեան ամէն։

ՃԼԹ. *Թուղթ Գէորգ Աղայեկովի առ Դաւիթ։*

Ամենաբարձր հայրապետական մեծութեան ամենայն հայոց։

Իմ ողորմածագունեղ Տէր.

Զկնի Թղթոյն որ ընդ Մարտիրոսին մատուցեալ եմ, Թուղթ մի ես ընդ Թղթոյ պատրիարգին քաղաքիս, և Տաթևացի Աբրահամ վարդապետին ունիմ մատուցեալ ձեզ որ Թղթով կարնեցի պարոն Պետրոսին առաքեցաւ ի կարին, և դրեցաւ լատուկ փութկաւ առաքել առ սրբազնութիւն ձեր, լուսամ ստացեալ իցէք և պատասխանեալ։ Ընդ Գէորգ վարդապետի քեռւոջ չտուչին, ի սեպտ. Ա. դրեալ Թուղթն ձեր որ առ պատրիարգն, առ նուիրակն և առ Տ-աթևացի Աբրահամ վարդապետն էր, գիտացի և պատմեցին ինձ զառողջութիւն պատուական անձին ձեր, և զխաղաղութիւն սրբոյ Աթոռոյն, և միաբանից, և այլն. որով և ուրախ եղէ լոյժ՝ ընդ այն և զարմացայ լոյժ, զի ոչ կայր առ ինձ Թուղթ, մինչ ես ժամէ ի ժամ սպասեմ վերադառնալոյ Մարտիրոսին և ստանալոյ դհարկաւորն. վասն որոյ և առ չգոլոյն ինձ Թուղթըն ի սրբազնութենէդ պատրաստեցայ ղբաւորէր բէյն առաքել առ սրբազնութիւն ձեր, բայց Աբրահամ վարդապետն աղերսիւք սրդելեաց, և խոստացաւ որ առանց երկբայելոյ Մարտիրոսն վերադառնալ ունի. վասնորոյ թէ ըստ խոստման նորին, և թէ ըստ պահանջման բարեկամական ընթացից իմ ժամանակ ինչ ևս համբերել յանձն առի։ Բայց մինչև լերբ կարեմ համբերել, թէ լիմարութիւն էր և թէ բարեկամութիւն, մինչ պատ-

րեալ գտանեցայ ի սոյն գործս, ոչ կամիմ զզջացեալ ցուցանել զիս և ուրախ առնել զքշնամին, վասնորոյ առաւել քան զկարն իմ համբերեմ, սակայն միանգամ իմ ասպէս առնելովն, և դուք քնաւ զանց առնելով. ասպէս, տեսանեմ զի ունայն լինի. քանզի դիցուք թէ ես վասն իմ ծանրութեանս համբերեցից. ապա ցակոբ ամիրային զինչ արարից, մինչև լքեալ կարեմ խաբելով գնա պահել, անվրդով, որպէս Աբրահամ վարդապետն զիս սնոտի բանիւք լուսաղրէ. և խաբելով պահէ, այնպէս և ես զցակոբ ամիրան լորդորմամբ պահեմ ի հանդարտութեան այսօր վաղն ձգելով. բայց այսպէս առնելն ոչ կարէ երկար տևել, ի հարկէ լայտնի է լինելոց սնոտի լոյն, եթէ այսպէս ընթացցի զգործն. սակայն լուսամոր փոխանակ իմ հաւատարմական արարմանց առ ձեզ զչարիս չկրեցից. ինչ և իցէ իրաւունք ունիք ըստ ամենայնի զոր առնէք. և առաւելոյն արժան եմ, որքան և խոհեմ բարեկամքն իմ լորդորէին զիս հրաժարեալ կալ և մի հաւատալ դատարկ խոստմանց և մի խառնիլ ի գործս կրօնաւորաց, ես զայնս ունայն համարեցի, վասն որոյ արժան է ինձ կրել զայս ամենայն նեղութիւնս.—Ըստ որում Աբրահամ վարդապետն խոստացաւ ինձ գրել ձեզ զամենայն հարկաւորսն. ես ոչ կամիմ երկար գրել ինձ զարձեալ զայսմանէ, մանաւանդ զայսքանս լայտնեմ զի ահա դեռ ևս ոչ խնայեցի զանձն իմ թողուլ ի նեղութեան, և ըստ լորդորման Աբրահամ վարդապետին սպասեմ այսուհետև մինչ ցքառասուն օր ևս և ապա եթէ մինչ ցայն օր ոչ պատահեացի ինձ բաւականութիւն, առաքելոց եմ առ ձեզ զԹաթր պէյն. որպէս լառաջին թղթովն ես լայտնեալ եմ սրբազնութեան ձեր, այժմ զարձեալ կրկնեմ. ի հիւսիս՝ գործն ձեր մինչ այսպէս մութն մընայ, ոչ երևի բարի. հարկ է հոգ տանիլ, վասն այնր և ժամ մի լառաջ առաքել զոք ի կողմանէ ձեր առաջի կայսերն. եթէ գԱբրահամ վարդապետ կամիք առաքել, հարկաւոր է լիսուն քիսայ դրամ ունիլ ընդ իւր. զատարկ ձեռով գնալն ոչ լինի. և զայս ես գիտասջիք. այսօր եթէ զիսուսն խնայիցէք, առ լսալ կամ իսպառ աւերիլ ունի գործն ձեր, և կամ փոխանակ լիսուն քէսալի ՌՃ քէսայ ծախսոց հանդիպիլ ունիք. որպէս իսկ փորձիւ տեսաք, դի եթէ սկսանիլ հրդեհին լիսուս քէսայ ծախելն ոչ խնայէիք ի դառն կայսեր, այսքան աւերումն չունէր դոլանալ ի Դանիէլէն, և ոչ դուք ունէիք անկանիլ ի մեծամեծ վիշտս, այժմ ես ոչ է հարկ լուսալ, թէ գուցէ առանց գրամածախութեան խաղաղութիւն է լինելոց ի հիւսիս. ըստ որում Եփրեմն քսակն ձեռին ցուցանէ. և լազեցուցեալ ունի զգուռն. Եւս այսպէս լառաջին թղթովն լառուկ փուսուլայով լայտնեալ եմ, հարկ է զհաւատարմութիւն ինչ ցուցանելով տէրութեանն հիւսիսոյ, գրեցաս աստ առ դեսպանն հարկաւոր ինչ որպիսութիւն կողմանցդ, դի և սա դայն պատճառ առեալ գրեսցէ առ տէրն իւր. և լայտնեսցէ զհաւատարիմ գոյն ձեր և համարձակ գրեսցէ ինչ ինչ և վասն հաստատելոյ զկաթուղիկոսութիւնն ձեր. քանզի եփրեմեանքն այնպէս են ցուցեալ առ դառն կայսերն, որպէս թէ Դանիէլն հաւատարիմ գոլով արքային նոցա, և դուք անհաւատարիմ. վասն որոյ հարկ է նոցա ջանալ դԴանիէլն նստուցանել վասն օգտի տէրութեանն նոցա։

Ասքան ծանուցանելն բ.սական համ.ելով, մնամ սրբազնութեան ձերում

ամենախոնարհ ծառայ։

1803։ հոկտեմբերի 12.
ի Կոստանդնուպոլիս։

ՃԽ. *Թուղթ տաթեւացի Աբրահամ վարդապետին ի Պօլսոյ առ ապօրինաւորն Դաւիթ։*

Է՛ ՚՚՚ վեհապետ.

Դերերջանիկ և երիցս երանեալ սրբազան ՚՚՚ իդ և հոգևոր ծնողիդ իմոյ՝ զսուրբ գարշապարսն համբուրեմ խոնարհութեամբ մեծաս։

Զգրեցեալ թուղթդ ձեռամբ Հասան չաուշին հասին առ մեզ անվնաս, և ընթերձեալ ծանեաք զամենայն որ ինչ գրեցեալքն էին ի նոսա. և եռա զթուղթս իւրաքանչիւրսցն առ տեառս իւրեանց, բաց ի ցակոբ Ամիրալի, և Դէորգ աղալի թղթոցն զի լառաջ քան զայս ի սեպտեմբերի 27-ին լառուկ թուղթ եմք գրեալ առ տէրութիւնդ ծանուս-

ցանելով ի նմա զամենայն հանգամանս տեղւոյս և լուսամ զի մինչ ցարդ ձեռամբ պարոն Հայրապետի եղբօր որդի պարոն Գասպարին, հաստացեալ իցեն առ ձեզ. արդ նախապէս զայս ծանիցէ սրբազնութիւն ձեր՝ զի կարեցեալ Օսկհաննէսեան ևկն աստ, և առեալ զհաշիւն մեր ընդ նմա, զոր ինչ հաշուալ և ծանուցեալ էիք մեզ. այնպէս զթիւ կարմրացն հաշուելով մնաց մեզ տալիք ԺԱՌ ղուռուշ. զոր պարտի հաստացանել Գէորդ աղային և ցակօր Ամիրային լեառս դարձուցանելով և զինացեալ չալոն իւր առ. ինքն. իսկ զմասրաֆին տեղւոյս թէ որքան ծախք լեալ են յառաջագոյն օրհնեալ Գէորդ աղայն դրեալ է ձեռամբ մեր Մարտիրոսին զոր մեք ես տեսաք աչօք զթիւ ծախուցն սոցա զոր անպատճառ պարտի հասանիլ զի ուր և լիցի եթէ լմասցեն սոքա թէ այլի ոչ էք հատուցանելոց սոցա զպարտիս իւրեանց ինքեանք աստ թէ կամալ և լակամալ ի հրապարակի և աղաղակաւ մեծաւ կարեն ստանալ զդրամն իւրեանց, այլ և այլ լեզաչրջութիւնս առնելով. մանաւանդ տեսանեմ զի եթէ ալսպիսի բարեկամ Յողուցաս ի ձեռաց, որք ամենայն ջանիւք մինչև ցմահ աչխատին թարց չահու, յայնժամ ամենայն թշնամիքն դալանակալեալք լառնեն ի վերալ մեր, և լինի լետինն չար քան զառաջինն. վասն որոյ զթուղթան սոցա ոչ ետու ինքեանց ա՛ա ալսօր որ ի կողմանէ տէրութեանն զՄաթր բէկ Թաթարն վասն հարկաւոր գործոյ իմիք լղել կամէին ի Բալաղիտ առ փաչային, վասն որոյ և աճապարեալ զալսքան միայն կարացի ծանուցանել մեծութեան ձերում զի դեր քան զամենայն հարկաւոր է կամ ի ձեռն Մարտիրոսին զՊետրոսն սոցին որքան և մնացեալ իցէ զհաչիւն տեսանել և զմնացեալսն լղել առ Բաթր պէկն ի Բալաղիտ որ հաւատարիմն մեր և կամ նոյն Մարտիրոսի ձեռամբն լղեացես աստ ի Պօլիս և տէրդ իմ իսկ գիտէ զի մինչև ցնաքարակիտն մինչ քառասնիցս չի հաշուիցեմ ոչ եմ տալոց և ոչ տանկ մի. զի սոքա բազմիցս կամեցան լատուկ Բաթր պէկն ի տուրբ աթոռն լղել բայց մեք ոչ կամեցաք զի մի դուցէ տարաձայնութիւն ինչ անկանիցի լականջս այլոց. որ և օգուտն մեր ալսպէս ի մանալով գրեցաք զի չուտով հատուցանիցես, իսկ զքանն Բալաղիտու և Ղարասւ. եթէ ֆերման հանիցեմք հանդերձ չաուշով մինչև չորս կամ հինգ հազար ղուռուշ խարջ երթալ. վասն որոյ թալց հասանելոյ զտէրդ չկամեցալ ինքնաղլուխ բան տեսանել. խնդրեմ զի զորպէսն մեզ ծանուսցես վասն չուխալի և ապալի որպէսս և լինելոյ առեալ թէպէտ ծովով ոչ լինի ըստ որում ձևեռն ի վերալ եհաս, ցամաքով լղելոց եմ, Մարտիրոս արհի եպիսկոպոսին ևս դրեցի դի ըստ որքանութեան առաջին բևռինն առեալ լղիցէ վուխով, և այլ զտուճնան որպիսութիւն տեղւոյս. ի ձեռն այլոյ ուրուք դրեալ մի ըստ մէոջէ լղելոց եմ տէրութեանդ մեծի, Գալուստ վարդապետին երևի, դի ըստ իւր անվակ բնրան ուննալալնէ և անչահ բարուցն աստի աքսորմամբ վերադառնալ ի տուրբ աթոռդ և նորա իսկ արժանէ. ի կողմանէ Բարթուղիմէոս Զէլեպոյն պատուական դլուխ տէրութիւնդ ողջ մնասցէ. դի ի սոյն ամսոյ սկզբանն առ տէր փոխեցաւ. վերջապէս զայս խնդրեմ ի տէրութենէդ, դի կամ անուամբ Տաթևու վանից մէկ կոնդակ ժողովարարութեան ի վերալ Ռուսմէլիու և Անադօլու դրեալ լղեացես, և կամ դնուիրակութիւնն թէմիցն Սամսպօլու չնորհեացես ծառալիս և զկոնդակ և սրբալոյս մեռոն լղիցես դի երթալ կատարեցից, և զայս ամենայն թողում ի հալրական ի խնամսդ զոր ունիս ի վերալ ծառալիդ որ լինի տէրդ իմ ողջ ի պարծանս նուաստ ծառալի քո ԱՒՐԱՀԱՄ անարժան սևաւորի Տաթևացւոյ։

1252 և հուկ. 29 ԻՂալաթիալ

Վերջապէս պատճառ դրութեան թղթոյս ալս է զի ի Զինջիրլու խանն կարի վռազ։

Բաթր բէկն թարց փարալի մի զարմուցանիցես։

ՃԽԱ. *Թուղթ Դանիէլ կաթուղիկոսի առ Ներսէս վարդապետ։*

Ներսէս վարդապետ սիրական որդի, կենարար խաչիւն Քրիստոսի զօրացեալ Ամենալաղթ կալսրն և ընդ նմա օրհնեալ կալսերականքն դժ թագաւորութիւն կարող են կանգնեցուցանել լանկմանէ, ի միւսմ ամի և այլն և այլն։

Աստուածակոչս կողմանէ Աղամ վարդա-

պետն ի կապանս իմ ստացայ ինձ որդի և զաւակ, որ ի նախախնամութենէն Աստուծոյ ամի ալեզուս և մխիթարող եղև յամենայն ժամ վոխանակ ձեր իմայնոցն ամենեցուն յաւուր նեղութեան իմոյ, սրբութիւն ես տալոց է ի հարկաւոր ժամանակի անդէտ լուծանքէ, ի ձէնջ սկսեալ մինչև ցարքայան Սիրեմ հալրապետն, որք և իննամս ունիք ի վերալ թշուառականիս, աւանդեմ ձեզ ամենեցուն ամենայն բարեվաստութեան և պատուոյ սիրոյ և փառաց արժանի համարել հատուցիք զ՚արդեօք Ադամ վարդապետ որդեկին իմոյ ընկալեալ ընդ ձեզ իբրև ի մի հոգի, ոչ եթէ միայն վասն անալժանիս ալեզութեանն այլ և վասն յաւիտենական լիշատակութեան արժանի բարեպաշտութեանն և արիական խոհեմութեանն, թէ և մեռեալ կամ գոնէ կենդանի իցեմ, ցիցիանով հզօր կուսակալն ողորմիլ գութացի հազարիցս մեռաք մեք ամենեքին. Աբրահամ վարդապետ սիրականին մերոյ աղնուականիւ դրեալ դիրդ տեղի այլ գրեամբքն բնրեալ արժանացուալ Աստուածերեսացն, բարուք խօսին բաց ուր է ողջ լեր ի Տէր յարգելի և սիրական տերամբք ընդ քեզ եղելովք ամէն.

Նոլեմբեր 1 ի կապանս է. ղ.

ԴԱՆԻԷԼ արեամբ գնեալ ծառալ Քրիստոսի Աստուծոյ խոցելոյս ի սէր փեսալին ճշմարտի կապելոյս ի կապանս.

Աւետիս վարդապետէն մէկ հատ թանդր խաթալի առի խանին ետու գինն հատուցանէք և այլ պարտք զոր ունիմք որպէս և հատուցանէք դուք գիտէք.

ՄԽԻԹ. *Փէրման Դանիէլի կաթուղիկոսութեան:*

Թարգմանութիւնք և օրինակք ի Տէրութենէն չնորհեցեալ պէրաթի և ֆերմանից, որք յանուն սրբազան Դանիէլ կաթուղիկոսի ի Կ.ստանդնուպոլիս պարգևեալ էր և ի Ս. Գ. Բուրդ հայերէն և ռուսերէն թարգմանեալ էր ի Կալեկ Տէրութեանց. *)

Մեծալարդոլ և Պատուական նշան և հաւատի աղնիւ հրամանն այս է

Պատճէն գերագնիւ պերաթի այսինքն չնորհագրոլ է՝ որ ըստ նոլնութեամբ հեղինակն իւրմէ վերառնեցեալ է զերագնիւ և պատուական նշան վերնալարկ կալսեր՝ և կնիք կատարելութեան տիեզերաց թագաւորի հրամանն այս է որք իստանալոլ և պարագալիցն նորին հալկազնեան պատրիարգի փոխանորդ Ցակոբ վարդապետն ի գերակալ սեմի իմոլ վերամբարձ լալանի կնքով ծռն՚՚զակ այսինքն արդալ մատուցեալ է լիշեալ պատրիարգութեան կալուածոցն մուծեցեալ մերձ Երեանալ այլ Ինջքիլիսէ անուանեալ. Էջմիածնալ և ի Պալազիգու այլ եւ Ինջքիլիսէի կաթուղիկոսութեամբն հաղորդ եղեալ Իմոլր մենէմէն. և Կիւզել Հիսարու Առաջնորդութեանց մեծալարդոլ Պերաթին և իմով տիրօր եղեալ Դաւիթ վարդապետն ըստ պաշտօնէից՝ այսինքն միաբանից լիշեալ վանուցն և ըստ ալլոց հալկազուն աղքատաց անհամաձալնութեան գոլով՝ հրաժարեալ նոցա ի նմանէ՝ և վասն ի տեղի նորա զալլ ոմն ոք կարգել և կատուցանել խնդիր արարեալ՝

Վերոգրեալ Ցակոբ վարդապետն՝ վերամբարձ հրովարտակաւն իմով պատրիարգի փոխանորդ գոլոլն՝ ի բարձրկալ սեմի իմոլ՝ և ի պարագալս նորին քնակեալ հարկատու հալոց հալաստակաց՝ զվարդապետս՝ քահանալս, և վեց ժողով անուանեալ հալոց ազգին ժողովրդապետս և քնակութիւն լալանի արհեստաւորացն զծերունիս՝ լիշեալ փոխանորդն ներկալացուցիչ և ի լինելն խորհրդակցութեան ընդ նոսա, ղեմալնից ընտանելին և պատուական տեսանեցեալն լոլմինէ իստանալոլու պատրիարգն՝ որ ի ներսոլն վերամբարձ հրամանի գրեցեալ Մեսիհեան ազգի լարգանօք ընգունեցեալ Դանիէլ անուանեալ վարդապետն, որոլ վախճանն ընգ բարեալ՝ Ամիրսաամբ լարմար և պատկանիդ ողորմութեան հրովարտակիս արժանի լինելն ծանուցեալ. Եւ՝ զծէսեալեալ ընծալն նախավճարմամբ յԱրքունի գանձարան իմ հատուցանելոլ պալմանն.

Ցիշեալ կաթուղիկոսին և ի նոլն Դաւիթ վարդապետին ի բաց բարձմանէն հաստատելոլն եղեալ՝ Դանիէլ վարդապետի բարձրապատիւ պերաթ ի ձեռս նորին

*) Այս ֆէրմանի տառկերէնն ու նորա աշխարհաբար թարգմանութիւնը ապեցինք «Տիւան Հ. Պատ.» 1—II եր 117—134. ներկայ օրինակը Գ. Բուրդ թարգմանածն է, բայց աւելի ազճատ։

արեալն՝ չնարհանդիր եղեալ։ Արքունական գանձարանի իմում պահպանեալ եպիսկոպոսական հատուածոցն մատենաց լուցանդիր լինելն՝ լիշեցեալ կաթուղիկոսին և առաջնորդութեան խստամպել և պարագալից նորին, հայոց պատրիարգին կալուածոն ներմուծեցեալ տանն հաղար ուրն հարիւր փող՝ կամ սասկ արժանի ընծալիւք. նոյն Դաւիթ վարդապետի վերալինելն, ի լուսանցս ծանոթագրակի ալինքն արդալի նոցա գրեցեալ և ըստ ծանրատակինց զօրութիւն չնորհել և կանոն եղեալ պերաքն գրելոյ նմա զերաքնիս հրովարտակին իմ չնորհեցեալ լինելով, և զձէս եղեալ ընծալն տանն հաղար ուրն հարիւր վաղ լինելն վերամբարձ բուզնամէնի ալինքն օրական մատենի պատճէն տրեցեալ դոլով նոցա, ըստ արտագրեցեալ դերաքնիս հրովարտակի իմոյ չնորհել նմա ի հաղար երկերիւր վեչտասան ամի րոճէպ ամսոյ քսան և վեցին տոյն վերամբարձ չնորհունակ պերաքն ետու՝ և հրամալեցի որ նոր. չանակեցնալ Դանիէլ վարդապետն վանճանն ըստ բարեաւն գնացեալ նորոյ կաթուղիկոսութեան և առաջնորդութեանցն տիրոջ եղիցի՝ և կաթուղիկոսութեան և առաջնորդութեան տեղիս եղեալ եպիսկոպոսք և քահանալք և հալկազնէից միւս մեծ և վոքունք զվերոյ լիշեցեալն ի վերոյ ինքեանց՝ ըստ վաղ հետէ եղեալ ծիսի և կանոնի և ըստ օրինի պահեալ զիրաւունս իւրեանց ի նմանէ խնդրեսցէ լուղիղ աստիճանացն չներհականեցեն և կաթուղիկոսութեան իւրոյ հաղորդ եղեալ տեղիս ի բաց կացուցանելոյ և վերակարգելոյ արժանաւոր եղեալ զվարդապետս և զքահանալս լիշեալ կաթուղիկոսն ըստ օրինի իւրեանց ի բաց վանելն և ի վերակարգելն լալոց ոք արգելուժ չառնիցէ, և մուտ ինչ չառնիցէ։

Եւ ըստ վաղեմի ծիսի լիշեալ կաթուղիկոսի կնքեալ թուղթն և մուրհակն ալինքն կոնդակն մինչև չլինիցի ի վաղուց հետէ լինելոյն ընդդէմ ոչ միոյ ումեք առաջնորդութեան և վարդապետութեան արեցուցանել։

Եւ այլ միսիֆներաց պատկանեալ իրակութիւնքն նորին կաթուղիկոսի գիտութեամբն լիցի լալոց ոք մուծիչ չլինիցի։

Եւ մեռեալ քահանալից, աբեղալից առաջնորդաց և վարդապետաց նաև մալրապետանց անուանեալ կրօնաւորուհեաց ըստ վաղեմի սովորութեան, և ծիսի պատրիարգի պատկանեալ ճիւացորդ ինչն լիշեալ կաթուղիկոսէ կարղեցեալ փոխանորդք վանն արքունոյ առնուլն և տիրելն ընդդէմ վաղեմի ծիսի պէտ թիւրմալ և Դատաստանի մարղիկք հուպ և մուտ չանիցեն։

Եւ ի վաղհետէ ի տիրպութեան իւրեանց եղեալ եկեղեցեաց և վանուց և ուխտատեղեաց և իւրեանց համակից եղեալ ի քնէ անտի աիրեցելոց, և մինչև ցայժմ զհնագոյն օրէնսուութեանց զործածութեանց, և հրամանաւ դատաստանին ըստ վաղեմի դրութեան ֆէրվալով՝ և իսկապէս բարձր հրովարտակաւ եղեալ վերանորոգութեանց նոցին, ի բռնակալաց կողմանէ՝ կամ այլոց թարց պատճառի մուտ՝ կամ վէճ, և կամ արգելումն չլինիցի։

Եւ լիշեալ կաթուղիկոսի գիտութիւնն և հրամանն չլինիցի ընդդէմ օրինաց իւրեանց՝ ոմանք գիւղական քահանալքն պակսի արժանի չեղեալ հպատակի ումեք պակ չառնիցեն։ Եւ եթէ հպատակ կին մի լառնէն փախիցէ և կամ հպատակ կին մի արձակելի և կամ առնելի լինիցի. ի մէջ նոցա լիշեալ կաթուղիկոսէն. և կամ ի նորին փոխանորդացն ի զատ ոչ ոք մուծցի և կամ խառնիցէ։ Եւ հայոց մեռեալ եպիսկոպոսունք, քահանալք և վարդապետք և միւս հալք ըստ օրինի իւրեանց եկեղեցեաց աղքատացն պատրիարգին և կաթուղիկոսին զոր լինչ կտակ առնիցի ընդունելի եղիցի հայոց վկալիւք չեբլով ալինքն դատաստանաւ լսելի լինիցի և ընդդէմ օրինաց արարք և չարժմունք առնող եպիսկոպոսաց քահանալից և վարդապետաց լիշեալ կաթուղիկոսն ըստ օրինի իւրեանց ի պատէն և դհերս նոցա ի գերձելն. և ի քահանալութենէ և ի վարդապետութենէ ի վանելն, և զեկեղեցին այլոց ումեք ի տալն ոչ ոք ընդդիմութիւն չառնիցէն։

Եւ կաթուղիկոսութեան իւրոյ ի հաղորդ տեղիս ըստ վաղեմի օրինաց իւրեանց եկեղեցեաց պատկանելեաց այգեաց պարտիզոց և դաստակերտաց և ջրաւետ վարից և արտորէից աղբրեաց և աղբերց և տոնավաճառից ալինքն բռնաւերաց վանօրէից տանց և խանութից, պողաւէտ և անպողաւէտ տնկոց,

և այլ սոցին նմանեաց եկեղեցեաց յատկացեալոց. այսինքն վախճ եղելոց իրաց և արձառաց ըստ վաղեմի ծիսի և մինչև ցայժմ որպէս եղեալ է սոյն վերամբարձ հրովարտակաւ իմով լինել կաթուղիկոսի կողմանէ տիրելութիւն և կարգադրութիւն առնելոյ, յալոց ումէքէ ձեռնամխութիւնն լինել չթողացի։

Եւ եկեղեցեաց, և վանօրէից փոխանորդ դոլով պատրիարգութեան ղեկամուտս տիրօդ և կարօղ քահանայից և վարդապետաց լինել. ցեալ կաթուղիկոսն դհաշիւս նոցա ի տեսանելն կամ ի քննելն. և կամ թէ սոյն հպատակ առն պակաս ասելով ընդդէմ օրինաց իւրեանց բռնարարուն չառնիցէ։

Եւ հալկաղնէից ոմանց եկեղեցիք և վանք ոչ ունելով թադ ի թուղա կամ քնակարանն չրջելով ընդդէմ օրինաց զատոգ հալ հպատակս խառդաւանող դեղեռնագործս լինեալ կաթուղիկոսի գլխութեամբ և վերամբարձ հրովարտակաւ իմով կալնուլ և ըստ արժանոյն նոցա պիտոյ եղեալն կատարել։

Եւ լինեալ կաթուղիկոսի անց և դարձ արարեալ տեղիս. և կամ դկալ առմանն ժամանակի բերնակիր ձիոց և երիվարաց և առ ընթեր իւր զերազնիւ հրամանաւ իմով եաւսախճի կոչեցեալ ենիչերից. և միւս մարդկանց և հանդերձից և ղեւսատուց նոցին կերպարափոխութեան այսինքն ի ծպտելն նոցա ի կողմանէ բռնակալաց թարց պատճառի ձեռնամուխ չլինիցին։

Եւ ըստ վաղեմի ծիսի և օրէնի իւրեանց ի տարին մի անդամ լեկեղեցւոջ գործածեցեալ զղեսուիւք և հանդերձիւք ի դուրս ելեալ՝ երթեկութիւն լառնելն, և աստի անտի լամենայն կողմանց եկող և գնացօղ ուխտաւորացն և կրօնաւոր աղքատացն և սպասաւորացն՝ վանն բաւականութեան ամ ձանց իւրեանց եղեալ մթերից և թօշակաց և ըմպելեաց և ատելեաց, և ի նոյն ամի միանգամ ըստ հարկաւորութեան օրինաց իւրեանց ի լելեալ տեղւոյն արտահանումն պիտոյ ելեալ բալասանի իւղոյն լարտահանելն և թէ լերկրին պարսից՝ և կամ լերկրի Ցերուբեան իմոյ եղեալ հալկաղնէից ըստ վաղեմի ծիսի իւրեանց և օրինի լինեալ զիւղն բաժանելոյ լաղագս ի կողմանէ բռնաւորաց և այլոց կողմանց, ումէք ձեռնամխութիւն և վէճ առնելոյ չթողլատրեցաք։

Եւ լինեալ կաթուղիկոսին վանն իւրոյ անձին ի հալոց հպատակաց արգասեացն յալեցեաց յատուկ և ողորմութիւն անուամբ մինչև ցայժմ տալն նուիրութիւնն արարեալ ի խաղողոց ի քաղցուաց, լիւղոյ մեղր և յալ իրաց ի տունս իւրեանց ի տանելն, ի ծովափս այսինքն ի մաքսատունս, և ի դրունս քաղաքաց վերակացուք և կամ ի պահապանաց ոք ձեռնամխութիւն ինչ և ընդդէմ վաղեմի ծիսի նեղութիւն չառնիցէ։

Եւ դատաստանի հրամանաւ արգելումն պիտոյ եղեալ հալ քահանայքն լինեալ Առաջնորդի գիտութեամբ արգելանիցին։—Եւ հպատակի իւր կամեցողութիւն լոչ գոլն բռնութեամբ չառաճկացուցանիցեն։

Ե. լինեալ վարդապետի իւր կամեցողութիւն ի չունելն, մեք քիչ բռնութեամբ եաւսախճի լինիմք ասելով և կամ այլ իմն պատճառանք ի դրանէ իմմէ ծառայից կողմանէ նեղութիւն կամ տիպումն չլինիցի։

Եւ լինեալ կաթուղիկոսի կողմանէ վանն ողորմութեան մողովելոյ կարգեալ վարդապետի անց և դարձ արարեալ տեղիս ի կողմանէ բռնաւորաց ձեռնամուխ լինել չթողանիցի։

Եւ ներհակ օրինաց իւրեանց պակաս առնողք կամ պակասեցեալքն լինեցելոց լեկեղեցիս մտանելն ընդդէմ իւրեանց լինելով ի մեռանելն նոցին դաստատրք և փոխանորդք դաստատրաց և այլ տիրապետողք գուք բարձէք ասելով քահանայից տիպումն և նեղութիւն առնել չթոլլատրեցէք։

Ցեկեղեցիս և ի վանորայս բնակեալ քահանայից և վարդապետաց հաշուոց լուղաքննութիւն լինեցեալ կաթուղիկոսի և փոխանորդաց գիտութիւն տեսանիցի։

Եւ վաղեմի հալկաղնեաց լատկացեալ եկեղեցիք և վանք կուսակալաց այսինքն փաշալից, սպասեաց և քաղաքապետաց և դաստատրաց լատատրարական և կամ հրամանատրական գրութեամբ ի ստոյգ հալ հպատակաց ձեռնամխել առեալ լալ ազգ լարեցեալ կաթոլիկ կոչեցեալ եղեռնագործաց չխրիցի։ Եւ ըստ այլումն օրինօք եղեալ կաթոլիկ անձանց, մեղադարտ ապականչաց տուգանից վասն ստոյգ հալ հպատակի վիշտ կամ նեղութիւն չլինիցի։

Եւ լինեալ կաթուղիկոսի գիտութեամբ և ազդարարութեամբ՝ ի վերալ նոցա պիտոյ եղեալն ըստ օրինաց իւրեանց կատարումն

լինիցի, և վասն այնպիսի ապականչաց տուժից եղեալ պարտուց մեացորդաց, ի քաղաքս և ի գիւղաքաղաքս և ի գեղջս եղեալ եկեղեցեաց և վանորէից կալից, վէճ և ձեռնամբխութիւն չլինիցի։ Եւ գրաւ եղեալ կերպիւ առնուլ և ձերբակալել չթոյլատրիցի. և եթէ կերպիւ իւիք ձերբակալեցեալ իցէ՝ կրկին ի տեղիս իւրեանց վերադարձումն և յանձնումն եղիցի։ Ըստ վաղեմի օրինաց իւրեանց հպատակ ալրմի՝ կին արձակել, և ի վերալ կնոջ այլ կին առնուլն՝ կարի ընդդէմ օրինաց նոցա գոլով, այնպիսեացն թոյլտրութիւն կամ դիպակ չըտրիցի. ճշմումն և նեղութիւն լինիցի։ Եւ լինել վարդապետի ծխին եղեալ գաւառանի ումեք ձեռնամխութիւն առնել չթողանիցի։ Եւ վասն ողորմութիւն ժողովելոյ և բալասանի իւղ բաժանելոյ անց և ղարձ առնող սեպհականց նոցին անցուդարձ արարեալ տեղիս, վասն բարւոք կերպիւ անցուցանելոյ, ի վերալ իւրեանց եղեալ գործեաց այսինքն ղինուց և երիվարաց, ի կողմանէ բռնաւորաց ձեռնամխութիւն չլինիցի։

Եւ իւրեանց յատուկ եկեղեցական իրաց կամ կալից, և ի ղրունս քաղաքաց և ի ծախսիս, մաքս և կամ պաճ, հարկս չինդրեսցեն։ Եւ եթէ ումանք աւտարակք ի հպատակաց՝ գաւառացւոյն պատկան գաւ ինչ յարուսցեն ի վերուցնոցս, ի նոյն կողմանս ունկնդրութիւն չլինիցի։ Այլ ի վերամբարձ դիւանի իմում տեսանելոյ վասն ըստ ի ձեռս Ստամբօլու հայոց պատրիարքին տրեցեալ բարձրապատիւ Պէրաթի ղօրութիւն՝ թէ ի գերակալ սեմի՝ կամ դրան իմում տեսանիցի։ Այս ևս ի նոյն նախկին պայմանադրութեան ներմուծեալ դոլով լիչեցեալ կաթուղիկոսին դատաստանի պատկանեալ վէճքն ի վերամբարձ դիւանի իմում տեսանիցի, ընդ փոխանորդի իւրոյ, ներկայացնեն կողմանց դատիցին։

Եւ ըստ վերոյ բացայայտենից ի ձեռս նշանակեցեալ կաթուղիկոսին տրեցեալ վերամբարձ Պէրաթի, իմոյ ներմուծեալ դաշանց և կանոնից ներհակ լուեալ լուեալ և ի պատճառ մի ինչ կերպիւ ընդդիմութիւն և խոչ լինելով վէճ կամ մուտ առնիցեն։ Այսպէս գիտասցեն՝ պատուական նշանի իմոյ հաւատ ընծայեսցեն։

Գրեցաւ ի քաղաքավերին Բէճճէպ ամսոյ, ի հաղար երկերբուր և վեշտասան ամի։ ի գահոյանիստն Կոստանդնուպոլիս։

1801

ՃԼԹ. Թարգմանութիւն Ջէլմանին յետ պատուազրութեան։

Առ Արղրումայ և Ղարսի վայելից. նաև Պայազիտու և այլ միւս կողմանց գաւառապետաց։ Եւ Ջմիւռնոյ դատաւորին. և այնց կողմանց նահանգաց դատից և նախկին, այսինքն փոխանորդից դատաւորաց։ Եւ վոլվոտալից այսինքն քաղաքապետաց. մաքսապետաց, այսինքն ղօրագլխաց. և քէթխուդէից այսինքն հրամանատարից, և էմինարից այսինքն նախագահից. և գործոնեալ սոցանց ամենեցուն առ հասարակ հրովարտակ և ղկուզումն իստամպօլու, և պարագալից նորին հայոց Պատրիարգին փոխանորդ հակոբ վարդապետն առ գերամբարձ դիւանն իմ կնքադրոշմ ծանուրղակ մատուցաս. նեղով նոյնոյ Պատրիարգութեան հաղորդ ի կողմունս Անատօլիոյ. մերձ Երևանու այլ իմն Իչքիլիսէ անուամբ էջմիածնի, և նմա հաղորդ եղեալ Պայազիտու Իչքիլիսայու, և Ջմիւռնոյի և Մէնեմէնի. և Կիւղէհիսարու և համակցաց նոցա հայոց Առաջնորդութիւն. և կաթուղիկոսութիւն ի սուն նուագի ի Դաւիթ անուանեալ վարդապետէ բաց բարձմանէ, աստի յառաջ Պօլսոյ հայոց Պատրիարգ Դանիէլ վարդապետի չնորհեցեալ և ի ձեռս նորա բարձրահամբաւ Պէրաթն իմ պարգևեցեալ գոլով.—Սակայն կաթուղիկոս եղելոց ըստ վաղեմի սովորութեան վասն վանուց իւրեանց աղքատաց թօշակի յօժարականաբ տուողաց ողորմութիւն ժողովելոյ աղագաւ Ղարս և Արղրում, և ի Պերաթէ իւրում ներմուծեալ միւս Իչքիլիսէի և այլոց հայոց հպատակաց ի դառնեցեալ տեղեաց, անցից և դարձից նոցա և ի լիչեալ տեղիս և ի վանս իւրեանց վկայ առնուլ և ի մեալն իւրեանց, և ըստ իւրեանս եղեալ վարդապետաց և մարդկանց ներհակ դատաստանի նեղութիւն և բռնութիւն ոչ լինելոյ։

Եւ կողմանէ լիչեալ կաթուղիկոսին և-

րեք տարին մի անդամ ի տէրութեան իմում՝ բնակեալ հայոց հպատակաց դատանեցեալ տեղիս լղեցեալ պալատանի իւղոյ ալսինքն միռոնի բաժանմանն, և վասն ողորմութեան ժողովելոյ կարղեցեալ մարդկանց նորին ըստ վաղեմի սովորութեան Առաջնորդութեան հաղորդ եղեալ տեղիս անց և դարձ արարեալ օթեանաց և ճանապարհաց նոցին նաև ի տեղւոջ իմիք ի ժամանակի ղկալ առման իւրեանց թէ ի Տաճկաց կամ ի հպատակաց, և կամ թէ լալոց ումէք զապրանս խլելոյ առաղաւ լիշեալ կաթուղիկոսին և մարդկանց նորին նեղութիւն, ինչ առնել չթողանիցի։ Եւ առնելիք պահանջմամբ, և կամ այլ իմն իւիք պատճառաւ կաթուղիկոսին և մարդկանց նորին նեղութիւն առնել կամեցողաց դատաստանի պատկանեալ վէճս նոյին. ի նոյն կողմունս ունկնդրութիւն չլինելոյ, ի բարձրագոյն դրան իմում ընդ փոխանորդի նորա դատելոյ պալմանաւ։

Դուք որք վերոյ լիշեալ եպիսկոպոսունք ալսինքն վեղիր ապամբ և իշխանք և մալլալք և դատաւորք և փոխանորդք դատաւորաց և նախագահք. և վօլվօտալք և այլ իշխանք էք ըստ նախապէս առաջնոյն իւրոյ տրեցեալ պալծառափալլ հրամանի իմոյ ի կողմանէ ձերմէ պաշտպանողութիւն և պահպանութիւն առնելոյն. Եւ ամբողջ և ապահով ի միոյ նահանգէ առ միւսն լղելոյ և հասուցանելոյ և ի միում տեղւոջ զապրանս խղեւոյ ըզձիւ նեղութիւն և վիշտ չլինելոյ և վասն հպատակաց հայոց ըստ օրինաց իւրեանց պատժել հարկաւորելն ի կողմունս ձեր լիշեալ կաթուղիկոսն թղթով իւրով ի զեկուցանելն հաստատ և ընդունելի լինելոյ Պալծառափալլ հրամանին իմոյ տրելն, ողորմութիւն խնդրելոյն աղագաւ ի գանձարանի իմում ամփոփեալ եպիսկոպոսական հաստատածոց մատենաց ի նկատելն ըստ վերոյ բացայայտութեան հաղար երկերիւր և վեչտասան թուոյ Սաֆարի քսան և իններորդի աւուր. ի ձեռս լիշեալ Դաւիթ վարդապետին տրեցեալ պալծառափալլ հրամանն իմ ի լուսանց սորին ծանարտակի գրեցեալ գոլով։

Վասնորոյ ըստ լուսանցի ծանարտակի գրելոյ ձեր առնանելոյ աղալաւ բարձրահամբաւ սոյն հրովարտակ իմ չնորհեցեալ է. հրամալեցի որ պալծառափալլ հրամանն իմ ի գալն ըստ վսան սոյնոյ բանի չնորհեցեալ է հրամանի իմոյ գործակցիլ նաև վասն վերոյ լիշեալ իրակութեանց նախապէս լիշեալ թուոյ պալծառափալլ հրամանն իմ տրելն ի մատեանս Արքունի գանձարանի. իմոյ արձանագրեցեալ գոլով ըստ նախապէս տրեցեալ պալծառափալլ հրամանի իմոյ ի կողմանէ ձերմէ պաշտպանչութիւն և պահպանութիւն առնելով, ամբողջ և ապահով ի միոյ նահանգէ առ միւսն լիշելով և հասուցանելով։

Եւ ի տեղւոջ միում զապրանս խլելոյ ըղձիւ լումեքէ նեղութիւն և վիշտ չլինելով. և վասն հայոց հպատակաց ըստ օրինաց պատիժս հարկաւորեցիլեց ոմանց լիշեալ կաթուղիկոսն ի կողմունս ձեր ի զեկուցանելն. հաստատ և ընդունելի կալնլով. ի սկղբանէ առ ձեզ եկեալ և այժմ սոյն պալծառափալլութեամբ չնորհեցեալ բարձրահամբաւ հրամանի իմոյ օգտալի բացայայտութեամբ գործակցելով առ ներհակն կամեցողութիւն և հակումն չդուցանիցէք։

Այսպէս գիտասջիք պալծառափալլ նշանի իմոյ հաւաստս ընծալեսջիք

Տասն և եօթնամեայ։ 1801

Գրեցաւ իսկզբան չապանի ի հազար երկերիւր ի մայրաքաղաքս Կոստանդնուպօլիս։

ՃԽԹ. *Աւ Դանիէլ սրբազանն յորժամ ի քանտէ իւրոյ գրեալ էր հրաման Դաւթի առ Ծոհաննէս եպիսկոպոսն եւ ներսէս վարդապետն զի եկեսցեն յԻջմիածին։*

Աստուածընտիր սրբազան կաթուղիկոսի ամենայն հայոց տեառն տեառն Դանիէլի բովափորձ ճգնակիր Հէլբրապետի սրբոյ հօր մերում սուրբ գարշապարացն համբուրիւ մաղթեմք զօրհնութիւն։

Նախապէս գրեմք, զի լուչ լիցին սրբութեան ձերում Դիւտ և Ծոհաննէս ղատս[1]չ, զորս դատեցին Պերոզ և Ծուսուփ, և ըստ այնմ եղիցի ուրախութիւն սրբոյ հօրդ մերում կատարեալ։ Ապա յայտնեմք, զի գիր ձեր ընկալեալ ձեռամբ տէր Ծոհաննիսեան Աստուածատուրին, մատուցաք պալծառա-

վալլ պարոն Յիցիանովին, այն պի Քարց տեղեկութեան և հրամանի տորին ոչ էր հնար մեղ ղալ։ Բայց սակայն՝ դիր ձեր ոչ Քուեցաւ նմա հաստատուիլ և յաղագս այնորիկ ասաց Թէ, ըստ որում նորին սրբազնութիւնն զծնրութիւն ունի և չկարէ գալ պի խօսեցցի ընդ մեզ բերան առ բերան, մանաւանդ պի ի քանտի է և ոչ իսկ կարէ դի զգիր մեր կարդացցէ, նմին իրի որովհետև չնորհ ունի՝ ի վերայ նորա ամենողորմած տիեզերատաստատուրբ կայսրն իմ, մեք ևս ունիմք նմա պատիւս, վասնորոյ ես ինքնին ասաց երթամ առ սրբութիւն նորին անձամբ անձին, և այնպէս ապա ականջով իմով լուեալ զբարբառ սուրբ բերանոյ նորա կատարեցից, զոր ինչ և հրամայիցէ գիմապատկանաս։ Ապաքէն ըստ ասմ. զմիամտութիւն ունիցիս, որ ի 20 ապրիլի ամտոյս ընդ նորին մեծութեան գամք և մեք անպատճառ, տէր յաջողեսցէ մեզ զճանապարհս մեր և պահեսցէ զարքութիւնդ ողջ և առողջ ի պարծանս ծառայից սրբութեանդ՝ որ եմք և միամք տեսութեանդ բաղձացօղ

իշխարհ ԳՐԻԳՈՐ արքեպիսկոպոս մեծին Պօլ"
Յոհաննէս արքեպիսկոպոս Թիֆ"
Ներսէս արեղայ միաբան սուրբ Էջմիածնի"

ապրիլ 1803։

ՃԽԵ. Առ Բարսեղ եպիսկոպոսն։

Անդառնալի է հրամանն կայսերական, ըստ որոյ և անհնար է թէ լինիցի Դաւիթն կաթուղիկոս, եթէ կենդանի իցէ Դանիէլ արքազանն և եթէ մեռեալ զոր բարւոք կարես իմանալ նախ այնու, պի ամենայն հայոց ազգն Ռուսաստանու իսկոյն ընդ լսելն վասն արքազանի մերոյ Թէ բերեալ են գնա այնպէս անարգութեամբ ի սուրբ աթոռն, իսկոյն ըստ քաղաքաց քաղաքաց բազմակնիք մահուէր արարեալ մատուցեալ են կայսեր, պի Թէ հանգիպեսցի մեռանիլ արքազան տեառն մերում զէթ իրով իսկական մահուամբ վերստին ամենաբարձր հրամանատորա ընտրեսցեն զայլ միւս արժանաւոր կաթուղիկոս Եփրեմ արքազան արքեպիսկոպոսն և վերհաստնեալ աղալ Մինասն զո և ինքեանք պատշաճ դատեսցեն։

Եւ երկրորդ կարես իմանալ լաւապէս ասաւ, պի զպիղծ Դրիգորն մեծաւ անարգութեամբ հանեալ ի Պետրբուրգու ի 26 վեց տըրվարի՝ աքսորեալ են ի Նօլօրօսիու դուպէռնային, ուր մինչդեռ է այնքան մինչև տասցէ ղամենային զհաշիւն իւր զառաջինն և վերջինն և ապա կորիցէ ի կորուստն յաւիտենական։ Զորոց երկաքանչիւրոց վասն բազմապատիկ գրութիւնան կամէաք առաքել, բայց պի գամք մերձ ընդ մերձ, Թողաք բերել ընդ մեզ որպէս և տեսանիցէք. ուրեմն մի լիցի ձեզ ցաւ Թէ մահ նորին սրբազնութեան տեառն Դանիէլի, այլ պի ի կենդանութեան իւրում հայրապետ է նա մեր, և ի մեռելութեան իւրում նահատակ հայրապետ և աջնելի ի լամենայն եկեղեցիս հայոց ազգիս։

Լսեմք Թէ Յոհաննէս չարասէր պատրիարգն ևս են աքսորեալ բայց մեք չունիմք գրով վասն հաստատութեանն։

Ողջ լեր ի սէր մեր եթէ իցես դու երկիւղած։

1804

ՃԽԶ. *Թուղթ հասարակութեան Դանիմարկի առ կին. Պ. Ցիցիանով։*

Գայծառափայլ կնեազ Պաւլ Դիմիտրիչ
Ողորմած տէր.

Աստուածապսակ ողորմութիւն Ամէնողորմած թագաւորին մերոյ առատացեալ ի վերայ մեր պարտաւորէ զմեզ մանաւանդ թէ բորբոքէ զիղձս սրտից մերոց մատուցանել զմեր ջերմեռանդական չնորհակալութիւնս առաջի Ամէնողորմած Աթոռոյ Նորին Կայսերական Մեծութեանն։ Քաջազգս որոյ ահա ի դիմաց ամենայն հասարակութեանս մերում հաճոյ թուեցաւ առաքել զհոդեոր հայրն մեր (այս անուն քահանայի, և զեղբայրն մեր զալս անուն՝ Կիրակոսիչ՝) հանդերձ հասմազգային իւնարհ չնորհակալութեան դրով որ առ սպաս Նորին ամէնողորմած կայսերականի Մեծութեանն զորոյ և զօրինակն այս է ահա զոր ընդ գրոյս ապստիկ պայծառափայլութեան ձեր մատուցաք։ Խնդիր է մեր ամենեցուն ի պայծառափայլ բարերար տեառնէդ մերմէ զի զողորմութիւն արարեալ առ լցուցանել զփափագ սրտից մերոց զգիր ճանապարհութեան տուեալ լիչեալ հարազատացն մերոց առաքեսցես ի դուռն ողորմութեան, որով և մեք և աքանչելիս պարտաւորեալ մեծագոյն չնորհօք բարեաէր տեառնդ մերում, կացցուք և մնասցուք մշտնջենապէս բարեացապարտ օրհնաբան և աղօթաւոր վասն կենացդ

Գայծառափայլութեան ձեր խոնարհ ծառայք ի Գեանճայ քնակեալ հասարակութիւնն հայոց ազգի։

1804, փետրվարի
ի Գեանճայ։

Ողորմած տէր զոյդ բարերարութիւնք որ առ մեզ աւելի եղեն մեզ քան զերախտիս ծնօղաց մերոց զորոյ զչափն ոչ կարողանամք մեք կշռել բանիւ մերով միտն խնդրեմք յամենաքաւականէն Աստուծոյ զի նա ինքն իւրով մարդասէր բարերարութեամբն եղիցի ձեզ վարձահատոյց։ Այլ սակայն վերստին խնդիր է մեր ի պայծառափայլ բարերար տեառնդ ժերմէ զի կրկնակի զողորմութիւն։

ՃԽԷ. *Անաստրագիր գրութիւն Դանիէլ կաթուղիկոսի։*

Անլալտ ի մարդկանէ թագուցեալս ի բանտ տառապանաց, ոչ կարելով լայտնել զանուշն իմ Տիրածիր սղջոյն և Աստուածալին օրհնութիւն մատուցանեմ Տերամբ զօրացեալ Ազնիւ պարոն Նահապետիդ. որոյ ի Տէր խնդալ. զդրեալն զիրդ ի 5ըն մալիսի չերևան ընկալալ ի նոյն ամսոյ 6ըն զոր ընթերցեալ դրելոցդ տեղեկացայ։ Ոդյ եմ ես անձամբ՝ թէպէտ տառապիմ և չարչարիմ մարմնով զուրկ լաւենալն մխիթարութեանդ, այլ լուսով միայն մխիթարիմ և ապաստան կամ ողորմութիւն Քրիստոսազօր և Օգոստափառ Կայսերն ամենայն Ռուսաց գտանել զազատութիւն։ Ոչ այնքան ըղձամ ազատութեան անձինս, որքան տենչամ բարեկարգութեան օրինաց ազգի մերոյ և փրկութեան տառապեալ միաբանից Սրբոյն Աթոռոյն, և ակն ունիմ թէ Աստուածբաւ ողորմելով Նորին Կայսերականի Մեծութեան, եղիցի կատարումն տենչանացս։ Վասնորոյ ի չարչարանս իմ զաղօթս առ Տէր հանապազորդեմ, վասն երկարութեան անգին կենաց Աստուածարեալ Կայսերն մեծի, վասն կայսերազարմից և վասն ամենակերալ յաջողութեան

ղօրաց և զօրապետաց Նորին, զիւսացեալ զայս քանս համառօտիւ ողջ լեր։

Թղուատացեալ և տառապեալ հողի. Ցամի տեառն 1804 մայիսի 6ին ի Ղազարապատն, ի քանտ չարչարանաց իմոց ի Սուրբ Էջմիածին։

ՁԽԸ. *Թուղթ Ցովհաննէս արքեպիսկոպոսին Թիֆլիզոյ*

Ահա այսօր ճանապարհորդեցաք ամենայն միաբանութեամբ մերով դէպի փափաղելին հասանելից ի Սուրբ Տաճարն Աստուածեան և առ ցանկալի Սրբազան Տէրն մեր հրամանաւ Նորին պայծառափայլութեան յաղթօղ կուսակալ օրհնեալ Ցիցիանովին և ի չերևանու փարատեցան ամենայն բնակիչք արարատեան գաւառին հայք և տաճիկք Աստուածնորդութեամբ Իւզբաշի Ցօհաննէս աղային և որդուոյն Մէլիքզադին վերակացութեամբ Շահղին աղալի որդուոյն և Իւղազ Սուլթանին, որք եթէ ուր կամեցին վարել զնոսա չէ մեզ յայտնի։ Բայց լիչեալ հարիւրապետին և ամենայն մերազանց սիրտն է յայս կոյս, և կարօտին ձեռնտուութեան յաղթող իշխանութեան ամենայն Ռուսաց։ Այլ և Մահմէտ խանն անպատուամարութեամբ ամրացեալ անդ ի դղեկի իւրում, անդադար միչտ հետղհետէ զհրեչտակութիւնս մատուցեալ զօգնութիւն ժաղթէ և մատուցանելով խոստանայ կամովի Նորին կայսերականի մեծութեան զերկիրն ամենայն քաց ի գղեկէդ, այլ ի վերայ ամենայնի այսորիկ անհատատարիմ են առ պայծառ կուսակալն ամենայն քանք նորա, որովհետև մինչև ցայսօր ժամանակի Սրբազան Տէրն մեր մնալ այնպէս առանց ապահովութեան և յաղագս այսօրիկ հրամայեաց մեզ պայծառ կուսակալն յառաջել քան զինքն մինչև ի փամբակ և ինքն ևս գրեաց առ խանն, որ եթէ ստոյգ խնդրակից է կամաւ իւրով օգնականութեան կայսեր, յղեսցէ օր յառաջ զղաւիչն և զայլ պատանդս անդ ի փամբակ և այն հետայն չուեսցեն անդ եղեալ պատրաստի զօրքն ի Սուրբ Աթոռն մեր և զդուշացին ամենայն երկրին մինչև ցղնալն իւրոյ պայծառափայլութեան և մեք անդ ընդ կառավարիչս անդ ղրկեալ զօրացն լիցուք գործակից, ի գնալն նոցա ևս և հոգածութիւն զարձուցանելով զերեսս ողորմելի մերազանց թերևս և ամենայն երկրին՝ այս կոյս, զորս Տէր յաջողեսցէ։ Պայծառ կուսակալն ևս պատրաստի ամենայն կազմ պատրաստութեամբ, և ժողովեցան ամենայն սալլք բարձող հացի զօրացն և ինքն ևս յայտնեաց մեզ ելանել ի 31 ամսոյս յառաջիկայս երեք չաբթի, զոր Տէր Ամենակալ յաջողեսցէ Ամենակարող ողորմութեամբ իւրով։

Զորպիսութիւն Սրբազան տեառն մերոյ կարէք իմանալ յօրինակի գրոյ Նորա, որ առ Նոր Նախիջեանցի Նահապետն Արշակեան գործակատար վերակացութիւն հացի զօրաց, զոր չզնալ էր մայօրն Փամբակու չերեան առ խանն։

Ղաւիչն անարգել ամենայն նախատանօք անդ ի Սուրբ Աթոռն գանիւ և հարկանելով քօչեցուցեալ են զբոլոր միաբանսն աղխիւք չերեան. այլ ի վերջոյ ըստ պատմելոյ Տէր Խաչատուրի եղբայր Ցօհաննէս վարդապետին և Գեղմացի փափախչու որդի Վարդան վարդապետին, ևս և Շահրիմանեան բժիշկ Ստեփանին որք նոր եկին յամսոյս 26 հինդ օրեալ ճանապարհորդութեամբ, տուեալ խանին չորս հազար թուման, խանումին մի հազար թուման, մին հազար թուման ևս Գեալբալի խանին և մին հազար ևս խանումի որդոցն և ընդ այսմ հրաման ընկալեալ դարձեալ միւսանգամ ի Սուրբ Աթոռն քան իւր յաղագս պահպանելոյ վասն չինութեան Աթոռոյն և միտքն վասն գտանելոյ զննարս վախստեան, այլ այսու ամենայնիւ խանն և Գեալբալի խանն պահպանեն զնա ասեն ամենայն զգուշութեամբ, նաև դրեալ էին մեզ և նորին պայծառափայլութիւն կուսակալ Ցիցիանովին յառաջադոյն լիչեալ նորեկքն՝ ևս և ամենայն եկեալքն յառաջ և յայժմ պատվեն ստուդապէս եղանակաւ եթէ երկիցս գրեալ է առ Շահզադէն ևս և Ալէքսանդրն. և երդուեալ ևս ի չաբաթ ըմբռնեալ են զգիրս որովք յայտնեալ է թէ երկիցս դրեալն, այլ և զմիւսս գրեցելոցն ըստ այժ օրինակի ևս եմ ի քէն անտի ջերմեռանդ ձեր և սիրօղ բարձրութեան իշխանութեան ձերոյ, և առ այս ևս թշնամացեալ է ինձ Ռուսն, ևս և ընդ նմա միաբանեալ խանն

Երևանու կամի ասլ նմա զերկիրն ապստամբեալ ի ձէնջ։ Վասնորոյ և ես լայտնեմ ձեզ, զայս ամենայն և խնդրեմ գունէ օր լաւ.ագ հասուցանել լայսր զհազարս չորս որք պահապանեացեն զերկիրն և զմեզ մինչև ցգալուստն ձեր. և ես ամենայն իրօք պատրաստ եմ լոժարութեամբ ձեռնտու լինել բազմութեան զօրաց ձերոց։

Խոնարհ Ց.Վ.ՀԱՆՆԷՍ եպիսկոպոս Աւագնորդ Թիֆլիզու և էլիսաբէթապօլու և Երևանու հայոց։

1804 յունիս 5

ՃԽԹ. *Թուղթ Աղայի Փիլոյեանց։*

Որպէս ի նախնումն լայտնեցաք ի ՅԸն ամսեանս բաւական զօրօք վարդապետքն մեր գնացին ի փամրակն քոյս. և ի 10 սորին քնիազ Ցիցիանովն մեծ զօրօք չոգաս և անտի բոլորեքեան ի միասին խաղացին էրեւանն։ Սակայն մասն մինչ ի զօրաց Ռուսաց նախընթաց լինելով հարուստ մի հեռանան, ի մեծ բանակէն, յորմէ Պարսիկք 4000 զօրօք գան լառաջ զկնի չուզ ժողովրդեանն Երևանայ ընդ սահմանս մեր. որոց զկնի հասեալ ասարեն իսկ զմինն, այլինքն զմի էլ՝ այլինքն գունտ։ Մինչ այս մինչ այն հանդիպին. պին վոքր մինչ այն լինեալ նախընթաց զօրքն մեր, նոյն ասարատուացն, ընդ որս մարտ եգեալ ճակատեն. և զբաղումս ի նոցանէ հրահար սատակեն և զայլսն հալածեն, յորոց փրծնի իսկ էլն։

Երևանայ ժողովուրդքն և Ցօհաննէս հարիւրապետն իւր էլիւքն ի Լօռու բերդն են այժմ։

Ի 20 ամսոյս ամենայն զօրքն Ռուսաց ժողովին ի մի գլուխ նոցա ի կուսակալն և սկսանեն գնալ դէպի սուրբ Աթոռն և զգան զի լԱթոռոջ կան ամրացեալ 5 կամ 6 հազար պարսիկք և օրն տարաժամեալ. ուստի անդամնօր զկալ առեալ խորհին ընդ լառաւօտն արձակել ի վերայ նոցա. և ի լուսանալն 21 աւուրն յունիսի տեսանեն զի մեծագոյն ամբոխք զօրաց գան ի վերայ իւրեանց և կուսակալն Թողեալ զբանակատեղն իւր անդ և զմեծ զօրան, առնու մնալն գ2500 զօրս և 5 գունտս կազմէ զնոսա հինգ հինգ հարիւրովք և դիմէ լառաջ, որոց հասեալ առ իրեարս սկսանին ճակատիլ և տևէ այս մեծ պատերազմ ցժամս 4։ Դրէ ինքն Ցիցիանովն աստ թէ պարսիկք էին 18000, յորոց լոյծ բազումք անկան և ի մէնջ սակաւք. վերջապէս ըստ ողորմութեան Աստուծոյ և ըստ բաբեբաղդութեան լինքնակալ Կայսերն յաղթող գտան սակաւիկ զօրքն մեր մեծամեծ զօրացն նոցա՝ դառնալ անդրէնն պարսիկն ի տեղի իւր և մնալ առ ի մարտի տեղն այնմիկ եթէ ի վաղիւն դարձեալ եկեսցեն նոքա. դարձեալ մարտիցուք, ապա եթէ ոչ՝ յարձակեսցուք ի վերայ զօրացն որք ի վանս են ամրացեալք. դրէ զայս Ցիցիանովն։

Ի 1804 ի յունիսի 27 Խոնարհ ծառայ աղայ ի Թիֆլիզ. ՓԻՈՒԵԱՆ

ՃՃ. *Թուղթ կն. Էլիզբարի Էրիսթաւով [30]) առ Ստեփան Շարօյեան։*

Պարոն Ստեփան Շարօեան. որովհետև դու Հայր Սրբազան Եփրեմի յատկացեալ կոչիս և աւետեաց լրոյ ևս ունիս արժանաւորութիւն, վասնորոյ ծանուցանեմ բարեկամիդ զայս համբաւս։ Գնիազն մինչ մերձենալ Երեւան ի լսել խանին, իսկոյն ղընծայս և զմարգիկս առաքէ առ կուսակալն Թէ ձեր զօրաց սուրսաթն ի Սուրբ Էջմիածին է պատրաստեցեալ, որ և ի վերայ այնր բանի քնիազ Ցիցիանովն դիմէ էջմիածին յոր անդ լեալ են զօրք պարսից, և մին վերասչափ հեռաւորութեամբ զօրքն ռուսաց դղեակս կազմեն որք զծանրութիւնս իւրեանց դիցեն անդ։ Իսկ վրաց զօրքն խաղաղ առնեն ի վերայ բերդին Երևանու։

Ի հինգերորդում աւուր երեկոեան դատարկեն զԱթոռն Սուրբ Էջմիածին զօրքն պարսից, և փախուստ առնեն մինչ ցրանակն Շահզադին որ է ի Ղրխբուլազ։ Մեր զօրքըն և պարսից զօրքն առաւօտէ մինչ ցերեկոն պատերազմ ունին և պարսից զօրացն երիցս անգամ նուաճեալ են, քնիազն վերադարձեալ է ի բանակն իւր և պատուիրեալ է վրաց զօրացն եթէ վիրք բաւական է այդքան խաղն ձեր ի վերայ բերդին ան պատ.

բաստ լերուք որ ի յուլիսի 4-ումն պեակէ գնամք ի վերայ քանակին պարսից և իսպառ ոչնչացուցանել զնոսա, որ յուսամք մինչ ցարդ վերջացեալ իցէ։ Երեանու խանն ծանր առեալ հալի առ եղրակացութիւն զործոյն, և աստէն ի Թիֆլիզու սրբազան արհիքն ես գնացին ձեր անհաճոյ Դաւիթն կապանօք ի բերդն է և սրբազան Դանիէլ կաթուղիկոսն ի յանապատն, հիմա եղե այցելութիւն տեառն, զկնի քանի աւուրց այլ ես աւետարերն համբաւ ունիմ դրել։

ի 1804 յուլիսի 4-ըն. քնիազ Էլիզբար Էի Թիֆլիզ. րիսթաւով։

Այս բոլոր համբաւներն աստ նորին կայսերական մեծութեան ես ուէյօրտ տրեցեալ եղե ի քնիազ Ցիցիանովէն։

Այսօր գիր ստացաք ի Պօլսու ի մահ. տեսի Ստեփաննոս ամիրալէ դրեալ ի վերայ վհհաղնէին և ի վերայ մեր. ի յուլիսի 15-ըն դրեալ։

Նաև գիտութիւն լիցի տէրութեանցդ, որ օրս յունիսի 13-ին գիր առաք ի կարնոյ. Ներսէս վարդապետն դրեալ է ի Կարին ցսակոբ աղալին և մահտեսի Սերոբէին թէ եկայ ի Արփաչալին ի յունիսի 10-ըն ընդ զօրացն ռուսաց, և պարսից լետ պատերազմեալ յաղթեալ են գրեթէ մինչ ցյուլիսի 20-ըն Աստուծով սուրբ աթոռն կը գնամք, և կրկին գրէ եթէ՝ այս ժամ գիր առաք ընդունու ի բերդն բարձր տեղի նստեալ և փառաւորութեան մէջ է։ Իսկ ապօրինաւորն ի ներքոյ ոտից է ընացեալ, յուսամք, որ քանի աւուրց՝ կրկին ուրախութեան լուր ստանամք. ամենայն ճշմարտասէրքն զուարճասցին։

(Ստացեալ ի սեպտ. 11 ի Դրիզդրիալ).

ՃԾԸ. Թուղթ Հայրապետի Ստեփաննոսեանց առ Դանիէլ։

Արժանապատիւ և մեծապարգ տեառն Դանիէլ սրբազնասուրբ և առաքելաշնորհ կաթուղիկոսի և հանճարափայլ պատրիարգին հայոց, զերկնաչուք ներքացն ստիկաբար՝ համբուր

Վեհափառ Տէր՝ իմ,

Իրաւի միով մասիւ արժանի է՝ երանել լաչաց իմոց՝ սակս տեսութեանս սրբազնութեան ձերոյ աստ, այլ սակայն միևնոյն ժամուն ես ինքնին ըզգամ զտարաբախտութիւն իմ, զոր չեղէ արժանի բաբունապետ փեսալգ ընդ հարսին զարդարեալ տեսանելոյ. լոր և լուսամ արժանաւորիլ նմին ես փութով։

Արդ ներկայ ի պատճառի ընդնի և պաշտօնակից Իղնա՛ցդ՝ ի պարսից արքայէն վարեցեալ եղեր աստ. բայց սակն ունիմ ըստ իմասանելն. զի արդարութեանդ փրծանելոց ես և փոխանակ քոյ իսկապէս մեղաւորն մատնելոց է իսկ. իմ անարժանութեանս խնդիրն ի սրբազնութենէդ ներկայ ալս է զի չնորհ արարեալ լալնժամ զորս պաշարեալ կացիր ի ամրոցն Երևանու զոր ինչ ծանեար ի պատերազմացն հիւսիսայնոցն ընդ պարսից զումարտակի ներքոյ ծանուցես զոր առաքելոց եմ ի Հնդիկս և մեծապէս չնորհակալ լինելոց ի մեծի սրբազնութենէդ։

Առ որ ալս չնորհն առնելով նուաստիս պահելոց ես մեծարգութեանդ միշտ պարտական և պատրաստական չնչին ծառայ ՀՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ

ի Թարվէզ
սեպտեմբերի 25
յամի Տեառն 1804.

ՃԾԹ. Պատմական տեղեկութիւնք տուեալք ի Դանիէլ կաթուղիկոսէ *)

Վասն հարազատ որդիութեանդ սրբոյ Լուսաւորչին և հաւատարիմ բարեկամութեանդ նշանակեմ զստոյգն փոքր ի չատէ։

1. Ի գրգռութենէ Երևանու Մահմէտ խանին և Քէլբէլի խանին պաշծառափայլ Ցիցիանով զօրապետն զառաջինն հրամանաւ կայսերն սակս Երեանու բերթին ի խնդիր խանիցն զիջեալ ես հաճեցաւ գալ և պատեբազմիլ զոնէ թէ իցէ ընդ չահին և առնուլ զբերթն սիրով ըստ մտաց խանիցն. Քէպէտ պարսկական խորամանկութեամբ է լեալ զերկուս կողմանս լարուցանել ի վերայ միմեանց և յաղթողին լինիլ հնազանդ.

*) Թուի թէ սա պատասխան է ՃԾԱ նամակին։

2. Ձկամս իւր կատարելոյ մօտ Յիցիանովն եկն մինչև ի Շիքակ գաւառ գրեցուցին ինձ խանդն թէ կամաչ և թէ ակամայ առ Օհաննէս և ներսէս վարդապետսն թէ աղդեցէք մեծ կուսակալին դի հրամայեսցէ Ղարսալ փաշային չտալ դռահրին մեր չահին և ինքն յառաջասցի այսու պայմանաւ որ մեր խանութիւնն մեզ լիցի և բերրին ի ձեռս մեր մնասցէ միայն հարկս տացուք Դուին որ և անդէն գիպեալ Արազոյ զօրքն և անկեալք էին բազումք առաջի թնդանօթիցն ռուսաց և դարձեալք. զիմոքր մի էլլիկ և զձՌ ոչխար դրեցին։

3 Յօրէ օր քանիցս զինդիրս աւաքեալով յաւաջացուցին զզօրսն Յիցիանով Դեմետր զօրապետին որովհետև և Շահղադէն եկեալ ԼՌ զօրօք և բանակեալ էր ի Ջարբաղ կոչեցեալ տեղին մերձ ի Կաւակերտ գիւղն և պատերազմէր ընդ երևանաս բերթին ի նեղ արկեալ զնոսա. վասնորոյ լօձական լեզուէ խանիցն և անպարտելի յաղթութիւն իւր վստահացեալ խաղաց պայծառափայլ կուսակալն ոչ զանգիտեալ ի սաստիկ չոգոյն և ի վերայ եկեալ զօրացն չարժեցաւ և էՂ նա ի խնդիր մեր յազատութիւն սրբոյ աթոռոյն յոր լցեալք և ամրացեալք էին յաւերութիւն. իցէ թէ լԱստուծոյ կողմանէ ի տօնի սրբոց Հռիփսիմեանցն ի լուսանալ առաւօտուն մըտին զօրքն Ռուստաց ի դաշտն սրբոյ էջմիածնի. իսկ զօրքն Պարսից գիշերայն պատրաստեալ և եկեալ յարուցեալք էին ի վերայ անպատրաստութեանց պաշարեալ էին և իբր նեղեալ ի մէՂ սրբոյն Հռիփսիմեայ և Շողակաթի վանիցն և ի կողմանս այգեստանոյն մինչև ի Ջարցախ գետն. իսկ Յիցիանով 60 արամբ և այլ զօրապետք նոյնպէս մասնաւոր զօրօք յայս և յայն կողմն ժողովեալ թնդանօթօք կոտորեալ ցրուեալ էին զպարսիկս ի պարտութիւն. և ինքեանք զօրացեալ և չըՆչաւորեալ էին զինքեան պահպանելով անվնաս և զպարսիկս յաղթահարեալ միայն թէ Բ սայլ և Է ռուս աւելի կամ պակաս գերեալ և աւերեալ էին.

4 Անդ պատերազմեալ ընկճեցին զպարսիկս և ի տօնի սրբոյ Լուսաւորչին եկն ի վիրապէն չարժեցան զօրքն ռուսաց դէպ լերևան յարեալ և զօրքն պարսից ի վերայ նոցա սոքա դալին և նոքա պատերազմէին զորս կոտորեալ յաղթութեամբ եկին և բանակեցան անմիջապես ի Կավակերտ գիւղն Հուբաստան գետոյ և առաքեցին զոմն Նահապետ անուն Նոր Նախիջևանցի ամբարգար զօրացն զի եկեալ ծանիցէ զմիտս խանիցն որովհետև յառնել պարսից ի վերայ ռուսաց ի նոյն օրն իսկ ապստամբել և Բ թափերուն Շահղադին և երդմնագիր դրեալ և կնքեալ և իմ ներկայութեանս կնքեցուցին և Դաւթին վասն խոստմանն նոցա և երդմանց թէ ձեր խանութիւն և պատանդքն և բերրն ձեզ տամք միայն թէ ի կողմն մեր մնասջիք և ոչ ռուստաց. և մանաւանդ Նահապետ ամբարգարն յառաջագոյն երկիցս եկեալ սուրբ Էջմիածնի պատրաստութիւն հոգալ մեծամեծ ամբարանոցս գործեալ էին ցուցեալ թէ ձերն է և մինչև ցվաղճան ոչ ետուն և ոչ ափ մի ցորեան օձու լեզուաւ լետս դարձուցին սիրտ մեր առ ձեզ է ասելով. Միայն թէ Արազիքն կամէին սպանանել զՆահապետն խանին մարդ եղեալ ուղևորեցին զպատասխանի ընկալեալ ի Նահապետէն դուք գրեցիք և բերիք զմեզ ընդէր գժղմիք. եւ յայնմ երեկոյին եղեալ ի բանակէն Շահղադայէն որ էր յանդիման ռուստաց ի վերայ Երասխ գետոյ մերձ ի Մասիս լեառն խաղաց և դարձաւ ի կողմն Խոր վիրապու Գառնոյ և Դվին քաղաքի ապա Ախունդ Սէյիդ և Հաճի բերդաբնակքն աղերսանօք հրաւիրեցին զՇահղադայն գալ և բարձրանալ ի Գանձակ. զի մնասցեն ռուսքըն ի ներքին տեղին և եթէ դալ լիցի ռուսաց ի վերայ բերթին նոքա արտաքուստ և սոքա ի ներքուստ յաղթահարեսցեն։

5 Ի յունիսի եղև մեծ զօրապետ Յիցիանովն առեալ զղօրս և թողեալ պահապան բանակէ՝ էանց ի Հուբաստան գետն ճեմելով և սիգալով զառաջով։

—

Հետեւեալ կտորը ետա թւում է շարունակութիւն ծծբ հատուածին։

2 օր մնացեալ չհն ի Սուրբ Աթոռ..... սեպտեմբերի 12-ին՝ մինչ ելանել և դառնալ կամէր յայնմ կիսոջ եզև Միրզայ աղայ Ղուլի վէզիրի ծառայ Թիֆլիսեցի ուրացեալ Գօրգին բէկն թէ որ ինչ ունիս ժողովեա զի գնալոց ես ընդ մեզ. և ես քանզի երիցս կողոպտեալ գոլով ի Դաւթէն միայն դան-

կոդինս իմ առեալ ելի և նստուցին զիս ի ջուր և բերին լօրդանն, և անդ Միրզայ աղայ Ղուլին ասաց թէ զեզ պատուով կուտանին ի Թարվէզ Ահմատ խանին մեր հիւպաթ կունէ մինչև չահի գալն ուստի ամենայն կասկածանօք վտանգի խայտառակութեան և մահու ունելով զտաբակութիւն նեղութեամբ և չարչարանօք ի Զ օրն մնարանդիք բերին զիս և մինչև էի լետին Մեանդղիլն խօսեցայ ընդ նոր Մէհմանդրին թէ հաչտութեան միջնորդ լինիլ կարեմ զրազում խօսս արկանելով լոր գիւղ եկն լերեկոլին Ահմատ խանն գնալ ընդ լառաջ չահին և ի խնդրելն նոր մէկ մանդարին թէ զինչ արարից դանագլուխն չդիտեմ վասն երկիւղի իմոյ ասաց ինձ թէ Ահմատ խանն ասաց նախ թէ այիս մարդն է խալիֆալ է և այսպէս և այնպէս բան կուգալ ձեռքին առ ուսաց տէրութիւն ապա հրամայեաց տանել և յանձնել մահտեսի Յոհաննէսին, որ և երեր ի տուն օրհնեալ անձինս և հանգեալ ի հոգի և ի մարմին և փառս մատուցի Աստուծոյ մինչի տան քրիստոնէի եղե ինձ մնալ թէպէտ և կարծիք կասկածանաց դեռ կայր թէ ով գիտէ լինչ միտս ե լինչ տառապանս արկանիմք և կամ ի թէհրան տանին ըստ խօսելուն Ազալազուն և Գաւթի խորհրդակից ուրացող Գօրգինին։

իգ. Չկնի 2 աւուր եկն չահն մինչ մեք ոչ գիտէաք թէ ում հրամանաւ բերեալ իցեմք թէպէտ Գօրգինն չահի հրամանաւն ասէր այլ հաւատարիմ որդիք սրբոյ Լուսաւորչին լորոց մի Ջուղայեցի չահի Սամուրզուղ աղալ Ոսկանն պատմեաց ի ներկայութեան մահտեսի Յոհաննէս աղալին և աղալ Չալրապետին, և կարնեցի վաճառականացն թէ գո գալով պատճառն և մատնօղն Գաւիթն է չահն խաբար չունի. Միրզա աղալ Ղուլով արար սակս կասկածանաց և մատնեաց զբեզ հեթանոսաց որպէս և հաստատուն գիտեմ որ մինչ դու լԻչքիլիսան էիր Գանաքեռցի Նիկողոս ումն առաքեալ էր ի թեհրան և դրեալ չահին վասն գո թէ Չանալ գալ և նստիլ լաթոռն ալ բերցէ զուսան և լցցէ զերկիրն քոյ և որ ինչ լինի մինչև ցայսօր այն է ապա Գօրգին ուրացօղն խրատ առեալ ի Գաւթէն չարչարեաց զմեզ թէ չահն և Միրզէն ասին տանիլ զքեզ ի թեհրան և ես զպատրաստութիւնդ ե թէ ինչ ունիս Միրզային տալիք, որպէս ի ճանապարհի մերկացուց և աստ առեալ զմնացորդս կորեաւ և ապա ասաց վասն քոյ զի մնասցես աստ չեմք տանելոց զքեզ ապա միամտեալ նստ..... տան մահտեսի Յոհաննիսին և դնալաք ի տուրբ եկեղեցին. մահտեսի Յոհաննէս օրհնեալ ծնունդն զամեն եղեալ Աչմատ խանին ի տօնի Վարդավայ տուրբ խաչին զմէլիք Ապօվի որդի Ռստամ բէկն ի ծանրագոյն անաւրէն և զանչէլ պարանոցի և ոսացն արձակեալ երեր ի տունն իւր առ մեզ զոր լաւացեալ ի վիրաց քաղցրացան ճաչակք մեր ի փրկագործութենէ չարչարանաց և խաչի տեառն և Աստուծոյ մերոյ Յիսուսի Քրիստոսի որում զվաւրս և զգոհութիւնս մատուցաք սխրագործն օրհնելով որում միառք լաւիտեանս անգրաւ լաւիտենին ամէն։

Իսկ և ի գնալ Յիւլիանօվին ամենայն միաբանքն լահ պարսից թէ գուցէ գայցեն և սպանցեն զմեզ և որչափ կողոպտիցեն ըզթողեալսն ես մերկացուցին վասնորոյ զհարկաւորն սիահով դաւթար արարեալ գնացեալ և տարեալ էին ընդ զօրացն դէպ ի Թիֆլիզ, Թէպէտ ի գալն չահին կրկին կողոպտեցին պարսիկքն մինչև ԲՌ թումանի գիրն պղնձեղէն բեռն բեռն արարեալ տարին զոր տեսաք հազարաւոր գերի ծախեր և եկեղեցական գրեանսն լառաջագոյն ընտրեալ տարին յԵրևան և գնացեալսն ի Թիֆլիզ ընդալ մասնաւոր իրաց գաւթարով թողեալն չատ քան տարեալսն։

Ի Թրվեզ սեպտեմ. Յիսուսի Քրիստոսի ծառայ
քերի 27. 1253 Դանիէլ Արք-եպիսկոպոսապետ Էչմիածնի և ամենայն հալոց իբր կաթուղիկոս կոչեցեալ։

ՃԾԳ. *Թուղթ Յովսէփ Ղորղանեանի առ աղայ Մինաս Նոհիազարեան*

Պերճափառ և վեհազուն իշխանապետ
Աղայ Մինաս.
Ամենողորմ Տէր իմ։

Խոնարհական ծառայութիւն մատուցեալ՝ լայտ առնեմ. զչնորհեալդ ի 24 յունիսի ընկալայ ըղձիւ ի 27 սեպտեմբերի. որով գիտաս-

ցեալ զառաղջո-թիւն երջանկափայլ Տեառնդ իմ, ուրախ եղէ յոյժ։

Ցաղագս չնորհելոյն վեհափնութեանց Ձերոց զնամակ լանձնարարութեան զանարժանութենէ իմմէ (ըստ հայցուածոցս) առ նորուն Պատճառութիւնն ինդիալ վ.օլկոնցկի ողորմած Տէր իմ, չափաղանցաբար չնորհակալ եմ ղՁերդ Պերճափառութենէ. քանզի արդարև, մինչ մատուցեալ է Պ. Սահակ՝ հանգուցեալ Տէր Առաքելեան Ղամազոզին զնամակն Ձեր՝ նմա, ծագեաց սիրով իւրով զնչոյլ իմն իմանալի լուսոյ առ սորկութիւնս իմ, զոր լամենայն կեանս իմ անմոռացաբար ար ի սե նեակ սրտիս ղրեալ՝ խոստանամ նուիրել պատուերժականն զոհարանութիւն։

Անճառապէս թախծեալ կայ հոգի իմ ընդ մեկուսացութիւն իմ լամենողորմ տիրուհուոյս ի լուսափայլ թագուհւոյն մերմէ, զորոյ զարդի ընդ խնամակալութեամբ զտեալսն երջանիկ, և դեռացեալս զիս ի հովանեաց նորին ապերջանիկ կարղացեալ. աւաղեմ՝ ժամն, յորում եղև ինձ այս մեծ ձախորդութիւն, որ ստորոգի միայն զանտանելի վատաբախտութենէ իմմէ. սակայն լուսաւոր լամենաղօր կարողութիւնն Աստուծոյ, զի գոնէ լետ այսորիկ արժանացուսցէ զիս (ըստ եառանդեան սրտիս) դիմել ի սպաս, և ամփարակիլ ընդ Մալրութեան գթոյ հովանաւորութեամբ նորին Լուսափայլութեան, և ընդ տիրական սիրոյ խնամով Ձերդ իշխանապատուութեան. մանաւանդ զի ըստ ողորմութեան Աստուծոյ, ցաւ ոտիցս ըստ մասին թերացեալ զգամ և այլն։

Աղաչեմ խոնարհաբար, զի թարց ընդ միջելոյ հրամայել հաճեացիք զիմովսան պաշտօնս. յորոց կատար պատրաստ կամ ամենայօժար սիրով և փափագաւ։

Ի 1804։ Ի լեռն Ձերդ Պերճափառ վեհաղնութեպտեմբերի ի թեան ամենախոնարհ ծառայ ՅՈՎՍԷՓ ՂՕՐՂԱՆՈՎ։

ՃԾԴ. *Թուղթ առ աղայ Մինաս Եղիազարեան։*

Քրիստոսասէր մեծահամբաւ վեհաղնեալ իշխան Հայոց Աղա Մինաս Պալաղատ.

Համօրէն Հայկազունեաց ողորմած և բարերար.

Բարերարութիւնք տան Հօր ձերոյ ի քնէ անտի առատացեալ ի վերայ ամենայն ազգի մերոյ զամենայն բերան ստացեալ ունին վասն ձեր չնորհապարտ օրհնարան գոհաբանութեամբ, այլ քանզի ժանտութիւն զերչաց մերոց բարբարոսաց անասելի իմն խստութեամբ բռնացեալ կայր ի վերայ մեր մինչև ցայսօր ժամանակի լամենայն ժամ բաղձանք սրտի մերոյ հանապազօր զսիրտս մեր գերլոյր, այլ երկիւղ մահուն առաւելապէս հզօրացեալ արգելլոյր զմեզ ի փութոյ կամաց մերոց որ և ոչ երբէք կարողացաք համարձակիլ երևիլ առաջի Պալաղատ ազգասէր Իշխանիդ մերոյ գոնէ տուկ միայն գրովք ողջունի։ Իսկ արդ մինչ մարդասէր ողորմածութեամբ քաղցր արարչին մերոյ Աստուծոյ տարածեաց ի վերայ մեր զամենամեծ հովանի իւր պատկեր նորա ի երկրի աստուածանման Ամէնողորմած ինքնակալ կայսրն ամենայն Ռուսաստց. և հզօր զօրութեամբ գերազօր բազկի իւրոյ ազատեաց զմեզ և զհալրենիս մեր ի բռնաւոր անօրինաց, ահաւասիկ չնորհաւորեմք մեծասէր ազգասէր վեհաղնեալ Պալաղատ իշխանիդ մերում, զայս մեծ փրկութիւն և ազատութիւն մեր և սրբոյ եկեղեցւոյ մերում, քանզի որ գիտեմք, զի ըստ ազգասէր հայրենասէր բաբի սրտիդ, չիք քեզ այլ մեծագոյն ուրախութիւն։ Ապա լայտ առնեմք զի ըստ որում պարտաւորի ի գրոց սրբոց ամենայն չնորհակալ ճանաչել թէ լումմէ է չնորհն ամէն իրի և մեք լցեալքս անթերի ողորմութեան չնորհօք աստուածապսակ թագաւորի մերում տիեզերահրամանի ինքնակալ կայսերութեան ամենայն Ռուսաստց. քանզի ճանաչեմք զնա լետ Քրիստոսի Աստուծոյ մերոյ երկրորդ փրկիչ և կեցուցիչ մեզ, վասնորոյ ուրեմն ի դէպ վարկուցեալ համարձակեցաք հանդերձ խոնարհ չնորհակալութեան գրովք հասարակութեան մերոյ առաքել ի դուռն ողորմութեան զսի քահանայ և զմի ժողովրդական որպէս զի ի դիմաց մեր ամենեցուն

համբուրեցեն կենսաձիր հետս ոտից փրկողի և ամենողորմած թագաւորի մերոյ։ Առաքեցաք ընդ նոսա և զնշան բարութեանց երկրիս մերոյ սակաւ միրգս ոչ որպէս ընծայ այլ զի եղիցի այն առանց բարբառոյ անթերի կատարելութեամբ լայտնի նշանակիչ եղիսոտական ծառայութեան մերում, ըստ որում հող երկրի մերում զանպակսի պտուղս արգասեաց մեզ մատուցանէ, իսկ մեք ամենեքին զետնախչտի մերկամարմրն ե զրկեալ յամենայն կենցաղական բարեմասնութենանց լայս վայր ժամանակի միայն կենդանական չնչով մեր համարեալ լինիմք ապրեալ։ Բայց քանզի աստուածպիրութեան ձերում ես լայտնի է որ ամենայն նեղեալ և վշտացեալ հալածեալ բնակիչք Աղեայի եմք անծանօթ ամենեին առ կանոնաւորեալ կենցաղս եւրոպալի, վասնորոյ հարկաւորապէս զձեզ մեր ի գրասանակս ազգասէր բարէսէր զերազնիւ իշխանիդ մերում արկեալ վստահացաք գալ ի Թղթի նորին կայսերականի մեծութեանն զի եթէ ի զալստեան լղեալ արանցն և եթէ լապաս ի յամենայն ժամանակս լայդր ի դուռն ողորմութեան, ի կողմանէ մերում հասարակութեան զու լիցիս միշտ բերան և լեզու լայտնել իւրաքանչիւր ժամանակս զամենայն հարկաւոր որպիսութիւն մեր ի ամենողորմած դրան նորին կայսերականի մեծութեան և մաղթել ողորմութիւն նորա վասն մեր, որպէս և լայտ առնէ օրինակն նորին զոր ահա ընդ թղթոյն մատուցաք լարգուբեանն ձեր։ Արդ ով բարերար արգոյ իշխան մեր և տէր ողորմած, վկայեալ է մեծ ջերմեռանդութիւն սիրոյ քումմ որ առ համազգիսդ ընդ ամենայն տեղիս տարածեալ լողորմելի ժողովուրդքս հալիկազնեաց. որոյ լաղագս ինչ սրբազան հայրապետն մեր բազմապարգեւ Տէր Դանիէլ կաթուղիկոսն ամենայն Հայոց կարգեալ է զքեզ լայդր ի դուռն ողորմութեան ի կողմանէ սրբոյ աթոռոյ մերոյ և ի կողմանէ համօրէն ազգի մերոյ լինել վէքիլ և բարեխօս. այլ սակայն և մեք ողորմելի ազգք քո ե ընտանիք ըստ հաւատոյ լատուկ ազերսիս աղաչեմք վասն անուանն Քրիստոսի և ի պատիւ հօր մերոյ սուրբ Լուսաւորչի լանձն առնուլ սիրով զամենայն աշխատութիւնս վասն մեր և որչափ բերէ կարողութիւն ձեր ոչ խնայել վասն մեր և լամենայն ժամանակս բարեխօսել մաղթել առաջի ողորմութիւն նորին կայսերականի մեծութեան վասն մեր և վասն որդւոց մերոց, որ և Աստուածն բարձանց Աստուած որբոց և այրեաց ընկալցի ի փառս իւր զամենայն աշխատանս քոյս և հատուսցէ քեզ դհոգևոր և զմարմնաւոր բազմապատիկ վարձս բարեաց լայսմ աշխարհի և ի հանդերձեալն ամէն։ Ողջ լեր ուրախութիւն ազգի մերոյ և պարծանք և ողորմութիւն ամենակալին Աստուծոյ և սուրբ պատկերի նորա ամենողորմած կայսերն ինքնակալի եղիցի միշտ աննուազելի առաստութեամբ ի վերայ ձեր ամէն։

ՃԽԵ. *Թուղթ Դանճակի հասարակութեան առ կայսր ռուսաց*

Ամենողորմած տէր

Հարքն մեր և նախնիք առաջինք աւօք հարիւրաւորօք տանջեալք և չարչարեալք ի ձեռս խստասիրտ անօրէն բարբարոսաց, հոգւոյ անձկութեամբ ակնկալեալ միշտ մնացին տեսանել զայս մեծ ալեքւութիւն երկնաձիր և ոչ տեսին։ Իսկ մեք ծնունդքս լետին տառապանաց նոցին ի վերջին կէտ կենդանական չնչով մերոյ մարդասիրութեամբ քաղցր արարչին մերոյ Աստուծոյ ահաւասիկ ի վեր քան զհասումն մտաց մերոց տեսանեմք զմերս ողորմելութիւն հանդիպեալ մասին աւետարանական երանութեան մատ՚ 15, 17։ Քանզի տեսանեմք զերկրպագելի սուրբ խաչն Քրիստոսի փրկչին մերոյ գերագոյն փառօք պատուեալ և բարձրացեալ և թշնամիք արհամարհօղք ի փայլակնացայտ ճառագայթից նորա պատկառեալք և սմաչեցեալք։ Տեսանեմք զեկեղեցի Քրիստոսի և սուրբ հաւատն քրիստոնէական արեգակնանման ճառագայթիւք չքեղազարդ պայծառացեալ և որք չպէտահարէինն գնա դրունք դժոխոց տարակուսեալք և լքեալք։ Տեսանեմք զհովանին ազանց քրիստոնէից արծուին երկագլուխ ահաւոր գըլ…, քրիստոսատիպ խաչապսակ ամենողորմած թագաւորիդ մերում ի վերայ սասանեալ ծառայից Աստուածագուբ սուրբ կայսրութեանդ երկնանման հովանացեալ և նեղիչք մեր և թշնամիք տկարացեալ և հեղացեալ։

Արդ տէր ամէնողորմած՝ տկարանան լեզուք մեր բանիւ բարբառով յայտնել արժանապէս ղեղանակ առաջին անօրինակ թըչուառ. ծառայութեան և գայս նորոգ անհամեմատ բաղդաւորութիւնս մերում, վասնորոյ ուրեմն կամելով իրօք գալոյս պատկառացուցանել առաջի ամենահալածաց քաղցր աչաց բարերար տեառնդ մերում, համարձակեցաք առաքել ի դուռն ողորմութեան ըմի քահանայ և ըմի ժողովրդական, զի ի դիմաց մեր ամենեցուն համբուրեսցեն դհետս ոտից Քրիստոսատիպ փրկչիդ մերում մերում, և ընդ նոսա մատուցաք անբաբառ քարող անարդ գերութեան մեր զնշան արգասեաց երկրի մերոյ (այսքան փութ) . . . . որով լաւ ես կարէ ողորմելութիւն մեր անպատրուակ յայտնի լինել մինչ ընակչաց իւրոց երկիր մեր ընծայել առատութեամբ զալնպիսիս, և մեք ամենեքին չարչարեալք նեղեալք և կարօտեալք աւուրն պարենի։ Եւ ահա այսու եղեալ ի կշիռ չափ ջերմեռանդութեան ըղձից ղողորմութիւն գահալ ծառայից ամենողորմած թագաւորիդ մերում սպա ամենեքեան առ. հասարակ ծերք և տղայք գնոնամած երկրպագութեամբ համբուրեմք շրթամբ հոգւով գոտս ամէնողորմած աթոռոյ սուրբ կայսերութեան ձերոյ՝ և անբաւական իսկախօս բարբառով մատուցանեմք զշնորհակալութիւնս յաղագս անպատում չնորհաց Աստուածածնման սուրբ թագաւորիդ մերում առատացելոյ ի վերայ մեր և հալրենեաց մերոց, զոր և լուսափայլ փայլմամբ գերազանցապէս հանդիսացոյց յանդիման տեառութեան ամենայն աշխարհի, արդարակշիռ ամենախոհեմ արի զօրապետն տիեզերատարած մեծութեան ձերում Ենարալ լէյտինանդ պլծոռափայլ քնիազ Պաւլ Դմիտրիչ պարոն Ցիցիանօվն, զի զօրէն քաջարութեամբ հովուի որ կալեալ ի ձեռն զազն ախորժելի գիտէ դիւրաբար զսիրտս հօտին ամենայն ընթանալ վաղելով դհետ իւր կալեալ նոյնպէս ի ձեռին իւրում նկարագիր ամենաքաղցր ողորմութեան հասելոյ ի վերայ մեր զպատուականն հալրն մեր և զառաջնորդ հոգեւի զտէր Յոհաննէս սրբազան արքեպիսկոպոսն, ժողովեալ զմեզ զամենեսին տպատհովացոյց ի ներքոյ խնամոց իւրոց, և մեծ հոգացողութեամբ ապրեցոյց ի վերամբարձ սատակիչ թշնամեաց սպրասուր սրոյ քարձր փառաւորապոյն յաղթող զօրութեան տիեզերահրամանն կայսերութեան ձերոյ զազգս և զընտանիս մեր զամենեսին առ հասարակ նոր ստացեալ վասն մեր ի փառս առատ ողորմութեան ձեր. այսուհետև թէպէտ և մեռանիցեմք մըշտնջենաւոր անմահ կենաց ուշօղս զմեզ համարիմք, քանզի լցաւ անմահութեամբ լուս մեր ամենեցուն որք գոլով հասեալք ի վերջին ծայր թշուառութեան, արժանացաք տեսանել աչօք մերովք զայս մեծ վրկութիւն և ազատութիւն մեր և սուրբ օրինաց մերոց, խոստովանիմք տէր թագաւոր զի եզեր մեր երկրորդ փրկիչ յետ Քրիստոսի և փրկեցեր զմեզ ի թշնամեաց մերոց. հաստատուն պահեսցէ Քրիստոս Աստուած զաթոռ թագաւորութեան ձեր յաւիտեանս յաւիտենից, բայց և աղաչեմք զի մշտնջենաւորեսցէ ողորմութիւն ձեր ի վերայ մեր, որք յետ Աստուծոյ ի քեզ եմք յուսացեալ յայսմհետէ և առ այս որպէս յառաջագոյն բազմաչարչար Դանիէլ սրբազան կաթուղիկոսն մեր ամենայն ազգն հայոց վէգքիլ են արարեալ գհարազատ պօզդան մեծի տէրութեան ձեր Մինչ Լազրիչ Լազրեան վեհաղնեալ իշխան հայոց, նոյնպէս և մեք ի կողմանէ մերում հասարակութեան վէգքիլ արարաք զնա զի լայդր ի դուռն ողորմութեան եղիցի նա մեր ամենեցուն քերան և ընդու մշտնջենապէս պազատել վասն մեր զսոյնս։ Ուստի զգեստին համբուրելով միջնորդութեամբ երկրպագելի անուանն Քրիստոսի մաղթեմք խոնարհ ծառայութեամբ զի եղիցի անսպառելի չնորհք ողորմութեան ձեր ի վերայ նորա և ի վերայ մեր, և եղիցին ողորմութեամբ ամենամեծին Աստուծոյ աւուրբ անգին կենաց ամէնողորմած թագաւորիդ մերում իբրև զաւուրս երկնից ամէն։

ՃԾԶ. *Թուղթ Ղազարու Ցովհաննիսեան առ Դաւիթ։*

Սրբազան իմ հալր տէր Դաւիթ կաթիզոսին

Արզ լինի որ է քանի որ հեծելայ չաժիթեն ելերէ հրամանոցդ պատուական արդօվ քթիշնի չէմ կամ հրամանոցդ սիրոյ դիրէն չունիմ պատասխանին արզ անեմ ար-

զիս մեզի զիր էն ժամանակէ տեղէսէ Ա զիր ւիաքեթօզին ողորկածէր հրամանոցդ հասցնէմ զոսիղօզին ժամանակն վաղ էր զասիգօվ չի ողորկեցի մնաց ալժմս ողորկեցի պատասխանին շուտ չնորէս Օվանէս վարդապետն գուզալ մոտերս ողորկէմ Թղն ուր բանօզին ե էլ չայհէն եկվ Դանելէն հալր սրբին խանեն ովէց պայհիր խանէչն ինձ ովէց պայհիր վիղ չի առնիմ առի իմ մոտն է Մելիք Աբովի որդին զինչիլիէր ինքն շատ հիվանդ գնացի տեսի շատ սկար խանիցն խնդրէցի առի բերի տուէս հիմի լավ է միտն Դանելին կու մեռնի այս քչերն հոգալ վարք էր հոգին չի ավանդէց մինցնալ զարինք արէց ինձ ուզեց ջուր տվինք խմէց մնաց աստուծոյ ժեռնի օվ Թաղի էս մայհէն իմ տանէն լինէր ոնց անեմ փառք աստուծոյ էլ լուս աստուած չի մնաց արդ կանէմ գ օրէ մայհվան զուանն է հասքիմ բան բերի չէլաւ մնաց աստուծոյ քաղքի Թավաթնեքն գինչիլիմնէ սանր գանչիլն է մէն գինչիլն վիզներին աստուած հետի անի.

Իմ որդի Մնացականին մալուսին Թամաղալ գնիէր մին Թուր տվէց Թէվին գանակով ժա օր աբրավ մեռավ գու ողջ լինիս պարոն Բարաջան գ ամիս կալ մեռնելն Օվանէսէն տեղէս բաղի բան էն էս տարվալ խսէչն ինձ տալ ինչ ձեն է բանելն.

Փոքր ծառալ տիատիմ մալհդիսի
Օվանէս որդի ղազար.

1804 հոկտեմ. Ա
Թարվիզ

1805

ՃԾԼ. *Թուղթ Յովհաննէս արքեպիսկոպոսին Թիֆլիզոյ առ իշխ. Մինաս Ղիլազարեան:*

Վհատեալ իշխան Հայոց և սիւն հաստատութեան եկեղեցւոյ Հայաստանեաց Աղայ Մինաս:

Պսակ պարծանաց մեր ի Քրիստոս:

Նախ զդրեցեալսն ի 10, և ի 16, Նոյեմբերի, ապա զայն որ ի 26 սեպտեմբերի ընկալեալ հետզհետէ լամսանն դեկտեմբերի, ուրախ եղաք ընդ առողջութիւն մեծարգի պատուական Անձինդ, որոյ Տէր Աստուած լաւելցէ զաւուրս անդին կենաց. ամէն:

Մեք ես արժանաւոր համարիմք զմեզ մեղադրանաց, այն ի ոչ զրեմք զորպիտութիւն մեր լաճախակի, այլ մեծ տարաբախտութիւն մեր այս է զի և ի 30 սեպտեմբերի ի 2, և ի 14 հոկտեմբերի, ի 17, և ի 27 Նոյեմբերի դրեցեալքն ևս չեն ժամանեալք ըստ ժամանակին առ. Տեառդ մեր:

Ներկայական որպիտութիւնք կողմանցս արժանաւորք ծանուցանելոյ ալաքիկ են՝ որ պայծառ կուսականն նուաճեալ և կարգաւորեալ զամենայն գլեռնաբնակ ապստամբեալ Օսան և Թիուլեն, վերադարձեալ եկն ողջամբ աստ ի քաղաքս ի 6 յունվարի ամսոյս: Խակոյն ընդ զայն ի ժամանակս երեկոեան՝ հանդիպեալ տեսութեան, լետ բազում զգուանաց, հրամայեաց ի վազիւն առաւօտու առանձինն հանդիպել տեսութեան իւրոյ և ի գնալ մեր ըստ պայմանելոյն խօսեցաւ վասն Մելիք Աբրահամ չարի՝ Ոահան որդւոյն զոր կալեալ պահէ ի բերդ անդր մինչև ցայսօր ժամանակի և քանզի Ջաֆար Ղուլի խանն Թախանձէր զլուսափայլութիւն նորին արձակել գնա, իսկ զանց արարեալ զայնու առ մեզ լանձն առնէր զարժանաւորն վասն նորա, մեք ևս լաւ համարեալ առաջի արարաք զի թէ հաճեսցի, թողեալ գնա երաչխաւորութեամբ արժանաւոր անձանց նորից հարազատից, որպէս զի կացցէ այլ ևս ի քաղաքի աստ և մի եղիցէ աստի: Խօսեցաւ և վասն տեղւոյս մեքազանց ոչ որպէս զսովորականն իւր, որում լայնժամ և մեք վստահացեալ առաջի արարաք զհաստատուն հարազատութիւն համօրէն ազգի մերոյ առ մեծազօր կայսերութիւն, և զինդիր մատուցաք զի մի ևս լիցի ինքն ատեցող նոցին այլ զթասցի մարդասիրաբար ըստ որում ժողովուրդք Քրիստոսի, և ինքն երևեցուցանէր զուզղութիւն մտաց և ասէր զատեցութիւն իւր ունիլ միայն ի մանաւորի իբրու առ քաղաքացիս միայն ոչ ըստ որում հնազանդին կամաց և հրամանաց իւրոց լաղագս չինելոյ զկազարմայ: Զիարդ և իցէ այսքանիսն ևս բաւական համարիմք առ նշանակելոյ թէ իցէ լայսմհետէ ողորմած՝ եթէ ոչ լատուկ գըթութեամբ գոնէ և ոչ ևս լատուկ ատեցութեամբ որպէս լառաջն, զորոյ զատուցն լայտնի առնէ հետևեալ կառավարութիւն նորին լայսմհետէ եթէ լինելոց իցէ բարի ակնարկութեամբ:

Ի միաբանից սրբոյ Աթոռոյն աստ ընդ մեզ ի ներկայս գտանին վարդապետք, սարկաւագք, դպիրք, որոց ի միասին միաբան ի մի սեղանւոյ զմիաւնոյնս վայելեմք ի պարգեւացն Աստուծոյ. իսկ այլքն են որք վանահայր գոլով այլ մերձակայ վանօրէից՝ ի վերայ վանօրէից իւրեանց պատկանեցեալ իրացն չրջին. և են որք զսենեակ կալեալ լեալ եկեղեցիս քաղաքիս առանձինն բնականալ ախորժեցին և մեք գտից արարեալ լակամայ կամս լօժարիմք մլայն առ կառավարութիւն անտարանայն ըստ որում ժամանակն ձմեռնային և սենեակք վանացս անձուկք լայնա-

սիրա եղբարց զօրութեամբ միայն ընդարձակելոյ։

Ի ղարգուց սուրբ Աթոռոյն որքան ինչ գայաք ի պահարան սրբոյ տաճարին, վերատեսչութեամբ պայծառ կուսակալին և Տուչկով ենարալին կնքեալ արկեղօք բերաք աստ ի կացարանս նորին պայծառափայլութեան կնեաղ Ցիցիանովին և բացեալ յետ աւուրց յաղագս կասկածանաց գիճութեան ճանապարհին, ղարձեալ ամփոփեցաք ի նորանոր արկեղս յատուկ յատուկ դրեալ զամենայն ի տուփարի՝ ռուսերէն գրով ի նորին պայծառափայլութեան նօտարաց և կնքեալ գիւրաքանչիւր արկղն կնքով նորին պայծառափայլութեան և արմալով մեր, յանձնեցան կայսերական դանձապետին որում անուն Ֆիլիպ Ֆասիլիչ ասեն այր աղօթամատոյց առաքինի։ Արդարև մեղադրիմք լաղագս չունելոյ մեր զտուփար նոցին հայկական որպէս արժանն էր, այլ քանզի ի մահճի գնիւր որ դրելոցն էր, առ այն ուրեմն ներել խնդրի կարեկցաբար ողորմածութեամբ։ Իսկ օրինակ ռուսերէն տուփարին զոր ըստ հրամանի նորին լուսափայլութեան տուեալ են մեզ զայն ի թարգմանել օրինակեալ միւսանգամ խոստացաք սրբազանին առաքել առ ինքն լորմէ և առ մեծութիւն ձեր ունի հասանիլ ի հարկէ։

Սրբազան Տէր մեր անդ ի Թէւրիզ ի տան մահտեսի Ցոհաննէս աղալ երևելի առն տեղւոյն՝ կալ բարւոք ապահովութեամբ, որոյ օրինակ ձեռագրին առ մեզ մատուցեալ եմք լարգութեանդ ի 17 Նոյեմբերի։ Ցովսէփ անուն գրաբերն Թէւրիզեցի ըստ խնդրոյ պայծառափայլ կուսակալին գնաց առ ինքն ի լերինս Օսիցն և վերադարձեալ անտի բազում չնորհակալութեամբ ի նորին պայծառափայլութենէ դարձաւ յետս ի Թէւրիզ որ մինչև ցայժմ վազ ուրեմն լուսամբ զի հասեալ լինի։

Թէպէտ առ պայծառ կուսակալն ոչ գոյր զգիր ի Թէւրիզեցի հայոց և տաճկաց, բայց լատուկ նշանակ մեծ գթոյ իւրոյ և սիրոյ դրեալ էր առ Ահմէդ խանն տեղւոյն և առ լիչեալ մահտեսի Ցոհաննէս աղային զերկուս դիրս, լորս եթէ զինչ իցէր ստուգն մեզ այն անլալտ, բայց ասացուած հասարակաց այս էր՝ թէ դրեալ իցէ առ խանն, որպէս զի թէ կարող իցէ, որով կերպիւ և կարողացի չանասցէ աղատել զմեծատան անձինս ի թաւաղացն և զսրբազան տէր մեր. և եթէ դրամով կարող լիցի աղատել, խոստացեալ է զդրամ ևս տալ։ Բայց զիարդ և իցէ, ի հարկէ առ մահտեսի Ցոհաննէս աղային դրեալն մեծ ևս ապահովութեան պատճառս տալ կտրէր սրբազան տեառն մերոյ։ Այս մահտեսի Ցոհաննէս աղալ ասացեալն ի քնէ անտի ոչ պարզ Դանիէլեան իրաւացն էր Ջատագով և ոչ ևս Դաւթի ամպարշտութեան ստեցող, այլ դաղճ ըստ գրեցելումն յայտնութեան Ցոհ.՝՝ 3. 16։ Հալէր և առ երկուս կողմանս ևս զօրօրինակ յայտնի առնէր գրութիւնք նորին առ երկոսինն ևս, զորս ունիմք առ մեզ. այլ այժմ զոյս ունիմք և լսեմք ևս թէ բոլորովիմբ իցէ միաեալ ուղղութեամբ ի ճշմարտութեան կողմս, մինչ ետես զայն, որ քաղցր հալեցուածն միայն և հեզութիւնք քանիցն զվայրիսն կրթին լընտանութիւն. եթէ չիցեն խցեալ ղաչս և զականջս իւրեանց հանգոյն իժի և քարբի։

Մեք ես ամենայն միաբանութեամբ ևս և առանձինն, գրեցաք առ խանն և առ մահտեսի Ցոհաննէս աղային զառ ի մէնջ պատգամեցեալ խնդիրս վասն նորին սրբազնութեան և ակն ունիմք թէ ի սմին միջոցի ընկալցուք զպատասխանիս։ Տէր տացէ զի լուիցուք զողջախաղիս զգիւրացուցիչս վըշտահար մեր սրտից։

Դաւիչ դաժան լցեալ կատաղութեամբ առաւել քան զգազան չար, պատառոտէ զողորմելի մնացորդսն զոր գտանէ ի միաբանից կամ ի ժողովրդոց. իսկ զի մի քան զմի ցաւալի են նորանոր գործք եղեռնութեան նորին զորոց զոմանս դրեալ եմք առ սրբազան հայրն մեր, ոչ ևս յօժարիմք երկրորդել զի մի պատճառս ցաւոց լաւելցուք սրտի քաղցրագութ հայրապետիս բարերարիդ մերում։

Կարապետ սևասուրն կալ աստ ի տան Աղուքեանց և երբեմն երբեմն գալ և դնալ առ մեզ, թէպէտ գիտեմք զգալն նորա տակաւին անուղիղ՝ այն զի մակարդեալ է ոգի նորա չարութեամբ ոգւոյն չարութեան, որ ծնաւ զինքն անգոյ եպիսկոպոս, բայց քանզի չունիմք զժամանակ, մեք ևս լութեամբ անցուցանեմք վասն բազում կալից զորոց լիւրաքանչիւր ժամանակս հաւաստապատում

բանիւք գիտեմք ժամանեալ առ. նա. մանաւանդ ևս զի ոչ կարացաք վասն նոցին գտանել զգրուածս որ հարկաւոր է ի դատաստանի ըստ կանոնի առաստաց. Միայն ունիմք զերկուս ձեռագիրս նորին, որոց միոյն գրէ առ. Դուիչն՝ թէ 500 ոսկի առեալ ի Մինաս ամբարղարէն, ետուք որոց հարկն էր. այլ պարտիս առաքել վաղվաղ և զմիւս դումար՝ քանզի այս ոչ բաւականանալ. իսկ միւսոյն գրէ. թէ Սոլոմոնն ետ Հնարալին 100 ոսկի և նա խոստացաւ. ճանապարհորդել զմեզ չուտով (այսինքն՝ լրկիրդ Ռուսաստանի) ի սակս այս գլուխքանց ևս տակաւին չեղև յուորդակցիլ թէ զինչ վտիտ իցէ առնել. Այժմ մինչ եկն կուսակալն, տեսաք թէ զինչ տնօրէնութիւն մտաց չնորհէ Աստուած. Շնորհաւորեմք ձեզ զնորոգ զայս ամ, զոր Տէր Աստուած մեր տացէ վայելել ուրախութեամբ և ճոխացուսցէ առաւել ևս պերճութեամբ ի միշտ պարծանս.

Խոնարհ աղօթարար ՅՈՎՀԱՆՆԷՍ արքեպիսկոպոս առաջնորդ Թիֆլիզու և Ելիսաւէտապոլու Հայոց.

1805 յունվարի 16.
ի Թիֆլիզ.

ԻԹ. *Թուղթ Ներսէս աբեղայի առ իշխ. Յովակիմ Նիազարեանց.*

Պայազատ իշխան Հայոց մեծահռչակ աստուածասէր գերապարգ Աղայ Յովակիմ բարերարի մերում և Ջատագովի եկեղեցուն Աստուծոյ չնորհաւորելով զնորոգ զայս ամ, և զծնունդ և զյայտնութիւն Քրիստոսի Փրկչին մերոյ յաւուկ Ջերմեռանգութեամբ մաղթանեմք զողջոյն և օրհնութիւն Աստուածային.

Ընդ մեծապատուութիւն նորին չնորհաւորեմք նաև աստուածապահ Տան նորին բարեպաշտուհի քեռն մերում, նաև սիրագումար բարեչառասիւզ տոհմիկ որդւոյն և ամենայն ընտանեացն զորս և յանձն առնեմք չնորհացն Աստուծոյ և պահպանութեան նորա.

Մինչդեռ առ. մեզ էր գրութիւնս՝ ժամանեաց և՝ ի սեպտեմբեր 9. գրեցեալդ ընդ Սրբազանին ի միասին առ մեզ և առ Սբրբազան վ.ենն. Իրաւի էր քնաւ մեղադրութեան՝ թէ յայնմ ժամու պարտ էր առ Ձեզ զգիր որպիսութեան մեր հասուցանել և ոչ ի ծախսն խնայել, այլ սակայն այնպիսի ժամանակի վիճակեալ կայաք, զի ոչ եթէ մեք, այլ և ինքեանք իսկ երկոքին կուսակալ կառավարիչքն Յիցիանովն և Վոլկոնցկին և կարօտ եղեալ գիտելոյ զորպիսութենէ իրաց անձեռնհաս եղեն հաստատել միմեանց զգիր որպիսածանոյց քանզի լերինք և գաշտք միջոցին երևանու և թիֆլիզու ևս և Մոզդոկու իսկ լսեալ կային անօրէն Քշնաւեաք որպէս նկատեալ իւրեք. Ապաքէն անմեղադրելի լինել խնդրեմք.

Սրբազան պատրիարգն և բարձրապատիւ Բարսեղ արք եպիսկոպոսն նաև համայն միաբան եղբարք մեծ յարգութեամբ չնորհաւորելով ձեզ զնոր տարին՝ մաստուցանեն զվիաբան լիաբերան զօրհնութիւնս ողջոյն և քրիստոսական. ընդ որոց և նուաստ աբեղայ

ՆԵՐՍԷՍ

ՃԾԹ. *Թուղթ Յովհաննէս արքեպիս. կոպոսին Թիֆլիզոյ առ իշխ. Մինաս Նիազարեան.*

Գերահռչակեալ վեհադնեալ իշխան հայոց՝ Աղայ Մինաս,

Ողորմած և բարերար Տէր մեր.

Ջթուղթն՝ զոր ղրեալ էիք ի Մոսկով յունվարի 13, հանդերձ Եփրեմ սրբազանիւն, առ. ընկալեալ աստ ի Ելիսաւէտապոլ մարտի 18, ծանեաք զամենայն միտս գրուածոցն, ընդ ողջութեամբ լինելն ձեր ուրախացեալ ոչ սակաւ, գոհութիւնս մատուցաք արարչին, խնդրելով առ ի նմանէ զերկարութիւն վասն անդին կենաց ձերոց հանդերձ երջանիկ բարեբախտութեամբ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ ի պարծանս բոլոր Հայկազնեից.

Զորպիսութիւն սրբազան Հայրապետին մերոյ ալսպէս դիտասջիք, զի ի ներկայս ևս թուղթս ստացաք ի Թարվիզեցի մահտեսի Յովհաննիսէն, և ի մեր ծանօթ Ահմատ խանէն որ է Բէգլար բէգի Թարվիզու և Մարազու, և մեծ սարդար չահին, որովք ծանեաք զայլ

ևս բարգումն չարութեան ի վերայ բազմապատիկ չարութեանն Դաւթի ապօրինաւորի որ քանիցս թուղթ գրեալ առ չանն, խնդրէ ի նմանէ, թէ գԴանիէլն մի թողուր ի թարվէզ ղև անտի ի ձեռն Հայոց առաւել դիւրութեամբ գրէ միշտ առ Ռուսոն զթուղթս և ընկալնու ի նոցանէ զպատասխանսին իւր զի վերստին բերեալ զնոսա, աւերել ասցէ զիրկիրգ և ապպիսի թունալից բանիւք զայրացուցեալ ղչանն, գրել տալ առ լիչեալ խանն, զի հանեալ ի թարվէզոյ, սարցին ի Մարաղ այ, և անդ արկեալ ի բանտ պահեսցեն անտես ի մարդկանէ։ Եւ այժմ այսպէս է կեցութիւն նորին սրբազնութեան հրամանաւ չանին ըստ չարահնար խնդրոյ Դաւթի անօրինի։ Բայց օրհնեալ մահոմեի Յոհաննէսն գրէ ևս, թէ ի տանելն ես ևս գնացի ըստ նմա ի Մարաղայ, և ի քանի աւուրս մնացեալ մխիթարեցի, և ի դառնալս խնդրեցի ի խանէն ապահով պահել, և թոյլ տալ քահանայիցն մերոյն՝ երթեալ երբեմն գնալ և մխիթարել։ Որ և լուաւ ասէ և կատարեաց զխնդիրս։ Դրէ ևս՝ թէ լոժ բարուք լինի, եթէ առաքեսջիք սմա ընծայ ղմին լաւ ժամացոյց, որոյ գինն իցէ Լ թուման, և զմին լաւ դիտակ, որոյ գինն իցէ Ժ թուման, որովք առաւելապէս բարեկամացեալ ընդ ձեզ, խնամս տարցէ սրբազանին։ Ցայս կողմանս ոչ կարացաք զտանել զայն պիսին զի առեալ յղէաք, այլ գրեցաք Եփրեմ սրբազան հօրն մերոյ, որ ուստի և իցէ զտեալ առաքեսցէ առ մեզ ընծայել նոյն խանին։ Եւ ինքն խանն թղթով իւրով յուսադրէ զմեզ, թէ երկիցս գրեալ եմ չահին և խնդրեալ ի նմանէ, զի հրամայեսցէ ինձ՝ ազատ առնել զսրբազան Տէրն ձեր։ Եւ յորժամ հրամայեսցէ ասէ, դէպ ուղիղ առաքելոց եմ առ ձեզ, ըստ որոյ չունիմ ինչ կաթծիս, թէ նեղութիւն ինչ ունիցի այժմ սրբազան Տէրն մեր, այլ մանաւանդ լուսով եմ, որ ըստ փափագանացն մեր կատարեսցէ խանն զխոստումն իւր։ Որոյ առ մեզ գրեալ թուղթն հանդերձ թղթով մահոմեի Յոհաննիսին առաքեցաք ահա առ Եփրեմ սրբազանն, յորմէ ևս ունիս իմանալ զայսոսիկ ամենայն։

Զորպիսութիւն կողմանցս այսպէս ծանիջիք, զի Շամախու, Նուխու և Շուշւոյ խանքն խոստացան և խոստանան միշտ հնազանդել հզօր տէրութեան Ռուսաց և ծառայել ամենայն հարազատութեամբ։ Նորին կայսերականի մեծութեան, Խանն Շամախու ի ժամանակս ինչ թշնամութիւն առնէր, թէպէտ ասպատակելով աստ և անդ և ինչս հատուցանելով Նուխու խանին, բայց խաչակիր զօրքն կայսերական ընդ բարձր հրամանի յաղթող կուսակալին մինչ հասին աստէն ի յոզնութիւն Նուխու խանին ի յանցեալ ամաց մարտի, և քաջապէս պատերազմեալ հալածականս արարին զխանն Շամախու և զամենայն զօրս իւր մինչ իսպառ, ապա նա ևս խոնարհեալ աղաչեաց ողորմել ինքեան, խոստանալով զհաշտութիւն առ անճարութեան. իրաւի թէպէտ քանից նոցին չէ պարտ հաւատալ, որ զերևսաքն պատեալ ունի զքաղցրութիւն մեղաց. և ի ներքս լի է թունաւք դառնութեան լեղւոյ, բայց զոր լսեմք և տեսանեմք, այսպէս է, որպէս գրեցաքն։ Աստուածով ինքն պայծառափայլ կուսակալն ևս, յաղագս հաստատելոյ զհաշտութիւն լիչեալ խանիցն և իսկապէս տիրապետելոյ երկրի նոցին, գալոց է յայս կողս ի փոքր միջոցիս. մեք ևս որ ըստ հրամանի նորին ի բարիկենդանի եկեալ աստ, նմա սպասեմք մինչ ցարդ, ապա թէ այլ ևս յամեսցի, յայնժամ ունիմք վերադառնալ ի Թիֆլիզ, եթէ Տէր կամեսցի։ Ի վերջոյ խընդրեմ, ոչ թողուլ զմեզ երբէք կարօտ ախորժալուր համրաւոյ առողջութեան ձերոյ, զոր հանգոյն եղջերուաց փափագանաց յաղբեր ջուրց, փափագի հոգի մեր լսել յարաժամ ուրումն ակնադէտ սպասելով մնամք վասն ցանկալի կենաց մեծանձնութեան ձերոյ խոնարհ աղօթարարք՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ արք եպիսկոպոս առաջնորդ Թիֆլիզոյ և Ելիսաւետպօլու Հայոց 1805, Ապրիլի 2։ Ելիսաւետպօլ։

ՃԿ. *Թուղթ Ստեփաննոս եպիսկոպոսի ս. Էջմիածնի եւ Յովհաննէս վարդապետի Կարբեցւոյ առ Վեհապետ Պայծառ իշխան Աղայ Մինասն։*

Այսօր ի ժամ 7, եկին մեզ միաբանք սրբոյ Աթոռոյն աստ ի քաղաքս Թիֆլիզ, որոց առաջինքն են Ստեփաննոս եպիսկոպոս Կուչուբեան, որ յառաջ հարազատ Դաւթի և

ալժմ լսել ի անպարտակելի չարութենանց նորին, ես և բարձր արժանապատիւ Յոհաննէս վարդապետ Կարբեցի, այն որ երբեմն ղերծնել զմօրուան պահեաց Դա իթն ի անլոյս բանտի զամիսս 4։ Վեհագնեալ աղալ՝ հայրապետ պատմութիւն սոցա ալս է, որ իրրե զօրք ռուստաց գնացեալ են ի Թալին, հալքն Մաստարալ անուն գիւղի որ լատուկ մեր սրբոյ Աթոռոյն են գիւղն և ժողովուրդն, գոլով վախուցեալ ի Չէչէլու անուն գիւղն գզեկաւոր, զմարդ լղեալ առ ենարալ Նէվէտաւոլին Սարաթովու պօլկի, խնդրեն օգնել ինքեանց և լորժամ երթան զօրքն ի Չէչէլու, լսեն ժողովուրդքն Հալոց որք ժողովեալ ի սուրբ Աթոռն և զմարդ լղեալ հանդերձ գրով. Նոքա ևս խնդրեն օգնել ինքեանց՝ որով և լիշեալ ենարալն ի գութ չարժեալ ի գիշերին որ լուսանալ 5 չաբաթ ի 4 ամսոյս՝ ընդ լուսածագն առաւօտուն իսկոյն հասանեն ի սուրբ Աթոռն Էջմիածին, և մտեալ ի ներքս բնակին անգ զօրք ռուստաց զաւարս 3։

Ի մտանելն ի սուրբ Աթոռն ենարալ Նէվէտաւոլին առաքէ զդիւր առ Դաւիթն՝ եկ դու որ Պատրիարգ հալոց ես, ոչ վայելէ քեզ այդպէս հետևօղ լինել տանճ։ցդ, այլ որպէս վայել է քրիստոնէութեան ահաւասիկ մեք քրիստոնեալ և դու Պատրիարգ քրիստոնէից, պարտ է ուրեմն զի եկեսցես և մեծ ողորմութիւն վայելես ի Ամենողորմած Կայսերէ մերմէ։

Երբ ոչ ընդունի Դաւիթն զայս գ՛րբ և ոչ գայ, լսեն յայնժամ թէ խորհուրդ չարութենան ևս խորհեալ նա ընդ խանին զղօրս պարսից ժողովին զի թերևս վտանգեսցեն զղօրսն ռուստաց. ապա յայնժամ կոչէ զվարդապետան ենարալ Նէվէտաւոլին և ասէ ցնոսա որովհետև սուտ Պատրիարգն Դաւիթ ըզսիրտ իւր տուեալ է պարսից գիտեմ, զի զամենայն զինչս սրբոյ Աթոռոյն ևս յօժար է նա տալ պարսից, վասնորոյ լաւ ևս է որ մեք առեալ տարցուք ընդ մեզ. ուրեմն զամենայն որ ինչ դտանի երկու թէ։թէր արասցուք. մինն մեք ունիցիմք և մինն դուք և այնպէս ամենայն իրքն տրեալ ծանուցանեմք կալսեր, որ առնէ որպէս և հաճոյ իցէ բարերար կամաց իւրոց։

Յառաջագոյն այնպէս խոստանալ ենար.լն որ մի թէ։թէր միաբանքն ունիցին և մի ևս ինքեանք, բայց լետոյ ամենևին միաբան՝ ոչ հանդիպեցուցանէ այլ ինքն ենարալն իւր արամբն բացեալ զամենայն զղրունս ծածուկ սենեկաց սրբոյ Աթոռոյն ժողովեն զամենայն զոր ինչ դտանի։

Արդ՝ մեզնիւ Աղալ՝ թէ զինչ ինչ իցեն հանեալ, ումեք ի միաբանից ոչ է յայտնի, բայց միայն որ ամենայն ինչքն սրբոյ Աթոռոյն կարծեմք որ անդ է եղեալ. քանզի Դաւիթն փախչելոյ կամք ունենալով ամենայն պատուական իրքն զորս յատուկ վասն իւր պատրաստութիւն ունելով զբ։ռինս է կապեալ եղեալ, այն ամենայն մնացեալ է ի ձեռս ենարալ Նէվէտաւոլին՝ համարին թէ տասն աւելի կամ պակաս բեռն. բայց այսպէս իմա պատուական աղալ որ բոլոր ուղղ և ծուծն մեր սրբոյ Աթոռոյն բոլորովիմբ ալտաքիկ են զորս բերեալ են։

Նաղտ դրամ 15 հազար թուման ասեն ի սակաւուն. և թուղթ մի ևս գտեալ են ռուաքն որ յայտնեալ են վարդապետացն. ուր գրեցեալ է եղեալ թէ ի մէջ երեք ծրարի գոն ծրարեա։ք յամէն միումն 6500, հատ պօլոռ ոսկի։ Յետոյ ևս յայտնեալ են թէ մի ծրարն գտաք. զկնի յայտնեալ են թէ միոնն ևս գտաք. բայց առաջին սպասաւորն Դաւթի որ յանցեալ ամին կալեալ է զբեռ։ինս և փախչելոյ պ։տրաստութեանն Դաւթի, նա առ մեզ է և ասէ թէ յանցեալ ամին իմ ձեռաքն եղեալ եմ ի մէջ 4 թէմպէլիթի իբրև 50 հազար թումանի ոսկի։

Երկու արխալուղ ևս է յօրինել տուեալ բամպակով. իւրաքանչիւրոց մէջ երկու հազար ոսկի. որոց միոնն ալժմ տեսեալ են մեր վարդապետք ի ձեռս ենարալին իսկ միւսն ոչ։

Դաւթի յաւագն եղեալ չաքմաճային ջարդեալ են. ի մէջն թէ զինչ իցէ եղեալ, ոչ է յայտնի. բայց միայն որ քանի պատուակ։ն գոհար մատանիք վաճառեալ են ի մէջ զօրացն ի գալն ի ճանապարհին։

Իսկ որ մեծն է՝ լուր զվեճս գալս բայց վերստին որքան հնարաւորն իցէ՝ Յանասջիր՝զի մի առաւել հրատարակեալ տարածեսցի ոչ վեհազնեալ բարերար. զի կողմանէս սուրբ Դեղարդին Քրիստոսի այն որ ճշմարտապէս մնեալ է ի կենսատու կողն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, է ալժմ ի ձեռս ռուստաց ընդ այլ իրացն. ևս և ամենայն սրբութիւնքն՝

բացի սուրբ Լուսաւորչի Աջոյն, սուրբ Ցակոբոս Աջոյն, յԱմենափրկիչ ասացեալ պատկերէն և մի կենաց փայտի և երկու՝ երեք այլ մասանց և օրինակէ սուրբ Գեղարդին. Գանդի որովհետև սուրբ Գեղարդն վասն ցաւոց խնդրէին ի հեռաւոր տեղեաց, երկիւղ ունելով առաջին սուրբ Հայրապետաց մերոց թէ գուցէ վտանգ իմն հանգիպեսցի ազգին գանձին այնորիկ Հայոց ազգի, նման նմա յօրինեալ են զայլ միս Վեզարդ և օրհնեալ զայն, և այնպէս ուր և խնդրէին տանիլ զսուրբ Գեղարդն եթէ ի Թիֆլիզ և եթէ յայլուր, զայն օրինակն լղէին, իսկ այն որ իսկն էր համարեան թէ բազում միաբանից ևս անգիտելի մնայր մինչև ցայժմ, իսկ այժմ ահ մահու չափ տրտմութենամբ լցեցեալ ամենեքին, թէպէտ ոչ կամիմք յայտնել զի մի գայթակղութիւն լիցի ոմանց, այլ զի ոչ կարեմք ծածկել, այլ յաւիտենից իսկզբանէ ծածկեալ խորհուրդ սուրբ զեղարդեան ահա ձեզ միայն յայտնեցաք, զի գիտացեալ որ տէրդ ես ազգի և աթոռոյ Հայաստանեայց, հոգ տարցի որպէս և այժմն իցէ, քանզի իսկն սրբոյ գեղարդեան մերոյ այն որ մխեալ է ի կողն Քրիստոսի և թաթաւեալ սուրբ Արեամբ նորա, ընդ այլ մեծ գանձուց և բազում զանազան մասանց սրբոյ աթոռոյն մերոյ է այժմ ահա ի ձեռս ռուստաց։

Առաւօտուն ընդ Դիլիպօլի մօգոկցի Ստեփան հաւատարիմ մերոյ գրելոց եմք ազաչէս նաև առ Աստ Չնորդն զի յայտնեսցէ նորին պայծառափայլութեան կնիազ Ցիցիանովին, Տեսցուք թէ զինչպիսի հոգացողութիւնս իցէ առնելոց կնիազն. այն ևս յայտնեսցուք ի հարկէ լիւրումի ժամանակին։

12 գիւղի ևս հայոց ժողովուրդ են բերեալ որք կաբել լինել ի չափ 600 տանց, որոց զոմանս թողեալ են ի Շիրակաւանն, զոմանս ի Բամբակաձոր. և զոմանս բերին ի քաղաքս։

Ներկայացէք կատարեալ լուր վասն գնալոյ զօրաց ռուստաց ի սուրբ աթոռն և վերադառնալոյ նոցա, այս է ահա զոր տեղեկացեալ ի վերուիշեալ վարդապետէն յայտնեցաք քրիստոսազօր բարեբարիդ մերում։

Առաջին օրինակս այս լղեցաք ձեռամբ առի հասանել ի Մօղղոկ առ տէր Դալուստն երկրորդն ևս լղեմք այլովք։

Այսպէս է մեր տեսեալն և գիտացեալն և այսպէս պատմեցաք և գրել ետուք. զոր և ստորագրեմ ՍՑՆՓ. եպ. ՑՈՎՀ. եպ.

1805. մայիսի 23,
Թիֆլիզ։

ՃԿԱ. *Թուղթ Ստեփաննոս եպիսկոպոսի եւ Յովհաննէս վ. կարգեցոյ առ Տիրեմ արքեպիսկոպոս։*

Սրբասէր Տիրեմ արքեպիսկոպոս մեր յոգնադութ հայր և տէր.

Լուր գհաւատոյ պատմութիւն ի սուրբ Աթոռն գնալոյ և վերադառնալոյ բարձր փառաւորագոյն զօրաց ռուստաց, որոյ վասն ի 18, և ի 21 ամսոյս գրեալ եմք տարակուսանօք։

Այսօր եկին մեր վարդապետքն և մեր սրբոյ աթոռոյ գիւղացի էլլիկի Մնացորդքն, վարդապետքն են՝ գանեալն ի անօրինակ չարութենանց Դաւթի Ստեփաննոս եպիսկոպոս Թիֆլիզեցի. Կուչուբեան՝ առաջին հարազատն անօրինին։ Բարձր արժանապատիւ Յովհաննէս վարդապետ Կարբեցի, Ստեփաննոս աբեղայ Զորադիւղցի, տէր Կարապետի որդի Յակոբ աբեղայ Ռուշանի որդի Էջմիածնեցի. և Մկրտիչ աբեղայ, Կարճիկ Յովհաննէսի որդի՝ Էջմիածնեցի որ յառաջն եկեալ էր, և վասն առեալ լինելոյ վեղարին՝ գնաց գարձեալ առ Դաւիթն և ընկալեալ զվեղարն եկեալ է այժմ կրկին։

Պատմութիւն սոցա այս է՝ որ յորժամ զօրք ռուստաց գնացեալ են ի Թալին, Մաստարեցի՝ գոլով վարեալք յառաջագոյն ի Կէչիլու, զմարդ յղեալ առ ենարալն խնդրեն օգնել ինքեանց, և յորժամ կոչմամբ նոցա ժամանեն զօրքն ի Կէչիլու, յայնժամ ևս մեր սրբոյ աթոռոյ բնակիչքն գիր յղեալ առ ենարալն խնդրեն օգնել և ինքեանց, մինչչև վարեալ իցէ զինքեանս պարսիկ վերակացուն, որով և ի 4, ամսոյս ընդ լուսածագն առաւօտուն իսկոյն ժամանէ ի սուրբ աթոռն զօրք ռուստաց. յորում ժամու եկեալ և Դաւիթն փախչի յետս ըստ օրինակին գրեցելոյ ի 18. և ի 21 ամսոյս։

Յառաջագոյն փախչելոյ պատրաստու-

թիւն տեսանելով Դաւթին, ղուղն և զծուծն սրբոյ աթոռոյն ժողովեալ յօրինէ՝ 10, աւելի կամ պակաս քեռն։

Ջոյժամ քանակի զօրքն ի սուրբ աթոռն, ղրէ ենարալն առ Դաւիթն՝ թէ վասն ղի մեք քրիստոնեայ եմք, և դու պատրիարգ քրիստոնէից, չէ բարւոք քեզ այգպէս գհետ լինել բարբարոսաց. եկ առ մեզ և զտցես զմեծ բարութիւնս յամենազօրմած կալաւրէ ուստաց։

Առ այս պատասխանի առնէ Դաւիթն դրով, թէ զամ առ քեզ զկնի երկուց և երից աւուրց պատարագօք և արժանաւոր յարդանօք որոյ ներքին չարութիւն այն՝ զի զզօրս Երևանու պարսից ժողովեալ լինիցի թերևս զի վտանգեացեն զօրաց ուստաց։ Այլ ի լսել գայս ենարալին որ է նէսվէտաւով ասացեալ ենարալն Սարաթովի պօլկի, յայտնէ վարդապետացն թէ վասն զի նա պինդ ունի զկողմըն անհաւատից՝ զի մի զինչս վանացս ես տացէ նա նոցա, լաւ է մեզ և կամիմ ես զի զամենայն ինչ որչափ և գտանիցի երկու գէւթերաւ նշանակեացուք որոց զմինն մեք առ մեզ ունիցիմք, զմինն դուք առ ձեզ. և այնպէս առեալ գիրն՝ տանեմք ընդ մեզ և ծանուցանեմք կալսեր, որ արասցէ որպէս և հաճոյ իցէ լայն Իւրոյ Մեծութեանն։

Զայս այսպէս խոստանալ լառաջ, բայց յետոյ արհամարհեալ գայսու ամենեսին ոչ զօք հանդիպեցուցանէ ի միաբանից այլ ինքըն ըստ իւր ախորժակին բացեալ զամենայն զգրունս կաթուղիկոսարանին ժողովէ զոր ինչ միանգամ գտանէ։

Եթէ զինչ ինչ լինի, ամենևին չէ ումեք ի միաբանից հաւաստապէս յայտնի, բայց որ այօք իւրեանց տեսեալ են վարդապետք այս է։ Թուղթ մի՝ յորոյ վերայ դրեալ՝ թէ 3, ծրարք են՝ յորոց իւրաքանչիւրն ծ.արին 6500, Գալոյ ոսկիք։ Ցետոյ լսեն ի ուստաց թէ մինն ի ծրարիցն գտաք, զկնի՝ թէ մինն ես գտաք։ Բաց աստի՝ 2, արխալուղ ևս էր չինել տուեալ Դաւիթն՝ յոր իւրաքանչիւրն կարեալք են 2, 2, հազար մբար ոսկիք, զորս Աղամ վարդապետն է յօրինեալ։

Որիշ յայացանէ լսեն ևս վարդապետք թէ միայն 15. հազար թումանի նազդ դրամ գոյ, այլ թէ այս որիշ իցէ, և այն 3, ծրարքըն որիշ, և կամ թէ միևնոյնն, չէ հաւաստի վարդապետացն։ Այլ սակայն Աղամ վարդապետն որ առ մեզ է, պատմէ թէ անցեալ ամին որ ես յօրինէի զվախչելոյ պատրաստութեան քեռինն, իբրև ի չափ 50, հազար թումանի միայն նազդ դրամ եղեալ էաք ի մէջ 4 թէմալէլիթի։

Դաւթի լառաջն գնելի չաքմաճայն ևս խորամանկեալ են, ի մէջն թէ զինչ գուցէ ոչ է յայտնի ումեք, բայց միայն որ ի ճանապարհին զոհար ակն քանի մատանիք վաճառնալ են ի մէջ զօրացն։

Այլ զու լուր զևսն առաւելն հայր սրբազան՝ զի զսուրբ Դեզարդն իսկական, նաև ամենայն մասունքն, բաց ի սուրբ Լուսաւորչի աջոյն, սուրբ Յակոբայ աջոյն, Յայծենափրկչէն և խաչափայտէն ականակուռ որ յաղագս հիւանդութեան խանի որզւոյն տարեալ էին ի Երևան, այլքն ամենեքին ընդ այլ մեծ գանձուցն են այժմ ի ձեռս նոյն Սարաթովի պօլկի ենարալ Նէսվէտաւովին։

Ի վազիւն Յոհաննէս առաջնորդին ևս դրեցոց եմք ըստ այմ, զի յայտնեացէ նորին պայծառափայլութեան կնիռք Յիսիանովին, և ունիմք իմանալ ի նորին տեղակալէն, որ եթէ ի սոյն աւուրս չիցէ գալոց նորին պայծառափայլութիւն, զվարդապետս ևս յղեմք յանդիման լինել նորին պայծառափայլութեան և յայտնել բերան առ բերան։

12, զի զի հալոց ժողովուրդ ես են բերեալ, յորոց միայն Աչտարակցիք մնացեալ են ի Երեվեկ, իսկ այլքն եկեալ են ի Բամբակաձոր, և մեր Էջմիածնի մնացորդքն ես եկին այսր ի քաղաքս։

1805, մայիսի 23։
ի Թիֆլիզ։

Խոնարհ ՍՏԵՓԱՆՈՍ եպիսկոպոս սրբոյ Էջմիածնի ծառայ ՌՈՎՀԱՆՆԷՍ վարդապետ Կարբեցի։

ՃԿԲ. *Թուղթ Յովհաննէս Սալիսկոպոսի առ իշխ. Մինաս Նոիազարեան:*

Բարեհաչակեալ Աստուածասէր վեհապետաս իշխան հայոց՝ զերարդոյ տղայ Մինասի իմ բարերար և ողորմած աէր։

Ջղալուսան մեր յԵլիսաւետապոլ ի մեծին բարեկենդանին, դրեալ եմք լաւագոյն հանդերձ ինչ ինչ որպիսութեամբք։ Այժմ հարկաւորագոյն քան զամենայն և մանաւանդ թէ առիթ իսկ մեծագոյն ուրախութեան զայս համարեալ՝ ծանուցանեմք ձերդ մեծանձնութեան. քանզի պայծառափայլ լուրթող կուսակալ կենաց Յիսուսոյն մինչ ևկն եմուտ յԵլիսաւետապոլ յանցեալ ամսոյ 21, ի կողմունս լաստսիկ՝ լոյս լցեալ էր խառնակութեամբ, թշնամութեամբ և արեանհեղութեամբ, սիրեալ տարածեցաւ խաղաղութիւն հաշտութիւն և հնազանդութիւն. և ամենայն թշնամիք՝ որք զբաղում չարիս և զվնաս հասուցեալ էին և հասուցանէին միշտ, առերկիւղին ստէպ ստէպ հրեշտակութիւնս առաքեալ առ նորին պայծառափայլութիւն, խոստացան գլուխարկել հնազանդութիւն և ծառայութիւն տիեզերատասան հզօր տէրութեան ռուսաց։

Ըստ որոյ ահա Իբրահիմ խանն Շուշայ հանդերձ որդւովքն իւր և մեծամեծօքն, ընդ որում նաև Սելիմ խան Նուխու ամենայն խոնարհութեամբ եկեալ առ ոտս նորին պայծառափայլութեան ընծայեցին զբերքն և զերկիրն իւրեանց հանդերձ պատանդիւք, առ որ ըստ օրինի իւրեանց երդուեալ, ետուն գյաւիտենական ձեռադիրս. և այս ամենայն իրողութիւնքս եղեալ եղեն առ ափն Քիւրակ անուանեալ գետոյն (որ է մերձ յԵլիսաւէտապոլ ըստ երից ժամուց ճանապարհի) յամսոյս 10 էն սկսեալ մինչ ի 21։ վասն որոյ այսօր կամ վաղն ունին գնալ զօրքն կայսերական ի Շուշի և ի Նուխի ըստ հրամանի նորին պայծառափայլութեան։

Մի լիցի և այս ծածկեալ ի ձերդ վեհանձնութենէն, զի Իսրայէլ կաթողիկոսն ևս եկեալ էր ընդ Իբրահիմ խանին, որպէս զի խօսեսցի վասն Ելիսաւէտապոլու թէ իմ է վիճակք այդ, և այլն։ Ըստ որոյ և քանիցս արդ էր մատուցեալ թէպէտ կենաւքին, բայց օրհնեալն այն ոչ թէ միայն չէր կատարեալ զինդիրն, այլ և չէր երբէք ունկն մատուցեալ անլարմար բանից նորին։ Որ և ահա արկեալ էր առ այս միջնորդ զվանն Իբրահիմ, որում ևս այսպէս էր պատասխանեալ կնիազն, թէ զիարդ կարելի է անհնարին բանդ այդ, ես չեմ կարող բնաւ կատարել զինդիրդ զայդ անպատկան, քանզի ընդ զօրացն կայսերական ով ոք որ զանձն իւր ոչ խնայեաց և մահու չափ ծառայեաց նորին կայսերականի մեծութեան, նմա միայն է վիճակ այս. իրաւամբ և արդարութեամբ, և զկնի այսպէս պատասխանելոյ խանին, մարդ էր առաքեալ և կոչեալ զիս առ ինքն, զի մնք չէաք եկեալ ընդ ինքեան ի բանակս։ Ըստ հրամանի որոյ մինչ եկեալ ներկայացաք առաջի պայծառափայլութեան նորին, էհարց ցմեզ՝ թէ զինչ պատրիարգ է այդ որ եկեալ է և խօսի այսպէս, անպատշաճ, որում պատասխանեալ և մեր ըստ տուչութեան հոգւոյն սրբոյ ծանուցաք լիովին զդիարդ լինելն նորին և զայլն ամենայն։ Ապա կրկնեալ ըզխօսս իւր, միամտեցոյց զմեզ յամենայնի ասելով, եթէ եկեալ էիր և եթէ ոչ, մինչ զի թէև զու ինքդ իսկ կամեցեալ էիր, մնք չէաք կատարելոց զխնդիրս նորին, այլ վասն այնորիկ կոչեցաք զքեզ առ մեզ զի տեղեկացցուք մեզ զայն որպիսութեան նորին։

Բայց սակայն այժմ ի խաթեր Իբրահիմ խանին այսպիսի թուղթ չնորհեաց նմա, իբր զի ժողովուրդքն Շուշուայ, Նուխու, Շամախու, և Դարբանդու նմա հնազանդ լիցին և ի ներքոյ հովութեան նորին մնասցեն հասուցանելով զհասանելի արդիւնս իբր առաջնորդի ինքեանց և ոչ կաթուղիկոսի, զի կաթուղիկոսն մի պարտի լինել ասէ և ոչ բաղում որ այն ինքն է միայն Դանիէլ սրբազան Պատրիարգն. և զնոյն թուղթ այսպէս ձեռադրեաց թէ ոչ ետու քեզ զայս մշտնջենաւոր, այլ մինչ ի բազմել Դանիէլ սրբազան Պատրիարգին լաթոռն էջմիածին, յայնժամ որպէս կամեսցի նա, թող այնպէս արասցէ, և յետ բազմելոյ նորին յամենայնի անընդունակ եղիցի թուղթս այս և մի կարողասցի ունել զզօրութիւն ինչ և ոչ բնաւ։

Ի վերջոյ ևս քան զևս աւետիս մեծի ուրախութեան մատուցանեմ ձերազնուութեան ձերում, զի ի սուն միջոցիս կայսերական զօրքն գնացեալ սուեալ են զբերդն Թա-

լին անուանեալ մեծ գլուխն, որ է միով աւուրբ ճանապարհաւ հեռի լերևանու, և անտի գէպ ուղիղ գնացեալ մտեալ են ի սուրբ Էջմիածին, յորում. ժամու անիրաւ Գաւիթն լեալ է լերևան, իսկ համալն միաբանք, որք կան անդէն ի ներկայս են ի սուրբ Էջմիածին ի խնամս օրհնեալ ենարալին նոյն զօրացն, որ և զբէ աստ առ կինեաղն, թէ սուրբ Գեղարդն, սուրբ Լուսաւորչի աջն և ի մէջ արխալուղի միով կարեալ բաղում. ոսկի և այլ ինչ պատուականք անկաւ ի ձեռս մեր, որք ամենեքեան կնքեալ մնան առ մեզ, այժմ. զինչ հրամայես վասն այսոցիկ ով ողորմած տէր։

Որոց վասն դրելոց է զպատասխանի նոյն ենարալին, զի զայն ամենայն առաքեսցէ փութով ի Թիֆլիզ, և զմեզ ևս առաքելոց է անդ, որ մեք ստացեալ պահեսցուք մինչև առցեն Աստուծով զբերդն Երևանու. զորս առեալ տարցուք յայնժամ. ի սուրբ Էջմիածին, որ և աչեր Աստուած յայոզեսցէ ամենայն բարութեամբ։

Ոչ ձեռնհաս լինիմք գրել հետ զհետէ զորպիսութիւն մեր և կողմանցս այլ հարկագրեմք աստէն Ներսէս վարդապետ եղբօրն մեր ծանուցանել միշտ ընդ ամենայն եկողի դեր յարդութեան ձերում. բայց ոչ դիտեմք առնէ ըստ պատուիրանն մերում. թէ ոչ. ալ-ժըմ. զայսքանս միայն հազիւ ուրեմն լայս արարեալ, մնամ. մշտնջենաւոր աղօթարար վասն անդին կենաց ձերոց ՅՈՎՀԱՆՆԷՍ արք եպիսկոպոս առաջնորդ Թիֆլիղու և Ելիսաֆէզապօլու հայոց. ի 1805 մայիսի 23 ի բանակս որ առ ափն Գիւրակ անուանեալ դետոյն։

Բազմաշխատ և անձնանդիր հարազատ սիրելւոյն մերոյ տէր Մելքիսէդ սրբասէր և գիտնատաւտ քահանային մեծագոյն սիրով և ըղձակաթ կարօտիւ մատուցանեմ. զփրկչականդն ողջոյն։

Զայս թուղթ գրեցաք թէպէտ ի Կուրակ գետն առաքեալ անտի, բայց կենաց փութով առաքեաց զմեզ ի քաղաքս յաղագս ստանալոյ զսրբութիւնսն. ըստ որոյ եկեալ ժամանեցաք ի քաղաքս յամսոյս 29. բայց տակաւին չեն եկեալ սրբութիւնքն. ակն ունիմք ստանալ Աստուծով ի քանի աւուրս զորոց որպիսութիւնն ևս ունիմք ծանուցանել ի հասանելն առ մեզ։ ՅՈՎՀԱՆՆԷՍ եպիսկոպոս։

Զայս կօպիալիս իսկն ստացաք այսօր ի կամէնդատէն ընթեռնուլ տալ յամենայն եկեղեցիս քաղաքիս. զոր և ի թղթիս եղեալ առաքեցաք առ ձեզ գիտել զպարունակեալսն ի սմին։

Այսքանս զրեցաւ ի
Թիֆլիզ ամսոյս 30։

ՃԿԳ. *Նորին Յովհաննէս արքեպիսկոպոսի առ նոյն իշխ. Մինաս Նղիազարեան։*

Բարեհաչակեալ աստուածասէր վեհազնեալ իշխան հայոց՝ գերարգոյ Աղալ Մինաս. Իմ բարերար և ողորմած Տէր։

Զկալսերական զօրացն գնալն էջմիածին ի 4. մայիսի, և զառ ձեռն բերելն զսուրբ Գեղարդն և զայլսն, նաև զգալն մեր ի քաղաքս յազատս ստանալոյ զսուրբ Գեղարդն հանդերձ այլովքն, դրեալ եմք նախ քան զայս ինչ ինչ աւետալուր համբաւովք։

Այժմ. թէ զԻարդ ստացաք, և դրպիսի հանդէսս արարաք զայն ծանուցանեմք գերապանցութեան ձերում. քանզի մինչ բերեալ մերձեցուցին ի քաղաքս իբրև ըստ երկուց ժամուց ճանապարհի, աստէն ամենայն բազմութիւնք քաղաքիս, եկեղեցականք, աշխարհականք հայոց, ռուսաց, վրաց և ամենայն ազգաց գտանելոց ըստ կարգաւորեալ պարագալիցն գնացեալ ընդ յառաջ, համբուրեցաք զփափագելին համալնից՝ ղկենսամուխ սուրբ Գեղարդն և զսուրբ Աչն Սրբազան Առաքելոյն Թադէոսի, զոր ապա տուեալ ի ձեռս պատուաւոր Եպիսկոպոսաց ղեպատաւորեցելոց, վայելչական բարեբանութեամբ և պատշաճաւոր երդեցմամբ բերեալ մուծաք ի քաղաքըս, յորում. երկիցս անդաստան արարեալ մեծ ցերեմոնիէիս օրհնեցաք հրաշագործ զօրութեամբ սրբոյ գեղարդեանն՝ զկալսրն և զամենայն զօրս և զզօրապետս նորին և զքոլոր քրիստոնեալս. նախ եկեղեցականք վրաց և ապա մեք յաւուկ յաւուկ տեղիս. և ապա բերեալ բազմեցուցաք ի սբրբ Աստուածածնայ վանքն մեր. յորմէ մինչեարին համալն պանդխտացեալ միաբանութիւնք մեր և ա-

մենայն ազգք և ազինք։ Եւ այս ամենայն հանդէս մոից սրբոյ զեզարզեանն եղե յամսոյս 5։

Եւ յետ այսր՝ կաթուղիկոսն Վրաց՝ և ամենայն մեծամեծք ռուսաց և վրաց՝ խընդրեցին՝ թէ երբ կարելի է արդեօք, յաւուրս միում վանն մեր յատկապէս բանալ զսուրբ զեզարդն, զի համբուրեսցուք ըստ վիպասանացն մեր։ Եւ մեք հրաւիրեցաք զնոսա զամենեսեանսն դալ համբուրել երկրպագանել յամսոյս 8. յորում աւուր և ի ճաշ կոչեալ մեծարեցաք յարդուարեամբ։ Իսկ այլ ամենայն սըրբուարիւնքն և ինչքն՝ որք եկին ի քաղաքս, են ի պահեստի ընդ գանձուցն կայսերական զորս զամենայն դարձեալ արարեալ նշան առ նշան, տեսաք և վերահասու եղաք որպիսի և որքան դոլով անց ամենից։

Բայց յայտնապէս երեի՝ թէ ի ձեռն բերըն լինչ ինչ իրս ձեռնամուխ են լեալ և վերառեալ ըստ կամացն իւրեանց անդ ի սուրբ էջմիածին, կամ ի դառնալն անդրէն ի փամրակ. որոց վասն զ Ներսէս վարդապետ եղբարըն մեր առաքեցաք ի փամրակ լսասպէս տեղեկանալ՝ թէ զինչ են վերառեալ և կամ ոչք են՝ որք արարեալ զրկս. և ապա ըստ այնմ ազդումն տալ մեզ, զի և մեք հոդ տարցուք հանել և զրկս լիապէս։ Զորոց և զիարդ կատարումն ևս ունիմք դրել յետոյ հանդերձ հետևեցեալ որպիսութեամբք, այժմ զանձավս միայն յայտարարեալ մնամք մըշաընջենաւոր աղօթարար վասն անդին կենաց մեծանձնութեան ձերում։

1805։ Յունիսի 20։ Ի Թիֆլիզ քաղաքի։

Մինչ կամէաք առաքել զայս Թուղթս, Ներսէս վարդապետ եղբարըն մեր դարձ արարեալ ի Բամբակաձորայ եկն եմուտ ի քաղաքս. բայց ըստ աչխատանացն բան ինչ չէր արդիւնացեալ. այն զի բոլորովին ուրաստ է եղեալ նոյն Նէսվէտաւով ենարայն՝ թէ մեք ոչ ինչ իրս չէմք ձեռնամուխ լեալ. այլ զամենայնն ամբողջ հասուցեալ եմք ի Թիֆլիզ. իսկ երկրացիքն վկայելով վկայեն ասէ՝ թէ քաղում իրք պատուականք ոսկեղէնք և արծաթեղէնք, նաև մեծամեծ դումար ոսկւոյ և սպիտակ գրամոյ կան ի ձեռս դորին. զորս գաղեալ կամի վայելել։ Թարց վկայելոյ ումեք յայտնապէս երևի, որ քաղում իրք են պակասեալ ի ձեռանցն եկելոց աստ. վասն որոյ խորհրդակցութեամբ պօղանագին ենարալին յանձն առեալ զայչմասանս, եւի ի սոյն աւուրս գնալ լինչսավէտասպօլ առ Պայծառ կնիազն դի ի ձեռն նորին կարասցուք հանել զիրան ի նոյն ենարալէն։ Պօղոնագինն ապաչէս ևս յուսադրէ զմեզ, թէպէտ և ոչինչ եւցէ ասէ ի նմանէ, յայտնելով կնիազին, յայտնի լինի և նորին կայսերական մեծութեանն որ մինչ լուիցէ՝ թէ այդպիսի ինասք են հասեալ լիւրոց զօրացն սրբոյ Աթոռոյն ձեր, մեծամեծ ողորմութիւնս չնորհելով, լցուցանէ զտեղի պակասելոցն։

Այլ և զայս ծանիր, զի զամենայն սըրբութիւնսն րաց ի միոյ սուրբ Աչոյն որ ոչ պարունակեցաւ ի զուխիկն, առեալ եղաք ասա ի պահեստի ի սուրբ վանքն մեր վեչատով նոցա և մեր վեչատոմն։ Չկնի եւման մեր ի քաղաքէս գոլ ամենայն որպէսն ևս և զսիահին եկեալ իրացն Ներսէս վարդապետն ունի հասուցանել առ ձեզ ի գիտել։

ՅՈՎՀԱՆՆԷՍ Արք եպիսկոպոս Թիֆլի՛՛ Եւիսաֆէտասպօլու և Լմերէթու հայոց։

ՃԿԹ. *Թուղթ իշխան Ցիցիանովի առ Յովհաննէս արքեպիսկոպոս։*

Պատուականագոյն հայոց Արքիէր Յոհաննէս.

Ընկալայ ես բազօրա և զիր ի ղէնարալ մալիօրէ Նէսվէտաւովէ լաղագս արդարացուցանելոյ լուրոյ ի զրպարտութենէ, և առ քեզ ուղարկեցի զգիրն այն, զոր Թարգմանեալ տեսանէք որպէս և ես տեսի. որ պարտաւորքն են ձեր արքիէրք և ոչ նա, ևս առաւել այն ով որ 15 ամ նա ինձ ճանաչէ և ես գիտեմ զնա, որ ոչ սիրէ զօգուտ ինչ, վասն այսորիկ կարող էք դատել զարդարութիւնս նորա. ի բազօրան գրէ նա՝ որ սուտ պատրիարգն Դաւիթ դարձեալ է ի էջմիածին կալեալ է խաչ, մասունք և այլ նիւթքն և կալքն և առեալ է ի նմանէ Մէլիքուլի խանն։

Այլով ունիմ պատիւ մնալ իմ լարգելութեամբս

Յուլիսի 18 օրն, Ձերդ պատուական գունե-

1805 ամին՝ ղուքեան խոնարհ ծառայ ի բանակն առ ԿՆԱԶ ԳԱԻԼ ՅԻՇԱՆՈՎ, դետն Ղաբարթօ։

ՃԿԵ. *Թուղթ Դրիզոր Պատրիարքին Ղ. Պօլսոյ եւ այլոց առ իշխ. Մինաս Նիհազարեան։*

Բարեպաշտութեամբ հռչակեալ վեհազնեալ աղալ Մինաս։

Բարերար և ողորմած տէր մեր։

Խոստովանեալ եմք հասարակութեան մխաքանութեանս մերոյ՝ թէ մեծութիւնք չնորհաց սան հօր ձերոյ եղելոյ ի վերայ մեր և ի վերայ սրբոյ աթոռոյն մերոյ՝ նամանաւանդ և ի վերայ բոլոր հասարակութեան ազգիս Հայկազունեանց՝ անկշռելի չափով է առաւելեալ. ըստ որոյ ուրեմն և մեք խոնարհաբութեամբ հոգւոյ մեր ի սէր փափաղելի կենաց ձեր, հարեալ համարիմք՝ թէ հաւատալք անսուտ ճշմարտութեանս մերում, դի չէ մեր ի վերայ յաւիտիկ աշխարհի այլ ինչ առաւել սիրելի, քան զանդին կեանս ձեր։

Ապա լընկալնուլն ի յունիսի 16 գրեցելոցն և ի դիտելն զառողջութենէ ձեր, ոչ ստեմք, դի սիրտք մեր և մարմինք ցնծացին յԱստուած կենդանի։ Իսկ և միւս ևս առաւելութիւն ջերմեռանդութեանդ յայտնեալ դրութեամբն առ քաջասիրտ բարեսէր աղալ Յակորն Պօղոսեան, դրեթէ զբոլոր կարողութիւն ղղացման մերոյ սպառ սպուռ զարմացուցին, Տէր Աստուած մեր օրհնեսցէ զքեզ և զտուն հօր քո, ևս և ջջերմեռանդութիւն ձեր, զմեծ բարեպաշտութիւն ձեր, և որ մեծադոյնն է զանօրինակ խոնարհութիւն ձեր։

Տմարդութիւն ռամկացն Կոստանդնուպօլսի ցաւեցոյց և զմեզ յոյժ առաւելութեամբ. այլ վասն դի այր ի յարակէզ իւրմէ ճանաչի, առած է հնոց իմաստնոց, չէ ինչ զարմանք վասն նոցա, թէ համաձայն իշխողաց իւրեանց ունիցին և նոքին զփոխխոսութիւն բարուց, քանզի դուք որ ըստ անօթոյն ընտրութեան՝ ոչ վասն նոցա, և ոչ ևս վասն մարդկան արարիք և առնէք զորս առնէիքն, վասնորոյ խնդիր է մեր ոչ քնաւ զգալ ինչ ի գործոց տմարդութեան նոցա և ոչ ևս ածել զմտաւ թէ զոր ընդ բարւոյ ձեր փոխարինեն, զանուն ունելով համազգակից քրիստոնէութեան, քանզի արդարև խոպանացեալ սրտիւ և սառուցեալ ի յամենից բարեմասնութեանց ոչ կարող են գործել զբարութիւնս յոժարակամ ընտրութեամբ՝ և ոչ ես կորեն զղալ զոր այլք գործեցին։ Եթէ կարօղք էին առ այնպիսիս, ընդդէր էր կորուստ հզօր թագաւորութեան մերում. այլ քանզի տգիտութիւն ողորմելի ռամկաց ազդի մերոյ՝ հրազօրացեալ է օն անդր առաւելութեամբ ըստ Քրիստոսական սուրբ վարդապետութեան, որք լկեն զինքեանս, բարերարս համարին, որով և զամարդութիւն իւրեանց ոչ զգացեալ որպէս բարի ինչ յոժարեն առաջի նորին կայսերական ժեծութեան ես տարածել։ Բայց դուք զբարիս գործել յանուն Աստուծոյ և վասն Աստուծոյ չէք ձանձրացեալ մինչև ցայժմս, այսուհետև ևս պինդ կալջիք զխոստովանութիւն յաւիտենից լուսոյն և հաւատարիմ է որ խոստացաւն՝ ոչ կորուսանէ զվարձս ձեր յոյժ աշխարհի և ի հանդերձեալն։

Ահա մեք այժմ ամենայն միաբանութեամբ դրեցաք առ դաստ բարեպաշտիցն Պօլսոյ զոր ինչ ի ներկայս արժան գտեցաք այսուհետև ևս ունիմք ի մտի տարածանել ընդ աշխարհ ամենայն զյանդիմանութիւն տմարդութեան նոցա։

Առ վեհազնեալ բարերարդ ևս դրեցաք զինդիր, որպէս զի զփոխանորդութիւն և զվէքիլութիւն զոր յանձնեալ է ձեզ Սրբազան Դանիէլ կաթուղիկոսն զնոյն և ի միաբանութենէ մեր հաստատեալ ունիցիք մշտնջենապէս, առ կայսր ևս ի պատրաստի ունիմք զդիր հասարակական միաբանութեամբ ստորագրեալ, չնորհակալութիւն զանթիւ բարութեանցն և յայտնութիւն վասն մեր ամենեցուն քերան և լեզու լինելն ձեր առաջի նորին կայսերականի մեծութեան. երբ զլուր ապահովութեան լսիցեմք ի նորին պայծառափայլութենէ յաղագս ներկայական պատերազմին, ունիմք մատուցանել առ նա, զի նա ինքն հասուսցէ նորին մեծութեան, առ ձեզ գրնցելոյ առաջին օրինակն ևս ունիմք ընդ կայսերականին տալ դի հասուսցէ առ ձեզ, բայց քանզի համարեցաք թէ այնոքիկ յամեսդեն վասն պատերազմացն, լաւ

նկատեալ զմի օրինակն ես նոյնպէս բաղմակնիք արարեալ ահա մատուցաք մեղէն, թէպէտ աւելի ձանձրութիւն է վեհազն բարեբարիդ մերում, այլ քանզի դրեալ է, որք համբերութեամբ են ի գործս բարութեան, զվառս և զպատիւ և զանեղծութիւն ժառանգեն և զկեանս յաւիտենից. նմին իրի՝ որ բարերարդ ես մեր և սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեայց, խնդրեմք զի զնոյն պահակեսջիք մինչ իսպառ աշխատասիրեալ ամենայն համբերութեամբ ի գործս մեծագոյն բարութեանց որ յաղագս հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ և վերանորոգութեան և պայծառացուցանելոյ ցանկալի լուսածին ծնողին մերոյ Մայր Աթոռոյն սրբոյ Էջմիածնի. որպէս չնօրհօքն անախտ ծնողութեան նոցին յաւելանան ձեզ անեղծ վառք Աստուածալին և ժառանգութիւն յաւիտենից կենացն։

Ի ներկայս չունիմք զարժանաւոր լուր յուտեքէ, այլ յուսով եմք ոչ անագան ընկալնուլ զհամբաւ բարութեան ի կողմանէ պարսից պատերազմացն և կործանմանց նոցին, և ի Արարատեան գաւառէն, ուստի լըսեմք էրէկ և այսօր որպէս թէ ենարալ Նեսվէտաւովն այժմ ես դիմեալ իցէ ի կողմանսըն երեանուս։

Սրբազան տէր մեր անդ ի Մարաղայ ի տան դանին կալ առողջութեամբ. այլ դիր կամ մարդ, ի նմանէ առ մեղ կամ ի մէնջ առ նորին սրբազնութիւն անհնար է թէ լինիցի ի ժամանակիս։

Դաւիթն ի Երևան է՝ և ժամանակն բամարիմք թէ ձեռնտու իցէ ինքեան. ըստ ոբուսմ ինքն առ պարսիկս դիմել ախորժէր, և ինքեանք պարսիկքն եկին առ ինքն, յուսամք թերևս կատարեսցի բան դրոյն, թէ ոբով իւիք մեղանչէ ոք, նովիմբ և տանջեսցի։

Վեհազնեալ աղալ՝ թէպէտ ձանձրութիւն է մեծանձնութեան ձեր, բայց քանզի կամեցողութեամբն Աստուծոյ, ուրախութիւն համալնից մերազանց դուք էք ի տէր, վասն որոյ խնդրեմք զի որպէս ցակոր աղալինն նոյնպէս և մի թուղթ գրեսցես առ կարբեցի Յոհաննէս բարձր արժանապատիւ եղբայրն մեր, քանզի սա է որ զմորուսն գերծել ետ վասն ջատագովութեան ճշմարտութեան ՚ամիս յանլոյս բանտի տքնեցաւ, ի չարէն եպիսկոպոս լեալ ոչ կամեցաւ, և ի գլուխ ամենին ալժմ ես մեծ ինչք աղատեալ երեր որպէս տեսցես ի թուղթն որ ի սմա։

1805 յուլիսի 18 ի Թիֆլիզ։

Գրիգոր արքեպիսկոպոս լեալ երբեմն պատրիարդ Ո. Պօլսոյ։
Բարսեղ տրք. սրբոյ էջմիածնի։
Նուաստ աբ՝ղալ ներսիս։

ՃԿԶ. Թուղթ Յովհաննէս արք եպիսկոպոսի առ իշխ. Մինաս Նղիազարեանց։

Բարեհաչակեալ Աստուածասէր՝ վեհազնեալ պայծառ իշխան Հայոց՝ Աղալ Մինաս։
Ողորմած և բարեբար Տէր մեր։

Նախ քան զալս ի 18 յուլիսի դրեալ եմք դհարկաւորսն. ալժմ ի դէպ վարկանիմք ծանուցանել զբեկումն և զկորուստ անօրէն պարսից զի հասեալ Բաբախան չանն ի սահմանս Շօշալ, հրամալէ որզուլ իւրում և Ալէքսանդր արքալորգւոյն Վրաց՝ գնալ առնուլ զնելիսաբեթապօլ և զքաղաքս Թիֆլիզ որք առեալ զքաջն ի զօրացն թուով իբր 2000. մինչ զան մերձենան յնելիսաբեթապօլ, ելանեն անտի և խաչագգեաց զօրքն Ռուսաստց կարի սակաւք. որք անպատուհմ քաջութեամբ պատերազմեալ ընդ նոսա, հալածականս առնեն մինչ իսպառ յորում նուագի և անօրէն տաճիկ բնակչացն երկրին՝ յայտնեալ զթունալի ծածուկ նենդութիւնս իւրեանց, սկսանին առ հասարակ դիմել առ զօրս Պարսից հանդերձ իւրեանցալնովքն ամենայն, և արձակեալ զհրացանս ի վերալ զօրացն կալսերական և հալոցն մեր. յորոց և բազումք անդէն իսկ ի փախչիլն, լինին հրոյ ճարակ ի յահագնաձայն թնդանօթիցն Ռուսաստց, իսկ աղաւնամիտ ամենայն հալ բնակիչքն՝ ըստ բնիկ հարազատութեան իւրեանց միացեալ ընդ յաղթող զօրացն կալսերական, ոչ խնայեն խաւնել զարիւնս իւրեանց ընդ արեանց նոցին, վասն անդին կենաց Նորին կալսերականի Մեծութեան. և այսպէս միաբան ի միասին բարձրացուցեալ զեղջիւր քրիստոնէութեան, ստանան պսակն մեծ՝ արժանի դովութեան։

Թողեալ ապա զնոսա անօրինացն ալ-
պիսի պարտութեամբ, զան անտի ի վերայ
երկրին Շամչադինու, որոյ ամենայն տաճիկ
բնակչացն իսկոյն ուրացեալ իսպառ ղվայե-
լումն ողորմութեան Նորին կայսերականի
Մեծութեան, գնան միանան ընդ նոսա։ Այլ
քաջասիրտ և առիւծասարսռ ամենայն հայքն
տեզուին ամրացեալ առ հաստարակ՝ զբարձր
բազում հզօրին Աստուծոյ ունելով միայն ի
օգնութիւն ինքեանց, զարմանալի արիու-
թեամբ պատերազմեալ արարեալ են զիսթա-
ւալ ղոչ սակաւս ի նոցունց. և այսպէս խոր-
տակեալ իսպառ զզօրութիւն Պարսից, զեր-
ծուցեալ են զինքեանս ի ձերվարութենէն։
Որովք այսոքիւկ ամենեքումբք արդարև ե-
ղեալ ի գլուխ զպատակ հարազատութեան, ե-
ղեն հանդիսացեալք գերազանց քաջութեամբ,
զվարդանանցն առնելով լինքեանս զնմա-
նութիւն, որք վասն պահպանութեան սուրբ
հաւատոյ պատերազմեալ պսակեցան Քրիս-
տոսիւ։ Ապա՝ տեսեալ անօրինացն թէ ոչինչ
իւիք զօրեն հասուցանել նոցա զինաս ինչ,
հրեշտակութիւնս առաքեալ, խոստանան այլ
ոչ ևս մերձենալ կամ առնել ինչ, միայն զի
լետս տացեն ինքեանց զդիակունս սատա-
կացն. զորս թուով աւելի քան զ300, առա-
քեն քաջքն ըստ աղաչանաց չանդագալին,
որպէս պատմեն աւետաբեր հայքն իսկ ե-
կեալք անտի։ Եւ մինչ այսպէս լամենայն
կողմանց ի պարտութիւն մատնեալ՝ խորհին
փախստենէ իւրեանց, դան պատահին հաց
բարձեալ սալլից և ջաբախանիցն, զորս 300
արամբք տանէին ի քաղաքէս Ելիսաբէթա
պօլ, ի վերայ որոց ի չորս աւուրս պատե-
րազմեալ ոչ քնաւ կարողանան ինասել զո-
նէ զմի ոք ի նոցանէ։ Ապա՝ չորից աւուրց
զկնի՝ եկեալ հասեալ Ելիսաւետապօլու 400
զօրք Կայսերական ի օգնութիւն նոցին, ի
մէջ գիշերի արձակմամբ ռմբոյ միոյ թնդա-
նօթի, ցիր և ցան առնեն զամենայն բանակ
անօրինացն, որք անարեկեալ սրոիւ վախու-
ցեալ գնան հեռանան ի նոցունց ի բանա-
կին ի սահմանս Ղազախու լի երկիւղիւ. իսկ
ամենայն սալլք և արք ընդ նոսա, այսպէս
առանց ինասու իւրեք տարեալ լինին ի տե-
ղի իւր։

Եւ յայսմ միջոցի հասանի լուր ի չա-
հէն առ որդին իւր, թէ ահա ելին ռուսքն
լետկոյս մեր ի Դարբանդ, ես ընդ իս եղեալ
զօրօքն ամենայն ունիմ դառնալ փութով.
դու ես առեալ զզօրս՝ դարձջիր ի վերայ ե-
րևանու, և այլն։ Ասա է տեսանել զվերջին
վտանգն և զիսպառ կործանումն անօրինաց
ղի ամենայն բնակիչք երկրին Ղազախու թէ
հայք և թէ տաճիկք մինչ ղդան զայս լուր, և
տեսանեն թէ իսպառ անկեալ ի զօրութենէ՝
լետս փախչին ամօթալից, իսկոյն հետամտեալ
անօրինակ քաջութեամբ՝ զմեծամեծս հատուց-
անեն նոցա զվտանգս. քանզի ըմբռնեալ ասէ
զմուտս ճանապարհին լետկոյս և լառաջկոյս աս-
պատակեցին զամենայն հարստութիւնս, զոմա-
նսն սպանանելով, և զոմանս մերկ ի մօրէ արա-
րեալ ի բաց թողլով. լորում նուազի և գլուա-
նէ Սարդարն որ լանցեալ ամին գերեալ եղև
ի Պարսից ՚ներևան, հանեալ ի նոցունց անտի
քերեն անձնաս ի քաղաքս՝ քանի աւուրք
լառաջ քան զայս գրութիւն։ Ահա այսպիսի
քաջագործութեամբ արարեալ զհաւատարմու-
թիւն տաճկացն Ղազախու, անհետ արարին
մինչ իսպառ զառաջին անհարազատութիւն,
ոչ լիմարացեալ հանդոյն տաճկացն Ելիսաբե-
թապօլու և Շամշադինու, որք փոխանակ
մեծամեծ ակնկալութեան իւրեանց ի Պար-
սից, գներհակն ընկալան ի նոցունց. քանզի
նախքան զփախչելն՝ ի մէջ բանակին՝ ընտ-
րեալ ասէ զզեղեցիկս որդւոց և դստերաց
նոցին, զանդէպս գործէին ընդ նոսա. զորոց
և զտեսաս սպանանեալ սատակեցուցանէին։
Արդ՝ զոր օրհնութիւն կամ զոր չնորհակա-
լութիւն ՚ներանուիրեսցուք առ բարձրեալն
Աստուած արարիչն երկնի և երկրի, որ ըստ
բազի մերում որպէս լուսալաք, նոյնպէս և
եցոյց մեզ զկատարեալ կորուստ և զբեկումն
անօրինաց. լորոց բոլոր բնակիչք քաղաքիս
գրեթէ սասանեալ դողային, մտաբերելով զա-
ռաջին վտանգն, զոր կրեցին ի ձեռն չէզոք
տնկոյն բուսելոյ ի պարսիկս, որ զանօրէնու-
թեան իւր ճաշեալ զաղօխն արբուցանէր առ
հաստարակ ամենեցուն զգառն մրուրն մահա-
րներ։

Իրաւի կարծեաք թէպէտ՝ թէ զբնակիչ-
ն ՚ներևանու՝ չանգաստան ի գնալն իւր անդ,
ունի վարիլ դէպ ի վայր, քայց ըստ որում
այնպիսի վախստեամբ և խաստառակութեամբ
հազիւ ուրեմն գերծեալ ապրեցաւ ինքն, Ա-
տուծով այլ ոչ ևս զօրէ առնել նա՝ և ոչ զմի

ինչ ակն ունիմք մանաւանդ ևս, զի դեպ ուղիդ գնացեալ կորեալ իցէ Մեացեալ զօրքն իւր և ոչ մտեալ լերևան առ սաստիկ երկիւղին։

Ցաւագս պալծառափայլ կնիազին լսեմք, թէ դարձ արարեալ ի կողմանցն Շօլայ, եկեալ հասեալ իցէ ի Շամքօր. որ է յայսկոյս Ալիսաւետապօլու, 6 կամ 7 ժամու ճանապարհաւ հեռի ի նմանէ. ըստ որոյ լինի մուտ նորա ի քաղաքս ի քանի աւուրս։

Ներկայիս որպէսն այս էր զոր գրեցաք լիապէս. Աստուծով ոչ յետ բաղմաց ինչ աւուրցս ունիմք գրել և զալ ո բախականս քան զայս, քանզի ունիմք զլոյս մեծ, որ ոչ անագան եղիցի ալցելութիւն Սրբոյ Աթոռոյն մեր և օրինաւոր Սրբազնակատար Տեառն մերոյ, զոր Տէր յաջողեսցէ։

Ի փամբակ եղեալ Նեսվիտալով ենարալն վասն որպիսութեան իրացն Սրբոյ Աթոռոյն գիր էր դրեալ կնիազին. զոր և կնիազն հանդերձ իւր դրութեամբ առաքեալ էր մեզ. մեք ևս Նեսվիտալովին և նորին զօրաց տէր Աչէքս քահանային գիր էաք դրեալ. նոքա ևս զպատասխանին գրեալ էին մեզ, զորոց ամենից օրինական առաքեցաք ահա ընդ գրոյս. որպէս զի տեսանիցէք՝ թէ ի նոցունց գիրարդ կարելի է հոգ տանիլ վասն իրացն Սրբոյ Աթոռոյն, նոյնպէս հոգացեալ տնօրինեսջիք զպատշաճն։ Ի վերջոյ ամենայնի խնդրեմք, ուրախ առնել զմեզ միշտ ցանկալի ողջութեամբ ձեր, որ աղբիւրն է ամենայն ուրախութեան սրտի և հոգւոյ մեր, որում յաւէտ փափագելով՝ ինամք վասն անձին կենաց ձերոց միշտ աղօթող ՅՈՎՀԱՆՆԷՍ Արք եպիսկոպոս առաջնորդ Թիֆլիզու և Ելիսաֆէտապօլու Հայոց։

Ի 1805 օգոստոսի 13

Ի Թիֆլիզ։

Տէր Սելքիսէթ հարազատին մերոյ լաւուկ սիրով ողջոյն և օրհնութիւն մատուցես ի զիմաց մեր՝ միաժամեցա ցանկալով ի կողմանէ ընտանեացն։

ՃԿԷ. *Թուղթ Յովհաննէս արքեպիսկոպոսի Վրաստանու առ իշխ. Մինաս Եղիազարեան։*

Վ հաղնեալ պատճառ իշխան հայոց Աղալ Մինաս,

Ողջոյն և բարերար Տէր մեր։

Ի 20, յուլիսի գրեցեալ ցանկալի Թուղթն ձեր, առընկալեալ ի 11, օգոստոսի՝ համարեցաք մեզ պատգամ ի լերկնուստ ազդեցեալ ըստ որում ազդեցութեամբ հոգւոյ միայն կարէր լինել, զի վասն որոյ մեք ամենեքին զգալով և զցերեկ վարանեալ տարակուսեաք միշտ, ալժմ ի ժամանակիս գտաք զձեզ ի նմին մեզ համաչունչ խորհրդակից և ալսու ահա ղգամք հասեալ ի վերայ մեր ողորմութեան Աստուծոյ մրնչ աստուածախնամ ազդեցութիւնք ներգործեն ի սիրտ լուսացելոցս ի մարդասիրութիւն նորա։

Գիանդի այս է ճշմարիտն, ով արդոյ, զի այս ամենայն որ եկն ի վերայ մեր և սրբոյ Աթոռոյն մերոյ և բոլոր Ազգի, ոչ ի պատճառս այլոյ իմիք մեղ թուի լինել, բայց ի միայն զի մեք, և կամ որ ստոյգ ևս է՝ նախանիք մեր՝ թողեալ զլուսաւոր չաւիղս օրէնսդիր սրբազան Աստուածային ընտրելոցն, Առաքելոց և սրբազան Հայրապետաց որք հիմունք են հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ Քրիստոսի, ընթացք զճանապարհ անկոխ՝ որ մեղ միայն էր հաճելի և ոչ աստուածոյ և վասն այնորիկ արժանապէս վերահասին մեզ այս ամենայն չարիք և վիշտք։

Պարզաբար համառօտեալ, զմեծն և զնախկինն չարեաց պատճառին այս միայն ալժմ համարձակիմք լինել առաջի մեծախորհուրդ վհատնութեան ձեր, զի Առաքեալքն սուրբ, յետ որոց և մերն Թադէոս առանձինն Սուրբ Ժողովն Նիկիոյ, սուրբ Ժողովն Անտիոքայ, և Աստուածաբանն Գրիգոր՝ ուսեալ ի սուրբ հոգւոյն աւանդեալ են վասն բարւոք կառավարութեան և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ, զի քահանայապետ առանց բազմութեան եպիսկոպոսաց և եպիսկոպոսք առանց միմեանց և առանց քահանայապետի մի ինչ իշխեսցեն միայնակ և առանձին կամօք ղործել եկեղեցւոջ, այլ ինքն ի ժողովրդեան, այլ կաթուղիկոսն խորհրդակցութեամբ եպիսկոպոսաց, և եպիսկոպոսք գիտութեամբ

և վերատեսչութեամբ Սրբազան կաթուղիկոսի միարան դործեռնին զհարկաւորն. զի այնպէս և Քրիստոս ըստ աննուսւտ խոստման իւրում, թէ ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ անդ եմ ես ի մէջ նոցա, եղեալ նոցա խորհրդակից և կառավարիչ, բարւոք տնօրինեսցէ ըստ իւր հաճոյին զօգուտն և դչահն ազգի և եկեղեցւոյ. Մերս Հայոց ազգի յօժարութիւն և կամքն ևս այս էր միշտ, և զսոյն խնդրէին յաղագս բարեկաւութեան ազգի և եկեղեցւոյ. եւ որպէս լուեալ եմք, լաւիտենական փառացն արժանաւոր էքէց եղբայրն ձեր գերազանց աղալ Յոհաննէսն ևս հանապազ ցաւի լեալ վասն ոչ լինելոյ սոյնպիսի միաբանական կառավարութեան ի սուրբ Էջմիածին և յաղագս այսր մարդարէացեալ ես է՝ լսեմք, թէ վաղճանաբար աւերութիւն է լինելոց սրբոյ Աթոռոյն. Բայց մեր երանելի Սրբազան կաթուղիկոսքն ոչ ի լիշեալ կանոնն հայեցեալ, ոչ ընդ խնդիրս Կոստանդնուպօլսոյ իշխանացն հայոց, և ոչ ևս ի միտս իւրեանց անցուցեալ բնաւ զայսպիսի աստուածահաղորդ միաբան կառավարութենէ ինքեանք միայն ըստ իւրաքանչիւր հաճոյից առանձին կամաք արարիննն զոր ինչ միանգամ սիրտք իւրեանց յօժարեցան, և այսպէս բացակաւ գտաւ բարին Աստուած՝ որ ի մէջ միաբանութեան խոստանալ լինելի, և ի վախճան ժամանակիս լարեաւ չարն որ էած զայս աւերութիւն սրբոյ Աթոռոյն մերում, ղրաւեաց զկեանս բազմաց պատուական հարց և եղբարց մերոց, և տառապեցուցանէ ցարդ ևս զմեզ ողջոյն աղդովին. Բարեսէր Աղայ՝ մեզ առաջինն բարեաց պատճառի այս թուի և քանի ամք են մրչտ զսոյն խորհիմք, և որչափ եկաք լայս սահման լիս րաքանչիւր տիս և գիշեր սոյն այս էր ի մերում խորհրդի, որպէս զի թերևս համաձայն կոնտնացն լիշեցելոց՝ յօգուտ ներկայական և ապագայական վասն ազգի և եկեղեցւոյ մերոյ հաստատեսցի խորհրդարան ի մէջ մերում միաբանութեան և եղիցի միաբան խորհրդածութեամբ կառավարութիւն [31]), որոց գոն վաստակք բարի ի ի խորհուրդս նոցա, ասէ Սողոմոն Ժող. 4. և մի ևս այսուհետև լիցի միայնակ կամապաշտութիւն կաթուղիկոսաց կամ այլոց վասն որոց ևս գրէ նոյն իմաստունն, վայ միոյն թէ գլորիցի և այլն, Ժող՝՝ 4 10. Բայց մինչև ցայս վայր չունելով համարձակութիւն, ոչ վստահանալաք լայտնել վեհանձնութեան ձերում, կամ այլոց, մանաւանդ զկարծիս առեալ թէ գուցէ այլք զայլս կարծելով զմեզ նախանձաւորս և բարեմիտս վարկանիցեն և լայտնեսցի յայնմհետէ բարութիւն խորհրդեան մերում իբրև չարութիւն ազդեալ ի սատանայէ, և լինիցի յանցանք մնծագոյն կարծողացն զայն՝ զբարին չար.

Իսկ արդ մինչ ի ներկայս չնորհօքն Աստուծոյ վեհացնեալ բարերարդ մեր գտար կարապետ բարութեան խորհրդոց վստահացեալ և մեք արժան համարեցաք այնչափ ինչ պատճառս տալ մեծախորհուրդ հարազատիդ սրբոյ եկեղեցւոյ. որպէս զի լինիցիս և կարապետ բարեաց. լայսմհետէ միշտ վեհանձնութիւն ձեր ալտի և նուաստութիւն մեր աստի զամենայն դխորհուրդ մեր ի վերայ հասարակաց բարւոյն տարածեալ. իցէ զի ողորմութեամբն Աստուծոյ յառաջ եկեսցեն որք լաւքն են և եղիցի զբաւ չարեաց հասելոց ի վերայ ազգի և եկեղեցւոյս Հայաստանեայց և արդիւնաւորեսցին բարիք ի վառս Աստուծոյ հօր.

Տակաւին այժմ չեմք տեսեալ զգրութիւնդ որ առ արդոյ Առաջնորդ Արևի եղբայրն մեր՝ և զգալութիւնք գրչին ևս թուլ լինելով առ սակաւ տկարութեան դիպեցելոյ նմա, ի բարւոք լինիլն գրչին, տեսցուք և զգրութիւն առ լիչեալ Առաջնորդն ուստի գրեալ էք տեղեկանալ զեսն, և այնուհետև մատուցանեմք հետզհետէ զնիւթս բարի բարւոք կարզադրութեան և զգուշութեան ապագայական տեառն գործակցութեամբ միայն խնդրեմք զի որպէս հոգւոյ ազդեցութեամբ խորհուրդ տուեալ մեզ զխորհուրդ սրտից մեր չարժեցիք, նոյնպէս և հաստատիցնդ բարեպաշտ արիութեամբ լաւապէս հետևօղ լինիք առանց ձանձրանալոյ առնել կատարեալ զբարի դիտաւորութիւն ձեր. վասնորոյ և մեք խոստանամք ահա ամենայն զօրութեամբք հոգւոյ և մարմնոյ մերոյ այնմ լինել հանապազ պաշտօնատար և ի վերայ այսորիկ խնդրեմք, զի որ ինչ առ այս ունիցիք զբաղի խորհրդածութիւն մի ձանձրասջիք յայտնել մեղ. և մեք նոյնպէս զազգեցեալն ի միտս մեր իւրաքանչիւր ժամանակ յայտնեմք ձեզ, և զբարիսն ի նոսա ինքն Աս-

տուած արդիւնացուցեալ չնորհեսցէ ձեզ յաւիտենականապէս լիշատակ բարութեան ի չահ ազգի և ի պայծառափայլութիւն եկեղեցւոյ Հայաստանեայց և սրբոյ Աթոռոյն մերոյ Էջմիածնի։

Խնդրեմք զդուն այգ յառաջարկութիւնդ մեզ լիշել և նորին սրբազնութեան առաքելապատիւ հօր մերոյ Եփրեմ արքեպիսկոպոսի, որոյ մեք յայտնել ունիմք համաճայն այսորիկ զի նա ինքն լիցի առաջնորդ բոլորեցուցանցա ի համայն բարեկարգութիւնս օգտակարարացունից. վասն սրբազան տեառն մերոյ չնևս լինի ամլ ս մի որ գիր տեսաք ի Թիֆլիզոյ մահտեսի Յոհաննիսէն թէ բարւոք առողջութեամբ և ապահովութեամբ կայ անդէն ի Մարտաղալ ի տան խանին։

Մեծ իշխանն պարսից որ կորեալ էր անտի ի Ղարապաղաղ, որդիք նորին ևս յառաջ նկեալ խրոխտանօք որպէս թէ ի Թիֆլիզս կամիցին գալ, ամօթապարտ եղեն ի սակաւ հալոցն Շամշատինոյ որք քաջաբար զզէմ եղեալ նոցա ղհարիւրաւորս ի նոցանէ սատակեալ և զինքեանս ամենևին անվնաս պահեալ հզօրացան։ Յետոյ ապա անցեալ ի Երևան, մինչդեռ մեք ի վարանս կայաք թէ զբազմութիւն հալոցն Երևանու գերեվարեալ կորուսանել ունիցին, ոզորմութիւն Աստուծոյ զնոսա ևս աղատեաց և ապա երկի ի Գաբրիէլ հարիւրապետէն զգիր տեսաք որ ինքն իւր ամէն ժողովրդովքն անվնաս ժամանեալ է ի Բամբակաձոր. Մելիք Աբրահամ չարն ևս զինի նորա գալ իւրովքն, և նոքա անօրէնութեան որդիք Բապախանին ևս ամենևին ոչինչ վնասեալ ժողովրդեան Երևանու, միմիայն զՄահմատ խանն առեալ իւր ընտանեօքն ի քսան ամսոյս անցեալ գընացեալ են դէպ ի հարևնիս իւրեանց, թռզեալ անդ միայն 2000 հետևակ զօրք պարսից և Աչրաֆ խանն և կոյր Քեալպալի խանըն ի պահպանութիւն ընդրին, և միւս ոմն Մէհտի դուլի խան անուն, ի տեղի Մահմատ խանին իշխող երկրին Երևանու, ընդ նոսա և Ալէքսան արքայորդին ևս որպէս իշխան փախուցելոցն անդ ի Բամպակու և Ղաղախու ընդ ժամանակս ժամանակս։ Որք Աստուծոյ ոզորմութեամբն լուսամբ զի ոչինչ կարող իցեն ներգործել զչար թէպէտ և կամեցող ևս լիցին։

Ի ռստտաց ոչինչ լսեմք, բայց ակն ունիմք թէ յաջողութեամբն Աստուծոյ ոչ անագանեալ այլ ևս, սիրեսցեն և երևանու զոր տէր յաջողեսցէ։

Խոնարհ Գ։ԻԳՈՐ արքեպիսկոպոս։

Խոնարհ ԲԱՐՍԵՂ արքեպիսկոպոս սրբոյ Էջմիածնի.

Նուաստ աբեղայ ՆԵՐՍԻՍ

1805 օգոստոսի
16. Թիֆլիզ։

Ցոյժ ջերմեռանդ սիրելութեամբ ողջոյն մատուցանեմք հարազատ որիցելոյն արժանապատիւ խաչակիր տէր Մելքիսէդեկ պատուելի քահանային և յանձն առնեմք զինքն չնորհացն Աստուծոյ և պահպանութեան նորա։

ՃԿԸ. *Թուղթ Ցովհաննէս արքեպիսկոպոսին վրաստանու առ իշխան Մինաս Շղիազարեան*

Վեհադնեալ իշխան հալոց՝ մեծարգոյ Աղայ Մինաս,

Իմ ողորմած Տէր և
Բարերար.

Ի 3 ոմսոյս ընկալեալ զ'ի կայսերէ չնորհեցեալ պնակէն, օրհնեցաք զպարգեւն նորին արժանաւոր ղոհութեամբ ընդ որ դրեալ էր նորին Պայծառափայլութիւն կնիազ Զիցիանովն, թէ զկայսերական ուքազն՝ որ վասն կարգելոյ զձեզ կառավարիչ բոլոր վրաստանու հալոց, պահեցի ի ձեռս իմ ըստ հրամանի նորին կայսերականի մեծութեանն գրելով ի սպօլնիցէն, զի յայտնեսցեն յամենայն տեղիս վրացոտանու զկարգումն ձեր ընդհանուր կառավարիչ հալոց ի ոզորմութենէ Ամենողորմած կայսերն մերոյ։

Ցերևան եղեալ որպէսն այս է, որ խանն ըստ իւր արարմանցն էառ ղհատուցումն ի տեառնէ վարելով իբրև զգերի հանդերձ իրայնօքն ի ներքին կողմն պարսից։ Եսկ Դաւիթն իբրև զբռ մենացեալ նստի յանապատն երևանու.. Մելիքն և Իւզբաշի Գաբրէլն իրեանց ուհաթովն փախուցեալ եկին հասին ի Փամբակ. իսկ մնացեալ հալքն են նոյնպէս ի ձեռս նոցին անօրէնն պարսից. որք ստէպ ստէպ աղաղակեն մեզ հոգալ զփրկութենէ

իւրեանց, բայց ոչ կարողանամք դէպ հնարիցն վրկութեան նոցին զտանել որոց Աստուած ինքն այց արասցէ. Զայսքանս համառօտաբար լայտ արարեալ, մնամք վասն անձին կենաց ձերոյ Աղօթարար ՅՈՎՀԱՆՆԷՍ Արք եպիսկոպոս հայոց կողմանցս Վրացտանու.

1805. Սեպ՛՛ 3 ի Թիֆլիզ.

ՃԿԹ. *Թուղթ Յովհաննէս, Դրիզոր եւ Հարսեղ արքեպիսկոպոսաց եւ ներէս սրբազան առ իշխան Մինաս Շուիազարեան.*

Լուսաճին ծնողին մերոյ սրբոյ լուսաւորչի՝ լուսաւոր զաւակ հարազատ՝ վեհազնեալ Իշխան Հայոց և Ջահաւորեալ ճրագակիր ահագոյց Աղալ Մինաս պայազատ.

Բարերար և բարեսէր Տէր մեր.

Ի 18, հոկտեմբերի հասին առ մեզ գրութիւնք վեհազնեալ բարերարիդ մերում. գրեցեալքն ի 29, սեպտեմբերի. որք արդար համարեցան ամենայն մեծի և վսեմ մերում միաբանութեան՝ որպէս երկնաճիր աւետարանութիւն. և ըստ օրինակի գարնանաբեր հարաւային հողմոյ որ զարթուցեալ զերկիր ի սաստկասառոյց պաշարմանէ օդոյն ցրտութեան ձմերայնոյ՝ ազդէ ի նա արտաքս առաքել ազդի ազդի տեսակս բազմազունի ծաղկանց ի զարդ վայելչութեան իւրոյ. և լուրախութիւն և ի զուարճութիւն կենդանանաց ի փառս հանրախնամ արարչին Աստուծոյ. ձըշմարտութեամբ ասեմք, առաւել քան զնոյն ներգործեալ ի սիրտ համալնիցս քանք ձեր՝ զորս չարակարդեալ էիք 21. գլխովք. ընդոստուցին ի հիմանէ՝ և ի ծայրագոյն տարակուսութեանց, որ զամենեսին պատմեալ պաշարեալ, զելս իւրացն անգիւտ տալը ճանաչել. և որպէս ցից ընդ ոսկերս ճարակեալ համաձայն իմաստնոյն բանի. այնպէս կենդանակ առնէր զամենեսին զմեզ. Արդ այժմ. ահա ոգի զօրութեան չարժեալ ի սրտի իւրաքանչիւրոց, բղխէ լամենայն բերանոց զձայն ըղձալեացն նշանակութիւն. Ա՛րդ ինչ թէ լաւելցուք տեսանել զվայելչութիւն տան տեառն, և դրարեգրութիւն հոգևորականաց և մարմնաւորականաց ազգի մերոյ. ճաշակս որոյ և մեք ամենեքեան անբաւ չնորհակալութեամբ վասն դձայնն միայն ի լսելիս մեր հնչեցուցանելոյ, չերմեռանդութեամբ հոգւոց մերոց զինդիր մատուցանեմք, զի որպէս ասգ, եղիցիս և լաւէտ լայսմհետէ որդի զօրութեան նախնեաց և հարց մերոց սրբոց, և նոցայն զգեցեալ զհոգի, չանակուռ լինիս զի զորոց զձայնն միայն գրով նշանակեցեր, օժանդակութեամբ բարեսէր Աստուծոյ ամենակարողի զոմն լիւրաքանչիւր ժամանակի հնազհետէ արդեամբ արձանացուցանել՝ ի փառս Աստուծոյ և ի պատիւ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի՝ և լիշատակ լաւիտենական քաջատոհմիկ Աղալ Եղիազարեան.

Գանդի ստուգապէս ով վեհազնեալ հարազատ սրբոյ նկեղեցւոյս Հայաստանեաց, երեի թէ ազգացութիւն լերկնից է. դի մեք աստ գնոյն դեռ կամէաք դրովք սրբովք ընթեռնուլ ի լսելիս ամենասիրելեաց, չունելով զլոյս թէ արդեօք ներգործեսցէ ինչ. ահա լետ սակաւ աւուրց եկին հասին լրացուցիչքն ըղձի և փափագանաց համալնիցս՝ ի առաջին մեծախորհուրդ գլխոյդ բարեաց տնօրէնութեանց լորմէհետէ հաստատնալոյս եմք, թէ և այլքն ազգի մերոյ չերմեռանդ սիրով լօժարակամ լիցին ի դոյն. և լիցին գործակիցք առ ի հաստատութիւն ցանկալի բարեկարգութեանց որպէս և արժանն իցէ, երբ և արժան իցէ եթէ հասարակական համահաճութեամբ և եթէ կալսերական բարեհաճութեամբ և հրովարտակօք. սահմանել զնոյն օրէն անջնջելի. Իսկ լաղագս նշանակելոյդ ընտել քննութեամբ և նշանակել ի հանդիպոյ զթերին և զաւելորդն բարի էր լառաջարկութիւն ձեր, բայց առաջին հարկաւորն՝ է հաստատութիւն սիւնհոդոսին զկնի որոյ նոքա համարձակապէս կարող են օր ըստ օրէ ընտրել զբարի բարի, գործակցութեամբ հոգևոր և մարմնաւոր զգօնամիտ բարեսիրաց. զի նախ արժան է լինել ձայն, որ կոչեսցէ զխորհրդականս ի խորհուրդ.

Ցաղագս Հնդկաց նուիրակ Ցակոբ եպիսկոպոսի, լաղագս միաբանութեամբ առաքելոյ զնուիրակ, և լաղագս խնդրելոյ զառաքիկ ի նորին ամենասողոմոնի կալսերութենէ, իրաւի լոյժ բարւոք հաճութեամբ ուրախութիւն ունիմք, բայց քանդի տեսանեմք, որ զմի կոպէկն կալսերական զանձարանի առաւել պահ-

պանել կամ ոչ ոք, քան զմեզ զամենեսին. նմին իրի զի մի պատճառաւ միոյն երեքն ևս խափանեալք լիցին, բարւոք թուեցաւ մեզ, վասն ցակոբ վարդապետի բերելոյ և վասն միաբանութեամբ զնուիրակունս առաքելոյ զինդիր գլուխցուք բայց այնպիսի կերպիւ որ մինն ի մէջ նոցա երևեսցի. և զայն խնդրագիր՝ եթէ հասու լիցուք որ մինչև ի 10 և կամ 20, օրն զալոց իցէ ինքն ի քաղաք ասր, սպասեալ գալստեան նորա աստ մատուցցուք իսկ եթէ յամելոց իցէ, յայնժամ կամ անձամբ անձին տարեալ մատուցանեմք, և կամ պատշաճաւոր արամբ հասուցանեմք նմա ուր և իցէ. Որոյ և զօրինակն առաքեցուք վեհապետութեան ձեր լետ ալսորիկ. քանզի ղդրաբերըն արժան համարեցաք չուտով դարձուցանել։

Ողջունագիրն՝ լորում էին բանք վասն սինոդին և միւս տետրակն լորում արձանագրեալք էին կանոնադրելիք քան և մի գլխով, ընթերցաք ի լուր միաբանից հասարակութեան. որպէս զի ամենեքին միաբան ծանուցեալ զբարեգրութիւն ձեր առ եկեղեցիս և ազգս հայոց, օրինակեսցեն զձեզ միաբանութեամբ իսկ միւս հատուածն լորում էին դրեալ միայն երեք ներկայական հոգալիք, ոչ կամեցաք հրատարակել, զի մի ի ձէնջ ազդեցեալ լինելն հասանիցէ լականջ այլոց որոց չիցէ արժան։

Ցազազս Նեսվետալովին որպէս խոստացեալ էաք զի զամենայն անցս պարագալիւք գրեսցուք, որ ըստ այն լինելիք հոգատար. ահա երկոքին առ. Ստեփաննոս եպիսկոպոսն Կուչուբեան և Յովհաննէս վարզապետն Կարբեցի գրեցին ստորագրութեամբ իւրեանց լիալիր որպէս ունիս տեսանել և ըստ այն ունիլ հոդունակիւ ըստ օրինաց տրնօրէնութեամբ իսկական հանճարոյց։

1805 հոկտեմբերի 22

Թիֆլիզ։

լաղագս սինոդոսին այլ
բանք են վասն նուի-
րակաց և ուճկաց են
եպիսկոպոսաց։

Պալծառափայլ կուսականն է ի կողմանս լնլիսավէտասլօլու և լսեմք թէ Նուխու խանն ոչ բարւոք ցուցանելով զնաւատարմութիւն ըստ խոստանալոյն իւրոյ, անդ և ի Շամախի կամ առաքել զզօրս։

Շուշին կալ բարւոք հպատակութեամբ. և որպէս հաւաստի է մեզ որ լալամ ամի լնրևան ոչ լինի գնալ. վասն գարնանն ևս Աստուած լիցի տնօրէն։

Ի մեր սրբազանէն ոչինչ դոլ նոր լուր և Դաւիչն կալ նստեալ լերևան. ասի թէ կորնչել ևս ունի ի մտի, բայց Գալաղիտու բդեչխն հանդերձ երկու որդովքն աստակեալ ի միջոցի 7, աւուրց, եղբալր նորին Իբրահիմ բէկ լաջորդեալ է զտեղին. և Դաւիչն չանալ զի զիւրն սրբոլ աթոռոյն որ լեղբօքէն չկարաց առնուլ թերևս առցէ ի նմանէ. լաղագս որոյ՝ մեք աստէն ունիմք գրել առ նոր բդեչխն և առ երեելիան հալոց զի մի տացեն նմա զայնս։ Եւ միաբանութեամբ առ արժան համարեցաք գրել առ վեհապետութիւն ձեր վասն ալնորիկ, զի թէ կարելի իցէ, ի ձեռն դեսպանին կամ անգ պաշտպանել տալիք և կամ լալոր բերել լինելոյ որպէս և պատշաճ համարեսջիք։

հոկտեմբերի 22.

Յոհաննէս աղօթարար ՅՈՎՀԱՆՆԷՍ արքեպիսկոպոս։

Յոհաննէս աղօթարար ԳՐԻԳՈՐ արքեպիսկոպոս։

Յոհաննէս աղօթարար ՌԱՓԱԵԼ արքեպիսկոպոս։

Նուաստ աբեղալ ՆԵՐՍԷՍ

ՃԿ. *Թուղթ իշխանաց Երևանու առ իշխ. Մինաս Շղիազարեան։*

Վեհապետնեալ իշխանապետ հալոց
Ազալ Մինաս գերապաղձալի
Ողորմած և օգտալէն բարեկամ
և արտացաւ Տէր մեր։

Ի ընէ անտի ի բառնալոլն ճոխալիսառ թագաւորութեանն ազինս Արամեան՝ լորմէ հետէ ենթարկեցան ընդ իշխանութեամբ այլոց ազգաց՝ լորոց և ի տէրութիւնն ցան և ցիր եղեալ սփռեցան և ընդ լծով ծառալութեան նոցա գրաւեցան, նոցին իսկ եղեն ոչ թէ հարկատուք միայն, այլ իբրև զգաբաւոնացիան ջրակիրք և վալտակիրք, և քան զնոսա ես չարագան չաբչարեալք իբ-

րև դղերիս և զմահապարտս. (որպէս լայտ իւկ է)։

Ապա յօրէ լալնմանէ մինչև ցայժմ՝ ի վերայ ամենքան անտանելի նեղութեանց՝ և անըմբռնելի չարչարանաց ազգի մերոյ լոյս և մխիթարութիւն ոչ այլ ինչ է եղեալ, եթէ ոչ օղնականութիւն ամենալաղթ տէրութեանդ ոուսաց, և ողորմութիւն ամենագութ և ողորմածագունեղ կայսերաց դոցին երանելեացըն և ընդ երջանիկան զասելեացն. յորոց զդրունս ես անդադար բաղխելով նախնեացն մերոց հանգուցելոց, և յետ ակնաղէտ լուժ ապասելոյն, գէպ եղև նոցա ասել թէ՝ մանչեցան ոսկերք մեր՝ հատաւ յոյս մեր և մեռաք։

Ապա մեզ յետագալից նոցունց՝ կըրկնապատիկ թշուառութիւնք՝ առ լցեալք զանազան պատժօք և վտարութեամբք՝ կապեալք ընդ մեզ որպէս յերկաթս, սննդակից իւկ լինին։ Զորս թէ մի ըստ միոջէ պատմել ջանացուք, մեզան և քարտէս ոչ բաւեն. զի ի հնումն գնդեմիալի և ի նորումն զ ներսիսի և և զՄօսէսի, և զալլոցն զողբերգութիւնս՝ և մանաւանդ՝ Ցեառն մերոյ իսկ՝ անստուտ և ամենաճշմարիտ բերանով հրամայեցեալն՝ վայ, ալժմ առ մեզ կատարեցաւ անթերի։

Զի ոչ թէ չղեաց միայն և ստնդուաց եզև վայ և անօրինակ պատուհաս, այլ ի մեծաց մինչև ցփոքունս՝ ի ծերոց մինչև ի տըզայս՝ լիչխանաց մինչև ի ռամիկս՝ լազնուաց մինչև ի գեհիկս՝ ի քաղաքականաց մինչև ի չինականս. լամենայն սեռի՝ և լամենայն չափու և հասակի եղև վայ անպատմելի, և կորուստ ըստ ամենայնի։ Զի բան կալծակնամաքուր սուրբ մարգարէին առ մեզ լցեալ կատարեցաւ թէ՝ ամենայն գլուխ ի ցաւս, և ամենայն սիրտ ի տրտմութիւն. և վերջապէս թէ՝ յոտից մինչև ցգլուխ, չիք առողջութիւն։

Ցիրաւի որպէս ասացաք ոչ գոլ հնար բոլորովին ծանուցանելոյն՝ և մանաւանդ՝ մեք ևս ոչ կամիմք ձանձրութիւն տալ անգին անձինդ պատուականի թէպէտ, բայց այլ ով ունիմք մեզ տէր և օգնական՝ և միշտ սըրտոտցաւ ազգիս մերոյ, և հալրաբար հոգացող և յարատև խնամածու, որպէս դուք։

Ո՞վ է ըստ ձեզ բարեկարգ և բարեսահման, և մշտապէս ի բարեգործութիւնս պատապետ վասն սեռիս Արամեան։

Ո՞վ զոյ իւրև զամենաբաղձալիդ սիրեցեալ և ընդունելի լաչս Աստուծոյ, և նորին Պատկերի Ամենազորիս և զթածագունեզ Քրիստոսազօր կալսերդ ինքնակալի, օգոստափառ Մեծիդ Ալէկսանդրի։ (Որ և խնդրեմք՝ կրկին ևս առաւել քան զալգ լինիլ ձեզ փառք և և յաջողութեամբ պերճացեալ) որպէս լերկրի, նոյնպէս և ի լերկինս։ Ուրեմն ահա (ըստ սըրբազան առաքելոյն) էհաս մեզ ժամանակ ընդունելի, և օր փրկութեան. ալի սլարգևեաց մեզ տէր զԱխոյեանդ հաւատոյ, զհաստատիչդ բարեկարդութեանց. (ըստ այնմ թէ՝) երանի է մեզ Իսրայէլ՝ զի հաճոյքն Աստուծոյ ծանօթք մեր են։

Վասն որոյ լսելով մեր զբարեհեռնչ հեռևողութիւն ձեր, միշտ առ ի բարեբեր կարգս և ի օգուտս հասարակաց, համարձակիմք ժեռլ սպա՝ զի և ալժմ ևս ըստ բարեզոյն սովորութեան ձերում, կատարօղք լինիք բանիցն Աստուածալնոց՝ որք խրատեն զմեզ թէ՝ մինչ դեռ ժամանակս ի ձեռս իցէ, զբարիս գործել մի ձանձրացուք։

Ապա՝ զինչ բարեգործութիւն առաւել քան զայս՝ զի վերանորոգել կամեցիք զ 1507 ամաց զլուսաձև հիմնարկեալն՝ և զլուսակառոյց կերտեալն ի Միածնէն՝ զՁառարն հրաշալի զՍուրբ Էջմիածին զարգ Արարատեան, և զմայրն հանուրց հալոց. որ ալժմ անմարդաբնակ լեալ և անչքացեալ քալքալի դեռ ևս մինչև իսպառ։ Ո՞ն և աւազ մեզ, և երանի ձեզ որ չէք տեսանալ ամենևին. զի մինչև ցալժմ քաղցրանուագ սրբասացութիւնք և համեղաձայն փառաբանութիւնք անտի ի բարձունս վերաւաքէին, ալժմ՝ վասն բազմութեան մեղաց մերոց, բուք բունեալք ի գլուխս բարձր պարսպաց և ի ծալրս հրաշազան Գըմբէթացն, վալ վալ կարդան անդադար։ Ալսպիսի թշուառութեամբ մաշիմք։

Ո՞րպիսի գործ արժանաւոր աւելի քան զայս՝ զի զեզս իւրացն հնարեսջիք հրեշտակակրօն միաբանից նորին՝ Արհեաց և վարդապետաց, սարկաւագաց և զպրաց. և բոլոր դասուց հոգևորաց. որք թողեալ զամենայն զինչս իւրեանց, ալսինքն՝ զհալր կամ զմալր. զտուն կամ զագարակ և այլն. և բարձեալ զխաչս ի լուսս իւրեանց՝ հետևեցին գնալ զկնի վարդապետին և տեառն իւրեանց Ցիսուսի. ալժմ գնոյն առեալ ի լուսս՝ չրջելով ի քաղաքս և

ի չէնս. ի փողոցս և ի հրապարակս ի պատշաճաւոր և յանպատշաճ տեղիս, ճարել խընդրեն զապրուստս իւրեանց, և ոչ գտանեն. կամ հաղիւ հազ գտանեն, և զայն ևս մեծաւ նախատանօք և անարգանօք. զի անուանն Աստուծոյ՝ վասն որոյ տոցա հալհոլի և այլն, Ուրեմն՝ լուժ արժան է, օչնել տոցա. որով մասիմք լիրաւի.

Եւ մանաւանդ՝ զիարդ վարձաւորելի՝ և ամենևին լցեալ հոգւով և մարմնաւոր երջանկութեամբ գործ, քան զայս՝ զի այց առնել հնարաւորիք տառապեալ ազգիս մերոյ. որ ահա իրև զհօտ առանց հովուի՝ ի գազանաց և ի նոյն իսկ լիւրմէ վարձկանէ, գիշատի անխնայաբար. և յաջմէ ևս՝ կալին միշտ ի մէջ կերպ կերպ դիպւածոց, և անտանելի չարչարանաց ազգ մեր թէպէտ, որք են բնակեալ ի սահմանս Ատրպատականի. զի ահա քան զ10 ամ աւելի եղեւ, որ երևեցաւ կարապետ նեռինն, և զանպատմելի աղէտս կայանալ պատճառեաց ի վերայ ազգի մերոյ. մանաւանդ բնակչացս Արարատեան գաւառի, (որպէս և լուեալ ես էք). Բայց և զոր պատճառ ողորմելով տիրելոյն նոցա մեզ, հաւատարմութեամբ ծառայելն մեր. վասն որոյ՝ իբրև ստացուածոց՝ այնպէս գթալին ի մեզ, մինչև ի հրատարակելն բարեհամբաւ լրոյ գալստեան քաջայաղթ զօրացս Ռուսաց.

Թէպէտ՝ և չանամք ըստ ամենայնի հակիրճ առնել զբանս մեր՝ (որպէս և խոստացեալ), սակայն՝ ոչ լինի և լռելոյն հնարաւոր ուրեմն՝ նիւթոց բանիցս՝ լսել աղաչեմք փոքր ի շատէ.

Զի մինչև ցայժմ որպէս ասացաք՝ ոչ գոյր գեղութիւն ի խորհուրդս նոցա վասն մեր. այլ լոյս մտերիմս կարծելով, խնայէին ի մեզ վիշտոցաց և ի մեծամեծացն, մինչև ի գեհենիկան. բայց այժմ՝ քան զոտսա լոյժ առաւել թշնամի համարելով, այնպէս նեղեալ խորչին ի մէնջ, և զնորազոն չարչարանս հնարեն վասն մեր անխիղճ բարբարոսքն. Եւ քան զնախանձացն մերոյ գանհնարին ցաւս յաւելուն ի վերայ ցաւոց մերոց. Բանզի՝ թողեալ զամենայն զինչս և ստացուածս մեր՝ զվաճառչաղարգ չինուածս և զնաւրենիս մեր՝ զկահ և զկարասիս տանց մերոց, մազապուրծ զերծեալ գիմեցաք առ սոսա որպէս առ բարերարս ի խնամածուս, միայն զգերիս մեր ծուցանելն բաւական համարելով մեզ պարգև. և մանաւանդ՝ ընդ հովանեաւ տէրութեան քրիստոնէից զովանալ կարծելով, երանելիս զմեզ գոլ դիտէաք. այժմ՝ զներհակն ունիմք ստացեալ. Զի խղճալի մնացեալքն երկրին մերում ի բարբարոսացն պարսից կրեն զհարուածս, եօթնապատիկ խստագոյնս քան զեգիպտացոցն. և մինչ թողեալ ըստ մեզ զամենայն՝ դէպ լայկոյս ելանել կամին, ըմբռնեալ պարսից զինքեանս գլխատեն, և գերեացն տիրեն. որպէս և արարին բազմաց խղճալեաց. Եւ աստ եկեալքն ևս՝ լոյժ անասելի տառապանօք մաշին. զի ի ներքուստ արհաւիրք անհնարինք չդադարեալ, և յարտաքուստ մարտք հոգէմարտիցն փակեալ գոլով, ոչ գտանի առ մեզ զնչուլ իմն խաղաղութեան, այլ լսեմք զգոլն միայն, և ոչ զիաեմք թէ ուր է խաղաղութիւնն. Ահա աստքիկ են մատունք վայոցն և թշուառութեանցըն, կրկին քան զնախնեացն առաւեալ առ մեզ. Զի նոքա թէպէտ և պատահէին վտարաձութեանց՝ այլ և գոյր նոցա առիթ մխիթարութեան, որպէս լուեալ է մեր կամ տեսեալ ևս.

Զի նախնեացն մերոց սուգ և խաղաղութիւն էր թէպէտ՝ զրկիլն ի պերճափառ թագաւորութենէ, և ի բարեզարդ ճոխութեանց՝ սակայն մխիթարէր զնոսա հանրապետութեանն իշխանութիւն, յաջողեալ և զարգարեալ միահեծան գաւազանաւ. այժմ՝ հալրապետն մեր և գլուխն՝ ի ձեռս իւստաց թշնամեաց մատնեցեալ. և Աստուծոյ հարան նորին քաջահերձեալ. լուսատուին և գերազարդ ծնօղն մեր խաւտառակեալ. իբր զպոռնիկ մի և այրի յալլազգեաց չօչափեալ. մաքուր աղօթք և զարդք սրբագործ ի հրապարակս վաճառեալ. և ի փեսայէ և ի լորդուց զրկեցեալ. ձեռն ի ծնօտի անմխիթար և անլուս ողբալ. Մեք որով մխիթարիմք.

Նախնիքն մեր թէպէտ՝ կրէին չարչարանս յանօրինաց՝ սակայն՝ և մխիթարէին Լուսափայլութեամբ Սրբոյ Աթոռոյն՝ և պահպանութեամբ ի նմին եղեալ Սրբութեանցն. և արազահաս հայցուածովք Սրբակրօն և Աղնուաբարո միաբանից նորին. այժմ՝ սարսափելի գործիքն Աստուածակինք և բուժիչքն համայնից ախտից՝ չարժեալք Աթոռոյն իւրեանց և անլալտ եղեալք. ցլեալք աստ և անդ, և մուծեալք յանպատշաճ և յանարժան

տեղիս. ղրկեալ եմք ի նոցունց հրաշագործութեանց. և Սուրբ Էջմիածին, և պաշտօնեայքն ևս՝ որպէս ասացաք, այնպիսի թըղչուատուբեամբ կանուն Ապա մեք ողորմելիքս որով մխիթարիմք։

Մխիթարէին նախնիքն մեր՝ համալն Աստուածահրաշ վանօրէիւք, և Պալծառազարդ սուրբ Սկեղեցւովք. և ի մէջի նոցին մատուցեալ հոգեկեցոյց սրբասացութեամբք և պատարագօքն. այժմ՝ բոլոր ուխտք և վանօրայք՝ և ամենայն ղարմանահաձ նկեղեցիք քաղձալի երկրին Արարատեան՝ անչքացեալք բնաւին՝ խաւարեալք ի լուսոյ՝ խափանեալ ի սաղմոսերգութեանց և ի սուրբ պաշտամանց՝ զանգք օթաղալին ի նոսա, և աւազակք բնակին։ Ո՞րով մխիթարիմք։

Մխիթարէին մեծք և փոքունքն մեր բնակեալք ի վայելչադիր սեպհական չէնս և լապարանս իւրեանց՝ և ըստ կարողութեանց իւրեանց զաղքատս և զպանդուխտս կերակրելով, և զերեաց բազմաց օգնելով. այժմ՝ պանդխտացեալ ամենեքին մեծք և փոքունք՝ իշխանապետք և իշխանք՝ քաղաքալինք և դիւզականք. հողևորք և մարմնաւորք. և որփռեալք ամենեքին աստ և յայլ երկիրս. անչատեալք հարք յորդւոց, և մարք ի դստերաց. ոչ տեղեկանան և միմեանց մահուանցն ևս. և ոչ կարեն ճարել ղհոգեպահն. մինչ ղի բազմաց ի դէպ է ևղեալ, վաճառել զգերիս ևս։ Չիարդ ոչ եղև մեզ վայ և եղուկ անտանելի։

Վասն որոյ՝ մեք բնիկ բնակիչք Արարատեան գաւառի, և իշխանքս ներևան քաղաքի (ծժդեհեալքս այժմ ի վրացստուն.) ոչ կամելով մեր ղի ղերկայնութիւն բարձր և պատուական բազկին ձերոյ ծագէ ի ծագս ոչ վայլեսցի. կամ թէ՝ զլուսավայլութիւն բազմաճաճանչ ճրագիդ վառեցելոյ ի սեաս Արամեան՝ ընդ կայսերականաս թագաւորեսցի, այլ բոցափայլելոյդ ղլոյն ի վերայ աշտանակի բարեպաշտութեանդ՝ ծակոտեսցէ զաչս թշնամեաց, և լուսաւորեսցէ զմերձաւորս ձեր։

Այլ և՝ զարժանաւորն օրհնութեանց բազմաց զիւշատակ արդարոյդ՝ զովութեամբ լիցի՝ ի լիշումն բարեկենդանութեան համալն քաջազանց յազգս յաւիտենից, և մի լռեսցի. ուրեմն՝ բարերարն եղեալ բոլոր տպատակելոցս հալոց՝ լոյս և օգնական մեզ ճանաչելով, զբարեխոհ և զբարեջան իշխանապետդ մեր, վստահացեալ ի բազմերախտութիւն ձեր, լայտ առնեմք զդոլդն ինչ մասն ի ցաւոց մերոց բազմաց։

Ապա՝ և մեզ ևս բերան փոխանորդ արարեալ զեղբայրդ մեր պատուելի՝ զՏիրացու Գէորգդ Մելքիսեթեան՝[32] զեղբօրորդիդ հոգեւոլոս երջանիկ հայրապետին Տեառն Սիմէոնի հանդուցելոյն. զոր և ինքն իսկ ականատես փորձակից է մեզ, և վշտակից։ Որում վասն ալսմ իսկ՝ հարկ եղև զալ ի բարելի սպաս ամենամեծ իշխանապետիդ զերաբաղձալուդ՝ և մի ըստ միոջէ ծանուցեալ զամենայն զցաւս մեր, եթէ արժանասցի վեհափառ պատուականութեանն ձերում, ի ծառալութեան զըտանիլ։

Գանդի՝ մեք այնու լուսով սպասեալ կամք՝ իցէ թէ մինչև ցայժմ հոգացեալ իցէք զչշելութիւնն նորոլս իսրայէլի, ի ձեռաց փառաւոր ազգանացս։ Ապա՝ և ունիմք զօրաւոր պատճառ հաստատուն լուսով միաւոլս մերոլ։ Գանդի՝ չնորհեաց անմխիթար և անօգնական աղինս Արամեան բնութեամբ բարին՝ գնորդ ճարտար մերդ Մոսէս՝ և ձեզ լԱստուածակոլս կողմանէ և ձեռնտու զեռաս մեծդ մեր զդերապիալլեալդ քան զԱհարօն, զՏէր Եփրեմ Արք եպիսկոպոսդ Սրբազան. որք կարող էք հանել զմեզ լերկիրն աւետեաց. ապա թէ ոչ, մինչ ի վայրկեան ժամանակի, անհամար տապաստ անկեալք լնուն զերեսս դաշտաց, քան դհնոլն անապատի լիրաւի։

Եթէ զհոգացեալդ մեր նորդ Զօրաբաբէլ՝ վերանորոգել կամիցի դԱստուածեան Տաճարս այս Քրիստոսակերտ՝ (զիսկ և զճշմարտութիւնս օրինակին այնմիկ՝) միթէ չդոլ օգնական ձեզ մեծ Գահանալդ Քեսու՝ զճանապարհ տեառն ընթացօղդ՝ և զհրամանս տեառն պահօղդ՝ զարժանաւորդ պճղնաւորի և խուրի, զլոգևներախտ հալրդ մեր։

Եւ թէ՝ ըստ մեծին Տրդատալ վրէժիսընդիր ընալ կրօնիցս աստուածպաշտութեանց ուղղեալ հաճիցիք՝ և ժողովեալ զանտրտունջ մնացեալսս ամենայն զոսկերսս և զմարմինս ձեր վշտացեալք՝ միթէ չիցէ ձեզ կամակից և ջատագով ճշմարտութիւնն նորդ լուսաւորիչ և պարծանքդ ազգի մերոլ՝ Աւաքելաշնորհ Տէրդ մեր։ Որք եթէ ի մի եկեալ խորհրդով

(ի հարկէ՝ և ըստ ձեզ այլ բարեկամս ունելոց էք.) զինչ և առնել կարիցիք, այնժամ Ամենազօրին Աստուծոյ, տկարասցի ի ձէնջ և ոչինչ։

Զի լուսամբ անդադարելի լինիլն բարեխիզճ խնդրանաց ձերոց յողորմածադունեղ Կալաւորէդ Մեծէ։ Ծորմէ՝ և մեք ևս ըստ ամենայնի դոհունակութեամբ ընդ երկայն աւուրբք լինիլն հալեցեմք. զի վասն մեր թէպէտ ոչնչացուց զբաւական ծախս և զղօրս, որպէս լաւացէ և այժմ ևս՝ սակայն վաստակազդութիւն մեր ոչ ետ մեզ արժանանալ մտանելոյ մեզ ընդ հովանեաւ դորին մեծազօր գթութեանն։

Զի որք չէին լիշեալք բնաւ՝ նոքա դրաւեցան ընդ իշխանութեամբ դոցին, և մերն բարեբուղխ երկիր՝ լորում է և հաստատութիւնն հաւատոյ և միխիթարութիւնն աղդիս հասոց, առաջինն եզև լեռին։

Ահա այս է վերջին ծանուցումն աղերսանաց մերոց՝ թէպէտ և առաջինն ևս է, զի քան զայս աւելի ոչ գոյ մեզ համարձակիլ ի խնդիր ինչ. թէև լոյժ ցանկամք՝ հնար ևս չգոյ, այլ ապաչափ միայն. զոր և տէր արդիւնաւորեսցէ. և մի ասել տացէ մեզ ապստհետև զգանգատ մարգարէին թէ՝ տէր մինչև երբ աղաղակիցեմք և ոչ լուիցես գոչիցեմք առ քեզ զրկեալ և ոչ փրկիցես։ Եւ որպէս ասացաք՝ թէ դէպ լիցի թղթաբերիս արժանանալ ձերումդ Պատուականութենանն, ինքնին պատմիչ է յամենայնի։ Ծորումդ հալցեմք լսել և հետևիլ, որպէս վայել է ամենասիտաւոր անուան ձերոյ։ Եւ լիցի ձեզ լուսոյդ և պարծանացդ Արամեան ցեղի և մանաւանդ մերոյ յայտնեալ ծառայիցս՝ կեալ յամայր ամաք և բազմաւ խաղաղութեամբ ի բերկրութիւն և ի պարծանս մեր։

Որք եմք ամենախոնարհ ծառայք իշխանքս Սրեանոց։

Ծառայ Օհանէս Թառայեվեն
» Աստվածատուր Ցարութիւնով
Խոնարհ ծառայ Գրիգոր, Մանուչարեան Ռալալեարով
Խոնարհ ծառայ Զոհրապ տէր Մաթեոսեան Խամով
Նրամ. ծառայ Աղաբարով.
Աղէկսանդր փոքր ծառայ Աղաբարեան։
Ծառայ Մարտիրոս մանտիակի Ծորեան։
Խոնարհ ծառայ Ստեփան տէր Նահապետեան։
Ծովակիմ ծառայ Սահակի որդի։

1805 ի Նոյեմբ. 20.
ի Թիֆլիզ։

ՃՀԵ. Կոնդակ Դանիէլ կաթուղիկոսի առ Ծովակիմ աղային։

Դանիէլ արքեպիսկոպոս Ծառայ Քրիստոսի Աստուծոյ ողջոյն և Աստուածային օրհնութիւն մատուցանեմ ազնիւ սիրականիդ իմոյ ի Քրիստոս զօրացելոյ մահտեսի Ծովակիմ Աստուածասէր և բարեպաշտ աղային և քոյ ամենացն ամենեցուն. որոց լիցի ի տէր խնդալ Ամէն։

Ծանիր ցանկալիդ իմ յառաջ քան զայս դրեցի զպատասխանի դրոյն քոյ և ապաւեմ ևս որպէս ծանոյց ազնուականիդ առ ի դիտել դողջութենէդ և զուրախականն կեանացդ և ուրախ լինել և միշտ աղօթող եմ վասն կենաց և բարեկեցութեանդ զոր տէր Քրիստոս պարգևեսցէ քեզ դիւապաղ կեանս և բարեկեցութեամբ պահեսցէ խնդրեմ ի քէն դի ազանելի բաբուճս մաշեալ է մէկ չուխտ բաբուճ լղես ինձ որ հագնեմ քեզ օրհնող լինիմ և լեր ողջ և ցընծուն կենօք ի տէր իմ ամէն։

Դրեցաւ 1806
և ի փետրվարի 20
ի Մարաղայ։

ՃՀԶ. Թուղթ Ծովակիմայ Սաղաթէլեան առ ալ. Հայրապետ։

Գերապատիւ պարոն Յակոբապետ

Պարոն Սերոբին տուած գիրդ հասաւ ամենայն ախէն (՞) իմացանք վասն չուխալի կողմանէ գրած ես թէ մէկ բանի հետտակիչ անես էս քանի օրս մուհարեմէ աստուծով անց կենալ մէկ կերպ կանեմք։ էս գիրս սերոբազանին գիրն է ինձնից մի չուղթ փափուկ էր ուզեր տեղս չգայ։ հալբաթ 1 չուղթ չուտ առնես ղրկես քանի փարալ է նէ ես կուտամ։ էստեց առաջ էլ սրբազանին գիրն դար որ մեր Դրիգորին հետն ղրկեցի եկաւ գլխներս խառնակ էր յատուկ դիր չգրեցինք Ներսէս և Թարեզես բան էլ չգայ և այլ ախէն (՞) խէր։

Ծառայ

Մահտեսի ՅՈՎԱԿԻՄ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ

1806 մարտի 14-ին
Թաւրիզ

ՃՀԷ. Կոնդակ Դանիէլ կաթուղիկոսի առ ալ. Կարապետ։

Յիսուսի Քրիստոսի Ծառայ տէր Դանիէլ կաթուղիկոս հայոց Քրիստոսականն ողջոյն և օրհնութիւն մատուցանեմ ազնիւ սիրելոյդ իմոյ Աստուածասէր պարոն Կարապետիդ և տան քումն որոց լիցի ի տէր խնդալ. Ծանիր սիրական իմ ի փետրվարի եղեն գրեցեալ գիրն քոյ եհաս առիս ի մայիսի մէկն և մորմոքեցուցիչ բանք քոյ ցաւեցուց զսիրտ իմ բայց ողջութիւնդ և առողջութիւնդ գիտացեալ ուրախ եղէ և օրհնեցի զարժանիդ օրհնութեան զոր տէր զօրացուսցէ և պահեսցէ անփորձ կենօք քոյոյնովք ամենիւք. բայց այն զոր դրեալ էիր թէ առաջ ինձ Դանիէլի մալն քոյ քովն է ուստի ինայ ինձ մալ։ զի առ քեզ լիցի և կամ այլ ոք այդ ես իմ մեղացս է որ չեղեալն ստոր սանն զմէնջ իսկ զրամին խընդրելոյ կողմանէն հայ օրհնեալ ես չես մոռացեալ զքեզ հոգւոյ թէ որպէս կատարեսցէ ալգի պանդխտութենդ ես ինչպէս լինի կապրեմ դու զքեզ պահպանեալ և Աստուած լիցի քեզ օգնական և պահապան և ով լիցէ կաքսեալ Դաւիթն ես ոչ դիտեմ կամ գրիդ

միջի թաղկիրէն լում էիր դրեալ այն չիմացալ կամ տիրացու Նահապետի . . . . . *) կենացէն համբաւ ինչ չէիր դրեալ չիմացաք մինչ լինելը Աստուած հոգալ երբեմն ղորպիտութիւնդ գրեալ չի դիտացից և ոգջ լեր ամենայն ցնծութեամբ հանդերձ քոյոլ նովք ամէն. Աստուածս սէր մօրդ և օրհնեալ կենակցոդդ և Աստուծով զ·րացեալ Ովակիմին ողջոյն և Աստուածալին օրհնութիւն տամ։

Գրեցաւ ի 1806ի
ե ի մայիսի 2
Մարտղալ։

ՃՀԳ. *Թուղթ միաբանից ս. Էջմիածնի առ Կայսր ռուսաց։*

Ամենալուսափայլ տիրապետող մեծ թագաւոր կայսր Ալէքսանդր Պաւլովիչ ինքնակալ ամենայն ռուսաց Ամենողորմած թագաւոր։

Ձեզ Աստուծով մի միայնակ լոյս և ապաւէն հոգեւորականաց և մարմնաւորականաց բազում աղջաց քրիստոնէից։

Պարտաւորիմք զուիւ և զգիչեր անհանդիստ բարբառով օրհնել զանգին կենսս ամէնողորմած թագաւորիդ և փրկչիդ մերում, և զաթոռ սուրբ կայսերութեանդ ամենայն ռուսաց. և առաւել ես պարտաւորիմք անդադար բերանով մատուցանել առաջի աթոռոյ ողորմութեան ձեր զչնորհակալութիւնս գետնամած երկրպագութեամբ. փոխանակ զի նմանեալ Աստուծոյ փրկչին աշխարհի, երկբորդ փրկիչ եղէք մեզ։

Գանգի ով Ամենարարեպաշտ քրիստոսազօր թագաւոր՝ լուսաջադոյն իսկ աղաղակ ողորմութեան մեր և համօրէն հայոց աղջին Արարատեան լուսամբ, թէ ըստ փոքու մասին հասուցեալ իցեն ի քաղցրալուր լունկն մեծութեան ձեր՝ ազգասիրեր և արժանաժառանգ կաթուղիկոսն ամենայն հայոց՝ Դանիէլ զրկեալ և նեղեալ բազմաչարչար Սրբազան պատրիարգն և առաջինն մերումս միաբանութեան՝ Ռուսաստանու հայոց առաջնորդ գերապատիւ Եփրեմ սրբազան արք եպիսկոպոսն, և հարազատ պօզդանն տէրութեան ձերոյ և վէքիլն ազգի մերոյ և Արարատեան Աթոռոյն վեհաղնեալ Մինէ Լազրիչ Լազրեան երևելի իչխան հայոց, և լուսնի եղեալ իցէ Ամէնողորմած մեծութեան ձեր, թէ զիարդ անձնասէր գտաւ և անձնընծալ եղև Դաւիթ կրօնաւոր, և գործակցութեամբ Յովսէփ պատրիարգի աչակերտ Գրիգոր վարդապետի ընդդէմ կանոնաց առաքելոց և հալրապետաց սրբոց՝ և ներհակ կամաց ընտրութեան հոգևորականաց և մարմնաւորականաց ազգի հայոց՝ վատնութեամբ գրամոց ի ձեռն կաշառաց վեր ի վայր տապալեալ զամենայն բարեկարգութիւն ազգի և եկեղեցւոյ Հայաստանեայց. լսիչտակեաց զաթոռ պատրիարգութեան բռնութեամբ հեթանոսաց. և այնուհետև զամենայն զհոգևորականս և զմարմնաւորականս Արարատեան առեալ զէն իւրոց անիրաւութեանց, լառաջ և լետոյ եկաց ինքն ըստ սաղմոսողին՝ լամենայն ճանապարհս որոչ է բարի, և գործեալ զամենայն չարութիւն առանց ձանձրանալոյ, լաւել ևս ըստ հանգոյից իւրոց առանց ահին Աստուծոյ դրեալ ի բերանոյ հոգևորականաց և մարմնաւորականաց վասն ապօրինաւորութեան իւրոյ զջատագովութիւնս բոլորովիմք սուտս՝ առ ամենայն տեղիս, մինչև լանդգնեցաւ բազմիցս և անպատկառաբար գրել ի սարսափելի գուռն ողորմութեան և զամենեսեան զնոսա՝ ետ մեղ կնքել և ստորագրել սաստկութեամբ անողորմ գանից և տանջանաց։

Ո՛չ է ի ծածուկ լամենալուսափայլ մեծութենէդ ձեր՝ նաև այն, որ հղօրացուցեալ ըզբռնութիւն իւր ի վերալ մեծի և փոքու անալցելոյ ազգիս հայոց՝ լետ ամենայն անբարի գործոց իւրոց, զարժանընտիր ամենասուսական փափագելի Դանիէլ պատրիարգն ամենայն հայոց, զկնի անօրինակ բազմագիմի տառնջանաց և չարչարանաց՝ մատնեաց ի ձեռս հեթանոսաց, որ այժմ անհատասիկ է ի գերութեան լերկիր բարբարոսաց՝ և որպէս լայնեամք մեք ճշմարտապէս, մերձ էր ժամանակ՝ լորում զամենեսեան զմեզ սպառնալ էր չարաչար և դառն մահուամբ։

Իսկ արդ օրհնեմք զանուն մարդասէր արարչին Աստուծոյ՝ և օրհնեմք զանգին կենսս փրկողիդ և ազատողիդ զկեանս մեր Աստուածագուբ թագաւորիդ մերում. զի ըստ Ամէ-

*) Ընդ[illegible]

նողորման քարեհաճութեան կայսերականի մեծութեան ձեր՝ քաջասիրտ հզօր կուսակալն կողմանեաց և մեծագործ յաղթող զօրապետ պայծառափայլ կինիադ Պաւլ Դիմիտրիչ Ցիցիանովն՝ եկեալ ժամանեալ անդ ի Արարատ բուռ քարձր փառաւորագոյն ղօրօք ռուսաց. նոր եղեալ մեզ Մովսէս փրկեալ յեգիպտական գերութենէ և ապրեցոյց զկեանս հոգևորականաց և մարմնաւորականաց քազմաց Արարատեան երկրին. այլ և ազատեալ ի թշնամեաց վտանգէ զառ ձեռն եկեալ մատուռս սրբոց և զզարդս տաճարի Արարատեան Աթոռոյն մերում էջմիածնի. ե յամի 1804, յամսեանն սեպտեմբերի, նման ցեսու Նաւեալ քաջազօր զօրութեամբ քերեալ անվտանգ՝ զամենեսին առ հասարակ ապահովեցոյց ընդ տիեզերատարած ամենամեծ հովանեաւ սուրբ կայսերութեան ձերոյ. Նոյնպէս և ի ներկայ յայսմ ամի՝ յամսեանն մայիսի, կրկնակի մեծացուցեալ ի վերայ մեր զողորմութիւն ձերինդ կայսերականի մեծութեան, հասոյց մեզ պարգև երկնաձիր ի մեծագոյն մխիթարութիւն ամենայն ազգի հայոց, զմիակ մխիթարութիւնն մեր Քրիստոսի Աստուծոյ պատուական արեամբն ներկեալ՝ պաշտելի սուրբ Դեղարդն, հանդերձ այլ մասամբք սրբոց և եկեղեցական զարդուք, որովք ամենեքումբք գտեալ զքաւական ապահովութիւն, ունիմք ղուրախութիւն ոչխոյն ազգովին՝ և լի եմք յուսով՝ թէ ըստ առատութեան չնորհաց ողորմութեանն Աստուծոյ հասելոյ ի վերայ մեր, որպէս փրկեաց զմեզ և զլիշեալ սրբութիւնսըն և զզարդս եկեղեցական հզօրեղ ազգ մեծազօր կայսերութեան ձեր և կարօղ քազուկ ամենողորմած տէրութեան ձեր ի ձեռն քաջազէն զօրապետի ձերոյ և քարերարի մերոյ պայծառափայլ կինեազ Պաւլ Դիմիտրիչ Ցիցիանովի նոյնպէս փրկեսցէ և զերկիր հայրենեաց մերոց և զքրիստոսահիմն աթոռ սբ. էջմիածնի, և աղաւտեսցէ ի գերութենէ զԱստուածընտիր սրբազան պատրիարգն Դանիէլ, և անթերի լրութեամբ՝ ամենայն եկեղեցւոյ Հայաստանեայց վայելեսցուք առ հասարակ զմեծ փրկութիւն ի փառս Աստուածահաճոյ մեծաշուք սուրբ կայսերութեան ձեր.

Ապաքէն զօր չնորհակալութիւն՝ կամ զօր գոհունակութիւն փոխանակ այնչափ առատացեալ ողորմութեանդ՝ ամենողորմած թագաւորիդ մերում կարօղ իցեմք մատուցանել առաջի աթոռոյ ողորմութեան ձերոյ. բայց միայն զաղօթս առ բարձրեալ Աստուած վերամատուցանելով, ամենեքեան միաբերան քազկատարած մաղթանօք ասեմք միաձայնութեամբ՝ հաստատուն պահեսցէ տէր Աստուած աթոռ քարերար կայսերութեան ամենայն ռուսաց յաւիտեանս-յաւիտենից. և տացէ ամենողորմած թագաւորիդ մերում զառողջ կեանս երկայն աւուրք և տարածեսցէ զիշխանութիւն քարերար կայսերութեան ձերոյ՝ ի ծովէ մինչև ի ծով և ի գետոց մինչև ի ծագս աշխարհի ըստ հոգևնուագ մարգարէութեանն. Ամէն.

Այլ և վստահացեալ յամենատաստ ողորմութիւնս ձեր, խնդրեմք զթալեալ, յաթոռոյ ողորմութեան ձերոյ՝ զխնամս և զողորմութիւնս ձերոյ կայսերականի մեծութեան առ ողորմելի և անայլեալու ազգս հայոց և առ Արարատեան աթոռս սուրբ էջմիածին անսպառելի ունել, և ամենողորմածաբար պահել անխուսափելի զքաղցր ակնարկութիւն ձեր ի վերայ զերեալ և վշտացեալ սրբազնակատար Դանիէլ պատրիարգին ամենայն հայոց, և ի վերայ ծայրագունին մերում միաբանութեան քարձրապատիւ Եփրեմ արքեպիսկոպոսին Ռուսաստանաց հայոց որ ընտրելագոյն է ի մէջ համայն հոգևորականաց ընդհանուր հայոց. նաև ի վերայ Մինէ Ալաղրիչ Ալաղրեան վեհագնեալ իշխանին հայոց՝ զոր որպէս Դանիէլ սրբազան պատրիարգն մեր, նոյնպէս և մեք ամենայն միաբանութեամբ կարգեալ եմք մեզ փոխանորդ և վէքիլ՝ զի խորհրդակցութեամբ և գործակցութեամբ գլխաւորացունին մերոյ Եփրեմ արքեպիսկոպոսի լայդր ի դուռն ողորմութեան եղիցի մեր ամենեցուն քերան և լեզու և ի գիմաց մերոց զամենայն զպատկանեալ հարկաւորն ազգի և սրբոյ աթոռոյն մերում էջմիածնի և ամենայն հայրենեաց մերոց՝ լայտնեսցէ լիւրաքանչիւր ժամանակս առաջի ամէնողորմ աթոռոյ հայրախնամ սուրբ կայսերութեան ձերոյ որ է յոյս ամենայն հաւատացելոց յետ Աստուծոյ.

Ողջ լեր կարօղ և՝ քարձր ինքնակալ ողորմած մեծ կայսր և ամէնողորմած սուրբ թագաւոր հանդերձ թագատիկ կայսերուհի

ամենաբարեպաշտ զուղակցաւդ և ամենայն Աստուածապարգև թագաւորիս պալատական նօքդ, և Աստուած ամենակարող արասցէ զաւուրս ձեր իրրե զաւուրս երկնից ամէն։

ՃՀԵ. Թուղթ մխաբանից ս. Էջմիածնի առ կն. Պաւլ Ղ. Ծիցիանով։

Պայծառափայլ կնիւաղ
Պաւլ Դիմիարիչ
Բարերար և ողորմած ակր

Ճանաչել պարտ է զվաստակաւորս, ասէ առաքեալն և արդարև եթէ մարդ բանաւոր՝ ոչ ճանաչէ զիւր բարերարն և զիւր ողորմածըն, կորուսանէ այնպիսին զշնորհ բանականութեանն, և ըստ աւետարանչին Սոհաննու հաւաստի է՝ թէ ոչ ճանաչէ նաև զԱստուած զարարիչն իւր. քանզի՝ առնել մարդկան զբարութիւնս, է գործ Աստուծոյ. և ամենայն մարդ բարերար՝ է պատկեր և վոխանորդ Աստուծոյ։

Շնորհ ունիմք Արարչին մերոյ, զի թէպէտև անբաւականք ոմանք եմք ի մատուցանել բարերարաց մերոց զարժանաւոր ծառայութիւնս ի նշան ճանաչելոյ մեր զբարերարութիւնս երկնաչափ բարձրացեալս լատկապէս ի վերայ չարչարեալ և վշտացեալ միաբանութեան հոգևորականաց Արարատեան աթոռոյն մերոյ սրբոյ Էջմիածնի, այլ բանականութիւնք մեր առ մեզ են, և ճանաչեմք զբարերարն մեր ամենողորմած ինքնակալ կայսր ամենայն ռուստաց առաջնորդ Սլեքսանդր Պաւլովիչ, փրկիչ և ազատօղ կենաց բազմութեան հոգևորականաց և մարմնաւորականաց Արարատեան, որոյ տէր Աստուած մեր արասցէ զաւուրս անգին կենացն իրրև զաւուրս երկնից. Ամէն։

Ճանաչեմք և զպայծառափայլ հզօր կուսակալդ և քաջ զօրապետդ նորին կայսերականի մեծութեան. փրկագործութեան մեր գործիք ի կարողագոյն տիեզերատարած Աջոյ նորա, և բարերար մեր՝ իբրև զՄովսէս, զի ազատեցեր զմեզ և զկեանս մեր ի ձեռաց պատկան նեղութեանցն զորս անողորմաբար օր աւուր առաւելուլք ի վերայ մեր Դաւիթ անձնասէր և անձնընծայ կրօնաւոր. և իբրև զՅեսու Նաւեայ զի կարողութեամբ Աստուծոյ առաջնորդեալ ի միջոյ բազմութեան թշնամեաց մերոց անվտանգ զմեզ զամենեսին ածիք յայսր ընդ տիեզերածաւալ հովանեաւ նորին սուրբ կայսերութեանն։ Այլ և ճանաչեմք զպայծառափայլութիւն ձեր բարերար եկեղեցւոյ մերոյ ըստ օրինակի նախկին Լուսաւորչին մերոյ սրբազան առաքելոյն Թադէի, քանզի որպէս ի ձեռն նորա, ընկալաւ աղգն Հայոց Քրիստոսի Աստուծոյ արեամբն ներկեալ զԱստուածամուխ սուրբ Գեղարդն և զպայծառութիւն եկեղեցւոյ. նոյնպէս և այժմ զնոյն Քրիստոսամուխ սուրբ զէնն ևս և զալբս մասունս սրբոցն Աստուծոյ և զզարդս պայծառութեան Արարատեան աթոռոյն ի ձեռն պայծառափայլութեան ձերոյ ստացաք զարձեալ առ որ ն ունիմք մշտ զլիշատակութիւն ձեր ի բերան մեր և օրհնեմք զկեանս ձեր ամենայն միաբանութեամբ, զոր և տէր Աստուած օրհնեսցէ յաւիտենական անանցանելի օրհնութեամբ. Ամէն։

Իսկ ապա՝ քանզի յարմարութեան ժամ՝ակի սպասելով երկարեցաւ միջոցն և մինչի ցայժմ ընդ դէմ օրինաց բանականութեան լռեալ մնացաք վասն չնորհակալութեան մերոյ յաղագս առատ ողորմութեանց նորին կայսերականի մեծութեանն զորս վայելեցաք և վայելեմք, և առատապէս ևս վայելման յուսով լինել ամք առանց երկբայելոյ, ամէն իրի ղի մի մինչ իսպառ զշնորհ բանականութեանն կորուսեալ երևեցուցուք, ահա ի նել կայս համարձակեցաք միաբանական ստորագրութեամբ մատուցանել գրով առաջի Ամենող ողորմութեան նորին կայսերականի մեծութեանն զպարտաւորական շնորհակալութիւն մեր և ընդ նմին վստահացեալ յամէնառատ ողորմութիւն նորա առ աղգս հայոց, յայտնեցաք նորին կայսերականի մեծութեան վասն վեհազնեալ Մինէ Լազրիչ Լազրեան երևելի իշխանին հայոց. թէ որպէս Դանիէլ Սրբազան պատրիարգն մեր փոխանորդ և վէքիլ է կարգեալ զնա անդ ի դուռն ողորմութեան, նոյնպէս և մեք կարգեցաք զնա վէքիլ և փոխանորդ զի ի դիմաց մեր ամենեցուն նա ինքն Մինէ Լազրիչ Լազրեան վեհազնեալ հարազատն ազգի մերում և Աթոռոյն Արարատեան, եղիցի մեր ամենեցուն բերան և լեզու, ծանուսցէ զպատկանեալ հար-

կաւորն լաղագս մեր և սրբոյ Աթոռոյն մերում ուր արժանն իցէ։

Եւ օրինակն նորին ահա ալս է զոր մատուցաք Պալծառափայլութեան ձերում։

Խնդրեմք ի բարերար և լողորմած աեառնէդ մերոյ, զի ըստ որում դուք էք մեր պաշտպան և հովանի ի յամենայն ժամանակի, զայն գիր ևս Պալծառափայլութիւն ձեր հատուսջիք ուր հարկն է։ Մի գիր ևս որ գրեալ եմք առ վեհազնեալ իշխան հայոց Մինէ Նաղրիչ Աբգրեան հարազատն մեր՝ բան չնորհակալութեան մերոյ և խնդիր զի յանձն առցէ լինիլ մէզ փոխանորդ և վէքիլ, զայն ևս խնդրեմք ողորմածաբար հատուցանել առ նա։ Եւ զփոխանակն ամենայն բարեբարութեանց ձերոց որ առ մեզ, հատուսցէ ձեզ ամենաբարին Աստուած՝ և եղիցի նա ինքն ողորմած ի վերալ ձեր և պաշտպան կենաց ձերոց, որպէս Պալծառափայլութիւն ձեր եղէք մեզ մինչև ցայսօր ժամանակի։

ՃԽԶ. Թուղթ Ներսէս արքեպիսկոպոսի Թիֆլիզոյ առ աղայ Մինաս Հազրեան։

Ցորժամ լսելի եղև թէ Քօլեանն գալոց է ղէպ ի Ռուսաստան ամենայն միաբանութեամբ դիր մը դրեցաք առ հասարակութիւն Պօլսոյ, գիր մ՚ևս առ վեհազնեալ բարերարդ մեր լաղագս բերան և լեզու լինելոյ մեր առ մենեցուն, ըստ որում Ցիցիանովն հեռի էր ի Թիֆլիզու, երկրորդ օրինակն բազմակնիք արարեալ միաբանութեամբ մատուցաք պալծառափայլութեան ձեր ընդ պօլսեցւոց գրեցելոյն, յակ աւաջին օրինակն՝ խոստացաք լղել առ Ցիցիանովն, զի և նա ինքն լղեսցէ ի գուն ուստի հասանիցի առ վեհազնութիւն ձեր։

Եւ ւյսան այնորիկ մի գիր չատագրեցաք առ կայսրն, և մի գիր ևս առ Ցիցիանովն՝ որոց երկոցունց ի մէջն ևս լիշեցաք զդիր միաբանութեան մերոյ առ ձեզ լաղագս վէքիլ լինելոյ մեզ։

Բայց քանզի Ցոհաննէս Սրբազան առաջնորդն ոչ կամեցաւ զմեր չարաղրեալն առ կայսրն և կամ առ Ցիցիանովն լղել առ նոսա, առ ձեզ գրեցելոյ աւաջին օրինակն ևս չեզե առաքել և խոստումն մեր սուտ եղև աւաջի ձերում վեհազնութեան։

Իայց քանզի պատճառն այլ ոք է, վասն որոյ արժան համարեցաք զօրինակս առ կայսրն և առ Ցիցիանովն գրեցելոցս լղել զի համմատեսջիք ընդ գրեցելոցն զորս մատուցեալ են առ նորին կայսերականի Մեծութիւնն գրեցուցեալ ուստ գրագրաց պատճառն այն ղոր դրեալ եմք ի մեր թղթոջն

Նուաստ աբեղալ ՆԵՐՍԷՍ

1806. յուլիսի 5։

ՃԽԷ. Թուղթ Ցովհաննէս արքեպիսկոպոսի Թիֆլիզոյ առ աղայ Մինաս։

Քրիստոսիւ ղօրացեալ ղերափառունակ և վեհազնեալ Աղալ Մինաս.

Մշտահարազատ և բազմերախտ բարեբար։

Ընդ սիրալրական ողջունի և օրհնութեան՝ և գրկախառն համբուրի, ընկալցի և զալս առ ի մէնջ ի գիտել վեհազնութիւն քոյ. փափագելի է հոգւոյս լարակ՝ ախորժական համբաւ բարեկեաց ողջութեանդ, զորմէ չունելով զտեղեկութիւն ի ձերինդ գրուածոց՝ հոգամբ ոչ սակաւ. քանզի ահաւասիկ անցին բազում միջոցք, լորում մեք զքանի քանիս դրեալ և մատուցեալ եմք զթուղթս առ պատուականութիւն ձեր, լայտնի կացուցանելով դհարկաւորսն մեր, բայց չիք մեր ընդունելութիւն այնց անդրադարձից. և թէ զինչ պատճառ արգելման արիութեան հոգւոյդ ի դրիլոց լալսքան լերկարաձիլ միջոցի, անգիտելի է մեզ։

Իսկ զարդիս ալսուիկ թղթով զալս տացուք գիտել. Ջուղալեցի Ցովհաննէս վարդապետ մի՝ լաւ ծանօթ սրբազնասուրբ Հայրապետին մերոյ, քանի ամսովք լառաջ եկեալ էր ի Պալազիտ ի կողմանցն Հնդկաց, զոր ծանուցեալ էին մեզ անդուստ ի Պալաղտոյ հաւատարիմք մեր, տալով զցոյց՝ իբր զի եթէ դրիցեմք զթուղթ առ նա, և խնդրիցեմք, ունի գալ աստ առ մեզ. վասն որոյ և մեք ի վարձու կալեալ զսուրհանդակ՝ ուղևորեցաք առ նա թղթովք. բայց չէր եկեալ՝ պատճառելով զինչ ինչ պատճառանս. այլ առաջա-

ղրեալ էր և զալս թէ, ի Չին վախճանեալ Աղայ Մասթէոս ումն կասկեալ է յանուն սրբոյ Աթոռոյն զմեծ դումարս դրամոց. զրեցէք միաբանութեամբ զբազմակնիք Թուղթ առ Աղայ Սարգիոն Տէր Յովհաննիսեան՝ և առ որդի նորին Աղայ Յովհաննէսն, և արարջք զնոսա ձեզ վէքիլ, նոքա կարող են ստանալ զայն զրամն և ամբողջապէս պահպանել, և կամ հատուցանել առ ձեզ յօգնութիւն. Զնուիրակ Յակոբ վարդապետ ես հասկացուցեալ էր թէ նստեալ է ի Բումպալումն, Դաւիթն միշտ գրէ առ նա՝ գնալ առ ինքն, և խնդրէ զարդիւնս, զոր և ծանուցանէ նա Աղայ Սարգսին, ի նմանէ ընդունի զպատասխանի թէ՝ գնալդ կամք քոյ է, բայց պարտիս չտանիլ զարդիւնսդ. Ապա՝ և մեք պատշաճ դատեալով՝ զբազմակնիք Թուղթ մի ի հաւարակութենէ միաբանիցս չինեցաք, և զայլ Թուղթ մի ևս ի դիմաց մերոց՝ առ նա ինքն նուիրակին Հնդկաց, լիշեցուցանելով բաւականապէս զաւօրինաւորութիւն և զայլ գժնէութիւն Դաւթայ և զայժմեան որպիսութիւն սրբոյ Աթոռոյն և Արարատեան երկրին, և զմեր և զմիաբանիցս ներկայական ապահով անդորրութիւն, և զուսալի մեծամեծ բարութիւնսն, և զառ մեզ բերելն Սրբոյ Գեղարդեանն և այլ Սրբութեանցն և անօթիցն՝ ձեռամբ օրհնեալ Ջօրացն. և վերջապէս՝ որդոր լինելով՝ ձեռն քարշել ի Դաւթայ, և արդելուլ յայնկոյս զընթացսն իւր և զարդիւնսն առ ժամանակ մի ևս, և կամ ուղղել յայնկոյս՝ տալով ձեզ նախապէս լիմացս, զի ձեօք ազդ լիցի Դեսպանին Պօլսոյ հանել վասն նորին ինքեան զՓերմանի ի դրանէն Օսմանցւոց, որ ապա կարեզանացէ անվտանգ գալ դէպ առ ալսր. Նոյնպէս և ըստ առաջադրութեան նոյն վարդապետին Ջուղայեցւոյ դրեցաք զբազմակնիք և զառանձնական Թուղթս առ լիշեալ Աղայ Սարդիոն Տէր Յովհաննիսեան՝ ըստ լիշեալ մտացն Թղթոց նուիրակին, վախճանաբար յանձնելով նմա և որդւոյն իւրոյ զվէքիլութիւն ի կողմանէ սրբոյ Աթոռոյն և միաբանից, զի լիցին ժողովող և պահպանող ամենայն յանուն սրբոյ Աթոռոյն եղեալ արդեանց, և մանաւանդ սասցոյ Աղայ Մասթէոսի կտակին. որոյ աղաչաս ևս՝ ցուցանելով զձերինդ վհատնութիւն չատադով ճշմարտութեան, և բարեբար առ մեզ, նաև զԱրքայութիւն Տեառն ներելմամբ իսկ, առաջի արկաք զձեզ, զի թէ ունիցին նոքա ստանալ զայն կտակն և հատուցանել առ ձեզ, չորեսին Թուղթն լղեցաք ահա առ Սրբազան հայրն մեր՝ թարց կատուցանելոյ զեղեալ կնիքան ի միոյ կողմանէ, զի տեսցէ. և եթէ ինքն ինքեամբ լղելոց իցէ, զկոպիայան առաքեսցէ առ վհատնութիւնդ ի տեսանել. և եթէ ձեօք հասուցանելոց իցէ, լղեսցէ զիսկն առ ձեզ, զի դուք հոգալցէք լղել զայն Թուղթն՝ ուր նշանակեցեալն է. Բայց զլարդ և առնելոց իցէ, ի հարկէ ազդելոց է վհատնութեանդ ձերում, որպէս ժամ դրեալ եմք նմա. ուրեմն՝ խնդրի, զի և դուք հոգ տարջիք այնց Թղթոց բանիցն, և մանաւանդ այն կտակի բանին, կամ առ Աղայ Սարգիսն, կամ առ ծանօթս և հաւատարիմս ձեր, և կամ ա՛ռ այլս երևելիս որոց պատշաճ տեսանիցէք զրկելով զլաստուկ լատուկ զԹուղթըս, զի թերևս դալցէ ի դուրս այն կտակն՝ և հասցի առ ձեզ յօգնութիւն մեզ.

Այլ և՝ մեզ պիտոյ լիցի. զի յորմէ հետէ կնիքազ լուսահոգին պակասեցաւ, բազում բարձրացուցին զղջութս. որպէս խորալէլ տեղական Աղուանից ձեռնադրեալ ի տեղի իւր զեղբայրն, եկն լնլիսաբեթապօլ առնուլ զայն ընդ ինքեամբ, և նստիլ անդ, մեծամեծս ևս խօսելով՝ ոմն է Յովհաննէսն և ով Եփրեմն, որք զվիճակս իմ առեալ են ի ձեռաց, գնալոց եմ մինչև ի Հաշտարխան, և զայն ևս առնուլ. Որոյ աղաղաչէ մեք գնացաք լնլիսաբեթապօլ Թղթով Ենարալ Նէավխտալովին, և առաջնումն իսկ աւուր գնալոյն մերոյ տեսանալ գկուրակին պօլկովնիկն և պօլկովնիկն ևս ի մենջ խնդրեաց վասն նորա՝ ինալի նմին գիշերի, և ելանել լառաւօտուն. վասն որոյ մեք լալմի գիշերի օթեցաք արտաքոյ մերձ քաղաքին ընդ վրս նօք, մինչև ել նա լառաւօտուն լալ տուն, և մեք իջաք լառաջնորդարանն. ապա դարձեալ խօսեցաք բազմիցս ընդ պօլկովնիկին վասն խորալէլին, զի լեռս դարձուսցէ ի տեղի իւր. Նորոգ եկեալ Ենարալ մալեօր Նէպօլսինն ևս եկն անդ, և նմա ևս հասկացուցաք զոր ինչ արժանն էր, բայց պօլկովնիկն այլ ընդ այլով խօսեցաւ այնքան՝ յօգնութիւն խորալէլին, մինչև կարծել ևս աներևոյթն վասն ինքեան՝ եղեալ կաշառակուր ի նմանէ. լետ բազում զրուցաց և գլխացաւուց-

թեանց՝ լալտնելոյս զանն Թէ Թուղթ տալ նմա, և առաքէ ասե. առ որ ևս խօսեցաք չատ, բայց ոչինչ օգտեցաք, զի վերջապէս լինչեալ Ենարալն և Գօլկոնդիկին գնացին գէպի Շուշի, և Իսրայէլն հալ Թարգմանաւ պօլկովնիկին՝ և Թղթովն եկն աստ ի քաղաքաս. և մեք ես եկաք զկնի աւուրց, և աստ Նէավիտալով Ենարալան և այլ մեծամեծօք կապեցաք զճանապարհս սորա, որ ոչ լալդ կողմն կարէ գալ, և ոչ ի տեղի իւր գնալ. և կամելով չահել զսա, մեք գնացաք առ ինքն ի տեսութիւն, և զինքն ես բերաք առ մեզ ի պատիւ, և լաւ փիլոն ես արկաք ի վերալ. որ նստի ալժմ ի քաղաքոջս ի տուն եղբօր իւրոյ։ Տեսաք լետոյ Թէ զիարդ է լինելոց։ Բայց զի անլալտ և անգիտելի է սոցա զանն, վասն որոյ պէտք է և Սրբազնութեան Տեառն ենթրեմալ և ձեզ՝ զուշացուցանել զսահմանականալսն, զի ո գիտէ՝ եթէ ունիցի սա գալ լալդ կոլս, չկարասցէ մատուցանել ի ներքս ի սակս Գրիգոր Նիկիտիչ Զալիսովի զանին զորմէ դրեալ էաք քանիցս, մեք ես լալս անգամ լնլիսաբեթապօլու գրեցաք առ Նուխու խանն՝ լալտ առնել մեզ զորպիսութիւն ազգի և այլ լատկութեանց գորին, բայց դեռ ես չընկալաք զպատասխանի. զի նա ինքն խանն գարձոլց զթիկունս առ կողմն ռուստացս՝ վասն ազգականին իւրոյ Իպրահիմ խանին Շուշուալ՝ զոր հանդերձ այլ ընտանեօքն և զինուորօք սպանին օրինեալ զօրքն որք նստին անդ. մինչ նա ինքն սատակելն ի ծածուկ խօսելով ընդ պարսից, կամեցեալ էր նենդել զօրացն, վասն այն և նոքա սուր ի վերալ եղեալ, կոտրեալ էին ի պատերազմի։ Իսկ Նուխու խանն Թէ գրելոց է մեզ ջուղալ՝ և Թէ ոչ, չէ լալտ. և զոր գրեալ էիք իբր զի միաբանութեամբ Թուղթ գրիցեմք և վկալիցեմք աղնուականութեան գորա, այն առ հոգելոյս կնիազին ոչ լինէր, զի ծանր էր նորա զանն, բայց աժմոլս կարելի է լինելն. ուրեմն եթէ վհատնութիւն ձեր պարագալիւք ծանուսցէ մեզ զլատկութիւն ազգի գորին Գրիգորի, և մեք պատրաստ եմք միաբանութեամբ կատարել ըստ առաջադրութեան ձերոյ։ Ենարալ մալիոր Նէպօլսինն որ գնաց դէպ ի Շուշի, գտեալ լալն կողմն զԱպաս Միրղալ որդի Բաբախանին Իոսէ, մարտ եղեալ էր ընդ նմա՝ և մեծամեծ լաղթութիւնս արարեալ, կոտորելով ի նմանէ զհազարս, և զրաղումս ես վիրաւորելով, և զամենեսեան փախստականս անցուցանելով ընդ գետն, և անհնս առնելով ի կողմանցն այնոցիկ, որպէս լատուկ ցերկմօնիս տօնախմբեցաք զլաղթութեան հանդէս նորին, խնդրելով զկեանս երկարս վասն Ինքնակալին։ Գոհութիւն Աստուծոլ, ամենայն ուստեք ես անպարտելի են զօրք կողմանցս, զի ուր ուրեք երեին թշնամիք, հասանելն ի վերալ և կոտորեն. լերեանս կողմանէ ևս ժողովեալ են պարսիկք՝ և Ալէքսանդրն ևս ընդ նոսա, որոց աղագաւ ևս առաքեցան զօրք ցրել զժողովս նոցա. լուսամբ լԱստուած Թէ լալս աւուրքս զլաղթութիւն տցա ևս իմանալցեմք։

Բայց աչք մեր չլացան՝ դիտելով ընդ ճանապարհ մեծ Զօրապետին, չդիտեմք իսկապէս Թէ լատկացեալ է նա՝ և գալոց է, և դուք արարեալ էք նմա լանձն պահպանութեան մերոլ և կանդնեցուցանելոլ զաւուրքս Աթոռն, Թէ ոչ. խնդրեմք չուտով ծանուցանել մեզ զորպէսն՝ ի միամտութիւն. և Գօլեան Աբրահամի զանն ևս Թէ որպէս եղերեցաւ, կամիմք իմանալ Գաւիթ Թողեալ զաւուրքս Աթոռն՝ պարսից ի քնակութիւն, ինքն լորջացեալ է լերևան, և անցաւեալ զաստակութիւն չարաչար ցաւոցն, պարապի ի չարիս զորս Թողեալ է ի պակաս. և որք ընդ պարսից նստին ի տուրքս Աթոռոջն, քանզի ողորմելի միաբանք՝ աւուր պարենի են կարօտք որպէս քողքեն լասկոլս։

Ղարսալ Մահմատ փաշայն խնդրեալ էր ի Նէավիտալով ենարալէն և ի մէնջ իսկ առաքել ի միաբանից զնուիրակ. և մեք՝ որ ունէաք զկարբեցի ծովհաննէս վարդապետն ի Շօրակեալ, առաքեցաք առ նա զարբալոլս Մեռոն և զկոնդակ, զի գնասցէ և կատարեսցէ զնուիրակութիւնն Ղարսալ. տեսաք Թէ զիարդ է լինելոց։ Դարձեալ՝ գիտել լլեի վեհաղնութեանդ Զերում. զի Նէավիտալով ենարալ կառավարիչն տեղալս մինչ ընկալեալ է զԹուղթս՝ գրել և իմացուցանել զամենայն իրեանց հարկաւորսն Ղազընապով ենարալին Լիմիալու, վասն որոյ զնարալէէն գրեալ է սա առ նա, Թէ ալսպէս ծերունի հոգևորական մի՝ պատրիարգ կոչմամբ եկեալ է աստ ի քաղաքս, և խնդրէ գալ լալդ կոլս, բայց զի ի կենդանութեան կնիազին ևս կամեցեալ

է ղալ, և նա արգելեալ է, վասն այնորիկ և մեք արգիլեցաք. եթէ կամիք ղորա գալն, լալտնեցէք մեզ զի ուղևորիցեմք, խեղճ մարդ է, և այլն և այլն. Արդ՝ այն մնծն թէ զիարդ է կամելոց, և զինչ է ջուզալ սալոց սոյն մեծին, ոչ գիտեմք, բայց և սուքա ևս չմնան նոյնութեամբ ի խօսս իւրեանց, զորոց և մեք ոչինչ հասկանամք. որպէս և սոյն այս մեծ՝ յառաջն զինչ խօսեցաւ ընդ մեզ՝ և զորպիսի լոյս ևս՝ առ. ի առնել զիարալէլն ըստ կամս մեր, լետոյ զինչ է զրեալ առ. ինչեալ Ղազընապոլն. բայց ոչ միայն սա, այլ միւս մեծամեծք են այսպէս, որք զկնի վախճանման կենդանին արդարասիրի՝ ըստ ախորժակաց իւրեանց առնեն զամենայն ինչ, հալելով լաւէտ լարծաթս՝ քան ի դատաստանական օրի նացն արդարութիւն. մեք իրաւի մինչև ցայսօր բաւականապէս աշխատասիրեալ եմք, և դրեթէ յաչաց ամենից մեծամեծաց՝ թէ ռուս տաց, թէ վրաց, և թէ հայոց՝ անկեալ եմք խապառ՝ ցուցանելով զներհակութիւն՝ առ. ի չտալոյ զմուտ յայդ կոյս հոգևորականաց, որք անխափան պատահեցեալք են, և մեծամեծքս առաջադրեալ են մեզ զայսպիսիս, և մեք չեմք կամեցեալ. սարգենիս ևս թէպէտ հոգւով չավ. ջանալոց եմք արգելուլ զիարալէլն, բայց այլ ինն կերպ է եղելոց քանն, ո գիտէ, թերևս կամ նոյն մեծն հրամայն տացէ սմա գալ, և կամ սոքա կամիցին ուղևորել, և մեք չկարիցեմք խօսիլ, ի հարկէ յառաջանալոց է մեծ գլխացաւութիւն. Ուրեմն հարկաւորի և ձեզ լինիլ նախահոգ. զոր ինչ խօսելիք և գրելիք ունիք, առնել զայնս փութով առ վերոյիշեալ Ղազընապոլն, և զգուշացուցանել գնաս. վասն Իսրայէլին չասեմք միայն, այլ և վասն ամենայն հոգևորականաց, որք որպէս մինչ ցարդ, նոյնպէս և յապառնեաւ չունիցին համարձակութիւն մտանելոյ յայդ երկիր. Վերջապէս խնդրեմք դարձեալ՝ ծանուցանել մեզ փութով զինչ ինչ հոգացողութիւն լինիլն վասն կողմանցս, և զորպէսն նորոգ նախանշնիկին, որ աչք մեր ի ճանապարհի է: Եւ այլն՝ բաղձալով ամենայն ջերմեռանդութեամբ բարերջանկութեան ձերում, մնամ ծայրագոյն ի Տանս Վրաց՝ խոնարհ աղօթարար ձերդ վեհազնութեան ՅՈՎՀԱՆՆԷՍ արք եպիսկոպոս Թիֆլիզու հայոց

1806. ի յուլիսի 10.

ի Թիֆլիզ.

ՃՀԸ. Կոնդակ Դանիէլ կաթուղիկոսի առ Ներսէմ արք եպիսկոպոս.

Յիսուսի Քրիստոսի ծառայ Դանիէլ կաթուղիկոս հայոց և ծայրագոյն պատրիարգ առաքելական եկեղեցւոյ Քրիստոսի և Քրիստոսահիմն աթոռոյն սրբոյ Էջմիածնի, որ կապեալս եմ գերի ի ձեռս հեթանոսաց. սիրեցեալ եղբօր իմոյ առաքելաշաւիղ առաջնորդի հիւսիսակողմնակ հայոց բարձրապատիւ Ներսէմ սրբազան արքեպիսկոպոսի մատուցանեմ ողջոյն Քրիստոսական.

ի տէր ինդալ.

Ցա՛ կալի է ինձ լուր ոգջունի ձեր և առաւելապէս մխիթարեալ եմ հոգւով բարութեան մեծասէր եղբայրութեան ձեր, որով մինչ ցարդ առանց խնայելոյ ի պատուական անձն ձեր ճղնեցալք վասն օրինաց մերոց և վասն պայծառութեան Սիօնի սրբոյ Մայր Աթոռոյ Էջմիածնի, առ որ ունիմ միշտ առ ձեզ չնորհակալութիւն անթերի՝ հանդերձ լիաբերան խնդրուածովք մաղթանաց վասն հոգւոց ձերոց և մարմնոյ. Այլ սակայն լոյժ զգալի է ինձ և սարսեցուցանէ զիս քանն Ցէրունի թէ պարտ էր զնզ արկանել զարծաթն իմ ի սեղանաւորս և ես եկեալ տոկոսօք պահանջէի զիմն՝ սմին իրի ի քանտեաստի գերութեան իմոյ՝ զոր ինչ պարտականութիւն ինձ համարէի լաղագս չինութեան եկեղեցւոյ, վերահաստատութեան սրբոյ Էջմիածնի և պայծառութեան համօրէն ազգի գրեցի առ հասարակութիւն միաբանութեան մերում առաջի արարեալ նոցա վերականգնել զօրէնս և կանօնս հարց սրբոց. Այլ քանզի մեք ի կապանս դոլով, ոչ կարողանամք աւելի քան զոր գրեցաքն մատուցանել զօժանդակութիւն և կամ խնամ տանել առ հիմնաւորելոյ ի նոսա զդրեալսն, նմին իրի որովհետև, նոյն սրբազումար միաբանութիւն սրբոյ աթոռոյն մերոյ ընդ իս և զձեզ էին ընտրեալ ի կաթուղիկոսութիւն հայոց՝ որոց այժմ ևս ահա ունիմք զձեզ ի սրտի մերում ի նմին համարմանն, նմանապանգ զի և դուք իսկ չնորհօքն Աստուծոյ զարգացեալ և իմաստութեամբ և պատուով ընտրելագոյն և առաջին էք ամենայն հոգևորականաց համօրէն հայոց ազգիս մերոյ,

վանորոյ ըստ կրկին դերարժանաւորութեան սեպհական անձին ձերոյ նոր ես տամք մեք ղյօժարութիւն հոգւոյ մերոյ ոչ որպ՛ես փոխանորդի և պատկերի, այլ որպէս նոյն իսկ իսկական անձին իմոյ, և լուսամ զի ե դուք ըստ բնաձիր բարութեան բարուց ձերոց, աւաւել քան զիս փութասջիք հանդուցանել զհոգի իմ և տալ ինձ մխիթարութիւն ի կեանս և ի մահ, Ապաքէն առաջի առնեմ ձեզ նախապէս զի որպէս ինձ, նոյնպէս և քեզ՝ առելի եղիցի՝ անձնապանծ մոլի նա խագահութիւնք և ամենայն ինքնահաճ եզոյ կան կամապաշտութիւնք, որք ոչ վայելեն հոգևորականաց, այլ որպէս և դրեալ եմ ի հասարակական թուղթն իմ, կալեալ ի ձեռս մտաց քոց զդիրս պաշտօնի լորս կոչեցեալքդ էք, դիջիք հաստատուն ի սրտի ձերում, թադաւորեցուցանել զօրէնս և մուծանել ընդ իչխանութեամբ նորուն նաև դանպհական իսկ անձն ձեր։ Եւ ապա խորհրդակցեալ ըստ այնմ ընդ վեհազնեալ հարազատին մերում աղալ Մինասալ եղիազարեան որ փոխանորդ է մեր ի դրանն ողորմութեան, յայտնեսջիք զայն գիր ուր և որոց արժանն իցէ, հրատարակեսջիք յամենայն ազգի ներում և ի կղզիսանէ իմմէ ունելով զկարողութիւն բոլորապէս խորհրդածեսջիք ընդ վեհազնէին զայլս պատկանեալս և հարկաւորեալս առ հաստատելոյ և ճոխացուցանելոյ զնոյն, և այնպէս ապա զնախագաղափարն և կամ զօրինակն հասարակական գրոյն, հանդերձ օրինակաւ սոյն գրեցելւոյս առ ձեզ առաքեսջիք առ սրբազնամար միաբանութիւնն և ի կողմանէ ձեր ևս զոր ոք և կամեսջիք, կացուսջիք ի մէջ նոցա փոխանակ ձեր, և չանակուռ եղեալ օր յօր մատուսջիք նոցա զնպաստաւորութիւն հարկաւորացն, զի զօրասցին և տիրեսցեն օրէնք, որով և եղիցի խորհրդակումն բռնութեան եզական կամաց. և բարձումն հեթանոսացն պատշաճեալ յանգրգռութեանց և մեծասցի փառք Աստուծոյ ի հանդիսի հոգևորականաց, ուստի յառաջ ըղխեսցեն ամենայն բարիք որք բարեզարդեսցեն զհոգևորականս և զմարմնաւորականս ազգի մերում և պատճառացուսցեն զեկեղեցի սուրբ և ցանկալի աթոռն Լմմիածին և մեք նուաճ թէպէտ և ոչ բազմացն, ակն ունիմք թերևս ըստ երկուցն ընկալցուք զչահ քանքարացն յամենատատ ողորմութենէն Աստուծոյ։ ՈՂՋ լեր

Դանիէլ կաթողիկոս հայոց
(դրեցի իմով ձեռամբ)

1806 յուլիսի 10
ի Մարտղալ։

ՃՀԹ. Թուղթ Մելիք Ջիմշիդի Մելիք Շահնազարեան առ Լիշխան (Մինաս Եղիազարեան *)

Վեհազնեալ իչխան
Իմ ողորմած տէր.

Թէպէտ յառաջ քան զայս քանի դրով դրեալ եմ առ վեհազնութիւն ձեր զպատասխանիս դրութեանց ձերոց, իսկ որովհետև ոչ ղիտեմ հասանելն ալնոցիկ առ ձեզ, վասնորոյ ալսու համապատասխանեմ ալնց ամենից զոր գրած դրէք։

Որով նախ տհաճիք թէ զիարդ ոչ լիր զանուն մեր ի չարս իչխանացն Վրաց յաստկացելոց ի մէջ պատերազմի, առ ալս ասեմ խալթոցիս, թէ և մեք մելիքունքս Իամամլու առաւել քան զնոքա յատկացաք ի մէջ պատերազմի, և առաւելագոյն պարգևաց և չնորհաց ևս էաք արժանի, սակայն արմատացեալ նախանձն ի սրտի հանդուցեալ քնիազ Յիցիանովի առ ազգն Հ։ոց, ոչ թոյլատրեցին նմա բացայայտել առ ամենազթած կայսերն զյոգնաւէտ ծառայութիւնս և զջանս մեր, զորս ցուցաք, որպէս ի ժամ առմանն Գանձակու նոյնպէս և ի յուզերական լնդնանու և Շիրուանու, ուր տեսանելով զի մինչն ընդ զօրաց իմ ց բարւոք կարգագրութեամբ և անակընկալ ծառայող Տէրութեան ամենայն Ռուսաստաց հարկադրեալ իրաւանց՝ խոստացաւ խնդրել ի կայսէրն վասն իմ զղրօչակ, զոր ստանալոց էի թարց կալծեաց եթէ ոչ պատահեցեր նմա այնպիսի ապերջանկութիւն։

Զկնի մանուան նորին գտանելով իմ աստ, և գիտելով զամենայն չար խոկմունս պարսից առ ի ա՛րգացուցանել զնորաբաստաց աչխարհն Ղարաբաղու, եւտև գրութեամբ զքանի մի դիտաւորութիւնս իմ Ջեաուն ւէնէրալ Մալիսր Նէվէլէտովին և գնացի ես յամրոցն Շուշուայ և մնացայ ընդ զօրացն վանորոյ ըստ կրկին դերարժանաւորութեան սեպհական անձին ձերոյ նոր ես տամք մեք զյօժարութիւն հոգւոյ մերոյ ոչ որպ՛ես փոխանորդի և պատկերի, այլ որպէս նոյն իսկ իսկական անձին իմոյ, և լուսամ զի ե դուք ըստ բնաձիր բարութեան բարուց ձերոց, աւաւել քան զիս փութասջիք հանդուցանել զհոգի իմ և տալ ինձ մխիթարութիւն ի կեանս և ի մահ, Ապաքէն առաջի առնեմ ձեզ նախապէս զի որպէս ինձ, նոյնպէս և քեզ՝ առելի եղիցի՝ անձնապանծ մոլի նա խագահութիւնք և ամենայն ինքնահաճ եզոյ կան կամապաշտութիւնք, որք ոչ վայելեն հոգևորականաց, այլ որպէս և դրեալ եմ ի հասարակական թուղթն իմ, կալեալ ի ձեռս մտաց քոց զդիրս պաշտօնի լորս կոչեցեալքդ էք, դիջիք հաստատուն ի սրտի ձերում, թադաւորեցուցանել զօրէնս և մուծանել ընդ իչխանութեամբ նորուն նաև դանպհական իսկ անձն ձեր։ Եւ ապա խորհրդակցեալ ըստ այնմ ընդ վեհազնեալ հարազատին մերում աղալ Մինասալ եղիազարեան որ փոխանորդ է մեր ի դրանն ողորմութեան, յայտնեսջիք զայն գիր ուր և որոց արժանն իցէ, հրատարակեսջիք յամենայն ազգի ներում և ի կղզիսանէ իմմէ ունելով զկարողութիւն բոլորապէս խորհրդածեսջիք ընդ վեհազնէին զայլս պատկանեալս և հարկաւորեալս առ հաստատելոյ և ճոխացուցանելոյ զնոյն, և այնպէս ապա զնախագաղափարն և կամ զօրինակն հասարակական գրոյն, հանդերձ օրինակաւ սոյն գրեցելւոյս առ ձեզ առաքեսջիք առ սրբազնամար միաբանութիւնն և ի կողմանէ ձեր ևս զոր ոք և կամեսջիք, կացուսջիք ի մէջ նոցա փոխանակ ձեր, և չանակուռ եղեալ օր յօր մատուսջիք նոցա զնպաստաւորութիւն հարկաւորացն, զի զօրասցին և տիրեսցեն օրէնք, որով և եղիցի խորհրդակումն բռնութեան եզական կամաց. և բարձումն հեթանոսացն պատշաճեալ յանգրգռութեանց և մեծասցի փառք Աստուծոյ ի հանդիսի հոգևորականաց, ուստի յառաջ ըղխեսցեն ամենայն բարիք որք բարեզարդեսցեն զհոգևորականս և զմարմնաւորականս ազգի մերում և պատճառացուսցեն զեկեղեցի սուրբ և ցանկալի աթոռն Լմմիածին և մեք նուաճ թէպէտ և ոչ բազմացն, ակն ունիմք թերևս ըստ երկուցն ընկալցուք զչահ քանքարացն յամենատատ ողորմութենէն Աստուծոյ։ ՈՂՋ լեր

Դանիէլ կաթողիկոս հայոց
(դրեցի իմով ձեռամբ)

1806 յուլիսի 10
ի Մարտղալ։

ՃՀԹ. Թուղթ Մելիք Ջիմշիդի Մելիք Շահնազարեան առ Լիշխան (Մինաս Եղիազարեան *)

Վեհազնեալ իչխան
Իմ ողորմած տէր.

Թէպէտ յառաջ քան զայս քանի դրով դրեալ եմ առ վեհազնութիւն ձեր զպատասխանիս դրութեանց ձերոց, իսկ որովհետև ոչ ղիտեմ հասանելն ալնոցիկ առ ձեզ, վասնորոյ ալսու համապատասխանեմ ալնց ամենից զոր գրած դրէք։

Որով նախ տհաճիք թէ զիարդ ոչ լիր զանուն մեր ի չարս իչխանացն Վրաց յաստկացելոց ի մէջ պատերազմի, առ ալս ասեմ խալթոցիս, թէ և մեք մելիքունքս Իամամլու առաւել քան զնոքա յատկացաք ի մէջ պատերազմի, և առաւելագոյն պարգևաց և չնորհաց ևս էաք արժանի, սակայն արմատացեալ նախանձն ի սրտի հանդուցեալ քնիազ Յիցիանովի առ ազգն Հ։ոց, ոչ թոյլատրեցին նմա բացայայտել առ ամենազթած կայսերն զյոգնաւէտ ծառայութիւնս և զջանս մեր, զորս ցուցաք, որպէս ի ժամ առմանն Գանձակու նոյնպէս և ի յուզերական լնդնանու և Շիրուանու, ուր տեսանելով զի մինչն ընդ զօրաց իմ ց բարւոք կարգագրութեամբ և անակընկալ ծառայող Տէրութեան ամենայն Ռուսաստաց հարկադրեալ իրաւանց՝ խոստացաւ խնդրել ի կայսէրն վասն իմ զղրօչակ, զոր ստանալոց էի թարց կալծեաց եթէ ոչ պատահեցեր նմա այնպիսի ապերջանկութիւն։

Զկնի մանուան նորին գտանելով իմ աստ, և գիտելով զամենայն չար խոկմունս պարսից առ ի ա՛րգացուցանել զնորաբաստաց աչխարհն Ղարաբաղու, եւտև գրութեամբ զքանի մի դիտաւորութիւնս իմ Ջեաուն ւէնէրալ Մալիսր Նէվէլէտովին և գնացի ես յամրոցն Շուշուայ և մնացայ ընդ զօրացն

առաստաց. պարսիկք լսելով զմահն քնիազ Ցլեխանովին բազմաթիւ զօրօք ընդ լառաջ ընթացուբեամբ Աբաս Միրզայ որդւոյն Բաբաքանին, արտուրանօք ժամանեցին ի Ղարաբաղ և միացան ընդ համային տաճկաց անդ բնակելոց, և լառաջագրեցին սրախողխողել զամենայն զօրս ռուստաց և հայոց լսմրոցն դառանելոց, առ որ համաձայնէր և տիրապետողն Իբրահիմ խան, որով ընկալաւ պատիժս ըստ արժանւոյն. լասմիլջոցի ղէնէրալ մայօր Նէվէետայովին հաւանեալ զդիտաւորութիւնս իմ առաքէ զՑրօլէկցի պօլկն ի Ղարաբաղ լօգնութիւն զօրացն ռուստաց անդ դառանելոյ որով եկեալ ի Գանձակ առնու ընդ ինքեան զկարակին պօլկօվնիկ ընդ զօրօք և աճապարեն առ լօգնութիւն մեզ, և գոլով նոցա տակաւին ի ճանապարհի, գրեն առ իս ընդ առաջել նոցա զօրօք իմովք, ըստ որոյ թողեալ իմ զբաւականն զօրս ընդ մնացեալ զօրացն ռուստաց առ ի պահպանութիւն Ամրոցին, գնացի զօրօք և միացայ ընդ նոսա և զկնի երից աւուրց ի մէջասին պատերազմեցաք և լօգնականութեամբն ամենազաւրձգուլոյն Աստուծոյ կատարեալապէս յաղթահարեցաք զՔչնամիս մեր և լետս զարձուցաք, այնպիսի իմն արշաւանօք մինչ զի 20 հազար արք հեծելազօրք սարսափելի երկիւղիւ անցին ընդ գնան Սրասխ։

Ղէնէրալ մայիօր Նէքալսինն Շէֆն նոյնոյ Ցրօլէկի պօլկի պօլկովնիկ Կարէգին Շէֆճ Եագրիպօլկի, տեսանելով ի մէջ սահաբազմի զքաջութիւն զօրաց իմոց, և դհաւատարմութիւն իմ (որով հասուցանէի զպաշարս վասն զօրացն ռուստաց ի ժամ պակասութեան հացի և ցուցանէի զայլ բազմամիմի ծառայութիւնս) լոյժ հաւանեցան, և մանրամասնաբար գրելով զայսոսիկ ամենայն հաւատարմութիւնս և զծառայութիւնս իմ առ նոյն ղէնէրալ մայիօր Նէվէետայովն՝ խնդրեցին ներկայացուցանել ռուսաց ամենողորմած կայսերն մերոյ, սակայն ըստ ապերջանկութեան իմոյ ոչ գիտեմ թէ որոյ պատճառաւ ոչ ներկայացոյց, որոյ աղագաւ ի դալն իմ աստ խնդիր վաստուցի նորին պայծառափայլութեան գրաճ Իւան Վասիլիչ Գուտուզովին, որ և ակն ունիմ ի սէր ձեր և ազդին մերոյ (որոյ ցուցանէ խնամս) վարձատրեսցէ ինձ վասն այնց ամենից զոր արարի եթէ լօգնութիւն Ցեառն ամենակալի և վեհապետութեան ձերոյ՝ ժամանեսցէ ի վերայ իմ։

Երկրորդ՝ գրէք թէ զիարդ ոչ կազմիք զգուշդ. առ այս պարտիք հաւաստի լինել որ դիւրիւն կարէք զայս առնել թարց օգնականութեան ումեք, (եթէ ունիցէի առաջին փարթամութիւնս և զժողովուրդս, որք ի պատճառս գալստեան Աղա Մահմադ խանին՝ սուաւ՝ և ժանտախտի ցիր և ցան եղեն ի Շրուանս և ի Վրացտանս, քանզի հայրն իմ և նախնիքն մեր միշտ ունեցեալ են առ ընթեր իւրեանց զայնպիսի դիւնդգ զորս դուք պահանջէք լինէն, ըստորում երկիրն Ղարաբաղու տիրապետեալ են ինքեանք և բոլոր հայք ե տաճիկք հպատակք են լեալ նոցա։

Ուստի՝ եթէ վեհապետութիւն ձեր բազձաք զի ազդքն հայոց զերծցի համանգամայն ի բռնութենէ քարբարոսաց և համաժողովեսցին ի բնիկ հայրենիս իւրեանց՝ ե ունիցին զգուշդա և բարեբաստիկս ծառայեսցեն երկրորդ փրկչին իւրեանց Ամենազթած Կայսերն մերոյ, ուրնմն խնդրեմ զի նախ հրամայեսցէ վերադառնալ ի բնիկ հայրենիս իւրեանց ամենայն ցիր և ցան եղեալ ժողովուրդքն մեր ի Շրուանս և ի Վրացտանս։ Երկրորդ ազատ լինել նոցա ամենայն հարկապահանջութենէ և ի ծանրութենէ երեք ամ ժամանակաւ, երրորդ՝ ազգն հայոց մի լիցին ի ներքոյ իշխանութեան տաճկաց, ըստ որում նոքա ոչ կարեն մնալ միշտ ի հաւատարմութեան առ տէրութիւնս Քրիստոսասպասակ Կայսերն մերոյ, այլ ջանան օր ըստ օրէ նուազեցուցանել զազգն հայոց՝ առ ի դիւրապէս ներգործել զչար դիտաւորութիւնս իւրեանց և չորրորդ՝ չնորհեսցէ գումարս՝ որով կարողացուք պատրաստել զղէնս վասն կազմելի գնդին, զի առանց իմիք կարօտոյ պատրաստի լիցին ի լսպատգալ պատերազմունս ընդ զօրացն ռուստաց մինչ ցՆրասխ գետն։ Զայսպիսի ողորմութիւն առնելով ամենագթած Կայսրն մեր, արդարև՝ վերանորոգելոց է զզօրութիւնս ազգին հայոց և հարկադրելոց է նոցա լսմենայն ուրեքէ դալ և քնակիլ ի ներքոյ ամենաքաղցր հովանաւորութեան իւրոյ Կայսերական Մեծութեանն։

Ես ոչ հարկաւոր համարիմ խնդրել ի վեհապետութենէ ձերմէ լոգաունակել առ կատարումն սորին, ըստ որում զոք հազարա-

պատիկ քան զիս չկանալք սակս պալծառութեան աղգիս հայոց, և ի տուէ և ի գիշերի միշտ ի նոյնն պարապէք, ուրեմն թարց իմոց խնդրանաց՝ անձանձիր հետևելոց էք առ ի կատարումն գործոյս, և թողլոց էք ի վերայ աշխարհի լիշատակ և արձան զասպիսի բարերարութիւնս ձեր աղգին մերոյ, վերջապէս խնդրեմ ի վեհաղնութենէ ձերմէ ծանուցանել ինձ դիարդութենէ անձինդ պատուականի։

Եւ այլն անթերի վերապատուութեամբ և կատարեալ անձնամատուցութեամբ ունիմ պատիւս մնալ

Ձերդ Վեհաղնութեան

Ողորմած Տեառնդ իմոյ

Ամենախոնարհ ծառայ

ՄԵԼԻՔ ՋԻՄՇԻԴ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Դեկտեմբեր 2-ին

1806 թուին

Թիֆլիզ։

Պալծառ իշխան Մէլիք Ջիմշիդն գրեալ զայս լղեալ էր առ իս, զի վկայեցից զստուգութիւն իրացն, վասն որոյ ընթերցեալ վկայեմ այսպէս, որ նա ի վեր անդր գրեալ ծառայութիւնն ցուցեալ է տէրութեան ռուսաց. և կարող է սա միայն գունդ կազմել և կատարել զամենայն բաղմադիմի ծառայութիւնս եթէ տրիցի սմա ի Նորին Կայսերականի Մեծութենէ այնոքիկ օգնութիւնք, զորս խնդրէ ի վեր անդր.

Ծայրագոյն ի Տանս վրաց՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ Արքեպիսկոպոս

ամենայն Հայոց Վրացստանու

ՃԲ. *Թուղթ Յովհաննէս արք եպիսկոպոսի Վրաստանի առ իշխան Մինաս Նղիազարեան։*

Քրիստոսիւ զօրացեալ իշխան հայոց վեհ հաղնեալ աղալ։

Ողորմած և բարերար տէր մեր.

Առ վեհաղնութիւնդ երկիցս և երիցս գրեալ եմք զթուղթ յորմէ հետէ մտեալ է աստ Աստուածասէր օրհնեալ պալծառափայլ գրաֆն,՝ և բաւականանալէս ծանուցեալ եմք զառաստութիւն ողորմածութեան նորին՝ և զմեծութիւն սիրոյն և յարդանացն զոր ցուցեալ է և ցուցանէ առ մեզ. առ որ արդարև գոհ եմք յոժ դնմանէ մինչև ցանհունս։

Այժմեան որպիսութիւն մեր է ի լաւութեան և ի բարօրութեան ողորմութեամբ տեառն և չնորհիւ պատկերի նորին կայսերական մեծութեանն. զի կամք մեք ի բարեկարգութեան, և սիրագումար միաբանութիւն մեր լամենայնի ողջունեն զսէր և զիարդղղութիւնս։ Բայց որ այսպէս ի միոյ կողմանէ ողորմի մեզ Աստուած՝ պարղևելով մեզ զայսպիսի ողորմած և առատախնամ տէր զնորին պալծառափայլութիւն՝ և զայսպիսի աւուրս բարօրութեան, ի միւսմէ կողմանէ ես տակաւին ոչ լայողէ. քանզի թէ որչափ և որքան անտանելի հոգ է սրտի մերում մորմոքելի վիճակ տառապանաց բաղմայարչար սրբազան հայրապետին մերոյ, քալ լայտնի է վեհաղնութեանդ. սակայն որչափ և խորհիմք՝ որչափ և մտածեմք՝ անկարանամք զեւլս աղաւթութեան նորա հնարել. որով երեի թէ թիւս մեղաց մերոց լրացեալ է, և տակաւին ձեռն Տեառն բարձրացեալ է։ Ահմատ խանն Վարաղալու մինչ եկն աստ լներևան, և համբաւ էհան՝ թէ բերել տալոց է զսրբութիւն նորա, մեք ես լաւուկ մարդ առաքեցաք, և թուղթ գրեցաք լներևան՝ առ քալ վերահասութիւն քանին. և ընկալաք զթուղթ ի խանէն՝ որ խոստացեալ էր այնպէս, թէ բերել տալոց եմ, ի լուսնի Չ, ի տեղս լինելոց է. և զմեզ ևս խնդրեալ էր գնալ առ ինքն, զի բերան առ բերան խօսելով՝ հաստատեսցէ զբանն, որպէս լաւալ քան զայս գրեալ եմք լիապէս առ վեհաղնութիւնդ, և զօրինակն թղթոյ նորա ես առաքեալ։ Եւ զի արդարև թէպէտ պատրաստ եմք անձամբ լինել զոհ վասն սրբութեան նորին, քալց խնդրելն խանին զմեզ համարեաք՝ թէ ո գիտէ, պարսկական խորամանկութիւն իցէ, և հասկացուցեալ մեր կառավարչացն տեղւոյս, նոքա ևս նոյնպէս համարեցան, և ասացին մեզ՝ համբերեա ցպալմանադրեալ օրն, և տես՝ բերել տալոց է գնա. թէ ոչ։ Եւ զի տօքա այսպէս առաջադրեցին, և մեզ ևս անկարելի էր առանց գիտութեան տօցա գնալ լայն կողմն. վասնորոյ մնալով մնացաք՝ մինչև էանց պալմանադրեալ օրն, և սրբազանն մեր ոչ երևեցաւ. այլ կրկի՛ն առաքեցաք զմարդ

լներևան, և ընկալաք զթուղթ ի նշանաւոր ումմնիէ ի մերայնոց, զոր և ահա առաքեցաք առ հաւատարիմն մեր պատուելի տիրացու Դէորգն, զի ցուցանելով զայն վեհաղնութեանդ, տեղեկացուսցէ թէ ով է զրօղն թղթոյն, և զինչ գրուածքն. որով որպէս ի-մանալոց ես՝ երեի սուտ լինելն բանին սըրբազան հայրապետին մերոյ. ցառս յաղգն ասացեալ էր նոյն խանն՝ իբր թէ գրեալ իցէ չահին վանն նորին, և հետևի բերել տալոյն. բայց ոչ այս և ոչ այն, զի ալծմոյս աղգ եզև որ այն Ահմադ խանն գարձեալ է ի Մարաղայ, և այլ ոմն Արաղցի խան նկեալ նստեալ է ներևան. եւ աստուածն է բազմաց՝ թէ զխանն զայն որ չեբեր զորբազանն մեր՝ Դաւիթն դաւաճանեաց, դրամավատնութեամբ յեղաշրջելով զմիտս նորա. ինչ և իցէ, այլ ևս գոհութիւն Աստուծոյ, որ սրբազանն մեր յաջողութեան է անդ ի Մարաղայ, որպէս գրեալ էր մեզ զթուղթ, և մեք ծանուցեալ եմք վեհաղնութեանդ: եւ մեք՝ զոր ինչ զալ ի ձեռաց մերոց ոչ խնայեմք ի նմանէ, քանզի լառաջն որ խնդրեալ էր զիսարջն, զայն լղեցաք. յետոյ ևս խնդրեալ է զ100 ոսկիս, զոր ևս խօսեցեալ մեր աստ ընդ Ելիսաբէթապօլցի ուրումն հաւատարմի մերոյ առնուլ զպարտս. խոստացաւ զայն տալ ի տեզի իւրում. վանորոյ և մեք յամսոյս 7, զյատուկ վարդապետ մի առաքեցաք անդ Ելիսաբեթապօլ, զի ստացցի զայն ոսկիսն, և հաւատարմաւ հաստուցէ առ նորին սրբազնութիւնն, զոր հաստուցանելոց է Աստուծով. և մեք ես գրեցաք զորպէսն բանին առ նորին սրբազնութիւնն, և խնդիր արարաք թէ եղանակ ազատութեան նորա զիարդ պարտի լինիլ, (մինչ ինքն զայն լաւ իմանալ քան զմեզ.) արդեօք՝ գրամովք, թէ ընդ խանին խօսելով, և թէ այլ ոճիւ, փութացի գրել մեզ. և թէ զկերպ իմն ծանուսցէ մեզ, ըստ այնմ ամենայն հոգունակութեամբ չանս գըտնելոց եմք վանն ազատութեանն.

Իսկ զնորին պալծառափայլութեանն զսէր և լարդութիւն զոր ցուցանէ առ մեզ, որչափ և պարտիմք, ոչ կարեմք ասել չատս. քանզի զոր ինչ կարևոր խնդիրս առնեմք, ոչ զանց առնէ. մինչ եմուտ նա ի քաղաքս և հրամայեաց տեսանել զպատրաստութիւնս իւրեանց գնալոյ ներևան, բայց յետոյ ետ արգելս այնմ դիտման, թէ ինչ պատճառաւ՝ ինքեան է լալտ, վասնորոյ խորհուրդ տուաք մեք մէլիք և իւզպաշի ազալիցն, արդ գրել ի դիմաց իւրեանց, զոր և գրեցին, և արարին զի, խնդիրս. մինն՝ առնուլ զներևան, և ժողովել զինևաւ ի տեղիս իւրեանց, ցուցանելով զպատշաճաւորութիւն ժամանակին առման նորա, և խոստանալով ևս ըստ պիտոյից զօրացն առնել զծառայութիւնս. և միւսն՝ հրամայել զի էլչիկքն իւրեանց ցուցցեն առ ինքեանս զհպատակութիւն ըստ բըն-նական սովորութեանն, և այլն. Զայս արդադիր ետուն մեզ, և մեք մասուցաք նորին պալծառափայլութեանն, և բերանով ևս խօսեցաք՝ և խնդրեցաք զնոսին. և նա՝ առ առաջին խնդիրն՝ ետ մեզ զչուղաք. թէ խաղացուցանելն ղզօրս ի հեռաւոր տեղի առնուլն զանապիսի երկիր՝ կալսերական բան է, և ինձ պատկանի, յորժամ կալսրութեանն տեսանեմ զօգուտ, յայնժամ առնեմ. բայց մեծալոյս լսերուք, և փոքր ևս համբերեցէք, Աստուծով տանելոց եմ զձեզ փութով երկիր հայրենեաց ձերոց. իսկ առ երկրորդ խընդիրն ևս՝ չնորհեաց երկուքն իսկ զյատուկ հրամանագիրս, զի էլչիկք նորա կացցեն հըպատակք ինքեանց, և թէ աստ ալպէս, ի հարկէ ներևան ևս տոնպէս լինելոց են. և ահա ինքեանք իսկ՝ Մէլիք և Իւզբաշի աղալքըն գրեցին զթուղթ առ վեհաղնութիւնդ, զոր և մեք լղեցաք.

Նաև՝ տէր Մելքիսէթ աւագ քահանային որ արգելեցեալ է ի Հաշտարխան ի դուբեռ. նաթէն վանն բանի կնոջ Աբիմէլիքովին, նորին աղազաւ խնդիր արար մեզ Սահակ եզբայրն նորա և հոգևոր որդին մեր, վասնորոյ և մեք թղթով զորպէսն ծանուցեալ նորին պալծառափայլութեանն, և նորա հաճեցեալ սիրով ընդ խնդիր մեր, իսկոյն առաքեաց ընդ-թուղթ առ նոյն դուբեռնաթին, լալտնելով զանուն մեր՝ թէ ալսպիսի մարդ խնդիր ետ վանն դոն քահանալիդ զոր արգելեալ ես ալդր. հրամայեմք թողուլ զդա զալ, և թէ ունի ինչ մեզ, աստ ևս կարող եմք վերահասու լինել, և այլն. Զալսպիսի բանս լալտ առնելով վեհաղնութեանդ, կամիմք ոչ զալ ինչ, քան թէ զնորին պալծառափայլութեան բարեսրտութիւնն որ առ մեզ՝ ծանուցանել, ուրեմն մի աւելորդ գլխացաւութիւն համարեսցի.

Իսկ զոր լառաջմանէ խնդրեալ էիք զՔ պատշաճաւոր քահանայս վասն տեղւոյդ, իրաւի զտանին առ մեզ այնպիսի քահանի չնորհունակ քահանալք, բայց ի նոցունց են՝ որք դթալով ի հոգս իւրեանց, ոչ կամին զղալն. և են՝ որք զաւակօք և ընտանեօք են ծանրաբեռնեալք, և դժուարին երևին ուղեորութեան. վասն այնորիկ լամեցուցաք ցարդ. իսկ թէ հարկաւոր է առաքիլըն նոցա, խնդրեմք ազդ առնել դարձեալ, զի հոգասցուք առաքել։ Եւ այլն մնամք վասըն երկարութեան անդին կենացդ խոնարհ աղօթարար՝ ծայրագոյն ի տան վրաց՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ արքեպիսկոպոս հայոց։

1806. դե՛կ 8
ի Թիֆլիզ։

ՃՀԸ. *Թուղթ Դանիէլ կաթողիկոսի առ Եփրեմ Արք եպիսկոպոս։*

Ցարդ ոչ կարացաք իմոյ սիրեցելոյ Տեառնդ եփրեմ Սրբազան Արք եպիսկոպոսիդ ողջոյն ի Քրիստոս Տէր մեր։

Գիտացէք սրբութիւն քո։ զի յառաջ քան զայս՝ Ստեփան Աղայն ի Թէհրանու եկեալ ի Թաւրէզ յԱ ամսոյ, զերի Նարեկն մեր բերեալ առաքեալ էր առ մեզ ընդ նմա մատնագիր մի գիր գրեցի առ քեզ և եղև որ Ահմէտ խանն Երևան Բէգլար բէգի նստաւ և մարդ լղեալ զմեզ տարաւ, որ մինչև ի Մարանդ գնացի և անդ պատահեցան մեզ Ստեփան Աղայն և Վտանեցի պարիկ Աղաւեան մահտեսի Սաֆրազն, որ գային ի քաղաքն և մեզ քիւրք մի և բաւական խարջլուխ ետուն յանուն սրբութեան ձերոյ ընկալեալ զմեզ, և անդէն մնացաք ի Մարտնդ որովհետև Ահմետ խանն աշխ եղև Երևանու և այլ ոչ տարաւ զմեզ. բերեալ կրկին դարձոյց ի Մարազայ յառաջին բնակութիւնն մեր. այս երկու տարի եղև որ Սրդու խանն ի դիշերի և ի տունջեան զմեզ սխիթարէ. զի կամ ի տան Ահմետ խանին և ի կիւրակիսն գնամ լսկեղեցին և դառնամ ի տեղին իմ. միայն ցանկամ լսել զբարի լաջողութենէ Ամենողորմած կայսերն և զբարեբաստութեանց քոց. խարջլուխի կողմանէ նեղութիւն կրեմ Ահմէդ խանն կամի ինձ հարազատութիւն ցուցանել ըստ ստացեալ Տէրութեանն ըստ պատահելոյն, այժմ յառ տեղն էր եկել չմնաց Երևան։ վասն որոյ և զի դարձոյց. խնդրեմ գրել զանազան կողմանցդ զի ուրախ եղէց և լեր ողջ ի ցնծութիւն Դանիէլ կաթողիկոսի հայոց։ Ներսէս վարդապետին կարօտիւ ողջոյն տամ

Գրեցաւ՝ 1806 դեկտ. 17 ի
Մարազայ։

1807

ՃՀՌ. Նորին Դանիէլի առ Յովհաննէս արք եպիսկոպոս Վրաստանի։

Իմ փոխանորդ և կալսերական բարեհաճութեամբ հաստատեալ ծայրագոյն կառավարիչ բոլոր հայոցն Վրացտանու և Կղիսաբեթպօլու և Իմէրէթու տեառնդ Յովաննէս Արք եպիսկոպոսիդ սիրով ողջոյն։

Զձեզ լաւաջ ձեռամբ Ստեփանին և Մելքոնին լղեալ հանդերձդ ընկալալ գրովդ բայց քիւրքն անլալտ է տուեալ էին Միրզայ Ռոստոմին և ասէ թէ լետ ատին և հետ տարին և ոմանք ասեն՝ թէ առ ինքն է. և այնպէս անտես լինէն գնացին Թէհրան. և լաւաջ քան զալս Ահմէտ խանն մէկ թէսկերալ էր դրեալ թէ ալժմ շահղադալին ընծայ տուր և մաւխաթտալ լանձգ առ որ տարին երեք զըստ Երեանու խանին հատուցանես և զաւզ առնես և թէ տարին մի անզամ ևս շահղադալին ընծայ ղրկիր երեք թաքլիֆն ևս լանձս չառի Միրզայ Ռոստոմ տագնապի մարդ լղել որ երկու հազար խոստացեալդ այլ անուամբ զայն քերել տալ և ումի կամի տալ գիտեմ որ չես տար. դէպի գալս քերան առնուլ չկարէ բռնութենէ բէլլիլամիչ [33]) արեր Յովաննէս Ազալի հարազատ փեսայ պարոն Առաքելս որոյ տունն կամ որ ինչ պատմեսցէ հաւատարիմ լիցի. և գնալոց է Հաշտարխան ի գալն իւր լայդր ամենայն լարգանօք և սիրով ընկալեալ չահեսիր և ամենայն բանիցն միւթավեաջի [34]) լիր և որքան պատուել ինձ է համարեցեալ ըստ որում և ես ի տան իւրում պատուիմ. և քան գալս լաւաջ առ գրաֆն և առ քեզ ձեռն եղեալ գրեանքն լղեցի լուսամ թէ հասեալ իցեն բայց ազդեցին թէ ի ճանապարհին բանան գրեանքն այլ չգիտեմ ղղլբաշն թէ ուռուսներն ի հարկէ որպէս լինի քեզ հասանելոց է և ես չիւարեալ և տարակուսեալ ամենայն գալստեան էլչոցն չատ լամեցան չգիտեմ թէ վասն էր քիւրքն էլ այնպէս կրակն ընկաւ չգիտեմ թէ առ ով կալ ղղլբաշի խարճ չէ գին չեն տար և գինն եթէ զինչ է չգիտեմք եթէ կարելի է գրեա. և ցանկամ թէ որով կերպիւ և իցէ աթոռն գտանիլ և ազատիլ ի միջոյ հեթանոսաց. ողջ լեր ամենայն ցնծութեամբ ի սէր Դանիէլ կաթողիկոսիս ամենայն հայոց որ եմ աղօթարար վասն կենաց և բարելաջողութեան ձերոյ.

Գրեցաւ ի ՌՄՕԶ և ի մարտի ԺԵ.
ի Թավրէզ։

Սիրեկան եղբարցն իմոց տեառն Գրիգոր պատրիարգին և Բարսեղ արք եպիսկոպոսին Կարբեցի Օլանէս և Փիլիպպոս վարդապետացն և բոլոր միաբանից սիրով ողջոյն տամ։

✓ ՃՀԳ. Թուղթ Մինասայ Աղազարեան առ Շիրեմ արք եպիսկոպոս։

Բարձր Սրբազնագունեզ Հայր
Ողորմած Տէր.

Ներապոյն զեկուցանելիք բարձր սրբազնութեան ձերոյ ներկայ միջոցիս ալս է, ի համալնիցս քաղճալի Դանիէլ Աստուածընտիր կաթուղիկոսէն ընկալալ նամակ շնորհալի դծեալ սիրալի մատամբ իւրովք. զպատասխանն մեր ուրախ և խոնարհութիւնս յայտնեալ եմ և խնդրեալ եմ որ երբ Աստուծով Թավրիզու գալոց լինի նախ զէպի Բամբակ կամ Գեանճալ Թիֆլիզ գալ որ լետոյ մեր զօրօքն և օգնականութեամբ ի տուրք Աթոռն գնասցէ որ մի լիցի թշնամութեամբ չարեացն մի կերպիւ գիտաս պատահեսցէ. ալժմ Թիֆլիզ փոստ է հաստատեալ կարող ես Սբր-

բազնութիւնդ ես գրել զոր ինչ և կամեցիս։

Սինօթ հաստատութեանն և Սրբազնութիւնդ փոխանորդ կարգեալ է գրաֆն հանգերձ Հնդկաց հասարակութիւնն որ Կալկերին վերայ գրովս թարգմանեալ տուեալ եմ։ Վիկտոր Պաւլիչին որովհետեւ կայսրն այժմ գնացեալ է այնպէս առանց պատասխանի մնացեալ է։

Զոր ինչ պատկանի Գրիգոր սևակրին տեղս գրաֆիցն ոչինչ լուծումն չեմ ստացած. Ներսէս վարդապետն Մոլդավի և Վոլոխի ուղարկելդ բարի է, եթէ հնար լինիցէր որ Սրբազնութիւնդ փոքր ժամանակաւ լինդ կարողանայիր գնալն չատ բարեգոն էր լինելոց. ապա ես Միխեալսոնին և Ալէքսանդր Եգորչին գիր եմ դրեալ ուղարկած եմ Գրիգորիոլ որ թէ Սրբազնութիւնդ տեղդ չգտանուիս Յովանէս վարդապետն ընտանալէն ուղարկի չատուկ մարդով որ փութով նոցա հասանի. Սրբազնութիւնդ ես կամիս կրկին Միխեալսոնին առաւել Սօլօլովին դիր գրես որովհետև նորա էլ բաւական սևակրի գործքն և բանի որպիսութիւնն լաւտնի է։

Սրբազան հօրս մարտի 21էն . . . . . հանդերձ մաղխթրաթի և հասարակութեանն գրելով եղբօրս վասն կտակի դրամին տեղիդ ասելոց և կարգադրելոց եմ որ գրամն հաստուցանի պարտ է որ մաղխտրաթն և սրբազանն գիր տաք ընտանալոյն։

Թիֆլիզու նոր լուր չունիմ . . . պատերազմն էլ պատճառ է որ ողորմած կայսրն չգնայ . . . . աղաչեմք զԱստուած որ աշխղի թշնամուն հալածել և չար. . . . . վերջացնել. աչխաբհաց հոնգստութիւն պարգեւել այլ, ցանկամ Սրբազան հօրդ առողջութեան աշողում.

Մնամ խոնարհ փոքր ծառայ
ՄԻՆԱՍ ԱՂԱԶԱՐԵԱՆ

1807 ապրիլի 25
Ս. Պ. Բուրք.

ՃՂԹ. Տորին Մինասայ Աղազարեան առ Մանուէլ վարդապետ։

Բարձր արժանապատիւ և իմ սիրելի Մանուէլ վարդապետ.

Ներել որ միշտ չեմ կարենում գիր գրելն լսանել ձեզ իմ դրութիւնս, և գիտեմ որ ներող ես միայն լարկաւորն կատարելոյն զանցն չեմ առնելոց Ներսէս վարդապետէ ազդակցդ գալիս որ գրածէք ի վաղուցհետէ գրած եմ որ ուղարկէք. եթէ զեռ ևս չէք ուղարկաց գալոցողով՝ ուղարկէք Յօսկով և մանդր տղայոց կողմանէ որ գրածի. որով յետոյ տեղդ Սրբազանի գրածովս. . . . արա. նէք, կարքելոյ. ուրեմն էլ լարկ չէլ ուղարկելն։

Սրբազան վէրինցն ստացաց գրիս օրինակն տեսանելոց ես. եթէ սրբազանն գնացաց լինի ուղարկես. . . .

Ալէքսանդր Եգորչ Տօրօլովն այժմ Մալգավիայ Միխեալսոնովի մօտն է. ձեզ էլ ծանօթ է նորայ գիր գրէք թէ Ներսէս վարդապետիս հանցնարարութիւն կամ թէ սեվահոգն կողմանէ, պարոն Յովանէս Աթովին և այլ բարեկամաց սիրով ողջոյն առնեմ. և եղբօրս կտակն դրամէլ. յետոյելոց եմ տեղս հասուցանելու Մնամ խոնարհ ծառայ
Սինօթ հաստատելոյն և այլ բարի գըրութեանն գրեանքն որ ուղարկածիր տեղս տված գրաճ Կոչուբէյին և նալ ողորկած էր ինօատրանի մինիստրին քանն էնպէս մնաց, և ես էլ թուլ եմ տված. այժմ որ արքազան Գանիելն աթոռն ժառանգելոյ օրինաւոր կաթուղիկոս գոլով այժմ պարտէ դրութիւնն կարգելն, և լինքն էլ Մարտիրոս գրածն պարտէ նորմէ գրի, կամ տեղէ կարգադրութիւնն առնի. հաստատի և տեղս ծանուցումն առնի ոչ թէ խորհուրդ կամ հրաման խնդրի. լերփ հաստատեցին և տեղս ծանուցումն ետ քանն ավարտէ լինելոց։

.Ես լոյս ունիմ որ թէ Բասրայ ճակոբ վարդապետին լիացումնեն տված, համարձակ կարող է Բաղդատ թողեալ նուիրակութեամբն գալ աթոռն և Բասղիտու կամ մօտ քաղաքներից էլ մեծ մուտկեն ստանալոց և Հընդկաց աչխարհն էլ մեռոնով լավ համեստ մարդ ողորկիցեն կրկին մեծ արթունքով լեռէ դառնալոց. թողղ Պօլիս և այլ տեղ ուրեմն պարտէ սղուշացուցանել որ աթոռի դրութիւնն կարգադրեն առաւել, որ առանց լարկավորութեանց եպիսկոպոս չձեռնադրի որ ավել աթոռին ծանրութիւն լինի։

Ղաիմու վանքի դրութիւնն ինչ կերպ կառավարութեանն արթիւնքն, ցանքն կամ այգեաց պտղաբերութիւնն խնդրեմ ինձ գրել, թաթէոս վարդապետն ինչ է անում կամ չինութիւնն ինչպէս է, բարի դրութիւն ինձ ուրախութիւն է և սիրով ոգին աչն կու համբուրեմ։

Կէտումս ստացայ արքազանիտ գրեանքն հանդիրձ Մատրասու գրերովն գալու փոսաին պատասխան գրելոց եմ, կաթուղիկոսի գրի կոպին առանց կառավարութեանն վկայութեանն ողորկեցի եթէ ինչ կարին է կաժիս տեղս կարելի է հոգալն.

1807. սեպ" 26։ Սնամ արքազան հօրս խնարհ փոքր ծառայ ՄԻՆԱՍ ՂՂՈՋԱՐԵԱՆ

ՃՂԳ. Դանիէլ կաթուղիկոս առ գրաճ (*):

Պայծառափայլ Գրաճ
Իմ Ողորմած Տէր

Անկշռելի ցաւակրութիւն Ձեր՝ որ վանս տառապեալ Սրբոյ Աթոռոյս Արարատեան և սակս վշտամաչ ծերունուդս, մի ղկնի միոյ ժամանելով ի լսելի իմ, ի գրութեանց արժանավալել դիտեն ընդ հովանեաւ քաղցր Տէրութեանդ վիճակեցեալ Աղգին հայոց Սիրեւալ Արք եպիսկոպոսին և Վէքիլին Սրբոյ Աթոռոյս բարձր բարեծնունդ Մինէ Լազրիչ Լազլեանին, սրբէր զարտասր լերեսաց և սփոփեալ միսիթարէր զվշտագնեալ ծերունիս, մինչ եհաս ժամ՝ որ բաւ համարեալով ամենակարողին Աստուծոյ ալսքան տարաձիգ ժամանակ աքնիլն իմ ի զանազան բովս փոր-

ձութեան, դարձոյց զսիրտ պարսից իշխողին և որդւոյ նորին ի քաղցր ակնածութիւնս, որով հրամանաւ առեալ ոմն ի Դաւրէժ քաղաքէ՝ ի բանտէ գերութեան իմով մուծին ի յամենացանկալին հոգւոյս ի տուրք տաճարն Արարատեան, և բաղմեցուցին ի վերայ հայրապետական Աթոռոյս. որմէ զրկեցեալն էի

Վասն որոյ աճապարելով իմ ասու խոնարհ յայտարարութեամբ ի ձեռն Տէր Մէլիքսեղ աղնիւ Ազատ քահանայիս. որպէս առամէնողորմ Աթոռ. Նորին Կայսերականի Մեծութեանն զկնի Աստուծոյ լուսոյն և ապաւինին համայն տառապեալ քրիստոնէից, նոյնպէս և առ Պայծառափայլութիւն ձեր, մատուցանեմ զԱմենայնկրմնաւանդ չնորհակալութիւնս իմ հանդերձ լիաբերան գոհացողութեամբ, ընդ որս և օրհնեմ զպատուականագոյն կեանս ձեր, և ոչ երբէք մոռանամ զանմահ բարերարութիւնս Ձեր

Արդ ոմ ճշմարտասէր Պայծառափայլ Իշխան. զի որպէս մարգարէն երանութիւն տայր աղգին Իսրայէլացւոց թէ երանի ՚ի մեզ Իսրայէլ՝ զի հաճոյքն Աստուծոյ ծանօթ մեր են, Ապա՛ս և ես ամենանուաստ հոլիւս՝ զնոյն երանութիւնն կարդալով ի վերայ խղճալի աղգին իմոյ՝ ունիմ աւետիս մատուցանել թէ երանի է մեզ որովհետև զի հաճոյն և սիրելին Աստուծոյն երկրաւորի՝ ամենագթած Կայսերն Մեծի, Նորին Պայծառափայլութիւնն ծանօթ և բարերար մեր է։

Ուրեմն աներկբայ լուսամ, զի որ ինչ վէքիլն մեր և Սրբոյ Աթոռոյս Մինէ Լաղրիչն վասն օգտի և բարեդրութեան բան ինչ առաջարկեսցէ ձերդ պայծառափայլութեանն, զայն ամենայն իրր գառաջարկութիւն մեր համարելով չնորհ ունիցի՛ք մխիթարելով առՀղուտվատ կայսրն, զի զսուն հետայն եա՝ որ ինչ ողորմութիւնք բղխեացին յամենողորմ Աթոռոյն, զսոյն ամենայն ձերդ չնորհ և բարերարութիւն վարկանելոյ համ։

Որ և հակելով իմ յաղօթս յարաժամ վասն երկարութեան անդին կենաց Նորին իշխանութեանն և ձեր.

Մնամ իմ ողորմած Տէր ձեր պայծառափայլութեանն

Ծամի 1807 հոկ. Խոնարհ աղօթարար պաշտօնեմբերի 30 ի նեայ Դանիէլ պատրիարգ սուրբ էջմիածնին ամենայն հայոց։

1808

ՃՂԴ. *Ի սիրազան Դանիէլ պատրիարգէ աւս ի Եաշ, ի Փոթիշան, ի Սչով, ի Բուգրէշ, ի Փօքշան, եւ յՕրսման ընակեալ Տայոց գրեալ օրհնութեան եւ Տարցման կոնդակի Տամառօտ պիտանիքն յիշատակին աստ։*

Զկնի օրհնութեանց եւ այլոց այսպէս ասէ։

Ալ սիրելիք մեր ի Տէր, որքան այն ամենայն ճշմարտութեան ջատագովութիւնք ձեր, եղեն մխիթարիչք բազմավիշտ սրտի մերում եւ հոգւոյ։ Գրեթէ առաւել քան զայն եղեն նորոգիչք վիրաց եւ ցաւոց մերոց այս ամենայն օգնականութիւնք ձեր եւ օժանդակութիւն խարէութեան եւ ստութեան ընդդէմ միաստար խաղաղութեան եւ սիրոյ, որ ի յայտնել ճշմարտութեանն սկսեալ տարածեցաւ ահա ի հոգիս և ի սիրտս համօրէն մերազնէից։ Ապա դի է, դիարդ կարաց տանել քրիստոնէական խղճմտանք ձեր, զի լեալ լսելոյ և տեսանելոյ ձեր զդաստաստանական վճիռ եկեղեցական հարեալ ի վերայ Գրիգոր վարդապետի մեծագոյն ժողովով, և բազմութեամբ եպիսկոպոսաց վարդապետաց և քահանայից, վերստին ընդունեցիք զոմն զնա, ոչ միայն որպէս վարդապետ, այլ և եպիսկոպոս և առաւել ևս լիշատակելով զնա որպէս առաջնորդ լերկրի ձերում։

Ո՞րպէս ոչ ցաւեցան սիրտք ձեր յաղագս եկեղեցւոյ Հայաստանեայց, զի դուք անպատուհաս զնա, լաւ համարեցիք պատուել զանարդելն ի նմանէ, ոչ ապաքէն արդելեալ նա եկեղեցական դաստաստանաւ, զրկեալ յամենայն հոգեւորական պաշտօնէ։ Այլ սակս թէպէտ արժան էր մեզ լինել վրէժխնդիր հոգևորական սուրբ օրինաց, բայց խնայելով ահա ի հաւատարակութիւն ձեր ալսու օրհնութեան կոնդակաւ մերով հրամայեցաք միայն հարազատ որդւոյն սրբոյ Աթոռոյս և մեր բարձր արժանապատիւ Մանուէլ վարդապետին, որ լայծորդ է ի Գրիգորիպօլ, մերձ կողմանցդ, որպէս զի նա եկեալ վերահաստատ լիցի ստոյգ որպիսութեան իրացն անցելոց ի մէջի ձերում այդպիսի եղանակաւ, և յայտնեսցէ մեզ վասն ստուգութեան մահաբերին, զոր զուք յօրինեալ էք և մատուցեալ ամենողորմած Մեծի և Օգոստափառ կայսերն տալ ձեզ գԳրիգորն, որպէս առաջնորդ, ճետ որով և մեք արասցուք զարժանաւորն։

Զի թէպէտ դուք ամենեքեան սիրելի էք լինձ և որդիք մեր՝ և սրբոյ Աթոռոյն մերում էջմիածնի։ Այլ որպէս և հրամայէ առաքեալն, հատուցանել որում զպատիւ, զպատիւն, այնպէս ուրեմն պատիւ սրբոյ եկեղեցւոյ հայաստանեայց՝ պարտաւոր եմք առաւել ևս հատուցանել քան այլոցն, և զամենայն աւանդութիւնս նորին, և զսուրբ կանոնս հաստատուն և անշեղելի պահել՝ որպէս զի չերերիցեմք ի մեզ զդաստապարտութիւնն ինչ հոգւոյ և մարմնոյ։

Որք և այսպէս գիւացեալ, ողջ լերուք ի Տէր մեր Ցիսուս Քրիստոս միշտ՝ ամէն։

Եւ այլն հսկելով միշտ յաղօթս վասն համօրէն օրհնեալ աղգիս մերոյ, մնամ անդադար բարեմաղթ առ Տէր Դանիէլ կաթողիկոս ամենայն հայոց և ծայրագոյն պատրիարգ Սրբոյ Էջմիածնի։

Ցամի Տեառն 1808
ի փետրվարի 29 ի
Սուրբ Էջմիածին։

ՃՂԵ. Դանիէլ կաթողիկոսի առ Ներսէս վարդապետ։

Ցիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Դանիէլ կաթուղիկոս և ծայրագոյն պատրիարգ ամենայն Հայոց Աղաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի և լուսաւորիչ Աբոտոյս Էջմիածնի, Ծորմէ սիրով սրբոյ հոգւոյն և Քրիստոսական ողջունիս ծանիր աղնիւ սիրելիդ իմ և հարազատս որդի սրբոյ Աբոտոյս Ներսէս Աստուածիմաստ վարդապետ դի ի Մազաքու և Ցխեթայու դրեալ դրեանք հասին առ իս և ահա ըստ դրեցելոյդ Մելդովայու քաղաքացն և այն բ քահանայից արդելման դրեանքն դրեալ լղեցի. և դու լայդր դեռվքարով թողեալ իքեզդ տես թէ այնպէս կալ և զոմանս ի կալչին և Քիւքիւրի թագն և դաւազանն բեր ընդ քեզ և ի միաբանից լայդր կացօղքն և չկացօղքն չեն կարգաւոր ի միաբանութենէս մերմէ. և Ցհաննէս Աղաքնորդին բամբակ լղեցաք և քանի մի բարձի երես ընծայացու էր առեալ 53 թումանի ավելացեալ փողն հետապ արա առ և փիլոնացու չկալլու իսառալ կաղէք և չուխացուք առ և ընդ քեզ բեր. բիլօր Ջահից համար բան չէիր լայտնեալ արքազան եփրեմ Արքեպիսկոպոսին գրէ որ հաստացանէ Ցհաննէս Աղաքնորդին խրատել լանդգնութեան ճանապարհէն դառնալ Աբոտոյս նեղութիւնն չատ է. պակասութիւնն առաւել անձնական կարիքն չի հոգալ Աբոտոյս լաւութեանն հնտևի. ողջ լեր ամենայն ցնծութեամբ ի սէր իմ, որ դրեցի ի 1808 ե ի մարտի 1 ի սուրբ Էջմիածին։

ՃՂԶ. Դանիէլ կաթուղիկոսի առ Դաւիթ քահանայ։

Ցիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Դանիէլ կաթուղիկոս և ծայրագոյն պատրիարգ ամենայն հայոց՝ Աղաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի, նաև Քրիստոսակերպ մենծի Աբոտոյս՝ սրբոյ Էջմիածնի։

Ծորմէ սիրով և օրհնութեամբ բազմաս, և կենսատիր սուրբ ողջունիս ծանիր սիրելի և հոգևոր որդեակ մեր և հարազատ զաւակ սրբոյ Աբոտոյս ալժանապատիս Տէր Դաւիթ խոհեմատաստ քահանայ։ Ջայր հաստատրիմ գործ է գտանել. գրէ իմաստուն Սողոմոն, ասդ՝ սիրելին մեր և գերապատիս Աղաքնորդն քաղաքիդ՝ Ցհաննէս Արքեպիսկոպոսն որպէս գիտէաք և մեք լաղաջնմէ իսկ անտի, ալժմ ևս գրեալ էր զնչմարիտ հարազատութենէդ, զոր ունիս հաստատուն առ լուսաւորիչ Ցնօզս քոյ՝ մայր սուրբ Աբոտս և առ մերս հոգևոր Հայրութիւն։ Որ և վասն ալդպիսի հաստատութեան քո՝ որպէս կարդեալ էր զքեզ վերակացու ի վերայ ճորտիցն ս. Աբոտոյս, նոյնպէս և մեք ալսու օրհնութեան նամակաւ մերով կարդեալ հաստատեցաք ի գոյն գործ։ Որով պատուիրեմք ուրեմն, զի ըստ հարազատութեան քումի լամենայնի մուղալէք լինիլ ամենայն ճորտիցն սրբոյ Աբոտոյս՝ (Հախ)վերդովէն և ի տրգուց նորին, ըստ որում չնորհեցաք դոցա լատկապէս զկոնդակ ազատութեան և բարեխնամութեան, որպէս և չնորհեալ էր նախնի սուրբ Հայրապետն մեր առ Աստուածատուր կաթուղիկոսն դոցին նախնեացն՝ Հախվերդիին և որդւոյ նորա Ցարութիւնին, և ի միւս ճորտիցն ևս ի պահանջելդ գհատուցանելի ճորտական նուէրս իւրեանց, ասելի ինչ մի պահանջեսցես քան զոր իւրեանց առաջին սովորութիւնն է. և զայս ևս որքան կարելին ճ, սիրով և քաղցրութեամբ, և մի բնաւ նեղութիւն տալցես, զի մի զգուեալ ցիր ուցան լինիս աստ և անդ, ահա ասես կերպիւ մուղալէք լեալ գործոյդ, առաւել ևս մեծասցի հարազատութիւնն քո ի վերկինս և ի վերկրի։ Որ և ըստ ասմի Հրամանի մերոյ կատարելով ձողջ լեր ի Տէր, զօրացեալ ի պահպանողական Աղ նորին. Ամէն.

Դանիէլ կաթուղիկոս ամենայն Հայոց և ծայրագոյն պատրիարգ սրբոյ Էջմիածնի.

1808, լապրիլի 10
ի սուրբ Էջմիածին։

ՃՂԲ. *Դանիէլ կաթուղիկոսի առ Փիլիպ Վասիլիչ։*

Բարձր բարեծնունդ Փիլիպ Վասիլիչ.

Բարեպաշտ սիրելի մեր,

Ցիսուսի Քրիստոսի . . . . . .

Հոգևորական սիրով և Աստուածային բազմապատիկ օրհնութեամբ Քրիստոսական ողջոյն նուիրեմք և հանդերձ աղօթիւք մաղթեմք յԱստուծոյ բարձրելոյ բարձրագոյն վստաւորութեամբ հոգւով և մարմնով պահպանել զձեզ ընդ հովանեաւ ալոյ ձեռին իւրոյ։

Ի բանից և ի գրութեանց մերոց հարազատից՝ լայնեցաւ մեզ հարազատութիւն ձեր առ. Ցիսուս Քրիստոս պարծանքն հաստատացելոց առ. ամենաողորմած ինքնակալն կայսր ակնկալութիւն ամենայն անապցելութեանց քրիստոնէից, և առ. յանձն եղեալսն ձեզ լանուն Քրիստոսի և սուրբ պատկերի նորա, զոր որպէս ահա այս քանի ամ վկայեալ հաւատարազատութեամբ և քրիստոնէավայելուչ բարեմտութեամբ առանց ձանձրանալոյ զչէստոնս յանձն առեալ ի վերայ ծայրագոյն կայսերական պաշտօնին ձեզ յանձնեցելոյ մեծագոյն հոգածոյութեամբ չանալք անվտանգ պահպանել և զարբազան անօթսն Աստուածային տաճարիս և զալլսն՝ որք ընդ պահպանութեամբ ձեր։

Արդարև գիտեմք և ճանաչեմք զբարձր բարեծնունդ սիրելիդ մեր վեհագոյն ոգի և Աստուածահաճոյ անձն. ի չնորհացն Աստուծոյ պատրաստեալ յայսմիկ ժամանակի վասն լինելոյ յաւուրս օգնական զրկեալ աթոռոյն մերում Արարատեան սրբոյ Էջմիածնի և մեծագոյն մխիթարութիւն մեզ և ամենայն հոգևորականաց և մարմնաւորականաց հայոց։

Շնորհակալ եմք զձէնջ յոյժ յոյժ՝ և պարտաւոր համարիմք զմեզ զամենեսին՝ լինել աղօթաւոր միշտ վասն ձեր և վասն կենդանեաց և նոյնցեալոց ձերոց։ Ասեմ, զի կամքն Աստուածային է որ ձեզ առաւելացուցեալ զայդ աշխատութիւն, խնդրեմք, զի անուսուզելի ջերմեռանդութեամբ՝ մինչև ցժամանակ ալցելութեան Աստուծոյ մեր խնայեսջիք լաշխատանս ձեր վասն բարւոք պաշտպանութեան սրբազան Անօթոյն Աթոռոյ հայոց, առ որ հաւատամք, թէ Քրիստոս որ էջ սիրով ի հիմնարկել լուսով զայս տաճար նոյն և զչնորհ երկնային ամենատատ պարգեաց պարգեսցէ ձեզ և համօրէն կենդանեաց և ննջեցելոց աշխատասիրացդ վասն սոյն տաճարի։

Ողջ լերուք տերամբ և մեք եմք և մընամք ճշմարիտ պատուելութեամբ վասն կենաց և յաւաջադիմութեան ձերում բարձր բարեծննդութեան միշտ աղօթարար Դանիէլ կաթուղիկոս հայոց։

1808. ապրիլի 12 աւուրն.

ի ս. աթոռս Էջմիածին։

ՃՂԳ. *Դանիէլ կաթողիկոսի ի Թիֆլիզ առ քարեծնունդ Միխայէլ Մարկիչ Բաշէվսկին ատենադպիրն կառավարութեան վրացտանու հատարակութեան ժողովոյն։*

Բարեպաշտ սիրելի մեր ի Քրիստոս։

Ցիսուսի Քրիստոսի . . . . . .

Նուիրեմք զողջոյն Քրիստոսական ընդ Աստուածային բազմապատիկ օրհնութեան և ցանկամք, զի լինիջիք միշտ ի բարի կացութեան։

Ի գրութեանց հաւատարմին մերոյ վրացասնու հայց առաջնորդ ցօհաննէս արք եպիսկոպոսի, լայնեցաւ մեզ վասն լինելոյ ձեր այր բարի՝ և բարերար առ խղճալի հայոց ազգն մեր և առ ինքն առ որ և մեք ուրախ եղեալ օրհնեցաք զձեզ ամենայն միաբանութեամբ հոգևորականաց մերոց։

Ի կատարեալ զոհունակութեամբ զԱստուծոյ որ պարգևեալ է ձեզ զայդպիսի հոգի բարերարութեան, մատուցանեմք և ձեզ զմեծ չնորհակալութիւնս, վասն ամենայնի զորս լանուն Քրիստոսի մատուցեալ էք յինչսալ հարազատին մերում և հայոց ազգի՝ զքաղցրութիւնն հոգոյ ձեր և զգործս բարերարութեանց։

Գիտէք և դուք Աստուածապարգև ձերոյդ իմաստութեամբ թէ ակնկալութիւն հաւատացելոց Քրիստոս բարերար և փրկիչ աշխարհի, ոչ կորուսանէ զվարձս ձեր, վասնորոյ խնդրեմք և մեք անզլջանալի կերպիւ ունել միշտ զայսպիսի գրութիւն բարի առ հաւատարիմ սիրելին մեր ցօհաննէս արք-

պիսկոպոս վրացտանու հայոց, և ս. ժողովուրդս մեր և յամենայն կարևոր պատահմունս լինել նոցա օգնական ըստ կարողութեան։

Ողջ լերուք և մնք եմք և միաբանք ճշմարիտ պատուելութեամբ վասն բարձր բարեծնունդ սիրելւոյդ աղօթարար միշտ։

ԴԱՆԻԷԼ, կաթուղիկոս հայոց։

ի 1808 տպրիլի 12,
յԱթոռ Արարատեան
ս. Էջմիածնի։

ՃՂԹ. *Դանիէլ կաթուղիկոսի առ զրաճ Նուտովիչն վասն զևրի թաւադացն Թիֆլիզայ։*

Պայծառափայլ գրաճ Իվան Վասիլիչ,
. . . . . Ողորմած ասէր։

Ցիստսի . . . . . մեծաւ յարդողութեամբ մասուցանեմք ղողջոյն Քրիստոսական և հանդերձ աղօթիւք մաղթեմք յԱստուծոյ վասըն ձեր զերկարութիւն կենաց կատարեալ ուրախութեամբ հոգւով և մարմնով։

Գրեալ էիք վասն գերի տաճկացն զքանինին Թողուլ կամելոյդ, զի և բարեբարոյ Հիւսէին Սարդարն Թողուցու զչորս թաւադսըն որք աստ ի տուրք Աթոռս կան ի մէջ արտաստաց և տրտմութեան։

Այժմ ահա լիշեալ Սարդարն Երևանու առաջագրեալ էր մեզ՝ և մեք յայտնեմք ձերում պայծառափայլութեան, որպէս զի վերկութիւն կամելով այս ողորմելի թաւադ գերեացն, հրամայեսջիք կանխաւ բերել ի Բամպակ առ Նեալիտալոյն զտաճիկն զորս խոստացեալ էք Թողուլ, և յորժամ նոքա ժամանեսցեն առ լիշեալ ենարքն, մեք ևս աստ երաչխի եղեալ գրով մեծագոհ Սարդարին առաքեմք նախ զդ թաւադսն ի Բամբակ առ Նեալիտալոյն և ապա բերեալ զտաճիկն յանձնեմք Սարդաքին և զձեռագիր մեր առնուցումք։

Ողջ լերուք ի տէր և մեք եմք և միամք վասն կենաց և վասն բարեյաջողութեան ձերոյ պայծառափայլութեան

1808, տպրիլի 12 աւուրն, ի գերադաս աթոռ ս. Էջմիածնի։

Խոնարհ աղօթարար ԴԱՆԻԷԼ կաթուղիկոս ամենայն հայոց։

Ա. *Դանիէլ կաթողիկոսի առ զրաճ Նուտովիչն վասն յղևլոյ զգևրի թաւադսն։*

Պայծառափայլ գրաճ Իվան Վասիլիչ։
Ողորմած տէր։

Մեծաչուք և վեհափառ Շահն Պարսից և նորին ժառանգ Աբաս Միրզայն իշխող Ատրպատականի և բոլոր զօրապետք և զօրք նորա նկատելով զմեծ ողորմութիւն հզօրեղ Ինքնակալ Կայսերութեան ամենայն ռուսաց լինել ի վերայ մեր, բարձրացոյն չքով առաքեցին զմեզ յԱթոռ սուրբ Էջմիածնի ուր կամք ահաւասիկ, և աղօթեմք վասն կենաց նորին ամենազողորմած սուրբ Կայսերութեան և փառաւորութեան զօրապետաց և զօրաց նորին։

Նոյնպէս և բարեբարոյ մեծազահ սարդարն նոցին Հիւսէյն խան՝ համաձայն այլոցն նոյնպէս համարելով վասն մեր, մեծաւ յուսով մի՛շնորդ էարկ զմեզ առ Պայծառափայլութիւն ձեր վասն Ալիդուլլա խանին և այլոցն՝ խոստանալով փոխանակ նոցին արձակել և ինքն զգերի թաւադսն, որք չէին և չեն ի մնծի համարման առաջի տերանց իւրեանց թէ մնալ ունիցին այնոքիկ յարգելանս յայդր։

Այլ քանզի ընդդէմ այնպիսի համարման նոցա մեք ամօթով մնացաք առաջ ինքեանց, եղիցի կամեցողութիւն ձեր օրհնեալ և պայծառափայլութիւն ձեր լինիցիք ողջ։

Իսկ զի դրեալ էիք առ մեզ և առ Հիւսէյն խան Սարդարն յառաջադրելով զայլ չորից տաճկաց արձակումն, արտաստաւք ողորմելի թաւադացն և սուգ և աղաղակ նոցա անտանելի կերպիւ եղեւ վասնորոյ Քրիստոնէական պարտաւորութիւն համարելով ի վերայ մեր ձեռագրով երաչխաւոր եղաք առ բարեբարոյ Սարդարն և ուղղևորեցաք զչորս թաւադսն զի զազատութիւն իւրեանց դտեալ մխիթարեսցին։

Խնդրեմ ուրեմն՝ զի վաղվաղակի և պայ-

ծառայութիւն ձեր առաքել հաճեսջիք զխոստացեալ արան՝ զի և մեք եւս առնեսցուք զձեր երաշխաւորութեան մերոյ ազատ լիցուք ի վտանգէ. Ողջ լեր Տէրամբ. և մեք եմք և մնամք վասն կենաց ձերոյ պայծառափայլութեան խոնարհ աղօթարար Դանիէլ Կաթուղիկոս ամենայն Հայոց.

1808, ապրիլի 14 աւուրն
ի տուրբ Էջմիածին.

ՄԱ. *Դանիէլ կաթուղիկոսի առ Հաղբատու պարոն եւ Թիֆլիզու ուեզղիսուղի մարշալ Թաւադ Զալ Դաւթի որդի Բարաթովն:*

Ցորմէ ժամանեցի զիր սիրոյ ողջունի և բազմապատիկ օրհնութեան ի վերայ բարեպաշտ սիրելոյդ մերոյ և հարազատ բարեկամիդ սրբոյ Աթոռոյս մերումի Էջմիածնի և տուրբ նշանի վանիցն Հաղբատու՝ պայծառափայլ կնիքդ և մարշալ ուեզղին Թիֆլիզու տիտուլարնի սովետնիկ Զալ Խութեան Բարաթովիդ և բարեպաշտուհի կնիկդինա Մարիամ մօրդ և բարեպաշտուհի կնիկդինա Աննա կենակցուդ ուրախ լինել ի Տէր.

Շնորհք և երկնաւոր խաղաղութիւն յԱստուծոյ հօրէ և ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, և կենդանարար սրբոյ հոգւոյն բազմասցի ի վերայ հոգւոց և մարմնոց ձերոց, և շնորհազարդեալ պայծառութեամբ պահպանեսցէ ընդ երկայն աւուրս ամէն.

Թէպէտ ի վաղուց հետէ լայնի են ձեզ ջերմեռանդութիւնք ի Քրիստոս հանգուցեալ նախնեաց ձերոց եղելոց առ վեհագահակ տուրբ նշան վանքն Հաղբատայ՝ որք սիրապէս հոգացող և ջերմեռանդ են լեալ միշտ սերնդով ի սերունդ վասն հաստատութեան և պայծառութեան չքեղաչէն վանիցն այնորիկ, առ որս և բազմիցս ի նախնի լայրդոց մերոց Սրբազնակատար Հայրապետաց գերագահ Աթոռոյս Արարատեան գրեցեալ են զանազան կոնդակք, և նամակք հոգևորական շնորհաց և օրհնութեանց, և ամենայն միաբանութիւնք լիշեալ վանիցն Հաղբատայ եղեալ են վասն բարերարաց իւրեանց կենդանեաց և ննջեցելոց պայծառ ազդատոհմութեանց ձերոց միշտ աղօթարարք. Այլ և այժմ մինչ ժամանեալ առ մեզ ողջամբ որդեակն մեր և հարազատ զաւակն սրբոյ Աթոռոյս Ներսէս վարդապետն մատուց մեզ զդիր պայծառութեանդ նշանակօղ սիրոյ և բարեպաշտութեանն ձերոյ և համաքաստակ նախնեացդ բազձանացդ ի սակս նորոգութեան և պայծառութեան վանիցն Հաղբատայ. ընդ նմին և զմեծագոյն չնորհակալութիւնս յաղագս մեծագոյն մարդասիրութեան ձերոյ ի գործ արկելոյ առ ինքն. որովք առաւելապէս ուրախացաք ի վերայ սիրելի բարեպաշտութեանն ձերոյ և այնպիսի ջերմեռանդ անձն լինելոյդ նախ՝ զամենայն զմարդասիրութիւնս ձեր առ լիշեալ որդեակն մեր և զորս ընդ նմա սեպհական անձին մերոյ համարելով ըստ առատաձեռնութեան Տեառն մերոյ Քրիստոսի լիալիր չնորհակալութեամբ օրհնեցաք զձեզ հանդերձ կնիկդինա յարդով և կենակցուդ և վերստին առաքեցաք զաղօթս առ Աստուած վասն կենդանանեցդ և վասն հանգուցելոց կնիկդինացն և ազգատոհմութեան ձերոյ, որպէս զի Աստուած բարեսէր զհոգիս բարեսէր նախնեացն ձերոց ի լոյս երեսաց իւրոց հանգուսցէ և զկենդանիսդ պահպանեսցէ անփորձ և աննասան և ծաղկեցուսցէ որդւօք և դստերօք. Առաւելապէս չնորհեսցէ մեզ և մեք նորոգութեան և պայծառազարդութեան վանիցն Հաղբատայ՝ և լոյս մեր հաստատուն է առ ամենազօր Աստուած թէ ողորմութեամբ և չնորհօք նորա կարող լինիցիմք ըստ չերմեռանդութեանց մերոց արդիւնացուցանել գործովք, առ որ և զսիրելիդ մեր յորդորեմք առաւել ևս ունիլ զջերմեռանդութիւն և զխնամոդութիւն ձեր ի վերայ. վանիցն և միաբանից նորա հարազատից Հաւատոյ եղեալ թէ Աստուած և Տէր տացէ երիս աչնորիկ ոչ կորուսանէ զվարձս ձեր.

Ողջ լերուք. Ցամի Տեառն 1808. ապրիլի ամսոյ աւուրն, ի գերագահ Աթոռ Սուրբ Էջմիածնի.

ՄԲ. *Հրովարտակ կայսեր Ռուսաց առ Դանիէլ կաթուղիկոս։*

Գերապատիւ Դանիէլ պատրիարգ։ Ցանկալով ցուցանել ձեզ որպիսի բարեհաճութեամբ մերով ընկալաք մեք զյայտարարութիւն, որ վասն վերադարձման ձերոյ՝ ի սուրբ տաճարն Արարատեան Աթոռոյ, և յաղագս մտանելոյն ձեր ի կառավարութիւն նորին մեք ի նշան լուտկեղ բարեհաճութեան մերոյ ուր առ ձեզ յաղագս մտերմութեան և ջերմեռանդութեան ձերոյ առ կայսերութիւն մեր, ամէնողորմածաբար չնորհեմք ձեզ զկաւալերական նշան որոյն Աննալի առաջներրոգի աստիճանի զոր ընդ ներկայիս առաքելով կամիմք զի ունիցիք զայն ի վերայ ձեր և կրեսջիք ըստ կարգեցեալ կանոնի և այլն։

Մնամք վասն ձեր մերով կայսերական ողորմութեամբն միշտ բարեհաճ։

Իսկն ստորագրեցեալ է իւրոյ կայսերական մեծութեան սեպհական ձեռամբն այսպէս

Ա Ղ Ն Ր Ս Ա Ն Դ Ր

ի Պ. Բուրգ յաստիւլի 30 ին։
1808։

Մինիստր այսինքն նախարար գրաճ Նիկոլայ Ռումեանցով։

ՄԳ. *Կոնդակ օրհնութեան եւ կանոնակերպ հրամանի յաղագս քարտք կառավարութեան արդիւնահնդիր կարգաւորաց ընդ արթունիցիսն։*

Ցիսուսի... Ցորմէ ժամանեսցէ նմանակ սիրոյ ողջունի և օրհնութեան ի վերայ բարեպաշտ սիրելեացդ մերոց և հարազատ զաւակացդ սրբոյ Լուսաւորչին և մայր Աթոռոյս Նորա՝ Հայաստանեայցս սրբոյ եկեղեցւոյ Ջատագով մխարնազաւան ուղղափառ հայկազնեայ ժողովրդոցն որք քնակեալ կայք ի քաղաքդ Արթուին և ի շրջակայս Նորա՝ պատուելի Աւագ քահանային և երկրորդաց՝ Քրիստոսասէր գերապարդ իշխանաց հաւատարիմ երէցփոխանաց և դանձապետաց՝ ճարտարապետ արուեստաւորաց՝ ժրաջան երկրագործաց, համեստափայլ բարեպաշտուհի տանտիկնաց և առ հասարակ սուրբ Լուսաւորչաբեր մեծահատատ օրհնեալ ժողովրդոց արանց կանանց մեծաց և փոքունց խնդալ ի տէր։ Շնորհք... Ել ընդ ողջունի և օրհնութեան ծանուցանեմք բարեպաշտ սիրելեացդ մերոց. զի ի գրոյ հարազատին սրբոյ Աթոռոյս և հաւատարմին մերոյ Թովմայեան նուիրակ Աստուածատուր Արք եպիսկոպոսին լուաք զվախճան տէր Մարտիրոս ուղղափառութեան եկեղեցւոյ Հայաստանեայց Ջատագով պատուելի քահանային ձերոյ՝ և լոյժ ցաւեցաք. փոխանակ զի սիրելի ժողովրդեանդ մերում լատուկ պաշտպան և հոգևոր հայր և մխիթարիչ էր. այլ քանզի անդառնալի հրամանին Աստուծոյ է վճիռ և ի վերայ ամենայն մարդկան պատուիրեալ ուրեմն՝ փառաւորելով զսուրբ կամն արարչին Աստուծոյ, ասացաք զհոգւոց չանուն լինել պատուելի քահանային և աղօթեմք առ Աստուած, որպէսզի իւրով մարդասիրական չնորհիւն չնչեսցէ զձեռագիր յանցանաց աէր Մարտիրոս քահանային, լուսաւորեսցէ զհոգի նորա և դասակարդեսցէ ի դաս սրբոց քահանայիցն այլ և զորդիս և զղաւակունս և զամենայն զմերձաւորս և զհարազատս նորին և զլուսոր ժողովուրդդ մխիթարեսցէ երկնաձիր հոդեպարդև մխիթարութեամբ՝ և պահպանեսցէ ընդ հովանեաւ հզորթեան իւրոց խաղաղ կենօք, հաւատով ուղղափառութեան սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեայց և ամենայն ցանկալեալ հոգևոր և մարմնաւոր բարութեամբք ամէն։ Բայց քանզի որպէս և յայտնեալ էիք լիշեալ դերապատիւ նուիրակ հարազատին մերում, ունիք սիրելի ժողովուրդդ մեր զբաղում կերալու անմխիթարութիւնս ի մէջ նեղ երկրիդ և ի մէջ օտար և ընտանի թչնամի ազգաց, հարկաւորեալ առայն՝ զայս կոնդակ օրհնութեան և մխիթարութեան դրեցաք առ ձեզ, որով և պատուիրեմք, զի Տէր Սուքիաս պատուելի քահանայն ձեր եղիցի ձեզ լայսմ՝ետէ առաւել ևս արթնութեամբ պաշտպան և հոգաբարձու և փոյթ կալցի բարւոք դգաստութեամբ հովուել զսուրբ լուսաւորչաբերս միաբանազաւան ժողովուրդդ ըստ ծիսի և ըստ կանոնի Քրիստոսասէրս սրբոյ դահիս որ մայր է ամե-

նայն եկեղեցեաց Հայաստանեայց և յամենայն ժամանակ եմք գտանիցի ինչ մեղապատշաճ հոգալի զարծ լաղաղս լաւութեան հոգևոր որգւոցդ մերոց, յայտնեցէ մեզ վըստահաբար՝ հաստատուն վկայութեամբ եւևի անձանց սիրելի ազգիդ մերում։ Ալ և պատուիրեմք, որպէսզի ամենայն կարգաւորք որք հանդիպեսցին ի մէջ ձեր՝ թէ նուիրակունք մեր և թէ եկեալքն ի սուրբ Երուսաղէմայ և ի սուրբ Կարապետէն, և թէ առաջնորդ Կարմիր վանիցն և կամ եկեալքն առ ի նմանէ և կամ յայլոց վանորէից, ժողովարար կամ ճանապարհորդ, մի քնաւ կարօղ լիցի արտաքոյ կամաց ժողովրդեան պահանջմունք ինչ առնել և կամ վասն արդեանց նեղացուցանել, այլ՝ թէ նուիրակութիւն, թէ հոգերաժին թէ քառասնից և թէ այլ կերպ նուէրք կամ ողորմութիւն, զոլորն ըստ կամս աստուածասէր ժողովրդեանդ մերում, զոր ինչ և յօժար կամօք հաճեսցի ոք տալ սիրով ըստ չափու կարողութեան իւրոյ, զայն միայն ընկալցին չնորհակալութեամբ՝ և երթիցեն խաղաղութեամբ և օրհնութեամբ՝. որպէսզի սիրելի ժողովուրդդ սրբոյ Լուսաւորչին որք ունիք զբաւական վիշտս և սրտացաւութիւնս և նեղութիւնս ի զանազան օտար ազգաց, ի մերայնոց ես աւելի նեղութիւն մի ունիցիք։ Ապա եթէ իցէ ոք ի նուիրակաց կամ յառաջնորդաց և կամ ի ժողովարարաց որ յանդգնեսցի ընդդէմ սոյն քահանայապետական կոնդակի և պատուիրանիս մերում, դուք ևս մի քնաւ ընկալջիք զայնպիսին և մեզ ևս ծանուսջիք ճշմարիտ դրութեամբ յանուանէ և յատկութեամբ գործոցն ով որ և լինելոց իցէ. և մեք հատուսցուք այնպիսումն զարժանաւորն իւր գործեկան և զմարմնական պատուհաս, զի մեզ բաց ի ջերմեռանդութենէ ձեր և ուղղափառ հաւատոյ եկեղեցւոյ Հայաստանեայց, այլ ինչ ոչ է առաւել սիրելի։ Յաղագս որոյ սիրելի որգւոցդ մերոց ևս պատուիրեմք, զի զսէր և զջերմեռանդութիւն ձեր առ Աստուած և առ սուրբ Լուսաւորիչ հայրն մեր և առ լուսածին ծնողս ձեր և առ ուղղափառ հաւատն Հայաստանեայց եկեղեցւոյ և առ օրէնս և կանոնս հայոց աննուաղելի և հաստատուն պահպանեսջիք։ Որ ։ե օրհնութեամբ սուրբ Լուսաւորչին և օրէնսդիր սրբոց հարցն մերոց և մխիթարութեամբ մայրութեան սրբոյ եկեղեցւոյ գլուխն եկեղեցւոյ Քրիստոս Աստուած պայծառացուսցէ զձեզ հոգւով և մարմնով. աճեցուսցէ զարմիւք և զաւակօք. ծաղկեցուսցէ որդւովք և դստերօք և պարգևսցէ ձեզ զյաջողութիւն և զամենայն բարութիւնս հոգւոյ և մարմնոյ, և զհոգիս նախնեաց և ամենայն ննջեցելոց ձերոց. լուսաւորեսցէ և արժանացուսցէ յաղակողման դասուն և երկնից արքայութեանն։ Ողջ լերուք և չնորհք սրբոյ հոգւոյն Աստուծոյ եղիցի ի վերայ հոգւոց և մարմնոց ձերոց միշտ. ամէն։ Գրեցաւ ի ՌՄԹ թուոջս յամսեանն մայիսի ի գերագահ Աթոռս սուրբ Էջմիածին։

ԴԱՆԻԷԼ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

ՄԴ. Առ Թաւատ Ուռպելեան ենարալ Դիվիտը ի պատասխանի զրոյն իւրոյ որով խնդրեալ էր զտունն Դուդայ Դաւթի Թողուլ եղբօր կնօջն իւրոյ։

Պայծառափայլ Թաւադ Դիմիտր
Ողորմած Տէր իմ։

Յիսուսի Քրիստոսի . . . . . .
Էջմիածնի։ Բազմապատիկ աստուածային օրհնութեամբ մատուցանեմք զողջոյն Քրիստոսական ի տէր խնդալ։ Գիր պայծառութեան ձերոյ ղրեալ ի 29 մայիսի 1808 ամին որով մխիթարեցէք զտունն հանգուցեալ Գուդա Դաւթի զոր արքայութեան փառացն արժանաւոր Գեօրգի արքայն չնորհեալ է եղեալ եղբօր կնիադինեալ զուգակցի ձերոյ Թաւադ Դաւիթ Չօլաղի որդւոյն, ի մէնջ ևս չնորհեսցի նմա, եհաս առ մեզ ի լունիսի 9։

Ուրախ եղաք ըստ առողջութեան ձերոյ պայծառութեան և աղօթեմք առ Աստուած զի լինիցիք առողջ և յառաջադէմ առ ամենայն գործս բարեաց՝ որք լինելոց են մեզ առաւելապէս մխիթարութիւն և ուրախութիւն։

Ցուժ ախորժելի էր մեզ խնդիր ձեր և չէր ծանրագոյն ինչ չնորհել զտունն զայն ի պատիւ երեսաց ձերոց, սակայն երկու հարկաւորագոյն պատճառք առաջի կան մեզ այժմ ի ներկայս, նախ զի, ահա 8 ամ ամենայն կալք սրբոյ աթոռոյս ցրուեցան ուր և ցրուեցան, և անուն մեր բամբասեալ եղև ի

պատճառս այնպիսի վատ ուրախութեան գործոց, այլ և ի վերայ այնորիկ լրացաւ ահաւասիկ ի ստուգ աթոռս նմա և տակաւին գրամոյ միոյ չհաւանեցուիս չեմք կարողացեալ արդիւնացուցանել յաղագս սրբոյ աթոռոյս։

Եւ երկրորդ՝ զի գիտէք և դուք թէ ընդ ամենայն տեղիս ամենայն կալք սրբոյ աթոռոյն Էջմիածնի եթէ մեծ և եթէ փոքր՝ բոլորեքեան զանազան պատճառաւ ի զանազան անձանց հայոց ժողովրդեան լաւագոյ եկեալ են ի սկզբանէ հետէ, և վասն բազմացըն յամենայն ժամանակի անսպասից զանազան կերպակերպ աւարաձայնութիւն յամենայն ուրեք. որոց ամենեցուն բաւականացուցիչ պատասխանի աթոռոյնց լսողաց հաճոյական այն է միշտ, թէ օրինաւոր կերպիւ մասանելն կարգս լիշատակաց տաճարին Աստուծոյ, անհնար է առանց հոգևորական մեծ միաստուց կարող լինել ումեք հանել միւս անդամ ի կարգէ լիշատակաց սրբոյ տաճարին որպիսի և իցէ պատճառաւ, և այս պատասխանի այնքան ունի զտեղի ի մէջ ամենայն ազգաց, մինչև եթէ ի վերայ ալսորիկ չլինիցին տկարացեալ բնաւորք Պարսից և Օսմանցւոց համարեալ թէ թիզ մի տեղի ոչ լօժան թողուլ մնալ յանուն սրբոյ աթոռոյ։ Վասնորոյ և ամենայն Հալրապետաց և բոլոր հաւատարմաց սրբոյ աթոռոյս օրէնք է բնական առաւելապէս զգուշութիւն ի գործ ածել ի վերայ ամենայն ալսպիսի պատահմանց։

Ալսորիկ աղագաս որովհետև մեք բնաւ չունիմք զտեղեկութիւն վասն որպիսութեան տանն Կուղա Դաւթի ոչ էր կարելի գրել ալժմ միանգամայն վասն չնորհելոյ զնոյն թաղադ Դաւթի Զօլազեան եղբօր կնոջին նեալ դեռազանցուհի կենակցի ձերոյ։

Ալլ գրեցաք ըստ ալսմ աւ հաւատալիմն սրբոյ աթոռոյս և մեր դերապատիւ Ցոհաննէս արքեպիսկոպոսն Վրացստանու հայոց ծանուցանել մեզ վասն ալսորիկ, յորժամ եթէ չլինիցի վտանգաւոր վասն չահաւետութեան կառավարութեանց սրբոյ աթոռոյս, կարելի լինի չնորհել ըստ հաճոյ ձեր. իսկ եթէ վտանգաւոր, լուսամ թէ և դուք ոչ հաճիցիք ընդ փոքր չահաւետութիւն աղգակցի ձերոյ որ լինելոց իցէ պատճառ լաւութեանական մեծագործն Ջնաւոյ սրբոյ Էջմիածնի, և ունիցիք զմեզ անմեղադրելիս։

Ողջ լեր, և զօրութիւն սրբոյ Դեղարդեանն և սրբոյ Իջմանն տեղւոյս Քրիստոսի եղիցի ընդ ձեզ միշտ ամէն։

ՄԲ. *Առ Նաալբհին խաչապատակ ինքնակալ Օգոստոս կայսր Փրանցայոյ սիրող քարեպաշտութեան։*

Ամէնողորմած Թագաւոր և պաշտպան եկեղեցւոյ հաւատացելոց։

Աղօթարար ցանկալի կենացդ և Յիսուսի Քրիստոսի ծառալ Դանիէլ կաթուղիկոս ամենայն հայոց և ծալրագ-ին պատրիարգ Ա-րարատեան աթոռոյն սրբոյ Էջմիածնի. իմս-նալլուն զօրութեամբ ներկալացեալ առաջի բարձրագոյն փառաց սրբոյ Թագաւորութեան ձերոյ խոնարհ երկրպագութեամբ զհոգևոր-թագական օրհնութիւնս հանդերձ Քրիստոսական ողջունիւ ձեզ մաղթեցանեմք։

Ցաւիտենից ժամանակաց կալսերք Հռոմայեցւոց մեծագոյն գթասիրութեամբ բարեբար և ողորմած են եղեալ միշտ թագաւորաց և քահանալապետաց Հալոց և ողջոյն ազգի նոյա և մինչև ցալսօր ժամանակի անմոռաց ունի եկեղեցի Հալաստանեաց և պարծի նոքա միշտ, բալց ի բազ ճանալ անտանելի նեղութեանց և աշխարհակործան մեծամեծ խըռովութեանց լԱսիալ և մանաւանդ լաշխարհս Հալոց որ օր ըստ օրէ զրկեալ լամենայն բարեբախտութեանց, ահա ձ աւեր ամք են, զի վասն ժամանելոյ ի լետին նուաստութիւն իւրեւ ի մոռացօնս եմք լամենալուսաւիալլ մտաց հաստատակամաց կալսերաց Հռոմայեցւոց։

Ուրախ եմք և առաւելապէս զոհանամք զԱստուծոյ և զանպատում չնորհաց ողորմութեան նորա զի բարերար ակնարկութեամբ նորա առ մեղ՝ եկն ի սմին ժամանակի Քրիստոսաէջ աթոռս Աբարատեան խոհեմութեամբ և իմաստութեամբ հռչակեցեալ դեսպան ձերոյ մեծահրամանն կալսերութեան առ բարեբարոյ և ողորմածադոյն բարձրաստիճան Շահն հզօրաց Պարսից և առ լաւտուկ պաշտպանն սրբոյ աթոռոյս մերում Աբարատ Մեր-

զալ որդի նորա ողորմութեամբ և մարդասիրութեամբ և իմաստութեամբ գերապատուել բարձր բարեծնունդ արեգական նշանակիր Ժօմպաթիստ Ռուասօ, զոր կարեմք հանգուցեալ ընդունել նշան մեծագոյն ողորմութեան Աստուծոյ, որպէս երբեմն հայրն աշխարհի զաղաւնին լորժամ ի տապան անդր տատանեալ ծիւիւր լերեսս աշխարհահեղձուց ջուրց։

Լա. ես կարէ պատմել զմէնջ լինելոյ դէսպանն ամենաողորմած աստուածատիպ սուրբ կայսերութեան, այլ մեք վստահացեալ յԱստուածպղութ ողորմութիւն ձեր՝ և ի բարերար ակնարկութիւնս նախնի աթոռակալաց ձերոց աստէն ի ծագս տիեզերաց ի ծունկս անկեալ առաջի ամենաողորմած աթոռոյ ձերոյ բարձրագոյն կայսերութեան որպէս աթոռակալի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, յանձն առնեմք չնորհաց աշխարհատարած ողորմութեան և մարդասիրութեան ձերոյ և զաթոռս Արարատեան և զամենայն գհոգևորականս և զմարմնաւորականս հայոց և ամենախոնարհաբար խնդրեմք, զի ո ր և տարածեսցի ողորմութիւն աթոռոյ ձերոյ կայսերական մեծութեան, եղիցի հովանի ազգի և եկեղեցւոյ Հայաստանեայց։

Ազգ լեր ամենաողորմած օգնական սուրբ կայսր և մեք յուսով մեծաւ մեծամբ ողջոյն աղաչս աղօթարար վասն անդին կենաց ձերոց և վասն բոլոր պալատի ձերում։

Օգնական ինքնակալ, ձերոյ բարձրագոյն ամենաողորմած կայսերութեան խոնարհ ծառայ և աղօթարար կաթուղիկոս ամենայն հայոց և ծայրագոյն պատրիարգ Արարատեան սրբոյ աթոռոյն սրբոյ Էջմիածնի, ԴԱՆԻԷԼ։

Օրինակ հասցէին սոյն մուսալվատիս։

Նորին կայսերական Մեծութեան ինքնակալի Ֆրանցայու և դրալի Իտալիոյ օգնականափառ մեծ Նապալիոն ամենաողորմած թագաւորի մերում։

Ցամենափառաւոր պալատն իւրոյ կայսերական բարձրութեան։

ՄԶ. *Մեծ Նապոլէօն տիեզերահռչակեալ կայսերն Փրանցայու ամենախոհեմ դեսպան՝ մեծագոյն փառաց եւ պատուոյ արժանաւոր Ժօմպաթիստ Ռուասօ նշանակիր արեգական։*

Ողորմած Տէր։

Ուրախ եմք գալստեամբ ձեր ի լուսանկար քրիստոսահիմն Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին. ուրախ է և ինքն խնամալապէս և տաճարն Աստուծոյ, զի ընկալաւ գհրեչտակգ ամենաողորմած կայսեր որով կարէ ունել զպարծանսս։

Զերմեռանդութիւն մեր մեծ է յոյժ, որպէս և կարող ես զղալ, քանզ զի ակնատես եղեր մեծագոյն աւերութեան հաւատի եմք թէ ցաւակից ես մեզ. մատուցաք ձեզ ոչ որպէս պարգև արժանաւոր, լորմէ ալժմ անձեռնահաս եմք, այլ միայն ի նշան մեծագոյն սիրոյ և ուրախութեան մերոյ և լիշատակ բարեկամութեան զմի մատանի զմրուխտ և զմի ոսկեայ արծաթեայ բաժակ ջրոյ։

Զորս ընկալցիս սիրով և վայելեսցես հանդերձ օրհնութեամբ Սրբոցն որք աստ և հոգևորական չնօրհօք սրբոյ Տաճարիս Աստուածայնոյ Տէր ընդ քեզ եղիցի և սէր սրբոյ Տաճարիս միասցէ ի սրտի ձերում. անմոռաց։

Ազգ լեր և մեք եմք և միամբ ամենայն միաբանութեամբ աղօթարար վասն յաջողութեան ճանապարհի յառաջադրութեան ձերոյ։

ԴԱՆԻԷԼ կաթուղիկոս ամենայն Հայոց

Զսոյն գիր ընդ թասին և մատանւոյն ինքնին մատոյց սրբազանն ի ներկայութեան իւրում. վասն որոյ հասցէ ոչ ունի։

(Որ ի քաղաքն Մարսիլիա էր)։

ՄԷ. *Քաջ խորհրդական մեծ կայսերութեան. Փրանցայու եւ մինիստր հաւատոյ եւ օրինաց մեծ իշխան Փորտալիս։*

Ողորմած Տէր և բարերար լուսաւորող։

Աղօթարար ձեր և

Ցիսուսի Քրիստոսի ծառայ Դանիէլ կաթուղիկոս ամենայն Հայոց և ծայրագոյն Պատ-

րիարդ Արարատեան Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի զողջոյն Ցիսուսաւանդ մատուցանեմ. աստուածալին բազմապատիկ օրհնութեամբ ի տէր խնդալ։

Բարերարութիւնք և մարդասիրութիւնք իշխանաց Հռոմէացւոց առ ազգս Հայոց յաւուրս նախնեաց ձերոց՝ երևելի են լոյժ։ Բայց յորմէ հետէ բարձաւ տէրութիւն և թագաւորութիւն յազգէ մերմէ և հզօրացաւ իշխանութիւն գերչաց մերոց, ըստ ողբերգութեան սաղմոսողին՝ մինչև ցայսօր ժամանակի մինչ իսպառ մոռացեալ եղաք ի սրտէ որպէս զմեռեալ յաւիտենից և համարեցաք որպէս զանօթ կորուսեալ։

Գոհանամք զԱստուծոյ անոխակալ Տեառնէ մերմէ զի ի սմին ժամանակի բարերար ակնարկութեամբ իւրով ուղղեաց առ մեզ զճանապարհ խոհեմութեամբ և իմաստութեամբ բարեհաչակեալ արևգական նշանակիւր ժօմպաթիստ Բուասսօ դեսպանի անպարտելի հզօրեզ կայսերութեան Ֆրանցայոս առ բարեսիրտ և առատախնամ բարձրագահ Շահն Պարսից և առ յատուկ պաշտպանն և բարերարն Արարատեան Աթոռոյն Հայոց սրբոյ Էջմիածնի՝ բարեբարոյ և քաղցրաղութ Աբգար Միրզայ որդի և ժառանգն Նորա։

Համարիմք թէ բացեալ իցեն մեզ դրունք ողորմութեան ամենողորմած Արարչին, վասն որոյ զուարճութեամբ հոգւով մերով փութամք ներկայանալ ձերում փառաւորութեան ի ձեռն սոյն ալս քարտիսի՝ զոր մատուցանեմք ձեզ իբրև զնախակին պտուղ ջերմեռանդութեան սիրոյ մերոյ։

Զամենայն որպիսութիւն մեր և Արարատեան սրբոյ Աթոռոյս կարէ բուսականապէս յայտնել ձեզ լիշեալ դեսպանն, որ եղև ականատես և է զի՛ր կենդանի, մեք միայն յուսամք զոր ունիմք ի լիշատակարանաց նախնեաց մերոց՝ վստահանամք խնդրել միայն զի բարերար ակնարկութիւն հոգւով ձերում ի պատիւ Քրիստոսական սուրբ հաւատոյ տարածեալ առ մեզ սիրով մասուսջիք առ նորին ամենողորմած կայսերութիւն զգիր մեր զոր ընդ ալամ ի ձեռն լիշեալ դեսպանին մատուցաք խոնարհութեամբ։

Հաւատի առնեմք զձեզ զի լիշատակութիւն բարերարութեան ձեր յաւիտեանս ժամանակաց ընդ առաջնոց նախնեաց ձերոց մնալ անմոռանալի առ ամենայն ազգս Հայոց։

Եւ մեք նովաւ հանդերձ եմք և մնամք զամենայն աւուրս կենաց մերոց աղօթարար վասն կենաց ձերոց.

Ողորմած Տէր Ձերով բարձրեալ 1808, յունիսի 16, ի սբ. Էջմիածին որ յԱրարատ.

բաբ ԴԱՆԻԷԼ կաթուղիկոս ամենայն Հայոց։

Ցերեան սոյն թղթոյ.

Նորին բարձր գերազանցութեան մեծ կայսերութեան Ֆրանցայոս քաջ խորհրդականն և մինիստր հաւատով և օրինաց, Փորտալիս մեծ իշխան ողորմած Տեառն մերում։

Ի թագաւորեալ քաղաքն Փարիզ։

ՄԸ. *Առ կայսրն գերմանացւոց խնդիր վասն հրովարտակի, զի ըստ յայնցանէ, որք ունիցին զգիր ի պատրիարգէն Արարատեան, այլ ոք ի կարգաւորաց հայոց մի՛ կարող լիցի մնոանել ի մէջ հայոց եղելոց ի սահմանս տէրութեան իւրոյ։*

Ամենալուսափայլ տիրող ինքնակալ հզօր կայսր Հռոմայ և Գերմանիոյ Ֆրանց երրորդ։

Ամենաողորմած թագաւոր և պաշտպան հաւատացելոց։

Աղօթարար անգին կենացդ և Ցիսուսի Քրիստոսի ծառայ Գանիէլ կաթուղիկոս ամենայն հայոց և ծայրագոյն պատրիարգ Արարատեան Աթոռոյն սրբոյ Էջմիածնի ամենախոնարհ երկրպագութեամբ զլխաբերան օրհնութիւնս հանդերձ լիսուսաւանդ ողջունիւ ձեզ մատուցանեմք։

Ասէր և խնամակալութիւն կայսերաց Հռոմէացւոց առ թագաւորս և առ քահանայապետս և առ ամենայն հասարակութիւն ազգի հայոց տարածեալ առատութեամբ յաւիտենից ժամանակաց, լիշատակագրութեամբ նախնեացն մերոց՝ այսօր ևս ներգործէ առ ամենայն ազգս հայոց զմեծ մխիթարութիւն։

Այլ քանզի օր ըստ օրէ տիրեաց անրակուխին ի վերայ ամենայն հ.յրենեաց հայոց՝ բարձաւ թագաւորական ճոխութիւն,

մատնեցաւ քահանայապետութիւն յանտանելի տառապանս ընդ բռնութեամբ բարբարոսաց և ցրուեցաւ ամենայն աղգն հայոց յերեսս ամենայն երկրի իբրեւ ղոչխարս որոյ ոչ իցէ հովիւ. պակասեցաւ ամենայն մխիթարութիւն յամենայն հասարակութեան հոգևորականաց և մարմնաւորականաց հայոց մինչ իսպառ և եղաք առ հասարակ ըստ մարգարէութեան բանի՝ որպէս մեռեալ լաւիտենից և որպէս զանօթ կորուսեալ, մոռացեալ ի սրտէ ամենայն մեծաց և փոքունց բարերարացն հարց մերոց։

Այլ գոհանամք զԱստուծոյ զի որպէս ղերիս մանկունսն ի մէջ զգալի հրոյն Բաբելոնի նոյնպէս և դմանկունսն եկեղեցւոյ Հայաստանեայց ի մէջ իմանալի հրոյ բարբարոսական բռնութեանց՝ պահպանէ մինչև ցայսօր ուղղափառ խոստովանութեամբ սուրբ աստուածութեան իւրոյ։

Շնորհ ունիմք և զմեծ ողորմութենէ ամենաողորմած աթոռոյ Աստուածածադրի կալսերութեան ամենայն Ռուսաց, զի ի հարիւրաւոր ամաց հետէ յատուկ մարդասիրութեամբ հալեցեալ առ ամենայն անալցելու աղքն Հայոց, լաւել ամենայն հոգևորականաց և մարմնաւորականաց զմեծ ապահովութիւն։

Ի ձեռն ամենողորմած հրովարտակի իւրոյ լուսաղբեալ զկաթուղիկոսն ամենայն հայոց և զիշխանսն և զքաջազունս, և զազնուազդիս, և զամենայն աղգն հայոց՝ ունել ի ներքոյ բարձրագոյն խնամոց և հովանաւորութեան իւրոյ, և զամենայն աղգն հայոց եղեալս ի տէրութեան իւրոմ դաւանութեամբ սուրբ Լուսաւորչին Հայաստանեայց մեծին Գրիգորի Պարթևի յանձնելով ի ներքոյ կարգադրութեան Արարատեան Աթոռոյ Կաթուղիկոսին ամենայն հայոց հոգևորական կանոնաւ և եկեղեցական կարգաւ տարածեաց առ ամենայն կուսակալս սահմանաց տէրութեան իւրոյ. զատուկ հրովարտակ, ոչ ընդունել ի ներքս ի սահմանս ռուսաց զոք ի կարգաւորաց Հայոց որպիսիս և իցէ աստիճանաւ առանց վկայական գրոց Արարատեան կաթուղիկոսին և այսպէս շնորհեաց ամենայն հայոց մերձաւորաց զմեծ խաղաղութիւն և հեռաւորաց զմեծագոյն մխիթարութիւն։

Առաւելապէս մխիթարեալ լինիմք զի և ամենաողորմած հովանաւորութիւն Աթոռոյ սուրբ կալսերութեան ձերոյ տարածեալ նոյն ոյէս ի վերայ հայոց եղելոց ի սահմանս հզօր տէրութեան ձերոյ ի Սչով քաղաք և յայլ և այլ տեղիս, ապահովացուցեալ է զնոսա ոչ սակաւ։

Բայց սակայն այո 30 ամ լինի յորմէ հետէ չէ եղեալ ի նոսա այցելութիւն Արարատեան Աթոռոյն և կաթուղիկոսին ամենայն հայոց, և չէ հանդիպեալ ի մէջ նոցա եպիսկոպոս կամ վարդապետ քարոզիչ և վերատեսուչ հաւատոյ և եկեղեցական կարգաց, և չեն ունեցեալ զիմաստուն քահանայ կամ օրէնսգէտ ուսուցիչ, առ որ բազում ինչ պակասեալ է ի նոսա լուղղութենէ կարգաց և կանոնաց եկեղեցւոյ Հայաստանեայց և բաղում տգիտութիւն ևս ունակացեալ ի միջ ողորմելի ժողովրդեան մերում։

Այլ և ի վերայ այնորիկ յամի 1807, յամսեանն օգոստոսի՝ սուտ եպիսկոպոս մի Գրիգոր անուն որ վասն լինելոյ իւրոյ մատնիչ Արարատեան Աթոռոյն և խանգարիչ բարեկարգութեան հայրենի ազգին արգելեալ յամենայն հոգևորական պաշտօնէ արտաքսեալ կայր եկեղեցւոյ դատաստանաւ ժողովոյ բազմութեան արք եպիսկոպոսաց եպիսկոպոսաց վարդապետաց և աւագ երիցանց հարիւրապետաց ի գլուխ 30 ամաց մտեալ առ նոսա խաբէութեամբ, պաշտեալ ի Սչով քաղաք զպաշտօն եպիսկոպոսութեան և սերմանեալ է անդէն ղրաղում տարաձայնութիւնս և գայթակղութիւնս։

Վասն որոյ քանզի կոչեցեալ եմք մեք հովիւ և կաթուղիկոս ամենայն հայոց, ի ծունկս անկեալ առաջի ամենաողորմած Աթոռոյ ձերոյ, խնդրեմք ամենախոնարհաբար զի թէ գոցէ շնորհս առաջի սուրբ կալսերութեան ձերոյ եկեղեցի Հայաստանեայց և ժողովուրդք սրբոյն Գրիգորի մեծի Պարթևի, մի խնայեսջիք զբարերարութիւն աթոռոյ սուրբ կալսերութեան ձերոյ ի հոգւոց և ի մարմնոց հոգևորականաց և մարմնաւորականաց հայոց ապաւինելոց ի հովանաւորութիւն մեծաշուք հզօր թևոց ձերոց, այլ գթացեալ աստուածբար մարդասիրութեամբ՝ զբարերարութիւնս նախնի կալսերացն Հռոմայեցւոց առ ազգն հայոց՝ կրկին նորոգեսջիք, և համաձայն նորին կալսերականի Մ. ամենայն ռուսաց ամենաողորմածաբար բարեհաճեսջիք կարկա-

ռել զմեծ ողորմութիւն ձեր առ ամենեսին, և յանձնել ի ներքոյ կարգադրութեան Արարատեան Աթոռոյ կաթուղիկոսին ամենայն Հայոց հոգեւորական կանոնօք և եկեղեցական կարգօք զազգն Հայոց եղեալս ի տէրութեան ձերում գտանութեամբ սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեայց, և հրամայել սահմանակալաց՝ դի ասանց վկայական գրոյ կաթուղիկոսին Արարատեան Աթոռոյ մի ոք ի հոգևորականաց հայոց ունողաց զդաւանութիւն եկեղեցւոյ Հայաստանեայց ընկալցին ի ներքս ի սահմանս տէրութ կայսերութեան ձերոյ, և չնորհել նոյնպէս զբարձրհրամանն մեծ հրովարտակ հաստատեալ մեծ կնքով ամէնօգուտափառ կայսերութեան ձերոյ առ ի պահպանել ի տաճարի Աթոռոյն Արարատեան վասն յաւիտենական լիշատակի ողորմութեան և բարեհաճութեան ձերոյ։

Ողջ լեր Ամէնողորմած Օգոստոս Կայսր՝ և ողորմութեամբ Աստուծոյ երկնաւորի եղիցին աւուրք ձեր իբրև զաւուրս երկնից, Ամէն.

Ամենաողորմած թագաւոր, Ձերոյ Կայսերական Բարձրութեան խոնարհ ծառայ և աղօթարար ԴԱՆԻԷԼ կաթուղիկոս ամենայն Հայոց։

Յամի 1808, ամսեանն..
ի սուրբ Աթոռն Արարատեան
Էջմիածին։

ՍԹ. *Դանիէլ կաթուղիկոսի առ կայսր Ալէքսանդր Պաւլովիչ։*

Ամենողորմած թագաւոր կայսր ինքնակալ ամենայն Ռուսաց Ալէքսանդր Պաւլովիչ

Տէր և ապաւէն Արարատեան Աթոռոյն և ամենայն հոգևորականաց և մարմնաւորականաց հայոց

Աղօթարար Ձեր և

Յիսուսի Քրիստոսի ծառայ Դանիէլ կաթուղիկոս ամենայն Հայոց և Պատրիարգ Արարատեան Աթոռոյն սրբոյ Էջմիածնի խոնարհ երկրպագութեամբ նուիրեմ զողջոյն Քրիստոսական աստուածային բազմապատիկ օրհնութեամբ։

Սուրբ կայսերութիւն Ձեր գիտէ լաւապէս զամենայն անցեալ զորս անցոյց Դաւիթ կաթուղիկոսն անուանեալն ընդ ամենայն ազգն Հայոց և ընդ սուրբ Աթոռն Էջմիածին և բոլոր միաբանութիւն նորին, զորս զամենեսին տևևրեաց չարաչար լուծ։ Ալիմ ևս մինչդեռ մեք կենդանի եմք, նոյնպէս անկեալ ի դրունս բարբարոսաց խոստանալ նոցա զկաշառս դի վերստին ստասցի զբռնատիրական իշխանութիւնն իւր։

Այլ դի լայտնի է Ձերում կայսերական մեծութեան դի լամենայն հոգևորականաց և մարմնաւորականաց հայոց ընդ իս և Եփրեմ Արքեպիսկոպոս գերապատիւ Առաջնորդն Հայոց Ռուսաստանու ընտրեցեալ է լառաջագոյն, մեք ևս լատկացուցեալ եմք գնա փոխանորդ մեզ, վասնորոյ ամենախոնարհաբար խնդրեմք զԱթոռոյ ողորմութեան Ձերոյ հրամայել առաջին կառավ սրչին վկայացանուս, դի թէ հանդիպեսցի մեզ մեռանել, իսկոյն գրեսցէ առ Երևանու պարսից սպարապետն ևս և առ Շահղաստալն, դի զԴաւիթն մի ևս միւս անդամ լառաջ բերցեն ի բռնաւորութեան իւրում։

Եւ սուրբ կայսերութիւն Ձեր ողորմութիւն առնելով Արարատեան Աթոռոյն և բոլոր ազգին Հայոց բարեհաճեսջիք զգերապատիւ Եփրեմ Արքեպիսկոպոսն արժանացուցանել Պատրիարգական Աթոռոյ Արարատեան։

Եւ վասն Դաւթի, որպէս լառաջագոյն, նոյնպէս և լայսմհետէ մի լիցի ընդունելի առաջի սուրբ կայսերութեան Ձերոյ որպէս և իցէ գրութիւն, դի որպէս լառաջ, նոյնպէս և այժմ՝ թէ գտանիցէ գժամանակ, գրեցուցանէ ըստ հաճոյս իւր ի ձեռն բռնութեան եպիսկոպոսաց, վարդապետաց և ամենեցուն, զորոց բաց ի ձէնջ, ոչ գոյ այլ օգնական։ Ողջ լեր Ամենողորմած կայսր, և մեք եմք և մնայք

Ձերոյ մեծութեան
Ամենախոնարհ ծառայ և աղօթարար
ԴԱՆԻԷԼ կաթուղիկոս ամենայն Հայոց

1808 յուլիսի 4
ի սուրբ Էջմիածին։

ՄԺ. *Դարձեալ առ նորին կայսերական վեծութիւն վասն առաջնորդ կարգելոյ զՅիփրեմ սրբազան արքեպիսկոպոսն առաջնորդն Ռուսաստանու Հայոց։*

Կարող և բարձր ինքնակալ կայսր Հռոմայ և թագաւոր Գերմանիոյ Ֆրանց երրորդ։

Ամենառղորմած հովանի և եկեղեցւոյ Քրիստոսի։

Աղօթարար ձեր և Յիսուսի Քրիստոսի ծառայ Դանիէլ կաթուղիկոս ամենայն Հայոց... Էջմիածնի. Քրիստոսական ողջոյն և բազմապատիկ օրհնութիւն նուիրեմ խոնարհ երկրպագութեամբ։

Յայտնի է ինքն իսկ՝ զի որպէս ոչ ուղիղ ընթանալ նաւ առանց հմուտ նաւավարի, այնպէս և ոչ եկեղեցին Աստուծոյ կարէ ունել ուղիղ կառավարութիւն առանց օրէնսդէտ հանճարեղ առաջնորդի։

Վասնորոյ քանզի այս 30 ամի առանց վերատեսչութեան է եկեղեցի Հայոց որք գտանին ի ներքոյ հովանաւորութեան ամենաբարեպաշտ սուրբ կայսերութեան ձերոյ ի քաղաքն Սկով զի մինչ իսպառ տիրեացն մեզ մեղք՝ լաղագս ամենևին անփոյթ լինելոյ վասն նոցա հարկագրեալ եղէ այժմ կացուցանել նոցա առաջնորդ ղփրխանորդն իմ և զառաջնորդն ամենայն հայոցն Ռուսաստանու գերապատիւ Յիփրեմ սրբազան արքեպիսկոպոսն որ գլխաւորագոյնն է ամենայն հոգևորականաց հայոց, և մերովս կաթուղիկոսական կոնդակաւ յանձնեցաք նմա զհոգևորական վերատեսչութիւն ամենայն ազգին Հայոց որք գտանիցին ի ներքոյ լայնածաւալ հովանաւորութեան ձերոյ զաւանութեամբ եկեղեցւոյ Հայաստանեայց։

Խնդրեմ ամենախոնարհաբար զի և ձերդ կայսերական բարձրութիւն ամենաողորմածաբար բարեհաճութեամբ չնորհեսջիք լիչեալ փոխանորդին մերոյ զբարձրահրամանն հրովարտակ վասն համարձակ վարելոյ զամենայն գործս հոգևորականս և եկեղեցականս պատկանեալս առաջնորդութեան իւրոյ ըստ կանոնաց եկեղեցւոյ Հայաստանեայց։ Եւ հրամայել ամենայն կայսերական կառավարչաց և վերակացուաց ձեռնտու լինել նմա և առ ի նմանէ կարդեալ գործավարացն, յորժամ խնդիր լինիցի ի նոցանէ առ ինքեանս ի պատահմունս հարկաւորացն որք վերաբերիցեն առ հոգևորական կառավարութիւն։

Արդարև չնորհ մեծ առնես որով և զբոլոր եկեղեցի Հայաստանեայց պարտաւորեցես ամենառղորմած աթոռոյ սուրբ կայսերութեան ձերոյ մինչ յաւիտեան։

Ողջ լեր օծեալդ Աստուծոյ՝ Օգուստոս ինքնակալ և որ էօծն զձեզ պահպանեսցէ զթագաւորութիւն ձեր անվաղճան։

Ամենառղորմած թագաւոր՝ ձերոյ կայսերական բարձրութեան ամենախոնարհ ծառայ և աղօթարար Դանիէլ կաթուղիկոս ամենայն Հայոց։

Ցամի Տեառն 1808. յամսեանն յուլիսի յաթոռն ամենայն հայոց ի սուրբ Էջմիածին որ յԱրարատն

ՄԺԱ. *Առ Ազարաֆինեայ Միխայէլովնայն ի Պետրբուրգ։*

Ծորմէ ժամանեսցի թուղթ սիրոյ, քրիստոսաձիր ողջունի, Աստուածալին օրհնութեան, և անկչիռ չնորհակալութեան սրտի հանդերձ լիացուցիչ չնորհօք սուրբ հոգւոյն և զօրացուցիչ պարզևօք սուրբ իմման տեղւոյս Քրիստոսի և հրաշագործ արագահաս օժանդակութեամբ սրբութեանցն և սուրբ մասանց և կենդանի նչխարաց սրբոցն Աստուծոյ և հաճոյացեալ ծառայից նորա. որք աստ կան ժողովեալ ի վերայ սիրելի և հոգևոր դստերդ մերոյ, և չերմեռանդ համեստագարդ գաւակիդ սուրբ գահիս, իշխանուհի Ագրաֆինեայ Սրբասէր Մեծուհւոյդ, որում և լիցի ի Քրիստոս խնդալ միշտ ոգեզուարճ բերկրանօք։

(Շնորհք)։

Եւ ընդ ողջունիս և օրհնալիր չնորհակալութեանս, գիտութիւն լիցի մեծահաւատ դստերդ մերոյ. ամենայն առաքինի ըստ իւր առաքինական մրցմանց ունի պսակաւորիլ յԱստուծոյ և ի մարդկանէ. այն՝ որ վասն մարմնաւոր պատուոյ և փառաց է, մարմնաւորապէս միայն վարձատրի, իսկ նա՝ որ վասն հաւատոյ, և վասն չինութեան սուրբ եկեղեցւոյն Քրիստոսի, և վասն փառաւոր անուան

նորա ձգնի, ոչ միայն մարմնաւորապէս լաղթանակող նշանաւ պանծալ մարմնաւորապէս պսակազարդի, այլ և՝ ի լերկինս լաւիտեանս լաւիտենից ընդ Քրիստոսի թագաւորէ։ Արդ՝ դու մեծուհիդ օրհնեալ՝ իշխանուհիդ և գերազանցուհիդ պանծալի դուստրդ մեր հոգևոր վառեալ Աստուածային սիրով և հաւատով եղեալ նախանձախնդիր Աստուածային իրաւանց և արդարութեանց՝ յայս քանի ամս ճգնեցար իրրև ճգնաւոր Քրիստոսի վասն պայծառութեան սուրբ հաւատոյս մերոյ և վասն վայելչութեան գերագահ Աթոռոյս քրիստոսասիրի բանիւք, գործով արդեամբք և ճշմարտութեամբ, որպէս բազմիցս ունի մեզ յայտնեալ լիալիր երկար դիմաքանութեամբք յարդապատիւ եղբայրն մեր Սիրեմ սրբազան Արք եպիսկոպոսն. այլ ի չունիմք պատկանաւոր ինչ մարմնական ի տրիտուր երախտեաց. և բազմամեայ՝ երկարատև աշխատանաց, և հոգևոր մրցմանց ձերոց, վասնորոյ այսու սիրալիր՝ գոհաբանն, չնորհակալու և օրհնապատար նամակաւ մատչիմ օրհնութեամբ չրթանց՝ գովութեամբ բերանոյ և ամենայն բանականութեամբ սրտի առ ի ծահաւատ քրիստոսասէր և ջերմեռանդ գերազանցուհի մայրդ մեր հոգևոր գոհաբանութեամբ, չնորհակալութեամբ և օրհնութեամբ։ Եւ հանդերձ ազօթիւք վերամատուցանեմք զաղերս մաղթանաց ի բարձունս, զի Քրիստոս գլուխն եկեղեցւոյ որոյ լանուն սրբասէր և ազգասէր մայրդ մեր հոգևոր նահատակեցար վասն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ պսակազարդեալ պայծառացուսցէ զհոգի զմիտս և զմարմին քոյ ի պարծանս սուրբ հաւատոյ և եկեղեցւոյ իւրոյ, լուսաւորելով լոյսքաւութեան իւրում և զհոգիս ննջեցելոցն քոց ծնողաց և ազգականաց, յորոց զու ծաղիկդ ընտիր՝ անուշահոտ խնկաւորեցար։ Գիտեմ, զի և յառաջագոյն իսկ ոչ վասն ումեք խնդրանաց, այլ միայն ի մեծութենէ հաւատոյ և սիրոյն Աստուծոյ ի ձեզ ապաւորեցելոյ յորդորեալ այսքան հանդէս առաքինութեան պանծալի կացուցեր առաջի ազգաց և ազանց, այլ և այժմ ոչ անդէպ համարիմք յորդորել և խրախուսել զմայրդ մեր հոգևոր, զի դովին բարեպաշտական ջերմեռանդութեամբ և Աստուածասիրութեամբ կացցես և ընտացես հանապազ չաստագով Աստուածավայելուչ ուղղութեան և ճշմարտութեան, և ձեռնտու միշտ փոխանորդին մերոյ Սիրեմ Սրբազան Արք եպիսկոպոսին և ամենայն չաստղովչաց ճշմարտութեան հաւատոյ օրինաց և եկեղեցւոյ Հայաստանեայց։ Եւ գիտասջիք առանց երկմտութեան զի վարձք ձեր ոչ կորնչին ոչ լերկինս և ոչ լերկրի, իսկ զանկեղծ հաւատարմութիւն ձեր պարտիք որպէս ցարդ, նմին օրինակ անպակաս և աննուազ և յամենայն ժամ առնել ի սրբոյ Աթոռոյս, ի մէնջ. և մանաւանդ ի փոխանորդէն մերմէ լսիրեմայ սրբազան Արհուն, ունալով չաստագով և բարերար դուստր մայր Աթոռոյս էջմիածնի, և հոգևոր հարցս. զի քեզ փառք և պարծանք լաւելցին, որ և շնորհք սուրբ հոգւոյն Աստուծոյ, և օրհնութիւնք ի գլուխ ձեր զեղցին. որ և շնորհօք ս. հոգւոյն Աստուծոյ և օրհնութիւն բարձրելոյն եկաւորեալ հովանացի քեզ իշխանուհւոյդ և զօրութիւն Քրիստոսի և սրբոյ իշման տեղոյս պահեսցէ զքեզ ի չարէ, Ամէն։

Բարեսիրմիկ և մեծարգի ազգականաց սիրելեաց և բարեկամաց ձերոց Յիսուսաձիր ողջոյն և օրհնութիւն առաքեմ. և խնամոց տեառն ամենակալին յանձն առնեմ, որով լինիմ զօրացեալ և պահպանեցեալ։

Յամի տեառն 1808,

ի լուսիսի.

Ի սուրբ Էջմիածին, որ յԱրարատ։

ՄԾԲ. *Կոնդակ օրհնութեան եւ ժողովարարութեան վասն Արզուման անուն ուրումն Սպահանցւոյ ի վերայ Ղարսայ, Կարնոյ, Թօխաթու եւ Բաղդատու. որ անկեալ ընդ ծանր ծանր հարկապահանջութեամբ, հասեալ էր ի յետին թշուառութիւն. եւ զերկու որդիսն իւր զրաւ եղեալ Ամ Թումանի առ տասնիկ պարսիկս մի տարի վատայիւ, ինքըն զայս կոնդակ առեալ զնաց ի ժողովարարութիւն։*

Յորմէ ժամանեալ հասցէ գիր սիրոյ, թուղթ օրհնութեան, նամակ Քրիստոսական սուրբ ողջունի, և կոնդակ չնորհաց սուրբ

հոգւոյն Աստուծոյ, հանդերձ գերաղօր չնորհօք սուրբ իմման տեղւոյս Քրիստոսի և ամենայն սրբուքեանց, որք ի սմա ի վերայ սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց, և լուսաձնունդ դաւակոցդ սրբոյ և մեծի աթոռոյս Էջմիածնի, բարեպաշտից և Աստուածասիրաց, Քրիստոսիւ ղօրացեալ և բարձր բազկաւ նորին զարդացելոց, հարազատաց և առաքինական բարեգործութեամբք առ լեալ ժողովրդոցդ մերոց, որք կալք ընակեալք ի Քրիստոսահաստատ և Աստուածախնամ քաղաքդ ի Կարին և ի բոլոր չրջակայս դորին ի զաւառսն և ի դիւղօրայս՝ ի Թօխաթ, ի Սեբաստիա, ի Լակն, ի Լապուչեխ, ի Բենկեան, ի Լարապկեր, ի Մատէն, ի Մաշկէր, ի Լամասիա, ի Մարսվան, ի Կեսարիա, ի Նկոտա, ի Դէվէլի, ի Նիկիսար, ի Սնապ, ի Ցունիա, ի Սամսոն, ի Պաֆրա, և լալ ամենայն չրջակայս, ի զաւառսն ի գիւղօրէս և լամենայն աւանս գոցին՝ ի Բաղդատ և ի չրջակայս նորին, լորս կառուցեալ եկեղեցեաց և եկեղեցականաց դաստուց, նախ սրբոյ և մեծի աթոռոյս Էջմիածնի ծայրագոյն նուիրակաց, և ապա լարդապետիս առաջնորդաց և բոլոր որբասէր քահանայից, ազնուազարմ իշխանաւորաց և ամենայն ի Քրիստոս հաւատացելոցդ, որոց ամենից եղիցի ի տէր խնդալ ի Քրիստոս Ցիսուս ի լոյս ամենեցուն, Ամէն։

Որոց և գիտութիւն լիցի. դի ամենայն որ կարէ օգնել և ոչ օգնէ, մեռուցանէ, լատնի է ամենիցդ ազքատութիւն և թշուառութիւն մերազնէից, որք ամենայնուրեք. մանաւանդ՝ որք կան ընակեալք ի Պարսկաստան, թող զալլ ամենայն տառապանս, որովք ազգ մեր տառապի զանազան և ազգի ազգի հարկապահանջութեամբ և թշուառացեալ նեղի և սովամահ կորնչի. որք չունելով զալլ ևս ինչ հատուցանելոյ, զորդիս և զանձինս իւրեանց եղեալ ի գրաւի, առ ժամն թէպէտ աղատեն, բայց լետոյ մինչ անկարանան ի վճարել ի հաւատոց հանեալ՝ կորուսանեն զհոգիս ապրեամբ Քրիստոսի գնեալ ծառայից, որոց և գիտաւորութիւնն ի հարկապահանջութեան այս է ըստ բոլորին, Եորպիսի փորձանաւորաց մինչ է սոյն այս նամակաբեր Սպահանցի Արզումանն անուն քրիստոնեայս. որ ի հարկապահանջութեան կողոպտեալ լամենայն ընչից, հասեալ է ի լետին կարօտութիւն և ի տնանկութիւն այնքան, մինչև զեր կու որդիան իւր ևղեալ վասն Աճ Թումանի ի գրաւ առ հարկահան պարսիկս, ինքն վկայութեամբ բազմաց գիմեաց արտասուօք առ մեզ ապաւինեալ նախ լԱստուած, և ապա ի լառաստաձեռնութիւն ողորմածացդ։ Եւ մեք ոչ կարելով անտես առնել գիրաւացի արտասուս սորին, և ոչ բոլորովիմբ կարեկից լինիլ, աուաք ինքեան զայս թուղթ չրջաբերական ի վերայ սիրելեացդ որով և լորդորեմք զամենեսեանսդ սիրով և մարդասիրութեամբ վչտակից լինել վչտացելոյս և առատ ողորմութեամբ օդնել տնկելոյս ի փորձանս. և ազատութեան պատճառ լինել ողորմելի երխայից սորին, որք իբրև զզառունս փողոտին ի գալլոց. և օգնութեան և առատաձեռնութեան ձեր կարօտին, դի ազատեալ խառնեսցին ի հօտս Քրիստոսի. որ և ինքն տէրն մեր Ցիսուս Քրիստոս զձեզ և զամենայն ծաղկեալ դաւակունսն ձեր փրկեալ ազատեսցէ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ լայնպիսի և լալ ամենայն չար դիպուածոց և ի խորձանաց աղօթիւք ամենայն սրբոց։ Եւ լսա տրոց և ողորմութեանց ձերոց՝ լցուսցէ զձեզ և զտուն ձեր երկնալին օրհնութեամբ, բարութեամբ և առատ ողորմութեամբ, լուսաւորելով և ղհոգիս ննջեցելոցն ձերոց տալով նոցա լաւիտենական հանգիստն արդարոց։ Եւ Շնորհք սրբոյ իմման տեղւոյս Քրիստոսի եղիցի ձեզ և որդւոց ձերոց և բնակութեան ձերում հովանի և պահապան լամենայն ժամ Ամէն։ Գրեցաւ լամի տեառն 1808։ ի լուլիսի

Ի սուրբ Աթոռս Էջմիածնի։

ՄԺԳ. *Առ Կարբեցի Յովհաննէս վարդապետն վասն նոյն Սպահանցի Արզումանին։*

Յորմէ սիրով սուրբ հոգւոյն, Քրիստոսական ոգևունիւ, և Աստուածային օբհնութեամբ հանդերձ չնորհօք սուրբ իմման տեղւոյս Քրիստոսի ծանիր սիրելի և հոգևոր որդի մեր և չնուրչնակալ զաւակ սուրբ դահիս Յովհաննէս խոհեմամիտ վարդապետ։ Սուրբ Աթոռս և երկիր մեր կան ի խաղաղութեան

զարդիս. և յամենայն կողմանց վարդապետաք և ժողովուրդք դան և լինու երկիր մեր և սուրբ Աթոռս յինուԹեամբ և ողորմուԹեամբ բարձրելոյն։ Այժմ զայս զբեմ քեզ հարկաւորապէս. սոյն ԹղԹաբեր Արղուման անուն Ապահանցիս զոլով մեծատուն՝ անկեալ է այժմ ընդ ծանր ծանր հարկապահանջուԹեամբ և ի ներքոյ արբաքի և հատեալ է ի լետին չքաւորուԹիւնն։ Բաց յայոց՝ և զերկու որդիսն իւր վասն Աճ Թումանի եղեալ է ի զրաւ առպարսիկս մի տարի վատոյով, և այլն. Ծովակիմ վարդապետ լաւ դիտէ զդա. զու ես ըստ իւր պատմուԹեան կարես ճանաչել. վասնորոյ կոնդակ օրհնուԹեան և ժողովարարուԹեան տուեալ ի ձեռս դորա առաքեցաք յատկապէս առ քեզ այսու յանձնարարական զրով, որով և պատուիրեմք քեզ զի որովհետև ինքն այր խզճաբարոյ է, վասնորոյ դու պարտիս ամենայն կերպիւ օժանդակ և օգնական լինիլ փորձանաւորիդ զբելով յամենայն վիճակս քոյ Առաջնորդաց յաջորդաց Աւագ երիցանց, իշխանաց ծանօԹիցդ և անծանօԹիցդ՝ և յորդորել զամենեսեան՝ կամաւ և յօժարուԹեամբ ձեռն կարկառել կարօտաւորիդ և կարեկցել տնանկիդ։ Նմին իրի յատկապէս ի վերայ վիճակի քոյ տուաք զկոնդակն, զի դու յատկապէս մարդասիրեացես առ դա։ Կատարելով քոյ զայս մեր քեզ պատուէր, ողջ լեր Քրիստոսիս. և զօրացեալ չնորհիւ նորին։

1808. ի յուլիսի
ի սուրբ էջմիածին։

Մ Ա Ր Դ. *Առ ենարաւ Պօղոսեանցին որ եկն փոխանակ Ներսիսեանցին ատմանակալ կողմանցն Բամպակու։*

Հաւատարիմ սահմանակալ Մեծ կայսերուԹեանն ամենայն ռուսաց գերազանց ենարալ Սիմոն Անդրէիչ

աղօԹարար ձեր և

Ցիսուսի Քրիստոսի ծառայ Դանիէլ կաԹողիկոս ամենայն Հայոց և ծայրագոյն պատրիարգ Սրբոյ էջմիածնի Աթոռոյն մեծաւ սիրով մատուցանեմ ողջոյն և օրհնուԹիւն Ցիսուսասանդ։

Գրեցեալն ի ձերին գերազանցուԹենէ յամսոյս 14. որով ծանուցեալ էիք մեզ վասն առողջուԹեան ձերոյ և վասն կարղեալ լինելոյ ի տեղի ի Քրիստոս հանգուցեալ ենարալ Նեավետայովին, ընկալաք ի 17 սոյն ամսոյ և յոյժ ուրախացաք. փոխանակ դի յուսամք հաստատուն կերպիւ՝ Թէ որպէս նորին գերազանցուԹիւնն ողորմած և բարեբար էր ի վերայ հայոց ազդի մերոյ, նոյնպէս և դուք լինիջիք ողորմած և բարերար առ նոսա. առաւել ևս ի վերայ պանդուխտ նոր եկելոցն, որք բազում կերպիւ զրկեալ և ողորմելի են։

Հաբցեալ էիք զմեր առողջուԹենէն և Սրբոյ էջմիածնի պայծառուԹենէն։ Ոչ կարեմք ոչ զանց առնել ծանուցանել ձերոյ գերազանցուԹեան ընդ սոյն ղրաբերացս։ Մեք չնորհօքն Աստուծոյ առողջուԹեամբ եմք և Սուրբ Աթոռս Արարատեան նախ ի չնորհացն Աստուծոյ ապա ի քաղցր ակնարկուԹենէ բարձրաստիճան Շահին և Շահղազէին՝ և առաւել ևս սրբոյ Աթոռոյ մերոյ չատուկ պաշտպան և իմ յատկեղ բարերար Հիւսէին խան մեծահամբաւ սարտարին, յոյժ իւազդուԹեամբ և աչահովուԹեամբ կամք։

Իրաւի այսպիսի ապահովուԹիւն չէ տեսեալ երբէք, ոչ Թէ միայն Սուրբ էջմիածնի Աթոռն, այլ և ոչ իսկ բոլոր երկիրն Երևանու, որոյ այսպէս ապահովացուցանօղն է ԴօվլէԹլու Հիւսէին խան Սարտարն, որ է այր բարեսիրտ և յոյժ հաւատարիմ բարեկամաց իւրոց։ Հանգուցեալ Նեավետայովին ճշմարիտ կերպիւ բարեկամուԹիւն առնէր և մեր հզօր սարտարն ևս նոյնպէս ճշմարիտ բարեկամ էր նմա, որպէս դուք ևս կարօղ էք ընկատել լաւապէս որ այսքան ժամանակ զօրօք նստեալ մեր ի սահմանս ձեր, ոչ մեծ և ոչ փոքր վնաս չէ հասուցեալ ոչ բնակչաց սահմանաց ձերոց, և ոչ ճանապարհորդաց որք գան և գնան միշտ այսի աստ։

Ես կարօղ եմ հաւատարմացուցանել ձեզ՝ Թէ ընդ ձեզ ևս նոյնպէս հաւատարիմ բարեկամուԹիւն է առնելոց Հիւսէին խան բարեսէր սարտարն, եԹէ դուք ևս նման հանգուցեալ նախորդին ձերոյ ճշմարիտ բանիւ և հարազատուԹեան գործով բարեկամուԹիւն առնելոց լիցէք։

և այլն մնամ

Ձերոյ գերազանցուԹեան բարեացակամ և աղօԹարար

1808 օգոստ՝ 3։ Արքոյ Անդրէի առաջներորդ աստիճանի նշանակիր Դանիէլ պատրիարգ ամենայն հայոց։

Փոխ. *Թուղթ շնորհակալութեան առ կայսրն ամենայն Ռուսաց, վասն գաւառներին եւ աստղն շնորհնցնելոյ՝ 1808։*

Օգոստափառ ինքնակալ մեծ թագաւոր կայսր ամենայն ռուսաց Ալէքսանդր Պաւլովիչ։

Ամենաողորմած լոյս և պաշտպան ամենայն անալցելու քրիստոնէից։

Անդրէի կենաց ձերոյ աղօթարար և Յիսուսի Քրիստոսի ծառայ Դանիէլ կաթուղիկոս ամենայն հայոց և ծայրագոյն պատրիարգ Արարատեան աթոռոյն սրբոյ Էջմիածնի զօրութեամբ հոգւոյ իմով ներկայացեալ առաջի բարձրագոյն աթոռոյ սուրբ թագաւորութեան ձերոյ ողջունիս ձեզ մատուցանեմ։

Լի է երկիր ամենայն փառօք մեծութեան տիեզերատարած գերազօր կայսերութեան ձերոյ, լցաք և մեք ի փառաց անտի զոր Աստուածագութ մարդասիրութեամբ տարածեալ առ մեզ լամենողորմած Աթոռոյ մեծութեան ձերոյ ճոխացուցիք զմեզ մեծագոյն փառօք և պատուօք զարդարեալ զմեզ պանծալի նշանաւ սրբոյն Անդրէի առաջներորդ աստիճանի և երկնափայլ ճաճանչագեղ աստեղբ զոր ի 12 երորդ աւուրն յուլիսի յայսմ ներկայ ամիս, հանդերձ ի 30 երորդ աւուր ապրիլի գրեցեալ ամենաողորմած պարգևագրով բարերար և սուրբ կայսերութեան ձերոյ ստացաք ի ձեռն առաջին կառավարչին Վրացստանու կողմանց բաղում նշանաց կրօղ ենարալ Ֆերթմաչալ դրաֆ Իվան Վասիլիչ Կուտուվիչի՝ ոչ յաղագս արժանաւոր ծառայութեանց մերոց, այլ մանաւանդ յաղագս մեծ ողորմութեան և մարդասիրութեան ծնեալոյդ Աստուծոյ։

Եւ ոչ այսչափ միայն՝ այլ և մեծագոյն ողորմութեան և մարդասիրութեան ձերոյ յայտնեցիք ինձ ժառանգաւոր արժանացուցանելով համանգամայն մեծ ողորմութեան ձերում ձերկոսեանն ի հաւատարմաց մերոց զփոխանորդն իմ Եփրեմ գերապատիւ արքեպիսկոպոսն Ռուսաստանու հայոց, և զհարազատն իմ Յոհաննէս արքեպիսկոպոսն Վրացստանու հայոց կապելով ի գլուխս նոցա զպսակ բուլիանթ պատուական խաչին։

Այժմ ըստ մարգարէին առաւելապէս բարձրացաւ գլուխ իմ հանդէպ հակառակորդաց իմոց, առ որ և ընորայն ձայն բարձրացուցեալ աղաղակեմ, ով է որպէս Աստուածածնման սուրբ կայսրն իմ և տէրն իմ ի ծայրս հիւսիսոյ բազմեալ և զխոնարհս տեսանէ ի ծագս տիեզերաց, և փառաւոր առնէ յարեալս և ի հիւսիս, Սազ. ՃԺԲ. ընդ նմին և զերդ սրբուհի Աստուածամօրն ի բերան առեալ ցնծութեամբ և դոհանութեամբ երգեմ, Արար ինձ մեծամեծս հզօրն և սուրբ է անուն նորա և ողորմութիւն նորա յազգաց յազգս։

Եւ այսու ամենայնիւ հանդերձ միաբանութեամբ հոգևորականաց իմոց և բոլոր աղգաւ հայոց ճանաչելով զմեզ պարտաւորս ամենամեծ ողորմութեան ձերոյ ի ժիջնորդ առեալ զմայրն ողորմութեան զամենասուրբ Աստուածածինն՝ աղաչեմք զԱստուած որպէս զի նա ինքն լերկնից յաթոռոյ փառաց իւրոց առաստաձեռնեսցէ ի ձեզ ես քան զևս առաւելագոյն փառս և ճոխութիւնս և ամենաւգօր բազկաւ իւրով եղիցի հովանի ի վերայ ամենաողորմած Աթոռոյ սուրբ կայսերութեան ձերոյ և պահպանեսցէ զանգին կեանս ձեր հանդերձ բոլոր ժառանգակցօք իւրապարգև պալատան ձերոյ ընդ երկայն աւուրս հզօր և բարձր թագաւորութեամբ ամէն։

Ողջ լիր ամենալուսափայլ Օգոստոս ինքնակալ և մեք եմք և մնամք ողջոյն ազգաւ հայոց

Ամենաողորմած սուրբ թագաւորութեան ձերոյ ամենահպատակ և ջերմեռանդ ծառայ և աղօթարար Դանիէլ կաթուղիկոս ամենայն հայոց։

1808. օգոստոսի 11 ի Քրիստոսահիմն աթոռն ամենայն հայոց ս. Էջմիածին որ ի Արարատ։

ՄԻԶ. *Առ կայսր Ռուսաց խնդիր յաղագս Սինոդին։*

Ամենաողորմած ինքնակալ Օգոստափառ Թագաւոր և կայսր ամենայն Ռուսաց Ալէքսանդր Պաւլովիչ.

Խնամող և պաշտպան եկեղեցեաց հաստատելոց ի Քրիստոս Աստուած։

Անդին կենաց ձերոց աղօթարար և Սիսուսի Քրիստոսի ծառայ Դանիէլ կաթուղիկոս ամենայն հայոց և ծայրագոյն պատրիարգ Արարատեան Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի խոնարհ երկրպագութեամբ նուիրեմ ողջոյն քրիստոսական ամենայնիւ ողջունելոյն քրիստոսական ամեն։

Ոչ է ի ծածուկ լամենալուսափայլ գիտութենէ տիեղերացընին սուրբ կայսերութեան ձերոյ դի ղեկեղեցի Հայաստանեայց ի սուրբ Լուսաւորչէ հայոց Գրիգորէ մեծէ Պարթևէ մինչև ցայսօր ժամանակի ղկառավարութիւն իւր ունի ի վերայ կանոնաց սրբոց առաքելոցն Քրիստոսի և ուղղափառ հայրապետաց սրբոց. սակայն, մինչ հզօրացաւ բարբարոսական բռնութիւն ի Հայաստան աշխարհ, խանդարումն եղև ինչ ինչ առ նոցանէ կանոնեալ քրիստոնէավայելուչ բարեկարգութեանց՝ ընդ որս և ի բարեկարգութեան կառավարիչ սուրբ ժողովոյն հոգեորականաց ի պատճառս որոյ և բազում ինաք և աւերութիւնք լառաջ եկին տղդի և եկեղեցւոյ Հայաստանեայց։

Յաղաղս որոյ մինչ և մեք անձամբ կրեալ զինեան ալնորիկ էաք ի գերութեան լերկիր Պարսից ի Մարուզայ քաղաք, կտակ առանգեցաք գրով ամենայն հոգեորականաց սրբոյ Էջմիածնի և յանձնեցաք զհոգաբարձութիւն փոխանորդին մերում գերապատիւ Սիրեմ արք եպիսկոպոսի հայոցն Ռուսաստանու և գործակատարին մերում հարազատ հայսակին տէրութեան ձերոյ Մինասայ Նիլիարեան դի նոքա կարգադրեսցեն և ամենողորմած բարեհաճութեամբ ձեր հաստատեսցեն և հրատարակեսցեն։

Այլ քանդի բարեբար ակնարկութեամբ ձեր և ողորմութեամբ Տեառն Աստուծոյ աղաւթիւն գտաք մեք, մեղիս անհատասիկ կարգագրեցաք զնոյն բարեկարգութեան կառավարիչ առաքելաւանդ սուրբ ժողովն հոգևորականաց և ամենախոնարհաբար խընդրեմք ի բարեբար սուրբ կայսերութենէ ձեր դի բարեհաճեսջիք ամենաողորմած բարձրահրամանս յատուկ հրովարտակաւ տալ դանդաղրդելի հաստատութիւն այնմիկ ի ներքոյ վերատեսչութեան օրինաւոր ծայրագոյն պատրիարգի ամենայն հայոց, և զկանոնիստորն և զհոգևորական կառավարութիւնն ամենայն հայոց եղելոց ընդ հովանեաւ քրիստոսատիպ բարեբեր կայսերութեան ձերոյ յանձնել ի ներքոյ կարգագրութեան սուրբ ժողովոյն բարձրագոյն խորհրգարանի Արարատեան Աթոռոյն սրբոյ Էջմիածնի կանոնօք և ծիսիւ հայոց։

Մեծ են ողորմութիւնք աթոռոյ ամենամեծ կայսերութեան ամենայն ռուսաց ի վերայ աղգի և եկեղեցւոյ հայոց և առաւել ևս մեծանուն սուրբ. առ որ և մեք ողջոյն աղդաւ եմք և մնամք ամենաջերմեռանդ հպատակութեամբ.

Կարող և բարձր Օգոստոս սուրբ կայսր ձերոյ մեծութ.

1808 օգոստոսի թ[եան]

11։ Ամենախոնարհ ծառայ և աղօթարար։

ՄԻԺ. *Դանիէլ կաթուղիկոսի առ Ցոհաննէս, Հայրապետ եւ Նահապետ աղգայն Անտոնեան ի Բայազիտ։*

Ցիսուսի Քրիստոսի ծառայ տէր Դանիէլ կաթուղիկոս և ծայրագոյն պատրիարգ ամենայն հայոց առաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի, և մեծի Աթոռոյս սրբոյ էջմիածնի։

Ցորմէ Աստուածային բազմաւ օրհնութեամբ և սիրով մասուացի ողջոյն Քրիստոսական հաւատարիմ և օգտաջան որգուցդ սրբոյ աթոռոյս և յատկեղ սիրելեացդ մերոց՝ Քրիստոսասէր և բարեպաշտ Ցոհաննէս Հայրապետ և Նահապետ գերապատիւ աղալիցդ։ Ցայսքան ընդ երկար ժամանակ՝ որ սրբոյ աթոռոյս կալան ի տան ձերում ամենայն հաւատարմութեամբ պանպանելով աշխատեցեալք հոգւով չափ, արդարև առ այդ ամենայն ժամ

օրհնաբանեալ եմք զձեզ և զամենայն ձերա-
լինսն։ Իսկ այժմ ևս առ հաստատեալ զայնս
ի սուրբ աթոռս թէ որքան ջանացեալ էիք,
զայն ամենայն ես պատմաբանեցին լիովին
տեղապահ Բարսեղ արք եպիսկոպոսն և Ներ-
սէս եպիսկոպոս հոգեծին և սիրելի որդեակն
մեր, բերելով ընդ ինքեանս զայն ամենայն
առ ի ձէնջ պահպանեալ իրան սրբոյ աթո-
ռոյս, որով իրաւի առաւել ևս չնորհակալ ե-
զեալ դմեծագոյն հարազատութենէ ձերմէ՝
օրհնեցաք լիաբերան օրհնութեամբ, և խընդ-
րեցաք յԱստուծոյ, զի և ինքն վարձահատոյց
լինելով ձեզ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ՝
օրհնեսցէ իւր անսպառելի օրհնութեամբն, և
հովանի ունելով միշտ ի վերայ ձեր զշնորհ
սրբոյ աթոռոյս, փրկեսցէ զձեզ հանդերձ
ձերայնովքն յամենայն չարէ, և լցուսցէ ա-
մենայն յաջողուածովք բարեաց երկինս և
երկիր։

Թէպէտ մեք չունէաք բնաւ կարծիս՝
թէ Դօվլաթլու փաշային զայն մէկ բեռն ար-
ծաթեղէնն լետս ձգէ և չթողու հասանիլ,
բայց ըստ որում արարեալ է, այժմ չունիմք
ինչ ասել մեք, այլ միայն գուք ջանասջիք
նոյնպէս, որ զայն ևս աստ լիւր տեղն հա-
սուցանէ, իսկ թէ ոչ՝ յայնժամ գիտասցէ, զի
այգ այս ճախիս վախուսի ապրանք լինել-
լով, ոչ միայն ես, այլ թաղաւորք և բոլոր
հայոց աղգ մեր խօսելոց են և պահանջելոց
են ի դմանէ։ Բայց զի ես մեր բարեկամու-
թիւնն հաստատ պահել կամելով, ոչ կամիմ
բնաւ՝ զի այնպէս լիցին. այլ սիրով և բա-
րեկամութեամբ ապա թէ ոչ՝ ինքն գիտէ։
Ողջ լերուք զօրութեամբ Տեառն Աստուծոյ,
ամէն։

1808 օգոստ. 20.
ի սուրբ Էջմիածին։

ՄԺԸ. *Դանիէլ կաթուղիկոսի առ Մի-նաս Եղիազարեան։*

Ցիսուսի Քրիստոսի ծառայ Ցէր Դանիէլ կաթուղիկոս և ծայրագոյն պատրիարգ ամե-նայն հայոց առաքելական եկեղեցւոյ Քրիս-տոսի և Քրիստոսահիմն Աթոռոյն Սրբոյ Էջ-միածնի, լցեալ սիրով և աստուածային բազ-մապատիկ օրհնութեամբ Քրիստոսական ող-ջոյն մատուցանեմք ամենապերճառագ սիրել-ւոյդ մերում վեհազնեալ Աղայ Մինաս Եղիա-զարեան հարազատ որդւոյ սուրբ Լուսաւոր-չին և մեծաերախտ բարերարիդ և պաշտպանիդ մերոյ Աթոռոյ նորայ։ Եւ լայտ առնեմք, զի ըստ նախնի չերմեռանդութեան մեծապատիւ իշխանաց Կոստանդնուպօլսոյ՝ զայն գիր կը-տակի մերոյ զոր ի ժամանակի գերութեան մերոյ ի Մարաղալէ գրեալ առաքեալ էի առ փոխանորդն իմ գերապատիւ Եփրեմ սրբազան արք եպիսկոպոսն և առ վեհազնեալ ամենա-հաւատարիմ գործակատարդ սրբոյ Էջմիածնի և մեր՝ լայտնել ուր հարկն իցէ և կարգագրել զսուրբ ժողով հոգևորականաց լաղագս կատա-վարութեան հոգևորական գործոց համաձայն առաքելական կանոնաց, այժմ ահաւասիկ մե-ղէն կարգագրեալ գնոյն ի 25 մայիսի՝ ամե-նախնարհաբար լայտնեցաք դրով նորին Կայսերականի Մեծութեան ամենայն ռուսաց և առաջին կառավարչին Վրացասնու պար-ծառափայլ գրաֆ Կուտուվիչին, և խնդրեցաք, զի ամենաողորմած դբամատիւ տացի դան-գդգեալի հաստատութիւն՝ այնմիկ ի ներքոյ վերատեսչութեան օրինաւոր ծայրագոյն պատ-րիարգի Արարատեան աթոռոյն, և յանձնեա-ղի ի ներքոյ կարգագրութեան սուրբ ժողո-վոյն Արարատեան զկանոնիստօրն և հոգևորա-կան կառավարութիւնն Ռուսաստանու հա-յոց։

Առաքեցի և առ ձեզ զօրինակս ամե-նայն գրուածոց մերոց՝ և անդամոց սուրբ ժողովոյն՝ և բոլոր ներկայ եղեալ միաբանից մերոց վասն կարգագրութեան այնմիկ իւրա-քանչիւրքն ստորագրութեամբ և խնդրեմ, զի ըստ որում ի գուռն Նորին Կայսերականի Մեծութեան գուք էք մեր բերան և լեզու՝ հետևեսջիք լաւագոյն կերպիւ առնել հաստա-տութիւն սուրբ ժողովոյն Արարատեան՝ այն-պէս, զի մի կարող լինիցին վտանգել զհաս-տատութիւն նորա փառամոլ կամ կամակոր, կամ այլ անբարեսէր անձինք հոգևորականք և մարմնաւորականք ի քրիստոնէից։

Քրիստոնէից ասեմք, քանզի անհաւա-տից չէ ինչ փոյթ թէ եկեղեցին Աստուծոյ կառավարեցի միով անձամբ կամ բազմու-թեամբ սուրբ ժողովոյ։

Ողջ լեր և չնորհք սրբոյ զահոյս հան-դերձ զօրութեամբ կենսակիր սրբոյ Դեղար-

դեանն և ամենայն սրբոցն Աստուծոյ, եղիցի ընդ քեզ միշտ ամէն։

1808. օգոստոսի 21. Դանիէլ, կաթուղիկոս ի տուրբ Էջմիածին, ամենայն Հայոց։

Մ ի թ. *Թուղթ օրհնութեան ի Հինդ ընակեալ ժողովրդոցն ի սլատասխանի բազմակնիք ժահէրի նոցին. որով խնդրեալ էին թողուլ զինքեանս ըստ վաղեմի սովորութեան իւրեանց լինիլ թեմ եւ վիճակ Ջուղայու վանից. եւ ի առնել տէրունի։*

Ցորմէ ժամանեցի երկնաւորն օրհնութիւն հանդերձ խաղաղական ողջունիւ կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի ի վերայ հոգևոր և Լուսաւորչածին որդւոցդ և ամենահաւատարիմ զաւակացդ սրբոյ և մեծի աթոռոյս Էջմիածնի. որ կալք բնակեալ ի տիրապահ և լաստուածահաստատ քաղաքդ Հնդկաստանի ի Կալկաթայ, ի Դաքայ, ի Սէլհատպատ, ի Զիլհրայ, ի Սուրաթ ի Մատրաս և յայլ շրջակայս դորին. սրբանուէր քահանայից աւագաց և երկրորդաց և ամենայն հոգևորական խմբից, դերապնիւ իշխանաւորաց, հարազատ դաւձապետաց և երևելիոնաց, մեծ ազգի կոմիսերաց և վերատեսչաց, արդարամիտ կառավարչաց քաղաքական դործառնութեանց, ազնուատոհմ վերակացուաց որբոց և այրեաց՝ և ճշմարտասէր դատաւորաց, և այլ առ հասարակ մեծաց և փոքունց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, և ամենայն չափու հասակի ըստ իւրաքանչիւր կարգի և աստիճանի. որոց ամենից եղիցի ի տէր Քրիստոս խնդալ հոգեզուարճ բերկրանօք. Ամէն։

(Շնորհք)։

Եւ ընդ օրհնութեան և սիրոյ սղջունիս գիտութիւն լիցի սիրելի և հոգևոր որդւոցդ մերոյ և հարազատ և հաւատարիմ զաւակացդ սրբոյ և մեծի աթոռոյս Էջմիածնի. Զի թուղթ ձեր մահաբերական և ձեռնարկ բազմակնիք գրեցեալ 1805 թիւ, յօգոստոսի 12, եկեալ ժամանեաց առ մեզ, զոր ընկալեալ գիտացաք զօրինաւոր խնդիր ձեր հաւատարկութեան ամենայն հանգամանօք. Զեռապիր, զոր ցուցանէք առեալ ի դիտապետաց Ջուղայու սուրբ Ամենափրկիչ վանից, ամենևին ոչ զտանի աստ ի սուրբ Աթոռս. զի մեք եկեալ ի սուրբ զահս Քրիստոսակիր, զտաք յրուեալ ամենայն ինչ սորին. և հարցմամբ և հետաքննին խուզողութեամբ ևս որոնեալ բնաւ երբէք ոչ կարացաք գիտել և կամ տեղեկանալ ինչ զայնմանէ։ Արդ զայս գրիմք սիրելեացդ՝ զի տուգն այնպիսի թղթոյ և առգն երկոքեան ևս և թուղթք նոցին խոտանք են և արտաքոյ նախնեաց կոնոնաց և եղծիչ և քակտիչ հաւրենի աւանդութեանց. Վասնորոյ որպէս ընդղէմ է մեզ և արտաքոյ կամաց ձերոց, նմինօրինակ առելի է մեզ և արտաքոյ կամաց մերոց այդ և ամենայն զրկանք. Եւ որպէս տնօրինեալ են նախնի սուրբ հարք և հաստատեալ, զի Հնդկաստանի ժողովուրդք լինիցին վիճակք և թեմ սուրբ Ամենափրկիչ վանից Ջուղայու, մեզ ևս յոյժ հաճոլական է և ընդունելի ոգւոյ մերում քանզի ըղձալի է մեզ չինութիւն և պայծառութիւն ամենայն վանօրէից և եկեղեցեացն Քրիստոսի, մանաւանդ՝ չքեղութիւն և վայելչադարգ վերանորոգութիւն սուրբ և պանծալի Ամենափրկիչ հրաշակերտ վանից ձերոց. և տէր ինքն որ առաստ է ի տուրս պարգևաց և մեծ ողորմութեամբ չինութիւն և վերահաստատութիւն պարդևեսցէ նախ չքնաղագեղ սուրբ վանից ձերոց և ապա ամենայն վանից և եկեղեցեաց խղճալի ազգիս մերոյ աղօթիւք իւրոց հաճոյից և ամենայն սրբոց։ Իսկ զոր գրէք, թէ ի կոնդակին տէրունի էր դրեալ վասն մեր, և գՓակօբ վարդապետն Նուիլակ միանգամայն և առաջնորդ Հնդկաստանի, և այլն՝ մեք կարծիմք լինիլ սխալմամբ, զի որովհետև Բաղդատ է տէրունի, և Նուիրական Հնգու է միանգամայն և Նուիրակ Բաղդատու, և կոնդակն մի է, վասնորոյ սխալմամբ փոխանակ որոշումն առնելոյ ընդ մէջ Հնդու և Բաղդատու, առանց որոշման անխտիր ի կոնդակին եղեալ են զտէրունի բառդ, հասալականաբար, ապա թէ ոչ՝ ով կարէ որոշել զձեզ ի սուրբ վանից ձերոց, և զսուրբ վանքն ձեր զրկել լարդեանց ձերոց և ի ձէնջ, առ այդ մի վերդվիք. և մի զալլ և այլ անոտի կարծիս զմտօք ձերովք անցուցանէք. պարզ է մեր միտք և դիտաւորութիւն. և դուք ևս ի պարզութեան պահեցէք զձեզ և զմիաս ձեր. հաստատուն կացէք լասմնետէ ի սէր, յորդիու-

թիւն, ի հաւատարմութիւն և ի ճշմարիտ Աստուածպաշտական ջերմեռանդութիւն տո. սուրբ աթոռ Ծնողս ձեր և տո. մերս հողևոր հայրութիւնս Մնք հետևող եմք նախնի տուրբ հարց մերոց և նոցին եղեալ Աստուածահաճոյ կանոնաց. ցանկալիք ոչ միայն զեղեալն հաստատուն և անշարժ պահել այժմ և յաւիտեան մնք և յամ յաջորդք մեր, այլ և զխոհեմութեամբ վերահաստատութեամբ վերանորոգել և յառաջինն հանել. բաղձամք ի տուէ և ի զիշերի բարեաց և բարեկարգութեանց ազգիս հայոց և չինութեան ամենայն վանորէից. վանորոյ ահա ի հաստատութիւն բանից և ամենայն ղրեցելոց մերոց, և ի միտմտութիւն ձեզ սիրելի և բաղձալի որգւոցդ և հողեծին զաւակացդ տուրբ դահիս Աստուածածիչի մերով բարձու հրամանաւ և հայրապետական մեր կնքով և ստորագրութեամբ հաստատեմք և նղովիւք ամբաւականեմք մնալ ձեզ այժմ և յաւիտեանս յաւիտենից. Թեմ և վիճակ Ջուղայու Ամենափրկիչ տուրբ վանից ձերոց ըստ նախնի կանոնաց և ըստ հայրենի ձեր սովորութեանց ամենայն կերպիւ. Եւ եթէ թուղթ այնպիսի զոր լիշատակեալ էք ի մահէրի ձերում լինիցի և կամ գտանիցի ի տուրբ աթոռս այժմ և առ յապայ, տուօղն և առօղն և թուղթ նոցին եղիցին անընդունելիք առաջի ամենեցուն ըստ զօրութեան այս մեր հայրապետական կոնդակի. և եթէ ոք յամենետ համարձակեսցի զայդպիսի ինչ առնել և գործել, և զցանկ հայրենի քակտել և կամ մտաբերել պարտական մնասցէ առաջի Աստուծոյ և տուրբ Խաչի նորին և Ամենափրկիչ տուրբ վանից ձերոց. և ընդ քակտիչս է հակառակ Աստուծոյ և Աստուածահաճոյ կանոնաց սրբոց հարց համաձունսցի. Զսոյնս գրեցաք և առ հասարակութիւն Նոր Ջուղայու, որ ընդ մահէրի ձերոյ դմահէրս մի ևս ինքեանք էին արարեալ և յղեալ առ մեզ համեմատ կամաց ձերոց. Գրեցաք և բան կշտամբանաց աստի և յանդիմանութեան առ ծարութիւն վարդապետ առաջնորդն ձեր. թէ դիւրդ իշխեցին և համարձակեցան արտաքոյ օրինաց ի ծածուկ ինքնագլուխ ինքնակամ վանն վառաց իւրեանց և աստիճանի զոյն գործ գործել և զընական վիճակն տուրբ վանքին տալ սրբոյ աթոռոյս և կամ այլոց առանց ձեր բարեհաճութեան և հաւանութեան. Լոկ վասն նուիրակին ոչինչ դրեմք. զի թէ տուրբ աթոռն և թէ նուիրակք սորին ձեր են. ուստի՝ որպէս տրտմութիւն ազգին և վիշտք նոցին մեր են և մեզ համարեալք, և տրախութիւնն և բարեբաղդութիւնն նոյնպունակ մեզ և սրբոյ աթոռոյս, այսպէս չքեղութիւն և անչքութիւն սորին յարգանք և անարգանք նուիրակաց մերոց ձեր են և ձեզ համարեալք. վասնորոյ սիրով ընկալնուլն և զոչ ընդունելն ի կամս և ի բարի խղճմտանս ձեր ապաստան թողեալ, յանձն առնեմ զձեզ խնամոց և ամենազօր բազկի նորին կալ ՚ինալ ձեզ ամենայն ժառանգօք և զաւակօք ընտանեօք և ազգականօք բարերջանիկ բարեբաստ բարօրութեան աղատս յամենայն փորձանաց և ի ձախորդութեանց յուրախութիւն և ի զուարթութիւն հողևոր հօրս ձերոյ, և շնորհք սուրբ հոգւոյն Աստուծոյ և սուրբ իշման տեղւոյս Քրիստոսի եղիցի ընդ ձեզ, Ամէն։

Ցամի կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի 1808. ի գերագահ աթոռն ամենայն հայոց ի սուրբ էջմիածին։

Մի. *Դանիէլ կաթուղիկոսի առ իշխ. Մինաս Շղիազարեան։*

Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Դանիէլ կաթուղիկոս և ծայրագոյն պատրիարգ ամենայն Հայոց առաքելական եկեղեցւոյ Քրիստոսի և լուսանկար Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի բաղում սիրով մատուցանեմք զողջոյն և օրհնութիւն Աստուածային ամենահարազատ որգւոյդ սրբոյ Լուսաւորչին և եկեղեցւոյ Հայաստանեայց վեհադնեալ իշխան Հայոց ազգայ Մինասայ Շղիազարեան ամենաջերմեռանդ պաշտպանիդ բարեկարգութեան նախնեաց։

Եւ լայտ առնեմք, զի ի 12 յուլիսի հանդերձ ամենապողոմած պարգևագրով նորին կայսերական Մեծութեան ընկալաք զկաւակալերն սրբոյն Աննայի և զաստղ, ընդ նոսին և գիր շնորհաւորութեան հանդերձ պատասխանեաւ առ ի մէնջ գրեցելոյն առ ինքն, ի պայծառաւիալ Գրաֆ Նիկոլայ Րումեանցովէ։

Ուստի և մեք ի 21 յունիսի գրեցաք ամենախոնարհաբար զչնորհակալութիւն մեր առ նորին կայսերական մեծութիւնն առ վչեալ Գրաֆն և առ Կուդովիչն։

Գրեցաք և առ կայսրն զայլ ևս երիս թուղթս մին վասն հաստատութեան կաթողիկոսական կոնդակաւ ի վերայ Հայոց եղելոց ի Մոլդաւիայ և Վալախիայ, զիոխանորդն իմ Եփրեմ Արք եպիսկոպոսն Ռուստոստանու Հայոց, և մին ևս վասն՝ առաքելոյ զԴրիզոր սևակիրն ի վանս Հաղբատոյ մնալ անդէն ի ներքոյ վերատեսչութեան Յովաննէս Արք եպիսկոպոսին վրացստանու Հայոց՝ զորոց երբորդ և չորրորդ թուղթքն բաց յղեալ եմք առ Եփրեմ արքեպան Արք եպիսկոպոսն, վասն կավալերի դրեցեալն առ Կուդովիչն և վասն սուրբ Ժողովոյն դրեցեալն առ Ձեզ, ի դուք մատուաջիք։

Խնդրեմ ուրեմն զի վասն ամենեցուն ևս ըստ չափու կարողութեան լաւապէս հոդացողութիւն ունիցիս վասն լաւութեան ողորմելի Ժողովրդեան մերոյ։

Ողջ լեր և զօրութիւն կենսատու սուրբ խաչին Քրիստոսի հովանի լիցի ի վերայ քոյ և չնորհք սրբոյ աթոռոյս եղիցի ընդ քեզ միշտ։

Ի 1808, Օգոստոսի ԴԱՆԻԷԼ կաթողիկոս ա-
21. ի ս. ԷՋՄԻԱԾԻՆ, մեծաւոր Հայոց։

ՄԻՄ. *Դանիէլ կաթուղիկոսի առ Գրաֆ Ի. Վ. Գուդովիչ։*

Պայծառափայլ գրաֆ Իւան Վասիլիչ.
Բարեբար և ողորմած տէր
խոնարհ աղօթարար և

Ցիսուսի Քրիստոսի . . . զոդջոյն քրիստոսական մատուցեալ ձերին պայծառափայլութեանն լայտ առնեմ. որովհետև քաղցր ակնարկութիւն ձեր և լայնածաւալ բարեգթութիւնն տարածեալ է ի վերայ Աթոռոյս և ի վերայ մեր, վասնորոյ լսեմնալն կողմանց ազգ մեր տառապեալ դիմեն առ մեզ խնդրագրով. որոց մինն է Հաչտարխանու վաճառական հալ Մարտին Կոստանդինիչն, որ իզուր գաստապարտեցեալ է պարոն վեսէլագալովի առքերտիւն, և հաստատէ նոյն կոստանդինիչն, որ իւր կանդրախան ընդ ժօրյկուի ենարալին է եղեալ և ոչ ընդ վեսէլագալովին։ Ալդ՝ որ վհետև ունիք զդուք և զինամ մեծ ի վերալ ազգիս մերոյ, վասնորոյ խնդրեմք խոնարհաբար՝ հրամալել Հաչտարխանու պարոն դուպեռնաթորին, որ ճշմարտութեամբ քննութիւն արարեալ վկալութեամբ բազմաց, զճչմարիտն և զստան գիտացեն, և ձերդ մեծութեան լայտնեացեն. զի մի զրկանք լինիլի առանց քննութեան մարտին Կոստանդինիչին։ Յուսով եմ, թէ որպէս զամենալն խնդիր մեր անտես չէք արարեալ, նոյնպէս և այս օրինաւոր մեր խնդիր չլինիցի անտես ի ձերդ պայծառափայլութենէ և մնասցէ առանց կատարելոյ։ Ողջ լեր ողորմած տէր, և մեք եմք և

մնամք վասն անդին կենաց
ձերոց խոնարհ աղօթարար.
Յամի տեառն 1808,
Օգոստ." 21 ի սուրբ
ԷՋմիածին, որ լԱ-
րարատ.

ՄԻՌ. *Առ կայսրն ամենայն ռուսաց զՆիփրեմ արքեպիսկոպոսն կարգելոյ առաջնորդ ի վերայ Ռումելուս։*

Ամենալուսափայլ թագաւոր կայսր ամենայն Ռուսաց ինքնակալ կիսագնդին աշխարհի Ալեքսանդր Պաւլովիչ։

Պաշտպան և ալցելու ամենայն անօգնականաց ազգաց քրիստոնէից՝ և լաւուկ խընամակալ իմ, և աթոռոյն Արարատեան և ամենայն Հայոց ազգին իմոյ։

Անդին կենացդ ազօթարար և

Ցիսուսի Քրիստոսի . . . զոդջոյն Քրիստոսական հանդերձ ջերմեռանդ օրհնութեամբ մատուցանեմք ամենալուսաւորհ երկրպագութեամբ։

Որովհետև լոյսն ամենայն հաւատալից բարեգութիւն Աստուած ողորմեալ ժողովրդեան իւր՝ զնակեցուցոյ ի սահմանս Մոլտաւիոյ և Վալախիոյ և այլոց՝ ժողովեաց

ղնոսա ի ներքոյ ամենաբարձր հովանաւորութեան տիեզերատարած թնոց ամենաողորմած և բարերար սուրբ պատկերի իւրոյ ձերոյ կայսերական մեծութեան, ուրախ եմք առաւելապէս և աղաչեմք զմարդասէրն Աստուած, զի այնմիկ ողորմութեան իւր արժանի արասցէ և զրնակեալսն լԱրարատ և յամենայն սահմանս Հայաստան աշխարհի։

Այլ քանզի բազում են ի լիչեալ սահմանն ժողովուրդք ի մեր ազգէ դաւանութեամբ նկեղեցւոյ Հայաստանեայց՝ որոց հարկաւոր է արժանաւոր հոգևորական կառավարիչ՝ և բարեբարոյ վերատեսուչ, վանորոյ մեք մերովս կաթուղիկոսական կոնդակաւ, որպէս ի վերոյ ամենայն ժողովրդեան հայոց բնակելոց ի Ռուսաստան, նոյնպէս և ի վերոյ հայոց բնակելոց ի Մոլտավիայ և ի Վալախիայ և յայն կողմանս կարգեցաք առաջնորդ և վերատեսուչ զվոխանորդն մեր գերապատիւ եփրեմ սրբազան արքեպիսկոպոսն, և ամենախոնարհաբար խնդրեմք զամենաողորմած բարերար սուրբ կայսերութենէ ձեր, զի ամենաբարձր կայսերական հրովարտակաւ հրամայեսցի ամենայն կառավարչաց և վերակացուաց կողմանցն այնոցիկ ձեռնտու լինել լիչեալ գերապատիւ փոխանորդին մերոյ յամենայն հարկաւոր պատահմունս հոգեւորական կառավարութեանց։

Ամենաողորմած թագաւոր ձերոյ կայսերական բարձրութեան ամենախոնարհ ծառայ և աղօթարար։

1808. օգոստոս 21 յԱրարատեան ի ս. Էջմիածին

ՄԻՖ. Առ Դրաֆ Դուդովիչն ղարձակ վասն Սիւնհոդոսին։

Պայծառափայլ Գրաֆ Իվան Վասիլիչ.

Ողորմած Տէր։

Աղօթարար ձեր և Ցիսուսի Քրիստոսի . . . . . ղոգջուն Քրիստոսական նուիրեմ ամենայն երմոանգ օրհնութեամբ։ Եւ լայտ առնեմք զի նկեղեցի Հայաստանեայց յաւուրց անտի սուրբ Լուսաւորչին մերոյ Գրիգորի Պարթեւի կառավարի միչտ կանոնօք սրբոց առաքելոց և սրբոց Հայրապետաց։ Սակայն մինչ հզօրացաւ բարբարոսական բռնութիւն յաչխարհս մեր, կամ յաղագս բռնութեան նոցա, և կամ յաղագս զանցառութեան՝ խանգարեցաւ յաթոռոս Արարատեան բարեկարգութեան կանոնաւորիչ առաքելաւանդ սուրբ ժողովն հոգևորականաց, բայց ի տարաբնչիւր ժամանակի ի պակասութենէ այնորիկ բազում ինաք յառաջ նկին յազգի մերում, և յաթոռս Արարատեան։ Մինչև յաւուրս նախորդին մերոյ ի Քրիստոս հանգուցեալ պատրիարգին Ղուկասու մեծ բազմութիւն Հայոց ազգին եղելոց ի Կոստանդնուպօլիսն առ հաստատելոյ զայն պատճառ ինչասուց բազումս չկանացան վերահաստատել զնոյն բարեկարգութեան կանոնաւորիչ սուրբ ժողովն հոգևորականաց, բայց ընդդիմ կամաց նոցա յայնմ ժամանակի յարեաւ աղաչ Մահմատ Խանն աչխարհակործան և նզև ընդհանուր սասանութիւն յամենայն Ասիայ որով և յամենայն աչխատութիւն հայոցն Կոստանդնուպօլսոյ առ այն բարեկարգութեան կառավարիչ սուրբ ժողովն ինաց անկատար, մինչև յառաջ եկն այս մեծ ատրութիւն սրբոյ Աթոռոյ և համօրէն ազգի մերոյ զորմէ տեղեակ էք յաւուպէս։

Վասն այսորիկ մինչ մեք էաք ի գերութեան ի Մարաղայ քաղաք, կտակ աւանդեցաք զրով ամենայն հոգևորականաց սրբոյ Էջմիածնի և յանձնեցաք դհոգաբարձութիւն փոխանորդին մերում գերապատիւ եփրեմ արք եպիսկոպոսի Հայոցն Ռուսաստանու և գործակատարին սրբոյ Աթոռոյս մերում վեհդնեալ Մինասայ Իդիազարեան, զի նոքա յայնհետէ ուր հարկն է և վերահաստատեալ գրատարակեսցին զբարեկարգութեան կառավարիչ սուրբ ժողովն հոգևորականաց։

Իսկ զի ողորմութիւն Աստուծոյ ի ձեռն ձերոյ պայծառափայլութեան ոչ անտգոն առցուեաց զմեզ ի գերութենէ անտի, մեզէն ահաւասիկ կարդադրեցաք զբարեկարգութեան կառավարիչ առաքելաւանդ սուրբ ժողովն հոգևորականաց և տնօրինեալք զբարձրագոյն խորհրդարան աստ ի սուրբ աթոռս Արարատեան, գորոյ հանդամանանս կացուցմանն գբերեալ եմք առ հարազատ հայատակին նորին կայսերական մեծութեան և հաւատարիմ հոգաբարձուն ամենայն հարկաւոր գործոց սրբոյ աթոռոյս մերում վեհդնեալ Մինաս Ս-

ղիաղարեանն, հանդերձ ամենախոնարհ խնդրագրով առ նորին կայսերական մեծութիւնն որպէս զի համաձայն ամենառղորմած Ղլատմատին չնորհեցելոյ Արարատեան աթոռոյ ծայրագոյն պատրիարգին ամենայն հայոց, լաղագս ամենայն հոգևորականաց և հոգևորական գործոց հայոց, ամենողորմած բարեհաճութեամբ չնորհեսցէ և ղբարձրագոյն հրովարտակ լաղագս լինելոյ հաստատուն ի ներքոյ վերատեսչութեան ծայրագոյն պատրիարգի ամենայն հայոց բարեկարգութեան կառավարչի սուրբ ժողովոյն հոգևորականաց Արարատեան աթոռոյն, և զկանոնիստօրն և զամենայն հոգևորական կառավարութիւնն հայոց եղելոց ի տէրութեան Ռուսաց, լանձնեսցէ ի ներքոյ կարգագրութեան սուրբ ժողովոյն բարձրագոյն խորհրդարանի Արարատեան աթոռոյ կանոնօք և ծիսիւ հայոց։

Խաղում են բարերարութիւնք ձեր առ մեզ և այս աչխատութիւնք ձերոյ պաշտառափայլութեան լաղագս ազատելոյ զազգն և զեկեղեցի Հայոց ի վնասուց անխիղճ և ուանձարձակ կամակոր անձանց մնալ ձեզ անջընջելի լիշատակ մինչև լաւիտեան։

Ողջ լեր և մնք եմք և մնամք ջերմեռանդութեամբ հոգւոյ մերոյ։

Ողորմած տէր ձերոյ պաշտառափայլութեան ամենախոնարհ ծառայ և աղօթարար Դանիէլ կաթուղիկոս ամենայն հայոց։

1808. օգոստոս 23։

ՄԻՊ. *Ի Թիֆլիզ առ Յովհաննէս առաջնորդն։*

Յիսուսի Քրիստոսի.... Խաղում սիրով մատուցանեմ ողջոյն Քրիստոսասանդ սիրեցեալ հարազատիդ մերում գերարգոյ Յովհաննէս արքեպիսկոպոս Թիֆլիզու հայոց, եւ յայտ առնեմ, զի գիր ձեր ընդ բաղում դրութեանց քահանայից և ժողովրդոց իչխանաց քաղաքիդ ընկալաք ի ձեռն Մելքոնին և ծանեաք զամենայն։ Այժ հաճոյ եղև մեզ, զի առաջնացի վերանորոգութիւն հրաշալարդ վանացն Հաղբատայ, ուսաի խորհուրդ բարձրացոյն խորհրդարանին լայն եդիա զվճիռ ըստ որում բարեհաճութիւն նղև առաքել առ. ձեզ զօրինակ սի, զոր պարտիս տալ օրինակիլ նոյնութեամբ ձերումդ գրագրի և ապա որպէս և գրնալ եմք սիրելեայն մերոց սբրբազան Գրիգոր արքեպիսկոպոսի նախորդ պատրիարգի Պօլսոյ և արժանապատիւ խաչակիր գործակալ տէր Ղազար աւագ քահանալի և տէր Մելիքսէթ և տէր Մովսէս արժանապատիւ աւագ քահանտիից, այնպէս ի մէջ սուրբ եկեղեցւոյ ի ներկայութեան նոցա համրուրել զսուրբ խաչն և զսուրբ Աւետարանն և երդնուլ նոքօք զդրեալ երդումն և ձեռագրիլ զնոյն ձևռամբ ձերով. զոր և նոքա ձեռագրեալ ըստ օրինի վանն վկալ լինելոյն այնմիկ որպէս ցուցանէ օրինակն, վերադարձուցիք կանխաւ լետս ի սուրբ աթոռս՝ յորժամ առաքեսցուք զկոնդակն առաջնորդութեան Հաղբատալ վիճակին. նոր լինի թուի սոյն առաջնորդութիւն, և իրալի նոր է. քանզի և նորոգութիւն բարձրադոյն խորհրդարանին նոր է. և վանն բարւոք կառավարութեան նորազունից պէտք են, զի հինն օր ըստ օրէ նուազեալ լետին աստիճան խանգարման էած ոչ թէ զսուրբ վանն Հաղբատ, այլ և զսուրբ կաթուղիկէն էջմիածնի լսակ, որ պարծանք և մայր է եկեղեցեաց։

Եւ մի ընդդէմ լինի թուեսցի ձեզ, զի ոչ վանն ձեր է այս, այլ վանն ապազային՝ զի լորորդնացի չաւիղ առաքինեաց և լառաջ եկեսցեն բարիք ի բարեկարգ կառավարութեանց։

Ողջ լեր և զօրութիւն տեառն Աստուծոյ եղիցի ընդ ձեզ միշտ, ամէն։

1808 օգոստ. 23։

ի սուրբ էջմ.

ՄԻԵ. *Դանիէլ կաթուղիկոս առ զրաֆ Դուդովիչ։*

Պաշտառափայլ զրաֆ Իվան Վասիլիչ։

Ողորմած Տէր։

Գիտեմ զի չնորհ ունիք առաւելապէս ի վերալ իմ և ի վերալ գերապատիւ եղբօր

իմով Եփրեմ Արք եպիսկոպոսին Ռուսաստանու հայոց՝ վասնորոյ իսնարհարար լայտնեմ ձերոյ պայծառափայլութեան զի որովհետե ժողով հոգեւորականաց և մարմնաւորականաց Արարատեան Աթոռոյն և զաւառին յամի 1800, ընդ մեզ և զնիփրեմ Արք եպիսկոպոսն ընտրեալ էին արժանաւոր Աթոռոյ կաթուղիկոսութեան աւենալն հայոց, և ստորագրեալ էին ղպիր ընտրութեան այնմիկ աւենալն ազգն Հայոց, այժմ ըստ որում առաւելաւ տկարութիւն ի վերայ իմ, ահա մինոյն օրինակաւ առ Նորին Կայսերական Մեծութիւն ամենախոնարհաբար ղրեալ ղինդիր երեք հատ, մինն ղեցի ի ձեռս սրբազան Եփրեմ Արք եպիսկոպոս եղբօրն իմոյ, մինն առ հարատաստ Վէքիլն սրբոյ Աթոռոյս Մինաս Եղիազարեանն, և զմինն ընդ այժմ մատուցանեմ ձերոյ պայծառափայլութեան և խնդրեմ, զի յատուկ ողորմութեան չնորհ ձեր տարածելով ի վերայ իմ և ի վերայ սրբոյ Աթոռոյն Արարատեան և ամենայն հոգևորականայ, և մարմնաւորականաց հայոց, հաճեսջիք մատուցանել զինդիր իմ առ Նորին Կայսերական Մեծութիւն և մէջնորդութիւն առնել զի վաղվաղակի ճանապարհորդեսցէ առ սուրբ Աթոռն Արարատեան զցանկալի եղբայրն իմ Եփրեմ Արք եպիսկոպոսն արժանաւոր պատուով կաթուղիկոսութեան ամենայն Հայոց։

Եւ ես եթէ մեռանիցիմ և եթէ կենդանի լինիցիմ զիմ ջերմեռանդութեամբ օրհնութիւն հանդերձ խնդրուածովք իմովք առ Աստուած թողում վասն կենաց ձեր և որդոց ձերոց և վասն տան հօր ձերոյ։

Ողորմած Տէր ձերոյ
Պայծառափայլութեան
Խոնարհ ծառայ Դանիէլ կաթուղիկոս ամենայն Հայոց։

1808 օգոստոս ի
ս. Էջմիածնի։

ՄԻՋ. *Առ զրաձի Սիկոլայ Ռումենցովն ի պատասխանի զրեցելոյ իւրոյ յաղագս կաւալերին եւ աստեղն եւ վասն ժամանելոյ առ ինքն զգիր սրբազնակատար տևառն մերում։*

Բարձր խորհրդական գերազօր կայսերութեան ամենայն ռուսաց պայծառափայլ գրաձի։

Ողորմած տէր
Աղօթարար ձեր և
Ցիսուսի Քրիստոսի . . . . . մատուցանեմ զաղջոյն Քրիստոսական Աստուածային բազմապատիկ օրհնութեամբ։

Գիր ձերոյ պայծառափայլութեան զբերեալ յամսեանն ապրիլի 30 երորդ աւուրն յամի 1808 ընդ ամենողորմած պարգեւագրոյ Նորին կայսերականի մեծութեան և Աստուածազգութ մարդասիրութեամբ չնորհեցեալ նըշանի սրբոյն Աննայի առաջներորդ աստիճանի և ճաճանչագեղ աստեղ ի նոյն թիւ, ի ի ձեռն առաջնին կառավարչին Վրացատանու և մեր բարերար ենարալ Ֆէրթմարշալ բազում նշանաց կրող գրաձ Իվան Վասիլիչ Կոտովիչին յարգմամբ ընկալալ ի գլուխ իմ ի 12 երորդ աւուրն յուլիսի սոյնոյ ամի։

Մեծ եղև ի վերայ իմ բարերար ակնարկութիւն և չնորհ ողորմութեան Քրիստոսատուոյ սուրբ կայսերն, և թագաւորի իմում, որով առաւելապէս մեծարեալ զներս նուաստութիւն ամենաողորմածաբար բարեհաճեցաւ առատ ողորմութեամբ իւրով զարդարել ոչ միայն զմեզ այլ և զերկոսին ի հարազատաց մերոց զփոխանորդն իմ գերապատիւ Եփրեմ արքեպիսկոպոսն Ռուսաստանու Հայոց՝ և զհարազատն իմ Ցովհաննէս արքեպիսկոպոսն Վրացատանու հայոց պսակեալ բուլիանթ խաչիւ։

Առ որ տարակուսիմ ըստ մարդարէին, թէ զինչ տայ տրիտուր ամենողորմած տեառըն իմում ըստ ամենայնի զորս արար ինձ, և փորձեմ ի մեզ արժանաւոր Նորին մեծութեան և ոչինչ, բայց եթէ ամենայն միաբանութեամբ հոգևորականաց մերոց և ողջոյն աղդաս միաձայն տացուք հանապազորդ զաղօթս մեր տեառն Աստուծոյ առաջի ամենայն ժողովրդեան Նորա, վասն անդին կենաց

ն. կայսերականի մեծութեան, և վասն բոլոր պալատան նորա ի զաւիթս տան տեառն և ի մէջ Քրիստոսահիմն տաճարի սրբոյ Էջմիածնի։

Ընդրհակալ եմք վասն ամենայնի լատկապէս և զպայծառափայլութենէ ձեր և օրհնեմք զկեանս ձեր և որոց ձեր են զի նոյնպէս մարդասիրութեամբ բարերար եղեալ մեզ սիրէք զայդելութիւն մեր և ուրախ լինիք ի վերայ ողորմութենացդն եղելոց ի վերայ իմ և ի վերայ հոգևորականաց իմոց և համօրէն ազգի հայոց, որք գին են պատուական սուրբ արեանն Քրիստոսի և առ աթոռ ողորմութեան ամենայն առատաց միայն ունին զյոյս այցելութեան իւրեանց։

Վերամատուցանեմք զաղաչանս ի բարձունս զի տէր պահեսցէ զձեզ՝ և ամէր ընկալցի զձեզ աջոյ ձեռամբն իւրով և զինդիրս առ պայծառափայլութիւն ձեր զի աննուազելի ունիցիք զչնորհս ձեր առ մեզ, առ ի չեալ փոխանորդն մեր, առ հոգաբարձուն ամենայն հարկաւոր գործոց սրբոյ աթոռոյս մերում վեհագնեալ Մինաս Եզիազարեան և առ ամենայն հոգևորականս և մարմնաւորականս հայոց ազգի, առ որս յոյն Քրիստոսի որ հաստատեալն եմք, հաստատիմ է առ մեզ թէ մարմնապէս և հոգեպէս կատարել ունիցի առ ձեզ զբան սուրբ աւետարանութեան իւրոյ զոր արարիք վաքրկանց ասացեալ ինձ արարիք, և այլն։

1808. օգոստ. ի ս. Էջմիածին սր յԱրարատ

Ողորմած տէր, Զևրոյ պայծառափայլութեան ամենախոնարհ ծառայ և ջերմեռանդութեամբ հոգւով միշտ աղօթարար Դանիէլ կաթուղիկոս ամենայն Հայոց։

Մի՛. *ԵՒս Գրաճ Գուդովիչին վասն կաւալևրին զորս ինքն էր յղևալ.*

Գայծառափայլ Գրաճ Իվան Վասիլիչ.
Ողորմած Տէր.
Աղօթարար ձեր և Քրիստոսի . . . . . Աստուածալին բազմապատիկ օրհնութեամբ մատուցանեմ. ողջոյն Քրիստոսական։

Նշան առաջներորդ աստիճանի սրբոյն Աննայի և ճանաչողել աստղ հանդերձ ամենողորմած պարգևագրով նորին կայսերականի մեծութեան ի 30 երորդ աւուր ամսեանն ապրիլի տոմոյ ամի ընդ նամակաց արտաքին իրակութեանց նախարար տեառն Գրաֆ Րումեանցովի և ձերոյ պայծառափայլութեան ժամանեցին առ մեզ ի 12 երորդ աւուրն յուլիսի որոց ընդ լառաջ ելեալ եկեղեցական հանդիսի բազմութեամբ հոգևորականաց և մաքնաւորականաց երդօք հոգևորօք և հնչեցուցմամբ զանգակաց մուծաք ի Քրիստոսահիմն տաճար Տեառն ի սուրբ Էջմիածին և առաջի ահեզահրաշ բեմի իջման սուրբ տեղւոյն մատուցեալ զամենաջերմեռանդ երկրպագութիւնս թագաւորին թագաւորաց Աստուծոյ երկնաւորի խնդրեցաք զերկարութիւն անպին կենաց նորին կայսերականի մեծութեան և զհաստատութիւն ամենաողորմած Աթոռոյ բարերար կայսերութեան ամենայն Ռուսաց, և միաձայն ամենեքեան ան. պատումբ զուարճութեամբ և լիաբերան չնորհակալութեամբ օրհնելով զամենարարքերար կայսր ե զԻպատուորն մեր և զբոլոր պալատն հանդերձ զօրօք և զօրապետօք ընկալաք ի գլուխս որպէս զպարդևս երկինաւորս և կլեցաք ըստ օրինի դասուրս երկուս։

Ցերորդումն աւուր առաքեցաք զկաւալերն և զաստղն առ բարեբարոյ իշխօղն երկրիս Հիւսէին խան սպարապետն զօրաց Պարսից, և նա խորհուրդ ետ մեզ ոչ կրել զնոցնս մինչև լայտնեսցէ մեծ իշխօղին կողմանցն խոհական Ապպաս միրզայ Շահզատային և այնպէս գրեաց ինքն և լայտնեաց ե ընկալեալ զհաճութիւն նորա հանդերձ ուրախութեամբ առ նոյնս ծանուց մեզ ե հրամայեաց կրել համարձակապէս ըստ որոյ և մեք կրեմք և կրեսցուք անլռելի ձանիւ սաղմոսելով միշտ առ Աստուած Տէր կեցո զբարերարն մեր զամենողորմած կայսրն ամենայն Ռուսաց և լուր մեզ լաւուր յորում կարդասցուք առ քեզ։

Գիտեմք և հաւաստի եմք զի միջնորդ սոյն մեծի ողորմութեան եղելոյ ի վերայ մեր պայծառափայլութիւն ձեր էք, վասնորոյ առաւելապէս չնորհակալութիւն հանդերձ լիաբերան օրհնութեամբ լատկապէս ձեզ մատուցանեմք։

Շնորհակալ եմք մեծապէս և լաղագս

մեծ մարդասիրութեան ձերոյ որով առաւել ես մեծ արարեալ զարարերարութիւն առ մեզ պահել եւաւք նաև զղուխս հարազատին մերոյ զերապատիւ Յոհաննէս արք եպիսկոպոսի Հայոցն Ռուսաստանու բուլիանք պատուական խաչիւ։

Ոչ մոռանամք զարարերարութիւն ձերոյ պալհառավելութեան և խնդրեմք, զի և զայդ աննուաղելի ունիցիք զնուն մարդասիրութիւն։

Ամենախոնարհաբար մատուցաք առ նորին կայսերական մեծութիւն և առ նախարքան արտաքին իրակութեանց Գլխաւոր Ռուսիանցոյն զգրեանս յազգս չնորհակալութեան մերոյ և խնդրեմք զի պայծառափայլութիւն ձեր չորհ ունիցիք մեզ մատուցանել ի զուռն ողորմութեան։

Ողջ լեր և մեք ամք և միամք ամենայն միաբանութեամբ հոգեորականաց և մարմնաւորականաց հայոցն մշտնջենաւոր գոհարանութեամբ աղօթարար վասն անդին կենաց նորին կայսերականի մեծութեան և վասն պայծառափայլ բարերարիդ մերոյ։

1808. օգոստոսի Ողորմած ջեր ձերոյ պայծա-
ի սուրբ էջ- ռափայլութեան ամենախո-
միածին որ լա- նարհ ծառայ և աղօթարար
րատաւ Դանիէլ կաթուղիկոս ամե-
նայն Հայոց։

ՔԻԸ. *Առ կայսրն ինդիր վասն յղելոյ զնփրեմ արք եպիսկոպոսն յաղագս նստուցանելոյ յաթոռ կաթուղիկոսութեան։*

Ամենալուսափայլ ինքնակալ կայսր ամենայ Ռուսաց Ալէքսանդր Պաւլովիչ.

Ամենաողորմած լ-յո և անկնկալութիւն հոգեորականաց և մարմնաւորականաց Հայոց։

Մեծ են ողորմութիւնք ձերոյ Կայսերական Մեծութեան ի վերայ իմ և ի վերայ սրբոյ Աթոռոյս Արարատեան, վասն որոյ քանղի օրըստօրէ ծանրանայ հիւանդութիւն ի վերայ իմ ամենախոնարհաբար խնդրեմ ի սուրբ կայսերութենէ ձեր, զի որովհետև ժողով հոգեորականաց և մարմնաւորականաց սրբոյ էջմիածնի և Արարատեան գաւառին ընդ իս և զղերապատիւ եղբայրն իմ Լփրեմ արք եպիսկոպոսն ընտրեալ էին արժանաւոր Աթոռոյ կաթողիկոսութեան ամենայն հայոց յամի 1800, և ամենայն ազգն Հայոց ստորագրեալ են զնոյն որպէս յայտնի եղեալ ի սահմանաքննին սուրբ կայսերութեան ձերոյ ի վաղուց ամէնողորմած մարդասիրութեամբ բարեհաճեալք առաքել զնա կանխաւ յԱթոռն Արարատեան առ մեզ։

Եւ եթէ լինիցի, զի արժանի եղեալ ես նանել զնա, բախտաւոր համարիմ զիս նստուցանել զնա ի տեղի իմ յաթոռ կաթուղիկոսութեան սրբոյ էջմիածնի մինչդեռ իցեմ կենդանի, իսկ եթէ օրհաս մահուն կանխաւ ժամանեսցէ ի վերայ իմ, խնդիր է իմ յամէնողորմած սուրբ կայսերութենէ ձերոյ արժանացուցանել զնա Աթոռոյ կաթուղիկոսութեան Արարատեան ի տեղի իմ։

Ամէնողորմած սուրբ թագաւոր, ձերոյ կայսերական
1808 օգոստ. մեծութեան. խոնարհ ծառայ և աղօթարար Դանիէլ կաթուղիկոս ամենայն հայոց։

ՔԻԹ. *Թուղթ օրհնութեան եւ շնորհակալութեան. Ջուղայու հայսարակութեան վասն շնորհաւորութեան նոցին. եւ միամտութիւն, թէ ոչ ոք կարէ առնել զմեզ տէրունի։*

Յորմէ ժամանակաւ հասցէ թուղթ հայրական սիրոյ, կոնդակ անդրանիկ օրհնութեան, և նամակ երկնաւոր միաբար քրիստոսական սուրբ ողջունի, հանդերձ շնորհօք սուրբ հոգւոյն Աստուծոյ և սուրբ էջման տեղւոյս Քրիստոսի և ամենայն սքանչելարար զօրութեամբք և օժանդակութեամբք սրբութեանց և սուրբ վասանց և հրաշագործ նշխարաց սրբոց, որք աստ կան զետեղեալք նախ ի վերայ սիրելի և հոգևոր ոդւոյդ մեր Ս. և չնորհածին զաւակիդ սուրբ գահիս մեծի, և հրաշալի Ամենաւիրակիչ վանիցդ Ջուղայու արժանաւոր Առաջնորդ Եարութիւն

ճգնաղղեաց վարդապետիդ և չնորհափալ եպիսկոպոսիդ. և բոլոր ուխտի մանկանց սուրբ վանիցդ իմաստնառատ վարդապետաց և ամենայն հոգևորականաց, ընդ որս և սրբանուէր քահանայիդ և եկեղեցական դասուդ և ապա բարձրապատիւ իշխանաց, քաջատոհմիկ աղնուս կանաց, բարեպաշտ մնծատանց, հարազատ երէցփոխաց և դանձապետաց, Աստուածասէր վաճառականաց, մեծահաւատ արհեստաւորաց, և այլ առ. հասարակ ժողովրդականացդ խմբից արանց և կանանց, ծերոց և աղաւոց, երիտասարդաց և կուսից և ամենայն չափու և հասակի ի Քրիստոս Ցիսուս հաւատացելոցդ եղիցի ի տէր խնդալ յարաղուարճ բերկրանօք. Ամէն։

(Շնորհք)։

Եւ ընդ սիրոյ և քրիստոսապարգև ողջունիս ծանուցումն եղիցի սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց և լուսաւորչածին զաւակացդ սրբոյ մեծի Աթոռոյս Էջմիածնի. Զի Թուղթ ձեր բազմակնիք և աղղի աղղի բարեպաշտական ջերմեռանդութեամբ լցեալ հանդերձ շնորհաւորութեամբ ժամանեալ առ. մեզ, մխիթարեաց զտրտմաթախիծ սիրտ մեր, և գիտացեալ զմեծագոյն հաւատ ձեր, որ առ Աստուած, և զգերազանց բարեպաշտական բարեմասնութիւնք, և ամենահպատակ ջերմեռանդութիւն առ սուրբ Աթոռս քրիստոսակիր և առ մեր հոգևոր հայրութիւն, զոհացաք զԱստուծոյ որ սքանչելեօք իմն զամենազօր բազուկ իւր կարօղ և բարձր տարածեաց ի վերայ իւրակերտ սուրբ տաճարի և ի վերայ զահակալիս սորին և ի վերայ խըղճալի աղղիս մերոյ՝ պարգևեաց սմա զվերանորոգութիւն, և մեզ ազատութիւն անակնկնելի, և ձեզ վշտակից մեզ հաւատարիմ զաւակացդ ուրախութիւն սրտի. ուստի աղօթիւք բոլոր միաբանութեամբ աւաջի սուրբ և Աստուածակիր տեղւոյս առ. տէր կանխեցաք և կանխեմք հանապազ վրկել զսուրբ Աթոռս և զլուսածին զորդիս սորին յապազալից դիպուածոց տալով նորանոր պէսպէս բարիս և վերանորոգութիւնս սուրբ Աթոռոյս և ամենայն խախտեալ վանորէից և եկեղեցեաց մերոց աղօթիւք ամենայն սրբոց. լորմէ և հալեցեալ և հայեմք մինչ. զի պահեսցէ զմեծահաւատ որդիսդ սուրբ զահիս բարերջանիկ յաջողութեամբք հանդերձ ամենայն ձերայնովք զաւակօք և ընտանեօք փրկելով յամենայն վտանգաց. և զհոգիս ձեր ևս զարդարեսցէ հաւատով լուսով և սիրով լցեալ աւետեաց բարեպաշտութեամբ. լուսաւորելով և զհոգիս ամենայն ննջեցելոց ձերոց տալով նոցա գհանգիստ յաւիտենական. Պատուիրեմք սիրելեացդ մերոց կալ մնալ ձեզ յալմահետ ի զոյն սէր, ի զոյն հարազատ որդիութիւն և ի զոյն բարեպաշտական գործս, և առաւելուլ օր քան զօր ի պայծառութիւն սուրբ Աթոռոյս, և մխիթարութիւն վշտակիր սրտի մերում. Գիտացաք և զմահ Գէորգ վարդապետին, տէր ընդ հաճոյացեալոն իւր պսակատրեսցէ՝ տալով զբարի կենդանութիւն մնացեալոցն ի չինութեան պահել զսուրբ տաճարն Աստուծոյ. Եւ վասն փիլիպպոս վարդապետ որդւոյն մերոյ զայս զբեմք ձեզ. զի որովհետև ճանապարհն երկար է, և բազում ժամանակք են, լորմէհետէ ողորմելի ժողովուրդքն Գաղատիոյ կան անմխիթար զրկեալ լամենայն հոգևորական կարդաց և պաշտամանց. և դա ևս միանգամ յանձն է առեալ կամաւ զայգ ճանապարհորդութիւն ի փառս Աստուծոյ. վասնորոյ պարտ և արժան է ամենայն իրօք թարց այլ և այլս խորհելոյ դիմել առ նոսա, և մխիթար լինիլ նոցա ընդ ցաւութիւն վարդապետին. և ուսուցանել զմանկունս նոցա, և յետ ժամանակաց՝ մինն ի նոցունց բերցէ զուսանել մանկունսն ի սուրբ Աթոռս կամ ի վանս ձեր, զի ձեռնադրեալ քահանայացեն. և ժողովուրդսն կառավարեսցեն ոչ կարօտեալով միւսանգամ կարգաւորի. Իսկ ձեռագիրն զոր ցուցանէք ի թղթի ձերում, և զորմէ գրէքն առեալ ի վարդապետաց ձերոց, մեք ոչինչ դիտեմք զայնմանէ, զի մեք եկեալ ի սուրբ Աթոռս գտաք ամենայն ինչ սորին ցրուեալ։ Եւ բազում հարցմամբ ի խնդիր եղեալ նոյն ձեռագրին ոչ կարացաք գտանել, վասնորոյ զայս գրեմք ձեզ որպէս և Հնդկաստանի օրհնեալ ժողովրդոցն գրեցաք երկար՝ զի տուօղն և առօղն այնպիսի թղթով և թուղթք նոցին ևս երթ լայտնեսցին յետ ժամանակաց խոտանք են և անընդունելիք։ Եւ որպէս տնօրինեալ են նախնիք և հաստատեալ, մեք ևս դնոյն նղովիւք հաստատեալ ամրափակեմք մնալ յալմահետ և յաւիտեանս յաւիտենից ձեզ և ամենայն ժողովրդոց Հնդկաստանի թեմ և վիճակ սուրբ Ամենափրկիչ վանից ձերոց,

մեք հետևող եմք նախնեացն կանոնաց և ոչ խանդարիչ նոցին. առ այդ ամենայն կերպիւ յերուք ղուք ամենեքին միամիտս, ոչ ոք կարէ հանել զձեզ ի վանից ձերոց. Բայց ընդ այս յոյժ ղարմանամք. Թէ ղիարդ իշխեցին Ցարութիւն և Գէորգ վարդապետքն ձեր արտաքոյ օրինաց և նախնեացն բարի աւանդութեանց և սահմանադրութեանց վասն փառաց և պատուոյ իւրեանց տալ ս ռանց ձեր գիտութեան, ինքնագլուխ և ինքնակամ զայնպիսի ձեռագիր. և եթէ տուեալ են, վասն էր յայտնապէս ոչ խոստովանին, զի հետևեսցուք և դաւցուք. եթէ կամաւ զայն դործեցին պարտաւորք են ամենայն կերպիւ և եթէ ակամայ՝ կրկին և կրկին վատ են արարեալ, որք վասն եպիսկոպոսութեան իւրեանց վաճառեալ են զսուրբ վանքն և զվիճակ նորին, և եթէ բռնի առին ի դոցունց, զայն յայտնապէս ասասցեն, զի դիտասցուք. Զսոյնս դրեցաք և առ Ցարութիւն վարդապետ առաջնորդն ձեր զայս այսպէս դիտացեալ՝ յանձնմամբ զձեզ տեառն Աստուծոյ. և չնորհք սուրբ հոգւոյն Աստուծոյ և սուրբ իջման տեղւոյս Քրիստոսի եղիցի ընդ ձեզ, Ամէն. Գրեցաւ յամի տեառն 1808. յօգոստոսի

ի մայր Աթոռս ամենայն հայոց ի սուրբ Էջմիածին։

ՄԼ. Առ Սամուրդուզ Ոսկանն ի նոր Ջուղայ ընտրեալ սրբազանին։

Ցորմէ սիրով սուրբ հոգւոյն Աստուծոյ քրիստոսաձիր ողջունիւ և Աստուածալին օրհնութեամբ հանդերձ ղերաղօր չնորհօք սուրբ իջման տեղւոյս նորին ծանիր սիրելի և հոգեւոր որդի մեր և ճշմարիտ բարեկամ, և հարազատ զաւակ սրբոյ և մեծի Աթոռոյս միածնակիցի բարեպաշտ և մեծահաւատ օրհնեալ Աղայ Ոսկան, զի թուղթ քոյ գրեալ յապրիլի 20. ընկալաք թղթով ծերունի Ցարութիւն ճգնազգեաց եպիսկոպոսին. որով դիտացեալ առաւել ևս զհաստատ սէր քոյ և զճշմարիտ որդիութիւն առ մեզ և առ սուրբ գահս Աստուածածէջ որպէս և յառաջ քան զայս ի Թաւրէզ, լցաք լիրաւի ուրախութեամբ և մխիթարեցաք ևս ի վերայ ջերմեռանդ ըրուածոց քոց. Ցիրաւի՝ ըստ խոստման մերում և առաքելութեան հայրական մեր սիրոյ արժան էր թէև կանխել առ քեզ օրհնութեամբ և սիրոյ և օրհնութեան նամակաւ, այլ սակայն բաղում հոգք և զբաղմունք ի ներքուստ և յարտաքուստ ոչ թէ մոռացուցին դանմոռանալիդ, այլ ոչ ետուն ժամանակ անդորր մատչել առ սիրելիդ իմ արժանաւոր չնորհակալութեամբ։ Եւ զի՝ ղու իբրև ճշմարիտ բարեկամ, և սիրելի, և ամենահաւատարիմ զաւակ ընտիր, ըստ որում յառաջեցեր քան զմեզ ի գրութիւն և ի սէր։ Վասնորոյ՝ օրհնեմք զկեանս քոյ. և հալեցեմք ևս յԱստուծոյ, զի պահեսցէ զքեզ առողջութեամբ, յաջողութեամբք, և լցեալ և զարդացեալ հոգևոր և մարմնաւոր բարութեամբք և բերկրութեամբք փրկելով յամենայն չարէ ի գուարթութիւն սրտի մերում։ Արդ՝ պատուիրեմք սիրելդդ մերում կալ և մնալ ի գոյն ճշմարիտ որդիութեան և ի կատարեալ սէր մխչտ՝ գրելով երբեմն երբեմն զառողջութենէդ և ղկողմանցդ որպիսութենէ, և մխիթար առնել զմեզ ուրախարար թղթովդ, որոյ աղագաւ ունիս ընդունել ի մէնջ զօրհնութիւն դովութեամբ։ Ահա թուղթ սիրոյ և խաղաղութեան և թողութեան գրեցի առ Ցարութիւն վարդապետ սիրելին մեր և հաւատարիմ զաւակն սրբոյ Աթոռոյս՝ հաստատելով ի նմին դառաջնորդութիւնն միանգամայն և զեպիսկոպոսութիւնն, պատուիրելով մնալ ի հաւատարմութեան և ի չատաղովութեան. և ևս գրեցաւ և կոնդակ մի օրհնութեան առ օրհնեալ ժողովուրդն Ջուղայու առ սիրելի և մտերիմ որդին սբրոյ Աթոռոյս և մեր. և զինդիրս նոցին ամենայօժար սրտիւ կատարեցաք, որպէս ունիք դիտել ի Ցարութիւն վարդապետ սիրելւոյն մերմէ, զայսքանս դիտացեալ, և ի սէրդ հաստատուն մնացեալ ողջ լեր Քրիստոսիւ և ղօրացեալ և լաջողեցեալ նովաւ և չնորհօք սուրբ հոգւոյն Աստուծոյ և Քրիստոսակերտ սուրբ գահիս եղիցի ընդ ձեզ և ընդ քոյդ ամենայն Ամէն. Գրեցաւ 1808, յօգոստոսի

Ի մայր Աթոռս ամենայն հայոց ի սուրբ Էջմիածին։

ՄԼՔ. Առ Ղարաղաշ Դանիէլին։

Ցորմէ սիրով սուրբ հոգւոյն Աստուծոյ, կենարար չնորհօք և օրհնութեամբ Աստուածային, և սուրբ ողջունիւ Քիստոսի ժամանեսցի նամակ սիրոյ, օրհնութեան և չնորհակալութեան ի վերայ բարեպաշտ և Աստուածասէր աղնիւ օրհնեալ Ղարաղաշ աղայ Դանիէլից, և Աստուածահաստատ տան քում և ամենայն Քրիստոսիւ զօրացեալ ընտանեաց քոց որոց ամենից եղիցի ի տէր խնդալ բերկրանօք։ (Ընսրկ)։

Որում և գիտութիւն լիցի, ի զրութեանց փոխանորդին մերոյ Սիրեմայ սրբազան աղք եպիսկոպոսին գերապատիւ եղբօր մերոյ միշտ գիտացեալ եմ զմեծահաւատ ջերմեռանդութիւնդ առ Աստուած և առ սուրբ աթոռս բարձրագահ և զպաշտպանութիւնս օրինացն Աստուծոյ, և օրհնեալ զքեզ, այժմ ես լիալիր իմացաք գալստեամբ սիրելի որդւոյն մերոյ Ներսէս նորապսակ եպիսկոպոսին զանազան չնորհակալութեամբ. տէր օրհնեսցէ զքեզ և զտուն քոյ զհաւատ և զբարեպաշտութիւն քոյ, և հատուսցէ քեզ զբարիս խաղաղ կենդանութեամբ և բարեյաջողութեամբ փրկելով յամենայն փորձանաց. Այլ և պատմեաց մեզ նոյն Ներսէս վարդապետն զհաստատութիւն խորհրդեան վասն վարժարանին և վարժապետին լաղագս լուսաւորութեան աղգիս և որդւոց նորին. լիրաւի քան զամենայն ինչ զայգ մեծ բարի և պարգև վարկուցեալ և փառք և պարծանք անուան քոյ և նախնեաց քոց. Եւ բախտաւորութիւն մեծ Քրիստոսահաստատ տան քոյ լորում եղեալ է հիմնադրութիւնն բարերջանկութեան աղգիս մերոյ, և այլն, ուրախացաք լոյժ և լոյժ. և օրհնեցաք, և օրհնեմք իսկ զքերմեռանդ զաւակդ սրբոյ գահիս. ըստ որում ցանկացօղ ես իմաստութեան. և պարծառութեան աղգիս, և սիրօղ ուսմանց և իմաստնոց։ Արդ՝ սկիզբն ոչ պակէ զմարդ, այլ վախճանն է, որ երանելի առնէ. Փութամ ուստի՝ առ վախճանն, և ուշ դիր կատարածին, որով ոչ միայն ի մարդկանէ գովիս, և ղչնորհ սուրբ գահիս և զօրհնութիւն մեր վաստկես, այլ և՝ Աստուծոյ՝ որ տէրն է գիտութեանց, ունիս վարձատրիլ արժանապէս և ասա և ի հանդերձելումն։ Լուաք և ղգովեալի իմաստասիրութենէդ որով և զերկուս բարեմասնդ զաւակունս ձեր և զսիրական հոգևոր որդեկան մեր զկարապետ Զէլէպին և զԹէոդորոս Զէլէպին ոչ խնայելով ի մեծագոյն ծախսն տարեալ էք լուսաւորեալքան լայնքան հեռաւոր վայրն։ Առաւելապէս ուրախ եմք առ այն մանաւանդ և օրհնեմք զձեզ և ղչնորհատենչ Զէլէպիսն զանազան օրհնութեամբ զօրս և ինքն ՏԷր օրհնեսցէ. Ամէն։ Նաև՝ զմի զլուխ չաքարն զընծայեզ մեր որդի Ներսէս վարդապետին, նա առ մեզ երեր, և մեղ մատոյց, և մեք օրհնելով և գովութեամբ ընդ զգալի քաղցրութեան, և զհոգւոյ և զսրտի քոյ քաղցրութիւն ւյուզելով, չնորհակալ եմք, և պատուիրեմք խնդ՝ մնալ այժմ և առ յապալ դովին քաղցրութեամբ առ եկեղեցի Հայաստանեայց առ սուրբ աթոռ լուսածին ծնօղս ձեր առ մեղ և առ փոխանորդն մեր զերապատիւ Սիրեմ արքեպիսկոպոսն պատկանեալ հարազատութեամբ. որովք միշտ արժանաւոր որդի գտանիցիս չնորհացն Աստուծոյ և սրբոյ գահիս նորին և մեր և մարդասիրութիւն տեառն Աստուծոյ հանդերձ զօրութեամբ սրբոյ Իլմանն տեղւոյս Քրիստոսի եղիցի ընդ քեզ և ընդ քոյսն ամենայն, Ամէն։

1809. յօգոստոսի
ի սուրբ Էջմիածին։

ՄԼՔ. Առ աղայ Ղարաղաշն ի Ղրիմ։

Ցորմէ ժամանեսցի թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան և Աստուածային պահպանութեան, հանդերձ գերազօր չնորհօք սրբոյ Իլման տեղւոյս Քրիստոսի ի վերայ սիրելի և հոգևոր որդւոցդ մերում և հարազատ և հաւատարիմ զաւակիդ սրբոյ գահիս Քրիստոսիւ տերամբ զօրացեալ Աստուածասէր և բարեպաշտօն աղայ Ղարաղաշ Յօհաննէսիդ, և Քրիստոսահաստատ բարելից տան քոյ, և աղնուազնի իշխանուհի մեծահաւատ կենակցին քոյ Գալիանէ տիկնոջն և ծաղկեալ և փթթեալ բարեբողբոջ որդւոց քոց Յակորեան Միքայէլ և Սահակ Զէլէպեացն և սիրատուն դստերդ Հռիփսիմէ, Մարիամ, Մամաճան, Նարին և Կատարինէ պարկեշ-

տուհատց և որոց ձեր են խնդալ ի տէր։

(Շնորհք)։

Ամենայն բարեպաշտութիւնք քոյ, բարեգործութիւնք, հիւրասիրութիւն, ողորմութիւն, առատաձեռնութիւն, պատուաղրութիւն հոգևորականաց, ել կիւզ առ Աստուած, և սէր առ մարդիկ հանդերձ խոնարհ մարդավարութեամբ լայնլի լինելով մեզ յոժ առաքելութեամբ ի կրկին և կրկին դրութեանց մեծարգի եղբօր մերոյ տեառն Սիրեմաւ սըրբազան արքեպիսկոպոսին և մեր փոխանորդին, ամենայն բաւականութեամբ սրտի օրհնեալ ևմք ղբարեսիրտ որդիդ մեր և զբարի գաւակդ արժանաւոր օրհնութեամբ, և օրհնեմք իսկ։ Այլ ե՝ դիտացեալ եմք զմնծադոյն հաւատարմութիւնդ, սէրդ, որդիական ջերմեռանդութիւնդ առ հաւատով մաքուր քոյ սուրբ աթոռս բարձրադահ և առ մերս հոգևոր հայրութիւն թէ ի կապանս և թէ յաղատութիւնըս. որոյ վասն ամենից ե չնորհակալ եմք ահա մեծապէս ղոհութեամբ և գովութեամբ զքէն և զամենայն հոգևոր աշխատութեանց քոց, պատուիրելով միայ յամենայն ժամ ի դոյն սէր, հաւատարմութիւն և ի կատարեալ հարազատութիւն որպէս կապ և ես, ոչ թողում առանց լիշատակութեան և զմեծ խորհուրդն այն, որ հանդիպական է ի տան բարեհամարաւ իշխանիդ յաւուր պսակաւորութեան սիրելի եղբօրն մերոյ պարոն Սիրեմալ. ի պատիւ որոյ զմեծ խնջոյս մեծանալ էիր խրախճանութեան կազմեալ իբր առ հաւատչեալ երկնաւոր և ամենազաւրճ ուրախութեան և մեծավայելչութեան չնորհիւ փրկագործ սուրբ խաչի նորին, մեծացուցեալ էիր օրն այն պսակաւոր։ Ուրեմն՝ և ղքեզ չնորհք սուրբ խաչին Քրիստոսի մեծացուցեալ պսակաղարդեսցէ և աստ և ի հանդերձելումն ամենայն Քրիստոսասաստարդն զաւակօքդ, և զօրութիւն սուրբ խաչին պաշտպան և պահապան եղիցի Քրիստոսահաստատ բարելից տան քումդ և բնակութեան՝ օրհնելով և առատացուցանելով ամենայն բարութեամբ և լիութեամբ. յորդորեմք հայրաբար ղի զսէրդ և զորդիութիւնդ և զմեծագոյն հաւատարմութիւնդ ի մէնջ և ի սրբոյ աթոռոյս աննուազ և անպակաս, արարեալ, ջանասջիք միշտ գործովք բարութեան զանուն հօր մերոյ, ողջ լեր Քրիստոսիւ և զօրացեալ բարեբար բազկաւ նորին, և չնորհք սուրբ հոգւոյն Աստուծոյ և սուրբ իջման տնդուոյս Քրիստոսի եղիցի ընդ քեզ և ընդ քոյդ ամենայն, Ամէն։

1808. յօգոստոսի՝

ի սուրբ Էջ՚։

ՄԼԳ. *Առ Ղարսղաշի փեսայ Սարգիս աղայն եւ իւր կողակից Հռիփսիմէն։*

Ցորմէ ժամանեացի թուղթ սիրոյ, Քրիստոսական ողջունի և երկնաւոր օրհնութեան հանդերձ գերազօր չնորհօք սուրբ իջման տեղւոյս Քրիստոսի և ղրութեամբք ըստքանչելարար սրբութեանցն, որք աստէն, բարեպաշտ և աղնուական սիրելւոդ մերում և ճշմարտութեան սիրօղ և ջատադով օգտակար զաւակիդ սրբոյ և մեծի աթոռոյս Էջմիածնի մեծարգի աղաւ Սարդսիդ և իշխանուհի զուգակցին քոյ երկիւղազարդ Հռիփսիմէին և վարդաբողբոջ Աստուածապարդև զաւակաց քոց և ամենայն ձերայնոց. որոց ամենից եղիցի ի Քրիստոս խնդալ ողեզուարճ բերկրանօք։

(Շնորհք)։

Ուրախ եմք դի դու բարեբէր որդիդ փաւլիս բարի անուամբ առաքինական բարեմասնութեամբ հաստատուն և երկիւղիւ տեառնէն, և խոհեմութեամբ և համեստութեամբ և զգօն կենցաղավարութեամբ առ Աստուած և առ ընկերդ. որով լիրաւի ունիս վայելչանալ և բարձրանալ ոչ միայն ի յերկրի, այլ և ի յերկինս, և ոչ կորնչին վարձն վաստակաւորաց բարեաց առաջի այնմ, որ պսակադիրն է ամենեցուն։ Այլ և՝ չէ անլալտ ի մէնջ քոյդ ամենայն ջերմեռանդութիւն, որդիական հաւատարմութիւն և մեծագոյն սէր զորս ունիս առ բարձրադահ սուրբ աթոռ մայրս քոյ Աստուածակիր և առ մերս հոգևոր հայրութիւն որպէս դրեալ լիապէս ծանուցեալ էր մեզ մեծալարդ եղբայրն մեր Սիրեմ սրբազան արքեպիսկոպոսն։ Արդարև՝ գոհ եմք, և բաւականութեամբ և դիւրութեամբ սրտի օրհնեմք զպատուական զաւակդ օրհնութեան. զոր և տէր ամենազօր բազկաւ իւրով զօրացուցեալ օրհնեսցէ և պահպանեսցէ։ Եւ հոգեւոր և մարմնաւոր բարութեամբ լցուցեալ

ճոխացուսցէ տալով խաղաղ և բարիրջանիկ բարեկենդանութիւն ձեզ աղնիւ սիրելւոյդ մերում և Քրիստոսահաստատ բարելից տան քով և լոլոր ընտանեաց քոց. և փրկեսցէ նոյն տէր բարեխնամ բարեպաշտութեամբ զարզարեալ որդիդ իմ հանդերձ քոյնովքն ամենիքումբ լամենայն պատահարաց հոգւով և մարմնով։ Արժան էր քեզապիսի քաղցր և սիրական որդ ոլ լաւաջ քան զամենայն օրհնութեան կոնդակաւ ուրախ առնել, և դշնորհակալութիւն մեր լայանել թէև այլ ոչ լինելով ձեռնհաս՝ վասն բազմադիմի ձախող դիպուածոց վերահասելոց մեզ և Քրիստոսահիմն տուր տաճարիս փառազարդի, որով վասն և կալաք ի սուդ և լարաստաս, և այլն. չեզև մեզ զայն ի գործ դնել. ալժմ մինչ խաղաղացաք ողորմութեամբն Քրիստոսի, և ժամանեաց ևս մեզ սիրեցեալ որդին մեր Ներսէս նորապսակ եպիսկոպոսն և բաղում դովութեամբ և գոհութեամբ պատմեաց զամենայն մարդասիրութեանց ձերոց. մանաւանդ՝ զմեծ հաւատ և զսէր իշխանութի հոգևոր դասերն մերով Հռիփսիմէի, վասնորոյ հալիկ համարեցաք մեզ ալսու օրհնալիր և սիրալատ նամակաւ մատչիլ առ ջերմեռանդ որդիդ իմ, և շնորհաց սրբոյ իմման տեղւոյս Քրիստոսի արժանի առնել, որով և պատուիրեմ սիրելեցող իմոց մնալ ի գոն, և ամենայն հարկաւորեալ ժամու իրրև զարեզակն փազփազել ի պարծանս անուան ձերոյ, և իւրախութիւն սրբոյ մերում, որով և լամենայն ժամ ունիք վայելել զօրհնութիւն սուրբ գահիս մեծի և հալրական սէր մեր։ Ողջ լեր Քրիստոսիւ քոլայնովք. և շնորհք սուրբ հոգւոյն Աստուծոյ և օրհնութիւն ամենայն սրբոց նորին եկեսցէ առ ձեզ. Ամէն։

Գրեցաւ լամի տեառն
1808. յոգոստոսի
ի սուրբ էջ՛։

ՄԼՊ. *Առ հասարակութիւն Շօրակալայ վասն տէր Սարգիս քահանային. զոր կամէին ինքեանց եւ Ղալչախու Վանիցն Առաջնորդ կարգել, քայց քացասացաք։*

Ցորմէ ժամանեսցի թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան հանդերձ Շնորհօք Աստուածաէջ սուրբ տեղւոյս Քրիստոսի ի վերայ սիրելի և հոգևոր որդւոյդ մերոց, և հարազատ ղաւակդ սրբոյ Աթոռոյս էջմիածնի որք կալք քնակեալք ի Շիրակաւան, որ և Շօրակալ, և ի Ղալաղ. խոհեմափայլ քահանալիցդ բարեպաշտ իշխանացդ, հաւատարիմ աւրիցփոխացդ և տանուտերանց. մեծահռչակ ժողովրդոցդ մերոց, և այլ առ հասարակ մեծացդ և փոքուն, որոց ամենից եղիցի ի տէր խրատ ողևզուարճ բերկրանօք։

(Շնորհք)։

Որոց ե դիտութիւն լիցի. զի թուղթ որ վասն տէր Սարգիս քահանալին և վասն Առաջնորդութեան նորին Ղալչախու անապատին ընկալաք, որով և դիտացեալ զխընդիր հասարակութեան ձերոյ՝ զալս գրեմք ձեզ սիրելեացդ հալրաբար իբր խրատ և պատուէր, զի լիրաւի որպէս դուք, նոյնպէս և մեք վստահութիւնք ոչ միայն վերանորոգութեան գոն հրաշալի անապատիդ և փառաւոր վանիցդ, այլ և՝ ամենայն վանօրէից և եկեղեցեացն Քրիստոսի որք ամալացեալ՝ վերին ալցելութեան կարօտին, որոց և տէր ինքն որ կարող է լամենայնի, պալծառութիւն և չինութիւն տացէ խնդրուածովք բազմութեան սրբոց։ Բայց որովհետև՝ ըստ իմաստնոյն բանի ամենայնի ժամ է և ժամանակ. վասն որոյ և դուք պարտք էիք զժամանակն և զպատշաճաւոր միջոցն ընտրել։ Եւ ապա մեզ զալդպիսիս առաջադրել. զի լաւ է ցանկալ չինութեան զորին, և օրինաւոր է խնդիր ձեր. զտէր Սարդիս խոհեմամիտ քահանալ սիրելի որդին մեր ևս ըստ վկալութեան բազմացդ ընկալաք հալրական սիրով իբրև զմի ի միաբանից մերոց հարազատ որդի սուրբ գահիս. և այնպէս ծանեաք, բայց զինչ օգուտ, որ երկրի խռովութիւն և պատերազմաց ձայնքըն, և ընակչաց նեղութիւն և աղքատութիւն, և աշխարհի մերոյ անհաստատութիւն և գառնութիւն ժամանակիս ամենայն կերպիւ

արգելուն զմեզ ի բարի խորհրդոց մերոց և առաջադրութեանց և չուարեցուցանեն իսկ՝ աչխարհ մեր վրդովեալ, ժողովուրդք մերցան և ցիր եղեալ յամենայն ծագս աչխարհի. մնացեալքն ևս աղքատ և հացի կարօտ, ոչ միայն զքակեալն զեկեղեցիսն ոչ կարեմք չինել, այլ և չէն մնացեալն ևս օրըստօրէ քակտի և աւերի յաղագս անմարդաբնակ լինելոյն աչխարհիս մերոյ։ Ցակաւին և մեք ոչ դիտեմք թէ զինչ պարտիմք կրել. և ղրքան ցաւս լապաղայն, և զինչ է պատահելոց մեզ. և որպիսի թշուառութիւնք գալոց են ի վերալ մեր և երկրի մերոյ, և որքան մեծաց տառապանաց ենթարկելոց եմք մեք և աչխարհ մեր. յորժամ Աստուած քաղցրասցի ի վերալ խըղճալի երկրի մերում, և լայց ելցէ տառապեալ ժողովրդոց մերոց, և քաղցրացուցեալ զսիրտ թաղաւորաց հաստատեսցէ ի մէջ նոցա զղճալի խաղաղութիւն և զհաչտութիւն, և երկիր մեր զերծ լինիցի յարշաւանաց և յաւերութեանց ասպատակող զօրաց թշնամեաց, յայնժամ զբարի խնդրուածս ձեր, և զգովելի խորհուրդս ձեր ամենայնժամ սրտիւ կատարեսցուք, և չինութեան և պայծառութեան սուրբ վանիցդ ձեռն ի գործ արկցուք Շնորհօքն Քրիստոսի և ողորմութեամբ Նորին։ Ուստի՝ գրեմ սիրելի որդւոցդ իմոց սպասել առ ժամանակ մի երկայնամտութեամբ, և ակնարկել վերին այցելութեան բարձրելոյն և աղօթել վասն չինութեան երկրիս. ահա այս է բարին և օգուտն ձեր և մեր, և պատչաճն ժամանակիս, զորս զրեցի ճչմարտութեամբ և պարտիք անվրդով սրտիւ և որդիական հպատակութեամբ ընկալնուլ։ Որ և՝ չնորհք սուրբ հոգւոյն Աստուծոյ, և սուրբ իջմանն տեղւոյս Քրիստոսի եղիցի ձեզ և որդւոց ձերոց, տանց և բնակութեանց ձերոց հովանի և պահապան յամենայն ժամ, Ամէն։

Գրեցաւ յամի տեառն 1808, Օգոստոսի

Ի մայր Աթոռս ամենայն հայոց ի սուրբ էջմիածին։

ՄԼԵ. Ս. ժողովն Արարատեան առ կուտուվիչն վասն Սիրեմ սրբազանին։

Պայծառափայլ գրաճ Իվան Վասիլիչ։

Ողորմած տէր.

Խոնարհաբար յայտնեմք ձերում պայծառափայլութեան, զի յամի 1800 յետ առ Քրիստոս հանգստեանն սրբազան կաթուղիկոսին ամենայն հայոց տևառն Ղուկասու, ժողով հոգևորականաց և մարմնաւորականաց Արարատեան աթոռոյն և գաւառին ընտրեցաք վասն կաթուղիկոսութեան ամենայն հայոց նախ՝ զգերապատիւ Դանիէլ կաթուղիկոսն սպա զառաջնորդն Ռուսաստանու հայոց սբր. բաղան Եփրեմ արքեպ. սկոպոսն, բայց զի անձնասէր և փառամոլ անձինք ի մէջ մտին, յայտնի է ձերում պայծառափայլութեան, զի սուրբ աթոռն Էջմիածնի սաստկապէս աւերեցաւ, և բոլոր միաբանք նորա ցիր և ցան եղեն՝ և ամենայն հայոց ազգն կրեաց զմեծ նեղութիւն։

Շնորհակալ եմք զմեծ ողորմութենէ Նորին կայսերական մեծութեան, զի այս տարի մի աւելի աղատեցաւ Դանիէլ սրբազնակատար կաթուղիկոսն և ժողովեցան բազմութիւնք ցրուեալ հոգևորականաց և եղև ընկիզբն չինութեան սրրոյ աթոռոյ մերում։

Իսկ զի կեանք լիչեալ սրբազնակատար պատրիարգին մերում մաչեցան ի մէջ բանտից և զանազան նեղութեանց մինչեւ ցայսօր ժամանակի՝ ոչ գասանէ զկատարեալ առողջութիւն, մանաւանդ թէ օր քան զօր առաւելու տկարութիւն։ Վասնորոյ բարեհաճութեամբ Նորին սրբազնակատար քահանայապետութեան սուրբ ժողովն Արարատեան հանդերձ բոլոր միաբանութեամբ արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, վարդապետաց, և այլոց աստիճանաւորաց յայտնեաց բարեբարոյ Հիւսէին խան Սարդարին վասն յառաջագոյն ընտրեալ լինելոյ սրբազան Եփրեմ արքեպիսկոպոսին յաղագս կաթուղիկոսութեան, ուստի և նա ինքն լիչեալ Սարգարն երդմամբ զմիամտութիւն դրեաց առ Եփրեմ սրբազան արքեպիսկոպոսն, զի եկեսցէ կանխաւ. մեք ևս նոյնպէս գրեցաք միաբանութեամբ առ ինքն Եփրեմ սրբազան արքե-

սիկոպոսն, առ ամենայն հոգևորականս և մարմնաւորականս Հայոցն Ուստաստանու և Վրացայանու և առ վեհաղնեալ աղալ Մինասն Եղիազարեան, վասն կանխաւ գալոյ Եփրեմ արքեպիսկոպոսին, քանզի լոյժ ցանկալ արքազնակատար Դանիէլ կաթուղիկոսն ի կենդանութեան իւրում նստուցանել զնա ի տեղի իւր։

Խնգրեմք ի պարծառափայլութենէ ձեր, զի ուր հարկն իցէ լայտնեացես զայս խնդիր մեր և ձեռնտու լիցիս, զի Եփրեմ արքեպիսկոպոսն եկեսցէ շուտով. և օր յառաջ վասն այսորիկ չնորհակալութիւն դրեսցես առ բարերարոյ Հիւսէին խան Սարզարն, և ծանուցանելով վասն յայտնելոյգ նորին կալ երանելի մեծութեան զդիրն իւր, պատուիրեսցես առնել ևս խնամ ունել և ապահովութեամբ պահպանել տուրբ աթոռն և զմիաբանութիւնն մինչ ցգալ նորոգ կաթուղիկոսացուին մերում. Գրանգլի գիտէք թէ, միմիայն ի հովանաւորութիւն նորին կայսերական մեծութեան կալ հաստեցեալ աթոռն Արարատեան և մեք ամենեքեան։

Օգոստոս։

ՄԼԶ. *Առ կայսրն դարձեալ վասն Գրիգորի սեւակրին։*

Ամենատղորմած թագաւոր կայսր ինքնակալ ամենայն Ռուսաց Ալէքսանդր Պաւլովիչ։

Տէր և ապաւէն Արարատեան Աթոռոյն և ամենայն հոգևորականաց և մարմնաւորականաց Հայոց։

Անգին կենաց ձերոց աղօթարար և

Յիսուսի Քրիստոսի . . . . . զոզջոյն Քրիստոսական հանդերձ ջերմեռանդ օրհնութեամբ մատուցանեմք ամենախոնարհ երկրպադութեամբ։

Աստուածապսակ ամենողորմած բարերարի ակնարկութեամբ ձեր՝ մեր և ամենայն հոգևորականաց մերոց ծանր տառապանքն և նեղութիւնքն փոխարկեալ եղեն ի բաւական ապահովութիւն և վասն կատարելագոյն ապահովութեան մերոյ ևս, լոյս մեր առաւելապէս հաստատուն է առ ամենաքաւականն և անդառնալի մեծ ողորմութիւն ձեր։

Սակայն ընդունաք սրբոյ Աթոռոյս Արարատեան և ազգի հայոց մի առ մի անթուելի ևն և բաւարարութիւն անկարելի է. ի վերայ այնոցիկ վերստին հակառակորդք և պատճառք ամենայն ընդհատուց առանց զղջանալոյ և անդադար ողոր օրինակ աստ միչտ կաթուղիկոս անուանեալն Դաւիթ որքան կարողանալ առանձինն դրով և բանիւ զղեթանոսացն իշխանաւորս և հարազատն և խորհրգատուն նորա Դրիգոր վարդապետ անուանեալն որ բնակի ի Դրիդորոպոլ նոյնպէս բանիւ և գրով խոովէ զժողովուրդն հայոց, որոյ ահա ի մերձակալ ժամանակի ի կողմանս Մոլտավիոյ խռովութիւն սերմանելոյ գրուածոյ օրինակն ստորագրութեամբ հայոց քահանայից և երևելի ժողովրդոց տեղւոյն առ մեզ են, ուր ի վերայ ամենայնի քահանայ մի աղնուազդի Կոստանդնուպոլսեցի Մեսրոպ անուն զոր յաւուրս լինելոյ մեր անդ ի Կոստանդնուպոլիս անուանեալ պատրիարգ վասն արժանաւորութեան անձին և բաւականութեան գիտութեան արժան համարեցաք ձեռնադրելոյ զնա ի քահանայ վասն բարւոք կառավարութեան ժողովրդեանն Սչովայու, Դրիգոր վարդապետ անուանեալն այն որ յառաջ քան զքանի ամս դատապարտեալ եկեղեցական դատաստանաւ ի ժողովոյ աւելի քան 100 արք եպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, և վարդապետաց արդելեալ կալ յամենայն հոգևոր պաշտօնէ, գնացեալ ի Սչով, հրատարակեալ է զինքն եպիսկոպոս և զքահանայն ի մէջ ժողովրդեան իւրոյ ղրպարտեալ է զրով և բանիւ և առաջի կառավարչացն հպատակաց ութրութեան Դերմանացւոց թէ տեսկացեալ է Մեսրոպ քահանայն այն և լուոյ վախատական եկեալ առնէ քահանայութիւն անդէն. առ որ այնքան է բարձրացուցեալ աղմուկ և խռովութիւն ի մէջ ժողովրդեան Հայոց և Դերմանացի կառավարչացն մինչև ձերունի մայր քահանայքն ի սաստկութենէ երկիւղին մահացեալ է զորմէ թէ կամիցիք լիապէս կարող էք հաստ լինել ի վոխանորդէն մերմէ Եփրեմ արք եպիսկոպոսէ և ի գործակատարէն սրբոյ Աթոռոյս հաւատարիմ հպատակէ Տէրութեան ձերոյ Մինասայ Եղիազարեան։

Վանորոյ սմենախնամարհաբար խնդրեմ տիեզերասաստ մեծութենէ ձեր բարձրահրաման հրովարտակաւ հրամայել զի զԳրիգոր վարդապետն այն առաքեսցեն ի սահմանս Իւիֆլիզոյ ի հռչակաւոր Հայոց վանքն Հազրատու մնալ անզէն ի ներքոյ վերատեսչութեան պատուելի առաջնորդի լիշեալ վանիցն և Հայոցն Վրացտանու սահմանաց Յովհաննէս Արք եպիսկոպոսի արժանաւոր եղելոյ ձերումդ կայսերական մեծ ողորմութենան և կրկին պարդևաց պնակի և բուլիանթ իւոյի։

Եւ յորժամ նա եկեսցէ անդ և տէր մի արասցէ լամեացի վրկութիւն և աղաւթիւն Աթոռոյ և հայրենեաց Հայոց, մեք ես գԴաւիթն առաքեմք անդ ի լիշնալ վանան դի դարձուցին միասք երկուց խռովարար անհանդիստ հոգևորականացն, և լինիցի անդէն քննութիւն զոնէ միայն վասն դանձուց սըրբոյ Աթոռոյն ոսկւոյ և արծաթոյ և սկանց պատուականաց զորս կոթսեալ են մեծ դուռմար, և աստ ի ներքոյ բարբարոսական իշխանութեան որոնելն զնոցանէ կարէ լինել առիթ չարաչար աւերութեան Աթոռոյ և աղդի հայոց։

Օգոստոս։

ՄԼԱ. *Առ կուտովիչն վասն առաքելոյ գթութեան մեր Դուխովնի։*

Գայծառափայլ գրաֆ Իվան Վասիլիչ։

Ողորմած տէր։

Աղօթարար ձեր և Յիսուսի Քրիստոսի ծառայ Դանիէլ կաթուղիկոս ամենայն հայոց և ծայրագոյն պատրիարգ Արարատեան աթոռոյ սրբոյ Էջմիածնի, բազում օրհնութեամբ մատուցանեմ զողջոյն Քրիստոսական։

Այս ահա տարի մի է՝ զի զբազում գըրեանս իմ լղեալ ի Ռուսաստան առ փոխանորդն իմ Եփրեմ արքեպիսկոպոսն վասն հոգևոր բարեդրութեան հայոց ժողովրդեանն եղելոց ի զանազան քաղաքս և ընկալուց զդիր ի լիշեալ փոխանորդէն իմմէ, զի բաղումք լայնցանէ չեն ժամանեալք։

Վասնորոյ ոչ ի ծախան խնայելով այլ վասն անկորուստ հասանելոյ հոգևորական դրուածոց մերոց լաղագս հոգևորական բարեդրութեան հայոց ժողովրդեանն մերում սրժան համարեցաք զկնդական մեր դրեցեալս, վասն քրիստոնէական կարգաց, առաքել գուխովնի կնքով մերով և խնդրեմք ի պալծառ ափալութենէ ձեր հրամայել փոչմեստրին Թիֆլիզոյ զի ընկալցի զնոսա և փոխ կալցի վասն անկորուստ ժամանելոյ նոցա։

Այլ և մի փակէթ առ փոխանորդն իմ Եփրեմ սրբազան արքեպիսկոպոսն և մի առ վեհազնեալ աղալ Մինասն վստահացալ գնել ի փակէթի ձերում, յորս գոն թուղթք առ ամենառդորմած կայսրն մեր վասն հաստատելոյ զմեր կարգագրեալ սուրբ ժողովն հոգևորականաց, և առ կայսրն Գերմանացւոց վասըն զԵփրեմ արքեպիսկոպոսն կարգելոյ առաջնորդ ի վերայ ժողովրդեան հայոց եղելոց ի սահմանս նորա՝ խնդրեմ չնորհս ունել հաստուցանել զայնս առ նոսա, այնպէս զի և կարախտինսն կարևոր չափով լաւագոյն պահպանեսցեն։

Ողջ լեր և մարդասիրութիւն և ողորմութիւն տեառն առասել եղիցի ի վերայ ձեր ամէն։

Օգոստոս։

ՄԼԸ. *Ի Սարդարէն առ Եփրեմ սըրբազանն։*

*** Եփրեմ սրբազան

Մեծադահի և բարձր աստիճանի փառաց և ճախութեան արժանի համահաւասար երանաւոր սիրելութեան լատկացեալդ ի մեծամեծաց ժողովրդոցն Յիսուսի՝ իսկ պատուաւորացն քրիստոնէից ծայրագոյն արքեպիսկոպոս *** լեր միշտ լարգութեամբ և խաղաղութեամբ ըստ խնդրուածոց կամաց քոց։

Զկնի ողջունիս լալտ լիցի, որովհետև մեծամեծաց կաթուղիկոսաց գլուխն տէր Դանիէլ կաթուղիկոսն այր ձեր է և տկարութեամբ ցաւագնեալ և ամենայն մարդ ճանչակելոց է զմահ, Աստուած մի արասցէ եթէ վերոլիչեալ պատուաւոր կաթուղիկոսն վախճանեսցի, էջմիածնի տեառն առանց գլխոյ և առանց կաթուղիկոսի է մնալոց։ Որովհետև

լաւաջին օրն միաբանութիւնք վարդապետացն և ազգն հայոց զզերապատուելիդ ընդ բարձր աստիճանաւոր տէր Դանիէլ կաթուղիկոսին յաղագս կաթուղիկոսութեան ընտրեալ էին, տէր Դանիէլ կաթուղիկոսն յԱթոռ հայրապետութեան վերահաստատեցաւ և զերապատուելիդ ձեզ յայսմհետէ տէրութեան թագաւորին Ռուսաց, ահա ըստ կոտակի տէր Դանիէլ կաթուղիկոսին և խնդրանօք բոլոր միաբան վարդապետացն վերոյիշեալ բարձրապատիւ՝ զերապատուելոյդ զրեմք և յայտ առնեմք, որ ըստ ամենայնի միամիտ և անհոդ լիցիս, զի զկնի վախճանի տէր Դանիէլ կաթուղիկոսին՝ կաթուղիկոսութեան աթոռն Էջմիածնի ձերում բարձր աստիճանաւորութեան է յանձնեցեալ, երդնում յԱնունն Աստուծոյ բարձրելոյն՝ որ տիրող ատօղ աշխարհի բարձրադունեղ՝ երանելի՝ և չուք Աստուածային ամենատղորմ Շահն մեր և սրբակենցաղ և երկնաղօր բարձրադահ Շահզատան ղԴաւիթ վարդապետն մնացեալ են համարեալ, որ ամենեին լուսոյ և ակնկալութեան ճանապարհ ոչ դոյ վասն նորա, որ կարողանալ կաթուղիկոսութիւն խնդրել, ըստ ամենայնի միամիտ և յանհոգս լինելով, եւ կեսցես առ Աթոռն, որ ողորմութեամբ Աստուծոյ ամենայն միաբանքն ըստ կամաց զերապատուելոյդ է կատարելոց։ Չարկադրեմ ուրեմն, որպէս գրեալ եմ առ քեզ, գնոյնն կատարող լինիս, այլ երկարաբանութիւն ոչ կամեցաք առնել, և լեր միշտ ողջ ի սէր մեր։

ՄԼԹ. Ի Սալոտարէն առ սրբազան Տէրս մեր վասն պատժոյ Դաւթին։

Մեծադահի և բարձր աստիճանի փառաց և ճոխութեան արժանի՝ գլուխ և մեծ Ազգին Քրիստոսի և իսկն պատուաւոր ժ..զովրդոցն Յիսուսի սնծամեծ կաթուղիկոսացն կաթուղիկոս Տէր Դանիէլ լեր միշտ ճոխութեամբ, ողջութեամբ և խաղաղութեամբ մնալով յամենայն փորձութենէ աղատս։

Զկնի ողջունիս յայտ լիցի, վասն մեղապարտ գտանելոյն Դաւիթ վարդապետին պատժեալ էիք գնա, և մեզ ծանուցեալ. Որովհետև յաղագս խնգրուածոց բոլոր ազգին հայոց՝ ինքնակալ և ամենողորմ լուսափայլ Շահզատան արեգակնափայլ հրովարտակաբարձր աստիճանաւորիդ հաստատեաց վերանստիլ յաթոռ հայրապետութեան, դի Քրիստոսասաղաշտ ազգի կանոնաւն և նախնի թադաւորաց հրովարտակի զօրութեամբն որպէս նախնի կաթուղիկոսունքն բոլոր վարդապետաց և քահանայից էջմիածնի և այլ Հայկազնեայց սեռի տէր և իշխող են եղեալ, ըզպարտաւորն պատժելով, և զարժանին պատուոյ պատուելով, և որովհետև Դաւիթ վարդապետն ձերում բարձրագունեզութեան կամացն ընդդէմ և սինօթի վճռահաստութեան հակառակ ընթացեալ էր՝ զմօրուսն նորին ածելելով պատժեալ էիք գնա, ի հարկէ պարտաւորն արժան է պատժոյ, և հարազատ հաւատարիմն արժանաւոր է սիրոյ և յարգութեան. քանզի ըստ որում կաթուղիկոսութիւն վարդապետաց և քահանայից և բոլոր ազգին հայոց ձերում բարձր աստիճանաւորութեան է յանձին, ով ոք և արժանի է պատժոյ՝ պատժեսջիք, ով ոք արժանի է սիրոյ և պատուոյ՝ պատուեսջիք ըստ սահմանի և կանոնի յաթոռ կաթուղիկոսութեան ձերում հաստատ և ըստ ամենայնի զվճիռն Սինօթի յաւաջացուցանող լինիջիք, և ոչ ոք կարէ ձերում բարձր աստիճանաւորութեան հրամանին և Սինօթի վճռահաստութեան ընդդիմանալ. ըստ ամենայնի յանհոգս լինիջիք, զայսոսիկ զամենայն հարկ համարեալ գրեցի և կնքեցի։

Թարգմանիչ Թղթոյս ի պարսկական դրութենէ առ ի լեզու և ի գիր հայոց ամենանուաստ ծառայ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Միրզա Թէոս Մէլիք Մինասեան Սադաթ բէկեանց Կամսարական իշխան Արշարունեաց հաւրենի ղաւառի։

ՄԼԱ. Թուղթ օրհնութեան եւ շնորհակալութեան ի Պետրբուրգ առ Ալէքսանդր Մակարիչ Խուտապաշուին։

Ցորմէ ժամանեալ հասցէ Թուղթ հայրական սիրոյ, ողջունի, օրհնութեան և շնորհակալութեան հանդերձ զերազօր Շնորհօք բարձրադահ Աթոռոյս սրբոյ Քրիստոսաիջի

ի վերայ ջերմեռանդ և մեծահաւատ սիրելի և հարազատ որդւոյդ մերում, և օգտակոն և բարեսէր զաւակիդ Աստուածակիր սուրբ զահիս մեծի տերամբ Քրիստոսիւ զօրացեալ և մեծացեալ ազնիւ պարոն Ալէքսանդրիդ։ Եւ ի վերայ Քրիստոսանման տան քոյ և բնակութեան և ի վերայ ամենայն գերդաստանի քումդ իշխանութեի մօրդ, ազնուութեի ամուսնոյդ, ծագկաւիրթիթ Աստուծով օրհնեալ զաւակացդ, և ամենից, որք քոյ են, որոց և եղիցի Քրիստոսիւ Քրիստոսիւ խնդալ յարազուարճ բերկրանօք։ (Շնորհք)։

Որում և գիտութիւն լիցի. ամենայն հարազատ որդի օրհնի յԱստուծոյ և ի մարդկանէ և ամենայն առաքինի անձն պակի նոյնպէս ի յերկինս և յերկրի։ Արդ՝ դու սիրելի որդիդ մեր ըստ հարազատութեանդ և ըստ առաքինական բարեմասնութեանդ ունիս վարձատրիլ և օրհնիլ ի բարձրելոյն և ի մարդոց, զի ըստ ճշմարիտ հաւատոյդ, զոր ունիս առ Աստուած, ըստ արիութեանդ, որով ենահատակիս վասն հաւատոյ ենորին պատճառութեան, ըստ կատարեալ սիրոյդ, զոր ունիս առ սուրբ նկեղեցիսն Քրիստոսի մանաւանդ առ գլուխն ամենայն եկեղեցեաց բարձրադահ Աթոռն արարատեան, ըստ արդարութեանդ որով զհետ երթաս իրաւանց և ուղղութեան, լոյս և հանդիսացեալդ էք այժմ և յառաջ քան զայս իսկ. ըստ վշտակցութեանդ, որով իբրև որդի ջերմեռանդ՝ վշտահաբ և ցաւակից էք լեալ մեզ ի պանդխտութեան և ի գերութեան մերում, և ըստ ազգի ազգի հարազատ և հաւատարիմ որդիութեանդ որ առ փոխանորդն իմ Եփրեմ սրբազան Արքեպիսկոպոսն և առաւել վասն մեծագոյն աշխատանացդ ի թարգմանութեան բանից և թղթոց ի քսանի ամս այդր, և այլն, լիրաւի արժանապէս ունիք վարձատրիլ յԱստուծոյ և բազմապատիկ չնորհակալութեամբ օրհնիլ ի սրբոյ իմ ման տեղւոյս Քրիստոսի և ի սորին դահակալաց. զոր ամենայն մեծամեծ գովութեամբ գլեալ ծանուցեալ էր մեզ նոյն վերոլիշեալ Եփրեմ սրբազան Արքեպիսկոպոս փոխանորդն մեր։ Արդարև այսքիկ միայն էին, որ միսիթարէին զիս յանմխիթար վայրն այն, և ուրախ առնէին զանձն իմ տրտմաթազձիծ։ Արժան էր ստուգիւ մեզ, մանաւանդ թէ հարկ իսկ յառաջագոյն գրել ձեզ թուղթ օրհնութեան և սիրոյ ըստ ձերդ արժանաւորութեան, այլ սակայն՝ յամենայն կողմանց գոլով մեր պաշարեալ և ղբաղեալ, չեղև մեզ միջոց և ժամ բարեպատեհ զհայրական օրհնութիւն մեր յայտնել ձեզ արդեամբք և ճշմարտութեամբ. այժմ մինչ ողորմութեամբն Քրիստոսի մեք և երկիր մեր կամք ի խաղաղութեան խոհեմ կառավարութեամբ գաւառակալաց կոմսանցս, մատչիմք անա առ սիրեցեալ որդիդ մեր այսու նամակաւ սիրոյ օրհնութեան և գոհունակութեան որով և չնորհակալեալ՝ օրհնեմք զարժանիդ օրհնութեան և ղաղթօգուտ կեանս քոյ հանդերձ բազմադիմի գոհունակութեամբ զոր տէր օրհնելով օրհնեսցէ և ղօրացուսցէ և ի խնամս իւր պահեսցէ զնալ քեզ ղօրութենէ ի զօրութիւն և ի բարձրութենէ ի բարձրութիւն ի պարծանս նախնեաց քոց և բարի ծնողաց, և լուրախութիւն հոգևոր հօրս քոյ, և մնալ խաղաղ կենօք ի բարերջանիկ բարեկենդանութեան ազատս յամենայն չարէ. և զհոգի ի Քրիստոս հանգուցեալ բարեպաշտ հօր քոյ Աղալ Մակարի հոգին սուրբ Աստուած լուսաւորեսցէ ի լոյս երեսաց իւրոց յաւելլով զթերին յաւուրս քոյ և ի ժամանակս կենաց քոց։ Պատուիրեմք սիրելի որդւոյդ մերում, զի զգոն հարազատութիւն ոչ միայն պահեսցես անփոփոխ և աննուազ, այլ և օր քան զօր և ևս առատացուցեալ մեծացուսցես փայլփայլեսցես առ գերազահ սուրբ Աթոռս լիաուտեան, առ մեր հոգևոր հայրութիւն, և առ փոխանորդն մեր Եփրեմ սրբազան Արքեպիսկոպոսն. զի քեզ փառք պատիւ և պարծանք ի յերկրի յաւելցին և պակ և վարձք ի յերկինս բազմասցին, և ձայն ցնծութեան փրկութեան ի յարկս քոյ լցցին, և չնորհք և օրհնութիւն սուրբ հոգւոյն Աստուծոյ և սրբոյ լուսման տեղւոյս Քրիստոսի ի գլուխ ձեր զեղցին և ի վերայ ձեր եկաւորեսցէ հովանացուցին. ողջ լեր Քրիստոսիս, և նա պահեսցէ զքեզ։ Հայրական սիրով զոզջոյն և զօրհնութիւն առաքեմ բարեպաշտութեի մօր քոյ Աննա Սամուէլովնային, ազնուութեի ամուսնոյն քոյ համեստափայլ Մագթազինին, և եղբարց քոց ազնիւ պարոն Գրիգորին, և ազնիւ պարոն Յովսեփ Թինին. զոր և խնամոց Բարձրելոյն յանձնարարեալ ցանկամ առողջութեան և բարերջանկութեան դոցա։

Ցամի Տեառն 1808 ի սեպտ. ի Բարձրաղահ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին որ յԱրարատ։

ՄԽԸ. Առ Աւետիք Գրիգորիչ Սերոբեան-կոմն օրհնութիւն եւ շնորհակալութիւն։

Յիսուսի Քրիստոսի . . . սիրով սուրբ հոգւոյն Աստուծոյ, և երկնաւոր խաղաղութեամբ զոզջոյն Քրիստոսական և օրհնութիւն բարձրելոյն մատուցանեմ, ղերաղնիւ սիրելոյդ մերում բարձր բարեծնունդ Աղալ Աւետիք հոգևոր զաւակիդ Քրիստոսակէ բարձրադահ Աթոռոյս Հայաստանեայց, և մեր իսկ, որում և լայտ առնեմ, զի որդի իմաստուն ուրախ առնէ զհայր. ամենայն իրօք խոստովանեալ է սուն այս ճշմարիտ ասացուցութիւն։ Արդ՝ որպէս մարմնաւոր հարք ուրախ լինին ընդ իմաստուն ոյղի իւրեանց, նոյն դունակ և մեք գոլով հոգևոր ծնողք ուրախ լինիմք և խնդամք իսկ ի վերայ իմաստութեան հոգևոր որդւոց մերոց, և զուարճանամք մեծապէս, յորժամ լսեմք, թէ հոգևոր զաւակք մեր ճշմարտութեամբ ղկնի ուղղութեան ընթանան։ Ուրախ եմք ուստի՝ զի ունիմք իմաստուն որդի զձեզ և խնդամք այլ և ի վերայ ուղիղ չաւղաց և բարւոք գնացից ձերոց։ Քանզի՝ ի դրութեանց Եվրեմայ սրբազան Արքեպիսկոպոս փոխանորդին մերոյ դիտացեալ զիմոհեմութիւն, զհանճար և զչրջանկատ հայեցողութիւն ձեր զառնելոք և ղրանիւք, որ է գործ զգօն, հանճարեղ, և կորովամիտ առն, ղուղղութիւն սրտի, զպարզութիւն մտաց և զարդարութիւն կամաց սիրելի և զերապատիւ որդւոյդ մերում, և զայլս ալսպիսիս՝ մտադիւր յօժարակամ և ախորժանօք ոգւոյ ուրախացաք զուարթացաք և օրհնեցաք անդ ի գերութեան յօտարութեան, և օրհնեմք իսկ ի խաղաղութեան յանգորրու զքեզ զիմոհեմ որդիդ մեր և արժանաւոր զաւակդ սիրոյ և չնորհաց. զոր տէր օրհնելով օրհնեսցէ և բարձրացուսցէ գոլիք ընչիք, հարստութեամբ և մեծութեամբ. և ամենայն բարութեամբ լցուսցէ՝ փրկելով յամենայն փորձանաց. և պարգևելով զխաղաղ ամս բաղումս յօգուտ և ի չինութիւն սուրբ եկեղեցւոյն իւրոյ։ Այլև՝ յայտնի է մեզ քոյդ վշտակցութիւն մեղ, չատադովութիւնդ վասն պալծառութեան սուրբ տաճարիս մեծի, ճշմարտասիրութիւնդ վասն իրաւանց և արդարութեանց տեառն. մեծադոյն սէրդ և հաւատդ առ պաշտպանութիւնս օրինաց և կանոնաց սրբազան հարց և հայրապետաց, սէրդ որդիութիւնդ և տղդի ազգի օժանդակութեամբ ձեռնտուութիւնդ վերոյիշեալ փոխանորդին մերոյ Եփրեմայ Արք եպիսկոպոսին, որք արդարև մեծարգի են լուժ յայս մեր և անմոռանալի ալսօրիկ քոյ մեծադործութիւնք ի միտս ականաւորաց, և վարձատրելիք իսկ անչուշտ ի հանդիսադրէն բոլորեցունց։ Պատուիրեմք ուրեմն՝ զերալարդ սիրելոյդ մերոյ՝ մնալ ի զունն, կալ հաստատուն, և յաւելուլ օր ըստ օրէ ես քան զևս և առատանալ և առաւելուլ գոցանօք, զի ընկալցիս զվայելս ի լերկինս լառատապարգև ձեռանէ բարձրելոյն և զօրհնութիւնս և չնորհս ի սուրբ հոգւոյն Աստուծոյ և ի սրբոյ իշման տեղւոյս Քրիստոսի և պչնորհակալութիւնս գովութեամբք ի մէնջ. ողջ լեր ի Քրիստոս և զօրութիւն նորին պահեսցէ զքեզ ի չարէ, Ամէն։

Ցամի ա՛ռաւն 1808. ի սեպ՛. ի սուրբ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին, որ յԱրարատ։

ՄԽՌ. Առ Մօզոլու տէր Ստեփաննոսի նղբայր պարոն Սարգիս Դպիչին։

Ցորմէ ժամանեսցի թուղթ սիրոյ, ողջունի, և օրհնութեան հանդերձ Չնորհօք և պարգևօք սուրբ հոգւոյն Աստուծոյ և սրբոյ իշման տեղւոյս Քրիստոսի ի վերայ սիրելի և հոգևոր որդւոյդ մերոյ և հարազատ զաւակիդ Բարձրադահ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյս տերամբ Քրիստոսի օրհնակալ Աղնիւ պարոն Սարգիս բարեպաշտիդ. և որոց ընդ

քեզ են, որոյ եղիցի ի տէր խնդալ լարա-
զուալճ բերկրանօք. Ամէն։

(Շնորհք)։

Որում և գիտութիւն եղիցի. զի լաչ-
խարհի աստ հանապազ փոխանակութիւն է
ամինդալն իրաց. զի ակն լանդիման տեսա-
նեմք, թէ յետ փարատելոյ ամպոց պարղու-
թիւն լինի, և յետ անձրևի՝ քաղցր արև ծա-
գէ. և յետ տխուր և ցրտագին ձմեռան՝ զուար-
թարար գարուն ի վերայ գայ. և յետ աղջա
մղջին գիշերի՝ լուսաւորութիւն լինի տուն-
ջեան։ Նոյնպէս յետ երկարաւոր ախտի՝ գալ
առողջութիւն, յետ արտասուաց՝ ծաղր, յետ
վաստակոց՝ հանգիստ. յետ ցաւոց և ադ-
խնդութիւն։ Եւ որչափ սաստկագին է մրրիկն
անչափ քաղցր է դէմ եկեալ պարղութիւնն.
որչափ սառնամուտ է ձմեռն, այնչափ զուար-
թագին է գարունն, որչափ տխուր է գիշերն,
այնչափ ուրախարար է տիւն, որչափ ծանր
է աշխատութիւնն, այնչափ փարելի է հան-
գիստն. որչափ մեծ է սուգն, այնչափ առա-
ւել է խնդութիւն և որչափ դառն գոյն իցեն
արտասուք, այնչափ քաղցրանան ապա ծա-
փաձայն ցնծութիւնք, և այլն։ Արդ՝ ասաս
փոխանակութեամբ իրաց ուսեր սիրելի որ-
դիդ մխիթարել. և ի վիշտս մի լքանիլ և մի
յուսաբեկ լինիլ. լինելով՝ թէ տխրականաց
յոլովակի դէմ դան ուրախականք. զի երկու
են բաժակք լիք ի ձեռին տեառն, մին սաս
տիկ և մահու, միւսն գթութեան և կենաց զմին
ըստ անստուտ վճռի տեառն և ըստ սահմանի
մարդկային բնութեան ընկալեալ տեսեր ի
վերայ մահու աղնուհոյն ամուսնոյն ձերոյ
և գովութեանց արժանաւոր հանճարեղ և հա-
մեստաղարդ կենակցին ձերոյ զեր հոգևոր
դստերն, զորոյ դհոգին տէրն կենդանեաց և
մեռելոց ի լոյս երեսաց իւրոց հանդուսցէ և
լնդ բարեպաշտ և առաքինութեան դարգա-
րեալ մեծագործ կանայսն դ՝ սակարգեսցէ՝
լաւելլով զմնացորդս կենաց նորին լաւութս
և ի կեանս քոյ. որոյ վասն և ի սուգ համա-
կեալդ ես, իսկ զմիւսն աներկբայ հաւատով
լուսալ տեսանել և վայելչանալ անակնունելի
նորանոր մխիթարութեամբք և ուրախու-
թեամբ. զի նոյն տէր է, որ ըստ մարգա-
րէին մեռուցանէ և կեցուցանէ. իջուցա-
նէ ի գժոխս և հանէ, և մեք աղօ-
թեմք առ տէր հոգւով սրբով մխիթարել
և ուրախ առնել զտխրաթախիծ սիրտ ձեր
վշտահար. Զոյնս մատակաբարեաց և մեզ
տէր, զի արբեմն մինչ ի գերութեան յօտարու-
թեան մաչեցան ոսկերք մեր և զբաժակ բար-
կութեան ընկալեալ ի ձեռանէ տեառնէ ի
սուղ էաք սգաւորեալ վասն ազգիս և վասն
սուրբ տաճարիս Քրիստոսի և խրթնութեան
նորին ի բարեզարդութեանց, այսօր ահա տօն
ուրախութեան կատարեմք ի նաւակատիս
սուրբ եկեղեցւոյս Հայաստանեայց գերագահ
Ա֊թոռոյս Ամենայն Հայոց՝ տեսանելով՝ զի ըստ
կալծնամաքրին Նալեալ գան լամենայն կող-
մանց վտարեալ և ցրուեալ միաբանք սորին
ձագախառն երամովին, որով հանդերձ ահա
ազատութեամբ օրհնեմք զբարձրեալն, որ
առնէ ղանքննինս, զմեծամեծս և գհրաշա-
կերտս, որոց ոչ գոյ թիւ, ուրախ եմք գար-
ձեալ ի վերայ ճշմարտասիրութեան հարազա-
տութեան և Ջատագովութեան սիրելի որդւոյդ
մերում վասն պայծառութեան Ա֊թոռոյս մեծի
ի վերայ պաշտպանութեանդ օրինաց և կա-
նոնաց սրբազան հարց և ի վերայ վշտակ-
ցութեանդ վշտաց և տառապանաց մերոց,
ղորս զամենայն լիապէս զրեալ ծանուցեալ
էր մեզ գերապատիւ Եփրեմ սրբազան Արք ե-
պիսկոպոս փոխանորդն մեր, որոց ամենից
վասն ահա չնորհակալ եմ ասել և օրհնեմ
զկեանս քոյ մնալ քեզ յաջողութեամբ ի բար-
երջանիկ բարօրութեան։ Գրեալ էր և վասն
լիառն ուրպէի հոգեբաժնին վասն ի Քրիս-
տոս հանգուցեալ պարկեշտուհի ամուսնոյն
ձերոյ. զոր առ մեզ հասեալ համարելով՝ լի-
չատակեցաք զհոգի նորին և զհոգիս նախ-
նեաց և լարի ծնողաց քոց, զորս տէր լար-
քալութեան իւրում հանդուսցէ։ Պատուիրեմ
ի վերջոյ սիրելոյդ մերում մնալ ի գոյն որ-
ղութեան և անվերջանալիս առնել զհարա-
զատութիւնդ ի սրբոյ Աթոռոյս, ի մէնջ և
ընփրեմայ սրբազան Արք եպիսկոպոսէն, զի
ունիս վարձատրիլ ի երկինս և ի երկրի ի
բարձրելոյն. և չնորհք սուրբ իմման տեղուս
Քրիստոսի եղիցի ընդ քեզ միշտ, Ամէն։

Ծամի տեառն 1808, ի
սեպ". ի սուրբ գահս
Էջմիածին, որ յԱրա-
բատս։

ՄԽԻԹ. *Առ ազնուտէր տիկնին Աննա Իվանովնայն քոյր Գատարինէ Իվանովնինին։*

Ցորմէ ժամանակաւ հասցէ նամակ երկնաւոր օրհնութեան, Քրիստոսական սուրբ ոգւոյնի, սիրոյ սուրբ հոգւոյն Աստուծոյ, և բազմապատիկ չնորհակալութեան հանդերձ զերազօր չնորհօք սուրբ իմման տեղւոյս Քրիստոսի ի վերայ բարեպաշտ Աստուածասէր և առաքինաղարդ հոգւոյս զտեղդ մերոյ տէրամբ Քրիստոսիս օրհնեցելոյ մեծուհի աղնուհի Աննա իշխանուհւոյդ, և Քրիստոսախնամ տան քոյ և բնակութեան, և ամենից, որք քոյ են, որոց և եղիցի խնդալ ի Քրիստոս Ցիսուս ի տէր մեր։

(Շնորհք)։

Որում և զիտութիւն լիցի, զի արժան էր լառաջ մատչիլ առ ձեզ օրհնութեամբ և չնորհակալութեամբ, այլ զոլով ի զերութեան ի պանդխտութեան, և զկնի ազատութեանս Շնորհօքն Քրիստոսի անտի և ի զանազան զբաղմունս ի սուրբ Աթոռս՝ ունելով վիչտս ներքուստ և արտաքուստ, և ելով առաւել վչտահար և տխրաթախիծ, և այլն, նմին իրի՝ ոչ եղև մեզ առ այն ժամանակ. բայց այժմ մինչ ողորմութեամբն Քրիստոսի ազատ կամք, պարտ և արժան համարեցաք աչոս սիրալատ օրհնառաք թղթով զմեծ չնորհակալութիւն սրտի մերոյ լատնել ձերումդ որդիութեան. զի չէ վայելուչ լաղթերէն ընկել, և զաղբիւրն թողուլ լքանել։ Արդ՝ ըստ սմում մեծուհի տիկինն Քրիստոսիս Ցիսուսիս օրհնեալ, և իշխանուհի զերազնուհի Տամրիշն զերահոչակ, սրբոյ աթոռոյս և մեր իսկ բարերար և մեծ խնամակալ Կատարինէ Իվանովնայն[88]) իւրով տամբք և զարմիւք զհետ ուղղութեան և Աստուածալին օրինաց ընթացեալ պահևաց և պահէ իսկ զամենայն իրաւունս արդարութեան, որք հային լօգուտ ազգին և ի չինութիւն սուրբ եկեղեցւոյն Քրիստոսի և զերագահ աթոռոյս Արարատեան, և մեք երախտաւորեալքս և բարերարեալքս ի նմանէ գահակալք և մխաքանք սուրբ զահիս պարտաւորեմք զամենայն ժամանակս կենաց մերոց աղօթիւք և խնդրուածովք առ ամէն զլսել առաջի սուրբ տաճարի իւրոյ վասն ամենայն ննջեցելոց նորին և վասն ամենայն կենդանեաց՝ տալ բարերջանիկ կեանսըս, և ննջեցելոց՝ լաւիտենական հանգիստն արդարոց. և ըստ որում դուք ես գոլով լօրհնեալ չառաւելոյց լառաջ ըղխալք և հարազատ քոյր նորին, նմին իրի և ձեզ իսկ պարտաւորեմք լորդւոց լորդիս օրհնել և չնորհակալիլ. զոր և տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, լցուսցէ բարութեամբ և ճոխացուսցէ հոգեոր և մարմնաւոր վայելչութեամբք՝ ի րկելով ի չարէ և պահելով ի խաղաղութեան, և զհոգիս բարի ծնողաց և նախնեաց ձերոց պայծառ լուսով զարդարեալ՝ լարքայութեան իւրում պսակաւորեսցէ՝ տալով ներումն և թողութիւն մարդկային յանցանաց նոցին։ Շնորհակալեմք դարձեալ՝ որ դուք ոչ մրաւն սրբոյ աթոռոյս, և մերս հայրութեան էք հաւատարիմ զաւակ օրհնեալ, այլ և՝ սիրեցեալ զերապատիւ միաբանորդին մերոյ Սիրեմայ սրբազան արքեպիսկոպոսին եղեալ էք յամենայն ժամ օգնական և ձեռնտու հարազատ դուստր նորին, լինելով մխիթար նմին ալգր բանիւք և արդեամբք. զորս զամենայն գբրեալ ծանուցեալ էր մեզ. և մեք գիտացեալ՝ չնորհակալեցաք. և չնորհակալեմք իսկ. որում տէր եղիցի վարձահատուց։ Այլ և պատուիրեմ հոգեոր դստերդ մերոմ, պահել զոչ մտերմութիւն առ սուրբ աթոռս, առ մեզ, և առ Սիրեմ արքեպիսկոպոսն անպակաս սիրով որպէս ցարդ, և չնորհք սուրբ իմման տեղւոյս Քրիստոսի եղիցի ընդ քեզ մինչ, Ամէն։ Հայրական սիրով զգոյշն և զօրհնութիւն առաքեմ նորին զերազանցութեան զերապատիւ Սիմէօն Բէրենիկովիչն զոր և տեառն Աստուծոյ լանձն առնեմ, զի մնասցէ միշտ երկար կենօք խաղաղութեամբ և բարեջանիկ բարեյաջողութեամբ, Ամէն։

Ցամի տեառն 1808, ի սեպտ՝
ի սուրբ Աթոռս Էջմիածնի։
որ լԱրարատ։

ՄԽԻԹ. *Առ Զախարիա անիշն*[89]) *ի Մոսկով։*

Ցիսուսի Քրիստոսի . . . զոգջոյն խաղաղարար, սէր սուրբ հոգւոյն Աստուծոյ և օրհնութիւն երկին աւոր՝ չնորհակալութեամբ և զովութեամբ՝ հանդերձ զերազօր չնորհօք

բարձրագահ աթոռոյս սուրբ իմման տեզուոյս Քրիստոսի նուիրեալ մատուցանեմ յարգապատիւ բարձրապատիւ սիրելւոյդ մերում, մեծահաւատ և Աստուածասէր հոգևոր զաւակիդ տիրակալիս սուրբ գահոյիս մեծի՝ ղերազնիւ աղալ Զաքարիայ Տէրունէ Քրիստոսիս օրհնելւոյդ։ Եւ Աստուածապահ տան քոյ և բարեհամբաւեալ զերդաստանի քումի իշխանուհի ամուսնոյդ և ամենայն ազգականաց ընտանեաց և բարեկամաց քոց, և որք քոյ են և ընդ օրհնեալ լարկաւ քով. որոց ամենից եղիցի ի տէր խնդալ յամայր ժամանակօք և պարապալց ամօք Ամէն։

(Շնորհք)։

Որում և գիտութիւն լիցի. ոչ ոք արկանէ զձեռն զմաճաք, և հալիցի լետս թէ յաջողեալ իցեն ճանապարհք իւր ասէ ճշմարիտ վարդապետն Քիստոս լիւքասի առաւակաբանութեան, և լիրաւի, դի չէ մարթ զմաճ արքայութեան իրաւանց և արդարութեան ունել, և զանդաստան մտաց և սրտի և կամաց հոգւոյ հևրկել և զսերմանիս հաւատոյ լուսոյ և սիրոյ և առաքինական բարեմասնութեանց անդ սերմանել, որով և երկնաքաղաքացի զանձն կացուցանել. և հալել լետս յաչխարհ և ի հեչտութիւն նորին թէ յաջողին իւր գործք. զի մարմին ցանկալ հակառակ հոգւոյ։ Ուրեմն որ ուշ եղեալ է լերկնալին երանելեաց զաւառն ժամանել, և ընդ երկնալինս պարել, պարտի թողուլ լքանել դաչխարհ և որ ի նմա, և ամենայն ոգւով և սրտիւ զուն գործել ջանալ հասանիլ ի նպատակն փրկութեան և լինիլ ըստ իմաստնոյն յայնժամ այր մեծ և պատուական և արժանաւոր վարձուց մեծաց, զի բարերար է Աստուած ի վերալ համբերողաց, և անձն որ խնդրէ դնա գտցէ դնա. նա զի՝ ոչ ոք պակսի, եթէ ոչ ըստ օրինի մարտիցէ ընդ մարմին իւր և ընդ աչխարհ, և ոչ ի բաց ղարձուացէ զաչս իւր յայնց և ի վաւելից նոցին, զի մարմին ըստ Սողոմոնի ծանրացուցանէ զոգի. և յարկ հոգեղէն զմիտս բռնամոգոյ Արդ ասացիկ ամենայն ի հոգի քոյ և ի սիրտ ծալկեալ բարդաւաճեալ տևասնի. քանզի՝ իբրև այր առաքինի և բարեխնդիր ի բաղումս ամս ընդ զերահոչակ մեծահամբաւեալ տան լուսահոգի աղալ Եղիազարեան աղալ Յովհաննիսի և ընդ զերազանցուհի մեծուհի քոյ ձևրոյ Կատարիննէ Իվանովնային զամենայն լինչ առ ոտն հարեալ և զխոչ և զխոթ առաքինութեան վասն արքայութեան և վասն սուրբ հաւատոյս քրիստոնէական և վասն պայծառութեան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյս նորին ի բաց արարեալ՝ ճգնեցար աչխատեցար յամենայն զօրութենէ և ի մտաց, և արարեր զմեզ միաբանութեամբ ձեզ զոհաբանս. և թողէք լիչատակաց արժանիս զանուն բարի ընդ այնոսիկ, որք ի հանդէս հաւատոյ փորձել ընտիր գտան. որպէս զայսոսիկ զամենայնս, և զայլս սոյնպիսիս դրեալ ծանուցեալ էր մեզ Սիրեմ սրբազան արքեպիսկոպոս գերապատիւ փոխանորդն մեր, և մեք չնորհակալութեամբ սրտի օրհնեցաք և օրհնեմք իսկ զբարեացապարտ կենաս ձեր, զոր տէր օրհնեսցէ. և զբազում պարագաս ամաց չնորհեսցէ ձեզ ըստ բարի վաստակոց ձերոց։ Յորդորեմ այլ և ի վերջոյ զպատուական սիրելիդ իմ առաստանալ զօքօք, և առաւելուլ օր քան զօր զՔերմեռանդութիւնդ առ Աստուած և առ սուրբ տաճարս նորին. զի ձեզ վաստք և պարծանք ի լերկինս և ի լերկրի բազմացին, որ և չնորհ տեսանն Աստուծոյ և սրբոյ իմման տեզուոյս նորին եղիցի ընդ ձեզ միշտ, ամէն։

Զողջոյն և զօրհնութիւն մատուցանեմք լատկապէս հոգեոր դստերն մերոյ աղնուհի կենակցին ձերոյ. զոր և խնամոց տեսանն Աստուծոյ լանձն արարեալ՝ աղօթեմք վասն բարերջանկութեան նորին։

Ցամի տեսան 1808։

Պետ. *Թուղթ անդամոց ընդհանրական խորհրդարանի առ Դաւիթ կաթողիկոս։*

Գերապատիւ Դաւիթ Տ՛՛ազան արքեպիսկոպոս։

Սուրբ ժողովն բարձրագոյն խորհրդարանի յայտնէ ձերում սրբութեան, զի քաշկարանն սրբոյ Աթոռոյն որ առ ձեզ է առաքեալք ընդ սոյն դրաբերիս քանզի վասն առողջութեան մեր սրբազնակատար տեսանն հարկաւոր է ալժմիկ։

Բարսեղ արքեպիսկոպոս։

Յովակիմ արքեպիսկոպոս։
1808 սեպտ. 5 Յօհաննէս եպիսկոպոս։
ի բարձրագոյն Ստեփաննոս արքեպիսկոպոս։
իորհրդարանն։ Աւէտիքեան արքեպիսկոպոս։
Ներսէս եպիսկոպոս։
Ռէթէոս եպիսկոպոս։

ԹՒ 9. *Թուղթ միաբանից Մ. Աթոռոյ առ Դանիէլ կաթուղիկոս։*

Սրբազնաբնտիր հայրապետի մերում տեառն Դանիէլի ընդհանրական կաթուղիկոսի և սուրբ ժողովոյն բարձրագոյն խորհրդարանի խոնարհ երկրպագութեամբ մատուցանեմք զաղերս։

Սաորակնքող միաբանք սրբոյ Էջմիածնի, եպիսկոպոսք և վարդապետք։

Յայտնի է ամենայն աշխարհի, զի յետ վախճանի Ղուկաս սրբազնակատար կաթուղիկոսին, ժողով հոգևորականաց և մարմնաւորականաց սրբոյ Աթոռոյս և ամենայն երկրիս մերոյ, ընարեցաք վասն կաթուղիկոսութեան սրբոյ աթոռոյս՝ զերբուքիւն ձեր և ղնիւրեմ արքեպիսկոպոսն Ռուսաստանու հայոց Բալէ քանզի՝ Դաւիթն ի ձեռն զանազան հնարից, նստաւ բռնութեամբ յաթոռ կաթուղիկոսութեան, հայք և տաճիկք տեսին ամենեքին, զի ճոխ Աթոռն Էջմիածնի աւերեցաւ, մնծ դանձն կորեաւ, միաբանք ցրուեցան, ամենայն չինուածք և այգիք քակեցան, և բոլորապէս ի վերջին աւերութիւն էհաս սուրբ Աթոռն մեր։ Շնորհակալ եմք զմեծ ողորմութենէն Աստուծոյ, զի դուք էարկ ի սիրտ բարեբարոյ և բարձրաստիճան Հիւսէյին խան Սարգարին, ցաւեցաւ վասն աւերութեան սրբոյ Աթոռոյ մերում և արձ աւար մեծաչուք Շահղատալին վասն ազատութեան ձերոյ. չնորհակալ եմք և օրհնեմք զկեանս Աստուծով ղրկացեալ Ապաս Միրզայ Շահղատալին, զի վերահասու եղեալ զրպարտութեան Դաւթի վասն ձեր՝ ազատեաց զձեզ և արժանացոյց ըստ ըղձի ամենայն հայոց ազգին, նստիլ յաթոռ կաթուղիկոսութեան։ Մեք ևս տեսանելով զայսպիսի ողորմածութիւնս բարերար Շահղատալին և Հիւսէյին խան Սարդարին, յորժամ ընկալաք զգիր հրամանի ձերոյ՝ հանդերձ օրինակաւ գրոյ Հիւսէյին խան Սարդարին, եւեալ իւրաքանչիւրքս ի զանազան քաղաքաց յորս փախուցեալ էաք, եկաք ժողովեցաք ի սուրբ Աթոռս, զի թերևս ի մէջ սրբոյ Աթոռոյս մերում վառ ճրագ դրտանիցի։ Այլ քանզի սրբազնակատար տէրդ մեր ի հիւանդութեան կայ, տացէ տէր զի երկարեսցեն աւուրք ձեր, այլ ըստ որում ի մահկանացու վիճակի կամք ամենեքեանքս գիտէք լաւապէս, զի դուք և Դոլվաթլու Հիւսէյին խան Սարդարն էք պատճառ եղեալ ժողովելոյ զմեզ ի սուրբ Աթոռս, վասնորոյ խոնարհաբար խնդրեմք, զի թէպէտ ժողովելոյ պատճառ էք եղեալ, մեր մահուան պատճառ չկամիջիք լինիլ. այլ կամ ի ձեր կենդանութեան ժամանակս հաստատուն գրով Շահղատալին և Հիւսէյին խան Սարգարին միաբանութիւն տայջիք մեզ, որ յետ ձեր՝ մեր կաթուղիկոսն ընտրեսցի, զոր ընդ ձեզ ամենայն միաբանութեամբ ընտրեալ եմք լառաջագոյն և մեր մահէրն ևս է ի ձեռն նորա. և յայտնեալ է ամենայն ազգին հայոց ևս, և կայսերն Ռուսաց և այլոց թագաւորաց, և ընկալեալ է յամենեցունց. և այսպէս բարւոք միամտութիւն տալ մեզ, որ Դաւթին միւս անդամ ամենևին չլինիցի իշխանութիւն կաթուղիկոսական. և կամ թէ ողորմութիւն առնելով ազատութիւն արասջիք մեզ և հրամանս տայջիք, զի գնասցուք ուր և կարօղ լինիցիմք պահպանել զկեանս մեր։

Յամի տեառն 1808։
սեպտեմբերի 5,
ի սուրբ Էջմիածին։

Ներսէս Ստեփաննոս արքեպիսկոպոս։ Մարտիրոս եպիսկոպոս։ Յօհաննէս եպիսկոպոս։ Գրիգոր եպիսկոպոս։ Յակոբ եպիսկոպոս։ Պօղոս վարդապետ։ Մատթէոս վարդապետ։ Անտօն վարդապետ։ Ղուկաս վարդապետ։ Մարկոս վարդապետ։ Ահարոն վարդապետ։ Ստեփան վարդապետ։ Մկրտիչ վարդապետ։ Դէմրդ աբեղայ։ Յակոբ վարդապետ։ Ներսէս վարդապետ։ Սահակ աբեղայ։ Աւետիք վարդապետ։ Գրիգոր վարդապետ։ Յակոբ վարդապետ։ Ստեփան վարդապետ, և Ստեփան աբեղայ։

ՄԽԻ. *Թուղթ Ներսէս եպիսկոպոսի առ Դաւրիէլ և Յովհաննէս իշխանան։*

Գերապատիւ իշխանք հայոց Դաւրիէլ և Յովհաննէս

Ողորմած տեարք մեր.

Վարդան հարազատն ձեր եկն, և խընդրեաց ի մէնջ յալտնել ձեզ վասն սրբազան կաթուղիկոսին. սրբազանն այս երկու ամիս ի տկարութեան մէջ կայ, և օր քան զօր սաստկացաւ տկարութիւնն մինչ ցայսօր, և Աստուած դիտէ ողջանալն կամ աւուղջանալն. ի վերայ այսորիկ Դաւիթ հայրն ղականջսն անկեաց, և յամսոյս 5. ըն եկն բժիշկ մի Թօքալ Յովհան անուն Նորղեցի, և նստեալ առաջի սրբազանին խնդրեաց զբժշկարան և խոստացաւ ցուցանել անդ զցաւն սրբազանին և ղդեղն նորա, վասն այսորիկ զԴրիդոր վարդապետն յղեալ առ Դաւիթ հայրն խնդրեցաք զբժշկարանն, և ոչ ետ, դարձեալ առաքեցաք զԴրիդոր վեքիլ եպիսկոպոսն և ոչ ետ, ապա սուրբ ժողովն ի միասին եկեալ, զրեաց առ Դաւիթ հայրն և խնդրեաց զդիրքն, և նա առնարդեաց զժողովն և զարձոյց զԴրիդոր եպիսկոպոսն զատարկ։

Յայնժամ միաբանք ևս ժողովեալ էին, և դիր արդալի ունէին ի ձեռս իւրեանց, վասն մատուցանելոյ սրբազանին թէ կամ մնզ ճանապարհ տուր որ ուր կարող լինիցիմք գրնամք, և կամ թէ Սարդարի և Շահզազալի թղթովն մեզ միամտութիւն տուր, որ Դաւիթն չլինի ամենևին կաթուղիկոս յետ ձեր, և մինչդեռ նոքա զայս խնդրէին և խապարն լսեցին որ երեք անդամ մարդ դնաց, և Դաւիթն բժշկաբանն չտուաւ, ամենեքեան միաբան դիմեալ ի վերայ Դաւթին վանականք և աշխարհականք ծեծելով և ջարդելով բերեալ ի ներսն. իսկոյն աբեղայք թափեալ ի վերայ զերձակի մկրատն խլեալ ի ձեռաց զերձակին կտրեցին զմորուքն ողորմելոյն, և վերջապէս ևս բովանդակ ածիլեալ մեծացուցին զքանն։ Երկրորդ օրն եկն սարդարն ի վանքն ի տես սրբազանին, և առաքեաց զմարդ մի ի տես Դաւթին, և խնդրեաց թէ՝ ինձ խոստացած փեշկաշդ տուր. որ հանեմ զքեզ ի բանտէ, և նա դարձեալ խոստացաւ վասնորոյ և առնա միրզայ Թադէոսն մահասիլ է ի վերայ Նորա, և Բաբարէդն ի վերայ ողորմելի Բարաղին չարչարեն զնոսա և դրամ խնդրեն, և չդիտեմ, թէ ուր իցէ եղերելոց։ Բայց ի վերայ այսորիկ բարերարոյ սարդարն միամտութիւն տուաւ, միաբանիցն դրով, և երդուեցաւ թէ Դաւթին արհնար է միւսանգամ կաթուղիկոսութիւն. և մինս ևս Թէլլալ ևս տուաւ թէ՝ դրկեցէք որ Եփրեմ Հայր Սրբազանն գայ, և ինքն ևս երդմամբ միամտացուցանէ զնա զի գայցէ, և այժմ պատրաստեն մահսէր և խնդրիք վասն Եփրեմ Հայր Սրբազանին. ներկայիս որպիսութիւնն այս է, և վերջինն Աստուած հոգասցէ զբարին. ողջ լերուք և Աստուած ողորմեսցի մեզ և ձեզ ամէն։

Սեպտեմբեր 12։ ի սուրբ Էջմիածին.

Նուաստ Ս. Էլիսկոպոս ՆԵՐՍԷՍ

Սորին նախատիպն տեսի, և համեմատ նմին արտագրեցի Աւագ քահանայ Մելքիսեդէկ Վ. ամաղեան.

Ես ես ի սորին օրինակէն օրինակեցի համեմատ նմին, նուաստ Ծառայ Եղիայ Յակոբեանց։

Գիրս ստացաք Դեկտեմբերի 25-ին.

ՄԽԸ. *Դրութիւն կառավարութեան վերատունու առ Յովհաննէս արքեպիսկոպոս Վրաստանի։*

(Թարգմանութիւն)

Նորին բարձր սրբազնութեան ծայրագոյն ի տանն վրաց ի վերայ հոգևորականացն հայոց Յովհաննէս արքեպիսկոպոսին.

Առաջին Վրացոյ տանու կառավարութեան իկազէնի էկոպ մախիչէն։

Չկնի կառավարութեան նորին պալծառափայլութեանն տեառն գեներալ ֆէլդմարշալ Վառաչին Վրացոյ տանու կառավարիչ ի վերայ զօրացն ի Կասկասու սահմանս ի Վրաստան և ի Դաղստան զտանեցելոց Հայոց տարիանու պատերազմական դուբէրնթօրի և համայն Ռուսաստանեաց մանկաց կրօզ քալ դրաֆ Իվան Վասիլիչ Դուդովիչի 826 նոմէրալիս թուղթ ուղևորեցելոյ ընդ այնմ պատճէս անուանի ամենամեծ հրովարտակի յա-

նուն նորին պայծառափայլութեանն կալացեալ ի լուսիսի լայտմ ամենայ լաղագս ապաս կացուցանելոյ զհամայն ի վրացտուն եզեալ քահանայսն և սաբկաւագունսն նաև համայն ի սոյն աստիճանի աննենս մենկ ցարգ ի ներքոյ ծառայութեան վրաց իշխանաց և ազնուաց զտանեցեալսն համայն կամենղատաց կապիտան իսպրաւնիկաց մօվրաւաց և թիֆլիղու Պօլիցմէյստարին հրամայել հրովարտակաւ լաղագս հրատարակելոյ ի հաւատացեալ նոցա նահանգս քաղաքս ի գիւզօրայս իսկ վասն լաւէտ ներազգելոյ իշխանաց և ազնուաց նմանապէս և լինքեանց հոգևորական աստիճանաւորաց և ծառայողաց կախին զպատճէնս բարձրագոյն անուանի հրովարտակի ընդ նմին նաև զթարգմանութիւնս ի բարբառս վրաց հրապարակական տեղիսն ի վերայ սեանց լայտնելով ընդ այնմ համայն իշխանաց և ազնուաց թէ նորին պայծառափայլութիւն ներէ նոցա ունել զքահանայան իւրեանց սակայն այնու կերպիւ որ նոքայ և զնտանիքն նոցին լինիցին ազատ ի ծառայութենէ և հարկատուութեանց և որպէս զի զայս ամենայն նաև ի կողմանէ հոգևորական աստիճանաւորաց ներազգելեալ լինի ուստի ներս դնելով ղկօպիսին նոյնոյ ձերդ բարձր արքազնութեանն կազէննի էկսպէկտիցիայն ասաս ազգ առնէ և խնդրէ առնել ում հարկն է զհրամանագիր որ զատացեալ պատճէնս անուանի բարձրագոյն հրամանի ի ժամանս տօնախմբութեանցն և լաւութս կիւրակէից ի ժամ պատարագին ընդերձեալ լինիցի ընդ յորդորական բանիւք ազնուաց և հոգևորականաց զհաճութիւնն նորին կայսերականի մեծութեանն ստորագրեալ և ենականիկ Ֆէդօր Զալկովկի ի պարտաւորութիւնս ատենադպիր ստօլի մեծաւոր Բատմանօվ։

Սեպտեմբերի 17-ին
1808-ին։

ՄԽԹ. *Մելքիսեդեկ քահանայի Ղամազեան առ Եփրեմ արքեպիսկոպոս։*

Բարձր սրբազան Եփրեմ Արք եպիսկոպոս.

Իմ ողորմած Հայր.

Սրբազան Առաջնորդն զիւր յուզևորութիւնն որ առ պայծառափայլ Գրաֆն, յանգեալ փոստին ինքն դրեալ է առ ձերդ սրբազնութիւն ի հարկէ նովաս դիտիցէք համային զորպէսան։ Նոր լուր զայս ունիմ ծանուցանել որ պայծառափայլ Գրաֆն զօրօք ժամանեալ է ի սուրբ Էջմիածին, և մինչ ցարդ մեր սրբազան Առաջնորդն Աս լուսաւոր ժամանեալ իցէ։ Վասն Աթոռայնոցն ասին թէ ի քերդն են մուծեալ, բայց հաւաստի դրով չունիմք։

Ցիւղպաշի պարոն Գաբրիէլին և պարոն Ցօհաննիսին, տակաւին սէ գիտելով զաստէն չուումն Սրբազան Առաջնորդին, վասնորոյ ի Ղարաքլիսու գիր իմն էին դրեալ առ նա զոր բացեալ և ընթերցեալ զտի ի միջի գրութեան իմն ի Ներսէս վարդապետէն դրեցեալ առ նոսա, զորոյ օրինակելն պատշաճ համարեալ, զմի օրինակ առաքեցի առ Վեհապնեալ բարերարն. և զմի օրինակն ահա լեակուս Թղթոյս։ Արժան է սրբազնութեանդ փութալ ի Մզդօբ, ըստ որում այժմ մեծամեծք անցք անցանելոց են ի դաշտն Արարատեան, և այլն խնդրեմ զքեր սրբազնութեանդ անպակաս առնել. ողջ լեր հայր պատուական և ես ի 1808։ Հոկտեմբերի 10։

Թիֆլիզ։

Ամենաջերմեռանդ կարօտիւ զմաքրափայլ գարշապար ձեր համբուրեմ և ցանկամ վերստին տեսութեան գործակցութ Տեառնդ մերոյ ամենախոնարհ լեռին պաշտօնեայ։

Նուաստ քահանայ Մելքիսեդեկ Ղամազեան։

ՄԾ. *Թուղթ միաբանից առ Գրաֆ Գուղովիչ։*

Պայծառափայլ գրաֆ Իվան Վասիլիչ։
Ողորմած տէր.

Մինչ ցայսօր ժամանակի ի ներքոյ բռնաւորութեան բարբարոսաց, նեղեալ և վրդովայեալ, ուրախ եմք զի ողորմութիւն նորին կայսերական մեծութեան հասեալ է ի վերայ մեր, և լուսով եմք, թէ յայտնեսէ ունիմք վայելել զիշխազգութիւն մեծ։

Բայց այժմ ամենազօրն թշնամի բարութեան՝ ոչ սիրէ զիշխազգութիւն մեր, վասն

որոյ ջանայ, զի վտանգեսցէ զնոյն, քանզի ամենապատուելի Դանիէլ սրբազան պատրիարգն ի 25 մայիսի կարգագրեալ է վասն բարեկարգութեան սրբոյ Էջմիածնի զսուրբ ժողով հոգևորականաց և յայտնեալ է նորին կայսերական մեծութեան և ձերոյ պայծառափայլութեան և ամենայն հոգևորականաց և մարմնաւորական հայոց եղելոց ի Ռուսաստան, և ի Կոստանդնուպոլիսն, և ի վերայ այնմիկ կառավարութեան երդմնեցուցեալ է զմեզ զամենեսին և ինքն ես երդուեալ։

Այժմ մինչ լսելի եղև վասն մահու երանելի Դանիէլ կաթուղիկոսին, մին ի նորին հայաղատից ի բաց մոռացեալ զերդումն իւր զոր երդուեալ է վասն այնորիկ, լուժ վչտացոյց զմեզ ամենեսին և վչտացուցանէ ևս՝ եթէ ոչ ողորմութիւն ձեր լինիցի ի վերայ մեր։

Խնդրեմք ուրեմն, թէ չէ ընդունելի ձերոյ պայծառափայլութեան զկարզագրոն թիւնս սրբազան Դանիէլի և զերդումն նորա՝ և մեր ի վերայ այնմիկ, հրամայել մեզ ջրով երեսաց ժերոց հեռանալ ի սրբոյ աթոռոյս, ապա թէ ոչ ողորմութիւն առնել և հրամայել գրով, զի կարգադրութիւն սրբազան Դանիէլի կացցէ հաստատուն մինչև ցյաջորդել նորոգ պատրիարգին սրբազան Նիփրեմայ, որոյ վասն ինքն լիշեալ սրբազանն և ամենայն միաբանութիւնք, ժատուցեալ են զինդիր առ նորին կայսերական մեծութիւն և առ պայծառափայլութիւն ձեր և մի լինիցի ոք հակառակ այնմիկ։

Ողորմած տէր ձերոյ
1808 հոկտ. 23. պայծառափայլութեան
ի ս. Էջմիածին, խոնարհ աղօթարար։

ՄԱՆ. Դրութիւն Սարդարին Երևանու առ զրաՔ Դուդովիչ։

Յայնմ օրէ, որ ես եկի ընդեան տաճարըն Էջմիածնայ, որ է տեղիք երկրպագութեան, հին և մեծ չինուածք է յայսմիկ ժերկրիս, ի չինութենէ ի ռալեաթէ, և ի մարան վարդապետաց և ծառայից զատարկ տեսեալ, և հաւնցեալ ի նա՝ հարցուցաք պատճառն աւերման, թէ վասն էր վախճտական եղեն միարանք և չինութիւնք սորա. լուտնի եղև որ բոլոր աղդն հայոց մնծամնծք և փոքունք վրդովեալ էին ի կաթուղիկոսութենէ Դաւիթ վարդապետին, և խնդրէին զԴանիէլ սրբազանն ի կաթուղիկոսութիւն։ Բայց երևանայ առաջին խաներն իւրեանց աղաչութեան համար Դաւթի կաշառատուութեանն դրաւեցան, և հակառակեցան, և կարդեցին զնա յաթոռ կաթուղիկոսութեան, վասն այս պատճառի վարդապետքն և հայրապաքն և բնակիչքն Էջմիածնայ առեալ զղլուխս իւրեանց եղեն փախստականք. թող զսա, էսչափ նախանձ ու խռովութիւն որ վրացտանու և սրևանու մէջն եղև, պատճառն Դաւթի կաթուղիկոսութիւնն էր, քանզի Դաւիթ կաթուղիկոսի համար ալսպիսի ի հնոց ժամանակէ կառուցեալ տաճարն, որ հազար հինդ հարիւր տարուց աւելի է, սորա չինուածքն ոչ երբէք մին ժամանակի ալսպիսի աւերած չէ եղած, այլ ևս ալսպիսի խարաբ ամբլի թողուլն լաւութիւն չունէր, և ձեր մնծ սպարապետիդ կամքն այն էր, որ Դանիէլ սրբազանն կաթուղիկոս լինի. վասն այսու պատճառի մեք զիւրընդրակատար ի Շահզատալէն ոտաց հղին խնդրեցաք զԴանիէլ կաթուղիկոսն, Շահզադին ևս մնծազան Դանիէլ կաթուղիկոսին իալէթ և փէրման կաթուղիկոսութեան չհորհեալ և պատուով լղեալ էր էջմիածին։

Մեք ևս ձեռնտու լեալ լղեցաք յաթոռն մնծ պատուով, նստաւ ի վերայ Աթոռոյն, և վարէ զաղգս իւր. բայց բազումք ի բնակչաց իւրոց վարդապետքն միաբանքն, և ժող վուրդն փախստական եղեալ եկեալ են ի քաղաքդ։ Ես ի կողմունս վրացտանու, որ այժմոյս տեղդ են, ահա գրեմք և աղդ առնեմք, զի վասն կաթողիկոսութեան Դանիէլ սրբազանին գոհութիւն և վառք Աստուծոյ, այն՝ որ ձեր կամքն էր՝ կատարեցաւ, որ ըստ կամաց իւրոց նստաւ։ Սակայն նորա չինութիւնն և պայծառութիւնն միաբան վարդապետօք, և ռալաթօք է, պարտի ձեր հրամանքն էլ Աթոռոյ չինութեան և պայծառութեան խաթեր համար, և կաթուղիկոսի բարի անուն ստանալոյ համար հրաման անէք, որ այդ կողմերին մէկ մարդ մի էջմիածնայ վարդապետաց, հարազատից, միաբանից և ոահաթիցն արգելումն զտան, որ գոն առա-

ջուան նման, ամէն մարդ իր գործին վերայ հաստատ լինի, որ օրէ օր Աթոռն պայծառանայ. եթէ երկու թագաւորաց մէջն սէր և հաշտութիւն կլինի. և մեր և ձեր մէջն զանազանութիւն չկայ, չինութիւն և պայծառութիւն աթոռոյն ձերն է, իսկ թէ՝ մի արասէք Աստուած, թշնամութիւն լինի, որ կողմն որ՝ յաջողութիւն գտանի Աթոռն չէն և պայծառ պէտք է: Եթէ հաշտութիւն լինի և թէ՝ թշնամութիւն՝ բարին այն է՝ որ Աթոռն չէն և պայծառ լինի, մէկ էլ էս՝ որ սոյն հաղար հինգ հարիւր տարէն տաճարն մինչ ի հիմայ ալապէս խարխլայ ամալի չէ էլած, միայն թէ՝ քոլդ ժամանակի լինիլն քոլդ անուանն լալնդ չէ. քանզի ալս վատ անունն յաւիտեանս յաւիտենից կըմնայ հալբաթար վարդապետաց, միաբանից և աշակերտից աստիւ հրաման տաք, մինչև որ՝ յառաջ քան զալս Աւդուլահ խան աղալին, և Գարիմ բէգ-

ղըն, և Ռահիմ բէգն, որ իմ թաբանս են, զարաբաղցի Իբրահիմ խանի մօտն էլլուբենի էին ուղարկած, նա էլ նոցա թանիլէբ տուի, տո ելէր չլինէստուրին, էն ժամանակէն մինչի հիմայ նոքա Փաթալի բէգի տղալին հետն ռեղդ բանտարկեալ կան, հէչ մին ժամանակ էլլուն բանդ չեն ձգի անօգուտ բանի, պիտի որ իդին տաք, և առաքէք, մնք էլ նոցա վոխարէնն չորս հինդ անձն, որ Վրացոտանու թաւադներիցն բանդում կան, որն որ կամէնաք մուրթաո կանեմք, և ուղարկեմք առ քեզ, ողջ լեր: *)

Ես Մելիք Մինասի որդի Միրզայ Թադէոս ի Խուրքաց լեզուէ ի հայ բարբառ թարգմանեցի:

---

*) Այս դիւթինը թուական չունի. բայց պարզ է որ դրուած է 1808 թուին Դանիէլի կենդանութեան ժամանակ:

1809

Մ ՃՌ. *Դրութիւն Ներսէս արքեպիսկոպոսին առ Հիւսէին խան Երևանու։*

Ամենապատուական և զերապատուելի բարձր աստիճան՝ իշխանութեամբ պերճացեալ՝ արդարաքննին մեծ կառավարիչ, և կուսակալ Երեանու և տանն Արարատեան հզօրագոյն Հիւսէյին։

Իմ ողորմած Տէր.

Արեգակնավայել մաքուր սրտի ձեր հզօր իշխանի ճառագայթիցն չողշողումն, ի վերայիւն խնամոց վերակոչմանէ ձեր կառավարիչ Երևանու և Արաբատու, իսկ և իսկ ծագեալ ծաւալեցաւ ի վերայ հնագոյն զերապատուելի մանաստրին հայոց էջմիածնի և արդարաքննին սուրբ սրտիդ զգօն դատողութեանն երևեցաւ յայնժամ առ. Թիֆլիզու ֆերգմարշալն գրեցեալ նամակագ յաղագս վերադարձման երանելի Դանիէլ Պատրիարդին։

Արդարև՝ յայնմ օրէ մինչև ցայժմ որպէս արփի պայծառ յայտնի է մեզ ամենիցուն, որ զերապատուելի հզօր կուսակալդ յատուկ խնամակալ և բարերար եղեալ լիշեալ մեծ մանաստրին մեր՝ ազատիչ և պաշտպան երասնելի հայրապետին Դանիէլի. որով պարտաւորեցեր զբոլոր իսոհական անձինն ազգին մերոյ, լինիլ չերմեռանդ աղօթարար վասն ամենապատուելի կենաց և յաջողութեան ձերոյ իսկ և այժմ վերահասու լինելով համայն անպատշաճ արարմանց հոգևորականին Դաւթի, և աւերման լիշեալ մեծ մանաստրին, նաև անքաւ խռովութեան և տարաձայնութեան ազգին մերոյ՝ և հոգևորականացն, բարեհաճեալ էք չնորհիւ Ամենատղորմած Օգոստափառ Արտպատական Շահի և Շահզատալի հզօր զօրութեամբ, երկնաճիր օրհնեալ հրովարտակաւ՝ սասանեցուցանել զխռովութեան առիթն, և տալ խաղաղութիւն և բաբեկարգութիւն բոլոր ազգին մերոյ ցանկալի մեծ մանաստրին էջմիածնի. որն տեղւոյն բարձրագոյն սինօթի պատուելի եպիսկոպոսունք և վարդապետքն ծանուցեալ են մեզ անքաւ չնորհաց զեղումն հզօրագոյն Շահզատալի՝ և ձեր զերապատիւ յատուկ բարերարի ի վերայ մեր. յուսամ ի մերձ աւուրցս երբ եկեալ ժամանեացէ առ մեզ ալդի առաքեցեալ Ռէթէոս եպիսկոպոսն, ներկայացուցանելով նորա մեզ զողորմութեամբ բարձրագոյն հրովարտակն Շահզատալին և զերամանագիրն բարերարիդ մերոյ, յայնժամ պարտաւորիմք հանդերձ մանաստրօքն յայտնել և Ռուսաստան Մնձի կայսերութեան զի եմ յուսով թէ Ամենատղորմածաբար ունի համաձայնիլ ինքնակալ կայսրն բարեհաճութեան ձերում մեծութեանց։

Արդ այժմ յառաջ քան զժամանել Ռէթէոս եպիսկոպոսի, փութամ այսու ամենախոնարհ հալիկաբանական խնդրանօք ներկայանալ առաջի յատուկ բարերարիդ և Օգոստափառ Շահզատալին, հայցել յատկապէս զի որպէս մինչև ցայժմ ի նախնեաց ձերոց ապահովութեամբ Ամենողորմած խնամօք պահպանեալ էք զչիշեալ մանաստիրն և զհոգևորականն, և զազգն մեր. նոյն գթութեան և չնորհիւ այժմ ևս առաւել խնամակալ պահպանեսջիք ի ներքոյ հովանաւորութեան հզօր թևոց ձերոց, և առաջնորդութեամբ թագաւորին յաւիտենից. ի ժամանելն իմ յալդր կատարեալ չերմեռանդութեամբ և վերապատուութեամբ ունիմ մատուցանել զհպատակութեան իոնարհութիւն և զչնորհակալութիւն։

Ի 1809 ևի մայիսի 13 ի Նոր Նախիջևանէ

Մնամ ձերում Ամենավսեմ. ուր մեծ իշխանութեան և յատուկ բարերարութեան ամենախոնարհ և աղօթարար ծառայ եՓրեմ Արք եպիսկոպոս հայոց Ռուսաստան հեսայց։

ՄԾԳ. Նորին Եփրեմի առ Շահզադայն Պարսկաստանի։

Ամենաողորմած և Օգոստափառ թագաւոր ընգհանուր Պարսկաստանի և տանն Արևելեան ծիրանածին Շահզաստլիղ գարշապարացն հետից

Ամենախոնարհ խնդիր։

Ամենողորմած Մեծ թագաւորիդ լերջանիկ նախնեացն մինչև ցայժմ օր ըստ օրէ առատացեալ են չնորհ և ողորմութիւն ի վերայ հնագոյն Ամենապատուելի Աթոռոյ Էջմիածնի բոլոր հոգևորականաց և համայն հայոց ազդին որք ընդ տէրութեամբ Մեծի թագաւորութեանն ձեր կան պահպանեցեալք. այդ որպէս արեգակն պայծառ տեսանելի է ի մէջ աշխարհի։

Մանաւանդ ևս ի ներհակ պատահմանց ժամանակի երից աղդաս ընտրեալ երանելի հայրապետին մերոյ Դանիէլ կաթուղիկոսին որ իւր ազդակից հոգևորական ևղբօրէ Դաւիթ անուանեալ եպիսկոպոսէ այնքան ընդունայն տառապանս և անպատուութիւնս կրեաց մի միայն ձերդ ևԱմենողորմած Աթոռոյ և ի մեծ թագաւորութենէդ ընկալաւ պատուելի անձին իւրոյ անգորրութիւն՝ պատիւ, և ըստ բաղձանաց ազդին մերոյ զիշխանութիւն, որ առ այդ Ամենողորմած և արդարաքննին իրաւարարութեան թագաւորութեան ձեր պարտաւոր եղեն ամենայն հայոց ազդի պատուելի՝ երևելի և իմաստուն անձինքդն և մանաւանդ հոգևորականքս ըստ հարկադրութեան օրինաց մերոց պարաւանզեցաք լինել աղօթող անգին կենաց և բարեկարգ Մեծի թագաւորութեան ձերոյ։

Արդ Ամենողորմած Տէր և թագաւոր, զկնի նախաւիշեալ ծովամանն առատացեալ չնորհացն ձեր ի վերայ զերապատուելի մանաստրի և հոգևոր Աթոռոյն հայոց. այժմ ևս քան զևս առաւել բարեհաճելով ձեր հեղուլ և զեղուլ զանբաւ զթութիւն և ողորմութիւն ի վերայ Արևելեան հայոց ազգին և բոլոր հոգևորականաց որ զկնի հարմանն մահու զանգակի երանելի Պարթարդին Դանիէլի ամենաքաղցր հոգւով ունկնդիր եղեալ խոնարհ խնդրանաց եպիսկոպոսաց, վարդապետաց և բոլոր հայոց լաղագս նորոգ կաթուղիկոս ընտրութեան, և բարեհաճելով ազերսամատոյց գրոյ նոցին սփոեալ ծաւալեցիք անբաւ զեղումն ձեր ի վերայ իմս տկար և անարժան անձին, որ արդարև բազում պարագալիւք չեմ բաւական ես այնմ մեծի աստիճանի և պատուոյ, սակայն հարկադրեալ ի բազմութենէ հրաւիրանացն կամալ և ակամալ յանձնառու լինիմք ալեպիսի ծանր լծոյն, ապաւինելով նախ լԱստուած և երկրորդ Ամենողորմած թագաւորիդ մերոյ լուսադրութեան ողորմութեան չնորհին ամօթալից չլինիլ։

Բայց որպէս ծանուցին մեզ զերապատիւ մանաստրի բարձրագոյն սինօթի կառավարիչ ընտրեալ եպիսկոպոսունքն և վարդապետքն, նմանապէս ծանուցեալ են որ ի Թիֆլիզ եղեալ մեծ կուսակալ պայծառափայլ ֆերթմարշալին, և նորին պաշտառափայլութիւնն ղբարեհաճութիւնն ձերոյ թագաւորութեան լայտնելով նորին կայսերականի Մեծութեան ամենայն Ռուսաստանեայց, որ և կայսերական Մեծութիւն նորին համաձայնելով բարեհաճութեան մեծի թագաւորիդ, սպասէ գալըստեան հրաւիրակ և պատգամաբեր Ռէֆէոս եպիսկոպոսի, որ Ամենողորմածաբար առաքեցէ զմեզ ի կառավարութիւն զերապատուելի Աթոռոյ Էջմիածնի։

Ա՛ռ այս՝ ամենաջերմեռանդագոյն, սոյն հայկաբանութիւն ամենախոնարհ խնդրանօք իմովք՝ անկանիլ առաջի Աթոռոյն հզօր թագաւորութեան ձերոյ, և հալցել որպէս մինչև ցայժմ զեղեալ են չնորհք և ողորմութիւն ձեր ի վերայ լիշեալ մանաստրին և ողորմելի ազգին մերոյ, նմանապէս և այժմ՝ ըստ լուսագրութեան երկնաղօր հրովարտակին ձերոյ, պահպանել զնոյն չնագոյն վանքն Հայոց և գաղգն ի ներքոյ հովանաւորութեան և լայնատարած խնամոցն ձեր յանդորր խաղաղութեան որով և իմս անարժանութիւն համարձակեալ վերնախնամ պահպանութեանն Մեծի թագաւորութեան ձերոյ՝ եղից զանձն իմ ի կառավարութիւն լիշեալ մանաստրին, և ի կատարեալ հնազանդութիւն և ի ծառայութիւն ձերում երկնապարգև թագաւորութեանն։

Ողջ լեր Օգոստափառ Մեծ թագաւոր, Ձերում Օգոստափառ թագաւորութեան որ եմ և ծնամ ամենախոնարհ և ջերմեռանդ աղօթարար ծառայ ԵՓՐԵՄ Արք եպիսկոպոս հայոցն Ռուսաստանու։

1809 Մայիսի 13։ Ի Նոր Նախիջևան։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐ, ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՅԱՆԿ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ

ԾԱԻԵԼՈՒԱԾ

Ա.

Երջանկաբանական թուղթ Տ. Ստեփաննոս քահանայի Տ. Ցարումիւնեանց։

Գերաշ Պատվելի ի լազոս Աղնուամեծար ի սեռս և ի պայծառացեալս ի Ժողովս հայոց պայծառ իշխանք բարեպաշտութեանն ծնունդք և բարեսէր Շառաւիղք մեծահասատ պարոնայք կալկաթու Զիչերու Սետապատու և Գաքու։

Իմ ողորմած տեարք և բարերար եղբայրք և անդին քաղցր և ախորժ բարեկամք։

1. Ի բազմաժամանակեայ սիրատարին կարօտոյս ստիպեալ հարկաւորեցայ քան զանձամբ ներկայանալս լայդր խոնարհական թիւտով մատչիլ առաջի ողորմած տիարցդ իմոց և լուսակապիս բարերարացդ ազդիս հայոց։

2. Ուստի ահա զիմ խոնարհ ողջոյնս հանդերձ Աստուածային օրհնութեամբն մատուցանեմ արժանաւոր և պայծառ իշխանացդ, որոց եղիցի խնդալ ի տէր Յիսուս ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ Ամէն։

3. Սա հաւատամ և հաւաստի եմ զձէնջ, զի թէև ըստ Աստուածատուր պարգևացն և ըստ արժանաւորութեան ձեր ի գովելի լաջողութիւնս և յուրախութիւնս կալք, սակայն ի նոյնս ոչ երբէք մոռանալք զտառապեալ ազգն ձեր (որք նեղին և մաշին ի հեռաւոր տեղիս ի զանազան ձախողակի պատահմանց) այլ միշտ ցաւակցաբար ցանկալք հարցանել գնոցանէ, և տեղեկանալ վկայութեանց նոցին ուրեմն լցէ թէ ի վաղուց հետէ լուեալ լցէք զմասնաւոր ինչ զորպիսութենէ և զանձից ի Վ.ոիմու եկեալ ժողովրդոյն հայոց։

4. Որոց աղաչաւ ահա նուաստ ծառայս առաքեցայ վերամբարձ հրամանաւ սրբազան կաթուղիկոսին ամենայն հայոց և յորդորական թղթովն գեներջանիկ առաջնորդին Զուղայու ընդ տէն և աղերսական խոնարհ թըղտովն ուստաց երկրի հայոց ազգին առաջնորդ Յովսէփ արհի եպիսկոպոսին դալ ի լոտըս ողորմածացդ և ծանուցանել լրապէս զողջմբելութիւնս նոցին. և կամ ի զիմաց նոյն ողորմելի ժողովրդեանն և կամ իմ, ահա այս երրորդ տարի է որ ելեալ եմ անտի, և հաղիւ հասի աստ, քանզի արգելեցայ ի ճանապարհի մնծն Պօլիս, 5 ամիս, ի Հալաբ 9 ամիս, ի Պասրայ 3 ամիս, անտի ընդ սրբոյն յերուսաղէմայ նուիրակին եկի ի Բանդար, և մինչ նայ լայդ կողմունս գալր, ես խափանեցի զդալս, զի մի զուցէ ծանրութիւն ինչ բերիցեմ ժող վ.ղեանն, և աստ ևս սրբոյ էջմիածնի նուիրակն պատահեցաւ վասնորոյ մնացի աստ ձեռք կցեալ մինչ սա .ելցէ՝ յետ ելանելոյ սորայ, զեռ ես մնալոց եմ. սակայն բարասար լինելոցն և մօտումն չունելոյս. ապա տեսից թէ երբ լաջողեսցէ Աստուած գալս. այլ մինչ երկար մլջոց ունիմ մինչ տեղ հասանելս և երկիւղ փորձութիւնն բազում և յոժ հաւատալի զուցէ, թէ ոչ կարիցեմ արժանաւորիլ պայծառ տեսութեան ձերում. և ինձ զիպած ինչ պատահիցի վասնորոյ սոյն թղթովս համարձակիմ խօսիլ սակաւ ինչ ընդ ազգասէր պարոնացդ իմ և խնդրեմ ներել։

5. Լանի քաղաքն հայոց, որ պայծառացեալ էր թագաւորաւ և կաթուղիկոսիւ, յորում մինչի 110000 տուն հայոց ազգ բնակէին. որ մինչ սկսաւ աւերիլ և մատնիլ ի ձեռս թաթարաց ցրուեցան օր աւուր բնակիչքն, ոմանք դէպ ի Նախիջևան, ոմանք ի Թիֆլիզ, ոմանք ի Վան, և ոմանք ի Սակնալ ձորն վախեան, և մնացեալ վերջինն 50000 տուն անցին ընդ դուռն ալանաց գը-

նացին ի Հաշտարխան և մնացին անդ սա կաւ ինչ ժամանակս ընդ իշխանութեամբ Թաթար խանին Ղազանու. ապա ևս օգնականութեամբ ջինխիզեանց բռնութեամբ եւ լեալ գնացին ի Ղռիմ որ յայնժամ ընդ իշխանութեամբ նոցա էր. կէսքն ի հայոց անցին ի Լեհաստան և կէսքն մնացին ի Ղռիմ, ուր չինեցին քաղաքս բաղումս և եկեղեցիս մեծամեծս, մինչ տէրութիւնն ջինխիզեանց ապա հետ ժամանակաց Թաթարքն դօրացեալ առին զերկիրն ամենայն և մնացին ի ձեռս նոցա մինչև յանցեալ ալատերազմին։

6. Ապա առի ազատել զժողովուրդս իւր զարթոյց Աստուած զսիրտս մեծի կայսրուհւոյն ռուսաց, որ յարուց զմեծ պատերազմ ընդդէմ օսմանցոց և Թաթարաց և ազատեաց զամենայնն որք բնակէին ի Ղռիմ։

Ⴝ 7. Թէպէտ ոչ ազատեաց ի ղերութենէ սակայն ի պատերազմի անդ կողոպտեցան ի նոզալի դօրացն, որք ընդ ռուսն խառնեալ էին յայնժամ և այնպէս մերկ ի մօրէ եղեն, որ ի միմեանց փախուստ առեալ ծածկէին զինքեանս խոտով և մատնէին ի ձորս, և յանտառս ի այսպիսի նեղութիւնս մնացին մինչ ի երկու չաբաթ և կերակուր նոցա էր վայրի բանջար, որք ի սովու և ի մերկութենէ նեղեալք և ի գազանաց ընկասեալք մեռանէին իբրև զանասունս, մինչև հետ դարձելոյ պատերազմին, ապա իջանէին ի գիշերի և մտանէին ի չէնս, առ թաթարսն և գտանէին պատառատուն հանգերձս առ ի ծածկել զմերկութիւնս և թէ որքան մեռան և պակասեցան ի նեղութենէ անտի, ոչ կարացին գիտել, այլ անտի գիտացին մինչև, զի յայնքան բաղմութենէն մէ այն 7000 տուն չլս գտին. ապա յետ քանի ամաց թաթարքն կրկին կատաղեալ ապստամբեցան ի ռուսաց տէրութենէ և կամեցան առ հասարակ զամենայնն ի սուր մատնել, ուստի մինչ զայս գիտաց մեծ և հզօր կայսերուհին ռուսաց, ողորմեցաւ անտերունչ լինելոյն նոցա և խորհին հնարիւք աղատեաց զնոսա ի ձեռաց անօրինացն և իւր ծախիւքն զամենայնն հանեալ անտի տարաւ ի ննրքս երկիրն իւր, և անդ ևս մինչև երկու տարի ի վերայ սալից և ի ներքոյ վրանի ե տաղավարի մնացին, պատճառ յատկապէս վասն իւրեանց քաղաք և բնակութիւն խնդրելոյն, քանզի զնոսայ հանօղ չկղբալն և այլ ոմանք նախարարք կամէին ղի զամենայն ժողովո րդսըն բաժանեսցեն ի միջի իւրեանց և ցրուեսցեն ի զեղօրայսն, զի իւրեանց ծառայ և չինական մնասցեն, որպէս արծաթպղին զերի. այլ սոքայ ի մէյսին բնակելու յարմար նաւաղնացութեան ի Սեաւ ծովն տեղ խնդրէին քաղաք չինելոյ և նոքայ զխնդիրն արգելէին և ոչ հաւանցանէին յայնմ ամենողորմած կայսերուհւոյն։

9. Բայց որ ոչ իսպառ բարկանալ և ոչ յաւիտեան պատէ ոխս ունել թէ խրատելով խրատէ ի մահ ոչ մատնէ զորդիս իւր, ի նոյն ժամանակի այնպէս յաջողեաց Աստուած արքեպիսկոպոսն տէր Յօվսէփ, առաջնորդն Հաշտարխանու ի կայսերական քաղաքն դառնալով, որ գնացեալ էր առ ի յօծանել զեկեղեցիսն հայոց և նախ քան զայս չնորհ էր դտեալ ի կայսերուհւոյն, և ընկալեալ էր զպարդեվս մեծագինս, և տարեկան ռոճիկս և ծանօթացեալ ամենայն մեծամեծացն, մինչ զայնպիսի նեղութիւնս նոցայ լուաւ, իսկոյն պատասխան հղլով անկաւ առաջի կայսերուհոյն և պատմեաց մի ըստ միոջէ զամենայն նեղութիւնս ժողովրդեան, և ազդին իբրու ընդ այն և խնդրեաց զտեղի քաղաքին իւր ժողովուրդքն խնդրէին որ և իսկոյն կատարեաց գինդիրն, հրամայեաց չինել վասն նոցայ տունս ի թագաւորական դանձուցն առանց հետ վճարելոյ, չնորհեաց տալ առաջին տարւոջ գկերակուրս, և զամենայն սերմանելի սերմունս, և գնգինս և գայլս և գերկաթեղէնս հերկելոյ, չնորհեաց և ազատութիւն, հրովարտաքս և դաշնագիրս, ունել զազատութիւն ամենայն կերպիւ և բանալ դատաստանատունս ըստ ծիսի հայոց, չինել զեկեղեցիս և զանգատունս և այլ բազում ինչ, որպէս տեսանել էք ի Մատրաս տպեալ դաշնագրի օրինակին։

9. Եւ մինչի սոյն ուրախութեան լուրս հասանիլն նոյն ժողովրդեան առաջնորդ Պետրոս վարդապետն վախճանեալ էր, որք մինչ մնացեալն առանց հովուի, իսկոյն դիմեցին առ հասարակ ի դուռն կայսերուհւոյն և սրբազան կաթուղիկոսին և Յովսէփ վարդապետն իբրանց առաջնորդ ընդունեցին, որք հարկիւ գնա առաջնորդ կացուցին աղաչութեամբն

ղեալ ժողովրդոցն. և նա մինչ ոչ կա-
րաց հրաժարիլ վասն իւր բարի խղճմտանացն և
աղղասէր լինելոյն, յանձն կառ ղերս մանանն
և ելեալ եկն ի քնակս նոցա, որ քնակէին և
արքեաց ղարտաստուս նոցա և մխիթարեաց և
առեալ ղմասունս սրբոց ղառաքելոց քարկալ
սուրբ խաչն և ղկենաց փայտն, ղորս տա-
րեալ էին ընդ իւրեանց յԱնի քաղաքէն,
ինքն եպիսկոպոսական ղղեստիւք և քահա-
նայքն չուրջառուվ և տերունական ղտտկե-
րովք, խաչվառօք և մոմեղինօք բուրվառաւ
և խնկարկութեամբ չուրջ պատեաց ղքոլո-
րակութիւն քաղաքին և ի չորեսին ծայրս
քաղաքին հիմնարկեաց ղչորեսին օծեալ ջա-
րիւնս յանուն սրբոց առետարանչացն, ապա
ղչորեսին կողմն օրհնելով, յանձնեալ իւնա-
մոցն Աստուծոյ և պահպանութեամբ սըր-
բոց առետարանչացն ղքաղաքն և մտեալ
ի ներս կոյս նոյնպէս ղեսաուորեալ իւ-
րով ձեռօքն նշանեաց և գձեաց զտեղի
եկեղեցացն և ապա արձակեաց զժողո-
վուրդսն և հրամայն ետ իշխանացն և ճար-
տարապետին բաժանել ժողովրդեանն զտե-
ղիս տանցն հաւասարապէս որ և ի չինել
տանցն ղտին զտուս 4700 քանզի ի սակաւ
միջոցին պակասել էին 2300. ոչ ոչ աւաղ
անքախտութեան ազգի մերում, որ զեռ ևս
օր աւուր պակասեմք և նվազիմք.

10. Ապա յետ չինելոյ տանցն նոյն և
րանելի եպիսկոպոսն ըստ բնական բարուցն
իւր և ըստ Աստուածատուր չնորհացն, իբրև
հզօր պատերազմող, ղղեցաւ ղղրահս արիու-
թեան և վառեաց զմաչեալ սիրտս ժողովըր-
դեանս ի հնոց և ի նորոց, քաղաք չինու-
թեան օրինակս ցուցանելով, ընտրեաց ի մի-
ջի նոցա ղղատաւորս եօթն, վիճակցութեամբ
ետ նոցա ղղատաստանագիրս ի հնոց թագա-
ւորացն մերոց, և զհարկաւորն ժամանակիս
պակասն ինքն լցոյց չինել ետ զմարմնաւոր
և զհոգևոր դատաստանատունս և կացոյց զի-
մաստուն քահանայս ի նոցա հոգևոր զատա-
ւորս. չինեաց իւրով արդեամբ քարաչէն
վանք մի վանս միաբանից, անկեաց զայդիս
և չինեաց ջրաղացս միով ժամու ճանապար-
հաւ հեռի ի քաղաքէն, ուր բնակին կրօնա-
ւոր արեղայքն օգնականութեամբ Հայոտար-
խանու և այլոց ժողովրդոցն չինեաց այլ ևս
երկու քարաչէն եկեղեցիս ի մէջ քաղաքին
ընդ այն և չինեաց չորս փայտեալ եկեղեցիս
ընդ այն և միջազծի քաղաքին հիմնարկեաց
եկեղեցի մի յանուն սուրբ Լուսաւորչին, ուր
չինեալ կայ առաջնորդարան, տպարան և
փիլիսոփայական դպրատուն և այս 6 տարի է
հիմնարկեալ կայ և պատճառաւ աղքատու-
թեան ոչ չինի։

11. Ի դուռն եօթն եկեղեցեաց չինեաց
վարժատուն և կացոյց վարժապետս հայոց և
ռուստաց առ ի վարժել զմանկունս երկու
լեզուաւ, որք ուսեալք քաղաքավարութիւնս
կարողանայցեն հաստատ պահել զյառաջա-
դրեալ հիմնադրութիւնս քաղաքին և մանա-
ւանդ լինելոցին հմուտ վաճառական և երևելի
ի մէջ այլ քրիստոնեալ ազգաց որով կարաս-
ցեն վճարել զպարտս քաղաքին և կամ հա-
րըստանալ, այլ և ի դառն սուրբ լուսաւոր-
չուն չինեաց դպրատուն փիլիսոփայութեան,
զի ուսեալ մանկունքն որ ի այլ վարժատունս
եկեցեն անդ և զարհեստ գիտութեան ուսցին
և լմնասանասցին, որում կառավարիչ զվար-
ժապետն ետ ինքս վարձեցի ի մեծն Պօլիս
տարին 500 ռուփով և առաքեցի ի նոր Նա-
խիջեան։

12. Թէպէտ այս ամենայն բարեկարգու-
թիւնս օրինեաց առ ի մխիթարութիւն նո-
ցայ սակայն մինչ աղքատքն տեր բազում են
և չատ նեղութիւնս կրեն, ի սովս և ի մեր-
կութիւնէ, ժողովեաց զներակոտս և զհոհեմ
անձինս և խնդրեաց հնար կառավարելոյ զնո-
սա, նախապէս ինքն զիւր հանդերձն և մա-
տանին ետ նոցա և ասէ զայդ վաճառեցէք և
բաժանեցէք ազքատացն և ապա քառասուն
եկեղեցւոյ զարծաթեղէն անօթսն որ անցեալ
էր թարց կողոպտելոյ և չէին մերձեցեալ
սակս վախմն լինել-ոյն, զնոսս մանրեաց և
բաժանեաց. նոյնպէս և զվարագուրս և զշո-
ւրկս, և ղշուրջառս, հանդերձ կարել ետ և
բաշխեաց, միայն քանի ձեռք անօթ և զգեստ
վանն հարկաւորութեան լիւրաքանչիւր եկե-
ղեցւոյ եթող, զայս ամենայն արար դավտա-
լով և գիտութեամբ ժողովրդեան, զի մինչ
հարստասցին, ապա յետ վճարեսցեն, և ասէր
նոցա վանս մխիթարելոյ թէ այս ոչ երբէք
մեղք ինչ համարի առաջի Աստուծոյ և առ
այս ոչ բարկանալ ձեզ Աստուած, քանզի ա-
ռաւել է առաջի Աստուծոյ կերակրել զղաք-
տս քանթէ պահել ի պահարանի վանն

հարստութեանն և կամ վասն զարդու։

13. Նոյնպէս և այնուհետև լիւրաքանչիւր սարւոջ իւրեան ձեռագրովն և իշխանաց հաւանութեամբ և դասաւորանաւ կնքով 3000 թուման պարտք առնու ի թագաւորական դանձուցն և բաչխէ աղքատացն ի գին հացի և փալտի, լիւրաքանչիւր տան մի թումանն, քանզի չքաւորքն են այնքան տուն, մտածեսցուք թէ այնքան սակաւ գնով ոզորմելիքն գինչ կարեն զտանել, ոհ, ոհ, երանի ձեզ, որ ոչ տեսանէք զխղճալի գէմս նոցա, այն փափկակաց տիկնայքն և մատաղ մանկունքն այնպէս թարշամեալ են, որպէս ի զերեզմանի եղեալ բազմօրեայ մեռեալ ձմեռայնի. կենդանի է տէր Աստուած զի ոչինչ ստեմք, զի հաղիւ երբէք ցամաքեցուցանեն զաչս եպիսկոպոսին այնմիկ և ոչ տան անգամ ժամանակ առանց արտասուաց զճաշ ուտել։

14. Ես հաւաստի եմ, զի բազում ողորմած անձինք գոն յազգի մերում, որք որոնեն զտեղի աղքատանոցս չինելոյ և զհիւանդանոցս պատրաստելոյ և կամին դիտել թէ ուր կան նեղեալք ի յազգս իւրեանց, բայց ոչ ոք կայ պատմող նոցա. և յայտնի է բարեպաշտութեան ձերում, զի բազմութիւն ազգիս հայոց ընդ իշխանութեամբ օսմանցւոցն քնակին. և մինչ այս ողորմելիքս ընդ իշխանութեամբ ըռուստաց են, ոչ է կարելի սոցա ի մէջի նոցա չրջիլ և օգնութիւն խնդրել վասն թշնամութեանն որ ի մէջ ռուստացն և օսմանցւոցն կայ և ոչ միայն ի ժամանակի պատերազմի, այլ և ի ժամանակի խաղաղութեան վտանգաւոր է և երկիւղ մահու կայ խնդրողին և տուողին, քանզի եթէ ի մէնջ զոք տեսանեն լերկիրն իւեանց, իսկոյն իւրև զլրտես և թշնամի յայտնի կամ ի ծածուկ ի վտանգս տան և թէ զոք ընդունելութիւն առնէ և կամ ողորմութիւն տայ վասն աղքատաց, և գնոսա ևս ի զուր դատապարտեն իբրև զթշնամի և զապստամբ թէ թշնամեաց մերոց օգնութիւնս առնէք և զգանձս ձեր ի ծածուկ անդ ժողովէք, ուստի ընդ ժողովրդեանն ռուստաց և հասարակաբար խօսիլն և ոզջունելն ևս երկնչին եղբարքն մեր, վասնորոյ անճար մնացեալ և ըստ ամենայնի անօգնական լինելոյն առ ձեր բարեպաշտութիւն դիմեցին ողորմելիքն այն և 1783 թուականի փրկչին զոմն տէր Ցարութիւն անուն խոհեմ և բարեհաճ քահանայ ի միաբանութենէ իւրեանց առաքեցին աստ, որ ի գալն ի ճանապարհին առ Աստուած փոխեցաւ և ևթող ժողովրդեանն կսկիծ մեծ, ապա ի տեղի այնպիսւոյ բարեբարոյ և երանելի առն դիս անպիտանս առաքեցին, որ ահա որի երեսաւ և տատանեալ մաշիմ և ոչինչ օգտիմ, քանզի ի պատճառս նուիրակացն ուրեք օդնութիւն չեմք տեսած և այսպէս սպասեմ ժամանակի զի նուիրակն եկեսցէ աստ և ապա սկսեցից և ալդր ևս գալս, սպասելոց եմ մինչև սուրբ էջմիածնի նուիրակն եկեսցէ ալդր և աւարտեսցէ զգործն, որ ապա յայնժամ սկիզբ և ումք ծանրութիւն զրկանք չբերիցեմ։

15. Արդ մինչ ցայս վայր զնեղութիւն և զկսկիծ ազգին ձեր պատմելով, կարծեմ թէ տրտմեցույի զբարի սիրտն ձեր. այժմ սակաւ ինչ և զբարի նշանս յայտնեցից, որով դարձեալ ուրախ առնիցեմ. մինչև ցայժմ երբէք չեմք լուեալ ի մէջ ազգին հայոց իմաստութեանց զպրատուն եղեալ իցէ վասն հասարակաց, որպէս այժմ ունին եւրօպացիք, այլ այժմ ի վիճակի այս երանելի եպիսկոպոսին մերն զպրատուն ի Հաչտարխան եղև բացեալ լորդորմամբ սորին, ի ջուզեցի պարոն Մինաս Ըստեվան Դիլանչիանէն, և վասն հաստատուն մնալոյ գպրատանն չինեաց քարվանսարայ մի մեծ լոյժ գեղեցիկ և զարմանալի չինուածովք, որ ունի չուրջանակի արտաքուստ 100 դուքան, ի ներքոյ դուքաններուն 100 մաղազայ կամ սարդափ և ի վերայ դուքաններուն 100 բալախանայ օթախ, ի մէջին կողմն քարվանսարային կրկին նոյնպէս 100 մաղազայ, 100 օթախ, 100 բալախանայ, ամենայն չինուածքն քարեայ և տեղն ի մէջ հոչակաւոր փողոցի, որ ամենայն սեֆտաի անդ վաճառ և ծախ լինի և այլ չինուածոց վարձն ոչ հաւասարի սորա, քանզի այն է երևելին և հռչակաւոր վաճառատեղի ի մէջ Հաչտարխանու, և ի մէջ քարվանսարային գեղեցիկ եկեղեցի մի և զանգատուն 31 գրկաչափ բարձրութեամբ կաթուղիկէիւ և այս ամենայն չինուածքն ետ լիչատակ եկեղեցոյն և դպրատանն. ընդ այս և ամենայն կալքն իւր կտակ արար նոյն եկեղեցւոյն, երկու քահանայք սպասաւորեսցեն և ոչ աւելի և իւրաքանչիւրոցն լսմեամ 20 թուման վարձ և դպրատան երեք վարժապետացն, որ լինի հայոց, ռուստաց և լաթինացոց 100 թուման, որք դպրատանց մանկանցն երեք լեզուաւ կարդալ և դրել ուսուցցեն, 12 մանկունք ունի ժողոված և այսօր ի տան իւրում պահէ գնոսա, որոց զկերակուրն ի հանդերձն ինքն հոգալ և քնակեցուցեալ է գնոսա առանձին տան և կարդեալ է վասն

նոցա հոգաբարձու այր մի և կին և մինչ նոքա ուսանիցին, ի տեղի նոցա ոչ այլ մանկունս բերելոց է նոյնքան թուով, և ղուսեալսն ա ոաքելոց է ի փարիզ, և ի լօնդոն զ՝ այլ գիտութեամբ վայժեալ իմաստնասցին և ե. կնացին զմիաբեալ մանկունսն կրթեացն զայս ամենայն կարգաւորեալ ասօր ինքն հոգալ և կատարէ և զինի իւր նոյն չինուածոց արգեամբք կատարելոց է և եթէ լաւելոյի ինչ արդեանցն՝ ղայն բաժանելոց են աղքատացն քաղաքին։

16. Ապագէս և ի նոր Նախ՝ջնան ընդ այնքան մեծ նեղութեանն ոյր կրնն, զբարեկարգութիւնս ոչ խափանեն, մանկունքն ուսման հետևին, ծերքն զժողովուրդս մարդասիրաբար կառավարեն ղօրէնս և դատաստանատունսն ս՝զատաբար ունին և ինքեանքն են իշխօզք քաղաքին, իւրեանց իշխանքն և կառավարիչքն սիրով են առ մ՝ւմեանս և ցասկցին աղքատացն որպէս արենակցի իւրեանց, նոյնպէս և գեղեցիկ տպարան հաստատեցաւ արդեամբ ջուղայեցի պարոն Գրիգոր Խալգարեանին վասն նոյն քաղաքին և լեհանելն իմ զտուն չինէին վասն տպարանին և հաւատամ, զի մինչև ցայժմ բերեալ լեցեն, և թէ որքան գովելի և զեղեցիկ տպարան է, յայտնի է ձեզ, որպէս ի նոյն տպարանին տպեալ զգրեանսն կարելի է տեսեալ լեցէք։

17. Այս ամենայն բարիք որ լառաջանան, ես հաւատամ որ ձեր բարի սիրոն և կամեցողութիւնն է լառաջածողն, քանզի Աստուած որ զսիրտս քննէ, տեսանէ զբարի ցանկութիւնս ձեր, որ միշտ փափագիք և հետեիք լինիլ աղգի ձերում աղգասոգաց արհեստ և գիտութիւնք, որով աղգք մեր պաշծառասցին, նաև մինչ վասն այնպիսի գործառնութեանց, ուրիք ուրիք օգնութիւն արարիք և ոչ լառաջացաւ, ահա այսօր ո՝ստի ակն ոչ ունէիք, անգ յայտնեաց և այնու կամ լցուցանել զփափագ սրա՝ց ձերոց, այս ես հաւատամ գիտել պարտիմք, զի նոքա, որք ոչ փափագին նոյնպէս և ոչ հետևին, որպէս ոչ հետևին, նոյնպէս և ոչ ի գլուխ գալ, բայց այս սկսուածք նոցա ահա լառաջագոյն զպաշծառութիւն իւր յայտնէ ևս առաւել, յայտնի է և հետևող են գործն և չանան եթէ առանց օգնականի զպաշտօնիկ արար եթէ այսուհետև ձեր չնո՝ւն կատար ածէք ի վերայ նոյն քաղաքին և կամ ի վերայ նոյն եպիսկոպոսի բարի լառաջադրութեանն, չատ յարիք են լառաջ գալոց և գուք և ամենայն աղգն բաւական միխիթարութիւն էք ունելոց և թէ անտես կառնէք չատ բարիք են խափանեալ մինչև ցայսօր ի մէջ աղգի մերում և այս ևս կիւսփանի, զուք լաւապէս գիտէք, որ այսպիսի մեծ սկսուածոցն մեծ ծախս և օգնութիւն է հարկաւոր, և նոյն եպիսկոպոսն ոչ կարուղիկոս է և ոչ պատրիարգ, որ նուիրակունքն արդեամբ օգնութիւն առնիցեն և իւր առաջնորդական արդիւնքն ևս իւրաքանչիւր տարւո՝ջն ի էջմիածին է ուղարկում դաւտարով, և թէ ի ր ժամանակին չհասուցանէ, հա՝կիւ պահ առնջել ունի՝ն, կարելի չէ որ նեռն, ուրեմն դուք պատուելի իշխանքդ եթէ օգնութիւն չառնէք, որպէսզ կարելի այնպէս մին տկար և աղքատ անձն կարողանալ զայնպիսի մեծ սկսուածք ի գլուխ բերել, ձեր բարեպաշտութեան իւրև դլոյս արեգական լայտնի է ամենեցուն, ուստի և նոյն եպիսկոպոսն կամ իշխանքն աչքն դէպի ձեղ ունին և պատրաստ են ծառայելոյ, եթէ տպելի ինչ դիրք կամիցիք ձեզ լիշատակ տպել տալ ահա գեղեցիկ տպարան, եթէ հիւանդացոց չինել վասն անուանն Քրիստոսի և կամ աղքատանոց՝ ահա հիւանդք և աղքատք բաղում եթէ եկեղեցի չինել, ահա լոյժ հարկաւոր, եթէ զպարտաւոր կամիցիք աղատել, ահա ինքն եպիսկոպոսն հանդերձ ժողովրդովք անդ՝եալ կալ ի ներքոյ մեծամեծ պարտուց. եթէ զպայծառութիւն աղգին և զիմաստութեան աճումն կամիք, ահա դպրատուն և վաքժատունք, եթէ աղատ երկիր կամիք, զի հաստատ մնասցէ սկսուածումն ձեր և պատճառ չերևիցեն խափանման, գիտէք զի մեծ և հզօր կայսերութիւն է և այն չէք լսելոց, թէ պատճառ այս ինչ նեղութեան չկարացաք այս գործն կատարել։

18. Արդ ով սիրելի աղգ և իշխանք իմ, դուք լաւապէս գիտէք սովորութիւն աղգի մերում որ ղեռ չատ աչխատանօք հետևիմք ոչ միայն զտաճարս սուրբ սեղանին բաւականն և հարկաւոր զարդուք զարդարել, այլ և ղորմերս եկեղեցւոյն չանամբ արծաթեայ խաչերով և մարգարտէ թագերով և սաղաւարտիւք և սկհով և աչտանակօք պճնել և օրհնեալ աղգն մեր, և մանաւանդ երանելի եկեղեցականքն զայնոսիկ համարիմք պաշծառութիւն աղգին և ոչ երբէք մոռնամք թէ այն ամենայն աւերումն է աղգի մերում և ոչ թէ պայծառութիւն. ես կարծեմ թէ գալ ժամանակ, որ նոյն զարդն անկանի ի ձեռն անօրինաց և ի սուր փոխարկի ընդդէմ ժողովրդեանս մեր, քանզի ես ինքն տեսի աչօք իմովք ի սուրբ Երուսաղէմ հազարք հազարաց արծաթեայ և ոսկեայ կանթեղք, հարիւրաւոր չահք, հարիւրաւոր մարդահասակ աչտանակ, հազարաւոր խաչք, հազարաւոր սկիհք, հազարաւոր մարգարտեայ և արծաթեայ սաղաւարտք և հարիւրաւոր թագ մարգարտեայ, նոյնպէս հազարաւոր արծաթապատ աւետարան և հազարաւոր մեծագին չուրջառք և այլ զգեստք, ի սեղանոյ մինչև ի գուռն չուրջանակի խիտ առ խիտ կեցեալ դասեալ և կախեալ կայր ի վեցեքին եկեղեցիքն այնպէս որ մին եկեղեցւոյն զարդն

միւս եկեղեցւոյն ոչ տալին, այլ իւրաքան-
չիւրոցն լատուկ էր զոյն, մինչ տեսանէին
աղդն մեր ուրախ սրտիւ փառս տալին Աս-
տուծոյ վասն պայծառութեանն աղդին, ընդ
որոց և ես ուրախանալի, բայց յաւուր միւսմ
մինչ ելանէի եկեղեցւոյն, պատահեցաւ ոմն
լաթինացւոց հետևող հալածդ և ի սուրբ
դրոց ղրան ինչ հարցանէր և ոչ կարացի
տալ ղպատասխանին ընդ այն և պատահե-
ցաւ, զի ազդէն մերմէ ղմի ոմն աղքատ վա
սըն թագաւորական հարկին ի բանդ արկին,
որ և իսկոյն ուրախութիւն իմ ի տրտմու-
թիւն փոխարկեցաւ և մոռացայ զպայծառու
թիւն զարզարեալ ոյմոցն, քանդի տեսի, զի
ոչ զիս իմաստնացոյց նոյն զարդարանքն և
ոչ զեղբարսն իմ աղատեաց ի բանտէն։

19. Ապա դինչ օգուտ մեզ տեսանեմք
ի զարդարելոյ անտի, մինչ տեսանեմք զտա-
ճարան զայնս բոլորովին ի ձեռս անհաւա-
տից կալ և չուրջանակի նոյն եկեղեցւոյն
թշնամիք բնակին, զինչ զարմանք է եթէ
յաւուր միւսմ մինչ ուռճիկ զօրաց նոցին պա-
կասիցի և կամ ի նեղութիւն ինչ անկցին,
յայնժամ զհարստութիւնս մեր նոքա զօրացն
իւրեանց բաժանեսցեն և ի վերայ մեր սուր
առնուցուն։

20. Եթէ առաջին նախնիքն մեր այս-
պէս ժողովէին զոր իւ լեցի ես ոչ հաւատամ
ուր է ապա այսքան ժամանակից ժողովեալն,
դիտեմ զի ասելոց են, թէ անօրէնքն կո-
ղոպտեցին յոմ արդար իրաւունք են Աստու-
ծոյ, վասն էր ժողովմամբ և պահմամբ մեծաս
տքնութեամբ, զի անօրէնքն կողոպտեսցեն,
ոչ ապաքէն որպէս առաջին ժողովեալն կո-
ղոպտեցին, նոյնպէս և այժմուս առնելոց են,
այս զինչ հաւատք են, որ այնքան անօթ
ժողովմամբ, որ մինչև պահել տարակուսիմք և
մեծամեծ ծախս առնումք լատկապէս վասն
պահարան չինելոյ, դուք արարէք զիրաւու-
նարս, լաւ է զայն աւելի ժողովածն մանրել և
կերակրել զսովեալս կամ աղատել ղղերեալս
կամ չինել զհիւանդանոցս և զաղքատանոցս
թէ այնպէս ժողովել և պահել վասն օգնա-
կանութեան թշնամեաց յանցեալ տարոյն.
անօրէն լաղդին եկն ի վրացտունն և մինչ
երեք հազար քրիստոնեայ զերի արարին և ի
հաւատոց հանեցին. զնոսա ազատելն հաճոյ
էր Աստուծոյ թէ զտաճարի որսերն զարզա-
րելն ի պահարանի պահելն. յամենայն տեղիս
ուր և չրջեալ եմք տեսանեմ յամենայն եկե-
ղեցւոջ, քանզ հարկա որն աւելի ժողովեն
ղխաչս և զսկիս և զայլս. այս լատապէս
լայտնի է ձեզ, զի իւրաքանչիւր եկեղեցւոյն
մին սկիհ բաւական է, քանզի իւրաքանչիւր
աւուր մին պատարագ մատչի, նոյնպէս և
խաչն և բուրվառն և աւետարանն, ապա որ
օրինօք ժողովեմք անպիտանաքար չդիտեմ։

21. Դարձեալ զտայ ժողովէր և մինչև ի
հօրէն Աղէքսանդր Իշ ևս առնուր զտարև-
կան հարկս, իսկ Աղէքսանդր ներհակ զան-
ձուցն, զ'մաստս թիւն ժողովէր ի լոս Արիս-
տոտէլ փիլիսոփային տքնելով, տեսցուք թէ
զինչ եղև վախճանն, ոչ ապաքէն Աղէքսան-
դրը իմաստութեամբն զԴարեհ եսպան, զդան-
ձարն էառ և զամենայն թագաւորութիւնս նո-
ցա իւրեան ծառայ արար, նոյնպէս այսօր
աբբայեցիք զիմաստութիւնս ժողովեն և ի
նոյնս կրթին և պայծառանան, իսկ մեք
զարծաթս և զոսկեշատակիս ժողովեմք. ինձ ե-
րևի պատահումն Դարեհի կալ առաջի մեր.
թէ ինձ ոչ հաւատալք արդէն իսկ ցուցից
ձեզ զնշանս. արբայեցիք իւրեանց ճշմար-
տութեամբ զինչ կամին խօսին և դրեն, ուր
կամին չրջեն և նստեն, թէև հալածանօք
յաւելուն զժողովուրդս և իւրեանց աշխատա-
սիրութեամբն այսօր հարուստ են քան զմեզ,
և կարծեմ թէ զամենայն զոր մեք աշխատս-
նօք ժողովեմք, ի վերայ նոցա ևս իշխեսցեն
ժամանակաւ, եթէ մեք այսպէս թմրեալ մը-
նայեմք։

22. Ահա մեք իբրև աղէտ հովիւ ոչ եր-
բեք ղղաստանամք և ոչ չարժիմք ի նա-
խանձ, քանզի ի տեղի կորացեալ գաւազա-
նի, որ է հնարն գիտութեան զիմաստութիւ-
նըս և զզարատունս արհամարհեմք և միայն
զդաւազանն զարդ·բեմք ոսկով և արծա-
թով ի տեղի զ·դար և անուշ աւուրչի և ձայ-
նի, որ է հոդեչահ վարդապետութիւն զրա-
նադրանաց քարինս արձակեմք փոխանակ
հացալից պարկին, որ է չունչն սուրբ գրոց,
արծաթով և ոսկով բեռնաւորեմք, այսպէս
ամենայն նչան բարի հովուութեան ի ներ-
հակն եմք փոխեալ և այնու զժողովուրդն
մեր նուազեցուցանեմք, արժան է մարդոյ
զճշմարիտն ասել, արբայեցիք վասն այս-
պիսի հետեողութեան որք արի են ի զործս
իւրեանց և ոչ դադարին աշխատելոյն գովե-
լիք են, թէև ամօթ է ինձ գնոսա գովելն,
իսկ մեք մնծ նախատանաց եմք արժանի
վասն ծուլութեան և ագահութեան, փափ-
կասիրութեան մերոյ, քանզի նոքա չարա-
զլեն և նոքա տպեն և մեք ըմբեռնումք, նո-
քա գործեն, աշխատեն և մեք ուտեմք, ո՜հ
ո՜հ, աւաղ մեզ, զի մեք այսպէս մեծ ազդ գո-
լով և մեր ազդն այսքան ողորմած լինելով
և մեր ազդի մէջն այսքան վանօրայք և ա-
թոռք կան մեր մէջն մ՛ն տեղ զպրատուն
չկայ, որպէս ոչ պատկառիմք, չդիտեմք, ե-
թէ մեք մինչև ցայսօր զազգն մեր այնպէս
լորզորչաք և այնպէս քարոզչաք նոցա վա-
սըն չահա էութեան զպրատան, որպէս որ
այժմ քարոզեմք վասն այծաթեղէն լիշատա-
կի աւելոյն, ևս հաւատամ որ հազարաւոր
դպրատուն կլինէր աղդի մերում, բայց փո-

զվերջեան մեզ ոչ գոլ, քանզի ժողովուրդքն միաբեր այնպէս դիտեն, թէ ազգի պայծառութիւն կամ ճնշեցելոց օգուտն արծաթեայ լիշատակի տալն է, որպէս որ լուեալ են, ով է քարոզեալ նոցա, թէ ազգի հարստութիւնն և պայծառութիւն գպրատունքն են, տպարանն է, աղքատանոցն և հիւանդանոցն են։

23. Ապա ուրեմն լաւ է իմաստութիւն, քան զվճռութիւն բաղում, եթէ կամիք զաւզատութիւն ազգիս մերում իմաստութեան գհետ երթիցուք, եթէ հնար իցէ ամենայն տեղիս դպրատուն բացցուք, իսափանեացուք զայն որ բաղում թչնամիս ունի և կերակուր է ցեցոց և դողոց և չինեացուք զայն, զոր չէ կարէ դողն գողանալ և ոչ ցեցն ուտել։

24. Արդ ով ողորմած տեարք իմ, զալսոսիկ մինչ համարձակեցալ և գրեցի, ոչ որպէս իմաստուն կշռելով զիս և զձեզ անգէտս համարելով ուսուցանել կամիմ, այլ որպէս իմաստնոց լիշումն ածեմ և լաւապէս գիտեմ զի և դուք միշտ զայս խորհիք, որովհետև ես հաւաստի չեմ, թէ ձեր պայծառ տեսութեան կարեմ արժանանալ, որ դէմ առ դէմ լեզուաւս ազաչիցեմ, վասնորոյ սոյն թղտովս զիմ ցաւակցութիւնն յայտնեցի, զի գուցէ թէ ես ի ճանապարհիս այս զկեանս իմ ի վերալ այս մտացս և վասն օգտի հասարակ ազգիս ի վտանգ մահու արկցեմ և մահ պատահիցի ինձ որպէս նախ քան զիս եկեղեցւոյն պատահեցաւ, յայնժամ դուք ողորմած տեարքդ իմ իբրև հարազատ բարեկամք և ազգասէրք վերոլիշեալ առաքելասլաւիղ արհի եպիսկոպոսի բարի յառաջագրութեան ձեռն տու լինիջիք, որպէս նոյնպէս դուք և օրհնեաց որդւոց և ամենայն ընտանեաց ձերոց պատուէր տաջիք կտակաւ, զի ի մէջ ազգի մերում ուր և տեսանիցեն և լուիցեն, սկսեալ ալսպիսի ազգասղուտ գործ օգնական լինիլ նոցա և մի զանց առնել կամ ասել, թէ այդ ոչ է ի վիճակի մերում, մեք ամենեքեանս մի ազգ եմք և ուրախութիւն մեր առհասարակ է։

25. Ցետ այսր ամենայնի ես հաւատամ, զի զալս ամենայն բարիս և քան զդրեալսն աւելի կամիք վասն ազգիս հայոց և ցանկալք միշտ կատարել և հաւաստի եմ, զի Աստուծով օգնականութեամբն կարող էք ապա մինչ կամիք և կարող էք, ոչ ոք կալ արգելող, ուրեմն ողորմեցարուք և ի գութ չարժեցէք, այնքան աղքատաց բազմութեան դարման և դեղ չնորհեցէք ի տվու և ի մերկութենէ հիւանդացելոցն, ուսուցիչ հոգացէք մանկանց, դպրատանն օժանդակ լերուք, եկեղեցւոյ չինութիւն և օգնեցէք գեղեցիկ տպարանին զսուրբ գրեանս տպել տալով ի լիշատակ ձեզ պայծառացելոցդ և պայծառորգւոց ձերոց, և առ Քրիստոս հանգուցեալ նախնեաց ձերոց։

